ապրում. He came ~ to speak to me Նա մտտեցավ, որ խոսի ինձ հետ. drive ~ the frontier սահմանը/սահմանի վրայով անցնել. He sat down ~ the desk from me Նա մստեց սեղանի մոտ իմ դիմաց. He is already ~ Նա արդեն մյուս կողմում է. with arms ~ ձեռքերը խաչածնվում են:

**acrostic** [əˈkrɒstɪk] n ակրոստիքոս:

**acrylic** [əˈkrɪlɪk] n ~ fibre ակրիլ/սինթետիկ մանրաթել:

**act** [ækt] n գործ. To torture animals is a cruel ~ Կենդանիներին տանջելը դաժան գործողություն է. brave/heroic/noble ~ քաջ/հերոսական/ազնիվ վարմունք. an ~ of God բնական արիավիրք. catch smb in the ~ մեկին հանցանքի պահին բռնել. criminal ~ հանցագործություն. *իրավ.* որոշում, հրամանագիր. ~ of grace ներում, ամնիստիա. an ~ of parliament պառլամենտի որոշում. an ~ of war պատերազմական գործողություն. An ~ is passed Որոշում ընդունվեց. An ~ comes into force/effect Որոշումը ուժի մեջ է մտնում. *թատր.* գործողություն a five ~ play հինգ գործողությամբ պիես. It's just an ~ Սա պարզապես խաղ է:

**act** [ækt] v գործել. ~ decisively վճռականորեն գործել. ~ on one's own ինքնուրույն գործել. ~ at once/immediately անմիջապես. ~ at once/immediately անմիջապեսգործել. ~ on orders հրամանով գործել. (վարվել) ~ wisely/recklessly/rashly/right/foolishly խելացի/անխոհեմ/ճիշտ/հիմար ձևով վարվել. ~ one's age իր տարիքին համապատասխան պահել. (գործել, ներգործել) ~ as պաշտոնը կատարել. ~ for/on behalf of մեկի անունից գործել. The medicine has ~ed Դեղը ներգործեց. ~ as a director/guide/instructor/an interpreter գործել որպես տնօրեն/գիր/ուսուցիչ/թարգմանիչ *թատր.* խաղալ/(դերը) կատարել. ~ a part դերը կատարել. He ~ed Othello/part of Othello Նա Օթելլոյի դերը կատարեց. She has always wanted to ~ Նա միշտ ուզում էր դերասանուհի դառնալ. Don't ~ fool/ass/idiot Քեզ հիմար ձևով մի պահիր:

**acting** [ˈæktɪŋ] n *թատր.* խաղ. superb/subtle/excellent/poor ~ հրաշալի/նուրբ/գերազանց/վատ խաղ:

**acting** [ˈæktɪŋ] a գործող, պաշտոնակա-

տար. the ~ manager տնօրենի պաշտոնակատար. ~ in charge հանձնարարությամբ. ~ copy դերասանի դերի օրինակը (գրված):

**action** [ˈækʃn] n գործողություն. quick/decisive/united, joint ~ արագ/վճռական, որոշակի/միատեղ համատեղ գործողություն. a man of ~ գործի մարդ. take ~ սկսել գործել. take ~s միջոցներ ձեռք առնել. bring/call into ~ գործի դնել. put/set in ~ գործի դնել. (արարք, վարմունք) noble/mean ~ ազնիվ/ստոր արարք. a piece of the ~ խարդախության բաժնեմաս. *խսկց.* հանցավոր գործունեություն. (in a novel) The ~ takes place (վեպում) Գործողությունը տեղի է ունենում. the ~ is swift/slow moving Գործողությունը արագ/դանդաղ է ընթանում. *իրավ.* դատական գործ. bring an ~ against մեկի դեմ հայց հարուցել. dismiss an ~ հայցը մերժել. ~ for damages վնասահատուցման հայց. judge people by their ~s մարդկանց մասին դատել ըստ նրանց գործերի. suit the ~ to the word խոսքերը գործերով ապացուցել. (գործողություն, աշխատանք) the ~ of the heart սրտի աշխատանքը. the ~ of bowels աղիքների գործունեությունը. mental/physical ~ մտավոր/ֆիզիկական աշխատանք. be in ~ աշխատել/գործել. be out of ~ չաշխատել. The telephone is out of ~ Չեռախոսը չի աշխատում/գործում. put out of ~ շարքից դուրս բերել. take strike ~ գործադուլ անել. (ազդեցություն) ~ of light/medicine/drugs լույսի/դեղերի/թմրադեղի ազդեցությունը. *ռզմ.* մարտ bring into ~ մարտի մեջ մտցնել. come out of ~ մարտից/շարքից դուրս գալ. be killed in ~ մարտում զոհվել. military ~s ռազմական գործողություններ. He has seen ~ Նա եղել է ռազմաճակատում. *իրավ.* հայց, դատական գործ. legal/court~ օրինական/դատական գործ. bring/take an ~ against smb գործ/հայց հարուցել որևէ մեկի դեմ. divorce ~ ապահարզանի գործ ~ painting վերացական գեղանկարչության դպրոց:

**activate** [ˈæktiveɪt] v *թմ.*, *կենս.* ակտիվացնել, ռադիոակտիվ դարձնել:

**active** [ˈæktɪv] a գործունյա, եռանդուն. an ~ politician գործունյա քաղաքագետ. ~ child աշխույժ երեխա. ~ volcano գործող հրաբուխ. an ~ law գործող օրենք. *ռզմ.* be on ~

service զինծառայության մեջ լինել, լինել գործող բանակում. ~ forces մշտական գործող բանակ. *քեր.* ~ voice ներգործական սեռ:

**activit/y** [ækt'ivətɪ] n գործունեություն. social/economic ~ հասարակական/տնտեսական գործունեություն. restrict/encourage smb's ~ սահմանափակել/խրախուսել գործունեությունը. (աշխատանք) out-of-school ~ies արտադասարանական աշխատանք. extra-curricular ~ies արտալսարանային գործունեություն. voluntary ~ կամավոր գործունեություն. His ~ies were much criticized Նրա աշխատանքը խիստ քննադատվեց:

**actor** [ˈæktə] n դերասան. great/well-known/famous/favourite ~ մեծ/հանրահայտ/հռչակավոր/սիրելի դերասան. a natural-born ~ բնածին դերասան. amateur ~ սիրող դերասան:

**actor-proof** [ˈæktə-pru:f] *թատր.* պիես, որին նույնիսկ վատ դերասանը վնաս չի կարող հասցնել:

**actress** [ˈæktɹəs] n դերասանուհի. film/movie ~ կինոդերասանուհի:

**actual** [ˈæktʃʊəl] a իրական, իսկական, փաստացի. ~ reason իսկական պատճառը. in ~ life իրական կյանքում. in ~ fact փաստորեն. the ~ cost իսկական արժեքը. ինքնարժեք. ~ loss իրական կորուստ. ~ possession փաստացի տիրապետում. ~ value իրական արժեք. What were his ~ words? Ի՞նչ բառեր նա օգտագործեց իրականում. Let's take an ~ case եկեք քննարկենք իրական դեպք. the ~ amount of money դրամի ստույգ քանակը. *հմկրգ.* ~ address կատարողական հասցե. ~ argument/parameter փաստացի պարամետր. ~ storage ֆիզիկական հիշողություն:

**actualit/y** [ˌæktʃʊəlɪtɪ] n իրականություն, արդիականություն. ~ies իրական պայմաններ, հանգամանքներ:

**actualize** [ˈæktʃʊəlaɪz] v իրականացնել. իրագեկորեն պատկերացնել:

**actually** [ˈæktʃʊəlɪ] adv իրականում, փաստորեն. իսկապես. He ~ expected me to do it ա իսկապես սպասում էր, որ ես դա կանեմ. ~ I don't like him ճիշտն ասած, նա ինձ դուր չի գալիս:

**actuate** [ˈæktʃueɪt] v խթանել. ստիպել գործել:

**actuation** [ˌæktʃuˈeɪʃn] n դրդում, խթանում:

**acuity** [əˈkju:əti] n սրություն:

**acumen** [əˈkju:mən] n խորաթափանցություն, մտքի սրություն:

**acuminate** [əˈkju:ˌmɪnət] v սրել, սրվել, սուր դառնալ:

**acute** [əˈkju:t] a սուր, ուժեղ. ~ hearing սուր լսողություն. ~ accent ուժեղ շեշտ. an ~ observer նրբանկատ դիտորդ. ~ angle սուր անկյուն. (ծակող) ~ shrill ծակող ճիչ. ~ mind սուր/խորաթափանց միտք. ~ pain սուր ցավ. ~ illness լուրջ/ծանր հիվանդություն. The situation is becoming ~ Իրավիճակը սրվում է:

**acuteness** [əˈkju:tənəs] n սրություն, խորաթափանցություն:

**AD** [eɪˈdi:] մեր թվարկության/Տիրոջ տարին:

**ad** [æd] *տն՛ս* advertisement:

**adage** [ˈædɪdʒ] n ասույթ, ասացվածք:

**Adam** [ˈædəm] n Ադամ. A~'s apple ադամախնձոր:

**adamant** [ˈædəmənt] 1. n ադամանդ. 2. a ամուր, անդրդվելի, անհողդողդ. He was ~ Նա անկոտրում էր:

**adamantine** [ˌædəˈmæntaɪn] a ամուր. անխախտելի. անկոտրում. ադամանդյա:

**adapt** [əˈdæpt] v հարմարեցնել. ~ oneself հարմարվել. ~ oneself to one's environment միջավայրին հարմարվել. (փոփոխել, վերամշակել) ~ a text տեքստը վերամշակել. ~ a short story for television պատմվածքի հեռուստաբեմականացում. ~ the story for children վերամշակել պատմվածքը երեխաների համար:

**adaptability** [əˌdæptəˈbɪləti] n հարմարունակություն:

**adaptation** [ˌædæpˈteɪʃn] n հարմարեցում, վերամշակում. ադապտացիա. an ~ of a novel for the stage վեպի բեմականացում:

**adapter** [əˈdæptə] n ծայրապանակ. ծայնահան:

**add** [æd] v *մաթ.* գումարել. ~ 2 and 7 երկուսին յոթ գումարել. ~ sugar to tea թեյին շաքար ավելացնել. ~ a few lines/words մի քանի տող/բառ ավելացնել. He ~ed quickly/firmly Նա արագ/հաստատակամ ավելացրեց. have nothing to ~ ավելացնելու ոչինչ չունենալ. This ~s to our difficulties Սա մեծացնում է մեր դժվարությունները. ~ to one's experience հարստացնել կենսափորձը. It just doesn't ~ up Ոչ մի իմաստ չեմ տեսնում.



*հմկրգ.* ~-in memory լրացուցիչ հիշողություն. ~- on ընդլայնում:

**addenda** [ə'dendə] pl. տե՛ս addendum:

**addendum** [ə'dendəm] n (pl addenda) հավելված, լրացում:

**adder** ['ædə] n *կենդ.* թռչող օձ, իժ. flying ~ *ամ.* լորտու:

**addict** ['ædɪkt] n մոլ, մոլի. drug ~ թմրամոլ. coffee ~ սրճամոլ. be a TV ~ ամբողջ օրերով հեռուստացույց դիտել:

**addict** [ə'dɪkt] v անձնատուր լինել, տրվել. be ~ed to անձնատուր լինել (որևէ բանի). be ~ed to smoking/football տարվել ծխելով/ֆուտբոլով:

**addiction** [ə'dɪkʃən] n հակում, սովորույթ. drug ~ թմրամոլություն:

**addition** [ə'dɪʃən] n ավելացում, հավելում. an ~ to the report գեկուցման լրացում. in ~ (to) ի լրացում, ի լրումն. in ~ to what has been said ի լրումն այն բանի, ինչ արդեն ասվել է. He will be a useful ~ Նա օգտակար ձեռքբերում կլինի. *հմկրգ.* ~ record ավելացվող գրառում:

**additional** [ə'dɪʃənəl] a լրացուցիչ. ~ information/data լրացուցիչ տեղեկություններ/տվյալներ. ~ income հավելյալ եկամուտ. There is no ~ charge Հավելյալ վճարում չի պահանջվում:

**additive** ['ædətɪv] n սննդամթերքի մեջ օգտագործվող քիմիական նյութ:

**addle** ['ædl] a հոտած, փչացած. ~d egg հոտած ձու. *փխբ.* անմիտ, խելառ:

**addle-brained** ['ædlbreɪnd] a անխելք:

**addle-headed** ['ædlhedɪd] a անխելք:

**address** [ə'dres] n հասցե. home/temporary/return ~ տան/ժամանակավոր/հետադարձ հասցե. ~ for service իրավական հասցե. move to a new ~ տեղափոխվել (հասցեն փոխել). ~ book հասցեների տեղեկատու. of no fixed ~ առանց որոշակի հասցեի. (ճառ, դիմում) deliver an ~ դիմումով հանդես գալ. forms of ~ դիմելու ձևերը:

**address** [ə'dres] v հասցեագրել, դիմել (խոսքով, նամակով). ~ an envelope ծրարը հասցեագրել. ~ the court դատարանին դիմել. a note ~ed to երկտող ուղղված. words ~ed to Mrs. Brown տիկին Բրաունին ուղղված բառեր. I wasn't ~ing you ես Ձեզ չէի դիմում. He ~ed us on history/economics Նա դասախոսու-

թյուն կարդաց պատմությունից/տնտեսագիտությունից:

**addressable** [ə'dresəbl] a մատչելի հասցե ունեցող (հաշվիչ մեքենաների մասին):

**addressee** [ˌædre'si:] n հասցեատեր. *հմկրգ.* ինֆորմացիա ընդունողը:

**adduce** [ə'dju:s] v բերել (օրինակ, ապացույց) ~ examples օրինակ բերել. ~ reasons/proofs պատճառներ/ապացույցներ ներկայացնել:

**adenoids** ['ædɪnɔɪds] n գեղձեր, մշիկներ (զլանդներ). have one's ~ out մշիկները հեռացնել. She's got ~ Նրա մշիկները բորբոքված են:

**adept** [ə'dept] a փորձառու, հմուտ. an ~ dressmaker հմուտ դերձակ:

**adept** ['ædept] n գիտակ. be an ~ in photography նկարչությունից գիտակ լինել. be an ~ at chess ուժեղ շախմատիստ լինել:

**adequacy** ['ædɪkwəsi] n համապատասխանություն. doubt one's ~ as կասկածի տակ առնել համապատասխանելը. social ~ սոցիալական համապատասխանություն:

**adequate** ['ædɪkwət] a բավարար. His wage is not ~ to supply a family Նրա աշխատավարձը բավարար չէ ընտանիք պահելու համար. (համապատասխան) ~ supply/response/compensation համապատասխան մատակարարում/պատասխան/կոմպենսացիա. His behaviour was not ~ Նրա վարքագիծը իր բարձրության վրա չէր. get ~ response համապատասխան պատասխան ստանալ. get ~ recompence for the work աշխատանքի համար համապատասխան վարձատրություն ստանալ:

**adhere** [əd'hɪə] v ամուր կպչել, կառչել. Glue is used to make sheets of paper/surfaces ~ թղթերը/Մակերեսները իրար կպցնելու համար սոսինձ է օգտագործվում. (հավատարիմ մնալ) ~ to a (political) party որևէ կուսակցության անդամագրվել/հետևել. ~ to one's plan/a promise հավատարիմ մնալ իր ծրագրերին/խոստմանը. ~ to the rules միանալ գործող պայմանագրին:

**adherence** [əd'hɪərəns] n հավատարմություն, կապվածություն. ~ to a programme հավատարմություն ծրագրին:

**adherent** [əd'hɪərənt] n հետևորդ, կողմնակից, համախոհ. His proposal is gaining many

~s Առաջարկը շատ կողմնակիցներ է շահում:  
**adherent** [əd'hiərənt] a ամուր միացած, կից. մածուցիկ, կաշուն:  
**adhesion** [əd'hi:ʒn] n հավատարմություն  
 give ~ to a plan պաշտպանել/սատարել ծրագիրը/պլանը. *բժշկ.* կաշուն:  
**adhesive** [əd'hi:siv] a մածուցիկ, կաշուն. ~ plaster [եյկոպլաստիր ~ tape սքոչ, մածուցիկ ժապավեն:  
**adhesive** [əd'hi:siv] n մածուցիկ/կաշուն նյութ (օրինակ՝ սոսինձ):  
**adieu** [ə'dju:] n հրաժեշտ. take/make one's ~ հրաժեշտ տալ:  
**ad infinitum** (lat) [,æd ,ɪnfɪ'naitəm] մինչ անսահմանություն:  
**adit** ['ædit] n մուտք, անցք. մոտեցում, մերձեցում:  
**adjacency** [əd'dzeisənsi] n սահմանակցություն. *հմկրգ.* ~ matrix կից մատրից:  
**adjacent** [əd'dzeisnt] a կից, սահմանակից. ~ rooms հարևան/կից սենյակներ. ~ buildings կից կառույցներ. ~ fields սահմանակից դաշտեր:  
**adjective** ['ædʒiktiv] n *քեր.* ածական (անուն):  
**adjective** ['ædʒiktiv] a [րացուցիչ, կախյալ]:  
**adjoin** [əd'dʒɔɪn] v մոտ, սահմանակից լինել. The two houses ~ երկու շենքերը միմյանց կից են. The room ~s my study Սենյակը կից է իմ աշխատասենյակին:  
**adjourn** [əd'dʒɔ:ɪn] v հետաձգել, տեղափոխել. ~ meeting/journey/return ժողովը/ճամփորդությունը/վերադարձը հետաձգել. (ընդմիջում հայտարարել) The meeting was ~ed for lunch ժողովում ճաշի ընդմիջում հայտարարվեց. The meeting/session ~ed ժողովը/Սեսիան ավարտվեց/փակվեց. (տեղափոխվել) The guests ~ed to the drawing room Յուրերը տեղափոխվեցին հյուրասենյակ:  
**adjournment** [əd'dʒɔ:ɪnmənt] n ընդհատում, հետաձգում. an ~ for a month մեկ ամսվա հետաձգում:  
**adjudge** [əd'dʒʌdʒ] v դատավճիռ կայացնել. ~ smb guilty մեկին մեղավոր ճանաչել. ~ that a man is insane հայտարարել, որ մարդը հոգեկան հիվանդ է. (շնորհել) ~ a prize to smb մրցանակ շնորհել. ~ land and properties հող և սեփականություն շնորհել:  
**adjudg(e)ment** [əd'dʒʌdʒmənt] n դատա-

վճիռ կայացնելը. դատապարտելը. շնորհելը (մրցանակ և այլն):  
**adjudicate** [əd'dʒu:dikeit] v *իրավ.* վճռել, վճիռ կայացնել. ~ a claim for damages վնասների հատուցման որոշում կայացնել. ~ bankrupt (դատարանով) սնանկ հայտարարել. Who is adjudicating in this competition? Ո՞վ է դատում այս մրցույթը:  
**adjudication** [əd'dʒu:di'keiʃn] n *իրավ.* դատավճիռ:  
**adjudicator** [əd'dʒu:dikeitə] n ժյուրիի անդամ. ~s ժյուրի. (քննությանը) քննող:  
**adjunct** ['ædʒʌŋkt] n օգնական, աղյուսակ. *քեր.* [րացում, հավելված]:  
**adjuration** [əd'dʒu'reiʃn] n թախանձանք, աղաչանք:  
**adjure** [əd'dʒʌ] v թախանձել, խնդրել. I ~ you to tell the truth խնդրում/Թախանձում եմ, ասեք ճշմարտությունը:  
**adjust** [əd'dʒʌst] v ճշգրտել, կարգավորել (սարքեր և այլն). ~ one's watch ժամացույցը ուղղել. ~ one's tie/costume/spectacles ուղղել/հարդարել փողկապը/կոստյումը/ակնոցը. (հարմարվել) ~ oneself (to) (new conditions) (նոր պայմաններին) հարմարվել. He hasn't ~ed himself Նա չի հարմարվել. well ~ed [ավ հարմարվող. հարմոցիկ]:  
**adjustable** [əd'dʒʌstəbl] a կարգավորելի. an ~ spanner բացիչ, զատիչ, հարթիչ. (շարժական) ~ shelves շարժական դարակներ:  
**adjuster** [əd'dʒʌstə] n սարքավորող, մոտոցող, մոնտյոր:  
**adjusting** [əd'dʒʌstɪŋ] 1. a *տեխ.* սարքավորող, կանոնավորող. 2. n հավաքման արտադրամաս:  
**adjustment** [əd'dʒʌstmənt] n հարմարեցում, կարգավորում. *տեխ.* հավաքում, սարքավորում. make the necessary ~s անհրաժեշտ կարգավորումներ անել. *ռզմ.* նշանառության/կրակի ուղղում/ճշտում:  
**adjutant** ['ædʒutənt] n համհարգ, աղյուսանտ:  
**ad lib** [,æd'lib] (լատ. ad libitum-ի կրճ.) ըստ ցանկության, ինչպես կամենաս. speak ~ *թատր.* հանպատրաստից ստեղծագործել:  
**ad-man** ['ædmæn] n *խսկց.* գովազդներ կազմող մարդ:  
**ad-mass** ['ædmæs] n ՋԼՄ-ներից ազդեցություն կրող մասսա/զանգված. (արվեստի

մասին) զանգվածային սպառողին հասցեագրված. ցածրորակ, գռեհիկ:

**admeasure** [æd'meɪə] v չափել. չափելով բաժանել:

**admeasurement** [æd'meɪəmənt] n չափում. չափաբաժանում:

**administer** [əd'mɪnɪstə] v կառավարել, դեկավարել. ~ a country երկիր կառավարել. ~ a ministry/department նախարարություն/բաժին դեկավարել. ~ a contract պայմանագիրը կատարել. ~ a programme ծրագիր դեկավարել. ~ a punishment պատիժ կիրառել. ~ justice արդարադատություն գործել ~ to old persons' needs աջակցել/խնամել ծերերին. ~ an oath երդում ընդունել:

**administrate** [əd'mɪnɪstreɪt] v կառավարել, դեկավարել:

**administration** [əd,mɪnɪ'streɪʃn] n կառավարչություն. ~ of a hotel/office/theatre հյուրանոցի/հիմնարկի/թատրոնի կառավարչություն. the ~ կառավարչություն. the Bush ~ Բուշի կառավարչությունը. public ~ պետական կառավարում. (գործածում, իրականացում) ~ of medicine դեղի գործածում. ~ of justice արդարադատության իրականացում. ~ of law օրենքի իրականացում:

**administrative** [əd'mɪnɪstrətɪv] a վարչական. (հշխանության մասին) գործադիր. ~ center վարչական կենտրոն. ~ unit վարչական միավոր. *իրավ.* ~ law վարչական իրավունք:

**administrator** [əd'mɪnɪstreɪtə] n կառավարիչ, ադմինիստրատոր. *իրավ.* խնամակալ:

**admirable** [ˈædmərəbəl] a սքանչելի, հիանալի. ~ self-control հիանալի ինքնատիրապետում. an ~ summary հաջող ամփոփում:

**admiral** [ˈædmərəl] n ծովակալ, ադմիրալ. Admiral Nelson ծովակալ Նելսոնը:

**admiralty** [ˈædmərəlɪ] n ծովակալություն, ծովային նախարարություն. First Lord of the Admiralty ~ (Անգլիայում) ծովային նախարար. *իրավ.* ~ law ծովային իրավունք:

**admiration** [ˌædmə'reɪʃn] n հիացմունք, սքանչացում. be full of ~ հիացած լինել. be ~ of all բոլորի հիացմունքի առարկան լինել. profound/general/sincere ~ խորը/համընդհանուր/անկեղծ հիացմունք. cry of ~ հիացմունքի ճիչ:

**admire** [əd'maɪə] v հիանալ, սքանչանալ. ~

the view of the sea ծովի տեսարանով/տեսքով հիանալ. ~ smn for his courage մեկի քաջությամբ հիանալ:

**admirer** [əd'maɪərə] n երկրպագու. պաշտող:

**admiring** [əd'maɪərɪŋ] a հիասքանչ, սքանչելի. ~ glance հիասքանչ հայացք. an ~ crowd հիացող ամբոխ:

**admissible** [əd'mɪsəbəl] a ընդունելի, թույլատրելի, հնարավոր. It is ~ evidence Այն կարելի է ընդունել որպես ցուցմունք:

**admission** [əd'mɪʃən] n մուտք, ընդունում. ~s office ընդունարան. ~ desk ընդունման սեղան, ադմինիստրատոր. ~ free/by ticket մուտքը՝ ազատ/տոմսերով. price of ~ մուտքի վարձ. ~ fee մուտքի վճար. A ~ to the university is by examination Համալսարան ընդունվում են քննությանը. *իրավ.* an ~ of guilt/defeat մեղքի/պարտության ընդունում. Admission day տվյալ նահանգի՝ ԱՄՆ-ի կազմի մեջ ընդունման օր (տոն):

**admissible** [əd'mɪsɪv] a մատչելի:

**admit** [əd'mɪt] v ներս թողնել. This ticket ~s two Այս տոմսը երկու հոգու համար է. Children are not ~ted երեխաների մուտքն արգելված է The hall ~s 200 people Դահլիճում (միայն) 200 մարդ է տեղավորվում. (ընդունել) ~ to the university/into the school/into club համալսարան/դպրոց/ակումբ ընդունել. (ընդունել, ճանաչել, համաձայնվել) ~ reluctantly/readily դժկամորեն/պատրաստակամությամբ ընդունել. generally ~ted բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչում գտած. ~ one's claim պահանջն ընդունել, պահանջին համաձայնվել. ~ interpretation մեկնաբանությունն ընդունել:

**admittance** [əd'mɪtns] n մուտք. deny ~ ներս չթողնել, չընդունել. No ~ Մուտքն արգելվում է No ~ except Մուտքը միայն գործով:

**admittedly** [əd'mɪtɪdli] adv անկասկած. He is ~ an atheist Անկասկած նա աթեիստ է:

**admix** [əd'mɪks] v խառն(վ)ել. ավելացնել որպես բաղկացուցիչ մաս:

**admixture** [əd'mɪkstʃə] n խառնուրդ (*նաև՝* մյուսքը, որը խառնվում է մեկ այլ մյուսի հետ):

**admonish** [əd'mɒnɪʃ] v նախազգուշացնել, հորդորել, խորհուրդ տալ. He ~ed the boys against smoking Նա հորդորեց տղաներին չծխել:

**admonition** [ˌædməˈniʃn] n հորդոր, հորդորանք, նախազգուշացում. հանդիմանություն, նկատողություն:

**admonitory** [ədˈmɒnitəri] a նախազգուշացնող, հորդորող. an ~ letter նախազգուշական նամակ:

**ado** [əˈdu:] n իրարանցում, աղմուկ. much ~ about nothing իզուր տեղը մեծ աղմուկ. without more/much/further ~ անմիջապես, առանց այլևայլության:

**adobe** [əˈdəʊbi] n չքրծված աղյուս. an ~ house շինություն չքրծված աղյուսից:

**adolescence** [ˌædəˈlesns] n պատանեկություն:

**adolescent** [ˌædəˈlesnt] 1. n պատանյակ, աղջնակ. դեռահաս. 2. a պատանեկան:

**adopt** [ədɒpt] v որդեգրել. ընտրել. ~ a child երեխա որդեգրել. ~ a policy քաղաքականություն որդեգրել. an ~ed child որդեգիր երեխա. (ընդունել, յուրացնել) The custom was ~ed in many countries Սովորույթն ընդունվեց շատ երկրներում. ~ a resolution/plan/course of action բանաձև/պլան/ կուրս ընդունել:

**adoptee** [ˌædɒpˈti:] n որդեգիր, հոգեգավակ:

**adoption** [ədɒpʃn] n որդեգրում, յուրացում. the country of his ~ երկիրը, որը նրան ապաստան է տվել:

**adoptive** [ədɒptiv] a որդեգրյալ. ~ parents որդեգրած ծնողներ:

**adorable** [əˈdɔːrəbl] a պաշտելի, հիասքանչ. What an ~ kitten! Ի՞նչ հիասքանչ փիսիկ է:

**adoration** [ˌædəˈreɪʃn] n պաշտում, երկրպագություն:

**adore** [əˈdɔː] v պաշտել, երկրպագել. ~ sweets/music քաղցրեղեն/երաժշտություն պաշտել:

**adorer** [əˈdɔːrə] n երկրպագու:

**adorn** [ədɔːn] v զարդարել:

**adornment** [ədɔːnmənt] n զարդարում. զարդարանք:

**adrenal** [ədriːnl] 1. n մակերիկամային գեղձ (*adrenal* ~ glands). 2. a մակերիկամային:

**adrift** [ədriːft] adv հոսանքով, ալիքների ուժով. be ~ հոսընթացով տարվել/զնալ. *փխբ.* հոսանքով լողալ, համակերպվել. turn

smb ~ դուրս անել առանց կյանքի/կենսական միջոցների, տնից-տեղից գրկել:

**adroit** [əˈdrɔɪt] a ճարպիկ, ճարտար:

**adulate** [ˈædjuleɪt] v բժնել, ստորաքարշություն անել:

**adulation** [ˌædjuˈleɪʃn] n բժնանք, ստորաքարշություն:

**adulatory** [ˈædjuleɪtəri] a շողոքոթ, հաճոյակատար:

**adult** [ˈædʌlt] n, a չափահաս մարդ. չափահաս, հասուն. ~ education կրթություն չափահասների համար. ~ film ֆիլմ չափահասների համար. A~s only! Մինչև 16 տարեկան երեխաների մուտքն արգելվում է. ~ manners իրեն չափահասի պես պահել:

**adulterate** [ədʌltəreɪt] a կեղծ, խարդախ, ամուսնական հավատարմությունը խախտող:

**adulterate** [ədʌltəreɪt] v կեղծել, խարդախել. ~ the milk/wine with water կաթին/զինումը ջուր խառնել:

**adulteration** [ˌædʌltəˈreɪʃn] n կեղծում, խարդախում:

**adulterer** [ədʌltərə] n դավաճանող (տղամարդ):

**adulteress** [ədʌltərəs] n դավաճանող (կին):

**adultery** [ədʌltəri] n ամուսնական անհավատարմություն. դավաճանություն:

**adulthood** [ˈædʌlθud] n չափահասություն:

**adust** [ədʌst] a այրված, չորացած. արևակեղ:

**advance** [ədˈvɑːns] n առաջխաղացում, զարգացում. every new ~ յուրաքանչյուր նոր առաջխաղացում. the ~ of science գիտության զարգացումը. considerable/remarkable ~ նշանակալից/հսկայական հաջողություններ. (ավելացում, բարձրացում) ~ in prices գների բարձրացում. ~ in cost of living կենսամակարդակի արժեքի ավելացում. ~ in office պաշտոնի բարձրացում. (կանխավճար) in ~ նախօրոք. pay in ~ նախօրոք վճարել. book in ~ նախօրոք պատվիրել. in ~ of առջևում. ավելի շուտ/առաջ. arrive in ~ of others մյուսներից ավելի շուտ ժամանել. ~s առաջին քայլը (որևէ գործում). առաջարկություն. make ~s to smb սիրախոսություն անել. make the first ~s հաշտության առաջին քայլն անել. The workman asked for an ~ բան-

վորը կանխավճար խնդրեց:

**advance** [əd'vɑ:ns] a նախօրոք, նախնական, առաջադեմ. ~ copy նմուշային օրինակ. ~ booking office տոմսերի նախնական վաճառքի դրամարկղ. ~ luggage բեռների առաքում. ~ man թեկնածուի վստահված անձ. թատերական/արվեստի մասնավոր ձեռնարկու. անտրեպրենյոր. ~ party պետական գործչի/պրեզիդենտի այցը նախապատրաստող խումբ. ~ study բարձր մակարդակի հետազոտություններ:

**advance** [əd'vɑ:ns] v առաջանալ, առաջ շարժվել. ~ at a great rate մեծ արագությամբ առաջանալ. The work is ~ing Աշխատանքը/Գործն առաջ է գնում. ~ very far շատ առաջ/հեռու գնալ. as the work ~d աշխատանքի առաջընթացի հետ մեկտեղ. շխմ. ~ one's queen թագուհուն առաջ տանել. ~ the date ժամկետը/օրը առաջ տանել. ~ an opinion միտք առաջ քաշել, կարծիք արտահայտել. ~ money to smb պարտքով փող տալ/փոխ տալ:

**advanced** [əd'vɑ:nst] a առաջադեմ. ~ pupil առաջադեմ աշակերտ. (առաջավոր, բարձր մակարդակի) an ~ idea առաջադեմ միտք. courses for ~ students դասընթացներ առաջավոր ուսանողների համար. ~ studies գիտական աշխատանք. ~ views առաջավոր մտքեր. Summer is far ~ Ամառը վերջանում է. ~ in years տարիքով, ծերացած:

**advance guard** [əd'vɑ:nsgɑ:d] n ավանգարդ:

**advancement** [əd'vɑ:nsmənt] n առաջխաղացում, առաջադիմություն. (հաջողություն) social ~ հասարակական առաջընթաց. ~ of learning ուսման որակի բարձրացում:

**advantage** [əd'vɑ:ntɪdʒ] n առավելություն. բարենպաստ դրություն. gain/have/win an ~ over smb մեկի նկատմամբ առավելություն ունենալ/շահել. score an ~ առավելություն ստանալ. have ~ from the start հենց սկզբից առավելություն ունենալ. have no ~ ոչ մի առավելություն չունենալ. to the best of ~ լավագույն/ամենաշահավետ կերպով. the main ~ հիմնական/գլխավոր առավելությունը. gain military ~s over ռազմական առավելության հասնել. (շահ). turn smth to ~ ամենինչ իր օգտին դարձնել. be to ~ շահավետ

լինել. What ~? Ի՞նչ օգուտ/շահ. of no ~ անշահավետ. մրգ. (թենիս) ~ in/out շատ (ավել)/քիչ (պակաս) take ~ of օգտվել. take ~ of every opportunity օգտագործել ամեն մի/ցանկացած հնարավորություն:

**advantageous** [ˌædvəntɪ'dʒəs] a նպաստավոր, շահավետ. ~ position նպաստավոր դիրք:

**advent** [ˈædvənt] n գալուստ, ժամանում. կրոն. A ~ Քրիստոսի երկրորդ գալուստը. since the ~ of atomic power ատոմային էներգիայի հայտնվելուց հետո:

**adventitious** [ˌædvəntɪʃəs] a պատահական. կողմնակի. ~ aid պատահական/կողմնակի օգնություն:

**adventure** [əd'ventʃə] n արկած. dangerous/strange/extraordinary/funny/exciting/incredible ~ վտանգավոր/տարօրինակ/արտակարգ/ծիծաղելի/հուզիչ/անհավատալի արկած. look for ~ արկած փնտրել. love of ~ սեր արկածների նկատմամբ, արկածասիրություն. have an ~ արկած ունենալ. an ~ story/film արկածային վեպ/ֆիլմ:

**adventurer** [əd'ventʃərə] n արկածախնդիր, բախտախնդիր. ավանտյուրիստ:

**adventuress** [əd'ventʃərəs] n արկածախնդիր/բախտախնդիր կին. ավանտյուրիստուհի:

**adventurism** [əd'ventʃərizm] n հասարակական նորմերի խախտում. քղք. ավանտյուրիզմ:

**adventurous** [əd'ventʃərəs] a համարձակ, նախաձեռնող. արկածախնդիր. ~ person համարձակ/նախաձեռնող մարդ. ~ journey արկածախնդիր ուղևորություն:

**adverb** [ˈædvə:b] n քեր. մակբայ:

**adverbial** [əd'və:biəl] a քեր. մակբայական:

**adversary** [ˈædvəsəri] n հակառակորդ, ախոյան. ընդդիմական:

**adversative** [əd'və:sətɪv] a հակադրություն արտահայտող. քեր. ընդդիմական (շաղկապ):

**adverse** [ˈædvə:s] a անբարենպաստ. ~ weather conditions անբարենպաստ կլիմայական պայմաններ. ~ wind անբարենպաստ քամի կամ հանդիպակաց/հակառակ քամի. under ~ circumstances աննպաստ հանգամանքներում. (հակառակ, թշնամական) developments ~ to our interests մեր շահերին հա-

կադիր զարգացում/առաջխաղացում. have an ~ effect հակառակ արդյունք ունենալ:

**adversity** [əd'və:səti] n ծախորդություն, դժբախտություն. show courage in ~ դժբախտության պահին արիություն ցուցաբերել. the season of ~ անհաջողության շրջան. companion in ~ դժբախտության ընկեր. be patient/cheerful in ~ համբերատար լինել/իրեն չկորցնել անհաջողության դեպքում. smile in the face of ~ ժպտալ անհաջողության երեսին/առկայությամբ:

**advert** [əd'və:t] v դիմել, հղել. ~ to a problem անդրադառնալ խնդրին:

**advertence** [əd'və:təns] n ուշադրություն, ուշադիր վերաբերմունք:

**advertise** ['ædvətaiz] v հայտարարություն տալ, հայտարարել. ~ in newspapers թերթերում հայտարարություն տալ. ~ a vacancy թափուր պաշտոն հայտարարել. (գովազդել) ~ goods ապրանքներ գովազդել. The film is widely ~d Այս ֆիլմը լայնորեն գովազդվում է. It pays to ~ **Գ**ովազդը շահավետ է:

**advertisement** [əd'və:tismənt] n հայտարարություն (*կրճ. ad, advert*) put/place/insert an ~ in a newspaper թերթում հայտարարություն տալ. The ~ says **Յ**այտարարությունում ասվում է. office for ~s հայտարարությունների բյուրո/բաժին. ~ column (թերթում) հայտարարությունների սյունակ. (գովազդ) ~ of products ապրանքների գովազդ. ~ manager գովազդային գործակալ. ~ office գովազդային գործակալություն. ~ of a concert ազդ, աֆիշ. job ~ թափուր տեղի հայտարարություն:

**advertiser** ['ædvətaizə] n հայտարարություն տվող անձ. գովազդող:

**advertising** ['ædvətaiziŋ] 1. n գովազդ. My friend is in ~ Իմ ընկերը աշխատում է գովազդային գործակալությունում. 2. a գովազդային:

**advice** [əd'vaiz] n խորհուրդ, խորհրդատվություն. sincere/timely ~ անկեղծ/ժամանակին խորհուրդ. a piece/bit/word of ~ խորհուրդ. get/receive smb's ~ մեկից խորհուրդ ստանալ. ask smb's ~ խորհրդակցել մեկի հետ. take/follow smb's ~ խորհրդին հետևել/լսել. act on ~ խորհրդով գործել/շարժվել. reject ~ խորհուրդը մերժել. legal ~ իրավա-

խորհրդատվություն. on smb's ~ մեկի խորհրդով. give/offer ~ խորհուրդներ տալ. act on medical ~ հետևել բժշկի խորհրդին. *ֆիմ.* ~ note ծանուցում, ավիզո. letter of ~ հանձնարարական նամակ:

**advisable** [əd'vaizəbəl] a նպատակահարմար, հանձնարարելի. If you think it ~ **Եթե** նպատակահարմար էք գտնում. It is not ~ **Ցանկալի/Նպատակահարմար չէ:**

**advise** [əd'vaiz] v խորհուրդ տալ, հանձնարարել. The doctor ~d a change **Բժիշկը փոփոխության խորհուրդ տվեց**, He is well/ill ~d **Նրան լավ/վատ խորհուրդ տվեցին**. I would strongly ~ you **Յաստատամտորեն կհանձնարարեի**. ~ against ընդդեմ/որևէ բանի դեմ խորհուրդ տալ. You'll be well-~d to refuse **խորհուրդ կտայի/Ավելի ճիշտ կլիներ մերժել**. (տեղեկացնել) ~ of the time of arrival **տեղեկացնել ժամանման մասին:**

**advisedly** [əd'vaizidli] adv մտածված, գիտակցաբար:

**adviser** [əd'vaizə] n խորհրդատու, խորհրդակալ. legal ~ իրավախորհրդատու:

**advisory** [əd'vaizəri] a խորհրդակցական. in an ~ capacity **խորհրդակցական ծայնով**. ~ board **խորհրդատու հանձնաժողով:**

**advocacy** ['ædvəkəsi] n փաստաբանություն, պաշտպանություն:

**advocate** ['ædvəkət] n փաստաբան, դատապաշտպան. experienced ~ **փորձառու փաստաբան**. an ~ of peace **խաղաղության կողմնակից:**

**advocate** ['ædvəkeit] v պաշտպանել, պաշտպան կանգնել. What course do you ~? **Ինչի՞/ո՞ր գործընթացի կողմնակից եք:**

**aegis** ['i:dzis] n պաշտպանություն, հովանավորություն. հովանի. under the ~ of **հովանավորության տակ**. հովանավորությամբ:

**aerate** ['eəreit] v գազավորել. ~d water **գազավորած ջուր**. (օդափոխել) ~ the room **սենյակն օդափոխել:**

**aeration** [eə'reiʃn] n օդափոխություն, գազավորում:

**aerial** ['eəriəl] n ալեհավաք, անտենա:

**aerie** ['iəri] n արծվի բուն. տուն բարձր լեռներում:

**aeriform** ['eərifɔ:m] a գազանման, օդային. *փխբ.* օդային, ոչ-իրական:

**aerify** ['eərifai] v գազային վիճակի վերածել, գազավորել:

**aerobatics** [ˌeərəʊˈbætiks] n pl ձևավոր թռիչքներ (օդանավով):  
**aerobics** [eəˈrəʊbiks] n աերոբիկա:  
**aerocarrier** [eərəʊˈkæriə] a ավիակիր (նավ):  
**aerodrome** [ˈeərədrəʊm] n օդանավակայան:  
**aerodynamics** [ˌeərəʊdaɪˈnæmiks] n աերոդինամիկա:  
**aerogram** [ˈeərəʊgræm] n ավիանամակ:  
**aerolite** [ˈeərəʊlaɪt] n ասուպ, մետեորիտ:  
**aeronaut** [ˈeərəʊnɔ:t] n օդագնաց, օդանավոր:  
**aeronautics** [ˌeərəʊˈnɔ:tiks] n pl օդաչուական գործ:  
**aeronavigator** [ˌeərəʊˈnævigeɪtə] n օդաչու-շտուրման:  
**aerophone** [ˈeərəfəʊn] n ռադիոհեռախոս:  
**aeroplane** [ˈeərəpleɪn] n օդանավ, ինքնաթիռ, սավառակ:  
**aeropot** [ˈeərəpɔ:t] n օդանավակայան:  
**aerostat** [ˈeərəʊstæt] n օդապարիկ:  
**aerostatics** [ˌeərəʊˈstætiks] n pl օդագնացություն, աերոստատիկա:  
**aerostation** [ˌeərəʊˈsteɪʃn] n օդագնացություն:  
**aerotechnics** [ˌeərəʊˈtekniks] n pl ավիատեխնիկա:  
**aesthete** [ˈi:sθi:t] n գեղապաշտ, գեղագետ, էսթետ:  
**aesthetic** [i:sˈθetik] a գեղագիտական, էսթետիկական:  
**aesthetics** [i:sˈθetiks] n pl գեղագիտություն, էսթետիկա:  
**afar** [əˈfa:] adv հեռու, հեռվում. from ~ հեռվից:  
**affability** [ˌæfəˈbɪləti] n սիրալիրություն, քաղաքավարություն:  
**affable** [ˈæfəbl] a սիրալիր, քաղաքավարի. ~ to everybody սիրալիր բոլորի նկատմամբ. an ~ reply սիրալիր պատասխան:  
**affair** [əˈfeə] n գործ. purely personal~ խիստ անձնական գործ. state of ~ գործերի վիճակ. strange ~ տարօրինակ գործ. That 's not my ~ Ռա իմ գործը չէ. a big ~ մեծ բան/իրադարձություն. current ~s ընթացիկ գործեր. home ~s ներքին գործեր/ի նախարարություն. foreign/external ~s արտաքին գործեր/ի նախարարություն. business ~s առևտրական

գործեր. put one's ~s in order գործերը կարգի բերել. interfere in the internal ~s of the country երկրի ներքին գործերին միջամտել. an ~ of honour մենամարտ, պատվի գործ Mind your own ~s Ձբաղվիր քո գործերով. It is a poor ~ Պրանից բան դուրս չի գա. love ~ սիրային գործ/պատմություն/կապ. He's having an ~ with Maria Նա սիրային կապի մեջ է Մարիայի հետ:  
**affect** [ˈæfekt] v ներգործել, ազդել. ~ one's health/decision ներգործել առողջության վրա, ազդել որոշման վրա. This ~s me Ռա ինձ է վերաբերում. ~ed by cold ցրտից անմիջապես ազդված. (հուզվել) We were ~ed by the play Ներկայացումը մեզ հուզեց. (ձևանալ, ձևացնել) He ~s indifference Նա անտարբեր է ձևանում. He ~s not to hear Նա ձևացնում է, որ չի լսում:  
**affectation** [ˌæfekˈteɪʃn] n ձևանալը, առերես սեր. an ~ of interest/indifference/ignorance հետաքրքրության/անտարբերության/տգիտության ձևացում. with an ~ of interest հետաքրքրություն ձևացնելով. /սեքսեթանք/ I don't like her ~s Նրա սեքսեթանքը ինձ դուր չի գալիս. fall into ~ սկսել սեքսեթել:  
**affected** [əˈfektɪd] a անբնական, արհեստական, ցուցադրական. ~ manners սեքսեթ պահվածք. She is an ~ person Նա կոտրատվում է:  
**affecting** [əˈfektɪŋ] a հուզիչ. an ~ scene հուզիչ տեսարան:  
**affection** [əˈfekʃn] n ջերմություն, մտերմություն. կապվածություն, սեր. gain/win smb's ~ մեկի սերը ձեռք բերել/արժանանալ. He is held in great ~ Նրան բոլորը սիրում են. sincere/tender ~ անկեղծ/քնքուշ սեր. have/feel an ~ towards smb, (check the entry) անկեղծ սեր տածել մեկի նկատմամբ:  
**affectionate** [əˈfekʃənət] a սիրող, քնքուշ, նուրբ. ~ look քնքուշ հայացք. He is very ~ Նա շատ սիրալիր է. an ~ wife սիրող կին:  
**affectionately** [əˈfekʃənətli] adv ջերմ, քնքշորեն, սիրով. խանդաղատանքով. greet smn ~ ջերմ ընդունելություն ցույց տալ. (նամակի վերջում) yours ~ անկեղծ ձեր:  
**affective** [æˈfektɪv] a հուզիչ, սրտառուչ:  
**affiance** [əˈfaɪəns] n ամուսնության խոստում. ~ in վստահություն:  
**affidavit** [ˌæfɪˈdeɪvɪt] n երդմամբ հաստատ-

- ված գրավոր ցուցմունք/վկայություն. swear/make/take an ~ գրավոր ցուցմունք տալ:
- affiliate** [ə'fili'eit] v մասնաճյուղը հանդիսանալ be ~d with միացած լինել. be ~d to մասը հանդիսանալ:
- affiliation** [ə'fili'eɪʃn] n միացում, անդամագրում, որդեգրում:
- affinage** [ə'fainidʒ] n տեխ. գտում, մաքրում:
- affined** [ə'fainɪd] a նման, ազգակից:
- affinity** [ə'fɪnətɪ] n նմանություն. ազգակցություն. There is a strong ~ between them Նրանք շատ կապված են. I feel no ~ with him Մեզ ոչինչ էլ կապում. ~ club հետաքրքրությունների ակումբ. linguistic ~ լեզվաբանական ազգակցություն:
- affirm** [ə'fɜ:m] v հաստատել, պնդել. ~ a decision որոշումը հաստատել. ~ that it is true հաստատել, որ դա ճիշտ է:
- affirmation** [,æfə'meɪʃn] n հաստատում:
- affirmative** [ə'fɜ:mətɪv] a հաստատական, դրական. ~ answer/sentence դրական պատասխան. հաստատական նախադասություն. answer in the ~ դրական պատասխան տալ:
- affix** ['æfɪks] n *թեր.* մասնիկ, ածանց:
- affix** [ə'fɪks] v անրացնել, փակցնել. ~ seal/stamp to a document փաստաթղթին կնիք դնել/դրոշմանիչ փակցնել. ~ one's signature իր ստորագրությունը դնել. ~ a postscript հետգրություն ավելացնել:
- afflict** [ə'flɪkt] v տանջել, վիշտ/տանջանք պատճառել. feel ~ed by the news լուրից շատ վշտանալ. ~ed with the rheumatism հոդացավից տանջվել:
- affliction** [ə'flɪkʃn] n դժբախտություն, հիվանդություն. help people in ~ մարդկանց օգնել դժբախտության պահին. the ~s of old age ծերության հիվանդություններ:
- affluence** ['æfluəns] n ճոխություն, հարստություն live in ~ ճոխության մեջ ապրել. rise to ~ հարստանալ:
- affluent** ['æfluənt] a հարուստ, ճոխ, առատ. the ~ society հանընդհանուր բարօրության հասարակություն. in ~ circumstances առատ պայմաններում:
- afflux** ['æflʌks] n ուժգին հոսք, հոսանք. *թշշ.* արյունախոռում:
- afford** [ə'fɜ:d] v ի վիճակի լինել, հնարավորություն/միջոցներ ունենալ. ~ money/time դրամական/ժամանակային միջոցներ ունենալ. He can't ~ a car Նա չի կարող (իրեն թույլ տալ) մեքենա գնել. I can't ~ to lose time Ես չեմ կարող ժամանակ կորցնել. He can't ~ it Դա նրա հնարավորություններից դուրս է. She spends more than she can ~ Նա ավելի է ծախսում, քան կարող է. (տալ, տրամադրել) ~ shelter ապաստան տալ. ~ great pleasure մեծ հաճույք պատճառել. The trees ~ a pleasant shade Ծառերը հաճելի հովանի են ապահովում/տալիս:
- afforest** [æ'fɒrɪst] v անտառապատել, անտառ տնկել:
- afforestation** [æ'fɒrɪs'teɪʃn] n անտառատունկ, անտառապատում:
- affranchise** [ə'fræntʃaɪz] v ազատել ստրկությունից:
- affray** [ə'freɪ] n վեճ, կռիվ (հասարակական վայրում):
- affricate** ['æfrɪkət] n *հնչ.* կիսաշփական, աֆրիկատ:
- affront** [ə'frʌnt] n (մտադրված) վիրավորանք հրապարակավ. put an ~ upon վիրավորանք հասցնել. offer an ~ to վիրավորանք հասցնել. suffer an ~ վիրավորանք կրել. It was an ~ to his pride Դա խոցեց նրա ինքնասիրությունը:
- affront** [ə'frʌnt] v վիրավորել, վիրավորանք հասցնել. I was ~ed by his remark Ինձ վիրավորեց նրա ակնարկը:
- afield** [ə'fi:ld] adv դաշտում, տանից շատ հեռու. far ~ հեռվում. Don't go too far ~ Տանից/Շատ հեռու մի գնա:
- afire** [ə'faɪə] a կրակի մեջ, բռնկված. set ~ կրակ տալ, վառել:
- afame** [ə'fleɪm] a, predic, adv բոցերի մեջ, բոցավառված. set ~ բոցավառել, հրդեհել:
- aflat** [ə'flæt] adv մակերևութին հավասար, հարթ:
- afloat** [ə'fləʊt] a, predic, adv ծովի/ջրի վրա. keep ~ մակերեսի վրա մնալ, չխեղդվել/չսուզվել. նավի վրա. life ~ նավաստու կյանք. spend one's life ~ կյանքը ծովում անցկացնել. be still ~ դեռևս ջրի վրա լինել, չսուզվել:
- afoot** [ə'fʊt] adv ընթացքի/շարժման մեջ. There is smth ~ Ինչ-որ բան է նախապատրաստվում, Դավ է նյութվում:
- afore** [ə'fɔ:] adv, prep *ժով.* առջևում, առաջ:



**afore-** [ə'fɔ:] pref վերո-, վերը:

**aforecited** [ə'fɔ:saitid] a վերը բերված/ նշված:

**aforenamed** [ə'fɔ:neimd] a վերոհիշյալ, վերը նշված:

**aforethought** [ə'fɔ:θɔ:t] a կանխամտածված, դիտավորյալ:

**aforetime** [ə'fɔ:taim] adv հնում, առաջ, մի ժամանակ:

**afraid** [ə'freid] a, predic վախեցած. be ~ of վախենալ. be ~ of smth/smb տազնապել որևէ բանի համար. make ~ վախեցնել. I'm ~ not... վախենամ, որ ոչ...:

**afmerican** [,æfrə'merikən] n աֆրիկյան ամերիկացի. ~ studies ամերիկյան սևամորթների պատմության/գրականության և այլ հարցերին նվիրված ուսումնասիրություններ/ դասախոսությունների դասընթաց:

**afresh** [ə'freʃ] adv նորից, վերստին:

**African** [ˈæfrikən] n աֆրիկացի, աֆրիկյան, աֆրիկական:

**afro** [ˈæfrəʊ] n ամերիկյան սևամորթների ոճով. ~ hairdo/haircut մազերի սանրվածք, ~ clothes հագուստ աֆրո ոճով:

**aft** [a:ft] n, adv *ծով*. խել, նավախել. նավի հետակողմում. go ~, be ~ նավի հետակողմում:

**after** [ˈɑ:ftə] 1. adv հետո, ավելի ուշ (ժամանակ). You speak first, I'll speak ~ Նախ դու խոսիր, հետո ես կասեմ. He left soon ~ Դրանից հետո նա շուտով մեկնեց. 2. prep հետո. ~ dinner/breakfast ճաշից/նախաճաշից հետո. soon/shortly ~ անմիջապես հետո. the day ~ tomorrow վաղը չէ մյուս օրը. day ~ day օրեցօր. time ~ time հաճախ. the next stop ~ this one մեկ կանգառից հետո. Shut the door ~ you Դուռը հետևիցդ փակիր. A~ you! Միայն ձեզնից հետո, Անցեք խնդրեմ. (հերթում) A~ you ես ձեզնից հետո եմ. (ըստ, սեփականության) This is ~ my own heart Սա իմ սրտով է. dress ~ the latest fashion վերջին մոդայով հագնվել. He takes ~ his father Նա իր հորն է նման. (մասին) ask ~ one's health մեկի առողջությանը հետաքրքրվել, մասին հարցնել. ~ all վերջ ի վերջո. be named ~ smn անվանել մեկի պատվին. ~ Dickens ըստ Դիքենսի. The police are ~ him Ոստիկանությունը նրան է փնտրում. be/get ~ smb. մեկին փնտրել/ հետևից ընկնել. *հմկրգ*. ~-book/journal փոփոխությունների մատյան. 3. conj երբ. ~ I get

back երբ ես վերադառնամ. soon ~ շուտով. վերադառնալուցս հետո:

**afterbirth** [ˈɑ:ftəbɜ:θ] n ընկերք:

**aftercare** [ˈɑ:ftəkeə] n խնամք հիվանդությունից/ծննդաբերությունից հետո. վերականգնում. ~ centre վերականգնման կենտրոն:

**aftercrop** [ˈɑ:ftəkɹɒp] n երկրորդ բերք/հունձ:

**aftereffect** [ˈɑ:ftəri,fekt] n հետևանքներ, հետևանքային բարդություններ (*հոսկյա*. դեղորայքի հետ կապված):

**afterglow** [ˈɑ:ftəgləʊ] n վերջալույս, մայրամուտի շող:

**aftergrass** [ˈɑ:ftəgrɑ:s] n աշնանախոտ:

**afterlife** [ˈɑ:ftəlaɪf] n կյանքի վերջին շրջանը. հանդերձյալ կյանք:

**aftermath** [ˈɑ:ftəmæθ] n աշնանախոտ. *փխթ*. հետևանքներ:

**afternoon** [ˌɑ:ftə'nu:n] n ցերեկ, կեսօրից հետո. in/during the ~ ցերեկը. this/yesterday/tomorrow ~ այս/երեկ/վաղը ցերեկը. Good ~ ! Բարի օր. in the late ~ երեկոյան կողմ. in the ~ of life կյանքի վերջալույսին. ~ concert/train/flight ցերեկային համերգ/գնացք/թռիչք:

**afterpiece** [ˈɑ:ftəpi:s] n ներկայացումից հետո կարճատև պարեր և երաժշտություն:

**afters** [ˈɑ:ftəz] n *խսկ*. (ճաշից հետո) աղանդեր, անուշեղեն:

**aftertaste** [ˈɑ:ftəteɪst] n ուտելուց հետո մնացած համը. կողմնակի/ավելորդ համ:

**aftertax** [ˈɑ:ftətæks] n հարկերը պահելուց հետո մնացած դրամը. ~ earnings մաքուր աշխատավարձ:

**afterthought** [ˈɑ:ftəθɔ:t] n ուշացած միտք. I had an ~ ես դա հետո մտածեցի:

**aftertreatment** [ˈɑ:ftə,tri:tmənt] n հետագա մշակում:

**afterwards** [ˈɑ:ftəwɜ:ds] adv հետո, ավելի ուշ, հետագայում. I'll see you ~ Կտեսնվենք ավելի ուշ/հետո. a year or two ~ դրանից մեկ-երկու տարի հետո, shortly ~ դրանից հետո շատ շուտով. A~ he was sorry Գետագայում նա ափսոսում էր:

**again** [ə'gen, ə'geɪn] adv նորից, կրկին դարձյալ. It's good to be home ~ Ի՞նչ լավ է նորից տանը լինել. Try it ~ Նորից փորձիր. now and ~ ժամանակ առ ժամանակ. ever and

~ երբեմն. time and ~ բազմիցս. ~ and ~ կրկին ու կրկին. over ~ մեկ անգամ ևս:

**against** [ə'genst, ə'geinst] prep դեմ, հակառակ. ~ the idea զաղափարին դեմ/հակառակ. ~ the wind քամուն հակառակ. I have nothing ~ him Նրա դեմ ոչինչ չունեմ. fight ~ war պայքարել ընդդեմ պատերազմի. an injection ~ typhus սրսկում տիֆի դեմ. ~ one's interest շահերին դեմ. (համար) save ~ a rainy day սև օրվա համար հետ դնել. buy food in ~ the arrival of guests գնումներ կատարել հյուրերին ընդունելու համար. (հենարան, ֆոն) The man leant ~ the wall Մարդը պատին հենվեց. ~ the bright sky պայծառ երկնքի ֆոնի վրա. The ship ran ~ the rock Նավը բախվեց ժայռին/խութին. He struck his foot ~ the stone Ոտքը քարին խփեց:

**agape** [ə'geip] a, predic, adv բերանը բաց:

**agaric** ['ægarik] n *sup.* թիթեղասունկ:

**agate** ['ægət] n ագատ:

**age** [eidz] n հասակ, տարիք. at an early/advanced ~ վաղ/հասուն տարիքում. at the ~ of ten տասը տարեկան հասակում. be of middle ~ միջին տարիքի լինել. school ~ դպրոցական տարիք. come of ~ տարիքն առնել. She is twice your ~ Նա քեզնից երկու անգամ մեծ է. be of ~ չափահաս լինել. become of ~ տարիքն առնել. old ~ ծերություն. (դար, էպոխա) Early Stone ~ վաղ քարի դար. Golden ~ ոսկեդար. the Middle ~s միջին դարեր. ~ long դարավոր. ~ resistant տարիքադիմացկուն, չծերացող. proof of ~ տարիքը հաստատող փաստաթուղթ. the ~ of Shakespeare Շեքսպիրի դարաշրջանը. for ~s դարեր շարունակ. ~ limit տարիքային սահմանափակում. We waited an ~/for ~s Մի ամբողջ հավերժություն սպասեցինք. ~s ago շատ վաղուց:

**age** [eidz] 1. v ծերանալ. The experience ~d him Ապրումները նրան ծերացրին. He has greatly ~d Նա մկատելիորեն ծերացել է. 2. a ~-long դարավոր. ~ -old հին, վաղեմի, դարավոր. the ~ dream of men մարդկանց դարավոր երազանքը:

**aged** [eidzɪd] a տարիքով, տարեց. ծեր. the ~ and elderly տարեցներ և ծերեր. (տարեկան) a boy ~ 15 -15 տարեկան տղա:

**age group** ['eidzgru:p] n տարիքային խումբ:

**ageing** [eidziŋ] n մեծանալը, ծերացում, ծերանալը. the process of ~ ծերանալու պրոցես:

**ageism** ['eidzi:m] n տարիքային որևէ խմբի/հատակապես մեծահասակների/նկատմամբ ունեցած կանխակարծիք:

**ageless** ['eidzles] a տարիք չունեցող, չծերացող, հավերժ. He seems ~ Թվում է, թե նա չի ծերանում/տարիք չունի. Shakespeare's tragedies are ~ Շեքսպիրի ողբերգությունները հավերժ են:

**agenc/y** ['eidzənsi] n գործակալություն, travel/tourist ~ տուրիստական/ճամփորդական գործակալություն. employment ~ աշխատանքի բյուրո. coordinating ~ համակարգող մարմին. government ~ies կառավարական հաստատություններ/մարմիններ. by/through the ~ of օգնությամբ, միջոցով:

**agenda** [ə'dʒendə] n pl օրակարգ. an item on the ~ օրակարգի կետը. the ~ as it stands օրակարգն առանց փոփոխության (ինչպես որ կա):

**agent** ['eidzənt] n գործակալ, միջնորդ. insurance/commercial/local ~ ապահովագրական/առևտրական/տեղական գործակալ. publicity ~ գովազդային գործակալ. travelling ~ ճամփորդող առևտրական. shipping ~ նավագնացության գործակալ. diplomatic ~ դիվանագիտական ներկայացուցիչ, commission ~ միջնորդ առևտրական. sole ~ միակ միջնորդ առևտրական. advance ~ պայմանագիր կնքող գործակալ. forwarding ~ առաքիչ, էքսպեդիտոր. act as smb's ~ գործել որպես մեկի ներկայացուցիչ/մեկի ներկայացուցիչ լինել. chemical ~ քիմիական նյութ, ռեակտիվ. (գործոն) Rain and snow are natural ~s Անձրևը և ձյունը բնական գործոններ են. secret-service ~ հետախուզության գործակալ. estate ~ անշարժ գույքի գործակալ:

**agglomerate** [ə'glɒməreɪt] v ժողովել, կուտակել, դիզել (զանգվածի ձևով):

**agglomeration** [ə,glɒmə'reɪʃn] n կուտակում, դիզում (հաճախ՝ հին, թափօփված իրերի). *տե/յ.* ագլոմերացիա:

**agglutinate** [ə'glu:tineɪt] 1. v կցել, սսնձել, կպցնել. 2. [ə'glu:tɪnət] a սսնձած, լեզվ. կցական. ~ languages կցական լեզուներ:

**agglutination** [ə,glu:tɪ'neɪʃn] n կցելը,

կայցնելը. լեզվ. կցականություն, կցում:  
**agglutinative** [ə'glu:tɪnətɪv] a կպչուն, մածուցիկ. լեզվ. կցական:  
**aggrandize** [ə'grændəɪz] v մեծացնել, ուժեղացնել, բարձրացնել. չափազանցնել:  
**aggravate** ['ægrəveɪt] v խորացնել, սրել, սաստկացնել. ծանրացնել, վատթարացնել. ~ an offence խորացնել/ծանրացնել վիրավորանքը. ~ an illness հիվանդությունը սրվել/ծանրանալ. ~ smn beyond endurance մեկին անտանելի զայրացնել:  
**aggravating** ['ægrəveɪtɪŋ] a ծանրացնող, սաստկացնող. վատթարացնող. an ~ child շատ ծանր երեխա. How ~! Ափսո՛ս:  
**aggravation** [ˌægrə'veɪʃn] n ծանրացում, խորացում, վատթարացում. ~ circumstances ծանրացուցիչ հանգամանքներ:  
**aggregate** ['ægrɪgeɪt] 1. v հավաքել, միացնել որպես մեկ ամբողջություն 2. n ամբողջություն, կուտակում. in the ~ որպես ամբողջություն, ամբողջությամբ. ~ forces միացյալ ուժեր:  
**aggregation** [ˌægrɪ'geɪʃn] n զանգված, խառնուրդ:  
**aggression** [ə'greɪʃn] n հարձակում, ագրեսիա. direct ~ անմիջական հարձակում: war of ~ ագրեսիվ պատերազմ:  
**aggressive** [ə'gresɪv] a հարձակողական, ագրեսիվ. ~ war/policy հարձակողական պատերազմ/քաղաքականություն. (ակտիվ, եռանդուն) ~ defence ակտիվ պաշտպանություն (հանդուգն, վրդովեցուցիչ) ~ manner/ tone/person հանդուգն վարքագիծ/տոն/անձ:  
**aggressor** [ə'gresə] n զավթիչ, հարձակվող կողմ. ագրեսոր:  
**aggrieve** [ə'grɪ:v] v վշտացնել, վիրավորել. be ~d վշտանալ. feel ~d վիրավորվել, վիրավորված զգալ. *հրավ.* ~d party տուժող կողմ:  
**aghost** [ə'gə:st] a, predic սարսափած, զարհուրած. stand ~ սարսափահար լինել. He was ~ at the news Այդ լուրը նրան ապշեցրեց/սարսափեցրեց:  
**agile** ['ædʒaɪl] a ճարպիկ, արագաշարժ. an ~ mind աշխույժ միտք. mentally ~ աշխույժ/առույգ մտքով. He is ~ for such an old man Իր տարիքի համար բավական արագաշարժ է. as ~ as a squirrel սկյուռի պես ճարպիկ:  
**agility** [ə'dʒɪlətɪ] n ճարպկություն, արագաշարժություն. աշխուժություն:

**agitate** ['ædʒɪteɪt] հուզել, գրգռել. She was deeply ~d Նա խիստ հուզված էր (խառնել, թափահարել) (հեղուկը) ~ for/against ագիտացիա տանել (օգտին/ընդդեմ). Workers ~d for higher wages Բանվորները ագիտացիա էին տանում բարձր աշխատավարձի համար:  
**agitated** ['ædʒɪteɪtɪd] a հուզված, անհանգստացած, գրգռված:  
**agitating** ['ædʒɪteɪtɪŋ] a հուզող, անհանգստացնող:  
**agitation** [ˌædʒɪ'teɪʃn] n հուզումնաբ, անհանգստություն, խռովություն. nervous ~ ներվային հուզումնաբ. keep in ~ մշտական անհանգստ վիճակում պահել. be in state of great ~ խիստ հուզված լինել. The sea is in ~ Ծովն անհանգստ է. *քղք.* (ագիտացիա) carry on ~ for/against մի բանի համար/դեմ ագիտացիա վարել:  
**agitator** ['ædʒɪteɪtə] n անկարգություններ հրահրող. *տեխ.* խառնիչ. *քղք.* ագիտատոր:  
**aglow** [ə'gləʊ] a, predic, adv շիկնած, շառագունած, բորբոքված. Her cheeks are ~ with health Նրա այտերը վառվում են առողջությունից:  
**agnate** ['ægneɪt] 1. n ազգական ամուսնուկողմից. 2. a ազգակցական:  
**agnostic** [æg'nɒstɪk] n *փիլ.* ագնոստիկ:  
**agnosticism** [æg'nɒstɪsɪzəm] n *փիլ.* ագնոստիցիզմ:  
**ago** [ə'gəʊ] adv առաջ. a year/month/ten weeks ~ մի տարի/ամիս/տասը շաբաթ առաջ long ~ վաղուց. not long ~ վերջերս, ոչ շատ վաղուց. How long ~ was that? Այդ ե՞րբ էր. a long while ~ վաղուց. no longer ~ than last Sunday ոչ ուշ քան անցյալ կիրակի:  
**agog** [ə'gɒg] a, predic, adv հուզված, անհամբեր. ~ for news անհամբեր սպասել նորությունների. Everybody was ~ Բոլորը հուզված էին:  
**a-go-go** [ə'gəʊgəʊ] *խսկց.* ոչ մեծ դիսկոտեկ. չափից ավելի մոդայիկ:  
**a-going** [ə'gəʊɪŋ] a, predic, adv շարժման/ընթացքի մեջ. set ~ աշխատեցնել/գործի դնել:  
**agoniz/e** ['æɡənaɪz] v տանջվել, հոգեվարքի մեջ լինել. ~ -ing shrieks տառապալից ճիչեր:  
**agonized** ['æɡənaɪzd] a տանջալից. an ~ look տանջալից հայացք:  
**agon/y** ['æɡəni] n տանջանք, չարչարանք. ~

of despair հուսահատության տառապանք. (ուժեղ ցավ) She was in ~ with her broken leg Կոտրված ոտքը նրան սարսափելի ցավ էր պատճառում. suffer ~ies with toothache ատամի ցավից տառապել. in an ~ of suspense անհայտությունից տանջվել. (հոգեվարք) the ~ of death մահվան հոգեվարք. the ~ column հայտարարություններ անհայտ կորածների մասին (լրագրում):

**agrarian** [ə'greəriən] a հողային, հողագործական. ~ laws հողային օրենքներ/իրավունք:

**agree** [ə'gri:] v համաձայնվել. ~ to smb's proposal առաջարկին համաձայնվել. ~ at once/willingly/reluctantly/readily անմիջապես/հաճույքով/ակամայից/պատրաստակամորեն համաձայնվել. (կարգավորել, պայմանավորվել) We ~d to go there Մենք պայմանավորվեցինք գնալ այնտեղ. ~ on all the questions կարգավորել բոլոր հարցերը. at the ~d time պայմանավորված ժամանակ. Agreed! Պայմանավորվեցինք. It was ~d that ... Որոշվեց, որ... (համապատասխանել) The story doesn't ~ with the facts Պատմածը չի համապատասխանում փաստերին. Wine doesn't ~ with me Գինին ինձ վնաս է. The climate doesn't ~ with her Նա վատ է տանում այս կլիման:

**agreeable** [ə'gri:əbl] a հաճելի, դուրեկան. ~ person հաճելի մարդ. an ~ voice հաճելի ձայն. (համաձայն) be ~ to համաձայնվել. ~ to all բոլորի համար ընդունելի. an ~ surprise հաճելի զարմանք. make oneself ~ ջանալ դուր գալ. (համապատասխան) ~ to the standards ստանդարտներին համապատասխան. ~ to the order of the day օրակարգին համապատասխան:

**agreeably** [ə'gri:əbli] adv հաճելի, համաձայն, համապատասխան:

**agreement** [ə'gri:mənt] n համաձայնագիր/պայմանագիր. trading/mutual ~ առևտրական/փոխադարձ պայմանագիր. wage ~ վարձատրային համաձայնագիր. make, conclude/sign/break/have an ~ կնքել/ստորագրել/խախտել/ունենալ պայմանագիր. carry out an ~ պայմանագիր իրագործել. under the terms of ~ ըստ պայմանագրի, համաձայն պայմանագրի կետերի. come to/arrive at/reach an ~ համաձայնության գալ. annul an ~

պայմանագիրը չեղյալ համարել. approve/disapprove an ~ պայմանագրին հավանություն տալ/չտալ. working ~ գործող պայմանագիր. denunciation of an ~ պայմանագիրը չեղյալ հայտարարել. gentleman's ~ դվնգ. ջենտլմենական համաձայնություն:

**agricultural** [ˌægrɪ'kʌlt(rə)] a գյուղատնտեսական, հողագործական. an ~ expert գյուղատնտես:

**agriculture** [ˌægrɪkʌltʃə] n գյուղատնտեսություն, հողագործություն. modern/backward/developed ~ ժամանակակից/հետամնաց/զարգացած գյուղատնտեսություն. branches of ~ գյուղատնտեսության ճյուղեր. be engaged in ~ գյուղատնտեսությամբ զբաղվել:

**agro-industry** [ˌægrəʊ'ɪndəstri] n գյուղատնտեսական արդյունաբերություն:

**agronomics** [ˌægrəʊ'nɒmɪks] n pl հողագիտություն:

**agronomy** [ə'grɒnəmi] n գյուղատնտեսություն, հողագործություն:

**aground** [ə'graʊnd] a, predic (նավի մասին) ծանծաղուտի վրա. be ~ ծանծաղուտի մեջ նստած լինել/ծանծաղուտում լինել:

**ague** ['eɪgju:] n մալարիա, դող, ջերմ:

**aguish** ['eɪgjuɪ] a մալարիայի, մալարիական:

**ah** [a:] int ախ:

**aha** [a:'ha:] int ըհը:

**ahead** [ə'hed] a, predic, adv առաջ, առջևում.

Tom is ~ Թոմը առջևում է. have much time ~ առջևում շատ ժամանակ ունենալ. run on ~ առաջ վազել. Look ~ Առաջ նայիր. Go ~ Առաջ անցիր, Շարունակիր. go ~ of (մեկից) առաջ անցնել. go ~ with one's plans պլաններն իրականացնել. Things are going ~ Գործերը լավ են գնում. full steam ~ լի ընթացքով առաջ գնալ. ~ of time ժամանակից շուտ. You have your whole life ~ of you Ամբողջ կյանքդ առջևում է:

**aheap** [ə'hi:p] adv կույտ արած/դիզված:

**ahem** [həm] int հըմ:

**ahorse (back)** [ə'hɔ:s (bæk)] adv ձի հեծած, ձիու վրա:

**aid** [eɪd] 1. n օգնություն/օժանդակություն. urgent/selfless/financial/military ~ շտապ/անշահասեր/ֆինանսական/ռազմական օգնություն. render/lend ~ to smb օգնություն ցույց

տալ. come to smb's ~ օգնության հասնել. by/with the ~ of օգնությամբ. in ~ of ի օգնություն. What's all this in ~ of? Ինչի՞ համար է այս բոլորը. pl ~s (սարք, ձեռնարկ). audio-visual ~s լսողական/դիտողական միջոցներ/պիտույքներ. ~ to navigation ծովագնացության ձեռնարկ, նավագնացության (սարքավորում). visual ~s դիտողական միջոցներ. *բժշկ.* first ~ առաջին օգնություն. first ~ station առաջին օգնության կայան. ~ing and abetting *հրավ.* հանցակցություն. 2. v օգնել, աջակցել:

**aide-de camp** [ˌeɪdəˈkɑːmp] n (pl aides-de-camp) համհարգ, ադյուտանտ:

**AIDS** [eɪdz] (acquired immunity deficiency) ՁԻԱԳ. ~ sufferers ՁԻԱԳ –ով տառապողներ:

**aigrette** [ˈeɪɡret] n փետրափունջ, փետրե զարդարանք. *տեխ.* ճառագայթների փունջ/խուրձ:

**ail** [eɪl] v անհանգստացնել, ցավ պատճառել. հիվանդանալ. an ~ing child հիվանդոտ երեխա:

**ailing** [ˈeɪlɪŋ] n, a անհանգստություն, տկարություն. վատառողջ, հիվանդ:

**ailment** [ˈeɪlmənt] n վատառողջություն:

**aim** [eɪm] n նպատակ, մտադրություն, ձգտում. main/basic/noble/political ~ գլխավոր/հիմնական/ազնիվ/քաղաքական նպատակ. reach/achieve/gain one's ~ նպատակին հասնել. set/pursue an ~ նպատակ դնել. with the ~ of նպատակով. (նշանառություն) take ~ նշան բռնել. take a good/unerring ~ դիպուկ կրակել. take careful ~ խնամքով նշան բռնել. miss one's ~ վրիպել:

**aim** [eɪm] v նշան բռնել. ~ at a target/the bird թիրախին/թռչնի վրա նշան բռնել. (ուղղել) The gun was ~ed at him Չրագեներ ուղղված էր նրա վրա. The remark was ~ed at me Դիտողությունը ինձ էր ուղղված. Foreign policy ~s at... Արտաքին քաղաքականությունն ուղղված է... (ձգտել, նպատակ դնել) ~ deliberately/consciously/vainly մտադրված/գիտակցորեն/իզուր ձգտել. He is ~ing at becoming a doctor Նա ձգտում է/նպատակ ունի բժիշկ դառնալ. ~ high բարձրին ձգտել:

**aimless** [ˈeɪmləs] a աննպատակ:

**air** [eə] n օդ. թեթև քամի. զեփյուռ clean/fresh/cold/rarefied ~ մաքուր. թարմ/սառը/նոսրացված օդ in the open ~ բացօդյա.

open ~ university բաց համալսարան. There is no ~ in the room Սենյակում չնչելու օդ չկա. The dog sniffed the ~ Շունը հոտոտեց (օդը). jump into the ~ վեր թռչել. Spring is in the ~ Գարնան հոտ է զալիս/Օդում զարուն է. clear the ~ մթնոլորտի լարվածությունը վերացնել. travel by ~ ինքնաթիռով ճամփորդել/զնալ. plans in the ~ անորոշ պլաններ. vanish/disappear into thin ~ կարծես գետնի տակն անցնել. walk on ~ ոտքերի տակ հող չզգալ (կարծես օդում թռչել). One can't live on ~ Օդով չես ապրի. (ռադիո) on the ~ ռադիոյով. be on the ~ ռադիոյով հաղորդել/էլուրթ ունենալ. What is on the ~? Ի՞նչ են հաղորդում. beat the ~ ջուր ծեծել. saw the ~ խոսելիս ձեռքերը թափահարել:

**air** [eə] a օդային, ավիացիոն. ~ terminal օդանավակայան. ~ crew ինքնաթիռի անձնակազմ. ~ accident օդային աղետ. ~ raid օդային հարձակում. ~ raid shelter գազապաստարան. ~ raid warning օդային հարձակման տազնապ. ~ arm/force ռազմա-օդային ուժեր. *երժշ.* (մեղեդի, արիա) (արտաքին տեսք, կերպարանք, ձև) decisive/businesslike ~ վճռական/գործնական տեսք. with an ~ of importance/mystery կարևոր, նշանակալից/խորհրդավոր տեսքով. ~s and graces սեթևեթանք. put on/assume/give oneself ~s երևակայել:

**air** [eə] v օդափոխել. չորացնել. ~ the room սենյակը օդափոխել. ~ clothes հագուստը/սպիտակեղենը օդին տալ/չորացնել (ի ցույց դնել) ~ one's knowledge գիտելիքներն ի ցույց դնել. ~ one's grievances բախտից գանգատվել:

**air-balloon** [ˈeəbəlʊn] n օդապարիկ, ատրոստատ:

**air-barrage** [ˈeəˈbæɾɑːʒ] n օդային արգելափակոց:

**air-base** [ˈeəbeɪs] n ավիաբազա. ~ service ավիաբազայի ծառայություն. ~ squadron *ռզմ.* ավիաբազայի էսկադրոն. ~ bed փչուկի ներքնակ:

**air-bladder** [ˈeəˌblædə] n լողափամփուռ:

**air-blast** [ˈeəblɑːst] n օդանդում, օդի հոսանք:

**air boat** [ˈeəbəʊt] n ինքնաթիռի շարժիչով նավակ:

**air-borne** [ˈeəbɔːn] a օդով տեղափոխվող,

թռչող. ~ troops օդային դեսանտ:  
**air-brake** [ˈeəbreɪk] n օդաճնշական արգելակ:  
**air-bus** [ˈeəbʌs] n ատերոբուս:  
**air-castle** [ˈeəˈkɑːsl] n օդային ամրոցներ:  
**air-cav(alry)** [ˈeəˈkæv(ə)lri] n *ռզմ.* օդային/ավիա դեսանտ:  
**air-chamber** [ˈeə,tʃeɪmbə] n օդախուց, օդախցիկ:  
**air-channel** [ˈeəˈtʃænl] n օդափոխիչ խողովակ:  
**air-conditioner** [ˈeəkəndɪʃnə] n օդորակիչ, կոնդիցիոներ:  
**air-cooling** [ˈeə,kuːlɪŋ] n օդի սառեցում:  
**aircraft** [ˈeəkraːft] n ինքնաթիռ. *հվք.* ավիացիա. ~ carrier ավիակիր նավ:  
**aircrash** [ˈeəkræʃ] n օդային աղետ:  
**air-crew** [ˈeəkruː] n ինքնաթիռի անձնակազմ:  
**air-cushion** [ˈeə,kuʃn] n օդով լցրած/փչովի բարձ. ~ vehicle օդային փոխադրամջջոց:  
**air-defence** [ˈeədiˈfens] n հակաօդային պաշտպանություն:  
**air-depot/park** [ˈeəˈdepəʊ/pɑːk] n անգար:  
**air-drome** [ˈeədrəʊm] n օդանավակայան:  
**air-exhauster** [ˈeəɪgzɔːstə] n օդանցք, ջերմանցք:  
**air-field** [ˈeəfiːld] n օդանավակայան:  
**air-ga(u)ge** [ˈeəgeɪdʒ] n մանոմետր:  
**air-gun** [ˈeəgʌn] n օդածիզ հրացան:  
**air-highway** [ˈeəˈhaɪwei] n օդային ուղի, ուղեգիծ:  
**air-hole** [ˈeəhəʊl] n օդային փոս, օդափոս:  
**air-hostess** [ˈeə,həʊstɪs] n օդանավի ուղեկցորդուհի:  
**airily** [ˈeəɪli] adv օդի նման. թեթևորեն. *փխք.* թեթևամտորեն, անհոգությամբ:  
**airing** [ˈeəriŋ] n օդափոխում, զրոսանք:  
**air-jacket** [ˈeə,dʒækɪt] n փրկաբաճկոն:  
**air-lane** [ˈeəleɪn] n օդային/ավիագիծ:  
**airless** [ˈeələs] a անօդ, խեղդող, հեղձուցիչ:  
**airline** [ˈeəlaɪn] n ավիագիծ. ուղիղ գիծ:  
**air-liner** [ˈeə,lainə] n մարդատար ինքնաթիռ:  
**air-lock** [ˈeəlɒk] n օդախցան:  
**air-mail** [ˈeəmeɪl] n օդային փոստ:  
**air-man** [ˈeəmən] n օդաչու, ավիատոր:  
**air-mechanic** [ˈeəmiˈkænik] n բորտմեխանիկ:

**air-monger** [ˈeə,mʌŋgə] n երևակայամուլ, ֆանտազյոր:  
**air-pirate** [ˈeəˈpaɪəɪət] n օդանավ առևանգող, օդահեն:  
**airplane** [ˈeəpleɪn] n ինքնաթիռ, սավառակ:  
**air-pocket** [ˈeə,pɒkɪt] n օդային փոս, օդափոս. hit an ~ օդափոսի մեջ ընկնել:  
**air-port** [ˈeəpɔːt] n օդանավակայան:  
**air-proof** [ˈeəpruːf] a անօդանցիկ, հերմետիկ (*նաև`* air-tight):  
**air-raid** [ˈeəreɪd] n օդային հարձակում:  
**air-route** [ˈeəruːt] n ավիագիծ, օդային ճանապարհ:  
**air-screw** [ˈeəskruː] n օդապտուտակ, պրուպելեր:  
**air-ship** [ˈeəʃɪp] n օդանավ, դիրիժաբլ:  
**air-sick** [ˈeəsɪk] n սրտխառնուք թռչելից:  
**air-space** [ˈeəspeɪs] n ռադիոկապի միջոցներ:  
**air-strip** [ˈeəstri:p] n թռչելի/վայրելի հարթակ:  
**airtel** [eətel] n օդանավակայանի հյուրանոց:  
**air-time** [ˈeətaɪm] n ռադիո/հեռուստատեսության որոշակի հաղորդման ժամը/տևողությունը. It is three minutes to ~ Մինչև հաղորդման սկիզբը երեք րոպե է մնացել:  
**air-unit** [ˈeə,juːnɪt] n ավիազորամաս:  
**airway** [ˈeəwei] n օդային ուղի, ուղեգիծ:  
**air-woman** [ˈeə,wʊmən] n կին օդաչու:  
**airworthy** [ˈeə,wəːθi] a թռչելի համար պիտանի (ինքնաթիռ):  
**airy** [ˈeəri] a օդային, թեթև. a large ~ room օդով լի ընդարձակ սենյակ. ~ dress թեթև հագուստ. ~ spirit անմարմին ոգի. ~ figure նուրբ/նազելի կազմվածք. (ուրախ, անհոգ) ~ laughter ուրախ/անհոգ ծիծաղ:  
**aisle** [aɪl] n շենքի թև. *թատր.* անցում/միջանցք շարքերի միջև:  
**ajar** [əˈdʒɑː] a կիսաբաց. The door is ~ Դուռը կիսաբաց է:  
**a-kimbo** [əˈkɪmbəʊ] adv ձեռքերը կանթած. (*նաև`* with arms ~):  
**akin** [əˈkɪn] 1. a predic ազգական, մերձավոր. 2. adv նման. Pity is often ~ to love խղճալը հաճախ նման է սիրելուն:  
**alabaster** [ˈæləbəːstə] n ալեբաստր, գիպս:  
**a la carte** [ɑːləˈkɑːt] adv պատվերով (ուտելիք):

**alacrity** [ə'ælkrəti] *n* պատրաստակամություն, աշխուժություն. reply with ~ պատրաստակամորեն պատասխանել:

**alarm** [ə'la:m] *n* տազնապ, տազնապի ազդանշան, խուճապ. give/raise the ~ տազնապ բարձրացնել. false ~ կեղծ տազնապ. Don't be ~ed Մի՛ վախենա, խուճապի մի՛ մատնվիր. ~ bell տազնապի ազդանշան. with ~ in voice տազնապով լի ձայնով. air-raid ~ օդային տազնապ. in ~ տազնապի մեջ. ~ smn վախեցնել մեկին. feel ~ տազնապել, տազնապ զգալ:

**alarm-clock** [ə'la:mklok] *n* զարթուցիչ. ring the ~ ահազանգ տալ:

**alarming** [ə'la:miŋ] *a* տազնապալից, անհանգստացնող. ~ news տազնապալից լուր. I found him ~ Նա ինձ անհանգստացրեց:

**alas** [ə'læs] *int* ավաղ:

**albatross** [ˈælbətrɒs] *n* ձկնկուղ:

**albescent** [æl'besnt] *a* սպիտակին տվող, սպիտակավուն:

**albino** [æl'bi:nəu] *n* կենս. ալբինոս, լսնամաշկ:

**Albion** [ˈælbɪən] *n* *բնստ.* Ալբիոն, Անգլիա:

**album** [ˈælbəm] *n* ալբոմ:

**albumen** [ˈælbjumin] *n* կենս. սպիտակուց, սպիտակուցային նյութ. ձվի սպիտակուց:

**albumin** [ˈælbjumin] *n* քիմ. սպիտ, ալբումին.

**alchemist** [ˈælkəmist] *n* ալքիմիկոս:

**alchemy** [ˈælkəmi] *n* ալքիմիա:

**alcohol** [ˈælkəhɒl] *n* ալկոհոլ, սպիրտ. absolute ~ մաքուր սպիրտ. denatured ~ դեմատուրատ. ~ abuse ալկոհոլի չարաշահում. ~ free ալկոհոլ չպարունակող:

**alcoholic** [ˌælkə'hɒlik] *n* հարբեցող, ալկոհոլիկ:

**alcoholic** [ˌælkə'hɒlik] *a* ալկոհոլային. ~ drinks ալկոհոլային/թունդ խմիչքներ. ~ excess ալկոհոլի չարաշահում:

**alcove** [ˈælkəʊv] *n* անկողնախորշ, տաղավար:

**alder** [ˈɔ:lðə] *n* լաստենի:

**alderman** [ˈɔ:lðəmən] *n* քաղաքային վարչության անդամ:

**ale** [eɪl] *n* զարեջուր. ginger ~ կոճապղպեղի զարեջուր. bitter/strong ~ դառը/թունդ զարեջուր. ~ - barrel զարեջրի տակառ. ~ -brewer զարեջրագործ:

**alee** [ə'li:] *a, predic, adv* հողմածեծ կողմից/կողմում:

**ale-house** [ˈeɪlhaus] *n* գարեջրատուն. ~ -knight գարեջրատան մշտական հաճախորդ:

**alert** [ə'le:t] *n* աջալուրջ, զգաստ. աշխույժ. be in a state of ~ ռազմական պատրաստակամության մեջ լինել. mentally ~ աշխույժ մտքի տեր. on the ~ աջալուրջ, արթուն. keep ~ աջալուրջ/զգաստ լինել. ~ crew հերթապահ անձնակազմ. ~ with hope հուսով լի. ~ for the opportunity հարմար առիթի սպասող:

**alertness** [ə'le:tnəs] *n* աջալրջություն, զգունություն, զգաստություն:

**ale-wife** [ˈeɪlwaɪf] *n* գարեջրատան տիրուհի:

**Alexandrine** [ˌæliŋ'zændraɪn] *n* *բնստ.* ալեքսանդրյան տաղաչափություն:

**alfalfa** [æl'fælfə] *n* *բույ.* առվույտ:

**algebra** [ˈældʒɪbrə] *n* հանրահաշիվ:

**algebraic** (al) [ˌældʒi'breɪk (l)] *a* հանրահաշիվական:

**alias** [ˈeɪliəs] *n* այլ կերպ (ասած). այլ (կեղծ) անուն. Tom Smith ~ Ben Brown Թոմ Սմիթ այլ կերպ Բեն Բրաուն The thief had several ~es Գողը մի քանի կեղծանուն ուներ:

**alibi** [ˈælbai] *n* *իրավ.* ալիբի, այլուրեքություն. establish an ~ալիբի/այլուրեքությունն ապացուցել. plead an ~ ալիբի/այլուրեքություն ներկայացնել:

**Alice blue** [ˈeɪlɪs blu:] բաց երկնագույն:

**alien** [ˈeɪliən] 1. *n* օտարերկրացի. 2. *a* օտար. ~ soil/shore/tongue հող/ափեր/լեզու. ~ environment օտար շրջապատ. illegal ~ երկրում անօրինական կերպով գտնվող օտարերկրացի. (խորթ) Vanity is ~ to his nature Փառասիրությունը խորթ է նրա էությանը:

**alienable** [ˈeɪliənəbl] *a* օտարման ենթակա:

**alienate** [ˈeɪliəneɪt] *v* օտարել, հեռացնել. right to ~ օտարման իրավունք. He was completely ~d from his family Նա վերջնականապես կապերը խզեց իր ընտանիքի հետ. ~ rights իրավունքներ օտարել:

**alienation** [ˌeɪliə'neɪʃn] *n* օտարում, հեռացնելը. ամուսնուն կնոջ ձեռքից խլելը և հակառակը. complete/temporary/permanent լրիվ/ժամանակավոր/վերջնական օտարում. mental ~ խելացնորություն:

**alienist** [ˈeɪliənɪst] *n* հոգեբույժ:

**alight** [ə'laɪt] a վառված, այրվող. be ~ այրվել, վառվել. Lamps are ~ Լամպերը վառած են. get/set smth ~ վառել. The stove is ~ վառարանը վառվում է. faces ~ with happiness ուրախությունից փայլող դեմքեր:

**alight** [ə'laɪt] v իջնել/դուրս գալ. ~ from a bus/car/carriage մեքենայից/ավտոբուսից/վագոնից իջնել. ~ at a station կայարանում իջնել. Passangers for Garni ~ here Գառնի գնացող ուղևորներն այստեղ են իջնում. Birds ~ed on the roof Թռչուններն իջան տանիքի վրա:

**align** [ə'laɪn] v մի գծի վրա դնել/շարել. հավասար գծով շարվել. հավասարեցնել. The desks are in ~ Նստարանները մի գծով են շարված:

**alignment** [ə'laɪnmənt] n հավասար գծով շարվելը. *ազմ.* շարասյուն:

**alike** [ə'laɪk] 1. a, predic նման, նույնը. ~ in appearance արտաքինից նման. You are all ~ Դուք բոլորդ նույնն/այդպիսին եք: They all look ~ to me Իմ աչքում նրանք բոլորը նույն տեսքն ունեն. 2. adv նույն ձևով/ կերպ. treat everybody ~ բոլորի հետ նույն ձևով վարվել. share and share ~ ամեն ինչ հավասար/կիսովի. summer and winter ~ ամռանը և ձմռանը նույն ձևով. behave ~ նույն ձևով վարվել:

**aliment** ['ælimənt] n կերակուր, սնունդ, ապրուստ:

**alimentary** [æli'mentəri] a սննդարար, սնուցիչ. ~ system մարսողության օրգաններ:

**alimentation** [ælimen'teɪʃn] n սնուցում, ապրուստ հայթայթելը. forced ~ բռնի սնուցում:

**alimony** ['æliməni] n սնունդ, ապրուստ. ֆինանսական/դրամական օգնություն. *իրավ.* ալիմենտ:

**aline** [ə'laɪn] *տե՛ս align*:

**aliquot** ['ælikwɒt] a *մաթ.* բազմապատիկ:

**alive** [ə'laɪv] a, predic կենդանի. be/remain ~ կենդանի լինել/մնալ. be no longer ~ այլևս չլինել. be left ~ կենդանի մնալ. be still ~ դեռևս կենդանի լինել. be ~ to the danger գիտակցել (սպառնացող) վտանգը. be kept ~ on drugs դեղորայքի շնորհիվ կենդանի մնալ. The river is ~ with fish Գետը լեցուն է ձկներով. Old traditions are still ~ Զինավանդույթները դեռևս կենդանի են. It's

good to be ~ կյանքը հոյակապ բան է. Look ~ Արագ շարժվիր. keep ~ կյանքը/հետաքրքրությունը պահպանել. As long as one is ~ Քանի դեռ մարդ կենդանի է. more dead than ~ ոչ ողջ, ոչ մեռած. no man ~ ոչ ոք. any man ~ ամեն մեկը:

**alkali** ['ælkəlaɪ] n *քիմ.* ալկալի, սոդա:

**alkaline** ['ælkəlaɪn] a *քիմ.* ալկալիական:

**all** [ɔ:l] 1. n ամբողջ. ~ day/morning/the world ամբողջ օրը/առավոտ/աշխարհը. ~ the year round կլոր տարին. ~ day and ~ night գիշեր-ցերեկ, օր ու գիշեր. ~ day school երկարօրյա դպրոց. at ~ hours ցանկացած ժամին. at ~ events համենայն դեպս, բոլոր դեպքերում. ~ manner of ամեն տեսակ. ~ round բազմակողմանի, համակողմանի. beyond ~ doubt կասկածից դուրս. with ~ respect ամենայն հարգանքով. with ~ speed ամբողջ արագությամբ. be ~ attention համակ ուշադրություն լինել. ~ the others մնացած բոլորը. be ~ ears համակ լսողություն լինել, ուշադրությամբ լսել. ~ thumbs անշնորհք լինել. above ~ ամենից ավելի/առաջ. Of ~ the idiots he takes prize Մի ուրիշ այդպիսի հիմար չես ճարի:

**all** [ɔ:l] *բոլոր* ամբողջը, բոլորը. A ~ is lost Ամեն ինչ կորած է. ~ of us մենք բոլորս. That's ~ Ահա ամբողջը. at ~ բոլորովին. All are agreed Բոլորը համաձայն են. if at ~ եթե ընդհանրապես. If it is at ~ possible եթե դա ընդհանրապես հնարավոր է. after ~ վերջիվերջո. ~ but impossible ինչ հնարավոր է. and ~ that և այլև. ~ this այս ամենը. not at ~ չարժե. in ~ բոլորը միասին most/best of ~ ամենից շատ. ~ in ~ բոլորը միասին վերցրած. first of ~ ամենից առաջ. It's ~ over Ամեն ինչ վերջացած է:

**all** [ɔ:l] adv ամբողջությամբ, լրիվ, բոլորովին. ~ alone լրիվ մենակ. A ~ covered with ... Ամբողջովին ծածկված... be ~ wrong լրիվ սխալ լինել. be ~ in այլևս ուժ չունենալ. ~ - clear բարի, կարող եք սկսել (գործողությունը սկսելու թույլտվություն). It is ~ over/up with him ~ the better ավելի լավ. ~ the same միևնույն է. ~ at once հանկարծ, միանգամայն անսպասելի. ~ right շատ լավ. be ~ for լրիվ կողմ լինել. ~ around ամեն տեղ, չորս կողմը. ~ along the river գետի ամբողջ երկայնքով. He is very much ~ there խելքը գլխին մարդ է:



**all-Armenian** [ˌɔ:l'a:mi:nɪən] a համահայկական:

**allay** [ˈɔleɪ] v ամոքել, մեղմել. ~ pain/anger ամոքել ցավը, մեղմել բարկությունը. ~ thirst ծարավը հագեցնել:

**all-clear** [ˈɔ:klɪə] n ավարտանշան. give the ~ ավարտի ազդանշան տալ:

**allegation** [ˌæləˈgeɪʃn] n հայտարարություն. պնդում. մեղադրանք. prove/support one's ~ հաստատել/հիմնավորել հայտարարությունը. *իրավ*. a serious ~ լուրջ մեղադրանք. untrue ~s կեղծ հայտարարություն:

**allege** [əˈli:dʒ] v պնդել, հայտարարել. ~ repeatedly բազմաթիվ անգամներ պնդել. ~ smth as a fact ներկայացնել որպես անկասկած փաստ. He is ~d to be wealthy պնդում են, որ նա հարուստ է. He ~d illness as his reason ես իր հիվանդությունը որպես պատճառ բերեց. ~d ենթադրյալ. *իրավ*. the ~d thief ենթադրյալ գողը. ~d offence ենթադրյալ հանցագործություն:

**allegedly** [əˈledʒɪdli] adv ասես, իբր թե, որպես թե. ինչպես պնդում են. be ~ bound by կարծես/ասես պարտավորված լինել. ~ difficult/impossible իբր դժվար/բարդ/անհնարին:

**allegiance** [əˈli:dʒəns] n հավատարմություն, նվիրվածություն. declare/swear ~ հայտարարել/երդվել հավատարմություն. pledge ~ հավատարմության երդում տալ:

**allegoric(al)** [ˌæləˈɡɔrɪk (l)] a փոխաբերական, այլաբանական:

**allegory** [ˈæləɡəri] n այլաբանություն:

**allergic** [ˈælɜ:dʒɪk] a ալերգիկ:

**allergist** [ˈælɜ:dʒɪst] n բժիշկ ալերգոլոգ. ~ to milk/chocolate ալերգիկ կաթի/շոկոլադի նկատմամբ:

**alleviate** [əˈli:vieɪt] v թեթևացնել (ցավը, տանջանքները):

**alleviation** [əˈli:vɪˈeɪʃn] n թեթևացում:

**alley** [ˈæli] n ծառուղի, նրբանցք. blind ~ փակուղի:

**All-Hollows** [ˌɔ:l'hɒləʊs] n *եկեղ*. Բոլոր Սրբերի օրը:

**alliance** [əˈlaɪəns] n դաշինք, միություն, դաշնություն. form an ~ դաշինք կնքել. in ~ with դաշնակցությամբ. military/political ~ ռազմական/քաղաքական դաշինք. make/form/enter an ~ դաշինք կնքել/ձևավորել. մտնել դաշինքի մեջ:

**allied** [əˈlaɪd] a դաշնակից. ~ countries դաշնակից երկրներ. (ազգակից, հարակից) chemistry and ~ subjects քիմիան և հարակից առարկաները:

**alligation** [ˌæliˈɡeɪʃn] n ձուլում, խառնում, միացում:

**alligator** [ˈæliɡeɪtə] n *կենդ*. կոկորդիլոս, ալիգատոր. ~ pear ավոկադո:

**all-in** [ˌɔ:lɪn] a ամեն ինչ ներառյալ. ~ price ամեն ինչ ներառնող գին:

**all-night** [ˌɔ:lˈnaɪt] a ամբողջ գիշեր տևող. ~ journey ամբողջ գիշեր տևող ճամփորդություն. ~ party ամբողջ գիշեր տևող խնջույք, խնջույք մինչև առավոտ. ~ nighter ամբողջ գիշեր տևող աշխատանք:

**all-or-none** [ˌɔ:lɔ:ˈnʌn] a ամեն ինչ կամ ոչինչ. an ~ decision ոչ մի գիշում:

**alliteration** [əˈlɪtəˈreɪʃn] n *լեզվ*. ալիտերացիա:

**allocate** [ˈæləkeɪt] v բաշխել, հատկացնել, բաժանել. ~ money to education կրթության (կարիքների) համար փող հատկացնել. ~ duties պարտականությունները բաշխել/բաժանել. Rooms are ~d to the delegates Պատգամավորներին սենյակներ են հատկացվել:

**allocation** [ˌæləˈkeɪʃn] n բաշխում, հատկացում, տեղայնացում. ~ of funds/profit միջոցների/շահույթի բաշխում. ~ of shares բաժնետոմսերի հատկացում. frequency ~ ռադիոհաճախականության բաշխում:

**allocation** [ˌæləˈkju:ʃn] n ծառ, դիմում:

**allot** [əˈlɒt] v բաշխել, հատկացնել, բաժանել. ~ duties պարտականություններ բաշխել. A flat has been ~ed Բնակարան է հատկացվել. in the ~ed time հատկացված ժամանակում:

**allotment** [əˈlɒtmənt] n բաշխում, բաժին. հողաբաժին, հողամաս. ~ holder հողի վարձակալ:

**all-out** [ˌɔ:lˈaʊt] 1. a լրիվ, լիքը. վճռական (հարձակում) 2. adv ամբողջությամբ:

**allow** [əˈlaʊ] v թույլ տալ, իրավունք տալ. ~ me to introduce թույլ տվեք ներկայացնել. Smoking is not ~ed Ծխելն արգելվում է. Passengers are not ~ed Ուղևորներին չի թույլատրվում. (տալ) How much are you ~ed for books? Չեզ ինչքա՞ն փող են տալիս գրքի համար. That ~s us five minutes Մեզ հինգ

րոպե է մնում/տրվում. ~ one's imagination full play երևակայությանը ազատություն տալ. ~ discount զեղջել, զեղջ տրամադրել. *իրավ.* ~ 200 dollar compensation 200 դոլար փոխհատուցում նշանակել. (ընդունել, համաձայնվել) Let's ~ that ... Ընդունենք, որ... One has to ~ Պետք է ընդունել. *իրավ.* ~ acclaim պահանջը իրավացի համարել. ~ for հաշվի առնել, ի նկատի ունենալ. The situation ~s no delay Գործը չի կարելի հետաձգել:

**allowance** [ə'laʊəns] n դրամական նպաստ. ապրուստի միջոց. family ~ երեխաների նպաստ. housing ~ բնակվարձի նպաստ. maternity ~ նպաստ մայրերին. education ~ կրթաթոշակ. subsistence ~ գործուղման փող. (նորմա) ~ of food սնունդի նորմա. water/bread ~ ջրի/հացի նորմա. ~ per head յուրաքանչյուրին հասնող նորմա. make ~ (s) for հաշվի առնել, նկատի ունենալ. tax free ~ չհարկվող գումար:

**allowedly** [ə'laʊdli] adv ընդհանուր հավանությանը:

**alloy** [ˈæloɪ] n ձուլվածք, (մետաղների) խառնուրդ. ~ steel որակավորված պողպատ:

**alloy** [ə'loɪ] v (մետաղներ) ձուլել, խառնել:

**all-purpose** [ˌɔ:l'pɜ:pəs] a համապարփակ, բազմակողմանի:

**all right** [ˌɔ:l'raɪt] adv բավարար, լավ. be ~ լավ լինել. The work is quite ~ Աշխատանքը բավական լավ է կատարված. They arrived ~ Նրանք բարեհաջող տեղ հասան. Are you ~ in that room? Քեզ հարմա՞ր է այդ սենյակը, Զարմա՞ր ես զգում. If it's ~ with you Եթե քեզ հարմար է. Is my hat ~ ? Գլխարկս ճի՞շտ եմ հագել. I made it ~ with the driver Ես վարորդի հետ ամեն ինչ կարգավորեցի. *խսկց.* an ~ guy կարգին մարդ. an ~ party ուրախ հավաքույթ:

**all-round** [ˌɔ:l'raʊnd] a բազմակողմանի. ~ man բազմակողմանի օժտված անձնավորություն. ~ sportsman բազմակողմանի մարզիկ. *մրզ.* ~ champion բացարձակ չեմպիոն. *ռզմ.* ~ defence շրջանաձև պաշտպանություն:

**All-Russian** [ˌɔ:l'rʌʃn] a համառուսական:

**allseed** [ˈɔ:l'si:d] n *բսբ.* բազմասերմ բույս:

**all-terrain vehicle** [ˌɔ:l'tereɪn 'vi:ɪkl] n ամենազանգ:

**all-time** [ˌɔ:l'taɪm] a չգերազանցված,

չտեսնված. an ~ record չգերազանցված ռեկորդ. an ~ high/low prices չտեսնված բարձր/ցածր գներ:

**allude** [ə'lu:d] v վկայակոչել, հղել, դիմել. ~ to the original վկայակոչել սկզբնաղբյուրը. ~ to smth in the conversation զրույցի ընթացքում ակնարկել/հիշատակել:

**allure** [ə'luə] v հմայել, դուրսել, գերել. be ~d գայթակղվել. ~ artfully իրապուրել/գրավել խորամանկորեն/հմտորեն:

**allurement** [ə'luəmənt] n իրապուրանք, գայթակղեցում:

**alluring** [ə'luəriŋ] a գայթակղիչ, գրավիչ. ~ proposal գայթակղիչ առաջարկ:

**allusion** [ə'lu:ʒən] n ակնարկ, վկայակոչում. obscure/crude/casual ~ անորոշ/կոպիտ/պատահական ակնարկ:

**allusive** [ə'lu:sɪv] a ակնարկող, այլասաց:

**ally** ['ælaɪ] n դաշնակից. *քրթ.* faithful/ trusty/ tested ~ հավատարիմ/վստահելի/ փորձված դաշնակից:

**all/y** [ə'laɪ] v միացնել, կապել. be ~ied with կապված լինել. ~ oneself with միանալ:

**Alma-Mater** [ˌælmə'meɪtə] n լատ. Ալմա Մատեր, դպրոցը/համալսարանը, որտեղ սովորել ես:

**almanac** ['ɔ:lmənæk] n շաբաթացույց, տարեգիրք. ավանախ:

**almighty** [ɔ:l'maɪtɪ] a ամենակարող. An ~ God ամենակարող աստված. the ~ ամենակարողը. *խսկց.* սարսափելի. He 's an ~ bore Ահավոր/Սարսափելի ծանձրալի մարդ է:

**almond** ['ɑ:mənd] n նուշ. *բժշկ.* նշագեղձ. ~ eyed նշաձև աչքեր:

**almost** [ˈɔ:lməʊst] adv գրեթե, համարյա. ~ always/immediately գրեթե միշտ/անմիջապես I ~ missed the train Քիչ էր մնում գնացքից ուշանայի. He ~ died of fright Քիչ էր մնում վախից մեռնել:

**alms** [ɑ:mz] n ողորմություն:

**alms house** [ˈɑ:mzhaʊs] n աղքատանոց:

**aloe** ['æləʊ] n *բսբ.* հալվե:

**aloft** [ə'loʊft] a, predic, adv վերևում, դեպի վեր:

**alone** [ə'ləʊn] a, predic, adv մենակ, միայնակ. be ~ մենակ լինել. all ~ լրիվ մենակ. live/ work/sit ~ ապրել/աշխատել/նստել մենակ. feel oneself ~ իրեն մենակ զգալ. be left ~ մենակ թողնվել. (միայն, բացառապես)

You ~ can decide Միայն դու կարող ես որոշել. We are not ~ in thinking so Միայն մենք չենք այդպես մտածում. His silence ~ is proof Նրա լռությունը ինքնըստինքյան ապացույց է. He ~ survived the fire Հրդեհից միայն նա կենդանի մնաց/փրկվեց. Leave ~ Հանգիստ թողնել. Leave it ~! Հանգիստ թող, Ձեռք մի տա. Let ~ Մի կողմ թողնելով, էլ չխոսենք:

**along** [ə'lon] adv, prep երկարությամբ, ծայրից ծայր. ~ the street փողոցի երկարությամբ, փողոցով. ~ the river գետի երկայնքով/ափով. all ~ ամբողջ ժամանակ. I knew it all ~ ես դա վաղուց գիտեի. Come ~! Գնանք. Move ~! Անցե՛ք, անց՛իր. ~ with միասին. get ~ with հաջողություն ունենալ, յուր գնալ. ~ here այս կողմ, այս ուղղությամբ. I'll be ~ at six ես կլինեմ ժամի վեցին. ~ the wall պատի երկայնքով:

**along-shore** [ə,lonʃ'ɔ:] adv ափի երկայնքով:

**alongside** [ə,lon'said] adv մոտ, կողքին. երկայնքով. The car stopped ~ the kerb Մեքենան կանգ առավ մայթի մոտ. The ships lay ~ one another Նավերը կանգնած էին կողք կողքի:

**aloof** [ə'lu:f] a, predic, adv հեռու, հեռվում. մի կողմում. ~ from the commotion հեռու մնալ իրարանցումից. keep/stand/hold oneself ~ իրեն հեռու պահել/չխառնվել. (անտարբեր) coldly ~ սառն անտարբերությամբ. I find him rather ~ նա բավական ինքնամփոփ/օտարացած է:

**aloofness** [ə'lu:fnəs] n օտարացում, խորթացում. preserve/maintain ~ զերծ/հեռու/անտարբեր մնալ, չխառնվել:

**aloud** [ə'laud] adv բաժր, բարձրաձայն. think ~ բարձրաձայն մտածել. laugh/shout ~ ուժեղ ծիծաղել/բղավել:

**alp** [ælp] n լեռնային արոտատեղի Շվեյցարիայում:

**alpha** ['ælfə] n ալֆա, հունական այբուբենի առաջին տառը. *հմկրգ.* ~ test լաբորատոր փորձ:

**alphabet** ['ælfəbet] n այբուբեն, այբբենարան:

**alphabetic(al)** [,ælfə'betik (l)] a այբբենական. *հմկրգ.* ~ string տեքստային/ սիմվոլային տող:

**alphabetically** [,ælfə'betikli] adv այբբենական կարգով:

**Alpine** ['ælpain] a ալպյան, ալպիական. լեռնային. ~ meadows ալպիական մարգագետիններ. ~ pastures ալպիական/լեռնային արոտավայրեր:

**already** [ɔ:'redɪ] adv արդեն. I have ~ arranged it ես արդեն դա կարգավորել եմ:

**also** [ɔ:'ləʊ] adv նույնպես. They ~ came Նրանք նույնպես եկան. not only but ~ ոչ միայն, այլև. (դեռ ավելին, նաև) She was pretty and clever ~ նա լավիկն էր և դեռ ավելին՝ խելոք էր:

**altar** [ɔ:'ltə] n զոհասեղան, եկեղեցու բեմ. high ~ գլխավոր սեղան (եկեղեցում). խորան. lead to the ~ ամուսնանալ:

**alter** [ɔ:'ltə] v փոխել, վերափոխել. ~ course ուղղությունը փոխել. ~ one's mind միտքը փոխել. That ~s things Դա փոխում է իրավիճակը. The place has ~ed a lot Այս վայրը շատ է փոխվել. We found her very much ~ed նա շատ էր փոխվել. (ձևափոխել) ~ a dress/skirt/jacket ձևափոխել հագուստը/փեշը/ժակետը:

**alteration** [ɔ:'ltə'reiʃn] n փոփոխություն. undergo ~s փոփոխության ենթարկվել. an ~ in temperature ջերմաստիճանի փոփոխություն. make ~s փոփոխություն կատարել. no ~s ոչ մի փոփոխություն:

**altercate** [ɔ:'ltəkeit] v հակաճառել, վիճել:

**altercation** [ɔ:'ltə'keiʃn] n վեճ, կռիվ, նախատինք:

**alternate** [ɔ:'tə:nət] a ընդմիջվող, իրար/միմյանց հաջորդող. ~ day and night մեկ ցերեկը, մեկ գիշերը. (յուրաքանչյուր երկրորդը) on ~ days, each ~ day օրը մեջ. (փոխադարձ) ~ favours փոխադարձ ծառայություններ:

**alternate** [ɔ:'ltəneit] v հաջորդել (միմյանց) Wet days ~ with fine days Անձրևոտ և արևոտ օրերը հաջորդում են միմյանց. ~ kindness with severity մերթ բարի, մերթ խիստ լինել:

**alternately** [ɔ:'ltənəti] adv հերթով, մեկը մյուսին փոխարինելով. cry and laugh ~ մեկ լաց լինել, մեկ ծիծաղել:

**alternating** [ɔ:'ltəneitiŋ] a ընդմիջվող, փոփոխական. էլ. ~ current փոփոխական հոսանք:

**alternation** [ɔ:'ltə'neiʃn] n հաջորդականություն, միմյանց հաջորդել:

**alternative** [ɔ:'tə:nətiv] n այլընտրանք.

ընտրություն. I have no ~ այլ ընտրություն/ ելք չունեմ:

**alternative** [ɔ:l'tə:nətiv] a այլընտրական. ~ measures փոխարինող միջոցներ. ~ offers տարբերակային առաջարկներ:

**although** [ɔ:l'dəu] conj բեռ. չնայած որ. ~ he was very tired... չնայած շատ հոգնած էր...

**altimeter** ['æltimi:tə] n բարձրաչափ:

**altitude** ['æltitju:d] n բարձրություն, բարձրություն ծովի մակերևույթից. unattainable ~ անհասանելի բարձրություն. gain an ~ of (որոշակի) բարձրության հասնել. in these ~s այս բարձունքներում. The town is at an ~ of ... Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից... բարձրության վրա. A~ chamber վերին պալատ:

**alto** ['æltəu] n երժշ. ալտ. կոնտրալտո:

**altogether** [ɔ:ltə'geðə] adv ընդամենը, բոլորը միասին, լրիվ. There are seven of them ~ Նրանք ընդամենը յոթն են. I'm not ~ sure ես բոլորովին էլ համոզված չեմ. You are ~ wrong Դուք լրիվ սխալ եք. I don't ~ agree with her ես ոչ բոլորովին եմ նրա հետ համաձայն. ~ I'm not sorry Ընդհանուր առմամբ ես չեմ ափսոսում:

**altruism** ['æltruizəm] n այլասիրություն, ալտրուիզմ:

**altruistic** [æltru'istik] a այլասիրական, ալտրուիստական:

**alum** ['æləm] n շիբ:

**alumina** [ə'lu:mi:nə] n կավահող:

**aluminium** [ælə'miniəm] n ալյումին:

**alumnus** [ə'Almənəs] n սան (դպրոցի, համալսարանի) և շրջանավարտ:

**alveolar** [ælvɪ'əʊəl] a կզմխ., հնչ. ալվեոլային:

**alveolus** ['ælvɪəʊləs] n կզմխ. ատամնախորշ, ալվեոլ:

**always** [ɔ:lweiz] adv միշտ. as ~ ինչպես միշտ. not ~ ոչ միշտ:

**amadou** ['æmədu:] n աբեթ:

**amalgamate** [ə'mælgəmeɪt] v միացնել, գոդել. ~ with միանալ:

**amalgamation** [æmælgə'meɪʃn] n միացում. ~ of the two firms երկու ֆիրմաների միացում:

**amass** [ə'mæs] v կուտակել, դիզել. ~ wealth հարստություն դիզել:

**amassment** [ə'mæsmənt] n կույտ, դեզ. կուտակում, հավաքում:

**amateur** ['æmətə] 1. n սիրող, ոչ պրոֆեսիոնալ. an ~ artist սիրողական նկարիչ. 2. a սիրողական ~ theatricals սիրողական ներկայացում. ~ youth theatre երիտասարդական սիրողական թատրոն. ~ evening ինքնագործունեության երեկո:

**amateurish** ['æmətəriʃ] a սիրողական:

**amaze** [ə'meɪz] v զարմացնել, ապշեցնել. The news ~d everybody Լուրը բոլորին ապշեցրեց. be speechlessly ~d զարմանքից լեզուն քար կտրել:

**amazement** [ə'meɪzmənt] n զարմանք, ապշանք. sheer/complete/blank ~ ծայրահեղ/լրիվ/անհավատալի զարմանք. stare in ~զարմանքից ապշահար նայել. in mute ~զարմանքից պապանձվել. filled with ~զարմանքով լի. to my ~ ի զարմանս:

**amazing** [ə'meɪzɪŋ] a ապշեցուցիչ, զարմանալի. an ~ progress ապշեցուցիչ առաջընթաց.

**amazingly** [ə'meɪzɪŋli] adv զարմանալիորեն, ապշեցուցիչ կերպով:

**ambassador** [æm'bæsədə] n դեսպան. extraordinary and plenipotentiary ~ արտակարգ և լիազոր դեսպան. ~ at large հատուկ հանձնարարություններով դեսպան. appoint ~ to դեսպան նշանակել. exchange ~s դեսպաններ փոխանակել. The person of ~ is sacred Դեսպանի անձը անձեռնմխելի է. UN ~ որևէ երկրի մշտական ներկայացուցիչ ՄԱԿ ում:

**ambassadorial** [æm,bæsə'dɔ:riəl] a դեսպանական:

**ambassador** [æm'bæsədɹəs] n դեսպանի կին. դեսպանուհի:

**amber** ['æmbə] n, a սաթ, սաթե:

**ambidexter** ['æmbi'dekstə] a երկու ձեռքը հավասար օգտագործող մարդ:

**ambidexterity** [æmbideks'tɛriti] n երկու ձեռքերի հավասար օգտագործում:

**ambidexterous** [æmbi'dekstrəs] a երկկողմանի. երկու ձեռքն էլ հավասար օգտագործող. be ~ հավասար կերպով օգտագործել և՛ աջ, և՛ ձախ ձեռքը:

**ambient** ['æmbiənt] a շրջապատող:

**ambiguity** [æmbi'gju:əti] n երկիմաստություն, երկդիմություն, անորոշություն. There is a slight ~ in his words Նրա բառերում ինչոր անորոշություն կա. answer without any ~

տալ ուղիղ պատասխան (առանց տատանվելու):

**ambiguous** [æmˈbɪɡjuəs] a երկդիմի, երկիմաստ, անորոշ. ~ words ոչ միանշանակ բառեր. ~ answer անորոշ պատասխան. offensively ~ վիրավորանքի աստիճանի երկիմաստ:

**ambit** [ˈæmbɪt] n սահման, գործունեության ոլորտ. within the ~s of սահմաններում:

**ambition** [æmˈbɪʃn] n փառասիրություն, ձգտում, տենչ. His ~ knows no bounds Նրա փառասիրությունը սահմաններ չունի. be full of ~, have great ~s փառասիրական ծրագրերով լեցուն լինել. his only ~ նրա միակ ձգտումը/նպատակը:

**ambitious** [æmˈbɪʃəs] a փառամոլ, փառատենչ, մեծ ձգտումներ ունեցող. an ~ boy փառամոլ տղա. ~ for fame փառքի ձգտող. ~ for one's children երեխաներից շատ բան սպասող. ~ of power իշխանության ձգտող. ~ style ճոռճո, պաճուճազարդ ոճ:

**ambivalent** [æmˈbɪvələnt] a երկակի. an ~ attitude երկակի/երկփեղկված վերաբերմունք:

**amble** [ˈæmbəl] n թեթև քայլ (ծիու մասին), շորորավարձ:

**amble** [ˈæmbəl] v դանդաղ քայլերով գնալ, շորորալով գնալ. ~ round the park դանդաղ զբոսնել այգում:

**ambler** [ˈæmblə] n շորորուն ձի:

**ambrosia** [æmˈbrɔ:ziə] n *դից.* ամբրոսիա, աստվածների կերակուր:

**ambulance** [ˈæmbjələns] n սանիտարական սայլակ, շտապ օգնություն. send for the ~ շտապ օգնություն կանչել. be taken away in an ~ շտապ օգնությամբ տանել. ~ station շտապ օգնության կայան. emergency ~ շտապ օգնության մեքենա:

**ambulatory** [ˌæmbjuˈleɪtəri] a շարժական, ժամանակավոր. ~ patient ամբուլատոր հիվանդ:

**ambush** [ˈæmbʌʃ] n դարան. lay an/make ~ թակարդ լարել. lie in ~ դարան մտնել. run into/fall into an ~ թակարդ ընկնել:

**ambush** [ˈæmbʌʃ] v դարան մտնել, դարանից հարձակվել. be ~ed թակարդն ընկնել.

**ameer** [əˈmiə] n էմիր. *տե՛ս* amir:

**ameliorate** [əˈmi:liəreɪt] v բարվոքել, բարելավել:

**amelioration** [əˈmi:liəˈreɪʃn] n բարվոքում, բարելավում:

**ameliorative** [əˈmi:liəreɪtɪv] a բարվոքիչ:

**amen** [ˌa:ˈmen] int ամեն. թող այդպես լինի:

**amenability** [əˈmi:nəˈbɪləbɪlɪtɪ] n պատասխանատվություն, իրավասության ենթակայություն:

**amenable** [əˈmi:nəbəl] a հնազանդ, ենթարկվող. ~ to reason առողջ դատողությամբ հետևող. ~ to the law պատասխանատու օրենքի առաջ:

**amend** [əˈmend] v [ավացնել, նորոգել. ~ one's way of living ապրելակերպը ավացնել. *իրավ.* ուղղել, փոփոխություններ/ուղղում մտցնել. ~ a Bill փոփոխություններ/ուղղումներ մտցնել օրինագծի մեջ:

**amendable** [əˈmendəbəl] a բարեփոխելի, ուղղելի:

**amendment** [əˈmendmənt] n բարեփոխում, բարելավում. ուղղում, լրացում. ~s to the constitution/Bill սահմանադրության/օրինագծի բարեփոխումներ/ուղղումներ. *հմկրգ.* ~ file փոփոխությունների ֆայլ:

**amends** [əˈmendz] n հատուցում, փոխհատուցում. make ~ մեղքը քավել all possible ~ հատուցում/փոխհատուցում ամեն ձևով. To make ~ he brought her flowers Մեղքը քավելու համար նա նրան ծաղիկներ բերեց:

**amenity/y** [əˈmi:nəti] n հարմարություններ, սարքավորումներ. The country cottage/house has no ~ies Մեր ամառանոցը. հարմարություններից զուրկ է. (սիրալիրություն) the ~ of temper բնավորության մեղմություն. (զեղեցկություն, հմայք) ~ies of home life ընտանեկան կյանքի հաճույքները. The town has many ~ies Քաղաքը զուրկ չէ հմայքից:

**amerce** [əˈmɜ:s] v տուգանել, պատժել:

**amercement** [əˈmɜ:smənt] n տուգանք, պատիժ:

**American** [əˈmerɪkən] 1. n ամերիկացի, ամերիկուհի. 2. a ամերիկյան:

**americanism** [əˈmerɪkənɪzəm] n ամերիկացիություն:

**americanize** [əˈmerɪkənaɪz] v ամերիկացնել, ամերիկացիություն գործածել:

**amethyst** [ˈæməθɪst] n ամեթիստ:

**amiability** [ˌeɪmiəˈbɪləbɪlɪtɪ] n սիրալիրություն, բարյացակամություն:

**amiable** [ˈeɪmiəbəl] a սիրալիր, բարյացա-

կամ. winningly ~ համակրելիորեն սիրալիր.  
He is a most ~ fellow եւ շատ սիրալիր անձ-  
նավորություն է:  
**amicability** [ˌæmikəˈbɪləti] n սիրալիրու-  
թյուն, բարյացակամություն:  
**amicable** [ˈæmikəbəl] a բարեկամական, ըն-  
կերական. ~ relations բարեկամական հա-  
րաբերություններ. settle a disput in an ~ way  
վեճը կարգավորել խաղաղ/բարեկամական  
ձևով, խաղաղ լուծել. ~ settlement բարեկա-  
մական հաշտագիր:  
**amicably** [ˈæmikəbli] adv բարեկամական,  
խաղաղ կերպով. live ~ խաղաղ ապրել:  
**amid** [əˈmid] prep մեջ, մեջտեղ, միջև. ~ the  
trees ծառերի մեջ.  
**amidships** [əˈmidʃɪps] adv նավի մեջտեղը.  
Our cabin is ~ Մեր խցիկը նավի մեջտեղում  
է:  
**amidst** [əˈmidst] տե՛ս amid:  
**amir** [əˈmiə] n էմիր:  
**amiss** [əˈmis] a, predic, adv սխալ, վատ. take  
smth ~ սխալ մեկնաբանել. act/do ~ վատ/  
սխալ վարվել. (անժամանակ, անտեղի)  
come/happen ~ անժամանակ/ոչ տեղին պա-  
տահել/տեղի ունենալ. Don't take it ~ Ինձ  
սխալ չհասկանաք. Nothing comes to him ~  
Եւ ամեն ինչից օգուտ կքաղի. What's ~?  
Ի՞նչ է հարցը. A cup of tea wouldn't come ~ Մի  
բաժակ թեյը չէր խանգարի. not ~ ոչ վատ.  
draw ~ մոլորվել, մոլորության մեջ ընկնել:  
**amity** [ˈæməti] n բարեկամություն, համե-  
րաշխություն. live in ~ համերաշխ ապրել. a  
treaty of ~ բարեկամության/համերաշխու-  
թյան պայմանագիր:  
**ammeter** [ˈæmi:tə] n էլ. ամպերմետր:  
**ammonia** [əˈmɒniə] n քիմ. ամոնիակ:  
household ~ անուշադրի սպիրտ:  
**ammunition** [ˌæmjʊˈniʃn] n զինամթերք,  
ռազմամթերք. փխր. զենք. ~ dump ռազմա-  
մթերքի (դաշտային) պահեստ. ~ lot ռազմա-  
մթերքի խմբաքանակ:  
**amnesia** [æmˈni:ziə] n բժշկ. հիշողության  
կորուստ, ամնեզիա:  
**amnesty** [ˈæmnəsti] n իրավ. ներում, համա-  
ներում, ամնիստիա:  
**amoeba** [əˈmi:bə] n կենդ. ամեոբա:  
**amok** [əˈmɒk] adv կատաղած. run ~ կատա-  
ղորեն/զազանաբար հարձակվել:  
**among** [əˈmʌŋ] prep մեջ, միջև. ~ the hills

սարերի մեջ. ~ friends բարեկամների շրջա-  
պատում. one example ~ many շատերի թվից/  
միջից մի օրինակ. divide ~ the children բա-  
ժանել երեխաների մեջ. Leeds is ~ the largest  
town of England Լիդսը Անգլիայի մեծ քա-  
ղաքներից է:

**amongst** [əˈmʌŋst] տե՛ս among:

**amoral** [eiˈmɔrəl] a անբարոյական, բա-  
րոյազուրկ:

**amorous** [ˈæməərəs] a սիրահարված, սի-  
րային. ~ disposition հեշտությամբ սիրահար-  
վող, սիրահարկոտ. ~ poetry սիրային պոե-  
զիա. ~ songs սիրային երգեր. ~ looks սիրա-  
հար հայացքներ. an ~ young man սիրահար-  
ված երիտասարդ:

**amorousness** [ˈæməərəsnəs] n սիրահարկո-  
տություն:

**amorphous** [əˈmɔ:ʃəs] a անձև, ամորֆ:

**amortisation** [ə,mɔ:taɪˈzeɪʃn] n պարտքի  
մարում. իրավ. գույքի օտարում. ամորտի-  
զացիա:

**amortise** [əˈmɔ:taɪz] v պարտքը մարել.  
իրավ. գույքն օտարել. ամորտիզացիայի  
ենթարկել:

**amount** [əˈmaʊnt] n քանակ, քանակություն.  
considerable/vast/large/small ~ նշանակալից/  
հսկայական/մեծ/փոքր քանակություն. in  
small ~s փոքր քանակությամբ. any ~ of  
money շատ փող, փողի մեծ քանակություն.  
any ~ of food բավական շատ ուտելիք. any ~  
of trouble լրիվ անհանգստություն. (հանրա-  
գումար, ընդհանուր գումար) What is the ~  
of debt? Որքա՞ն է պարտքի ընդհանուր  
գումարը:

**amount** [əˈmaʊnt] v ինչ-որ քանակություն  
կազմել, հավասար լինել His debt ~s to  
100.000 drams Նրա պարտքը 100.000  
դրամի է հասնում. How much does it ~ to?  
Որքա՞ն է դա կազմում. The bill ~ed to 20 dol  
Չաշիվը քսան դոլլար կազմեց. It ~s to the  
same thing Ընդհանուր առմամբ նույնն է  
(զալիս). It ~s to a refusal Դա հավասար է  
մերժման. What he said didn't ~ too much Նրա  
ասածը շատ բան չարժե, քիչ նշանակու-  
թյուն ունի:

**amour** [əˈmuə] n սեր, սիրային կապ:

**amp** [æmp] n ամ. սլենգ էլեկտրակիթառ:

**ampere** [ˈæmpɪə] n (կրճ. amp.) էլ. ամպեր:

**Amphibia** [æmˈfɪbiə] n pl կենդ. ամֆիբիա-

ներ, երկկենցաղ կենդանիներ:  
**amphibian** [æm'fibiən] n *կենդ.* երկկենցաղ:  
**amphibious** [æm'fibiəs] a երկկենցաղ. ~ tank/vehicle *ռզմ.* ամֆիբիա տանկ/մեքենա:  
**amphitheatre** ['æmfɪ,θiətə] n ամֆիթատրոն:  
**ample** ['æmpl] a առատ, հարուստ. an ~ supply of bread *հացի* առատ պաշարներ ~ resources *հարուստ ռեսուրսներ/պաշարներ.* (բավարար, բավականին) ~ time բավականին ժամանակ. ~ room (for parking) (կայանելու) բավականին տեղ 10000 drams will be ~ 10000 դրամը կբավականացնի. ~ opportunities *լայն հնարավորություններ.* make ~ promises *խոստումներ շնայել:*  
**amplification** [,æmplifi'keɪʃn] n մեծացում, *լայնացում. ռադ.* ուժեղացում:  
**amplifier** ['æmplifaɪə] n *խսկց.* amp ուժեղացուցիչ:  
**amplify** ['æmplifai] v մեծացնել, չափազանցնել, ընդլայնել. Could you ~ your statement *Կարո՞ղ եք ավելի մանրամասն ներկայացնել ձեր միտքը/դրույթը. ռադ.* ուժեղացնել:  
**amplitude** ['æmplɪtju:d] n *լայնք,* տատանման *լայնություն. ֆիզ.* ամպլիտուդ:  
**amply** ['æmpli] adv բավականաչափ, *լրիվ.* be ~ supplied with *լրիվ ապահովված լինել.* You were ~ justified by events *հրադարձությունները Ձեզ լրիվ արդարացրին:*  
**ampoule, ampule** ['æmpu:l, 'æmpju:l ] n (*խսկց.* amp) ամպուլ:  
**amputate** ['æmpju:teɪt] v *բժշկ.* անդամահատել, հատել:  
**amputation** [,æmpju'teɪʃn] n *բժշկ.* անդամահատում:  
**amulet** ['æmjulɪt] n թալիսման, համայիլ:  
**amuse** [ə'mju:z] v զբաղեցնել, զվարճացնել. ~ guests *հյուրերին զբաղեցնել.* ~ children *երեխաներին զվարճացնել* The idea ~d her *Այդ միտքը նրան զվարճացրեց (զվարճություն պատճառեց).* You ~ me *Դուք ինձ ծիծաղեցնում եք.* It ~d me to find you here *Ծիծաղելի է ձեզ այստեղ հանդիպելը.* We are not ~d (բուրբուկ) *Ծիծաղելի չէ:*  
**amusement** [ə'mju:zmənt] n զվարճություն, զվարճանք, զվարճալիք. plenty of ~ *շատ զվարճալիքներ.* to everybody's ~ *ի հաճույս*

*ընդհանուրի.* ~ park *զվարճահարմարանքներով զբոսայգի.* places of ~ *զվարճալիքի վայրեր.* time-killing ~ *ժամանակ սպանող/վատնող հաճույքներ:*  
**amusing** [ə'mju:zɪŋ] a զվարճալի, հետաքրքիր, ծիծաղաշարժ. an ~ fellow/story *ծիծաղելի տղա, ծիծաղաշարժ պատմվածք.* ~ play/game *հետաքրքիր խաղ.* It was all very ~ *Այդ բոլորը շատ հետաքրքիր էր:*  
**ana** [ˈɑ:nə] n *ասացվածքների ժողովածու.* ~s *անեկդոտներ/հիշողություններ (մեկի մասին):*  
**anachronism** [ə'nækrənɪzəm] n անախրոնիզմ (ժամանակին չհամապատասխանող բան. օր. Julius Caesar picked up the receiver *Յուլիոս Կեսարը լսափողը վերցրեց):*  
**anaconda** [ˌænə'kɒndə] n *կենդ.* անակոնդա, մի քանի մետր երկարությամբ շատ մեծ օձ:  
**anaemia** [ə'ni:miə] n *բժշկ.* սակավարյունություն, անեմիա:  
**anaemic** [ə'ni:mɪk] a սակավարյուն. անգույն:  
**anaesthesia** [ˌænəs'ti:ziə] n *բժշկ.* անզգայացում, ցավազրկում, նարկոզ:  
**anaesthetic** [ˌænəs'tetɪk] a *բժշկ.* անզգայացնող/ցավազրկող միջոց. local ~ *տեղական անզգայացում/նարկոզ:*  
**anaesthetize** [æ'ni:sθətaɪz] v *բժշկ.* անզգայացնել, ցավազրկել:  
**analogical** [ˌænə'lɒdɪkəl] a մման, անալոգիայի վրա հիմնված:  
**analogous** [ə'næləgəs] a համանման, միանման, նման:  
**analogy** [ə'nælədʒi] n համանմանություն, մմանություն, անալոգիա. by/from ~ *ըստ մմանության.* on the ~ of մմանությամբ, *ըստ անալոգիայի:*  
**analysis** [ˌænəlaɪzənd] n պսիխոանալիզի առարկան/ օբյեկտը:  
**analyse** ['ænəlaɪz] v վերլուծել. ~ logically *տրամաբանորեն վերլուծել.* ~ causes *պատճառներն ուսումնասիրել.* *քեր.* ~ a sentence *նախադասությունը վերլուծել.* *քիմ., ֆիզ.* տարրալուծել, անալիզի ենթարկել. ~ water *ջուրը տարրալուծել:*  
**analysis** [ə'næləsis] n վերլուծում, վերլուծություն. in the last ~ *փիլս.* վերջին հաշվով: psycho ~ *հոգեվերլուծություն, պսիխոանալիզ:*

**analyst** [ˈænəlɪst] n վերլուծող, անալիտիկ/հատկապես հոգեբան/ psycho ~ հոգեվերլուծաբան, պսիխոանալիտիկ. *քիմ.* քիմիկոս-լաբորանտ:

**analytic (al)** [ˌænəˈlɪtɪk (l)] a վերլուծական:

**anamnesis** [ˌænæmˈniːsɪs] n հիշողություն, վերհուշ. *բժշկ.* անամնեզ:

**anarchist** [ˈænəkɪst] n անարխիստ:

**anarchy** [ˈænəkɪ] v անհիշխանություն, անարխիա:

**anathema** [əˈnæθəmə] n *եկեղ.* նզովք, անեծք:

**anatomical** [ˌænəˈtɒmɪkəl] a անատոմիական, կազմախոսական:

**anatomize** [əˈnætəmaɪz] v դիտարկել. *փխբ.* մանրամասն ուսումնասիրել/վերլուծել:

**anatomy** [əˈnætəmi] n կազմախոսություն, անատոմիա. դիտարկում *խսկց.* ոսկոր ու կաշի, շատ նիհար մարդ:

**ancestor** [ˈænsɛstə] n նախահայր, նախնի. remote/illustrious ~s հեռավոր/նշանավոր նախնիներ:

**ancestral** [ænsˈestrəl] a ժառանգական, տոհմական. *կենս.* ~ feature ժառանգական գիծ. *իրավ.* ~ property ժառանգական անշարժ գույք:

**ancestry** [ˈænsɛstri] n նախնիք, ծագում:

**anchor** [ˈæŋkə] n խարխիս. *խսկց.* ~s (մեքենայի) արգելակներ. be/lie/ride at an ~ խարխիսված լինել. let go/drop/cast ~ խարխիս գցել. come to/go into ~ խարխիսվել. raise/weigh ~ խարխիսը բարձրացնել. *փխբ.* փրկության խարխիս, հույսի նշան:

**anchor** [ˈæŋkə] v խարխիս գցել/նետել. ~ a ship նավը խարխիսել. be ~ed խարխիսված լինել. *փխբ.* ~ one's hopes հույս տածել. We ~ed at Odessa Մենք խարխիս գցեցինք Օդեսայում:

**anchorage** [ˈæŋkərɪdʒ] n խարխիսակայան. խարխիսային տուրք. *փխբ.* հուսալի հեցարան, փրկության խարխիս:

**anchored** [ˈæŋkəd] a խարխիսված. *փխբ.* հաստատված, արմատացած:

**anchoret** [ˈæŋkərət] n մենակյաց, ճգնավոր:

**anchorman** [ˈæŋkəmən] n *խսկց.* վստահելի մարդ, հեցարան:

**anchovy** [ˈæntɪʃvi] n անձրուկ (ծկան տեսակ), անջրուկ:

**ancient** [ˈeɪnʃənt] 1. n (*սովր. հնգն.*) the ~s

հնադարյան ժողովուրդներ. անտիկ գրողներ (*հսկց.*՝ հունական և հռոմեական). 2. a հին, հնադարյան. ~ culture/civilization հին մշակույթ/քաղաքակրթություն. ~ literature անտիկ գրականություն. in ~ times հին/վաղ ժամանակներում. ~ customs հնադարյան սովորույթներ. *խսկց., հուս.* an ~ car շատ հին մեքենա:

**ancillary** [ænsˈɪləri] a օժանդակ, երկրորդական. ~ services օժանդակ ծառայություններ:

**and** [ænd, ənd, ən] conj և. nice and warm տաք և հաճելի. ~ so on և այլն. you ~ I ես ու դու. (ժամանակի/թվերի հետ) three ~ a half երեք ու կես. Two ~ two is four երկուսին զումարած երկու հավասար է չորսի. an hour ~ 20 minutes մի ժամ 20 րոպե. (կրկնություն, տևողություն) more ~ more beautiful ավելի ու ավելի գեղեցիկ. He talked ~ talked Նա անընդհատ խոսում էր, Նա խոսում էր ու խոսում. It's miles ~ miles away Այստեղից շատ հեռու է. *խսկց.* համարժեք է "to" մասնիկին. Try ~ do it Փորձիր այդ անել. (հակասական, տրոհական, իսկ) I'll go ~ you will stay ես կգնամ, իսկ դու կմնաս. ~ why not? իսկ ինչո՞ւ ոչ. There are friends ~ friends ընկերները տարբեր են լինում, ընկերներ էլ կան ընկերներ էլ. It is a mere joke ~ a poor one Դա պարզապես կատակ է, ըստ որում (այն էլ) էժանագին. (այնուամենայնիվ) A~ he did come Այնուամենայնիվ նա եկավ:

**andante** [ænsˈdænti] n, adv *երժշ.* դանդաղ:

**anecdote** [ˈænikdəʊt] n անեկդոտ, կարճ պատմություն. միջադեպ. witty/amusing/funny ~ սրամիտ/զվարճալի/ծիծաղաշարժ անեկդոտ:

**anechoic** [ˌæniˈkəʊɪk] a *մսնգ.* արձագանք չունեցող ~ chamber խլացրած խուց, կամերա:

**anemone** [əˈneməni] n հողմածաղիկ, անեմոն:

**aneroid** [ˈænərɔɪd] n ~ barometer բարոմետր:

**anew** [əˈnjuː] adv նորից/նոր տարբեր, նորովի ձևով:

**anfractuous** [ænsˈfræktʃuəs] a ոլորապտույտ, բարդ, խճճված:

**angel** [ˈeɪndʒəl] n հրեշտակ. good/evil ~ բարի/չար հրեշտակ. ~ of death մահվան հրեշտակ. have the patiens of an ~ հրեշտակի համբերություն ունենալ. Be an ~ *խսկց.* Բարի ե-



դիր. guardian ~ պահապան հրեշտակ. fallen ~ ընկած/կործանված հրեշտակ. as pure/ mild/ gentle as an ~ հրեշտակի պես մաքուր/ հեղ/ մեղմ. ~ dust *ամ. սլենգ* վտանգավոր թմրադեղ. *մսնգ.* ռադիո. ռադարային արձագանք:

**angeleno** [ˈændʒɪliːnɔʊ] n (pl -os) *ամ.* Լոս-Անջելոսի բնակիչ:

**angelic** [æŋˈdʒɛlɪk] a հրեշտակային, հրեշտակի նման:

**anger** [ˈæŋɡə] n բարկություն, զայրույթ. hot/ controlled/sham ~ խիստ/զսպված/կեղծ զայրույթ. in ~ զայրացած. in a moment of ~ զայրույթի պահին. burn with ~ զայրույթից այրվել. be filled with ~ զայրույթով լցված լինել:

**anger** [ˈæŋɡə] v զայրացնել, բարկացնել. be ~ed բարկանալ, զայրանալ. be speechlessly ~ed զայրույթից պապանձվել. He ~ed me by his stupidity Երա հիմարությունը ինձ զայրացրեց:

**angina** [æŋˈdʒaɪnə] n անգինա. *բժշկ.* ~ pectoris կրծքահեղձուկ:

**angle** I [ˈæŋɡl] n անկյուն. an acute/obtuse/right ~ սուր/բութ/ուղիղ անկյուն. adjacent ~s կից անկյուններ. at a right ~, at right ~s ուղիղ անկյան տակ. Look at it from this ~ Այս անկյունից նայեք. consider from another ~ այլ տեսակետից մոտենալ/քննարկել. look at the question from all ~s հարցին մոտենալ բոլոր տեսանկյուններից:

**angle** II [ˈæŋɡl] n ձկնորսական կեռ v ձուկ որսալ (կարթով) *փխբ.* թակարդ լարել. ~ for an invitation/compliments հրավերի/հաճոյախոսությունների առիթ տալ:

**angler** [ˈæŋɡlɪ] n ձկնորս (կարթով):

**Anglican** [ˈæŋɡlɪkən] n Անգլիական Եկեղեցու անդամ:

**anglicize** [ˈæŋɡlɪsaɪz] v անգլիականացնել:

**anglomania** [ˌæŋɡləʊˈmeɪniə] n անգլիամոլություն:

**anglophile** [ˈæŋɡləʊfɪl] n անգլիասեր:

**anglophobia** [ˌæŋɡləʊˈfəʊbjə] n անգլիատյաց:

**anglophone** [ˈæŋɡləʊfəʊn] n անգլիախոս. ~ canadians անգլիախոս կանադացիներ:

**Anglo-Saxon** [ˌæŋɡləʊˈsæksn] n, a անգլոսաքսոնացի, անգլոսաքսոնական:

**angrily** [ˈæŋɡrɪli] adv զայրացած, բարկացած:

**angry** [ˈæŋɡrɪ] a բարկացած, զայրացած,

զղայնացած. ~ voice/face/look զայրացած ձայն/դեմք/հայացք. be ~ with/at զայրանալ մեկի/մի բանի վրա. become/get/grow ~ զայրանալ. make ~ զայրացնել. ~ young men (Անգլիայում) քննադատորեն տրամադրված երիտասարդություն:

**anguish** [ˈæŋɡwɪʃ] n տառապանք, տանջանք. be in ~ տառապել. suffer ~ տառապանք կրել. ~ of body and mind մարմնական և հոգեկան տառապանք. a ~ed look տանջալից տեսք. with an ~ed look տանջալից հայացքով:

**angular** [ˈæŋɡjʊlə] a *մաթ.* անկյունային, անկյունավոր. *փխբ.* անշնորհք, անտաշ:

**angularity** [ˌæŋɡjʊˈlærəti] n անկյունավորություն:

**anhydride** [æŋˈhaɪdraɪd] n *քիմ.* անհիդրիդ:

**anhydrous** [æŋˈhaɪdrəs] a *քիմ.* անջուր, ջրազուրկ:

**animal** [ˈænɪml] n կենդանի, անասուն. wild ~ վայրի կենդանի, գազան. domestic ~ ընտանի կենդանի. farm ~s ընտանի կենդանիներ. trapped ~ հալածված/ուժասպառ կենդանի. dumb ~ անլեզու կենդանի:

**animal** [ˈænɪml] a կենդանական, անասնական, անասնային. the ~ kingdom կենդանական աշխարհ. ~ fear անասնական վախ. ~ breeder անասնաբույժ. ~ husbandry անասնապահական ֆերմա. ~ desires անասնային կիրք. ~ spirits կենսուրախություն. *խսկց.* ~ crackers կենդանածև թխվածք:

**animalize** [ˈænɪməlaɪz] v (մարդուն) անասնացնել, հասցնել անասունի աստիճանի. անասնական կրթեր բորբոքել:

**animate** [ˈænɪmət] a կենդանի, աշխույժ. *քեր.* շնչավոր:

**animate** [ˈænɪmeɪt] v աշխուժացնել, ոգևորել. The news ~d us Այդ լուրը մեզ ոգևորեց. A smile ~d her face Ժպիտը կենդանություն տվեց նրա դեմքին:

**animated** [ˈænɪmeɪtɪd] a աշխույժ, կենդանի. ~ conversation աշխույժ զրույց. ~ cartoon մուլտիպլիկացիա, մուլտֆիլմ:

**animation** [ˌæniˈmeɪʃn] n աշխուժություն, ոգևորություն. մուլտֆիլմի ստեղծում. with ~ ոգևորությամբ:

**animosity** [ˌæniˈmɒsəti] n թշնամություն, չարություն. ~ against/towards smb թշնամություն որևէ մեկի նկատմամբ. with ~ թշնամաբար:

**animus** [ˈæniməs] n թշնամություն, անբարյացակամություն:

**ankle** [ˈæŋkl] n կրճ (ոտքի). twist/sprain one's ~ ոտքը ոլորել. be ~ deep in mud մինչև կրճերը ցեխի մեջ լինել. ~ sock կիսագուլպա:

**annalist** [ˈænalɪst] n տարեգիր, տարեգրությունների հեղինակ. պատմագիր:

**annals** [ˈænlz] n pl տարեգրություններ, պատմական խրոնիկա:

**annex** [ˈæneks] n կից կառույց, թևաշենք. ~ to a hotel հյուրանոցին կից կառույց. (լրացում, կցում) ~ to a book գրքի հավելված ~ to a treaty պայմանագրի իրացում:

**annex** [əˈneks] v միացնել, կցել. բռնակցել. The list ~ed կից տրվում է ցուցակը. ~ territory տարածք միացնել:

**annexation** [ˌænekˈseɪʃn] n միացում, կցում, անեքսիա. forcible ~ բռնի միացում:

**annihilate** [əˈnaɪəleɪt] v ոչնչացնել, վերացնել, բնաջնջել:

**annihilation** [əˈnaɪəˈleɪʃn] n ոչնչացում, բնաջնջում:

**anniversary** [ˌæniˈvɜːsəri] n տարեդարձ, տարելից. wedding ~ հարսանյաց տարեդարձ. in honour of the ~ ի պատիվ տարեդարձի. an ~ dinner տարեդարձին նվիրված ճաշկերույթ:

**Anno Domini** [ˌænoʊˈdɒminai] adv մեր թվարկության:

**annotate** [ˈænoʊteɪt] v ծանոթագրել, անտացիա գրել:

**annotation** [ˌænoʊˈteɪʃn] n ծանոթագրություն, անտացիա:

**announce** [əˈnaʊns] v հայտարարել, հաղորդել, ծանուցել. ~ the results/names of the winners/the date of arrival/smb's engagement հայտարարել արդյունքները/հաղթողների անունները/ժամանման օրը/նշանվելու լուրը. ~ over the radio/at a meeting/in the papers հաղորդել ռադիոյով/հայտարարել ժողովում, հանրահավաքում/թերթերում (հայտնել, տեղեկացնել) A~ Mr White Հայտնեք, որ եկել է պրն Ուայթը:

**announcement** [əˈnaʊnsmənt] n հայտարարություն, հաղորդում. ~ of forthcoming concert/wedding Հայտարարություն գալիք համերգի/հարսանիքի մասին. The ~ appeared yesterday Հայտարարությունը երեկ արվեց. have an important ~ to make կարևոր հայ-

տարարություն ունենալ. according to a recent ~ ըստ վերջերս արված հայտարարության:

**announcer** [əˈnaʊnsə] n *ռադ.* հաղորդավար:

**annoy** [əˈnoɪ] v սրտնեղել, ծանծրացնել. ջղայնացնել, գրգռել. get/feel/be ~ed ջղայնանալ, ծանծրանալ. He ~ed me with his questions Նա իր հարցերով ինձ ծանծրացրեց:

**annoyance** [əˈnoɪəns] n սրտնեղում, վրդովմունք, զայրույթ: much to my ~ ի մեծ տհաճությամբ:

**annoying** [əˈnoɪɪŋ] a տհաճ, անախորժ. She can be very ~ Նա կարող է պարզապես անտանելի լինել. The ~ thing is ... Ամենատհաճը/սրտնեղիչը այն է...:

**annual** [ˈænjuəl] a տարեկան, տարվա. ամենամյա. միամյա, միամյա բույս. ~ meeting/journey/payment ամենամյա ժողով/ճամփորդություն/վճարումներ. ~ income տարեկան եկամուտ. ~ review տարեկան ամփոփում. ~ leave/conference տարեկան արձակուրդ/ կոնֆերանս:

**annually** [ˈænjuəli] adv տարեկան:

**annuity** [əˈnjuːəti] n տարեկան շահաբաժին/եկամուտ. life ~ ցմահ եկամուտ/շահաբաժին:

**annul** [əˈnʌl] v ոչնչացնել, չեղյալ հայտարարել, անվավեր համարել. ~ a law օրենքը չեղյալ համարել. ~ an agreement համաձայնությունը չեղյալ համարել. ~ a marriage ամուսնալուծել:

**annular** [ˈænjuələ] a օղածև, օղավոր:

**annulet** [ˈænjuələt] n *ճրտ.* սյունագոտի:

**annulment** [əˈnʌlmənt] n ոչնչացում, ջնջում:

**annunciate** [əˈnʌnsiəɪt] v հայտարարել, ազդարարել:

**annunciation** [əˈnʌnsiˈeɪʃn] n ազդարարում. *կրոն.* ավետում (*նաև՝ Annunciation Day*):

**anode** [ˈænoʊd] n էլ. անոդ:

**anodyne** [ˈænoʊdaɪn] n ցավ մեղմացնող մյուս, ցավամոք:

**anointment** [əˈnoɪntmənt] n յուղ քսելը, յուղելը. *կրոն.* օծում:

**anomalous** [əˈnɒmələs] a անկանոն, անոմալ:

**anomaly** [əˈnɒməli] n անկանոնություն, անոմալիա:

**anon** [əˈnɒn] adv հիմա, անմիջապես. ever and ~ ժամանակ առ ժամանակ, անընդհատ:  
**anonym** [ˈænənim] n անանուն հեղինակ. կեղծանուն:  
**anonymity** [ˌænəˈniməti] n անանունություն:  
**anonymous** [əˈnɒniməs] a անանուն. ~ letter անստորագիր նամակ:  
**another** [ˈənəðər] n գլխանոցով բաճկոն:  
**another** [ˈənəðər] a, pron ուրիշ, ուրիշը. A~ will do it differently Մեկ ուրիշը դա մեկ այլ ձևով կանի. ~ time մի ուրիշ անգամ. There is ~ way Կա մեկ այլ ուղի. He's just such ~ Ես էլ է այդպիսին. We need ~ ticket Մեզ մեկ տոմս էլ է հարկավոր. ~ cup of tea ևս մեկ բաժակ թեյ. Have ~ try Նորից/Մեկ անգամ ևս փորձեք. without ~ word այլևս ոչ մի բառ չասել. That's quite ~ matter Դա բոլորովին այլ բան է. one ~ մեկը մյուսին. The houses are close to one ~ Շենքերը գտնվում են մեկը մյուսի կողքին. one after ~ մեկը մյուսի հետևից. one thing and ~ մեկ այս, մեկ այն:  
**answer** [ˈɑːnsə] n պատասխան. right/wrong/foolish/clever/final ~ ճիշտ/սխալ/հիմար/խելացի/վերջնական պատասխան. in ~ to ի պատասխան. make no ~ չպատասխանել. for ~ պատասխանի փոխարեն, որպես պատասխան. մատ. (լուծում) the ~ to a problem/task խնդրի լուծումը. find the ~ լուծումը գտնել. have a complete ~ to սպառիչ պատասխան տալ. know all the ~s խոսքի տակ չմնալ:  
**answer** [ˈɑːnsə] v պատասխանել. ~ a question/letter հարցին/նամակին պատասխանել. ~ the telephone լսափողը բարձրացնել. ~ the bell/the door դուռը բացել. ~ a call/summons արձագանքել/կանչին. ~ for պատասխանատու լինել. (համապատասխանել) ~ a description/purpose նկարագրությանը/նպատակին համապատասխանել:  
**answerable** [ˈɑːnsərəbl] a պատասխանատու. be ~ for smth to smb պատասխանատու լինել մեկի առաջ, որևէ բանի համար:  
**answerless** [ˈɑːnsərləs] a անպատասխան:  
**ant** [ænt] n մրջյուն. white ~ տերմիտ:  
**antagonism** [ænˈtæɡənɪzəm] n հակամարտություն, թշնամություն. feel strong ~ ուժեղ հակակրանք զգալ:  
**antagonist** [ænˈtæɡənɪst] n հակառակորդ.

be ~ to the proposal բացարձակապես դեմ լինել առաջարկին:  
**antagonize** [ænˈtæɡənaɪz] v հակադրվել, դիմադրել. He manages to ~ everybody Ես հաջողեցնում է բոլորին իր դեմ տրամադրել:  
**Antarctic** [æntˈɑːktɪk] n, a the A~ Անտարկտիկա. A~ circle հարավային բևեռամաս. ~ pole հարավային բևեռ.  
**ant-bear** [ˈæntbeə] n կենդ. մրջյակեր:  
**ante** [ˈænti] pref նախ(ա):  
**antecedence** [ˌæntiˈsiːdəns] n նախորդում:  
**antecedent** [ˌæntiˈsiːdənt] 1. n նախորդ. 2. a նախորդող, նախընթաց:  
**antechamber** [ˈænti,tʃeɪmbə] n նախասենյակ:  
**antedate** [ˌæntiˈdeɪt] v հետին թվով գրել/գրանցել ~ a letter նամակը հետին թվով թվակալել. The event ~d his arrival Իրադարձությունը նախորդեց նրա գալստյանը:  
**antediluvian** [ˌæntɪdɪˈluːviən] a նախաջրհեղեղային. փխբ. հնամենի, ոչ մոդայիկ. հնաճաշակ մարդ, զառամյալ ծերունի:  
**antelope** [ˈæntɪləʊp] n կենդ. այծեղջյուր:  
**antemeridian** [ˌæntɪməˈrɪdiən] a մինչկեսօրյա:  
**ante meridiem** [ˌæntɪməˈrɪdiəm] adv (կրճ a. m.) առավոտյան, մինչև կեսօր:  
**antenatal** [ˌæntiˈneɪtəl] a նախածննդաբերական, ներարգանդային կյանքին վերաբերող. ~ clinic կանացի կոնսուլտացիա:  
**antenna** [ænˈtenə] n (pl antennae [ænˈtenɪ:]) ռադ. ալեհավաք, անտենա:  
**anterior** [ænˈtɪəriə] a նախորդող, նախորդ. առջևի, առաջի:  
**anteriority** [æn,tɪəriˈɔːrɪti] n առաջնություն, անդրամիկություն:  
**anteriorly** [ænˈtɪəriəli] adv առաջ, նախ, ավելի վաղ:  
**ante-room** [ˈæntɪruːm] n նախասրահ, նախասենյակ:  
**ant-fly** [ˈæntflaɪ] n թևավոր մրջյուն:  
**anthem** [ˈænthəm] n հիմն. National ~ պետական հիմն/օրհներգ:  
**anther** [ˈænthər] n բուս. փոշանոթ:  
**ant-hill** [ˈænthɪl] n մրջնաբույն:  
**anthology** [ænˈθɒlədʒi] n ժողովածու, անթոլոգիա:  
**anthracite** [ˈænthrəsait] n անտրացիտ (լավ տեսակի քարածուխ):

**anthrax** [ˈænthræks] n թարախաուռուցք, սիրիրախտ:  
**anthropoid** [ˈænthrəpɔɪd] n, a մարդանման, մարդակերպ. մարդանման կապիկ:  
**anthropologist** [ˌænthrəˈpɒlədʒɪst] n մարդաբան:  
**anthropology** [ˌænthrəˈpɒlədʒi] n մարդաբանություն, անթրոպոլոգիա:  
**anthropophagi** [ˌænthrəˈpɒfəɡaɪ] n մարդակերություն:  
**anti** [ˈænti] pref. հակա, ընդդեմ, անտի:  
**anti-aircraft** [ˌæntiˈeɪkrɑːft] a հակաօդային, զենհրթային:  
**antibiotic** [ˌæntɪbaɪˈɒtɪk] n, a անտիբիոտիկ:  
**antibody** [ˈæntɪbɒdi] n հակամարմին:  
**antichrist** [ˈæntɪkraɪst] n հակաքրիստոս, ցեռ:  
**anticipant** [æntɪˈsɪpənt] n նախագուշակող, կանխագուշակող:  
**anticipate** [æntɪˈsɪpeɪt] v նախատեսել, կանխատեսել. նախագգալ, ակնկալել. I ~ an interesting lecture Ես կանխատեսում եմ, որ դասախոսությունը հետաքրքիր կլինի. ~ a stormy meeting կանխատեսել փոթորկոտ ժողով. ~ success հաջողություն ակնկալել/կանխավայելել. ~ smb's wishes կանխապես կռահել մեկի ցանկությունները:  
**anticipation** [ˌæntɪsɪˈpeɪʃn] n նախատեսում, ակնկալիք, սպասելիք. by ~ նախապես, նախօրոք. in ~ of ակնկալելով thankng you in ~ նախօրոք շնորհակալություն. in ~ of an early reply ակնկալելով արագ պատասխան (նամակի վերջում):  
**anticipatory** [æntɪˈsɪpətəri] a նախնական, վաղաժամ:  
**anticlerical** [ˌæntɪˈklerɪkəl] a հակակղերական:  
**anticlimax** [ˌæntɪˈklaɪmæks] n անկում, հիասթափություն. ~ after the concert լարվածության անկում համերգից հետո. The ceremony was an ~ Արարողությունը բոլորին հիասթափեցրեց:  
**anticlockwise** [ˌæntɪˈklɒkwɑɪs] adv ժամացույցի սլաքին հակառակ:  
**anticrop** [ˌæntɪˈkrɒp] n, a գղտ. հերբիցիդ, հերբիցիդային:  
**antics** [ˈæntɪks] n չարություն, չարածնի արարքներ:

**anticyclone** [ˌæntɪˈsaɪkləʊn] n հակացիկլոն, անտիցիկլոն:  
**anti-doping** [ˌæntɪˈdɔʊpɪŋ] a հակաթմրամոլային:  
**antidote** [ˈæntɪdaʊt] n հակաթուն. an ~ against/for/to snakebite հակաթուն օձի խայթոցի դեմ:  
**anti fascist** [ˌæntɪˈfæʃɪst] n հակաֆաշիստ:  
**antifreeze** [ˈæntɪfriːz] n չսառչող խառնուրդ, անտիֆրիզ:  
**antigravity** [ˌæntɪˈɡrævəti] n հակաձգողական. տիեզ. հակավերաբեռնման:  
**antimatter** [ˈæntɪˌmæʔə] n ֆիզ. հակամատերիա:  
**antimissile** [ˌæntɪˈmɪsaɪl] a հակահրթիռային:  
**antimony** [ˈæntɪməni] n սուրճա:  
**antiparticle** [ˈæntɪˌpaːtɪkl] n ֆիզ. հակամասնիկ:  
**antipathetic** [ˌæntɪpəˈθetɪk] a հակակրեելի. I find him ~ Նա ինձ հակակրանք է ներշնչում:  
**antipathy** [æntɪˈpəθi] n հակակրանք, հակակրություն:  
**antipodal** [æntɪˈpɒdəl] a տրամագծորեն հակառակ:  
**antipodes** [æntɪˈpɒdiːz] n pl հակոտնյա. աշխրդ. հակոտնյաներ:  
**antipollution** [ˌæntɪpəˈluːʃn] n (չրջակա միջավայրը) աղտոտումից պաշտպանող:  
**antiquarian** [ˌæntɪˈkwɛəriən] 1. n հնահավաք. հին, արժեքավոր իրեր վաճառող. անտիկվար. 2. a անտիկվարային:  
**antiquary** [ˈæntɪkwəri] n հնահավաք, հնագիտակ, անտիկվար:  
**antiquated** [ˈæntɪkweɪtɪd] a հնացած, հնատարագ, հնաճ:  
**antique** [æntɪˈtiːk] 1. n հնություն. անտիկվարային իր, գեղարվեստական գործ. He sells ~s Նա հնավաճառ/անտիկվար է. the ~ անտիկ ոճ. 2. a հնադարյան, անտիկ. an ~ shop հնավաճառքի խանութ:  
**antiquit/y** [æntɪˈkwɪti] n հնություն, հին ժամանակներ/աշխարհ. high ~ խոր հնություն. ~ ies հնություններ, հուշարձաններ. the ~ ies of Ancient Greece Հին Հունաստանի հուշարձանները:  
**antiscorbutic** [ˌæntɪskɔːˈbjʊːtɪk] a, n հակալնդախտային. հակալնդախտային միջոց:

**anti-Semite** [ˌæntiˈsiːmaɪt] n հրեատյաց:  
**anti-Semitism** [ˌæntiˈsemitizm] n հրեատե-  
 ցություն:  
**antiseptic** [ˌæntiˈseptɪk] a, n հակամեխիչ.  
 հակամեխիչ միջոց:  
**antisocial** [ˌæntiˈsəʊəl] a հակահասարակա-  
 կան. անհաղորդասեր, չչփվող. Reading at  
 table is ~ Սեղանի շուրջը կարդալը տգեղ  
 քան է:  
**antitank** [ˌæntiˈtæŋk] a հակատանկային:  
**antithesis** [æntiˈθəʊsɪs] n հակադրույթ. հա-  
 կադրում, հակադրություն: a marked ~ խիստ  
 հակասություն: striking/complete ~ զարմա-  
 նալի/կատարյալ հակասություն:  
**antitoxin** [ˌæntiˈtɒksɪn] n հակաթույն:  
**anti-trade** [ˌæntiˈtreɪd] n հակապասսատ  
 (քամի):  
**antitrust** [ˌæntiˈtrʌst] a հակամենաշնորհա-  
 յին. ~ law հակամենաշնորհային օրենք:  
**antler** [ˈæntlə] n եղջյուր:  
**antonym** [ˈæntənɪm] n հականիշ, անտոնիմ.  
 Good is the ~ of evil Բարին չարի հականիշն  
 է:  
**anus** [ˈeɪnəs] n կզմ/ս. սրբան:  
**anvil** [ˈænvɪl] n զնդան, սալ:  
**anxiet/y** [æŋˈzaɪəti] n անհանգստություն. va-  
 gue/slight/acute ~ անորոշ/թեթև/ուժեղ ան-  
 հանգստություն. betray/manifest/feel ~ ցու-  
 ցաբերել/զգալ անհանգստություն. be full of  
 ~ անհանգստությամբ լի լինել. (հոգս) all  
 these ~ies բոլոր այս հոգսերը. (անհամբերու-  
 թյուն) wait with ~ անհամբերությամբ սպա-  
 սել. (բուռն ցանկություն) ~ for knowledge  
 գիտելիք ձեռք բերելու ծարավ/բուռն ցան-  
 կություն. in his ~ to please դրդված հաճույթ  
 պատճառելու մեծ ցանկությունից. My chief  
 ~ is to help Իմ հիմնական ցանկությունը  
 օգտակար լինելն է:  
**anxious** [ˈæŋkʃəs] a անհանգիստ, մտահոգ,  
 հուզված. an ~ mother անհանգիստ մայր. in  
 an ~ voice մտահոգ/հուզված ձայնով. ~ look  
 անհանգիստ հայացք. an ~ moment տազնա-  
 պալի վայրկյան. be ~ about անհանգստա-  
 նալ որևէ բանի համար. don't be ~ մի' ան-  
 հանգստացիր. be not all that ~ առանձնա-  
 պես չուզենալ. He is ~ for approval Նա շատ  
 է ուզում, որ իրեն գովեն. have an ~ time  
 տազնապալից ժամանակ անցկացնել:  
**any** [ˈeni] prn (հաստ. նախ.) ամեն մի, ցան-

կացած. ~ person/question/creature ցանկա-  
 ցած անձնավորություն/հարց/արարած. in ~  
 case ամեն դեպքում. A ~ child knows it Ամեն  
 մի երեխա այդ գիտի. Take ~ bus Նստեք  
 ցանկացած ավտոբուս. Come ~ time Եկեք  
 ցանկացած ժամանակ. (հարց. նախ.) որևէ.  
 Is there ~ shop nearby? Մոտերքում որևէ  
 խանութ կա՞. without ~ doubts առանց որևէ  
 կասկածի. Have you ~ news? Որևէ լուր կա՞.  
 A ~ questions? Հարցեր կա՞ն. *ժխտ. նախ.* (ոչ  
 ոք, ոչինչ, ոչ մի) I haven't talked to ~ of them  
 Ես նրանցից ոչ մեկի հետ չեմ խոսել. You  
 can't find it in ~ of these papers Այս թերթերից  
 ոչ մեկում դուք չեք կարող այն գտնել. not in  
 ~ circumstances ոչ մի դեպքում/հանգա-  
 մանքներում. I don't see ~ pictures here Ես  
 այստեղ ոչ մի նկար չեմ տեսնում. հաճախ  
 չի թարգմանվում (*անհաշվ. գոյակ.*) We  
 haven't got ~ sugar Մենք չաքար չունենք.  
 Have you ~ water/bread Ջուր/Չաց ունե՞ք. ~  
 more էլի, ավելի. ~ more problems էլի պրոբ-  
 լեմներ. If you stay ~ longer Եթե ավելի երկար  
 մնաք... Is he ~ better Արդյո՞ք նա ավելի լավ  
 է. *ժխտ. նախ.* (այլևս, բոլորովին). He doesn't  
 live here ~ more/longer... Նա այլևս այստեղ չի  
 ապրում. He isn't ~ the worse for it Դրանից  
 նա ավելի վատ չի դարձել:

**anybody** [ˈeniˌbɒdi] indef prn որևէ. Did you  
 speak to ~? Դուք որևէ մեկի հետ խոսե՞լ եք.  
 If ~ rings Եթե որևէ մեկը զանգահարի. (ցան-  
 կացած մարդ/մեկը, ամեն ոք) A ~ can do it  
 Ամեն մեկը/ոք կարող է դա անել. better than  
 ~ բոլորից լավ, ավելի լավ քան որևէ մեկը.  
 There is hardly ~ there Դժվար թե այնտեղ  
 որևէ մեկը լինի. (կարևոր անձ) He'll never be  
 ~ Նրանից մարդ դուրս չի գա, Նա մարդ չի  
 դառնա:

**anyhow** [ˈeniˌhaʊ] adv ինչ էլ որ լինի, համե-  
 նայն դեպս. It's too late ~ Համենայն դեպս  
 շատ ուշ է. (այսպես թե այնպես) I shall go ~  
 Ես կգնամ ինչ էլ որ լինի. (մի կերպ, ինչպես  
 պատահի) The work was done ~ Աշխատան-  
 քը անփույթ ձևով է արված:

**anyone** [ˈeniwʌn] prn տե՛ս anybody:

**anything** [ˈeniθɪŋ] prn որևէ բան (*հարց. և  
 պտմ. նախ.*) որևէ բանի կարիք ունես (*ժխտ.  
 նախ.*) ոչինչ I can't see ~ Ես ոչինչ չեմ տես-  
 նում. He hasn't ~ to do Նա ոչինչ չունի անե-  
 լու. not for ~ ոչ մի դեպքում. There is hardly ~

left Չամարյա ոչինչ չի մնացել. I was ~ but pleased Դա ինձ բուրոսվին հաճելի չէր. (*հաստ. մախ.*) ամեն ինչ. I will do ~ I can Ես կանեն ամեն հնարավոր բան. A~ will do for me Ինձ ամեն ինչ հարմար է, Ես ամեն ինչի համաձայն եմ. I like gardening better than ~ Ես ամենից շատ սիրում եմ պարտեզում աշխատել. It's as easy as ~ Դա շատ հեշտ է. He ran like ~ Ես գլխապատառ վազում եր. A~ goes Անց կկենա. In this case ~ goes Այստեղ ամեն ինչ թույլատրելի է/կարելի է/անց կկենա. an ~ goes attitude/approach ոչ խստապահանջ/պահանջկոտ վերաբերմունք:

**anyway** ['eniwei] adv տե՛ս anyhow:

**anywhere** ['eniweə] adv որևէ տեղ (*հարց., պտմ., մախ.*) If you see him ~ Եթե նրան (որևէ տեղ) տեսնեք. Does he live ~ near? Ես այստեղ մոտերքում է ապրում Did you go ~ yesterday? Երեկ որևէ տեղ գնացի՞ք (*ժխտ., մախ.*) ոչ մի տեղ. I can't find my book ~ Գիրքս ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել. (*հաստ. մախ.*) ամեն տեղ, ամենուրեք. You can find it ~ Դա ամեն տեղ կարելի է գտնել. I will go ~ Ուր ասես կգնամ, ցանկացած վայր:

**anywise** ['eniwaiz] adv որևէ կերպ:

**aorta** [ei'ɔ:tə] n կզմխ.

**apace** [ə'peis] adv արագ:

**apart** [ə'pa:t] 1. adv առանձին, մի կողմ. The house stands ~ Ենթե առանձին է կանգնած. He stood ~ from the others Ես մյուսներից հեռու/առանձին եր կանգնած. take smn ~ մեկին մի կողմ տանել. joking ~ կատակը մի կողմ. set ~ առանձնացնել. live ~ անջատ/առանձին ապրել. (մասերի բաժանել, անջատել) take a watch ~ ժամացույցը քանդել. come ~ իրարից անջատվել. fall ~ մասերի բաժանվել. The crowd fell ~ Ամբոխը ցրվեց. 2. prep ~ from բացի, չհաշված. A~ from that he is nice enough Եթե դա հաշվի չառնենք/ընդհանուր առմամբ/մա վատ մարդ չէ. tell/know two things ~ իրարից տարբերել:

**apartheid** [ə'pa:theit] n ռասայական խտրականություն, մեկուսացում:

**apartment** [ə'pa:tmənt] n բնակարան, սենյակ. a բազմաբնակարան, բնակելի. an ~ house բազմաբնակարան բնակելի շենք. walk-up ~ բնակարան վերելակ չունեցող

շենքում. two-room ~ երկուսենյականոց բնակարան. well-furnished ~ լավ կահավորված բնակարան. rent an ~ բնակարան վարձել. have one's ~ painted բնակարանը վերանորոգել տալ:

**apartness** [ə'pa:tnəs] n առանձնացում, կղզիացում:

**apathetic** [æpə'tetik] a անտարբեր անաշխույժ:

**apathy** ['æpəθi] n անտարբերություն. political ~ ապոլիտիկություն:

**apatite** ['æpətait] n *երկրք.* ապատիտ:

**ape** [eip] n կապիկ. *փխք.* ընդօրինակող. act/play the ~ կապկել, ընդօրինակել. God's ~ բնածին հիմար/ապուշ. go ~ about/over smth խելագարվել մի բանի/մեկի համար:

**aperient** [ə'piəriənt] n *բժշկ.* լուծողական:

**aperture** ['æpətʃə] n բացվածք, անցք. ~ of a door դռնատեղ, դռնախորշ:

**apery** ['eipəri] n կապկաբուծարան. միմուսություն. կապկություն:

**apex** ['eipeks] n գագաթ, կատար. the ~ of a triangle եռանկյան գագաթ. at the ~ of one's career կարիերայի գագաթնակետին:

**aphazia** [ə'feiziə] n *բժշկ.* խոսելու ունակության կորուստ, աֆազիա:

**aphis** ['eifiz] n *կենս.* բույսոջիլ:

**aphorism** ['æfərizm] n կարճ, իմաստալից խոսք, աֆորիզմ:

**aphtha** ['æfθə] n կաթնախտ, սնկախտ. վերքեր բերանում. դաբաղ (կենդանիների):

**apiarist** ['eipiərist] n մեղվաբույժ:

**apiary** ['eipiəri] n մեղվանոց:

**apical** ['æpikl] a գագաթնային, կատարի:

**apiculture** ['eipikʌltʃə] n մեղվաբուծություն:

**apiece** [ə'pi:s] adv մի հատին, ամեն մեկին. 50 drams ~ մեկ հատը 50 դրամ. give the boys two books ~ տղաներից ամեն մեկին երկուական գիրք տալ:

**apish** ['eipiʃ] 1. a կապկային, կապկող. 2. adv հիմարորեն:

**a-plenty** [ə'plenti] adv առատության/լիության մեջ:

**apocalypse** [ə'pɒkəlips] n հայտնություն, կանխատեսում. the A~ Չայտնություն, Նոր Կտակարանի վերջին գիրքը:

**apocope** [ə'pɒkəpi] n վերջին վանկի/հնչյունի սղումը:

**apocryphal** [ə'pɒkrəfəl] a անվավեր, անստույգ:

**apogee** ['æpədʒi:] n գագաթնակետ, բարձրագույն աստիճան:

**apologetic(al)** [ə,pɒlə'dʒetɪk(əl)] a ներում հայցող. ջատագովական. write an ~ letter նամակով ներողություն խնդրել. be deeply ~ խորը գիտակցել իր սխալը. with an ~ air մեղավոր տեսքով. He was ~ leaving early Նա ներողություն խնդրեց շուտ գնալու համար:

**apologetically** [ə,pɒlə'dʒetɪkəli] adv ներում հայցող տոնով: speak ~ խոսել ներում հայցող տոնով:

**apologetics** [ə,pɒlə'dʒetɪks] n pl ջատագովություն:

**apologist** [ə'pɒlədʒɪst] n ջատագով, պաշտպանող:

**apologize** [ə'pɒlədʒaɪz] v ներողություն խնդրել. You must ~ to her Դու պետք է նրանից ներողություն խնդրես. I ~ for my son Տղայիս համար ներողություն եմ խնդրում:

**apology** [ə'pɒlədʒi] n ներողություն. make/offer an ~ ներողություն խնդրել. accept one's ~ ies ներողություններն ընդունել. demand an ~ ներողություն պահանջել:

**apoplectic** [ˌæpə'plektɪk] a կաթվածահար, կաթվածի ենթակա:

**apoplexy** [ˌæpə'pleksi] n կաթված. suffering from ~ կաթվածից տառապել:

**apostasy** [ə'pɒstəsi] n ուրացում, ուխտադրժում:

**apostate** [ə'pɒsteɪt] a, n ուրացող, ուխտադրուծ:

**apostatize** [ə'pɒstətaɪz] v մի բանից հրաժարվել, ուրանալ:

**apostle** [ə'pɒsl] n առաքյալ. կողմնակից, եռանդուն պաշտպան. ~ of free trade ազատ առևտրի եռանդուն պաշտպան:

**apostrophe** [ə'pɒstrəfi] n ապաթարց:

**apotheosis** [ə,pθəi'əʊsɪs] n ապոթեոզ. փառաբանում, աստվածացում:

**appal** [ə'pɑ:l] v վախեցնել, սարսափեցնել. We were ~ed by his appearance Նրա տեսքը մեզ սարսափեցրեց:

**appalling** [ə'pɑ:lɪŋ] a սարսափելի, զարհուրելի. ցնցող:

**appallingly** [ə'pɑ:lɪŋli] adv սարսափելիորեն, չափազանցորեն, արտակարգորեն:

**apparatus** [ˌæpə'reɪtəs] n սարք, գործիք,

մեքենա. complex/efficient/special/electric ~ բարդ/տնտեսող/հատուկ/էլեկտրական սարք. design/invent/apply/adjust/install ~ նախագծել/ստեղծել/կիրառել/կարգավորել/տեղադրել սարքը. (օրգան) digestive ~ մարսողական օրգաններ. administrative ~ ղեկավար/կառավարող օրգաններ:

**apparel** [ə'pærəl] n *բնստ.* հագուստ, շոր. array/attire in ~ զուգվել, զարդարվել. զարդարանք եկեղեցական զգեստի վրա:

**apparent** [ə'pærənt] a ակնհայտ, բացահայտ. ~ deceit/error/lie ակնհայտ խարկանք/սխալ/սուտ. quite ~ բացահայտ. It is becoming ~ to all Բոլորի համար ակնհայտ է դառնում. ~ to the naked eye անզեն աչքով տեսանելի. ~ horizon տեսանելի հորիզոն. ~ danger ակնհայտ վտանգ. for no ~ reason առանց որևէ ակնհայտ պատճառի. Her self-confidence is more ~ than real Նա այնքան ինքնավստահ չէ, որքան թվում է, Նրա ինքնավստահությունը ավելի թվացող է, քան իրական:

**apparently** [ə'pærəntli] adv ըստ երևույթին, հավանաբար. A~ he has already left Ըստ երևույթին/Հավանաբար նա արդեն գնացել է:

**apparition** [ˌæpə'riʃn] n տեսիլք, ուրվական. horrible ~ ահավոր տեսիլք. The ~ vanished Ուրվականն անհետացավ. the sudden ~ of a black person սևամորթի հանկարծակի երևալը/երևան գալը:

**appeal** [ə'pi:l] n կոչ, դիմում. an ~ to the nation կոչ/դիմում ժողովրդին. sign an ~ դիմումը ստորագրել. answer an ~ for help արձագանքել օգնության կոչին/կանչին. an ~ for flood victims ջրհեղեղից տուժածների օգնության ֆոնդ. (խնդրանք, գանգատ) mute/eloquent/urgent ~ լուռ/պերճախոս/թախանձալից խնդրանք. be deaf to one's ~ խուլ մնալ/չլսել խնդրանքը. ~ in one's eyes խնդրանք աչքերում. make an ~ խնդրել, աղաչել. *իրավ.* բողոք, բողոքարկում, վճռաբեկ գանգատ letter of ~ նամակ-բողոք. ~ to a high court բողոք/դիմում բարձրագույն ատյան. lodge/file/grant an ~ բողոք ներկայացնել. court of ~ վճռաբեկ դատարան. right of ~ բողոքարկելու իրավունք. refuse an ~ բողոքը մերժել. by way of ~ բողոքարկման միջոցով. be without (further) ~ բողոքարկման ենթակա

չլինել (հրապուրանք, գրավչություն) have a certain ~ որոշակի գրավչություն ունենալ. lose its ~ գրավչությունը/հետաքրքրությունը կորցնել. not to have much ~ շատ գրավչություն չունենալ:

**appeal** [ə'pi:l] v դիմել կոչ անել ~ to smn for help մեկին դիմել օգնության. He ~ed to the people in the room նա դիմեց սենյակում գտնվողներին. ~ to the administration դիմել ղեկավարությանը. The chairman ~ed to the silence նախագահը հրավիրեց լռություն պահպանել. ~ to one's finer feelings դիմել առողջ դատողությանը/լավագույն զգացմունքներին. *մրգ.* ~ to the referee դատավորին դիմել. *հրավ.* (բողոքարկել, գանգատարկել) ~ against the judges decision բողոքարկել դատավորի որոշման դեմ. ~ to a higher court բողոքարկել բարձրագույն ատյան. ~ against a judgment/decision բողոքարկել դատավճիռը/որոշումը. (հրապուրվել/հավանել) The new job really ~s to me նոր աշխատանքը ինձ իսկապես դուր է գալիս. How does the idea ~ to you? Ինչպե՞ս ես գտնում այս միտքը. His music doesn't ~ to me Ինձ դուր չի գալիս այս երաժշտությունը. It ~ed to him as an adventure Դա նրան գրավեց որպես արկած:

**appear** [ə'piə] v հայտնվել, երևան գալ. The sun ~ed from behind the clouds Արևը հայտնվեց ամպերի ետևից. He didn't ~ till nine նա հայտնվեց միայն ժամի իննին. His name ~s on the list նրա անունը կա ցուցակում. (լույս տեսնել) When will your book ~? Ե՞րբ է ձեր գիրքը լույս տեսնելու (թվալ, երևալ) It ~s թվում է. It ~ed Պարզվեց. Strange as it may ~ Որքան էլ, որ դա տարրիմակ թվա. He ~s ill/upset նա հիվանդ/վշտացած տեսք ունի. It ~s from this Սրանից հետևում է. *հրավ.* ներկայանալ ~ as a witness որպես վկա ներկայանալ. ~ in court/before the court հայտնվել/կանգնել դատարանի առաջ. ~ for the defendant ելույթ ունենալ հօգուտ մեղադրյալի. *թատ.* He ~ed as Hamlet նա Համլետի դերն էր կատարում/Համլետ էր խաղում He ~ed in many concert halls in Europe նա եվրոպայի շատ համերգասրահներում է ելույթ ունեցել:

**appearance** [ə'piərəns] n ի հայտ/երևան գալը, հայտնվելը. make an ~ հայտնվել.

make one's first ~ առաջին անգամ ելույթ ունենալ. put in an ~ հայտնվել/երևալ. *հրավ.* make an ~ in court դատարանում ելույթ ունենալ. (արտաքին տեսք) judge by ~s արտաքինից դատել. *to/in all ~s* ըստ երևույթին. A~s are deceptive Արտաքինը խաբուսիկ է. He is very young in ~ նա արտաքինից շատ երիտասարդ է. The daughter took after her father in ~ Աղջիկը արտաքինով հորն է քաշել. have a healthy ~ առողջ տեսք ունենալ. save ~s ցույց չտալ. at first ~ առաջին հայացքից. listen with an ~ of interest ձևացնել, որ հետաքրքրությամբ ես լսում. keep up/save/preserve ~s վայելչություն պահպանել:

**appeasable** [ə'pi:zəbl] a զիջող, համալերվող:

**appease** [ə'pi:z] v հանգստացնել, խաղաղեցնել. ~ an angry man/smb's anger հանգրստացնել զայրացած մարդուն. to ~ her I brought her some flowers սիրտը շահելու համար ես նրան ծաղիկներ նվիրեցի. (մեղմացնել, ամոքել) ~ pain ցավը մեղմացնել. ~ sorrow/grief վիշտը/ցավը ամոքել. (հագեցնել, բավարարել) ~ one's hunger քաղցը հագեցնել. ~ one's curiosity հետաքրքրությունը բավարարել:

**appeasment** [ə'pi:zmənt] n խաղաղեցում, հագեցում, բավարարում. policy of ~ խաղաղեցման քաղաքականություն:

**appellant** [ə'pelənt] n *հրավ.* բողոքարկող, բողոքող կողմ:

**appellate** [ə'pelət] n մեղադրյալ:

**appellate** [ə'pelət] a վճռաբեկ, բողոքարկման. ~ court բողոքարկման/վճռաբեկ դատարան:

**appellation** [,æpə'leɪʃn] n անուն, անվանացանկ:

**appellative** [ə'pelətiv] n անուն, անվանում. *քեր.* հասարակ գոյական:

**appellee** [,æpe'li:] n *հրավ.* պատասխանող, մեղադրյալ:

**append** [ə'pend] v ավելացնել, կցել. ~ a clause to a treaty պայմանագրին կետ ավելացնել. the copy is ~ed կից տրվում է օրինակը. ~ a list of names կցել անվանացանկը:

**appendage** [ə'pendidʒ] n հավելված, ավելացում, լրացում:

**appendant** [ə'pendənd] n լրացուցիչ, հավելյալ, հավելում:



**appendicitis** [ə,pendə'saitis] n *բժշկ.* կույր աղիքի բորբոքում, ապենդիցիտ:  
**appendix** [ə'pendiks] n (pl *appendices*) (գրքի) փաստաթղթի/հավելված, լրացում *կզմիս*. կույր աղիքի հավելված:  
**appertain** [,æpə'tein] v պատկանել, վերաբերել:  
**appertence** [ˈæpitəns] n ցանկություն. ձգտում, հակում:  
**appetite** [ˈæpitait] n ախորժակ. *good/poor/bad* ~ լավ/վատ ախորժակ. *lose one's* ~ ախորժակը կորցնել. *spoil/take away one's* ~ ախորժակը փչացնել. *work up an* ~ ախորժակ ձեռք բերել. (ցանկություն, հակում) *have no* ~ for quarelling *կռվելու/վիճելու ցանկություն չունենալ*. *human* ~s մարդկային կրքերը. *The* ~ comes with eating *Ախորժակը ատամի տակ է*. *A good* ~ is the best sauce *Լավ ախորժակը ամենալավ համեմունքն է*:  
**appetizer** [ˈæpitaizə] n նախուտեստ (ախորժակ գրգռող):  
**appetizing** [ˈæpitaiziŋ] a ախորժեղի, համեղ, գրավիչ. *an* ~ smell (from the kitchen) *ախորժեղի հոտ (խոհանոցից)*:  
**applaud** [ə'plɔ:ɔd] v ծափահարել. ~ *loudly/vigorously* բարձրաձայն/բուռն ծափահարել. ~ *an actor/musician* դերասանին/երաժշտին ծափահարել. ~ *a decision* որոշմանը հավանություն տալ. *The audience* ~ed the singer *Ունկնդիրները ծափահարեցին երգչին*:  
**applause** [ə'plɔ:z] n ծափահարություններ. հավանություն. *prolonged/continuous* ~ երկարատև ծափահարություններ. *a storm of* ~ բուռն ծափահարություններ. *burst into* ~ ծափահարություններ պռոթվալ. *win the* ~ of ծափահարություններ շահել. *The* ~ died down *Ծափահարությունները մարեցին/հանդարտվեցին*. *rise in* ~ ծափահարություններով դիմավորել:  
**apple** [ˈæpl] n խնձոր. *hard/sour/juicy/ripe* ~ կոշտ/թթու/հյութալի/հասած խնձոր. *pips/peel of an* ~ խնձորի կորիզ/կեղև. ~ *butter/jam* խնձորի ջեմ. ~ *green* դեղնականաչ գույն. *the* ~ of one's eye *աչքի լույս*. *Adam's* ~ ադամախնձոր. ~ of discord *կռվախնձոր*. ~ *sauce* հիմարություն:  
**apple-cart** [ˈæplka:t] n խնձորի սայլակ. *upset the* ~ մեկի ծրագրերը խափանել:  
**apple-pie** [,æpl'pai] n խնձորի կարկանդակ.

*an* ~ order *ամ*. անբասիր կարգուկանոն. ~ *virtues* *ավանդական ամերիկյան առաքինություններ*:  
**apple-polisher** [,æpl'pɔliʃə] n *ամ*. *սլենդ* բժնող (դպրոցական):  
**apple-tree** [ˈæpltri:] խնձորենի:  
**appliance** [ə'plaiəns] n հարմարանք, սարք. ~ for opening cans *պահածո բացելու հարմարանք*. *electrical* ~s էլեկտրական սարքեր. *household* ~s *կենցաղային սարքեր (լվացքի մեքենա և այլն)*:  
**applicable** [ə'plikəbl] a կիրառելի, պիտանի, պատշաճ. *This is not* ~ to you *Սա ձեզ չի վերաբերում*. *delete/add where* ~ *ջնջել/գիծ քաշել կամ անելացնել, որտեղ անհրաժեշտ/ հարմար է*. *If* ~ *Եթե կիրառելի է*. *The rule is* ~ *Կանոնը կիրառելի է*:  
**applicant** [ˈæplikənt] n հավակնորդ, թեկնածու. *be an* ~ for a post *որևէ պաշտոնի հավակնել*. *There were* 200 ~s *200 դիմում / հավակնորդ կար/կային*:  
**application** [,æpli'keiʃn] n դիմում. *written* ~ գրավոր դիմում. *write/make/file an* ~ *դիմում տալ*. *accept/reject/turn down an* ~ *ընդունել/չընդունել/մերժել դիմումը*. *an* ~ for a job *աշխատանքի ընդունելու դիմում*. *an* ~ form *դիմումի ձև/բլանկ/անկետա*. (խնդրանք) ~ for help *օգնության խնդրանք*. (կիրառում, գործածում) ~ of new methods *նոր մեթոդների կիրառում*. ~ of the law *օրենքի կիրառում*. *բժշկ.* for external ~ *միայն արտաքին օգտագործման համար*. ~ of ice *to the forehead* *ճակատին սառույց դնել*. *hot and cold* ~s *տաք և սառը թրջոցներ*. (ջանասիրություն) *work with great* ~ *մեծ ջանասիրությամբ աշխատել*. (հայտ) *send in an* ~ for new books *նոր գրքերի հայտ ներկայացնել*. *get details on* ~ *մանրամասների հայտ ներկայացնել*. *հմկրգ.* ~ domain *առարկայական տիրույթ*. ~ program *կիրառական ծրագիր*:  
**applied** [ə'plaid] a կիրառական. ~ *art/science* *կիրառական արվեստ/գիտություն*:  
**apply** [ə'plai] v դիմել. ~ to the manager *կառավարչին դիմել*. ~ for help/advice *դիմել օգնության/խորհրդի համար*:  
**appoint** [ə'pɔint] v նշանակել. ~ a manager/ambassador *կառավարիչ/դեսպան նշանակել*. ~ to a post *պաշտոնի նշանակել*. ~ a

day օր նշանակել. at the ~ed time նշանակված օրը/ժամանակ. (սարքավորել, կարգավորել) be well ~ed լավ կահավորված լինել. well/badly ~ed house լավ/վատ կահավորված տուն. ~ed task առաջադրված խնդիր:

**appointee** [əˈpɔɪnˈti:] n նշանակված/նշանակում ստացած անձ:

**appointive** [əˈpɔɪntɪv] a նշանակովի, ոչ ընտրովի. ~ office նշանակովի պաշտոն:

**appointment** [əˈpɔɪntmənt] n նշանակում, պաշտոն. get/obtain/receive an ~ պաշտոն ստանալ. have/hold an ~ as a professor պրոֆեսորի պաշտոն գրավել/ունենալ. (հանդիպում, ժամադրություն, տեսակցություն). have an ~ հանդիպում ունենալ. The ~ was set for 5 o'clock Հանդիպումը նշանակված էր ժամի հինգին. a request for ~ ընդունելության խնդրանք. have an ~ with a girl/boy ժամադրություն աղջկա/տղայի հետ. keep an ~ ժամանակին (հանդիպման) գալ. Midnight ~ ամ. նշանակումներ կառավարության կողմից իր ղեկավարության ավարտման շրջանում. an important/business ~ կարևոր/գործարար հանդիպում. The doctor will see you only by ~ Բժիշկը կընդունի ձեզ միայն նախնական պայմանավորվածության համաձայն:

**apportion** [əˈpɔːʃn] v բաշխել, բաժանել. ~ one's time between different actions ժամանակը բաշխել տարբեր գործերի վրա. ~ money փողը բաշխել:

**apportionment** [əˈpɔːʃnmənt] n բաշխում, բաժանում:

**apposite** [ˈæpəzɪt] 1. a հարմար, վայելուչ. an ~ remark տեղին դիտողություն բաշխել. 2. v ~ the blame equally մեղքը հավասարաչափ բաշխել:

**apposition** [ˌæpəˈzɪʃn] n դնելը. ~ of seal կնիք դնելը. *քեր.* բացահայտիչ:

**appraisal** [əˈpreɪzəl] n գնահատական, գնահատում. ~ mission գնահատման ծառայություն/առաքելություն:

**appraise** [əˈpreɪz] v գնահատել. ~ the abilities of pupils աշակերտների ունակությունները գնահատել:

**appraisement** [əˈpreɪzmənt] n գնահատում:

**appraiser** [əˈpreɪzə] n գնահատող, սակագին նշանակող:

**appreciable** [əˈpriːəbl] a նկատելի, շոշա-

փելի, գնահատելի. an ~ change in temperature ջերմության նկատելի փոփոխություն. an ~ sum զգալի/շոշափելի գումար:

**appreciate** [əˈpriːʃiət] v գնահատել, արժեքը գիտենալ. ~ one's kindness/help բարությունը/օգնությունը գնահատել. be not ~d չգնահատվել. After a long winter we ~ the sun երկար ծմեռից հետո իսկապես գնահատում ես արևը. ~ what has been done երախտապարտ լինել արածի համար. (արժեքավորել. հասկանալ) ~ the true force/the full meaning արժեքավորել իսկական ուժը/ամբողջ իմաստը. fully ~ one's difficulties լրիվ գիտակցել դժվարությունները. not to ~ modern art չհասկանալ ժամանակակից արվեստը. I ~ that we have no choice ես հասկանում եմ, որ մենք ընտրություն չունենք. ~ music երաժշտությունը նուրբ գնահատել. ~ the distinction տարբերությունը զգալ. This land ~d greatly Այս հողի գինը զգալիորեն բարձրացել է:

**appreciation** [əˈpriːʃiˈeɪʃn] n (բարձր) գնահատական, արժեքավորում, գնահատում. ընդունում, ճանաչում. արժեքի բարձրացում/թանկացում. She showed no ~ of modern music Նա բոլորովին չէր հասկանում ժամանակակից երաժշտությունը. have a fine ~ of շատ նուրբ ձևով գնահատել որևէ բան. deep ~ of kindness/advice խորը երախտապարտություն բարության/խորհրդի համար. as a token of ~ ի նշան երախտագիտության. (արժեքի բարձրացում/թանկացում):

**appreciative** [əˈpriːʃiətɪv] a երախտապարտ, երախտագետ. ~ of favour երախտագիտություն բարի ծառայության համար. ~ audience զգայուն/շնորհակալ ունկնդիր. ~ of slightest difference of colour գույների ամենանուրբ երանգների ընկալում:

**apprehend** [ˌæpriˈhend] v հասկանալ, ըմբռնել. կռահել. ~ the intentions of the author հեղինակի մտահղացումը հասկանալ/ըմբռնել (կանխազգալ, նախազգալ). Do you ~ any difficulty? Դուք ինչ-որ բարդություններ եք ակնկալում. ~ a danger վտանգ նախազգալ. (ծերբակալել, բռնել) ~ a thief գողին բռնել:

**apprehensible** [ˌæpriˈhensəbl] a ըմբռնող:

**apprehension** [ˌæpriˈhenʃn] n ըմբռնողություն, ըմբռնելու ընդունակություն. quick/

dull of ~ արագ/դանդաղ ըմբռնողություն. (վախ, մախազագացում) feel ~ for smb's safety մեկի անվտանգության համար վատ կանխազգացում ունենալ. I wated for him with some ~ Ես նրան որոշ անհանգստությամբ էի սպասում. ~ of failure ծախողման վախ ապրել. be full of ~ for անհանգստանալ որևէ բանի համար. vague ~ անորոշ վախ. in a tone of ~ տագնապալից/հուզումնալից տոնով:

**apprehensive** [ˌæpriˈhensiv] a վախով/մախազագացումով լի. be ~ անհանգստանալ, հուզվել. be ~ before an exam հուզվել քննությունից առաջ. I am ~ for her health Ես երկյուղ եմ կրում նրա առողջության համար. ~ of further defeats անհանգստանալ հետագա պարտությունների համար. ~ of the disaster դժբախտության կանխազգում:

**apprentice** [əˈprentis] n աշակերտ (արհեստավորի), աշակերտ. սկսնակ. ~ school արհեստագործական ուսումնարան. go ~ աշակերտ դառնալ:

**apprenticeship** [əˈprentisʃɪp] n աշակերտություն, աշակերտության ժամանակաշրջանը. He served his ~ with a carpenter Նա ատաղծագործի աշակերտ է եղել:

**appraise** [əˈpraɪz] v ծանուցել, տեղեկացնել. ~ the situation տեղեկացնել իրավիճակի մասին. be ~d of the date օրվա մասին տեղյակ պահել:

**approach** [əˈprəʊtʃ] n մոտենալը, մոտեցում. ~ of night/winter/train ծմեռվա մոտենալը/գիշերվա վրա հասնելը/գնացքի մոտենալը. at his ~ նրա մոտենալու պահին. one-sided/basic/wrong ~ միակողմանի/հիմնական/սխալ մոտեցում. entirely new ~ բոլորովին նոր մոտեցում. new lines of ~ մոտեցման նոր ուղիներ. (մատույց, մոտենալը) at the ~es to the town քաղաքի մատույցներում. The house has an easy ~ Շենքը հարմար մատույցներ ունի. an ~ road մերձատար/մատույցային ուղի. make ~es to smb սիրահետել որևէ մեկին:

**approach** [əˈprəʊtʃ] v մոտենալ:

**approachable** [əˈprəʊtʃəbl] a մատչելի. He is very ~ Նրան հեշտ է դիմելը:

**approaching** [əˈprəʊtʃɪŋ] a մոտեցող, գալիք. the ~ holiday մոտեցող տոնը. ~ traffic հանդիպակաց երթևեկություն:

**approve** [ˈæprəʊbeɪt] v հավանություն տալ, վավերացնել:

**approbation** [ˌæprəʊˈbeɪʃn] n հավանություն, վավերացում:

**approbatory** [ˌæprəʊˈbeɪtəri] a հավանության, համակրելի:

**appropriate** [əˈprəʊpriət] a համապատասխան, հարմար, պատշաճ. ~ clothes հարմար հագուստ. ~ moment հարմար պահ. ~ to occasion դեպքին հարմար/համապատասխան. ~ remark տեղին դիտողություն. most ~ speech խիստ տեղին ելույթ. apply to the ~ department դիմել համապատասխան բաժնին. ~ tool համապատասխան/հարմար գործիք:

**appropriate** [əˈprəʊpriət] v յուրացնել, սեփականացնել. My son has ~d my book Որդիս յուրացրել է գիրքս. ~ one's ideas սեփականացնել որևէ մեկի մտքերը. Funds have been ~d for a new theatre Նոր թատրոնի համար գումար է հատկացվել:

**appropriation** [ˌæprəʊpriˈeɪʃn] n յուրացում, սեփականացում. ~ of a piece of property (ուրիշի) սեփականության յուրացում. budget ~ բյուջետային հատկացում. make an ~ for payment of debts պարտքերը վճարելու համար գումար հատկացնել:

**approval** [əˈpruːvəl] n հավանություն, համաձայնություն. express/receive/merit an ~արտահայտել/ստանալ/արժանանալ հավանության. He nodded (in) ~ Նա գլխով արեց ինչան հավանության. She smiled (in) ~ Նա ժպտաց խրախուսանքով. տևտ. on ~ կրճ. on appro ստուգման/փորձարկման համար. submit for ~ ներկայացնել հաստատման:

**approve** [əˈpruːv] v հավանություն տալ. ~ plan/suggestion/decision ծրագրին/առաջարկին/որոշմանը հավանություն տալ. ~ of the idea մտքին հավանություն տալ. I don't ~ of wasting time Ես չեմ սիրում ժամանակ կորցնել. ~ the book for publication գիրքը հրատարակման երաշխավորել. ~ of one's choice ընտրությանը հավանություն տալ:

**approved** [əˈpruːvd] a հաստատված, ընդունված. ~ agenda հաստատված օրակարգ. an ~ school անչափահասների ուղղիչ գաղութ:

**approvingly** [əˈpruːvɪŋli] adv հավանություն տալով, վավերացնելով:

**approximate** [ə'prɒksɪmət] a մոտավոր, մոտ. the ~ area մոտավոր տարածքը. ~ cost մոտավոր արժեքը:

**approximate** [ə'prɒksɪmeɪt] v մոտենալ (*հսկա*). քանակի և որակի մասին) ~ to the truth ճշմարտությանը մոտ լինել/մոտենալ. Ideas ~ to target Գաղափարները մոտենում են նպատակներին:

**approximately** [ə'prɒksɪmətli] adv մոտավորապես. know ~ մոտավորապես իմանալ. It will cost ~ ... Մոտավորապես կարժենա...:

**approximation** [ə'prɒksɪ'meɪʃn] n մոտեցում, մոտենալը. a very close ~ to շատ մոտ/մոտենալը. a mere ~ միայն մոտավորապես ճիշտ/ճշգրիտ I can only give you an ~ of ... Ես միայն մոտավորապես կարող եմ ասել... *մաթ.* մոտավոր թիվ/գումար:

**approximative** [ə'prɒksɪmətɪv] a մոտավոր, մերձավոր:

**appurtenance** [ə'pɜ:tɪnəns] n հավելված, անհրաժեշտ/օժանդակ պարագաները. the house and its ~s տունը և այն, ինչ նրան պատկանում է:

**appurtenant** [ə'pɜ:tɪnənt] a պատկանող, վերաբերող:

**apricot** ['eɪprɪkɒt] n, a ծիրան (ծառը և միրգը) stone off/in an ~ ծիրանի կորիզ. ~ juice/jam ծիրանի հյութ/մուրաբա:

**April** ['eɪprəl] n, a ապրիլ. ապրիլյան. ~ fool ապրիլմեկյան կատակի զոհ. ~ Fool's day (Ուրախ) Կատակների օր. ~ fish ապրիլմեկյան կատակ. ~ shower անսպասելի տեղատարափ անձրև:

**apron** ['eɪprən] n զոզնոց. put on an ~ զոզնոց կապել. ծածկոց (կառքի, մեքենայի և այլն). *թատ.* նախաբեմ. tied to his mother's/wife's ~ strings մոր/կնոջ փեշից կպած/փեշին գերի:

**apropos** [ˌæprə'pəʊ] a, adv ժամանակին, տեղին. be very much ~ շատ ժամանակին/տեղին լինել. (ի միջի այլոց, առթիվ). ~ of your remark ինչ վերաբերում է ձեր դիտողությանը, ձեր դիտողության առթիվ. ~ of our talk մեր զրույցի կապակցությամբ:

**apt** [æpt] a ընդունակ. an ~ student ընդունակ ուսանող. an ~ remark/quotation տեղին նկատողություն/մեջբերում. an ~ discription հաջող նկարագրություն. be ~ to illness հիվանդության հակում ունենալ. He is ~ to forget Ես շատ շուտ է մոռանում. She is ~ to take

offence Ես շատ նեղացկոտ է. The fire is ~ to go out Կրակն անընդհատ հանգչում է:

**aptitude** ['æptɪtju:d] n ընդունակություն. ~ for languages լեզվական ունակություն. usual/natural ~ արտակարգ/բնական հակում. ~ test ունակությունների ստուգում:

**Aqua Libra** ['ækwə 'li:brə] n Կենաց ջուր (*ճակ.* մրգահյութ և այլն):

**aqualung** ['ækwəlʌŋ] n ակվալանգ:

**aquamarine** [ˌækwəmə'ri:n] 1. n ծովակն (թանկարժեք քար). 2. a ծովակնագույն, կանաչ-կապույտ:

**aquarelle** [ˌækwə'reɪl] n ջրաներկ:

**aquarium** [ə'kwɛəriəm] n ակվարիում:

**aquatic** [ə'kwætɪk] a ջրային. ~ sports ջրային սպորտ. ~ plants ջրաբույսեր. n ջրային բույս/կենդանի:

**aqueduct** ['ækwɪdʌkt] n ջրակամուրջ, ակվեդուկ:

**aqueous** ['eɪkwɪəs] a ջրային, ջրոտ, ~ solution ջրային լուծույթ. *երկրբ.* (նստված-քային) ~ rock նստվածքային ապար:

**aquiferous** [ə'kwɪfərəs] a *երկրբ.* ջրաբեր:

**aquiline** ['ækwɪlaɪn] a արծվային. ~ nose արծվաքիթ:

**Arab** ['ærəb] n, a արաբ, արաբական. the Arabs արաբները. ~ (horse) արաբական ձի. city/street ~ անապատստան երեխա:

**arabesque** [ˌærə'besk] n *ճրտ.* զարդանշան:

**Arabian** [ə'reɪbiən] n, a արաբ, արաբական. the ~ bird փյունիկ. ~ Nights հազար ու մի գիշեր (արաբական հեքիաթները). ~ camel *կենդ.* միասապատ ուղտ:

**Arabic** ['ærəbɪk] n, a արաբերեն. արաբական, Արաբիայի. ~ numerals արաբական թվեր (1, 2, 3 և այլն):

**arable** ['ærəbl] n, a վարելի, հերկելի. ~ land վարելահող. ~ layer հերկելի շերտ (հողի):

**arbalest** ['a:bəlɪst] n աղեղնագեմ, ինքնաձիգ աղեղ, արբալետ:

**arbiter** ['a:bitə] n իրավարար, միջնորդ դատավոր. *մրգ.* գլխավոր դատավոր. ~ of our fate մեր բախտի տիրակալ:

**arbitrage** ['a:bitrɑ:ʒ] n իրավարարություն, միջնորդ դատարան:

**arbitrary** ['a:bitrəri] a ինքնական, անհիմն, կամայական. *գրք.* բռնակալական. ~ estimate չհիմնավորված գնահատական:

**arbitrate** ['a:bitreɪt] v դատել միջնորդ դա-

- տարանով/իրավարարով ~ between the two sides երկու կողմերի միջև որպես իրավարար հանդես գալ:
- arbitration** [ˌɑːbiˈtreɪʃn] n իրավարարություն, միջնորդ դատավորի որոշում. settle by ~ վեճը լուծել միջնորդ դատարանով. ~ tribunal միջնորդ դատարան. court of ~ միջնորդ դատարան. Permanent Court of ~ Հաագայի միջազգային դատարան:
- arbitrator** [ˈɑːbitreɪtə] n միջնորդ դատավոր, իրավարար:
- arbor** [ˈɑːbər] n *տեխ.* գլան, առանցք. *ամ.* ծառ. ~ Day Գարնան Ծառատնկի տոն. տաղավար:
- arboreal** [ɑːˈbɔːriəl] a փայտանյութի, փայտի. (ծառաբնակ) ~ animals ծառաբնակ կենդանիներ (սկյուռ, կապիկ և այլն):
- arboreous** [ɑːˈbɔːriəs] a ծառակերպ, ծառանման. անտառաշատ:
- arboriculture** [ˈɑːbəri,kʌltʃə] n անտառաբուծություն:
- arbour** [ˈɑːbər] n տաղավար:
- arc** [ɑːk] n *մաթ., էլ.* աղեղ. ~ lamp աղեղնավոր լամպ:
- arcade** [ɑːˈkeɪd] n *ճրտ.* կամարաշարք, կամարակապ սրահ (*սովր.* խանութներով):
- Arcadian** [ɑːˈkeɪdiən] a հովվերգական, գյուղական:
- arch** [ɑːtʃ] n կամար, աղեղ. semicircular/triumpfal կիսակլոր/հաղթական կամար. the shape of an ~ կամարածև. under the ~es of a bridge/cathedral կամուրջի/տաճարի կամարների տակ. fallen ~es *բժշկ.* հարթաթաթուքություն:
- arch** [ɑːtʃ] a խորամանկ, նենգ. ~ smile/look/glance խորամանկ ժպիտ/հայացք look ~ չարածճի/խորամանկ տեսք ունենալ:
- arch** [ɑːtʃ] v կամարապատել. կամարածև/աղեղնածև կորանալ. The river is ~ed over by the bridge Գետի վրայով կամուրջ է անցնում. The cat ~ed its back Կատուն կորացրեց մեջքը. ~ the eyebrows հոնքերը (կամարածև/) բարձրացնել:
- archaeological** [ˌɑːkiəˈlɒdʒɪkəl] a հնագիտական:
- archaeologist** [ˌɑːkiˈɒlədʒɪst] n հնագետ:
- archaeology** [ˌɑːkiˈɒlədʒi] n հնագիտություն:
- archaic** [ɑːˈkeɪk] a հին, հնացած, արխայիկ:
- archaism** [ˈɑːkeɪzɪzəm] n հնացած բառ/արտահայտություն/ոճ, արխայիզմ:
- archangel** [ˈɑːk,eɪndʒəl] n հրեշտակապետ:
- archbishop** [ɑːtʃˈbɪʃəp] n արքեպիսկոպոս:
- archbishopric** [ɑːtʃˈbɪʃəprɪk] n արքեպիսկոպոսություն:
- arched** [ɑːtʃt] a կամարակապ, կամարածև, կորացած. ~ girder հեծան, գերան, ձողակառույց:
- arch-enemy** [ɑːtʃˈenəmi] n ռիստրիմ թշնամի. the ~ սատանա:
- archer** [ˈɑːtʃər] n աղեղնածիգ. *աստղբ.* Archer Աղեղնավոր (համաստեղություն):
- archery** [ˈɑːtʃəri] n աղեղնածոգություն:
- archetypal** [ˈɑːkɪtaɪpəl] a նախատիպական, սկզբնական, առաջնային. բնիկ:
- archetype** [ˈɑːkɪtaɪp] n նախատիպ:
- archimandrite** [ˌɑːkiˈmændraɪt] n վարդապետ:
- archipelago** [ˌɑːkiˈpeɪləɡəʊ] n կղզիախումբ, արշիպելագ:
- architect** [ˈɑːkɪtekt] n ճարտարապետ. *փխք.* ստեղծող, արարիչ. naval ~ ինժեներ նավաշինարար. ~ of one's own happiness/fortunes իր բախտը ստեղծող/տնօրինող:
- architectonic** [ˌɑːkɪtektˈɒnɪk] a ճարտարապետական, կառուցողական:
- architectural** [ˌɑːkiˈtektʃrəl] a ճարտարապետական. ~ engineering ճարտարապետական, շինարարական տեխնիկա:
- architecture** [ˈɑːkɪtektʃə] n ճարտարապետություն, կառուցվածք, շենք. ճարտարապետական ոճ: ruins of ancient ~s հին շինությունների ավերակներ. (ճարտարապետական ոճ) Gothic/Armenian/Greek ~ գոթական/հայկական/հունական ոճ:
- archival** [ɑːˈkaɪvəl] a արխիվային. ~ depository արխիվային նյութերի պահոց:
- archives** [ˈɑːkaɪvz] n pl արխիվ, պահոց:
- archivist** [ˈɑːkɪvɪst] n արխիվարիոս:
- archly** [ˈɑːtʃli] adv խորամանկորեն, նենգորեն:
- archway** [ˈɑːtʃweɪ] n կամարակապ անցք, անցում կամարի տակ:
- archwise** [ˈɑːtʃwaɪz] adv կամարանման, աղեղնածև:
- arctic** [ˈɑːktɪk] a բևեռային, հյուսիսային. the A~ արկտիկա. the A~ circle Յուսիսային բևեռային գոտի. the A~ ocean Յուսիսային

Սառուցյալ օվկիանոս. ~ weather շատ ցուրտ եղանակ:

**ardency** ['a:dnsi] n եռանդ. կրակ. բուռն ցանկություն:

**ardent** ['a:dnt] a վառ, կրակոտ, բոցավառ. an ~ desire բուռն ցանկություն. an ~ supporter մոլի կողմնակից/պաշտպան. an ~ lover կրակոտ սիրահար:

**ardently** ['a:dntli] adv ջերմ, վառ, ջերմորեն:

**ardour** ['a:də] n եռանդ, ջերմություն. damp smb's ~ գլխին սառը ջուր լցնել, հիացմունքը խափանել:

**arduous** ['a:djuəs] a դժվար, լարված. ~ work ծանր/լարված աշխատանք. an ~ climb դժվար վերելք:

**are** [a:] n հողային տարածքի միավոր:

**area** ['eəriə] n տարածություն, տարածք, մակերես. *ի/սբ.* ոլորտ, շրջան. vast ~ լայն տարածք. the ~ of a triangle եռանկյան մակերես. sown ~ ցանքատարածք. the ~ of finance ֆինանսների ոլորտը. the ~s of disagreement անհամաձայնության հարցեր. the postal ~s (քաղաքի/) փոստային բաժանմունքները. desert ~s of Asia Ասիայի անապատային շրջանները. prohibited ~ արգելված տարածք, զոնա. ~ study երկրագիտություն. ~ code միջքաղաքային հեռախոսային կոդ. ~ services տարածաշրջանային ծառայություններ. living ~ բնակատարածություն. parking ~ կայանատեղ:

**arena** [ə'ri:nə] n ասպարեզ, արենա. the ~ of politics քաղաքականության ոլորտ. the ~ of bears and bulls ֆոնդային բորսա:

**argent** ['a:dʒənt] a արծաթյա, արծաթափայլ:

**argil** ['a:dʒil] n բրուտագործական կավ:

**Argonaut** ['a:gəʊt:] n *նից.* արգոնավորդ:

**argot** ['a:gəʊ] n ժարգոն, արգո:

**arguable** ['a:gjuəbl] a վիճելի, առարկելի ~ point վիճելի հարց:

**argue** ['a:gju:] v վիճել. ~ with smb/over smth վիճել մեկի հետ մի բանի մասին. (ապացուցել, քննարկել) ~ for/against/that ապացուցել կողմ/դեմ/որ ~ smb into/out of doing smth համոզել մեկին որևէ բան անել/չանել (պնդել) I'd like to ~ that point Կցանկանայի առարկել այդ կապակցությամբ. ~ that պնդել, հաստատել. (վկայել) His accent ~s him a foreigner Նրա արտասանությունը

վկայում է, որ նա օտարերկրացի է, մատնում է նրա օտարերկրացի լինելը. ~ in favour of փաստարկել ի օգուտ. Don't ~! Մի՛ վիճիր (ապացուցել) It ~s him an honest man Դա ապացուցում է, որ նա ազնիվ մարդ է:

**argument** ['a:gjʌmənt] n վեճ, բանավեճ. փաստարկ, ապացույց. weak/unconvincing ~ թույլ/ոչ համոզիչ փաստարկ. a good ~ համոզիչ փաստարկ. a matter of ~ վիճելի հարց. refute ~s ժխտել. have the better of the ~ վեճում ավելի ուժեղ լինել. heated ~ տաք վեճ, բանավեճ. Let's have no ~s եկեք չվիճենք. hear only one side of the ~ հարցի միայն մի կողմը լսել. for the sake of ~ ենթադրենք. I don't follow your ~ Կապ չեմ տեսնում ձեր փաստարկների միջև. be open to ~ պատրաստ լինել լսել այլ փաստարկներ/կարծիքներ. a strong ~ համոզիչ փաստարկ:

**argumentation** [,a:gjʌməntə'ʃi:ən] n փաստարկում, պատճառաբանություն. վեճ, վիճաբանություն:

**argumentative** [,a:gju'mentətɪv] a վիճելի. տրամաբանական. be very ~ շատ սիրելի վիճել:

**argus-eyed** ['a:gəsaid] a սրատես, արթուն:

**argute** [a:'gju:t] a սուր, խորաթափանց. սուր, ականջ ծակող (ձայնի մասին):

**aria** ['a:riə] n մեներգ:

**arid** ['ærid] a չոր, չորային. անբերրի (հողի մասին) ~ region/desert չորային/անապատային շրջան. ~ studies ծանծրալի/տաղտկալի զբաղմունք/ուսումնասիրություն:

**aridity** [ə'ridəti] n չորություն, չորայնություն. անբերրիություն:

**Aries** ['eəri:z] n *խոյ* (համաստեղություն):

**aright** [ə'raɪt] adv ճիշտ, ճշտորեն. set ~ ուղղել. hear ~ ճիշտ հասկանալ. if I heard ~ եթե ես ճիշտ հասկացա:

**arise** [ə'raɪz] v ծագել, հայտնվել, առաջանալ. The question did not ~ Այդ մասին խոսք չի եղել, Դա բացառված է. should the opportunity ~ եթե (հարմար) առիթ ծագի. Serious problems may ~ Կարող են լուրջ պրոբլեմներ ծագել. ~ from misunderstanding թյուրըմբռնման արդյունք լինել:

**aristocracy** [ˌæris'tɒkrəsi] n ազնվականություն, արիստոկրատիա:

**aristocrat** ['æristəkræt] n ազնվական, արիստոկրատ:

**aristocratic** [ˌæɪrɪstəˈkrætɪk] a ազնվական, արիստոկրատական:

**arithmetic** [ˌæɪrɪθməˈtɪk] n թվաբանություն:

**arithmetical** [ˌæɪrɪθˈmetɪkəl] a թվաբանական. ~ progression թվաբանական պրոգրեսիա:

**ark** [ɑ:k] n արկղ. տապան. Noah's ~ Նոյյան տապան:

**arm** I [ɑ:m] n բազուկ, թև. ~ in ~ թևանցուկ with open ~s գրկաբաց. at ~'s length պատշաճ հեռավորության վրա. a babe in ~s ծծկեր երեխա. rush into smb's ~s մեկի գիրկն ընկնել. chance one's ~s խիզախել, հանդգնել. put one's ~s round smb գրկախառնվել. under one's ~s թևատակին. (թևք) ~ of a river գետի բազուկ. ~ of an arm-chair բազկաթոռի բազուկ. an ~ of the sea ծովածոց. ~ of the tree ծառի ճյուղ. ~s of a balance տեխ. կշեռքի լծակ. the ~ of the law փխբ. օրենքի ուժը:

**arm** II [ɑ:m] n գորքի տեսակ. the air ~ ռազմաօդային ուժեր. ~s գեներ. in ~s զինված. under ~s զինված. To ~s! Ի գեներ. equality of ~s կողմերի հավասարություն. take up ~s գեներ վերցնել. lay down ~s գեները վայր դնել, անձնատուր լինել. ~s limitation սպառազինման սահմանափակում. small ~s հրաձգային գեներ, հրազեն. ~s (coat of arms) զինանշան:

**arm** [ɑ:m] v զին(վ)ել. ~ oneself զինվել. ~ed with information տեղեկատվությամբ զինված, սպառիչ տեղեկատվություն ունենալ:

**armada** [ɑ:'mɑ:də] n նավատորմ. the Invincible ~ Անհաղթ արմադա:

**armament** [ˈɑ:məmənt] n սպառազինություն. the ~ race/drive սպառազինության մրցավազք. reduction of ~ սպառազինությունների կրճատում:

**armature** [ˈɑ:mətʃə] n զրահ. կենդ., բար. զրահ. տեխ. արմատուրա. էլ. մագնիսական խարիսխ:

**arm-chair** [ˈɑ:m(t)ʃeə] n բազկաթոռ:

**armed** [ɑ:md] a զինված. ~ forces/services զինուժ. ~ neutrality զինված չեզոքություն. ~ robbery զինված կողոպուտ ~ to the teeth մինչև ատամները զինված:

**Armenian** [ɑ:'mi:niən] n, a հայ, հայուհի. հայերեն/հայոց լեզու. հայկական:

**armful** [ˈɑ:mfʊl] n մի գիրկ (խոտ, փայտ և այլն):

**arm hole** [ˈɑ:mhəʊl] n թևատեղ, թևատակ, անութ:

**arming** [ˈɑ:mɪŋ] n զինում, զինելը:

**armistice** [ˈɑ:mɪstɪs] n զինադադար. general/partial ~ ընդհանուր/մասնակի զինադադար:

**armless** I [ˈɑ:mləs] a անթև. ճյուղազուրկ (ծառի մասին):

**armless** II [ˈɑ:mləs] a անզեն:

**armlet** [ˈɑ:mlət] n թևնոց. ապարանջան. փոքրիկ ծովախորշ:

**armor** [ˈɑ:mə] զրահ (նավի, տանկի). զենք ու զրահ. սկաֆանդր. ~ clad զրահավորված, զրահապատ:

**armored** [ˈɑ:məd] a զրահապատ, զրահավոր. ~ car զրահապատ մեքենա:

**armour-bearer** [ˌɑ:məˈbeərə] n պսոմ. զինակիր:

**armourer** [ˈɑ:mərə] n զինագործ:

**armour-piercing** [ˈɑ:məˈpiəriŋ] a զրահահատ, զրահը ծակող:

**armoury** [ˈɑ:məri] n զինանոց, զինապահեստ. արսենալ. the A~ (Կրեմլում) զինարան, զինապալատ:

**arm-pit** [ˈɑ:mpɪt] n անութ, կռնատակ. be in debts up to the ~s (մինչև կոկորդը) պարտքերի մեջ խրված:

**arm-saw** [ˈɑ:msɔ:] n ձեռքի սղոց:

**army** [ˈɑ:mi] n բանակ. standing ~ մշտական բանակ. be in the ~ բանակում ծառայել. the ~ in the Field գործող բանակ. go into/join the ~ զինվորական ծառայության մտնել. փխբ. (մեծ քանակություն) ~ of tourists զբոսաշրջիկների մեծ բազմություն. (բանակի, բանակային) ~ agent բանակի մատակարար. ~ headquarters բանակի շտաբ. ~ corps բանակի կորպուս. an ~ doctor զինվորական բժիշկ:

**army-beef** [ˈɑ:mɪbi:f] n մսի պահածո (բանակի համար):

**aroma** [əˈrəʊmə] n ամուշահոտություն, բուրմունք ~ therapy բուրումնաբուժում, բուժում ամուշահոտությունների միջոցով:

**aromatic** [ˌæɪrəˈmætɪk] a ամուշահոտ, ամուշաբույր:

**around** [əˈraʊnd] 1. adv շուրջը. all ~ ամենուրեք. ~ here ոչ հեռու. somewhere ~ մոտերքում. be ~ մոտերքում լինել. 2. prep շուրջը trees ~ the house ծառեր տան շուրջը. ~ the

corner անկյան ետևում. walk ~ the town զբոսնել քաղաքում. ~ a thousand մոտ մեկ հազար. ~ seventy մոտ յոթանասուն. turn ~ շրջվել, շրջադարձ կատարել:

**arouse** [ə'rauz] v արթնացնել. *փխբ.* ուժեր/ընդունակություններ արթնացնել. (առաջ բերել, առաջացնել) ~ interest/suspicion հետաքրքրություն/կասկած առաջացնել. ~ maternal instincts արթնացնել մայրական բնազդները:

**arrange** [ə'reindʒ] v կարգավորել, դասակարգել. ~ one's affairs գործերը կարգավորել. ~ books գրքերը դասավորել. ~ quarrels վեճերը հարթել. ~ flowers ծաղկեփունջ կազմել. (կազմակերպել) ~ a concert/a party/a meeting համերգ/երեկո/հանդիպում կազմակերպել. (այայմանավորվել, համաձայնվել). it was ~d այայմանավորվեցինք Everything is ~d Ամեն ինչ կարգին/պատրաստ է We ~d to meet at six o'clock Պայմանավորվեցինք հանդիպել ժամի վեցին. *երժշ.* (մշակել, հարմարեցնել) ~ for two pianos/the violin մշակել/հարմարեցնել երկու դաշնամուրի/ջութակի համար:

**arrangement** [ə'reindʒmənt] n կարգավորում, դասավորում, համակարգում. the ~ of the furniture կահույքի դասավորումը/կարգի բերելը. a flower ~ ծաղիկների կոմպոզիցիա. ~ by subject թեմատիկ դասակարգում/դասավորում. (համաձայնություն, այայմանագիր) salary by ~ աշխատավարձ ըստ այայմանագրի. make ~s այայմանավորվել, նախապատրաստել. come to an ~ համաձայնության գալ. make one's own ~s ինքնիրեն/ինքզինքը կարգավորել ամեն ինչ. ~ of a claim բողոքի/ պահանջի կարգավորում. *երժշ.* (փոխադրում, մշակում) an ~ for the piano փոխադրում/հարմարեցում դաշնամուրի համար:

**array** [ə'rei] n *nqđ.* մարտական կարգ (*նաև* battle ~). զորք. զանգված. վերակարգ. *իրավ.* երդվյալ առեմակալների ցուցակ. *էլ.* անտենայի ճաղ:

**arrears** [ə'riəz] n (h)ետամնացություն. մնացորդ. ~s պարտք, ապառք:

**arrears** [ə'riəz] n պարտք, չվճարված հաշիվներ collect ~ of rent բնակավարձի պարտքը (բռնա)զանձել. (հետ մնալը) ~ of work անավարտ աշխատանք be in ~ պարտք

ունենալ. հետ մնալ. be in ~ with one's correspondence չհասցնել նամակներին պատասխանել:

**arrest** [ə'rest] n ձերբակալում, կալանավորում, կալանք. be/place/put under ~ ձերբակալել. under ~ ձերբակալված. ~ to the room տնային կալանք. ~ in quarters զորանոցային կալանք:

**arrest** [ə'rest] v ձերբակալել, կալանել. ~ for murder ձերբակալել սպանության համար. բևեռել (ուշադրությունը) ~ the child's attention գրավել երեխայի ուշադրությունը. (կանգնեցնել) ~ the growth աճը կանգնեցնել. (խափանել) ~ of judgement դատավճռի հետաձգում:

**arrestor** [ə'restə] n *տեխ.* արգելակ. *էլ.* պարպիչ. lightning ~ շանթարգել:

**arresting** [ə'restɪŋ] a արգելակող. գրավիչ, զարմացնող. ~ device արգելակող հարմարանք. ~ speech գրավիչ/իրապուրիչ ելույթ/ճառ:

**arrival** [ə'raɪv] n ժամանում, գալուստ. time of ~ ժամանման ժամը. waiting for the ~ of the news սպասել լուրի գալուն. the new ~s նոր ժամանածները. on ~ of the train գնացքի գալուն պես. the ~ *խսկց.* կտկ. նորածինը. (հասնելը, հանգելը) ~ at a decision որոշման գալը/հանգելը/ընդունումը:

**arrive** [ə'raɪv] v գալ, ժամանել, տեղ հասնել. The delegation ~d yesterday Պատվիրակությունը երեկ ժամանեց. վրա հասնել (ժամանակի/դեպքի մասին). At last the day ~d վերջապես եկավ օրը. Summer has ~d Ամառը եկավ. ~ at a decision/conclusion որոշման/եզրակացության գալ/հանգել ~ at an idea մտքի հանգել/գալ ~ at a fortune ժառանգություն/հարստություն ստանալ, հաջողության հասնել:

**arrogance** [ˈærəgəns] n գոռոզություն, ամբարտավանություն:

**arrogant** [ˈærəgənt] a գոռոզ, ամբարտավան. ինքնահավան:

**arrogate** [ˈærəgeɪt] v հանդգնաբար/անհիմն կերպով պահանջել. մեկին որևէ բան անհիմն վերագրել:

**arrogation** [ˌærəˈgeɪʃn] n սնապարծություն, մեծամտություն:

**arrow** [ˈærəʊ] n նետ. սլաք (գծագրերի վրա և այլն). an ~ left in one's quiver պահեստի/



չօգտագործված հնարավորություն:  
**arrow-head** [ˈæɹəʊhed] n նետի սուր ծայր.  
*նզմ.* սեպածև շարք:  
**arrowy** [ˈæɹəʊi] a սեպանման/սրածայր.  
*փխբ.* կծու, խայթիչ:  
**arsenal** [ˈɑːsnəl] n զինանոց, արսենալ:  
**arsenic** [ˈɑːsnɪk] a մկնդեղ:  
**arsenical** [ɑːˈsnɪkəl] a մկնդեղային:  
**arson** [ˈɑːsn] n *իրավ.* (միտումնավոր) հրդեհում/հրկիզում:  
**art** [ɑːt] n արվեստ, արհեստ. *fine* ~s գեղարվեստ. *applied* ~ կիրառական արվեստ. *folk* ~ ժողովրդական արվեստ. *a work of ~* գեղարվեստական ստեղծագործություն. ~s and crafts գեղարվեստական արհեստներ. *the ~s* հումանիտար գիտություններ. *black ~* սև մոգություն/կախարդանք. *visual ~s* դեկորատիվ և պլաստիկ/տարածական արվեստներ. *manly ~* բռնցքամարտ. *be/have ~* and part in որևէ բանի մասնակից լինել. *A ~* is long, *life is short* կրվեստը հավիտյան է, կյանքը՝ կարճ. ~ *critic* արվեստագետ. ~ *gallery* պատկերասրահ, գեղարվեստի սրահ. ~ *school* գեղարվեստի ուսումնարան:  
**arterial** [ɑːˈtɪəriəl] a *բժշկ.* զարկերակային. ~ *blood/pressure* զարկերակային արյուն/ճնշում. (հիմնական, գլխավոր) ~ *roads* գլխավոր ճանապարհներ. ~ *railway* գլխավոր երկաթուղի:  
**arteriosclerosis** [ɑːˈtɪəriəʊskliəˈrəʊsɪs] n *բժշկ.* զարկերակների կարծրացում:  
**arter/y** [ˈɑːtəri] n *բժշկ.* զարկերակ, արտերիա. ~ *ies* of traffic երթևեկության ուղիներ ~ *ies* of commerce առևտրի հիմնական ուղիներ:  
**artful** [ˈɑːtfl] a խորամանկ, ճարպիկ:  
**benefit** ['benifit] n օգուտ, շահ. for one's ~ մեկի համար/օգտին. be of much ~ օգտակար լինել. not to be of much ~ առանձնապես օգտակար չլինել. mutual ~ փոխադարձ շահ. (նպաստ, կենսաթոշակ) ~ in cash նպաստ դրամով. unemployment ~ գործազուրկների նպաստ. maternity/sickness ~ մայրության/հիվանդության նպաստ. old-age ~ ծերության նպաստ. have the ~ of առավելություն ունենալը. a ~ performance (*նակ` ~ night*) բենեֆիս. give smn a ~ of the doubt առայժմ չդատել (որևէ մեկին):

**benefit** ['benifit] v օգուտ քաղել, շահ ստանալ. ~ from the sea air ծովի օդից օգուտ ստանալ:

**benevolence** [bə'nevələns] n բարեգործություն, առատածեռություն. բարյացակամություն, բարություն:

**benevolent** [bə'nevələnt] a բարյացակամ, բարեսիրտ. առատածեռ:

**benign** [bə'nain] a բարի, մեղմ. առողջարար. ~ air/climate առողջ օդ/կլիմա. *բժշկ.* բարորակ (ուռուցք և այլն):

**bent** [bent] n հակում, ձգտում. have a ~ for smth որևէ բանի ունակություններ ունենալ. follow one's ~ հետևել իր հակումներին. to the top of one's ~ ուզածի չափ:

**bent** [bent] a թեքված, հակված. be ~ with age տարիքից կորանալ. with eyes ~ on the ground աչքերը գետնին հառած (անհարմարությունից). He is ~ on becoming a doctor Նա մտադիր է բժիշկ դառնալ:

**benumb** [bi'nʌm] 1. v ընդարմացնել, թմրեցնել. 2. a ~ed ցրտից փայտացած. թմրած:

**benzyl** ['benzil] n *քիմ.* բենզիլ:

**bequeath** [bi'kwɪ:ð] v կտակել, ավանդ թողնել (շարժական գույք):

**bequest** [bi'kwest] n ժառանգություն. He left ~ of money to his grandchildren Որպես ժառանգություն նա փող թողեց իր թոռներին:

**berate** [bi'reit] v *ամ.* հանդիմանել, կշտամբել:

**bereave** [bi'rei:v] v զրկել:

**bereaved** [bi'rei:vɪd] a հարազատներից զրկված, որբացած. the ~ wife այրի. He is recently ~ Նա վերջերս կորցրեց իր կնոջը:

**bereavement** [bi'rei:vment] n ծանր կորուստ:

**berry** ['berɪ] 1. n հատապտուղ. խավիարի փոքրիկ հատիկ. 2. v հատապտուղ տալ/հավաքել:

**berth** [bɜ:θ] n քնելու տեղ վազոնում upper/lower ~ վերևի/ներքևի քնատեղ կախովի անկողին նավում. նավախցիկ. մնջախցիկ. խարսխակայան. (պաշտոն) a good ~ շահավետ պաշտոն. a smug ~ տաքուկ տեղ. give a wide ~ խոլյս տալ, հեռու մնալ:

**beryl** ['berəl] n *հնք.* բերիլ:

**besech** [bi'si:tʃ] v աղաչել, խնդրել. a ~ing աղաչական. ~ look/tone աղաչական հայացք/տոն, ձայն:

**beset** [bi'set] v շրջապատել, պաշարել. ~ with questions հարցերով նեղել/տարափ տեղալ. be ~ by doubts կասկածներով պաշարված լինել. a policy ~ with difficulties բարդություններով հղի քաղաքականություն:

**beside** [bi'said] prep կողքին, մոտ. He stood ~ me Նա կանգնած էր իմ կողքին. The house was ~ the sea Տունը գտնվում էր ծովի մոտ. The road runs ~ the river ճանապարհն անցնում է գետի կողքով. (դուրս) That's ~ the

point Դա հարցին չի վերաբերում/հարցից դուրս է. ~ the question հարցից դուրս, ոչ ըստ էության. ~ oneself սաստիկ հուզված, իրեն կորցրած. She seems dull ~ her sister Իր քրոջ կողքին նա բավական գորշ/անհետաքրքիր է թվում:

**besides** [bi'saidz] 1. adv բացի դրանից/այդ.

2. prep. բացի. ~ Nick բացի Նիքից/չհաշված Նիքին. ~ I was very tired Բացի այդ ես շատ հոգնած էի. Didn't she say anything ~ that? Դրանից բացի նա ուրիշ ոչինչ չասա՞ց:

**besiege** [bi'si:dʒ] v պաշարել, շրջապատել.

Troy was ~d by the Greeks Տրոյան պաշարված էր հույների կողմից. (մեղել) The teacher was ~d with questions Դասատուին հարցերով մեղեցին:

**besieger** [bi'si:dʒə] n պաշարող կողմը:

**beslaver** [bi'slævə] v թքոտել. փախքոտել.

*փխք. շողոքորթել:*

**besmear** [bi'smiə] v կեղտոտել, աղտոտել:

**besom** ['bi:zəm] n ցախավել, ավել:

**bespangle** [bi'spæŋgl] v փայլազարդել, գեղազարդել. the ~d sky աստղալից երկինքը:

**bespatter** [bi'spætə] v ցեխոտել. *փխք. արատավորել:*

**bespeak** [bi'spi:k] v նախօրոք պայմանավորվել/պատվիրել, ապահովել. ~ a table in a restaurant ռեստորանում սեղան պատվիրել.

~ a room in a hotel համար պատվիրել հյուրանոցում. All the rooms are already bespoken Բոլոր համարներն արդեն զբաղեցված են.

His polite manners ~ him a gentleman Նրա քաղաքավարի շարժումները վկայում է, որ նա ջենտլմեն է/կիրթ մարդ է:

**bespectacled** [bi'spektəklɪd] a ակնոցավոր:

**besprinkle** [bi'sprɪŋkl] v ցողել, շաղ տալ, սրսկել:

**best** [best] a, adv ամենալավ, լավագույն. the ~ of the children երեխաներից լավագույնը. the ~ of the day օրվա լավագույն մասը/արևոտ մասը. The ~ of it is ... Դրա լավագույնն այն է... the ~ you can do ամենաշատը, որ դուք կարող եք անել. put one's Sunday the ~ հազմել տոնական զգեստ. all the ~ ամենայն բարիք. at ~ լավագույն դեպքում. It's all for the ~ Ամեն ինչ լավ կլինի. to the ~ of my knowledge ինչքան ինձ հայտնի է. (մեծագույն, ամենամեծ) the ~ part of մեծագույն մասը. ~ liar հայտնի/անուղղելի

ստախոս. ~ thrashing սաստիկ/ուժեղ ծեծ.

You had ~ confess Ձեզ համար լավագույն ելքը խոստովանելն է. (ամենից շատ) the ~

hated man ամենատելի մարդը. be at one's ~ լավագույն վիճակում/տրամադրության

մեջ. make the ~ of things չընկճվել. լավագույն ձևով օգտագործել. do smth for the ~

լավ նպատակով անել. do one's ~ ձեռքից եկածը անել, ջանք չխնայել. have the ~ of it

հաղթել. have the ~ of everything ունենալ ամենալավը. make the ~ of one's way շտապել. to the ~ of one's power ուժը ներածին

չափ. the ~ part of the time ժամանակի մեծ մասը. for the ~ part of an hour համարյա մի

ամբողջ ժամ. with the ~ will in the world ինչքան էլ ցանկանաս/ուզենաս. make the ~ use

լավագույն ձևով օգտագործել. Which do you like ~? Ո՞րն եք ամենից շատ հավանում.

You know ~ Դուք ամենից լավ գիտեք. Do as you think ~ Արա ինչպես գիտես. ~ of all ամենալավը. get the ~ of the bargain առավելություն ունենալ. It will be ~ Ավելի լավ կլինի.

~ of all ամենից շատ:

**bestead** [bi'sted] v օգնել, ծառայել, օգտակար լինել:

**bestial** ['bestiəl] a անասնական, կոպիտ, վայրենի:

**bestir** [bi'stə:] v ջանալ, ջանք գործադրել: B~ yourself! Շարժվիր:

**bestow** [bi'stəʊ] v պարգևել, շնորհել:

**bestowal** [bi'stəʊəl] n շնորհ, պարգև:

**bestrew** [bi'stru:] v ցանել, շաղ տալ:

**bestride** [bi'straɪd] v հեծնել, հեծած նստել:

**best seller** [ˌbest'selə] n գնալուն գիրք. գնալուն գրքի հեղինակ:

**bestselling** [ˌbest'selɪŋ] a մեծ պահանջարկ ունեցող:

**bet** [bet] n գրագ, խաղազումար. make a ~ գրագ գալ. lose/win the ~ գրագը տանուլ տալ/շահել. by a ~ that գրագով, որ. This horse is a good ~ Այս ձին հաստատ կշահի:

**bet** [bet] v գրագ գալ, վիճել. ~ anything ամեն ինչով գրագ գալ. I never ~ ես երբեք որևէ բանի վրա գրագ չեմ գալիս. I don't ~ Փողով գրագ չեմ գալիս. I'll ~ Գրագ կգամ. You ~!

*խսկց. Ի հարկե:*

**betake** [bi'teɪk] v դիմել (ինչ-որ բանի). ~ oneself to գնալ, ուղևորվել. ~ oneself to one's heels փախուստի դիմել:

**bethink** [bi'θiŋk] v խորհել, մտորել. ~ oneself հիշել, մտաբերել:

**betoken** [bi'təʊkən] v մախազուշակել, կանխազուշակել:

**betray** [bi'trei] v մատնել, դավաճանել. ~ one's principles սկզբունքներին դավաճանել. ~ a secret գաղտնիքը հայտնել. His eyes ~ed him Աչքերը նրան դավաճանում/մատնում էին. ~ oneself իրեն մատնել:

**betrayal** [bi'treiəl] n մատնություն, դավաճանություն:

**betrayed** [bi'treiəd] n մատնիչ, դավաճան:

**betroth** [bi'trəʊð] v նշանել:

**betrothal** [bi'trəðl] n նշանդրեք, նշանադրություն:

**betrothed** [bi'trəʊðd] a նշանված:

**better** ['betə] a ավելի լավ, ավելին. ~ method/way/life ավելի լավ մեթոդ/ճանապարհ/կյանք. be/get ~ ավելի լավ զգալ. (so) much ~ շատ ավելի լավ. none the ~ բոլորովին էլ լավ չէ. grow/get ~ լավանալ. feel much ~ շատ ավելի լավ զգալ. be ~ than one's word խոստացածից ավելին անել. no ~ than a fool կատարյալ հիմար. ~ off ավելի հարուստ. for ~ for worse ինչ էլ որ լինի. the quicker the ~ ինչքան արագ այնքան լավ. get the ~ of one's shyness ամաչկոտությունը հաղթահարել. My curiosity got the ~ of me Յետաքրքրասիրությունը ինձ պատեց/հաղթեց. get the ~ of the quarrels հաղթել վեճերում. think all the ~ of a person մարդու մասին ավելի լավ կարծիք կազմել/կարծիքի լինել:

**better** ['betə] n ղեկավար անձինք, պետեր. get the ~ of հաղթել:

**better** ['betə] adv ավելի լավ. it would be ~ ավելի լավ կլիներ. no ~ than ավելի լավը չէ. He is no ~ than a thief Նա գողից լավ չէ. think ~ of smth միտքը փոխել. I know ~ ինձ չես խաբի. կտկ. one's ~ half կինը, ամուսինը:

**better** ['betə] v լավացնել. ~ oneself ավելի բարձր պաշտոն/աշխատավարձ ստանալ:

**betterment** ['betəmənt] n ուղղում, ճշտում կատարելագործում. social ~ սոցիալական բարելավում:

**betting** ['betɪŋ] n գրազ:

**between** [bi'twi:n] prep, adv միջև. in ~ միջև. ~ the door and the window դռան և պատուհանի միջև. ~ two and three months երկուսից երեք ամիս, երկու-երեք ամսվա ընթացքում.

~ ourselves մեր մեջ, զաղտնիաբար. ~ hay and grass ոչ այս է, ոչ այն. ~ the devil and the deep sea երկու կրակի արանքում. ~ this and that ազատ ժամանակ. far and few ~ շատ հազվադեպ. ~ one thing and another գործերով ծանրաբեռնված. They bought the car ~ the four of them Նրանք չորսով գնեցին մեքենան. betwixt and ~ ոչ այս, ոչ էլ այն:

**beverage** ['bevərɪdʒ] n ըմպելիք, խմիչք:

**bevy** ['bevi] n երամ, հոտ. ընկերություն, հասարակություն (*հսկա*. կանանց):

**bewail** [bi'weɪl] v ողբալ, սգալ:

**beware** [bi'weə] v զգուշանալ. B~ of dogs! Զգուշացե՛ք շներից. ~ of strangers/pick-pockets զգուշանալ անճանոթներից/զրպանահատներից. B~ when crossing the road Զգուշացե՛ք փողոցն անցնելիս:

**bewilder** [bi'wildə] v շփոթեցնել, շվարեցնել. She was ~ed by the big city Մեծ քաղաքը նրան շվարեցրեց:

**bewilderment** [bi'wildəmənt] n շփոթություն, շփոթում:

**bewitch** [bi'witʃ] v կախարդել, հմայել, դյութել:

**bewitching** [bi'witʃɪŋ] a կախարդիչ. ~ smile/child կախարդիչ ժպիտ, հրաշալի երեխա:

**beyond** [bi'jɒnd] prep այն կողմ, անդին. ~ the seas ծովերից անդին. Don't go ~ the yard Բակից շատ մի հեռանա. (վեր) ~ doubt/control կասկածից/հսկողությունից վեր. ~ reasonable doubt խելամիտ կասկածից դուրս. ~ me իմ հասկացությունից վեր. (ուշ) ~ the appointed hour նշանակված ժամից ուշ. Don't stay out ~ ten Ժ. 10-ից ուշ դրսում չմնա. ~ my powers իմ ուժերից վեր. live ~ one's means շռայլ ապրել (միջոցներից ավելի). ~ reach անհասանելի. ~ belief անհնարին. ~ hope անհույս. ~ measure չափից ավելի. It is ~ repair Անհնարին է դա վերանորոգել. (բացի) ~ her pension թոշակից բացի. I have no reasons ~ those Բացի դրանցից ես ուրիշ պատճառներ չունեմ. (հեռվում) B~ could be seen the lake Յետվում կարելի էր տեսնել լիճը:

**beyond** [bi'jɒnd] n the ~ հանդերձյալ կյանք. the back of ~ աշխարհի ծայրը:

**bias** ['baɪəs] n շեղություն, թեքություն, շեղում. cut on the ~ շեղ գծով կտրել/ձևել. have ~ against կանխակալ կարծիք մեկի նկատ-

մամբ/օգտին. ~ in favour հակված լինել. gender ~ սեռային կողմնակալություն. without ~ անկանխակալ:

**bias** [ˈbaɪəs] v շեղել, համոզել, նախատրամադրել. a ~ed opinion կանխակալ կարծիք:

**bib** [bɪb] v *խսկց.* կոնծել. խմելու հակում ունենալ:

**bib** [bɪb] n մանկական կրծկալ:

**bibber** [ˈbɪbə] n *խսկց.* հարբեցող, խմող:

**Bible** [ˈbaɪbl] n Աստվածաշունչ. *փխբ.* մշտապես օգտագործվող/սեղանի գիրք:

**biblical** [ˈbɪblikl] a բիբլիական:

**bibliography** [ˌbɪbliˈɒɡrəfi] n մատենագրություն:

**bibliophile** [ˈbɪbliəfaɪl] n գրքասեր, մատենասեր:

**bicameral** [baɪˈkæmərəl] a *քղք.* երկպալատ, երկպալատային:

**bicarbonate** [baɪˈka:bənət] a *քիմ.* երկածխաթթվային:

**bicentenary** [ˌbaɪsənˈti:nəri] n, a երկհարյուրամյակ, երկհարյուրամյա:

**bicentennial** [ˌbaɪsənˈtenɪəl] a երկհարյուրամյա, յուրաքանչյուր 200 տարին մեկ կրկնվող:

**biceps** [ˈbaɪsɛps] n *կզմխ.* երկգլուխ մկան, բիցեպս:

**bicker** [ˈbɪkə] 1. n կռիվ, վեճ. 2. v կռվել, վիճել. They are always ~ing Նրանք անընդհատ կռվում են:

**biconcave** [baɪˈkɒŋkeɪv] a երկգոգավոր:

**biconvex** [baɪˈkɒnveks] a երկուռուցիկ:

**bicycle** [ˈbaɪsɪkl] 1. n հեծանիվ. ride a ~ հեծանիվով գնալ. go/come by ~ հեծանիվով գնալ/գալ. 2. v հեծանիվ քշել/նստել:

**bicyclist** [ˈbaɪsɪklist] n հեծանավոր:

**bid** [bɪd] 1. v հրամայել. գին առաջարկել. Do as you are bid (den) Արեք ինչպես հրամայված է. ~ fair խոստումներ տալ. final ~ վերջնական գին. (հայտարկ անել) ~ for contract պայմանագրի հայտ առաջարկել. ~ farewell/good-bye հրաժեշտ տալ. ~ welcome ողջունել. ~ against /up գինն ավելացնել. *քղքխ.* Whose ~ ? Ո՞վ է հայտարարում. ~ two clubs երկու խաչ հայտարարել. 2. n առաջարկ, հայտ. գնի առաջարկ. սակարկվող գին. ~ sheet գնացուցակ. sham ~ կեղծ հայտ:

**bidder** [ˈbɪdə] n գնորդ (առևտրական գործարքներում):

**bidding** [ˈbɪdɪŋ] n գնի առաջարկ. հրաման. open ~ բաց սակարկ:

**biennial** [baɪˈeniəl] n երկամյակ. *քսք.* երկամյա բույս:

**bier** [bɪə] n դիակառք, դագաղ:

**biff** [bɪf] 1. n *խսկց.* ուժեղ հարված. 2. v հարվածել, խփել:

**bifocal** [ˌbaɪˈfəʊkl] 1. a երկֆոկուսային. 2. n երկֆոկուսային ակնոց:

**bifurcate** [ˌbaɪˈfʊ:kəɪt] 1. a երկճյուղ, երկատված: 2. v [ˈbaɪfʊ:kəɪt] երկատել, երկճյուղավորվել:

**big** [bɪɡ] 1. a մեծ, խոշոր. This dress /coat is too ~ for me Այս հագուստը/վերարկուն շատ մեծ է ինձ համար. ~ բիզնես խոշոր կապիտալ/բիզնես. (կարևոր, նշանակալից) ~ person/question կարևոր անձ/հարց look ~ ուռած/փքված տեսք ունենալ. in a ~ way թափով. անխնա փող ծախսելով. (չափահաս, հասունացած) He is already a ~ boy Նա արդեն չափահաս տղա է. ~ money փողային մագնատներ, օլիգարխ. ~ head ինքնահավանություն. ~ brass բարձրաստիճան զինվորական. ~ bug երևելի մարդ. (*նակժաղր.*) too ~ for one's boots ինքնավստահ. ~ mouth մեծ բերան, մեծախոս. ~ news կարևոր լուր. That's ~ of you Դուք շատ մեծահոգի եք. ~ repair կապիտալ վերանորոգում. *խսկց.* ~ time հաջողություն. ~ top կրկեսի գմբեթ. ~ tree *քսք.* սեկվոյա. 2. adv talk ~ պարծենալ, մեծ-մեծ խոսել. think ~ լայնախոսի մտածել:

**bigamy** [ˈbɪɡəmi] n երկամուսնություն:

**Big Ben** [ˌbɪɡˈben] n անգլիական պառլամենտի շենքի վրայի ժամացույցը:

**bight** [baɪt] n ծոց, խորշ. գետի ոլորան:

**bigot** [ˈbɪɡət] n մոլեռանդ, մոլի կողմնակից. a ~ed ֆանատիկոս:

**bigwig** [ˈbɪɡwɪɡ] n *խսկց.* ազդեցիկ մարդ:

**bijou** [ˈbi:zɜ:] n մանր զարդեղեն, գոհար:

**bike** [baɪk] (*խսկց.* bicycle-ից) հեծանիվ:

**bikini** [bɪˈki:ni] n բիկինի (կանացի լողազգեստ):

**bilabial** [baɪˈleɪbiəl] a *հնչ.* երկշրթնային:

**bilateral** [baɪˈlætrəl] a երկկողմնային, երկկողմ. ~ contract երկկողմանի պայմանագիր:

**bilberry** [ˈbɪlbəri] n հավամրգի. red ~ հապալաս:

**bile** [baɪl] n լեղի, մաղձ. *փխբ.* մաղձոտու-



թյուն, գրգռվածություն:  
**bilge** [ˈbɪldʒ] n (նավի) հատակ, տակ. ~ water նավամբարում հավաքված ջուր:  
**biliary** [ˈbɪljəri] a մաղձի, լեղու. *փխբ.* մաղձոտ:  
**bilingual** [baɪˈlɪŋɡwəl] a *լեզվ.* երկլեզու:  
**billious** [ˈbɪlɪəs] a լեղաթափությանը տառապող. մաղձային. *feel* ~ սրտխառնուք զգալ/ուներնալ. *have a ~ attack* սրտխառնոց ուներնալ:  
**bilk** [bɪlk] v խաբել. պարտքեր վճարելուց խուսափել:  
**bilker** [ˈbɪlkə] n սրիկա, խաբեբա, խարդախ մարդ.  
**bill** I [bɪl] n կտուց. նեղ հրվանդան:  
**bill** II [bɪl] n օրինագիծ, բիլ. ~ before the parliament քննարկվող օրինագիծ. first reading of a ~ օրինագծի առաջին ընթերցում. preamble of a ~ օրինագծի նախաբան. introduce /bring in a ~ օրինագիծը մտցնել. pass the ~ օրինագիծն ընդունել. throw out the ~ օրինագիծը մերժել. (հայց) find a true ~ գործը դատարան տալ. ignore the ~ գործը կարճել:  
**bill** III [bɪl] n հաշիվ. telephone/hotel ~ հեռախոսի/հյուրանոցի հաշիվ. make out a ~ հաշիվ դուրս գրել. pay/foot the ~ հաշիվը փակել/վճարել. put down on the ~ հաշվի մեջ մտցնել. *ամ.* բանկնոտ, թղթադրամ. a ten dollar ~ 10 դոլար թղթադրամ. (մուրհակ) մակ ~ of exchange. bank ~ բանկային մուրհակ. ~ of lading/parcels բեռնագիր/ապրանքագիր. ~ of credit հաշվարկագիր. (ազդ, հայտարարություն) Adamyan was ~ed to appear in Hamlet Հայտարարվեց, որ Համլետի դերը կկատարի Ադամյանը. That will fill the ~ Դա հարմար կգա/կլինի. ~ of fare ճաշացուցակ. ~ of health առողջության վկայական. ~ of sale վաճառագիր B~ of Rights ԱՄՆ իրավունքների հայտարարագիր. fill the ~ *փխբ.* պահանջները բավարարել:  
**bill** [bɪl] v կտուց կտուցի տալ, իրար փաղաքել, զգվել. *նակ.* ~ and coo:  
**billboard** [ˈbɪlbɔːd] n հայտարարությունների տախտակ:  
**billet** [ˈbɪlɪt] n վառելափայտի կտոր, կոճղ. *տեխ.* մետաղյա ձող, ձուլակոճղ:  
**billet-doux** [ˌbɪleɪˈduː] n *կտկ.* սիրատոմս:  
**billiard** [ˈbɪljəd] a բիլիարդի. ~ cue բիլիարդի ձող. ~ room բիլիարդի սենյակ:

**billiard-marker** [ˈbɪljəd,maːkə] n բիլիարդի սպասարկու, մարկեր:  
**billiards** [ˈbɪljədz] n pl բիլիարդ:  
**billion** [ˈbɪljən] n, num բիլիոն. *ամ.* միլիարդ:  
**billow** [ˈbɪləʊ] 1. n կոհակ, բարձր ալիք. *բնաս.* ծով. *փխբ.* մեծ քանակություն. 2. v ալեկոծվել, վեր բարձրանալ:  
**billowy** [ˈbɪləʊi] a ալեկոծ (ծով). ալիքանման, անհարթ (վայր):  
**bill-poster** [ˈbɪl,pəʊstə] n հայտարարություններ փակցնող:  
**bill-sticker** [ˈbɪl,stɪkə] n հայտարարություններ փակցնող:  
**billy-goat** [ˈbɪlɪɡəʊt] n արու այծ:  
**bi-monthly** [ˌbaɪˈmʌnθli] 1. a երկու ամիսը մեկ լույս տեսնող. 2. adv երկու ամիսը մեկ անգամ:  
**bin** [bɪn] n ամբար, սնդուկ. rubbish/litter ~ աղբաման. dust ~ աղբարկղ:  
**binary** [ˈbaɪnəri] a երկու մասից բաղկացած. երկակի, կրկնակի. *հմկրգ.* ~ coded երկուական կոդավորված. ~ digit/numeral երկուական թվանշան:  
**bind** [baɪnd] n *խսկգ.* բեռ, ծանր հոգս. an awful ~ ահավոր բեռ. what a ~ ինչ ծանր հոգս/բեռ:  
**bind** [baɪnd] v կապել. ~ smb hand and foot ձեռքն ու ոտքը կապել. *փխբ.* ձեռը-ոտքը կապել. (միացնել) ~ two parcels together երկու կապոց միացնել. (ամրացնել) ~ firm/tightly ամուր ամրացնել. կազմել (գիրքը) have the books bound գրքերը կազմել տալ. (պնդանալ, կարծրանալ) Clay ~s when heated Տաքացնելիս կավը կարծրանում է. (պարտավորեցնել) ~ oneself պարտավորվել. be bound ստիպված լինել. ~ up վերքը կապել. ~ a person to secrecy գաղտնապահության պարտավորեցնել. ~ smb appear in court պարտավորեցնել դատարան ներկայանալ. *հմկրգ.* ~ of names անունների կապելը:  
**binder** [ˈbaɪndə] n կազմարար:  
**bindery** [ˈbaɪndəri] n կազմատուն:  
**binding** [ˈbaɪndɪŋ] 1. n գրքի կազմ. կապ. վիրակապ. ~ of names *հմկրգ.* անունների կապելը. on ~ պարտադիր. 2. a կապող, պարտավորեցնող. a ~ promise պարտավորեցնող/կապող խոստում. ~ fee պարտադիր վճար:

**bindweed** [ˈbaɪndwi:d] *n* *բւք*. պատատուկ:  
**bine** [baɪn] *n* ընձյուղ, շիվ:  
**binge** [bɪndʒ] *n* *խսկց*. խրախճանք, կերուխում. go on a ~ կերուխում անել:  
**bingo** [ˈbɪŋɡəʊ] *n* *ամ*. լոտո:  
**binocular** [bɪˈnɒkjʊ:lə] *n, a* երկդիտակ, քինոկուլյար. ~s հեռադիտակ:  
**binomial** [baɪˈnəʊmiəl] *n* *մաթ*. երկանդամ, քինոմ:  
**biochemistry** [ˌbaɪəʊˈkɛmɪstri] *n* կենսաքիմիա:  
**biodiversity** [ˌbaɪəʊdaɪˈvɜ:sɪti] *n* կենսաբանական բազմակերպություն. landscape ~ լանդշաֆտի կենսաբանական բազմակերպություն. preservation of ~ կենսաբանական բազմակերպության պահպանություն:  
**biographer** [baɪˈɒɡrəfɪ] *n* կենսագիր:  
**biographic(al)** [ˌbaɪəˈɡræfɪk(əl)] *a* կենսագրական:  
**biography** [baɪˈɒɡrəfi] *n* կենսագրություն:  
**biologic(al)** [ˌbaɪəˈlɒdʒɪk(əl)] *a* կենսաբանական:  
**biophysics** [ˌbaɪəʊˈfɪzɪks] *n* կենսաֆիզիկա:  
**bipartite** [baɪˈpɑ:tɑɪt] *a* երկկողմ:  
**biped** [ˈbaɪpɛd] *a, n* երկոտանի. երկոտանի կենդանի:  
**birch** [bɜ:tʃ] *n* կեչի. ճիպոտ. get the ~ ճիպոտահարվել:  
**birch** [bɜ:tʃ] *a* կեչու:  
**birch** [bɜ:tʃ] *v* ճիպոտով ծեծել:  
**bird** [bɜ:d] *n* թռչուն. flock of ~s թռչունների երամ. ~ of pray/passage գիշատիչ/չվող թռչուն. water ~s ջրային թռչուններ. Kill two ~s with one stone Մի հարվածով երկու թռչուն սպանել. a ~ in the hand կամխիկ քիչը. ~s of a feather մի սանդիկ կտավ. an early ~ վաղ թռչնակ, վաղ արթնացող մարդ. old ~ փորձված/ընկած-ելած մարդ. queer ~ տարօրինակ մարդ. get the ~ սուլոցի արժանանալ, խայտառակվել. strictly for the ~s հիմարների համար:  
**birdcage** [ˈbɜ:dkɛɪdʒ] *n* թռչնավանդակ: bird's-eye a ~ view ընդհանուր հեռապատկեր/տեսարան:  
**birdie** [ˈbɜ:di] *n* թռչնիկ, թռչնակ:  
**birth** [bɜ:θ] *n* ծնունդ. *փխք*. ծագում. սկիզբ, սկզբնաղբյուր. by ~ ծագումով. He is Scottish by ~ Նա ծագումով շոտլանդացի է. The ~ of an idea Գաղափարի ծագում. (ծննդա-

բերություն) give ~ to ծնել, որևէ բանի ծնունդ տալ. still ~ մեռած երեխայի ծնունդ. ~ control ծնելիության/ծնունդների քանակի գրանցում. ~ certificate ծննդական. registration of ~ ծնունդների գրանցում. two at a ~ երկվորյակ. ~ leave նախածննդյան և հետծննդյան արձակուրդ:

**birthday** [ˈbɜ:θdeɪ] *n* ծննդյան օր. Happy ~ Ծնունդը շնորհավոր. ~ present ծննդյան նվեր. ~ cake(s) Ծննդյան օրվա տորթ. ~ party ծննդյան օրվա տոնակատարություն:

**birth-mark** [ˈbɜ:θma:k] *n* խալ, ծննդանշան:

**birth-place** [ˈbɜ:θpleɪs] *n* ծննդավայր:

**birth-rate** [ˈbɜ:θreɪt] *n* ծնելիություն, ծնունդների քանակը:

**biscuit** [ˈbɪskɪt] **1.** *n* բիսկվիտ. տափակ, չոր թխվածք. կրկնաթուրծ ճենապակի. ship's ~ պաքսիմատ. water ~ զալետ. packet of ~s մի տուփ բիսկվիտ. **2.** *a* բաց դարչնագույն:

**bisect** [baɪˈsekt] *v* կիսել, երկու կես անել:

**bisection** [baɪˈseksjən] *n* կիսում, կիսելը:

**bisector** [baɪˈsektə] *n* *մաթ*. կիսորդ, բիսեկտորիսա:

**bisexual** [baɪˈseksjuəl] *a* երկսեռ:

**bishop** [ˈbɪʃəp] *n* եպիսկոպոս. *շխմ*. փիղ:

**bishopric** [ˈbɪʃəprɪk] *n* եպիսկոպոսական աստիճան. թեմ:

**bismuth** [ˈbɪzməθ] *n* *քիմ*. բիսմուտ:

**bison** [ˈbaɪsən] *n* *կենդ*. բիզոն, ամերիկյան վայրի ցուլ:

**bissextile** [bɪˈseksstɑɪl] **1.** *n* նահանջ տարի. **2.** *a* նահանջ տարվա. the ~ day փետրվարի 29:

**bistro** [ˈbi:stɹəʊ] *n* *ֆր*. խորտկարան, բիստրո:

**bit** **I** [bɪt] *n* կտոր, փոքր մաս, փշուր. a ~ մի փոքր/քիչ. a ~ tired մի փոքր/քիչ հոգնած. a ~ later/louder միփոքր ավելի ուշ/քիչ ավելի բարձր. wait a ~ մի փոքր սպասեք. a good ~ շատ ավելի, բավականաչափ, նշանակալից չափով. a ~ of a surprise թեթև զարմանք. not a ~ ամենևին. ~ by ~ աստիճանաբար. every ~ of supper ընթրիքի վերջին փշուրը. a ~ of string պարանի կտոր. dainty ~ համեղ պատառ. tear to ~s կտոր-կտոր անել. *փխք*. մեկին շատ բամբասել. a ~ of news նորություն. a ~ of advice խորհուրդ. (մանր դրամ) **3** penny ~ երեք ցենտանոց դրամ. *ամ*. short

~ 10 ցենտանոց դրամ. long ~ 15 ցենտանոց դրամ. two ~s 25 ցենտանոց դրամ. be full of ~s and pieces ինչեր ասես որ չկան. a ~ of a coward մի քիչ վախկոտ. a ~ of a fool. ծալը պակաս. do one's (little) ~ իր լուծան մտցնել, պարտքը կատարել. every ~ as կատարյալ կերպով. give a ~ of one's mind անկեղծ/ շիտակ խոսել. come to ~s փլվել, քանդվել:

**bit** II [bit] n *հմկրգ.* բիթ, երկուական համակարգ. ~ cell մեկկարգանի ռեգիստր. ~ density գրառման խտություն. ~ image երկուական արտապատկերում. ~ off զրո արժեքով բիթ. ~ on մեկ արժեքով բիթ. ~ map կետապատկեր. ~s per second բիթեր վայրկյանում:

**bit** III [bit] n սանձ. սայր, բերան. բանալու բլթակ. draw ~ սանձել (ծիմ). take the ~ between one's teeth սանձը կտրել, հնազանդությունից դուրս գալ:

**bit** [bit] v սանձել, սանձը քաշել. *փխբ.* սանձահարել, զսպել:

**bitch** [bitʃ] n էգ շուն. (կենդանու էգ). ~ wolf էգ գայլ:

**bitchy** [ˈbitʃi] a չար, չարացած. ցինիկ. What a ~ thing to say Ինչ ցինիկություն/ստորություն:

**bite** [bait] n խայթվածք, կծելը. a mosquito/snake ~ մոծակի/օձի խայթվածք. poisonous ~ թունավոր խայթվածք. խայծ (ծկան մասին) have no ~ ոչ մի ծուկ չբռնել. (պատառ, թեթև ուտելիք) have/take a ~ 1. մի պատառ/կտոր կծել/փորձել. 2. թեթևակի ուտել. There is not a ~ in the house Տանը ուտելու ոչինչ չկա:

**bite** [bait] v կծել, խայթել (*նաև՝ փխբ.*) The dog has bitten Շունը կծել է. ~ one's lip շրթունքը կծել. ~ one's nails եղունգները կրծել. ~ one's tongue *փխբ.* լեզուն կծել. ~ off կծելով պոկել/կտրել. (խայծը բռնել) The fish are ~ ing today Այսօր ծուկը բռնվում է. He wouldn't ~ Նա չխաբվեց, խայծը կուլ չտվեց. (քայքայել) Acid ~s into metals Թթուն քայքայում է մետաղները. bitten with *փխբ.* շատ տարված. He is bitten with tennis Նա շատ է տարված թենիսով:

**biter** [ˈbaɪtə] n կծող. կծան ձի. the ~ bit փոս փորողը ինքը մեջն ընկավ:

**biting** [ˈbaɪtɪŋ] a կծու, խայթող. ~ wind ծակող քամի. ~ remark սուր դիտողություն. ~ tongue խայթող լեզու:

**bitter** [ˈbɪtə] n դառնություն. ~s դառը գարեջուր:

**bitter** [ˈbɪtə] a դառը, խայթող. ~ humour խայթող երգիծանք. (սուր, ծակող, դաժան) ~ cold սաստիկ ցուրտ. ~ struggle անողոր պայքար. ~ grief/disappointment ծանր վիշտ, խորը հիասթափություն. fight to the ~ end մինչև վերջ պայքարել. (չար) be very ~ շատ չարացած լինել. ~ enemy ամենաչար թշնամի. ~ experience դառը փորձ. ~ pill դառը հաբ, տհաճ բան:

**bitterly** [ˈbɪtəli] adv դառնորեն speak ~ դառնորեն/դառնացած խոսել. ~ disappointed դառնորեն հիասթափված:

**bitterness** [ˈbɪtənəs] n դառնություն. There is a great ~ between them Նրանց հարաբերություններում շատ դառնություն կա:

**bitumen** [ˈbɪtʃumɪn] n ասֆալտ, բիտում:

**bivouac** [ˈbɪvʊæk] n *ռզմ.* զորակայք, բաց օթևան, բիվակ:

**bizarre** [biˈzɑ:] a տարօրինակ, օտարոտի, արտառոց:

**blab** [blæb] 1. n շատախոս, շաղակրատ. 2. v շատախոսել, շաղակրատել. չարախոսել, մատնել. ~ out the secret գաղտնիքը բերնից բռցնել:

**blabber** [ˈblæbə] n շատախոս, բամբասչի:

**black** [blæk] n սևություն, սև գույն/ներկ. dressed in ~ սևազգեստ. work like ~ մեգրի պես աշխատել. swear ~ is white սևը սպիտակ անվանել:

**black** [blæk] a սև. a ~ and white film սև-սպիտակ ֆիլմ. quite ~ լրիվ սև. inky ~ սաթի մման սև. turn ~ սևանալ. a ~ eye կապտուկ. ~ economy ստվերային տնտեսություն. (մութ, խավար) ~ clouds մութ ամպեր. ~ night խավար գիշեր. ~ winter անձյուն/առանց ձյան ձմեռ. (մռայլ) look ~ մռայլ տեսք ունենալ. Things look ~ Դրությունը անհույս է թվում. ~ despair խորը հուսահատություն. (դժգոհ, չար) ~ looks չար հայացքներ. ~ tidings տխուր լուր. ~ deeds չար գործեր. be in ~ books համակրանք չվայելել (սև ցուցակում գրվել). ~ and white գրված, գրավոր (սևով սպիտակի վրա). ~ frost/ice սառնամանիք առանց ձյան. ~ with age ժամանակից սևացած. ~ ingratitude երախտամոռություն, ապերախտություն. go ~ աչքերը մթնել. ~ and blue կապտած, կապտուկներով ծածկ-

ված. ~ and tan սև-գորշագույն. ~ in the face խիստ զայրացած, կարմրատակած. ~ art/magic մոգություն, կախարհություն:  
**black** [blæk] v սևացնել. ~ shoes կոշիկները վաքսել. ~ in one's eyebrows ունքերը սևացնել. ~ out 1. մթնեցնել. լույսն անջատել. 2. ուշաթափ լինել:  
**blackball** ['blækbɔ:l] n սև քվե:  
**black-beetle** ['blæk,bi:tɪl] n սև ուտիճ:  
**blackberry** ['blækbəri] n *բսբ*. մոշի տեսակ:  
**blackbird** ['blækbɜ:d] n սև կենցեխ:  
**black-board** ['blækbɔ:d] n գրատախտակ:  
**black-cock** ['blækkɒk] n ցախաքլոր:  
**black-earth** [ˌblæk'ɜ:θ] n սևահող:  
**blacken** ['blækən] v սևացնել, սևանալ:  
**blackguard** ['blækgɑ:d] 1. n սրիկա, ստոր մարդ. 2. a ստոր, գարշելի:  
**blacking** ['blækiŋ] n վաքս, կոշիկի ներկ:  
**blacking-out** ['blækiŋ,aut] n մթնեցում, լուսաքողարկում. հիշողության մթագմում:  
**blackish** ['blækiʃ] a սևավուն, սևին տվող:  
**blackjack** ['blækdʒæk] n մահակ.  
**blackjack** ['blækdʒæk] v մահակով ծեծել:  
**black-lead** [ˌblæk'led] n գրաֆիտ:  
**blackleg** ['blækleɡ] n խաբեբա, խարդախ, խարդախություն.  
**blackleg** ['blækleɡ] v խարդախություն անել:  
**black-list** ['blæklɪst] n սև ցուցակ:  
**black-list** ['blæklɪst] v սև ցուցակի մեջ մտցնել:  
**blackmail** ['blækmeɪl] n շանտաժ, շորթում:  
**blackmail** ['blækmeɪl] v շանտաժ անել, շորթել:  
**blackmailer** ['blækmeɪlə] n նենգաշորթիչ, շանտաժիստ:  
**blackness** ['blæknəs] n սևություն, խավար, մթություն:  
**black-out** ['blækaʊt] n լուսաքողարկում:  
**blacksmith** ['blæksmiθ] n դարբին:  
**black-soil** ['blæksɔɪl] n սևահող:  
**blackthorn** ['blækθɔ:n] n մամուխ, մամ-խենի:  
**bladder** ['blædə] n պարկ, փամփուշտ. *կզմխ*. միզափամփուշտ. football ~ ֆուտբոլի կամեր:  
**blade** [bleɪd] n սայր, բերան (դանակի և այլն). ~ of oar/propeller թի, թիաբերան. (խոտի ցողուն, ծիլ) a ~ of grass խոտի ցողուն. the ~ of a saw սղոցի բերան:

**blain** [bleɪn] n թարախաբշտիկ, չիրան:  
**blame** [bleɪm] n մեղադրանք, կշտամբանք, հանցանք. take the ~ մեղքը իր վրա վերցնել. put/lay the ~ on smb մեղքը մեկի վրա բարդել. bear the ~ պատասխանատվությունը կրել:  
**blame** [bleɪm] v մեղադրել, կշտամբել. I am not to ~ ես մեղավոր չեմ. Who is to ~ ? Ո՞վ է մեղավոր. You can't ~ him Չի կարելի նրան մեղադրել:  
**blameful** ['bleɪmfʊl] a մեղադրանքի արժանի, հանցավոր:  
**blameless** ['bleɪmləs] a անմեղ, հանցանք չունեցող, ~ conduct անբասիր վարք. She is ~ in this ես դրանում հանցանք չունի:  
**blameworthy** ['bleɪm,wɜ:ði] a հանցապարտ, մեղադրանքի արժանի:  
**blanch** [blɑ:ntʃ] v սպիտակեցնել. (գունատվել) ~ with fear/cold վախից/ցրտից գունատվել. (կեղևել) ~ almonds մուշը կծպել:  
**bland** [blænd] a մեղմ, քնքուշ. ~ air մեղմ օդ. ~ food/drink դուրեկան/հաճելի/ոչ սուր ուտելիք/խմիչք:  
**blandish** ['blændɪʃ] v շողոքորթել, փաղաքշանքով համոզել:  
**blank** [blæŋk] n դատարկ/բաց տեղ, դատարկություն. leave a ~ for the date ամսաթվի տեղը բաց թողնել. բլանկ. fill in the ~ բլանկ լրացնել. fill in ~s բաց թողած տեղերը լրացնել. (վիճակախաղ) փուչ տոմս draw a ~ փուչ տոմս հանել. *փխբ*. անհաջողության հանդիպել. (դատարկ փամփուշտ) fire ~s դատարկ փամփուշտով կրակել. My mind is a complete ~ Ոչինչ չեմ հիշում:  
**blank** [blæŋk] a դատարկ, մաքուր, չգրված, անհիմաստ ~ cheque/page չլրացված չեք, դատարկ էջ. ~ space դատարկ տեղ. ~ look շվարած տեսք. ~ verse անհանգ բանաստեղծություն. ~ slate բաց կապտամոխրագույն. in ~ dismay/dispair լրիվ վիատված. ~ wall խուլ/անլուսամուտ պատ ~ silence կատարյալ լռություն. ~ window կեղծ պատուհան:  
**blanket** ['blæŋkɪt] n վերմակ, ծածկոց. rough ~ կոշտ բրդյա ծածկոց. spread the ~ վերմակը/ծածկոցը փռել. ~ of snow ձյան ծածկոց. ~ of fog մշուշի շղարշ. a wet ~ *փխբ*. վիատ/թախծոտ/տխուր մարդ. throw a wet ~ over smb *փխբ*. գլխին սառը ջուր լցնել: ~ sheet լրագրի մեծ ծավալ/մակերես. *հմկրգ*. ~ common չանվանակոչված, ընդհանուր բլուկ. ~

instruction դատարկ հրահանգ:

**blanket** ['blæŋkɪt] a համընդհանուր, լրիվ. ~ agreement համընդհանուր համաձայնություն. authority անսահմանափակ լիազորություն. ~ policy ընդհանուր ապահովագիր. ~ visa մուտքի անսահմանափակ վիզա:

**blanketed** ['blæŋkɪtɪd] a պարուրված. ~ in fog մշուշով պարուրված:

**blankly** ['blæŋkli] adv ապուշ/բութ հայացքով. անարտահայտիչ ձևով:

**blankness** ['blæŋknəs] n դատարկություն, շփոթություն, շփոթմունք:

**blare** [blɛə] n փողի/շեփոխի ձայն:

**blare** [blɛə] v փողահարել, շեփոխ փչել. The trumpets ~d Շեփոխները հնչում/փողահարում էին:

**blarney** ['blɑːni] n *խսկ*. շողոքորթություն, շողոքորթող խոսքեր:

**blaspheme** [blæz'fi:m] v աստծուն անարգել, հայհոյել, սրբապղծել:

**blasphemous** ['blæsfəməs] a սրբապիղծ, հայհոյական:

**blasphemy** ['blæsfəmi] n սրբապղծություն, անարգանք, հայհոյանք:

**blast** [blɑːst] n պոռթկում, թափ. ~ of wind քամու պոռթկում. (օդի հոսանք) icy ~ սառը հոսանք. ~ of hot air տաք օդի հոսանք. The windows were broken by the ~ Պատուհանները փշրվեցին պայթյունից. at /in full ~ ամբողջ թափով:

**blast** [blɑːst] v պայթեցնել, վնասել (բույսերը). tree ~ed by lightning կայծակահար ծառ.

Our hopes were ~ed *փխբ*. Մեր հույսերը ի դերև եղան. He ~ed me good and proper Նա ինձ խիստ հանդիմանեց. B~ it! Գրողը/սատանան տանի. What a ~ed nuisance! Ի՛նչ սրտնեղություն, անեծք, տհաճություն:

**blast-furnace** ['blɑːst,fəːnis] n հրահալոց, դոմնա:

**blatant** ['bleɪtənt] a ճշան, ճղճղան. աչք ծակող. ստոր. ~ colours աչք ծակող գույներ. a ~ lie/liar ստոր սուտ/ստախոս. ~ injustice աղաղակող անարդարություն:

**blaze** I [bleɪz] n բոց. the ~ of the campfire խարույկի բոց. in a ~ բոցերի մեջ. burst into a ~ բոցավառվել. like ~s կատաղած, կրակ կտրած. ~ of publicity հրապարակայնություն. Go to ~ ! Գրողի ծոցը գնա. What the ~s սա ինչ բան է/կրակ է. in a ~ of anger ցաս-

ման պոռթկումով. a ~ of light լույսերով փայլել/ճառագայթել:

**blaze** II [bleɪz] n բիծ, սպիտականիշ (կենդանու ճակատին). նշան (ծառի վրա):

**blaze** I [bleɪz] v վառվել, բոցավառվել. փայլել, շողշողալ. The whole building was ~ing Ամբողջ շենքը այրվում էր. ~ with indignation զայրույթից պոռթկալ. The sun was ~ing down Արևն այրում էր. His eyes were ~ing *փխբ*. Նրա աչքերը փայլում էին. The lights were ~ing Լույսերը շողշողում էին. ~ away տաք/ արագ խոսել. *ռզմ*. անընդհատ կրակել, կրակ բացել:

**blaze** II [bleɪz] v ծառի վրա նշան անել:

**blazer** ['bleɪzə] n (վառ գույնի) մարզական բաճկոն:

**blazing** ['bleɪzɪŋ] a վառվող, բոցավառվող. *փխբ*. ակնհայտ:

**blazon** ['bleɪzn] n խորհրդանշան, զինանշան:

**bleach** [bli:tʃ] n (մազերի համար) ջրածնի գերաթթվուտ. (այլ օգտագործման համար) քլորակիր:

**bleach** [bli:tʃ] v սպիտակեցնել, գունաթափել, գունազրկել. ~ linen սպիտակեղենը գունաթափել. ~ing powder կիր, քլորակիր:

**bleak** [bli:k] a անգույն, դժգույն. ցուրտ, սառը. a ~ welcome սառը ընդունելություն. ~ house սառը/մռայլ տուն. (մռայլ) ~ landscape թախծոտ/տխուր բնապատկեր. a ~ day տխուր/անուրախ օր. ~ prospects մռայլ հեռանկար:

**blear** [bliə] a մշուշապատ, աղոտ. ~ /~y eyed մշուշապատ աչքերով. *փխբ*. անհեռատես:

**bleat** [bli:t] n մայուն, բառաչյուն, մկկոց.

**bleat** [bli:t] v մայել, բառաչել, մկկալ. *փխբ*. անհասկանալի խոսել, հիմար-հիմար դուրս տալ. Stop ~ing! Նվնվոցիդ վերջ տուր:

**bleb** [bleb] n բշտիկ, պղպզակ:

**bleed** [bli:d] v (bled) արյուն հոսել, արյունաքամ լինել. His nose/finger was ~ing Նրա քթից/մատից արյուն էր հոսում. ~ to death արնաքամությունից մեռնել. My heart ~s for him Սրտիցս արյուն է կաթում նրա համար. (դրամ շորթել) They bled him for 1000 dollar. Նրանից 1000 դոլար պոկեցին. ~ white վերջին կոպեկը խլել, թալանել:

**bleeding** ['bliːdɪŋ] n արնահոսություն, արյունառություն:

**blemish** [ˈblemiʃ] *n* թերություն, արատ, բիծ:  
**blench** I [ˈblentʃ] *v* խուսափել, խույս տալ.  
 աչք փակել (որևէ բանի վրա):  
**blench** II [ˈblentʃ] *v* սպիտակեցնել, գունա-  
 գրկել, գունաթափել:  
**blend** [blend] *n* խառնուրդ. tea/coffee ~  
 թեյի/սուրճի խառնուրդ:  
**blend** [blend] *v* խառնել. կապակցել, գու-  
 զակցել. Oil and water do not ~ Յուղը և ջուրը  
 չեն խառնվում/կապակցվում. These two  
 voices ~ well Այս երկու ձայները լավ են գու-  
 զակցվում:  
**blender** [ˈblendə] *n* բլենդեր. electric ~  
 էլեկտրական բլենդեր:  
**bless** [bles] *v* օրհնել. ~ oneself *խսկց.* (իրեն)  
 խաչակնքել. ~ one's stars ճակատագրից  
 շնորհակալ լինել. ~ me/my heart, God ~ me  
 Աստված պահպանի ինձ. B~ you Առող-  
 ջություն (փոշտալիս):  
**blessed** [blest] *a կրոն.* երանելի, օրհնված. ~  
 with good health լավ առողջություն ունենալ.  
 ~ the day օրհնվի այն օրը. *խսկց.* անիծյալ.  
 I'm ~ Գրողը տամի. I'm ~ if I know Անիծվեմ  
 թե գիտեմ. the whole ~ lot of them ամբողջ  
 անիծյալ խումբը:  
**blessedness** [ˈblesidnəs] *n* երանություն,  
 երջանկություն. single ~ *կտկ.* ամուրի  
 կյանք:  
**blessing** [ˈblesɪŋ] *n* օրհնություն, երջանկու-  
 թյուն. աղոթք (ուստելուց առաջ և հետո).  
 բնության շնորհ, բարիք. A ~ in disguise Չկա  
 չարիք առանց բարիքի. What a ~ Ի՞նչ եր-  
 ջանկություն. Having talent is mixed ~  
 Տաղանդավոր մարդկանց համար հեշտ չէ  
 ապրելը:  
**blight** [blaɪt] *n* հուսահատություն, վիատու-  
 րություն. cast a ~ over the day փչացնել օրը.  
 What a ~ ! Ի՞նչ ափսոս/տհաճություն. *բար.*  
 բույսերի հիվանդություն. ուտիճ, լվիճ:  
**blight** [blaɪt] *v* խորտակել, վնասել, ծախո-  
 դել. ~ hopes հույսերը խորտակել. Her life is  
 ~ed by the illness Յիվանդությունը թունավո-  
 րում է նրա կյանքը:  
**blighter** [ˈblaɪtə] *n* ծանծրալի/անդուր մարդ.  
 poor ~! խեղճ մարդ. You lucky ~! *խսկց.*  
 Բախտավոր մարդ:  
**blind** [blaɪnd] *a* կույր . ~ from birth ի ծնե  
 կույր. ~ in one eye մի աչքը կույր. ~ flying  
 ավ. թռիչք ավտոմատ սարքերի օգնու-

թյամբ. be ~ to smth չկարողանալ (ճիշտ)  
 գնահատել. *խսկց.* շատ հարբած, մասն ~  
 drunk. ~ alley փակուղի. անելանելի, անհե-  
 ռանկար. ~ wall խուլ պատ. ~ obedience  
 փխբ. կույր հնազանդություն. ~ as a bat շատ  
 վատ տեսնել. ~ eye to smth աչքը փակել/ինչ-  
 որ բանի վրա. ~ corner կույր շրջադարձ go ~  
 կուրանալ. the ~ side մեկի թույլ տեղը. ~ Tom  
 պահմտոցի:

**blind** [blaɪnd] *n* վարագույր, արևակալ. sun/  
 Venetian ~s շերտավարագույր. pull down/  
 raise/draw up the ~s վարագույրները իջեց-  
 նել/բարձրացնել. That's only a ~ Դա միայն  
 խաբկանք է. the ~s կույրերը:

**blind** [blaɪnd] *v* կուրացնել. մթագնել, խա-  
 վարեցնել. be ~ed in an accident պատահարի  
 հետևանքով կուրանալ:

**blindage** [ˈblaɪndɪdʒ] *n* ռզմ. բլինդաժ:

**blinders** [ˈblaɪndəz] *n* pl աչքակալ:

**blindfold** [ˈblaɪndfəʊld] *a, adv* աչքերը կա-  
 պած, կուրորեն:

**blindfold** [ˈblaɪndfəʊld] *v* աչքերը կա-  
 պել:

**blinding** [ˈblaɪndɪŋ] *a* կուրացնող, շլացու-  
 ցիչ. ~ headlights լապտերների կուրացնող  
 լույսը. a ~ flash կուրացնող փայլատակում:

**blindly** [ˈblaɪndli] *adv* կուրորեն, խախա-  
 փելով. անխոհեմաբար:

**blind-man's-buff** [ˌblaɪndmænzˈbʌf] *n*  
 աչքակապուկ (խաղ):

**blindness** [ˈblaɪndnəs] *n* կուրություն. *փխբ.*  
 շլացում, անխոհեմություն:

**blink** [blɪŋk] *n* առկայծում. in a ~ մի ակն-  
 թարթում. on the ~ *խսկց.* վատ վիճակում:

**blink** [blɪŋk] *v* աչքերը թարթել/կկոցել. առ-  
 կայծել, փայլել. ~ one's eyes աչքերը թարթել.  
 There is no ~ing the fact that ... Չի կարելի  
 աչքերը փակել այն բանի վրա, որ...:

**bliss** [blɪs] *n* երանություն, երջանկություն.  
 sheer ~ իսկական երջանկություն:

**blissful** [ˈblɪsful] *a* երանելի, երջանիկ. a ~  
 day երանելի օր. u!~ ignorance երջանիկ  
 անտեղյակություն:

**blister** [ˈblɪstə] *n* բշտիկ, պալար:

**blister** [ˈblɪstə] *v* քսուքով մերսել. (ոտքը)  
 հարել. բշտիկներով ծածկվել. I ~ed my heel  
 Կրունկս հարել եմ. The paintwork was ~ed  
 Լերկը պղպջակներ տվեց:

**blistering** [ˈblɪst(ə)rɪŋ] *a* ~ heat այրող տապ.

~ criticism խիստ/դաժան քննադատություն:

**blithe** [blaɪð] a գվարթ, կենսուրախ, կենսա-խից:

**blitz** [blɪts] n օդային հարձակում, ռմբակոծություն:

**bizzard** [ˈbɪzəd] n ճնարուք, բորան:

**bloat** [bləʊt] v ուռչել, փքվել:

**bloated** [ˈbləʊtɪd] a ուռած, փքված. a ~ face ուռած դեմք. ~ with overeating շատակերությունից ճարպակալած. feel ~ (after eating) (շատ ուտելուց հետո) վատ զգալ. ~ with pride հպարտությունից փքվել:

**blob** [blɒb] n կաթիլ. a ~ of ink/paint մի կաթիլ քանաք/ներկ:

**lobber-lipped** [ˈlɒbəlɪpt] a հաստաշուրթ:

**bloc** [blɒk] n քղք. բլոկ:

**block** [blɒk] n կոճղ, քոթուկ. ~ of wood ծառի քոթուկ. ~ of stone քարի մեծ բեկոր. (քաղաքի թաղամաս) ~ of flats բազմահարկ շենք. ~ of buildings թաղամաս, կվարտալ. two ~ further երկուքաղամաս/կվարտալ այն կողմ. building ~s մանկական խորանարդիկներ. a ~ of seats քատր. մի քանի շարք իրար ետևից. in ~ խմբովին. (խոչընդոտ) a ~ in the pipe խցան խողովակում. traffic ~ երթևեկության խցան. (համալիր, լրակազմ) ~ grants դրամական միանվագ օժանդակություն. ~ of shares արժեթղթերի փաթեթ. *հնկրգ.* ~ length բայթերի քանակ. ~ loading բլոկ առ բլոկ բեռնավորում. ~ sort տեսակավորում բլոկներով. ~ transfer բլոկ առ բլոկ փոխանցում:

**block** [blɒk] v ճանապարհը փակել, արգելք լինել, խոչընդոտել. ~ one's way մեկի ճանապարհը փակել. ~ the entrance մուտքը փակել. The street was ~ed by snowdrifts Ձյան կույտերը փակել էին փողոցը. My nose is ~ed Քիթս փակվել է. ~ an account սառեցնել բանկի հաշիվը. ~ the plans ծրագրերը ծախողել. ~ in/out ուրվագծել. ~ capitals/letters տպատառ. write in ~ տպատառով գրել:

**blockade** [blɒˈkeɪd] n շրջափակում, պաշարում. raise/run the ~ շրջափակումը վերացնել, ճեղքել:

**blockade** [blɒˈkeɪd] v շրջափակել, պաշարել:

**block-buster** [ˈblɒk,bʌstə] n *խսկց.* ծանր ֆուգասային ռումբ. բլոքբասթեր, սուպեր մարտաֆիլմ:

**blockhead** [ˈblɒkhed] n հիմարի գլուխ, ապուշ, բթամիտ:

**blockhouse** [ˈblɒkhaus] n փայտաշեն տուն. *ռզմ.* դաշտային ամրություն:

**bloke** [blɒk] n *խսկց.* տղա, տիպ. quite a decent ~ շատ կարգին տղա. Some ~ wants to see you *Ինչ-որ մի տիպ քեզ է ուզում:*

**blond(e)** [blɒnd] a, n շեկ. շիկահեր մարդ/կին. (շեկ, խարտյաշ):

**blood** [blʌd] n արյուն. *փխք.* կյանք. a drop of ~ արյան կաթիլ. ~ flowed/ran from his nose Նրա քթից արյուն էր հոսում. spit ~ արյուն քթել. shed/spill ~ արյուն թափել. ~ made her faint Արյան տեսքից նա ուշաթափվեց. My ~ ran cold Արյունս սառեց. It runs in his ~ *Դա նրա արյան մեջ է.* ~ relations արյունակից բարեկամներ. ~ poisoning արյան վարակում. ~ transfusion արյան փոխներարկում. ~ vessel արյունատար անոթ. determine the ~ group արյան խումբը որոշել. ~ pressure արյան ճնշում. high/low ~ pressure արյան բարձր/ցածր ճնշում. ~ test/count արյան անալիզ. have a ~ count done արյան անալիզ անել. let out one's ~ արյուն թողնել. (խառնվածք, ավյուն) bad ~ թշնամություն. make bad ~ between թշնամություն գցել... միջև make one's ~ boil խիստ զայրացնել/կատաղեցնել. stir one's ~ բորբոքել, խանդավառել. His ~ is up Արյունը գլուխն է տվել. hot/warm ~ դյուրագրգիռ, տաքարյուն. (տոհմ, ծագում) full ~ զտարյուն ծի. half ~ կիսազնվացեղ ծի. blue ~ ազնվական, արիստոկրատ. He is out for my ~ Նա իմ արյանն է ծարավի. B ~ is thicker than water Արյունը ջուր չի դառնա. ~ bank արյան պահոց. ~ heat մարմնի նորմալ ջերմաստիճան. ~ stream արյան շրջանառություն:

**blooded** [ˈblʌdɪd] a արյունոտ. *ռզմ.* արյունաքան:

**blood-guilty** [ˈblʌd,ɡɪltɪ] a արյունապարտ. մահվան մեջ մեղավոր:

**blood-horse** [ˈblʌdhɔ:s] n զտարյուն/ազնվացեղ ծի:

**bloodhound** [ˈblʌdhaʊnd] n խուզարկու շուն. *փխք.* ոստիկանության գաղտնի գործակալ:

**bloodiness** [ˈblʌdnəs] n արյունռշտություն:

**bloodless** [ˈblʌdləs] a անարյուն, սակավարյուն:

**bloodshed(ding)** [ˈblʌdʃed(ɪŋ)] n արնահեղութիւն:

**bloodshot** [ˈblʌdʃɒt] a արյունով լցված. արնակալած (աչքեր):

**blood-stained** [ˈblʌdsteɪnd] a արյունոտ, արնաթաթախ:

**blood-sucker** [ˈblʌd,sʌkə] n տզրուկ. *փխբ.* հարստահարիչ, մակաբույծ:

**blood-thirsty** [ˈblʌd,θɜːsti] a արյան ծարավի, արյունուռուշտ, արյունարբու:

**bloodworm** [ˈblʌd,wɜːm] n անձրևատոր:

**bloody** [ˈblʌdi] a արյունոտ, արնաշաղախ, արնաթաթախ. (գռեհիկ, անիծյալ). Not ~ likely *խսկց.* Ո՛նց չէ, Ինչպես չէ. ~ minded հակառակվող, ընդդիմացող. He is just being ~ Նա դա դիտմամբ է անում:

**bloom** [blu:m] n ծաղկում, փթթում. in full ~ ծաղկման շրջանում. come/burst into ~ ծաղկել, փթթել:

**bloom** [blu:m] v ծաղկել, փթթել, *նաև` փխբ.* She is /looks ~ing Ծաղկող տեսք ունի:

**bloomer** [ˈblu:mə] n *խսկց.* կոպիտ սխալ. make a ~ կոպիտ սխալ թույլ տալ:

**bloomers** [ˈblu:məz] n pl կանանց լայն, կարճ մարզական շալվար:

**bloomy** [ˈblu:mi] a ծաղկող, փթթող:

**blossom** [ˈblɒsəm] n ծաղկում, փթթում. ծաղիկ. cherry ~s բալենու ծաղիկ. be in ~ ծաղկել. break/burst into ~ (սկսել) ծաղկել. She ~ed out at the university Համալսարանում նա հաջողության հասավ:

**blot** [blɒt] n բիծ, կաթիլ (թանաքի). a ~ on the landscape տեսարանը փչացնող որևէ բան:

**blot** [blɒt] v կեղտոտել, բծոտել. *փխբ.* արատավորել. ~ wet ink թանաքը չորացնել. ~ out ջնջել. ~ one's copybook բարի համբավը արատավորել/կեղտոտել. Clouds ~ed out the moon Ամպերը փակել էին լուսինը:

**blotch** [blɒtʃ] n բիծ, թանաքի կաթիլ. պզուկ, բշտիկ:

**blotter** [ˈblɒtə] n գրչակ, թուղթ մրտտող:

**blotting-paper** [ˈblɒtɪŋ,peɪpə] n ծծողական, ծծան թուղթ:

**blouse** [blaʊz] n կանացի բլուզ. բաճկոնակ:

**blow** [bləʊ] n հարված. ~ with a hammer/fist հարված մուրճով/ձեռքով. at a/one ~ մի հարվածով, միանգամից. come to ~s կռվել, կռիվ սկսել. exchange ~s կռվել, իրար ծեծել. heavy ~ ծանր հարված. It was a heavy ~ for her

*փխբ.* Դա ծանր հարված էր նրա համար. strike/hit/deal/inflict a ~ հարվածել. go out for a good ~ *փխբ.* գնալ զբոսանքի/օդափոխվելու:

**blow I** [bləʊ] v փչել. The wind blew hard Քամին ուժեղ էր փչում. *երժշ.* փողհարել, փող փչել. blow a horn/trumpet փող փչել, փող հարել. one's horn ազդանշանել. ~ glass ապակի փչել. ~ one's nose քիթը մաքրել, խնչել. ~ a kiss օդային համբույր ուղարկել. ~ the money փողերը ծախսել/շռայլել. ~ one's brains out գնդակը ճակատին արծակել, ինքնասպան լինել. I'll be ~ed out if I do Անիծվեմ, թե դա անեմ. ~ out հանգցնել. ~ out the candle/matches մոմը/լուցկին հանգցնել. ~ about/abroad (news) տարածել (լուրեր). ~ high/low ինչ էլ որ լինի, ինչ գնով էլ որ լինի. ~ over հանդարտվել. The storm blew over Փոթորիկը հանդարտվեց. ~ up 1. փչելով ուռցնել. 2. պայթեցնել. ~ up the balloon օդապարիկը փչել. ~ up the building շենքը պայթեցնել. ~ one's own trumpet ինքնագովությանը զբաղվել, գլուխը գովել. It's ~ing gale outside Դրսում ուժեղ քամի է. (հևալ, փնչացնել). The old man was puffing and ~ing Ծերուկը հևում և փնչացնում էր. *տեխ.* պայթել, վառվել. A fuse has ~n Ապահովիչը վառվել է/այրվել է. A tire has ~ Անվադողը պայթել է. (ցիրուցան անել) Papers were ~n about Թղթերը ցիրուցան եղան. ~ down ցած գցել. տապալել, քանդել. The tent was ~n down Վրանը քանդվեց. ~ off մաքրել. ~ off steam շոգին բաց թողնել:

**blow II** [bləʊ] v ծաղկել, փթթել. a new ~ blown rose նոր ծաղկած վարդ:

**blowing** [ˈbləʊɪŋ] n փչում, փչելը. հոսակորուստ (գազի, շոգու):

**blowing up** [ˈbləʊɪŋˈʌp] n պայթյուն, պայթոց. *խսկց.* խիստ հանդիմանություն, շշպոց:

**blowlamp** [ˈbləʊlæmp] n (*նաև` ~ torch*) գոհալամպ:

**blow-out** [ˈbləʊaʊt] n պայթում (անվադողի). We had a ~ Մեր անվադողը պայթեց. There has been a ~ էլ. Ապահովիչը այրվել է. հողմային, հողմախառն, քամոտ:

**blowy** a [bləʊi] հողմային, հողմախառն, քամոտ:

**blowzy** [ˈbləʊzi] a կարմրաթուշ. (կնոջ մա-



սին) զզգված, թափփված:  
**blubber** ['blʌbə] n լաց, ճիչ:  
**blubber** ['blʌbə] n *ծով*. մեղուզա:  
**blubber** ['blʌbə] v ճչալ, բարձրաձայն հեկեկալ:  
**bludgeon** ['blʌdʒən] 1. n մահակ, դագաճակ. 2. v մահակով ծեծել:  
**blue** [blu:] a կապույտ. pale/light ~ երկնագույն, բաց կապույտ. dark/deep ~ մուգ կապույտ. navy ~ մուգ կապույտ. a ~ bruise կապտուկ. ~ circles/rings under the eyes աչքերի տակ կապտուկներ. ~ with cold ցրտից կապտած. feel/look ~ թախծել, մեղամաղծոտ տրամադրության մեջ լինել. ընկճված տեսք ունենալ. ~ collar "կապույտ օձիքավոր", բանվոր՝ անմիջապես արտադրության մեջ աշխատող. ~ print մանրամասն նախագիծ, նմուշ. լուսապատճենում. (անօրինական, ապօրինի). ~ exams անօրինական քննություններ. ~ cigarettes մաքսանենգ ծխախոտ. ~ blood ազնվական ծագում. ~ devils արբեցատենդ. ~ water բաց ծով. drink till all's ~ թունդ հարբել. Things look ~ Գործերը վատ են. once in a ~ moon հազարից մեկ, շատ ուշ-ուշ. ~ jokes/film անպարկեշտ, կատակներ/ֆիլմ. ~ jacket *բրիտ*. ռազմածովային նավաստի. ~ stocking գրքերով և գիտությամբ տարված, կանացիությունից զուրկ, պեղանտ կին. կապույտ գուլպա:  
**blue** [blu:] n կապույտ գույն, երկնքի գույն. երկինք. կապույտ ներկ. լվացքի լեղակ. պահպանողական կուսակցությանը պատկանող. black and ~ կապտուկներ մարմնի վրա. Cambridge ~ բաց կապույտ. Oxford ~ մուգ կապույտ. Berlin ~ բեռլինյան լագուր. a bolt from the ~ որոտ պարզ երկնքից. *փխբ*. անսպասելի տհաճ բան. appear out of the ~ անսպասելի հայտնվել. He is a true ~ Իսկական պահպանողական է. the ~z բլուզ:  
**bluebell** ['blu:bel] n *բսբ*. զանգակածաղիկ. վայրի հիացինտ:  
**bluebottle** ['blu:,bɒtl] n *բսբ*. տերեփուկ:  
**blue-eyed** ['blu:aid] a կապտաչյա. the ~ boy *փխբ*. սիրելին:  
**bluing** ['blu:iŋ] n *ամ*. լեղակ:  
**bluff** [blʌf] a զառիվայր, զառիթափ. շիտակ. ~ person կոպիտ բայց շիտակ ու անկեղծ մարդ:  
**bluff** [blʌf] n խաբեություն. *թղթս*. բլեֆ. His

offer was just ~ Նրա առաջարկը պարզապես խաբեություն էր. I called his ~ ես նրան ջրի երես դուրս բերեցի:  
**bluff** [blʌf] v խաբել, մոլորության մեջ զգել. He was ~ed into thinking... Նրան խաբեությամբ հավատացրին, որ... ~ out մի կերպ դուրս արծնել:  
**bluish** ['blu:ɪʃ] a կապտավուն:  
**blunder** ['blʌndə] n կոպիտ սխալ:  
**blunder** ['blʌndə] v կոպիտ սխալ անել. He has ~ed again Նորից կոպիտ սխալ թույլ տվեց. (խարխափելով շարժվել) ~ around in the dark մթության մեջ խարխափելով շարժվել. ~ into a wall պատին դիպչել. ~ away one's chance հարմար առիթը բաց թողնել. ~ out բերանից թողնել. ~ upon պատահաբար հայտնաբերել:  
**blunt** [blʌnt] a բութ (դանակ և այլն). ~ man *փխբ*. բթամիտ. ~ fact բացահայտ փաստ. ~ angle բութ անկյուն. a ~ answer անմիջական (*նաև՝ անտակտ*) պատասխան:  
**blunt** [blʌnt] v բթացնել. become ~ed բթանալ (*նաև՝ զգացմունքների մասին*):  
**blur** [blɜ:] n բիծ. (թանաքի) կաթիլ. աղոտություն. Your face is a ~ Դեմքը շատ աղոտ է երևում. Everything became a ~ Ամեն ինչ սկսեց լողալ նրա աչքերի առաջ:  
**blur** [blɜ:] v աղոտանալ, մթագնել (գիտակցությունը). Tears ~red her eyes Արցունքներով աչքերը մթագնեցին. The windscreen is ~ red Առջևի ապակին (հողմային ապակին) քրտինքով է պատվել. The writing is ~red Բոլոր տառերը խառնվել են. a ~red picture աղոտ պատկեր. Outlines became ~red Ուրվագծերը աղոտացան. ~ out ջնջել:  
**blurt** [blɜ:t] v բերանից բաց թողնել. ~ out the news/the secret դուրս տալ գաղտնիքը/լուրը:  
**blush** [blʌʃ] n կարմրություն (շփոթությունից, ամոթից). with ~ կարմրելով. without ~ առանց կարմրելու. at first ~ առաջին հայացքից. spare smb's ~es չամաչեցնել (որևէ մեկին). put to the ~ ամաչեցնել, կարմրեցնել:  
**blush** [blʌʃ] v կարմրել, շիկնել. ~ with shame ամոթից կարմրել. ~ to the roots of one's hair մինչև մազերի արմատները կարմրել. I ~ed for you ես ձեր փոխարեն ամաչում էի:  
**bluster** ['blʌstə] v կատաղել, մոլեգնել. աղմկել, գոռգոռալ. rage and ~ կատաղել, փրփրել. հուր ու կրակ թափել. ~ it out some-

how/խոսելով/ մի կերպ հանգստանալ:  
**blustery** ['blʌst(ə)ri] a մոլեգին. ~ day քամոտ օր. ~ wind սրընթաց քամի:  
**boa** ['bəʊə] n կենդ. վիշապ օձ, բռա. կամանց վզամորթի:  
**boar** [bɔː] n արու խոզ. wild ~ վարազ, վայրի խոզ:  
**board** [bɔːd] n տախտակ. ironing/notice ~ արդուկի/հայտարարությունների տախտակ. diving ~ ջրացատկի ցատկատախտակ/տրամպլին. ~ and lodging կենսօթևան (սենյակ և սնունդ). ~s բեմ. be on /the ~, tread ~s դերասան լինել. pay for full ~ վճարել լրիվ կենսօթևանի համար. (նավակող, նավեզր) be/go on ~ նավ նստել. on ~ նավի վրա. go by the ~ ջուրն ընկնել. *փխբ.* դուրս նետվել. The plan has gone by the ~ *փխբ.* Պլանը չընդունվեց/մերժվեց. on ~ the train/ship գնացքի/նավի մեջ. (վարչություն, ղեկավարություն, խորհուրդ). ~ of directors տնօրենների վարչություն. ~ of examiners քննական հանձնաժողով. ~ of education/health կրթության/առողջապահության նախարարություն. editorial ~ խմբագրություն. executive ~ գործադիր մարմին. *թղթխ.* *փխբ.* sweep the ~ խաղաբանկը տանել. հաջողություն ունենալ. tourist ~ ճամփորդական գործակալություն/գրասենյակ. above ~ բացահայտորեն. անկեղծ:  
**board** [bɔːd] v հատակել. ~ (over) a floor հատակին տախտակ գցել. ~ up the windows պատուհանները տախտակով փակել/պատել. (նստել) ~ a bus/train/ship ավտոբուս/գնացք/նավ նստել ~ people (ապահովել) օթևան և սնունդ տալ:  
**boarder** ['bɔːdə] n պանսիոնում ապրող վարձակալ:  
**boarding** ['bɔːdiŋ] n նստեցում, նստեցնելը. B~ begins at five o'clock Նստեցումը սկսվում է ժամը հինգին:  
**boarding-house** ['bɔːdiŋhaus] n կենսօթևան, պանսիոն:  
**boarding-school** ['bɔːdiŋsku:l] n գիշերօթիկ դպրոց:  
**board room** ['bɔːdru:m] n ընկերության վարչություն/գրասենյակ:  
**boast** [bəʊst] n պարծենկոտություն, սնապարծություն. It is our ~ that ... Մենք պարծենում ենք, որ...:

**boast** [bəʊst] v պարծենալ, գլուխը գովել. have nothing to ~ of պարծենալու ոչինչ չունենալ. ~ that պարծենալ, որ:  
**boaster** ['bəʊstə] n պարծենկոտ/սնապարծ մարդ:  
**boastful** ['bəʊstfʊl] a պարծենկոտ, սնապարծ:  
**boat** [bəʊt] n նավակ, նավ. pleasure ~ զբոսանավ. flying ~ թռչող նավ. go by ~ նավով գնալ. steer/run a ~ նավ(ակ)ը վարել. hire a ~ նավ(ակ) վարծել. emergency ~ փրկարար նավակ. miss the ~ *փխբ.* հնարավորությունը բաց թողնել. burn one's ~s նավերն այրել. *փխբ.* վերադարձը/նախկին կապերը անհնարին դարձնել. be in the same ~ նույն վիճակում լինել. go ~ing նավակով զբոսնել:  
**boat-hook** ['bəʊthʊk] n կարթածող, կեռածող:  
**boatman** ['bəʊtmən] n նավավար, մակույկավար:  
**boatrace** ['bəʊtreis] n *մրզկ.* նավամրցում, թիարշավ:  
**boatswain** ['bəʊsn] n բոցման:  
**bob** I [bɒb] n սուզակապար, *ծով.* խորաչափ. կարճ կտրած մազեր. ~ tail խուզած պոչ:  
**bob** II [bɒb] n *խսկց.* շիլինգ:  
**bob** [bɒb] v մազերը կարճ կտրել. ~ one's hair մազերը կարճ կտրել. wear one's hair ~ed միշտ կարճ սանրվածք ունենալ. ~ about ճոճվել. ~ up everywhere ամեն տեղ հասցնել:  
**bobbin** ['bɒbin] n կոճ, մասրա. իլիկ:  
**bobbish** ['bɒbiʃ] a *խսկց.* ուրախ, աշխույժ:  
**bobby** ['bɒbi] n *խսկց.* (Անգլիայում) ոստիկան:  
**bobby-soxer** ['bɒbisɒksə] n *խսկց.* դեռահաս աղջիկ:  
**bode** [bəʊd] v գուշակել, կանխագուշակել. This ~s no good Սա ոչ մի լավ բան չի գուշակում. That ~s well for us Դա լավ նշան է մեզ համար:  
**bodiful** ['bɒdɪfʊl] a չաշագուշակ:  
**bodice** ['bɒdis] n կրծկալ, իրանակալ:  
**bodily** ['bɒdɪli] 1. a մարմնական, ֆիզիկական. ~ fear ֆիզիկական վախ. 2. adv անձամբ, անձնապես. He came ~ Նա անձամբ ներկայացավ. The audience rose ~ Ունկնդիրները մեկ մարդու նման ոտքի կանգնեցին:

**chilly** [ˈtʃɪli] a սառը, զով, հով. *փխք*. չոր (ընդունելություն):

**chime** [tʃaɪm] 1. n դողանց ~ of bells զանգերի դողանց. 2. v զանգերը տալ. ժամացույցը խփել. The clock ~d three ժամացույցը խփեց երեքը. The doorbell ~d Դռան զանգը հնչեց:

**chimera** [kaɪˈmɪərə] n ցնորք, քիմեր:

**chimerical** [kaɪˈmerɪkl] a ցնորային, քիմերային, քիմերական:

**chimney** [ˈtʃɪmni] n ծխնելույզ. լամպի ապակի. բուխարի. հրաբխի խառնարան:

**chimney-piece** [ˈtʃɪmni:pi:s] n բուխարու վերևի մասը:

**chimney-pot** [ˈtʃɪmniptɒt] n ծխնելույզ:

**chimney-stalk** [ˈtʃɪmni:stɔ:k] n գործարանի ծխնելույզ:

**chimney-sweep(er)** [ˈtʃimni,swi:p(ə)] n  
ծխնեւույզ մաքրող:

**chin** [tʃin] n կզակ. sharp, pointed ~ սուտ կզակ. double ~ կրկնակզակ. stubborn ~ կամակոր կզակ. protruding/massive/round/firm/decided ~ դուրս ցցված/ մեծածավալ/կլորավուն/հաստատակամ/վճռական կզակ. up to the ~ մինչև ականջները:

**china** [ˈtʃaɪnə] n ճենապակի. a piece of ~ ճենապակյա իր (գավաթ և այլն):

**china-ware** [ˈtʃaɪnəweə] n ճենապակյա իրեր:

**Chinese** [ˌtʃaɪˈniːz] n, a, չինացի, չինարեն, չինական:

**chink** I [tʃɪŋk] n ճեղք, ճեղքվածք:

**chink** II [tʃɪŋk] n զնգոց, զրնգոց. *խսկց.* կանխիկ դրամ:

**chintz** [tʃɪnts] n, a չիթ, չթե:

**chip** [tʃɪp] n տաշեղ, բեկոր. փշուր, կտոր. խաղանիշ (ֆիշկա). ~s խճաքար. a ~ on the edge պոկված կտորի տեղը. a ~ off old block *խսկց.* լրիվ հայրն է. potato ~s բարակ տապակած կարտոֆիլ. *հմկրգ.* մանրասխեմա թիթեղիկ, չիփ. ~ design database տվյալների բազա բյուրեղների նախագծման համար. ~ set միկրոսխեմաների հավաքածու:

**chip** [tʃɪp] v տաշել, կտորվել. ~ stones քար փշրել. Chickens ~ out of the egg ճտերը ճեղքում են ձվի կճեպը. The cups ~ easily Գավաթի բերանները արագ թռնում են. ~ in խոսակցության/կռվի մեջ մտնել. He is always ~ping in Նա միշտ մեջ է ընկնում:

**chirp** [ˈtʃɪp] 1. n ճռվողյուն, ծվվոց. 2. v ճռվողել, ծվվալ:

**chirpy** [ˈtʃɪpi] a կենսուրախ, աշխույժ, ուրախ:

**chirrup** [ˈtʃɪrəp] n, v ծվվոց, ծվվալ:

**chisel** [ˈtʃɪzəl] n, v կտրիչ, հատիչ. դուր. քանդակել, հղկել:

**chiselled** [ˈtʃɪzɪd] a հղկված:

**chit** I [tʃɪt] n երկտող, անդորրագիր:

**chit** II [tʃɪt] n ընծյուղ. փոքր երեխա. a ~ of a girl *խսկց.* անպիտան աղջիկ:

**chit-chat** [ˈtʃɪtʃæt] n շաղակրատանք, բամբասանք:

**chivalrous** [ˈtʃɪvrəs] a ասպետական:

**chivalry** [ˈtʃɪvrɪ] n ասպետություն:

**chloride** [ˈklɔːraɪd] n *քիմ.* քլորիդ. cupreous ~ պղնձաքլորիդ:

**chlorine** [ˈklɔːriːn] n քլոր:

**chloroform** [ˈklɔːrɔːm] n քլորոֆորմ:

**chock** [tʃɒk] 1. n սեպ. նեցուկ. 2. v լցնել, խցկել:

**chock-a-block** [ˌtʃɒkəˈblɒk] a լեփ լեցուն. The square was ~ with cars Յրապարակում խառնիխումն լցվել էին մեքենաները:

**chock-full** [ˌtʃɒkˈfʊl] a խառնիխումն. The room is ~ of furniture Սենյակը լեփ լեցուն է կահույքով:

**chocolate** [ˈtʃɒklət] n շոկոլադ. a cup/ bar of ~ մի գավաթ/սալիկ շոկոլադ. a box of ~s մի տուփ շոկոլադե կոնֆետներ. a ~ box շոկոլադե տուփ:

**choice** [tʃɔɪs] 1. n ընտրություն. large/wide/bad/final ~ մեծ/լայն/վատ/վերջնական ընտրություն. make a good ~ լավ ընտրություն կատարել. have no ~ but ուրիշ ելք չունենալ. approved ~ խելամիտ, ողջախոհ ընտրություն. 2. a ընտիր, լավագույն:

**choir** [ˈkwaɪə] n երգչախումբ:

**choke** [tʃəʊk] n հեղձանքի նոպա:

**choke** [tʃəʊk] v շնչասպառ լինել, խեղդվել. Sobs ~d her Յնկեկոցը խեղդում էր նրան. (կեղտոտել, աղտոտել) The pipe is ~d up again խողովակը նորից լցվել է (կեղտով). The garden is ~d with weeds Այգին ծածկվել է մոլախոտերով. He ~d on a bone Ոսկորը կոկորդում էր մնացել. ~ with anger կատաղությունից խեղդվել:

**choke-damp** [ˈtʃəʊkdæmp] n հանքահորի գազ:

**choker** [ˈtʃəʊkə] n օսլայած բարձր օձիք. *խսկց.* փողկապ:

**cholera** [ˈkɒləɪə] n խոլերա. summer ~ արնալուծ, դիզենտերիա:

**choleric** [ˈkɒləɪɪk] a մաղձային, մաղձոտ. դյուրաբորբոք:

**choose** [tʃuːz] v ընտրել. ~ picture/seat/the right moment նկար/տեղ/հարմար պահ ընտրել. There is nothing to ~ *Ընտրելու բան չկա.* be chosen as ընտրվել որպես. (գերադասել, նախընտրել) He chose to stay at home Նա գերադասեց տանը մնալ. What would you ~ to do? Ի՞նչ կնախընտրեիք անել. just as you ~ ինչպես կուզենաք. He cannot ~ but obey Նրան մնում է միայն հնազանդվել, Նա չի կարող չհնազանդվել:

**choos(e)y** [ˈtʃuːzi] a դժվարահաճ. be ~ about

one's food ուտելու հարցում դժվարահաճ լինել:

**chop** I [tʃɒp] n հարված, զարկ. թակածո կոտլետ. mutton/pork ~ ոչխարի/խոզի թակածո կոտլետ. get the ~ *խսկց.* աշխատանքից հեռացվել:

**chop** II [tʃɒp] n փոփոխում, տատանում:

**chop** I [tʃɒp] v կտրտել, կտրատել, կտտորել. ~ up կտտորել, մանրել. ~ up meat/wood միս/փայտ կտտորել. ~ down a tree ծառը կտրել. ~ off a branch ճյուղը կտրել. He is always ~ing and changing Անհաստատ մարդ է, Նրա շաբաթը հինգ ուրբաթ ունի:

**chop** II [tʃɒp] v փոխել, փոփոխել. երերալ, տատանվել. ~ about ուղղությունը հանկարծակի փոխել:

**chop-house** [ˈtʃɒphaʊs] n էժանագին ռեստորան.

**chopped** [ˈtʃɒpd] a կտրտած, կտտորած. ~ meat/cabbage կտտորած միս/կաղամբ:

**chopper** [ˈtʃɒpə] n մեծ դանակ, կացին. հատիչ. *թատր.* հսկիչ:

**chopping board** [ˈtʃɒpiŋbɔ:d] n (միսը) կտտորելու/կտրտելու տախտակ:

**choppy** [ˈtʃɒpi] a փոփոխական, ուժգին (քամի):

**chopstick** [ˈtʃɒpstɪk] n պատառաքաղի փոխարեն օգտագործվող ձողիկ (Չինաստանում, ճապոնիայում):

**choral** [kəˈrɑ:l] a երգչախմբական, երգչախմբային:

**chorale** [kəˈrɑ:l] n *եկեղ.* խմբերգություն, խորալ:

**chord** [kɔ:d] n լար. *մաթ.* լարագիծ. *կզմիս.* լար. *երժշ.* ակորդ. touch the right ~ *փխբ.* ամենազգայուն թելերին դիպչել. vocal ~s ձայնալարեր. spinal ~ ողնուղեղ:

**chore** [tʃɔ:] n տնային գործեր, աշխատանք. It's your turn for the ~s today Այսօր քո հերթն է տնային գործերով զբաղվելու:

**chorister** [ˈkɔrɪstə] n խմբերգիչ, երգիչ:

**chorus** [ˈkɔ:rəs] n երգչախումբ. in ~ խմբով. ~ girl երգչախմբի երգչուհի:

**christen** [ˈkrɪsn] v կնքել, մկրտել. The child was ~ed Mary երեխային Մերի անվանեցին/կնքեցին:

**Christian** [ˈkrɪstʃən] 1. n քրիստոնյա ~ name կնքանուն. 2. a քրիստոնեական:

**Cristianity** [ˌkrɪstɪˈæniəti] n քրիստոնեություն:

**christianize** [ˈkrɪstʃənaɪz] v քրիստոնյա դարձնել, քրիստոնեացնել:

**Christmas** [ˈkrɪsməs] n (*կրճ.* Xmas) Ծնունդ. Քրիստոսի ծննդյան եկեղեցական տոն. a ~ day Ծննդյան օրը. ~ eve Ծննդյան նախօրե. ~ tree տոնածառ (ծննդյան). the ~ holidays Ծննդյան տոներ. ~ box Ծննդյան նվերներ. ~ tide Ջրօրհներք. Merry ~ ! Ծնորհավո՞ր Ծնունդ:

**chromatic** [krəˈmætɪk] a քրոմատիկ, գունային. *երժշ.* քրոմատիկ:

**chrome** [krəʊm] n քրոմ. քրոմաներկ:

**chromium** [ˈkrəʊmiəm] n *քիմ.* քրոմ. a ~ plated քրոմապատ:

**chronic** [ˈkrɒnɪk] a քրոնիկական, շարունակական, հարատև. ~ disease/illness քրոնիկ հիվանդություն:

**chronically** [ˈkrɒnɪk(ə)li] adv անընդհատ, շարունակ, քրոնիկորեն:

**chronicle** [ˈkrɒnɪkl] n ժամանակագրություն:

**chronicler** [ˈkrɒnɪklə] n ժամանակագիր, պատմագիր:

**chronologic(al)** [ˌkrɒnəˈlɒdʒɪkəl] a ժամանակագրական:

**chronology** [krəˈnɒlədʒi] n ժամանակագրություն, քրոնոլոգիա:

**chrysanthemum** [krəˈsænthɪməm] n *բուս.* քրիզանթեմ, ոսկեծաղիկ:

**chubby** [ˈtʃʌbi] a թմբլիկ, կլորաղեմ. a ~ baby թմբլիկ երեխա:

**chuck** I [tʃʌk] n ճուտ. *փղք.* ճուտիկ:

**chuck** II [tʃʌk] n *խսկց.* ուտելիք, սնունդ:

**chuck** III [tʃʌk] n շպրտում, նետում:

**chuck** [tʃʌk] v շպրտել, նետել. ~ away/out դուրս օգցել. ~ away/out old letters հին մամակները դնել նետել. ~ up թողնել (աշխատանք, պաշտոն). ~ up one's job/girl friend աշխատանքը/ընկերուհուն թողնել. ~ out gatecrashers անկոչ հյուրերին վռնդել. C~ it! Թողե՛ք, Վերջ տվե՛ք:

**chuckle** [ˈtʃʌkl] n, v քրքիջ, ծիծաղ, կչկչոց. քրքջալ, ծիծաղել, կչկչալ:

**chuckle-head** [ˈtʃʌklhed] n հիմարի գլուխ, տխմար:

**chuff** [ˈtʃʌf] n կոպիտ/բռի մարդ. ժլատ/կծծի մարդ:

**chum** [tʃʌm] n *խսկց.* շատ մոտ/մտերիմ ընկեր. բարեկամ. սենյակակից:

**chum** [tʃʌm] *v* *խսկց.* նույն սենյակում ապրել. ընկերություն անել. ~ in/up մտերմանալ:

**chummy** [ˈtʃʌmi] *a* *խսկց.* սրտաբաց, մարդամոտ:

**chump** [tʃʌmp] *n* կոճղ. *խսկց.* գլուխ: be off one's ~ *ցնդել*, խելքը թռցնել:

**chunk** [tʃʌŋk] *n* մեծ կտոր/պատառ. a big ~ of work *փխբ.*, *խսկց.* մեծ քանակությամբ գործեր:

**church** [tʃɜːtʃ] *n*, *a* եկեղեցի. եկեղեցական. the Church of England Անգլիկան եկեղեցի. go into the Church հոգևորական դառնալ:

**churchman** [ˈtʃɜːtʃmən] *n* եկեղեցական, հոգևորական, եկեղեցական սպասավոր:

**churchwarden** [ˈtʃɜːtʃwɔːdn] *n* երեցփոխ:

**churchyard** [ˈtʃɜːtʃjaːd] *n* եկեղեցու բակ. գերեզմանատուն:

**churl** [tʃɜːl] *n* բռի/անտաշ/գռեհիկ մարդ:

**churlish** [ˈtʃɜːliʃ] *a* կոպիտ, բռի, անտաշ. He is ~ *Նա բռի/անտաշ է:*

**churn** [tʃɜːn] *n*, *v* խնոցի. խառնիչ. խնոցի հարել. խառնել:

**chute** I [ʃuːt] *n* սահանք, զառիվայր. աղբատար խողովակ:

**chute** II [ʃuːt] *n* *զգմ.* *խսկց.* պարաշյուտ:

**chutist** [ˈʃuːtɪst] *n* *զգմ.* *խսկց.* պարաշյուտիստ:

**cicatrice** [ˈsɪkətrɪs] *n* սպի, սպիագիծ:

**cider** [ˈsaɪdə] *n* խնձորոցի. all talk and no ~ դատարկ խոսակցություն:

**CIF** [sɪf] *n* (cost, insurance, freight) (զին, ապահովագիր, փոխադրման ծախսը) միջազգային առևտրային հիմնային պայմանագիր:

**cigar** [siˈgɑː] *n* սիգար:

**cigarette** [ˌsɪgəˈret] *n* սիգարետ. a packet of ~ մի տուփ սիգարետ. light/put out a ~ վառել/հանգցնել սիգարետը. ~ end/lighter/case ծխախոտի մնացորդ. վառիչ. ծխախոտատուփ:

**cigar-holder** [siˈgɑː, həʊldə] *n* ծխափող, մուշտուկ:

**cilia** [ˈsɪliə] *n* *pl* *կզմխ.*, *բսբ.* արտևանուց, թերթերունք:

**ciliated** [ˈsɪliətɪd] *a* թարթիչավոր:

**cinch** [sɪntʃ] *n* *խսկց.* Դա հաստատ գործ է:

**cinder** [ˈsɪndə] *n* մարմրող ածուխ, անթեղ. մոխիր:

**Cinderella** [ˌsɪndəˈrelə] *n* Մոխրոտ, Մոխ-

րոտիկ, Մոխրատիտիկ (հեքիաթ):

**cinder-path** [ˈsɪndəpaːθ] *n* արշավուղի:

**cinder-track** [ˈsɪndətræk] *n* *մրզ.* արշավուղի:

**cine camera** [ˈsɪni, kæməɾə] *n* կինոապարատ, կինոխցիկ:

**cinema** [ˈsɪnəmə] *n* կինոթատրոն. the ~ կինոֆիլմ:

**cinematography** [ˌsɪnəməˈtɒɡrəfi] *n* կինոարվեստ. կինեմատոգրաֆիա. կինոթատրոն:

**cinnamon** [ˈsɪnəmə] *n* դարչին:

**cipher** [ˈsaɪfə] *n* ծածկագիր, գաղտնագիր, շիֆր. արաբական թվանշան. *մաթ.* զրո. in ~ կարգավորված. He's just a ~ *փխբ.* Նա պարզապես դատարկ տեղ է:

**circa** [ˈsəːkə] *prep* մոտ, մոտավորապես:

**circle** [ˈsɜːkl] *n* շրջան, շրջանակ, շրջագիծ.

the family ~ ընտանեկան շրջան. high political ~s բարձր քաղաքական շրջաններ. business ~s գործարար շրջաններ/ոլորտներ. a study ~ խմբակ (ուսումնական). Arctic ~ Յուսիսային Բևեռային շրջան. a vicious ~ արատավոր շրջան. dress/first/upper ~ *թատր.* բելլետաժ. ներքևի/վերևի յարուս. parquet ~ ամֆիթատրոն. come full ~ ավարտել շրջանը. Everything began to go round in ~s Գլուխս պտտվեց, Գլխապտույտ ունեցա:

**circle** [ˈsɜːkl] *v* պտտվել, պտույտներ տալ.

The aeroplane ~d the town *հնքնաթիռը պտտվում էր քաղաքի վրայով.* ~ a lake լճի շուրջը պտտվել: The cosmonaut ~d the Earth several times *Տիեզերագնացը մի քանի անգամ պտտվեց Երկրի շուրջը:*

**circlet** [ˈsɜːklət] *n* կլորակ, շրջանակ. ապարանջան. մատանի:

**circuit** [ˈsɜːkɪt] **1.** *n* շրջապտույտ. շրջագծի երկայնություն. երթուղի. the postman's ~ փոստատարի երթուղին. *էլ.* շղթայագիծ short ~ կարճ միացում. racing ~ *մրզ.* մրցարշավի ուղի. **2.** *a* շրջիկ. ~ court *իրավ.* շրջիկ դատարան. ~ judge շրջիկ դատավոր. *հմկրգ.* ~ free graph առանց ցիկլերի գրաֆ. ~ algebra սխեմաների հանրահաշիվ. ~ array սխեմաների մատրից. ~ path ճանապարհ սխեմայում. ~ simulation սխեմայի մոդելավորում:

**circuitous** [səːˈkjʊːɪtəs] *a* զարտուղի. by a ~ route զարտուղի/կողմնակի ճանապարհով:



**circular** [ˈsə:kjʊlə] **n** շրջաբերական. գովազդ. ministerial ~ նախարարության շրջաբերական. It's only a ~ Դա պարզապես գովազդ է.

**circular** [ˈsə:kjʊlə] **a** կլոր, շրջանաձև. մաթ. աղեղնաձև. a ~ tower կլոր աշտարակ. a ~ tour շրջանային երթուղի. ~ motion շրջանաձև շարժում. ~ letter շրջաբերական նամակ. a ~ staircase պտուտակաձև աստիճան. հմկրգ. ~ list ցիկլիկ ցուցակ. ~ reference ցիկլիկ հղում. ~ shift ցիկլիկ տեղաշարժ:

**circulate** [ˈsə:kjuleɪt] **v** շրջանառել, պտտվել. ~ the letter to everybody նամակը բոլորին կարդալ տալ. ~ the news նորությունը տարածել. ~ money դրամը շրջանառության մեջ դնել. He didn't ~ much at the party Երեկոյթին նա շատ քչերի հետ շփվեց:

**circulation** [ˌsə:kjuˈleɪʃn] **n** շրջանառություն, շրջապտույտ. մամուլի (տիրաժ) The newspaper has a ~ of two millions Լրագիրը երկու միլիոն տպաքանակ ունի. have got poor ~ բժշկ. արյան շրջանառությունը լավ չլինել. put into/withdraw from ~ շրջանառության մեջ դնել/հանել. be out of ~ փխր. ոչ մի տեղ չգնալ, մարդամեջ դուրս չգալ:

**circulator** [sə:kjuˈleɪtə] **n** տարածող (հիվանդություն, լուրեր և այլն):

**circulatory** [ˌsə:kjuˈleɪtəri] **a** շրջանառական, շրջանառու:

**circumambient** [ˌsə:kəmˈæmbiənt] **a** շրջապատող:

**circumambulate** [ˌsə:kəmˈæmbjuleɪt] **v** շրջագայել, շրջել. հարցի շուրջը պտտվել. էության մեջ չթափանցել:

**circumference** [səˈkʌmfɪrəns] **n** շրջապատ, շրջակայք. մաթ. շրջագիծ. have ~ of two metres երկու մետր շրջագիծ ունենալ:

**circumfluent** [səˈkʌmfluənt] **a** ողողող, շրջահոս:

**circumlocution** [ˌsə:kəmləˈkju:ʃn] **n** խուսափողական պատասխան. երկարաբանություն. without further ~ առանց որևէ ավելորդաբանությունների:

**circumnavigate** [ˌsə:kəmˈnævigeɪt] **v** շուրջը նավարկել. ~ the globe շուրջերկրյա նավարկություն կատարել:

**circumnavigator** [ˌsə:kəmˈnævigeɪtə] **n** շուրջերկրյա ծովագնաց:

**circumscribe** [ˈsə:kəmskraɪb] **v** սահմանա-

գծել, սահմանափակել. մաթ. շրջագծել:

**circumspect** [ˈsə:kəmspekt] **a** շրջահայաց, զգույշ:

**circumstance** [ˈsə:kəmstəns] **n** հանգամանք, դեպք, պարագա. favourable/extraordinary/unforeseen ~s բարենպաստ/արտակարգ/չնախատեսված հանգամանքներ. in/under these ~s տվյալ հանգամանքներում. under no ~s ոչ մի դեպքում. narrow ~s դժվարին կացություն, նեղ պայմաններ. relevant ~s էական հանգամանքներ. victim of ~s հանգամանքների զոհ. extenuating ~s նրբացուցիչ/մեղմացուցիչ հանգամանքներ. (նյութական վիճակ) poor/reduced ~s վատ նյութական պայմաններ. be in easy ~s լավ նյութական վիճակում լինել:

**circumstantial** [ˌsə:kəmˈstænl] **a** հանգամանալի, մանրամասն, հիմնավոր. անուղղակի. ~ evidence հրավ. անուղղակի ապացույց:

**circumvent** [ˌsə:kəmˈvent] **v** խորամանկել, խափանել (ծրագիրը). ~ a difficulty շրջանցել բարդությունը. The plans were ~ed Երանց ծրագրերը խափանվեցին:

**circus** [ˈsə:kəs] **n**, **a** կրկես. կրկեսային:

**cirrus** [ˈsɪrəs] **n** փետրածև ամպ. բար. մազմզուկ, բեղիկ. կենդ. շոշափուկ:

**CIS** [ˌsi:aiˈes] **n** Commonwealth of Independent States Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ):

**cistern** [ˈsɪstən] **n** ջրամբար, ավազան, ցիստեռն. hot/cold water ~ տաք/սառը ջրով բաք:

**citadel** [ˈsɪtədl] **n** միջնաբերդ. ամրոց, ամրություն. պատվար, հենարան:

**citation** [saɪˈteɪʃn] **n** վկայակոչում, մեջբերում. թվարկում. հրավ. դատակոչ:

**cite** [saɪt] **v** վկայակոչել, մեջ բերել. ~ a precedent հրավ. նախադեպի վրա հենվել. ~ an instance օրինակ բերել:

**citizen** [ˈsɪtɪzən] **n** քաղաքացի. քաղաքի բնակիչ. a British ~ Բրիտանիայի քաղաքացի. the ~s of London Լոնդոնի բնակիչները. naturalized ~ քաղաքացիություն ստացած անձ. senior ~ տարեց քաղաքացի/մարդ:

**citizenship** [ˈsɪtɪzənʃɪp] **n** քաղաքացիություն:

**citric** [ˈsɪtrɪk] **a** քիմ. լիմոնի. ~ acid լիմոնաթթու:

**citrus** [ˈsɪtrəs] **a** ցիտրուսային. ~ fruits ցիտրուսային բույսեր:

**city** ['siti] **n** քաղաք. ancient/modern/noisy ~ հին /ժամանակակից/ աղմկոտ քաղաք. residential section/part of the ~ քաղաքի բնակելի թաղամասերը. build/distroy a ~ կառուցել/ավերել քաղաք. a քաղաքային, մունիցիպալ. ~ transport/population քաղաքային տրանսպորտ/բնակչություն:

**civic** ['sivik] **a** քաղաքացիական, քաղաքային. ~ rights քաղաքացիական իրավունքներ:

**civil** ['sivl] **a** պետական. քաղաքացիական. քաղաքավարի. բարեկիրթ. ~ servant պետական ծառայող. high-rank ~ servant չինովնիկ. ~ service պետական ծառայություն. ~ law քաղաքացիական իրավունք. ~ code քաղաքացիական օրենսգիրք. ~ rights քաղաքացու իրավունքներ. ~ disobediens քաղաքացիական անկարգություններ. (քաղաքավարի, բարեկիրթ) It was ~ of them Դա նրանց կողմից սիրալիրություն էր:

**civilian** [sə'vilɪən] **1.** **n** քաղաքացի. քաղաքացիական զգեստով մարդ (ի տարբերություն զինվորականի). **2.** **a** քաղաքացիական. ~ population քաղաքացիական բնակչություն:

**civility** [sə'vilətɪ] **n** քաղաքավարություն. բարեկիրթություն. սիրալիրություն. dual/double ~ երկքաղաքացիություն:

**civilization** [,siv(ə)laɪ'zeɪʃn] **n** քաղաքակրթություն:

**civilize** ['sivəlaɪz] **v** քաղաքակրթել, քաղաքակիրթ դարձնել. դաստիարակել:

**civilized** ['sivəlaɪzɪd] **a** քաղաքակիրթ. քաղաքակրթված. become more ~ ավելի քաղաքակիրթ դառնալ:

**clack** [klæk] **n, v** շխկոց, թխկոց. շաղակրատանք:

**clad** [klæd] **a** հագած. ~ in white/in silk սպիտակ/մետաքս հագած:

**claim** [kleim] **n** պահանջ. պնդում. իրավունք. հավակնություն. push one's ~ պահանջ դնել. his ~ to be an artist նրա նկարիչ լինելու հավակնությունը. *իրավ.* իրավապահանջ, հայց lay ~ to իրավունքներ ներկայացնել. prosecute a ~ for damages հայց հարուցել վնասների հատուցման համար. a ~ to an inheritance հավակնություն ժառանգության նկատմամբ. make/put in a ~ against smb հայց ներկայացնել. have no legal ~ to the

property օրինական իրավունք չունենալ գույքի/ունեցվածքի նկատմամբ. joint ~ համատեղ պահանջ. realize a ~ պահանջը բավարարել. reject a ~ հայցը/պահանջը մերժել:

**claim** [kleim] **v** պահանջել, պահանջ ներկայացնել. ~ exemption from tax պահանջել հարկերից ազատել. ~ the property գույքի պահանջ ներկայացնել. Who ~s the umbrella? Սա ո՞ւմ հովանոցն է. (պնդել) He ~s to be Ann's father Նա պնդում է, որ Աննայի հայրն է. I don't ~ to know everything Ես չեմ պնդում, որ ամեն ինչ գիտեմ:

**claimant** ['kleimənt] **n** հավակնորդ. պահանջատեր. *իրավ.* հայցվոր, բողոքարկու:

**clairvoyance** [kleə'vɔɪəns] **n** խորաբափանցություն, պայծառատեսություն:

**clairvoyant** [kleə'vɔɪənt] **a** խորաբափանց, սրաթափանց:

**clamant** ['kleimənt] **a** աղմկարար. հաստատական, համառ:

**clamber** ['klæmbə] **n** մազլցել. փաթաթվել (բույսերի մասին). ~ over rocks ժայռեր մազլցել:

**clammy** ['klæmi] **a** մածուցիկ, կաչուն:

**clamorous** ['klæməɾəs] **a** աղմկալի, աղմկարար:

**clamour** ['klæmə] **n** աղմուկ, գոռոզոռ. աղմկալի բողոք. a ~ of protest բողոքի բուռն արտահայտություն:

**clamour** ['klæmə] **v** աղմկել, գոռոզալ, աղմուկով պահանջել. ~ against աղմկալի բողոքել. ~ against new taxes բողոքել նոր հարկերի դեմ. ~ down (աղմկելով) լռեցնել:

**clamp** I [klæmp] **n** *տեխ.* սեղմիչ, մամլակ:

**clamp** II [klæmp] **n** կույտ, կուտակ:

**clamp** III [klæmp] **n** ծանր քայլվածք:

**clamp** I [klæmp] **v** ամրացնել, սեղմել. The police are ~ing down Ոստիկանությունը խիստ միջոցներ է ձեռնարկում:

**clamp** II [klæmp] **v** դարսել, շարել:

**clamp** III [klæmp] **v** դոփելով քայլել:

**clan** [klæn] **n** տոհմային համայնք, կլան:

**clandestine** [klæn'destɪn] **a** գաղտնի, ծածուկ:

**clang** [klæŋ] **1.** **n** շայյուն, շառաշյուն. զնգոց.

**2.** **v** զնգալ, շառաչել. The gates ~ed shut Դարպասը շառաշյունով փակվեց:

**clangour** ['klæŋgə] **n** սուր/ծակող շառաշյուն:

**clank** [klæŋk] **n** շառաչյուն, շաչյուն (շղթա-  
ների, զենքի):

**clanship** [ˈklæŋʃɪp] **n** խմբակայնություն.  
կլանին պատկանելը/նվիրված լինելը:

**clap** [klæp] **n** ծափ. give a ~ on the shoulder  
մեջքին ձեռքով խփել. a ~ of thunder  
ամպրոպի որոտ:

**clap** [klæp] **v** ծափահարել, ծափ տալ. The  
audience ~ped the singer Չանդիսատեսները  
ծափահարեցին երգչին. He ~ped his hand to  
his forehead/over his mouth Նա ձեռքով խփեց  
ճակատին/բերանին. ~ smn in jail *խսկց.*  
մեկին բանտ օգցել. ~ eyes on smn տեսնել,  
նկատել, աչքին ընկնել:

**clap-net** [ˈklæpnet] **n** թռչունների ծու-  
ղակ/ցանց:

**clapper** [ˈklæpə] **n** զանգի լեզվակ:

**clapping** [ˈklæpɪŋ] **n** ծափահարություններ.  
առանձին ծափեր:

**claptrap** [ˈklæptɹæp] **n**, **a** ճոճճան ֆրազներ.  
*խսկց.* հիմարություն. ցուցամուկական. Don't  
talk ~ Չիմարություններ դուրս մի տա:

**claret** [ˈklærət] **n** բորդո, կլարետ (զինու  
տեսակ). բորդո գույն. tap one's ~ *խսկց.* մեկի  
քիթը ջարդել:

**clarification** [ˌklærəfiˈkeɪʃn] **n** մաքրում,  
զտում. պարզում, պարզաբանում. բացատ-  
րություն:

**clarify** [ˈklærəfaɪ] **v** մաքր(վ)ել, հստակվել,  
հստակ դառնալ (հեղուկներ). պարզել,  
պարզաբանել, բացահայտել. ~ some pro-  
blems որոշ հարցեր պարզաբանել:

**clarinet** [ˌklærɪˈnet] **n** երժշ. կլանետ:

**clarion** [ˈklærɪən] **n**, **v** շեփոր, շեփորի  
ձայնը. հնչել:

**clarity** [ˈklærəti] **n** պարզություն, հստակու-  
թյուն. թափանցիկություն:

**clash** [klæʃ] **n** բախում, ընդհարում. զենքի  
շաչյուն. a ~ with the police բախում ոստի-  
կանության հետ. a ~ of interests /personalities  
*փխք.* շահերի/խառնվածքների բախում:

**clash** [klæʃ] **v** բախվել, ընդհատվել. The two  
armies ~ed Բանակները բախվեցին. Their in-  
terests ~ed Նրանց շահերը բախվեցին. Our  
views ~ed Մեր տեսակետները տարբեր են.  
The colours ~ed Գույները իրար հետ չեն  
զմում:

**clasp** [kla:sp] **1.** **n** ճարմանդ, կոճակ. գիրկ,  
գրկելը. ձեռք սեղմելը. **2.** **v** կոճկել, ամրաց-

նել, գրկել. ~ smn in one's arms մեկին գրկել.  
~ smb's hand tightly ձեռքը ամուր սեղմել:

**clasp-knife** [ˈkla:spnaɪf] **n** ծալովի դանակ:

**class** I [kla:s] **n** դասակարգ, դաս. դաս-  
ընթաց. the middle ~ միջին դաս. the upper ~  
խոշոր բուժուագիա, արիտոկրատիա. the  
lower ~es ցածր դասերը/խավերը. the propri-  
etary ~ ունևոր դաս. landed ~es կալվածա-  
տերեր. ruling/governing ~es տիրող/իշխող  
դաս:

**class** II [kla:s] **n** դաս, խումբ. կարգ, տեսակ.  
~ of mammals կաթնասունների դաս. a hotel  
of the best ~ բարձր կարգի հյուրանոց. travel  
first ~ առաջին կարգով ճամփորդել a first ~  
ticket առաջին կարգի տոմս. attend evening  
~es երեկոյան դասընթացներ հաճախել. top  
of the ~ առաջին աշակերտը. *հմկրգ.* ~ inter-  
face չքողարկված տվյալների նկարագրու-  
թյուն և գործողություն. ~ member դասի ան-  
դամ. ~ scope գործողության տիրույթ/դաս. ~  
variable դասի փոփոխական:

**class** [kla:s] **a** դասակարգային. ~ barriers/di-  
visions դասային/դասակարգային պատնեշ-  
ներ/բաժանումներ:

**class** [kla:s] **v** դասել, դասակարգել. ~ to-  
gether /with մի շարքում դասել. ~ with the be-  
ginners սկսնակների հետ խմբավորել:

**class-conscious** [ˌkla:sˈkɒnʃəs] **a** դասա-  
կարգային ինքնագիտակցություն ունեցող.  
ինքնագիտակից:

**class-consciousness** [ˌkla:sˈkɒnʃəsnəs] **n**  
դասակարգային ինքնագիտակցություն:

**class-fellow** [ˈkla:sˌfeləʊ] **n** դասընկեր,  
դասարանակից:

**classic** [ˈklæsɪk] **n** դասական, կլասիկ (գրող,  
նկարիչ և այլն). կլասիկ բանասիրության  
մասնագետ (հունագետ, լատինիստ). ~s  
դասական լեզուներ և գրականություն. read  
~s at the university համալսարանում անտիկ  
գրականություն ուսումնասիրել/դասավան-  
դել. "War and Peace" is a ~ "Պատերազմ և  
խաղաղություն" վեպը դասական երկ է:

**classical** [ˈklæsɪkəl] **a** դասական, օրինակելի:

**classicism** [ˈklæsɪsɪzəm] **n** կլասիցիզմ, դա-  
սականություն:

**classification** [ˌklæsɪfiˈkeɪʃn] **n** դասակար-  
գում, կլասիֆիկացիա. job ~ աշխատանքի  
բաշխում:

**classify** [ˈklæsɪfaɪ] **v** դասակարգել. by sub-

ject/date/alphabetical order դասակարգել ըստ թեմայի/ժամանակամիջոցի/այբբենական կարգի:

**classified** [ˈklæsɪfaɪd] a դասակարգված. ~ documents գաղտնի փաստաթղթեր:

**classless** [ˈklaːsləs] a անդասակարգ:

**class-list** [ˈklaːslɪst] n քննական տեղեկագիր/ցուցակ:

**classmate** [ˈklaːsmeɪt] n դասընկեր, դասարանակից:

**classroom** [ˈklaːsruːm] n դասասենյակ, դասարան:

**classy** [ˈklaːsi] a *խսկց.* գերազանց, դասական:

**clatter** [ˈklætə] n թխկթխկոց, թնդյուն. the ~ of machinery մեխանիզմների թնդյուն. a ~ of dishes ամանների չխկչխկոց. (դոփյուն) ~ of hoofs/wheels սմբակների դոփյուն. անիվների թխկթխկոց:

**clatter** [ˈklætə] v ~ թխկթխկացնել, չխկչխկացնել, թնդալ. ~ along դոփել:

**clause** [klaʊz] n *քեր.* նախադասություն. main, principle/subordinate ~զլխավոր/երկրորդական նախադասություն. կետ, հոդված (պայմանագրի) ~ one, paragraph four հոդված 1, պարագրաֆ 4. *իրավ.* հոդված, կետ, դրույթ. penalty ~ տույժ նախատեսող հոդված. transition ~s անցումային դրույթներ:

**clavichord** [ˈklævɪkɔːd] n *երժշ.* կլավիկորդ (հին տեսակի դաշնամուր):

**claw** [klaʊ] 1. n ճանկ, մագիլ, ճիրան. cut one's ~s *փխբ.* վնասագերծել. show one's ~s *փխբ.* ճիրանները ցույց տալ. 2. v ճանկռտել, չանգռել, քերծել. *խսկց.* կոկորդը թռչել:

**clay** [kleɪ] 1. n կավային, plastic ~ քանդակելու կավ. 2. a կավային, կավե (ամանեղեն):

**clayey** [ˈkleɪi] a կավային, կավե:

**clean** [kliːn] a մաքուր. a ~ dress/sheets մաքուր շոր/սպիտակեղեն/անկողնու/. a ~ copy մաքրագիր. a ~ bill of health *փխբ.* առողջության, վկայական. keep one's house ~ տունը մաքուր պահել. a ~ conscious մաքուր խիղճ. ~ record/driving licence *իրավ.* դատվածություն չունենալ. առանց տույժի վարորդական իրավունք. (լավ արտահայտված) make a ~ cut լրիվ/մաքուր կտրել. make a ~ with one's past անցյալի հետ կապերը լրիվ կտրել/խզել:

**clean** [kliːn] adv լրիվ, բոլորովին. ~ forget լրիվ/բոլորովին մոռանալ. get ~ away լրիվ անհետանալ. be ~ out of բոլորովին չունենալ. come ~ with անկեղծորեն ասել ամեն ինչ:

**clean** [kliːn] v մաքրել, սրբել, հավաքել. ~ shoes/vegetables/one's teeth մաքրել կոշիկները/բանջարեղեն/ատամները. ~ a room սենյակը հավաքել. ~ a window/the floor պատուհանը/հատակը լվանալ. ~ up կարգի բերել. ~ up the room սենյակը կարգի բերել. ~ up oneself իրեն կարգի բերել. ~ up after smb մեկի հետևից հավաքել. ~ out *փխբ.* թալանել. ~ out a cupboard բուֆետը լվանալ. ~ out of whisky ամբողջ վիսկին խմել. *թղթխ.* be ~ed out մինչև վերջին լուծան տարվել:

**clean-cut** [ˌkliːnˈkʌt] a սուր արտահայտված (դիմագծեր և այլն):

**cleaner** [ˈkliːnə] n հավաքարար(ուհի). vacuum ~ փոշեկուլ. the ~'s shop քիմ-մաքրում:

**clean-handed** [ˌkliːnˈhændɪd] a ազնիվ, ամենել, արդար:

**cleaning** [ˈkliːnɪŋ] n մաքրում, հավաքում, կարգի բերում. dry ~ քիմ-մաքրում:

**cleanliness** [ˈklenlɪnəs] n մաքրություն, մաքրասիրություն:

**cleanse** [klenz] v մաքրել, ախտահանել:

**clean-shaven** [ˌkliːnˈʃeɪvən] a մաքուր սափրված, առանց բեղ ու միրուքի:

**clear** [kliə] a պարզ, պայծառ, ջինջ, մաքուր. ~ day/mind պայծառ օր/միտք. a ~ outline պարզ/հստակ ուրվագիծ. a ~ sky մաքուր/ջինջ երկինք. a ~ water/skin/conscience/air մաքուր ջուր/մաշկ/խիղճ/օդ. (թափանցիկ) ~ ice/soup թափանցիկ սառույց. արգանակ, բուլյոն. ~ handwriting դյուրընթեռնելի ձեռագիր. (պարզ, պարզորոշ) make it ~ պարզորոշ դարձնել. I'm not ~ on the question Այս հարցը ինձ պարզ չէ. as ~ as crystal/day օրվա պես պարզ է. Are you ~ that...? Դուք հաստատ պատկերացնո՞ւմ եք, որ... (ազատ) The road/ coast is ~ ճանապարհն ազատ է. ~ of debts պարտքերից ազատ (վճարված). need three days ~ լրիվ 3 օրվա կարիք ունենալ. the ~ profit մաքուր շահույթ. be in the ~ կասկածից/վտանգից դուրս լինել. stand ~ նահանջել:

**clear** [kliə] adv պարզ. ~ as Monday լույսի

պես պարզ է. hear smn ~ and loud մեկին հստակորեն լսել. get away ~ ազատվել, պրծնել. keep ~ of հեռու մնալ. Keep ~ of the gates! Ջգո՛ւյշ, դռները փակվում են. Keep ~ of pickpockets! Ջգուշացի՛ր գրպանահատներին. jump ~ of the car հասցնել խուսափել մոտեցող ավտոմեքենայից. come off ~ ջրից չոր դուրս գալ:

**clear** [kliə] v մաքրել, հեռացնել. ~ a room/the yard/the table սենյակը/բակը / մաքրել/հավաքել. սեղանը ~ a space for տեղ ազատել. ~ the court of people դատարանի դահլիճը մարդկանցից ազատել. ~ the stock պաշարները վաճառել. ~ the air *փխք*. լարվածությունը վերացնել. (վրայով անցնել) The horse ~ed the fence Ձին թռավ ցանկապատի վրայով. ~ expenses արդարացնել ծախսերը. ~ the luggage/a ship at /with the customs իրերը/նավը մաքսատան ստուգումն անցնել. ~ the plan հաստատել ծրագիրը. ~ oneself of a charge *իրավ*. իրենից մեղադրանքը հանել. The sky is ~ing երկինքը պարզվում է. ~ away հավաքել ~ away the dishes/leaves/rubble ամանեղենը/տերևները/աղբը հավաքել. C~ off! Հեռացի՛ր He ~ed off quickly Նա արագ անհետացավ. ~ out թողնել, հեռանալ (ընտանիքից). I'm ~ing out ես հեռանում եմ. ~ up պարզել ~ up a misunderstanding/a question/a mystery թյուրիմացությունը/հարցը/առեղծվածը պարզել. It ~ed up եղանակը պարզվեց:

**clearance** [ˈkliərəns] n մաքրում, հարթում. անտառահատում. իջեցված գներով վաճառք. security ~ ստուգում. certificate of customs ~ մաքսատան վկայական. a ~ sale իսպառ վաճառք:

**clear-cut** [ˌkliəˈkʌt] a պարզորոշ, հստակ. որոշակի: a ~ distinction հստակ տարբերություն/տարբերակում. ~ features կանոնավոր դիմագծեր:

**clearing** [ˈkliəriŋ] n բացատ. գետի սառցահալք:

**clearly** [ˈkliəli] adv պարզորեն, որոշակիորեն, հստակորեն. The star is ~ seen Աստղը հստակորեն երևում է:

**clear-sighted** [ˌkliəˈsɑɪtɪd] a խորաթափանց, կանխատես:

**clearway** [ˈkliəwei] n ավտոմայրուղի, որտեղ մեքենաների կանգառը արգելված է:

**cleavage** [ˈkli:vɪdʒ] n ճեղքում. *փխք*. պառակտում:

**cleave** I [kli:v] v ճեղք(վ)ել, կտր(վ)ել:

**cleave** II [kli:v] v հավատարիմ մնալ:

**clef** [klef] n *երժշ*. բանալի. alto/bas/treble ~ ալտի/բասի/ջութակի բանալի:

**cleft** [kleft] n ճեղք, ճեղքվածք. կիրճ, վիհ:

**clef** [klef] n բռռ. ծիպակ:

**clemency** [ˈklemənsi] n մեղմություն, գթասրտություն, ներողամտություն. petition of ~ գթասրտության խնդրանք:

**clement** [ˈklemənt] a գթասիրտ, մեղմ:

**clench** [klentʃ] n սեղմում (ատամներ, բռունցք):

**clench** [klentʃ] v սեղմել. *տեխ*. գամել. ~ one's teeth/fists ատամները/բռունցքը սեղմել. with ~ed fists բռունցքները սեղմած:

**clergy** [ˈkleɪdʒi] n հոգևորականություն:

**clergyman** [ˈkleɪdʒimən] n քահանա, հոգևորական:

**clerical** [ˈklerɪkl] n կղերական, հոգևոր. գրասենյակային. ~ work վարչական/գրասենյակային աշխատանք. due to a ~ error վրիպակ գրասխալի հետևանքով/պատճառով:

**clerk** [kleɪ:k] n գրասենյակային ծառայող, կլերկ. քարտուղար. correspondence ~ գրագիր. bank ~ բանկի ծառայող/աշխատող. desk ~ հերթապահ ադմինիստրատոր. court ~ դատարանի քարտուղար. principal ~ գլխավոր գործավար:

**clever** [ˈklevə] a խելոք, խելացի. ~ plan/answer/speech խելացի ծրագիր/պատասխան/ճառ. (շնորհալի) a ~ workman շնորհալի աշխատող. He's ~ with his hands Նա հմուտ ձեռքեր ունի (ճարպիկ, ճարտար) a ~ conjurer/trick ճարպիկ աճապարար/ֆոկլուս. a ~ doctor գիտակ բժիշկ. be ~ at որևէ բանում ընդունակ լինել He is ~ at maths Նա ընդունակ է մաթեմատիկայից:

**cleverness** [ˈklevənəs] n շնորհալիություն, ճարպկություն, հմտություն:

**clew** [klu:] n գաղտնիքի բանալի. ուղեցույց թել:

**cliche** [ˈkli:ʃeɪ] n *տպգր*. կլիշե. *փխք*. մաշված/շաբլոն դարձվածք:

**click** [klik] n չխկոց. *տեխ*. մղկակ, շնիկ. *հմկրգ*. հարված, մատնազարկ:

**click** [klik] v չխկացնել, թրխկացնել. *հմկրգ*.

քլիք անել, մկնիկի ստեղծ արագ խփել և բաց թողնել. ~ the shutter of the camera  
ֆոտոապարատի փականակը շխկացնել. ~  
one's tongue լեզվով շպպացնել. They ~ed at  
once Անմիջապես ընդհանուր լեզու գտան:

**client** ['klaɪənt] n հաճախորդ, գնորդ. պատվիրատու. կլիենտ.

**clientele** [,kli:ənt'el] n մշտական հաճախորդներ/պատվիրատուներ/գնորդներ:

**cliff** [klɪf] n ժայռ, քարափ:

**cliffsman** ['klɪfsmən] n ալպինիստ:

**climate** ['klaɪmət] n կլիմա. a ~ of opinions  
հասարակական կարծիք. international ~  
միջազգային դրուբյուն:

**climatic** [klaɪ'mætɪk] a կլիմայական:

**climax** ['klaɪmæks] n գագաթնակետ, առավելագույն լարվածություն. reach a ~ հասնել  
գագաթնակետին. the ~ of the battle ճակատամարտի թեժ պահը. the ~ of the programme ծրագրի գագաթնակետը/մեխը:

**climb** [klaɪm] n վերելք, դարիվեր. steep ~  
զանաթափ վերելք. stiff ~ ուղղաձիգ/դժվար  
վերելք. going on a ~ սարը բարձրանալ:

**climb** [klaɪm] v մագլցել, բարձրանալ. ~ a  
tree/ladder ծառ/աստիճաններ մագլցել. ~ a  
mountain սարը բարձրանալ. ~ a rope պարանոկ/ճուպանոկ բարձրանալ. ~ through a window/into a car պատուհանից դուրս սողալ.  
խցկվել մեքենայի մեջ. փաթաթվել, բաղեղվել (բույսի մասին) Ivy is ~ing up the wall Բաղեղը բարձրանում է պատի վրայով. ~ down  
*փխք*. զիջել:

**climber** ['klaɪmə] n ալպինիստ. փաթաթվող  
բույս. *փխք*. կարիերիստ:

**climbing** ['klaɪmɪŋ] n ալպինիզմ. I like ~ ես  
սիրում եմ սարեր մագլցել:

**clinch** [klɪntʃ] v պայմանավորվել. ~ a bargain  
գործարք կնքել. ~ matters/an argument վերջնականապես լուծել հարցը:

**clincher** ['klɪntʃə] n առարկություն չվերցնող  
փաստարկ:

**cling** [klɪŋ] v կպչել, կառչել. փաթաթվել. a  
~ing dress իրանը գրկող/կիպ շոր. ~ to the  
hope *փխք*. հույսից կառչել:

**clingy** ['klɪŋi] a կպչուն, կառչուն:

**clinic** ['klnɪk] n կլինիկա, պոլիկլինիկա. ma-  
ternity ~ կանացի կոնսուլտացիա:

**clinical** ['klnɪkl] a կլինիկական. ~ record/his-  
tory հիվանդության պատմություն. ~ ther-

mometer բժշկական ջերմաչափ:

**clink** I [klnɪk] n զնգոց (ապակու, մետաղի):

**clink** II [klnɪk] n բանտ. be in ~ բանտում  
նստած լինել:

**clink** [klnɪk] v զնգալ, զնգացնել. ~ glasses  
բաժակներն իրար խփել/զնգացնել. The  
keys ~ed in the pocket Բանալիները զնգում  
էին գրպանում:

**clip** I [klɪp] n խուզում. խուզած բուրդ. *խսկց*.  
ուժեղ հարված:

**clip** II [klɪp] n սեղմիչ, մամլակ. paper ~ գրա-  
սենյակային ամրակ. *հնկրգ*. ~ package կա-  
ռուցված ծրագրերի փաթեթ:

**clip** [klɪp] v խուզել. ~ a sheep/a poodle/one's  
hair/one's nails ոչխար/պուդել/մազերը խու-  
զել. եղունգները կտրել. ~ on the ear ական-  
ջին հասցնել. ~ a ticket տոմսը դակել. ~ an  
article լրագրից հոդված կտրել:

**clipboard** ['klɪpbɔ:d] 1. n փոխանակման  
բուֆեր. 2. v ամրացնել, սեղմել, պնդացնել.  
~ papers together թղթերն ամրացնել:

**clippers** ['klɪpəz] n խուզելու մեքենա.  
այգեգործի մկրատ:

**clippings** ['klɪpɪŋz] n pl լրագրից կտրած  
հոդված. քաղվածք:

**clique** [kli:k] n կլիկ, խառնախումբ, հան-  
ցախումբ:

**cloak** [kləʊk] 1. n վերարկու, թիկնոց. ծած-  
կոց. պատրվակ. under ~ of պատրվակով. 2.  
v վրան գցել. ծածկել, թաքցնել:

**cloak-room** ['kləʊkru:m] n հանդերձարան.  
պահասենյակ:

**clock** I [klɒk] n ժամացույց (պատի/, սե-  
ղանի). alarm ~ զարթուցիչ. mantle ~ բու-  
խարու ժամացույց. grandfather's ~ կանգուն  
ժամացույց. set a ~ ժամացույցն ուղղել.  
wind/repair a ~ ժամացույցը լարել/վերա-  
նորոգել. ~ face ժամացույցի թվատախտակ:

**clock** II [klɒk] n սլաք գուլպայի վրա:

**clock** [klɒk] v ժամանակը նշել/ցույց տալ. ~  
in/out գալ աշխատանքի, գնալ աշխատան-  
քից. Don't forget to ~ in/out Չմոռանաք նշել,  
թե երբ եք գալիս և երբ եք գնում:

**clock channel** [klɒk 'tʃænl] սինխրոնիզա-  
ցիայի կանալ. ~ interrupt ընդհատում ըստ  
թայմերի. ~ system սինխրոնիզացիայի հա-  
մակարգ:

**clockwise** ['klɒkwaɪz] adv ժամացույցի սլա-  
քի ուղղությամբ:

**clockwork** ['klɒkwə:k] n ժամացույցի մեխանիզմ. Everything went like ~ *փխբ.* Ամեն ինչ հարթ/հոյակապ գնաց. ~ toy լարովի խաղալիք:

**clod** [klɒd] n հողի գունդ. *փխբ.* բթամիտ մարդ:

**clog** [klɒg] n կապանք. արգելք, խոչընդոտ:

**clog** [klɒg] v փակվել, խցանվել. The pipes are ~ged *խողովակները խցանվել են.* My memory is ~ged with useless information *Հիշողությունս խցանվել է անօգուտ տեղեկատվությամբ:*

**cloggy** ['klɒgi] a գունդ-գունդ. կպչուն, մածուցիկ:

**clogs** [klɒgz] n փայտե ներբանով կոշիկներ:

**cloister** ['kloɪstə] n վանք. *ճրտ.* կամարակապ սրահ:

**cloistral** ['kloɪstrl] a վանքի, վանական. միանձնական, մենակյաց:

**clone** [kləʊn] n կլոն, նմանակ:

**close** I [kləʊs] n վերջ, ավարտ, եզրափակում. at the ~ of season *սեզոնի վերջում.* bring to a ~ *ավարտել, մինչև վերջ հասցնել.* at/in the ~ *վերջում.* draw to one's ~ *ավարտին մոտենալ:*

**close** II [kləʊz] n ցանկապատած տարածություն. դպրոցի հրապարակ:

**close** [kləʊs] a մոտիկ. փակ, սահմանափակ. ~ friend *մոտիկ ընկեր.* ~ to the school *դպրոցի մոտ.* ~ resemblance *մեծ նմանություն.* *հմկրգ.* ~ approximation *լավ մոտարկում.* ~ array *փակ բազմություն.* ~ set *փակ բազմություն.* have a ~ shave *փխբ.* մահից մազապուրծ լինել. (սերտ, կիպ. ) a ~ contact *սերտ կապ.* (նեղվածք) live at ~ quarters *նեղվածքում ապրել.* (խիտ) a ~ weave/texture *խիտ գործած կտոր/գործվածք.* ~ print *տպգր.* խիտ շարվածք. a ~ election *ծայների հավասար քանակ.* ~ formation *ռզմ.* փակ շարք. ~ translation *ճիշտ/ստույգ թարգմանություն.* be ~ ժլատ լինել. ~ correlation *մոտ հարաբերակցություն.* ~ hearing *փակ դատավարություն.* ~ scrutiny *մանրակրկիտ զննում.* ~ agreement *սահմանափակ համաձայնություն.* ~ confinement *խիստ կալանք.* be ~ to tears *համարյա լաց լինել.* with ~ attention *մեծ/հատուկ ուշադրությամբ.* on ~ examination *ավելի մոտիկից ուսումնասիրելիս.* a ~ analysis *մանրազնի մեթոդներով:*

**close** [kləʊs] adv մոտ, ոչ հեռու. sit ~ to fire *կրակին մոտ նստել.* ~ at hand *շատ մոտ.* follow ~ *կրկակրիս հետևել.* come ~ *մոտենալ.* keep ~ to the text *տեքստից չհեռանալ.* (համարյա) It's ~ on 5 o'clock *Համարյա ժ. 5-ն է.* He must be ~ on 40 *Նա պետք է որ 40-ին մոտ լինի:*

**close** [kləʊz] v փակել, ծածկել. ~ the door/a suitcase *դուռը/ճամպրուկը փակել.* ~ the curtains *վարագույրներն իջեցնել/քաշել.* "Road ~d" *ճանապարհը փակ է.* (ամփոփել, ավարտել) ~ a deal/a speech *գործարք կնքել, ճառն ամփոփել.* (փակվել) The shops ~ at 6 *խանութները փակվում են ժ. 6-ին.* The meeting will ~ at 7 *Ժողովը կավարտվի ժ. 7-ին.* ~ down *փակել, լուծարքի ենթարկել.* We are ~ing down *Մենք փակվում ենք.* ~ in *կարճանալ, մոտենալ* The days are ~ing in *Օրերը կարճանում են.* ~ up *փակվել.* The house has been ~d up all winter *Ամբողջ ձմեռ տունը փակ էր.* The wound ~d up *Վերքը փակվեց.* ~ with the offer *առաջարկն ընդունել.* The boxer ~d with his opponent *Բռնցքամարտիկը պայքարի մեջ մտավ:*

**closed** [kləʊzd] a փակ, նեղ, . սահմանափակ. behind ~ doors *փակ դռների ետևում.* a ~ society *նեղ շրջանակներ.* ~ mind *նեղ մտահորիզոն.* ~ circuit *էլ.* փակ շղթա. ~ call *մրգ.* մրցավարի վիճաբանական որոշում. *հմկրգ.* closed routine *փակ ծրագիր.* ~ system *փակ համակարգ:*

**close-fisted** [,kləʊs'fɪstɪd] a ժլատ, ձեռնփակ:

**close-fitting** [,kləʊs'fɪtɪŋ] a կիպ նստած զգեստ. լավ հարմարեցված.

**closely** ['kləʊsli] adv մանրամասն, ուշադրությամբ. մոտիկ, սերտորեն. look at smb ~ *ուշադրությամբ նայել.* question smb ~ *մանրամասն հարցաքննել.* work ~ with smb *սերտորեն համագործակցել.* a ~ written page *խիտ գրված էջ:*

**closeness** ['kləʊsnəs] n մոտիկություն. խտություն. տոթ, ծանր օդ:

**closet** ['klɒzɪt] n պատի պահարան. առանձնասենյակ. water ~ (WC) *զուգարան:*

**close-up** ['kləʊsʌp] n (կինո). խոշոր պլան. take a ~ *խոշոր պլանով նկարել.* I want to take a ~ *Ուզում եմ մոտիկից նկարել:*

**closing** ['kləʊzɪŋ] n (*նաև` closing time*) փա-

կում, փակման ժամ. It's early ~ today Այսօր խանութները շուտ են փակվում:

**closing** ['kloʊzɪŋ] a եզրափակիչ, վերջին. ~ remarks/address եզրափակիչ բառեր/ելույթ. ~ date for applications դիմումներ տալու վերջին ժամկետը:

**closure** ['kloʊzə] n փակում. (պառլամենտում) վիճաբանությունների դադարում:

**clot** [klot] n զնդիկ. քանձրուկ. *բժշկ.* խիցք, քրոմբ. a ~ of butter կարագի զունդ/կտոր. a blood ~ արյան քանձրուք. You ~ ! *խսկց.* Բթամիտ:

**clot** [klot] v քանձրանալ. մակարդվել (արյունը):

**cloth** [kloth] n գործվածք, մահուդ. ~ for the suit կտոր կոստյումի համար. table ~ սփռոց. tea ~ ամանեղենի սրբիչ. floor ~ հատակ մաքրելու շոր. dish ~ լաթ. the ~ *փխբ.* հոգևորականությունը:

**clothe** ['kloʊð] v հագցնել (*նաև՝ փխբ.*). ~ oneself հագնվել. ~ one's family ընտանիքին հագցնել. ~d in black սև հագած. ~d with authority *փխբ.* իշխանությամբ օժտված:

**clothes** [kloʊðz] n pl հագուստ, զգեստ. change one's ~ հագուստը փոխել. plain ~ քաղաքացիական զգեստ. store ~ պատրաստի հագուստ. fashionable/old-fashioned/loud/simple ~ մոդայիկ/հնաոճ/աղաղակող, աչք ծակող/պարզ հագուստ. (սպիտակեղեն) ~ basket սպիտակեղենի զամբյուղ. ~ line վազքի պարան. ~ peg/pin վազքի սեղմիչ:

**clothier** ['kloʊðɪə] n մահուդագործ, մահուդավաճառ:

**clothing** ['kloʊðɪŋ] n հագուստ, զգեստ. article of ~ հագուստի առարկա. ready-made ~ պատրաստի հագուստ. ~ shop հագուստեղենի խանութ. ~ trade հագուստեղենի առևտուր:

**cloud** [klaʊd] n ամպ. թուխա. ~s of smoke ծխի ամպեր/քուլաներ. a ~ of mosquitoes *փխբ.* մոծակների բազմություն/ամպ. be under a ~ *փխբ.* կասկածի տակ լինել. have one's head in the ~s *փխբ.* ամպերում սավառնել, անրջել. Every ~ has a silver lining Չկա չարիք առանց բարիքի. a ~ on one's brow մռայլ/խոտոռված տեսք:

**cloud** [klaʊd] v ամպերով ծածկվել. The sky has ~ed over Երկինքը ամպերով պատվեց. Her face/eyes ~ed over Դեմքը մռայլվեց,

Աչքերը մշուշապատվեցին:

**cloudberry** ['klaʊdbəri] n *բուս.* ճահճամոշ:

**cloudburst** ['klaʊdbɜːst] n տեղատարափ/ուժեղ անձրև:

**cloud-capped** [ˌklaʊd'kæpt] a ամպերով ծածկված:

**cloud-drift** ['klaʊddrɪft] n ամպերի շարժում, լողացող ամպեր:

**cloudiness** ['klaʊdɪnəs] n ամպամածություն:

**cloud-kissing** ['klaʊd,kɪsɪŋ] a երկնաբերծ, երկնակամարին հասնող:

**cloud-land** ['klaʊdlænd] n հեքիաթային աշխարհ:

**cloudless** ['klaʊdləs] a անամպ:

**cloudlet** ['klaʊdlət] n ամպիկ, փոքր ամպ:

**cloudy** ['klaʊdi] a ամպամած. մառախլապատ. պղտոր (հեղուկ):

**clough** [kloʊf] n ձոր, լեռների գոգ. հովիտ:

**clout** [klaʊt] n հյուսվածքի կտոր, լաթ. *տեխ.* տափօղակ:

**clove** I [kloʊv] n մեխակ (համեմունք). oil of ~s մեխակի յուղ:

**clove** II [kloʊv] n սխտորի պճեղ:

**clover** ['kloʊvə] n երեքնուկ. in ~ պերճանքի/առատության մեջ:

**clown** [klaʊn] n, v խեղկատակ, ծաղրածու, միմոս. խեղկատակություն անել:

**clownish** ['klaʊniʃ] a խեղկատակային, ծաղրածուական:

**cloy** [kloɪ] n հագեցնել:

**club** I [klʌb] n ակումբ. youth ~ երիտասարդական ակումբ. tennis ~ թենիսի ակումբ:

**club** II [klʌb] 1. n մահակ. *մրգ.* մական. *թղթ/ս.* խաչի խաղաթուղթ. the queen of ~s խաչի թագուհի. golf ~ գոլֆի մական 2. v միավորվել. They ~bed together Նրանք միացան/ միավորվեցին:

**club-footed** [ˌklʌb'fʊtɪd] a ծռաթաթ, խեղված թաթով:

**clubman** ['klʌbmən], clubwoman n ակումբի անդամ. *փխբ.* աշխարհիկ/կենսասեր մարդ:

**cluck** [klʌk] n, v կչկչոց, կոթոց. կչկչալ, կոթալ:

**clue** [kluː] n բանալի (գաղտնիքի). ~ to a puzzle ռեբուսի բանալի. The detective found a ~ խուզարկում գտավ գաղտնիքի լուծումը. have no ~ *խսկց.* ոչ մի գաղափար չունենալ. He hasn't a ~ Հիմարի մեկն է:



**clump** [klʌmp] n խումբ. ~ of trees ծառերի խումբ. Roses grow in ~s Վարդերը թփերով են աճում:

**clumsy** ['klʌmzi] a անշնորհք, անճոռնի. անտաշ, անտակտ. ~ man/gesture/excuse անշնորհք մարդ, կոպիտ շարժում/անհաջող պատրվակ:

**cluster** ['klʌstə] n ողկույզ, ճուրթ. փունջ. խումբ. a ~ of grapes խաղողի ողկույզ. a ~ of trees ծառերի խումբ. ~ of people մարդկանց խումբ/բազմություն. *հմկրգ.* ~ analyses կլաստերային վերլուծություն. ~ architecture կլաստերային ճարտարապետություն. ~ of errors սխալների փաթեթ. ~ test խմբային տեստավորում:

**cluster** ['klʌstə] v խմնվել, խմբվել. փնջերով աճել. The children ~ed round her երեխաները խմբվել էին նրա շուրջը:

**clutch** I [klʌtʃ] n ճանկեր. ճանկում. fall into/get out of ~es ճանկերն ընկնել, ճանկերից ազատվել/դուրս պրծնել. *տեխ.* սեղմիչ, մամլակ. կցորդիչ. let in/out the ~ կցորդիչը միացնել/անջատել:

**clutch** II [klʌtʃ] n թխսի տակի ձվեր/ձագեր:  
**clutch** [klʌtʃ] v ճանկել, բռնել. ամուր սեղմել. The child ~ed my hand երեխան ճանկեց իմ ձեռքը. A drowning man will ~ at a straw խեղդվողը փրփուրներից/ծեղիկից էլ է ձեռք զգում:

**clutter** ['klʌtə] n, v իրարանցում, խուճապ, անկարգ վիճակ. իրարանցում ստեղծել, թափթփել. The table was ~ed with papers Սեղանի վրա խառնիխուռն թղթեր էին թափված:

**coach** [kəʊtʃ] n ծածկակառք. *երկթ.* վագոն. տուրիստական ավտոբուս. դասուսույց. *մրգ.* մարզիչ.:

**coach** [kəʊtʃ] v սովորեցնել, վարժեցնել. մարզել. ~ for an exam քննություններին պատրաստել. ~ smb *թատր.* դերը փորձել:

**coachman** ['kəʊtʃmən] n կառապան:

**coach-up** ['kəʊtʃʌp] v վարժեցնել, սովորեցնել:

**coagulate** [kəʊ'ægjuleit] v մակարդվել. *քիմ.* կոագուլյացիայի ենթարկվել:

**coagulation** [kəʊ,ægjʊ'leɪʃn] n մակարդում. կոագուլյացիա:

**coal** [kəʊl] n ածուխ, քարածուխ. blind/brown/coking ~ անտրացիտ/ գորշ/կոքս ածուխ. get

~ ածուխ արդյունահանել. ~ industry ածխարդյունաբերություն; blow the ~ կրակը բորբոքել. ~ bed ածխաշերտ. ~ cellar/dust/ scuttle ածխի նկուղ/փոշի/դուլլ. have/call smn over the ~s կշտամբել:

**coal-black** ['kəʊl,bɪæk] a ածխի մման սև:

**coaler** ['kəʊlə] n ածխանավ:

**coalesce** [,kəʊsə'les] v սերտաճել, միանալ:

**coalescence** [,kəʊsə'lesns] n սերտաճում, միակցում:

**coal-field** ['kəʊlfi:ld] n ածխավազան:

**coal-gas** ['kəʊlgæs] n ածխագազ:

**coaling** ['kəʊliŋ] n ածխի բեռնում:

**coalition** [,kəʊsə'liʃn] n միասնություն, կալիցիա:

**coalman** ['kəʊlmæn] n ածխահատ (*նաև* coalminer):

**coal-mine** ['kəʊlmɪn] n քարածխահանք (*նաև* coalpit):

**coal-tar** ['kəʊltɑ:] n կուպր, ձյութ, գուղրոն:

**coarse** [kɔ:s] a կոշտ, կոպիտ. ~ food/features/thread կոշտ/անսնունդ կերակուր. կոպիտ/խոշոր դիմագծեր. խամ թել. ~ person/joke կոպիտ մարդ/կատակ. *փխբ* անպատշաճ, անքաղաքավարի, գռեհիկ. a ~ story/gesture/language անպատշաճ անեղոտ. կոպիտ /անքաղաքավարի շարժում. անպատշաճ արտահայտություն:

**coarsen** ['kɔ:sn] v կոպտանալ, կոշտանալ.

**coarseness** ['kɔ:s(ə)nəs] n կոպտություն, գռեհկություն, անպատշաճություն:

**coast** [kəʊst] n ափ, ծովափ. on the ~ ծովափին. the Black Sea ~ Սև ծովի ափ. rocky/flat ~ ժայռոտ/տափակ, հարթ ափ. along the ~ ափի երկայնքով. The ~ is clear *փխբ.* ճանապարհն ազատ է:

**coast** [kəʊst] v ափի երկայնքով լողալ/նավարկել:

**coastal** ['kəʊstl] a առափնյա, ափամերձ. ~ waters առափնյա ջրեր. ~ defense առափնյա պաշտպանություն. ~ shipping մերձափնյա նավագնացություն:

**coaster** ['kəʊstə] n եզրագնաց նավ:

**coast-guard** ['kəʊstgɑ:d] n առափնյա պահակախումբ, *նաև* խմբի անդամ:

**coastline** ['kəʊstləɪn] n ջրափնյա գիծ:

**coat** [kəʊt] n (*նաև* overcoat) վերարկու, պիջակ, թիկնոց. light/winter/ready made ~ թեթև/ձմեռային/պատրաստի վերարկու. ship-skin ~ ոչխարի մորթուց բաճկոն, ոչխարի

**քուրք**. hooded ~ գլխանոցով թիկնոց. tail ~ ֆրակ. (վերնագգեստ) ~ and skirt կանացի կոստյում. (մազ, մորթի, բուրդ) (շերտ) a ~ of paint/dust ներկի/փոշու շերտ. a ~ of snow ձյան ծածկ. ~ hanger կախիչ. wear the king's/queen's ~ *փխբ.* ծառայել Անգլիական բանակում ~ of arms զինանշան. Cut your ~ according to your cloth Ուոքերդ վերմակիդ չափով մեկնիր:

**coatee** ['kəuti:] n կիսավերարկու, բաճկոն (կուրտկա):

**coating** ['kəutiŋ] n շերտ (ներկի և այլն) վերարկուի կտոր:

**co-author** [,kəu'ɔ:tə] n համահեղինակ, հեղինակակից:

**coax** [kəuks] v հորդորել, համոզել. ~ away գայթակղել. ~ smn do smth հորդորելով համոզել մի բան անել:

**coaxing** ['kəuksɪŋ] n հորդորանք, սիրաշահում. She just needs ~ Նրան պարզապես պետք է համոզել:

**cobalt** ['kəʊbɔ:t] n *քիմ.* կոբալտ. կոբալտի կապույտ ներկ:

**cobble** ['kɒbəl] n (*նաև՝* cobblestone) գետաքար, սալաքար. ~s սալարկ:

**cobble** I ['kɒbəl] v կոշիկներ կարկատել. փողոցները սալարկել. a ~d street սալարկած փողոց:

**cobbler** II ['kɒblə] n հնակարկատ, փիցաչի:

**cobbler** ['kɒblə] n զովացուցիչ խմիչք (գինի, շաքար և կիտրոն):

**cobby** ['kɒbi] a թիկնավետ, թիկնեղ, ամրակազմ:

**coble** ['kəʊbl] n ձկնորսական նավակ:

**cobra** ['kəʊbrə] n *կենդ.* կորբա:

**cobweb** ['kɒbweb] սարդոստայն. *փխբ.* թակարդ. նուրբ գործվածք, շղարշ:

**cobwebby** ['kɒb,webi] a ոստայնով պատած:

**cocaine** [kəu'keɪn] n կոկաին:

**cock** [kɒk] n աքաղաղ. *ավ.* օդաչուի նստատեղ. the ~ bird արու թռչուն. live like fighting ~s անհոգ/ուրախ ապրել. ~ of the wood մայրահավ, խլահավ. (ծորակ) water/stop ~ ծորակ. hay ~ դեզ. (հրացանի շնիկ) at full ~ հրահանը լրիվ վեր քաշած:

**cock** [kɒk] v թիթը ցցել, երևակայել. ~ a gun շնիկը ձգել. ~ one's ears ականջները լարել:

**cockade** [kɒ'keɪd] n կոկարդ, գդակամիշ:

**cock-a-doodle-doo** [ˌkɒkədu:dlɪ'du:] n ծուղրուղու:

**cock-a-hoop** [ˌkɒkə'hu:p] a ինքնահավան:

**cockatoo** [ˌkɒkə'tu:] n *կենդ.* կակադու:

**cockboat** ['kɒkbəʊt] n փոքր նավակ:

**cocker** ['kɒkə] v երեխային փայփայել/երես տալ:

**cockerow** ['kɒkkrəʊ] n աքլորականջ. get up at ~ աքլորների հետ արթնանալ:

**cockerel** ['kɒkrəl] n աքլորիկ:

**cock-eyed** [ˌkɒk'aɪd] a շիլ. հարբած:

**cock-fight(ing)** ['kɒk,faɪt(iŋ)] n աքլորակռիվ:

**cockle** ['kɒkl] n ծովային ուտելի կակղամորթ:

**cockloft** ['kɒklɒft] n ձեղնահարկ, մասսարդ:

**cockney** ['kɒkni] n բնիկ լոնդոնցի. Լոնդոնի բարբառը:

**cockpit** ['kɒkpi:t] n օդաչուի խցիկ. նավախցիկ (անձնակազմի համար):

**cockroach** ['kɒkrəʊtʃ] n ուտիճ:

**cockscumb** ['kɒkskəʊm] n աքաղաղի կատար. *փխբ.* ինքնագոհ/պճնամոլ մարդ:

**cock-shot** ['kɒkʃɒt] n թիրախ, նշանակ:

**cock-sure** [ˌkɒk'ʃɜ:] a ինքնավստահ. անկասկած, անտարակույս:

**cocktail** ['kɒkteɪl] n կոկտեյլ:

**cocky** ['kɒki] a ինքնավստահ. a ~ little boy հանդուգն տղա:

**coco** ['kəʊkəʊ] n կոկոսի արմավենի. ընկուզաբեր արմավենի:

**cocoa** ['kəʊkəʊ] կակաո:

**coco-nut** ['kəʊkənʌt] n կոկոսի ընկույզ:

**cocoon** [kə'ku:n] n բոժոժ:

**cod** [kɒd] n ձողածուկ:

**coddle** ['kɒdl] n հոգատար լինել, փայփայել. ~ the child too much չափից ավելի փայփայել երեխային. ~ an invalid հոգատար լինել հաշմանդամի նկատմամբ:

**code** [kəʊd] n ծածկագիր, ծածկագրի բանալի. *հրավ.* օրենսգիրք, օրենքների ժողովածու. կանոնագիրք. կանոնադրություն. labour ~ աշխատանքային օրենսգիրք/կանոնագիրք. penal ~ քրեական օրենսգիրք commercial ~ առևտրական օրենսգիրք. land ~ հողային օրենսգիրք. legal ~ գործող կոդեքս. a moral ~ բարոյական կոդեքս. ~ of honour պատվի կոդեքս. highway ~ փողոցային

երթևեկության կանոններ. in ~ կապակցված. (կող, ծածկագիր) break a ~ վերծանել ծածկագիրը. message in a ~ ծածկագրված հաղորդագրություն. *հմկրգ.* code area կողի տիրույթ. ~ audit ծրագրի ստուգում. ~ base կողի հիմք. ~ chain կողերի հաջորդականություն. ~ conversion կողի փոխարկիչ. ~ error սխալ կողում. ~ extension կողի ընդլայնում. ~ independent կողից անկախ:

**co-defendant** [ˌkəʊdiˈfendənt] n հարակից պատասխանող. *իրավ.* պատասխանակից:

**codex** [ˈkɒdeks] n օրենսգիրք:

**cod-fish** [ˈkɒdfɪʃ] n ձողածուկ:

**codger** [ˈkɒdʒə] n *խսկ.* տարօրինակ մարդ:

**codicil** [ˈkɒdɪsɪl] n կտակի հավելված:

**codify** [ˈkɒdɪfaɪ] v ծածկագրել. օրենքները համակարգել:

**codling** [ˈkɒdlɪŋ] n մանր ձողածուկ:

**cod-liver** oil [ˌkɒdlɪvərˈɔɪl] n ձկան յուղ:

**co-education** [ˌkəʊedʒuˈkeɪʃn] n (*կրճ. co-ed*) համատեղ ուսուցում:

**coefficient** [ˌkəʊiˈfɪʃnt] n գործակից. նպաստող գործոն:

**coerce** [kəʊˈɜːs] v հարկադրել, ստիպել. ~ into silence լռեցնել:

**coercion** [kəʊˈɜːʃn] n հարկադրում, բռնադատում. under ~ հարկադրաբար:

**coercive** [kəʊˈɜːsɪv] a հարկադիր:

**coeval** [kəʊˈiːvəl] n, a հասակակից, ժամանակակից. միաժամանակյա:

**coexist** [ˌkəʊɪɡˈzɪst] v գոյակցել:

**coexistence** [ˌkəʊɪɡˈzɪstəns] n գոյակցություն. peaceful ~ խաղաղ գոյակցություն:

**coffee** [ˈkɒfi] n սուրճ. strong/fresh/hot ~ բուն/թարմ/տաք սուրճ. black/white ~ սև սուրճ, կաթով սուրճ. ~ bean սուրճի հատիկ. ~ cup սուրճի գավաթ. ~ pot սրճաման. grind ~ սուրճ աղալ. make ~ սուրճ պատրաստել. ~ grinder (*մակ. ~ mill*) սրճադագ:

**coffee-grounds** [ˈkɒfɪgraʊndz] n սուրճի մրուր:

**coffee-room** [ˈkɒfɪruːm] n սրճարան:

**coffer** [ˈkɒfə] n սնդուկ, արկղ. ~s գանձարան:

**coffin** [ˈkɒfɪn] n դագաղ. *ծով.* հին անպետք նավ:

**cog** [kɒɡ] n անիվի ատամ, ելուստ. a ~ in the machine *փխբ.* չնչին/աննշան անձ:

**cog** [kɒɡ] v խարդախություն անել, խաբել:

**cogency** [ˈkəʊdʒənsi] n անվիճելիություն, անժխտելիություն. be convinced by the ~ of the argument համոզվել փաստերի անվիճելիության ներքո:

**cogent** [ˈkəʊdʒənt] a համոզիչ, անժխտելի:

**cogged** [kɒɡd] a ատամնավոր:

**cogitate** [ˈkɒdʒɪteɪt] v խորհել, կշռադատել:

**cogitation** [ˌkɒdʒɪˈteɪʃn] n խորհում, կշռադատում:

**cognate** [ˈkɒɡneɪt] 1. n ազգական. ~s ազգակից լեզուներ/բառեր. 2. a ազգակից, մերձավոր:

**cognition** [kɒɡˈnɪʃn] n իմացություն, իմացական կարողություն:

**cognitive** [ˈkɒɡnətɪv] a իմացական:

**cognizable** [ˈkɒɡnɪzəbl] a ճանաչելի, իմանալի:

**cognizance** [ˈkɒɡnɪzəns] n ճանաչելիք, իմացություն. take ~ of նկատել. have ~ of մի բանի մասին իմանալ:

**cognizant** [ˈkɒɡnɪzənt] a տեղյակ, իրազեկ:

**cog-wheel** [ˈkɒɡwiːl] n ատամնավոր անիվ:

**cohabit** [kəʊˈhæbɪt] v կենակցել:

**cohabitation** [kəʊˈhæbɪˈteɪʃn] n համատեղ բնակություն. unmarried ~ փաստացի ամուսնություն:

**coheir** [kəʊˈeə] n ժառանգակից, համաժառանգ:

**cohere** [kəʊˈhiə] v կապակցված լինել, հարակցվել:

**coherence** [kəʊˈhiərəns] n կապակցվածություն. հարակցություն:

**coherent** [kəʊˈhiərənt] a համաձայնեցված. կապակցված, հարակցված. a ~ story/argument կապակցված պատմություն. հետևողական փաստարկ:

**coiffeur** [kwaːˈfɜː] n վարսավիր:

**coiffure** [kwaːˈfjʊə] n սանրվածք:

**coil** [kɔɪl] n օղակ. օղակաձև դարսված պարան. the ~ of smoke/snake օձի/ծխի օղակներ. ~ of rope/wire պարանի/էլ. լարի օղակներ:

**coil** [kɔɪl] v օղակաձև փաթաթել. ~ a rope պարանը օղակաձև փաթաթել. ~ up փաթաթվել. The snake ~ed round a branch Օձը փաթաթվել էր ճյուղի շուրջը:

**coin** [kɔɪn] n դրամ, մետաղադրամ. bad ~ թերարժեք դրամ. base ~ կեղծ դրամ. pay back in one's own ~ նույն դրամով/փոխադարձը հատուցել:

**coin** [kɔɪn] v դրամ կտրել/հատել. He must be ~ing money Նա անհաշիվ փողեր ունի. ~ new words *փխք*. նոր բառեր ստեղծել:

**coinage** ['kɔɪnɪdʒ] n դրամահատում. դրամական համակարգ. decimal ~ տասնորդական դրամային համակարգ. debase the ~ կուրսը իջեցնել:

**coincide** [ˌkəʊɪn'saɪd] v համընկնել, համապատասխանել. The story ~d with facts Նրա պատմածը համապատասխանում է փաստերին:

**coincidence** [kəʊɪnsɪdəns] n համընկում, զուգահեյություն. sheer ~ պարզ/հասարակ զուգահեյություն:

**coincident** [kəʊɪnsɪdənt] a համընկնող, զուգահեյող:

**coiner** ['kɔɪnə] n դրամահատ. դրամանենգ:

**coke** I [kəʊk] n կոքս:

**coke** II [kəʊk] n կոկա կոլա:

**coker** ['kəʊkə] (nut) n հնդկընկույզ:

**colander** ['kɒləndə] n քամիչ:

**cold** [kəʊld] n ցուրտ, ցրտություն, սառնություն. severe ~ սաստիկ ցուրտ, սառնամանիք be left out in the ~ *փխք*. անուշադրության մատնվել. catch ~ մրսել, հարբուխով հիվանդանալ:

**cold** [kəʊld] a ցուրտ, սառը. It's ~ Ցուրտ է. It's getting ~er Ավելի է ցրտում. I'm ~ ես մրսում եմ. My feet are ~ Ոտքերս սառում են. a ~ reception *փխք*. սառն ընդունելություն. a ~ man չոր մարդ. a ~ comfort թույլ մխիթարություն. I've got ~ feet *փխք*. ես վախենում եմ. in ~ blood սառնարյուն կերպով. pour ~ water սառը ջուր լցնել. His words left me ~ Նրա բառերն ինձ չհուզեցին:

**coldblooded** [ˌkəʊld'blʌdɪd] a սառնարյուն:

**cold-hearted** [ˌkəʊld'hɑ:tɪd] a սառնասիրտ:

**coldish** ['kəʊldɪʃ] a սառնավուն, ցրտավուն:

**cold-livered** [ˌkəʊld'livəd] a անտարբեր, սառնասիրտ:

**coldness** ['kəʊldnəs] n ցրտություն. անտարբերություն:

**cold-shoulder** [ˌkəʊld'ʃəʊldə] v *խսկց*. մեկին սառը/անսիրտ ընդունել:

**cold-storage** [ˌkəʊld'stɔ:ɪdʒ] n, v սառնարան. սառնարանում պահելը:

**coleslaw** ['kəʊlsɔ:ɪ] n կաղամբի աղցան:

**colic** ['kɒlɪk] n ծակոց, սուր ցավ:

**collaborate** [kə'læbəreɪt] v համագործակցել, գործակցել, աշխատակցել:

**collaboration** [kə'læbə'reɪʃn] n համագործակցություն, աշխատակցություն:

**collapsible** [kə'læpsəbəl] a ծալովի. a ~ boat հավաքովի նավակ. a ~ seat ծալովի աթոռ. a ~ bed ծալովի մահճակալ:

**collapse** [kə'læps] n փլուզում. *փխք*. խորտակում, անկում. *բժշկ*. ուժերի անկում. *ֆիզ*. կրախ, բանկրոտ, սնանկացում:

**collapse** [kə'læps] v փուլ գալ, ուժասպառ լինել, ծախողվել. ~ with exhaustion ուժասպառ լինել. ~ with laughter ծիծաղից թուլանալ/ընկնել. The ceiling ~d Առաստաղը փուլ եկավ. The firm ~d Ֆիրման սնանկացավ:

**collar** I ['kɒlə] n օձիք. a stiff ~ օսլայած օձիք. separate ~ առանձին օձիք. stand up ~ կանգուն օձիք. work up to the ~ մինչև կոկորդը աշխատանքի մեջ խրված լինել:

**collar** II ['kɒlə] n *մրգ*. մարզակոշիկի եզրաքուղում:

**collar-bone** ['kɒləbəʊn] n *կզմխ*. անրակ:

**collate** [kə'leɪt] v համեմատել. ճշտել, ստուգել:

**collateral** [kə'lætrəl] a երկրորդական, օժանդակ. անուղղակի, կողմնակի. զուգահեռ, զուգընթաց. ~ agreement/guarantee լրացուցիչ համաձայնություն/երաշխիք:

**collation** [kə'leɪʃn] n համեմատում. թեթև նախաճաշ:

**colleague** ['kɒli:ɡ] n պաշտոնակից, գործընկեր:

**collect** [kə'lekt] v հավաքել, ժողովել. հավաքածու կազմել. գանձել. ~ taxes/fines հարկեր հավաքել, տուգանք գանձել. ~ the post նամակները վերցնել. ~ smb մեկին հետը տանել. ~ children from school երեխաներին դպրոցից վերցնել. ~ one's thoughts մտքերը կարգի բերել. ~ oneself սթափվել, ուշքի գալ. (հավաքվել) A crowd ~ed Ամբոխ հավաքվեց. Dust ~ed Փոշի էր հավաքվել. ~ for the blind կույրերի օգտին նվիրատվություն հավաքել:

**collected** [kə'lektɪd] a հավաք, սթափ. be calm and ~ հանգիստ և սթափ լինել. the ~ works of Raffi Րաֆֆու երկերի ժողովածուն:

**collection** [kə'leɪʃn] n հավաքածու, ժողովածու. գանձում, հավաքում. ~ of signatures ստորագրությունների հավաքում. times of ~

նամակները փոստարկղներից հավաքելու ժամ. data ~ տվյալների հավաքում. tax ~ հարկերի գանձում. urban ~ system քաղաքային կոյուղի. ~ of rubbish աղբը տանելու (ժամերը). ~ of stories/poems պատմվածքների/պոեմների ժողովածու. ~ of stamps նամակահանգիների հավաքածու. *հմկրգ.* ~ class համախմբության դաս. ~ object կոլեկցիայի/համախմբության էլեմենտ:

**collective** [kə'lektiv] a միատեղ, միացյալ, հավաքական. *քեր.* հավաքական. a ~ noun հավաքական գոյական. ~ ownership համատիրում:

**collector** [kə'lektə] n կոլեկցիոներ, հավաքորդ. հարկահավաք (*նաև* tax collector). ticket ~ հսկիչ:

**college** ['kɒlidʒ] n քոլեջ. կոլեգիա, ընկերություն. military ~ ռազմական ակադեմիա. C~ of Surgeons Վիրաբույժների ընկերություն:

**collegiate** [kə'li:dʒiət] n, a քոլեջի ուսանող. համալսարանական. կոլեգիալ:

**collide** [kə'laɪd] v բախվել, ընդհարվել. ~ with բախվել/մեկի/մի բանի հետ/:

**collie** ['kɒli] n շոտլանդական ոչխարապահ շուն, կոլլի:

**collier** ['kɒliə] n ածխահատ, ածխանավ:

**colliery** ['kɒljəri] n քարածխահանք:

**collision** [kə'li:ʒn] n բախում, ընդհարում. come into ~ with բախվել, ընդհարվել:

**collocate** ['kɒləkeɪt] v դասավորել, տեղավորել. կարգել:

**collocation** [,kɒlə'keɪʃn] n դասավորում, տեղավորում. *լեզվ.* բառակապակցություն:

**colloquial** [kə'ləkwɪəl] a խոսակցական, գործածական:

**colloquialism** [kə'ləkwɪəlɪzəm] n խոսակցական դարձված/արտահայտություն:

**collusion** [kə'lu:ʒn] n գաղտնի համաձայնություն. act in ~ գաղտնի համաձայնությամբ գործել:

**colon I** ['kəʊlən] n *քեր.* երկու կետ (հայերեն՝ միջակետ):

**colon II** ['kəʊlən] n *կգմխ.* հաստ աղիք:

**colonel** ['kɒ:nəl] n գնդապետ:

**colonial** [kə'ləʊniəl] n, a գաղութարմակ, գաղութային:

**colonization** [,kɒlənaɪ'zeɪʃn] n գաղութացում:

**colonize** ['kɒlənaɪz] v գաղութացնել:

**colonizer** ['kɒlənaɪzə] n գաղութարար:

**colonnade** [,kɒlə'neɪd] n սյունաշար, երկշար ծառուղի:

**colony** ['kɒləni] n գաղութ. աքսորավայր. penal ~ կալանավայր:

**colophony** [kɒ'ləfəni] n բեկեմախետ:

**coloration** [,kɒlə'reɪʃn] n գունազրկում. ներկում:

**colorific** [,kɒlə'rɪfɪk] a գունեղ. *փխբ.* գունազեղ ոճ:

**colossal** [kə'ləsəl] a հսկայական, վիթխարի. *խսկց.* սքանչելի:

**colossus** [kə'ləsəs] n վիթխարի արձան. կոթող. հսկա:

**colour** ['kʌlə] n գույն, երանգ. bright/dark/intense/quiet ~s պայծառ/մուգ/հագեցած/ համգիստ գույներ. What ~ is? Ի՞նչ գույնի է. sense of ~ գույնի զգացում. primary/secondary ~s հիմնական/ բաղադրյալ գույներ. out of ~ խունացած. ~ box ներկերի տուփ, ներկապնակ. (դեմքի գույն) have very little/ a good /a high ~ շատ գունատ լինել, թարմ դեմք ունենալ, կարմրաքշիկ լինել. change ~ այլալվել. lose ~ գունատվել. be off ~ իրեն վատառողջ զգալ. local ~ տեղական կոլորիտ/ երանգավորում. under ~ of *փխբ.* պատրվակի տակ, պատրվակով. give/lend ~ to a story *փխբ.* պատմությունը գունազարդել. Let's see the ~ of your money Նախ փողը վճարեք. ~s *արվ.* ներկեր. a water ~ ջրաներկ, ակվարել. paint in water ~s ջրաներկով նկարել. paint smth in bright/dark ~s *փխբ.* որևէ բան վառ/մռայլ գույներով ներկայացնել. (դրոշ) the ~s *ռզմ., քղք.* դրոշ. national ~s պետական դրոշ. join the ~s զինվորական դառնալ. come off with flying ~s հաղթող հանդիսանալ. pass exams with flying ~s քննությունները փայլուն հանձնել. nail one's ~s to the mast *փխբ.* իր ասածը պնդել/հավատարիմ մնալ. ~ film/TV set գունավոր ֆիլմ/հեռուստացույց. ~ blind դալտոնիկ, գույներ չզանազանող:

**colour** ['kʌlə] v ներկել, գունավորել. երանգավորել. կարմրել. ~ red կարմիր ներկել. ~ red/yellow կարմրել, դեղնել:

**colouration** [,kɒlə'reɪʃn] n գունազարդում. ներկում, գունավորում:

**coloured** ['kʌləd] a գունավոր. highly ~ *փխբ.* խիստ գունազարդած. սևամորթ:

**colourful** [ˈkɒləfʊl] *a* գունեղ, գունագեղ, վառ. ~ personality վառ անձնավորություն:  
**colouring** [ˈkɒləriŋ] *n* ներկող նյութ. դեմքի գույն. protective ~ *բար.* պաշտպանողական գունավորում:  
**colourless** [ˈkɒlələs] *a* անգույն (*նաև փխր.*):  
**colour-process** [ˈkɒlə,prəʊses] *n* գունավոր լուսանկարչություն:  
**colour-sergeant** [ˈkɒlə,sɑ:dʒənt] *n* դրոշակիր սերժանտ:  
**colt** [kɒlt] *n* մտրուկ, քուռակ:  
**column** [ˈkɒləm] *a* ծրտ., *նզմ.* սյուն, զորասյուն. vertebral/spinal ~ ողնաշար. *a* ~ of figures թվերի սյունակ. steering ~ (ավտո) ղեկավարման սյուն:  
**columnist** [ˈkɒlənist] *n* լրագրող, մեկնաբան. մամուլի տեսաբան. մշտական խորագիր վարող:  
**comb** [kəʊm] *n* սանր. աքաղաղի կատար. մեղրաբջիջներ, խորիսխ. ~ honey խորիսխամեղր:  
**comb** [kəʊm] *v* սանրել. *նզմ.* հետախուզել, հետախուզելով մաքրել. ~ one's hair մազերը սանրել. ~ wool բուրդ գգել:  
**combat** [ˈkɒmbæt] **1.** *n* մարտ. single ~ մենամարտ. **2.** *a* մարտական, շարային:  
**combat** [ˈkɒmbæt] *v* կռվել, մարտնչել, պայքարել:  
**combatant** [ˈkɒmbətənt] *n* մարտիկ, զինվոր, պայքարող:  
**combative** [ˈkɒmbətɪv] *a* ռազմատենչ, կռվարար:  
**combination** [ˌkɒmbɪˈneɪʃn] *n* համակցում, միակցություն. act in ~ with համագործակցել. word ~ բառակապակցություն. ~ of circumstances հանգամանքների միակցում. *a* ~ lock հատուկ կերպով փակվող կողպեք:  
**combinative** [ˈkɒmbɪnətɪv] *a* համակցական:  
**combine** [kəmˈbeɪn] *v* միացնել, միավոր(վ)ել, կապակցել. ~ forces ուժերը միավորել. ~ business and pleasure հաճելի և օգտակարը միացնել/կապակցել. The groups ~d խմբերը միավորվեցին:  
**combine** [ˈkɒmbaɪn] *n* միավորում. *գղտ.* կոմբայն. industrial ~ արդյունաբերական միավորում, կոմբինատ:  
**comb-out** [ˈkəʊmaʊt] *n* սանրում. *փխր.* գտում (*նաև քղք.*):

**combustibility** [kəm,bʌstəˈbɪləti] *n* դյուրավառություն, բոցավառելիություն:  
**combustible** [kəmˈbʌstəbl] *a* դյուրավառ:  
**combustibles** [kəmˈbʌstəblz] *n pl* դյուրավառ նյութեր. վառելանյութ:  
**combustion** [kəmˈbʌstʃən] *n* այրում, վառում, կիզում. spontaneous ~ ինքնայրում. internal~ engine ներքին այրման շարժիչ:  
**come** [kʌm] *v* գալ, ժամանել. ~ early/late/in time շուտ/ուշ/ժամանակին գալ. ~ first/last առաջինը/վերջինը գալ. C~ here! Այստեղ արի/եկ. Coming! Գալիս եմ. The car/the post has ~ Մեքենան/Փոստը եկել է. They'll ~ for us Նրանք կգան մեր ետևից. The pain ~s and goes Ցավը մեկ իրեն զգացնել է տալիս, մեկ անհետանում է. (մոտենալ) *նաև* ~ up to. Spring is ~ing Գարունը մոտենում է. in the ~ing year եկող տարի. ~ nearer ավելի մոտ գալ/եկ. ~ and see Արի տես. ~, Let's go/begin Դե, արի գնանք/սկսենք. Come! Come! Դե, դե, հանգստացիր. (հասնել) when you ~ to London երբ Լոնդոն հասնես. It came to my hearing Ականջիս հասավ. (պատահել, տեղի ունենալ) How did it ~ that you are so late? Ի՞նչ(պես) պատահեց, որ դու այդքան ուշացար. It came as a complete surprise Դա մեզ համար լրիվ անսպասելի էր. C~ what may Թող ինչ ուզում է լինի. (լինել, ստացվել) It all came to nothing Ոչինչ չստացվեց, ոչնչով չավարտվեց. Nothing came of it Դրանից ոչինչ չստացվեց. No good/harm will ~ of it Դրանից ոչ մի լավ/վատ բան չի լինի. The bill came to 5000 drams Հաշիվը հասավ մինչև 5000 դրամ. It all came to the same thing Ամեն ինչ նույն բանի հանգեցվեց. ~ to գալ, հանգել. ~ to an agreement /conclusion համաձայնության գալ, եզրակացության հանգել. ~ into flower ծաղկել. ~ into one's head գլխով/մտքով անցնել. ~ cheaper ավելի էժան մտնել. ~ true իրականանալ. ~ undone արձակվել. (տարբեր իմաստներ) a week ~ Tuesday հաջորդ շաբաթ երեքշաբթի. ~ of age չափահաս դառնալ. ~ to know ճանաչել, իմանալ. ~ into being ծագել, առաջանալ. ~ to nothing սնանկանալ. ~ to think of it եթե մտածես. if it ~s to that եթե գործը դրան հասնի. ~ across պատահաբար հանդիպել. ~ along միասին գալ/ գնալ He came along with his sister Նա եկավ քրոջ հետ միասին. C~ along! Արի, գնանք. ~ away պոկվել, անջատվել. The han-

dle came away **Բռնակը պոկվեց**. ~ before նախորդել. ~ before the court դատարանի առաջ ներկայանալ. My family ~s before everything Առաջին տեղում իմ ընտանիքն է. ~ down բափվել (անծրև, ծյուն), իջնել, ընկնել. ~ down a mountain սարից իջնել. Prices have ~ down **Գներն իջել են**. It came down to this **Հարցը հետևյալն է**. ~ forward առաջ գալ, արծագանքել. He ~s from Scotland **Նա Շոտլանդիայից է**. That word ~s from Arabic Այս բառը արաբերենից է ծագում/սերում. ~ in/into ներս մտնել. պաշտոն ստանձնել. He came in first **Նա առաջինը ներս մտավ**. The tide is ~ing in **Մակընթացությունը սկսվում է**. Long skirts have ~ in again **Երկար փեշերը նորից մոդա են**. ~ into effect/office ուժի մեջ մտնել. պաշտոն ստանձնել. ~ off դուրս գալ, պոկվել. The button/wheel came off **Կոճակը պոկվեց**. Անիվը դուրս եկավ. ~ out դուրս գալ. երևան գալ, հայտնաբերվել. The buds are ~ing out **Բողբոջները դուրս են գալիս**. The book came out in spring **Գիրքը լույս տեսավ գարնանը**. ~ out well in the photo նկարում լավ դուրս գալ. ~ over անցնել (սահմանը և այլն). He came over to our side **Նա մեր կողմն անցավ**. A change came over her **Նրա մեջ փոփոխություն տեղի ունեցավ**. ~ round հյուր գալ. ուշքի գալ. C~ round and see us **Եկեք հյուր մեզ**. She came round **Նա ուշքի եկավ**. ~ up մոտենալ, բարձրանալ, աճել. He came up to us **Նա մոտեցավ մեզ**. The water came up to my knee **Զուրը մինչև ծնկներն էր բարձրացել**. ~ up with the right answer **ճիշտ պատասխանը գտնել**. The case is ~ing up tomorrow **իրավ**. Գործը վաղն է լսվելու. ~ within ներառնվել, մեջը մտնել. That doesn't ~ within my competence **Դա չի մտնում իմ իրավասության մեջ**:

**come-and-go** [ˌkʌmənˈɡəʊ] **1.** n հետ ու առաջ շարժվելը. **2.** a պատահական ~ people պատահական մարդիկ:

**come-at-able** [ˌkʌmˈætəbəl] a մատչելի:

**comeback** [ˌkʌmbæk] n վերադարձ. make an unexpected ~ **անսպասելիորեն վերադառնալ**. make a witty ~ **սրամտորեն/դիպուկ պատասխանել**:

**comedian** [kəˈmiːdiən] n կոմիկ/կատակերգու դերասան:

**come-down** [ˌkʌmdaʊn] n անկում. a great ~ **մեծ/ցշանակալից անկում**:

**comedy** [ˈkɒmədi] n կատակերգություն, կոմեդիա:

**comely** [ˈkʌmli] a սիրունատես, դուրեկան:

**comer** [ˈkʌmə] n եկող, եկվոր. first ~ **առաջին եկած մարդը**. late ~s **ուշացածները**. It's for all ~s **Դա բոլորի համար է**:

**comet** [ˈkɒmit] n գիսաստղ:

**comfort** [ˈkʌmfət] n սփոփանք, մխիթարություն. a cold/small ~ **վատ/թույլ սփոփանք**. a great ~ **մեծ սփոփանք**. (հարմարություններ, հանգստավետություն) material ~s **նյութական բարիքներ**. enjoy ~s **հարմարություններից օգտվել**. home ~s **կենցաղային հարմարություններ**. creature ~ **անձնական գործածության մանր առարկաներ**. He likes his ~s **Նա կոմֆորտ է սիրում**:

**comfort** [ˈkʌmfət] v սփոփել, մխիթարել, հանգստացնել:

**comfortable** [ˈkʌmf(ə)təbl] a հարմար, բարեհարմար, հարմարավետ. a ~ car/hotel **հարմարավետ մեքենա. բարեհարմար հյուրանոց**. Are you ~? **Ձեզ հարմա՞ր եք գգում**. Make yourself ~ **Ձեզ հարմար զգացեք**. I never feel ~ with them **Ես ինձ երբեք հարմար չեմ գգում նրանց տանը**. a ~ income **զգալի եկամուտ**:

**comforter** [ˈkʌmfətə] n մխիթարող, սփոփող. *juulig*. բրդե շարֆ/կաշնե:

**comfortless** [ˈkʌmfətɪəs] a անհարմար, անհրապույր. անմխիթար, անսփոփ. տխուր:

**comic** [ˈkɒmik] **1.** n կատակերգակ, կոմիկ (դերասան). կինոկոմեդիա. the ~s **պատկերազարդ կոմիկական գրքույկներ**. կոմիքս. **2.** a զավեշտական, կոմիկական:

**comical** [ˈkɒmikəl] a զավեշտական, ծիծաղելի, զվարճալի, կոմիկական. ~ opera **կոմիկական օպերա**. a ~ situation **զվարճալի իրադրություն**:

**coming** [ˈkʌmiŋ] **1.** n ժամանում, գալուստ. **2.** a գալիք, եկող, ապագա:

**coming-in** [ˌkʌmiŋˈin] n ներմուծում (ապրանքների):

**coming-out** [ˌkʌmiŋˈaʊt] n արտահանում (ապրանքների):

**comity** [ˈkɒməti] n քաղաքավարություն:

**comma** [ˈkɒmə] n ստորակետ. inverted ~s **չակերտներ**:

**command** [kəˈmɑːnd] n հրաման, հրամանատարություն. at his ~ **նրա հրամանով**. at

the word of ~ հրամանով. (տիրապետություն) ~ of the seas տիրապետություն ծովերում. high ~ բարձրագույն հրամանատարություն. be in ~ of հրամանատար լինել. take ~ of հրամանատարությունը ընդունել. I'm at your ~ ես ձեր տրամադրության տակ եմ. all the money at my ~ իմ տրամադրության տակ եղած փողերը. be in ~ of the situation դրության/իրավիճակի տերը լինել have a good ~ of French/a language լավ տիրապետել ֆրանսերենին/որևէ լեզվի. *հմկրգ.* ~ button հրահանգային կոճակ. ~ character դեկավարող սիմվոլ. ~ database հրահանգային տվյալների բազա. ~ interpreter հրահանգների մեկնիչ. ~ line հրահանգային տող. ~ shell հրահանգային պրոցեսոր:

**command** [kə'mɑ:nd] v հրաման տալ, հրամայել. He ~ed his man to attack Նա հրամայեց զինվորներին հարձակվել. ~ a ship նավի հրամանատար լինել. ~ respect/sympathy հարգանք ներշնչել. կարեկցանք առաջացնել:

**commandant** ['kɒməndənt] n պարետ. ռազմական ուսումնական հաստատությունների պետ:

**commandeer** [ˌkɒmə'nɪə] v բռնագրավել. *խսկգ.* յուրացնել:

**commander** [kə'mɑ:ndə] n հրամանատար. *ծով.* երկրորդ կարգի կապիտան:

**Commander-in-Chief** [kə,mɑ:ndəɪn 'tʃi:f] n գերագույն/զլխավոր հրամանատար. *ծով.* նավատորմի հրամանատար:

**command-in-chief** [kə,mɑ:ndɪn 'tʃi:f] n զլխավոր հրամանատարություն:

**commanding** [kə'mɑ:ndɪŋ] a իշխող, գերակշռող:

**commandment** [kə'mɑ:ndmənt] n պատվիրան, պատգամ. հրաման:

**commemorate** [kə'memə'reɪt] v տարեդարձ նշել, հիշեցնել:

**commemoration** [kə,memə'reɪʃn] n նշում, հիշատակում. տարեդարձի նշում. in ~ of ի հիշատակ:

**commence** [kə'mens] v սկս(վ)ել:

**commencement** [kə'mensmənt] n սկիզբ. (ԱՄՆ-ի համալսարաններում) դիպլոմների հանձնման և գիտական աստիճանների շնորհման օր:

**commend** [kə'mend] v գովել. His work was highly ~ed Նրա աշխատանքը շատ գովե-

ցին. The plan doesn't ~ itself to me Այս ծրագիրը ինձ դուր չի գալիս:

**commendable** [kə'mendəbl] a գովելի, գովասանքի արժանի:

**commendation** [ˌkɒmə'nɪ'eɪʃn] n գովասանք:

**commensurable** [kə'menʃərəbl] a համաչափական, համաչափելի:

**commensurate** [kə'menʃərət] a չափակից, համաչափ, համապատասխան:

**comment** ['kɒment] n մեկնաբանություն, լուսաբանություն. Any ~s? Որևէ դիտողություն, հավելո՞ւմ. No ~s! Մեկնաբանություններն ավելորդ են. No further ~s Այդ հարցին պատասխան չկա:

**comment** ['kɒment] v մեկնաբանել, լուսաբանել. for ~ ի մեկնաբանումն. ~ on the text/international situation մեկնաբանել տեքստը/միջազգային դրությունը. ~ unfavourably բացասաբար արտահայտվել:

**commentary** ['kɒməntəri] n մեկնաբանություն, լուսաբանում. ծանոթագրություն. running ~ ռադիո ռեպորտաժ:

**commentator** ['kɒməntɪtə] n մեկնաբան:

**commerce** ['kɒmə:s] n առևտուր. Chamber of Commerce Առևտրի պալատ:

**commercial** [kə'mɔ:ʃl] n առևտրական. ~ traveller շրջիկ առևտրական. գործակալ. (գովազդ) TV ~ հեռուստագովազդ:

**commiserate** [kə'mizə'reɪt] v ցավակցել. I ~d with him on his misfortune ես նրան ցավակցեցի իր դժբախտության կապակցությամբ:

**commiseration** [kə,mizə'reɪʃn] n ցավակցություն:

**commission** [kə'mɪʃn] n լիազորություն, իրավասություն. կոմիտե, հանձնաժողով. interim ~ ժամանակավոր կոմիտե/հանձնաժողով. standing ~ մշտական հանձնաժողով. European ~ եվրոպական հանձնաժողով. C~ for Human Rights Մարդու իրավունքների հանձնաժողով. (հանձնարարություն, առաջադրանք) get a ~ to paint a portrait դիմանկարի պատվեր ստանալ. come/put into ~ *ծով.* շահագործման հանձն(վ)ել (նավը). in ~ մեկնելու պատրաստ. out of ~ շարքից դուրս եկած, անպետք. He was ~ed to head the delegation Նրան հանձնարարվել էր զլխավորել պատվիրակությունը. ~ of a crime *իրավ.* հանցագործության կատարում:



**commission** [kə'miʃn] v լիազորել. հանձնարարել. պաշտոնի նշանակել:  
**commissionaire** [kə,mɪʃ'neə] n հանձնակատար. շվեյցար. ~ for oaths նոտար:  
**commissioner** [kə'miʃnə] n լիազոր. պառլամենտի հանձնաժողովի անդամ:  
**commit** [kə'mit] v կատարել. ~ an offence/a crime/a murder/error զանցանք/ոճիր/ սպանություն/սխալ կատարել. ~ a suicide ինքնասպանություն գործել. (հանձնարարել) ~ commit the child to the care of երեխային... խնամքին հանձնարարել. (ծերբակալել) ~ to prison կալանավորել. ~ to mental hospital հոգեբուժարան տեղավորել. ~ smth to memory/paper/writing *փխք*. հիշել, հիշողության մեջ պահել. թղթին հանձնել, գրի առնել. (պարտավորվել) I'm ~ted to helping them Պարտավորվել եմ նրանց օգնել. without ~ ting myself առանց որևէ պարտավորությունների:  
**commitment** [kə'mitmənt] n պարտավորություն. financial ~s ֆինանսական պարտավորություններ. ~ requests պարտավորություններ ստանձնելու պահանջ. ~ agreement ֆինանսական համաձայնություն:  
**committal** [kə'mitl] n պարտավորություն. ծերբակալում. աճյունը հողին հանձնելը:  
**committee** I [kə'miti] n կոմիտե. հանձնաժողով. executive ~ գործադիր կոմիտե. standing ~ մշտական կոմիտե. appoint a ~ հանձնաժողով նշանակել. credentials ~ մանդատային հանձնաժողով. joint ~ միացյալ հանձնաժողով. get into ~ հարցը հանձնաժողովի քննարկման հանձնել. check up ~ վերստուգիչ հանձնաժողով:  
**committee** II [kə'miti] n *հրավ*. (հոգեկան հիվանդի) խնամակալ:  
**commixture** [kə'mɪkstʃə] n միախառնում, խառնուրդ:  
**commodious** [kə'məʊdiəs] a լայն, ընդարձակ, տարողունակ:  
**commodity** [kə'mɒdətɪ] n, a ապրանք. լայն սպառման ապրանք. ապրանքային:  
**common** ['kɒmən] 1. n համայնական հող. ամայի տեղ. համայնական արոտավայր. 2. a ընդհանուր in ~ ընդհանուր, միատեղ. have nothing in ~ ոչ մի ընդհանուր բան չունենալ. out of the ~ արտասովոր. a ~ bathroom ընդհանուր լողարան. by ~ consent ընդհանուր համաձայնությամբ. find ~ language ընդհա-

նուր լեզու գտնել. the ~ good ընդհանուր բարօրություն. ~ noun *քեր*. հասարակ գոյական. (սովորական, լայնատարած) a ~ error հասարակ/սովորական սխալ. in ~ use շատ օգտագործելի. It is ~ knowledge Չանրահայտ է. (սովորական, հասարակ) the ~ people հասարակ մարդիկ. quite ~ weather բավական սովորական եղանակ. ~ practice սովորաբար ընդունված. ~ sense առողջ դատողություն. ~ multiple *մաթ*. ընդհանուր բազմապատկիչ. *հմկրգ*. ~ link ընդհանուր կառավար. ~ software ստանդարտ ծրագրային ապահովում:  
**commoner** ['kɒmənə] n հասարակ մարդ. Չամայնքների պալատի անդամ  
**commonly** ['kɒmənli] adv սովորաբար, որպես կանոն. էժան/վատ ձևով:  
**commonplace** ['kɒmənpleɪs] n սովորական, տափակ. շաբլոն, ծեծված:  
**common-room** ['kɒmənru:m] n դաստիարակարան (Օքսֆորդի համալսարանում):  
**commons** ['kɒmən] n pl ժողովրդական ցածր խավեր. the Commons երրորդ դաս. House of Commons Չամայնքների պալատ:  
**commonwealth** ['kɒmənweɪlθ] n համագործակցություն, համատիրություն, ֆեդերացիա. ~ of Independent States (CIS) Անկախ պետությունների համագործակցություն, ԱՊՀ:  
**commotion** [kə'məʊʃn] n խռովություն, վրդովմունք. խլրտում. civil ~ անկարգություններ:  
**communal** ['kɒmjʊnəl] a ընդհանուր, հասարակական. կոմունալ:  
**commune** ['kɒmjʊ:n] n համայնք. կոմունա.  
**commune** [kə'mju:n] v զրուցել, շփման մեջ լինել:  
**communicable** [kə'mju:nɪkəbəl] a հաղորդակցվող. տարափոխիկ (հիվանդություն):  
**communicate** [kə'mju:nɪkeɪt] v հաղորդել, հայտնել. ~ news/opinion լուր/կարծիք հայտնել. ~ heat ջերմություն հաղորդել. ~ a disease հիվանդությամբ վարակել. (կապվել) ~ by telephone հեռախոսով կապվել. communicating rooms կից սենյակներ.  
**communication** [kə,mju:nɪ'keɪʃn] n հաղորդում. հաղորդակցություն, կապ. means of ~ կապի միջոցներ. receive a ~ հաղորդում ստանալ. wireless ~s ռադիո կապ. mass ~ տեղեկատվության զանգվածային միջոցներ. through ~ ներքին կապ. two-way ~ երկ-

կողմ կապ. be in ~ with smn մեկի հետ կապ պահպանել. What are ~s like here? Հաղորդակցման ի՞նչ միջոցներ կան այստեղ. *հմկրգ.* ~ channel կապի/ինֆորմացիոն կամալ. ~ data system տվյալների փոխանցման համակարգ. ~ session կապի սեսիա:

**communicative** [kə'mju:nikətiv] a շփվող, գրուցասեր, մարդամոտ. be ~ մարդամոտ /շփվող լինել He is not ~ on the subject Նա չի ուզում այդ մասին խոսել:

**communion** [kə'mju:njən] n ընդհանրություն, կապ. *կրոն.* հաղորդություն. take ~ հաղորդվել, հաղորդություն ստանալ:

**communique** [kə'mju:nikei] n պաշտոնական հաղորդագրություն. joint ~ համատեղ հայտարարություն:

**community** [kə'mju:nəti] n համայնք. միություն. ընկերություն. the local ~ տեղի բնակիչները. տեղաբնակները. the ~ հասարակություն. the Italian ~ in America իտալական համայնքը Ամերիկայում. business ~ գործարար ընկերակցություն. the ~ of interests շահերի ընդհանրություն. for the good of the ~ համայնքի բարօրության համար:

**commutation** [kə'mju:'teɪʃn] n փոխարինում. *իրավ.* մեղմացում (պատժի):

**commute** [kə'mju:t] v փոխարինել, փոխանակել. ~ a death sentence to life imprisonment մահապատիժը փոխարինել ցմահ բանտարկությամբ. (մշտական երթևեկել) ~ to London everyday ամեն օր Լոնդոն գնալ (աշխատանքի):

**commuter** [kə'mju:tə] n մշտական երթևեկություն կատարող. սեզոնային տոմս ունեցող ուղևոր:

**compact** I ['kɒmpækt] n համաձայնություն, պայմանագիր. make a ~ համաձայնվել, համաձայնություն կնքել.

**compact** II ['kɒmpækt] n մամլած դիմափոշի. դիմափոշաման:

**compact** [kəm'pækt] a սեղմ, կուռ, կոմպակտ. a ~ style սեղմ ոճ. a little ~ flat/car փոքրիկ հարմարավետ բնակարան/մեքենա. ~ disk կոմպակտ դիսկ/սկավառակ:

**companion** [kəm'pænjən] n ընկեր, ընկերակից. travelling ~ ուղեկից. an amusing ~ զվարճալի/հաճելի գրուցակից/ուղեկից. ~ -in-arms զինակից. (տեղեկագիրք) gardener's ~ այգեգործի ձեռնարկ:

**companionable** [kəm'pænjənəbl] a շփվող,

սրտաբաց, մարդամոտ. ընկերական:

**companionship** [kəm'pænjənʃɪp] n ընկերություն, ընկերակցություն. a ~ of many years, standing ~ երկարամյա ընկերություն. enjoy one's ~ հաճելի ընկերություն ունենալ:

**company** ['kʌmpəni] n ընկերություն, միություն. in ~ with միասին. form/found a ~ ընկերություն ստեղծել/հիմնել. keep ~ with ընկերություն անել, ընկերակցել. keep bad ~ վատ շրջապատի մեջ ընկնել. for ~ հանուն ընկերության. bear/keep ~ ուղեկցել, համընկերանալ. (հյուրեր) We're expecting ~ Մենք հյուրեր ենք սպասում. The ~ broke up Հյուրերը գնացին. He's good ~ Նա լավ ընկերակից է. be good ~ լավ գրուցակից լինել. ~ of actors թատերախումբ. travelling ~ շրջիկ թատերախումբ. the ship's ~ նավակազմ. We part ~ here Այստեղ մենք բաժանվում ենք. Present ~ excepted Խոսքը ներկաներին չի վերաբերում. insurance ~ ապահովագրական ընկերություն. parent ~ մայր/հիմնադիր ընկերություն. affiliated ~ դուստր ձեռնարկություն. oil ~ նավթային ընկերություն. ~ car ծառայողական մեքենա:

**comparable** ['kɒmpərəəbl] a համեմատելի:

**comparative** [kəm'pærətiv] n համեմատական, հարաբերական (*նաև՝ քեր.*). live in ~ comfort համեմատաբար ավելի հարմարավետ ապրել:

**compare** [kəm'peə] n համեմատություն, համեմատում. beyond/past ~ համեմատությունից դուրս/վեր. *հմկրգ.* ~ instruction համեմատման հրահանգ:

**compare** [kəm'peə] v համեմատել. as ~d with համեմատած. ~ notes *խսկց.* տպավորություններ փոխանակել. ~ favourably դրականորեն տարբերվել. How do they ~ for speed? Արագության ի՞նչ տարբերություն կա:

**comparison** [kəm'pærɪsən] n համեմատություն. make/draw a ~ between համեմատություն անցկացնել. by/in ~ with համեմատությամբ. There is no ~ Նրանց չի կարելի համեմատել. bear/stand ~ համեմատությամբ դիմանալ:

**compartment** [kəm'pɑ:tmənt] n բաժանմունք. *երկթ.* խուց, կուպե. watertight ~ *նավ.* անջրանցիկ մեկուսախուց:

**compass** ['kʌmpəs] n կողմնացույց. the points of ~ կողմնացույցի կողմերը. a pair of

~es կարկին. (դիապազոն) beyond one's ~ հասկացողությունից վեր լինել:

**compassion** [kəm'pæʃn] n կարեկցություն, կարեկցանք. ցավակցություն:

**compassionate** [kəm'pæʃnət] a կարեկցող, ցավակցող. ~ leave արձակուրդ ընտանեկան հանգամանքներով:

**compatibility** [kəm,pætə'biləti] n համատեղելիություն:

**compatible** [kəm'pætəbl] a համատեղելի. be not ~ համատեղելի չլինել, յուրա չզմալ. *հմկրգ.* ~ family համատեղելի կոմայուտերների ընտանիք:

**compatriot** [kəm'pætriət] n հայրենակից, համերկրացի:

**compel** [kəm'pel] v ստիպել, հարկադրել. ենթարկել. feel ~led ստիպված լինել:

**compelling** [kəm'pelɪŋ] a անհաղթահարելի. հմայիչ, գերող, համոզիչ. a ~ argument համոզիչ փաստարկ:

**pendious** [kəm'pendiəs] a կրճատ, համառոտ. համառոտված:

**pendium** [kəm'pendiəm] n համառոտագիր, կոնսպեկտ. համառոտ ձեռնարկ:

**compensate** ['kɒmpənseɪt] v փոխհատուցել, վարձատրել. ~ for հատուցել. ~ for a loss կորուստի համար փոխհատուցել:

**compensation** [,kɒmpən'seɪʃn] n հատուցում. claim ~ հատուցում պահանջել. receive 5000dr. ~ 5000 դրամ հատուցում ստանալ. in ~ որպես փոխհատուցում. full/partial ~ լրիվ/մասնակի փոխհատուցում. lump sum ~ միանվագ փոխհատուցում:

**compere** ['kɒmpere] n համերգավար (կոնֆերանսյե):

**compete** [kəm'pi:t] v մրցել, մրցակցել. ~ in a race վազքում մրցել. ~ in a steeplechase ձիարշավին մասնակցել. ~ for a job աշխատատեղի համար մրցույթի մասնակցել:

**competence** ['kɒmpitəns] n ունակություն, կարողություն. իրազեկություն. ~ in administration գործերը վարելու կարողություն. within the ~ իրազեկության սահմաններում. not within the ~ իրազեկության սահմաններից դուրս. ~ level որակավորման մակարդակ:

**competent** ['kɒmpitənt] a գիտակ, իրազեկ. հեղինակավոր, որակյալ. *իրավ.* իրավասու, իրավագոր. a ~ authority գիտակ հեղինակություն. մասնագետ. a ~ editor գիտակ/հե-

ղինակավոր խմբագիր:

**competition** [,kɒmpə'tiʃn] n մրցակցություն. free/open/tough ~ ազատ/բաց/խիստ մրցակցություն. (մրցում) boxing/swimming/skiing ~ *մրգ.* բռնցքամարտի/լողի/դահուկավազքի մրցում. մրցույթ. a piano/beauty/violin ~ դաշնամուրի/գեղեցկության/ջութակի մրցույթ. arrange a ~ մրցույթ կազմակերպել. win a ~ մրցույթը շահել. win in a ~ մրցույթում հաղթել. entry by ~ ընդունելություն մրցույթով. restraint on ~ մրցակցության սահմանափակում:

**competitive** [kəm'petətɪv] a մրցակցային, մրցույթի, մրցութային. ~ spirit/examination/prices մրցակցության ոգի. մրցութային քննություններ. մրցակցային գներ. be ~ մրցակցության ոգի ունենալ:

**competitor** [kəm'petɪtə] n մրցակից:

**compilation** [,kɒmpi'leɪʃn] n բանաքաղում, տվյալների հավաքում:

**compile** [kəm'paɪl] v հավաքել, կուտակել. ~ facts/data փաստեր/տվյալներ կուտակել. (կազմել) ~ a dictionary բառարան կազմել:

**complacence** [kəm'pleɪns] ինքնագոհություն:

**complacency** [kəm'pleɪnsɪ] n ինքնաբավականություն:

**complacent** [kəm'pleɪsnt] a ինքնագոհ, ինքնաբավական. look ~ ինքնագոհ տեսք ունենալ. be too ~ չափից ավելի ինքնագոհ լինել:

**complain** [kəm'pleɪn] v գանգատվել, դժգոհել, բողոքել. ~ of a headache/about the noise գանգատվել գլխացավից/աղմուկից. habitual ~ing կենցաղային բողոք. What do you ~ of? Ինչի՞ց եք բողոքում:

**complaint** [kəm'pleɪnt] n գանգատ, դժգոհություն, բողոք. have no cause for ~ դժգոհելու պատճառ չունենալ. be full of ~s անընդհատ դժգոհել. lodge/lay a ~ against բողոք ներկայացնել. He suffers from a heart ~ Նա տառապում է սրտի հիվանդությամբ:

**complaisance** [kəm'pleɪzns] n պատրաստակամություն, հաճոյակամություն:

**complaisant** [kəm'pleɪznt] a հաճոյակամ, պատրաստակամ:

**complement** ['kɒmplɪmənt] n լրացում (մանկ. *քեր*). (լրակազմ) with a full ~ լրիվ կազմով. a ~ of 30 men 30 մարդուց բաղկացած կազմ:

**complementary** [ˌkɒmpliˈmentəri] a, n  
լրացուցիչ, ավելադիր. լրացում, փոխ-  
լրացում:

**complete** [kəmˈpli:t] a լրիվ, ամբողջական.  
կատարյալ. a ~ edition of գործերի լրիվ ժո-  
ղովածու. ~ happiness կատարյալ երջանկու-  
թյուն. each ~ month յուրաքանչյուր ավարտ-  
ված ամիս. a ~ stranger լրիվ անծանոթ. a ~  
surprise կատարյալ անակնկալ. a ~ fool  
*խսկգ.* կատարյալ հիմար. a ~ flop լրիվ  
ձախողում. The report/building is not yet ~  
Ձեկուցումը/Շենքը դեռևս անավարտ է:

**complete** [kəmˈpli:t] v վերջացնել, ավար-  
տել, համալրել. ~ papers/forms թղթեր/բլանկ-  
ներ լրացնել. ~ one's work/education աշխա-  
տանքը վերջացնել. կրթությունն ավարտել:

**completely** [kəmˈpli:ti] adv կատարելապես,  
լրիվ, ամբողջովին. ~ forget բոլորովին մոռա-  
նալ. trust ~ լրիվ վստահել. ~ satisfied լրիվ բա-  
վարարված. agree ~ լրիվ համաձայնել:

**completeness** [kəmˈpli:tnəs] n ամբողջա-  
կանություն, ավարտվածություն. կատարե-  
լություն.

**completion** [kəmˈpli:ʃn] n ավարտում. հա-  
մալիր. payment on ~ վճարը ավարտից հե-  
տո. Building is nearing ~ Շինարարությունը  
մոտենում է ավարտին. *հմկրգ.* ~ code  
ավարտի կոդ:

**complex** [ˈkɒmpleks] n համալիր. բարդ. բա-  
ղադրյալ. *հմկրգ.* complex document/arithmetical  
բաղադրյալ փաստաթուղթ. բաղադրյալ  
թվերի թվաբանություն. a vast ~ of buildings  
շինությունների մեծ համալիր. ~ mecha-  
nism/process/situation բարդ մեխանիզմ/գործ-  
ընթաց/իրավիճակ. *հոգեբ.* բարդույթ inferiority/superiority ~ թերարժեքության/գերար-  
ժեքության բարդույթ:

**complexion** [kəmˈplekʃn] n դեմքի գույն. fair  
~ դեմքի բաց գույն. շիկահեր, խարտյաշ.  
dark ~ դեմքի մուգ գույն. florid/olive/sal-  
low/swarthy ~ թարմ, կարմրաթուշ/դեղնա-  
կանաչ/ գունատ/թուխ դեմքի գույն. That  
puts a different ~ on it Դա փոխում է գործը,  
այլ տեսք է տալիս:

**complexity** [kəmˈpleksəti] n բարդություն,  
խճճվածություն:

**compliance** [kəmˈplaɪəns] n զիջողություն,  
համաձայնություն. in ~ with your wishes հա-  
մաձայն ձեր ցանկության, ձեր ցանկու-  
թյամբ:

**compliant** [kəmˈplaɪənt] a հաճոյակատար,  
զիջող:

**complicacy** [ˈkɒmplikəsi] n բարդություն,  
բարդացում:

**complicate** [ˈkɒmplikeɪt] v բարդացնել,  
դժվարացնել. ~ matters further գործերն  
ավելի բարդացնել. Don't ~ life for me  
Կյանքս մի բարդացնի:

**complicated** [ˈkɒmplikeɪtɪd] a բարդ,  
խճճված. ~ question/situation բարդ հարց/  
իրավիճակ. The situation has become ~ Իրա-  
վիճակը բարդացել է. ~ disease բարդու-  
թյուններով/բարդված հիվանդություն:

**complication** [ˌkɒmpliˈkeɪʃn] n բարդա-  
ցում, բարդություն, դժվարություն. grave/un-  
forseen ~ լուրջ/չնախատեսված բարդու-  
թյուն. flu with ~s *բժշկ.* բարդություններով  
գրիպ:

**complicity** [kəmˈplisəti] n մասնակցություն.  
հանցակցություն, մեղսակցություն:

**compliment** [ˈkɒmplɪmənt] n հաճոյա-  
խոսություն, կոմպլիմենտ. սիրալիրություն.  
pay a ~ հաճոյախոսություն անել. a back-  
handed ~ երկիմաստ հաճոյախոսություն.  
take as a ~ պատիվ համարել. ~s բարև, ող-  
ջույն. Give her my ~s Բարևեք նրան. with ~s  
from լավագույն ցանկություններով. (տոմ-  
սակների/նվերների վրա). with ~s բարևնե-  
րով (նամակի վերջում):

**compliment** [ˈkɒmplɪmənt] v հաճոյախո-  
սել, բարևել, ողջունել. շնորհավորել. նվի-  
րել. They ~ed me on my cooking/dress Նրանք  
գովեցին իմ խոհարարական ունակություն-  
ները/շորը:

**complimentary** [ˌkɒmpliˈmentəri] a գովա-  
սանական, շնորհավորական. a ~ ticket  
հրավիրատոմս:

**comply** [kəmˈplaɪ] v կատարել //(խնդիրը,  
պահանջը). ենթարկվել, պահպանել. ~ with  
smb's request մեկի խնդրանքը կատարել. ~  
with rules կանոններին ենթարկվել. օրի-  
նապահ լինել:

**component** [kəmˈpəʊnənt] n, a բաղադրիչ,  
բաղադրիչ մաս. բաղադրիչ, բաղադրական.  
*հմկրգ.* ~ software մոդուլային ծրագրային  
ապահովում:

**compose** [kəmˈpəʊz] v կազմել, բաղադրել.  
հորինել. ~ music/poem երաժշտություն/  
պոեմ հորինել. ~ one's thoughts միտքը կենտ-

րոնացնել, կենտրոնանալ. be ~d of կազմված լինել. ~d of many ingredients շատ բաղադրիչներից կազմված լինել:

**composed** [kəm'pəuzd] a զուսպ, հանգիստ, մտահավաք:

**composer** [kəm'pəuzə] n կոմպոզիտոր:

**composing-machine** [kəm'pəuziŋməʃi:n] n տպգր. գրաշար մեքենա:

**composite** [ˈkɒmpəzɪt] a բարդ, բաղադրյալ. ~ targets բարդ նպատակներ. *հմկրգ.* ~ operator բաղադրյալ օպերատոր. ~ statement բաղադրյալ պնդում:

**composition** [ˌkɒmpə'zɪʃn] n բաղադրություն. the ~ of the soil հողի բաղադրությունը. (դպրոց) շարադրություն. գրական, երաժշտական երկ/ստեղծագործություն. *քիմ.* խառնուրդ. *իրավ.* փոխզիջումային համաձայնություն:

**compositor** [kəm'pɒzɪtə] n գրաշար:

**compost** [ˈkɒmpɒst] n գղտն. պարարտախառնուրդ, կոմպոստ:

**composure** [kəm'pəuzə] n հանդարտություն, ինքնագապում: recover one's ~ իրեն տիրապետել:

**compound** [ˈkɒmpaʊnd] n *քիմ.* խառնուրդ, բաղադրություն, միացություն. բաղադրյալ բառ:

**compound** [ˈkɒmpaʊnd] a բաղադրյալ, բարդ. ~ fracture բարդ կոտրվածք. a ~ sentence *քեր.* բարդ համադասական նախադասություն. *հմկրգ.* ~ document բաղադրյալ փաստաթուղթ. ~ domain բաղադրյալ տիրույթ. ~ proposition բարդ ասույթ:

**compound** [kəm'paʊnd] v բաղադրել, խառնել, միացնել:

**comprehend** [ˌkɒmpri'hend] v հասկանալ, կռահել, ըմբռնել. I can't ~ Hegel's philosophy Չեմ կարող հասկանալ Հեգելի փիլիսոփայությունը:

**comprehensible** [ˌkɒmpri'hensəbl] a հասկանալի:

**comprehension** [ˌkɒmpri'hensən] n ըմբռնում, հասկանալու կարողություն. It passes/is beyond my ~ Ղա իմ հասկացողություննից վեր է:

**comprehensive** [ˌkɒmpri'hensiv] a բազմակողմանի, մանրամասն, սպառիչ. /մատչելի, հասկանալի/ ~ insurance լրիվ ապահովագրություն. ~ study բազմակողմանի ուսումնասիրություն a ~ school հանրակրթա-

կան դպրոց. ~ medicine ընդհանուր բժշկություն. ~ report մանրամասն զեկուցում:

**compress** [ˈkɒmpres] n *բժշկ.* թրջոց, կոմպրես:

**compress** [kəm'pres] v սեղմել, ճզմել. ~ a spring/one's lips/an article սեղմել զսպանակը/շուրթերը. կրճատել հոդվածը:

**compressed** [kəm'prest] a սեղմված, խտացրած. ~ air խտացրած օդ. a ~ account հակիրճ շարադրում:

**comprise** [kəm'praɪz] v ընդգրկել, բովանդակել, պարունակել. The collection ~s 50 stamps Հավաքածուն բաղկացած է 50 մամականիշից. The flat ~s two rooms Բնակարանը բաղկացած է 2 սենյակից:

**compromise** [ˈkɒmprəmaɪz] n փոխզիջում. settle for ~ համաձայնվել փոխզիջման:

**compromise** [ˈkɒmprəmaɪz] v փոխզիջում անել. վարկաբեկել. ~ oneself/one's reputation/smb իրեն/որևէ մեկին վարկաբեկել:

**compromiser** [ˈkɒmprəmaɪzə] n համաձայնողական/հաշտվողական անձ:

**compulsion** [kəm'pʌlʃn] n հարկադրանք, հարկադրում. բռնություն. act under ~ հարկադրաբար գործել. You are under no ~ Ձեզ չեն հարկադրում:

**compulsive** [kəm'pʌlsɪv] a հարկադրական, պարտադիր. a ~ smoker մոլի/թունը ծխող. a ~ liar ահավոր ստախոս:

**compulsory** [kəm'pʌlsrɪ] a պարտադիր, հարկադրական ~ liquidation հարկադիր լուծարում. ~ retirement age պարտադիր թոշակի տարիք:

**compunction** [kəm'pʌŋkʃn] n խղճի խայթ, զղջում. have no ~ in doing smth առանց խղճի խայթի այդ անել:

**computable** [kəm'pjʊ:təbl] a հաշվելի:

**computation** [ˌkɒmpju'teɪʃn] n հաշվում, հաշվարկում:

**computational** [ˌkɒmpju'teɪʃnl] a հաշվողական. ~ complexity հաշվարկի բարդություն. ~ problem հաշվողական խնդիր:

**compute** [kəm'pjʊ:t] v հաշվել, հաշվարկել:

**computer** [kəm'pjʊ:tə] n համակարգիչ, կոմպյուտեր. ~ based system ավտոմատացված համակարգ. ~ programmer համակարգչի ծրագրավորող. ~ dependent language կոմպյուտերային լեզու. ~ oriented language դեպի համակարգիչը կողմնորոշված լեզու. ~ independent language համակարգչից անկախ

լեզու. ~ network համակարգչային ցանց. ~ run *հմկրգ.* ծրագրի ակտիվացում. ~ virus համակարգչային վիրուս. ~ word մեքենայական բառ. ~ aids համակարգչային օժանդակ միջոցներ/պարագաներ. ~ related համակարգչի հետ կապված:

**computerize** [kəm'pjʊ:təraiz] v ավտոմատացնել. ~d learning համակարգչային ուսուցում. ~d system ավտոմատացված/կոմպյուտերացված համակարգ:

**computerized** [kəm'pjʊ:təraizd] a համակարգչային, համակարգչով կատարվող:

**computing** [kəm'pjʊ:tiŋ] n հաշվարկում, տվյալների մշակում. ~ algorithm հաշվողական ալգորիթմ. ~ environment հաշվողական միջավայր. ~ machine համակարգիչ, հաշվողական սարք:

**comrade** ['kɒmreɪd] n ընկեր:

**comrade-in-arms** [ˌkɒmreɪdɪn'ɑ:mz] n զինակից:

**comradeship** ['kɒmreɪdʃɪp] n ընկերություն, ընկերական հարաբերություններ:

**con** [kɒn] n դեմ. the pros and ~s թեր ու դեմ:

**concave** [ˌkɒn'keɪv] a գոգավոր:

**concavity** [ˌkɒn'kævətɪ] n գոգավոր մակերես:

**conceal** [kən'si:əl] v թաքցնել, պահել, քողարկել. the truth/one's feelings/the fugitive թաքցնել ճշմարտությունը/զգացմունքները/փախստականին. be ~ed թաքցնվել:

**concealer** [kən'si:lə] n թաքցնող, պարտակող, պարտակիչ:

**concealment** [kən'si:ləmənt] n թաքցնելը. թաքստոց. քողարկում. stay in ~ թաքցնվել:

**concede** [kən'si:d] v զիջել. ընդունել, համաձայնվել. ~ territory/a right զիջել տարածք/իրավունք. I ~ you that point Այս հարցում ես ձեզ զիջում եմ. Let us ~ ... Ընդունենք, որ...:

**conceit** [kən'si:t] n մեծամտություն. full of ~ մեծամիտ, ինքնահավան. He has a good ~ of himself Իր մասին մեծ կարծիք ունի. out of ~ (with) հիասթափված:

**conceited** [kən'si:tɪd] a սնապարծ, ինքնահավան:

**conceivable** [kən'si:vəbl] a հասկանալի, ընթանելի. try every ~ method փորձել բոլոր հնարավոր միջոցները. It's hardly ~ Դժվար է պատկերացնել. It's just ~ that... Չի բացառվում, որ...:

**conceivably** [kən'si:vəblɪ] adv ենթադրաբար. It can't be ~ true Դա չի կարող ճիշտ լինել:

**conceive** [kən'si:v] v միտք հղանալ, մտածել. ~ a plan միտք/ծրագիր հղանալ. I cannot ~ why... Չեմ կարող պատկերացնել, թե ինչու... I ~d a dislike for him Ես նրան չսիրեցի. I can't ~ of anything worse Ավելի վատ բան չեմ կարող մտածել. ~ a child հղիանալ:

**concentrate** ['kɒnsntreɪt] v կենտրոնացնել, կենտրոնանալ. I can't ~ on anything Ոչ մի բանի վրա չեմ կարող կենտրոնանալ:

**concentrated** ['kɒnsntreɪtɪd] a կենտրոնացված:

**concentration** [ˌkɒnsn'treɪʃn] n կենտրոնացում, համակենտրոնացում. a ~ of troops զորքերի կենտրոնացում. listen with ~ կենտրոնացված/լարված լսել. have powers of ~ կարողանալ կենտրոնանալ:

**concentric** [kən'sentrik] a համակենտրոն, համակենտրոնական:

**concept** ['kɒnsept] n հասկացություն, գաղափար:

**conception** [kən'sepʃn] n գաղափար, հասկացողություն. մտահղացում, հղիացում. a bold ~ խիզախ գաղափար. his ~ of the role այդ դերի նրա հասկացությունը/պատկերացումը. have no ~ գաղափար չունենալ:

**conceptual** [kən'sepʃʊəl] a *հմկրգ.* իմաստային. ~ dictionary հասկացությունների բառարան. ~ modelling կոնցեպտուալ մոդելավորում. ~ scheme կոնցեպտուալ սխեմա:

**concern** [kən'sɜ:n] n հոգս, անհանգստություն. հոգատարություն. That's your ~ Դա ձեր գործն է. That 's no ~ of yours Դա ձեր գործը չէ. his first ~ նրա առաջին հոգսը/գործը. have no ~ with առնչություն չունենալ. (ֆիրմա, ձեռնարկություն) family ~ ընտանեկան ձեռնարկություն. a paying ~ շահութաբեր ձեռնարկություն. a going ~ (արդեն) գործող ձեռնարկություն. It's of some ~ to all of us Դա ինչ-որ չափով բոլորիս է վերաբերում. feel no ~ անտարբեր լինել. What ~ is that of yours? Ի՞նչ կապ ունի դա ձեզ հետ. Mind your own ~s Ձեր գործով զբաղվեք:

**concern** [kən'sɜ:n] v վերաբերել, առնչություն ունենալ. This ~s everybody Դա բոլորին է վերաբերում. The article ~s the problem Գրքովածը վերաբերում է խնդրին. the parties ~ed շահագրգռված կողմերը. as far as I'm

~ed ինչ վերաբերում է ինձ. be ~ed in շահագրգռված լինել. as ~s ինչ վերաբերում է. (հոգալ, մտահոգվել). be ~ed about smn's health մեկի առողջությանը մտահոգվել. Don't ~ yourself about us Մեզ համար մի անհանգստացեք, Մեր մասին մի մտածեք:

**concerned** [kən'sə:nd] a մտահոգված, վրդովված. անհանգիստ, շահագրգիռ. ~ party (parties) շահագրգիռ կողմ/կողմեր:

**concerning** [kən'sə:nɪŋ] prep վերաբերյալ, նկատմամբ. ~ your work/her future ձեր աշխատանքի/նրա ապագայի վերաբերյալ:

**concert** ['kɒnsət] 1. n համերգ. attend the ~ համերգ գնալ. The ~ was cancelled/was off Համերգը չեղյալ հայտարարվեց. (համաձայնություն) in ~ with միասին, փոխադարձ համաձայնությամբ. They work in ~ Նրանք միասին են աշխատում. 2. a համերգային:

**concerted** [kən'sə:tid] a համաձայնեցված. a ~ effort համաձայնեցված գործողություններ:

**concerto** [kən'tʃeətəu] n երժշ. համերգ (երաժշտական երկ/ստեղծագործություն). a ~ for the piano համերգ դաշնամուրի համար:

**concession** [kən'seʃn] n զիջում, համաձայնություն. կոնցեսիա. make ~s on both sides փոխադարձ զիջման գնալ. ~ agreement զիջանքի համաձայնագիր:

**concessive** [kən'sesiv] a զիջող:

**conch** [kɒŋk] n խեցի, խխունջ:

**conciliate** [kən'silieit] v հաշտեցնել, հանգրտացնել. I did my best to ~ him Ես ամեն ինչ արեցի նրան հանգստացնելու համար:

**conciliation** [kən,sili'eɪʃn] n հաշտեցում, խաղաղեցում, հանգստացում. հաշտարարություն:

**conciliator** [kən'silieitə] n հաշտարար, հաշտարար միջնորդ. քղք. հաշտվողական, հաշտության կողմնակից:

**conciliatory** [kən'silieitəri] a հաշտվողական, հաշտարար:

**concise** [kən'sais] a համառոտ, կրճատ, հակիրճ. a ~ dictionary համառոտ բառարան. a ~ style հակիրճ ոճ. He was very ~ Նա շատ հակիրճ էր:

**conciseness** [kən'saɪsnəs] n համառոտություն, հակիրճություն:

**conclave** ['kɒŋkleɪv] n գաղտնի ժողով. եկեղ. կոնկլավ, Հռոմի պապի ընտրության ժողով:

**conclude** [kən'klu:d] v եզրափակել, վերջացնել. ~ one's speech ճառը եզրափակել. "to be ~d" վերջավորությունը հաջորդ համարում. ~ by saying that... որպես եզրակացություն ասել, որ... (կնքել) ~ a treaty/a bargain/transaction պայմանագիր/գործարք կնքել:

**concluding** [kən'klu:diŋ] a եզրափակիչ. ~ remarks եզրափակիչ դիտողություններ:

**conclusion** [kən'klu:ʒn] n եզրափակում, ամփոփում, հետևություն. եզրակացություն, ավարտ. mistaken/erroneous ~ սխալ հետևություն/եզրակացություն. in ~ որպես եզրակացություն, վերջում. come to /arrive at the ~ եզրակացության գալ. bring to ~ ավարտել, վերջացնել. the ~ of a treaty պայմանագրի կնքում. at the ~ of ավարտին, վերջում. a foregone ~ անխուսափելի եզրակացություն. draw a ~ եզրակացնել, հետևեցնել. jump to ~s հապճեպ եզրակացություններ անել:

**conclusive** [kən'klu:siv] a եզրափակիչ, վճռական. ~ evidence համոզիչ ապացույցներ. final and ~ վերջնական և անվերապահ:

**concoct** [kən'kɒkt] v եփել, պատրաստել. փխբ. հորինել, հնարել. ~ a plot for a novel/an excuse վեպի սյուժե/պատրվակ հորինել:

**concoction** [kən'kɒkʃn] n եփում, պատրաստում. ուտելիք, կերակուր. փխբ. հնարովի բան:

**concomitant** [kən'kɒmitənt] a զուգընթաց, ուղեկցող:

**concord** ['kɒŋkɔ:d] n համաձայնություն, դաշնագիր. երժշ. ներդաշնակություն:

**concordance** [kən'kɔ:dns] n համաձայնություն:

**concordant** [kən'kɔ:dnt] a համաձայն, ներդաշնակ:

**concrete** ['kɒŋkri:t] 1. n բետոն. armoured ~ երկաթբետոն. ~ mixer բետոնախառնիչ. 2. a բետոնե:

**concrete** ['kɒŋkri:t] a կոնկրետ, ռեալ. ~ fact/case/result կոնկրետ փաստ/դեպք/արդյունք. nothing ~ as yet դեռևս ոչ մի կոնկրետ բան:

**concretion** [kən'kri:ʃn] n սերտաճում, միակցում. քժշկ. քարեր:

**concubine** ['kɒŋkjubain] n հարձ:

**concur** [kən'kə:] v համընկնել. համամիտ լինել. ~ in a result արդյունքներով համընկնել:

**concurrence** [kən'kʌrəns] n համընկնում, զուգահիսում:

**concurrent** [kən'kʌrənt] a համընկնող. զուգընթաց, համընթաց. համատեղ, միատեղ. ~ training զուգահեռ ուսուցում. ~ views համընկնող տեսակետներ:

**concurrently** [kən'kʌrəntli] adv միաժամանակ:

**concession** [kən'kʌʃn] n հարված, ցնցում. *բժշկ.* ուղեղի ցնցում:

**condemn** [kən'dem] v դատապարտել. be ~ed to imprisonment բանտարկության դատապարտվել. (անապահով համարել, խտանել) The inspectors ~ed the meat Ստուգողները խտանեցին միսը. The building has been ~ed Շենքը որոշեցին քանդել:

**condemnation** [ˌkɒndem'neɪʃn] n դատապարտում, դատավճիռ:

**condemnatory** [kən'demnətəri] a դատապարտող, մեղադրական:

**condensation** [ˌkɒndən'seɪʃn] n խտացում, քանձրացում. խտացրած զանգված:

**condense** [kən'dens] v խտացնել, քանձրանալ. կրճատել, համառոտել. ~ a text տեքստը կրճատել:

**condenser** [kən'densə] n կոնդենսատոր, սառեցուցիչ:

**condemnd** [ˌkɒndi'send] բարեհաճ/ներողամիտ վերաբերվել. զիջողություն ցուցաբերել. He ~ed to see me personally Նա բարեհաճեց ինձ անձամբ տեսնել. He'd never ~ to bribery Նա երբեք չէր իջնի կաշառքի աստիճանի:

**condescending** [ˌkɒndi'sendiŋ] a հանդուրժող, ներողամիտ, զիջող:

**condescension** [ˌkɒndi'senʃn] n զիջողություն, ներողամտություն:

**condiment** ['kɒndimənt] n համեմունք:

**condition** [kən'diʃn] n պայման. on ~ that պայմանով, որ. on no ~ ոչ մի պայմանով. ~s of sale վաճառքի պայմանները. favourable/intolerable ~s բարենպաստ/անտանելի պայմաններ. under existing ~s տվյալ պայմաններում/պարագաներում. (վիճակ) splendid/critical ~ գերազանց/կրիտիկական վիճակ. The house is in terrible ~ Տունն ահավոր վիճակում է. be in no ~ ի վիճակի չլինել. be out of ~ *մրգ.* ձևի մեջ չլինել. in good ~ լավ վիճակում. out of ~ վատ վիճակում. change one's ~ *փխբ.* ամուսնանալ. in such ~s այսպիսի հանգամանքներում:

**condition** [kən'diʃn] v պայմանավորել. պատշաճ վիճակի հասցնել, բարվորել. Prices are ~ed Գները պայմանավորված են:

**conditional** [kən'diʃnəl] a պայմանական. *քեր.* պայմանական (նախադասություն/եղանակ):

**conditioned** [kən'diʃnd] a պայմանավորված. ~ reflex պայմանական ռեֆլեքս:

**condolatory** [kən'dɔlətri] a ցավակցական:

**condole** [kən'dəʊl] v կարեկցել, ցավակցել. I ~d with him on the death of his father Ես նրան ցավակցություն հայտնեցի հոր մահվան կապակցությամբ:

**condolence** [kən'dəʊləns] n ցավակցություն, կարեկցություն:

**condominium** [ˌkɒndə'miniəm] n համատիրություն:

**condone** [kən'dəʊn] v թողություն տալ, ներել. He appeared to ~ his friend Թվում էր, թե նա ներել է իր ընկերոջը:

**conduce** [kən'dju:s] v նպաստել, օժանդակել:

**conducive** [kən'dju:siv] a նպաստող, օժանդակող. Exercise is ~ to health Վարժությունները օգտակար են առողջության համար:

**conduct** ['kɒndʌkt] n վարք. improper/shocking/inexcusable ~ անպատշաճ/ չլսված/աններելի վարք. (վարում, ղեկավարում) standard of ~ ղեկավարման չափորոշիչ. ~ of the war/elections պատերազմ/ընտրություններ (վարելը, ղեկավարելը) ~ of fire *ռզմ.* կրակի ղեկավարում:

**conduct** [kən'dʌkt] v վարել. ~ oneself իրեն պահել. վարվել. (ղեկավարել, տանել) She ~s parties Նա խմբեր է ղեկավարում ~ smb across the street փողոցն անցկացնել. ~ an examination/experiment/meeting քննություն/փորձ/ժողով անցկացնել. ~ negotiations բանակցություններ վարել. ~ a siege պաշարումը ղեկավարել. Who's ~ing the orchestra? Ո՞վ է դիրիժորը. ~ electricity/heat էլեկտրականություն/ջերմություն հաղորդել:

**conducted** [kən'dʌktɪd] a ղեկավարված, վարված. a ~ tour էքսկուրսիա:

**conductivity** [ˌkɒndʌk'tɪvəti] n հաղորդականություն, ջերմահաղորդություն:

**conductor** [kən'dʌktə] n *երժշ.* դիրիժոր. խմբավար. guest ~ հրավիրված դիրիժոր. (ավտոբուս և այլն) տոմսավաճառ, վագո-



նավար. *էլ*. հաղորդիչ. *երկթ*. ուղեկցող. lightning ~ շանթարգել:

**cone** [kəʊn] n *մաթ*. կոն. *բւք*. սոճու/եղևնու կոն:

**confection** [kən'fekʃən] n քաղցրեղեն. կանացի պատրաստի հագուստեղեն:

**confectioner** [kən'fekʃənə] n հրուշակագործ, հրուշակավաճառ. ~'s shop հրուշակարան:

**confectionery** [kən'fekʃənəri] n հրուշակեղեն, հրուշակարան:

**confederacy** [kən'fedəreɪsi] n կոնֆեդերացիա, լիգա. դաշնակցություն. դավադրություն:

**confederate** [kən'fedəreɪt] 1. n կոնֆեդերացիայի անդամ. դաշնակից. հանցակից, դավակից. 2. a ֆեդերալ, դաշնակցային. 3. v միավոր(վ)ել դաշնակցության մեջ մտնել:

**confederation** [kən, fedə'reiʃən] n համադաշնություն:

**confer** [kən'fə:] v շնորհել. գիտական կոչում շնորհել. ~ a doctorate դոկտորի աստիճան շնորհել. (քննարկել) ~ with smb about smth խորհրդակցել մեկի հետ որևէ բանի մասին:

**conference** ['kɒnfrəns] n համաժողով, խորհրդաժողով, խորհրդակցություն. կոնֆերանս (համագումար) call/arrange/hold a ~ կոնֆերանս հրավիրել/կազմակերպել/անցկացնել. press/summit ~ մամուլի/ բարձր մակարդակի խորհրդակցություն/կոնֆերանս. cabinet ~ նախարարների խորհրդակցություն:

**conferment** [kən'fə:mənt] n շնորհում (գիտական աստիճանի/կոչման և այլն):

**confess** [kən'fes] v խոստովանել (*նաև*՝ կրոնական). ~ a crime հանցանք/ոճիր խոստովանել. He ~ed everything նա ամեն ինչ խոստովանեց:

**confessedly** [kən'fesdli] adv համաձայն սեփական խոստովանության:

**confession** [kən'fesʃən] n խոստովանություն. դավանանք. full ~ բացարձակ խոստովանություն. make a full ~ ամեն ինչ խոստովանել. voluntary ~ ինքնակամ/հոժարակամ/կամավոր խոստովանություն:

**confessor** [kən'fesə] n խոստովանահայր, խոստովանող:

**confidant** ['kɒnfɪdənt] n մտերիմ/սրտակից անձնավորություն:

**confide** [kən'faɪd] v վստահել, ապավինել. ~

a secret գաղտնիքը վստահել. He ~d to me նա ինձ վստահեց. I have nobody to ~ in Չկա որևէ մեկը, ում վստահեմ:

**confidence** ['kɒnfɪdəns] n վստահություն. have ~ in վստահություն ունենալ, վստահել. lose ~ վստահությունը կորցնել. give one's ~ to վստահել. place ~ in հավատալ, վստահել. told in ~ գաղտնաբար ասված. enjoy smb's ~ օգտվել մեկի վստահությունից. have every ~ լրիվ վստահել. (ինքնավստահություն, համոզվածություն) speak with ~ ինքնավստահորեն խոսել. gain ~ (ավելի շատ) ինքնավստահություն ձեռք բերել. (գաղտնիք) in strict ~ խիստ գաղտնի. exchange ~s գաղտնիքներ փոխանակել. ~ man *կրծ*. conman խաբեբա, խարդախ մարդ:

**confident** ['kɒnfɪdənt] 1. a վստահ, համարձակ, ինքնավստահ. be/feel ~ վստահ լինել. ~ of success հաջողության մեջ վստահ. ~ voice վստահ ձայն. 2. n մտերիմ/սրտակից մարդ:

**confidential** [ˌkɒnfi'denʃl] a գաղտնի, հավատարմական. a ~ secretary/talk վստահելի քարտուղար. գաղտնի/կոնֆիդենցիալ խոսակցություն. ~ papers գաղտնի փաստաթղթեր:

**confidently** ['kɒnfɪdəntli] adv համոզված, վստահ:

**confiding** [kən'faɪdɪŋ] a դյուրահավատ, հավատ ընծայող:

**confine** [kən'faɪn] n սահման, սահմանագիծ. within/beyond the ~s of սահմաններում/սահմաններից դուրս:

**confine** [kən'faɪn] v սահմանափակ(վ)ել. բանտարկել. ~ birds in a cage թռչուններին վանդակում պահել. be ~d to the house with flu գրիպով տանը մնալ. be ~d to bed անկողնում զամված լինել. ~ oneself to the facts փաստերով սահմանափակվել. the damage is ~d to վնասվել են... be ~d *բժշկ*. ծնել, ազատվել:

**confinement** [kən'faɪnmənt] n սահմանափակում, բանտարկություն. *բժշկ*. ծննդաբերություն. solitary ~ մեկուսի բանտարկություն:

**confirm** [kən'fə:m] v հաստատել. վավերացնել. *եկեղ*. նախահաղորդել. ~ by letter նամակով/գրավոր հաստատել. His suspicions were ~ed նրա կասկածները հաստատ-

վեցին. ~ the appointment նշանակումը հաստատել:

**confirmation** [ˌkɒnfəˈmeɪʃn] n հաստատում, վավերացում. *եկեղ*. մախահաղորդություն, կոնֆիրմացիա. in ~ of ի հաստատումն:

**confirmed** [kənˈfɜːmd] a համոզված. մոլի, թունդ. ~ bachelor/druncard/invalid երդվյալ ամուրի. մոլի հարբեցող. խրոնիկական հիվանդ:

**confiscate** [ˈkɒnfiskeɪt] v բռնագրավել:

**confiscation** [ˌkɒnfiˈskeɪʃn] n բռնագրավում:

**conflagration** [ˌkɒnfləˈɡreɪʃn] n մեծ հրդեհ:

**conflict** [ˈkɒnflɪkt] n ընդհարում, հակամարտություն, բախում, հակասություն. a ~ of interests/opinions/principles շահերի/կարծիքների/սկզբունքների բախում. inevitable ~ անխուսափելի ընդհարում. avoid a ~ կոնֆլիկտից խուսափել. be in ~, come into ~ կոնֆլիկտի մեջ լինել:

**conflict** [kənˈflɪkt] v հակասել, բախման մեջ լինել. His report ~s with yours Նրա հաղորդումը հակասում է ձերին:

**conflicting** [kənˈflɪktɪŋ] a հակասող, հակասական. ~ evidence հակասական ցուցմունք. ~ interests բախվող շահեր:

**confluence** [ˈkɒnfluəns] n միախառնում, միացում. ~ of rivers գետերի միացում. (ճանապարհների) հատում:

**confluent** [ˈkɒnfluənt] 1. n վտակ. 2. a միախառնվող:

**conflux** [ˈkɒnflʌks] n համախառնում. ամբոխ:

**conform** [kənˈfɔːm] v համապատասխանել. համաձայնեցնել. հարմարվել, համակերպվել. ենթարկվել. ~ to the regulations կանոնների/նորմերին համապատասխանել. ~ to fashion/the rules ենթարկվել մոդային/կանոնների:

**conformation** [ˌkɒnfɔːˈmeɪʃn] n կերտվածք, ձև, կառուցվածք. կանոններին ենթարկվել:

**conformity** [kənˈfɔːməti] n համապատասխանություն. in ~ with... համաձայն...:

**confound** [kənˈfaʊnd] v ապշեցնել, շշմեցնել. խառնաշփոթել. be ~ed by the news նորությունից ապշել/շշմեցնել. C~ it! Սատանան տանի՛. C~ the man! Անե՛ծք, սատանան տա-

նի՛. What a ~ed nuisance! Ափսո՛ս (սրտնեղություն):

**confounded** [kənˈfaʊndɪd] a շփոթված, մոլորված. *խսկց*. անիծված, անիծյալ. *փխք*. դժոխային, անտանելի:

**confoundedly** [kənˈfaʊndɪli] adv *խսկց*. սարսափելի, սուկալի, սաստիկ:

**confront** [kənˈfrʌnt] v դիմակայել, հակադրվել. հանդիպել. ~ danger վտանգի երեսին նայել(դեմ կանգնել). be ~ed by unexpected obstacles անսպասելի խոչընդոտների հանդիպել. He is afraid to ~ his father Նա վախենում է երես առ երես հորը հանդիպել. the difficulties that ~ us դժվարությունները, որ ծառանում են մեր առջև:

**confrontation** [ˌkɒnfrʌnˈteɪʃn] n առերեսում, դիմակայություն. policy of ~ առճակատման քաղաքականություն:

**confuse** [kənˈfjuːz] v խառնել, շփոթել, խճճել. I always ~ her for her sister Ես միշտ նրան քրոջ հետ եմ խառնում. feel ~d շփոթվել. get finally/completely ~d վերջնականապես շփոթվել/խճճվել. be ~d by questions հարցերից շփոթվել. Don't ~ the issue Մի խճճեք գործը/հարցը:

**confused** [kənˈfjuːzd] a խճճված, խառնաշփոթ. շփոթված, մոլորված:

**confusing** [kənˈfjuːzɪŋ] a բարդ, խճճված. շփոթեցնող. The rules seem very ~ Այս կանոնները շատ բարդ/խճճված են թվում. London is very ~ for a foreigner Օտարերկրացու համար Լոնդոնում շատ հեշտ է մոլորվելը:

**confusion** [kənˈfjuːʒn] n անկարգություն, խառնաշփոթություն. շփոթումը. There was some ~ over the dates Ամսաթվերի կապակցությամբ ինչ-որ խառնաշփոթություն կա. The army retreated in ~ Բանակը անկարգ ձևով նահանջեց:

**confutable** [kənˈfjuːtəbl] a հերքելի:

**confutation** [ˌkɒnfjuˈteɪʃn] n հերքում:

**confute** [kənˈfjuːt] v հերքել:

**congeal** [kənˈdʒiːl] v սառել, պաղել. սառեցնել, պաղեցնել. The blood ~ed/was ~ed Արյունը մակարդվեց:

**congelation** [ˌkɒndʒiˈleɪʃn] n սառում, սառեցում. թանձրացում. մակարդում:

**congenial** [kənˈdʒiːniəl] a նման, մոտ. հարմար. բարենպաստ. ~ person հաճելի անձնավորություն. ~ work հետաքրքիր աշխատանք. a ~ climate բարենպաստ կլիմա:

**congeniality** [kən,dʒi:ni'æləti] n ընդհանրություն, ազգակցություն:  
**congenital** [kən'dʒenitl] a բնածին:  
**congeries** [kən'dʒiəri:z] n կույտ, զանգված:  
**congest** [kən'dʒest] v գերծանրաբեռնել. չափից շատ լցնել. լցվել. խռնվել:  
**congested** [kən'dʒestid] a գեր(ծանրա)բեռնված, գերբնակեցված. ~ streets (երթևեկությանը) գեր(ծանրա)բեռնված փողոցներ. a ~ area գերբնակեցված շրջան:  
**congestion** [kən'dʒestʃən] n գերբեռնվածություն, գերբնակեցվածություն. *բժշկ.* արյունախռնում:  
**conglomerate** [kən'glɒməɾət] n բեկորային ապար, կոնգլոմերատ:  
**conglomeration** [kən,glɒmə'reiʃn] n միաձուլում, կուտակում, կոնգլոմերատ:  
**congratulate** [kən'grætʃuleit] v շնորհավորել. ~ on one's marriage ամուսնությունը շնորհավորել:  
**congratulation(s)** [kən,grætʃu'leiʃn(s)] n շնորհավորում, շնորհավորանք. My ~ on your success Շնորհավորանքներս ձեր հաջողության կապակցությամբ. accept ~s շնորհավորանքն ընդունել. C~ ! Շնորհավորում եմ:  
**congratulatory** [kən,grætʃu'leitəri] a շնորհավորական:  
**congregate** ['kɒŋgrigeit] v հավաք(վ)ել, կուտակ(վ)ել. խռնվել:  
**congregation** [kən'grɛi'geiʃn] n հավաքույթ. համալսարանական խորհրդի ժողով (Օքսֆորդ, Քեմբրիջ). *եկեղ.* միաբանություն, համայնք:  
**congress** ['kɒŋgres] n համագումար. the Congress ԱՄՆ-ի կոնգրեսը. writers'/medical ~ գրողների/բժիշկների համագումար:  
**congressional** [kən'greʃnəl] a կոնգրեսի վերաբերող. ընտրական:  
**Congressman** ['kɒŋgresmən] n ԱՄՆ-ի կոնգրեսի անդամ:  
**congruence** ['kɒŋgruəns] n համապատասխանություն, համաձայնեցում:  
**congruent** ['kɒŋgruənt] a համապատասխան, ներդաշնակ:  
**congruous** ['kɒŋgruəs] a համապատասխանող, համընկնող. կապակցված:  
**conic** ['kɒnik] (*նակ* conical) a կոնական, կոնային, կոնաձև:

**conical** [kɒnikl] a կոնական, կոնային, կոնաձև:  
**conifer** ['kɒnifə] n փշատերև ծառ:  
**coniferous** [kəu'nifərəs] a փշատերև:  
**conjectural** [kən'dʒektʃrəl] a ենթադրական:  
**conjecture** [kən'dʒektʃə] n ենթադրություն, կռահում:  
**conjecture** [kən'dʒektʃə] v ենթադրել, կռահել. One can only ~ Կարելի է միայն ենթադրել:  
**conjoin** [kən'dʒɔin] v միանալ, միացնել:  
**conjoint** [kən'dʒɔint] a միացյալ, միավորված, հարակից:  
**conjugal** ['kɒndʒugl] a ամուսնական. ~ rights ամուսնական իրավունքներ:  
**conjugality** [kɒndʒu'gæləti] n ամուսնություն:  
**conjugate** ['kɒndʒugət] a *կենս.* միացած, զուգորդված. *մաթ.* զուգորդված. *բար.* զույգ. *լեզվ.* ազգակից:  
**conjugate** ['kɒndʒugeit] v *բեր.* խոնարհել. *կենս.* միանալ, զուգավորվել:  
**conjugation** [kɒndʒu'geiʃn] n *բեր.* խոնարհում. միացում:  
**conjunct** ['kɒndʒʌŋkt] a միացյալ, միավորված:  
**conjunction** [kən'dʒʌŋkʃn] n միացություն, հարակցություն. միացում, միավորում. *բեր.* կապ, շաղկապ. in ~ միասին. in ~ with him նրա հետ մեկտեղ. The firms acted in ~ Ֆիրմաները գործում էին միասին:  
**conjunctive** [kən'dʒʌŋktiv] n, a *բեր.* ստորադասական եղանակ. շաղկապող, կապող. *ֆիզ.* շարակցական (հյուսվածք):  
**conjunction** [kən'dʒʌŋktʃə] n հանգամանքների զուգադիպություն. իրադրություն, կոնյունկտուրա:  
**conjure** ['kɒndʒə] v ածպարարություն անել. ֆոկլուսներ ցույց տալ. *փխբ.* կախարդել, հմայել, դյութել. ~ away ոգիներին քշել. ~ up հիշողության մեջ վերապահել:  
**conjurer/or** ['kɒndʒərə] n ձեռնածու, ածպարար. կախարդ, վիուկ. He is no ~ Կախարդելը նրա բանը չէ:  
**conk** [kɒŋk] n *խսկց.* քիթ. շարժիչի անկանոն աշխատանք. ~ out փչանալ, շարքից դուրս գալ:  
**conky** [kɒŋki] a *խսկց.* մեծ քթանի, մեծաքիթ:

**connate** [ˈkɒneɪt] a բնածին. միաժամանակ ծնված/ծագած:

**connatural** [kəˈnætʃrəl] a բնածին, մեծան, միանման:

**connect** [kəˈnekt] v միացնել, միանալ. կապ/վել. ~ the gas/telephone/electricity գազը/հեռախոսը/էլեկտրականությունը միացնել. The new road ~s these towns Նոր ճանապարհը միացնում է այս քաղաքները. ~ed by marriage ամուսնության միջոցով ձեռք բերված (բարեկամներ/խնամիներ):

**connected** [kəˈnektɪd] a միացրած, միացված, կապված. well ~ մեծ կապեր ունեցող:

**connection** [kəˈneɪʃn] n կապ, հարաբերություն, կցում. in this ~ այս կապակցությամբ. in ~ with կապակցությամբ. a casual ~ պատճառական կապ. a loose ~ թույլ կապ. The buses run in ~ with the trains Ավտոբուսների և գնացքների չվացուցակները համաձայնեցված են. ~s կապեր. have good business ~s լավ գոծարար կապեր ունենալ. family ~s ազգականներ:

**connective** [kəˈnektɪv] 1. n *թեր.* կապ, կապակցող մասնիկ. 2. a կապող, շաղկապող:

**connivance** [kəˈnaɪvns] n թողտվություն, ներողամտություն: with the ~ of թողտվությամբ:

**connive** [kəˈnaɪv] v մատների արանքով նայել. չարգելել. ~ at smth աչքերը փակել:

**connoisseur** [kɒnəˈsɔː] n գիտակ. a ~ of literature/wine զրականության գիտակ. գինու արժեքն իմացող/զնախատող:

**connotation** [ˌkɒnəˈteɪʃn] n (բառի) լրացուցիչ իմաստ:

**connote** [kəˈnəʊt] v լրացուցիչ իմաստ ունենալ (բառի, փաստերի):

**connubial** [kəˈnjuːbiəl] a ամուսնական:

**conquer** [ˈkɒŋkə] v հաղթել. նվաճել. տիրել. զսպել (զգացմունքները, ցանկությունները):

**conqueror** [ˈkɒŋkərə] n հաղթող, նվաճող. *մրգ.* վճռական խաղ:

**conquest** [ˈkɒŋkwɛst] n նվաճում, հաղթանակ. the ~ of Everest էվերեստի նվաճումը:

**consanguineous** [ˌkɒnsæŋˈɡwɪniəs] a արյունակցական:

**consanguinity** [ˌkɒnsæŋˈɡwɪnəti] n արյունակցություն, ազգակցություն:

**conscience** [ˈkɒnʃəns] n խիղճ, խղճմտանք.

good/clear, clean ~ մաքուր խիղճ. bad/guilty ~ անմաքուր խիղճ. a matter/case of ~ խղճի գործ է. liberty of ~ խղճի ազատություն. have smth on one's ~ խղճի վրա ծանրացած լինել. have the ~ հանդգություն ունենալ. in all ~ անկեղծ ասած. ձեռքը խղճին դրած. His ~ bothered/troubled him խիղճը տանջում էր նրան. Get it off your ~ խիղճդ ազատիր/մաքրիր:

**conscientious** [ˌkɒnʃiˈenʃəs] a խղճով, խղճմտանքով. բարեխիղճ, գիտակցական. a ~ worker/piece of work բարեխիղճ աշխատող, բարեխղճորեն կատարված աշխատանք:

**conscious** [ˈkɒnʃəs] a գիտակցող, գիտակից. a ~ effort գիտակցված ջիգեր. ~ choice գիտակցված ընտրություն. be/become ~ գիտակցել. be ~ of one's guilt մեղքը գիտակցել. (զգալ) be ~ of (a scent) gas գազի հոտ զգալ. be ~ of discomfort անհարմարություն զգալ. become ~ of a pain ցավ զգալ. ~ to the last *բժշկ.* մինչև վերջին վայրկյանը գիտակցությունը պահպանել:

**consciously** [ˈkɒnʃəsli] adv գիտակցորեն:

**consciousness** [ˈkɒnʃənsnəs] n գիտակցություն, ըմբռնում, loose/recover, regain ~ գիտակցությունը կորցնել. գիտակցության/ուշքի գալ. class ~ դասակարգային ինքնագիտակցություն:

**conscript** [ˈkɒnskript] n զինվորական ծառայության կանչված անձ. զորակոչիկ.

**conscript** [kənˈskript] v զորակոչել:

**conscription** [kənˈskriptʃn] n զինվորական ծառայություն. ընդհանուր զինապարտություն. ~ age զորակոչի տարիք:

**consecrate** [ˈkɒnsəkreɪt] v նվիրել, նվիրաբերել. ձոնել:

**consecrated** [ˈkɒnsəkreɪtɪd] a նվիրված, նվիրաբերված, ձոնված:

**consecration** [ˌkɒnsiˈkreɪʃn] n նվիրում, նվիրաբերում, ձոնում:

**consecution** [ˌkɒnsiˈkjuːʃn] n հաջորդականություն, հետևողականություն. *թեր.* հաջորդականություն:

**consecutive** [kənˈsekjʊtɪv] a հաջորդական, հետևողական. իրար հետևից, հաջորդաբար. four days ~ 4 օր հաջորդաբար:

**consecutively** [kənˈsekjʊtɪvli] adv հաջորդաբար:

**consensus** [kənˈsensəs] n համաձայնություն,

ներդաշնակություն. ~ of opinions կարծիքների միաձայնություն/համաձայնություն:

**consent** [kən'sent] **1.** *n* համաձայնություն, թույլտվություն. by common/tacit ~ ընդհանուր/լուռ համաձայնությամբ. mutual ~ փոխադարձ համաձայնություն. prior ~ նախնական համաձայնություն. win smb's ~ համաձայնության հասնել/ստանալ. give one's ~ համաձայնությունը տալ. **2.** *v* ~ (to) համաձայնվել:

**consequence** ['kɒnsɪkwəns] *n* հետևանք. in ~ of հետևանքով. take the ~s պատասխանատու լինել հետևանքների համար. fear ~s հետևանքներից վախենալ. (կարևորություն) It's of ~/no ~ Դա կարևոր է. Ոչ մի կարևորություն չունի. regardless of the ~ անկախ հետևանքներից. a man of some ~ ազդեցիկ դեմք, կարևոր անձ. as a ~ արդյունքում:

**consequent** ['kɒnsɪkwənt] **1.** *a* հաջորդական, հետևողական, հաջորդող. **2.** *n* ~ on/upon հետևից եկող, հաջորդող.

**consequential** [,kɒnsɪ'kwɛntʃl] *a* հետևանքային. ~ damage անուղղակի վնաս:

**consequently** ['kɒnsɪkwəntʃli] *adv* հետևաբար, արդյունքում. ուստի:

**conservation** [,kɒnsə'veɪʃn] *n* պահպանում, պահում. պաշտպանություն. պահածո պատրաստելը. nature ~ բնապահպանում. ~ area արգելանոց, արգելագոտի:

**conservationists** [,kɒnsə'veɪʃnɪsts] *n* բնապահպաններ:

**conservative** [kən'sə:vətɪv] **1.** *n* պահպանողական. չափավոր. go ~ պահպանողական դառնալ. **2.** *a* պահպանողական, ռեակցիոն. չափավոր. at a ~ estimate համեստ հաշվարկներով:

**conservatoire** [kən'sə:vətwa:] *n* կոնսերվատորիա:

**conservator** [kən'sə:vətə] *n* պահպան, խնամակալ. պահպանության վարչության աշխատակից:

**conservatory** [kən'sə:vətɪri] *n* ջերմոց, ծաղկաջերմոց. *ամ.* կոնսերվատորիա:

**conserve** [kən'sə:v] *n* շաքարած միրգ. մուրաբա. ~ one's strength ուժերը պահպանել:

**consider** [kən'sɪdə] *v* համարել, քննարկել. ~ important կարևոր համարել. He is ~ed a brilliant doctor Նա փայլուն բժիշկ է համարվում. (մտածել, խորհել) ~ a problem խորհել հարցի շուրջը. ~ the matter carefully մանրա-

մասն մտածել այդ մասին. He wouldn't ~ it for a moment Նա այդ մասին չէր էլ մտածի. ~ smn for a post պաշտոնի համար թեկնածությունը քննարկել. Let me ~ a little թույլ տվեք մտածեմ. (հաշվի առնել, նկատի ունենալ) ~ the feelings of others ուրիշների զգացմունքները հաշվի առնել. all things ~ed հաշվի առնելով/նկատի ունենալով ամեն ինչ:

**considerable** [kən'sɪdərəbl] *a* նշանակալի, բավականաչափ, զգալի. *a* ~ income զգալի եկամուտ. ~ difficulty զգալի դժվարություններ. Their number is ~ Քանակը բավականին մեծ է. have ~ doubts խիստ կասկածներ ունենալ:

**considerably** [kən'sɪdərəbli] *adv* նշանակալիորեն, շատ:

**considerate** [kən'sɪdərət] *a* քաղաքավարի, նրբազգաց, ուշադիր. be ~ of/to/towards others ուշադիր լինել ուրիշների նկատմամբ:

**consideration** [kən,sɪdə'reɪʃn] *n* քննում, քննարկում. դատողություն. under ~ քննարկվող. take into ~ հաշվի առնել, նկատի ունենալ. leave out of ~ հաշվի չառնել. աչքաթող անել. ~ without due/further ~ առանց լուրջ/հետազա քննարկման. in ~ of նկատի ունենալով, հաշվի առնելով. give serious ~ լուրջ քննարկել. valuable ~ պատշաճ բավարարում. ուշադրություն, հարգանք of ~ հարգանք վայելող, ակնավոր. show ~ for smb ուշադրություն ցուցաբերել. (նկատառում, կարծիք, գործոն) on no ~ ոչ մի դեպքում. financial/diplomatic ~s ֆինանսական/դիվանագիտական նկատառումներ. Time is an important ~ ժամանակը կարևոր գործոն է:

**considering** [kən'sɪdərɪŋ] *prep* հաշվի առնելով, նկատի ունենալով. ~ his age հաշվի առնելով նրա տարիքը:

**consign** [kən'saɪn] *v* հանձնել, հանձնարարել. The child was ~ed to the care of his uncle Երեխային հանձնել էին քեռու խնամքին. (ապրանք առաքել) ~ goods by sea ծովով ապրանք առաքել. ~ the project to oblivion նախագիծը մոռացության տալ:

**consignee** [,kɒnsaɪ'ni:] *n* բեռնընկալ, ապրանք ստացող, ապրանքառու:

**consignment** [kən'saɪnmənt] *n* բեռ, ապրանք. ապրանքի առաքում. *a* ~ of goods ապրանքի մի խմբաքանակ:

**consist** [kən'sɪst] *v* բաղկանալ, բաղկացած լինել. պարունակել. The group ~s of five

members **խումբը բաղկացած է հինգ անդամներից**. The difficulty ~s in... **Բարդությունը կայանում է նրանում...**

**consistence** [kən'sistəns] **n** կազմություն, խտություն (նյութի). խտության աստիճան:

**consistency** [kən'sistənsi] **n** համակազմվածք, կազմություն, խտություն. *փխք*. հետևողականություն, կայունություն. pouring ~ հեղուկ վիճակ:

**consistent** [kən'sistent] **a** հետևողական. կայուն. համատեղելի. be not ~ հետևողական չլինել. This is not ~ with what you said yesterday Սա համատեղելի չէ այն բանի հետ, ինչ դուք երեկ ասացիք:

**consistently** [kən'sistentli] **adv** հետևողականորեն. կայուն կերպով. մշտապես. He has ~ refused that job Նա մշտապես հրաժարվել է այդ աշխատանքից:

**consolation** [ˌkɒnsə'leɪʃn] **n** մխիթարություն, սփոփանք. ~ prize “սփոփիչ” մրցանակ:

**consolatory** [kən'sɒlətəri] **a** մխիթարական, սփոփիչ:

**console** [ˌkɒnsəʊl] **n** *ճրտ*. բարձակ. ~ mirror որմնահայելի, տրյումֆ:

**console** [kən'səʊl] **v** մխիթարել, սփոփել:

**consolidate** [kən'sɒlɪdeɪt] **v** ամրացնել, ամրանալ. ~ one's position/influence ամրացնել դիրքը/ազդեցությունը:

**consolidated** [kən'sɒlɪdeɪtɪd] **a** միավորված. հաստատունացած. ամփոփված. ~ information ամփոփված տեղեկություններ:

**consolidation** [kən'sɒli'deɪʃn] **n** ամրացում. միավորում. ձուլում. land ~ հողամասերի մեծացում, միավորում:

**consomme** [kɒn'sɒmeɪ] **n** արգանակ, մսաջուր, բուլյոն:

**consonance** [ˌkɒnsə'nəns] **n** ներդաշնակություն. *երժշ*. համահնչունություն. *փխք*. համաձայնություն, համերաշխություն. in ~ with համերաշխ:

**consonant** [ˌkɒnsə'nənt] **n**, **a** *քեր*. բաղաձայն հնչյուն. համաձայն, համընկնող, ներդաշնակ:

**consort** [ˌkɒnsɔ:t] **n** ամուսին. prince ~ իշխող թագուհու ամուսինը:

**consort** [kən'sɔ:t] **v** ~ with շփվել, ուղեկցել:

**conspicuous** [kən'spɪkjʊəs] **a** նկատելի, աչքի ընկնող, ցայտուն. He is ~ by his absence Նրա բացակայությունը նկատելի է. a ~

tie վառ/ ուշագրավ փողկապ. ~ because of his height հասակով աչքի ընկնել. ~ place նկատելի/աչքի ընկնող տեղ:

**conspicuously** [kən'spɪkjʊəsli] **adv** dress ~ աչքի զարնող ձևով հագնվել. behave ~ իցույց դնել:

**conspiracy** [kən'spɪrəsi] **n** գաղտնիություն, դավադրություն. a ~ of silence լռության դավադրություն:

**conspirator** [kən'spɪrətə] **n** դավադիր:

**conspire** [kən'spaɪə] **v** դավադրություն կազմել. ~ against smb/with smb դավադրություն մեկի դեմ/մեկի հետ մեկտեղ Events seemed to ~ against me Թվում է՝ ամեն ինչ իմ դեմ է ուղղված:

**constable** [ˈkɒnstəbl] **n** ոստիկան. chief ~ ոստիկանապետ:

**constabulary** [kən'stæbjʊləri] **n** ոստիկանություն:

**constancy** [ˈkɒnstənsi] **n** հավատարմություն, կայունություն. ~ of purpose նպատակի հաստատություն:

**constant** [ˈkɒnstənt] **n** *մաթ.*, *ֆիզ.* հաստատուն մեծություն:

**constant** [ˈkɒnstənt] **a** մշտական, հաստատուն, կայուն. a ~ visitor/friend մշտական այցելու. հաստատուն ընկեր. ~ rain անդադար/անընդհատ անձրև. ~ current հաստատուն հոսանք. *հմկրգ.* ~ area հաստատունների տիրույթ. ~ declaration հաստատունի հայտարարություն. ~ storage հաստատուն հիշողություն:

**constantly** [ˈkɒnstəntli] **adv** մշտապես, շարունակ, հաճախակի:

**constellation** [ˌkɒnstə'leɪʃn] **n** համաստեղություն:

**consternation** [ˌkɒnstə'neɪʃn] **n** սարսափ, ահ. in ~ սարսափի մեջ. general ~ համընդհանուր սարսափ:

**constipation** [ˌkɒnstɪ'peɪʃn] **n** *բժշկ.* փորկապություն. suffer from ~ փորկապությամբ տառապել:

**constituency** [kən'stɪtjʊənsi] **n** ընտրողներ, ընտրախավ, ընտրատարածք. հաճախորդներ, բաժանորդներ:

**constituent** [kən'stɪtjʊənt] **n** բաղադրիչ մաս. *քղք.* ընտրող:

**constituent** [kən'stɪtjʊənt] **a** բաղադրիչ. a ~ assembly *քաղ.* սահմանադիր ժողով:

**constitute** [ˈkɒnstɪtju:t] **v** նշանակել. հիմնել,

հաստատել. կազմել. ~a committee կոմիտե հիմնել. He was ~d adviser Նրան նշանակեցին խորհրդատու. ~a precedent նախադեպ ստեղծել. Terrorism ~s a serious threat Ահաբեկչությունը լուրջ վտանգ է սպառնում:

**constitution I** [ˌkɒnstɪˈtʃuːʃn] n մարմնի կազմվածք, կերտվածք, կազմություն. կազմ. have a strong ~ ամուր կազմվածք ունենալ:

**constitution II** [ˌkɒnstɪˈtʃuːʃn] n սահմանադրություն:

**constitutional** [ˌkɒnstɪˈtʃuːʃnəl] n սահմանադրական. ~ court սահմանադրական դատարան:

**constitutionally** [ˌkɒnstɪˈtʃuːʃnəli] adv օրգանապես. be ~ delicate մուրք կառուցվածք ունենալ:

**constitutive** [kənˈstɪtjʊtɪv] a սահմանադիր. բաղադրիչ:

**constitutor** [ˈkɒnstɪtjʊtə] n սահմանադիր, հիմնող, հիմնադիր:

**constrain** [kənˈstreɪn] v հարկադրել, ստիպել. feel ~ed to intervene ստիպված լինել միջամտելու:

**constrained** [kənˈstreɪnd] a հարկադրված, կաշկանդված:

**constrainedly** [kənˈstreɪndli] adv հարկադրված, լարվածությամբ:

**constraint** [kənˈstreɪnt] n հարկադրանք, ճնշում. լարվածություն. under ~ հարկադրված. ճնշման տակ. feel ~ ճնշված/լարում զգալ:

**constrict** [kənˈstrikt] v սեղմել, ճնշել:

**constricted** [kənˈstriktɪd] a ճնշված, նեղված:

**constriction** [kənˈstriktʃn] n սեղմում, ճնշում:

**constrictor** [kənˈstriktə] n կենդ. վիշապ օձ. կզմիս. կծկվող մկան:

**construct** [kənˈstrʌkt] v կառուցել, շինել, ստեղծել. ~ a building/theory շենք կառուցել. տեսություն ստեղծել/նշակել. ~ an argument փաստարկներ բերել:

**construction** [kənˈstrʌkʃn] n շինարարություն, կառուցում. շինություն, կառուցվածք. քեր. նախադասության կառուցվածք. under ~ կառուցվող. on the process of ~ կառուցման պրոցեսում/ընթացքում:

**constructional** [kənˈstrʌkʃnəl] a կառուցվածքային:

**constructive** [kənˈstrʌktɪv] a շինարարական, կառուցողական. ստեղծագործական, ստեղծարար:

**constructor** [kənˈstrʌktə] n շինարար, կառուցող. կոնստրուկտոր. ինժեներ նավաշինարար:

**construe** [kənˈstruː] v մեկնաբանել, բացատրել. ~ a sentence շարահյուսական վերլուծություն կատարել:

**consul** [ˈkɒnsəl] n հյուպատոս, կոնսուլ. ~ general գլխավոր հյուպատոս.

**consular** [ˈkɒnsjʊlə] a հյուպատոսական, կոնսուլական:

**consulate** [ˈkɒnsjʊlət] n հյուպատոսություն:

**consult** [kənˈsʌlt] v խորհրդակցել. ~ a doctor/lawyer խորհրդակցել բժշկի/իրավաբանի հետ. (տեղեկանալ) ~ a dictionary/one's diary բառարանում փնտրել. օրացույցով ճշտել. ~ the watch/the map ժամացույցով/քարտեզով ստուգել. (հաշվի առնել) ~ smb's interests հաշվի առնել շահերը/հետաքրքրությունները:

**consultant** [kənˈsʌltənt] n խորհրդատու, խորհրդատու բժիշկ:

**consultation** [ˌkɒnsʌlˈteɪʃn] n խորհրդատվություն, խորհրդակցություն. after some ~ խորհրդակցելուց հետո:

**consultative** [kənˈsʌltətɪv] a խորհրդակցական. a ~ committee խորհրդակցական հանձնաժողով:

**consulting** [kənˈsʌltɪŋ] a խորհրդակցական, խորհուրդ տվող, խորհրդատվական. բժշկ. բուժող. ~ hours/room ընդունելության ժամեր. բժշկի սենյակ:

**consume** [kənˈsjʊːm] v սպառել, ծախսել, գործածել. All the papers were ~d by the fire Կրակը ոչնչացրեց (լափեց) բոլոր փաստաթղթերը. be ~d by the curiosity հետաքրքրությունից այրվել:

**consumer** [kənˈsjʊːmə] n սպառող. լայն սպառման. ~ credit սպառողական վարկ. ~ goods լայն սպառման առարկաներ. ~ protection սպառողների իրավունքների պաշտպանություն:

**consummate** [kənˈsʌmət] a կատարյալ, լրիվ, լիավարտ. ~ skill/taste կատարյալ վարպետություն. գերազանց ճաշակ:

**consummation** [ˌkɒnsəˈmeɪʃn] n ավարտում, կատարում. իրագործում, իրականա-

ցում. the ~ of a life's work կյանքի գործի ավարտումը:

**consumption** [kən'sʌmpʃn] n սպառում, ծախսում. *բժշկ.* թրքախտ, պալարախտ. ~ of beer գարեջրի սպառումը. petrol ~ բենզինի օգտագործումը. not fit for human ~ որպես սննդամթերք ոչ պիտանի. *խսկց.* ուտելու բան չի. per capita ~ բնակչության մեկ շնչին ընկնող սպառում:

**consumptive** [kən'sʌmpʃtɪv] a թրքախտային, հյուստող, մաշող:

**contact** ['kɒntækt] n շփում, հպում, կապ. *էլ.* միացում. establish/maintain ~ կապ հաստատել/պահպանել be in ~ կապի մեջ լինել. come into ~ շփման մեջ մտնել. make ~ կապ հաստատել. break ~ անջատել. ~ points *ապտո.* կոնտակտներ ~ lenses կոնտակտային ոսպնյակներ. business ~ գործարար կապեր. I'll be in ~ with you ես կկապվեմ ձեզ հետ:

**contact** ['kɒntækt] v շփվել, կապ հաստատել, կապվել. When and where can I ~ him? Ե՞րբ և որտե՞ղ կարող եմ նրան տեսնել:

**contagion** [kən'teɪdʒən] n վարակ, վարակիչ հիվանդություն. *փխբ.* վնասակար ազդեցություն:

**contagious** [kən'teɪdʒəs] a վարակիչ, ինֆեկցիոն. ~ laughter *փխբ.* վարակիչ ծիծաղ:

**contain** [kən'teɪn] v պարունակել, բովանդակել. զսպել. ~ two litres of water 2 լիտր ջուր պարունակել. ~ useful information օգտակար տեղեկություններ պարունակել. ~ oneself/one's anger/laughter զայրույթը/ծիծաղը զսպել:

**container** [kən'teɪnə] n անոթ, պահեստաման. տարա. բեռնարկղ. *ռզմ.* գազաբալոն, գազաման:

**contaminate** [kən'tæmɪneɪt] v վարակել. աղտոտել. ~d clothing/water վարակված հագուստ. աղտոտված ջուր:

**contamination** [kən'tæmɪneɪʃn] n վարակում, աղտոտում:

**contemn** [kən'tem] v արհամարհել:

**contemplate** ['kɒntəmpleɪt] v խորհել, մտածել. դիտել, գննել. ծրագրել, մտադրվել. ~ a problem խորհել/մտածել հարցի մասին. I ~ going to Մտածում եմ գնալ. ~ oneself in the mirror հայելու մեջ նայել (իրեն դիտել):

**contemplation** [ˌkɒntəm'pleɪʃn] n խորհում, մտորում. *փխբ.* հայեցություն. sink in ~

մտքերի մեջ խորասուզվել. be in ~ ծրագրվել:

**contemplative** [kən'templətɪv] a հայեցողական, դիտողական:

**contemporaneity** [kən,tempeərə'ni:əti] n միաժամանակություն, ժամանակակցություն:

**contemporaneous** [kən,tempe'reɪniəs] a ժամանակակից, միաժամանակ. համաժամանակյա:

**contemporar/y** [kən'tempərəri] n ժամանակակից, հասակակակից. My friend and I are ~ies Ընկերս և ես հասակակիցներ ենք:

**contemporary** [kən'tempərəri] a ժամանակակից, արդի. ~ art society/writers ժամանակակից արվեստ/հասարակություն/գրողներ:

**contempt** [kən'tempt] n արհամարհանք, արհամարհական վերաբերմունք. անարգանք, վիրավորանք. ~ for smth արհամարհանք ինչ-որ բանի նկատմամբ. feel ~ for smn, hold smb in ~ արհամարհանք տածել. incur ~ արհամարհանք առաջացնել. be beneath ~ նույնիսկ արհամարհանքի արժանի չլինել. complete ~ of danger վտանգի լրիվ արհամարհում. fall into ~ արհամարհանքի արժանանալ. ~ of court *իրավ.* դատավճռի/դատարանի արհամարհում:

**contemptible** [kən'temptəbl] a արհամարհելի, արհամարհանքի արժանի:

**contemptuous** [kən'temptjuəs] a արհամարհական:

**contend** [kən'tend] v պնդել, հաստատել. ~ with պայքարել. ~ with/against smb for a prize մեկի հետ մրցել մրցանակի համար. ~ing parties *իրավ.* վիճող կողմերը. have enough to ~ with շատ դժվարություններ հաղթահարել:

**content** I [kən'tent] n զոհունակություն, զոհություն. to one's heart's ~ ցանկացածի/սիրտը ուզածի չափ:

**content** II ['kɒntent] n պարունակություն, բովանդակություն. the ~ of a jug/pocket սափորի/գրպանի պարունակությունը. form and ~ ձև և բովանդակություն. table of ~s բովանդակություն, զլխացանկ. the ~ of an article/speech հոդվածի/ճառի բովանդակությունը:

**content** [kən'tent] a զոհ, զոհունակ. be ~ in one's job իր աշխատանքից զոհ լինել. I'm ~



to stay behind Համաձայն եմ հետ մնալ:

**content** [kən'tent] v բավարարել, զոհացնել.  
~ oneself with բավարարվել, զոհանալ. We'll  
have to ~ ourselves with dry bread Մենք պետք  
է բավարարվենք չոր հացով:

**contented** [kən'tentid] a գոհ, բավարար-  
ված:

**contention** [kən'tenʃn] n վեճ, վեճի առար-  
կա. տարածայնություն. This is no time for ~  
Կռվի/վեճի ժամանակ չէ. a bone of ~ կռվա-  
խնձոր. substance of the ~ փաստարկի էու-  
թյունը/հիմքը:

**contentious** [kən'tenʃəs] a վիճելի. կռվա-  
րար:

**contentment** [kən'tentmənt] n բավարա-  
րություն, զոհունակություն:

**conterminous** [kən'tə:mi:nəs] a կից, սահ-  
մանակից. հանընկնոր:

**contest** ['kɒntest] n մրցում, մրցակցություն.  
ամ. պայքար ընտրությունների ժամանակ.  
beauty ~ գեղեցկության մրցույթ. the judges of  
/at a ~ մրցույթի ժյուրի:

**contest** [kən'test] v մրցել, մրցակցել. վիճա-  
բանել, վիճարկել. ~ a point/ a will կետը/  
կտակը վիճարկել. ~ a seat in Parliament պայ-  
քարել խորհրդարանի տեղի համար. ~ for  
the prize մրցանակի համար պայքարել:

**context** ['kɒntekst] n համատեքստ, իրավի-  
ճակ, իրադրություն. ~ dependent համա-  
տեքստից կախված. ~ free language համա-  
տեքստից անկախ լեզու:

**contexture** [kən'tekstʃə] n կառուցվածք,  
հյուսվածք. (գրական երկի) կոմպոզիցիա:

**contiguity** [ˌkɒnti'gju:əti] n շփում, հարև.  
գաղափարների զուգորդություն:

**contiguous** [kən'tigjuəs] a սահմանակից,  
սահմանամերձ, հարող:

**continent** ['kɒntinəs] n զսպվածություն,  
ժուժկալություն. ողջախոհություն:

**continent** ['kɒntinənt] n աշխրհ. մայրցա-  
մաք, կոնտինենտ. the ~ of Asia Ասիական  
մայրցամաք. the C~ Եվրոպա (բրիտանացի-  
ների համար):

**continent** ['kɒntinənt] a զուսպ, ժուժկալ,  
ողջախոհ:

**continental** [ˌkɒnti'nentl] 1. n Եվրոպայի  
բնակիչ. 2. a մայրցամաքի, ցամաքային,  
կոնտինենտալ:

**contingency** [kən'tidʒənsi] n պատահակա-  
նություն, անակնկալություն. դիպված.

should the ~ arise այն դեպքում, եթե. provide  
for every ~ նախատեսել բոլոր անակնկալ-  
ները:

**contingent** [kən'tindʒənt] n խումբ, քանա-  
կակազմ. (Մակ' զինուժի). a ~ of tourists/com-  
petitors զբոսաշրջիկների խումբ. մրցույթի  
մասնակիցներ:

**contingent** [kən'tindʒənt] a պատահական,  
անակնկալ, հնարավոր. plans ~ on weather  
եղանակից կախված ծրագրեր. ~ liabilities  
պայմանական պատասխանատվություն:

**continual** [kən'tinjʊəl] a անընդհատ, մշտա-  
կան, անփոփոխ. a ~ cough անընդհատ/ան-  
դադար հագ:

**continually** [kən'tinjʊ:əli] adv շարունակ,  
շարունակաբար, անընդհատ:

**continuance** [kən'tinjʊəns] n տևողություն,  
տևականություն. շարունակություն. անընդ-  
հատություն. of long ~ տևական, երկա-  
րատև:

**continuation** [kən,tinjʊ'eɪʃn] n շարունա-  
կում, շարունակություն. վերսկսում. ~s  
խսկց. շալվար. the ~ of a story/line պատմը-  
վածքի /գծի շարունակությունը:

**continue** [kən'tinjʊ:] v շարունակել. տա-  
րածվել, ծգվել. մնալ, կենալ. ~ the speech/  
game ճառը/խաղը շարունակել. The argument  
~d after dinner Վեճը շարունակվեց ճաշից  
հետո. He ~d in office till he was 60 Նա շա-  
րունակում էր աշխատել մինչև 60 տարեկա-  
նը. We ~d on our way Մենք շարունակեցինք  
մեր ճանապարհը. May I ~ ? Կարելի՞ է շա-  
րունակել:

**continued** [kən'tinjʊ:d] a շարունակվող,  
շարունակելի. անընդհատ. to be ~ շարու-  
նակելի:

**continuity** [ˌkɒnti'nju:əti] n անընդհա-  
տություն, հաջորդականություն:

**continuous** [kən'tinjʊəs] a անընդհատ, ան-  
դադար. անփոփոխ, տևական. քեր. շարու-  
նակական:

**contort** [kən'tɔ:t] v ծռել, ծռռռել. խեղաթյու-  
րել, աղավաղել. His face was ~ed with pain  
Նրա դեմքը ցավից ծռռռվեց:

**contortion** [kən'tɔ:ʃn] n ծռում, աղավա-  
ղում, այլանդակում:

**contour** ['kɒntʊə] n ուրվագիծ, եզրագիծ. ~  
line/map հորիզոնական. ուրվագծային քար-  
տեզ:

**contraband** [ˌkɒntrəbænd] n, a մաքսանեն-

գություն, մաքսանենգ ապրանք. մաքսանենգային:

**contrabandist** [ˈkɒntrəbændɪst] n մաքսանենգ:

**contract** [ˈkɒntrækt] n պայմանագիր, համաձայնություն. draw up/conclude/break/breach a ~ պայմանագիր կազմել/կնքել/խախտել. be bound by ~ պայմանագրով կապված լինել. the terms /conditions of the ~ պայմանագրի պայմանները. be under ~ պայմանագիր ունենալ. labour ~ աշխատանքային պայմանագիր. The ~ will not stand Համաձայնությունը ուժի մեջ չի լինի. ~ law *իրավ*. պայմանագրային իրավունք:

**contract** I [kənˈtrækt] v պայմանագիր կնքել, պարտավորություն ստանձնել. ~ an alliance միություն կազմել. ~ debts պարտքեր անել/ պարտքերի մեջ ընկնել. ~ measles կարմրուկով վարակվել. ~ out հրաժարվել. ~ out of the trip ուղևորությունից հրաժարվել. the ~ing parties պայմանավորվող կողմերը:

**contract** II [kənˈtrækt] v կծկ(վ)ել, սեղմ(վ)ել. կարճանալ, կրճատվել. ~ one's muscles/a word մկանները կծկել. բառը կրճատել. Metals ~ when cool Ցրտից մետաղները սեղմվում են:

**contracted** [kənˈtræktɪd] a կրճատված. նեղ, սահմանափակ. խոժոռված (հոնքեր):

**contraction** [kənˈtrækʃn] n կրճատում, կծկում. պարտքի մեջ ընկնելը. *լեզվ*. հապավում. *հնչ*. միաձուլում. *բժշկ*. երկունքի ցավեր:

**contractor** [kənˈtræktə] n կապալառու. պայմանագիր ստորագրած անձ. պայմանավորվող կողմ. sub~ ենթակապալառու:

**contradict** [ˌkɒntrəˈdɪkt] v հակասել. ժխտել, հերքել. The two reports ~ed each other երկու զեկույցները հակասում էին միմյանց. ~ rumours ժխտել լուրերը. Don't ~ ! Մի՛ հակաճանեք:

**contradiction** [ˌkɒntrəˈdɪkʃn] n հակասություն, հակադրություն. անհամապատասխանություն. բախում be in ~ with հակասել. հակադրվել. a ~ in terms տրամաբանական հակասություն:

**contradictory** [ˌkɒntrəˈdɪkʃəs] a հակասական:

**contradictory** [ˌkɒntrəˈdɪktəri] a հակասական, անհամատեղելի, հակառակ:

**contradistinction** [ˌkɒntrədiˈstɪŋkʃn] n հակադրություն, հակադրում, զանազանում. in ~ to ի տարբերություն:

**contralto** [kənˈtraːltəʊ] n *երժշ*. կոնտրալտո:

**contraposition** [ˌkɒntrəpəˈziʃn] n հակադրություն, անտիթեզ:

**contraption** [kənˈtræpʃn] n նորաստեղծ հարմարանք, What's that ingenious ~? Այդ ի՞նչ հնարամիտ հարմարանք է:

**contrarily** [ˈkɒntrɪrɪli] adv քմահաճ:

**contrariness** [ˈkɒntrərɪnəs] n համառություն:

**contrariwise** [kənˈtrɛəriwaɪz] adv հակառակ կողմից/ուղղությամբ:

**contrary** [ˈkɒntrəri] n հակադրություն. on the/quite the ~ ընդհակառակը. to the ~ հակառակը. The ~ seems to be the case Թվում է՝ ընդհակառակն է. I know/have heard nothing to the ~ Որքան ինձ հայտնի է, դա հենց այդպես է. Ես ոչ մի հակառակ բան չեմ լսել:

**contrary** [ˈkɒntrəri] a հակադիր, հակադարձ, հակառակ. հակասող. a ~ young woman քմահաճ երիտասարդ կին. a ~ wind հակառակ քամի:

**contrary** [ˈkɒntrəri] prep հակառակ, դեմ. It's ~ to the rules Դա կանոններին դեմ է. ~ to my wishes/expectations հակառակ իմ ցանկության/սպասումների:

**contrast** [ˈkɒntrɑːst] n հակադրություն, հակապատկեր. striking/complete /sharp ~ զարմանալի/լրիվ/սուր, խիստ հակադրություն. striking ~ between the two brothers զարմանալի հակադրություն եղբայրների միջև. by ~ (with) համեմատությամբ. in ~ (with) ի հակադրություն:

**contrast** [kənˈtraːst] v հակադրել, համեմատել. ~ Jane with her sister Համեմատեք Ջեյնին և իր քրոջը. The two paintings ~ with each other Այս երկու նկարները խիստ տարբերվում են միմյանցից. ~ well հաջող ձևով հակադրվել:

**contrasting** [kənˈtraːstɪŋ] a հակադրական, հակադիր. կոնտրաստային:

**contravene** [ˌkɒntrəˈviːn] v խախտել, հակառակել, հակասել. ~ law օրենքը խախտել:

**contravention** [ˌkɒntrəˈvenʃn] n խախտում, հակասում, հակասելը:

**contribute** [kən'tribju:t] v աջակցել, օժանդակել, նպաստել, նվիրաբերել. ներդրում անել. ~ towards the building of a school նվիրաբերել դպրոցի կառուցման համար. ~ clothing for the refugees փախստականների համար հագուստ նվիրաբերել. (թղթակցել) ~ articles to the newspaper կանոնավոր կերպով հոդվածներ գրել լրագրի համար. The professor ~d to the discussion Պրոֆեսորը մասնակցեց քննարկմանը. It all ~d to the general chaos Այդ բոլորը միայն նպաստեց ընդհանուր անկարգությանը:

**contribution** [ˌkɒntri'bju:ʃn] n աջակցություն, օժանդակություն. ներդրում. make a valuable ~ to science կարևոր/արժեքավոր ներդրում կատարել գիտության մեջ. (հոդված) ~s should be sent to the editor հոդվածները ուղարկել խմբագրին. pay ~s վճարումներ կատարել:

**contributor** [kən'tribjutə] n նվիրաբերող, հեղինակ. one of our regular ~s մեր մշտական հեղինակներից մեկը:

**contrite** [ˈkɒntraɪt] a զղջացող, ապաշխարհող. to be ~ զղջալ. The boy looks so ~ Տղան շատ մեղավոր տեսք ունի:

**contrition** [kən'tri:ʃn] n զղջում, ապաշխարհում.

**contrivance** [kən'traɪv'ns] n հնարամտություն, հնարագործություն:

**contrive** [kən'traɪv] v հնարել, ծրագրել, նյութել. He ~d to make matters worse Նա հաջողեցրեց գործերն ավելի փչացնել:

**control** [kən'trəʊl] n կառավարում, ղեկավարում, հսկողություն. be in ~ of կառավարել, ղեկավարել, հսկել. get out of ~ հսկողությունից դուրս գալ. beyond ~ հսկողությունից դուրս. keep one's feelings under ~ զգացմունքները զսպել. lose ~ հսկողությունը կորցնել/չկարողանալ զսպել. ~ over the seas ծովերի տիրապետություն. government ~ of industry կառավարության հսկողությունը արդյունաբերության վրա. disarmament ~ զինաթափման վերահսկողություն. passport/customs ~ անձնագրի/մաքսատան ստուգում. traffic/birth ~ երթևեկության/ծնելիության վերահսկում/կարգավորում. price ~ գների կարգավորում. ~ point ստուգման/վերահսկողության կետ. remote ~ հեռակառավարում. ~ levers կառավարման լծակներ. ~ panel ղեկավարման վահան. ~ room

(զործ.) վերահսկողության կենտրոն. ~ tower *ալ.* դիսպետչերական աշտարակ:

**control** [kən'trəʊl] v կառավարել, ղեկավարել. իշխել, վերահսկել, ստուգել. կարգավորել, կանոնավորել. ~ one's temper իրեն տիրապետալ. easy to ~ հեշտ ղեկավորվող. ~ the pressure ճնշումը կարգավորել. ~ all foreign exchange ~ traffic/prices կարգավորել երթևեկությունը/գները. ~ expenditure ստուգել/հսկել ծախսերը:

**controllable** [kən'trəʊləbl] a կառավարելի, ղեկավարելի, վերահսկելի:

**controller** [kən'trəʊlə] n վերահսկիչ, վերստուգիչ. *երկթ. ավտո.* դիսպետչեր. (հոսանքը) կարգավորող սարք:

**controversial** [ˌkɒntrə'vɜ:ʃl] a վիճելի, վիճաբանական. վիճարկելի, վիճահարույց:

**controversy** [ˈkɒntrəvɜ:si] n վիճաբանություն, բանավեճ. without/beyond ~ անվիճելի, անժխտելի:

**controvert** [ˌkɒntrə'vɜ:t] v վիճարկել, բանավիճել:

**contumacious** [ˌkɒntju'meɪʃəs] a չենթարկվող, անհնազանդ:

**contumacy** [ˈkɒntjuməsi] n անհնազանդություն:

**contumely** [ˈkɒntju:mli] n վիրավորանք, անարգանք:

**convalesce** [ˌkɒnvə'les] v ապաքինվել, առողջանալ:

**convalescence** [ˌkɒnvə'lesns] n ապաքինում, առողջացում:

**convalescent** [ˌkɒnvə'lesnt] a ապաքինվող, առողջացող. be ~ առողջանալ. ~ home առողջարան:

**convene** [kən'vi:n] v հրավիրել, հավաքվել. ~ a meeting ժողով գումարել:

**convener** [kən'vi:nə] n նիստ հրավիրող:

**convenience** [kən'vi:niəns] n հարմարություն. at your ~ ինչպես ձեզ հարմար է. Come at your ~ եկեք, երբ ձեզ հարմար է. Answer at one's earliest ~ Պատասխանեք, որքան հնարավոր է արագ. ~s հարմարություններ *փխբ.* զուգարան. house with all modern ~s բոլոր հարմարություններով տուն. for the ~ of հոգուտ, օգտին:

**convenient** [kən'vi:niənt] a հարմար, պիտանի, պատշաճ. the first ~ opportunity առաջին հարմար առիթը:

**convent** [ˈkɒnvənt] n կուսանոց:

**convention** [kən'venʃn] **n** պայմանագիր, համաձայնագիր. համաժողով, համագումար. (պայմանականություն) despise the ~s պայմանականություններն արհամարհել:

**conventional** [kən'venʃnəl] **a** ավանդական, հանրաճանաչ, բոլորի կողմից ընդունված. պայմանագրային. It's ~ here to dine late Այստեղ ընդունված է ուշ ճաշել. **a** ~ letter of congratulations սովորական շնորհավորական նամակ. ~ weapons սովորական տեսակի սպառազինություն. be very ~ պայմանականությունների գերի լինել:

**conventionality** [kən'venʃnəli] **n** պայմանականություն:

**converge** [kən'veɜːdʒ] **v** միանալ, միացնել. մոտենալ. The armies ~d on the town Ձորքերը բոլոր կողմերից հարձակվեցին քաղաքի նրա:

**convergence** [kən'veɜːdʒəns] **n** միացում հանդիպում. զուգամերձություն:

**convergent** [kən'veɜːdʒənt] **a** համամետ, զուգամետ:

**conversable** [kən'veɜːsəbl] **a** զրուցասեր, շփվող, սրտաբաց:

**conversance** [kən'veɜːsəns] **n** իրազեկություն, տեղյակություն:

**conversant** [kən'veɜːsənt] **a** տեղյակ, իրազեկ. keep ~ տեղյակ պահել. not to be ~ with the rules կանոններին ծանոթ չլինել:

**conversation** [ˌkɒnvə'seɪʃn] **n** խոսակցություն, զրույց, խոսք:

**conversational** [ˌkɒnvə'seɪʃnəl] **a** խոսակցական. զրուցասեր. *հմկրգ.* ~ mode երկխոսական ռեժիմ:

**converse** [ˈkɒnvəːs] **1.** **n** հակառակ (դրույթ), հակադիր. *մաթ.* հակադարձ թեորեմ. **2.** **a** հակառակ, հակադարձ That is the ~ of what I said Դա իմ ասածի հակառակն է:

**converse** [kən'veɜːs] **v** զրուցել, խոսել. ~ with smb մեկի հետ զրուցել:

**conversely** [ˈkɒnvəːsli] **adv** ընդհակառակը, հակառակը:

**conversion** [kən'veɜːʃn] **n** փոխարկում, փոփոխում. *կրոն.* կրոնափոխություն. the ~ of dollars into frank դոլարի փոխարկումը ֆրանկի. the ~ of water into ice ջուրը սառույցի վերածելը. the ~ of a house տան վերակառուցումը:

**convert** [kən'veɜːt] **v** դարձնել, փոխակերպել. ~ cellar into garage մառանը ավտոտնակ

դարձնել. He ~ed me into his views Նա ինձ հավատափոխ արեց:

**convertible** [kən'veɜːtəbl] **a** փոխակերպելի, շրջելի. փոփոխելի, փոխանցելի. ~ currency փոխարկելի արժույթ:

**convex** [ˌkɒn'veks] **a** կորնթարթ, ուռուցիկ: **convexity** [kən'veksəti] **n** կորնթարթություն, ուռուցիկություն:

**convey** [kən'vei] **v** տեղափոխել, փոխադրել. փոխանցել. C~ my thanks to her Փոխանցեք/Յաղորդեք նրան իմ շնորհակալությունը. ~ news լուրեր հայտնել. ~ ideas մտքեր հաղորդել. ~ property *իրավ.* գույքի իրավունքը հանձնել/փոխանցել ուրիշին. The name ~s nothing to me Այդ անունը ինձ ոչինչ չի ասում:

**conveyance** [kən'veiəns] **n** տեղափոխում, փոխադրում. փոխադրամիջոց. *իրավ.* գույքի հանձնման փաստաթուղթ:

**conveyor** [kən'veiə] **n** *տեխ.* հարահոս, կոնվեյեր:

**convict** [ˈkɒnvikt] **1.** **n** դատապարտված, տաժանակիր. **2.** [kən'veikt] **v** մեղավոր ճանաչել, դատապարտել. ~ smb of theft գողության համար դատապարտել:

**conviction** [kən'veikʃn] **n** համոզմունք. carry ~ համոզվել, համոզիչ լինել. It is my ~ that... Ես համոզված եմ, որ... in the full ~ լրիվ համոզված. I'm open to ~ Ինձ կարելի է համոզել. The story doesn't carry much ~ Այս պատմությունը այնքան էլ համոզիչ չէ. *իրավ.* դատվածություն He has had two previous ~s Նա երկու դատվածություն ունի:

**convince** [kən'veins] **v** համոզել, հավաստիացնել. I tried to ~ him Ես փորձեցի նրան համոզել. be ~d համոզված լինել:

**convincible** [kən'veinsəbl] **a** համոզվող:

**convincing** [kən'veinsɪŋ] **a** համոզիչ:

**convivial** [kən'veiviəl] **a** ուրախ, տոնական:

**conviviality** [kən'veivi'æləti] **n** ուրախություն, ուրախ տրամադրություն:

**convocation** [ˌkɒnvə'keɪʃn] **n** գումարում (ժողովի, համագումարի). *իրավիրում.* եկեղացական ժողով:

**convoke** [kən'veʊk] **v** գումարել (ժողով, համագումար):

**convoluted** [ˈkɒnvəlu:tɪd] **a** ոլորված, գալարված. կորացրած:

**convolution** [ˌkɒnvə'lu:ʃn] **n** ոլորում, պտույտ. ուղեղի ոլորք/ծալք:

**convolvulus** [kənˈvɒljʊləs] n *բւք*. պատատուկ:

**convoy** [ˈkɒnvɔɪ] n ուղեկցորդ, պահակախումբ. ռազմանավեր. նավերի քարավան. *under/in* ~ ռազմանավերի պաշտպանության տակ:

**convoy** [ˈkɒnvɔɪ] v *ծով*. ուղեկցել, ուղեկցորդել (ռազմանավերով):

**convulse** [kənˈvʌls] v ցնցել, ջղաձգություն առաջացնել. *be* ~d ջղաձգվել. *փխբ*. ծիծաղից ցնցվել:

**convulsed** [kənˈvʌlsd] a ցնցված. ~ by earthquake երկրաշարժից ցնցված. His face was ~ with pain Նրա դեմքը ցավից ջղաձգվեց:

**convulsion** [kənˈvʌlʃn] n *բժշկ*. ջղաձգություն, կոնվուլսիա, կարկամում:

**convulsive** [kənˈvʌlsɪv] a ջղաձգային, կարկամային:

**cony** [ˈkəʊni] n ճագար:

**coo** [ku:] n մնչել, դուռնդուռնալ. *փխբ*. սիրային քաղցր խոսքեր մրմնջալ:

**cook** [kʊk] n խոհարար. *be a good* ~ լավ խոհարար լինել. Too many cooks spoil the broth Յոթ դայակի պահած երեխան կույր կլինի:

**cook** [kʊk] v եփել, պատրաստել, խոհարարություն անել. ~ meat/dinner միս/ճաշ եփել/պատրաստել. Who ~s for you? Ո՞վ է ձեր ուտելիքը պատրաստում. She is busy ~ing Նա խոհանոցում է. ~ up an article *փխբ*. արագ հոդված թխել. ~ accounts կեղծել/խարդախել հաշիվները. What's ~ing? Ի՞նչ եք էստեղ նախապատրաստում:

**cooker** [ˈkʊkə] n սալիկ, օջախ. *փխբ*. փատաթղթեր կեղծող. *gas/electric* ~ գազօջախ, էլեկտրական սալիկ:

**cookery** [ˈkʊkəri] n խոհարարություն. եփվածք, եփած բան. ~ book խոհարարական գիրք:

**cookie** [ˈkʊki] n թխվածք, խմորեղեն:

**cooking** [ˈkʊkiŋ] n պատրաստելը, եփել-թափելը. ~ utensils խոհանոցային պարագաներ. ~ salt կերակրի աղ:

**cook-room** [ˈkʊkru:m] n *նավ*. խոհանոց, կամբուզ:

**cool** [ku:] n զովություն. *keep* ~ *փխբ*. սառնասրտությունը պահպանել:

**cool** [ku:] a զով, հով, պաղ. *get* ~ հովանալ, զովանալ, սառել. *անվրդով մնալ*. It is getting ~er Ցրտում է. a ~ reception *փխբ*. սառն ընդունելություն. He has become very ~ to-

wards us Նա սառել է մեր նկատմամբ. *play* ~ հանգիստ մնալ, հանգստություն պահպանել. a ~ customer անպատկան/կտի անձ. loose a ~ thousand մի ամբողջ հազար կորցնել:

**cool** [ku:] v հովանալ, պաղել, սառել. *keep* ~ *անվրդով մնալ*. ~ the air օդը սառեցնել. ~ one's heels *խսկց*. սպասել. The weather has ~ed down եղանակը ցրտել է. C~ down! Չանգստացիր/Չանգստացե՛ք:

**cooler** [ˈku:lə] n սառնարան. *ռզմ*. կալանատուն, պատժասենյակ, հաուպտվախտ. He is in the ~ again Նա նորից նստած է:

**cool-headed** [ˌkʊlˈhedɪd] a սառնարյուն, խելամիտ:

**cooling** [ˈku:lɪŋ] n սառեցում, հովացում. a ~ drink զովացուցիչ ջուր:

**coolly** [ku:li] adv հանգիստ, սառը, հանդգնորեն:

**coolness** [ˈku:lɪnəs] n զովություն, հովություն. *փխբ*. սառնարյունություն:

**coomb** [ku:m] n լեռների գոգ. ձորակ:

**coon** [ku:n] n *կենդ*. ջրարջ. *փխբ*. խորամանկ մարդ. a gone ~ կորած մարդ:

**coop** [ku:p] n վանդակ. ձկնորսակողով:

**cooper** [ˈku:pə] n տակառագործ. թունդ ոգելից խմիչք:

**co-operate** [kəʊˈɒpəreɪt] v գործակցել, համագործել. աջակցել:

**co-operation** [kəʊˈɒpəreɪʃn] n ընկերություն, միավորում. համագործակցություն. international ~ միջազգային համագործակցություն. various forms of ~ համագործակցման տարբեր ձևեր. work in close ~ սերտ համագործակցությամբ աշխատել:

**co-operative** [kəʊˈɒpəreɪtɪv] a համատեղ, միատեղ. համագործակցող. He was very ~ Նա մեզ շատ օգնեց:

**co-operator** [kəʊˈɒpəreɪtə] n կոոպերատոր:

**coop up** [ˈku:pʌp] v փակի տակ պահել. I was ~ed up in a stuffy room Ես փակված էի տոթ սենյակում:

**coordinate** [kəʊˈɔ:dɪnət] n *մաթ*. կոորդինատ:

**coordinate** [kəʊˈɔ:dɪnət] a համակարգված, համաձայնեցրած. հավասար, համագործ. *քեր*. համադաս:

**co-ordinate** [kəʊˈɔ:dɪneɪt] v համաձայնեցնել, համակարգել. կոորդինացնել. ~ movements/actions/policies համաձայնեցնել շար-

ծումները/գործողությունները/քաղաքական գիծը. a ~d attack *ռզմ*. միասնական հարձակում:

**co-ordination** [kəu,ɔ:di'neiʃn] n համակարգում, համաձայնեցում, ներդաշնակեցում:

**cop** [kɒp] 1. n *խսկց*. ոստիկան. 2. v հանցանքի վայրում բռնել. ~ it *խսկց*. բռնել, ճանկել. You will ~ it *Քեզ կհասնի*:

**copartner** [kəu'pɑ:tneɪ] n համագործակից. բաժնետիրական ընկերության անդամ:

**copartnership** [kəu'pɑ:tneɪʃɪp] n բաժնետիրական ընկերություն:

**cope** [kəʊp] n շուրջառ, փարաջա. the ~ of heaven *փխբ*. երկնականար. the ~ of night գիշերվա հովանի:

**cope** [kəʊp] v հաղթահարել, գլուխ բերել. I'll ~ somehow *ես մի կերպ գլուխ կբերեմ*. ~ with the visitors *այցելուներին/հյուրերին լավ ընդունել*. ~ well with an awkward situation *անհարմար վիճակից բարեհաջող դուրս գալ*:

**copilot** [kəu'pailət] n երկրորդ օդաչու:

**coping** [kəʊpiŋ] n *շին*. որմնեզր, քիվ:

**coping-stone** [kəʊpiŋstəʊn] n քիվաքար. *փխբ*. վերջ, վախճան. (գիտության) վերջին խոսք:

**copious** [kəʊpiəs] a առատ, լի, բեղմնավոր. a ~ harvest *առատ բերք*. a ~ writer *բեղմնավոր գրող*. ~ speaker *շաղակրատ հռետոր*. ~ dictionary *հարուստ բառարան*. take ~ notes *բազմաթիվ գրառումներ կատարել*:

**copiously** [kəʊpiəsli] adv առատորեն. bleed ~ *շատ արյուն կորցնել*:

**copper** [kɒpə] n պղինձ, պղնձե կաթսա. ~s պղնձե դրամ:

**copperas** [kɒpəɾəs] n պղնձարջասպ:

**copperhead** [kɒpəhed] n *կենդ*. պղնձօձ:

**copper plate** [kɒpəpleɪt] 1. n պղնձե տախտակ (փորագրություն). 2. a գեղագրական ձեռագիր:

**copper-smith** [kɒpəsmiθ] n պղնձագործ:

**coppery** [kɒpəri] a պղնձագույն:

**coppice** [kɒpɪs] n փոքրիկ պուրակ:

**copse** [kɒps] n փոքրիկ պուրակ:

**copsewood** [kɒpswɔ:ɪd] n մատղաշ անտառ:

**copula** [kɒpjulə] n *քեր*. հանգույց:

**copulate** [kɒpjuleɪt] v *կենս*. զուգավորել:

**copulation** [kɒpjulə'leɪʃn] n զուգավորում. *քեր*. կապում, կապակցում:

**copulative** [kɒpjulətɪv] n, a բաղիյուսական շաղկապ. *քեր*. շաղկապող:

**copy** ['kɒpi] n օրինակ (գրքի և այլն). պատճեն. նմուշ. համար. ձեռագիր. typed ~ մեքենագրած օրինակ. rough/fair ~ սևագիր/մաքրագիր օրինակ. xerox ~ քսերոպատճեն. second ~ կրկնօրինակ. manuscript ~ ձեռագիր. make a ~ պատճենը հանել. complimentary ~ հեղինակային օրինակ. today's ~ of "The Times" *Թայմսի այսօրվա համարը*. *հմկրգ*. ~ կրկնօրինակում. ~ program *կրկնօրինակման ծրագիր*. ~ protected *կրկնօրինակումից պաշտպանված*. ~ protected disk *պաշտպանված սկավառակ*:

**copy** ['kɒpi] v արտագրել, ընդօրինակել, պատճենահանել. ~ out *արտագրել*. ~ out a text *տեքստն արտագրել*. ~ off smb մեկից արտագրել (քննության ժամանակ). ~ smb's way of life *ապրելակերպը ընդօրինակել*. ~ everything one's friend does *ընդօրինակել այն ամենը, ինչ ընկերն է անում*:

**copy-book** ['kɒpɪbʊk] n տետր:

**copying paper** ['kɒpiɪŋ,peɪpə] n պատճենաթուղթ:

**copyist** ['kɒpiɪst] n ընդօրինակող, արտագրող, պատճենահան:

**copyright** ['kɒpraɪt] 1. n հեղինակային/հրատարակչական իրավունք. 2. a հեղինակային իրավունքով ապահովված. 3. v հեղինակի իրավունքը ապահովել:

**coquet** [kə'ket] v սիրակատակել, պչրվել, կոկետություն անել:

**coquetry** ['kɒkɪtri] n կոկետություն, պչրանք:

**coquette** [kə'ket] n կոկետուհի:

**coral** ['kɒrəl] 1. n մարջան. 2. a մարջան, մարջանագույն:

**coral-island** ['kɒrəl,ailənd] n կորալյան կղզի:

**cord** [kɔ:d] n պարան, թոկ, լար. silk ~ մետաքսե պարան. vocal ~s *ձայնալարեր*. spinal ~ *ողնուղեղ*:

**cord** [kɔ:d] v պարանով կապել:

**corded** ['kɔ:di:d] a թոկով/պարանով կապած:

**cordial** ['kɔ:diəl] 1. a սրտի, սրտային. սրտագին, ջերմ. ~ welcome *ջերմ/սրտագին ընդունելություն*. ~ greetings *ջերմ/սրտագին ողջույն*. 2. n սրտային դեղ:

**cordiality** [kɔ:di'æləti] n սիրալիրություն, սրտակցություն:

**cord** [ˈkɔːdn] n շրջափակ, կորդոն (զինվորական, սանիտարական և այլն):

**corduroy** [ˈkɔːdərɔɪ] n պլիսսե, վելվետ. ~ս պլիսսե շավվար:

**core** [kɔː] n միջուկ, կորիզ, ներսի մասը. to the ~ մինչև խորքը. rotten at the ~ փչացած մինչև ուղն ու ծուծը. (տւթյուն) the ~ of the problem հարցի էությունը. English to the ~ մինչև ուղն ու ծուծը անգլիացի. the hard ~ միջուկը. *հմկրգ.* կորիզ, հիմնական. ~ network բազային ցանց. ~ storage օպերատիվ հիշատարք:

**cored** [kɔːd] a դատարկ, փուչ:

**coriander** [ˌkɔːriˈændə] n սամիթ:

**cork** [kɔːk] 1. n խցան. կարթի խցանիկ. like ~ լողուն, ջրի վրա լողացող. *կենդ.* ենթակեղև. 2. a խցանե, խցանային. ենթակեղևային:

**cork** [kɔːk] v խցանել, բերանը փակել. զսպել (զգացմունքները). ~ a bottle շիշը խցանել. ~ one's feelings զգացմունքները զսպել. The wine is ~ed Գինուց խցանի հոտ է զալիս:

**corkage** [ˈkɔːkɪdʒ] n խցանում. խցանահանում:

**corker** [ˈkɔːkə] n խսկց. հանդուզն ստախտություն:

**cork-screw** [ˈkɔːkskruː] n խցանահան:

**cork-tipped** [ˈkɔːktɪpt] a ~ cigarettes ֆիլտրով սիգարետներ:

**cork-tree** [ˈkɔːktriː] n խցանածառ:

**cork-wood** [ˈkɔːkwuːd] n խցանածառ:

**corky** [ˈkɔːki] a խցանային, խցանե. *խսկց.* կենսուրախ, կայտառ:

**corn** I [kɔːn] n հատիկ. *հվք.* հացահատիկ. ցորեն. *ամ.* եգիպտացորեն (*մաև* Indian ~). ~ field եգիպտացորենի արտ. standing ~ չհնձած հացահատիկ. a field of ~ հացի/ցորենի արտ. ~ on the cob կողրերով եգիպտացորեն:

**corn** II [kɔːn] n կոշտուկ. pet ~ *կտկ.* ամենացավոտ տեղը. thread on one's ~s *փխք.* զգայուն տեղին դիպչել:

**corn** [kɔːn] v միսը աղել/աղ դնել:

**corn-cob** [ˈkɔːnkɒb] n եգիպտացորենի կողր/հասկ:

**cornea** [ˈkɔːniə] n *կզմխ.* աչքի եղջրաթաղանթ:

**corned** [kɔːnd] a աղած, աղը դրած. ~ beef աղը դրած միս:

**cornel** [ˈkɔːnl] n, a *բւք.* հոն. հոնի:

**corner** [ˈkɔːnə] n անկյուն. opposite ~ դիմացի անկյուն. right-hand ~ աջակողմյան անկյուն. round the ~ անկյան ետևում. in the ~ անկյունում. at/on the ~ of the street փողոցի անկյունում. out of the ~ of one's eye աչքի պոչով. the four ~s of the Earth աշխարհի չորս կողմերը. be in a tight ~ դժվար կացության մեջ ընկնել. drive into a ~ նեղել, պատին դեմ տալ. the ~ house անկյունային շենքը. turn the ~ *փխք.* դժվար դրությունից դուրս գալ. a ~ մրզ. *ֆուտբ.* անկյունային հարված:

**corner** [ˈkɔːnə] v նեղը զգել, պատին սեղմել:

**corner-stone** [ˈkɔːnəstəʊn] n անկյունաքար, հիմնաքար:

**cornet** [ˈkɔːnɪt] n *երթշ.* կոռնետ. վաֆլի բաժակներով պաղպաղակ:

**corn-exchange** [ˌkɔːnɪksˈtʃeɪndʒ] n հացահատիկի շուկա:

**cornflakes** [ˈkɔːnflɛɪks] n եգիպտացորենի ձողիկներ:

**corn-flour** [ˈkɔːnflaʊə] n եգիպտացորենի ալյուր:

**corn-flower** [ˈkɔːnflaʊə] n *բւք.* կապույտ տերեփուկ:

**cornice** [ˈkɔːnɪs] n *ճրտ.* քիվ:

**cornish** [ˈkɔːnɪʃ] n կորնական լեզու, կորնուելսի:

**cornucopia** [ˌkɔːnjuˈkʊpiə] n առատության եղջյուր:

**corny** [ˈkɔːni] a հացահատիկային, հացահատիկավոր. կոշտուկավոր:

**corolla** [kəˈrɒlə] n *բւք.* ծաղկապսակ:

**corollary** [kəˈrɒləri] n հետևանք:

**corona** [kəˈrɒnə] n արևի պսակ, ատամնապսակ:

**coronal** [ˈkɒrənəl] n պսակային, պսակածև:

**coronate** [ˈkɒrəneɪt] v թագադրել:

**coronation** [ˌkɒrəˈneɪʃn] n թագադրում, թագադրություն:

**coroner** [ˈkɒrənə] n դատաքննիչ. ~'s inquest դատաքննիչի հետաքննություն:

**coronet** [ˈkɒrənɪt] n թագ, ապարոշ:

**corporal** [ˈkɔːprəl] n կապրալ, ենթասպա:

**corporal** [ˈkɔːprəl] a մարմնական. ~ defects ֆիզիկական պակասություններ. ~ punishment մարմնական պատիժ:

**corporate** [ˈkɔːpərət] a ընդհանուր, բաժնետիրական. ~ property/responsibility ընդհանուր ունեցվածք/պատասխանատվություն.

~ shares/stock ընկերության բաժնետոմսեր:  
**corporation** [ˌkɔːpəˈreɪʃn] n ընկերություն, միավորում. municipal ~ քաղաքային վարչություն. բաժնետիրական ընկերություն:  
**corps** [kɔː] n *զգմ.* զորաբանակ. կորպուս. diplomatic ~ դիվանագիտական կորպուս. ~ de ballet բալետախումբ:  
**corpse** [kɔːps] n դիակ. the senseless ~ անշունչ դիակ, անկենդան մարմին:  
**corpulence** [ˈkɔːpjuləns] n մարմնեղություն, գիրություն:  
**corpulent** [ˈkɔːpjulənt] a մարմնեղ, գեր, հաղթանդամ:  
**corpus** [ˈkɔːpəs] n օրենսգիրք, ժողովածու. ~ juris օրենքների ժողովածու:  
**corpuscle** [ˈkɔːpʌsl] n մարմնիկ, գնդիկ. red/white ~s *ֆիզլ.* արյան կարմիր/սպիտակ գնդիկներ:  
**corpuscular** [kɔːˈpʌskjələ] a ատոմային, փոքրագույն:  
**correct** [kəˈrekt] a ճիշտ, ուղիղ, ստույգ. քաղաքավարի ~ idea/answer/decision ճիշտ գաղափար/պատասխան/որոշում. a very ~ young man կիրթ/կոռեկտ երիտասարդ. the ~ time ճիշտ ժամը. more or less ~ ավել կամ պակաս ճիշտ:  
**correct** [kəˈrekt] v ուղղել, ճշտել. սխալն ուղղել. ~ a mistake սխալն ուղղել. ~ proofs սրբագրել. ~ one's watch ուղղել/ստուգել ժամացույցը. ~ a child for rudeness երեխային դիտողություն անել կոպտության համար:  
**correction** [kəˈrekʃn] n ուղղում, ստուգում. ճշտում. նկատողություն. ~ of mistakes սխալների ուղղում. ~ of essays շարադրությունների ստուգում. He doesn't like ~ Չի սիրում, երբ իրեն դիտողություն են անում. speak under ~ խոսել սխալներն ընդունելով:  
**corrective** [kəˈrektɪv] 1. n ճշտում, ուղղում. 2. a ուղղիչ, ուղղող. ճշտող. ~ glasses *բժշկ.* կարգավորող ակնոց:  
**corrector** [kəˈrektə] n սրբագրիչ:  
**correlate** [ˈkɔːrəleɪt] 1. n հարաբերական հասկացություն. 2. v հարաբերակցության մեջ լինել. հարաբերակցություն հաստատել:  
**correlation** [ˌkɔːrəˈleɪʃn] n հարաբերակցություն:  
**correlative** [kəˈrelatɪv] n հարաբերակցական:  
**correspond** [ˌkɔːrəˈspɒnd] v համապատասխանել, համընկնել. համաձայնել. This

story doesn't ~ to the facts Այս պատմությունը չի համապատասխանում փաստերին. (թղթակցել) ~ with smb թղթակցել մեկի հետ:  
**correspondence** [ˌkɔːrəˈspɒndəns] n համապատասխանություն, համանմանություն. keep up a ~ with, be in ~ with նամակագրական կապ ունենալ. read one's ~ նամակները կարդալ. ~ course հեռակա ուսուցում:  
**correspondent** [ˌkɔːrəˈspɒndənt] 1. n թղթակից. the ~ of "The Times" «Թայմս»-ի թղթակից. be a good/bad ~ հաճախ/սակավ գրել. 2. a համապատասխան:  
**corresponding** [ˌkɔːrəˈspɒndɪŋ] a համապատասխանող, համապատասխան. թղթակցող:  
**corridor** [ˈkɔːrɪdɔː] n միջանցք:  
**corrigible** [ˈkɔːrɪdʒəbl] a ուղղելի, շտկելի:  
**corroborant** [kəˈrɒbərənt] n *բժշկ.* կազդուրիչ միջոց:  
**corroborate** [kəˈrɒbəreɪt] v հաստատել, փաստերով հիմնավորել:  
**corroboration** [kəˈrɒbəreɪʃn] n հաստատում, հիմնավորում. in ~ of the story ի հաստատումն այդ պատմության:  
**corrode** [kəˈrəʊd] v քայքայվել, մաշվել. ժանգոտել:  
**corrodible** [kəˈrəʊdɪbl] a ժանգոտման ենթակա:  
**corrosion** [kəˈrəʊzən] n ժանգոտում, ժանգ. կոռոզիա:  
**corrosive** [kəˈrəʊsɪv] n, a ուտիչ/քայքայիչ նյութ, ուտիչ, մաշիչ:  
**corrugate** [ˈkɔːrəgeɪt] v ծալծլվել. ալեծև/ալիքավոր դարձնել:  
**corrugated** [ˈkɔːrəgeɪtɪd] a ալիքածև, ալիքավոր ~ iron/paper ծալքավոր մետաղ, ալիքածև թուղթ:  
**corrugation** [ˌkɔːrəˈgeɪʃn] n խորշոնում, թորշոնում. ծալքավորում:  
**corrupt** [kəˈrʌpt] a փչացած, այլասերված. կաշառված ~ practices կաշառակերություն, կոռուպցիա. a ~ society փտող հասարակություն. a ~ text աղճատված տեքստ:  
**corrupt** [kəˈrʌpt] v փչացնել, այլասերել, կաշառել. ~ smb փչացնել, այլասերել. ~ morals բարքերը այլասերել:  
**corruptibility** [kəˈrʌptəˈbɪlətɪ] n կաշառելիություն:  
**corruptible** [kəˈrʌptəbl] a կաշառելի. նեխման/փտման/այլասերման ենթակա:



**corruption** [kəˈrʌpʃn] n կաշառակերություն, այլասերվածություն. տեքստի աղճատում:

**corsage** [kɔːˈsɑːʒ] n իրանակալ, կորսաժ:

**corsair** [ˈkɔːseɪ] n ծովահեն, ծովային ավազակ:

**corset** [ˈkɔːsɪt] n սեղմիրան, կորսետ:

**cortège** [kɔːˈteɪʒ] n շքախումբ, շքերթ:

**cortex** [ˈkɔːteks] n *բւթ.* կեղև. *կզմխ.* գլխուղեղի կեղև:

**cosine** [ˈkəʊsain] n *մաթ.* կոսինուս:

**cosiness** [ˈkəʊzɪnəs] n հարմարակեցություն, բարեհարմարություն:

**cosmetic** [kɒzˈmetɪk] 1. n դիմահարդարման միջոց. ~s դիմահարդարում. 2. a դիմահարդարական:

**cosmic** [ˈkɒzmɪk] a տիեզերական:

**cosmonaut** [ˈkɒzməʊnɔːt] n տիեզերագնաց:

**cosmos** [ˈkɒzməʊs] n տիեզերք. flight into the ~ բռիչք դեպի տիեզերք. the first man in the ~ առաջին մարդը տիեզերքում:

**cost** [kɒst] n արժեք, գին, ծախս. ~ of the trip ուղևորության արժեքը/ծախսերը. ~ of living կյանքի սպառողական արժեքը. first ~ ինքնարժեք. prime ~ գործարանային ինքնարժեք. initial ~ նախնական/հիմնական արժեք. count the ~s նախնական հաշվարկ կատարել. at the ~ of որևէ բանի գնով. at all ~s ամեն գնով. fixed/indirect ~s հաստատուն/անուղղակի ծախսեր. at my ~ իմ հաշվին. the ~ of freight փոխադրման ծախսերը. below ~ գնից/արժեքից ցածր. legal ~s դատական ծախսեր. whatever the ~ ինչ էլ դա արժենա. I learnt this to my ~ ես դա դառը փորձից գիտեմ: ~ factor արժեքի գործոն:

**cost** [kɒst] v արժենալ. նստել. գնահատել, գինը որոշել. ~ little /a lot էժան/թանկ արժենալ. ~ what it may ինչ էլ որ արժենա. it ~ him many sleepless nights/his life անքուն գիշերների/կյանքի գնով. ~ articles/goods գնահատել ապրանքը. ~ a project որոշել ծրագրի արժեքը:

**costal** [ˈkɒstl] a կողային:

**co-star** [ˈkəʊstɑː] v գլխավոր դեր խաղալ մեկի հետ միասին:

**coster (monger)** [ˈkɒstə (,mʌŋgə)] n շրջիկ առևտրական:

**costing** [ˈkɒstɪŋ] գնահատում, գինը որոշելը:

**costless** [ˈkɒstləs] a ծրի, անվճար:

**costly** [ˈkɒstli] a թանկ, թանկագին. a ~ apartment թանկարժեք բնակարան. a ~ victory թանկ գնով ձեռք բերված հաղթանակ:

**cost price** [ˈkɒst praɪs] n ինքնարժեք. sell at ~ ինքնարժեքով վաճառել:

**costume** [ˈkɒstjʊ:m] n (կանացի) կոստյում. national ~ ազգային տարազ. ~ jewellery կեղծ զարդեղեն:

**cosy** [ˈkəʊzi] n բարեհարմար, հանգստավետ, հարմար. a ~ room/atmosphere/chat հանգստավետ սենյակ. ջերմ մթնոլորտ. բարեկամական զրույց:

**cot I** [kɒt] n ոչխարանոց, փարախ:

**cot II** [kɒt] n մանկական մահճակալ. մահիճ (նավում). շարժական թեթև մահճակալ:

**cote** [kəʊt] n գոմ, փարախ:

**co-tenant** [kəʊˈtenənt] n վարձակալակից:

**cottage** [ˈkɒtɪdʒ] n խրճիթ, հյուղ, տնակ. ~ industries տնագործական արդյունաբերություն. ~ cheese շոռ:

**cottager** [ˈkɒtɪdʒə] n գյուղաբնակիչ. *ամ.* ամառանոցաբնակ:

**cotton** [ˈkɒtn] 1. n բամբակ, բամբակենի. բամբակեղեն. spun ~ բամբակի մանվածք. ~ wool բժշկ. բամբակ. absorbent ~ խոնավածուծ բամբակ. printed ~ չիթ. 2. a բամբակե, բամբակի. ~ mill մանածագործական/տեքստիլ գործարան. ~ planter բամբակագործ. ~ spinner մանող բամբկոր:

**cotton** [ˈkɒtn] v համածայնվել, հարմարվել. ~ on quickly շուտ հասկանալ:

**couch** [kaʊtʃ] n բազմոց, դիվան, թախտ. օթոց:

**cougar** [ˈkuːgə] n *կենդ.* պումա, կուգուար:

**cough** [kɒf] n հազ. a fit of ~ հազի նոպա. a bad ~ ուժեղ հազ. give a slight ~ մի թեթև հազել. ~ mixture հազի հեղուկադեղ (միքստուրա):

**cough** [kɒf] v հազալ. ~ down հազալով լռեցնել. ~ smth up հազալով կոկորդը մաքրել:

**coulomb** [ˈkuːlɒm] n էլ. կուլոն:

**council** [ˈkaʊnsəl] n խորհուրդ. World Peace C~ Խաղաղության համաշխարհային կոմիտե. C~ of Europe Եվրոխորհուրդ. Security ~ Անվտանգության խորհուրդ. C~ Chamber Նիստերի դահլիճ. ~ of physicians բժիշկների կոնսիլիում. take ~ խորհրդակցել. keep one's own ~ մտադրությունը գաղտնի պահել, ոչ ոքի հետ չխորհրդակցել. *իրավ.* փաստաբան, դատապաշտպան ~ for the defence

դատապաշտպան. ~ for the prosecution մեղադրող կողմի փաստաբան. take ~ of one's pillow օրը գա հետը բարին, առավոտվա խելքը երեկոյանից լավ է:

**councillor** ['kaunsilə] n խորհրդի անդամ:

**counsel** ['kaunsəl] n քննարկում, խորհրդակցում:

**counsel** ['kaunsəl] v խորհուրդ տալ, հանձնարարել. ~ patience համբերության խորհուրդ տալ. The doctor ~ed him Բժիշկը նրան խորհուրդ տվեց:

**counsellor** ['kaunsələ] n խորհրդատու, կոնսուլտանտ:

**counsellor-at-law** ['kaunsələtɔ:l] n (of) խորհրդատու, փաստաբան:

**count** I [kaunt] n հաշիվ, հաշվում. keep/lose ~ ~ հաշիվը պահել/կորցնել. take a ~ of հաշվում կատարել, հաշվել. on all ~ *իրավ*. բոլոր տեսակետներից. blood ~s արյան անալիզ:

**count** II [kaunt] n կոմս:

**count** [kaunt] v հաշվել, համրել. ~ days/expenses օրերը/ծախսերը հաշվել. ~ in one's head մտքում հաշվել. ~ out/up change մանրը հաշվել. ~ wrong սխալ հաշվել. not ~ing չհաշված. (համարել) I ~ him my best friend ես նրան իմ ամենալավ ընկերն եմ համարում. He ~s himself lucky ես իրեն երջանիկ է համարում. His age will ~ against him Տարիքը նրան կխանգարի. Can we ~ on you? Կարո՞ղ ենք ձեզ վրա հույս դնել. You can ~ on her Դուք կարող եք նրան հավատալ. My opinion ~s for very little Իմ կարծիքը կարևոր չէ. Every second ~s Ամեն վայրկյանը նշանակություն ունի. ~ for nothing ոչինչ չնշանակել:

**countdown** ['kauntdaun] n ժամանակի հաշվումը:

**countenance** ['kauntənəns] n դեմքի արտահայտություն, դեմք. keep one's ~ կերպարանքը չփոխել. change one's ~ դիմափոխվել, այլայլվել. lose ~ իրեն կորցնել. put out of ~ շփոթեցնել. (աջակցություն) keep on in ~ աջակցություն ցույց տալ. lend one's ~ to սատարել, նեցուկ լինել:

**counter** ['kauntə] n վաճառասեղան. խաղանիշ. fresh meat ~ թարմ մսի բաժին/վաճառասեղան. sell under the ~ տակից ծախել. ~ մրգ. /մարզակոշիկի կրկամաս:

**counter** ['kauntə] a հակադիր, հակառակ:

**counter** ['kauntə] adv ընդդեմ. act ~ smb's wishes գործել ընդդեմ/հակառակ մեկի ցանկության:

**counter** ['kauntə] v հակազդել, դիմադրել, հակաճառել. ~ an attack հարձակումը հետ մղել. ~ aggression ագրեսիային դիմադրել. They ~ed our proposal Հակառակ առջարկություն մտցրին. ~ with another question հարցին հարցով պատասխանել:

**counteract** [,kauntər'ækt] v *քիմ*. հակազդել, չեզոքացնել:

**counteraction** [,kauntər'ækʃn] n հակազդեցություն, հակազդում:

**counterattack** ['kauntərətæk] n հակազորի. v հակազորի:

**counterattraction** [,kauntərət'rækʃn] n հակառակ ձգողականություն:

**counterbalance** ['kauntəbæləns] n հակաշիշ. [,kauntə'bæləns] v հավասարակշռել:

**counterblast/blow** ['kauntəbla:st/bləʊ] n հակահարված:

**countercharge** ['kauntətʃɑ:dʒ] n հակամեղադրանք:

**counterclaim** ['kauntəkleim] n հակահայց, հանդիպակաց հայց:

**counterclockwise** [,kauntə'klɒkwaiz] adv ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:

**counterdeed** ['kauntədi:d] n գաղտնի պայմանագիր:

**counter-espionage** [,kauntər'espɪəna:ʒ] n հակահետախուզություն:

**counterfeit** ['kauntəfɪt] 1. n կեղծիք, խարդախություն. 2. a կեղծ, շինծու, խարդախ. 3. v կեղծել, խարդախել, խաբել:

**counterfeiter** ['kauntəfɪtə] n կեղծարար, դրամանեղ:

**counterfoil** ['kauntəfɔɪl] n տոմսագրքի կռնակ/կոճղ:

**countermand** [,kauntə'mɑ:nd] n հակահրաման:

**counter-measure** ['kauntə,meʒə] n հակամիջոց:

**counter-offensive** [,kauntərə'fensɪv] n հակահարձակում:

**counterpart** ['kauntəpɑ:t] n կրկնորդ, պատճեն, կրկօրինակ, կրկնակ. He is my ~ here ես այստեղ նույն պաշտոնն ունի (ինչ ես այնտեղ). This vase has no ~ Այս ժաղկամանը եզակի է. երկրորդ օրինակ գոյություն

չունի:  
**counterpoise** [ˈkauntəpɔɪz] n հակակշիռ. հավասարակշռություն:  
**counter-revolution** [ˌkauntərevəˈluːʃn] n հակահեղափոխություն:  
**countersign** [ˈkauntəsain] n վավերագրել, հաստատել:  
**countersignature** [ˌkauntəˈsignətʃə] n վավերագրում, հաստատում. հաստատող (երկրորդ) ստորագրություն:  
**counterweight** [ˈkauntəweɪt] n հակակշիռ (*նաև: փխր.*):  
**counterwork** [ˈkauntəwɜ:k] n հակազդեցություն. հակառակ գործողություն:  
**countess** [ˈkauntɪs] n կոմսուհի:  
**countless** [ˈkauntləs] a անհաշիվ, անթիվ, անհամար:  
**count-out** [ˈkauntaʊt] n հաշիվ, հաշվարկ:  
**country** [ˈkʌntri] 1. n երկիր. *great/free/foreign* ~ մեծ/ազատ/օտար երկիր. *come to a ~* երկիր գալ. *conscript ~* զինապարտություն ունեցող/երկիր. (հայրենիք) *mother ~* հայրենիք. *die for one's ~* զոհվել հանուն հայրենիքի. *the ~* գյուղ, գյուղական վայր. *live in the ~* գյուղում ապրել. *spend the day in the ~* օրը քաղաքից դուրս անցկացնել. ~ *house* ամառանոց. *աշխրհ. տարածք, վայր* *mountainous/wooded/deserted ~* լեռնոտ/անտառային/ անապատային վայր. *from all parts of the ~* երկրի բոլոր ծայրերից. 2. a գյուղական, գավառային:  
**country-man** [ˈkʌntrɪmən] n հայրենակից. *fellow ~* համերկրացի:  
**country-seat** [ˌkʌntriˈsi:t] n կալվածատուն, կալվածք:  
**country-side** [ˈkʌntrisaɪd] n գյուղական վայր, գյուղ:  
**country-woman** [ˈkʌntri ˈwʊmən] n հայրենակցուհի:  
**county** [ˈkaunti] n կոմսություն (Անգլիա):  
**coup** [ku:] n հաջողություն, հաջող քայլ/հարված. *bring off a ~* հաջող քայլ անել:  
**coup d'état** [ˌku:deɪˈta:] n պետական/պալատական հեղաշրջում:  
**couple** [ˈkʌpl] n զույգ. a married ~ ամուսնական զույգ. *in ~s* զույգերով. a ~ of apples մի քանի խնձոր. a ~ of days մի քանի օր. *We had a ~ (in the bar)* Մենք մի-մի գավաթ խմեցինք:  
**couple** [ˈkʌpl] v միացնել. *երկթ.* վազոնները կցել. *կենդ.* զուգավորել:

**coupler** [ˈkʌplə] n *տեխ.* միացնող գործիք, կցորդիչ:  
**couplet** [ˈkʌplət] n երկտող ոտանավոր:  
**coupling** [ˈkʌplɪŋ] n միակցում, միավորում:  
**coupon** [ˈku:pən] n կտրոն, տալոն:  
**courage** [ˈkʌrɪdʒ] n քաջություն, համարձակություն. *show ~* քաջություն ցուցաբերել. *take ~* համարձակվել. *have the ~* քաջություն ունենալ. *have the ~ of conviction* ամուր լինել իր համոզմունքներում. *pluck up ~* խիզախել, սիրտ առնել:  
**courageous** [kəˈreɪdʒəs] a քաջ, համարձակ, խիզախ, արի:  
**courier** [ˈkʊriə] n սուրհանդակ, լրաբեր, գործակալ. (տուրիստական խմբի) ուղեկցորդ:  
**course** [kɔ:s] n ուղղություն, կուրս. *the ship is on/off ~* նավը իր կուրսով է գնում/կուրսից շեղվում է. *set one's ~ to* ուղղություն վերցնել. *the ~ of a river* գետի ընթացքը/հունը. (ընթացք) ~ of action գործելակերպ, գործելու եղանակ. ~ of events իրադարձությունների ընթացքը. *in due ~* պատշաճ ժամանակ. *in the ~ of* ընթացքում, *in the ~ of conversation/business* զրույցի/գործի ընթացքում. *in the ~ of month* ամսվա ընթացքում. *in the ~ of nature* ընդունված կարգ, սովորական բան. *There was no ~ open* Ուրիշ ելք չկար. (դասընթաց) *correspondence ~s* հեռակա դասընթացներ. *summer ~* ամառային դասընթացներ. a ~ of lectures դասախոսությունների կուրս. *race ~ մրց.* մրցատարածություն. *not to stay the ~* մրցավազքից դուրս ընկնել. *խիր.* կերակուր, կերակրատեսակ a three ~ dinner 3 կերակրատեսակից բաղկացած ճաշ. *the first ~* առաջին տեսակը. *as a matter of ~* ինքնին հասկանալի բան. *of ~* անշուշտ, իհարկե:  
**court** [kɔ:t] 1. n բակ. խաղահրապարակ, մարզական հրապարակ. *tennis ~* թենիսի հրապարակ. *իրավ.* դատարան, դատավորներ (*նաև: ~ of justice*). *Supreme ~* գերագույն դատարան. *C~ of appeal* վճռաբեկ դատարան. *martial ~* ռազմադաշտային դատարան. *in ~* դատարանում. *contempt of ~* անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ. *bring a case/smb to ~* որևէ մեկին դատի տալ. *settle affairs out of ~* հարցը առանց դատարանի լուծել. *The ~* sentenced him *Դատարանը* դատապարտեց նրան.

(արքունիք) at ~ արքունիքում. hold a ~ արքունիքում ընդունելություն կազմակերպել. 2. **a** պալատի, արքունիքի. դատարանային:

**court** [kɔ:t] v սիրահետել, սիրատածել. ձգտել. ~ a woman կնոջը սիրահետել. ~ popularity ժողովրդականության ձգտել. ~ disaster գլխին փորձանք բերել/կոչել. a ~ing couple սիրահար զույգ:

**courtesan** [ˌkɔ:tiːzæ:n] n կուրտիզանուհի, քեթևաբարո կին:

**courteous** [ˈkɔ:tiəs] a քաղաքավարի, բարեկիրթ:

**courtesy** [ˈkɔ:təsi] n քաղաքավարություն, բարեկիրթություն. by the ~ շնորհիվ սիրալիրության. do the ~ պատվել, պատիվ տալ. with scant ~ անսիրալիր կերպով:

**courtier** [ˈkɔ:tiə] n պալատական:

**courtly** [ˈkɔ:tlɪ] a մուրթ, նրբագեղ:

**court-martial** [ˌkɔ:ˈmɑ:ʃl] 1. n ռազմական տրիբունալ. 2. v դատել ռազմական տրիբունալով:

**courtroom** [ˈkɔ:trʊm] n դատարանի/դատարան նիստերի դահլիճ:

**courtship** [ˈkɔ:ʃɪp] n սիրատածում:

**courtyard** [ˈkɔ:tjɑ:d] n բակ (ներքին):

**cousin** [ˈkʌzn] n մորաքրոջ/հորաքրոջ/քեռու/հորեղբոր տղա/աղջիկ:

**couture** [kuˈtʃʊə] n մոդելագործություն. haute ~ բարձրաշխարհիկ մորաձևություն:

**couturier** [kuˈtʃʊəri] n բարձրակարգ մոդելագործ(ուհի):

**cove** I [kəʊv] n աշխրգ. փոքրիկ ծովածոց. ճրտ. կամար:

**cove** II [kəʊv] n *խսկց.* ջահել տղա. He is an odd/trum ~ Տարօրինակ տղա է. topping ~ դահիճ:

**covenant** [ˈkʌvənt] n համաձայնություն. *հրավ.* պայմանագիր, պարտավորագիր. ~s պայմանագրի պայմաններ:

**cover** [ˈkʌvə] n ծածկոց, կափարիչ. ~ of the book գրքի կազմ. from ~ to ~ *փխբ.* ծայրից ծայր, սկզբից մինչև վերջ. loose ~ ծածկոց (չեխոլ). take ~ from the rain անձրևից պատսպարվել. take ~ from the pursuers հետապնդողներից թաքնվել. under ~ of night գիշերվա ծածկի տակ. under military ~ ռզմ. հրետանու ծածկի տակ:

**cover** [ˈkʌvə] v ծածկել, պատել, սքողել. The ground is ~ed with snow Գետինը ծածկված է

ծյունով. ~ one's expenses ծախսերը ծածկել. ~ a card խաղաթուղթը ծածկել. ~ oneself with glory իրեն փառքով պատել. ~ a saucepan կաթսան փակել. ~ the child with a blanket երեխային վերնակով փաթաթել. (պաշտպանել) The insurance ~s against fire Ապահովագրությունը պաշտպանում է հրդեհից. He said it to ~ himself Նա դա ասեց իրեն պաշտպանելու համար. (թաքցնել, քողարկել) ~ confusion շփոթմունքը թաքցնել. (տարածություն կտրել, անցնել) ~ the distance in an hour տարածությունը մեկ ժամում անցնել. ~ a problem հարցը լուսաբանել (*ճակ.* մամուլում). The thesis ~s a wide field Թեզս ընդգրկում է լայն շրջանակ. ~ up for smb մեկի մեղքը թաքցնել:

**coverage** [ˈkʌvərɪdʒ] n գործունեության ոլորտ/սահմաններ. լուսաբանում (մամուլում և այլն). լրահաղորդում. control of ~ լուսաբանման վերահսկողություն. degree of ~ ընդգրկման աստիճանը/շրջանակը. universal ~ համընդհանուր ընդգրկում. insurance ~ ապահովագրության շրջանակները:

**coverall(s)** [ˈkʌvəɔ:l(z)] n բանվորական արտահագուստ:

**covering** [ˈkʌvəriŋ] n ծածկոց, շապիկ. a ~ letter ուղեկցող նամակ:

**coverlet** [ˈkʌvələt] n մահճակալի ծածկոց:

**covert** [ˈkʌvət] n անտառի թավուտ. արգելանոց:

**covert** [ˈkʌvət] a ծածուկ, քողարկված, գաղտնի. a ~ threat/sneer քողարկված սպառնալիք/քմծիծաղ. a ~ glance գաղտագողի հայացք:

**covet** [ˈkʌvɪt] v նախանձել, աչք ունենալ:

**covetous** [ˈkʌvɪtəs] a ագահ, ընչաքաղց. նախանձ:

**cow** [kaʊ] n կով. էգ (փղի/կետի/ռնգեղջյուրի և այլն). feed, keep/milk a ~ կով պահել/կթել. keep ~s անասուններ պահել. dry ~ ստերջ կով. grunting ~ յակ.

**cow** [kaʊ] v վախեցնել, ահաբեկել:

**coward** [ˈkaʊəd] n վախկոտ/երկչոտ մարդ. a sad ~ բացահայտ վախկոտ մարդ. too much of a ~ շատ վախկոտ մարդ:

**cowardice** [ˈkaʊədɪs] n վախկոտություն, երկչոտություն:

**cowardly** [ˈkaʊədli] a փոքրոգի, ստորաքարշ, թուլամորթ:

**cow-boy** [ˈkaʊbɔɪ] n կովարած. *ամ.* կովբոյ,

ծիավոր հովիվ:  
**cower** [ˈkaʊə] v կծկվել (վախից/ցոտից):  
**cowherd** [ˈkaʊhɜːd] n կովարած, տավարած:  
**cowl** [ˈkaʊl] n վեղար. *խսկց.* վանական:  
**cowlick** [ˈkaʊlɪk] n մազափունջ:  
**cowshed** [ˈkaʊʃed] n կովանոց, գոմ:  
**coxcomb** [ˈkɒkskəʊm] n պճնամուկ, ինքնահավան/փուչ մարդ:  
**coy** [kɔɪ] a ամոթխած, ամաչկոտ. կոկետ:  
**coyote** [kɔɪˈəʊt] n *կենդ.* դաշտագայլ, կոյոտ:  
**CPU** [siːpiːjuː] (Central Processing Unit [ˈsentrəl ˈprəʊsesɪŋ ˈjuːnɪt]) *հմկրգ.* կենտրոնական պրոցեսոր:  
**crab** [kræb] n *կենդ.* ծովախեցգետին, կրաք:  
**crabapple** [kræbˈæpl] n վայրի խնձոր/խնձորենի:  
**crabby** [ˈkræbi] a կամակոր, դյուրագրգիռ:  
**crack** [kræk] n ճայթյուն. the ~ of rifle shots հրացանի կրակոցի ճայթյուն. the ~ of a whip մտրակի շառաչյուն. (ճեղք, ճեղքվածք) a ~ in a wall/cup ճեղք բաժակի վրա/պատին. at ~ of a dawn *փխբ.* լուսաբացին. (հարված) give a ~ on the head գլխին հարվածել. in a ~ մի ակնթարթում. make a ~ կատակներ անել. a ~ ընտիր, հմուտ. ~ troops ընտիր զորամասեր. be a ~ shot հմուտ/դիպուկ հրածիգ լինել:  
**crack** [kræk] v շրխկացնել, չխկացնել. ~ a whip մտրակով շառաչել. ~ a joke(s) *փխբ.* կատակներ անել. (կտորել, կտորվել) ~ nuts ընկույզ կտորել. ~ smb's scull մեկի գլուխը ջարդել. the mirror ~ed հայելին ճաքեց. a ~ed plate ճաքած ափսե. my hands are ~ed ձեռքերս ճաքել են. բեկվել, կտրվել/ծայնի մասին/ in a ~ed voice դողդոջուն ձայնով. (ծայթել) a branch ~ed under foot ոտքի տակ ճյուղ ճայթեց. ~ under the strain *խսկց., փխբ.* լարվածությանը չդիմանալ. The old man is ~ing up Ծերունին սկսում է համձնվել. get ~ing գործի անցնել. The police are ~ing down on gambling Ոստիկանությունը պայքարում է խաղամոլության դեմ:  
**crack-brained** [ˈkrækbreɪnd] a թուլամիտ, տկարամիտ:  
**cracked** [krækt] a խելագար, խելացնոր:  
**cracker** [ˈkrækə] n հրթիռ. կտորիչ. չոր թխվածք, քրեքեր. nut ~ ընկույզ կտորիչ. be ~s *խսկց.* խելագարվել, ցնդել. He is ~s Նա ցնդել է:  
**crackle** [ˈkrækəl] n վառվող փայտի ճարճա-

տյուն. ճթթթ. v ճարճատել, ճթթալ:  
**crackling** [ˈkrækliŋ] n ճարճատյուն. տապակած խոզի միս:  
**cracknel** [ˈkræknl] n փխրուն թխվածք:  
**cracksman** [ˈkræksmən] n կոտրամքով գողություն կատարող:  
**cracky** [ˈkræki] a ճաքած. *խսկց.* խելագար, աննորմալ:  
**cradle** [ˈkreɪdl] n օրորոց. *փխբ.* ակունք. from the ~ to the grave ծնունդից մինչև մահ:  
**cradling** [ˈkreɪdlɪŋ] n օրորում. a կամարակապ, կամարակալ:  
**craft** [kra:ft] n արհեստ, զբաղմունք. հմտություն, ճարակություն. խորամանկություն. *ծով.* նավ. ~ of all kinds տարբեր տեսակի նավեր. small ~ նավակներ. landing ~ դեսամտային ինքնագնաց նավ:  
**craftsman** [ˈkra:ftsmən] n արհեստավոր, մասնագետ. իր գործի վարպետ:  
**craftsmanship** [ˈkra:ftsmənʃɪp] n վարպետություն:  
**crafty** [ˈkra:fti] a ճարպիկ, ճարտար, հմուտ. խորամանկ, նենգ:  
**crag** [kræɡ] n ժայռ, քարափ:  
**craggy** [ˈkræɡi] a ժայռոտ:  
**cragsman** [ˈkræɡzmən] n ալպինիստ:  
**crake** [kreɪk] n *կենդ.* ջրահավ:  
**cram** [kræm] v խիստ/չափից ավելի լցնել. խցկել. ճխտել. ~ one's case with clothes ճամպրուկը իրերով լցնել. ~ food into one's mouth բերանը ուտելիքով լիքը լցնել. The hall was ~ed հալի լիքը լեփ-լեցուն էր. (վարժեցնել, պատրաստել) ~ a pupil for the exam աշակերտին քննությունից առաջ պատրաստել/վարժեցնել. ~ (up) history պատմությունը սերտել:  
**crammer** [ˈkræmə] n դասուսույց, սերտարար:  
**cramp** [kræmp] n ջղածգություն. ~s կծկում, ցնցում. I've got ~ in my foot/fingers Ոտքս ձգվեց, մատներս ձգվեցին:  
**cramp** [kræmp] v ջղածգություն առաջացնել. նեղացնել, սեղմել, կաշկանդել. We're very ~ed for room Մեր բնակարանը շատ նեղվածք է. ~ one's style խախտել, աղավաղել մեկի ոճը:  
**cramped** [kræmpt] a ջղածգված, սեղմված, ճնշված. ~ handwriting անընթեռնելի ձեռագիր. ~ style սեղմ ոճ:  
**cranberry** [ˈkrænbəri] n *բուս.* լորամրգի

(հատապտուղ):  
**crane** [kreɪn] n կենդ. կռունկ. տեխ. ամ-  
 քարծիչ կռունկ:  
**cranium** [ˈkreɪniəm] n գանգ:  
**crank** I [kræŋk] n տեխ. արմուճակ, ծունկ,  
 ծնկավոր լծակ:  
**crank** II [kræŋk] n տարօրինակ/քմահաճ  
 մարդ:  
**cranked** [kræŋkt] a ծնկավոր, ծռված:  
**cranky** [ˈkræŋki] a խախուտ, թուլացած.  
 քմահաճ. տարօրինակություններ ունեցող:  
**crape** [kreɪp] n կրեպ, շղարշ. (մետաքս)  
 փխբ. սուգ, սգաշոր:  
**crapulence** [ˈkræpjuləns] n զինովություն:  
**crapulent** [ˈkræpjulənt] a զինով հարբած:  
**crash** [kræʃ] n շառաչյուն, թնդյուն. վթար,  
 խորտակում. կրախ, սնանկացում:  
**crash** [kræʃ] v աղմուկով զարկել. ~ one's fist  
 on the table բռունցքով սեղանին զարկել.  
 The pilot ~ed his plane Օդաչուն ջախջախվեց  
 ինքնաթիռի հետ միասին. ~ a party *խսկց.*  
 առանց հրավերի հյուր գալ. The dishes ~ed  
 to the floor Ափսեները աղմուկով զետիճ ըն-  
 կան. The vase ~ed on the stone floor Ծաղկա-  
 մանը ջարդուփշուր եղավ ընկնելով քարի  
 հատակին. The two cars ~ed Մեքենաները  
 ընդհարվեցին. The business ~ed Ձեռնարկու-  
 թյունը սնանկացավ:  
**crash-helmet** [ˈkræʃ, helmit] n պաշտպա-  
 նական սաղավարտ:  
**crash-land** [ˈkræʃlænd] v *ավ.* հարկա-  
 դրված վայրէջք կատարել:  
**crass** [kræs] a լիակատար, կատարյալ. ~ ig-  
 norance լիկատար տգիտություն. a ~ idiot լիա-  
 կատար ապուշ:  
**crate** [kreɪt] v արկղի մեջ դասավորել (փա-  
 թեթ):  
**crater** [ˈkreɪtə] n խառնարան. ռմբածագար:  
**cravat** [krəˈvæt] n շարֆ, փողկապ. hempen ~  
 դահճի պարան:  
**crave** [kreɪv] v տենչալ, փափագել. խնդրել ~  
 for affection քնքշանք փափագել. craving for  
 a smoke շատ ուժեղ ծխել ցանկանալ. ~  
 smb's mercy/forgiveness ներողամտու-  
 թյուն/զթություն խնդրել:  
**craven** [ˈkreɪvn] n վախկոտ/երկչոտ մարդ:  
**craving** [ˈkreɪvɪŋ] n տենչ, փափագ:  
**crawl** [krɔːl] n սողում, դանդաղ շարժում. at  
 a ~ կրիայի դանդաղ քայլերով. go for a ~

*խսկց.* դանդաղ զբոսնել. go for a pub ~ գնալ  
 խմելու. the ~ մրգ. կրոլ. (լողի ձև):  
**crawl** [krɔːl] v սողալ. դանդաղ շարժվել.  
 snakes/insects ~ օձերը/միջատները սողում  
 են. The baby was ~ing on the floor մանկիկը  
 սողում էր հատակին. The dog ~ed into/out of  
 his kennel Շունը ներս/դուրս սողաց իր բնից.  
 The weeks ~ed by *փխբ.* Շաբաթները  
 դանդաղ անցնում էին. (քծնել) ~ to smb մեկի  
 առաջ ստորաքարշություն անել. (վխտալ)  
 The ground was ~ing with ants Մրջյունները  
 վխտում էին չորս կողմը:  
**crawler** [ˈkrɔːlə] n սողուն, դանդաղ ընթա-  
 ցող. քծնող/ստորաքարշ մարդ:  
**crayfish** [ˈkreɪfɪʃ] n կենդ. խեցգետին:  
**crayon** [ˈkreɪɒn] n գունավոր կավիճ/մա-  
 տիտ. նկարչական ածուխ. /գունավոր  
 կավիճով/մատիտով /նկար:  
**craze** [kreɪz] 1. n մոլություն. have got a ~ for  
 jazz music ջազի մոլություն ունենալ. be the  
 ~ խիստ մոդայիկ լինել. 2. v գլխահան  
 անել, խենթացնել:  
**crazy** [ˈkreɪzi] a խելագար, խելացնոր, ցնոր-  
 ված. a ~ idea խելացնոր միտք. be ~ with pain  
 ցավից գժվել. He's enough to drive one ~  
 Նրանից գժվել կարելի է. be ~ about the bal-  
 let/theatre etc բալետով/թատրոնով տարված  
 լինել:  
**creak** [kriːk] n, v ճռռոց. ճռռալ:  
**creaky** [ˈkriːki] a ճռռան, ճռռացող:  
**cream** [kriːm] 1. n սեր, սերուցք, կրեմ. sour  
 ~ թթվասեր. skin feeding/shaving ~ սնուցող/  
 սափրվելու կրեմ. chocolate/face/shoe ~ շոկո-  
 լատի/դեմքի/կոշիկի կրեմ. skim the ~ off սե-  
 րը քաշել. ~ cheese սերուցքի պանիր. *փխբ.*  
 սերուցք, ընտիր բան ~ of the society հասա-  
 րակության սերուցքը. 2. a բաց դեղնագույն:  
**cream** [kriːm] v սերը քաշել. ~ the butter and  
 sugar *խբ.* կարագն ու շաքարը հարել. ~ed  
 potatoes կարտոֆիլի պյուրե:  
**creamery** [ˈkriːməri] n յուղի/պանրի  
 գործարան. կաթնեղենի խանութ:  
**creamy** [ˈkriːmi] a յուղալի. a ~ complexion  
 նուրբ մաշկ:  
**crease** [kriːs] n ծալք, փոթ. trouser ~ շալ-  
 վարի/տաբատի արդուկած գիծը. the dress  
 full of ~ ճմռթված շոր. ~s on the forehead  
 կնճիռներ ճակատին:  
**crease** [kriːs] v ճմռթել, ճմռթվել. The trousers

are beautifully/horribly ~d Տաքատը լավ արդուկված/ահավոր ճնշված է. The material ~s easily Այս կտորը շատ հեշտ ճնշվող է:  
**creasy** ['kri:si] a ճնշված, ճխլտված. ծալքավոր:

**create** [kri'eit] v ստեղծել, ստեղծագործել. արարել. կազմել. ~ a role/difficulties/good working conditions կերպար/ դժվարություններ/աշխատանքային լավ պայմաններ ստեղծել. ~ a bad impression վատ տպավորություն գործել. ~ a sensation սենսացիա անել. *husky*. աղմուկ բարձրացնել. (կոչում տալ) be ~d կոչում ստանալ. He was ~d a peer Նրան պերի/լորդի տիտղոս տվեցին:

**creation** [kri'eɪʃn] n ստեղծում, ստեղծագործում, արարում. արարչություն. the C~ աշխարհի ստեղծում, արարչություն. the latest ~ from Paris ամենավերջին մոդան Փարիզից:

**creative** [kri'eitiv] a ստեղծարար, ստեղծագործական, ստեղծագործ. ~ thinking ստեղծագործական մտածողություն:

**creativity** [,kri:'eɪ'tivəti] n ստեղծագործություն:

**creator** [kri'eɪtə] n ստեղծող, արարիչ. հեղինակ:

**creature** ['kri:tʃə] n արարած, էակ, կենդանի էակ, մարդ. a helpless/strange ~ անօգնական/տարօրինակ արարած. a lovely ~ հրաշալի էակ. dumb ~s անլեզու անասուն/ հայվան. poor ~ խեղճ արարած. ~ comforts երկնային բարիքներ:

**creche** [kreʃ] n մանկամուտ:

**credence** ['kri:dns] n հավատ, վստահություն. give ~ to վստահել. refuse ~ չվստահել. find ~ վստահություն վայելել/գտնել:

**credentials** [kredə'denʃɪs] n pl հավատարմագիր. (ղեսպանի) լիազորագիր. լիազորագիր, մանդատ. ask for ~ անձնագիր պահանջել. present/submit one's ~ հավատարմագիրը հանձնել/ներկայացնել:

**credibility** [,kredə'bɪləti] n հավանականություն, հավաստիություն. ~ rate վստահության աստիճանը. His ~ rate is not high Նրան այնքան էլ չի կարելի հավատալ:

**credible** ['kredəbl] a վստահելի, հավանական, արժանահավատ. ~ evidence վստահելի վկայություն. It doesn't seem ~ Ղա անհավանական է թվում. It's hardly ~ Քիչ հավա-

նական է:

**credit** ['kredit] n վստահություն, հավատ. give ~ to վստահել. give ~ to գնահատել, արժանին հատուցել. (հարգանք, պատիվ) It does you ~ Ղա ձեզ պատիվ է բերում. be a ~ of the family ընտանիքի պարծանքը լինել. have the ~ of երախտիք ունենալ. to his ~ ի պատիվ նրա (պետք է ասել). pass the exams with ~ քննությունները գերազանց հանձնել. take all the ~s իրեն վերագրել բոլոր արժանիքները/վաստակը. (վարկ) on ~ վարկով. ~ card վարկատոմս. a letter of ~ երաշխիքային նամակ. ~ balance վարկային բալանս. documentary ~ փաստագրված վարկ. No ~ is given here Այստեղ ապառիկ/վարկով վաճառք չկա:

**credit** ['kredit] v վստահել, հավատալ. You'd never ~ it Ղուք չեք հավատա. ~ smb with 100 dollar մեկի հաշվին 100 դոլար գրել. ~ smn with more sense մեկին ավելի խելացի համարել:

**creditable** ['kreditəbl] a գովելի, գովասանքի/վստահության արժանի. a ~ performance բավական հաջող կատարում:

**creditor** ['kreditə] n վարկատու:

**credo** ['kreɪdəs] n հավատամք, հավատ, համոզմունք:

**credulity** [krə'dju:ləti] n դյուրահավատություն:

**credulous** ['kredjʊləs] a դյուրահավատ:

**creed** [kri:d] n հավատ, դավանանք:

**creek** [kri:k] n փոքրիկ ծոց, ծովախորշ. *ամ.* գետակ, վտակ:

**creel** [kri:l] n զամբյուղ (ծկան համար):

**creep** [kri:p] v (crept) սողալ. փռվել, սփռվել, տարածվել. գաղտագողի մոտենալ. ~ about on tiptoe ոտնաթաթերի վրա գաղտագողի գնալ. ~ up to the door գաղտագողի մոտենալ դռանը. Suspicion crept into my mind Կասկածը սողոսկեց միտքս. Imprints have crept into the text Տեքստի մեջ վրիպակներ են թափանցել/սողոսկել. Old age ~s unnoticed Օերությունը աննկատ է վրա հասնում:

**creeper** ['kri:pə] n սողաբույս. սողուն:

**creeps** [kri:ps] n սարսուռ. It gives me the ~ Մարմնովս սարսուռ է անցնում. He is a ~ Քծնողի մեկն է:

**creepy** ['kri:pi] a սարսռեցնող. սողացող:

**cremate** [krə'meit] v դիակիզել:

**cremation** [krə'meiʃn] n դիակիզում:

**crematorium** [,kremə'tɔ:riəm] n դիակի-

զարան:  
**creole** ['kri:əul] n կրեոլ. կրեոլուհի:  
**crepe** [kreip] n կրեպ (գործվածքի տեսակ):  
**crepitate** ['krepiteit] v ճարճատել. խզզալ:  
**crepitation** [,krepɪ'teɪʃn] n ճարճատյուն.  
 խզզոց:  
**crepuscular** [kri'pʌskjulə] a մթնշաղային.  
 աղոտ, անորոշ:  
**crescent** ['kreznt] n լուսնեղջյուր, մահիկ,  
 կիսալուսին:  
**cresset** ['kresit] n ջահ:  
**crest** [krest] n կատար. ~ of the horse ծիու  
 բաշ. ~ of the wave/hill ալիքի/լեռան կատար.  
 ~ of the bird թռչունի/կատարիկ:  
**crested** ['krestid] a կատարազարդ. սրա-  
 ծայր:  
**crest-fallen** ['krest,fɔ:lən] a *փխբ.* ընկճված,  
 վիատված. look ~ ընկճված տեսք ունենալ:  
**cretin** ['kretin] n թթամիտ, ապուշ:  
**crevasse** [krə'væs] n խոռոչ. (սառցադաշտի)  
 ճեղքվածք:  
**crevice** ['krevis] n ճեղք, ծերպ:  
**crew** [kru:] n նավակազմ. հինքնաթիռի անձ-  
 նակազմ. սպասարկող անձնակազմ. *ռզմ.*  
 զննարարային խումբ. վայրէջքի/նստեցնող  
 անձնակազմ ground ~ վայրէջքի/նստեցնող  
 անձնակազմ. a motley ~ *խսկց.* բազմատե-  
 սակ/բազմագույն ընկերախումբ:  
**crew** [kru:] v ընկերակցել, խումբ/թիմ կազ-  
 մել. Will you ~ for me tomorrow? Վաղը կըն-  
 կերակցե՞ս ինձ առազատատանավում:  
**crew-cut** ['kru:kʌt] n շատ կարճ կտրած  
 մազեր. have a ~ մազերը շատ կարճ կտրել:  
**crew-neck** ['kru:nek] n a ~ sweater երկարա-  
 վիզ սվիտեր (վողողազկա):  
**crib** [krib] 1. n մանկական մահճակալ.  
 մսուր. *դպր.* ծածկաթերթիկ. 2. v *դպր.* (թա-  
 քուն) արտագրել. ծածկագիր օգտագործել.  
 ~ answers պատասխաններն արտագրել:  
**crick** [krik] n մկանների ձգում. I have a ~ in  
 my neck Վզիս մկանները ձգվել են:  
**cricket** I ['krikɪt] n ծղրիդ. as lively/merry as  
 a ~ կենսուրախ, ժիր, աշխույժ:  
**cricket** II ['krikɪt] n *մրզ.* քրեքթթ. It is not ~  
 Կանոնին համաձայն չէ, Անազնիվ է:  
**crime** [kraim] n հանցանք, հանցագործու-  
 թյուն. ոճիր (*մաս խսկց., փխբ.*) ~ fiction ար-  
 կածախնդրային վեպեր. ~s արկածա-  
 խնդրային գրականություն. It would be a ~

not to swim in such weather *կտկ.* Հանցանք  
 կլիներ չլողանալ այսպիսի եղանակին:  
**crime-sheet** ['kraimʃi:t] n *ռզմ.* պատժացու-  
 ցակ:  
**criminal** ['kriminal] 1. n հանցագործ, ոճրա-  
 գործ. ~ of war պատերազմի/ռազմական  
 հանցագործ. ~ charge քրեական մեղադ-  
 րանք. ~ case/law քրեական գործ/իրավունք.  
 ~ negligence/gang, group հանցավոր անտար-  
 բերություն. հանցավոր/հանցակից խումբ.  
 ~ record դատվածություն. habitual ~ անուղ-  
 դելի հանցագործ. occasional ~ ակամա հան-  
 ցագործ. petty ~ մանր հանցագործ. 2. a  
 հանցավոր, քրեական:  
**criminality** [,krimi'næləti] n հանցավորու-  
 թյուն:  
**criminate** ['krimineit] v հանցանքի մեջ  
 մեղադրել. պախարակել, պարսավել:  
**crimson** ['krɪmzɪn] n բոսորագույն, մուգ  
 կարմիր:  
**cringe** [krɪndʒ] n կծկվել. *փխբ.* քծնել, ստո-  
 րաբարշտություն անել. ~ with fear վախից  
 կծկվել. ~ before smb մեկին քծնել/ստորա-  
 քարշտություն անել:  
**crinkle** ['krɪŋkl] n, v ոլորք, ծալք. ոլորվել,  
 ծալվել:  
**crinkly** ['krɪŋkli] adv ~ hair/paper գանգուր  
 մազեր. տոնածառի թուղթ:  
**crinkum-crankum** [,krɪŋkəm'kræŋkəm]  
 n խճճված գործ:  
**cripple** ['krɪpl] n հաշմանդան:  
**cripple** ['krɪpl] v խեղել, հաշմանդան դարձ-  
 նել. ~d with rheumatism հողացավից  
 կծկված. activities ~d by lack of money  
 գործնեության դադար միջոցներ չլինելու  
 պատճառով:  
**crisis** ['kraɪsɪs] n ճգնաժամ. cabinet ~ կառա-  
 վարական ճգնաժամ. The patient has passed  
 the ~ Հիվանդը հաղթահարել է ճգնաժամը:  
**crisis-ridden** ['kraɪsɪs,rɪdn] a ճգնաժամով  
 բռնված:  
**crisp** [krɪsp] a փխրուն. ~ snow/biscuit  
 ճռճռան ձյուն. փխրուն թխվածք. a ~ day  
 սառը/պարզ օր. ~ air թարմ/կազդուրիչ օր.  
 ~ answer վճռական պատասխան. ~ linen օս-  
 լայած սպիտակեղեն. ~s, potato ~  
 խրթխրթան տապակած կարտոֆիլ:  
**criss-cross** ['krɪskrɒs] a, adv խաչաձև,  
 խաչաձևած:



**criterion** [kraɪˈtɪəriən] n չափանիշ. *հմկրգ.*

~ function գնահատման ֆունկցիա:

**critic** [ˈkrɪtɪk] n քննադատ:

**critical** [ˈkrɪtɪkəl] a քննադատական. վտանգավոր. ճգնաժամային. a ~ article քննադատական հոդված. a ~ situation ճգնաժամային իրավիճակ. the ~ stage of an illness հիվանդության ճգնաժամային ֆազ. in a ~ condition ճգնաժամային վիճակում:

**critically** [ˈkrɪtɪk(ə)li] adv քննադատորեն. վտանգավոր. look ~ քննադատորեն նայել ~ ill վտանգավոր հիվանդ:

**criticism** [ˈkrɪtɪsɪz(ə)m] n քննադատություն. seathing ~ խիստ/ոչնչացնող քննադատություն: slashing ~ write a good ~ of the book գրքի մասին լավ քննադատական գրել:

**criticize** [ˈkrɪtɪsaɪz] v քննադատել. պարսավել, պախարակել. The report was ~d նրա զեկուցումը քննադատվեց:

**croak** [krəʊk] n կռռոց, կռկռոց:

**croak** [krəʊk] v կռռալ, կռկռալ. մրթմրթալ, փնթփնթալ:

**crochet** [ˈkrəʊʃeɪ] n կրոշե (գործելու ձև):

**crock** [krɒk] n կճուճ, կավե սափոր. հալից ընկած ձի. *փխբ.* մարդ:

**crockery** [ˈkrɒkəri] n հախճապակյա ամանեղեն:

**crocodile** [ˈkrɒkədail] n *կենդ.* կոկորդիլոս:

**crocus** [ˈkrɒkəs] n *բսբ.* շաֆրան, զաֆրան, քրքում:

**croft** [krɒft] n տնամերձ հողամաս:

**crofter** [ˈkrɒftə] n փոքր ֆերմայի վարձակալ:

**crone** [krəʊn] n քաֆթառ, ջաղու:

**crony** [ˈkrəʊni] n *խսկց.* վաղեմի բարեկամ:

**crook** [krʊk] n կեռ. ճարմանդ. *խսկց.* խաբեբա. on the ~ խարդախ ճանապարհով. ցուպ, զավազան:

**crooked** [krʊkt] a ծուռ, ծռ(վ)ած. *փխբ.* անազնիվ, կեղծ. a ~ branch ծուռ ճյուղ. a ~ old man կռացած ծերուկ:

**croon** [kruːn] n, v մրմունջ. կիսածայն երգելը. կիսածայն երգել. մրմնջալ:

**crooner** [ˈkruːnə] n էստրադային երգիչ:

**crop** [krɒp] n բերք, հունձք. (թռչունի) զոր/խրիպ. heavy/poor ~ հարուստ/աղքատ հունձք. (ցանքս) in ~ ցանքի տակ. out of ~ չցանած. under ~ ցանած. The ~s promise well Լավ բերք է խոստանում. *փխբ.* կարճ խու-

զած մազեր. a short ~ կարճ կտրած մազեր. fine ~ of hair խիտ մազերի խուրձ. close-cropped շատ կարճ կտրած, համարյա սափրած:

**crop** [krɒp] v բերք/պտուղ տալ. բերքը հավաքել. կտրել, խուզել. The sheep ~ped the grass Ոչխարները պոկոտել էին խոտը. ~ the horse's tail ձիու պոչը խուզել/կարճացնել. The rice ~ped well Բրինձը լավ բերք տվեց. Difficulties ~ped up Դժվարություններ ծագեցին. Smth has ~ped up Անսպասելի հանգամանքներ են առաջացել:

**cropper** [ˈkrɒpə] n հնձվոր. խոտհար մեքենա. good ~ պտղաբեր բույս. *խսկց.* վայր ընկնել. come a ~ ամբողջ հասակով մեկ փռվել. *փխբ.* կործանվել come a ~ in the exam քննությանը տապալվել:

**CROSS** [krɒs] n խաչ, խաչափայտ. խաչելություն. Red C ~ կարմիր խաչ. *կենս.* խաչասերում. հիբրիդ. The dog is a ~ Այս շունը հիբրիդ է:

**CROSS** [krɒs] a լայնակի/խոտորճակի հատվող. ~-bar *տեխ.* լայնակի զցված գերան, հեծան. ~-beam լայնակի զցված գերան. ~ rhythm *փխբ., երժշ.* խաչածն ռիթմ. *բնստ.* խաչածն հանգ. ~ eyed շեղաչք, շիլ. ~ legged ոտքերը խաչածնած/ծալապատիկ մատած. ~ fire *ռզմ.* խաչածն կրակ/հրածոություն. ~ current խոտորճակի հոսանք. ~ action հակառակ գործողություն. ~ examination խաչածն հարցաքննություն. ~ question խաչածն հարցում. ~ reference խաչածն վկայակոչում. ~ appeal հակընդդեմ վճռաբեկ զանգատ. ~ guarantee հանդիպակաց երաշխավորություն. ~ wind անբարենպաստ քամի. (զայրացած) be ~ with smb զայրանալ մեկի վրա. get very ~ about smth խիստ զայրանալ ինչ-որ բանից:

**CROSS** [krɒs] v կրել, հատել-անցնել. ~ the road/the street փողոցը/ճանապարհը անցնել. ~ the river/the bridge գետը/կամրջով անցնել. ~ smb path մեկին որևէ գործում խանգարել. It ~ed my mind Մտքովս անցավ. ~ off/out ջնջել, ցուցակից հանել. ~ the finishing line *մրզ.* վերջնագիծը հատել. (խաչածնել) ~ one's legs/arms ոտքերը/ծեռքերը խաչածնել. keep fingers ~ed անհաջողությունը խափանել. (հակառակվել) He ~es me in everything Նա ամեն ինչում ինձ հակառակվում է. *կենս.* խաչասեր/վ/ել ~ dogs շներ խաչասերել:

**cross-bow** [ˈkrɒsbəʊ] n խաչաղեղ:  
**cross-bred** [ˈkrɒsbred] a խաչասերված, հիբրիդային:  
**cross-breed** [ˈkrɒsbri:d] n խառնածին, հիբրիդ:  
**cross country** [ˌkrɒsˈkʌntri] a կտրտված տեղանք. a ~ race/walk կտրտված տեղանքով մրցավազք:  
**cross-cut** [ˈkrɒskʌt] n լայնակի կտրվածք. ամենակարճ ճանապարհը:  
**crossing** [ˈkrɒsɪŋ] n հատում, տրամախաչում. ճանապարհների խաչմերուկ. level ~ երկթ. զծանց, շլազբաում. pedestrian/zebra ~ անցում (փողոցում). rough ~ ուժեղ ծովաճոճում:  
**cross-patch** [ˈkrɒspætʃ] n կռվարար մարդ:  
**cross-roads** [ˈkrɒsrəʊds] n խաչմերուկ. at the ~ *փխք*. երկընտրանքի մեջ:  
**cross-section** [ˈkrɒs,sekʃn] n լայնակի հատված/կտրվածք. a լայնակի. ~ of the students ուսանող երիտասարդության տիպական ներկայացուցիչ:  
**cross-stitch** [ˈkrɒsstɪtʃ] n խաչկար, (ասեղնագործ) խաչակար:  
**crosswise** [ˈkrɒswaɪz] adv, a խաչածն:  
**cross-word** [ˈkrɒswɔ:d] n խաչբառ:  
**crotchet** [ˈkrɒtʃɪt] n քմայք, քմահաճույք. *երժշ.* քառորդակ, ծայրամիջի քառորդ մասը.  
**crotchety** [ˈkrɒtʃəti] a քմահաճ, ինքնահաճ:  
**crouch** [ˈkraʊtʃ] v կռանալ, պազել, նստել. խոնարհվել, կռանալ. The tiger ~ed ready to spring վազրը կռացավ հարձակման պատրաստ:  
**croup** [kru:p], **croupe** [kru:p] n գավակ (ծիու):  
**crow** [krəʊ] n ագռավ. as the ~ flies ուղիղ գծով:  
**crow** [krəʊ] n աքլորականջ. v կանչել, ծուրուղու անել. It's nothing to ~ about Առանձնապես ուրախանալու բան չկա:  
**crow-bar** [ˈkrəʊbɑ:] n միզ, լինգ:  
**crowd** [kraʊd] n ամբոխ. *խսկց.* խումբ, բազմություն. the ~ ցածր խավերը. in ~s խմբերով. get lost in the ~ ամբոխի մեջ կորչել. The ~ began to break up Ամբոխը սկսեց ցրվել. push through the ~ ամբոխի միջով հրելով անցնել. I don't care for their ~ Ինձ չի հետաքրքրում/դուր չի գալիս նրանց ընկերությունը. ~ scene *թատր.* մասսայական տե-

սարան:

**crowd** [kraʊd] v լեփ լեցուն լցվել. The street was ~ed Փողոցը լիքն էր մարդկանցով. The bus was ~ed Ավտոբուսը լեփ լեցուն էր. be ~ed in the flat բնակարանը նեղվածք լինել. (խցկել) We ~ed everything into the cupboard Սենք ամեն ինչ խցկեցինք պահարանի մեջ. a week ~ed with events իրադարձություններով հարուստ շաբաթ. (խոնավել, խմբվել) ~ round smb մեկի շուրջը խմբվել. We all ~ed into his study Սենք բոլորս լցվեցինք նրա առանձնասենյակը. Memories ~ed in upon me Ինձ համակեցին հիշողությունները:  
**crowded** [ˈkraʊdɪd] a լի, լեփ-լեցուն:  
**crowd** [kraʊd] n թագ, պսակ, գահ. ~ of head կատար. ~ of tooth ատամնապսակ. ~ of hat գլխարկի գագաթ:  
**crowd** [kraʊd] v թագադրել. պսակել. հատուցել, վարձատրել. ~ a tooth ատամին պսակ դնել. ~ with success հաջողությամբ պսակել. ~ it all որպես ավարտ:  
**crowned** [kraʊnd] a թագադրված, պսակադրված. բարձր գագաթ ունեցող:  
**crow's-foot** [ˈkrəʊzʃʊt] n կնճիռներ աչքերի շուրջը:  
**crow's-nest** [ˈkrəʊznɛst] n պահպանական դիտանոց:  
**crucial** [ˈkru:ʃiəl] a վճռական, կրիտիկական, վտանգավոր. the ~ moment/question վճռական պահ. գլխավոր հարց. be of ~ importance շատ կարևոր լինել:  
**crucifix** [ˈkru:səfɪks] n խաչելություն:  
**crucifixion** [ˌkru:səˈfɪkʃn] n խաչում, խաչելություն. չարչարանք, տառապանք. the C~ Քրիստոսի խաչելությունը:  
**crucify** [ˈkru:sɪfaɪ] v խաչել, խաչ բարձրացնել:  
**crude** [krʌd] a հուճ, անմշակ, կոպիտ. չմշակված, չզտված. ~ oil անմշակ նավթ. ~ spirit չզտված սպիրտ. ~ manners/expressions կոպիտ շարժում/ արտահայտություններ. a ~ drawing պրիմիտիվ/պարզունակ նկար:  
**cruel** [kru:əl] a դաժան, անգութ, ծանր. a ~ woman/fate/disease դաժան կին, անգութ ճակատագիր, ծանր հիվանդություն. ~ to animals կենդանիների հանդեպ դաժան:  
**cruelly** [ˈkru:əli] adv դաժանորեն, անգութ կերպով:

**cruelty** ['kru:əlti] n դաժանություն, անգթություն. ~ to children դաժան վերաբերմունք երեխաների նկատմամբ:

**cruise** [kru:z] n նավարկում, նավարկություն. գրոսաշրջիկություն. a Mediterranean ~ նավարկություն/գրոսանք Միջերկրական ծովով.

**cruise** [kru:z] v նավարկել, երթևեկել, հածանավել. ~ in the Pacific/round the Greek islands ճամփորդել խաղաղ օվկիանոսում/Հունական արխիպելագի շուրջը. The car ~s easily at 100 mph Մեքենան հեշտությամբ անում է ժամում 100 մղոն:

**cruiser** ['kru:zə] n հածանավ. armoured ~ զրահանավ:

**crumb** [krʌm] n փշուր, փշրանք. հացի միջուկ. մասնիկ. sweep up the ~s փշուրները հավաքել/մաքել. Crust or ~ for you Ի՞նչ ես ուզում հացի կեղևը՞ թե՞ միջուկը. a few ~s of informaton տեղեկատվության մի քանի փշրանք. a ~ of comfort թեթև/ինչ-որ մխիթարանք:

**crumb** [krʌm] v փշրել, մանրել. փշուրները հավաքել/թափել:

**crumble** ['krʌmbəl] v փշր(վ)ել, մանրել. ~ one's bread հացը փշրել/մանրել. քանդվել, թափվել, փուլ գալ. The plaster has ~ed away Ծեփը թափվել է:

**crumbly** ['krʌmbli] a փխրուն, դյուրաթեկ. ~ biscuits փխրուն թխվածք:

**crummy** ['krʌmi] a *խսկց.* գեր, մարմնեղ. ունևոր, ապահովված:

**crump** [krʌmp] n ուժեղ հարված. *ռզմ.* ֆուգասային ռումբ:

**crumple** ['krʌmpl] v ճխլտել, ճմռել, ճմլել. I've ~d my dress Շորս ճմռվել է. ~ up the paper թուղթը ճմռթել:

**crumpled** ['krʌmpld] a ճմռված, ճխլված, ճմլված:

**crunch** [krʌntʃ] n ճռճոց. ~ an apple խնձոր կրծել. The snow ~ed under our feet Ձյունը ճռճում էր մեր ոտքերի տակ. when it comes to the ~ *փխբ., խսկց.* կրիտիկական թուփել:

**crunchy** [krʌntʃi] a ճռճոց:

**crusade** I [kru:'seid] n, v արշավ, կամպանիա. արշավել. ~ for women's rights պայքարել կանանց իրավունքների համար:

**crusade** II [kru:'seid] n *պտմ.* Խաչակրաց արշավանք:

**crusader** [kru:'seidə] n խաչակիր:

**crush** [krʌʃ] n հրմշտոց, հրիրոց. *խսկց.* աղմկալի խառնածողով. ~ at the cloakroom հրմշտոց հանդերձասրահում. ուժեղ սիրահարվածություն. have a ~ on smb մեկին շատ սիրահարված լինել. (ջախջախիչ հարված) give a ~ ջախջախիչ հարված հասցնել:

**crush** [krʌʃ] v ճզմել. ~ grapes/orange խաղող/նարինջ ճզմել. ~ oil ձեթ հանել. ~ an insect միջատ տրորել. ~ sugar շաքար փշրել/մանրացնել. (ճմլել, ճմռթել) Nylon doesn't ~ Նայլոնը չի ճմռթվում. be ~ed with grief խոր կսկիծ/մեծ վիշտ ապրել:

**crushing** ['krʌʃiŋ] a ջախջախիչ. ծանր. a ~ defeat/blow ջախջախիչ պարտություն/հարված. a ~ reply ոչնչացնող պատասխան:

**crust** [krʌst] n կեղև. *փխբ.* դիմակ ~ of ice/loaf սառույցի կեղև, հացի չորակ. ~ of a pie թխվածքի չորակը. the Earth's ~ երկրի կեղևը. earn one's ~ մի կտոր հաց աշխատել:

**crustacean** [krʌ'steiʃn] n *կենդ.* խեցգետնատեսակներ:

**crusted** ['krʌstid] a կեղևով ծածկված/պատած. ~ customs քարացած սովորույթներ:

**crusty** ['krʌsti] a կեղևապատ. կովարար:

**crutch** [krʌtʃ] n հենակ. *փխբ.* հենարան, նեցուկ, օգնություն a pair of ~es հենակներ. walk on ~es հենակներով քայլել:

**crux** [krʌks] n դժվար կացություն/հարց. the ~ of the matter գործի էությունը. the C ~ *աստղ.* (Հարավային) Խաչի համաստեղություն:

**cry** [krai] n ճիչ. loud/angry ~ բարձր/զայրացած ճիչ. give a ~ ճիչ արձակել. give a ~ of pain ցավից բղավել. a far ~ մեծ տարբերություն. (լաց) have a good ~ մի լավ/կուշտ լաց լինել. battle ~ մարտական կանչ. ~ for ընդհանուր հավանություն. ~ against ընդհանուր բողոք/դժգոհություն:

**cry** [krai] v ճչալ, գոռալ, լաց լինել. ~ oneself to sleep լացելով քնել. ~ one's eyes out երկար լաց լինել, լալով աչքերը փչացնել. ~ for help օգնություն կանչել. ~ at the top of one's voice ամբողջ ձայնով բղավել. ~ for the moon անհնարին բանի ձգտել. ~ for mercy գթություն խնդրել/հայցել. ~ off հրաժարվել. ~ off at the last moment վերջին թուփել հրաժարվել. ~ bitterly դառնորեն լալ. No use ~ing over spilt milk Կորած բանի ետևից չեն

ընկնի:  
**cry-baby** [ˈkrai,beibi] n լացկան, լալկան:  
**crying** [kraiɪŋ] a լացող, աղաղակող. *փխբ.*  
 աղաղակող, անհանդուրժելի. a ~ shame ա-  
 ղաղակող անամոթություն. ~ needs առօրյա/  
 կենսական պահանջներ.  
**crypt** [kript] n գետնադամբարան, դամբար-  
 ան:  
**cryptic** [ˈkriptik] a գաղտնի, թաքուն.  
 խորհրդավոր:  
**crystal** [ˈkristl] 1. n բյուրեղ. բյուրեղապակի.  
 snow/ice ~s ձյան/սառցի բյուրեղներ. 2. a  
 բյուրեղապակյա, բյուրեղյա. թափանցիկ,  
 հստակ, վճիտ:  
**crystal-clear** [ˌkristlˈkliə] a թափանցիկ,  
 բյուրեղի նման մաքուր:  
**crystallization** [ˌkristlaiˈzeɪʃn] n բյուրեղա-  
 ցում:  
**crystallize** [ˈkristəlaɪz] v բյուրեղացնել,  
 բյուրեղանալ. շաքարակալել. The jam has  
 ~d մուրաբան շաքարակալել է. ~d fruits  
 շաքարապատած միրգ. The plans gradually  
 ~d Ծրագրերն աստիճանաբար որոշակի  
 էին դառնում:  
**crystallography** [ˌkristəˈlɒgrəfi] n բյուրե-  
 ղագիտություն:  
**cub** [kʌb] n ծագ/գիշատիչ կենդանու/. *փխբ.*  
 պատանի. *արհմ.* լակոտ.  
**cubbing** [ˈkʌbiŋ] n ծագերի որս:  
**cubbish** [ˈkʌbiʃ] a անկիրթ, անտաշ.  
**cube** [kju:b] n մաթ. խորանարդիկ. ~ sugar  
 շաքար ռաֆինադ. cut the potatoes into ~s  
 կարտոֆիլը խորանարդիկաձև կտրտել:  
**cubic** [ˈkju:bɪk] a խորանարդային, խորա-  
 նարդի:  
**cubicle** [ˈkju:bɪkl] n քնելու համար առանձ-  
 նացրած տեղ. ննջախուց. խցիկ. shower ~  
 ցնցուղի խուց:  
**cubist** [ˈkju:bɪst] n կուբիզմի ներկայացու-  
 ցիչ, կուբիստ:  
**cuckold** [ˈkʌkəʊld] 1. n կնոջից խաբված  
 ամուսին, եղջրավոր. 2. v ամուսնուն դավա-  
 ճանել:  
**cuckoo** [ˈkuku:] 1. n կկու. *խսկց.* բացբերան.  
 2. int կու-կու:  
**cucumber** [ˈkju:kʌmbə] n վարունգ:  
**cue** [kju:] n որոճ. chew the ~ որոճալ. *փխբ.*  
 անընդհատ նույն բանը ծամծամել:  
**cudbear** [ˈkʌdbeə] n լակմուս:

**cuddle** [ˈkʌdl] n գիրկ. v կրծքին սեղմել ~ a  
 child երեխային կրծքին սեղմել. ~ up to smb  
 սեղմվել մեկին:  
**cudgel** [ˈkʌdʒəl] 1. n մահակ. take up the ~s  
 պաշտպան կանգնել, պաշտպանել. 2. v  
 մահակով հարվածել. ~ one's brains գլուխ  
 կոտրել/տրաքացնել:  
**cue** I [kju:] n բիլիարդի խաղաձող, կի:  
**cue** II [kju:] n *թատր.* դերասանի վերջ-  
 մաբառ. ռեպլիկ give smb his ~ ռեպլիկ  
 տալ/անել, հուշել. miss one's ~ ռեպլիկը բաց  
 թողնել. That gave me my ~ Դա ինձ համար  
 ակնարկ էր:  
**cuff** I [kʌf] n բազկապատ, մանժետ:  
**cuff** II [kʌf] n բռունցքի հարված. ~s and  
 kicks ձեռքի և ոտքի հարվածներ. ~ on the ear  
 դեմքին/ականջին հարվածել:  
**cuisine** [kwiˈzi:n] n կերակուրներ, խոհանոց.  
 The ~ in that hotel is excellent Այս հյուրանոցի  
 խոհանոցը հոյակապ է:  
**cul-de-sac** [ˈkʌldəsæk] n փակուղի. *փխբ.*  
 անելանելի կացություն:  
**culinary** [ˈkʌlinəri] a խոհարարական,  
 խոհարարային:  
**cull** [kʌl] v հավաքել, ընտրել, ջոկել:  
**culminate** [ˈkʌlmɪneɪt] v գագաթնակետին  
 հասնել. ~ in ավարտվել. The quarrels ~d in  
 divorce Նրանց վեճերն ավարտվեցին բա-  
 ժանությամբ:  
**culmination** [ˌkʌlmiˈneɪʃn] n գագաթնա-  
 կետ, բարձրակետ:  
**culpability** [ˌkʌlpəˈbɪləti] n մեղավորու-  
 թյուն, հանցավորություն:  
**culpable** [ˈkʌlpəbl] a մեղավոր, հանցավոր.  
 ~ negligence *իրավ.* հանցավոր անփութու-  
 թյուն:  
**culprit** [ˈkʌlprɪt] n հանցագործ, մեղա-  
 դրյալ:  
**cult** [kʌlt] n պաշտամունք. the ~ of personal-  
 ity անձի պաշտամունք:  
**cultivate** [ˈkʌltɪveɪt] v մշակել, աճեցնել.  
 տեսակը լավացնել:  
**cultivation** [ˌkʌltɪˈveɪʃn] n մշակում (հողի).  
 աճեցում. զարգացում (ուսակությունների և  
 այլն). fields under ~ մշակվող դաշտեր:  
**cultural** [ˈkʌltʃrəl] a մշակութային. ~ anthro-  
 pologist ազգագրագետ. ~ attache մշակու-  
 թային կցորդ. ~ heritage մշակութային ար-  
 ժեքներ:

**culture** [ˈkʌltʃə] n մշակույթ. գյուղատնտեսական կուլտուրա. the ~ of the Romans հին հռոմեացիների մշակույթը. մանրէների/բակտերիաների աճեցում. a ~ of streptococci ստրեպտոկոկների կուլտուրա:

**cultured** [ˈkʌltʃəd] a (մարդ) բարեկիրք, կրթված. (մարդ, տունկ) մշակված:

**cumber** [ˈkʌmbə] n դժվար կացություն, դժվարություն v խանգարել, արգելել, խոչընդոտ համդիսանալ:

**cumbersome** [ˈkʌmbəsəm] a դժվարաշարժ, ծանրաշարժ. դժվար, ծանր ճնշող:

**cum(m)in** [ˈkʌmɪn] n բար. քեմոն. չաման:

**cumulative** [ˈkju:mjʊlətɪv] a ընդհանուր, միասնական. ամփոփված. the ~ evidence հանցանշանների ամբողջականությունը:

**cumulus** [ˈkju:mjʊləs] n կուտակված ամպեր:

**cuneiform** [ˈkju:nɪfɔ:m] n, a սեպագիր. սեպագիր, սեպածև:

**cunning** [ˈkʌnɪŋ] n, a ճարպկություն, խորամանկություն, նենգություն. ճարպիկ, խորամանկ, նենգ:

**cup** [kʌp] n գավաթ, թաս. grace ~ բարեմաղթության գավաթ. be in one's ~s մի քիչ խմած լինել. the ~ of life կյանքի բաժակը. be a ~ too low ընկճված լինել. մրդ. գավաթ. Davis ~ մրդ. (թենիս) Ղևիսի գավաթ. ~ final գավաթի ֆինալը. He is not my ~ of tea /սուկց. Նա իմ ճաշակով չէ. fill up the ~ համբերության բաժակը լցվել. The ~ is full Բաժակը լցվել է:

**cupboard** [ˈkʌbəd] n բուֆետ:

**cupful** [ˈkʌpful] n մի լիքը բաժակ:

**cupidity** [kjuˈpɪdətɪ] n ազահուություն:

**cupola** [ˈkju:pələ] n գմբեթ:

**cupping-glass** [ˈkʌpɪŋɡlɑ:s] n բժշկ. արյունաքաշ բանկա:

**cur** [kə:] n արհմ. անպիտան շուն:

**curable** [ˈkjuərəbəl] a բուժելի:

**curacy** [ˈkjuərəsɪ] n հոգևորականի աստիճան. ծուխ (եկեղեցական):

**curate** [ˈkjuərət] n ժխատեր քահանայի օգական:

**curative** [ˈkjuərətɪv] n, a բուժիչ միջոց. բուժիչ:

**curator** [kjuˈreɪtə] n խնամակալ, հոգաբարձու:

**curb** [kə:b] n սանձ, սանձահարում:

**curb** [kə:b] v սանձել, սանձել, սանձահարել.

~ one's passions/tongue *փխբ.* սանձել կրքերը/լեզուն:

**curbstone** [ˈkə:bstəʊn] n սալահատակի եզրաքար:

**curd** [kə:d] n pl կտրված կաթ. կաթնաշոռ:

**curdle** [ˈkə:dl] v մակարդվել. *փխբ.* (վախից) քարանալ. (ցրտից) փայտանալ:

**cure** [kjʊə] n դեղ, դեղամիջոց. բուժում. a rest ~ բուժում հանգստությամբ. a cough ~ դեղամիջոց հազի դեմ. undergo a ~ բուժման կուրս անցնել. There is no ~ for this disease Այս հիվանդության դեմ դեղ չկա:

**cure** [kjʊə] v բուժել, բժշկել, առողջացնել. ~ a patient/a disease հիվանդին/հիվանդությունը բուժել. be ~d of smoking ծխելուց հետ սովորեցնել. պահածոյել (աղի և ապրիտման միջոցով). ~d meat ապիտած/ աղը դրած միս. ~ skins կաշին խաղախել/դաբաղել. ~d skin աղաղած կաշի:

**cure-all** [ˈkjʊə:ɔ:l] n համադարման, ամենաբույժ միջոց:

**cureless** [ˈkjʊələs] a անբուժելի:

**curfew** [ˈkə:fju:] n պարետային ժամ:

**curio** [ˈkjʊəriəʊ] n հազվագյուտ, անտիկվարային:

**curiosity** [ˌkjʊəriˈɒsətɪ] n հետաքրքրասիրություն. հարցասիրություն. dying of /burning with ~ հետաքրքրությունից մեռնել/այրվել. be filled with ~ մի բանով շատ հետաքրքրվել. անտիկվարային/հազվագյուտ բան. This vase is a ~ Այս սկահակը հազվագյուտ իր է:

**curious** [ˈkjʊəriəs] a հետաքրքրասեր, հարցասեր. հետաքրքիր, տարօրինակ, զարմանալի. by a ~ coincidence հանգամանքների զարմանալի համընկնումով. What a ~ noise! Ի՜նչ տարօրինակ աղմուկ է. Don't be so ~! Այդքան հետաքրքրասեր մի՛ լինի:

**curiously** [ˈkjʊəriəsli] adv զարմանալիորեն. ~ enough բավական տարօրինակ:

**curl** [kə:l] n խոպոպ, խոպոպիկ. ~s գանգուրներ. ծխի քուլաներ/օղակներ:

**curl** [kə:l] v գանգրացնել. have one's hair ~ed մազերը գանգրացնել(տալ). (ծռել) ~ one's lip բերանը ծռռռել. (բարձրանալ) the smoke ~ed upwards ծուխը օղակներով վերև բարձրացավ. (գանգուր լինել) Her hair ~s naturally Նրա մազերը բնականից գանգուր են. ~ up in the chair աթոռի մեջ կծկվել:

**curler** [ˈkɜːlə] n բիզուրդի:

**curling** [ˈkɜːliŋ] a ոլորվող, գանգուր:

**curling-irons** [ˈkɜːliŋ,aɪənz], **curling-tongs** [ˈkɜːliŋtɔŋz] n pl գանգուրներ սարքելու ունեւի:

**curl-paper** [ˈkɜːl,pɛɪpə] n գանգրացնող քուրթ:

**curly** [ˈkɜːli] a գանգուր, ալեծև:

**currant** [ˈkʌrənt] n *բւք*. հաղարջ. չամիչ black/red ~ սև/կարմիր հաղարջ:

**currency** [ˈkʌrənsi] n դրամական համակարգ. դրամաշրջանառություն. hard ~ դյուրափոխարկելի արժույթ. ~ exchange office արժույթի փոխանակման կետ/օֆիս. give a ~ to շրջանառության մեջ դնել. ~ offence արժույթային հանցագործություն. national ~ ազգային արժույթ. foreign ~ արտարժույթ, տարադրամ. exchange ~ փոխանակելի արժույթ. paper ~ թղթադրամ. pay in ~ վճարել արժույթով. expressions in common ~ համընդհանուր օգտագործման արտահայտություններ:

**current** [ˈkʌrənt] n հոսանք (*մաս՝ էլ.*) against/with the ~ հոսանքին հակառակ/ուղղությամբ. direct/alternating ~ փոփոխական/հաստատուն հոսանք. ~ of thought /events *փիսք*. մտքի/իրադարձությունների ընթացքը:

**current** [ˈkʌrənt] a հոսող, ընթացող. ընթացիկ. [այն տարածում ունեցող. ժամանակակից. ~ month/year/expenses ընթացիկ ամիս/տարի/ծախսեր. ~ account ընթացիկ հաշիվ. pass/go/run ~ ամենուրեք ընդունված լինել. ~ opinion ընդունված/համընդհանուր կարծիք. ~ events նորություններ, լուրեր. ~ affairs ընթացիկ գործեր. This word is in ~ use Սա շատ գործածական բառ է. the ~ boyfriend հերթական ընկերը. the ~ price ներկայիս գինը. *հմկրգ*. ~ data ընթացիկ տվյալներ. ~ directory ընթացիկ կատալոգ. ~ value ընթացիկ արժեք:

**currently** [ˈkʌrəntli] adv it is ~ reported համաձայն վերջին հաղորդումներին:

**curriculum** [kəˈrɪkjʊləm] n ուսումնական ծրագիր. ~ vitae կենսագրական տվյալներ:

**curry** [ˈkʌri] n կարի ( համեմունք):

**curry** [ˈkʌri] v քերոցով մաքրել (ծիուն). կաշին մշակել. *փիսք*. քծնել:

**curry-comb** [ˈkʌrikəʊm] n քերոց:

**curse** [kɜːs] n անեծք, մզովք. հայիոյանք, վիրավորանք. ~s come home to roost ինչ որ ցա-

նես՝ այն կհնծես. pronounce a ~ upon մեկին անհիծել. call down ~s on smb մեկին անեծք անել ~ words հայիոյանք. not to care a ~ միևնույն լինել, թքած ունենալ. not worth a ~ մի քոռ կոպեկ չարժի. (պատուհաս, աղետ) She is a ~ to me Նա ինձ համար մի պատուհաս է. What a ~! Սա ինչ պատուհաս է/անեծք է:

**curse** [kɜːs] v անհիծել, հայիոյել. I ~d my stupidity ես ինձ անհիծում էի իմ հիմարության համար. She's ~d with a violent temper Նրա վայրենի բնավորությունը նրա անեծքն է:

**cursed** [kɜːst] a անհիծյալ, անհիծված. զզվելի, նողկալի:

**cursive** [ˈkɜːsɪv] n ձեռագիր. ~ script արագագրություն:

**cursor** [ˈkɜːsə] n *հմկրգ*. տեղացույց:

**cursorly** [ˈkɜːsri] a թռուցիկ, մակերեսային. give the letter a ~ glance մամակը արագ աչքի անցկացնել. a ~ inspection թռուցիկ/մակերեսային ստուգում. a ~ examination արագ զննում. ~ reading սահուն/վարժ ընթացանություն:

**curt** [kɜːt] a հակիրճ, սեղմ. a ~ answer կոպիտ պատասխան:

**curtail** [kɜːˈteɪl] v կրճատել, սահմանափակել, կարճացնել. ~ the visit/expenditure կրճատել այցելությունը/ծախսերը:

**curtailment** [kɜːˈteɪlmənt] n կրճատում, պակասեցում. համառոտում:

**curtain** [ˈkɜːtɪn] n վարագույր. draw the ~ վարագույրը քաշել. iron ~ երկաթե վարագույր. The ~ rose/fell *թատր*. Վարագույրը բարձրացավ/իջավ:

**curtain** [ˈkɜːtɪn] v վարագույր քաշել, վարագույրով ծածկել. ~ a window պատուհանին վարագույր քաշել. ~ off վարագույրներով միջնորմել. ~ call *թատր*. կանչ. He got three ~s Նրան 3 անգամ բեմ հրավիրեցին ծափահարություններով. ~ hook վարագույր կախելու կեռիկ. ~ rail/rod վարագույրի քիվ:

**curtain-fire** [ˈkɜːtɪn,faɪə] n *նզմ*. հրածածկույթ, հրաքող:

**curtain-raiser** [ˈkɜːtɪn,reɪzə] n մի գործողությանը պիես (բուն ներկայացումից առաջ):

**curtsey, curtsy** [ˈkɜːtsi] n ռևերանս. drop a ~ ռևերանս անել:

**curvature** [ˈkɜːvətʃə] n կորություն, թեքություն, ոլորապտույտ. ~ of the spine ողնա-

շարի ծռում:  
**curve** [kə:v] **n** կոր գիծ, կորություն. դիագրամ, գծագիր. *մաթ.* կորագիծ:  
**curve** [kə:v] **v** ծռվել, կորանալ The road ~d sharply ճանապարհը կտրուկ թեքվեց:  
**curved** [ˈkʌ:vɪd] **a** թեք, կորացած. **a** ~ surface թեք/կոր մակերես. **a** ~ line թեքագիծ, կորագիծ:  
**cushion** [ˈkʌʃn] **n** (բազմոցի) բարձ. *տեխ.* միջադիր բարձ. բիլիարդի սեղանի եզր:  
**cushion** [ˈkʌʃn] **v** բարձ դնել, հանգստացնել, մեղմացնել. ~ a blow/a fall մեղմացնել հարվածը/բախումը. **be** ~ed against smth պատահականությունից ապահովվել:  
**cushy** [ˈkʌʃi] **a** *խսկց.* հեշտ, շահավետ. **a** ~ job տաքուկ տեղ:  
**cuspid** [kʌsp] **n** լուսնի եղջյուր:  
**cusped** [ˈkʌsɪd] **a** համառ:  
**cuspidor** [ˈkʌspɪdɔ:] **n** *ամ.* թքաման:  
**custard** [ˈkʌstəd] **n** կրեմի տեսակ:  
**custodian** [kʌˈstəʊdiən] **n** պահապան (*հսկպ.*՝ բանգարանների, գրադարանների). խնամակալ. պահակ. հանրային շենքերի պահապան:  
**custody** [ˈkʌstədi] **n** խնամակալություն, պահպանում. ~ of children երեխաների խնամակալություն. **be** in the ~ of խնամակալության տակ լինել. place in safe ~ (անվտանգ) պահպանման հանձնել. **have** the ~ պահպանել. ~ of documents փաստաթղթերի պահպանում. *իրավ.* բանտարկություն, ձերբակալում **in** ~ կալանքի տակ. **take** into ~ կալանավորել:  
**custom** [ˈkʌstəm] **n** սովորություն, սովորույթ. native ~ տեղական սովորություններ. forgotten/long established ~ մոռացված/վաղուց հաստատված սովորույթ. break/keep up, maintain a ~ խախտել/պահպանել սովորույթը. **It** s a ~ with us Մեզ մոտ ընդունված է/սովորություն կա. (հաճախորդներ, կլիենտուրա) withdraw one's ~ from այլևս առևտուր չանել:  
**customary** [ˈkʌstəməri] **a** սովորական. **as** is ~ ինչպես ընդունված է, սովորականի պես:  
**customer** [ˈkʌstəmə] **n** գնորդ, հաճախորդ, պատվիրատու. ~ services հաճախորդների սպասարկում. awkward ~ անշնորհք մարդ. ugly ~ ծանր մարդ. queer/rum ~ տարօրինակ մարդ.

**custom-house** [ˈkʌstəmhaʊs] **n** մաքսատուն:  
**customs** [ˈkʌstəmz] **n** մաքսատուն, մաքս. (*մակ* ~ house). the ~s մաքսատուն, մաքսատուրք. ~ declaration մաքսատան հայտարարագիր. ~ regulations մաքսային կանոններ. ~ restrictions մաքսային սահմանափակումներ. ~ tariffs սակացուցակ/տարիֆ. pass through the ~ մաքսատնով անցնել. ~ clearance/clearing մաքսազերծում. ~ duty/tax մաքսատուրք, մաքսային հարկ. ~ official մաքսատան ծառայող, մաքսավոր. ~ duty free անմաքս. "C~s inspected" stamp կնիք "Մաքսատան ստուգումը/գնումը անցած":  
**cut** [kʌt] **n** կտրվածք, կտրված տեղ. վերք. **a** deep ~ խոր կտրվածք. **a** ~ after shaving վերք սափրվելուց հետո. the surgeon made a ~ վիրաբույժը կտրվածք արեց. (հարված) **a** ~ with a sword դաշույնի հարված. Whose ~ is it? *թղթ/ս.* Ո՞վ է թուղթը կտրում. **a** ~ and thrust աշխույժ վեճ. (մի կտոր) **a** ~ of cloth/meat գործվածքի/մսի մի կտոր. (ոճ, ձև) the ~ of hair/coat մազերի կտրվածքը/ոճը. վերարկուի ձևը. (իջեցում, կրճատում, նվազեցում). **a** ~ in prices/salary գների/աշխատավարձի իջեցում. **a** power ~ *էլ.* էներգիայի անջատում. **make** ~s in the book/film գրքում/ֆիլմում կրճատումներ կատարել. **a** short ~ *փխբ.* ուղիղ ճանապարհ. **take** a short ~ ուղիղ գնալ. (ծանոթության խզում) **give** one a direct ~ ծանոթությունը խզել:  
**cut** [kʌt] **v** կտրել, կտրտել, հատել. ~ in two/into pieces/in half երկու կտոր անել. կտոր-կտոր անել. կիսել. The baby has ~ a tooth երեխան ատամ է հանել. The strap ~s my shoulder Գոտին ուսս կտրում է. ~ smb's throat մեկի կոկորդը կտրել. ~ (up) the bread/meat հացը/միսը կտրատել. ~ flowers/a spray of lilac ծաղիկ/յասամանի ճյուղ կտրել. ~ a notch/one's name on a tree ծառի վրա փորվածք անել/անունը փորել. (կտրել, խուզել) ~ smb's hair մազերը կտրել. ~ one's beard միրուքը կարճացնել. ~ a lawn մարգագետինը խուզել. ~ hay/grass/corn խտոր/կանաչը հնձել. հացահատիկը հավաքել. ~ a clearing in the forest անտառում բացատ հատել. The coat is well ~ վերարկուն լավ է ձևած. (կրճատել) ~ prices/salary/costs of production գները/աշխատավարձը/արտադրա-

կան ծախսերը կրճատել. (տարբեր) ~ smn dead անտեսել, հաշվի չառնել. ~ smn to the heart/quick խիստ խոցել, վիրավորել. ~ and run արագ հեռանալ. ~ across կտրել անցնել. ~ across a field դաշտը ուղիղ կտրել անցնել. have everything ~ and dried ամեն ինչ կանոնավոր դասավորել/դասակարգել. ~ a long story short կարճ ասած. ~ a lesson դաս բաց թողնել. ~ one's losses հրաժարվել անշահավետ գործից. ~ your coat according to your cloth ոտքերը վերմակի չափով մեկնել. The knife won't ~ Դանակը չի կտրում. Cheese ~s easily Պանիրը հեշտությամբ է կտրվում. The lines ~ Գծերը հատվում են. It ~s both ways Գործը կարող է երկկերպ վերջանալ/Փայտը երկու ծայր ունի/. ~ away կտրել, խուզել. ~ away a branch ճյուղը կտրել. ~ back խուզել. ~ back shrubs թփերը խուզել. ~ back on expenditure/fuel կրճատել ծախսերը/վառելիքի օգտագործումը. ~ down կրճատել, անտառահատել. ~ down on sugar կրճատել շաքարի օգտագործումը. ~ down trees ծառերը հատել. ~ smb down to size մեկին իր տեղը դնել. ~ free from ազատել. ~ in խառնվել, խցկվել. ~ in on/into conversation խոսակցությանը խառնվել. ~ loose կապերը խզել. ~ off կտրել. The town is ~ off by floods Զեղեղի պատճառով քաղաքը կտրված է շրջապատից. ~ of allowance թոշակը/ապրուստը կտրել. ~ off with a shilling ժառանգությունից զրկել. ~ off the gas գազն անջատել. We have been ~ off *հեռ*. Մեզ անջատեցին. ~ short խոսքը կտրել. ~ through միջով անցնել. ~ up կտրտել, կտրատել. ~ up all the meat ամբողջ միսը կտրտել. ~ up rough զայրանալ. ~ out կտրել. հանել. ձևել. խաղից դուրս գալ. be ~ out for the job այդ աշխատանքի համար ստեղծված լինել. cut-and-dried շաբլոնային, կաղապարային. ծեծված. *հմկրգ*. ~ command խմբագրման հրահանգ. ~ form էջ. ~ set հատույթ:

**cute** [kju:t] a խելոք, սրամիտ, խորամանկ. *ամ*. դուրեկան, սիրունատես. She is ~ Նա դուրեկան աղջիկ է. a ~ dress գեղեցիկ շոր:

**cutlery** ['kʌtləri] n դանակ, պատառաքաղ, գդալներ. սեղանի սպասք. ~ drawer դարակ սեղանի սպասքի համար:

**cutlet** ['kʌtlət] n թակածո, կոտլետ:

**cut-out** ['kʌtaʊt] n էլ. ավտոմատ անջատիչ.

ուրվագիծ, եզրագիծ:

**cutprice** [ˌkʌtˈpraɪs] a իջեցված գներով:

**cutpurse** ['kʌtpɜ:s] n գրպանահատ:

**cutter** ['kʌtə] n ձևարար. կատեր (նավ). wire ~s *տեխ*. կծաքցան:

**cut-throat** ['kʌtθrəʊt] n հանդուզն, գլխից ձեռք վերցրած մարդ. մարդասպան:

**cutting** ['kʌtɪŋ] n կտրանք. press ~ թերթի կտրանք.

**cutting** ['kʌtɪŋ] a կտրող, սուր, կծող, խոցող. ~ cold ծակող/թափանցող ցուրտ. ~ wind/remark թափանցող քամի. սուր դիտողություն:

**cutty** ['kʌti] n ծխամորճ:

**cutwater** ['kʌt,wɔ:tə] n *ծով*. ջրահատ:

**cyanic** [saɪˈænik] a կապույտ. ցիանային:

**cyanide** ['saɪənaɪd] *քիմ*. ցիանիդ:

**cyber** ['saɪbə] n կիբեռ.

**cybercrime** ['saɪbə,kraɪm] n կիբեռ հանցագործություն. համակարգչային հանցագործություն:

**cyberspace** ['saɪbə,speɪs] կիբեռ տարածություն:

**cyclamen** ['sɪkləmən] n ալպիական մանուշակ, ցիկլամեն:

**cycle** ['saɪkl] n ցիկլ, շրջան. lunar ~ լուսնի փուլ. song ~ երգերի ցիկլ (հեծանիվ) motor ~ մոտոցիկլետ:

**cyclic** ['saɪklɪk] a պարբերական, ցիկլային:

**cyclist** ['saɪklɪst] n հեծանվորդ:

**cyclone** ['saɪkləʊn] n ցիկլոն:

**cyclopaedia** [ˌsaɪkləʊˈpi:diə] n հանրագիտարան:

**cyclops** ['saɪklɒps] n *դից*. կիկլոպ, ցիկլոպ. միաչքանի մարդ:

**cygnet** ['sɪgnət] n երիտասարդ կարապ:

**cylinder** ['sɪlɪndə] n գլան:

**cylindrical** [səˈlɪndrɪkəl] a գլանաձև, գլանավոր:

**cymbals** ['sɪmblz] n *pl երժշ*. ծնծղա:

**cynic** ['saɪnɪk] n անամոթ, լկտի, ցինիկ. ~ crime լկտի հանցագործություն:

**cynical** ['saɪnɪkəl] a անպատկառ, անամոթ, լկտի:

**cypress** ['saɪprəs] n *բույս*. նոճի, կիպարիս:

**Cyprian** ['sɪpriən] n, a կիպրոսցի. կիպրոսական, կիպրական:

**cyst** [sɪst] n *բժշկ*. կիստա:



## D

**D, d** [di:] անգլերեն այբուբենի չորրորդ տառը. երժշ. "ռե" ծայնանիշը/նոտան:

**dab** I [dæb] **n** թեթև հարված, վրձնի խաղ. **a** ~ of paint ներկի լաքա. **a** ~ of petrol բենզինի բարակ շերտ:

**dab** II [dæb] **n** կենդ. տափակածուկ, կամբալա:

**dab** [dæb] **v** թեթև դիպչել/հարվածել. քսել. թեթև ներկել. ~ some powder on one's face դեմքին մի թեթև դիմափոշի քսել. ~ one's eyes with a handkerchief աչքերը թաշկինակով ծածկել/սրբել. ~ medicine to a cut վերքին դեղ դնել:

**dabble** ['dæbl] **v** թրջել, թացացնել, ցողել. ~ one's hands/feet in water ձեռքերը/ոտքերը ջրի մեջ թրջել. *փխբ.* սիրողական մակարդակով/մակերեսորեն մի բանով զբաղվել. ~ in verse հաճույքի համար բանաստեղծություն գրել. ~ in politics քաղաքականությամբ հետաքրքրվել:

**dabbler** ['dæblə] **n** սիրող, դիլետանտ:

**dabby** ['dæbi] **a** թաց, խոնավ:

**dabster** ['dæbstə] **n** գիտակ, մասնագետ:

**dace** [deis] **n** կենդ. մանրածածան (ծուկ):

**dactylogram** [dæk'tiləgræm] **n** մատների դրոշմ:

**dactylography** [,dækti'lɒgrəfi] **n** մատնադրոշմում:

**dad** [dæd] **n** daddy ['dædi] *խսկց.* հայր, հայրիկ:

**dado** ['deɪdə] **n** ծրտ. պատվանդան, տախտակադրվազ:

**daffodil** ['dæfədɪl] **n** *բսբ.* դեղին նարգիզ (նաև՝ գուլն):

**daft** [da:ft] **a** խելառ, խենթ. թեթևամիտ. **go** ~ խելքը կորցնել. Don't be ~ Չիմարություն մի՛ անի:

**dagger** ['dægə] **1.** **n** դաշույն. **be** at ~s drawn թշնամի լինել մեկի հետ. **look/speak** ~s սպառնալից նայել/խոսել. **2.** **v** դաշույնով խփել, դաշունահարել:

**dahlia** ['deɪliə] **n** *բսբ.* գեորգին, գեորգենի:

**daily** ['deɪli] **a** ամենօրյա, առօրյա, օրական. ~ visits/meetings/needs/incidents/problems ամենօրյա այցելություններ/հանդիպումներ.

առօրյա կարիքներ/հոգսեր/պրոբլեմներ/իրադարձություններ. ~ bread ամենօրյա/հանապազօրյա հաց. ~ round առօրյա պարտականություններ. ~ pay օրավարձ:

**daily** ['deɪli] **adv** ամեն օր:

**daily** ['deɪli] **n** ամենօրյա լրագիր. *խսկց.* երթևեկ սպասուհի. *հմկրգ.* ~ allocation բաշխում ըստ օրերի:

**daintiness** ['deɪntɪnəs] **n** նրբություն, վայելչություն, փափկություն:

**dainty** ['deɪnti] **a** նուրբ, նրբին, նրբակազմ. նրբածաշակ. համեղ:

**dainty** ['deɪnti] **n** համեղ ուտելիքներ. ընտիր բան. **be** ~ over one's food քմածաշակ/նրբաքիմք/նրբածաշակ լինել. համեղ ուտելիք սիրել:

**dairy** ['deəri] **n** կաթնամթերքի խանութ/գործարան. ~ farm/cattle կաթնատնտեսական ֆերմա. կաթնատու անասուն. ~ man/maid կաթնատնտեսական ֆերմայի աշխատող. կթվոր, կթվորուհի:

**dairying** ['deəriɪŋ] **n** կաթնատնտեսություն:

**dais** ['deɪs] **n** ամբիոն, տախտակամած:

**daisy** ['deɪzi] **n** մարգարտածաղիկ:

**dale** [deɪl] **n** հովիտ. **up** hill and down ~ լեռներով և հովիտներով:

**dalesman** ['deɪlzmən] **n** հովտաբնակ մարդ:

**dalliance** ['dæliəns] **n** պարապություն, անբովանդակ զվարճություն:

**dally** ['dæli] **v** դատարկ բաներով զբաղվել. զվարճանալ. սիրակատակել. ~ away ժամանակ կորցնել:

**dam** [dæm] **n** ամբարտակ, պատնեշ, պատվար. **build** a ~ ամբարտակ կառուցել:

**dam** [dæm] **v** պատվարել, ամբարտակել, արգելք հարուցել. ~ (up) a river գետը պատնեշել/ամբարտակել:

**damage** ['dæmɪdʒ] **n** վնաս, վնասվածք (նաև՝ ֆիզիկական). **heavy/slight** ~ ուժեղ/թեթև վնասվածք. **suffer** a ~ վնաս կրել. The storm did much ~ Փոթորիկը շատ վնաս պատճառեց. *իրավ.* actual ~ փաստացի վնաս. consequential ~ անուղղակի վնաս. criminal ~ հանցավնաս. **cause** ~ վնաս հասցնել/պատճառել. *խսկց.* What's the ~? Ի՞նչ էր դրա արժեքը, Որքա՞ն եմ ձեզ

պարտք. ~s pl վնասների փոխհատուցում, վնասահատուցում. recover ~ փոխհատուցում ստանալ. claim ~ փախհատուցում պահանջել. pay/asses ~s վճարել, վնասը փոխհատուցել. վնասի չափը որոշել. nominal ~s վնասահատուցում խորհրդանշական չափով:

**damage** ['dæmɪdʒ] v վնասել, փչացնել, վնաս հասցնել. վարկաբեկել. ~ one's leg ոտը վնասել. ~d property վնասված գույք/ ունեցվածք. The crop was ~d Բերքը վնասվեց. Her eyes were ~d Նրա տեսողությունը վատացել էր. Smoking ~s health Ծխելը վնասում է առողջությանը. The scandal ~d his career/reputation Սկանդալը վարկաբեկեց նրան/փչացրեց նրա կարիերան. The wing was ~d Ավտոմեքենայի անվաճաճկոցը/թևը ծռնվել էր. The foodstuffs were ~d Սննդամթերքը փչացել էր:

**damageable** ['dæmɪdʒəbl] a շուտ փչացող, վնասման ենթակա:

**damaging** ['dæmɪdʒɪŋ] a վնասակար. ~ to interests շահերին վնասող. ~ decision վնասակար/ վնասաբեր որոշում:

**damask** ['dæməsk] n դամասկյան պողպատ. ծաղկավոր գործվածք. ալ կարմիր գույն:

**dame** [deɪm] n տիկին, հասակն առած կին:

**damn** I [dæm] n *խսկց.* չնչին քանակություն. It's not worth a ~ Մի քոռ կոպեկ/կծած կորիզ էլ չարժի. I don't give a ~ Ինձ բոլորովին չի հետաքրքրում:

**damn** II [dæm] n անեծք, նզովք. հայիոյանք:

**damn** [dæm] v անիծել, հայիոյել, դատապարտել. He can't be ~ed Նրան չի կարելի դատապարտել. I'll be ~ed if... Անիծվեմ, եթե... ~ him! սատանան նրա հետ. ~ (it)! սատանան/գրողը տանի. ~ his impudence Ի՞նչ ամբարտավանություն:

**damnable** ['dæmənbəl] a պարսավելի. *խսկց.* անիծյալ, զզվելի. ~ lies գարշելի սուտ. ~ weather զզվելի եղանակ. ~ taxes անիծյալ հարկեր:

**damnation** [dæm'neɪʃn] 1. n դատապարտում. անեծք, նզովք. May ~ take it! Անիծյալ լինի. 2. int գրողը տանի:

**damned** [dæmɪd] a *խսկց.* անիծյալ, սուկալի. *խսկց.* some ~ fool of a driver մի ինչ-որ հիմար/ապուշ վարորդ. It's ~ hot here! Սուկալի/դժոխային շոգ է այստեղ:

**damning** ['dæmɪŋ] a *իրավ.* ~ evidence ծանր/ մերկացուցիչ հանցանշան:

**damp** [dæmp] n խոնավություն, թացություն. *փխբ.* վիատություն, ընկճվածություն

**damp** [dæmp] a խոնավ, թաց. a ~ soil /climat խոնավ հող/կլիմա. ~ clothes խոնավ/թաց շորեր/հագուստ. ~ with dew ցողից խոնավացած, ցողված:

**damp** [dæmp] v (նաև dampen) խոնավացնել, թացացնել. the soil/clothes հողը խոնավացնել (ջրել). շորերը խոնավացնել (թրջել). ~ down a bonfire խարույկը հանգցնել. (փչացնել) Our spirits were ~ed by the rain Անձրևը փչացրեց մեր տրամադրությունը:

**dampener** ['dæmpə] n *տեխ.* խլարար, կափույր. put a ~ on things *խսկց.* ամբողջ հաճույքը փչացնել:

**dampening** ['dæmpɪŋ] n խոնավացում, թացացում. *տեխ.* խլացում, արգելակում:

**dampish** ['dæmpɪʃ] a խոնավ, քիչ խոնավ, թաց:

**damp-proof** ['dæmppru:f] a անխոնավանցիկ, անջրանցիկ:

**dance** [da:ns] 1. n պար, պարահանդես. country ~ ժողովրդական պար. have a ~ with smn մեկի հետ պարել/պարի հրավիրել. *փխբ.* lead smn a ~ քթից բռնած ման ածել. *փխբ.* ~ to one's tune/piping ուրիշի խելքով շարժվել, ուրիշի ծափ տալով պար գալ. ~s are held every Sunday Ամեն կիրակի պարեր են կազմակերպվում: 2. a պարային:

**dance** [da:ns] v պարել, պար գալ. ցատկել, թռչել. ~ a waltz վալս պարել. ask smn to ~ պարի հրավիրել. ~ for joy ուրախությունից պարել. *փխբ.* ~ attendance on smb շողոքորթել, քծնել. (պտտվել) The leaves ~ Տերևները պտտվում են:

**dancer** ['da:nsə] n պարող, պարուհի. a good ~ լավ պարող/պարուհի. *փխբ.* merry ~s հյուսիսափայլ:

**dancing** ['da:nsɪŋ] 1. n պարեր, պարելը, պար գալը. պար. I love ~ Սիրում եմ պարել. 2. a պարային, պարի. ~ party պարահանդես. ~ school/master պարի դպրոց/դասատու. ~ partner պարընկեր:

**dandelion** ['dændilaɪən] n *բսբ.* խատուտիկ:  
**dandle** ['dændl] v օրորել. ~ a child in one's arms/on one's lap երեխային ձեռքերի/ ծնկների վրա օրորել:

**dandruff** [ˈdændrʌf] n թեփ (զլխի, մաշկի):  
**dandy** [ˈdændi] n նրբաճաշակ հագնված մարդ. պճնամոլ:  
**dandyism** [ˈdændiɪz(ə)m] n պճնամոլություն, դենդիիզմ:  
**dane** [deɪn] n դանիական դոգ/զամբոն:  
**danger** [ˈdeɪndʒə] 1. n վտանգ, սպառնալիք. be in/out of ~ վտանգի մեջ լինել. վտանգից դուրս /ապահով լինել. in case of ~ վտանգի դեպքում. face the ~ վտանգին դիմակայել. put smb in ~ մեկին վտանգի ենթարկել. ~ to peace/society/life/health սպառնալիք խաղաղությանը/հասարակությանը/կյանքին/առողջությանը. (ցուցանակ) “Danger!” վտանգավոր է կյանքի համար. 2. a. ~ signal վտանգի ազդանշան. ~ zone վտանգավոր զոնա. ~ money հավելյալ վարձատրություն վտանգի համար:  
**dangerous** [ˈdeɪndʒərəs] a վտանգավոր, սպառնալից. ~ enemy/criminal/step վտանգավոր թշնամի/ոճրագործ/քայլ. Bathing here is ~ Այստեղ վտանգավոր է լողանալ. potentially ~ հնարավոր վտանգ ներկայացնող:  
**dangerously** [ˈdeɪndʒərəsli] adv վտանգավոր ձևով/կերպով. be ~ ill վտանգավոր հիվանդ լինել. live ~ վտանգավոր կյանքով ապրել:  
**dangle** [ˈdæŋɡl] v կախվել, ազատ կախ ընկնել. կախել, կախ տալ. *փխբ.* հրապուրել, գրավել. She ~d the key in front of her brother Նա բանալին թափահարեց իր եղբոր աչքերի առջև:  
**dangler** [ˈdæŋɡlə] n պարապ-սարապ մարդ. կնամոլ:  
**dank** [dæŋk] a խոնավ, թաց, նամ:  
**dapper** [ˈdæpə] a շքեղ հագնված. արագաշարժ, ժիր. He is a ~ little man Նա ահավոր պճնամոլ է.  
**dapple** [ˈdæpl] 1. a խայտաբղետ, խատուտիկ, բծավոր. ~ grey խալավոր, գորշ ծի. 2. v բծերով ծածկվել:  
**dare** [deə] v համարձակվել, հանդգնել. I ~ say Չամարձակվում եմ ասել. How ~ you? Ինչպե՞ս եք համարձակվում. Just you ~ ! Միայն փորձիր:  
**dare-devil** [ˈdeə,devɪl] 1. n կտրիճ, խիզախորդ. 2. a խիզախ, չափազանց հանդուզն. աներկյուղ:  
**daring** [ˈdeəriŋ] a համարձակ, խիզախ. հանդուզն:

**dark** [da:k] n մթություն, խավար. in the ~ մթության մեջ. at ~ մութը վրա հասնելիս. before/after ~ մութն ընկնելուց առաջ/հետո. *փխբ.* keep in the ~ անհայտության/անտեղյակության մեջ պահել. *Նկրչ.* the lights and ~s լույսն ու ստվերը:  
**dark** [da:k] a մութ, խավար. get/grow ~ մթնել. pitch ~ լրիվ խավար. *խսկց.* մատղ աչքը կոխես՝ չի տեսնի. a ~ night մութ գիշեր. a ~ day ամպոտ/թխպոտ օր. a ~ dress մուգ գույնի հագուստ. a ~ complexion թուխ, թխադեմ. (մռայլ) a ~ mood մռայլ տրամադրություն. the ~ side of things իրերի մութ կողմը. ~ days սև/ծանր օրեր. a ~ hint մութ ակնարկ. keep it ~ ոչ մեկին ոչ մի խոսք. keep smth ~ զաղտնի պահել. a ~ horse *փխբ.* մութ/խավար ձի մուգ (զույն) ~ grey/green/brown/blue մուգ. մոխրագույն/կանաչ/շագանակագույն/կապույտ:  
**darken** [ˈda:kən] v մթնեցնել, խավարեցնել. մթնել, խավարել. մռայլվել:  
**darkish** [ˈda:kiʃ] a մուգ, մգավուն, մթոտ:  
**darkly** [ˈda:kli] adv մռայլ, մռայլորեն. *փխբ.* անհասկանալի, առեղծվածային. hint ~ ակնարկել անորոշ /մշուշապատ կերպով:  
**darkness** [ˈda:knes] n մթություն, խավար. *փխբ.* the powers of ~ խավարի ուժերը:  
**darling** [ˈda:liŋ] n սիրելի, ամենասիրելի մարդ. my ~ սիրելիս. the ~ of fortune բախտի սիրելի. the ~ of all hearts բոլորի/համընդհանուր սիրելի. She is a perfect ~ Նա պարզապես սքանչելի է:  
**darn** [da:n] n կարկատան, կարկատած տեղ.  
**darn** [da:n] v կարկատել, ծակերը լցնել:  
**darning** [ˈda:nɪŋ] n կարկատում, կարկատելը. լիցք. ներսակար. a ~ needle կարկատանի ասեղ:  
**dart** [da:t] n նետողական զենք. նիզակ, տեգ, նետ. ~s (խաղ) նետում նիզակի և այլն. make a ~ նետվել:  
**dart** [da:t] v սլանալ. ~ forward առաջ նետվել/սլանալ. ~ down խոյընթաց թռիչք կատարել, դեպի վայր սլանալ. Swallows were ~ing down Ծիծեռնակները ներքև էին սլանում:  
**darting** [ˈda:tiŋ] a սրընթաց, արագընթաց:  
**dash** [dæʃ] n քիչ քանակություն, պտղունց. a ~ of pepper մի պտղունց պղպեղ. (խառնուրդ) juice with a ~ of water հյութ՝ խառնած մի քիչ ջրի հետ. (թափ, ուժգին շարժում) at

one ~ միանգամից. make a ~ թափով/ ուժգին նետվել:

**dash** [dæʃ] v նետել, շարտել. սլանալ, նետվել. ցողել. ~ some water մի քիչ ջուր ցողել. (կոտրվել, փշրվել) The glass ~ed to the ground Բաժակը հատակին ընկավ ու կոտրվեց. ~ against ուժով բախվել. The boat ~ed against the rocks Նավը բախվեց ժայռերին. *խսկց.* ~ off a letter մի երկտող գրել. *փխբ.* Hopes were ~ed Հույսերը կործանվեցին. ~ to the door դեպի դուռ նետվել. ~ past կողքով սլանալ-անցնել. *խսկց.* I'll have to ~ Պետք է վազեմ, շտապում եմ:

**dash-board** ['dæʃbɔ:d] n վահանակ (ավտոյի, ինքնաթիռի):

**dasher** ['dæʃə] n *խսկց.* ցուցամուկ մարդ:

**dashing** ['dæʃɪŋ] a արագընթաց, սրընթաց. կտրիճ, խիզախ:

**dashlight** ['dæʃlaɪt] n (ավտո) վահանակի լամպ/լույս:

**dastard** ['dæstəd] n վախկոտ մարդ:

**data** ['deɪtə] n pl տվյալներ, տեղեկություններ, փաստեր. official/statistic/advanced ~ պաշտոնական/վիճակագրական/նորագույն տվյալներ. collect/obtain ~ տվյալներ հավաքել. ~ processing տվյալների մշակում: *հմկրգ.* ~ base տվյալների բազա. ~ access տվյալների ընտրելը. ~ acquisition տվյալների կուտակումը. ~ addressed memory գույքողական հիշողություն. ~ area տվյալների տիրույթ. ~ bank տվյալների բանկ. ~ channel ինֆորմացիոն ալիք. ~ communication տվյալների փոխանցում. ~ consistency տվյալների անհակասելիություն. ~ domain առարկայական տիրույթ. ~ entry տվյալների մուտքագրում. ~ flow տվյալների հոսք. ~ input տվյալների մուտքագրում. ~ integrity տվյալների ամբողջականություն. ~ network տվյալների փոխանցման ցանց. ~ rate տվյալների հաղորդման արագություն. ~ set տվյալների հավաքածու. ~ validation տվյալների ճշտության ստուգում/հիմնավորում:

**datable** ['deɪtəbl] a թվագրելի:

**date I** [deɪt] n արմավ, խուրմա:

**date II** [deɪt] n օր, տարեթիվ, ամսաթիվ. What's the ~ today? Այսօր ամսի քանի՞սն է. fix the ~ օրը նշանակել. ~ of birth ծննդյան թվականը. (ժամանակ) at that ~ այդ ժամանակ. out of ~ հնացած. up to ~ արդի, ժամա-

նակակից. bring smth up to ~ նորացնել, ժամանակակից դարձնել. (ժամկետ) closing ~ վերջին ժամկետը. due ~ վերջնաժամկետ. ~ of payment վճարման ժամկետը. by specified ~ նշված ժամկետին. (ժամադրություն) a movie ~ կինոյի ժամադրություն. make a ~ ժամադրություն նշանակել. Who is your ~? Ո՞ւմ հետ ես ժամադրվել:

**date** [deɪt] v թվագրել, թվական դնել. սկիզբ առնել. The letter is ~d Նամակը թվագրված է. Don't forget to ~ Հնոռանաս ամսաթիվը գրել. ~ from սկիզբ առնել. This building ~s from the 18th century Այս շինությունը թվագրվում է 18-րդ դարից. ~ back սկիզբ առնել, ծագել. the custom ~s back to the 1st century Սովորույթը սկիզբ է առել առաջին դարում. The textbook is beginning to ~ Դասագիրքը սկսում է հնանալ. *խսկց.* ժամադրվել, հանդիպել. He is ~ing Jane Նա Ջեյնի հետ է հանդիպում:

**dateless** ['deɪtləs] a չթվագրված:

**date line** ['deɪtlaɪn] n *աստղբ.* օրվա սահմանագատման գիծ:

**date-palm** ['deɪtpɑ:m] n արմավենի:

**dativ** ['deɪtɪv] n *քեր.* տրական հոլով:

**datum** ['deɪtəm] n տրված մեծություն:

**daub** [dɔ:b] 1. v քսել, ծեփել, կեղտոտել. ~ed with paint ներկոտված. ~ a paint on the wall ներկը պատին ծեփել. 2. n անշնորհք/վատ նկար:

**dauber** ['dɔ:bə] n վատ/անշնորհք նկարիչ:

**dauby** ['dɔ:bi] a անշնորհք նկարած. մածուցիկ, կպչուն:

**daughter** ['dɔ:tə] n դուստր, աղջիկ. adopted/grown up/ elder/younger ~ որդեգրած/չափահաս/ավագ/կրտսեր դուստր. baby ~ աղջնակ. ~ node *հմկրգ.* դուստր գագաթ:

**daughter-in-law** ['dɔ:təɪnlɔ:] n հարս (տղայի կինը):

**daughterly** ['dɔ:təli] a դստեր, աղջկա:

**daunt** [dɔ:nt] v վախեցնել, ահաբեկել, վհատեցնել. Nothing ~s him Նրան ոչինչ չի վախեցնում:

**daunting** ['dɔ:ntɪŋ] a վախեցնող, ահաբեկիչ. a ~ prospect ահաբեկող հեռանկար:

**dauntless** ['dɔ:ntləs] a աներկյուղ, անվեհեր:

**davenport** ['dævnpɔ:t] n արկղերով զրասեղան. *ամ.* բազմոց:

**daw** [dɔ:] n արջնագռավ, սև ագռավ:

**dawdle** ['dɔ:dɪl] v պարապ-սարապ լինել.

ծգծգել, ժամանակ վատնել. Don't ~ Արագացրու, ժամանակ մի վատնի:

**dawdler** ['dɔ:dlə] n ծուլ/անբան մարդ:

**dawn** [dɔ:n] n լուսաբաց, արշալույս. at ~ արշալույսին. from ~ till dusk արշալույսից մինչև աղջամուղջ. rise with/at crack of the ~ արշալույսին/շուտ վաղ/արթնանալ. *փխբ.* at the ~ of civilization քաղաքակրթության արշալույսին:

**dawn** [dɔ:n] v լուսանալ, լույսը բացվել. It is ~ing լուսանում է. (ծագել, սկիզբ առնել). It had ~ed on me Գլխուն միտք է ծագել. *փխբ.* A new era had ~ed Նոր ժամանակաշրջան է եկել:

**day** [deɪ] n օր, ցերեկ. cold/warm/beautiful/bright/sunny/dull/happy ~ ցուրտ/տաք/ գեղեցիկ/ պայծառ/արևոտ/ձանձրալի/երջանիկ օր. by ~ ցերեկը, ցերեկով. every ~ ամեն օր. all ~ long ամբողջ օրը. by the ~ օրավարձով. every other ~ օրը մեջ. ~ in, ~ out ամեն օր, օրը օրին. ~ by ~ օրեցօր, անդադար ~ after ~ նույնը a few ~s ago /later մի քանի օր առաջ/անց. one of these ~s մոտ օրերս. the ~ before yesterday երեկ չէ առաջին օրը. the ~ after tomorrow վաղը չէ մյուս օրը. at the present ~ այժմ, ներկայումս. this ~ a week այս նույն օրը մեկ շաբաթ հետո. any ~ ցանկացած օր. ~ and night գիշեր-ցերեկ. pay per ~ օրավարձ. in these ~s այս/մեր օրերում. late in the ~ ուշ (երեկոյան). in the ~s of օրերին, ժամանակ, օրոք. in the ~s of Tigran the Great Տիգրան Մեծի օրոք. in one's ~s իր ժամանակին. the other ~ անցյալ օրը, մոտ օրերս. some other ~ մեկ ուրիշ օր. one ~ մի օր/ անգամ. ~ off հանգստյան օր. free/off ~ հանգստյան օր. working ~ աշխատանքային օր. a red letter ~ հիշարժան օր. for a rainy ~ սև օրվա համար. have seen better ~s լավ օրեր տեսած. not to look a ~ older բոլորովին չփոխվել. Let's call it a ~ Այսօրվա համար բավական է. carry/loose the ~ հաղթանակ տանել/պարտվել. save the ~ վիճակը փրկել. ~ /night flight գիշերային/ցերեկային թռիչք. ~ shift ցերեկային հերթափոխ:

**day-break** ['deɪbreɪk] n արշալույս, լուսադեմ. at ~ արշալույսին:

**day-dream** ['deɪdrɛ:m] n, v երագանք, անուրջ, ցնորք. հարթմնի երագել/անրջել:

**day-dreamer** ['deɪdri:mə] n երագող, ցնորամուլ:

**day-labour** ['deɪ,leɪbə] n օրավարձու աշխատանք:

**day-labourer** ['deɪ,leɪbərə] n օրավարձու բանվոր:

**daylight** ['deɪlaɪt] n ցերեկվա լույս, ցերեկ. *փխբ.* հրապարակայնություն. in broad ~ օրը ցերեկով. հրապարակայնորեն. get home in ~ ցերեկով տուն հասնել. *փխբ.* see ~ ելքը տեսնել. հույսի/լույսի նշույլ ունենալ. ~ robbery կողոպուտ օրը ցերեկով:

**daylight-saving** [,deɪlaɪt'seɪvɪŋ] n ամառ ժամանակ սլաքը մի ժամ առաջ գցել:

**day-long** ['deɪlɒŋ] 1. a ամբողջ օրը տևող. 2. adv ամբողջ օրը. օրնիբուն:

**day-nursery** ['deɪ,nɜ:srɪ] n մանկապարտեզ:

**day-school** ['deɪsku:l] n ցերեկային ուսուցմամբ դպրոց:

**day-shift** ['deɪʃɪft] n ցերեկային հերթափոխություն, ցերեկային հերթափոխ:

**day-spring** ['deɪsprɪŋ] n *բնատ.* լուսաբաց, արշալույս. *փխբ.* սկիզբ:

**day-star** ['deɪstɑ:] n լուսաստղ. Լուսաստղ:

**day-time** ['deɪtaɪm] n օր, ցերեկ. in the ~ օրը ցերեկով:

**day-to-day** [,deɪtə'deɪ] a առօրյա. ~ work ամենօրյա աշխատանք:

**daze** [deɪz] 1. n զարմանք, ապշանք. մշուշ. be in a ~ (կարծես) մշուշի մեջ լինել. 2. v զարմացնել, ապշեցնել, շվարեցնել. be ~d by the news /blow ցնցվել լուրից/հարվածից:

**dazed** [deɪzd] a շվարած, ապշած. a ~ look շվարած/ապշած հայացք:

**dazzle** ['dæzl] 1. v շլացնել/ապշեցնել. The lights ~d me Լույսերն ինձ շլացրին. 2. n շլացուցիչ փայլ:

**dazzling** ['dæzliŋ] a շլացուցիչ. The sun is ~ Արևը շլացուցիչ է. a ~ beauty ապշեցուցիչ/շլացուցիչ գեղեցկություն. ~ prospects փայլուն հեռանկարներ:

**deacon** ['di:kən] n սարկավազ:

**deactivate** ['di:aktivetɪ] v *հմկրգ.* սառեցնել, կանգնեցնել:

**dead** [ded] n հանգուցյալ, մեռել. the ~ հանգուցյալները. *փխբ.* in the ~ of night/winter խուլ գիշերին/խոր ծմռանը:

**dead** [ded] a մեռած. սատկած (կենդանի). a ~ body դիակ. ~ flowers/leaves/matter բառա-

մած ծաղիկներ, չոր տերևներ, անկենդան նյութ. half~ կիսամեռ. *փխբ.* more ~ than alive կիսամեռ, կիսակենդանի. ~ as a door nail բացարձակապես անկենդան. a ~ calm/weight քանու կատարյալ բացակայություն. մեռյալ/ անկենդան բեռ ~ wall խուլ պատ. ~ silence/centre/languages մեռյալ, մեռելային լռություն/կետ/մեռած լեզուներ. ~ end փակուղի. ~ end job անհեռանկար աշխատանք. ~ line վերջին ժամկետ. ~ certainty լիակատար համոզվածություն. in ~ earnest լրիվ/միանգամայն լուրջ. a ~ failure լրիվ ծախողում. ~ and gone վաղուց անցած. *խսկց.* ~ above the ears/from the neck up հիմար, բթամիտ. come to a ~ stop կտրուկ կանգնել. be ~ to the world մեռելի պես քնել, լրիվ անջատվել. go ~ թնրել (ծեռքերը, ոտքերը). *հեռ.* The line has gone ~ Հեռախոսն անջատվել է. *մրգ.* a ~ heat միաժամանակյա ֆինիշ. ~ file *հմկրգ.* անհասանելի ֆայլ:

**dead** [ded] adv բուրդովին, լիովին, կատարելապես. ~ broke լրիվ սնանկացած. ~ drunk սաստիկ հարբած. ~ against կատարելապես դեմ. ~ straight բյուրեղի պես ազնիվ, բյուրեղային ազնվություն. ~ easy ահավոր հեշտ. ~ certain լրիվ համոզված. ~ tired սաստիկ հոգնած:

**dead-alive** [,dedə'laiv] a անկենդան. *փխբ.* վիատ, ընկճված:

**dead-beat** [,ded'bi:t] a ջարդված, սաստիկ հոգնած. *տեխ.* ոչ պարբերական:

**deaden** ['dedn] v անզգայացնել, անզգայանալ. խլացնել, թուլացնել, խեղդել. ~ the sound ծայր խլացնել. ~ the blow/pain հարվածը /ցավը թուլացնել:

**deadfall** ['dedfɔ:l] n ծուղակ, թակարդ:

**dead-head** ['dedhed] n անվճար տոմս ունեցող ուղևոր/հանդիսատես:

**dead-house** ['dedhaus] n դիականոց, դիարան:

**dead-letter** [,ded'letə] n հասցեատիրոջը չհանձնված նամակ:

**dead-light** ['dedlait] n խուլ պատուհան:

**dead-lock** ['dedlɒk] n փակուղի, անելանելի կացություն:

**deadly** ['dedli] a մահացու, մահաբեր. անողորմ, անողորմ. *խսկց.* սոսկալի, սարսափելի. ~ pale սարսափելի գունատ. ~ weapon մահաբեր զենք. ~ boring ահավոր ծանծրացուցիչ:

**dead-water** ['ded,wɔ:tə] n կանգնած/չհոսող ջուր:

**dead wind** [,ded'wind] n հակընդդեմ քամի:

**deaf** [def] a խուլ. ~ in one ear մի ականջը խուլ. ~ as a post/stone լրիվ խուլ, խլականջ. ~ aid [ստելու սարք]:

**deaf and dumb** [,defn'dʌm] a խուլ և համր:

**deafen** ['defn] v խլացնել. the noise ~ed him աղմուկը խլացրեց նրան. ~ the sound ծայր խեղդել:

**deafening** ['defniŋ] a խլացնող, խլացուցիչ:

**deaf-mute** [,def'mju:t] n խուլուհամր:

**deafness** ['defnəs] n խլություն:

**deal** I [di:] n քանակ, բաժին, մաս. a great/good ~ of խիստ շատ. a good ~ of time/money ժամանակի/փողի մեծ քանակություն. feel a good ~ better իրեն շատ ավելի լավ զգալ. see a good ~ of each other հաճախ տեսնվել. take a good ~ of trouble շատ մտահոգվել. *թղթխ.* բաժանում, բաժանելը. Whose ~ is it? Ո՞վ է բաժանում:

**deal** II [di:] n գործարք, համաձայնություն. cash ~ կանխիկ գործարք. a fair/square ~ ազնիվ գործարք. do/make a ~ with գործարք կնքել. It's a ~! Համաձայն եմ, եղավ:

**deal** [di:] v առնչվել, գործ ունենալ. առևտրով զբաղվել. գործարք կնքել. ~ a blow հարված հասցնել. ~ out բաժանել. *թղթխ.* խաղաթղթերը բաժանել. ~ out gifts/takings նվերներ/շահույթները բաժանել. (զբաղվել) ~ with a question հարցով զբաղվել, հարց քննարկել. ~ with the matter գործով զբաղվել. I'll ~ with him ես կզբաղվեմ նրանով. good at ~ing with հմուտ ձևով զբաղվել. ~ with leather կաշվի առևտրով զբաղվել. He doesn't ~ with jewels ես ոսկերչությամբ չի զբաղվում:

**dealer** ['di:lə] n առևտրական. ~ in old clothes հնավաճառ. ~ in household goods տնային գործածության իրերի առևտրական. retail/wholesale ~ մանրածախ/մեծածախ առևտրական. ~ in politics քաղաքականությամբ զբաղվող մարդ. a plain ~ անկեղծ/չիտակ մարդ:

**dealing** ['di:liŋ] n վարվելակերպ. honest ~ ազնիվ վարվելակերպ. ~s գործարք, առևտրական գործեր. stock exchange ~s արժեթղթային գործարք:

**dean I** [di:n] n դեկան. *եկեղ.* ավագ քահանա. ~s office դեկանատ:

**dean II** [di:n] n հովիտ, ձորակ:

**deanery** ['di:nəri] n քահանայի տունը. եկեղեցական ծուխ:

**dear** [diə] a սիրելի, թանկագին. hold smb ~ մեկին սիրել. (մամակում) դիմելիս ~ Sir/Madam հարգելի պարոն/տիկին. (թանկ, թանկարժեք) become/get ~ թանկանալ. This shop is very ~ Սա շատ թանկ խանութ է. (հաճելի, սքանչելի) What a little ~ ring Ի՞նչ սքանչելի փոքրիկ մատանի է. Oh ~! ~ me! Աստված իմ:

**dearly** ['diəli] adv քնքշորեն, թանկ. love ~ քնքշորեն սիրել. pay ~ for one's mistake թանկ վճարել սխալի համար. I would ~ like to know Թանկ կվճարեի իմանալու համար:

**dearth** ['dɜ:θ] n պակաս, պակասություն, կարիք. ~ of labour բանվորական ուժի կարիք/պակաս:

**deary** ['diəri] n *խսկ.* սիրելի, թանկագին. անուշիկս:

**death** [deθ] n մահ. *փխբ.* կործանում. վերջ, վախճան. sudden/untimely/violent/instant ~ հանկարծակի/անժամանակ/բռնի/վայրկենական մահ. tortured to ~ տանջամահ արած. (die) a ~ of hero հերոսի մահով (մեռնել). die a natural ~ բնական մահով մեռնել. freeze to ~ սաստիկ սառել. grow to ~ մեռնել. starve to ~ քաղցից մեռնել. be burnt to ~ կենդանի այրվել. tired to ~ սոսկալի հոգնած. put to ~ մահապատժի ենթարկել. *փխբ.* bored to ~ մահու չափ ձանձրացած. ~ certificate մահվան վկայական. *իրավ.* ~ penalty մահապատժ. be the ~ of smb մահվան պատճառ հանդիսանալ. This will be the ~ of me Դա իմ վերջը կբերի, վերջս կտա. ~ trap ծուղակ, որոգայթ. *ռզմ.* ~ roll զոհվածների ցուցակ. ~ warrant մահվան դատավճիռ. at ~'s door մահամերձ. ~ notice մահագո (թերթում). ~ blow մահացու հարված:

**deathbed** ['deθbed] n մահիճ, մահվան անկողին:

**deathbell** ['deθbel] n մահագանգ:

**death-blow** ['deθbləu] n մահացու/ճակատագրական հարված:

**death duties** ['deθ,dju:tis] n ժառանգության հարկ:

**death-feud** ['deθfju:d] n մահացու թշնամություն:

**death-hunter** ['deθ,hʌntə] n դիակապուտ, կողոպտիչ:

**deathless** ['deθləs] a անմահ:

**deathly** ['deθli] 1. a մահացու, ճակատագրական. 2. adv մահացու կերպով. ~ pale մեռելի գույն. a ~ silence մեռելային լռություն. ~ penalty մահապատժ:

**deathrate** ['deθreit] n մահացություն, մահացության տոկոս/մակարդակ:

**death-trap** ['deθtræp] n վտանգ, վտանգավոր տեղ:

**death warrant** ['deθ,wɒrənt] n մահվան դատավճիռ, ի կատար ածելու կարգադրություն:

**debar** [di'ba:] v արգելել, իրավունքից զրկել, խոչընդոտել. ~ from voting ընտրելու/քվեարկելու իրավունքից զրկել:

**debark** [di'ba:k] v ափ իջեցնել. ափ/ցամաք հանել:

**debarkation** [,diba:'keiʃn] n ափհանում, ափ իջնելը. բեռնաթափում:

**debase** [di'beis] v ստորացնել, արժանապատվությունից զրկել. իջեցնել. ~ the coinage տարադրամի արժեքը իջեցնել:

**debatement** [di'beismənt] n ստորացում, նվաստացում. վատթարացում:

**debatable** [di'beitəbl] a վիճելի, վիճարկելի:

**debate** [di'beit] n քննարկում, վիճարանություն. բանավեճ, բանակռիվ. a ~ on the problem հարցի քննարկում. բանավեճ:

**debate** [di'beit] v քննարկել, վիճարանել. կշռադատել, խորհել. beyond ~ անվիճելիորեն. the ~s խորհրդի միստերի հաշվետվություն:

**debater** [di'beitə] n բանավեճի մասնակցող, քննարկող:

**debauch** [di'bo:tʃ] v անկարգություն. գինարբուք. անբարոյականություն:

**debauched** [di'bo:tʃd] a շվայտ, անառակ, անբարոյական:

**debilitate** [di'biliteit] v թուլացնել:

**debility** [di'biləti] n թուլություն, տկարություն:

**debit** ['debit] n *ֆին.* պարտք, դեբետ. put to the ~ պարտագրել. a ~ balance դեբետային/պասսիվ բալանս:

**debit** ['debit] v դեբետի մեջ մտցնել, պար-

- տազրել. ~ a sum against smb's account մեկի հաշվին գումար պարտազրել:
- debris** [ˈdeɪbrɪ:] n բեկորներ, կտորներ, փշուրներ:
- debt** [det] n պարտք. be in smb's ~ մեկին պարտք/պարտական լինել. get/fall/run into ~ պարտքի մեջ խրվել/տակ ընկնել. in ~s պարտքերի մեջ ընկած. pay a ~ պարտքը տալ/վերադարձնել. write off a ~ պարտքը չեղյալ համարել. a bad ~ անհույս/անհուսալի պարտք. ~ of honour պատվի պարտք. National Debt պետական պարտք:
- debtor** [ˈdeɪtə] n պարտապան. *ֆին.* դեբիտոր. insolvent ~ անվճարունակ պարտապան: ~'s prison պարտապանների բանտ:
- debug** [ˌdiːˈbʌg] v *հմկրգ.* կարգաբերել. ~ tool կարգաբերիչ:
- debugging** [ˌdiːˈbʌɡɪŋ] n *հմկրգ.* կարգաբերում:
- debunk** [ˌdiːˈbʌŋk] v *խսկց.* մերկացնել, պակասագործ անել. ~ smb. մեկին մերկացնել/պակասագործ անել:
- debut** [ˈdeɪbjʊː] n առաջին ելույթ, դեբյուտ. make one's ~ առաջին անգամ հանդես գալ:
- decade** [ˈdekeɪd] n տասնամյակ, տասնյակ:
- decadence** [ˈdekədəns] n անկումայնություն, անկում:
- decadent** [ˈdekədənt] a, n անկումային, դեկադենտական. դեկադենտ:
- decamp** [diˈkæmp] v ճամբարը թողնել, ճամբարից հեռանալ. ~ with all the money *խսկց., փխբ.* փողերի հետ միասին անհայտանալ/ծլկել:
- decampment** [diˈkæmpmənt] n ճամբարը թողնելը, ճամբարից հեռանալը:
- decant** [diˈkænt] v քամել, զտել. ~ wine գինին զտել:
- decanter** [diˈkæntə] n ջրաման, գրաֆին:
- decapitate** [diˈkæpɪteɪt] v գլխատել:
- decapitation** [diˌkæpiˈteɪʃn] n գլխատում:
- decay** [diˈkeɪ] n անկում, քայքայում, ավերում. dental ~ ատամի կարիես. family ~ ընտանիքի քայքայում. fall into ~ քայքայվել, ավերվել. ~ of civilization քաղաքակրթության անկում:
- decay** [diˈkeɪ] v փտել, նեխել, քայքայվել. հոտել: His powers are ~ing Ուժերը թուլանում են. ~ing flesh փտող մարմին. Teeth are ~ing Ատամները քայքայվում են. Civilizations are ~ing Քաղաքակրթությունները անկում են ապրում:
- decayed** [diˈkeɪd] a փտած, հոտած, քայքայված. a ~ tooth փչացած ատամ. ~ wood փտած փայտ. ~ apples հոտած խնձոր. a ~ building ավերված շենք:
- decease** [diˈsiːs] n, v վախճան, մահ. մեռնել, մահանալ, վախճանվել:
- deceased** [diˈsiːst] 1. a հանգուցյալ, մեռցյալ 2. n the ~ հանգուցյալը, մեռցյալը. ~'s estate հանգուցյալին պատկանած գույք:
- deceit** [diˈsiːt] n խաբեություն, սուտ. խորամանկություն, նենգություն. fraud and ~ կեղծիք և խաբեություն:
- deceitful** [diˈsiːtfl] a ստախոս, խորամանկ, նենգ:
- deceive** [diˈsiːv] v խաբել, մոլորության մեջ գցել. ~ oneself ինքն իրեն խաբել. If my memory doesn't ~ me եթե հիշողությունս ինձ չի դավաճանում. be ~d in one's hopes հուսախաբ լինել. be ~d into խաբելով ստիպել (մի բան անել):
- decelerate** [ˌdiːˈseləreɪt] v արագությունը պակասեցնել, դանդաղեցնել:
- December** [diˈsembə] 1. n դեկտեմբեր. 2. a դեկտեմբերյան:
- decency** [ˈdiːnsɪ] n պարկեշտություն. by /in (common) ~ քաղաքավարությունից դրված. observe the ~ ies պարկեշտությունը պահպանել. have the ~ պարկեշտ/քաղաքավարի լինել. have no ~ պարկեշտ/քաղաքավարի չլինել:
- decent** [ˈdiːsnt] a պատշաճ, վայելուչ, քաղաքավարի. ~ behaviour պատշաճ/վայելուչ վարվելակերպ. (պարկեշտ, համեստ) The story is no ~ Դա անպարկեշտ պատմություն. է. a ~ suit of clothes պատշաճ հագուստ. a ~ chap կարգին մարդ/տղա. be ~ to smn մեկի հետ լավ/քաղաքավարի վարվել. That's very ~ of you դա շատ սիրալիր է ձեր կողմից. quite a ~ income բավական կարգին եկամուտ:
- decently** [ˈdiːsntli] adv պատշաճորեն, վայելչորեն, սիրալիր կերպով. dress ~ պատշաճ կերպով հագնվել. treat people ~ մարդկանց կարգին/պատշաճորեն վերաբերվել:
- decentralize** [diˈsentʃəlaɪz] v ապակենտրոնացնել:
- deception** [diˈsepʃn] n խաբեբայություն,



խաբեություն. խորամանկություն. սուտ. get smth by ~ ինչ-որ բանի խաբեությամբ/խաբելով հասնել:

**deceptive** [di'septiv] a խաբուսիկ:

**decide** [di'said] v որոշել, վճռել. ~ a question հարցը որոշել. ~ in favour of/against smb մեկի օգտին/դեմ վճռել. ~ between ընտրություն կատարել:

**decided** [di'saidid] a վճռական, որոշակի, անվիճելի. a ~ improvement որոշակի բարելավում. a ~ character վճռական անձնավորություն:

**decidedly** [di'saididli] adv վճռականորեն, վճռականապես. անկասկած, անտարակույս:

**decimal** [desəml] 1. a տասնորդական. ~ fraction տասնորդական կտորակ. ~ currency տասնորդական դրամային համակարգ. 2. n a recurring ~ պարբերական տասնորդական կտորակ:

**decimalize** [desəmlaiz] v տասնորդական կտորակի/համակարգի վերածել:

**decipher** [di'saifə] 1. v վերծանել, կարդալ (ծածկագիրը). ~ smb's handwriting ձեռագիրը վերծանել. 2. n վերծանում, կարդալ:

**decipherable** [di'saifərəbl] a վերծանելի, ընթեռնելի:

**decision** [di'si:ʒn] n որոշում, վճիռ, եզրակացություն. come /arrive at a ~ որոշման/եզրակացության համգել. final ~ վերջնական որոշում. *իրավ.* court ~ դատավճիռ. ~ making որոշում կայացնել/ընդունել. *հմկրգ.* ~ box ստուգման բլոկ. ~ instruction ճյուղավորման հրահանգ:

**decisive** [di'saisiv] a վճռական. a ~ character/victory հաստատական անձնավորություն. վճռորոշ հաղթանակ. a ~ answer վճռական/վերջնական պատասխան. ~ evidence անժխտելի ապացույց:

**deck** [dek] n տախտակամած. on ~ տախտակամածի վրա. upper/lower ~ վերին/ստորին տախտակամած. tread the ~ *փխթ.* նավագնաց լինել. all hands on ~ *ծով.* նավաստիների միահամուռ աշխատանք նավի վրա, ավրալ. promenade ~ զբոսանքի տախտակամած. ~ cabin տախտակամածի նավախուց. ~ chair պառկելաթոռ, շեգլոնգ:

**decker** [dekə] n տախտակամածանավ:

**deckhand** [dek'hænd] n նավաստի:

**deckhouse** [dekhaus] n *ծով.* խցիկ տախտակամածի վրա:

**decking** [dekɪŋ] n տախտամած. զարդարում, զարդարանք:

**decklight** [deklaɪt] n տախտակամածի լուսանցույց:

**deckroof** [dekru:f] n տափակ տանիք:

**declaim** [di'kleim] v ոտանավոր արտասանել. հանդիսավոր/վերամբարձորեն խոսել:

**declamation** [dekle'meɪʃn] n արտասանություն, արտասանում. ճոռոմաբանություն:

**declamatory** [di'klæmətəri] a արտասանական, դեկլամացիոն:

**declaration** [dekle'reɪʃn] n հայտարարություն. հռչակում, հռչակագիր. ~ of rights մարդու իրավունքների հռչակում. custom ~ մաքսատան հռչակագիր. a ~ of war պատերազմի հայտարարում. make a ~ հայտարարություն անել:

**declarative** [di'klærətiv] a *քեր.* պատմողական նախադասություն:

**declarator** [di'klærətə] n *հմկրգ.* հայտարարման օպերատոր:

**declaratory** [di'klærətəri] a բացատրական, պարզաբանական:

**declare** [di'kleə] v հայտարարել, հայտարարություն անել, հռչակել. ~ war պատերազմ հայտարարել. ~ one's love սեր խոստովանել. ~ oneself խոստովանել. ~ innocent/surprised անմեղ հայտարարել. շատ զարմացած լինել. *թղթխ.* կոզիր/հաղթաթուղթ հայտարարել:

**declared** [di'kleəd] a հայտարարված, հրապարակված. ճանաչված. be ~ bankrupt սնանկ հայտարարվել:

**declared** [di'kla:st] a ապադասակարգայնացած:

**declension** [di'klenʃn] n անկում, շեղում. խոտորում. *քեր.* հոլովում:

**declensional** [di'klenʃnəl] a *քեր.* հոլովական:

**declinable** [di'klaɪnəbl] a *քեր.* հոլովվող:

**declination** [dekli'neiʃn] n *քեր.* թեքում, հոլովում:

**decline** [di'klaɪn] n անկում, իջեցում, վատացում. ~ in trade առևտրի անկում. ~ of one's powers ուժերի թուլացում. ~ in birthrate ծննդաբերության տոկոսի իջեցում:

**decline** [di'klaɪn] v թեքվել, ընկնել, իջնել.

մերժել, առարկել. ~ an invitation/a proposal հրավերը/առաջարկը մերժել. ~ the responsibility պատասխանատվությունից խուսափել. ~ to answer հրաժարվել պատասխանելուց. The sun is ~ing Արևը թեքվում է. The art/business is ~ing Արվեստը/Ձեռնարկությունը անկում է ապրում. His health ~d Առողջությունը վատացավ:

**declivity** [di'klivəti] n թեքություն, զառիվայր, լանջ:

**declutch** [di:'klʌtʃ] v տեխ. անջատել, միմյանցից բաժանել:

**decode** [di:'kəʊd] v վերծանել, ծածկագրերը կարդալ:

**decoding** [di:'kəʊdɪŋ] n ապակոդավորում:

**decolo(u)r** [di:'kɒlə] v գունազրկել, անգունացնել:

**deco duck** [di:'kɔɪdʌk] n խայծաթռչուն. *փխբ.* հրապուրիչ բան, հրապուրանք:

**decolo(u)rant** [di:'kɒlərənt] n գունազրկող նյութ:

**decolo(u)ration** [di:,'kɒlə'reiʃn] n գունազրկում:

**decompensation** [di:,'kɒmpen'seɪʃn] n անհամակշռություն, դեկոմպենսացիա:

**decompose** [di:'kɒm'pəʊz] v տարրալուծել. կազմալուծվել, քայքայվել, նեխել:

**decomposition** [di:'kɒmpə'zɪʃn] n տարրալուծում, կազմալուծում, քայքայում, նեխում:

**decompound** [di:'kɒm'paʊnd] a բաղադրյալ, մասերից կազմված:

**decontaminate** [di:'kɒn'tæmɪneɪt] v վարակազերծել, ախտահանել:

**decontamination** [di:'kɒntæmɪ'neɪʃn] n վարակազերծում, ախտահանում:

**decor** ['deɪkɔ:] n *թատր.* բեմազարդարանք, դեկորացիա:

**decorate** ['dekəreɪt] v զարդարել, հարդարել. ~ a room սենյակը զարդարել. (պարզևատրել) ~ with an order շքանշանով պարզևատրել:

**decorated** ['dekəreɪtɪd] a զարդարված, հարդարված. պարզևատրված:

**decoration** [di:'deɪkə'reɪʃn] n զարդարանք. ~ s ներքին հարդարանք. տոնական զարդարանք. *costly* ~s թանկարժեք հարդարանք. *no* ~ շքանշան:

**decorative** ['dekə'reɪtɪv] a գեղազարդային,

դեկորատիվ. She is very ~ Նա շատ տպավորիչ է:

**decorator** ['dekəreɪtə] n ներկարար, պատանոհ. գեղազարդիչ. շենքերի գեղազարդման մասնագետ. *interior* ~ ներքին հարդարման գեղազարդիչ:

**decorous** ['dekə'reɪs] a վայելուչ, պատշաճ:

**decorum** [di:'kɔ:rəm] n արտաքին վայելչություն, վարվելակարգ:

**decoy** ['di:'kɔɪ] n թակարդ, ծուղակ. խայծ, հրապուրանք (*նաև՝ փխբ.*):

**decrease** ['di:'kri:s] n նվազում, պակասեցում. ~ in temperature ջերմաստիճանի նվազում. Crime is on the ~ Ոճրագործությունների թիվը պակասում է:

**decrease** ['di:'kri:s] v պակասել, պակասեցնել. փոքրանալ, փոքրացնել. նվազել. ~ speed արագությունը պակասեցնել. The population has ~d Բնակչությունը նվազել է:

**decree** [di:'kri:] n հրամանագիր, օրենք, որոշում. *pass a* ~ որոշում կայացնել. *իրավ.* դատարանի վճիռ:

**decree** [di:'kri:] v դեկրետ/հրամանագիր հրատարակել. It has been ~d Որոշվեց/վճռեցին. The fate ~d otherwise ճակատագիրը այլ ձևով/այլ կերպ տնօրինեց:

**decrement** ['dekrɪmɪnt] n պակասեցում, նվազեցում. *տեխ.* թուլացում, հանդարտեցում. *հմկրգ.* բացասական աճ, հանվող մեծություն:

**decrepit** [di:'kreɪtɪ] a հնամաշ, խարխուլ. զառամյալ:

**decrepitude** [di:'kreɪtɪtju:d] n հնամաշություն, խարխուլություն, զառամություն:

**decrecent** [di:'kreɪnt] a նվազող:

**decretive** [di:'kri:tɪv] a դեկրետային, դեկրետով սահմանված:

**decretory** [di:'kri:təri] a կատեգորիկ, կտրական:

**decry** [di:'krai] v պարսավել, կշտամբել (բացահայտ կերպով):

**decumbent** [di:'kʌmbənt] a պառկած, ընկած. *բուս.* գետնատարած:

**dedicate** ['dedɪkeɪt] v նվիրել, ձոնել. ~ one's life to art կյանքը արվեստին նվիրել. ~d to one's work իր աշխատանքին նվիրված. The book is ~d to Գիրքը նվիրված է:

**dedication** [di:'dedɪ'keɪʃn] n ընծայական ուղերձ, ձոն, նվիրում: work with ~ նվիրումով աշխատել:

**dedicatory** [ˈdedɪkətəri] a ծոնման, նվիրման, ընծայական:

**deduce** [diˈdju:s] v եզրակացնել, հետևեցնել. ~ from the facts փաստերի հիման վրա եզրակացության գալ:

**deducible** [diˈdju:səbl] եզրահանգելի, արտածելի:

**deduct** [diˈdʌkt] v հանել. պահում անել:

**deduction** [diˈdʌkʃn] n պահում (աշխատավարձից և այլն). նվազեցում, կրճատում. եզրակացություն, հետևություն. *մաթ.* հանում. ~s from salary պահումներ աշխատավարձից. tax ~s հարկերի նվազեցում:

**deductive** [diˈdʌktɪv] a *փիլ.* արտածական, դեդուկտիվ:

**deed** [di:d] n գործ, արարք. փաստ. in word and ~ խոսքով և գործով. *հրավ.* փաստաթուղթ, վավերագիր. ~ of purchase գնման վավերագիր/ակտ. heroic ~s հերոսական արարքներ:

**deem** [di:m] v ենթադրել, կարծել, համարել. ~ highly of smb մեկի մասին բարձր կարծիք ունենալ:

**deemster** [ˈdi:mstə] n դատավոր:

**deep** [di:p] a խոր, խորունկ. a ~ sleep/sigh/interest խոր քուն/հոգոց/հետաքրքրություն. ~ wound խոր վերք. a ~ impression/sorrow խոր պավորություն/վիշտ. with ~ regret խոր կսկիծով. ~ grass բարձր խոտ. ~ in snow խոր ծյունով ծածկված. knee ~ մինչև ծնկները. ~ in the country երկրի խուլ/հեռավոր վայրը. ~ in his heart սրտի խորքում. ~ in thought մտքերի մեջ խորասուզված. (մուգ, թավ) ~ blue մուգ կապույտ. a ~ sound/voice թավ/կրծքային հնչյուն/ձայն. a ~ (drawn) groan խուլ տնքոց. ~ in debt/love մինչև ականջները պարտքի մեջ խրված/սիրահարված. ~ in one's pursuit իր գործի մեջ խորասուզված. 2. adv խոր(ը), խորապես. go ~ into խորանալ, խորասուզվել. ~ into the night մինչև խոր գիշեր:

**deepen** [ˈdi:pən] v խորանալ, խորացնել. ուժեղանալ, ուժեղացնել. սաստկանալ, սաստկացնել. ~ a hole փոսը խորացնել. *փիլոս.* ~ one's knowledge գիտելիքները խորացնել. His colour ~ed եւ կարմրատակեց:

**deep-felt** [,di:pˈfelt] a խորապես զգացված:

**deep freeze** [,di:pˈfri:z] v ուժեղ սառեցնել:

**deep freezer** [,di:pˈfri:zə] n սառցարան:

**deep-laid** [,di:pˈleɪd] a մանրամասն մշակված, գաղտնի (պլան):

**deeply** [ˈdi:pli] adv խոր, խորապես. ~ offended խորապես վիրավորված:

**deep-rooted** [,di:pˈru:tɪd] a խորապես արմատացած:

**deep-sea** [,di:pˈsi:] a խորջրյա, խոր ջրերի. ~ fishing խորջրյա ձկնորսություն:

**deep seat** [,di:pˈsi:t] a ~ eyes խորն ընկած (աչքեր):

**deep-seated** [,di:pˈsi:tɪd] a խոր նստած, արմատացած. The causes are ~ Պատճառները շատ խորն են:

**deer** [diə] n եղջերու, պախրա, եղնիկ. *հվք.* որսի խոշոր կենդանիներ:

**deer-forest** [ˈdiə,fɔrɪst] n եղջերվի անտառարգելոց:

**deer hound** [ˈdiəhaund] n շոտլանդական որսկան շուն:

**deerskin** [ˈdiəskin] n եղջերվենի (կաշի), զամշ:

**deface** [diˈfeɪs] v այլանդակել. փչացնել. վարկաբեկել. The statue is ~d Արժանն այլանդակված է:

**defacto** [deɪˈfæktəʊ] adv *լատ.* փաստորեն, դեֆակտո:

**defalcate** [ˈdi:fælkeɪt] v յուրացնել, դրամ շորթել. զեղծարարություն անել:

**defalcation** [,di:fælˈkeɪʃn] n յուրացում, դրամաշորթություն, զեղծարարություն:

**defalcator** [ˈdi:fælkeɪtə] n վատնիչ, դրամաշորթ, զեղծարար:

**defamation** [,defəˈmeɪʃn] n զրպարտություն, զրպարտանք. անարգանք, անպատվություն. unintentional ~ չկանխամտածված զրպարտություն:

**defamatory** [diˈfæmətəri] a զրպարտչական. ~ utterances զրպարտչական արտահայտություններ:

**defame** [diˈfeɪm] v զրպարտել, անարգել, անվանարկել:

**default** [diˈfɔ:lt] 1. n պակաս, պակասություն, բացակայություն. in ~ of չունենալու պատճառով. *հրավ.* պարտագանցում. պարտականություններ չկատարելը. ~ of appearance դատարան չներկայանալը. judgement by ~ հեռակա դատավճիռ. *հմկրգ.* ~ option ընտրություն լռությամբ. ~ value լռությամբ տրվող արժեք. 2. v պարտքերը

չվճարել, պարտականությունները չկատարել, դատարան չներկայանալ:

**defaulter** [di'fɔ:ltə] n պարտավորություններից խույս տվող մարդ. սնանկ/սնանկացած մարդ. դատարան չներկայացող:

**defeasance** [di'fi:zns] n ոչնչացում, վերացում:

**defeasible** [di'fi:zəbl] a ոչնչացման/վերացման ենթակա:

**defeat** [di'fi:t] n պարտություն. suffer a ~ պարտվել, պարտություն կրել:

**defeat** [di'fi:t] v հաղթել, պարտության մատնել. հույսերը խորտակել. ձախողել. տապալել:

**defeatism** [di'fi:tizm] n *քղք*. պարտվողականություն:

**disquiet** [dis'kwaiət] 1. n անհանգստություն, հուզմունք. 2. v անհանգստացնել, հուզել:

**disquietude** [dis'kwaiətju:d] n անհանգստություն, հուզմունք:

**disquieting** [ˌdis'kwaiətɪŋ] a անհանգստացնող. ~ news անհանգստացնող լուրեր:

**disrank** [dis'ræŋk] v աստիճանազրկել, պաշտոնն իջեցնել:

**disregard** [ˌdisri'gɑ:d] v ուշադրություն չդարձնել. հաշվի չառնել. անտեսել. ~ one's advice խորհուրդը հաշվի չառնել/անտեսել. ~ the warning զգուշացումն անտեսել, ուշադրություն չդարձնել:

**disrepair** [ˌdisri'peə] n անսարք/վատ վիճակ. The building was in ~ Շենքն անսարք վիճակում էր. fall into ~ հնանալ, խարխլվել:

**disreputable** [ˌdis'repjətəbl] a վատահամբավ. վարկաբեկիչ. անպարկեշտ, անվայել լուչ. a ~ looking fellow կասկածելի տիպ. a ~ pub վատահամբավ գինետուն. be too ~ շատ անհրապույր տեսք ունենալ. a ~ coat հնամաշ/մաշված վերարկու:

**disrepute** [ˌdisri'pju:t] n վատ համբավ. fall into ~ վատ համբավ ձեռք բերել. bring smb/smth into ~ մեկին /մի բանի վրա վատ համբավ հարուցել:



**disrespect** [ˌdɪsɪˈspekt] n անհարգալից վերաբերմունք. հարգանքի բացակայություն. I meant no ~ ես նկատի չունեի անհարգալից վերաբերմունք:

**disrespectful** [ˌdɪsɪˈspektfəl] a անհարգալից. անբարեկիրթ, անքաղաքավարի. a ~ attitude անհարգալից վերաբերմունք. be ~ to people մարդկանց նկատմամբ անհարգալից/անքաղաքավարի լինել:

**disrobe** [dɪsˈrəʊb] v մերկացնել, մերկանալ. հագուստը հանել, հանվել:

**disroot** [dɪsˈru:t] v արմատախիլ անել:

**disrupt** [dɪsˈrʌpt] v կտրել, խզել, քանդել, քայքայել. ~ service ծառայությունը խախտել. ~ one's work *փխք*. աշխատանքին խանգարել:

**disruption** [dɪsˈrʌpʃn] n խզում, պառակտում, ճեղքում:

**disruptive** [dɪsˈrʌptɪv] կործանիչ, ավերիչ, քայքայիչ:

**dissatisfaction** [ˌdɪsɪsɪsˈfæksɪʃn] n անբավարկություն, դժգոհություն. ~ among the students դժգոհություն ուսանողության շրջանում. express ~ դժգոհություն արտահայտել:

**dissatisfied** [ˌdɪsɪsɪsˈfaɪd] a չբավարկված, դժգոհ. ~ with one's job/salary աշխատանքից/աշխատավարձից դժգոհ. ~ with the service սպասարկումից դժգոհ:

**dissatisfy** [ˌdɪsɪsɪsˈfaɪ] v չբավարկել, դժգոհություն պատճառել:

**dissect** [dɪˈsekt] v ճեղքել, կտրել, պատռել. *բժշկ.* հերծել, դիահերծել. *փխք.* ~ a theory/an article տեսությունը/հոդվածը վերլուծել:

**dissecting-room** [dɪˈsektɪŋru:m] n հերծարան, դիահերծարան, անատոմիկում:

**dissection** [dɪˈsekʃn] n ճեղքում, կտրում, պատռում. դիահատում. վերլուծում:

**dissemble** [dɪˈsembəl] v թաքցնել, ցույց, չտալ, քողարկել. ~ one's feelings զգացումը քողարկել. (կեղծել, ձևանալ) no need to ~ կարիք չկա կեղծել/ձևացնել:

**dissembler** [dɪˈsembəl] n ձևացնող, ձևացող. կեղծ (մարդ):

**disseminate** [dɪˈsemɪneɪt] v ցանել, շաղտալ, տարածել, սերմանել:

**dissemination** [dɪˌsemiˈneɪʃn] n ցանում, տարածում. սերմանում:

**dissension** [dɪˈsenʃn] n տարածայնություն,

անհամաձայնություն. պառակտում:

**dissent** [dɪˈsent] 1. v տարակարծիք լինել. *եկեղ.* որևէ աղանդի պատկանել. ~ from չհամաձայնվել. 2. n անհամաձայնություն. express ~ from անհամաձայնություն արտահայտել:

**dissenter** [dɪˈsentə] n հերծվածող, աղանդավոր:

**dissertation** [ˌdɪsəˈteɪʃn] n թեզ, դիսերտացիա:

**disserve** [dɪˈsə:v] v վատ ծառայություն մատուցել, վնասել:

**disservice** [dɪˈsə:vɪs] n վատ ծառայություն, վնաս do a ~ վատ ծառայություն մատուցել:

**dissidence** [ˈdɪsɪdəns] n այլախոհություն, պառակտում:

**dissident** [ˈdɪsɪdənt] a այլախոհ, աղանդավոր:

**dissimilar** [dɪˈsɪmɪlə] a տարբեր, այլատեսակ. ~ from տարբեր, այլազան. ~ tastes տարբեր ճաշակներ:

**dissimilarity** [ˌdɪsɪmɪˈlærəti] n այլազանություն. տարբերություն:

**dissimilation** [ˌdɪsɪmɪˈleɪʃn] n *լեզվ.* տարմանություն, տարմանում:

**dissimulate** [dɪˈsɪmjuleɪt] v ձևացնել, կեղծել, քողարկել:

**dissimulation** [dɪˌsɪmjʊˈleɪʃn] n ձևացում, կեղծիք:

**dissipate** [ˈdɪsɪpeɪt] v ցրել, փարատել. վատնել, շռայլել. շվայտ կյանք վարել. ~ fears վախը փարատել. ~ one's fortune ունեցվածքը վատնել/քամում տալ. ~ one's energy եռանդը անտեղի ծախսել. ~ time ժամանակ վատնել:

**dissipated** [ˈdɪsɪpeɪtɪd] a սանձարձակ, անբարոյական. lead a ~ life անբարոյական կյանք վարել:

**dissipation** [ˌdɪsɪˈpeɪʃn] n ցրում, փարատում. վատնում, շռայլում. անառակ/շվայտ կյանք:

**dissociable** [dɪˈsəʊʃəbəl] a անմարդամոտ, անհաղորդասեր:

**dissociate** [dɪˈsəʊsɪeɪt] v անջատել, բաժանել. ~ oneself առանձնանալ, սահմանազատվել. ~ public and private life անջատել/տարբերել հասարակական և անձնական կյանքի շահերը. *քիմ.* տարրաբաժանել, քայքայել:

**dissoluble** [di'sɒljubl] a [ուծելի, [ուծվող. խզելի, [ուծելի (պայմանագիր, ամուսնություն):

**dissolute** ['disəlu:t] a անառակ, ցոփ:

**dissolution** [ˌdisə'lu:ʃn] n [ուծում, տարրալուծում. կազմալուծում. ~ of parliament պառլամենտի/խորհրդարանի կազմադրում/արծակում:

**dissolve** [di'zɒlv] v [ուծ(վ)ել, քայքայ(վ)ել, խզել. ~ salt/sugar in water աղը/շաքարը ջրում [ուծել. ~ a marriage/a business ամուսնությունը/գործարքը [ուծել:

**dissolvent** [di'zɒlvənt] 1. a [ուծող. 2. n [ուծիչ, [ուծող նյութ:

**dissonance** ['disəʊəns] n աններդաշնակություն, անհամապատասխանություն. երժշ. աններդաշնակություն, դիսոնանս:

**dissonant** ['disəʊənt] a աններդաշնակ, հակասական. երժշ. աններդաշնակ, աններդաշնակություն մտցնող:

**dissuade** [di'sweɪd] v տարհամոզել, միտքը փոխել տալ. try to ~ smb from փորձել հետ պահել/տարհամոզել:

**dissuasion** [di'sweɪʒn] n տարհամոզում:

**dissyllabic** [ˌdisɪ'ləbɪk] a երկվանկ:

**distance** ['dɪstəns] n տարածություն, հեռավորություն. at a ~ հեռավորության վրա. in the ~ հեռվում. from a ~ հեռվից. look into the ~ հեռուն նայել. a fair ~ բավականին տարածություն. within striking ~ հասանելիության սահմաններում. beyond striking ~ հասանելիության սահմաններից դուրս/այն կողմ. in the middle ~ միջին պլանում. ~ learning հեռակա ուսուցում. *փխբ.* (սառնություն) at a respectful ~ պատշաճ հեռավորության վրա. keep one's ~ հեռավորությունը պահպանել, իրեն հեռու պահել. keep at a ~ հեռավորության վրա մնալ. a long ~ race *մրզ.* երկար տարածավազք. at this ~ of time այժմ. over a ~ of 40 years 40 տարվա հեռավորությունից/ժամանակամիջոցից հետո:

**distant** ['dɪstənt] a հեռավոր, հեռու. ~ place/sound/resemblance/relative հեռավոր վայր/ձայն/մամություն/բարեկամ, ազգական. ~ countries հեռու/հեռավոր երկրներ. the ~ past/future հեռավոր անցյալ/ապագա. be on ~ terms պաշտոնական հարաբերությունների մեջ լինել:

**distaste** [dis'teɪst] 1. n անբարյացականու-

թյուն, ատելություն. have a ~ for travel/parties ատել/չսիրել ճամփորդություն/խնջույքներ. 2. v նողկանք զգալ, ատելություն տածել:

**distasteful** [dis'teɪstfʊl] a անախորժ, սիհած, զզվելի. It is ~ for me to Ինձ համար շատ սիհած է:

**distemper** [di'stempə] n տկարություն, հոգեկան խանգարում:

**distend** [di'stend] v ուռչել, ուռեցնել. ընդլայն(վ)ել:

**distensible** [di'stensəbəl] a ընդլայնելի, առածգական:

**distension** [di'stensən] n ձգում, ընդլայնում, ընդարձակում:

**distil** [di'stɪl] v թորել, զտել. բույսերից հյութ քամել. *փխբ.* ամենատեղանք քաղել:

**distillation** [ˌdɪstɪ'leɪʃn] n թորում, զտում. dry ~ չոր թորում:

**distiller** [di'stɪlə] n օղի թորող/քաշող. թորիչ (գործիք):

**distillery** [di'stɪləri] n օղեգործարան, սպիրտագործարան:

**distinct** [di'stɪŋkt] a պարզ, հստակ, պարզորոշ. զատ, անջատ, տարբեր. a ~ sound հստակ/պարզորոշ ձայն. ~ handwriting /pronunciation հստակ ձեռագիր/արտասանություն. ~ progress ակնհայտ առաջընթաց. ~ outlines հստակ ուրվագծեր. (որոշակի) ~ intention որոշակի մտադրություն. a ~ chance որոշակի հնարավորություն. (յուրահատուկ) ~ type of mind յուրահատուկ մտածելակերպ. (տարբեր) The two melodies are quite ~ Այս երկու մեղեդիները լրիվ տարբեր են. keep the ideas ~ տարբերել/չշփոթել գաղափարները:

**distinction** [di'stɪŋkʃn] n տարբերություն, զանազանություն. պատվանշան, շքանշան. without ~ առանց տարբերության/խտրության. a fine ~ նուրբ տարբերություն. draw/make a ~ between տարբերություն անցկացնել. (արժանիք) many academic ~s շատ գիտական կոչումներ. a ~ in maths/languages բարձր գնահատական մաթեմատիկայից/լեզուներից. a poet of ~ ականավոր բանաստեղծ:

**distinctive** [di'stɪŋktɪv] a բնորոշ, հատկանշական, տարբերակիչ. ~ marks տարբերիչ նշաններ. ~ taste ինքնատիպ ճաշակ. ~ handwriting բնորոշ ձեռագիր. ~ feature տարբերակիչ հատկանիշ:

**distinctly** [di'stɪŋktli] *adv* որոշակի/պարզորոշ կերպով. speak ~ հստակ խոսել. tell ~ պարզորոշ կերպով ասել. ~ awkward ակնհայտորեն/ծայրահեղ կերպով անհարմար. He's ~ better today Այսօր նա նշանակալիորեն լավ է:

**distinctness** [di'stɪŋktnəs] *n* պարզություն, պարզորոշություն. որոշակիություն, հստակություն:

**distinguish** [di'stɪŋɡwɪʃ] *v* տարբեր(վ)ել, զանազան(վ)ել. ջոկել, տեսնել. ~ good from bad լավը վատից/բարին չարից տարբերել. It is impossible to ~ Անհնարին է տարբերակել. ~ light in the distance հեռավորության վրա տեսնել/նշմարել լույս. He could hardly ~ Նա հազիվ էր կարողանում նշմարել/տեսնել. ~ oneself աչքի ընկնել, հռչակվել. He ~ed himself in the work Նա աչքի ընկավ իր աշխատանքում:

**distinguishable** [di'stɪŋɡwɪʃəbl] *a* զանազանելի:

**distinguished** [di'stɪŋɡwɪʃt] *a* աչքի ընկնող, ականավոր, հռչակավոր. a ~ guest պատվավոր հյուր. look ~ պատկառելի/ծանրակշիռ տեսք ունենալ. a ~ figure ճանաչված հեղինակություն. a ~ doctor ականավոր բժիշկ. of ~ birth երևելի/ազնվական ծագում. a ~ career փայլուն կարիերա. ~ style բնորոշ ոճ:

**distinguishing** [di'stɪŋɡwɪʃɪŋ] *a* տարբերակիչ, զանազանող:

**distort** [di'stɔ:ɪ] *v* աղավաղել, խեղաթյուրել, աղճատել. այլանդակել, ծոմռել. ~ facts /the meaning փաստերը/իմաստը աղավաղել. Her face was ~ed by pain/fear Նրա դեմքը ցավից/վախից ծամածռվեց. ~ the truth ճշմարտությունն աղավաղել:

**distortion** [di'stɔ:ɪjən] *n* աղավաղում (*նակ փխք*). ծռում, ծոմռում, այլանդակում:

**distract** [di'strækt] *v* հեռացնել, շեղել. ~ from worries հոգսերից շեղել. The noise ~s Աղմուկը խանգարում է/շեղում է ուշադրությունը:

**distracted** [di'stræktɪd] *a* ցրված, մտացիր. խելագար, խելակորույս:

**distraction** [di'strækʃən] *n* ուշադրության շեղում. մտացրում, ցրվածություն. զվարճություն, ուրախություն. hate/love to ~ խելագարության աստիճանի ատել/սիրել. drive to ~ խելագարության հասցնել:

**distraught** [di'strɔ:t] *a* խելագարված. like one ~ խելագարի մման. ~ with anxiety անհուն չարությունից գլուխը կորցրած:

**distress** [di'stres] *n* վիշտ, դառնություն, կսկիծ. աղետ. a ship in ~ աղետի ենթարկված նավ. ~ signal աղետի ազդանշան. *իրավ*. պարտավորության դիմաց գույքի տիրակալում. (հյուժում, ուժասպառություն) The patient is in ~ Հիվանդն իրեն վատ է զգում. show signs of ~ հոգնածության նշաններ ցույց տալ:

**distress** [di'stres] *v* վիշտ պատճառել, դառնացնել. հյուժել, ուժասպառ անել. be ~ed վշտանալ. Don't ~ your mother Մի վշտացրու մայրիկիդ. Don't ~ yourself Մի վշտացիր:

**distressful** [di'stresfl] *a* վշտալի, տխրալի, դառը:

**distressing** [di'stresɪŋ] *a* վշտացնող, մտահոգող, անհանգստացնող. տհաճ. ~ news անմխիթարական լուրեր. It's all very ~ Այդ ամենը շատ մտահոգիչ/տհաճ է:

**distributable** [di'strɪbjətəbl] *a* բաշխելի, բաժանելի:

**distribute** [di'strɪbjʊ:t] *v* բաշխել, բաժանել. տարածել. տեղավորել, դասավորել. ~ books/money գիրք/փող բաժանել. widely ~d լայն տարածված. ~d over large territory լայն տարածքով մեկ բաշխված/սփռված. *հմկրգ*. ~d database տեղաբաշխված տվյալների բազա. ~d environment տեղաբաշխված համակարգի միջավայր. ~d intelligence արհեստական ինտելեկտի տեղաբաշխված միջոցներ. ~d logic տեղաբաշխված ղեկավարում. ~d object computing տեղաբաշխված օբյեկտային հաշվարկում. ~d processing network տեղաբաշխված տվյալների մշակման ցանց:

**distribution** [di'strɪbjʊ:ʃən] *n* բաշխում, բաժանում, տարածում. the ~ of profits շահույթի բաշխում. the ~ of population բնակչության տեղաբաշխում. the ~ of troops *ռզմ*. զորքերի տեղաբաշխում. ~ agreement բաշխման պայմանագիր:

**distributive** [di'strɪbjʊtɪv] *a* բաշխական, բաշխման the ~ trade առևտրի բաշխման և առաքման բաժին:

**distributor** [di'strɪbjʊtə] *n* բաշխիչ, բաշխող. *տնտ*. վաճառքի գործակալ:

**district** ['dɪstrɪkt] *n* շրջան, մարզ տարածք.

agricultural/rural/residential ~ գյուղատնտեսական/գյուղական/բնակելի տարածք. electoral ~ ընտրական տեղամաս/օկրուգ. ~ council շրջանային խորհուրդ. ~ court շրջանային դատարան. ~ attorney շրջանային դատախազ (ԱՄՆ):

**distrust** [dis'trʌst] n անվստահություն, թերահավատություն, կասկած. look at... with ~ կասկածանքով նայել. have a ~ of foreigners օտարերկրացիներին չվստահել:

**distrust** [dis'trʌst] v չվստահել, կասկածել. ~ people մարդկանց չվստահել. ~ one's own eyes սեփական աչքերին չհավատալ:

**distrustful** [dis'trʌstfʊl] a կասկածամիտ, կասկածելի. անվստահելի:

**disturb** [di'stɜ:b] v անհանգստացնել, խանգարել. նեղացնել. Sorry to ~ you Կներեք, որ անհանգստացնում եմ. be ~ed at ինչ-որ բանից անհանգստանալ. The noise ~ed us Աղմուկը մեզ խանգարում էր. ~ one's peace մեկի հանգիստը խանգարել. Don't ~ my papers! Թղթերիս ձեռք մի' տվեք:

**disturbance** [di'stɜ:bəns] n անհանգստություն, նեղություն. աղմուկ. քղք. խռովություն. խախտում. visual ~ տեսողության խախտում. inborn ~ բնածին խախտում. There was some sort of ~ ինչ-որ աղմուկ կար. a ~ of the peace *իրավ*. հասարակական կարգի խախտում:

**disturbed** [di'stɜ:bd] a անհանգիստ, նյարդային. a ~ night անհանգիստ գիշեր. a ~ child նյարդային երեխա:

**disturber** [di'stɜ:bə] n խանգարող, խռովարար. կարգազանց:

**disunion** [dis'ju:niən] n անհամաձայնություն, պառակտում. բաժանում:

**disunite** [disju'naɪt] v բաժան(վ)ել, անջատ(վ)ել. պառակտ(վ)ել:

**disuse** [dis'ju:s] n անգործածություն, չգործածվելը. fall into ~ գործածությունից դուրս գալ:

**disuse** [dis'ju:z] v դադարել գործածելուց:

**disused** [dis'ju:zd] a գործածությունից դուրս եկած. լքված. a ~ well/house/mine լքված ջրհոր/տուն/ հանքափոր:

**ditch** [dɪtʃ] n առու, փոս. *ռզմ*. խրամատ. an anti-tank ~ հակատանկային խրամատ. The car went into the ~ Մեքենան փոսի մեջ ընկավ. as dull as a ~ water մառու չափ ծանծրալի:

**ditch** [dɪtʃ] v առու/խրամատ փորել. ~ the old car/shoes *խսկց*. դեն նետել հին/փչացած մեքենան/կոշիկները:

**ditcher** ['dɪtʃə] n հողափոր. առվափորիչ/առվահան մեքենա:

**ditch-water** ['dɪtʃwɔ:tə] n կանգնած ջուր:

**dither** ['dɪðə] 1. n *խսկց*. դող. be in a ~ անորոշության մեջ լինել. 2. v դողալ. be ~ing տատանվել, նյարդայնանալ:

**dithyramb** ['dɪθɪræm] n գովերգ, ներբող:

**ditto** ['dɪtəʊ] n, a, adv վերոհիշյալը, նույնը. ~ marks կրկնության նշան. say ~ համաձայնել. "այո" ասել:

**diurnal** [dai'ɔ:n] a ցերեկվա, ցերեկային. միօրյա, մի օր ապրող:

**diva** ['di:və] n առաջնակարգ երգչուհի, պրիմադոննա:

**dive** [daɪv] v սուզ(վ)ել, ընկղմ(վ)ել. ~ for pearls սուզվել մարգարիտ հանելու համար. ~ into one's pocket *փխք*. ձեռքը գրպանը խոթել. *ավ*. խոյրնթաց թռիչք կատարել The plane ~d ինքնաթիռը խոյրնթաց սլացավ. (անհետանալ) The thief ~d into a side street Գողն անհետացավ նրբանցքում:

**divebombing** ['daɪvbɒmɪŋ] n ռմբակոծում խոյրնթաց թռիչքից:

**diver** ['daɪvə] n սուզակ, մարգարիտ որոնող. *կենդ*. ջրային թռչուն. *խսկց*. գրպանահատ:

**diverge** [dai'vɜ:dʒ] v բաժանվել, հեռանալ. խտորվել, թեքվել, շեղվել. Paths/Opinions ~ ճանապարհները/Կարծիքները բաժանվում են. ~ from the main road մայրուղուց շեղվել/թեքվել:

**divergence** [dai'vɜ:dʒəns] n տարամիտում, անհամաձայնություն. խտորում, շեղում. ~ of opinion կարծիքների տարամիտում. ~ from the norm/theme շեղում նորմայից/թեմայից:

**divergent** [dai'vɜ:dʒənt] a տարամիտ, խտորվող. ~ paths/opinions խտորվող ճանապարհներ, տարամիտ կարծիքներ:

**diverse** ['daɪvɜ:z] a տարբեր, ուրիշ. զանազան, բազմազան:

**diversiform** [dai'vɜ:sɪfɔ:m] a այլաձև, տեսակ-տեսակ:

**diversify** [dai'vɜ:sɪfaɪ] v զանազանակերպել, բազմազանել:

**diversion** [dai'vɜ:ʃn] n շեղում, խտորում. զվարճալիք, զվարճություն. *ռզմ*. դիվերսիա:

**diversity** [dai'və:səti] n բազմազանություն, բազմապիսություն:

**divert** [dai'və:t] v խտտորել, ընթացքը փոխել. շեղել. զվարճացնել, զբաղեցնել. ~ the traffic երթևեկությունը ուղղել այլ ճանապարհով. ~ one's thoughts մտքերը շեղել. ~ children երեխաներին զվարճացնել. ~ oneself զվարճանալ:

**diverting** [dai'və:tiŋ] a հետաքրքրական, հետաքրքրաշարժ. a ~ play զվարճալի/հետաքրքրաշարժ ներկայացում. find smth ~ իրեն հետաքրքրող բան գտնել:

**divest** [dai'vest] v հրաժարվել, վանել, զրկել. ~ of authority իշխանությունից/լիազորություններից զրկել:

**divide** [di'vaid] v բաժան(վ)ել, բաշխ(վ)ել. ~ work/land /into equal parts բաժանել աշխատանքը/հողը հավասար մասերի. ~ 50 by 5 մաթ. 50 ը 5 -ի բաժանել. (անջատել) A fence ~s our gardens Մի ցանկապատ է անջատում մեր պարտեզները (տարակարծիք լինել) Opinions were ~d Կարծիքները բաժանվեցին. The meeting was ~d on this point Այս հարցում ժողովականները տարակարծիք եղան:

**divided** [di'vaidd] a բաժանված, զատված, անջատ:

**dividend** ['dividend] n շահաբաժին, շահութամաս. մաթ. բաժանելի:

**divination** [,divi'neiʃn] n գուշակում, գուշակություն, հմայություն, նախագուշակություն, կանխագուշակում:

**divine** [di'vain] a աստվածային. *խսկց.* չնաշխարհիկ, սքանչելի. ~ being աստվածություն. a ~ cook *խսկց.* սքանչելի խոհարար:

**divine** [di'vain] v գուշակել, մարգարեություն անել. կռահել, ենթադրել:

**diviner** [di'vainə] n գուշակ, մարգարե:

**diving** ['daivɪŋ] n սուզում, ջրասուզում. ~ suit/helmet ջրասուզակային հագուստ/սուզագզեստ/ սաղավարտ:

**diving-bell** ['daivɪŋbel] n ջրասուզակային զանգ:

**divinity** [di'vinəti] n աստվածություն, աստված. Doctor of D ~ աստվածաբանության դոկտոր. Divinity ~ school աստվածաբանության ֆակուլտետ:

**divisibility** [di,vizə'biləti] n բաժանելիություն:

**divisible** [di'vizəbl] a բաժանելի:

**division** [di'vizən] n բաժանում, անջատում.

~ of labour աշխատանքի բաժանում. ~ of the spoils ավարի բաժանում. (միջնորմ) room with ~s միջնորմներով սենյակ. class ~s *փխք.* դասային/դասակարգային տարբերություն. (տարածայնություն) a ~ of opinion կարծիքների տարածայնություն. political ~s քաղաքական տարածայնություններ:

**divisor** [di'vaizə] n մաթ. բաժանորդ:

**divorce** [di'vɔ:s] n ամուսնալուծություն, ապահարզան. անջատում, բաժանում, խզում. the ~ between religion and science գիտության անջատումը կրոնից:

**divorce** [di'vɔ:s] v բաժանվել, ամուսնալուծ լինել ~ one's wife/husband կնոջից/ամուսնուց բաժանվել. He/She is ~d Ես բաժանված է. become ~d from reality *փխք.* իրականության հետ կապը կորցնել:

**divorcee** [di,vɔ:'si:] n ամուսնալուծ/ամուսնալուծված մարդ:

**divulge** [dai'vʌldʒ] v հրապարակել, հրապարակ հանել. ~ a secret գաղտնիքը հրապարակ հանել:

**Dixie** ['diksɪ] n ԱՄՆ-ի հարավային նահանգների ընդհանուր անունը:

**dizziness** ['dizinəs] n գլխապտույտ:

**dizzy** ['dizi] a գլխապտույտ. a ~ height գլխապտույտ առաջացնող բարձրություն. be/feel ~ գլխապտույտ ունենալ. It made me ~ Դրանից գլուխս պտտվեց:

**do** [du:] v անել, կատարել. have much to ~ անելու շատ բան ունենալ. ~ what you can Արեք ինչ կարող եք. ~ as you think best Արեք ինչ հարմար եք գտնում. ~ one's best ամեն ինչ անել. ~ one good օգուտ բերել, օգտակար լինել. There is nothing to be done Ոչինչ չի կարելի անել. (հարդարել, կարգի բերել). ~ one's hair մազերը հարդարել. ~ the room սենյակը կարգի բերել. ~ the dishes ամանները լվանալ. ~ the flowers ծաղիկները տեղավորել. ~ one's duty/job պարտականությունը/գործը կատարել. ~ a military service բանակում ծառայել. ~ an article/a portrait հոդված գրել, դիմանկար նկարել. ~ some gardening պարտեզում աշխատել. ~ the supper ընթրիք պատրաստել. (ուսման հետ կապված) ~ sums օրինակը/խնդիրը լուծել. ~ French ֆրանսերեն սովորել. ~ a crossword

խաչբառ լուծել. (դիտել, հաճախել) ~ the museum թատրոն գնալ. ~ Venice վենետիկում շրջագայել. ~ the journey ուղևորություն կատարել. ~ harm վնաս պատճառել. ~ Hamlet Համլետի դերը կատարել. (վարվել) ~ a man well մեկի հետ լավ վարվել. ~ oneself well իրեն բավականություն պատճառել. (պիտանի/հարմար լինել) It won't ~ to play all day Չի կարելի ամբողջ օրը խաղալ. This work won't ~ for him Այս աշխատանքը նրան հարմար չէ. (վերջացնել) It's all over and done with it Մեկընդմիջտ ավարտված է Let's have done with it Եկեք վերջ տանք դրան. You have been done Ձեզ խաբել են. ~ away ավարտել, վերջացնել. (խնդրանք, շեշտում) ~ tell us խնդրում են ասեք մեզ. I ~ want to go Ես շատ եմ ուզում գնալ. He is ~ing well Նրա գործերը լավ են գնում, Նա լավ է սովորում. This dress will ~ Այս հագուստը հարմար է. That will never ~ Դա ոչ մի բանի մեծան չէ. Roses ~ well in this climate Վարդերը այս կլիմայում լավ են աճում. be done for փչանալ, անպետքանալ. խնամել, հոգ տանել The shoes are done for Կոշիկները մաշվել են. I prefer ~ ing for myself ես գերադասում եմ ինքս անել. She ~es for me twice a week Նա շաբաթը երկու անգամ օգնում է ինձ տունը մաքրել. ~ in *խսկց.* վերջ տալ, սպանել. ~ smb in մեկին վերջ տալ. ~ out հավաքել, կարգի բերել. ~ out a room/a cupboard սենյակը/պահարանը կարգի բերել. ~ up փաթաթել. ~ up a parcel/one's shoe laces փաթեթավորել ծանրոցը, կոշիկների կապերը կապել. ~ with տանել, դիմանալ, հանդուրժել. the car could ~ with a wash մեքենան պետք է լվացվի. ~ without յուրա գնալ առանց որևէ բանի. Well done ! Կեցցե՛ս. *հմկրգ.* do-nothing instruction դատարկ հրահանգ. ~ statement ցիկլի օպերատոր. do-while loop ցիկլ շարունակ(վ)ելու պայմանով:

**do** [dəu:] *n երժշ.* դո ծայնանիշ:

**do-all** [ˈdɔ:ɔ:l] *n* ամեն բանի վարպետ:

**doc** [dɒk] *n խսկց. բժիշկ:*

**docile** [ˈdɔ:sail] *a* լսող, հնազանդ:

**docility** [dɔuˈsiləti] *n* հնազանդություն:

**dock** I [dɒk] *n* *բւր.* թրթնջուկ:

**dock** II [dɒk] *n* *իրավ.* մեղադրյալի աթոռ:

**dock** III [dɒk] *n* նավանորոգարան. դոկ. dry/

floating ~ չոր/լողացող նավանորոգարան.

put a ship in ~ նավը նորոգման կանգնեցնել:

**dock** I [dɒk] *v* (նավը) նավանորոգարան դնել/մտնել:

**dock** II [dɒk] *v* կտրել( պոչը). ~ a horse/a dog ծիու/շան պոչը կտրել. ~ one's hair մազերը կարճ կտրել. ~ wages *փխբ.* աշխատավարձից պահել/կրճատել:

**dockage** I [ˈdɒkɪdʒ] *n* նավանորոգարանից օգտվելու վճար:

**dockage** II [ˈdɒkɪdʒ] *n խսկց.* կրճատում:

**docker** [ˈdɒkə] *n* նավաշինարարի բանվոր, դոկեր:

**docket** [ˈdɒkɪt] *n* *իրավ.* դատական գործերի մատյան:

**dock-master** [ˈdɒk,mɑ:stə] *n* նավաշինարանի պետ:

**dock-yard** [ˈdɒkjɑ:d] *n* նավաշինարան:

**doctor** [ˈdɒktə] *n* բժիշկ. see the ~ բժշկին դիմել. send for a ~ բժշկի հետևից ուղարկել. (դոկտորի աստիճան) ~ of philosophy փիլիսոփայության դոկտոր. take ~ 's degree դոկտորի աստիճան ստանալ:

**doctor** [ˈdɒktə] *v* բժշկություն անել, բուժել. ~ a cold/a child մրսածությունը/երեխային բուժել. դոկտորի աստիճան շնորհել:

**doctoral** [ˈdɒktərəl] *a* դոկտորական. ~ thesis դոկտորական թեզ/դիսերտացիա:

**doctorate** [ˈdɒktərət] *n* դոկտորի աստիճան:

**doctrinal** [dɒkˈtraɪnəl] *a* դավանաբանական, դոգմատիկ:

**doctrine** [ˈdɒktrin] *n* ուսմունք. վարդապետություն. դոկտրին(ա). հավատ, համոզմունք, դավանանք:

**document** [ˈdɒkjumənt] *n* փաստաթուղթ, վավերագիր. secret/original/legal/official գաղտնի/ հսկական/իրավական/պաշտոնական փաստաթուղթ:

**document** [ˈdɒkjumənt] *v* փաստաթղթով հաստատել, վավերագրել. well ~ed փաստաթղթերով լավ հիմնավորված:

**documentary** [ˌdɒkjuˈmentəri] *a, n* փաստաթղթերի վրա հիմնված, վավերագրական. փաստագրական ֆիլմ:

**documentation** [ˌdɒkjumənˈteɪʃn] *n* փաստաթղթերով հիմնավորում/ձևակերպում:

**dodder** [ˈdɒdə] *n* *բւր.* դաղձ:

**dodder** [ˈdɒdə] *v* դողալ, դողողալ. ~ about/

along դժվարությամբ ոտքերը քարշ տալ:  
**doddery** [ˈdɒdəri] a դողացող, դողողջուն. a ~ old man հալից ընկած ծերուկ:  
**dodge** [dɒdʒ] n *խսկց.* հնարք, խորամանկություն. խուսափում. հարմարանք. a cunning ~ խորամանկ արարք. a good ~ for remembering հիշողության մեջ պահելու լավ հարմարանք/միջոց:  
**dodge** [dɒdʒ] v խուսափել, խույս/փախուստ տալ. խորամանկություն բանեցնել. ~ a blow հարվածից խուսափել. ~ the issue հարցին պատասխանելուց խույս տալ. ~ military service զինվորական ծառայությունից խուսափել. The boy ~d away Տղան խորամանկորեն ծլկեց:  
**dodger** [ˈdɒdʒə] n խորամանկ/ճարպիկ մարդ:  
**dodgy** [ˈdɒdʒi] a խորամանկ. ճարպիկ, ճարտար:  
**doe** [dəʊ] n էգ եղնիկ:  
**doer** [ˈduːə] n կատարող, գործող, իրագործող. անող:  
**doeskin** [ˈdəʊskɪn] n եղջերվի կաշի, գամշ:  
**dog** [dɒɡ] 1. n շուն, որձ շուն. faithful/fierce/pedigreed ~ հավատարիմ/կատաղի/ցեղական շուն. watch/guard/hunting ~ պահապան/որսի շուն. ~ fox/wolf որձ աղվես/զայլ. stray ~ թափառող շուն. lucky ~ *խսկց.* հաջողակ/բախտավոր մարդ. a gay ~ ուրախ տղա. a dirty ~ անպետք/ստոր մարդ. hot ~s նրբերշիկով բուտերբրոդ. lead a ~'s life շան կյանք վարել. lead smn a ~'s life մեկին քթից բռնած ման տալ, հանգստություն չտալ. Let sleeping ~s lie Շանը քար մի գցիր, Շանից հեռու. go to the ~s կործանվել, սնանկանալ. շան փայ դառնալ. a ~ in the manger պարտիզպանի շունը. ~s of war պատերազմի սարսափներ. ~ tired շան պես հոգնած. Every ~ has his day Մենք էլ մի օր կուրախանանք. 2. v մեկին կրնկակոխ հետևել/հետապնդել:  
**dog-cart** [ˈdɒɡkɑ:t] n երկանիվ/միածի կառք:  
**dog-cheap** [ˈdɒɡtʃi:p] a, adv չափազանց էժամ:  
**dog-collar** [ˈdɒɡ.kɒlə] n շների վզնոց:  
**dog-days** [ˈdɒɡdeɪz] n pl ամառվա ամենաշոգ օրերը:  
**dog-eared** [ˈdɒɡiəd] a եզրերը ծալծված. a

~ book ծալծված եզրերով գիրք:  
**dogged** [ˈdɒɡd] a համառ, կամակոր:  
**doggerel** [ˈdɒɡrəl] n վատ /անշնորհք ոտանավոր:  
**doggie** [ˈdɒɡi] n շնիկ:  
**doggish** [ˈdɒɡɪʃ] a շնային, շնական, շան:  
**doggy** [ˈdɒɡi] n *տե'ս* **doggie**.  
**dog-hole** [ˈdɒɡhəʊl] n շնաբույն. *փխբ.* խցիկ:  
**dog-lead** [ˈdɒɡli:d] n շան վզափոկ:  
**dog-rose** [ˈdɒɡrəʊz] n վայրի վարդ, մասուր:  
**dog-skin** [ˈdɒɡskɪn] n նուրբ կաշի, լայքա:  
**dog-sleep** [ˈdɒɡslɪ:p] n անհանգիստ/թեթև քուն:  
**dog-tooth** [ˈdɒɡtu:θ] n շնատամ:  
**dog-violet** [ˈdɒɡ.vaiələt] n վայրի մանուշակ:  
**doing** [ˈduːɪŋ] n pl գործեր, արարքներ. վարմունք, արարմունք. It's all his ~s Այդ բոլորը նրա գործերն են. It will take some ~ Կարիք կլինի մի քիչ չարչարվել. Tell me about your ~s Պատմեք ձեր գործերի մասին:  
**dole** I [dəʊl] n նպաստ, նյութական օգնություն, be on the ~ գործազրկության նպաստ ստանալ:  
**dole** II [dəʊl] n *բնստ.* վիշտ, թախիծ:  
**dole** [dəʊl] v փոքր նպաստ տալ, նյութապես օգնել. ~ out բաժանել:  
**doleful** [ˈdəʊfl] a վշտալի, թախծոտ. մեղամաղձոտ:  
**doll** [dɒl] n տիկնիկ, աղջնակ. ~'s house տիկնիկային տուն:  
**doll** [dɒl] v գուգ(վ)ել, զարդար(վ)ել:  
**dollar** [ˈdɒlə] n դոլար:  
**dollish** [ˈdɒliʃ] a տիկնիկային, տիկնիկանման:  
**dollop** [ˈdɒləp] n *խսկց.* մեծ կտոր:  
**dolly** [ˈdɒli] n փոքրիկ տիկնիկ, պուպրիկ:  
**dolorous** [ˈdɒləərəs] a *բնստ.* տխուր, թախծոտ, թախծալի:  
**dolour** [ˈdɒlə] n *բնստ.* թախիծ, տխրություն, վիշտ:  
**dolphin** [ˈdɒlfɪn] n *կենդ.* դելֆին:  
**dolt** [ˈdɒlt] n հիմար, տխմար, ապուշ:  
**doltish** [ˈdɒltɪʃ] a բթամիտ, ցանցառ:  
**domain** [dəʊˈmeɪn] n տիրապետություն, տիրույթ. *փխբ.* բնագավառ, ասպարեզ. in the ~ of science գիտության բնագավառում. *հմկրգ.* ~ object առարկայական տիրույթի օբյեկտ. ~ of integrity անբողջականության

տիրույթ. ~ expert առարկայական տիրույթի մասնագետ:

**dome** [dəʊm] n գմբեթ, կամար. *փխք.* երկնակամար:

**domed** [dəʊmd] գմբեթանման, գմբեթաձև:

**domestic** [dəˈmestɪk] n *նաև* ~s ծառա, սպասավոր:

**domestic** [dəˈmestɪk] a ընտանեկան, տնային. ~ troubles/dispute ընտանեկան տհաճություններ/վեճ. ~ service/science տան/տնային աշխատանք, տնավարություն. ~ violence բռնություն ընտանիքի անդամների նկատմամբ. ~ animals ընտանի կենդանիներ. (ներքին, հայրենական) ~ economy ներպետական տնտեսություն. ~ affairs of the country երկրի ներքին գործերը. ~ goods/production հայրենական ապրանքներ/արտադրանք. ~ trade/market ներքին առևտուր/շուկա:

**domesticate** [dəˈmestɪkeɪt] v ընտելացնել, մշակել. ընտանեկան կյանքին կապել:

**domestication** [dəˈmestɪˈkeɪʃn] n ընտելացում (կենդանիների). սեր դեպի տունը/ընտանեկան կյանքը:

**domesticity** [ˌdɒmɪˈstɪsətɪ] n ընտանեկան կյանք. ընտանեկանություն:

**domicile** [ˈdɒmɪsaɪl] n տուն, բնակարան. բնակության մշտական վայր. legal ~ օրինական հասցե:

**dominance** [ˈdɒmɪnəns] n տիրապետություն, իշխանություն. իշխում, գերիշխում. ազդեցություն:

**dominant** [ˈdɒmɪnənt] a իշխող, տիրապետող. գլխավոր, հիմնական. գերիշխող. the ~ partner գլխավոր /հիմնական խաղընկեր, գործընկեր. the ~ idea գերիշխող գաղափարը. a ~ influence հիմնական ազդեցություն:

**dominate** [ˈdɒmɪneɪt] v իշխել, տիրել, ազդեցություն ունենալ. completely ~ տիրապետող ազդեցություն:

**domination** [ˌdɒmɪˈneɪʃn] n տիրապետություն, իշխանություն, իշխում, գերիշխում, գերակշռում:

**domineer** [ˌdɒmɪˈniə] v իշխել, կառավարել, բռնաճալ:

**domineering** [ˌdɒmɪˈniəriŋ] a իշխող, տիրող:

**dominion** [dəˈmɪnjən] n իշխանություն. *քղք.* դոմինիոն:

**domino** [ˈdɒmɪnoʊ] n դիմակահանդեսի զգեստ, դոմինո. դոմինո (խաղ):

**don** [dɒn] n դոն (խապանական տիտղոս). դոն, ՄԲ համալսարանի դասախոս:

**donate** [dəʊˈneɪt] v նվիրել, նվիրաբերել:

**donation** [dəʊˈneɪʃn] n նվիրաբերություն. նվեր, նվիրատվություն:

**donatory** [dɒnətəri] 1. n նվեր ստացող անձ. 2. a նվիրատվական, նվիրաբերումի:

**done** [dʌn] a կատարած. լավ պատրաստած/տապակած. The meat is well ~ Միսը լավ է տապակած: (հոգնած, հալից ընկած) The device is ~ (for) Սարքը լրիվ մաշվել է. I'm ~ in Պարզապես սպառվել եմ:

**donkey** [ˈdɒŋki] n էշ, ավանակ. ~'s years շատ վաղուց, երկար տարիներ:

**donnish** [ˈdɒniʃ] a մանրակրկիտ, բժախնդիր. գոռոզ, ինքնահավան:

**donor** [ˈdɒnə] n նվիրատու, նվիրաբերող. *բժշկ.* արյունատու, դոնոր:

**do-nothing** [ˈduːnʌθɪŋ] n ծուլ/անբան մարդ:

**doom** [duːm] n ճակատագիր, կործանում:

**doom** [duːm] v դատապարտել, մատնել. ~ed to failure ծախողման դատապարտված:

**doomsday** [ˈduːmzdeɪ] n *կրոն.* Ահեղ դատաստանի օրը. wait till ~ անվերջ սպասել:

**door** [dɔː] n դուռ. front/back ~ գլխավոր/հանդիսավոր դուռ. հետևի դուռ. sliding ~ շարժական դուռ. emergency ~ պահեստի ելք. live next ~ հարևան/կողքի տանն ապրել. next ~ to շատ մոտ, կողքին. open a ~ to/close the ~ upon դուռը բացել/փակել մեկի /մի բանի, վրա. *փխք.* հնարավոր/անհնարին դարձնել. out of ~s դուրսը, բացօթյա. within ~s ներսը, շենքում. from ~ to ~ դռնից-դուռ. knock at the ~ դուռը թակել. show smb the ~ մեկին դուռը ցույց տալ/դուրս անել. show to the ~ մինչև դուռը ճանապարհել. ~ game կրկնակի խաղ. ~s to fame փառքի դուռը/ճանապարհը. French ~ ապակեպատ դուռ. death's ~ մահվան շեմին:

**door-bell** [ˈdɔːbel] n դռան զանգ:

**door handle** [ˈdɔːhændl] n դռան բռնակ:

**door-keeper** [ˈdɔːkiːpə] n դռնապան:

**door-mat** [ˈdɔːmæt] n ուղեգորգ, ուղեխաթ:

**door-plate** [ˈdɔːpleɪt] n դռան վրայի տախտակ (անուն, ազգանուն և այլն):

**door-post** [ˈdɔːpəʊst] n դռան կողափայտ:



**door-step** [ˈdɔːstɛp] n շենք, դռան աստիճան:

**door-stone** [ˈdɔːstəʊn] n շենքի քար:

**door-way** [ˈdɔːweɪ] n դուռ, մուտք, դռան անցք. meet at the ~ դռան մոտ դիմավորել:

**dope** [dəʊp] n թանձր յուղ, քուլք. թմրադեղ. *մարզ.* գրգռամիջոց. *դոփինգ.* *խսկց.* տեղեկություն Give me the ~ Ինձ տեղյակ պահեք:

**dope** [dəʊp] v թմրադեղ տալ/օգտագործել. թմրեցնել. ~ a horse/a runner *մրզ.* ձիուն/վազորդին դոփինգ տալ:

**dop(e)y** [ˈdɔːpi] a *խսկց.* թմրած, արբեցած. թմրեցնող:

**dormancy** [ˈdɔːmənsi] n միջուկ, միջոց. կիսաքուն վիճակ:

**dormant** [ˈdɔːmənt] a ննջած, քնած. *կենս.* ձմեռվա քուն մտած. *փխբ. հրավ.* չհայտարարված, չգործող. Bears are/ lie ~ in winter Ձմռանը արջերը քուն են մտնում. ~ capital *փխբ.* մեռած կապիտալ. ~ volcano քնած հրաբուխ. let the matter lie ~ գործը հետաձգել/քնեցնել:

**dormer** [ˈdɔːmə] n (*նաև* ~ window) ձեղնահարկի լուսամուտ:

**dormitory** [ˈdɔːmətri] n ընդհանուր մնջարան/մնջասենյակ. փակ/գիշերօթիկ դպրոց. հանրակացարան:

**dorp** [dɔːp] n գյուղակ:

**dorsal** [ˈdɔːsɪ] a *կզմ/ս.* թիկնային, մեջքային, դորսալ:

**dosage** [ˈdɔːsɪdʒ] n դեղաքանակ, դոզա. դեղաքանակի որոշում, չափավորում:

**dose** [dɔːs] n դոզա, դեղաքանակ. բաժին, չափ. regular ~ կանոնավոր/տվորական դոզա. lethal ~ մահացու դեղաքանակ. increase the ~ դոզան ավելացնել:

**dose** [dɔːs] v դեղ տալ. դոզան որոշել. ~ with aspirin ասպիրին տալ:

**doss** [dɒs] n *խսկց.* մահճակալ:

**doss** [dɒs] v գիշերել. ~ down for the night գիշերելու տեղ գտնել:

**doss-house** [ˈdɒshaus] n օթևանատուն:

**dossier** [ˈdɒsiɛi] n դոսյե, որևէ գործի/անձի վերաբերող փաստաթղթեր:

**dot** [dɒt] n կետ. շատ փոքր/մանր բան. a ~ of a child փոքրիկ երեխա, մանկիկ. ~s and dashes կետեր և գծիկներ:

**dot** [dɒt] v կետ դնել. կետագծել, կետանշել. a black ~ in the sky սև կետ երկնքում: ~ted

line կետագիծ. ~ the i's and cross the t's ճշգրտել, ընդգծել ամենաէականը. *հմկրգ.* ~ matrix կետային մատրից:

**dotage** [ˈdɔːtɪdʒ] n ծերունական թուլամորթություն. be in one's ~ երեխա դառնալ, (ծերությունից) խելքը թռցնել:

**dote** [dɔːt] v մանկանալ, (ծերությունից) երեխա դառնալ. խենթի պես սիրել. She ~s on her grandson Նա ամսահման սիրում է իր թոռանը:

**dotting** [ˈdɔːtɪŋ] a շատ սիրող, նվիրված:

**dotted** [ˈdɒtɪd] a կետավոր, կետագծային. ~ line կետագիծ, կետավոր գիծ:

**dotty** [ˈdɒti] a կետավոր, կետ-կետ. *խսկց.* խելքը թռցրած. ցնդած. She's a little ~ Նա մի քիչ ցնդած է:

**double** [ˈdʌbl] 1. a կրկնակի, երկտակ, զույգ. ~ layer/blow/quantity կրկնակի շերտ/հարված/քանակություն. live a ~ life երկակի կյանք ապրել. He is ~ my age Նա իմ կրկնակի տարիք ունի. ~ meaning կրկնակի նշանակություն. a ~ room երկտեղանոց սենյակ. ~ tooth/whisky սեղանատամ. կրկնակի բաժին վիսկի. ~ coat of paint ներկի երկու շերտ. 2. adv կրկնակի, երկու անգամ see ~ աչքին երկուս երևալ. play ~ երկերեսանիություն անել. ~ as bright երկու անգամ ավելի/կրկնակի լուսավոր. pay ~ երկու անգամ ավելի/կրկնակի վճարել:

**double** [ˈdʌbl] n կրկնակի քանակություն. զույգ, մանակ. be the ~ of smn մեկի մանակը լինել. (թեմիս) ~s զուգախաղ. ~ side-line կողային գիծ զուգախաղի համար. mixed ~s խառը զույգեր. men's ~s տղամարդկային զույգեր. *թատ.* փոխարինորդ, դուբլյոր. *հմկրգ.* ~-click կրկնակի հարված/մատնագարկ. ~ precision number կրկնակի ճշտությամբ թիվ. ~ addition կրկնակի ճշտությամբ գումարում:

**double** [ˈdʌbl] v կրկնապատկել. կրկն(վ)ել. երկուտակել. ~ efforts/income/expense doze ճիգերը/եկամուտը/ծախսերը/դոզան կրկնապատկել. The population has ~d բնակչությունը կրկնապատկվել է. ~ up with pain *փխբ.* ցավից կծկվել/կուչ գալ. ~ the part of *թատր.* դերը կրկնօրինակել. ~ back մույն ճանապարհով/հետքերով վերադառնալ:

**double-barrelled** [ˈdʌbl ˈbærəld] a երկփողանի. a ~ gun երկփողանի հրացան:

**double-bass** [ˌdʌbl'beɪs] n *երժշ.* կոնտրաբաս:  
**double-bedded** [ˌdʌbl'bedɪd] a երկտեղանի/սենյակ/մահճակալ:  
**double-breasted** [ˌdʌbl'breɪstɪd] a երկեզր, երկլանջեզր. a ~ jacket երկլանջեզր պիջակ:  
**double-cross** [ˌdʌbl'krɒs] v *խսկց.* խաբել:  
**double-dealer** [ˌdʌbl'di:lə] n խաբեբա, երկերեսանի մարդ:  
**double-dealing** [ˌdʌbl'di:lɪŋ] n երկերեսանիություն, կեղծավորություն:  
**double-decker** [ˌdʌbl'dekə] n երկհարկ ավտոբուս:  
**double-edged** [ˌdʌbl'edʒd] երկսայրի, երկբերան:  
**double entry** [ˌdʌbl'entri] n կրկնակի հաշվապահություն:  
**double-eyed** [ˌdʌbl'aɪd] a սրատես:  
**double-faced** [ˌdʌbl'feɪst] a երկերեսանի, երկդիմի, կեղծավոր:  
**double-natured** [ˌdʌbl'neɪtʃəd] a երկակի, երկդիմի:  
**double-quick** [ˌdʌbl'kwɪk] a շատ արագաշարժ:  
**double-spacing** [ˌdʌbl'speɪsɪŋ] n երկու ինտերվալ (տպագրելու ժամանակ):  
**doublet** [ˌdʌblɪt] n կրկնակ. կրկնօրինակ. դուբլետ. (ռադիո) երկբևեռ անտեննա:  
**double talk** [ˌdʌbl'tɔ:k] n կեղծ/կեղծավոր խոսակցություն:  
**doubly** [ˌdʌblɪ] adv կրկնակի, կրկնապատիկ. be ~ careful կրկնակի ուշադիր լինել:  
**doubt** [daʊt] v կասկածել, տարակուսել, չվստահել. վարանել. There is no ~ կասկած չկա, անկասկած. beyond/without ~ կասկածից վեր, անկասկած. some/grave ~s որոշ/լուրջ կասկածներ. raise a ~ կասկած առաջացնել. throw ~ on կասկածի տակ դնել. settle one's ~s կասկածը փարատել. make ~s կասկածել. make no ~s համոզված լինել, չկասկածել. ~ the truth of smth/the facts կասկածի տակ առնել ճշմարտությունը/փաստերի իրողությունը. very much ~ smth խիստ կասկածել. I ~ed him all along ես ամբողջ ժամանակ կասկածում էի նրան:  
**doubtful** [ˌdaʊtfl] a կասկածանքով լի, անպարզ, կասկածելի. a ~ character կասկածելի տիպ. The weather looks ~ եղանակի վրա

հույս չի կարելի դնել. (that's) a ~ blessing երկսայրի սուր, երկակի վախճան:  
**doubtless** [ˌdaʊtləs] adv անկասկած, անտարակույս, անշուշտ. հավանորեն, հավանաբար:  
**dough** [daʊ] n խմոր. բանձր զանգված. *ամ., խսկց.* փող. rich ~ ամոքահունց/համեղ խմոր. unleavened ~ անխաշ/չեկած/անթթխմոր խմոր:  
**doughnut** [ˌdaʊnʌt] n փոքրիկ կարկանդակ. բլիթ, պոնչիկ:  
**doughtily** [ˌdaʊtɪli] adv արիաբար, խիզախորեն:  
**doughy** [ˌdaʊi] a խմորանման, թերաթուխ:  
**dour** [daʊ] a խիստ, մռայլ, խոժոռ:  
**dove** [dʌv] n աղավնի. D~ of peace խաղաղության աղավնի. *փղթ.* աղավնյակս, հոգյակս, սիրելիս. *Մակ* my ~:  
**dove-colour** [ˌdʌv,kʌlə] n թխագորշ, գորշակապույտ գույն:  
**dove-cot(e)** [ˌdʌvkəʊt] n աղավնատուն:  
**dove-eyed** [ˌdʌv'aɪd] a անմեղ տեսքով, մեղմաչյա:  
**dove-like** [ˌdʌvlaɪk] a հեզ, մեղմ:  
**doveling** [ˌdʌvɪŋ] n աղավնյակ, աղավնու ծագ:  
**dowager** [ˌdaʊədʒə] n (տիտղոսավոր անձի) այրի կին. the Queen ~ այրի թագուհի:  
**dowdy** [ˌdaʊdi] a անճաշակ, անճոռնի, փնթի. a ~ woman անճաշակ կին. ~ clothes անճաշակ/անճոռնի հագուստ:  
**dower** [ˌdaʊə] n այրու օրինական բաժին. օժիտ. բնածին տաղանդ:  
**down** I [daʊn] n աղվամազ, աղվափետուր:  
**down** II [daʊn] n բլուր, բլրավայր, ավազաբլուր:  
**down** III [daʊn] n վայրէջք, գառիվայր. ups and ~s *փղթ.* վերելք և վայրէջք (կյանքի). բախտի փոփոխականություն. have a ~ on smb նեղանալ, ջղայնանալ. ~ payment կանխավճար:  
**down** [daʊn] adv ներքև, դեպի ցած. ներքևում, ցածի մասում. go ~ (in the lift) /վերելակով ներքև իջնել. go ~ south հարավ գնալ. go ~ to the country գյուղ գնալ. The aeroplane is ~ *հնքնաթիռը* վայրէջք է կատարել. He's just come ~ from Oxford *Նա* հենց նոր ավարտել է Օքսֆորդը, Օքսֆորդից արձակուրդ է եկել. *մրգ.* be ~ and out

նոկաուտի մեջ լինել. be one ~ մի միավոր պակաս ունենալ. (քանակի պակասում, նվազում) bring ~ the price գինը պակասեցնել. boil ~ եռալով պակասել. The temperature is much ~ Ջերմաստիճանը զգալի չափով նվազել է. be ~ թուլանալ. calm ~ հանգստանալ, հանդարտվել. Demand is ~ Պահանջարկը նվազել է. ~ with flue գրիպով հիվանդ/պառկած լինել. ~ in black and white սևով սպիտակի վրա գրված լինել. come ~ on one հարծակվել. be (a bit) ~ վատ տրամադրության մեջ լինել. hand ~ սերնդից սերունդ փոխանցել. (ժամանակ, ընդհուպ մինչև) ~ to the present time մինչև այժմ/այսօր. read ~ to the last մինչև վերջին էջը կարդալ. ~ to the time of Shakespeare ընդհուպ մինչև Շեքսպիրի ժամանակաշրջանը. D~ with! Կորչի!:

**down** [daun] prep. ներքև, ուղղությամբ, ընթացիկ. look ~ ցած նայել. walk ~ hill բլրից ցած/ներքև իջնել. ~ the river գետի հոսանքի ուղղությամբ. ~ thr road ճանապարհի երկայնքով. go ~ town քաղաքի կենտրոն գնալ. ~ wind քամու ուղղությամբ. up and ~ վեր ու վար, ետ ու առաջ:

**down** [daun] v իջնել, իջեցնել. հնազանդեցնել, ենթարկել. հաղթել, հաղթահարել. ~ tools աշխատանքը դադարեցնել. (կուլ տալ) ~ the medicine/food դեղը/ուտելիքը կուլ տալ. ~ a glass of beer մի բաժակ գարեջուր կուլ տալ:

**downcast** ['daunkɑ:st] a գետին հառած/խոնարհված(հայացք). with ~ eyes/look աչքերը/հայացքը գետնին հառած/խոնարհված. (ընկճված, վիատված) with a ~ expression ընկճված տեսքով. be ~ ընկճված/վիատված լինել:

**downfall** ['daunfɔ:l] n տեղատարափ, հորդ անձրև. ուժեղ ձյուն. (անկում, կործանում) His ~ was due to gambling Նրա անկման/կործանման պատճառը խաղամոլությունն էր:

**downgrade** ['daungeid] v պաշտոնը իջեցնել:

**down-hearted** [,daun'ha:tid] a վիատված, հուսալքված, տրտում. Don't be ~ Մի վիատվիր:

**down-hill** [,daun'hil] 1. a թեք, զառիվայր. 2. v. բլուրն/սարն ի վայր. go ~ նաև փխբ. վատանալ, վատթարանալ. The firm/business

is going ~ Ֆիրմայի գործերը վատթարանում են. My grandfather is going ~ փխբ. Պապիկս տեղի է տալիս/տկարանում է:

**downpour** ['daunpɔ:] n հեղեղ, տեղատարափ:

**downright** ['daunrait] a անկեղծ, շիտակ. ~ nonsense բացահայտ/ակնհայտ հիմարություն. a ~ lie բացարձակ սուտ:

**downstairs** [,daun'steəz] 1. adv ներքև, ցած. go/come ~ (աստիճաններով) ներքև իջնել. (ներքևում, ներքևի հարկում.) be/wait ~ ներքևում լինել/սպասել. live ~ ներքևի/առաջին հարկում ապրել. fall ~ աստիճաններից վայր ընկնել. 2. a ներքևի հարկում գտնվող:

**downstream** [,daun'stri:m] adv հոսանքն ի վայր, հոսանքի ուղղությամբ:

**downtown** [,daun'taun] n (ԱՄՆ) քաղաքի կենտրոն/գործարար մաս:

**downtrodden** ['dauntrɒdn] a ոտնակոխ արված, ճնշված. a bit ~ մի քիչ/փոքր ճնշված:

**downward** ['daunwəd] a վարընթաց իջնող. a ~ slope/path վարընթաց/ներքև տանող արահետ. a ~ tendency նվազելու/իջնելու հակում:

**downwards** ['daunwədz] adv ներքև, դեպի վար/ցած. face ~ երեսնիվայր:

**downy** ['dauni] a աղվամազ, փափկամազ:

**dowry** ['dauri] n օժիտ. bring ~ to one's marriage օժիտ բերել:

**doze** [dɔuz] n մինջ, միրի. կիսաքուն վիճակ. have a ~ մնջել:

**doze** [dɔuz] v մնջել, միրիել. ~ off in the chair բազկաթոռի մեջ միրիել:

**dozen** ['dɒzn] n դյուզին (12հատ). by the ~s դյուզիններով. ~s մեծ քանակություն. ~s of people մեծ քանակությամբ ժողովուրդ. baker's/devil's ~ 13 հատ. ~s of times հարյուր/հազար անգամներ. talk 19 to the ~ փխբ. շատախոսել, չաչանակել:

**dozy** ['dɔuzi] a քնած, թմրած, միրիող:

**drab** [dræb] a գորշ, մռայլ. դժգույն. wear ~ colours գորշ հագուստներ կրել. Life's very ~ Կյանքը շատ միապաղաղ/տաղտուկ է:

**drab** [dræb] n գորշ դարչնագույն. գորշություն. միապաղաղություն:

**drabble** ['dræbl] v ցեխտ(վ)ել, թրջ(վ)ել:

**draff** [dræf] n կեղտաջուր, խոզի կեր. անպետք մնացորդ:

**draft** [dra:ft] n գծագիր, ուրվագիծ, պլան, հատակագիծ, նախագիծ. *ռզմ.* զորակոչ. *ֆին.* չեկ, չեկով ստացած դրամ. միջանցիկ քամի, օդի հոսանք. a rough ~ սևագիր օրինակ. a rough ~ of speech/letter/plan ելույթի/նամակի/հատակագծի ուրվագիծ. The work is ready in ~ Աշխատանքի սևագիր օրինակը պատրաստ է. a final/corrected ~ վերջնական/մաքրագիր օրինակ. a ~ bill /contract *իրավ.*, *քղբ.* օրենքի/պայմանագրի նախագիծ:

**draft** [dra:ft] v նախագիծ/հատակագիծ կազմել. ուրվագծել, սևագրություն անել. զորակոչել. ~ the letter /a contract նամակի/պայմանագրի նախագիծը կազմել. be ~ed into the army զորակոչվել:

**drafter** [dra:'fʌ:tə] n *ամ.* զորակոչիկ:

**draft-horse** ['dra:ftɔ:s] n բեռնատար ձի:

**draftsman** ['dra:ftsmən] n գծագրիչ, գծագրող. օրինագծեր կազմող:

**drag** [dræg] n ծանր ցաքան. արգելակ. դանդաղում. բեռ, ծանր պարտականություն:

**drag** [dræg] v քաշել, քարշել, ձգել, քարշ գալ. ~ one's feet ոտքերը քարշ տալ. ~ the car մեքենան բուքսիրով քաշել. ~ apart իրարից բաժանել. ~ away(from the window)/ պատուհանից /ետ քաշել. ~ ged down (by the current) հոսանքով ցած տարվել. քաշվել. ~ out դուրս քաշել. ~ out the box արկղը դուրս քաշել. ~ smn off to the *խսկց.* հազիվ մի տեղ քարշ տալ. ~ behind the others մյուսների հետևից քաշ գալ. The case ~ged on գործը ձգձգվում էր. The days/years ~ged by Օրերը/Տարիները ձգվում էին:

**draggle** ['drægl] v քաշ/քարշ գալ. ցեխտուվել:

**drag-net** ['dræɡnet] n փոքրիկ ուռկան:

**dragoman** ['dræɡəmən] n թարգման (Արևելքում):

**dragon** ['dræɡən] n առասպելական թևավոր վիշապ, դրակոն:

**dragon-fly** ['dræɡənflai] n ճպուռ:

**drain** [drein] n ջրատար/դրենաժային խողովակ. the ~s կոյուղու խողովակ, ջրատար առու. The ~ is blocked խողովակը խցանված է. *փխբ.* a ~ on one's health առողջության քայքայման պատճառ a ~ on country's resources երկրի միջոցների սպառում. the brain ~ ուղեղների հոսք արտասահման/արտահոսք:

**drain** [drein] v չորացնել, ցամաքեցնել. ~ swamps ճահիճներ չորացնել. ~ a wound *բժշկ.* վերքը դրենաժել. (դատարկել, պարպել) ~ water from a bottle ջուրը շիջ դատարկել. be ~ed of energy եռանդը սպառվել. The river ~s into the sea Փետը թափվում է ծովը. leave the dishes to ~ ամանները չորացնել. թողնել, որ չորանա:

**drainage** ['dreinidʒ] n ցամաքեցում, չորացում. դրենաժ. կոյուղի, կեղտաջուր. *բժշկ.* դրենաժ:

**drainage-basin** ['dreinidʒ,beisn] n գետի ավազան:

**drainer** ['dreinə] n չորացնող սարք. dish ~ ամանեղեն չորացնող սարք:

**drake I** [dreik] n ործ/արու բադ:

**drake II** [dreik] n փոքրիկ խարխուլ:

**dramatic** [drə'mætik] a դրամատիկական, դրամատիզմով լի. *փխբ.* ազդեցուցիչ. ~ changes զգալի փոփոխություններ:

**dramatics** [drə'mætiks] n դրամատիկական արվեստ/երկ. ներկայացում:

**dramatis personae** [dræmætispə:'səunai] n *թատր.* գործող անձինք:

**dramatist** ['dræmætist] n դրամատուրգ, թատերագիր:

**dramatize** ['dræmətəiz] v դրամայի վերածել. բեմականացնել:

**drape** [dreip] v զարդարել. վարագուրել (կտորեղենով, գորգերով և այլն) փաթաթվել. ~ a blanket round oneself ծածկոցով փաթաթվել:

**draper** ['dreipə] n կտորեղեն վաճառող:

**drapery** ['dreipəri] n կտորեղեն. կտորեղենի խանութ. ծալագարդարանք (կտորեղենով, վարագույրներով). ~ department կտորեղենի բաժին:

**drastic** ['dræstik] a կտրուկ, սուր. խիստ. ~ measures խիտ/կտրուկ միջոցներ. ~ changes արմատական փոփոխություններ. ~ reductions հսկայական զեղչ:

**draught** [dra:ft] n միջանցիկ քամի, միջանցահով. ձգողություն, օդաքարշություն. *բժշկ.* հեղուկ դեղի դոզա. *ծով.* նավի նստվածքը ջրում. ջրատարողություն. sit in a ~ միջանցիկ քամու մեջ նստել. ~s տամա(յա)խաղ. (կում, ումպ) at one ~ մի կումով. drink at a ~ մի շնչով խմել:

**draught beer** ['dra:ftbiə] n տակառի գարեջուր:

**draughtboard** [ˈdra:ftbɔ:d] **n** տամախաղի/զծագրական տախտակ:

**draughtsman** [ˈdra:ftsmən] **n** տամա (խաղաբար):

**draw** [drɔ:] **n** քաշում, ձգում, լարում. վիճակահանում. *մրգ.* ոչ ոքի խաղ. *մրգ.* մրցաշարի խաղացանց. *շին.* կամուրջի բացվող մասը. ~ tampering խաղացանցի ոչ օրյեկտիվ կազմում. main ~ հիմնական խաղացանց. The game ended in a ~ *խաղը ոչ ոքի ավարտվեց.* (խայծ, հրապուրիչ բան) The new play is a great ~ *Նոր ներկայացումը մեծ քանակությամբ հանդիսատես է գրավում:*

**draw** I [drɔ:] **v** քաշել, ձգել, քաշ տալ. ~ a boat/cart *նավակ/սայլ քաշել/քաշ տալ.* ~ the curtain *վարագույրը բացել.* ~ blinds *վարագույրը հջեցնել.* ~ a bow *աղեղը ձգել.* ~ a knot *հանգույցը ձգել.* ~ oneself up *ձգվել.* His face was ~n *Դեմքը ձգվեց/լարվեց.* (շունչ) *քաշել* ~ a deep breath *խորը շունչ քաշել.* stop to ~ a breath *կանգ առնել շունչ քաշելու համար.* ~ the first/last breath *ծնվել, մեռնել.* (դուրս քաշել, հանել, հեռացնել) ~ nails *մեխերը հանել/դուրս քաշել.* ~ a cork *խցանը հանել.* ~ a tooth *ատամը քաշել.* ~ water from a well *ջրհորից ջուր հանել.* ~ money from the bank *բանկից փող հանել.* ~ money for expenses *ծախսերի համար փող վերցնել.* ~ one's salary *աշխատավարձը ստանալ.* ~ up a cheque *վճարագիր դուրս գրել.* (կազմել) ~ up a contract *պայմանագրի նախագիծ պատրաստել.* (հետևեցնել, եզրակացնել) ~ a conclusion *եզրակացություն անել.* ~ a distinction/comparison *տարբերակում դնել, զուգահեռ անցկացնել.* ~ a lesson *դաս քաղել.* ~ applause *ծափեր վաստակել/առաջացնել.* ~ a tear *արցունք առաջացնել.* ~ attention *ուշադրություն գրավել.* ~ a large audience *մեծ լսարան գրավել.* He felt ~n to *Նրան դա ձգում էր.* ~ lots *վիճակ հանել.* ~ a prize/a blank in a lottery *վիճակախաղում հաջողակ/դատարկ տոմս հանել.* (նկարել, գծել) ~ a cat/a plan/a map *կատու նկարել, պլան գծել, գիծ քաշել.* *ծով.* *նստվածք ունենալ* The ship ~s 40 feet *Նավն ունի 40 ոտնաչափ նստվածք.* (թրմել, դուրս տալ) let the tea ~ *թողնել թեյը թրմի.* (օդաքարշություն ունենալ, քաշել) The chimney ~s well *Ծխնելույզը լավ է քաշում.* The stove won't draw *Վառարանը չի ձգում.* ~ level with *հավասարվել.* *մրգ.*

ոչ ոքի. They drew *Ոչ ոքի խաղացին.* ~ ahead *մրգ.* *առաջ անցնել.* ~ aside *մի կողմ տանել/քաշել.* He drew me aside *Նա ինձ մի կողմ տարավ.* ~ back *հետ գնալ/քաշվել/տանել* ~ in *ներս քաշել.* կարճամալ. The days are ~ing in *Օրերը կարճանում են.* ~ near *մոտենալ.* Spring is ~ing near *Գարունը մոտենում է.* ~ out *դուրս քաշել/բերել.* հանել, երկարել. Days are ~ing out *Օրերը երկարում են.* ~ up *քաշել, ձգել.* ~ up a boat *նավակը ափին մոտեցնել/մոտ քաշել:*

**draw** II [drɔ:] **v** գծել, նկարել. նախագիծ/փաստաթուղթ կազմել:

**drawback** [ˈdrɔ:bæk] **n** թերություն, պակասություն. the chief ~ *հիմնական թերությունը.* աննպաստ դրություն:

**drawbridge** [ˈdrɔ:bridʒ] **n** բացվող/բարձրացվող կամուրջ:

**drawer** I [ˈdrɔ:ə] **n** դարակ, գգրոց. upper/bottom ~ *վերևի/ներքևի դարակ.* pull out/in a ~ *դարակը դուրս քաշել/ներս տանել:*

**drawer** II [ˈdrɔ:ə] **n** վճարագիր տվող անձ:

**drawers** [ˈdrɔ:z] **n** pl վարտիք, անդրավարտիք (տղամարդու):

**drawing** [ˈdrɔ:ɪŋ] **n** նկարչություն, գծագրություն. *տեխ.* *նկար, գծագիր.* ~ board *գծագրական տախտակ.* ~ paper *գծագրելու/նկարչության թուղթ.* ~ pin *սևեռակ, սևեռագամ.* կոճգամ. ~ pen *գծաքաշ, ռեյսֆեդեր:*

**drawing-block** [ˈdrɔ:ɪŋblɒk] **n** նկարչական տետրակ:

**drawing-room** [ˈdrɔ:ɪŋru:m] **n** հյուրասենյակ:

**drawl** [drɔ:l] **n** դանդաղախոսություն. ծորան արտասանություն. He ~s *Նա բառերը ձգելով է խոսում:*

**drawl** [drɔ:l] **v** դանդաղորեն խոսել, ծորանով արտասանել:

**drawn** [drɔ:n] **a** չվճռված, չորոշված. ոչ ոքի ավարտված. a ~ game *ոչ ոքի ավարտված խաղ.* a face ~ with pain *ցավից այլայլված/ձգված դեմք.* look ~ *դեմքի անորոշ արտահայտություն ունենալ:*

**dray** [dreɪ] **n** ձիասայլ:

**dray-horse** [ˈdreɪhɔ:s] **n** բեռնաքաշ ձի:

**drayman** [ˈdreɪmən] **n** բեռնակիր սայլորդ:

**dread** [dred] **v** սոսկալ, սարսափել. ~ illness *հիվանդությունից վախենալ.* ~ responsibility *պատասխանատվությունից սոսկալ.* ~ going to the dentist *ատամնաբույժից սարսափել:*

**dreadful** [ˈdredfʌl] *a* ահավոր, սուսկալի, սարսափելի. *խսկց.* անդուրեկան, տաղտկալի. ~ fire/wind/accident/tragedy/earthquake ահավոր հրդեհ/քամի. սուսկալի պատահար/ողբերգություն. սարսափելի երկրաշարժ:

**dream** [dri:m] *n* երազ. have a ~ երազ տեսնել. bad/pleasant/foolish/terrible ~ վատ/հաճելի/հիմար/սարսափելի երազ. (երազանք. անուրջ, ցնորք) It's my ~ to be an actor **Իմ երազանքը դերասան դառնալն է.** go about in a (day) ~ օրը ցերեկով/հարթմնի անրջել. beyond one's wildest ~s երազանքից ավելի լինել, նույնիսկ չերազել. ~ house/profession երազած տուն/մասնագիտություն. ~ land/world երազների աշխարհ:

**dream** [dri:m] *v* երազ/երազում տեսնել. I thought I was ~ing **Ինձ թվաց, թե երազում եմ/երազ եմ տեսնում.** ~ about one's home երազում տունը/հայրենի օջախը տեսնել. ~ of going to Paris երազել Փարիզ գնալ. ~ of success երազել հաջողության հասնել. ~ away one's life երազներով ապրել. (մտքով անցնել, մտածել) I never ~ed of... **Երբեք մտքովս չէր անցնի...** He wouldn't ~ of troubling me **Նրա մտքովն անգամ չէր անցնի ինձ անհանգստացնել:**

**dreamer** [ˈdri:mə] *n* երազող, ցնորամոլ:

**dreamily** [ˈdri:mili] *a* քնկոտ, կիսաքուն:

**dreamless** [ˈdri:mles] *a* աներազ, առանց երազների:

**dreamlike** [ˈdri:mli:k] *a* հեքիաթային, անիրական, ցնորական:

**dreamy** [ˈdri:mi] *a* երազկոտ, երևակայական. look ~ երազկոտ տեսք ունենալ:

**dreary** [ˈdriəri] *a* մռայլ, տաղտկալից, տխուր. a ~ room մռայլ սենյակ. ~ thoughts մռայլ մտքեր. ~ weather սառը/թուխ պ եղանակ. a ~ programme տաղտկալի ծրագիր:

**dredge** [dredʒ] *n* տեխ. հողահան մեքենա (*մաև՝ dredger*) էքսկավատոր, դրագա:

**dredge** [dredʒ] *v* հողահան աշխատանքներ կատարել. ~ a river գետի հունը խորացնել. ~ up smth from a pond լճակի միջից ինչ-որ բան հանել:

**dreg(s)** [dreg(s)] *n* տականք, մրուր, դիրտ. ~ of coffee սուրճի մրուր. drink to the ~ մինչև տակը խմել. not a ~ ոչ մի կաթիլ. the ~ of society հասարակության տականք/թափ-թփուկներ:

**drench** [drentʃ] **1.** *v* թրջել, ողողել. խմեցնել.

be ~ed լրիվ թրջվել. ~ed to the skin մինչև սուկորները թրջված. **2.** *n* թրջում. տեղատարափ անձրև:

**drencher** [ˈdrentʃə] *n* *խսկց.* հորդ/տեղատարափ անձրև:

**dress** [dres] *n* զգեստ, հագուստ, շոր. ծածկույթ, վերնաշերտ. evening/full length ~ (*մաև՝ ~ clothes*) երեկոյան/երկար հագուստ (կանացի). (տղամարդու) ֆրակ. cotton/linen/woollen ~ բամբակի/քաթանե/բրդյա շոր. fashionable/out-of-date/close-fitting/loose մոդայիկ/ հնաոճ/կիպ/ազատ հագուստ. fancy ~ դիմակահանդեսի հագուստ full ~ տոնական շքահագուստ. low ~ խոր դեկոլտե ունեցող հագուստ. morning ~ տան զգեստ, խալաթ:

**dress** [dres] *v* հագնվել, հագցնել. զուգվել, զարդարվել. ~ a child երեխային հագցնել. ~ oneself հագնվել. ~ well լավ հագնվել. ~ed in white սպիտակ հագած. ~ed up զուգված, զարդարված. ~ up as Father Christmas ծմեռ պապիի շորեր հագած. (սանրել, հարդարել) ~ one's hair, have one's hair ~ed մազերը սանրել/հարդարել. ~ a shop window ցուցափեղկը ձևավորել. ~ leather կաշին մշակել. ~ a salad սալաթը/աղցանը համեմել. ~ a wound բժշկ. վերքը մշակել/կապել. *նզմ.* հավասարվել right/left ~! դեպի աջ/ձախ հավասարվիր ~ the field գղտ. հողը պարարտացնել:

**dresser** [ˈdresə] *n* խոհանոցի պահարան/սեղան. *ամ., խսկց.* զարդասեղան:

- explanation** [,ekspleɪ'neiʃn] n բացատրություն, մեկնաբանություն. clear/brief/full/acceptable ~ պարզ/կարճ/լրիվ/ընդունելի բացատրություն. need no ~ բացատրության կարիք չզգալ. There must be some ~ Պետք է որ ինչ-որ բացատրություն գոյություն ունենա. in ~ of his behaviour նրա վարքագիծը բացատրելու համար/նպատակով:
- explanatory** [ik'splə'neɪtəri] a բացատրական, մեկնաբանական. an ~ letter բացատրական նամակ/երկտող/փաստաթուղթ. ~ text/footnote բացատրական տեքստ/ծանոթագրություն:
- explicable** [ik'splɪkəbl] a բացատրելի:
- explicate** ['eksplikeit] v զարգացնել (միտքը), մեկնաբանել, պարզաբանել:
- explicit** [ik'splɪsɪt] a պարզ, որոշակի, հստակ. be quite ~ that պարզ/որոշակիորեն հասկացնել, որ:
- explode** [ik'spləʊd] v պայթեցնել. *փխթ.*



պոռթկալ. ~ a bomb ռումբ պայթեցնել. ~ a theory ջախջախել տեսությունը. On hearing the lie he ~d Նա պոռթկաց լսելով սուտ հայտարարությունները:

**exploit** [ˈɛksplɔɪt] n սխրագործություն:

**exploit** [ɪkˈsplɔɪt] v շահագործել, օգտագործել. մշակել. ~ a mine(s) հանք(երը) մշակել. ~ smb's good nature շարաշահել մեկի բարությունը:

**exploitation** [ˌɛksplɔɪˈteɪʃn] n շահագործում. (հանքերի) մշակում:

**exploiter** [ɪkˈsplɔɪtə] n շահագործող, շահագործիչ:

**exploration** [ˌɛkspləˈreɪʃn] n ուսումնասիրություն, հետազոտություն. հետախուզություն. the ~ of the structure կառուցվածքի ուսումնասիրությունը

**explorative** [ɛkˈsplɔːrətɪv] a հետազոտական, հետախուզական:

**exploratory** [ɛkˈsplɔːrətəri] a հետազոտական, հետախուզական:

**explore** [ɪkˈsplɔː] v հետազոտել. ~ outer space հետազոտել տիեզերքը. (ուսումնասիրել) ~ a problem/question/possibilities հարցը/պրոբլեմը/հնարավորությունները ուսումնասիրել/պարզել:

**explorer** [ɪkˈsplɔːrə] n հետազոտող:

**explosion** [ɪkˈspləʊ:zən] n պայթյուն. *փխք*. հանկարծակի բռնկում/պոռթկում. volcanic ~ հրաբխի ժայթքում. an ~ of laughter/anger ծիծաղի/զայրույթի պոռթկում. culture ~ մշակույթի ծաղկում. the population ~ բնակչության արտակարգ աճ:

**explosive** [ɪkˈspləʊsɪv] n պայթուցիկ նյութ. *հնչ*. պայթական հնչյուն:

**explosive** [ɪkˈspləʊsɪv] a պայթուցիկ, բռնկվող. ~ force/blast պայթուցիկ ուժ/ալիք. *փխք*. դյուրագրգիռ, բռնկվող. an ~ temper դյուրաբորբոք/բռնկվող խառնվածք. ~ issue վտանգավոր թեմա:

**exponent** [ɪkˈspəʊnənt] n մեկնաբան. մմուշ, օրինակ. ~ of the Bible Աստվածաշնչի մեկնաբան:

**export** [ˈɛkspɔːt] n արտահանում, էքսպորտ. articles of ~ արտահանման առարկաներ. the chief ~s արտահանման հիմնական առարկաները:

**export** [ˈɛkspɔːt] a արտահանման, էքսպորտային. ~ department/duty արտահանման բաժանմունք/մաքս. ~ trade արտահանման

առարկաների առևտուր. *հմկրգ*. ~ command արտահանման հրահանգ. ~ data տվյալների արտահանում:

**export** [ɪkˈspɔːt] v արտահանել:

**exportable** [ɪkˈspɔːtəbl] a արտահանման ենթակա. Soft fruit is not easily ~ Արագ փչացող միրգը արտահանման ենթակա չէ:

**exportation** [ˌɛkspɔːˈteɪʃn] n արտահանում:

**expose** [ɪkˈspəʊz] v բացել, բաց անել, բացահայտել. ~ a plot բացել/բացահայտել դավադրություն. ~ an imposter մերկացնել խաբեբային. (ցուցադրել) ~ the goods in the shop window ապրանքները ցուցափեղկում ցուցադրել. ~ one's ignorance տգիտությունը ցուցադրել. վտանգի ենթարկել, թողնել բախտի քմահաճույթին ~ to danger/risk վտանգի/ռիսկի ենթարկել. be ~d to the rain/the sun անձրևի/արևի տակ լինել/զտնվել. be ~d to ridicule ծաղրի ենթարկվել. be ~d to infection վարակի ենթակա լինել:

**exposed** [ɪkˈspəʊzd] a *լսնկ*. an ~ film լույսի ազդեցությանը ենթարկված ժապավեն. an ~ nerve բաց նյարդ. ~ to the weather քամուց չպաշտպանված:

**exposition** [ˌɛkspəˈzɪʃn] n բացատրություն, մեկնաբանում. *լսնկ*. պահաժամ. ~ of a theory տեսության մեկնաբանում:

**expositive** [ɪkˈspɔːzɪtɪv] a մկարագրական, բացատրական:

**expository** [ɪkˈspɔːzətəri] a բացատրական:

**expostulate** [ɪkˈspɔːstjuleɪt] v հորդորել, համոզել. She ~d with Harry Նա համոզում էր Չարրիին:

**exposure** [ɪkˈspəʊzə] n ցուցադրում. the ~ of the head գլխի մերկացումը. The house has a southern ~ Շենքը հարավ է նայում. ~ to the weather/the sun/the rain եղանակի/արևի/անձրևի ազդեցությանը ենթակա լինել. ~ of a crime ոճրագործության մերկացում. մկար, սովորական լուսանկար/ֆոտո ~ meter էքսպանոմետր:

**expound** [ɪkˈspəʊnd] v շարադրել. բացատրել, մեկնաբանել:

**express** [ɪkˈspres] n արտահայտում, արտահայտություն. an ~ of doubt կասկածանքի արտահայտում/արտահայտություն. a troubled ~ անհանգիստ արտահայտություն. *երկթ*. ճեպընթաց. փոստային շտապ առաքում.

**express** [ɪkˈspres] a հատուկ, շտապ. *երկթ*.

ճեպընթաց. ~ letter/train/messenger շտապ նամակ, ճեպընթաց, սուրհանդակ. (պարզ, որոշակի) ~ wish որոշակի ցանկություն. ~ purpose հատուկ նպատակ. ~ command խիստ կարգադրություն/հրաման. ~ terms ճիշտ/ճշգրիտ ցուցմունքներ. an ~ of doubt կասկածանքի արտահայտում/արտահայտություն:

**express** [ik'spres] v արտահայտել. ~ a wish ցանկություն արտահայտել. ~ oneself արտահայտվել. He can't ~ himself well Նա չի կարողանում իր մտքերը պարզ շարադրել. (քամել) ~ the juice of a lemon լիմոնի հյութը քամել:

**express** [ik'spres] adv շտապ. travel ~ ճեպընթացով ճամփորդել. send a letter ~ շտապ նամակ ուղարկել. ~ set-up արագ կարգաբերում:

**expressible** [ik'spresəbl] a արտահայտելի:

**expression** [ik'spreʃn] n արտահայտություն. beyond ~ անարտահայտելի. Her ~ was full of sorrow Նրա դեմքը վիշտ էր արտահայտում. a colloquial/literary/bookish ~ խոսակցական/գրական/գրքային արտահայտություն. as an ~ of my thanking ի նշան իմ շնորհակալության:

**expressionless** [ik'spreʃnləs] a անարտահայտիչ, առանց որևէ արտահայտության:

**expressive** [ik'spresiv] a արտահայտիչ:

**expressly** [ik'spresli] adv որոշակի, պարզ, հստակորեն, ճիշտ. I ~ said ես պարզ ասացի. ~ for you հատուկ ձեզ համար:

**expropriate** [ek'sprəʊprieɪt] v բռնագրավել, սեփականագրկել:

**expropriation** [ek,sprəʊpri'eɪʃn] n բռնագրավում, սեփականագրկում:

**expulsion** [ik'spʌlʃn] n արտաքսում, վտարում, հեռացում. ~ from a country արտաքսում երկրից. ~ from school վտարում դպրոցից:

**expurgate** [ˈeksɜːpɜːt] v ջնջել. ~ some passages որոշ հատվածներ ջնջել. an ~d edition հրատարակություն, որտեղ որոշ անցանկալի հատվածներ ջնջված են:

**exquisit** [ˈekskwɪzɪt] a ընտիր, արտակարգ, սքանչելի. with ~ care արտակարգ զգուշությամբ. ~ workmanship զարմանալի/արտակարգ վարպետություն ~ taste նուրբ/ նրբընտիր ճաշակ. an ~ sensibility անսովոր զգայունություն:

**ex-serviceman** [ˌeks'sə:vɪsmən] n զորա-

գրված/պաշտոնաթող զինվորական:

**extant** [ek'stænt] a պահպանված, մնացած. the only copy ~ միակ պահպանված օրինակը:

**extemporary** [ik'stempərəri] 1. a հանպատրաստից ստեղծված. 2. adv. հանպատրաստից:

**extemporize** [ik'stempəraɪz] v հանպատրաստից ստեղծել/հորինել:

**extend** [ik'stend] v ձգել, երկարացնել. ~ time ժամանակը երկարացնել. ~ one's hand ձեռքը մեկնել. The road ~ed for miles ճանապարհը ձգվում էր մի քանի մղոն. ~ a visit այցելությունը երկարածել. ~ the garden այգու տարածքը ընդարձակել. (ցույց տալ, ցուցաբերել) ~ hospitality հյուրընկալություն ցուցաբերել/առաջարկել. ~ an invitation to smb մեկին հրավիրել. ~ thanks շնորհակալություն հայտնել:

**extended** [ik'stendɪd] a ձգված, երկարացված. տևական. ~ payment վճարման երկարացված ժամկետ:

**extensibility** [ik,stensə'biləti] n տարածելիություն, ընդարձակելիություն:

**extensible** [ik'stensəbl] a ձգվող, ընդարձակելի:

**extension** [ik'stenʃn] n տարածում, ընդլայնում, երկարածում, շարունակում. an ~ to a building կցակառույց, կցաշենք. an ~ to a road ճանապարհի շարունակություն. an ~ of a term ժամկետի երկարածում. an ~ for an electric flex էլեկտրական երկարացնող լար. a table with an ~ բացվող սեղան. *հեռ.* (լրացուցիչ համար) 11-11-11 extension 15 11-11-11 լրացուցիչ 15:

**extensive** [ik'stensiv] a ընդարձակ, լայնատարած, ծավալուն. մեծ. an ~ forest ընդարձակ անտառային տարածք. an ~ knowledge խոր գիտելիքներ. ~ enquiries տեղեկությունների բազմակողմանի հավաքում. ~ repairs հիմնական նորոգում:

**extent** [ik'stent] n ձգվածություն, տարածություն, չափսեր. աստիճան, չափ. to a great ~ մեծ չափով. to the full ~ լրիվ չափով. to a certain ~ որոշակի չափով. to some ~ որոշ չափով. to a more or less առավել կամ պակաս չափով. have no idea of the ~ չափսերի մասին գաղափար չունենալ:

**extenuate** [ek'stenju'eɪt] v չափավորել, նվազեցնել. թուլացնել, թեթևացնել. արդարաց-

նել. Nothing can ~ such behaviour Ոչինչ չի կարող արդարացնել այդպիսի վարքագիծը. ~ing circumstances (հանցանքը թեթևացնող) մեղմացուցիչ հանգամանքներ:

**extenuation** [ekˌstɛnjəˈeɪʃn] n թուլացում, հյուժում. ~ of the crime հանցանքի մեղմացման հանգամանք:

**exterior** [ɪkˈstɪəriə] n արտաքինը, արտաքին տեսքը. the ~ of the house տան դրսի կողմը. a rough ~ կոպիտ/խիստ արտաքին. a արտաքին, դրսի. ~ angle արտաքին անկյուն:

**exterminate** [ɪkˈstəːmineɪt] v բնաջնջել, ոչնչացնել:

**extermination** [ɪkˌstəːmiˈneɪʃn] n բնաջնջում, ոչնչացում:

**exterminatory** [ɪkˈstəːmɪnətəri] a բնաջնջող, ոչնչացնող, կործանիչ:

**external** [ɪkˈstɜːnl, ɛkˈstɜːnl] a արտաքին, դրսի. ~ injuries արտաքին վնասվածքներ. ~ evidence արտաքին (կողմնակի) վկայություն. ~ examiner հրավիրված քննող. for ~ use only *բժշկ.* ~ device address արտաքին հիշասարքի հասցե. ~ function արտաքին ֆունկցիա. ~ information արտաքին ինֆորմացիա. ~ reference արտաքին հղում. ~ reference formula արտաքին հղումով բանաձև. ~ storage արտաքին հիշասարք. ~ symbol dictionary արտաքին սիմվոլների բառարան:

**externalize** [ɛkˈstɜːnəlaɪz] v մարմնավորել, արտաքին տեսք տալ:

**externally** [ɪkˈstɜːn(ə)li] adv արտաքնապես. ~ there was nothing կրտաքինից ոչինչ չկար:

**externals** [ɛksˈtɜːnəlz] n pl արտաքին տեսք/հանգամանքներ:

**exterritorial** [ɛksteriˈtɜːriəl] a արտերկրային, արտերկրյա. էքստերիտորիալ:

**exterritoriality** [ɛksteriˈtɜːriəlɪti] n արտերկրայնություն, էքստերիտորիալություն:

**extinct** [ɪkˈstɪŋkt] a հանգած, մարած. դադարած, հնացած. an ~ volcano հանգած հրաբուխ. ~ species անհայտացած (մեռած) տեսակներ. become ~ ոչնչանալ, մահացնել լինել:

**extinction** [ɪkˈstɪŋkʃn] n մարում, հանգում. ոչնչանալը. մահացնում. դադարեցում, վերացում. the ~ of a fire հրդեհի/կրակի մարում:

**extinguish** [ɪkˈstɪŋɡwɪʃ] v հանգցնել, մարել. ~ the light/the fire մարել լույսը, հանգցնել

կրակը/հրդեհը. ~ hopes *փխբ.* հույսերը մարել:

**extinguisher** [ɪkˈstɪŋɡwɪʃə] n կրակմարիչ, հանգցնող:

**extirpate** [ˈɛkstəːpeɪt] v արմատախիլ անել, արմատով հանել. *բժշկ.* հեռացնել:

**extirpator** [ˈɛkstəːpeɪtə] n արմատախիլ անող, ոչնչացնող. *գղտ.* արորացաքան, կուլտիվատոր:

**extol** [ɪkˈstɔːl] v փառաբանել, գովաբանել:

**extort** [ɪkˈstɔːt] v բռնի խլել, կորզել, դուրս քաշել (զաղտնիքը). ~ a confession/promise խոստում/խոստովանություն կորզել. ~ money from smb փող կորզել.

**extortion** [ɪkˈstɔːʃn] n բռնի կորզում, շորթում, կեղեքում. Taxes are sheer ~ *խսկց.* Չարկերը իսկական շորթումներ են:

**extortionate** [ɪkˈstɔːʃnət] a շորթիչ, թալանչիական. ~ prices թալանչիական գներ:

**extra** [ˈɛkstrə] n հավելվածար, լրացուցիչ վճար. *թատր.* ստատիստ. Service, fire and light are ~s Սպասարկումը, ջեռուցումը և լույսը լրացուցիչ ծախսեր են. Coffee and service are ~s Սուրճը և սպասարկումը լրացուցիչ ծախսեր են. Safety belts are ~s Փրկագոտիների համար պետք է լրացուցիչ վճարել:

**extra** [ˈɛkstrə] a լրացուցիչ, հավելյալ. արտակարգ. ~ charges հավելյալ ծախսեր. ~ trains լրացուցիչ գնացքներ. ~ pay հավելյալ վճար. ~ time *մրգ.* լրացուցիչ ժամանակ. ~ quality butter/cheese բարձր տեսակի կարագ/պանիր. ~ quality/grade արտակարգ/բարձրագույն որակ/տեսակ. three ~ chairs եւ երեք լրացուցիչ աթոռ. an ~ pair of shoes մի ավելի զույգ կոշիկ. an ~ ticket ավելի շատ:

**extra** [ˈɛkstrə] adv հատկապես, անսովոր կերպով. be ~ kind հատկապես սիրալիր լինել. an ~ big apple անսովոր մեծ խնձոր. work ~ արտաժամյա աշխատել:

**extract** [ˈɛkstrækt] n հյութ, մղվածք, էքստրակտ. fruit ~ մրգի մղվածք. (հատված, քաղվածք) an ~ from a book հատված գրքից:

**extract** [ɪkˈstrækt] v քանել, մղել, հյութը հանել. ~ juice from an orange մարմնի հյութը քանել. (դուրս) հանել ~ a bullet/a cork գնդակը/խցանը հանել. ~ a tooth ատամը հանել/հեռացնել. ~ ore հանք արդյունահանել. ~ a passage from Hamlet ընտրել մի հատված “Չամլետից” ~ a square *մաթ.* քառակուսի

արմատ հանել. ~ information տեղեկություն/ինֆորմացիա ձեռք բերել:

**extraction** [ik'strækʃn] n հանում, արդյունահանում, հեռացում. ծագում. He is of German ~ Նա ծագումով գերմանացի է:

**extractive** [ik'stræktiv] n հանվող, արտահանվող, արդյունահանվող:

**extradite** ['ekstrədaɪt] v (հանցագործին այլ պետության) հանձնել, վերադարձնել:

**extradition** [ˌekstrə'diʃn] n հանձնում, հանձնելը (հանցագործին) ~ treaty հանցագործներին հանձնելու պայմանագիր:

**extramarital** [ˌekstrə'mærɪtl] a արտամուսնակա:

**extraneous** [ik'streɪniəs] a օտար, կողմնակի. ~ interference կողմնակի միջամտություն. an ~ body օտար մարմին. ~ considerations այլ նկատառումներ. ~ to the subject թեմային չվերաբերող:

**extraordinarily** [ik'strɔ:d(ə)n(ə)rəli] adv արտասովոր, անսովոր, արտակարգ. զարմանալիորեն. ~ kind արտակարգ/զարմանալիորեն բարի:

**extraordinary** [ik'strɔ:d(ə)nəri] a արտասովոր, արտակարգ, անսովոր. զարմանալի, տարօրինակ. ~ success արտակարգ հաջողություն. an ~ talent արտակարգ տաղանդ. ~ weather անսովոր եղանակ. an ~ taste տարօրինակ համ:

**extrasensory** [ˌekstrə'sensəri] a արտազգարանային. ~ perception արտազգարանային ինստիտուցիոն/ընկալում/ճանաչում:

**extravagance** [iks'trævəgəns], **extravagancy** [ik'strævəgənsi], n խելառություն. անհեթեթություն. անզսպություն. շռայլում:

**extravagant** [ik'strævəgənt] a խելառ, խենթ. անհեթեթ. անզուսպ. ~ taste տարօրինակ/անհեթեթ ճաշակ. an ~ woman շռայլ/մսխող կին. ~ praise չափից ավելի զովեստներ:

**extra-violet** ['ekstrə'vaɪələt] a *ֆիզ*. ուլտրամանուշակագույն:

**extreme** [ik'stri:m] n ծայրահեղություն, ծայրահեղ աստիճան. in the ~ վերին աստիճանի, ծայրաստիճան. go to ~s ծայրահեղ միջոցների դիմել. go from one ~ to the other մի ծայրահեղությունից մյուսի մեջ ընկնել. run to an ~ ծայրահեղության մեջ ընկնել. ~s of heat and cold խիստ ցամաքային կլիմա. E~s meet Ծայրահեղությունները հանդիպում են/միանում են:

**extreme** [ik'stri:m] a ծայրահեղ, ամենահեռավոր, վերջին. in the ~ North ծայրահեղ հյուսիսում. at the ~ end ամենածայրում, ամենավերջում. (արտակարգ, բարձրագույն) ~ poverty/cruelty/patience ծայրահեղ աղքատություն. արտակարգ դժանդություն/ համբերություն. in ~ pain խիստ տառապանքներով. ~ old age խորը ծերություն. ~ youth վաղ երիտասարդություն. the ~ penalty պատժի գերագույն չափ. ~ opinions տրամազծորեն հակառակ/հակադիր կարծիքներ. hold ~ views ծայրահեղ տեսակետների հարել:

**extremely** [ik'stri:mli] adv չափազանց, ծայրաստիճան, սաստիկ. ~ complicated արտակարգ բարդ. ~ necessary/rare չափազանց անհրաժեշտ/հազվադեպ:

**extremeness** [ik'stri:mnes] n ծայրահեղություն (հայացքների):

**extremist** [ik'stri:mɪst] n ծայրահեղական:

**extremity** [ik'streməti] n ծայր, եզր, վերջ, վերջավորություն. the ~ies *կզմ/ս*. վերջավորությունները/ձեռքեր, ոտքեր be driven to ~ies ծայրահեղ վիճակի/ծայրահեղության/ հուսահատության հասնել. ~ ies *քղք*. ծայրահեղ միջոցներ. help people in their ~ies մարդկանց օգնել ծայրահեղ աղքատության մեջ:

**extricate** ['ekstrikeit] v ազատվել, նեղ վիճակից դուրս բերել. ~ oneself նեղ վիճակից դուրս գալ. ~ a lorry from the mud բեռնատարը ցեխից դուրս քաշել:

**extrinsic(al)** [eks'trɪnsɪk(əl)] a արտաքին, ոչ էական:

**extrovert** ['ekstrəvɜ:t] n *հոգեբ*. արտուղիված, էքստրովերտ. *փխբ*. աշխույժ, կենսախիճ:

**extrude** [ik'stru:d] v դուրս մղել, հանել:

**exuberance** [ɪg'zju:brəns], **exuberancy** [ɪg'zju:brənsi] n առատություն, լիություն, հարստություն:

**exuberant** [ɪg'zju:brənt] a առատ. հորդառատ. հարուստ. ճոխ, փարթամ (բուսականություն). ~ health ծաղկափթիթ առողջություն. ~ high spirits բուռն ուրախություն:

**exudation** [ˌeksju'deɪʃn] n քրտնաթորում, քրտնում. *բժշկ*. արտածորում:

**exude** [ɪg'zju:d] v արտադր(վ)ել, արտաթոր(վ)ել. հոսել, ծորել. He ~s self-confidence Նա շատ ինքնավստահ է:

**exult** [ig'zʌlt] v գնծալ, հրճվել. The people ~ed Մարդիկ գնծացին, հրճվեցին. ~ over the defeat of the opponents ուրախանալ հակառակորդի պարտության կապակցությամբ:

**exultant** [ig'zʌltənt] a գնծացող, գնծալից, հրճվող:

**exultation** [ˌegzʌl'teɪʃn] n գնծություն, հրճվանք:

**eye** [ai] n աչք, ակն, տեսողություն. fine/wide-set/close - set/near-sighted /sunken ~s գեղեցիկ/իրարից հեռու տեղադրված/ մոտ տեղադրված/ կարճատես/փոս ընկած աչքեր. protruding/saucer ~s դուրս պրծած/կլոր աչքեր. black/blue/grey /hazel ~s սև/կապույտ/մոխրագույն/ բաց շագանակագույն աչքեր. naked ~ անգեն աչք. stary ~s լուսաշող աչքեր. green ~ *փխբ*. նախանձ. whites/ pupils of ~s աչքի սպիտակուց/բիբ. bags under ~s աչքերի տակ պարկեր. out of the corner/side/tail of the ~ աչքի պոչով. the apple of one's ~ աչքի խնձոր. strike/catch/leap to the ~ աչքի գարնել. cast down one's ~s աչքերը գետնին հառել. screw up one's ~s աչքերը կկոցել. shut one's ~s to աչք փակել, նկատելու չտալ. be all ~s շատ ուշադիր նայել. up to the ~s մինչև ականջները խրված. clap/set one's ~s on տեսնել, նկատել. Mind your ~ *Ջգաստ*, զգույշ եղեք. keep an ~ on հետևել/հսկել մեկին, աչքը վրան պահել. cock one's ~s աչքով նշան անել. make ~s at աչքով-ունքով անել. cry one's ~ out լացից աչքերը կուրացնել. wipe one's ~s մեկի արցունքները ցամաքեցնել. open smb's ~s մեկի աչքերը բացել pass/run one's ~s over/ through smth աչքի անցկացնել. with one's ~ s open բաց աչքով. (հայացք, նայվածք) set ~s նայել, հայացք նետել. turn a blind ~ to աչք փակել, չնկատելու տալ. catch the ~ հայացքը որսալ, ուշադրությունը գրավել. cast sheep's ~s սիրահարված հայացք նետել. (տեսակետ) in the ~ (of) տեսակետից. in my ~ իմ կարծիքով. see ~ to ~ with լրիվ համակարծիք լինել. *փխբ*. առարկաների/իրերի հետ կապված ~ of a needle սանդի անցք. ~ of a potato կարտոֆիլի աչք. hook an ~ հելուճով հատ վերցնել. ~ of the day արեգակ. in the wind's ~ քամուն հակառակ. keep one's ~s skinned աչալուրջ լինել. (oh) my ~ (s) *խսկց*. զարմանքի արտահայտություն the evil ~ չար աչք. have

good/weak ~s լավ/թույլ տեսողություն ունենալ. measure by ~ աչքի չափով. judging by ~ աչքից դատելով. under his very ~s նրա աչքի առաջ. as far as the ~ can see ինչքան աչքը կկտրի keep one's ~s off աչքը կտրել. ~s left! *ռզմ*. ձախ հավսար. in the ~s of the law օրենքի աչքում. be in the public ~ բոլորի աչքի առաջ լինել (միշտ մարդկանց մեջ լինել). ~ for ~ ակն ընդ ական. That's all my ~ *խսկց*. Այդ բոլորը հիմարություն է:

**eye** [ai] v ուշադրությամբ նայել. տնտղել, զննել. ~ with curiosity/suspicion հետաքրքրությամբ/ կասկածանքով տնտղել/նայել:

**eyeball** ['aɪbɔ:l] n ակնախնձոր, ակնագունդ:

**eyebath** ['aɪbɑ:θ] n աչքի վաննա:

**eyebrow** ['aɪbrəʊ] n հոնք. raise one's ~s հոնքերը բարձրացնել:

**eye-glass** ['aɪglɑ:s] n ակնոց, պենսնե, տեսապակի, ոսպնյակ:

**eye-hole** ['aɪhəʊl] n ակնափոս, աչքի խռոչ. դիտանցք:

**eye-lash** ['aɪlæʃ] n արտևանուկ, թարթիչ:

**eye-let** ['aɪlət] n անցք, դիտանցք:

**eye-lid** ['aɪlɪd] n կոպ. hang on by the ~s մազից կախված լինել. without batting an ~ առանց աչքը փակելու:

**eyeopener** ['aɪ,əʊpəʊnə] n աչք բացող. That was an ~ for him *Դա միանգամից նրա աչքերը բացեց*:

**eyepiece** ['aɪpi:əs] n ակնապակի. օկուլյար:

**eyeshade** ['aɪʃeɪd] n աչքերը պահպանող հովար:

**eyeshadow** ['aɪ,ʃædəʊ] արտևանուկի ներկ:

**eyeshot** ['aɪʃɒt] n տեսադաշտ, տեսողության դաշտ:

**eyesight** ['aɪsaɪt] n տեսողություն:

**eyesore** ['aɪsɔ:] n *փխբ*. աչքի փուշ/զրոռ:

**eyestrain** ['aɪstreɪn] n աչքերի լարում:

**eye-tooth** ['aɪtu:θ] n վերին ժանիք, շնատամ. cut one's eyeteeth խոհեմ դառնալ:

**eyewash** ['aɪwɒʃ] n աչքի թրջոց. *փխբ*. խաբեություն. That's all ~ Այդ ամբողջը խաբեություն է:

**eye-wink** ['aɪwɪŋk] n աչքի թարթում. ակնթարթ:

**eye-witness** ['aɪwɪtnəs] n ականատես. *իրավ*. ականատես վկա:

## F

**F, f** հայերեն այբուբենի վեցերորդ տառը.  
*երժշ. „ֆա“ ձայնանիշը/նոտան:*

**fable** [ˈfeɪbl] **n** առակ. առասպել. գրական  
երկի նյութ/ բովանդակություն/սյուժե:

**fabric** [ˈfæbrɪk] **n** կառուցվածք, կմախք. the  
~ of a building շենքի կառուցվածքը. (գործ-  
վածք, կտոր.) woolen ~s բրդյա գործվածքե-  
ղեն:

**fabricate** [ˈfæbrɪkeɪt] **v** հորինել. կեղծել,  
խարդախել. a ~d will/charge կեղծ կտակ/մե-  
ղադրանք:

**fabrication** [ˌfæbrɪˈkeɪʃn] **n** հորինովի բան,  
կեղծիք, սուտ. pure ~ բացարձակ հորին-  
վածք:

**fabulous** [ˈfæbjʊləs] **a** առասպելաբանա-  
կան, դիցաբանական. առասպելական, ան-  
հավատալի. ~ wealth չտեսնված/առասպել-  
ական հարստություն. a ~ dress *խսկց.*  
ցնցող/չտեսնված զգեստ:

**facade** [fəˈsɑːd] **n** ճրտ. ճակատ (շենքի):

**face** [feɪs] **n** դեմք, երես. angular/oval/ square/  
long/round/ thin/wrinkled/freckled ~ **ցցուն** ոս-  
կորներով/ծվածկ/քառակուսի/երկարավուն/  
կլոր/նիհար/կնճռոտ/պեպենոտ դեմք. attrac-  
tive/charming/disagreeable/clever/foolish/pale/  
haggard/sad/poker ~ գրավիչ/հմայիչ/տիպիկ/  
խելացի/հիմար/գունատ/հյուժված/տխուր/  
բութ դեմք. ~ to ~ դեմ առ դեմ, երես առ  
երես. to one's ~ բացեիբաց, երեսին. full ~  
դեմքով խոսակցին դարձած. half ~  
կիսադեմ, շրջված. lie ~ down/up երեսնի-  
վայր/երեսնիվեր պառկել. look smn in the ~  
մեկի դեմքին նայել. show one's ~ դեմքը  
ցույց տալ. laugh in smn's ~ երեսին ծիծաղել.  
make/pull a ~/~s ծամածռություններ անել.  
(դեմքի արտահայտություն, արտաքին  
տեսք) His ~ fell նրա դեմքը ձգվեց. pull /wear  
a ~ ձգված արտահայտություն ունենալ. tell  
by smn's ~ դեմքի արտահայտությունից  
կռահել. in the ~ of որևէ բանի առջև/առ-  
կայությամբ. *փխք.* have the ~ համառու-  
թյուն/անպատկառություն ունենալ. save  
one's ~ անունը/հեղինակությունը փրկել.  
lose one's ~ հեղինակությունը կորցնել. set  
one's ~ against վճռականորեն առարկել,  
դիմադրել. on the ~ of it առաջին հայացքից

դատելով. արտաքին (երեսի կողմը) the ~ of  
the building շենքի ճակատը. the ~ of the ma-  
terial գործվածքի շիտակ/երեսի կողմը. the  
~ of the clock ժամացույցի թվատախտակ.  
lay a card ~ down/up քարտը սեղանին  
փակ/բաց դնել. ~ cloth/flannel դեմքը սրբելու  
անձեռոցիկ/լաթ. ~ value (դրամի, ար-  
ժեթի) անվանական արժեք. ~ lift դեմքի  
պլաստիկ վիրահատություն. Our flat has had  
a ~ Մեր բնակարանում հարդարման վերա-  
նորոգում կատարեցինք:

**face** [feɪs] **v** դեմքով/դեմ առ դեմ կանգնել/  
բախվել/նայել. ~ the audience կանգնել դեմ-  
քով դեպի ունկնդիրները. ~ing the engine  
գնացքի շարժման ուղղությամբ. (նայել) The  
window ~s the garden Պատուհանը պարտե-  
զին է նայում. (զարդարել, երեսպատել) ~ the  
dress with գգեստը զարդարել. ~ the staircase  
with marble աստիճանները մարմարով  
երեսպատել. *փխք.* ~ trial դատարանի առջև  
կանգնել. He couldn't ~ the disgrace/the thought  
of parting նա չէր կարող տանել/համակերպ-  
վել խայտառակությանը/բաժանվելու  
մտքին ~ up the facts/consequences փաստերին  
դեմ առ դեմ կանգնել /բախվել իրա-  
կանությանը. հետևանքների համար պա-  
տասանատու լինել. Let's ~ it... Ընդունենք  
այն, որ... ~ up reality բախվել իրականության-  
նը. the question ~ing smb մեկի առջև ծառա-  
ցած հարցը. ~ up one's responsibilities լուրջ  
վերաբերվել իր պարտականություններին:

**faceless** [ˈfeɪsləs] **a** *փխք.* անդեմ, դիմազուրկ:  
**facer** [ˈfeɪsə] **n** հարված դեմքին, ապտակ.  
*փխք.* անսպասելի դժվարություն:

**facet** [ˈfæsɪt] **n** երեսակ, միստ:

**facetious** [fəˈsiːʃəs] **a** կատակասեր, զվար-  
ճախոս. կատակային, զվարճալի. in a ~  
mood ուրախ տրամադրության մեջ:

**facial** [ˈfeɪʃl] **a** երեսի, դեմքի. ~ muscle դեմքի  
մկան. ~ burns/massage դեմքի այրվածք/մեր-  
սում:

**facile** [ˈfæsəl] **a** թեթև, հեշտ. զիջող, հեզ.  
ճարտար, ճարպիկ. a ~ style ճարտար գրիչ/  
ոճ. a ~ disposition զիջող/հեզ բնավորություն.  
a ~ liar լպիրշ/անամոթ ստախոս:

**facilitate** [fəˈsɪləteɪt] **v** հեշտացնել, թեթևաց-  
նել, աջակցել:

**facility** [fə'sɪləti] **n** ընդունակություն, շնորհք. քեթևություն. հիմնարկություն. ~ for languages [եզվական ունակություններ. write with ~ հեշտությամբ գրել. ~s հարմարություններ, պայմաններ. սարքավորումներ. ~s for research պայմաններ հետազոտական աշխատանքի/հետազոտության համար. basic ~ հիմնական սարքավորումներ. technical ~ տեխնիկական հարմարություններ. welfare ~ սոցիալական ծառայություններ. workshop ~ արհեստանոցի հանդերձանք:

**facing** ['feɪsɪŋ] **1.** **n** երեսպատում. հղկում. (զգեստի) զարդ/զարդարանք. **2.** **prep** դեմքով դեպի. դիմաց:

**facsimile** [fæk'sɪməli] **n** (փաստա)թղթի ճիշտ վերարտադրությունը. հեռապատճեն:

**fact** [fækt] **n** փաստ, իրողություն, դեպք. concrete/actual/obvious/historical/well-known ~ կոնկրետ/իրական/ակնհայտ/պատմական/քաջ հայտնի փաստ. admit/conceal/ignore/distort a ~ ընդունել/թաքցնել/անտեսել/աղավաղել փաստը. bare/dry ~s մերկ փաստեր. an accomplished ~ կատարված փաստ. fixed ~ հաստատված/ապացուցված փաստ. appraisal of ~s փաստերի գնահատում. ~s are stubborn things փաստերը համառ բան են. set the ~s փաստերը հաստատել. overturn the ~ փաստը հերքել. (իրողություն, իրականություն) ~s իրողություն, իրականություն. get to the ~s ճշմարտությունը պարզել. know smth for a ~ մի բան հաստատ իմանալ. the true ~s իրերի իրական վիճակը, ճշմարիտ փաստերը. in ~, as a matter of ~ իրականում, փաստորեն. The ~ is that... Փաստն այն է, իրողությունն այն է... the ~s suggest տվյալները վկայում են. ~ in issue քննարկվող փաստը. legally relevant ~ իրավաբանորեն հիմնավորված փաստ. before/after the ~ իրադարձություններից/դեպքերից առաջ/հետո. ~ finding հետաքննություն, փաստերի բացահայտում. a ~ finding commission հետաքննության հանձնաժողով:

**faction** ['fæksjən] **n** խմբակցություն. տարածայնություն, երկպառակություն:

**factitious** [fæk'tɪʃəs] **a** արհեստական, շինծու:

**factitive** ['fæktətɪv] **a** *քեր.* պատճառական:

**factor** ['fæktə] **n** գործոն, բաղադրատարր. մանր միջնորդ, գործակալ. key ~ վճռորոշ

գործոն. personal ~ հոգեբանական/անձնական գործոն. the human ~ մարդկային գործոն. the safety ~ ապահովության գործոն:

**factory** ['fæktəri] **1.** **n** ֆաբրիկա, գործարան. chemical/motor car/machine building/military ~ քիմիական/ավտոգործարան. մեքենաշինական/ռազմական գործարան. **2.** **a** գործարանային ~ trade mark գործարանային մակնիշ. ~ waste արդյունաբերական թափոն:

**factotum** [fæk'tɒtəm] **n** համակատար, ամեն բանում վարպետ:

**factual** ['fæktʃʊəl] **a** փաստական, փաստացի. strictly ~ միայն փաստերի վրա հիմնված. a ~ error տվյալների հետ կապված սխալ. ~ knowledge փաստացի գիտելիքներ. ~ accuracy փաստերի ճշգրտություն:

**faculty** ['fæklɪti] **n** ծիրք, ընդունակություն. intellectual/great ~ մտավոր/մեծ կարողություններ. ~ for languages [եզվական ունակություններ. the ~ of sight, vision/hearing տեսողության/լսողության ունակություն. the ~ of speech խոսելու ունակություն. be in full possession of one's faculties պահպանել ֆիզիկական և մտավոր կարողությունները. (բուհ, ֆակուլտետ, պրոֆեսորադասախոսական կազմ) the ~ of law իրավաբանության ֆակուլտետ.

**fad** [fæd] **n** տարօրինակություն, քմայք:

**fade** [feɪd] **v** թառամել, թռչնել. ջնջվել, մարել, աղոտանալ. The flowers have ~d ծաղիկները թառամել են. Her beauty has ~d նրա գեղեցկությունը թռչնել է. (գունաթափվել, խունանալ) The colours have ~d գույները խունացել են. Her hair/eyes have ~d Մազերը ճերմակել են. Աչքերը խամրել են. Daylight was ~ing Օրը մարում էր/մթնում էր. The music ~d away երաժշտության ձայնը մարեց:

**fadeaway** [ˌfeɪdəˈweɪ] **n** *ամ.* անհետացում, անհետանալը:

**faded** ['feɪdɪd] **a** թառամած, խամրած, խունացած. ~ colours/flowers խամրած գույներ, թռչնած ծաղիկներ. d curtains խունացած վարագույրներ:

**fading** ['feɪdɪŋ] **n** (ռադիո) մարում:

**fag** [fæg] **n** ծանր/տաղտկալի աշխատանք. What a ~! Ի՞նչ տաղտկալի գործ. *խսկց.* ծխախոտ. ~ end ծխախոտի մնացորդ. ~ged out ուժասպառ (եղած), հյուժված:

**faience** [faiˈa:ns] n հախճապակի:

**fail** [feil] n անհաջողակ. without ~ անպայման, անպատճառ:

**fail** [feil] v պակասել, չբավականացնել, ծախողվել, սնանկանալ. ~ an examination քննությունից կտրվել. ~ in one's attempt փորձն անհաջող անցնել. The bank ~ed Բանկը սնանկացավ. ~ as a musician ծախողվել որպես երաժիշտ. ~ smb *խսկց.* խաբել, անհարմար կացության մեջ դնել. His heart ~ed him Նրա սիրտը նվաղեց. Words ~ me Բառեր չկան. (չկարողանալ, ի վիճակի չլինել) ~ to understand/recognize ի վիճակի չլինել հասկանալ. չկարողանալ ճանաչել. ~ to indicate չկարողանալ նշել. The wind ~ed Քամին թուլացավ. His sight is ~ing Նրա տեսողությունը թուլանում է. (չբավականացնել) The water supply has ~ed Ջուրը չբավարարեց. The electricity ~ed Լույսն անջատվեց. His courage ~ed him Արիությունը լքեց նրան. (թերանալ, չկատարել) He ~ed to come Նա չեկավ. He ~ed to remind Նա չհիշեցրեց. *հմկրգ.* fail-safe system սխալների նկատմամբ կայուն համակարգ:

**failing** [ˈfeiliŋ] 1. n թուլություն, պակասություն. սխալ, ծախողում, թերություն. for all his ~s իր բոլոր թերություններով հանդերձ. 2. prep ~ him invite his brother եթե նա չկարողանա հրավիրել իր եղբորը:

**fail-soft system** մերժումների ամորտիզացիայով համակարգ:

**failure** [ˈfeiljə] n պակասություն, ծախողում, անհաջողություն. corn/crop ~ վատ բերք. complete/dead ~ լրիվ ծախողում. meet with ~ անհաջողություն ունենալ. be a ~ ծախողվել. the experiment/plan/play was a ~ փորձը/պլանը/ներկայացումը ծախողվեց. (թերանալը) ~ to pay չվճարում. ~ to answer չպատասխանելը, լռելը. (անհաջողություն) heart ~ սրտի կաթված. engine ~ շարժիչի չգործելը/վթար. a ~ of memory հիշողության կորուստ. (ծախող) a ~ in art անհաջողակ արվեստում. ~ in life բախտը չբերել. *հմկրգ.* ~ access վթարի դեպքում դիմելը:

**fain** [fein] a, predic հարկադրված. ~ to keep silence հարկադրված լինել լռություն պահպանել:

**faint** [feint] n ուշաթափություն:

**faint** [feint] a թույլ, տկար, թուլացած. ~

voice/odour/attempt թույլ ձայն, թեթև հոտ, թույլ փորձ. a ~ smile թեթևակի ժպիտ. feel ~ գլխապտույտ զգալ. feel ~ with the heat շոգից վատ զգալ. the ~est chance/idea ամենաչնչին հնարավորությունը/գաղափարը. ~ with hunger քաղցից թուլացած:

**faint** [feint] v ուշաթափ լինել, գիտակցությունը կորցնել. She almost ~ed with terror Սարսափից նա քիչ էր մնում ուշաթափվել:

**faint-hearted** [ˌfeintˈhɑ:tɪd] a թուլամորթ, վախկոտ:

**fainting-fit** [ˈfeintiŋfɪt] n ուշազնացության նոպա:

**faintly** [ˈfeintli] adv հազիվ, թույլ կերպով. breath ~ հազիվ/թույլ շնչել. whisper ~ հազիվ լսելի ձայնով շշմջալ. a ~ familiar look ինչոր հեռավոր նմանություն/ծանոթություն:

**fair** [feə] n տոնավաճառ. international ~ միջազգային տոնավաճառ. hold a ~ տոնավաճառ կազմակերպել. fun ~ զվարճահարմարանքներ. a day after the ~ չափազանց ուշ:

**fair** [feə] 1. a հիանալի, գեղեցիկ. the ~ sex գեղեցիկ սեռը. (շիկահեր, խարտյաշ) ~ hair խարտյաշ մազեր. a ~ skin սպիտակ մորթ. s/he is ~ նա շիկահեր է. (մաքուր, պարզ) a ~ copy մաքրագիր. ~ day/weather պարզ օր/եղանակ. (բավական մեծ) ~ size/amount/distance բավական մեծ չափս/քանակություն/հեռավորություն. (բավարար, ոչ վատ) a ~ price լավ գին. ~ knowledge բավարար գիտելիք. a ~ cleance բավականաչափ հնարավորություն. a ~ wage կարգին աշխատավարձ. (արդար, ազնիվ, անաչառ) ~ trial արդար դատավարություն. ~ judge/demand/decision անաչառ դատավոր. արդար պահանջ/որոշում. ~ balance նպաստավոր հաշվեկշիռ. by ~ means ազնիվ ճանապարհով/միջոցներով. a ~ deal ազնիվ գործարք. ~ play/competition ազնիվ խաղ/մրցակցություն. 2. adv ազնվորեն, անկեղծորեն, ուղղակի ~ and softly կամաց, զգույշ. for ~ իսկապես, անկասկած:

**fair-dealing** [ˈfeə,di:lɪŋ] n ազնվություն, անկեղծություն, շիտակություն:

**fairly** [ˈfeəli] adv արդարացիորեն, անաչառորեն. բավականին. ~ well բավականին լավ. ~ speaking անկեղծորեն ասած. still ~ young դեռևս բավականին երիտասարդ:

**fairness** [ˈfeənəs] n ազնվություն, արդարություն. in all ~ ամենայն ազնվությամբ, ան-



կեղծ ասած. social ~ սոցիալական արդարություն:

**fairly** [ˈfeəri] n հավերժահարս, փերի. bad ~ չար ոգի:

**fairly** [ˈfeəri] a կախարդական, հեքիաթային. ~ land հեքիաթային/կախարդական աշխարհ. ~ tale հեքիաթ:

**faith** [feɪθ] n հավատ, վստահություն. հավատարմություն. բարեխղճություն. have a ~ in smb/smt մեկի/մի բանի նկատմամբ հավատ ունենալ. lose one's ~ հավատը կորցնել. break/keep ~ խոսքը դրժել/պահել. shake smb's ~ հավատը սասանել, տարակուսանքի մեջ զգել. pin one's ~ to վստահել, (կուրորեն) հավատալ. good ~ բարեխղճություն, բարյացակամություն. bad ~ անբարեխղճություն, անբարյացակամություն. in bad ~ անբարեխղճորեն. act in all good ~ անկեղծ հավատով գործել. act in bad ~ դավաճանորեն գործել. Upon my ~, in ~ երդվում եմ ազնվությամբ:

**faithful** [ˈfeɪθfʊl] a հավատարիմ, նվիրված. a ~ friend/brother հավատարիմ ընկեր/եղբայր. (ստույգ, ճշգրիտ) a ~ account/portrait/translation/discription ստույգ/ճիշտ հաշվետվություն. ճիշտ դիմանկար. ճշգրիտ թարգմանություն/նկարագրություն. be ~ to one's word/promise իր խոսքին/խոստմանը հավատարիմ լինել/մնալ:

**faithfully** [ˈfeɪθfʊli] adv հավատարմորեն, ազնվորեն. carry out ~ ճշգրտորեն կատարել. (նամակի վերջում) yours ~ խորին հարգանքներով:

**faithfulness** [ˈfeɪθfʊlnəs] n հավատարմություն, ճշտություն. ազնվություն:

**faithless** [ˈfeɪθləs] 1. a անհավատ, անհավատարիմ. ուխտադրուժ:

**fake** [feɪk] 1. n կեղծիք, կեղծում. կեղծ փաստաթուղթ. 2. a կեղծ. 3. v կեղծել, հորինել, սարքել. (հիվանդ) ձևանալ. ~ results արդյունքները կեղծել:

**falcon** [ˈfɔːlkən] n բազե:

**falconer** [ˈfɔːlkənə] n բազեապան:

**falconry** [ˈfɔːlkənri] n բազեներով որս:

**fall** [fɔːl] n անկում, ընկնելը. փխր. անկում, կործանում. ~ from a tree/horse ծառից/ծիուց ընկնելը. (տեղումներ, տարափ) heavy ~ of rain ուժեղ անձրև, տեղատարափ. a ~ of snow ձյունատեղում. ride for a ~ վատ վերջացնել. (անկում, իջեցում) ~ in prices/tem-

perature գների իջեցում, ջերմաստիճանի անկում. ~ in the level of water ջրի մակարդակի անկում. (ջրվեժ) the Niagara ~s Նիագարայի ջրվեժը. the ~ ամ. աշուն:

**fall** [fɔːl] v ընկնել. սպանվել. ~ downstairs/ from a window աստճաններից/պատուհանից ընկնել. The leaves are ~ing տերևները թափվում են. The curtain fell վարագույրը իջավ. (իջնել) Fog/Mist fell Մառախուղը/մշուշը իջավ. The night fell Սթնեց (գիշերն իջավ). Darkness fell Սուրբ ընկավ. (զոհվել) ~ in the battle/by the sword մարտում զոհվել. թրով սպանվել. The government fell փխր. Կառավարությունը տապալվեց. (իջնել, ցածրանալ) His voice fell Նրա ձայնը իջավ. production ~ արտադրությունը անկում ապրեց. ~ ill հիվանդանալ. ~ silent լռել. ~ into a rage կատաղել, գազազել. ~ into love սիրահարվել. ~ into error մոլորության մեջ ընկնել. The lot fell upon me Վիճակն ինձ ընկավ. ~ apart տրոհվել, մասերի բաժանվել. ~ back նահանջել, հետ քաշվել. ~ back upon օգնության դիմել. ~ behind հետ մնալ/ընկնել. ~ down ընկնել, քանդվել. անհաջողություն կրել. ~ for smn/smt անհաղթահարելի հակում ունենալ. ~ in փլվել, փլուզվել. ~ into թափվել, մեջն ընկնել. ~ on հարձակվել. ~ out գժտվել, կապերը խզել. ~ through ծախողվել, տապալվել. ~ under ենթարկվել. ~ upon վրա ընկնել. ~ to pieces փլվել, քանդվել. ջարդուփշուր լինել:

**fallacious** [fəˈleɪʃəs] a սխալ, ոչ ճիշտ. a ~ argument ոչ ճիշտ փաստարկ:

**fallacy** [ˈfæləsi] n մոլորություն, սխալ հետևություն. սոփեստություն:

**fallible** [ˈfæləbəl] a սխալական. All men are ~ Մարդիկ սխալական են:

**fallout** [ˈfɔːlaʊt] n նստվածք. radioactive ~ ռադիոակտիվ նստվածք:

**fallow** [ˈfæləʊ] n գոտ. անմշակ հող, խոպան:

**fallow-deer** [ˈfæləʊdiə] n եղնիկ, վիթ:

**false** [fɔːls] a կեղծ, սխալ սուտ. խարդախ. ~ documents կեղծած փաստաթղթեր. ~ alarm/pride կեղծ տագնապ/հպարտություն. ~ impression/accusation սխալ տպավորություն/մեղադրանք. ~ friend հավատարիմ ընկեր. ~ witness փրավ. կեղծ վկա. bear a ~ witness կեղծ վկայություն տալ. ~ pretence խաբեություն. a ~ note երժշ. սխալ նոտա. (ար-

հետսական) ~ teeth/pearls/coins արհեստական ատամներ/մարգարիտ. կեղծ դրամ. ~ hair կեղծամ: *հմկրգ.* ~ code արգելված կոդ. ~ retrieval սխալ որոնում:

**falsehood** [ˈfɜːlsɪhʊd] n սուտ, ստախոսություն. կեղծություն, կեղծիք:

**falsification** [ˌfɜːlsɪfɪˈkeɪʃn] n կեղծում, կեղծարարություն. ~ of records գրանցումների կեղծում:

**falsify** [ˈfɜːlsɪfaɪ] v կեղծել, խարդախել, աղավաղել. ~ facts փաստերն աղավաղել:

**falsity** [ˈfɜːlsəti] n կեղծություն, կեղծավորություն, անհավատարմություն:

**falter** [ˈfɜːltə] v երերալով քայլել, գայթել. կմկմալ, կակազելով խոսել. His voice ~ed նա կմկմաց:

**faltering** [ˈfɜːltərɪŋ] a դողդոջուն, երերուն, անվճռական. with ~ steps երերալով:

**fame** [feɪm] n համբավ, հռչակ, փաստ. world-wide ~ համաշխարհային հռչակ. widespread ~ լայն հռչակ. win/achieve ~ փառքի հասնել. gain/acquire ~ համբավ/հռչակ ձեռք բերել. be at the height of one's ~ փառքի զենիթում լինել:

**famed** [feɪmd] a հռչակավոր, համբավավոր:

**familiar** [fəˈmɪliə] a ծանոթ. ~ voice/song/name/subject ծանոթ ձայն/երգ/անուն/թեմա. be ~ ծանոթ լինել. make oneself ~ ծանոթանալ. make oneself ~ with details մանրամասնորեն ծանոթանալ. (մտերիմ) be on ~ terms with մտերիմ լինել:

**familiarity** [fəˈmɪliˈærəti] n մտերմություն, մոտիկություն. քաջատեղյակ, լավատեղյակ. ~ with historical facts պատմական փաստերին լավատեղյակ լինել:

**familiarize** [fəˈmɪliəraɪz] v ծանոթացնել, սովորեցնել, վարժեցնել:

**family** [ˈfæmli] n ընտանիք. numerous/poor/wealthy/aristocratic ~ բազմանդամ/աղքատ/հարուստ/ազնվական ընտանիք. support/desert one's ~ սատարել/լքել ընտանիքը. ~ allowance ընտանեկան նպաստ. the head of the ~ ընտանիքի գլուխը. a man of ~ ընտանիքավոր մարդ. treat as one of the ~ վերաբերվել որպես ընտանիքի անդամի. run in the ~ ընտանիքում ժառանգական լինել. (ցեղ, դաս) cat ~ կատվացեղ. *հմկրգ.* շարք, համախմբություն. ~ of application system կիռարական համակարգերի ընտանիք. ~ of solutions լուծումների ընտանիք, բազմաթիվ լուծումներ:

**family** [ˈfæmli] a ընտանեկան, տոհմական,

ժառանգական. the ~ circle ընտանեկան շրջանակ. ~ ties ընտանեկան կապեր. a ~ likeness ընտանեկան նմանություն. ~ life ընտանեկան կյանք. a ~ estate/tree տոհմական կալվածք/ծառ. ~ doctor ընտանեկան բժիշկ. ~ law ընտանեկան իրավունք. be in the ~ way հղի լինել. ~ name ազգանուն:

**famine** [ˈfæmɪn] n սով, քաղց. ~ years սովի տարիներ:

**famish** [ˈfæmɪʃ] v սովածախ լինել, սովից մեռնել. I am ~ing *խսկց.* Շատ քաղցած եմ, Սովից մեռնում եմ:

**famous** [ˈfeɪməs] a հայտնի, հռչակավոր, անվանի. ~ writer/scientist անվանի գրող/գիտնական. become ~ հայտնի/հռչակավոր դառնալ. The city is ~ for its monuments Քաղաքը հայտնի է իր հուշարձաններով. That's ~ *խսկց.* Հոյակապ է:

**fan** [fæn] n հովհար. *տեխ.* օդափոխիչ. (ինքնաթիռի/նավի պտուտակի) թև. ~ belt օդափոխիչի գոտի. ~ light հովհարածև պատուհան:

**fan** [fæn] n սլ երկրպագու. *խսկց.* սիրող. football ~ ֆուտբոլասեր. ~ mail նամակներ երկրպագուներից:

**fan** [fæn] v հովհարել. ~ the flame կրակը բորբոքել. *փխք.* կրքեր բորբոքել. *գղտ.* քամհարել:

**fanatic** [fəˈnætɪk] n մոլի կողմնակից, ֆանատիկոս.

**fanatical** [fəˈnætɪkəl] a մոլեռանդ, մոլեռանդական:

**fanaticism** [fəˈnætɪsɪz(ə)m] n մոլեռանդություն, ֆանատիզմ:

**fancier** [ˈfænsiə] n գիտակ, իրազեկ, սիրող:

**fanciful** [ˈfænsɪfl] a տարօրինակ, արտասովոր. երևակայական, ցնորական. մտացածին. ~ idea անիրական գաղափար:

**fancy** [ˈfænsi] n երևակայություն. power of ~ երևակայության ուժը. catch smb's ~ զարմացնել, շշմեցնել. (մտապատկերել, թվալ) have a ~ թվալ, պատկերացնել. It's just your ~ *Ղա քեզ պարզապես թվացել է.* (քմահաճույք) a passing ~ հերթական քմահաճույք. as the ~ takes him ինչպես ուզենա, քմահաճույքով. (ճաշակ, հակում) have a ~ for smth սիրել մի բան, տարվել մի բանով. The dog took my ~ Այս շունն ինձ գերեց. This wine is not to my ~ Այս գինին իմ ճաշակով չէ:

**fancy** [ˈfænsi] a ցնորական, անիրական, տարօրինակ, ֆանտաստիկ. ~ patterns տարօրինակ նախշ. ~ cakes/prices ֆանտաստիկ թխվածք/զներ. a ~ shirt *խսկց.* պճնամուկի վերնաշապիկ. ~ ball դիմակահանդես. ~ dress դիմակահանդեսի հագուստ. ~ goods նորածն/բաժրորակ ապրանքներ:

**fancy** [ˈfænsi] v երևակայել, պատկերացնել. ենթադրել, կարծել. սիրել, հավանել. I can't ~ him a doctor ես նրան չեմ կարող բժիշկ պատկերացնել. Just/Only ~! Միայն պատկերացրու. eat whatever one fancies ուտել ինչ ցանկանալ:

**fancy-work** [ˈfænsiwə:k] n ասեղնագործություն:

**fang** [fæŋ] n ժանիք. (օձի) թունավոր ատամը. *տեխ.* ատամ:

**fanner** [ˈfænə] n քամիար:

**fantastic** [fænˈtæstɪk] a կախարդական, հեքիաթային. արտասովոր, արտառոց. անիրական, երևակայական. ֆանտաստիկ:

**fantasy** [ˈfæntəsi] n երևակայություն, քնահաճույք, ֆանտազիա:

**far** [fa:] a հեռավոր, հեռու. at the ~ end հեռավոր ծայրում. don't go ~ հեռու մի գնացեք. ~ countries հեռավոր երկրներ. the ~ bank of the river գետի մյուս ափը. Far East Հեռավոր Արևելք:

**far** [fa:] adv հեռու. how ~? Ի՞նչ հեռավորության (վրա է). ~ away հեռվում. from ~ away հեռվից. ~ and near/wide ամենուրեք. by ~ շատ ավելի, անհամեմատ. so ~ as քանի որ. մինչև որ. thus ~ մինչև հիմա. (*այլ օգտ.*) ~ quicker շատ ավելի արագ. ~ better շատ ավելի լավ. as ~ as որքանով. ~ from it բոլորովին ոչ. so ~ առայժմ. go too ~ շատ հեռուն գնալ, չափից ավելի լինել. things/matters went so ~ գործն այնտեղ հասավ, որ. as ~ back as դեռևս. ~ back in history հեռավոր (պատմական) անցյալում. So ~ so good (առայժմ) Ամեն ինչ կարգին է:

**faraway** [ˌfa:rəˈwei] a հեռու, հեռավոր. *փխք.* երազկոտ. a ~ look երազկոտ հայացք:

**far-between** [ˌfa:biˈtwi:n] a հազվագյուտ, հազվադեպ:

**farce** [fa:s] n *թատր., գրկ.* զավեշտախաղ, ֆարս. անհեթեթ/անմիտ բան:

**farce** [fa:s] n *խոր.* լցոն, խորիզ:

**farcical** [ˈfa:sɪkəl] a անհեթեթ:

**fare** [feə] n ծանապարհածախս, տոմսի ար-

ժեք. տաքսու ուղևոր. What's the ~? Տոմսը ի՞նչ արժեք. round trip ~ գնալ-գալու տոմսի արժեք. one way ~ մեկ ուղղությամբ տոմսի արժեք collect the ~s տոմսերի արժեքը հավաքել. (ուտելիք, սնունդ) bad/poor ~ վատ սնունդ. bill of ~ ճաշացուցակ. simple / plain ~ հասարակ/պարզ սնունդ:

**farewell** [ˌfeəˈwel] n հրաժեշտ. take ~ of smb, bid ~ to smb. հրաժեշտ տալ մեկին:

**farewell** [ˌfeəˈwel] int մնաս/մնաք բարով. բարի ճանապարհ:

**r-famed** [ˈfa:,feɪmɪd] a հանրածանոթ:

**far-fetched** [ˌfa:ˈfetʃt] a անբնական, բռնազբոսիկ. a ~ comparison բռնազբոսիկ համեմատություն. a ~ story անբնական/հնարովի պատմություն:

**farm** [fa:m] n ագարակ. ֆերմա. գյուղացիական տնտեսություն. milk ~ կաթնաֆերմա. fruit ~ մրգատու/հատապտուղի ֆերմա. poultry ~ թռչնաբուծական ֆերմա. family ~ ընտանեկան ֆերմա. silver-fox ~ արծաթափայլ աղվեսների բուծարան:

**farm** [fa:m] v գյուղատնտեսությամբ զբաղվել. հողը մշակել. /վարձակալության տալ:

**farm** [fa:m] a գյուղատնտեսական. ~ labourer/worker գյուղաշխատող, ֆերմայի աշխատող, բատրակ:

**farmer** [ˈfa:mə] n ագարակատեր, ֆերմեր. վարձակալ:

**farm-hand** [ˈfa:mhænd] n աշխատավոր, մշակ (ագարակում, ֆերմայում):

**farm-house** [ˈfa:mhaus] n ագարակատուն:

**farming** [ˈfa:mɪŋ] n գյուղատնտեսություն, հողագործություն, անասնաբուծություն. high/backward ~ զարգացած/հետամնաց գյուղատնտեսություն. take up ~ գյուղատնտեսությամբ զբաղվել:

**farm-stead** [ˈfa:msted] n ագարակը իր բոլոր շինություններով:

**farmyard** [ˈfa:mjɑ:d] n ագարակի տարածքը:

**far-reaching** [ˌfa:ˈri:tʃɪŋ] a հեռու գնացող, մեծ հետևանքների հանգեցնող. հեռանկարային. ~ progress հեռուն գնացող առաջընթաց:

**farrow** [ˈfærəʊ] n խոճկոր, զոճի. խոզի ծինը:

**far-seeing** [ˌfa:ˈsi:ɪŋ] a (նաև farsighted) հեռատես. *փխք.* շրջահայաց:

**far-sightedness** [ˌfa:ˈsaɪtɪdnəs] n հեռատես-

սություն. *փխք*. շրջահայեցություն, հեռատեսություն:  
**farthest** [ˈfɑːðɪst] a հեռավոր, ամենահեռու. at (the) ~ ամենաուշը:  
**fascinate** [ˈfæʃɪneɪt] v հրապուրել, դյուրեղ. հմայել, կախարհել. be ~d by հրապուրվել. watch ~d հմայված դիտել:  
**fascinating** [ˈfæʃɪneɪtɪŋ] a հրապուրիչ, դյուրեղ, հմայիչ. a ~ job/idea/book հրապուրիչ աշխատանք, գրավիչ գաղափար. կլանող գիրք. It's ~ to listen to him Նրան լսելը չափազանց հետաքրքիր է:  
**fascination** [ˌfæʃɪˈneɪʃn] n հմայք, թվազանք. կախարհանք. have a strange ~ հատուկ հմայք ունենալ:  
**fashion** [ˈfæʃn] n ձև, կերպ, եղանակ. in this ~ այս ձևով/կերպ. in similar ~ նման ձևով/կերպ. after/in a ~ մի կերպ, որոշ չափով. after the ~ of որևէ բանի օրինակով/նման. in a strange ~ տարօրինակ կերպով. (նորածնություն, մոդա) the latest ~ վերջին նորածնությունը. be the /be in ~ մոդա լինել. follow the ~ մոդային հետևել. come into/go out of ~ մոդայիկ դառնալ/մոդայից դուրս գալ. set the ~ մոդա սահմանել/դարձնել:  
**fashionable** [ˈfæʃnəbl] a նորածն, մոդայական. շքեղ, վայելուչ:  
**fashion-monger** [ˈfæʃn,mʌŋgə] n պճնասեր, մոդայամուլ:  
**fashion-paper** [ˈfæʃn,pɛɪpə] n մոդայիկ հանդես/ամսագիր/ժուռնալ:  
**fashion show** [ˈfæʃn,ʃəʊ] n մոդաների ցուցադրում:  
**fast** [fɑːst] 1. n *կրոն*. պահք/պաս, ծոմ. break a ~ պասը բացել, թաթախվել. a ~ day պասուց օր. 2. v պահք/պաս պահել:  
**fast** I [fɑːst] 1. a արագ, սրընթաց. a ~ train արագընթաց գնացք. My watch is 5 min. ~ Իմ ժամացույցը 5 րոպե առաջ է. a ~ film զգայուն ֆոտոժապավեն. (ցոփ, թեթևամիտ) live a ~ life թեթևամիտ կյանք վարել. be of the ~ set զբոսամուկ/քեֆի լինել. 2. adv արագ, արագորեն. live ~ կյանքը վատնել. work/run/type ~ արագ աշխատել/վագել/տպել:  
**fast** II [fɑːst] a ամուր, պինդ, դիմացկուն. a ~ grip/hold ամուր բռնելը. a hard and ~ rule խիստ կանոն. ~ decision հաստատ որոշում. play ~ and loose պարտականությունը չկատարել. make a boat/rope ~ ամրացնել նավա-

կը/պարանը. ~ colours դիմացկուն/չխունացող գույներ:  
**fast** [fɑːst] adv ամուր, պինդ կերպով. ~ asleep պինդ քնած. stand ~ ամուր կանգնել. be shut ~ ամուր փակված լինել:  
**fasten** [ˈfɑːsn] v ամրացնել, կապել. սևեռել. ~ tightly/loosely/securely ամուր/թույլ/հուսալի կերպով ամրացնել. ~ (up) a parcel ծանրոցը կապել. (փակել, կողպել) ~ a door/a window դուռը /պատուհանը փակել/կողպել. ~ a mirror հայելին կախել/ամրացնել. (հագուստը և այլն) ~ (up) a shirt/belt/skirt վերնաշապիկը կոճկել, գոտին (ճարձանդով) ամրացնել. փեշը F~ the seat belts! Գոտիները ամրացրեք. *փխք*. ~ one's eyes on smb հայացքը մեկին սևեռել. ~ one's hopes on smb/ smth հույսերը մեկի հետ կապել. The door won't ~ Դուռը չի կողպվում, ~ on to an idea գաղափարին կառչել. ~ the crime on մեղքը բարդել:  
**fastener** [ˈfɑːsnə] n փակ. փական. սողնակ. կոճակ. ճարձանը:  
**fastidious** [fæˈstɪdiəs] a դժվարահաճ, պահանջկոտ. ~ about food/in one's dress պահանջկոտ/դժվարահաճ ուտելիքի/հագուստի նկատմամբ:  
**fat** [fæt] n ճարպ, յուղ inclined to run to ~ գիրանալու հակում ունենալ. fry in ~ յուղով տապակել. The ~ is in the fire Փորձանքն անխուսափելի է. ~ content յուղի քանակը:  
**fat** [fæt] a յուղալի, ճարպոտ. ~ food/meat յուղալի սննդամթերք, ճարպոտ միս. a ~ woman/ cheeks/cattle գեր կին, չաղիկ թշեր, բտած անասուն. grow/get/become ~ գիրանալ, չաղանալ. ~ soil պարարտ/բերրի հող. a ~ wallet/salary *փխք*. հաստ դրամապանակ, բարձր աշխատավարձ. cut up ~ մեծ ժառանգություն թողնել. a ~ lot *խսկց*. ինչպես չէ A ~ lot you know Շատ բան ես հասկանում, ինչպես չէ. A ~ lot you care Շատ ես անհանգստանում, ինչպես չէ:  
**fatal** [ˈfeɪl] a ճակատագրական. մահացու, մահաբեր, կորստաբեր. a ~ mistake ճակատագրական սխալ. ~ shot մահացու կրակոց. ~ accident/injury մահացու պատահար/վնասվածք. The wound was ~ Վերքը մահացու էր. It would be ~ to mention it *խսկց*. Մտքովդ չանցնի այդ մասին հիշատակել:  
**fatalit/y** [fəˈtæləti] n աղետ, մահ, դժբախտություն, road ~ies ճանապարհային

պատահարներ/դժբախտ դեպքեր/վթարներ. There were no ~ies Մահացու դեպքեր չկային:

**fate** [feit] **n** բախտ, ճակատագիր. decide smb's ~ մեկի բախտը որոշել. accept one's ~ ճակատագիրն ընդունել. leave smb to his/her ~ բախտի քմահաճույքին թողնել. tempt ~ բախտը փորձել. share the same ~ բախտակից լինել. as sure as ~ հաստատ. meet one's ~ զոհվել. His ~ is sealed Նրա բախտն արդեն որոշված է:

**fate** [feit] **v** կանխորոշել, նախորոշել. He was ~d նրան վիճակված էր. They were not ~d Նրանց վիճակված չէր:

**fateful** ['feitfl] **a** ճակատագրական, վճռական:

**fat-head** ['fæthed] **n** հիմարի գլուխ, տխմար, ապուշ մարդ:

**father** ['fɑ:ðə] **n** հայր. cruel/strict/indulgent ~ դաժան/խիստ/ներողամիտ հայր. adoptive ~ հոգեհայր. resemble/take after one's ~ հորը նման լինել. like ~ like son խնձորը ծառից հեռու չի ընկնում. (քահանա) Our Father Յայր Մեր (աղոթք). ghostly ~ խոստովանահայր. Pilgrim F~s ամերիկյան առաջին զաղութաբնակները. ~-in-law աներ, սկեսրայր:

**father** ['fɑ:ðə] **v** հայր/ստեղծող/հեղինակ լինել. հայրություն անել, որդեգրել. *հմկրգ.* ~ file սկզբնական/ելակետային ֆայլ:

**fatherhood** ['fɑ:ðəhʊd] **n** հայրություն:

**fatherland** ['fɑ:ðələnd] **n** հայրենիք:

**fatherless** ['fɑ:ðələs] **a** անհայր, հորից զուրկ:

**fatherly** ['fɑ:ðəli] **1.** **a** հայրական. **2.** **adv** հայրաբար:

**fathom** ['fæðəm] **1.** **n** երկարության ծովային միավոր (1, 82մ). **2.** **v** խորությունը չափել. *փհսբ.* խորը թափանցել, հասկանալ. ~ a mystery առեղծվածը հասկանալ:

**fathomless** ['fæðəmləs] **a** անհատակ, անհուն. անչափելի:

**fatigue** [fə'ti:ɡ] **1.** **n** հոգնածություն. հոգնեցնող/ծանր աշխատանք. **2.** **v** հոգնեցնել, ուժասպառ անել. be ~d ուժասպառ լինել:

**fatling** ['fætlɪŋ] **n** գիրացրած/մսացու անասուն:

**fatness** ['fætnəs] **n** գիրություն, չաղություն. (հողի) պարարտություն/պտղաբերություն:

**fatten** ['fætn] **v** չաղացնել, բտել (անասուն): **fatty** ['fæti] **a** գեր, չաղ. ճարպային. ~ tissue *կզմ/ս.* ճարպային հյուսվածք:

**fatuous** ['fætjuəs] **a** հիմար, տխմար, անմիտ. a ~ smile հիմար ժպիտ:

**faucet** ['fɑ:sit] **n** ջրի ծորակ:

**faugh** [fɑ:] **int** թո՛ւ, թո՛ւհ

**fault** [fɑ:lt] **n** սխալ, թերություն, արատ. a ~ in essay սխալ ստեղծագործության մեջ. find ~ with մանրախնդրություն անել. *տե/ս.* անսարքություն, վթար a ~ in the electrical system անսարքություն էլեկտրական համակարգում. (մեղք) He is at ~ նա մեղավոր է/ճիշտ չէ. without ~ անմեղ. personal ~ անձնական մեղք. admission of ~ մեղքի ընդունում. Unless my memory is at ~ եթե ինձ իմ հիշողությունը չի դավաճանում. be at ~ հետքը կորցնել: *հմկրգ.* ~ - tolerant system սխալների նկատմամբ կայուն համակարգ. ~ avoidance անսարքության կանխում. ~ detection սխալների հայտնաբերում. ~ look up անսարքությունների որոնում:

**faultfinder** ['fɑ:ltfaɪndə] **n** մանրախնդիր/բժախնդիր անձ. *տե/ս.* արատացույց (սարք):

**faultless** ['fɑ:ltləs] **a** անբասիր, անպարսպելի:

**faulty** ['fɑ:lti] **a** սխալ. *տե/ս.* վնասված, անսարք, խտանված. ~ goods խտանված ապրանքներ:

**faun** [fɑ:n] **n** *դից.* այծամարդ:

**fauna** ['fɑ:nə] **n** կենդանական աշխարհ, ֆաունա:

**favour** ['feivə] **n** բարեհաճություն, հակվածություն, համակրանք: win ~ with մեկի բարեհաճությունը շահել. find ~ in the eyes of smn մեկի բարեհաճությանը արժանանալ. look with ~ բարյացակամորեն նայել. in/out of ~ լավ/վատ հարաբերությունների մեջ լինել: speak in ~ of մեկի օգտին խոսել. (սիրալիրություն, հովանավորություն, օգնություն) do smn a ~ շնորհ անել, բարի լինել. do as a ~ որպես սիրալիրություն անել. ask a ~ of smn խնդրանք ունենալ. appreciate the ~ գնահատել սիրալիրությունը. in ~ ի օգուտ, հոգուտ. by your ~ ձեր թույլտվությամբ. under ~ of հովանու/հովանավորության ներքո. a cheque in ~ of վճարագիր ի օգուտ. show ~ to smn որևէ մեկին առավելություն

տալ. speak in ~ of մեկի օգտին խոսել:

**favour** ['feivə] v հավանություն տալ. բարեհաճ/սիրալիք լինել ~ the proposal առաջարկին հավանություն տալ. (աջակցել) The facts ~ the theory Փաստերը խոսում են հօգուտ տեսության. (գերադասել, նախընտրել). ~ clever students գերադասել խելացի ուսանողներին. (շնորհ անել, պարտավորեցնել) ~ with a reply շնորհ անել/բարի լինել պատասխանել. He ~ed us with a smile Եւ բարեհաճեց ժպտալ. (նման լինել) He ~s his father Եւ նման է իր հորը:

**favourable** ['feivərəbl] a բարենպաստ, նպաստավոր. opportunity/weather/situation բարենպաստ հնարավորություն/եղանակ/իրավիճակ ~ outcome նպաստավոր արդյունք. (բարյացակամ, բարեհաճ) ~ surroundings/attitude բարյացակամ միջավայր/վերաբերմունք:

**favoured** ['feivəd] a արտոնյալ, արտոնված. բարեբեր:

**favourite** ['feivərət] n, a սիրեցյալ, հովանավորյալ. սիրելի, սիրած. general ~ բոլորի կողմից սիրված:

**fawn** [fɔ:n] n եղնիկի ձագ. դեղնադարչնագույն:

**fawn** [fɔ:n] v գգվել. The dog ~ed Շուները պոչը խաղացնում էր. ~ on smb *փխք*. քծնել, շողոքորթել:

**fawning** [fɔ:nɪŋ] a ստորաքարշ, ստրկաբարո: *հմկրգ*.

**fax** [fæks] n ֆաքս, հեռապատճեն:

**FDD** ['fɒpi disk draɪv] floppy disk drive ճկուն սկավառակ, սկառավակակիր:

**fear** [fiə] n վախ, ահ, երկյուղ. ~ of death /loneliness/unknown մահվան երկյուղ. մենակության վախ. անհայտության ահը. for ~ of ահից, վախից. ~ overtook/seized/gripped her Ահը նրան պատեց. without ~ or favour անաչառորեն, անկողմնակալ կերպով. No ~! Ոչ մի դեպքում. No reason for your ~s Անհանգստանալու ոչ մի հիմք չկա:

**fear** [fiə] v վախենալ, երկյուղ կրել, անհանգստանալ. ~ the worst վատագույնից վախենալ. I ~ that ... Վախենում եմ, որ... Don't ~ Մի՛ անհանգստացեք:

**fearful** ['fiəfl] a վախկոտ, երկչոտ. վախեցած. սարսափելի, զարհուրելի. be ~ of վախենալ:

**fearless** ['fiələs] a անվախ:

**fear-monger** ['fiə,mʌŋgə] n խուճապարար:

**fearsome** ['fiəsəm] a սարսափելի, զարհուրելի:

**feasibility** [,fi:zə'biləti] n իրագործելիություն, պիտանիություն. ~ study գործնական կիրառության ուսումնասիրություն. technical ~ study տեխնիկական իրագործելիության ուսումնասիրություն:

**feasible** ['fi:zəbl] a հնարավոր, իրագործելի, պիտանի:

**feast** [fi:st] 1. n խնջույք, քեֆ. (պաշտոնական) ճաշկերույթ. 2. v հյուրասիրել, տոնել. քեֆ անել. ~ one's friends ընկերներին հյուրասիրել:

**feat** [fi:t] n սխրագործություն. ~ of arms ռազմական սխրագործություն:

**feather** ['fedə] 1. n փետուր. as light as a ~ փետուրի նման թեթև. a ~ in one's cap պարծանքի առարկա. crop one's ~s մեկի թևերը կտրել. birds of a ~ մի սամրի կտավ. be in fine ~ *փխք*. լավ տրամադրության մեջ լինել. singe one's ~s թևերը խանձել, անհաջողություն կրել. 2. v փետուրներով զարդարել, փետրավորել. ~ one's nest *փխք*. գրպանները լցնել:

**feather-brained** ['fedəbreɪnd] a դատարկ, թեթևամիտ:

**feathering** ['fedəriŋ] n փետրավորում:

**featherweight** ['fedəweɪt] n *մրգ*. փետրաբաշ:

**feathery** ['fedəri] a փետրավոր, փետուրներով ծածկված. փետուրի նման թեթև:

**feature** ['fi:tʃə] n հատկանիշ. ~s դիմագիծ. distinguishing ~s առանձնահատկության բնորոշ գծեր. ~ of one's character բնավորության առանձնահատկություն. ~ articles (թերթի և այլն) հիմնական/մշտական հոդվածներ. (գիծ) main/basic/outstanding/common ~ գլխավոր/հիմնական/տարբերիչ, բնորոշ/ընդհանուր գիծ. ~ (film) լիամետրաժ, գեղարվեստական ֆիլմ. ~ writer ակնարկագիր:

**feature** ['fi:tʃə] v նկարագրել, պատկերել, ցուցադրել. The film ~s the battle Ֆիլմը պատկերում է ճակատամարտ. The news was ~d on the front page Նորությունը տպված էր թերթի առաջին էջի վրա:

**featureless** [ˈfi:tʃələs] a անարտահայտիչ:  
**febrile** [ˈfi:brail] a բժշկ. տենդային, տենդի:  
**February** [ˈfebruəri] n, a փետրվար.  
 փետրվարի, փետրվարյան:  
**feckless** [ˈfekləs] a անօգնական, անճարակ:  
**feculent** [ˈfekjələnt] a պղտոր:  
**fecund** [ˈfekənd] a պտղաբեր. *փխբ.* արգասավոր, բեղմնավոր:  
**fecundity** [fiˈkʌndəti] n պտղաբերություն.  
*փխբ.* արգասավորություն:  
**federal** [ˈfedərəl] a դաշնային. ~ republic  
 դաշնային հանրապետություն:  
**federation** [ˌfedəˈreɪʃn] n դաշնություն.  
 միավորում, միություն, ֆեդերացիա:  
**federative** [ˈfedərətɪv] a դաշնակցային:  
**fee** [fi:] n վարձ, վարձատրություն. հոնորար.  
 doctor's ~ բժշկի այցելավարձ. membership ~  
 անդամավճար (անդամության). entrance ~  
 անդամավճար (մուտքի). club ~ ակումբի  
 անդամավճար. admission ~ մուտքի վճար.  
 licence ~ արտոնագրի վճար. tuition ~s ուս-  
 ման վարձ. professional ~s պատվավճար.  
 court ~s դատական տուրք:  
**feeble** [ˈfi:bl] a թույլ. վատառողջ. տկար.  
 grow ~ թուլանալ, տկարանալ. a ~ joke  
*խսկց.* անհամ կատակ:  
**feble-minded** [ˌfi:blˈmaɪndɪd] a թուլամիտ,  
 տկարամիտ:  
**feed** [fi:d] n սնունդ, կեր. անասնակեր. *տեխ.*  
 սնուն. *հմկրգ.* ~back հետադարձ կապ. ~ cir-  
 cuit հետադարձ կապի սխեմա. ~ signal հե-  
 տադարձ կապի ազդանշան:  
**feed** [fi:d] v կերակրել, սնել. ~ the children  
 երեխաներին կերակրել. He has to ~ a family  
 Նա պետք է ընտանիք կերակրի. *տեխ.* մա-  
 տակարարել The pipe ~s water/oil խողո-  
 վակը ջուր/նավթ է մատակարարում. ~ in-  
 formation into a computer համակարգչի մեջ  
 տեղեկություններ մտցնել. (սնվել) In sum-  
 mer we mostly ~ on fruits Ամռանը մենք հիմ-  
 նականում մրգերով ենք սնվում. be fed up  
*խսկց.* մինչև կոկորդը կշտացած լինել/  
 զգված լինել. ~ back *տեխ.* հետադարձ կապ.  
 audience ~ back լսարանի արձագանքը:  
**feeder** [ˈfi:də] n ուտող, խնամառու. large ~  
 շատակեր. երեխային կերակրելու ծծակ.  
*տեխ.* սնուցող մեխանիզմ:  
**feeding stuffs** [ˈfi:diŋstʌfs] n կեր:  
**feel** [fi:] v զգալ. ~ well/bad լավ/վատ զգալ. ~

ill/happy/gilty/tired հիվանդ/երջանիկ/ մեղա-  
 վոր/հոգնած զգալ. ~ quite oneself առույգ/  
 լավ զգալ. ~ limp սաստիկ թույլ զգալ. ~ stiff  
 մարմինը ջարդրտվել. (շոշափել) ~ the pulse  
 զարկերակը շոշափել. ~ the weight of ծան-  
 րությունը զգալ. ~ one's way խարխափելով  
 գնալ. ~ for the switch անջատիչը փնտրել.  
 (ապրումներ ունենալ) ~ a friend's death վե-  
 րապրել ընկերոջ մահը. ~ the insult deeply  
 խոր վիրավորանք զգալ. ~ strongly about  
 զայրույթ զգալ որևէ բանի նկատմամբ. ~ the  
 beauty of the nature բնության գեղեցկությու-  
 նը զգալ. ~ for smn մեկին կարեկցել/համա-  
 կրել. ~ like ցանկանալ. ~ like eating/drining  
 ուտել/խմել ցանկանալ. Do you ~ like a  
 swim? Կուզենայի՞ր լողանալ. It ~s like rain  
 Կարծես անձրև է գալու:

**feeler** [ˈfi:lə] n կենդ. բեղիկ, շոշափուկ:

**feeling** [ˈfi:liŋ] n զգացմունք, զգացում. a ~  
 of cold/fear ցրտի/վախի զգացում. sincere/  
 deep/strong ~ անկեղծ/խորը/ուժեղ զգացում  
 have no ~ in one's arm թևը թմրել. ~ of  
 pride/gratitude հպարտության/շնորհակալու-  
 թյան զգացում. ~ of inferiority/superiority ան-  
 լիարժեքության/գերլիարժեքության զգա-  
 ցում. (զգացողություն) strange/queer ~  
 տարօրինակ զգացողություն. a ~ for lan-  
 guages լեզվական զգացողություն. have no ~  
 for anyone ոչ ոքի մասին չմտածել. be  
 dead/lost to all ~ անզգա լինել, ոչ մի զգաց-  
 մունք չունենալ. lose control of one's ~s ինք-  
 նատերապետունը կորցնել. (կարծիք) good/  
 ill ~ լավ/վատ կարծիք. My ~ is that ...ես  
 կարծում եմ, որ... The general ~ was ...  
 Ընդհանուր կարծիքն այն էր...:

**feign** [feɪn] v կեղծել, ձևանալ. ~ illness /indif-  
 ference հիվանդ/անտարբեր ձևանալ:

**feint** [feɪnt] n կեղծում, ձևացում. *ռզմ.* կեղծ/  
 սուտ հարձակում. *մրգ.* կեղծ հարված. make  
 a ~ of ձևանալ:

**feldspar** [ˈfeldspɑ:] n *հմբ.* դաշտային սպաթ:

**felicitate** [fəˈlɪsɪteɪt] v շնորհավորել:

**felicitous** [fəˈlɪsɪtəs] a հարմար, հաջող, դի-  
 պուկ:

**felicity** [fəˈlɪsəti] n բախտ, երջանկություն:

**feline** [ˈfi:lɪn] a կատվի, կատվային:

**fell** [fel] n մորթի, մուշտակ:

**fell** [fel] v խփել, հարվածել. հատել, կտրել-  
 զցել, վայր զցել (ծառը):

**fellow** [ˈfeləʊ] n մարդ, երիտասարդ տղա. clever/foolish/agreeable/strange ~ խելացի/տխմար/հաճելի/տարօրինակ տղա. poor ~ ! խեղճ մարդ. that journalist ~ այդ լրագրողը. old ~ ծերուկ, բարեկամ. (գործընկեր, ընկեր) a ~ pupil դասընկեր. a ~ worker գործընկեր. ~ traveller/passenger ուղեկից. ~ countryman հայրենակից, երկրակից. (գիտական ընկերության անդամ) ~ of a college քոլեջի անդամ-դասախոս. research ~ ավագ գիտաշխատող:

**fellow-feeling** [ˌfeləʊˈfi:lɪŋ] n համակրություն, համակրանք. հայացքների/կարծիքների ընդհանրություն:

**fellowship** [ˈfeləʊʃɪp] n ընկերություն, ընկերակցություն. ընկերականության զգացում. անդամություն (քոլեջի, խորհրդի):

**felonious** [fəˈlɒniəs] a հանցավոր, չարամիտ. ~ intent հանցավոր նպատակ:

**felon/y** [ˈfeləni] *հրավ.* քրեական հանցագործություն. ~ies and misdemeanours հանցանքներ և զանցանքներ:

**felt** [felt] n թաղիք, նրբաթաղիք, ֆետր:

**felt** [felt] a թաղիքե. a ~ hat թաղիքե գլխարկ. ~ slippers թաղիքե հողաթափիկներ. ~ boots կաճյա /թաղիքե կոշիկներ (վալենկա):

**female** [ˈfi:meɪl] n կին (*նաև արհմ.*). *կենդ.* էգ. ~ voice կանացի ձայն. ~ part կանացի/կնոջ դեր:

**female** [ˈfi:meɪl] a իգական, իգական սեռին պատկանող/ներկայացուցիչ. the ~ sex կանացի սեռը. a ~ insect էգ միջատ:

**femininity** [ˌfemiˈneɪti] n կանացիություն:

**feminine** [ˈfemɪni] a իգական, կանացի. կանացիական, մեղմ, քնքուշ:

**fen** [fen] n ճահիճ, ճահճուտ:

**fen-berry** [fenˈberi] n լոռամրգի:

**fence** [fens] n ցանկապատ. picket ~ ցապատ. stone/brick/green ~ քարե/աղյուսե/կենդանի բույսի ցանկապատ. *փխբ.* գողունի թաքստոց. *մրգ.* սուսերամարտ. sit on the ~ *փխբ.* սպասողական/չեզոք դիրք գրավել:

**fence** [fens] v ցանկապատել. ~ in a garden այգին ցանկապատել. *մրգ.* սուսերամարտել. *փխբ.* ~ and give no direct reply (*նաև* ~ with a question) ուղղակի պատասխանից խույս տալ:

**fencing** [ˈfensɪŋ] n ցանկապատում. ցանկապատի նյութ. *մրգ.* սուսերամարտում:

**fend** [fend] v հետ մղել, կասեցնել. ~ off a blow/ an attack հարվածը/հարձակումը կասեցնել. ~ for oneself ինքն իրեն պաշտպանել, իր մասին հոգալ:

**fender** [ˈfendə] n պաշտպանական ցանց/վահանակ. բուխարու ցանց. (ավտոմեքենայի) ցեխավահանակ:

**fennel** [ˈfenl] n *բսբ.* սամիթ:

**ferment** [ˈfɜ:ment] n մակարդ, խմորիչ, խմորում. ֆերմենտ:

**ferment** [fɜˈment] v *քիմ.* թթվել, խմորվել, խմորում առաջացնել:

**fermentation** [ˌfɜ:menˈteɪʃn] n խմորում, ֆերմենտացիա. *փխբ.* խմորում, խռովություն:

**fern** [fɜ:n] n *բսբ.* ծարխտո:

**ferocious** [fəˈrəʊʃəs] a վայրենի, վայրագ, կատաղի. *խսկց.* սարսափելի, անտանելի:

**ferocity** [fəˈrɒsəti] n վայրենություն, վայրագություն, դաժանություն:

**ferret** [ˈferɪt] n *կենդ.* կզաքիս:

**ferret** [ˈferɪt] v (կզաքիսով) որսալ. (բնից/որջից) դուրս քշել. go ~ing (կզաքիսով) որսի գնալ/որս անել. ~ out a secret *փխբ.* գաղտնիքը դուրս կորզել. ~ about in one's pocket գրպանում փնտրել/պրպտել:

**ferriferous** [feˈrifərəs] a երկաթախառն, երկաթ պարունակող:

**ferro-concrete** [ˌferəʊˈkɒŋkri:t] n երկաթբետոն:

**ferrous** [ˈferəs] a *քիմ.* երկաթային, երկաթ պարունակող:

**ferry** [ˈferi] 1. n լաստանավ. գետանց (*նաև* ~ boat). a roll-on-roll-off ~ ավտոմեքենաներ տեղափոխող լաստանավ. take a ~ լաստանավով գնալ. ~ man լաստավար, նավակավար. 2. v լաստանավով փոխադրել/անցնել:

**fertile** [ˈfɜ:taɪl] a պտղաբեր, պտղավետ. *փխբ.* արգասավոր, հարուստ առատ. a ~ writer/imagination արգասավոր գրող, հարուստ երևակայություն:

**fertility** [fɜ:ˈtɪləti] n պտղաբերություն. *կենս.* բեղմնավորություն. *փխբ.* հարստություն:

**fertilization** [ˌfɜ:təlaɪˈzeɪʃn] n պարարտացում. *կենս.* բեղմնավորում:

**fertilize** [ˈfɜ:təlaɪz] v պարարտացնել. *կենս.* բեղմնավորել:

**fertilizer** [ˈfɜ:təlaɪzə] n պարարտանյութ. ar-



tificial ~ հանքային պարարտանյութ:  
**ferule** [ˈferu:l] n (*դպր.*) պատժաքանոն:  
**fergency** [ˈfɜ:vnsi] n եռանդ, խանդ. ջերմ  
 զգացում, բուռն ձգտում:  
**fervent** [ˈfɜ:vnt] a բուռն, կրակոտ, վառ.  
 ջերմ, ջերմեռանդ:  
**fervid** [ˈfɜ:vid] a *բնատ.* տաք, կրակոտ:  
**feravour** [ˈfɜ:və] n ավյուն, եռանդ, խանդա-  
 վառություն:  
**festal** [ˈfestl] a տոնական, ուրախ, ուրախա-  
 լի:  
**fester** [ˈfestə] n թարախտում, թարախակա-  
 լում. թարախտ վերք:  
**festival** [ˈfestɪvəl] n փառատոն, ֆեստիվալ.  
 youth/song/film ~ երիտասարդական/երգի/  
 կինո-փառատոն:  
**festive** [ˈfestɪv] a տոնական, հանդիսավոր. in  
 ~ mood տոնական տրամադրության մեջ:  
**festivit/y** [feˈstɪvətɪ] n տոն, տոնակա-  
 տարում, տոնում. ~ies տոնակատարու-  
 քյուն, հանդես. wedding ~ հարսանիք,  
 հարսանյաց տոն. New Year ~ies նոր  
 տարվա տոնակատարություն/հանդես:  
**festoon** [fesˈtu:n] 1. n ծաղկաշղթա. ժանե-  
 կազարդ. 2. v զարդարել ծաղկաշղթանե-  
 րով/ դրասանզներով:  
**fetch** [fetʃ] n հնարք, խորամանկություն:  
**fetch** [fetʃ] v գնալ և բերել. ~ a doctor բժշկի  
 իետևից գնալ. ~ the children from school երե-  
 խաներին դպրոցից բերել. (եկամուտ/փող  
 բերել) The house ~ed a lot Տունը մեծ գումար  
 բերեց. This won't ~ much Սրան շատ փող  
 չեն տա. ~ and carry մանր ծառայություններ  
 կատարել. ~ up the travel ճամփորդությունն  
 ավարտել:  
**fetching** [ˈfetʃɪŋ] գրավիչ, հրապուրիչ. a ~  
 hat/ smile գեղեցիկ գլխարկ, գրավիչ ժպիտ.  
 look very ~ շատ հրապուրիչ տեսք ունենալ:  
**fetid** [ˈfetɪd] a զարշահոտ:  
**fetish** [ˈfetɪʃ] n կուռք:  
**fetter** [ˈfetə] 1. n pl կապանք, շղթաներ  
 (ստրկության), ոտնաշղթաներ. 2. v շղթա-  
 յել, կաշկանդել:  
**fettle** [ˈfetl] n դրություն, վիճակ. in good ~  
 լավ վիճակում. in fine ~ լավ տրամադրու-  
 քյան մեջ:  
**feud** [fju:d] n թշնամություն. blood ~ արյան  
 վրեժխնդրություն. family ~ ընտանեկան  
 վեճեր. deadly ~ անհաշտ թշնամություն:

**feudal** [ˈfju:dəl] a ֆեոդալական:  
**feudalism** [ˈfju:d(ə)lɪz(ə)m] n ֆեոդալիզմ:  
**fever** [ˈfi:və] n տենդ, ջերմ. hay ~ մոլաքոր.  
 brain ~ ուղեղի բորբոքում. scarlet ~ քուրթեշ.  
 have a high ~ բարձր ջերմություն ունենալ.  
 yellow ~ դեղնատենդ. (հուզմունք, նյար-  
 դային վիճակ) in a ~ of excitement խիստ  
 հուզված/զրգռված վիճակում:  
**feverish** [ˈfi:vəriʃ] a տենդային, տենդի  
 ջերմի:  
**few** [fju:] prn, a քիչ, սակավ. ~ people քիչ  
 մարդ. ~ opportunities սակավ հնարավորու-  
 քյուններ. a ~, some ~ մի քանի. a good/not a/  
 quite a ~ բավականին շատ/մեծ թիվ. every ~  
 days յուրաքանչյուր երկու-երեք օրը. only a  
 ~ միայն մի քանիսը. ~ and far between շատ  
 հազվադեպ:  
**fewness** [ˈfju:nəs] n փոքրաթվություն, սա-  
 կավաթվություն:  
**fiance** [fiˈɒnsei] n փեսացու:  
**fiancee** [fiˈɒnsei] n հարսնացու:  
**fiasco** [fiˈæskəʊ] n կատարյալ ծախողում,  
 անհաջողություն:  
**fib** [fɪb] n *խսկց.* ստախսություն, սուտ,  
 փչոց. tell ~s փչել, սուտ ասել:  
**fiber, fibre** [ˈfaɪbə] n մանրաթել. ջիղ. ջիլ.  
 (բնավորություն) of coarse ~ կոպիտ (անձ-  
 նավորություն). of strong moral ~ ուժեղ բա-  
 րոյական սկզբունքների տեր. ~ glass  
 ապակյա մանրաթել:  
**fibred** [ˈfaɪbəd] a մանրաթելավոր, թելա-  
 շատ:  
**fibrous** [ˈfaɪbrəs] a թելքավոր. ջլուտ, ջղոտ:  
**fibster** [ˈfɪbstə] n ստախսու:  
**fickle** [ˈfɪkl] a փոփոխական, անկայուն. a ~  
 character/friend անկայուն բնավորություն.  
 անվստահելի ընկեր:  
**fiction** [ˈfɪkʃn] n հնարանք, հնարովի բան.  
 կեղծիք, հերյուրանք. (գեղարվեստական  
 գրականություն) detective/children's ~ դե-  
 տեկտիվ/մանկական գրականություն. sci-  
 ence ~ գիտաֆանտաստիկ գրականություն.  
 distinguish fact and ~ տարբերել իրականու-  
 քյունն ու հնարանքը:  
**fiction-monger** [ˈfɪkʃn,mɒŋgə] n *խսկց.*  
 փչան, ստախսու մարդ:  
**fictitious** [fɪkˈtɪʃəs] a հնարովի, շինծու,  
 կեղծ:  
**fiddle** [ˈfɪdl] n *խսկց.* ջութակ. մեքենայու-

թյուն. a tax ~ հարկային մեքենայություն. fit as a ~ ողջ և առողջ. as long as a ~ ձգված/մնայլ դեմք. play the first ~ *փխք*. առաջին ջութակ նվագել, ղեկավար դեր խաղալ:

**fiddle** [ˈfɪdl] *v* ջութակ նվագել. մեքենայություններ անել. ~ the accounts հաշիվները կեղծել. ~ with motor car մեքենայով զբաղվել/փորփրել. ~ with one's papers թղթերը խառնել:

**fiddlededee** [ˌfɪdlɪˈdi:] *n* դատարկ բան, անհեթեթություն:

**fiddler** [ˈfɪdlə] *n* ջութակահար (*մաս արհմ.*) խաբեբա, խարդախ մարդ:

**fiddlestick** [ˈfɪdlstɪk] *n* ջութակի կնտկնտոց աղեղ. ~s *փխք*. անհեթեթություն:

**fideliy** [fɪˈdelɪti] *n* հավատարմություն, նվիրվածություն:

**fidget** [ˈfɪdʒɪt] *n* անդադրում/անհանգիստ մարդ. անհանգիստ դրություն. անհամբեր/ջղայն շարժումներ:

**fidget** [ˈfɪdʒɪt] *v* տեղում հանգիստ չնստել, իրար անցնել:

**fidgety** [ˈfɪdʒəti] *a* անհանգիստ, իրարանցնող:

**field** [fi:ld] *n* դաշտ, մեծ տարածություն. open/ green/fertile/magnetic/corn ~ բաց/կանաչ/բերրի/մազնիսական/եզիպտացորենի դաշտ ~ of vision տեսողաշտ. ~ of battle պատերազմի դաշտ. in the ~ պատերազմում. (բնագավառ, ասպարեզ, ոլորտ) in the ~ of art/science արվեստի/գիտության բնագավառում. ~ mission գործնելության վայր գործողելը. a specialist in many ~s տարբեր բնագավառների մասնագետ. ~ of application կիրառության ոլորտ. *մրգ*. playing ~ խաղադաշտ. athletic ~ մարզադաշտ. the ~ խաղացողները, մրցման մասնակիցները. back the ~ գրագ գալ (մրցման մասնակիցների վրա). (դաշտային) ~ flowers/glasses/ hospital/hockey դաշտային ծաղիկներ/երկրիտակ/հիվանդանոց/հոկեյ, ~ work *երկրք.*, *հնգ*. դաշտային աշխատանքներ/նկարահանում. ~ studies իրավիճակի ուսումնասիրություն. ~ officer բարձրաստիճան սպա:

**Field-Marshal** [ˌfi:ldˈma:ʃl] *n* ֆելդմարշալ:

**fiend** [fi:nd] *n* սատանա, չար ոգի, դև. չարագործ. (որևէ բանով տարված) drug ~ թմրամոլ. a fresh air ~ թարմ օդի մոլի/գիժ:

**fiendish** [ˈfi:ndɪʃ] *a* սատանայական, դիվային, դժոխային. have a ~ time մեծ դժվարություններ ունենալ:

**fierce** [fiəs] *a* կատաղի, վայրագ, անողորմ. a ~ look/animal կատաղի հայացք/զազան. a ~ frost/wind սաստիկ սառնամանիք. խստաշունչ քամի. a ~ foe անողորմ թշնամի. ~ battle/struggle/fight կատաղի մարտ, անողորմ պայքար. ~ hatred սաստիկ ատելություն:

**fiery** [ˈfaɪəri] *a* հրեղեն, հրավառ, կրակոտ. բոցավառ. այրող, կրքոտ:

**fifteen** [ˌfɪfˈti:n] *num* տասնհինգ:

**fifteenth** [ˌfɪfˈti:nθ] *num* տասնհինգերորդ:

**fifth** [fɪθ] *num* հինգերորդ:

**fiftieth** [ˈfɪftiəθ] *num* հիսուներորդ:

**fifty** [ˈfɪftɪ] *num* հիսուն. the ~ fifties հիսունականները. ~ - ~ հավասար, կիսովի. go ~ - ~ կիսովի վճարել. on a ~ - ~ basis հավասար հիմունքներով:

**fig** [fɪg] *n* *բսք*. թուզ. don't care a ~ վեջս չի, թքած. green ~s թարմ թուզ. ~ tree թզենի. ~ leaf թզենու տերև. *փխք*. մերկությունը ծածկելու որևէ բան:

**fight** [faɪt] *n* մարտ, պայքար. fierce/stubborn/unequal/constant ~ կատաղի/համառ/անհավասար/մշտական պայքար. (կռիվ) a street ~ փողոցային կռիվ. have ~ in one տաքարյուն լինել. get into a ~ կռվի մեջ մտնել. spoil for a ~ կռվի առիթ փնտրել. a cockfight աքլորակռիվ:

**fight** [faɪt] *v* կռվել, պայքարել, մարտնչել. ~ against disease/terrorism պայքարել հիվանդության/ահաբեկչության, տեռորիզմի դեմ. ~ a battle/a war against կռվել/մարտնչել/ ճակատամարտ մղել ընդդեմ. ~ off an attack գրոհը ետ մղել. ~ a fire կրակի դեմ պայքարել. ~ back tears *փխք*. արցունքները զսպել. ~ off sleep քունը փախցնել. ~ down ճնշել, խեղդել. ~ out մինչև վերջ կռվել. ~ one's way ճանապարհի հարթել. ~ for freedom/one's rights/one's life խաղաղության/իր իրավունքների/կյանքի համար պայքարել/կռվել:

**fighter** [ˈfaɪtə] *n* մարտիկ. բռնցքամարտիկ. *ավ*. կործանիչ. ~ pilot կործանիչ օդաչու. That dog is a ~ Կռվարար շուն է:

**fighting** [ˈfaɪtɪŋ] *n* մարտ, ճակատամարտ, կռիվ. heavy ~ ծանր ճակատամարտ. street ~ փողոցային կռիվ. ~ spirit մարտական ոգի. be ~ fit *խսկց*. մարտական ձևի մեջ լինել:

**figment** [ˈfɪgmənt] n հնարովի բան, երևակայություն. a ~ of the imagination երևակայության արգասիք;

**figurative** [ˈfɪɡərətɪv] a փոխաբերական, պատկերավոր. in a ~ sense փոխաբերական իմաստով:

**figure** [ˈfɪɡə] n թիվ, թվանշան. double ~s երկանիշ թվեր. exact/official ճշգրիտ/պաշտոնական թվեր. in round ~s կլոր թվերով. ~s թվաբանություն. be good at ~s թվաբանությունից ուժեղ լինել a high ~ մեծ գումար. (պատկեր, ձև) ~ skating ձևավոր չմշկասահք. (գծագիր) See ~ 2 on page 5 Տե՛ս գծագիր /պատկեր 2, էջ 5. (իրան, մարմին, կազմվածք) beautiful/graceful/slim գեղեցիկ/վայելուչ/նրբագեղ կազմվածք. shapeless/lithe/clumsy /flawed/ lean ~ տձև/ ճկուն/ ծանրաշարժ, անշնորհք/թերակազմ, դեֆեկտավոր/նիհար կազմվածք. slight/neat/bony/ plump/slender/stocky ~ փխրուն/նրբագեղ/ոսկրոտ/թմբիկ/բարեկազմ/ թիկնավետ, ամուր կազմվածք. keep/watch one's ~ պահպանել կազմվածքը. հետևել կազմվածքին. a ~ in the dark կերպարանք մթության մեջ. (անձնավորություն, ակամավոր դեմք) an outstanding/important ~ արտակարգ/կարևոր անձնավորություն/դեմք. public ~ հասարակական գործիչ. historic(al) ~ պատմական դեմք. a ~ of speech փոխաբերություն, պատկերավոր արտահայտություն. հռետորական դարձված. cut a ~ տպավորություն թողնել. make a brilliant/poor ~ հոյակապ/խղճուկ տեսք ունենալ:

**figure** [ˈfɪɡə] v պատկերացնել. համարել, մտածել, հասկանալ. I can't ~ it out ես դա չեմ կարող հասկանալ. That's what we ~d Մենք հենց այդպես էլ կարծում էինք. (հաշվել) ~ out expenses ծախսերը հաշվել. ~ on the list ցուցակում հանդես գալ/հիշատակվել. (հույս ունենալ/կապել) ~ on one's arrival մեկի գալու հետ հույսեր կապել:

**figured** [ˈfɪɡəd] a մախշավոր, ձևավոր, պատկերավոր:

**figure-head** [ˈfɪɡəhed] n անվանական, սոսկ անունով ճանաչվող ղեկավար:

**filament** [ˈfɪləmənt] n մանրաթել, թելիկ. էլ. շիկացման թել:

**filch** [fɪltʃ] v գողանալ, թոցնել:

**file** I [faɪl] n խարտոց. nail ~ եղունգների խարտոցիկ:

**file** II [faɪl] n թղթապանակ. գործ. լրագրերի/փաստաթղթերի համալիր. *իրավ.* դատական գործ. card-index ~ քարտարան. a loose-leaf ~ արագակար թղթապանակ. personal ~ անձնական գործ. the ~s արխիվ. be on the ~s գործերի մեջ լինել: *հմկրգ.* addressing ֆայլի հասցեավորում. ~ allocation ֆայլի տարրերի տեղաբաշխում. ~ description block ֆայլի նկարագրության բլոկ. ~ device ֆայլային/ֆայլային կառուցվածքով սարք. ~ security ֆայլի պաշտպանություն. ~ extension ֆայլի տեսակ. ~ and print sharing ֆայլի և տպիչի համատեղ օգտագործում:

**file** III [faɪl] n շարք, տողան. in single/Indian ~ մեկը մյուսի հետևից. in double ~ երկուական շարվածքով. the rank and ~ շարքային զինվոր/կազմ:

**file** I [faɪl] v խարտոցել. ~ down խարտոցել, հղկել, մշակել (*նաև* ոճը և այլն) ~ one's nails եղունգները մշակել:

**file** II [faɪl] v գրանցել և պահել թղթերը/գրությունները. գործ կազմել. հանձնել արխիվ. ~ a document փաստաթուղթ ներկայացնել. ~ a lawsuit *իրավ.* հայց ներկայացնել. ~ a petition դիմում ներկայացնել. ~ as *հմկրգ.* պահել որպես:

**filer** [faɪlə] n թղթակալ, թղթապանակ:

**filet** [ˈfaɪlɪ] n ասեղնագործվածք, ֆիլե. *խիր.* սուկի, ֆիլե:

**filial** [ˈfɪliəl] a որդիական:

**filibuster** [ˈfɪlɪbʌstə] n պատմ. ծովահեն. զինվորական արկածախնդիր:

**filigree** [ˈfɪlɪɡri:] n ցանցափայտազարդ (սուկու և այլ մետաղալարերից). ֆիլիգրան:

**filig** [ˈfaɪlɪŋ] n լրագրերի /փաստաթղթերի համալիր. ~ system համալիրի համակարգը. ~ cabinet համալիրը պահելու պահարան ~ clerk գրասենյակի ծառայող:

**fill** [fɪl] n կշտություն, կշտացած լինելը. eat/drink one's ~ կուշտ ուտել/խմել. have one's ~ *խսկց.* մինչև կոկորդը կուշտ լինել (*նաև փխբ.*):

**fill** [fɪl] v լցնել, լցվել, լրացնել. ~ the glass/bottle բաժակը/շիշը լցնել. Her eyes ~ed with tears Աչքերը արցունքով լցվեցին. Smoke ~ed the room Սենյակը ծխով լցվեց. ~ in/up a hole անցքը փակել. ~ a tooth ատամը լցնել/պլոմբել. ~ a post պաշտոն զբաղեցնել. ~ a vacancy թափուր տեղը զբաղեցնել. ~ a need

պահանջներին համապատասխանել. ~ed with admiration/despair հիացմունքով/հուսահատությամբ լի. ~ in a form/questionnaire ձև/հարցաթերթիկ լրացնել. ~ in the date ամսաթիվը գրել. ~ in cracks in the wall պատի ճեղքերը սվաղել. ~ in for the director դիրեկտորին փոխարինել. ~ out լայնանալ, լայնացնել. ~ up to the brim մինչև եզրը լցվել:

**fillet** [ˈfɪlɪt] n վարսակալ, ժապավեն:

**filling** [ˈfɪlɪŋ] n առամնալիցք, պլոմբ. /սիր. լցում. լցավորում (վառելիքով). ~ station բենզալցակայան:

**filly** [ˈfɪli] n զամբիկ, մտրուկ:

**film** [fɪlm] n նրբամաշկ. բարակ շերտ, թաղանթ. a thin ~ of dust փոշու բարակ շերտ. transparent ~ թափանցիկ թաղանթ. կինոժապավեն, ֆոտոժապավեն. կինոնկար, ֆիլմ. develop a (colour) ~ (զուգավոր) ժապավեն երևակել. unexposed ~ չօգտագործված ժապավեն. full/short length/sound/silent/documentary ~ երկարամետրաժ/կարճամետրաժ/հնչյունային/համր/փաստագրական կինոնկար. depressing/dull/sentimental/humorous/popular-science ~ ճնշող/ձանձրալի/սենտիմենտալ/երգիծական/գիտահանրամատչելի ֆիլմ. make a ~ ֆիլմ նկարահանել. ~ studio կինոստուդիա. ~ director կինո ռեժիսոր. ~ actor/actress կինոդերասան/ուհի. ~ script կինոսցենար. ~ star կինոաստղ:

**film** [fɪlm] v թաղանթով ծածկվել. փառակալել. The mirror ~ed over Յայելին քրտնել է. ~ Raffi's novel էկրանավորել Րաֆիու վեպը. The story won't ~ well Պատմվածքը հարմար չի էկրանավորման համար. ~ well/ill (\$ոտո)նկարներում լավ/վատ դուրս գալ:

**filming** [ˈfɪlmɪŋ] n կինոնկարահանում:

**filmography** [fɪlˈmɒɡrəfi] n ժապավենագրություն:

**filter** [ˈfɪltə] n քամիչ, գտիչ, ֆիլտր. light/oil ~ լուսաֆիլտր, յուղի ֆիլտր.

**filter** [ˈfɪltə] v քամել, գտել. անցնել, թափանցել. The news ~ed through Նորությունը դուրս սողոկեց/տարածվեց. ~ - tipped cigarettes ֆիլտրով սիգարետներ. *հմկրգ.* ~ options գտման պայմաններ/ընտրանքներ:

**filth** [fɪlθ] n կեղտ, տականք. գարշելիություն, անպարկեշտություն:

**filthy** [ˈfɪlθi] a կեղտոտ, անարգ, լկտի, գարշելի. ~ stories անպարկեշտ պատմություններ.

ներ. ~ weather գարշելի եղանակ:

**filtration** [fɪlˈtreɪʃn] n քամում, քամելը:

**fin** [fɪn] n լողակ, լողաթև. լաստ, մաշկաթաթ. dorsal/tail ~ մեջքի/պոչի լողաթև:

**final** [ˈfaɪnəl] n *մրգ.* ավարտ, եզրափակիչ խաղ, ֆինալ. ~s ավարտական քննություններ:

**final** [ˈfaɪnəl] a վերջին, եզրափակիչ, ավարտական, վճռական. ~ account վերջնական հաշիվ. ~ version վերջնական վարկած/տարբերակ. ~ decision վերջնական որոշում. ~ judgement *իրավ.* վերջնական վճիռ. ~ concert/scene/year/chapter վերջին համերգը, եզրափակիչ տեսարան. վերջին տարին, կուրսը/ գլուխը. give a ~ touch վերջին հարդարանքը ավարտել. in the ~ analysis վերջին հաշվով. That's ~ *Դա* վերջնական է:

**finale** [fɪˈna:li] n *գրկ., երժշ.* ֆինալ:

**finality** [faɪˈnæləti] n ավարտվածություն, վերջնականություն, եզրափակում:

**finalize** [ˈfaɪnəlaɪz] v վերջնականապես որոշել, ավարտվել. ~ the date ամսաթիվը վերջնականապես որոշել:

**finally** [ˈfaɪnəli] adv վերջնականապես. վերջապես, ի վերջո:

**finance** [ˈfaɪnæns] n ֆինանսներ. system of ~ ֆինանսների համակարգ. ministry of ~ ֆինանսների նախարարություն. ~s շահույթ, փող. F~s are in a bad state Փողի մեծ կարիք կա/ֆինանսները ծանր վիճակում են:

**finance** [faɪˈnæns] v ֆինանսավորել, ֆինանսներով զբաղվել:

**financial** [faɪˈnænsɪəl] a ֆինանսական, ֆինանսների. ~ year/crisis/policy/assistance/control/audit ֆինանսական տարի/ճգնաժամ/քաղաքականություն/օգնություն/հսկողություն/ստուգում:

**financier** [faɪˈnænsiə] n ֆինանսիստ, ֆինանսագետ:

**find** [faɪnd] v գտնել, հայտնաբերել. ~ a mistake/solution/one's way սխալ/լուծում/ելքը գտնել. ~ a fault բժախնդրություն ցուցաբերել. ~ guilty մեղավոր ճանաչել. ~ the value of X *մաթ.* իքսի արժեքը գտնել. We found some ancient manuscripts/old stones Մենք հայտնաբերեցինք որոշ հնամենի ձեռագրեր և հին քարեր. She's never to be found at office Նրան երբեք չի կարելի հիմնարկում բռնեցնել. We found no one in Ոչ ոքի տանը չբռնեց-

րինք. ~ oneself իր կոչումը գտնել. (համարել) ~ it impossible/necessary/reasonable անհնարին/անհրաժեշտ/խոհեմ, խելացի համարել. (գտնվել) ~ oneself far from home/in a rather difficult position տնից հեռու գտնվել, բավական դժվարին կացության մեջ ընկնել. You'll ~ I'm right Կտեսնես, որ ես ճիշտ եմ. ~ smn well մեկին քաջառողջ տեսնել. ~ for the plaintiff/ defendant *իրավ.* որոշել հայցվորի/պատասխանողի օգտին. ~ out իմանալ, պարզել. ~ out where իմանալ որտեղ է. ~ smb out մերկացնել, դիմակազերծ անել:

**finder** [ˈfaɪndə] **n** *տեխ.* որոնիչ հարմարանք. *լսնկ.* տեսադաշտ որոնող հարմարանք. գտնող:

**finding** [ˈfaɪndɪŋ] **n** գտածո:

**findings** [ˈfaɪndɪŋz] **n** եզրակացություններ. *իրավ.* դատարանի որոշում. make a ~ on որոշում կայացնել... վերաբերյալ:

**fine** [faɪn] **1.** **n** տուգանք. heavy ~ մեծ տուգանք. fixed ~ հաստատագրված տուգանք. in ~ կարճ ասած, մի խոսքով. impose/pay a ~ տուգանք դնել/վճարել. police ~ ոստիկանական տուգանք. in ~ կարճ ասած, մի խոսքով. **2.** **v** տուգանել:

**fine** [faɪn] **1.** **a** հիանալի, սքանչելի. ~ weather պարզ եղանակ. a ~ man/day/trip/idea հիանալի մարդ, սքանչելի օր, հոյակապ ճամփորդություն, Հիանալի միտք. when it's ~ լավ եղանակին. turn ~ պարզվել (եղանակը) one ~ day մի գեղեցիկ օր. a ~ excuse հոյակապ պատրվակ. that's ~ հիանալի է. (նուրբ, բարակ, մանր) ~ silk/china/work/distinction նուրբ մետաքս, ընտիր ճենապակի, բարձրորակ աշխատանք. նուրբ տարբերություն. ~ rain/ sand/sieve բարակ անձրև, մանր ավազ, մանր մաղ. ~ features նուրբ դիմագծեր. a ~ edge սուր ծայր. ~ arts գեղեցիկ արվեստներ. **2.** **adv** հիանալի կերպով, նրբորեն. chop up ~ շատ մանր կտրտել. ~ grained մանրահատիկ:

**finery** [ˈfaɪnəri] **n** ճոխ հագուստ. զարդ, զարդարանք. She was wearing all her ~ Ուոքից գլուխ գուգվել-զարդարվել էր:

**finesse** [fiˈnes] **n** նրբություն, նրբագեղություն. lack ~ նուրբ վարվելակերպից զուրկ լինել:

**finger** [ˈfɪŋɡə] **n** մատ. index, first/middle/fourth, ring/little ~ ցուցամատ/միջմամատ/

մատանեմատ/ճկույթ. shake one's ~ մատը թափ տալ. not lift/stir a ~ մատը չշարժել, անտարբեր մնալ. Don't dare lay a ~ on Չհամարձակվես մատով անգամ ձեռք տալ. point a ~ of scorn արհամարհանքով մատնացույց անել. burn one's ~s, get one's ~s burnt ծախողվել, "վառվել". have a ~ in smth մատը խառը լինել. slip through one's ~s խոյա տալ, դուրս պրծնել. His ~s are all thumbs Եա շատ անշնորհք է. keep one's ~s crossed մատները խաչել (նաև *փխք.*) ~ mark մատի հետքը, մատնահետք. ~ nail եղունգ (ծեռքի). ~ tips մատների ծայրերը. have smth at one's ~ tips հինգ մատի պես ճանաչել:

**finger** [ˈfɪŋɡə] **v** մատով դիպչել, շոշափել. ~ cloth գործվածքը շոշափել. մատներով ձեռք տալ. ~ one's necklace մանյակը շոշափել:

**finger alphabet** [ˈfɪŋɡər,ælfəbet] **n** խուլուհամրերի այբուբեն.

**finger-language** [ˈfɪŋɡər,læŋɡwɪdʒ] ժեստերի լեզու:

**finger-post** [ˈfɪŋɡəpəʊst] **n** ճանապարհների նշանաձող:

**finger-print** [ˈfɪŋɡəprɪnt] **n** մատնադրոշմ, մատնահետք:

**finical** [ˈfɪnɪkl], **finicking**, **finicky** **a** բժախնդիր. պահանջկոտ. քմահաճ. ~ work մանրակրկիտ աշխատանք:

**finicking** [fɪnɪkɪŋ], **finicky** [ˈfɪnɪki], **finikin** [ˈfɪnɪkɪn] *տեխ* **finical**:

**finis** [ˈfɪnɪs] **n** վերջ:

**finish** [ˈfɪnɪʃ] **n** ավարտ, վերջ, վախճան. *մրզ.* ֆինիշ. *փխք.* ավարտվածություն, հղկվածություն. His playing lacks ~ Նրա կատարման մեջ չկա հղկվածություն/Յղկելու կարիք ունի:

**finish** [ˈfɪnɪʃ] **v** վերջանալ, վերջացնել. ավարտ(վ)ել (նաև մարզական). ~ work/a job աշխատանքը վերջացնել/ավարտել. The repairs are ~ed վերանորոգումն ավարտված է ~ the building/the portrait ավարտել շենքի կառուցումը/ դիմանկարը. Everything is ~ed (between them) (մրանց միջև) Ամեն ինչ ավարտված է. ~ military service զինվորական ծառայությունը վերջացնել. ~ a term in prison կալանքի ժամկետն ավարտել. ~ early/unexpectedly վաղ/անսպասելի ավարտվել. (սպանել, ոչնչացնել) The shock merely ~ed him Չարվածը համարյա սպանեց նրան. As an actor

he is ~ed Որպես դերասան նա սպառվել է. (հղկել, կատարելագործել) a ~ed performance ավարտուն ներկայացում. a well-~ed portrait գեղեցիկ/կատարյալ դիմանկար:

**finished** ['fɪnɪʃt] a վերջացած, վերջացրած. ավարտված. կատարյալ:

**finishing** ['fɪnɪʃɪŋ] a վերջին. the ~ touches վերջին շտրիխները ~ post/line ավարտային (ծողասյուն. վերջնագիծը, ավարտի գիծը):

**finite** ['faɪnɪt] a սահմանափակ. *քեր.* դիմավոր բայած: *հնկրգ.* finite վերջավոր, սահմանափակ. ~ difference method վերջավոր տարբերական մեթոդ. ~ field սահմանափակ դաշտ. ~ memory վերջավոր/սահմանափակ հիշողություն. ~ set վերջավոր բազմություն:

**fink** ['fɪŋk] n գործադուլաբեկ, շտրեյկբրեյտեր:

**fiord** ['fi:ɔ:d] n *աշխր.* խութածոց, ֆիորդ:

**fir** [fɜ:] n *բսբ.* եղևնի (նաև ~ tree). ~ cone եղևնու կոն:

**fire** ['faɪə] 1. n կրակ, բոց. *փխր.* խանդավառություն. a camp ~ խարույկ. an open ~ բուխարի. an electric ~ էլեկտրական բուխարի. make a ~ կրակ վառել. keep up ~ կրակը պահպանել/վառ պահել. put out a ~ կրակը հանգցնել/մարել. shoot ~ փայլատակել, կայծ ու կրակ թափել. poke the ~ կրակը խառնել. sit by the ~ կրակի կողքին նստել. (be) on ~ կրակի/բոցերի մեջ/լինել, վառվել. play with ~ կրակի հետ խաղալ. (հրդեհ) terrible /strong ~ սարսափելի/ուժեղ հրդեհ. set on ~ կրակ տալ, հրդեհել. catch ~ բռնկվել. be insured against ~ հրդեհից ապահովագրված լինել. ~ insurance ապահովագրում հրդեհից. հրաձգություն under ~ կրակի տակ. open ~ կրակ բացել. cease ~ կրակը դադարեցնել. line of a ~ կրակագիծ. 2. a հրշեջ ~ proof հրակայուն. ~ escape հրշեջ/պահեստի աստիճան. ~ alarm հրշեջ տագնապ. ~ brigade/ company հրշեջ խումբ ~ man հրշեջ. ~ truck/ engine հրշեջ մեքենա. ~ extinguisher կրակմարիչ. ~ hose հրշեջ փողրակ. ~ plug հրշեջ ծորակ.

**fire** ['faɪə] v վառել, կրակ տալ. կրակել. *փխր.* խանդավառել. ~ a rifle հրացան կրակել. ~ two shots երկու անգամ կրակել. ~ questions at smb *փխր.* հարցերի տարափ տեղալ. stop ~ing կրակը դադարեցնել. without ~ firing a

shot առանց մի կրակոցի. F~ away! Սկսե՛ք.

You're ~d! Դուք հեռացված եք:

**fire-arm** ['faɪəra:m] n հրազեն:

**fire-ball** ['faɪəbɔ:l] n ասուպ. գնդածև կայծակ:

**fire-brand** ['faɪəbrænd] n դրդիչ, գրգռիչ. խռովարար:

**fire-brick** ['faɪəbrɪk] n հրակայուն աղյուս:

**fire-bug** ['faɪəbʌg] n լուսատտիկ, կայծոռիկ:

**fire-control** ['faɪəkən, trəʊl] n պայքար անտառահրդեհների դեմ. *տեխ.* այրման կարգավորում:

**fire-cracker** ['faɪəkrækə] n հրթիռ, հրավառելիք:

**fire-damp** ['faɪədæmp] n հանքագազ, շառաչուն գազ:

**fire-fighter** ['faɪə, faɪtə] n *ամ.* հրդեհաշեջ. անտառահրդեհների դեմ պայքարող:

**fire-fly** ['faɪəflaɪ] n *կենդ.* լուսատտիկ, կայծոռիկ:

**fire-place** ['faɪəpleɪs] n բուխարիկ:

**fireside** ['faɪəsɪd] n բուխարու մոտ նստելու տեղ. *փխր.* ընտանեկան օջախ:

**firewood** ['faɪəwʊd] n վառելիքայտ:

**firework(s)** ['faɪəwɜ:k(s)] n հրավառություն:

**firing** ['faɪərɪŋ] n հրաձգություն. այրում. թրծում:

**firm** [fɜ:m] n ձեռնարկություն, ընկերություն, ֆիրմա. private ~ մասնավոր ընկերություն/ձեռնարկություն:

**firm** [fɜ:m] a ամուր, պինդ, հաստատուն. ~ basis/position ամուր հիմք/դիրք. ~ ground ցամաք. (հաստատուն, կայուն) ~ character/conviction/purpose/prices/hand անսասան բնավորություն, հաստատուն համոզմունք/նպատակ, կայուն գներ, ուժեղ ձեռք. ~ offer լուրջ առաջարկ. ~ friends անդավաճան ընկերներ. be ~ with խիստ լինել. (վճռական) ~ answer/measures վճռական պատասխան/միջոցներ. look ~ վճռական տեսք ունենալ:

**firmament** ['fɜ:məmənt] n երկնականար:

**firmness** ['fɜ:mənəs] n ամրություն. հաստատունություն. վճռականություն:

**first** [fɜ:st] n սկիզբ. from the very ~ հենց ամենասկզբից. from ~ to last սկզբից մինչև վերջ. at ~ սկզբում, նախ. the ~ (ամսի) մեկը. They arrive on the ~ Նրանք ամսի մեկին են գալիս. We were the ~ to leave Մենք առաջիններն

- էինք, որ հեռացանք. get a ~ գերազանց գնահատական ստանալ:
- first** [fɜːst] **a** առաջին. ~ form/part/attempt/impression առաջին դասարան/մաս/փորձ/տպավորություն. for the ~ time առաջին անգամ. ~ violin առաջին ջութակ. ~ name անուն. ~ floor երկրորդ հարկ. ~ lieutenant ավագ լեյտենանտ. ~ serve առաջին սկզբնահարված. ~ half մրդ. առաջին խաղակես:
- first** [fɜːst] **adv** նախ, սկզբից. ~ of all նախ և առաջ. ~ and foremost ամենից առաջ. ~ and last ընդհանրապես. ~ or last վաղ թե ուշ. at ~ sight/glance առաջին հայացքից. in the ~ place նախ, ամենից առաջ. ~ aid առաջին օգնություն. ~ night *թատր*. առաջին ներկայացում, պրեմիերա. ~ -born անդրանիկ/առաջնեկ (զավակ).
- first-class** [ˌfɜːstˈklaːs] **a** առաջնակարգ, գերազանց. a ~ hotel առաջնակարգ հյուրանոց. travel ~ առաջին կարգով ճամփորդել:
- first-hand** [ˌfɜːstˈhænd] **a** անմիջականորեն, առանց միջնորդի. սկզբնաղբյուրից. ~ experience սեփական փորձ. ~ knowledge սկզբնաղբյուրից ստացած գիտելիք. ~ information սկզբնաղբյուրից ստացած տեղեկություն:
- firstling** [ˈfɜːstliŋ] **n** (կենդանու) առաջին ծնունդ. առաջնապտուղ. *փխբ* առաջին արդյունքներ:
- firstly** [ˈfɜːstli] **adv** նախ և առաջ, նախ:
- first-rate** [ˌfɜːstˈreɪt] **a** առաջնակարգ, գերազանց:
- firth** [fɜːθ] **n** ծովածոց, ծովախորշ. գետաբերան:
- fiscal** [ˈfɪskl] **a** զանձարանային, դրամական, ֆինանսական. զանձարանի (պետական). ~ authority ֆինանսական պաշտոնյա. ~ year ֆինանսական տարի. ~ penalties հարկային տուգանքներ:
- fish** [fɪʃ] **n** ձուկ. fresh/frozen/smoked/salt(ed)/bad ~ թարմ/սառեցրած/ապխտած/աղած/փչացած ձուկ ~ market/shop ձկան շուկա/խանութ. ~ monger ձկնավաճառ. ~ soup ձկնապուր. ~ bone ձկան փուշ. ~ pond ձկնաբուծարան. *փխբ*. *իմաստներ* neither ~ nor fowl ոչ այս է, ոչ այն. an odd ~ տարօրինակ մարդ. a ~ out of water վատ վիճակում ~ story անհավատալի պատմություն. poor ~ անձարակ մարդ:
- fish** [fɪʃ] **v** ձուկ բռնել/որսալ. ~ in troubled waters պղտոր ջրում ձուկ որսալ. ~ a coin out of pocket գրպանից գրոշ կորզել ~ for compliments *փխբ*. հաճոյախոսություններ որսալ/դուրս կորզել:
- fisher** [ˈfɪʃə] **n** (*ճակ ~man*) ձկնորս. ձկնորսական նավակ:
- fisherman** [ˈfɪʃəmən] **n** ձկնորս:
- fishery** [ˈfɪʃəri] **n** ձկան որս. ձկնորսություն. ձկնորսարան. ձկնավետ տեղ:
- fish-fork** [ˈfɪʃfɔːk] **n** ձկնորսական եռաժանի:
- fish-hook** [ˈfɪʃhʊk] **n** կարթ:
- fishing** [ˈfɪʃɪŋ] **n** ձկնորսություն. go ~ ձկնորսության գնալ. a ~ boat ձկնորսական նավակ. ~ tackle ձկնորսական սարք. ~ rod կարթածող. ~ line կարթաթել:
- fishmonger** [ˈfɪʃmʌŋgə] **n** ձկնավաճառ:
- fishmonger's** [ˈfɪʃmʌŋgə(r)s] ձկնավաճառի խանութ:
- fishwife** [ˈfɪʃwaɪf] **n** ձկնավաճառ կին:
- fishy** [ˈfɪʃi] **a** ձկնային, ձկան. a ~ smell ձկան հոտ. *խսկց*. կասկածելի, անհավատալի look/sound ~ կասկածելի թվալ:
- fission** [ˈfɪʃn] **n** ճեղքում, տրոհում. nuclear ~ միջուկի տրոհում:
- fissure** [ˈfɪʃə] **n** ճեղք, ճեղքվածք:
- fist** [fɪst] **n** բռունցք. *խսկց*. ձեռք. clench one's ~s բռունցքները սեղմել. shake one's ~s սպառնալ (բռունցքով). hit with a ~ բռունցքով խփել:
- fistful** [ˈfɪstfʊl] **a** մի բռունցք/բռուռ:
- fistula** [ˈfɪstjʊlə] **n** բժշկ. խուղակ, ֆիստուլա:
- fit** I [fɪt] **n** համապատասխանելը, հարմար լինելը. նստելը (հագուստի մասին) be a good/bad/loose ~ լավ/վատ/ազատ նստել. a tight ~ սեղմել, կիպ նստել. The shoes are a good ~ Կոշիկները լավ են նստում:
- fit** II [fɪt] **n** նոպա, բռնկում, պոռթկում. ~ of rage կատաղության պոռթկում ~ of deep melancholy խոր մելանխոլիայի բռնկում. ~ of coughing/hysterics հազի պոռթկում. հիստերիկայի նոպա. a fainting ~ ուշաթափություն. by ~s and starts ընդհատումներով. a ~ of energy եռանդի պոռթկում. a smoking/drink-ing ~ ծխելու/խմելու ցանկություն:
- fit** [fɪt] **a** պիտանի, հարմար, համապատասխան. not ~ company ոչ հարմար շրջապատ. not ~ to eat ուտելու հարմար չլինել. not ~ to wear հագնելու համար անհարմար not ~ to

rule the country չկարողանալ երկիրը ղեկավարել. not ~ to be seen այդ տեսքով անհարմար. ~ for the military service զինվորական ծառայության պիտանի. be/feel ~ ձևի մեջ լինել. keep ~ ձևը պահպանել. not ~ for work ի վիճակի չլինել աշխատելու. ~ for nothing ոչ մի բանի համար պիտանի չլինել. ~ and well առույգ և առողջ:

**fit** [fit] v նախապատրաստել. ~ oneself for the new job նոր աշխատանքին նախապատրաստվել. (համապատասխանել, համընկնել). The description ~s him նա համապատասխանում է նկարագրությանը. It ~s in with my plans Դա համընկնում է իմ պլանների հետ. (վրայով լինել, լավ մտել) The dress ~s you well Այս զգեստը ձեր վրայով է. (փորձել, չափսափորձել) The tailor ~ted my trousers Դերձակը փորձեց իմ տաբատը. (տեղավորել, մոտաժել). ~ glass into a frame ապակին շրջանակի մեջ դնել/տեղավորել. Can you ~ me in? Կարո՞ղ եք ինձ տեղավորել (ցուցակում, մեքենայում և այն) ~ a car with a player մեքենայի մեջ նվագարկիչ տեղադրել. ~ out an office գրասենյակը կահավորել. The cupboard will ~ in here Պահարանը կտեղավորվի այստեղ:

**fitchew** ['fitʃu:] n կենդ. կզաքիս:

**fitful** ['fitfʊl] a պոռթկուն, թափընդիստ:

**fitness** ['fitnəs] n պիտանիություն, համապատասխանություն. ֆիզիկական պատրաստվածություն. ֆիթնես:

**fit-out** ['fit,aut] n խսկց. համազգեստ հագցնելը. հանդերձում:

**fitter** ['fɪtə] n տեխ. փականագործ, մեխանիկ, հավաքորդ:

**fitting** ['fɪtɪŋ] n հարմարեցում, հարդարում. սարքավորում, հավաքում. չափափորձում. ~s սարքավորում. electrical ~s էլեկտրական սարքավորում. office ~s գրասենյակային պիտույքներ:

**fitting** ['fɪtɪŋ] a հարմար, պիտանի, համապատասխան. ~ room նախափորձման սենյակ. ~ shop հավաքման արհեստանոց Is it ~ that...? Հարմա՞ր է, որ...:

**five** [faɪv] num հինգ, հինգ թվանշանը:

**fivefold** ['faɪvˌfəʊld] a, adv հնգապատիկ, հինգ անգամ:

**fiver** ['faɪvə] n խսկց. հնգանոց (թղթադրամ):

**fix** [fiks] v ամրացնել, պնդացնել. սահմանել,

որոշել. ~ a mirror/picture on the wall հայելին/նկարը պատին ամրացնել. ~ one's attention *փխբ.* ուշադրությունը գամել. ~ in one's memory հիշողության մեջ տպավորվել. մտապահել. ~ one's hopes on smb հույսեր դնել մեկի վրա. (որոշել, նշանակել) ~ the day օրը նշանակել. ~ the prices/the rent գները/վարձավճարը որոշել. ~ a salad/a breakfast /a meal աղցան/նախաճաշ/ուտելիք պատրաստել. (նորոգել) ~ the broken chair կտրված աթոռը նորոգել. have one's car ~ed մեքենան վերանորոգել տալ. ~ a coat վերարկուն մաքրել/նորոգել. ~ up for the night գիշերը օթևան տալ. How are you ~ed for time/money? Ժամանակ/Փող ունե՞ս ~ smn հախիցը գալ. *խսկց.* կարգավորել ~ a fire կրակ անել, խարույկ վառել. ~ up the room սենյակը կարգի բերել. ~ the jury ատենակալներին կաշառել. ~ an election կեղծել ընտրությունների արդյունքները. ~ it up with նախօրոք պայմանավորվել:

**fixation** [fɪk'seɪʃn] n արձանագրում. հաստատում. խտացում. *լսնկ.* սևեռակում, ֆիքսում:

**fixed** [fɪkst] a անշարժ, անփոփոխ, սահմանված, նշանակված. ~ charge կայուն վճար. ~ prices/income կայուն գներ /շահույթ. ~ period of time սահմանված ժամանակամիջոց. ~ grin/stare սառած ժպիտ/հայացք. սևեռում հայացք. *իրավ.* հաստատում ~ assets/costs հաստատում միջոցներ/ծախսեր: *հմկրգ.* ~ length field ֆիքսված երկարությամբ դաշտ. ~ point calculation ֆիքսված կետով հաշվարկում. ~ point constant ֆիքսված կետով հաստատում. ~ storage մշտական հիշողություն:

**fixedly** ['fɪksɪdli] adv աչքերը հառած/սևեռած:

**fixings** ['fɪksɪŋz] n pl հանդերձանք, պիտույք. զարդ, զարդարանք. *խհր.* խավարտ:

**fixture** ['fɪkstʃə] n անշարժ սարքավորում. *մրգ.* մրցախաղ. ~s and fittings *իրավ.* ամրակցված և ներկառուցած գույք. *մրգ.* նշանակած օր (մրցման). ~s for the season մրցաշրջանի խաղերի օրացույց. միևնույն պաշտոնում/տեղում երկար ժամանակ մնացող անձ, մշտական անդամ:

**fizz** [fɪz] 1. n թշշոց, ֆշշոց. 2. v թշշալ, ֆշշալ. փրփրել (գինին):

**fizzle** ['fɪzl] 1. n թեթև ֆշշոց. *փխբ.* անհաջո-



դուրյուն. **2.** *v* թեթև ֆշշալ, թշշալ. *խսկց.* ~ out անհաջողությամբ վեջանալ. The party ~d out երեկույթը մարեց:

**fizzy** ['fizi] *a* փրփրուն, գազավորված:

**flabbergast** ['flæbəgɑ:st] *v* շշմեցնել, ապշեցնել. *be* ~ed by the news նորություննից ցնցվել:

**flabby** ['flæbi] *a* թուլ, թորշոմած. թուլամորթ:

**flag** I [flæg] *n* դրոշ, դրոշակ. *carry/hold/hang* (out) *a* ~ դրոշը կրել/բռնել/կախել. ~ of truce, հաշտության դրոշակ *white* ~ սպիտակ դրոշակ. *black* ~ սև/ծովահենի դրոշակ. *yellow* ~ դեղին/կարանտինի դրոշ. *hoist one's* ~ հրամանատիրությունը ստանձնել. *show the white* ~ սպիտակ դրոշ պարզել. *keep the* ~ *flying* *փխք.* դրոշը բարձր պահել, չհանձնվել. *lower one's* ~ դրոշը իջեցնել/հանձնվել/անձնատուր լինել. *Hospital* ~ Կարմիր խաչի դրոշ. ~ of *distress* իջեցրած դրոշ (*ի նշան սուգի*):

**flag** II [flæg] *n* սալ, սալաքար:

**flag** I [flæg] *v* սալարկել, սալահատակել:

**flag** II [flæg] *v* խոնարհվել, թուլանալ, նվաղել. *ազդանշան տալ.* *Conversation* ~ged Ջրույցը անաշխույժ ձգվում էր:

**flag-captain** ['flæg,kæptɪn] *n* դրոշանավի/ֆլագմանի հրամանատար:

**flagellation** [,flædʒə'leɪʃn] *n* մտրակում, խարազանում:

**flagging** ['flæɡɪŋ] *n* թուլացող, տկար, նվաղում:

**flagman** ['flægmən] *n* ազդանշանորդ, դրոշակակիր:

**flagon** ['flæɡən] *n* սափոր. մեծ տափակ շիշ:

**flag-pole** ['flæɡpəʊl] *n* (*նաև flagstaff*) դրոշակաձող, դրոշակափայտ:

**flagrant** ['fleɪgrənt] *a* վրդովեցուցիչ, աղաղակող. *a* ~ *injustice* աղաղակող անարդարություն:

**flagship** ['flæɡʃɪp] *n* հրամանատարի/ֆլագմանի նավ:

**flag-station** ['flæɡ,steɪʃn] *n* զնացքի կանգնելը պահանջով:

**flagstone** ['flæɡstəʊn] *n* սալաքար:

**flair** [fleə] *n* հոտառություն. հակում, սեր. *have a* ~ *for languages* լեզվի զգացողություն ունենալ:

**flak** [flæk] *n* զենիթային հրետանի. զե-

նիթային հրետանու կրակ:

**flake** [fleɪk] *n* փաթիլ, թեփիկ. *snow* ~s ձյան փաթիլներ. *soap* ~s օճառի նրբաշերտ. *corn* ~s եզիպտացորենի ձողիկներ:

**flake** [fleɪk] *v* (*նաև flake off*) փաթիլներով թափվել. շերտավորվել. թեփոտվել:

**flaky** ['fleɪki] *a* փաթիլանման, փաթիլած. շերտավոր, թերթավոր. ~ *pastry* թերթավոր խմոր:

**flam** [flæm] *n* մտացածին/հնարած բան. սուտ:

**flame** [fleɪm] *n* բոց, հուր, կրակ. *փխք.* եռանդ, կիրք. *dazzling/steady/intense* ~ շլացուցիչ/կայուն/ուժգին բոց/կրակ. *be in* ~s այրվել, կրակի մեջ լինել, կրակով բռնկված լինել. *go up in* ~s մինչև վերջ այրվել. *փխք.* սիրո առարկա *an old* ~ of *his* նրա նախկին սիրո առարկան:

**flame** [fleɪm] *v* բոցավառվել, հուրհրատել. բռնկվել. *His cheeks* ~d *Նրա աչքերը* բոցավառվում էին. ~ with *anger* զայրույթից բորբոքվել. *break/burst into* ~(s) *բռնկվել, բոցավառվել:*

**flaming** ['fleɪmɪŋ] *a* այրվող, բոցավառվող. հրավառ, բոցագույն. հրաշեկ. ~ *colours* վառ գույներ. *a* ~ *sunset* հրաշեկ մայրամուտ. *a* ~ *row* *փխք., խսկց.* սարսափելի սկանդալ:

**flan** [flæn] *n* կարկանդակ:

**flank** [flæŋk] *n* կող, կողմ, կողք. *ոզմ.* թև, կողմ. *turn the* ~ *թևանցել, շրջանցել.* *a* ~ *attack* *ոզմ.* հաձակում թևից:

**flannel** ['flænl] *n* խավավոր գործվածք, ֆլանել. ~s ֆլանելե հագուստ/սպիտակեղեն:

**flannelled** ['flænlɪd] *a* ֆլանելե զգեստ հագած:

**flap** [flæp] *n* թեթև զարկ/հարված. թափահարում. *get into a* ~ *փխք., խսկց.* իրար անցնել/խառնվել. *a* ~ *at home* իրարանցում տանը. (*կափույր*) ~ of *a pocket/envelope* գրպանի/ծրայրի կափույր. *a table with a folding* ~ *ծալովի առանձնատախտակով սեղան:*

**flap** [flæp] *v* թափահարել. *խսկց.* իրար անցնել, հուզվել. ~ *the wings* թևերը թափահարել. *The sails were* ~ping *Առագաստները* ծփում էին. *The flags were* ~ping *Դրոշները* ծածանվում էին:

**flapdoodle** ['flæp,du:dl] *n* *խսկց.* հիմարություն, դատարկ բան:

**flap-eared** [ˈflæpiəd] a կախականց:

**flapjack** [ˈflæpdʒæk] n բլիթ, յուղաբլիթ:

**flapper** [ˈflæpə] n վայրի բադիկ. կաքավի ծագ. *փ/սք.* դեռահաս աղջիկ:

**flare** [flɛə] 1. n փայլատակում, բոցի բռնկում. լուսազդանշան. լուսավորման հրթիռ. 2. v բոցավառվել. փայլատակել. *փ/սք.* տաքանալ. բորբոքվել:

**flare-up** [ˈflɛərʌp] n կարճատև, փայլուն հաջողություն. աղմկալի կռիվ/ուրախություն:

**flaring** [ˈflɛəriŋ] a աղաղակող, անճաշակ. շլացուցիչ:

**flash** [flæʃ] n բռնկում, փայլ. in a ~ մի ակնբարթում. ~ of lightning կայծակի փայլատակում. ~ of hope/anger/indignation հույսի նշույլ. զայրության/վրդովմունքի պոռթկում. (ամփոփագիր) a news ~ նորությունների ամփոփագիր. a ~ of wit *փ/սք.* սրամտության փայլատակում:

**flash** [flæʃ] v բռնկվել, բորբոքվել. փայլատակել. Her eyes ~ed Նրա աչքերը փայլեցին. A light ~ed in the darkness Մթության մեջ լույս փայլատակեց. (արագությամբ անցնել) A car ~ed by Մեքենան սլացավ մեր կողքով. An idea ~ed Մի միտք փայլատակեց:

**flashback** [ˈflæʃbæk] n (կինո) հետադարձ կադր:

**flash light** [ˈflæʃlaɪt] n լսնկ. մագնիսի բռնկում. գրպանի էլեկտրական լապտեր:

**flashy** [ˈflæʃi] a էժանագին, ցուցական, աղաղակող. ~ colours աղաղակող գույներ. ~ shirt պճամանի/ցուցամուլական վերնաշապիկ:

**flask** [flɑːsk] n տափաշիշ, կոլբա. vacuum ~ բերմոս:

**flat I** [flæt] n բնակարան:

**flat II** [flæt] n հարթություն, հարթ մակերես. *երժշ.* բեմոլ. the ~ of the hand ձեռքի ափ. a ~ *խսկց.* անվաղողի ծակում:

**flat** [flæt] a հարթ, տափակ. a ~ surface հարթ մակերես. ~ serve *մրգ.*, *թենիս* հարթ սկզբնահարված. ~ plate երես/ոչ խոր ափսե. ~ shoes տափակ/անկրունկ կոշիկ. ~ tyre օղջ բաց թողած անվաղող. ~ feet հարթաթաթություն. ~ rate կայուն սակագին. buy at a ~ rate ամեն ինչ նույն գնով գնել. ~ market “մեռած” շուկա. The battery is ~ Մարտկոցը նստել է. fall/lie ~ բերանքսիվայր/մեջքի վրա

ընկնել/փռվել. The beer is ~ Գարեջուրը որակը կորցրել է/գազը գնացել է. (կտրուկ, բացահայտ) a ~ refusal կտրուկ մերժում. That's ~ Դա վերջնական է. sing ~ *ֆալշ* երգել:

**flat-boat** [ˈflætboʊt] n հարթահատակ նավակ:

**flatbottomed** [ˌflætˈbɒtəmd] a հարթահատակ, հարթահուն:

**flat-car** [ˈflætkaː] n բաց վագոն:

**flat-footed** [ˌflætˈfʊtɪd] 1. a տափակաթաթ. հարթաթաթ: 2. adv վճռական, կտրուկ.

**flat iron** [ˈflæt.aɪəŋ] n արդուկ. շերտավոր երկաթ:

**flatly** [ˈflætlɪ] adv կտրուկ կերպով, վճռականորեն. deny ~ կտրականապես ժխտել:

**flatness** [ˈflætnəs] n հարթություն, տափակություն. անճաշակություն. ծանծրույթ. վճռականություն:

**flatten** [ˈflætn] v տափակեցնել, հարթեցնել. ուղղել, շտկել. ~ a road ճանապարհը հարթեցնել. ~ed by the bombing գետնին հավասարված ռմբակոծության պատճառով:

**flatter** [ˈflætə] v շողոքորթել, քծնել. փառաբանել, գովել. հաճույթ պատճառել. ~ smb's vanity մեկի փառասիրությանը հաճույթ պատճառել. be ~ed by շոյված լինել. ~ oneself ինքն իրեն գովաբանել:

**flatterer** [ˈflætərə] n շողոքորթ. քծնող մարդ:

**flattery** [ˈflætəri] n շողոքորթություն, գովասանք. make up to smb by ~ փորձել մեկի հետ շողոքորթելով մոտենալ:

**flattop** [ˈflættɒp] n *խսկց.* ավիակիր, սավառնակակիր նավ:

**flatways** [ˈflætweɪz], **flatwise** [ˈflætwaɪz] adv տափակ երեսով, հարթ կողմով:

**flaunt** [flɔːnt] v ծածանվել (դրոշմ). ի ցույց դնել. ~ one's riches/liaison ի ցույց դնել իր հարստությունը/կապերը:

**flautist** [ˈflɔːtɪst] n *ֆլեյտահար:*

**flavour** [ˈfleɪvə] 1. n հաճելի համ/հոտ. բուրմունք, բույր. կողմնակի համ. *փ/սք.* երանգ, տարր. The dish has a lot of/plenty ~ *ճաշատեսակը շատ համեղ է.* has no ~ *համեղ չէ.* a strong ~ of cheese պանրի ուժեղ բուրմունք/երանգ. various ~s of ice-cream պաղպաղակի տարբեր տեսակներ. a ~ of irony հեգնական երանգ: 2. v համեմել, համ տալ:

**flavouring** [ˈfleɪvəriŋ] n համեմունք:

**flavourless** [ˈfleivələs] a անհամ, անհոտ:  
**flaw** I [flɔː] n արատ, բերութուն. խտտան, բիծ. a ~ in the document սխալ փաստաբղթում. ~ of character *փխբ.* բնավորության բերություն:  
**flaw** II [flɔː] n քանո հանկարծական պոռթկում. *ծով.* փոթորիկ:  
**flawed** [ˈflɔːd] a խտտան. ~ goods խտտանված ապրանք:  
**flawless** [ˈflɔːləs] a անթերի. speak ~ French անթերի ֆրանսերեն խոսել:  
**flax** [flæks] n վուշ, կտավատ, կտավ, քաբան:  
**flaxen** [ˈflæksn] a վուշե, վուշի. ~ hair բաց դեղին գույնի մազեր:  
**flax-seed** [ˈflækssiːd] n կտավատի սերմ:  
**flaxy** [ˈflæksi] a վուշի, վուշե. վուշանման:  
**flay** [fleɪ] v կաշին հանել, մաշկել/քերթել. *փխբ.* խիստ քննադատել. շորթել, պլոկել:  
**flea** [fiː] n լու. ~ bite լվի կծելը. *փխբ.* չնչին անախորժություն. lose 1000 dol is a mere ~ to him 1000 դոլարի կորուստը նրա համար ոչինչ բան է:  
**fleck** [flek] n պուտիկ, բծիկ. a ~ of dust փոշու հատիկ. ~s of sunlight արևի ցուլք:  
**flecker** [ˈflekə] v ծածկել (բծերով և այլն):  
**flecked** [ˈflekt] a պուտավոր. grey cloth ~ with red կարմիր պուտիկներով մոխրագույն գործվածք. hair ~ with grey ալեխառն մազեր:  
**fledge** [fledʒ] v փետրավորել, փետրագարդել. ձագեր մեծացնել:  
**fledged** [fledʒd] a հասունացած, ոտքի կանգնած:  
**fledg(e)ling** [ˈfledʒliŋ] n նորափետուր թռչնակ. *փխբ.* անփորձ պատանի:  
**flee** [fiː] v փախչել, փախուստի դիմել. խուսափել, խույս տալ. ~ the country երկրից փախչել:  
**fleece** [fiːs] n ոչխարի բուրդ, գեղմ:  
**fleece** [fiːs] v ոչխարը խուզել. *փխբ.* պլոկել, շորթել:  
**fleecy** [ˈfiːsi] a բրդոտ, մազոտ. գանգուր:  
**fleet** [fiːt] n նավատորմ. the F ~ ռազմածովային նավատորմի. mercantile/air /submarine ~ առևտրական/օդային/ստորջրյա նավատորմ:  
**fleet** [fiːt] a արագաշարժ, սրընթաց:  
**fleet** [fiːt] n գետակ:

**fleeting** [ˈfliːtiŋ] a վաղանցիկ, թռուցիկ:  
**fleetness** [ˈfliːtnəs] n արագություն, արագաշարժություն, սրընթացություն:  
**flesh** [fleʃ] n մարմին, միս. (one's own) ~ and blood սեփական/միսն ու արյունը. հարագատ. ~ wound մկանային/մակերեսային վերք. in ~ գեր, չաղ. in the ~ (կենդանի, մարմնավորված) անձամբ. lose/put on ~ միհարել, զիրանալ. make one's ~ creep (ստիպել) մարմնով սարսուռ անցնել:  
**fleshings** [ˈfleʃɪŋz] n pl մարմնագույն սեղմիբան. մարզական/թատերական հագուստ:  
**fleshy** [ˈfleʃli] a մարմնական, զգայական. աշխարհիկ, նյութական:  
**fleshy** [ˈfleʃli] a մսոտ, մսեղ:  
**flex** [fleks] 1. n էլ. դյուրաթեք էլեկտրալար. 2. v կորացնել, ծռել:  
**flexibility** [ˌfleksɪˈbɪləti] n ճկունություն, *փխբ.* զիջողականություն:  
**flexible** [ˈfleksəbəl] a ճկուն, դյուրաթեք. *փխբ.* զիջող, տեղի տվող. ~ policy ճկուն քաղաքականություն:  
**flexion** [ˈfleksɪn] n ծալում, կորացում. *քեր.* թեքում:  
**flick** [flik] n թեթև զարկ. a ~ of the fingers մատնազարկ. with a ~ of the paper թուղթը թեթևակի խփելով. go to the ~s *խսկց.* կինո գնալ:  
**flick** [flik] v թափ տալ, թափահարել, մաքրել. ~ ash off a cigarette ծխախոտի մոխիրը թոթափել. ~ crumbs off a table սեղանի վրայից փշրանքները մաքրել. ~ over the pages of the book գրքի էջերը թերթել (անցողակի կարդալ):  
**flicker** [ˈflikə] n առկայծում, երերում. *փխբ.* նշույլ. a ~ of hope հույսի նշույլ. a ~ of a smile ժպիտի ստվեր/նշույլ. without the ~ of an eyelid առանց աչքը թարթելու:  
**flicker** [ˈflikə] v առկայծել, տատանվել, շողշողալ. The candle ~ed and went off Մոմն առկայծեց և հանգավ. The needle ~ed between 5-6 Ցուցիչը տատանվում էր 5-ի և 6-ի միջև:  
**flier** [ˈflaɪə] n օդաչու. թռչուն. թռչող միջատ. վարգաձի:  
**flight** [flaɪt] n թռիչք. the ~ of a bird/bee/bullet/an arrow թռչունի/մեղվի/գնդակի/նետի թռիչք. shoot a bird in a ~ թռչող թռչնի վրա կրակել. ~ path թռիչքի հետագիծ. (չու) a ~ of birds/insects թռչունների երան. միջատների

պարս/ հույլ. the first ~ of swallows ծիծեռնակների առաջին չուն. (չվերթ) charter ~ վարձույթային չվերթ. non-stop ~ անվայրէջք չվերթ. home ~ հետադարձ չվերթ/թռիչք. ~ չվերթ համար 10. passengers for ~ համար 10 չվերթի ուղևորներ. a ~ of stairs սանդղաբաժին. հարկաբաժին. The flat is two ~s up Բնակարանը երկու սանդղաբաժին վերև է. (փախուստ) take to ~ փախուստի դիմել put to ~ փախուստի մատնել. the ~ of capital *փխբ.*, *տնտ.* կապիտալի արտահոսք:

**flighty** ['flaiti] a թեթևամիտ, փոփոխամիտ:

**frivolous** [ˈfrɪvələs] a թեթևամիտ, մակերեսային. անհիմն, անլուրջ, քմահաճ. a ~ remark/book/objection թեթևամիտ ակնարկ, դատարկ գիրք, անլուրջ առարկություն. ~ statement անլուրջ հայտարարություն:

**friz(z)** [frɪz] n խոպոպիկ. զանգուր մազեր:

**frizz** [frɪz] v զանգրացնել:

**frizzle** [ˈfrɪzl] n թշնոց, տժտոց.

**frizzle** [ˈfrɪzl] v թշնալ, տժժալ. տապակվել:

**frizzy** [ˈfrɪzi] a զանգուր. ~ hair կոշտ, զանգուր մազեր:

**fro** [frəʊ] adv to and ~ հետ ու առաջ:

**frock** [frɒk] n զգեստ. ~coat սերթուկ:

**frog** [frɒg] n գորտ:

**frogman** [ˈfrɒgmən] n ակվալանգիստ:

**frolie** [ˈfrɒli:k] 1. n զվարճություն, չարածճիություն. 2. v զվարճանալ, չարածճիություն անել:

**frolicsome** [ˈfrɒlɪksəm] a կայտառ, զվարթ, չարածճի:

**from** [frɒm] prep - ից(տեղ, վայր). ~ home տանից. ~ London Լոնդոնից. (ժամանակ) ~ the fifth century հինգերորդ դարից. ~ the beginning/start սկզբից. ~ that time on այդ ժամանակից սկսած. ~ ... to մինչև. ~ morning to night առավոտից մինչև գիշեր. ~ day to day օրեցօր. suffer ~ heat շոգից տառապել. ~ fear/shame/jealousy/curiosity վախից/անոթից/խանդից/հետաքրքրությունից տառապել. (speak) ~ memory հիշողությամբ (խոսել). know ~ experience փորձից իմանալ. judging ~ appearance արտաքինից դատելով. ~ above/below վերևից, ներքևից. drink ~ a cup գավաթից խմել. ~ behind the door դռան ետևից. prevent ~ doing smth որևէ բան անելուց հետ պահել:

**front** [frʌnt] n առջևի մաս. come to the ~ առաջ գալ. the ~ of the building շենքի առջևի մասը/ճակատը. the ~ of the picture նկարի առջևի մասը/առաջին պլան. the ~ of the car մեքենայի առջևի մաստրանը. in ~ of առջևում, դիմացը. the ~ of the stage բատր. նախաբեմ. the sea ~ առափնյա փողոց/զբոսայգի. *ազմ.*, *քղբ.* ճակատ. united ~ միացյալ ճակատ. popular ~ ժողովրդական ճակատ. be/fight at the ~ լինել/կռվել ռազմաճակատում. ~ line ճակատի առաջամաս. in the ~ line ռազմաճակատում:

**front** [frʌnt] a առջևի, առաջի. ~ door/hall

շքամուտք, նախասրահ. ~ page տիտղոսաթերթ (գրքում). ~ view տեսարան/տեսք առջևից:

**front** [frʌnt] v ~ (on) նայել դեպի. The house ~s south Տունը հարավ է նայում. The windows ~ on the sea Պատուհանները դեպի ծովն են նայում:

**frontage** [ˈfrʌntɪdʒ] n շենքի երես, ճակատամաս. *ազմ.* ճակատի լայնությունը, երկարությունը:

**frontal** [ˈfrʌntl] a ճակատի, ճակատային. *ազմ.* ճակատային, ամբողջ ճակատով. a ~ portrait դիմահայաց դիմանկար (անֆաս):

**frontbencher** [ˌfrʌntˈbentʃə] n պառլամենտի/կառավարության անդամ. քաղաքական կուսակցության/օպոզիցիայի ղեկավար:

**frontier** [ˈfrʌntiə] n, a սահման. սահմանային, սահմանամերձ. natural ~ բնական սահման. cross the ~ սահմանն անցնել. the ~s of knowledge գիտելիքի սահմանները. ~ trade/traffic/dispute սահմանային առևտուր/ վեճ:

**frontiersman** [ˈfrʌntiəzsmən] n սահմանամերձ շրջանի բնակիչ:

**frontispiece** [ˈfrʌntɪspiːs] n *ճրտ.* (շենքի) գլխավոր ճակատ:

**front-rank** [ˌfrʌntˈræŋk] a առաջավոր:

**frost** [frɒst] n սառնամանիք. white/hoar ~ եղյամ. sharp ~ խիստ սառնամանիք. ringing ~ ճկճկան/ճոճոճան սառնամանիք. covered with ~ եղեմնապատ. F~ is holding Սառնամանիքը դեռ շարունակվում է:

**frost** [frɒst] v սառեցնել. The flowers are ~ed Ծաղիկները ցրտահարվել են. The window was ~ed Պատուհանը սառցակալել է:

**frost-bite** [ˈfrɒstbaɪt] n ցրտահարություն, ցրտահարում:

**frost-bitten** [ˈfrɒstbɪtn] a ցրտահարված. His hands are ~ Նրա ձեռքերը ցրտահարվել են:

**frosted** [ˈfrɒstɪd] a եղյամով պատած. ցուրտը տված. շաքարափոշով պատած:

**frost-hardy** [ˈfrɒst,hɑːdi] a ցրտակայուն, ցրտադիմացկուն:

**frosting** [ˈfrɒstɪŋ] n եղյամ. սառույց (լուսամուտի վրա). ջնարակ:

**frosty** [ˈfrɒsti] a սառնամանիքային, ցուրտ, սառը. եղեմնապատ: a ~ ground սառած գետին. ~ morning ցուրտ առավոտ. a ~ look/re-

- ception *փխք*. սառը հայացք/ընդունելություն:
- froth** [frɒθ] **n** փրփուր. *փխք*. դատարկ բան:
- froth** [frɒθ] **v** փրփրել, փրփրակալել. *փխք*. (դատարկաբանել, շաղակրատել). The dog was ~ Շան բերանը փրփրակալել է:
- frothy** [ˈfrɒθi] **a** փրփրալից, փրփրակալած. դատարկ, անբովանդակ:
- frown** [fraʊn] **n** խոժոռվածություն, կնճիռ. խոժոռ հայացք:
- frown** [fraʊn] **v** խոժոռվել, հոնքերը կիտել, մռայլվել. ~ at smth խոժոռ հայացքով նայել. ~ on the proposal առաջարկին հավանություն չտալ:
- frozen** [ˈfrɔʊzn] **a** սառած, ցրտահար եղած. ~ river/lake սառած գետ/լիճ. ~ food սառեցրած սննդամթերք. ~ food compartment սառեցրած սննդամթերքի սառնախցիկ:
- fructify** [ˈfrʌktɪfaɪ] **v** բեղմնավորել, արգասավորել. պտուղ տալ:
- frugal** [ˈfruːɡl] **a** խնայող, տնտեսող. համեստ, չափավոր. a ~ housekeeper խնայող տնտեսուհի. a ~ meal համեստ/աղքատիկ ճաշ:
- frugality** [fruːˈɡæləti] **n** խնայողություն, չափավորություն:
- fruit** [fru:t] **1.** **n** միրգ. *փխք*. պտուղներ, արդյունք. dried ~ չոր միրգ. canned ~ պահածոյացրած միրգ. candied ~ շաքարած միրգ. ~ cake մրգով կարկանդակ. ~ salad մրգի աղցան/սալաթ. ~ tree մրգատու/պտղատու ծառ. (պտուղ) bear ~ պտուղներ տալ. forbidden ~ արգելված պտուղ. reap the ~s (աշխատանքի) պտուղները քաղել. **2.** **v** պտղաբերել, պտուղ տալ:
- fruitage** [ˈfruːtɪdʒ] **n** *հվք*. մրգեր, պտուղներ, բերք:
- fruiterer** [ˈfruːtərə] **n** պտղագործ: ~s մրգեղենի/պտղագործի խանութ:
- fruit farming** [ˈfruːtˈfɑːmɪŋ] **n** պտղաբուծություն:
- fruitful** [ˈfruːtfl] **a** պտղաբեր, պտղավետ. շահավետ, օգտավետ. *փխք*. բեղմնավոր:
- fruitfulness** [ˈfruːtflnəs] **n** պտղավետություն, պտղաբերություն. *փխք*. արգասավորություն:
- fruitless** [ˈfruːtləs] **a** անպտուղ, ապարդյուն:
- fruit-sugar** [ˈfruːt,ʃʊɡə] **n** պտղաշաքար, մրգաշաքար. ֆրուկտոզա:
- fruity** [ˈfruːti] **a** մրգի, մրգահամ. *փխք*. հյութեղ, ջրալի. *խսկց*. հետաքրքրական. ~ humour հյութեղ/համով հումոր. a ~ voice/bass կրծքային ձայն/բաս. a ~ joke անալի կատակ:
- frustrate** [frʌˈstreɪt] **v** խափանել, խորտակել. ~ plans/hopes ծրագրերը խափանել, հույսերը խորտակել. ~ a contract պայմանագիրը խախտել/խափանել:
- frustrated** [frʌˈstreɪtɪd] **a** չբավարարված. feel ~ with the job աշխատանքով բավարարված չլինել:
- frustration** [frʌˈstreɪʃn] **n** հիասթափություն. անբավարարվածություն. խափանում, խորտակում. ծախտողում:
- fry** [fraɪ] **n** տապակ. տապակած միս/հավ. a ~ of fish տապակած ձուկ. French ~ fries (մանր) տապակած կարտոֆիլ:
- fry** [fraɪ] **v** տապակել. ~ potatoes կարտոֆիլ տապակել. ~ fried fish and chips տապակած ձուկ և կարտոֆիլ:
- frying pan** [ˈfraɪɪŋpæn] **n** թավա, տապակ:
- fuddle** [ˈfʌdl] **1.** **n** զինարբուք, կոնծաբանություն. **2.** **v** խմել, խմեցնել. հարբել, հարբեցնել:
- fudge** [fʌdʒ] **n** կոնֆետի մի տեսակ (պոմադկա). *փխք*. մտացածին բան. հերյուրանք, սուտ:
- fuel** [fjuːəl] **n** վառելիք, վառելանյութ. solid/liquid ~ կոշտ/հեղուկ վառելանյութ. add ~ to the fire/flames *փխք*. կրակին յուղ ավելացնել:
- fuel** [fjuːəl] **a** վառելիքի, վառելիքային. ~ tank վառելիքի բակ. ~ gauge վառելիքի մակարդակի ցուցիչ. ~ consumption վառելիքի ծախսում:
- fuel** [fjuːəl] **v** վառելիքով մատակարարել/ապահովել. ~ a lorry/a ship մեքենան/նավը վառելիքով լցավորել:
- fuelling station** [ˈfjuːəlɪŋ ˈsteɪʃn] **n** բենզալցակայան:
- fugacious** [fjuːˈgeɪʃs] **a** կարճատև, վաղանցիկ, անցողիկ:
- fuggy** [ˈfʌɡi] **a** *խսկց*. հեղձուցիչ, խեղդուկ:
- fugitive** [ˈfjuːdʒətɪv] **n** փախստական, գաղթական, դասալիք. ~ offender հանցագործ փախստական. ~s from an invaded country բռնազաղթվածներ:
- fugue** [fjuːɡ] **n** *երժշ*. ֆուգա:

**fulcrum** [ˈfʌlkrəm] *n* *ֆիզ.* հենման կետ. *փիսք.* նպատակին հասնելու միջոց:  
**fulfil(ı)** [fʊlˈfɪl] *v* կատարել, իրականացնել, իրագործել. ~ one's duty/promise պարտքը/խոստումը կատարել. ~ conditions պայմաններին/պահանջներին բավարարել. Hopes have been ~ed Հույսերն իրականացան:  
**fulfilment** [fʊlˈfɪlmənt] *n* կատարում, իրականացում. a sense of (personal) ~ բավարարվածության զգացում. ~ of a contract /obligation պայմանագրի/պարտականության կատարում:  
**full** [fʊl] *n* ամեն ինչ, բոլորը, լրիվ. tell/pay in ~ ամեն ինչ պատմել, լրիվ վճարել. enjoy to the ~ լիարժեք հաճույք ստանալ. in ~ լրիվ, ամբողջությամբ. (զագաթնակետ) The moon is past the ~ Լուսինը նվազում է:  
**full** [fʊl] *a* լի, լիքը, լրիվ. ~ plate/hall/bus մի լիքը ափսե, լեփ-լեցուն դահլիճ/ավտոբուս. ~ of people/water մարդկանցով/ջրով լի. be ~ of news /ideas նորություններով/զաղափարներով լի լինել. ~ of one's own importance մեծամտել, երևակայել. live a ~ life լիակատար կյանքով ապրել. I'm ~ *խսկց.* Կուշտ եմ. (լրիվ, մանրամասն) ~ account մանրամասն հաշվետվություն. ~ moon լիալուսին. The tide is ~ Սակընթացությունն ավարտվել է. be on ~ pay լրիվ դրույքով աշխատել. (լիքը) *a* ~ figure/face լիքը մարմին /դեմք. *a* ~ skirt լայն փեշ/կյտոշ):  
**full** [fʊl] *adv* ամբողջությամբ, ուղղակի. look smb ~ in the face/ eye մեկի երեսին /աչքերին ուղիղ նայել. drive ~ out լրիվ արագությամբ զննալ. know ~ well լավ իմանալ:  
**full-back** [ˌfʊlˈbæk] *n* *մրզ.* պաշտպան (ֆուտբոլ):  
**full-blooded** [ˌfʊlˈblʌdɪd] *a* զտարյուն:  
**full dress** [ˌfʊlˈdres] *a* լրիվ տոնական հագուստ. *a* ~ dinner հանդիսավոր ճաշկերույթ. *a* ~ rehearsal *թատր.* գլխավոր փորձ:  
**full-fledged** [ˌfʊlˈfledʒd] *a* կազմավորված, հասունացած. փետրավորված:  
**full-length** [ˌfʊlˈleŋθ] *a* ամբողջ հասակով/երկայնքով. *a* ~ portrait/dress ամբողջ հասակով նկար, երկար զգեստ. fall ~ ամբողջ հասակով մեկ մեկնվել:  
**fullscale** [ˌfʊlˈskeɪl] *a* բնական մեծության. *a* ~ model բնական մեծության մոդել. *a* ~ attack

*նզմ.* հարձակում ամբողջ ճակատով:  
**fullstop** [ˌfʊlˈstɒp] *n* վերջակետ, լրիվ կանգառ. come to a ~ կանգ առնել. վերջակետին հասնել. The work has come to a ~ Աշխատանքը կանգ է առել:  
**full-time** [ˌfʊlˈtaɪm] *a* լրիվ ծանրաբեռնվածությամբ. *a* ~ job լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանք:  
**full-timer** [ˌfʊlˈtaɪmɪ] *n* լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող:  
**fully** [ˈfʊli] *adv* միանգամայն, ամբողջապես, բոլորովին. ~ justified լրիվ արդարացված. be ~ aware լրիվ տեղյակ լինել:  
**fulsome** [ˈfʊlsəm] *a* կեղծ, ոչ անկեղծ. տհաճ. ~ praise անչափավոր գովասանք. be ~ անկեղծ չլինել:  
**fumble** [ˈfʌmbəl] *v* շոշափել, շոշափելով գտնել, խաբխափել. ~ in one's bag պայուսակը քրքրել. ~ with the lock երկար ժամանակ փականքը չկարողանալ բացել. հմուտ չլինել. ~ for matches in the dark մթության մեջ լուցկի փնտրել:  
**fume** [fjuːm] *n* թանձր ծուխ, մուխ. գոլորշի. send off ~s գոլորշի արձակել. give off ~s գոլորշի բաց թողնել. քրտինք արտադրել. *խսկց., փիսք.* հուզված վիճակ. ~ at smth ջղայնանալ. He was simply ~ fuming Նա պարզապես վրդովված էր. poisonous ~s թունավոր գոլորշի:  
**fumigate** [ˈfjuːmɪgeɪt] *v* ծխահարել, ծուխ տալ. խնկարկել, խուճկ ծխել:  
**fun** [fʌn] *n* հաճույք, ուրախություն. զվարճանք, կատակ. have a ~ հաճույք ստանալ. What a ~! Ի՛նչ ուրախ է. He's great ~ Նա շատ կատակասեր մարդ է. It's no ~ Ոչ մի հաճույք չկա/ Դա կատակ չէ. make ~ ծաղրել, ձեռն առնել, կատակ անել. for ~ կատակի համար. do smth for ~ կատակի համար անել. spoil the ~ հաճույքը փչացնել:  
**function** [ˈfʌŋkʃən] *n* գործունեություն, գործառույթ. the ~ of the heart սրտի գործունեությունը. (պաշտոն, պարտականություն) carry out one's ~ իր պարտականությունը կատարել. It is his ~ Դա նրա պաշտոնն է/պարտականությունն է. in his ~ as a judge դատավորի պաշտոնում. (պաշտոնական ընդունելություն) public/social ~ ընդունելություն. attend some ~ ներկա լինել պաշտոնական ընդունելության:

**function** [ˈfʌŋkʃn] *v* գործել, աշխատել. պաշտոն կատարել. The new cinema is already ~ing Նոր կինոթատրոնը արդեն գործում է. The telephone doesn't ~ Յեռախոսը չի աշխատում:

**functional** [ˈfʌŋkʃnəl] *a* գործառական, ֆունկցիոնալ. ~ ability գործելու ունակություն I'm ~ in French Ես հաղորդակցվում եմ ֆրանսերենով: *հմկրգ.* ~ array ֆունկցիոնալ մատրից. ~ capabilities ֆունկցիոնալ հնարավորություններ. ~ character ֆունկցիոնալ սիմվոլ. ~ diagram ֆունկցիոնալ սխեմա. ~ failure ֆունկցիոնալ սխալ. ~ fault ֆունկցիոնալ վթար:

**functionary** [ˈfʌŋkʃnəri] *n* պաշտոնական անձ. պետական պաշտոնյա:

**fund** [fʌnd] *n* ֆոնդ, կապիտալ. ~s դրամա-միջոցներ. public ~s հասարակական միջոցներ. pension կենսաթոշակային հիմնադրամ. raise ~(s) միջոցներ հավաքել/հայթայթել. ~ -raising campaign օգնության հիմնադրամի արշավ/կամպանիա. private ~ մասնավոր կապիտալ. invest ~s կապիտալ ներդրումներ անել. sinking ~ մարման կապիտալ. be out of ~s միջոցներ/փող չունենալ. ~ for the victims of ֆոնդ զոհերի համար:

**fundamental** [ˌfʌndəˈmentl] *n* հիմնական, էական. ~ defect էական թերություն. ~ value հիմնական արժեք. a ~ difference հիմնական/էական տարբերություն. ~ law հիմնական օրենք, սահմանադրություն:

**fundamentally** [ˌfʌndəˈmentli] *adv* հիմնականում:

**fundamentals** [ˌfʌndəˈmentls] *n* հիմունքներ:

**funding** [ˈfʌndɪŋ] *n* ֆինանսավորում. full ~ լրիվ ֆինանսավորում. ~ criterion/source ֆինանսավորման չափանիշ/աղբյուր. self ~ ինքնաֆինանսավորում:

**funeral** [ˈfjuːnrəl] *1.* *n* թաղում, հուղարկավորություն. ~ service հոգեհանգիստ. ~ procession թաղման թափոր. attend ~s ներկա լինել/մասնակցել թաղմանը. *2.* *a* թաղման, հուղարկավորության:

**funereal** [ˈfjuːniəriəl] *a* վշտալի, սգալի:

**funicular** [fjuːˈni:kjələ] *n* ճոպանուղի. a ~ car ճոպանուղու վագոն:

**fungus** [ˈfʌŋɡəs] *n* սունկ. սնկիկ, բորբոս:

**funk** [fʌŋk] *n* վախ, խուճապ. blue ~ *խսկց.*

սարսափ. be in a ~ վախվիտել, վախենալ.

**funk** [fʌŋk] *v* *խսկց.* վախենալ, երկնչել. ~ the exam քննություններից վախենալ. He ~ed it Նա վախեցավ այդ անել:

**funnel** [ˈfʌnl] *n* ձագար, ծխնելույզ:

**funnily** [ˈfʌnili] *adv* զվարճալի, տարօրինակ. ~ enough որքան էլ տարօրինակ.

**funny** [ˈfʌni] *a* զվարճալի տարօրինակ. a ~ story անեկդոտ. He's just trying to be ~ Նա պարզապես զվարճասեր է ձևանում. have a ~ feeling տարօրինակ զգացում ունենալ. There is smth ~/some ~ business Ինչ-որ տարօրինակ բան կա այստեղ:

**fur** [fɜː] *1.* *n* մորթի. ~s մորթեղեն, մուշտակեղեն. (մուշտակամորթ գազան) ~ and feather մուշտակամորթ կենդանիներ. *2.* *a* մորթե. a ~ coat մորթե վերարկու. (նստվածք) ~ on a kettle նստվածք թեյամանի մեջ. ~ on one's tongue *բժշկ.* փառ լեզվի վրա:

**furish** [ˈfɜːbiʃ] *v* մաքրել, փայլեցնել. վերականգնել, վերանորոգել:

**furious** [ˈfjʊəriəs] *a* կատաղի, զագագած. բուռն, անսանձ. ~ struggle մղելգին պայքար. a ~ look զագագած հայացք. a ~ wind կատաղի քամի. at a ~ pace կատաղի/մեծ արագությամբ be ~ with smn մեկի վրա կատաղած լինել:

**furl** [fɜːl] *v* ծալել, փաթաթել. հավաքել. ~ one's umbrella անձրևանոցը ծալել. ~ sails/a flag առագաստը հավաքել. դրոշը ծալել:

**fur-lined** [ˈfɜːlaɪnd] *a* մորթով երիզված. ~ boots մորթով երիզված կոշիկներ:

**furnace** [ˈfɜːnis] *n* հնոց, հալոց. *փ/սք.* փորձություն, բով. The room was like a ~ Սենյակում ահավոր շոգ էր/Յնոցի էր նման:

**furnish** [ˈfɜːniʃ] *v* մատակարարել, ապահովել, տալ. հայթայթել. ~ with information տեղեկություններ հաղորդել/մատակարարել. ~ with provisions մթերքով մատակարարել. (կահավորել) ~ the room/the flat սենյակը/բնակարանը կահավորել. rent a ~ed flat կահավորված բնակարան վարձել:

**furnishings** [ˈfɜːniʃɪŋz] *n* pl կահկարասի, կահավորանք. սարքավորում, սարք. soft ~ փափուկ կահույք:

**furniture** [ˈfɜːnitʃə] *n* կահույք, կահավորանք, կահ-կարասի. ~ and fittings կահույք և սարքավորում. modern/old-fashioned/plain/second hand ~ ժամանակակից/հնաոճ/հա-

սարակ/օգտագործած կահույք set of ~ լրակազմ կահույք. piece of ~ կահույքի առարկա. ~ factory կահույքի գործարան:

**furore** [ˈfjuːˈrɔːri] n աղմկալից, շռնդալից հաջողություն, ֆուրոր:

**furrier** [ˈfʌriə] n մորթագործ, մուշտակագործ:

**furrow** [ˈfʌrəʊ] **1.** n ակոս. խոր կնճիռ. **2.** v վարել, ակոսներ անել:

**furrowy** [ˈfʌrəʊi] a կնճռոտ:

**furry** [ˈfɜːri] a մորթե, մորթով պատած/երիզված:

**fur-seal** [ˈfɜːsiːl] n կենդ. ծովաշուն:

**further** [ˈfɜːðə] a հետագա, լրացուցիչ. for ~ development հետագա զարգացման համար. without ~ difficulties առանց հետագա բարդությունների. till/until ~ notice մինչև հետագա ծանուցում. ~ instructions լրացուցիչ ցուցումներ. the ~ end of the hall դահլիճի հեռու կողմը/ծայրը.

**further** [ˈfɜːðə] adv ավելի հեռու. բացի այդ, այնուհետև. It's dangerous to go any ~ ավելի հեռու զնալը վտանգավոր է. and ~ և բացի այդ. Don't trouble yourself ~ Այլևս մի անհանգստանա. What happened ~ ? Այնուհետև ի՞նչ պատահեց:

**further** [ˈfɜːðə] v առաջ մղել, խթանել. ~ the success հաջողությանը նպաստել. ~ smb's interests մեկի շահերին օժանդակել. ~ an end մոտեցնել ավարտը:

**furthermore** [ˌfɜːðəˈmɔː] adv բացի այդ, և ավելին:

**furthest** [ˈfɜːðɪst] a, adv ամենահեռավոր, ամենից հեռու:

**furtive** [ˈfɜːtɪv] a թաքուն, գաղտագողի. a ~ glance գաղտնագողի հայացք. a ~ behaviour թաքցրած վարվելակերպ:

**furtively** [ˈfɜːtɪvli] adv թաքուն, գաղտագողի. go away ~ թաքուն հեռանալ:

**fury** [ˈfjʊəri] n կատաղություն, մոլեգնություն. in a ~ կատաղած, մոլեգնած. work oneself into a ~ գազազել. չար աստվածուհի. ֆուրիա. *փխբ.* չար/կռվարար կին:

**fuse** [fjuːz] **1.** n բռնկիչ, պայթաբուլ. *ռզմ.* պայթուցիչ. ~ էլ. դյուրահալ ապահովիչ. change/mend/replace a ~ ապահովիչը փոխել. ~ box ապահովիչների տուփ. **2.** v հալվել, ձուլվել. The lights have ~d Ապահովիչներն այրվել են:

**fuselage** [ˈfjuːzələːʒ] n *ավ.* ինքնաթիռի կմախք. ֆյուզելաժ:

**fusibility** [ˌfjuːzəˈbɪləti] n հալունություն, դյուրահալություն:

**fusible** [ˈfjuːzəbl] a դյուրահալ:

**fusillade** [ˌfjuːzəˈleɪd] n հրաձգություն, գնդակահարություն:

**fusion** [ˈfjuːʒn] n հալում. հալած զանգված. միաձուլում:

**fuss** [fʌs] n իրարանցում, վազվզոց. նյարդային վիճակ. make a/kick up a ~ իրար անցնել. a ~ about nothing մեծ աղմուկ մանրուքների պատճառով:

**fuss** [fʌs] v իրար անցնել, դատարկ բաներով զբաղվել. ծանծրացնել, անհանգստացնել. ~ over/about համակված լինել. ~ over details մանրուքների մեջ խրվել. ~ over smb մեկի վրա դողալ:

**fusspot** [ˈfʌspɒt] n *խսկց.* անհանգիստ/փութկոտ մարդ:

**fussy** [ˈfʌsɪ] a փութկոտ, անհանգիստ, իրար անցնող:

**fusty** [ˈfʌsti] a բորբոսնած, մզլած. *փխբ.* հին հայացքների տեր, լճացած:

**futile** [ˈfjuːtaɪl] a ապարդյուն, անօգուտ. ոչ կարևոր, դատարկ. a ~ attempt անօգուտ/ապարդյուն փորձ. a ~ play դատարկ/անիմաստ ներկայացում:

**futility** [fjuːˈtɪləti] n ապարդյունություն, անօգտակարություն. մակերեսայնություն:

**future** [ˈfjuːtʃə] n ապագա, գալիք. in the ~ ապագայում. ~ generations/times գալիք սերունդները/ժամանակներ for the/in ~ այսուհետև, հետագայում. ~ tense *քեր.* ապառնի ժամանակ. (հեռանկար, ակնկալիք) the ~ of industry արդյունաբերության զարգացման հեռանկարը. a great ~ մեծ հեռանկարներ. There is no ~ in it *խսկց.* Դա հեռանկար չունի:

**future** [ˈfjuːtʃə] a ապագա, գալիք. ~ events ապագա իրադարձությունները. my ~ teacher իմ ապագա դասատուն:

**fuzz** [fʌz] n աղվամազ, խավ. ճոխ/փարթած մազեր:

**fuzzily** [ˈfʌzɪli] adv անորոշ, անհայտ:

**fuzzy** [ˈfʌzi] a խավոտ, աղվամազով ծածկված. զանգուր, խուճուճ:

## G

**G, g** [dʒi:] **n** անգլերեն այբուբենի յոթերորդ տառը. *երժշ.* "սոլ" ձայնանիշը/ նոտան:

**gab** [gæb] **n** շատախոսություն, շաղակրատանք. *Stop ~bing* Վերջ տուր շաղակրատանքիդ. *He's got the gift of the ~bing* խոսքի տակ չի մնա:

**gabble** ['gæbl] **n** անդադար շատախոսություն. անհասկանալի/անկապ խոսք:

**gabble** ['gæbl] **v** անհասկանալի/անկապ խոսել. *~ out an apology* ծամծմելով ներողություն խնդրել. *~ away in German/French etc* շաղակրատել գերմաներեն/ֆրանսերեն և այլն:

**gabbler** ['gæblə] **n** շաղակրատ, շատախոս:  
**gable** ['geɪbl] **n** *ճրտ.* եռանկյունաձև տանիքի կատար. *ֆրոնտոն:*

**gabled** ['geɪblɪd] **a** սրածայր (տանիք):

**gaby** ['geɪbi] **n** միամիտ/ապուշ/անխելք մարդ:

**gad** [gæd] **v** թափառել, դատարկաշրջել. *~ about town* *փխբ.* քաղաքով մեկ շրջել:

**gad fly** ['gædflaɪ] **n** բռռ. *փխբ.* ծանծրալի/տաղտկալի մարդ:

**gadget** ['gædʒɪt] **n** հարմարանք, սարք. *a ~ for washing windows* պատուհանները լվանալու հարմարանք:

**gaff** [gæf] **n** ձկնորսական եռաժանի:

**gaff** [gæf] **n** *խսկց.* էժանագին թատրոն/պարսրահ (*նաև* penny ~):

**gaffer** ['gæfə] **n** ծերուկ, գեղջուկ:

**gag** [gæg] **n** բերանակապ, խցոց. *խսկց., թատր.* սրախոսություն, ծիծաղաշարժ հավելում. *introduce ~s* *խսկց., թատր.* ինքնահավելումներ կատարել ներկայացման ընթացքում:

**gag** [gæg] **v** *~ smb.* մեկի բերանը լաթ խոթել/փակել/կապել:

**gaga** ['gɑ:ɡɑ:] **a** անիմաստ, անհեթեթ. *խելքը թռցրած. ցնդած.* *He's a ~* խելքը թռցրել է:

**gage** I [geɪdʒ] **1. n** երաշխիք. մեծամարտի հրավեր. *throw down a ~* մեծամարտի հրավիրել. **2. v** երաշխավորել, գրագ գալ:

**gage** II [geɪdʒ] **n** *ծով.* նավի դիրքը քամու նկատմամբ:

**gaggle** ['gægl] **v** կռնչել (սագերի մասին):

**gaiety** ['geɪəti] **n** ուրախություն, զվարթություն. *a mood of general ~* համընդհանուր ուրախության տրամադրություն *artificial ~* շինծու ուրախություն:

**gaily** ['geɪli] **adv** ուրախ, զվարթ. *պայծառորեն, վառ կերպով:*

**gain** [geɪn] **n** աճ, ավելացում. *շահ, շահույթ, եկամուտ.* *capital ~* միջոցների ինքնաճ. *be interested in ~* շահույթով հետաքրքրվել. *make substantial ~s* խոշոր/պատկառելի շահույթ ունենալ. *a ~ in weight* քաշի աճ:

**gain** [geɪn] **v** ձեռք բերել, ստանալ. *~ knowledge/popularity* գիտելիք/ժողովրդայնություն ձեռք բերել. *~ an advantage/experience* առավելություն/փորձ ձեռք բերել. (*շահել, տանել*) *~ sympathy* համակրանք շահել. *~ a considerable sum* զգալի գումար շահել. *~ time* ժամանակ շահել. *~ height/speed* բարձրության հասնել, արագություն զարգացնել. *~ weight* քաշ ավելացնել. *My watch ~s 5 minutes a day* ժամացույցս ամեն օր 5 րոպե առաջ է ընկնում. *~ strength* ուժ ձեռք բերել. (*հասնել*) *~ aim/independence* նպատակին հասնել, անկախություն ձեռք բերել. (*հաղթել, հասնել*) *~ a victory/a majority* հաղթանակ ձեռք բերել, մեծամասնություն շահել. *~ territory* տարածք նվաճել. *~ momentum* արագությունը մեծացնել. *~ confidence* վստահություն շահել. *~ ground* լայն տարածում ստանալ. *~ access* մուտքի թույլտվություն/հնարավորություն ձեռք բերել. *~ to the summit* գագաթին հասնել. *~ on* հասնել, հետևից հասնել. *The car is ~ing on us* Մեքենան հասնում է մեզ. *~ on the leader* *մրգ.* առաջատարին հասնել. *~ the upper hand* հաղթել. *~ on one's pursuers* պոկվել հետապնդողներից. *հմկրգ.* ուժեղացում *~ control* ուժեղացման կարգավորում. *~ factor* ուժեղացման գործակից. *~ margin* ուժեղացման սահման:

**gainful** ['geɪnfʊl] **a** շահավետ, օգտավետ, արդյունավետ. *~ occupation* շահավետ/լավ վարձատրվող աշխատանք.

**gainings** [ˈgeɪnɪŋz] n pl շահում, շահ, վաստակ, եկամուտ:

**gait** [geɪt] n քայլվածք, քայլք. *ամ.* արագություն. steady/ unsteady/heavy / light /shuffling /awkward ~ հաստատուն/երերուն/ ծանր/ թեթև/ քստքստացնող /անշնորհք քայլվածք:

**gaiters** [ˈgeɪtəz] n pl տոնապաններ:

**gala** [ˈgɑ:lə] n, a հանդես, տոնախմբություն. տոնական, շքեղ. ~ concert շքեղ/տոնական համերգ:

**galantine** [ˈgælənti:n] n դոնդող, դոնդողավոր ուտելիք:

**galaxy** [ˈgæləksɪ] n *աստղգ.* գալակտիկա, Ծիր Կաթին, Հարդագողի ճանապարհ:

**gale** [geɪl] n հողմ, բուք, փոթորիկ. It was blowing a ~ Շատ ուժեղ քամի էր փչում. a ~ force wind փոթորկաբեր քամի. ~ warning փոթորկի ազդանշան. ~ of laughter ծիծաղի պոռթկում:

**gall** [gɑ:l] n մաղձ, լեղի. լեղապարկ. *փխբ.* ատելություն, դառնություն, քին. ~ and wormwood զգվելի/ատելի բամ:

**gallant I** [ˈgælənt] n, a նրբակիրք մարդ. կնամեծար. քաջ, կտրիճ, խիզախ:

**gallant II** [gəˈlænt] n երկրպագու:

**gallant** [gəˈlænt] a քաղաքավարի, բարեկիրք. սիրային:

**gallantry** [ˈgæləntri] n քաջություն, համարձակություն. բարեկրթություն. կնամեծարություն:

**gall-bladder** [ˈgɑ:l,blædə] n *կզմխ.* լեղապարկ:

**gallery** [ˈgæləri] n սրահ, պատկերասրահ (*նաև picture* ~). *թատր.* վերնասրահ (բալկոն. գալյորկա). play to the ~ *փխբ., խսկց.* հանդիսատեսի ճաշակով շարժվել:

**galley** [ˈgæli] n մակույկ. *ծով.* նավախոհանոց. *պտմ.* թիանավ, գալերա (տաժանակիր աշխատանք). *տպգր.* (*նաև* ~ proof) տառակալ, շարվածքատախտակ:

**galley-slave** [ˈgæli,sleɪv] n թիապարտ, ծանր աշխատանք կատարող մարդ:

**gallicism** [ˈgæli,sɪz(ə)m] n ֆրանսաբանություն. գալլիցիզմ:

**galling** [ˈgɑ:lɪŋ] a անտանելի. It was ~ to/for him Դա նրա համար անտանելի էր:

**gallipot** [ˈgælipɒt] n դեղագործական անոթ:

**gallivant** [ˈgælivænt] v թափառել, թրև գալ:

**gallon** [ˈgælən] n գալոն (հեղուկաչափ, ՄԲ-

4.54 լ., ԱՄՆ- 3.78 լ). imperial ~ անգլիական գալոն:

**galoon** [gəˈlu:n] n գարդաժապավեն, գարդերիզ:

**gallop** [ˈgæləp] n քառատրոփ արշավ. at full ~ սրարշավ, բուռն թափով:

**gallows** [ˈgæləuz] n pl կախաղան:

**gallows-bird** [ˈgæləuzbɜ:d] n կախաղանի արժանի/անպիտան մարդ:

**gallows-tree** [ˈgæləuztri:] n կախաղան:

**gall-stone** [ˈgɑ:lstəʊn] n *բժշկ.* լեղապարկի քար:

**galore** [gəˈlɔ:] adv առատ, շատ. *խսկց.* առատություն:

**galosh** [gəˈlɒʃ] n կրկնակոշիկ:

**galumph** [gəˈlʌmf] v *խսկց.* ուրախությունից ցատկոտել/թռչկոտել:

**galvanic** [gælˈvænik] a էլ. գալվանական. *փխբ.* անակնկալ. ~ smile անբնական ժպիտ:

**galvanization** [,gælˈvənaɪˈzeɪʃn] n *տեխն., բժշկ.* գալվանացում:

**galvanize** [ˈgælvənaɪz] v *տեխն., բժշկ.* գալվանացնել. ~ smb into action *փխբ.* մեկին գործողության դրդել:

**gamble** [ˈgæmbəl] n մոլեխաղ, վտանգավոր գործ, ռիսկ. It's a bit of a ~ Դա մի փոքր վտանգավոր է:

**gamble** [ˈgæmbəl] v մոլեխաղ խաղալ. ~ on the stock exchange բորսայում խաղալ. ~ away տանուլ տալ. He has ~d away his money Եա իր փողը տանուլ տվեց. ~ on հույս դնել:

**gambler** [ˈgæmblə] n խաղամուլ, թղթամուլ. շահախարդախ. աֆերիստ:

**gambling** [ˈgæmbliŋ] n մոլի/փողով խաղեր:

**game I** [geɪm] n խաղ, մոլախաղ. *մրգ.* խաղ, հանդիպում. ~s մարզական խաղեր, մրցախաղեր. a ~ of football ֆուտբոլի խաղ/հանդիպում. a ~ of chess մի պարտիա շախմատ. ~s of chance բախտախաղեր, մոլեխաղեր. play a good/bad ~ լավ/վատ խաղացող լինել. play the ~ խաղի կանոնները պահպանել. *փխբ.* ազնիվ վարվել. make ~ of ծաղրել, վրան ծիծաղել. The ~ is up Գործը տանուլ է տված. be on one's ~ ձևի մեջ լինել a ~ against (Ararat) հանդիպում "Արարատի" հետ. the Olympic G~s Օլիմպիական խաղեր. Good-will G~s Բարի կամքի խաղեր. (թեմիս) ~ set



and match ( թեն.) զեյմ, սեթ և հանդիպում.  
play a double ~ կրկնակի խաղ խաղալ. beat  
smb at his own ~ մեկին իրեն զենքով հաղ-  
թել. spoil one's ~ խաղը փչացնել. ~s խաղեր.  
indoor/outdoor ~s ներսի/դրսի (բացօթյա)  
խաղեր. practice ~s մարզիչ/մարզչական  
խաղեր. champion ~s առաջնության խաղեր.  
(հանդիպում) win/lose a ~ տանել, տարվել  
(խաղը). exciting/thrilling ~ հուզիչ խաղ.  
The ~ was in full swing խաղի թեժ պահն  
էր:

**game II** [geim] n որս. որսի թռչուններ/կեն-  
դանիներ. big ~ որսի խոշոր կենդանի. որսի  
միս. fair ~ թռչուններ և կենդանիներ, որոնց  
որսը թույլատրված է. ~ bag որսապարկ. ~  
reserve արգելավայր, արգելոց. ~ laws որսի  
կանոններ. easy ~ *փխբ.* շուտ խաբվող  
մարդ. ~ for anything ամեն ինչի պատրաստ.  
*հմկրգ.* խաղ, խաղային ծրագիր. ~ problem  
խաղային խնդիր. ~ rule խաղի կանոն. ~  
with inexact information ոչ լրիվ ինֆոր-  
մացիայով խաղ:

**game** [geim] v մոլախաղ խաղալ:

**game** [geim] a խեղված, վնասված. a ~ leg  
խեղված/վնասված ոտք:

**game-cock** ['geimkɒk] n մարտաքլոր (աք-  
լորակռվի վարժեցրած):

**gamely** ['geimli] adv աննկունորեն:

**games master** ['geimz,mɑ:stə] n ֆիզկուլ-  
տուրայի դասատու:

**gamesome** ['geimsəm] a զվարթ, ուրախ:

**gamester** ['geimstə] n խաղամոլ, թղթամոլ:

**gaming-house** ['geimiŋhaus] n խաղա-  
տուն:

**gamma** ['gæmə] n “գամմա” հունական այ-  
բուրենի տառ. ~ rays գամմա ճառագայթ-  
ներ:

**gammon I** ['gæmən] n խոզապուխտ,  
ապխտած ազդր:

**gammon II** ['gæmən] n խաբեություն,  
խաբեբայություն:

**gamp** [gæmp] n մեծ հովանոց:

**gamut** ['gæmət] n *երժշ.* գամմա. ծայնածա-  
վալ, դիապազոն:

**gamy** ['geimi] a որսի համ ունեցող. որ-  
սառատ, որսաշատ:

**gander** ['gændə] n արու սագ:

**gang** [gæŋ] n բրիգադ, խումբ, հերթափոխ.  
(հանցագործների) բանդա, հրոսակա-

խումբ. section ~ երկաթուղային բանվոր-  
ների խումբ. a whole ~ of us մի ամբողջ  
խմբով:

**gang-board** ['gæŋbɔ:d] n (*նալ* gangplank,  
gangway) (նավից ափ իջնելու) կամրջակ,  
ելարան:

**ganger** ['gæŋə] n վերակացու:

**ganger** ['gæŋə] n հետիոտն, ոտքով գնացող  
մարդ:

**ganglion** ['gæŋgliən] n *կզմխ.* նյարդակծիկ,  
նյարդահանգույց:

**gangplank** ['gæŋplæŋk] n տե՛ս gang-  
board:

**gangrene** ['gæŋgri:n] n փտախտ, գանգրե-  
նա:

**gangrenous** ['gæŋgrinəs] a փտախտային,  
գանգրենային:

**gangster** ['gæŋstə] n գանգստեր, բանդիտ:

**gangway** ['gæŋwei] n (*նալ* gangplank) նա-  
վա/ օդանավասանդուղք. raise the ~ սան-  
դուղքը հեռացնել:

**gaol** [dzeil] n զնդան, բանտ, բանտարկու-  
թյուն:

**gaolbird** ['dzeilbɜ:d] n *փխբ.* կալանավոր,  
քրեական հանցավոր:

**gaoler** ['dzeilə] n բանտապահ:

**gap** [gæp] n ճեղք, բացվածք, ծակ (պատի/  
ցանկապատի մեջ). “պատուհան” դասերի  
միջև. through a ~ in the wall պատի ծակի  
միջով. the ~ between the wars պատերազմ-

ների միջև ընկած ժամանակամիջոց. a ~ in  
a text բաց տեղ/արանք տեքստում. leave a ~  
for տեղ թողնել... համար. a ~ in defences

*ռզմ.ճեղք/ճեղքվածք* պաշտպանություն  
մեջ. a ~ in mountains կիրճ լեռներում. a ~ in

knowledge/memory գիտելիքների բաց. հիշո-  
ղության մթագնում/կորուստ. ~ of 7 years յոթ

տարվա տարբերություն. a ~ in the conversa-  
tion դադար զրույցի ընթացքում. a wide ~ be-

tween մեծ տարբերություն...միջև. fill the ~  
պակասը լրացնել. fill up/ stop the ~ պակասը

լրացնել, դատարկ տեղը զբաղեցնել:  
*հմկրգ.* բացատ. ~ character բացատի նիշ. ~

digits դատարկ կարգեր. ~ on magnetic  
tape թերություն մագնիսական ժապավենի

վրա:

**gape** [geip] n հորանջ. զարմանք արտահայ-  
տող հայացք. անցք, ծակ, բացվածք. ~s

հորանջման նույն:

**gape** [geɪp] v հորանջել. ~ at smth *խսկց.* բերանբաց նայել. a gaping wound /abyss խորը բացված վերք, խորխորատ:

**gaptoothed** [ˌgæpˈtuːθt] a նոսր ատամներով:

**garage** [ˈgæɹɑːʒ] 1. n ավտոտնակ, գարաժ. սպասարկման կայան. մեքենան գարաժ տանել/կանգնեցնել. 2. v մեքենան գարաժ տանել/կանգնեցնել/գարաժում պահել:

**garb** [gɑːb] n հագուստ, տարագ, համագգեստ:

**garbage** [ˈgɑːbɪdʒ] n աղբ. *փխբ.* ցածրորակ ապրանք/գրականություն. ~ can աղբաման:

**garble** [ˈgɑːbl] v աղավաղել, խեղաթյուրել. a ~d version of the story պատմվածքի աղավաղված տարբերակը:

**garcon** [gɑːrˈsɔːŋ] n մատուցող, գարսուն:

**garden** [ˈgɑːdn] n պարտեզ, զբոսայգի. the ~ of England *փխբ.* Անգլիայի հարավային շրջանները. kitchen/vegetable ~ բանջարանոց. nursery ~ տնկարան. botanical ~s բուսաբանական այգի. a ~ seat նստարան այգում. stroll in the ~ զբոսնել այգում/պարտեզում. fresh from the ~ հենց նոր քաղած/հավաքած:

**gardener** [ˈgɑːdnə] n պարտիզպան, այգեպան, այգեգործ:

**gardening** [ˈgɑːdnɪŋ] n այգեգործություն. fond of ~ սիրել այգեգործությամբ զբաղվել. ~ gloves այգեգործական ձեռնոցներ:

**garden-stuff** [ˈgɑːdnstʌf] n (այն, ինչ աճում է այգում) բանջարեղեն, պտուղներ, ծաղիկներ:

**gargle** [ˈgɑːgl] n, v ողողելու հեղուկ. դեղ (կոկորդի/ատամների համար). ողողել բերանը/ կոկորդը:

**garish** [ˈgæəriʃ] a վառ, փայլուն. աչքծակող, աղաղակող. ~ colours աղաղակող գույներ. a ~ tie չափազանց վառ/աչք ծակող փողկապ:

**garland** [ˈgɑːlənd] n ծաղկեպսակ, ծաղկաշղթա. առաջնության դափնի:

**garlic** [ˈgɑːlɪk] n սխտոր. a clove of ~ սխտորի պճեղ:

**garment** [ˈgɑːmənt] n հագուստի մաս/առարկա. ~s հագուստ, զգեստ, շոր:

**garner** [ˈgɑːnə] n շտեմարան (*նաև փխբ.*)

**garnet** [ˈgɑːnɪt] n նռնաքար:

**garnish** [ˈgɑːnɪʃ] n զարդարանք, զարդ. խավարտ (զարմիր):

**garnish** [ˈgɑːnɪʃ] v զարդարել, նախշել. ուտելիքը խավարտել. *իրավ.* պարտապանի գույքի վրա կալանք դնել. ~ meat with mayonnaise միսը մայոնեզով խավարտել:

**garnisher** [ˈgɑːnɪʃə] n պարտապանի գույքի վրա կալանք դնելու պահանջ ներկայացնող:

**garret** [ˈgærət] n ձեղնահարկ. *խսկց.* գլուխ, "վերնատուն":

**garrison** [ˈgærɪʒən] n կայազոր:

**garrulity** [gəˈruːləti] n շատախոսություն, շաղակրատանք:

**garrulous** [ˈgærələs] a շատախոս, շաղակրատ. *փխբ.* կարկաչահոս (առվակ):

**garter** [ˈgɑːtə] n ծնկակապ, գուլպայի կապիչ:

**gas** [gæs] n գազ. *ամ.* բենզին, վառելիք. *ռզմ.* թունավոր նյութ. *հնք.* հանքագազ. natural ~ բնական գազ. detonating ~ շառաչող գազ. noble ~ *քիմ.* իներտ գազ. deceptive ~ *ռզմ.* քողարկող գազ. ~ alarm քիմիական տագնապ. ~ burner գազայրիչ. ~ cooker գազօջախ. ~ chamber գազախցիկ. step on the ~ *խսկց.* (*նաև ավտո.*) գազ տալ/ավելացնել turn on/light the ~ գազը միացնել. turn off/put out the ~ գազը անջատել. pump the ~ մեքենան լիցքավորել:

**gas** [gæs] v գազով թունավորել. *խսկց.* շաղակրատել, դուրս տալ:

**gasbag** [ˈgæsbæg] n շատախոս, չաչանակ:

**gas-bracket** [ˈgæs,brækɪt] n գազալամպ:

**gas-engine** [ˈgæs,ɛndʒɪn] n գազաշարժիչ:

**gaseous** [ˈgæsjəs] a գազային, գազանման:

**gas-fitter** [ˈgæs,fɪtə] n գազամուղագործ:

**gash** [gæʃ] 1.n խոր վերք. 2.v խոր վերք բանալ/ կտրել. His face was badly ~ed *Դեմքը խորը կտրված/ճղված/պատռված էր:*

**gas-helmet** [ˈgæs,helmət] n հակագազի սաղավարտ:

**gasification** [ˌgæsɪfɪˈkeɪʃn] n գազային էներգիայի մատակարարում, գազիֆիկացիա:

**gasify** [ˈgæsɪfaɪ] v վառելագազ մատակարարել. գազի վերածել:

**gas-jet** [ˈgæsdʒet] n գազայրիչ:

**gas-light** [ˈgæslait] n գազային լուսավորում, գազալամպ:

**gas main** [ˈgæsmɛɪn] n գազամուղ, գազատար խողովակ:

**gasman** [ˈgæsmæn] n գազիֆիկացման աշխատող:

**gas-mantle** [ˈgæs,mæntl] n շիկացման ցանց:

**gas-mask** [ˈgæsmɑːsk] n հակագազի դիմակ:

**gas-meter** [ˈgæs,mi:tə] n (նաև gasometer) գազաչափ, գազահաշվիչ: read the ~ գազաչափի սլայդները գրանցել:

**gasolene** [ˈgæsəli:n] n *ամ*. բենզին: ~ station բենզալցակայան:

**gasp** [gɑːsp] n ծանր շնչառություն, շնչարգելություն. at one's last ~ վերջին շունչը փչելիս. give a ~ of horror/surprise/pain սարսափից/զարմանքից բերանբաց մնալ. ցավից շնչասպառ լինել:

**gasp** [gɑːsp] v ծանր շնչել, շնչասպառ լինել. ~ out հեղուկ խոսել/արտասանել. ~ out a few words հեղուկ մի քանի բառ արտասանել. ~ for breath/air շնչահեղձ լինել. ~ for *ի/սք*. բուռն կերպով ցանկանալ:

**gasper** [ˈgɑːspə] n *խսկց*. էժանագին գլանակ:

**gas-producer** [ˈgæsprə,djuːsə] n գազագեներատոր:

**gas-proof** [ˈgæspruːf] a անգազաթափանց:

**gasring** [ˈgæsriŋ] n գազօջախ:

**gassed** [gæst] a գազով թունավորված:

**gass-shell** [ˈgæsʃel] n քիմիական արկ:

**gas-shelter** [ˈgæs,ʃeltə] n գազապաստարան:

**gassy** [ˈgæsi] a գազաման, գազով լցված:

**gas-tank** [ˈgæstæŋk] n գազամբար:

**gastric** [ˈgæstri:k] a ստամոքսային:

**gastritis** [gæˈstraitis] n ստամոքսի բորբոքում, գաստրիտ:

**gas-warfare** [ˈgæs,wɑːfeə] n քիմիական պատերազմ:

**gas works** [ˈgæs,wəːks] n գազի գործարան:

**gate** [geɪt] n դարպաս, դուռ. դռնակ. ջրարգելակ. ուղեփակոց. մուտքի վճար. a big ~ մեծ հասույթ:

**gate crash** [ˈgeɪtkræʃ] n զալ առանց հրավերի:

**gate crusher** [ˈgeɪt,kræʃə] n անտոմս հանդիսատես. անկոչ հյուր:

**gatehouse** [ˈgeɪthaus] n պահակատնակ:

**gate-keeper** [ˈgeɪt,kiːpə] n դռնապան:

**gateway** [ˈgeɪtwei] n բականցք, բակամուտք (դարբասի միջով):

**gather** [ˈgæðə] v հավաք(վ)ել, ժողով(վ)ել, կուտակել. ~ flowers /information/a collection ծաղիկներ հավաքել. տեղեկություն կուտակել. հավաքածու հավաքել. ~ all one's courage ամբողջ ուժերը լարել. ~ up broken glass ապակու կտորտանքը գետնից բարձրացնել. ծալ/փոք կարել ~ a skirt փեշի վրա ծալել կարել. ~ speed/height *ի/սք*. արագություն զարգացնել. բավականաչափ բարձրանալ. (եզրակացնել) I ~ you're leaving ես հասկացա, որ դուք գնում եք. I ~ed from what he said ես նրա բառերից եզրակացրի. A storm/darkness is ~ing Փոթորիկ է պատրաստվում/սպասվում. Մթությունը թանձրանում է. ~ oneself up զգաստանալ, իրեն հավաքել:

**gathering** [ˈgæðəriŋ] n ժողով, հավաքույթ, կուտակում. a family ~ ընտանեկան հանդիպում. social ~ հասարակական երեկո/երեկույթ:

**gathers** [ˈgæðəz] n pl փոթեր/ծալքեր (հագուստի վրա):

**gauche** [gəʊ] a անշնորհք:

**gaud** [gɔːd] n անարժեք/անճաշակ զարդ:

**gaudy** [ˈgɔːdi] a անճաշակ, աչք ծակող, էժանագին. ~ jewelry անճաշակ զարդեղեն:

**gaudy** [ˈgɔːdi] n շքեղ տոնակատարություն, հոբելյանական հացկերույթ:

**gauge** [geɪdʒ] n *տեխ*. չափ, մեծություն. տրամաչափ, չափող գործիք. ջրաչափ. take the ~ of չափել, գնահատել. երկաթգծերի լայնք broad/narrow ~ լայն/մեղ երկաթգիծ. pressure ~ ճնշաչափ, մանոմետր. fuel ~ բենզինաչափ, վառելիքի չափանիշ:

**gauge** [geɪdʒ] v չափել, չափը ճշտել. ~ the diameter տրամագիծը չափել. ~ the situation իրադրությունը գնահատել:

**gauging-station** [ˈgeɪdʒɪŋ,steɪʃn] n ջրաչափական կայան:

**gaunt** [gɔːnt] a միհար, վտիտ, հյուժված:

**gauntlet** [ˈgɔːntlət] n ձեռնոց, թաթպան (վարորդի, օդաչուի):

**gauze** [gɔːz] n շղարշ (գործվածք), մառլա. մշուշաքող:

**gauzy** [ˈgɔːzi] a բարակ, նուրբ, թափանցիկ:

**gavel** [ˈgævəl] n մուրճ (աճուրդի, ծալովի):

**gawk** [gɔ:k] *n* տխմար, ապուշ, հիմար:  
**gawky** [ˈgɔ:ki] *a* անշնորհք, ծանրաշարժ, անճոռնի:  
**gay** [gei] *a* ուրախ, զվարթ. վառ, պայծառ (գույներ):  
**gaze** [geiz] *n, v* սևեռում/երազկոտ հայացք. լարված/ակննապիշ նայել:  
**gazelle** [gæˈzel] *n* վիթ:  
**gazette** [gæˈzet] *n* պաշտոնաթերթ, պաշտոնական տեղեկագիր:  
**gazetteer** [ˌgæzəˈtiə] *n* աշխարհագրական տեղեկագիրք, տեղեկատու:  
**gear** [giə] *n* սարք. մեխանիզմ. ատամնավոր շարժանիվ. landing ~ *ալ*. ինքնաթիռի շաստի. steering ~ ղեկային մեխանիզմ/հարմարանք. ավտո (փոխանցում, արագություն) low/first ~ ցածր/ առաջին արագություն. high/top ~ բարձր/բարձրագույն արագություն. change ~ փոխել արագությունը. engage third/reverse ~ միացնել երրորդ արագությունը. հետընթացք տալ. The car is not in ~ Մեքենայի փոխանցումը/արագությունը միացված չէ. fishing/shaving ~ ձկնորսական սարք/պարագամեր. սափրվելու պարագամեր:  
**gear** [giə] *v* միացնել, հարմարացնել. The book is ~ed to the needs of students **Գիրքը հարմարեցված է ուսանողների համար.** (շարժման մեջ դնել) ~ down շարժումը դանդաղեցնել. ~ up շարժումը արագացնել/մեծացնել արագությունը:  
**gear-box** [ˈgiəbɒks], **gear-case** [ˈgiəkeis] *n* *տեխ.* (մեքենայի) արագությունների տուփ:  
**gear-level** [ˈgiə,levl] (մեքենայի) արագությունների փոխանցման լծակ:  
**gearing** [ˈgiəriŋ] *n* *տեխ.* ատամնավոր փոխանցում:  
**gear-wheel** [ˈgiəwi:l] *n* *տեխ.* ատամնավոր անիվ:  
**gelatin(e)** [ˈdʒelətin] *n* դոնդող, ժելատին:  
**gelatinous** [dʒiˈlətinəs] *a* դոնդողանման. կաշուն, մածուցիկ:  
**gem** [dʒem] *n* թանկարժեք քար, գոհար, ակն. *փխք.* մարգարիտ, զանձ. She is a real ~ Նա պարզապես զանձ է:  
**gen** [dʒen] *n* *խսկց.* տվյալներ. ինֆորմացիա. տեղեկություն, տեղեկատվություն:  
**gendarme** [ˈʒɒnda:m] *n* ժանդարմ:

**gender** [ˈdʒendə] *n* *քեր.* սեռ. masculine/feminine/neuter ~ արական/իգական/չեզոք սեռ. ~ equality սեռերի իրավահավասարություն. ~ studies գենդերային ուսումնասիրություններ:  
**gene** [dʒi:n] *n* *կենս.* գեն:  
**genealogical** [ˌdʒi:niəˈlɒdʒikl] *a* ծագումնաբանական, տոհմաբանական:  
**genealogy** [ˌdʒi:niˈælədʒi] *n* ծագումնաբանություն, տոհմաբանություն:  
**general** [ˈdʒenrəl] *n* գեներալ, զորավար. governor ~ նահանգապետ:  
**general** [ˈdʒenrəl] *a* ընդհանուր, համընդհանուր. *a* ~ strike/information համընդհանուր գործադուլ/ընտրություններ. ~ opinion ընդհանուր կարծիք. (սովորական) ~ reader սովորական/լայն ընթերցող. *as a* ~ rule որպես կանոն. *in* ~ ընդհանրապես. *in* ~ use շատ գործածական. ~ impression ընդհանուր տպավորություն *in* ~ outline ընդհանուր գծերով. ~ hospital ոչ մասնագիտացված հիվանդանոց. ~ practitioner թերապևտ. (գլխավոր) ~ director/manager գլխավոր տնօրեն/դիրեկտոր. *հմկրգ.* ~ purpose system ունիվերսալ համակարգ. ~ input/output channel մուտքի/ելքի ընդհանուր կանալ:  
**General-in-Chief** [ˌdʒenrəlɪnˈtʃi:f] *n* Ընդհանուր հրամանատար:  
**generality** [ˌdʒenəˈræləti] *n* ընդհանրություն. անորոշություն:  
**generalization** [ˌdʒenrəlaɪˈzeɪʃn] *n* ընդհանրացում:  
**generalize** [ˈdʒenrəlaɪz] *v* ընդհանրացնել, ընդհանուր եզրակացություն անել:  
**generally** [ˈdʒenrəli] *adv* սովորաբար, ընդհանրապես. ~ speaking ընդհանուր առմամբ. The proposal was ~ welcomed Առաջարկը ընդհանուր հավանության արժանացավ:  
**generalship** [ˈdʒenrəlʃɪp] *n* գեներալական կոչում, ռազմական հրամանատարություն. (հմուտ) ղեկավարություն:  
**general staff** [ˈdʒenrəlstɑ:f] *n* գլխավոր շտաբ:  
**general store** [ˈdʒenrəlstɔ:] *n* հանրախանութ:  
**generate** [ˈdʒenəreɪt] *v* ծնունդ տալ, առաջացնել, ստեղծել. արտադրել. ~ electricity/heat էլեկտրականություն/ջերմություն առա-

ջացնել. ~ hope/fear հույս/վախ արթնացնել:

**generating station** [ˈdʒenəreɪtɪŋ ˈsteɪʃn] n էլեկտրակայան:

**generation** [ˌdʒenəˈreɪʃn] n սերունդ. տոհմ, ցեղ. ծնունդ. *տեխ.* զոյացում, առաջացում. future ~s ապագա սերունդներ. a ~ ago նախորդ/ավագ սերունդը. the rising ~ աճող սերունդը. the younger ~ կրտսեր սերունդը. be born in the same ~ նույն սերնդին պատկանել:

**generative** [ˈdʒenərətɪv] a առաջացնող, ծնող:

**generator** [ˈdʒenəreɪtə] n զեներատոր:

**generic** [dʒəˈnerɪk] a սեռային, սեռի. հատկանշական, ընդհանուր. *հմկրգ.* տոհմային, ընդհանուր, խմբային ~ command խմբային հրաման. ~ description ընդհանրացված նկարագրություն. ~ subroutine ընդհանուր ենթածրագիր:

**generosity** [ˌdʒenəˈrɒsətɪ] n մեծահոգություն, առատաձեռնություն:

**generous** [ˈdʒenərəs] a մեծահոգի, առատաձեռն. a ~ act/impuls մեծահոգի արարք/պոռթկում. a ~ gift/helping շնայլ պարզև, առատ բաժին. be ~ առատաձեռն/շնայլ լինել:

**genesis** [ˈdʒenəsis] n ծագում, առաջացում, ծնունդ:

**genet** [ˈdʒenɪt] n *կենդ.* մշկակատու. մշկակատվի մորթի:

**genetic(al)** [dʒəˈnetɪk(ɪ)] a ծագումնաբանական, ծագումնաբանության:

**genetics** [dʒəˈnetɪks] n ծագումնաբանություն:

**genial** [ˈdʒiːniəl] a ջերմ, սրտազին. ուրախ, կենսուրախ:

**geniality** [ˌdʒiːniˈælɪtɪ] n մտերմություն, սիրալիրություն. բարություն, բարեսրտություն:

**genie** [ˈdʒiːni] n ջին (ոգի արաբական հեքիաթներում):

**genital** [ˈdʒenɪtɪl] n pl սեռական օրգաններ:

**genitive** [ˈdʒenətɪv] n *քեր.* սեռական հոլով (նաև ~ case)

**genius** [ˈdʒiːniəs] n օժտվածություն, հանճարեղություն. տաղանդ. a work of ~ տաղանդավոր գործ. have a ~ for տաղանդ ունենալ. He's a ~ նա հանճար է. (ոգի) evil ~ չար ոգի.

the Armenian ~ հայ ազգի ոգին:

**genocide** [ˈdʒenəsəɪd] n ցեղասպանություն.

**genome** [ˈdʒiːnəʊm] n գենետիկ ամբողջություն:

**genre** [ˈʒɒnrə] n ոճ, ժանր:

**gentle** [ˈdʒentl] a ազնվազարմ, ազնվատոհմ. հեզ, հեզաբարո. նուրբ, քնքուշ. a ~ look/breeze մեղմ/փափուկ բնավորություն. of ~ birth ազնվական ծագում ունեցող:

**gentlefolk(s)** [ˈdʒentlfəʊk(s)] n ազնվականներ:

**gentleman** [ˈdʒentlmən] n ջենտլմեն, պարոն. ladies and gentlemen տիկնայք և պարոնայք. fine ~ նրբակիրթ մարդ. ~ in waiting սենեկապետ. ~ of fortune ծովահեն. ~ men of long robe *փխբ.* դատավորներ, իրավագետներ. ~ of the cloth *փխբ.* կղերականություն, հոգևորականություն. the old ~ *կտկ.* սատանա:

**gentleman-at-arms** [ˌdʒentlmənətˈɑːmz] n արքունի թիկնապահ:

**gentlemanly** [ˈdʒentlmənli] a քաղաքավարի, բարեկիրթ:

**gentleness** [ˈdʒentlnəs] n մեղմություն, հեզություն:

**gentlewoman** [ˈdʒentl,wʊmən] n տիկին, լեդի, ազնվական կին:

**gently** [ˈdʒentli] adv մեղմորեն, քնքշությամբ. հանդարտ, զուշությամբ:

**gentry** [ˈdʒentri] n մանր ազնվականություն (անտիտղոս):

**genuine** [ˈdʒenjuɪn] a իսկական, անխարդախ. ~ people անկեղծ/մաքուր մարդիկ. ~ pleasure իրական/անկեղծ հաճույք. ~ Sarian Սարյանի բնօրինակը:

**genus** [ˈdʒiːnəs] n *կենս.* սեռ, դաս, տեսակ:

**geographer** [dʒiˈɒgrəfə] n աշխարհագրագետ:

**geographic(al)** [ˌdʒiəˈgræfɪk(ɪ)] a աշխարհագրական:

**geography** [dʒiˈɒgrəfi] n աշխարհագրություն:

**geologist** [dʒiˈɒlədʒɪst] n երկրաբան:

**geology** [dʒiˈɒlədʒi] n երկրաբանություն:

**geometric(al)** [ˌdʒiːəˈmetrɪk(ɪ)] a երկրաչափական:

**geometry** [dʒiˈɒmətri] n երկրաչափություն:

**geopolitical** [ˌdʒi:əʊpɔˈlɪtɪk(l)] a աշխարհա-  
քաղաքական. ~ situation աշխարհաքաղա-  
քական իրավիճակ:

**geranium** [dʒəˈreɪniəm] n խորդենի:

**geriatric** [ˌdʒeriˈætrɪk] a ծերունական. ~ dis-  
order ծերունական հիվանդություն:

**germ** [dʒə:m] n կեմս. սաղմ. *sup.* սերմնա-  
րան, սերմ. in ~ սաղմնային վիճակում. the ~  
of the idea *փ/սք.* գաղափարի սաղմերը:

**german** [ˈdʒə:mən] a հարազատ (քույր, եղ-  
բայր). cousin ~ հորաքրոջ/մորաքրոջ/քե-  
ռու/հորեղբոր տղա, աղջիկ:

**germane** [dʒəˈmeɪn] a տեղին, հարմար,  
պատշաճ. The material is not ~ to our subject  
Այս նյութը մեր գործին չի վերաբերում:

**germinal** [ˈdʒə:miɪnəl] a սաղմնային, թերաճ,  
ընձյուղային:

**germinate** [ˈdʒə:mɪneɪt] v ծլել, ընձյուղ  
արձակել, բողբոջել:

**germination** [ˌdʒə:miˈneɪʃn] n ծլարձակու-  
թյուն, աճում, զարգացում:

**gerrymander** [ˈdʒerɪmændə] 1.n նախընտ-  
րական մեքենայություններ. 2.v նենգափո-  
խել, աղավաղել/խեղաթյուրել փաստերը. ~  
(at) an election ընտրությունների արդյունք-  
ները նենգափոխել:

**gerund** [ˈdʒerənd] n *քեր.* գերունդիում:

**gesticulate** [dʒeˈstɪkjuleɪt] v խոսելիս ձեռ-  
քերով զանազան շարժումներ /ժեստեր  
անել:

**gesticulation** [dʒeˈstɪkjʊˈleɪʃn] n ժեստիկու-  
լյացիա. ժեստերով/ձեռքի շարժումներով  
խոսելը:

**gesture** [ˈdʒestʃə] n ձեռքի շարժում, ժեստ.  
facial ~ դիմաշարժություն, միմիկա. a ~ of re-  
fusal բացասական պատասխան. a friendly ~  
ընկերական վարմունք/ժեստ. fine ~ լավ  
վարմունք. What a nice ~! Ի՞նչ հիանալի  
վարմունք:

**get** [get] v ստանալ, ձեռք բերել. ~ an answer/  
permission/news պատասխան ստանալ.  
թույլտվություն ձեռք բերել. լուր ստանալ. ~  
a prize/reception/support մրցանակ ստանալ.  
ճանաչում/աջակցությունը ձեռք բերել. ~ a  
surprise անակնկալի գալ. The room ~s no sun  
Սենյակն արևոտ չէ. (ճարել, հայթայթել) ~ a  
living ապրուստ ճարել. ~ it cheap էժան գնել.  
(հասնել) We got as far as the lake Մենք լճափ

հասանք. ~ one's own way իր նպատակին  
հասնել. I'll just ~ my coat Միայն վերարկուս  
վերցնեմ. (բռնել) ~ a taxi տաքսի վերցնել. ~  
the thief գողին բռնել. ~ the train գնացքին  
հասնել. ~ by the throat կոկորդից բռնել. ~ a  
bad cold ուժեղ մրսել. (ռադիո, հեռախոս) I  
can't ~ London on my radio Չեմ կարող  
Լոնդոն բռնել. ~ me the director Միացրեք  
տնօրենի հետ. I didn't ~ him Ես նրան  
տեղում չգտա. ~ the wrong number սխալ  
համար հավաքել. (բերել) Go and ~ the doc-  
tor Գնա բժշկի հետևից. Can you ~ me some  
tea Ինձ թեյ բերեք. (տանել) ~ the children to  
school երեխաներին դպրոց տանել. ~ him  
home Տուն տարեք նրան. I've got a headache  
Գլուխս ցավում է. I haven't got any change  
Մոտս մանր չկա. get to պարտավոր. I've got  
to pass the exam Ես պետք է քննություն  
հանձնեմ. (դրդել, համոզել) I'll ~ him to come  
here Ես կհամոզեմ նրան այստեղ գալ. He  
got her sacked Ես նրան աշխատանքից  
հեռացնել տվեց. ~ one's hair cut մազերը  
կտրել տալ. ~ one's feet wet ոտքերը թրջել.  
(հասկանալ, լսել) I've got you Ես ձեզ  
հասկանում եմ. You won't ~ anywhere with  
him Նրա հետ բանի չես հասնի. Things will ~  
better Իրավիճակը կլավանա. (դառնալ) It  
got dark Մթնեց. He got wounded Ես  
վիրավորվեց. ~ old/fat/angry/married ծերա-  
նալ/գիրանալ/ջղայնանալ/ամուսնանալ. G~  
ready! G~ set! Go! *մրգ.* Պատրաստ. Ուշադ-  
րություն. Մեկնարկ. ~ about տարածվել.  
տանից դուրս գալ. if it ~s about եթե իմանան  
~ across անցնել (կամրջով և այլն). (կռվել,  
գժտվել) He doesn't ~ across to his pupils Ես  
իր աշակերտների հետ կոնտակտ չունի. ~  
at հասնել, կապվել. ~ at the truth ճշմարտությանը հասնել. What are you ~ting  
at? *փ/սք.* Ի՞նչ ես ուզում, Քո նպատակը ի՞նչ  
է. ~ away գնալ, հեռանալ. I want to ~ away  
from it all Ուզում եմ այս բոլորին վերջ տալ.  
~ back վերադառնալ, հատուցել. ~ one's own  
back վրեժ լուծել. ռևանշ անել, իրենը հետ  
բերել. ~ by անցնել. Can I ~ by? Կարելի՞ է  
անցնել. My article got by Իմ հոդվածն  
ընդունվեց. ~ down իջնել, իջեցնել. գրի  
առնել. ~ down to work *փ/սք.* աշխատանքի  
անցնել. ~ in մտնել. She got in late Ես ուշ

եկավ. ~ in smb's way *փխք*. որևէ մեկին խան-  
գարել. ~ into դժվարությամբ հագնել,  
մտցնել. ~ a key into a lock բանալին փա-  
կանի մեջ մտցնել. ~ into debt պարտքեր  
անել. ~ off դուրս գալ. փախչել, կաշին  
փրկել. ~ off the train/plane զնացքից/ինք-  
նաթիռից իջնել/դուրս գալ. ~ it of one's chest  
սիրտը դատարկել. The plane was an hour late  
in ~ing off *հնքնաթիռը մի ժամ ուշ թռավ*. ~  
on նստել տրանսպորտ. ~ on the bus/train  
ավտոբուս/զնացք նստել. ~ on well յուլա  
զնավ. ~ on in the world կանքում հաջողակ  
լինել. ~ out դուրս գալ, դուրս հանել. ~ out  
of the habit սովորույթին վերջ տալ. ~ smb out  
of a fix դժվար կացությունից դուրս բերել. ~  
over հաղթահարել. Let's ~ it over *եկեք վերջ  
տանք դրան*. ~ over one's shyness անոթ-  
խածությունը հաղթահարել. ~ under տակը  
մտնել. ~ under way ծով. ուղևորվել. ~ up վեր  
կենալ. ~ up early in the morning առավոտյան  
վաղ վեր կենալ. ~ up from one's seat/chair  
տեղից/աթոռից վեր կենալ. ~ together հա-  
վաք(վ)ել. հանդիպել:

**get-at-able** [get'ætəbl] a մատչելի:

**getaway** [ˈgetəwei] n *խսկ*. փախուստ.  
make one's ~ փախչել, փախուստ տալ:

**get-up** [ˈgetʌp] n *խսկ*. հագուստ, հագնվե-  
լու ոճ:

**geyser** [ˈgi:zə, ˈgaizə] n գեյզեր, ցայտող տաք  
ջուր. ջեռուցիչ:

**ghastly** [ˈgɑ:stli] a սոսկալի, զարհուրելի,  
ահավոր. She looked ~ *Նա զարհուրելի տեսք  
ուներ*:

**gherkin** [ˈgə:kin] n թեթև աղը բռնած մանր  
վարունգ:

**ghost** [gəʊst] n ուրվական, ստվեր. հոգի,  
շունչ. give up the ~ *շունչը փչել, հոգին տալ*.  
raise the ~ *նոգի կանչել*. ~s of the past անցյա-  
լի ստվերները. the ~ of a smile *փխք ժպիտի  
ստվեր/ուվազիծ/նշույլ*. a ~ of a chance *հույ-  
սի նշույլ*:

**ghostly** [ˈgəʊstli] a հոգեղեն, ցնորական,  
խաբուսիկ:

**GI** [ˌdʒi:ˈai] n *ամ*. (*հայ*. government issue-ից)  
զինվոր, բանակային:

**giant** [ˈdʒaɪənt] 1. n *հսկա/վիթխարի մարդ*.  
աժդահա. 2. a *հսկայական*:

**giant('s)-stride** [ˈdʒaɪənt(s)'straɪd] n *մրգ*.  
*հսկայաքայլեր*:

**gibber** [ˈdʒɪbə] n փնթփնթոց, մռնառոց:

**gibberish** [ˈdʒɪbəriʃ] n անհասկանալի, ան-  
կապ խոսք:

**gibe** [dʒaɪb] 1. n *ծաղր, ծաղրանք, հեզմանք*.  
2. v ~ at *ծաղրել*:

**giblets** [ˈdʒɪblɪts] n pl *հավի/սագի փորոտիք*:

**giddiness** [ˈɡɪdɪnəs] n *զլխապտույտ*:

**giddy** [ˈɡɪdi] a *զլխապտույտ պատճառով*.  
feel ~ *զլխապտույտ զգալ*. a ~ height *զլխա-  
պտույտ բարձրություն*. (թեթևամիտ, անկա-  
յուն) a ~ young girl *թեթևամիտ երիտասարդ  
աղջիկ*:

**giddy-go-round** [ˈɡɪdɪɡəʊˈraʊnd] n *խսկ*.  
*կարուսել*:

**gift** [ɡɪft] n *նվեր, ընծա*. *նվիրատվություն*. I  
wouldn't have it as a ~ *Չրի էլ տան՝ չեմ  
վերցնի*. make use of one's ~s *օգտագործել իր  
ունակությունները*. ~s, gift-edged securities  
*բարձր գնահատվող արժեթղթեր*. deed of ~  
*նվիրատվության պայմանագիր*. testameta-  
ry ~ *իրավ*. *նվիրատվություն կտակով*:

**gift** [ɡɪft] v *նվիրել, ընծայել. օժտել, շնորհել*,  
*պարգևել*:

**gifted** [ˈɡɪftɪd] a *օժտված, տաղանդավոր*,  
*շնորհալի*:

**gigantic** [dʒaɪˈɡæntɪk] a *հսկայական, վիթ-  
խարի, ահագին*:

**giggle** [ˈɡɪɡl] n, v *հռհռոց*. *հռհռալ*:

**gigolo** [ˈdʒɪɡələʊ] n *վարձու պարընկեր*:

**gild** [ɡɪld] v *սկեզոծել, զեղեցկացնել, փայլ  
տալ*:

**gilded** [ˈɡɪldɪd] a *սկեզոծ*:

**gilder** [ˈɡɪldə] n *սկեզորող, սկեզոծող*:

**gillyflower** [ˈdʒɪli,flaʊə] n *շահարակ*,  
*մեխակ*:

**gilt-edged** [ˌɡɪltˈedʒd] a *սկեզոծ եզերքով*:

**gimcrack** [ˈdʒɪmkɹæk] n *չնչին բան, խա-  
ղալիք*. *հապճեպ, անփույթ*. *մի կերպ  
արված*:

**gimlet** [ˈɡɪmlət] n *փոքրիկ գայլիկոն, գչիր*:

**gimmick** [ˈɡɪmɪk] n *հնարք, ճարպիկ խաղ*.  
an advertising ~ *գովազդային հնարք*:

**gin** [dʒɪn] n *օղի*:

**ginger** [ˈdʒɪndʒə] n *կոճապղպեղ, իմբիր*. eat  
the ~ *ամենալավը/ամենաընտիրը վերցնել*.

*խսկ*. *գրավչություն, հրապույր*. He wants  
some ~ *Նրա մեջ կյանք չկա*. (*մակամուն*)  
*շեկո, շեկլիկ*. *շիկակարմիր մազեր*. a ~ cat  
*շեկ կատու*:

**ginger-beer** [ˌdʒɪndʒəˈbiə] *n* կոճապղպեղի լիմոնադ/զարեջուր:

**gingerbread** [ˈdʒɪndʒəbrɛd] *n* կոճապղպեղի անուշահաց/քաղցրաբլիթ:

**gingerly** [ˈdʒɪndʒəli] *a, adv* զգուշավոր, շրջահայաց. զգուշորեն, զգուշությամբ:

**ginny** [ˈdʒɪni] *a* *խսկ.* հարբած, խմած, կոնծած:

**gin-palace** [ˈdʒɪn,pælis] *n* *խսկ.* պանդոկ, գինետուն:

**Gipsy** [ˈdʒɪpsi] *n, a* գնչու, գնչուհի, գնչուերեն, գնչուական լեզու. գնչուական:

**giraffe** [dʒəˈrɑːf] *n* ընձուղտ:

**gird** [gɜːd] *v* գոտի կապել, գոտևորել. ~ oneself պատրաստվել:

**girder** [ˈgɜːdər] *n* զերան, ձուլակառույց:

**girdle** [ˈgɜːdl] *n* գոտի. սեղմիրան. shoulder ~ ուսագոտի. be under one's ~ մեկին ենթարկվել:

**girl** [gɜːl] *n* աղջիկ, օրիորդ, երիտասարդ կին. old ~ *փղթ.* սիրելիս, պառավս. my dear ~ սիրելիս, աղջիկս. a lovely ~ սիրունիկ աղջիկ. nasty ~ անտանելի աղջիկ. the ~s *փղթ.* աղջիկները, դուստրերը (նույն ընտանիքում). chase ~s *խսկ.* աղջիկների հետևից վազել. hello ~ *խսկ.* հեռախոսավարուհի:

**girlhood** [ˈgɜːlhʊd] *n* օրիորդություն, օրիորդական տարիներ. in one's ~ մինչև ամուսնանալը:

**girlie** [ˈgɜːli] *n* *փղթ.* աղջնակ, աղջիկ:

**girlish** [ˈgɜːliʃ] *a* աղջկական, աղջկանման:

**home** [həʊm] *a* տնային, տան. ընտանեկան. ~ address բնակարանի հասցեն. ~ cooking տանը պատրաստած կերակուր/ուտելիք. ~ baked cakes տանը թխված քաղցրեղեն. ~ brewed beer տնական գարեջուր. ~ grown vegetables սեփական ձեռքերով աճեցված բանջարեղեն. ~ life/comforts ընտանեկան կյանք/հանգստավետություն. ~ field մրգ. սեփական դաշտ. (ներքին, հայրենական) ~ industry հայրենական արդյունաբերություն. ~ trade/affairs/market/politics ներքին առևտուր/ գործեր/շուկա/քաղաքականություն. one's ~ town հարազատ քաղաքը/ծննդավայրը. H~ office, ներքին գործերի նախարարություն (ՄԲ). H~ secretary ներքին գործերի նախարար. a ~ truth փխբ. դառը

ճշմարտություն. ~ made տնական, տանը պատրաստված:

**home** [həʊm] adv տանը. I'm ~ at last վերջապես տանն եմ. on the way ~ տան ճանապարհին. go/come ~ տուն գնալ/գալ. see smb ~ մեկին տուն ճանապարհել. go/strike ~ նշանին կպչել/խփել. (he's) Nothing to write ~ about *խսկց*. Ոչ մի հետաքրքիր բան իրենից չի ներկայացնում. write ~ (նամակներ) տուն գրել. drive/bring ~ գլուխը մտցնել;

**home-coming** [ˈhəʊmkʌmɪŋ] n վերադարձ տուն, հայրենիք վերադառնալը:

**homecraft** [ˈhəʊmkra:ft] n տնայնագործություն:

**home-keeping** [ˈhəʊm,ki:piŋ] a տնայնաց:

**homeland** [ˈhəʊmlænd] n հայրենիք. հայրենի երկիր:

**homeless** [ˈhəʊmləs] a անտուն, անապաստան:

**homelike** [ˈhəʊmlaɪk] a սովորական տան պես. *փխբ*. հարմարավետ:

**homely** [ˈhəʊmli] a ընտանեկան, հանգստավետ, պարզ. a ~ room հանգստավետ սենյակ. ~ atmosphere ընտանեկան մթնոլորտ. ~ old lady բարի/հաճելի ծեր կին. a ~ girl հասարակ/անբարեսես աղջիկ:

**home-made** [ˌhəʊmˈmeɪd] a տնական, տանը պատրաստած. ~ jam տնական մուրաբա. ~ radio ինքնարար ռադիո ընդունիչ. ~ cars հայրենական/տեղական մեքենաներ:

**home-sick** [ˈhəʊmsɪk] a հայրենաբաղձ, հայրենակարոտ. be ~ հայրենիքի կարոտ զգալ:

**home-stead** [ˈhəʊmsted] n կալվածատուն, դաստակերտ, ագարակ:

**homeward(s)** [ˈhəʊmwəd(s)] adv, a դեպի տուն. դեպի տուն տանող:

**homework** [ˈhəʊmwɜ:k] n (ուսումնական) տնային աշխատանք. do ~ for the lecture *փխբ*. դասախոսությանը նախապատրաստվել:

**homicidal** [ˌhɒmiˈsaɪdɪl] a մահացու. մարդասպանի. a ~ maniac մոլագար մարդասպան:

**homicide** [ˈhɒmisaɪd] n մարդասպանություն, սպանություն. felonious ~ կանխամտածված սպանություն:

**homily** [ˈhɒməli] n քարոզ, խրատ:

**homogeneous** [ˌhəʊməʊˈdʒi:niəs] a միա-

տարր, համասեռ, նույնասեռ:

**homonym** [ˈhɒmənim] n *լեզվ*. համանուն բառ:

**homosexual** [ˌhəʊməʊˈseksjuəl] a համասեռական. ~ conduct համասեռական վարքագիծ:

**hone** [həʊn] n սրաքար, սրոց:

**honest** [ˈɒnɪst] a ազնիվ. ~ person/dealing/living ազնիվ մարդ/արարք/վաստակ. absolutely/completely ~ բյուրեղային ազնվություն. be ~ շիտակ/անկեղծ ասած. ~ opinion անկեղծ/շիտակ կարծիք. be ~ with oneself ինքն իրեն չխաբել. ~ to God *խսկց*. ազնիվ խոսք:

**honesty** [ˈɒnəstɪ] n ազնվություն, անկեղծություն:

**honey** [ˈhʌni] n մեղր. քաղցր բան. (անուշիկս, սիրելիս) Don't worry, ~! Մի' անհանգստանա, սիրելիս:

**honey-bee** [ˈhʌnibi:] n բանող/բանվոր մեղու:

**honeycomb** [ˈhʌnikəʊm] n մեղրախորիսխ, բջիջ. *տեխ*. փոսիկ, ծակծկվածք:

**honey-dew** [ˈhʌnidju:] n նեկտար. մեղրահամ:

**honeyed** [ˈhʌnid] a մեղրահամ, մեղրածոր:

**honeymoon** [ˈhʌnimu:n] 1. n մեղրամիս. 2. v մեղրամիս անցկացնել:

**honey-mouthed** [ˈhʌnimaʊðd] a մեղրախոս, մեղրածոր:

**honeysuckle** [ˈhʌnisʌkl] n *բսբ*. ցախկենաս:

**honk** [hɒŋk] 1. n սագերի կռնչոց. the ~ of wild geese վայրի սագերի կռնչյուն. the ~ of a motor horn ավտոմեքենայի շչակի ծայնը: 2. v կռնչալ. ազդանշան տալ:

**honorarium** [ˌɒnəˈreəriəm] n հոնորար:

**honorary** [ˈɒnrəri] a պատվավոր. a ~ member պատվավոր անդամ. ~ guest պատվավոր հյուր:

**honorific** [ˌɒnəˈrɪfɪk] a հարգալից, հարգանք արտահայտող:

**honour** [ˈɒnə] n պատիվ. հարգանք. a point of ~ պատվի հարց. a matter/a debt of ~ պատվի պարտք/պարտականություն. in ~ of ի պատիվ. a man of ~ պատվի մարդ. the seat of ~ պատվավոր տեղ. roll of ~ պատվավոր ցուցակ. It does you ~ Դա ձեզ պատիվ է բերում. Your H~ Մեծարգո դատավոր. give/pay ~ հարգանք ցույց տալ/մատուցել. do the ~

պատիվ բերել. hold it an ~ պատիվ համարել. ~ among thieves գողական պատիվ. (up) on my ~, word of ~ ազնիվ խոսք. ~s պատիվներ. military ~s զինվորական պատիվներ. do the ~s (of the house) տանտիրոջ պարտականությունները կատարել. հյուր ընդունել/զբաղեցնել. (կոչում, տիտղոս) your H~ ձերդ արժանապատվություն be an ~ to one's country/family պատիվ բերել իր երկրին/ընտանիքին:

**honour** ['ɒnə] v հարգել, պատիվ տալ. մեծարել. արժանացնել. ~ one's parents/smb's memory հարգել ծնողներին/մեկի հիշատակը. be ~ed շոյված լինել. (կատարել) ~ one's commitments/promise պարտականությունները/խոստումը կատարել. ~ a bill/cheque հաշիվը/չեկը վճարել/փակել. ~ed պատվավոր, պատվելի:

**honourable** ['ɒnərəbəl] a պատվավոր, պատվարժան, մեծարգո. an ~ peace պատվավոր խաղաղություն. H~ Court արժանապատիվ դատարան. ~ intentions ազնիվ մտադրություններ my ~ colleague իմ հարգարժան կոլեգա/գործընկեր:

**hooch** [hu:tʃ] n *ամ. խսկց.* ալկոհոլ. bring the ~ խմիչքը բերել:

**hood** [hud] n կնճուղ, վեղար, գլխարկ. ծածկույթ, ծածկոց, կափարիչ. կառքի/ավտոմեքենայի ծածկ:

**hoodie** ['hudi] n գորշ ագռավ:

**hoodlum** ['hu:dləm] n *խսկց.* խուլիգան:

**hoodwink** ['hʊdwiŋk] v աչքը կապել, աչքին թոզ փչել. խաբել:

**hoof** [hu:f] n սմբակ. cloven ~ երկճեղքված սմբակ:

**hoofed** [hu:ft] a սմբակավոր:

**hook** [hʊk] n կեռ, ճարմանդ. *գղտն.* մանգաղ. *ծկն.* կարթ. hang the coat on a ~ վերարկուն կեռից կախել. pruning ~ էտելու մկրատ. by ~ or crook այսպես թե այնպես, ինչ գնով էլ լինի. off the ~ անտրամադիր, զայրացած. on one's own ~ ինքնուրույն, իր պատասխանատվությամբ. get/let smb off the ~ մեկին դժվար կացությունից հանել:

**hook** [hʊk] v բռնել (կեռով, կարթով). կախել (կեռից, կարթից). կոճկ(վ)ել (ճարմանդ). ~ a fish ձուկ բռնել. ~ up the dress հագուստը կոճկել. ~ed on drugs/TV *փխբ.* թմրամոլ. հեռուստացույցին կպած. ~ a husband *փխբ.*,

*խսկց.* ամուսին ճանկել/ձեռք գցել:

**hooked** [hʊkt] a կեռ, կեռավոր. ծուռ. ճարմանդավոր. *ամ.* հելուճով գործած. a ~ nose կեռ/ծուռ քիթ. արծվաքիթ:

**hooker** ['hʊkə] n ձկնորսանավ:

**hook-up** ['hʊkʌp] n կցում, միացում:

**hooky** ['hʊki] n *ամ. խսկց.* play ~ դասերը բաց թողնել:

**hooligan** ['hu:lɪgən] n խուլիգան:

**hoop** [hu:p] n օղակապ, օղագոտի, շրջանակ. fasten a barrel with a ~ տակառին օղակապ դնել:

**hoop** [hu:p] n ճիչ, աղաղակ, հազ:

**hooper** ['hu:pə] n տակառագործ:

**hooping-cough** ['hu:pɪŋkʌf] n *բժշկ.* կապույտ հազ:

**hoopoe** ['hu:pʊ:] n հոպոպ:

**hoot** [hu:t] n բուի կռինչ. շչակ, ~s of laughter ծիծաղի պոթկում. I don't give a ~/two ~s for Ոչ մի նշանակություն չունի. *Թքած ունեմ:*

**hoot** [hu:t] v կռնչալ. շչալ. գոռալ. ծաղրուծանակի ենթարկել. ~ at the crossing/pedestrians խաչմերուկում/հետիոտներին ազդանշան տալ:

**hooter** ['hu:tə] n շչակ:

**hooves** [hu:vz] n pl կճղակներ, սմբակներ, զուգասմբակ:

**hop** I [hɒp] n գայլուկ:

**hop** II [hɒp] n ոստյուն, ցատկ. ~ skip and jump *մրգ.* եռացատկ. keep smb on the ~ հանգիստ չտալ. a short ~ *ավ., խսկց.* կարճատև թռիչք. fly with (2-3) ~s թռչել երկու-երեք կանգառ կատարելով:

**hop** [hɒp] v ցատկել, ոստոստել. ~ off/on to the bus ավտոբուսից դուրս/ներս ցատկել. ~ out of bed մահճակալից դուրս ցատկել. H~ it! *խսկց.* Դուրս կորիր:

**hope** [həʊp] n հույս. *great/faint/forlorn/ vague/ vain* ~ մեծ/թույլ/աղոտ/զուր հույսեր, have little /high ~s քիչ/մեծ հույսեր ունենալ. have not the faintest ~ հույսի չնչին նշույլ անգամ չունենալ. be past ~ անհույս լինել. resign all ~ հույսը կտրել. pin/put one's ~s on մեկի վրա հույս դնել/ապավինել. in the ~ of հուսալով. have good ~s հույսեր ունենալ. raise ~s հույս արթնացնել. What a ~ ! *ժղր.* Ստքովդ էլ չանցնի:

**hope** [həʊp] v հուսալ, հույս ունենալ/տածել. I ~ so *Հուսով եմ, որ այդպես է. I ~ not Հուսով*

են, որ այդպես չէ. ~ against ~ հրաշքի վրա հույս դնել. հույսը չկորցնել. հակառակ ամենին. ~ for the best հուսալ որ ամեն ինչ շատ լավ կլինի. ~ for better from smn մեկից ավելին սպասել:

**hopeful** [ˈhəʊpfl] n հուսալի, հույս ունեցող. լավատեսական. be/feel ~ that/of հուսալ, որ. a ~ young man հույսեր ներշնչող/խոստում-նալից երիտասարդ:

**hopefulness** [ˈhəʊpfnəs] n լավատեսություն, հուսավորություն, հույս:

**hopeless** [ˈhəʊpləs] a անհույս, հուսահատ, հույսը կորցրած. The case is ~ Անհուսալի դեպք է. give up the attempt as ~ հրաժարվել փորձելուց որպես մի անհույս բան. be ~ of remembering վատ հիշողություն ունենալ:

**hopelessness** [ˈhəʊpləsənəs] n անհուսություն, հուսահատություն:

**hop-o'-my-thumb** [ˌhɒpəmi'θʌm] n թզուկ, ճատիկ-պստիկ, մատնաչափիկ:

**hopscotch** [ˈhɒpskɒtʃ] n մանկական խաղ (կլաս):

**hoptoad** [ˈhɒptəʊd] n դողոշ:

**horde** [hɔ:d] 1. n հորդա, խումբ, հրոսակա-խումբ. 2. v ամբոխվել, բազմությամբ հավաքվել:

**horizon** [hə'raɪzn] n հորիզոն:

**horizontal** [ˌhɒrɪ'zɒntl] n հորիզոնական.

**hormone** [ˈhɔ:məʊn] n ֆիզի. հորմոն:

**horn** [hɔ:n] 1. n եղջյուր, կոտոշ, պոզ. shoe ~ կոշիկ հագնելու թիակ. carved from ~ եղջյուրից փորագրված/կտրված. draw in one's ~s նահանջել, ետ կանգնել, հրաժարվել. be on the ~s of a dilemma երկընտրանքի առաջ հայտնվել. (գործիք) փող, եղջրափոխակ. որսորդական փող. wind a ~ փող նվագել. French ~ երժշ. գալարափող, վալտորն. English ~ երժշ. փողավոր նվագարան, շեփոր. play the ~ վալտորն/շեփոր նվագել. draw/pull in one's ~s կուչ գալ, վախենալ. պոզերը ներս քաշել. ~ spectacles (մաև horn-rimmed) եղջրաշրջանակ ակնոց. ~ of plenty առատության եղջյուր. show/put out the ~s պոզերը ցույց տալ. raise the ~s գոռոզանալ, մեծամտել. 2. a եղջյուրի, եղջյուրե. ~ spectacles (մաև horn-rimmed) եղջրաշրջանակ ակնոց. ~ of plenty առատության եղջյուր. 3. v պոզահարել. ~ in միջամտել, խառնվել:

**horned** [hɔ:nd] a եղջյուրավոր:

**hornet** [ˈhɔ:nɪt] n կենդ. կրետ, իշամեղու, ձիաբռն. stir up ~'s nest կրետի բունը փորփրել:

**hornpipe** [ˈhɔ:npaɪp] n եղջերափող:

**horny** [ˈhɔ:ni] a եղջյուրավոր, եղջրային. կոշտ, կոշտացած:

**horny-handed** [ˈhɔ:ni,hændɪd] a կոշտուկավոր ձեռքեր ունեցող:

**horoscope** [ˈhɒrəskəʊp] n բախտացույց. cast a ~ բախտացույց կազմել:

**horrible** [ˈhɒrəbəl] a սոսկալի, սարսափելի, զարհուրելի. a ~ accident սոսկալի վթար/պատահար. ~ threats սարսափելի սպառնալիք. a perfectly ~ journey խսկ. ահավոր ճամփորդություն:

**horrid** [ˈhɒrɪd] a սոսկալի, ահավոր. խսկ. զգվելի, նողկալի. ~ weather խսկ. զգվելի/ահավոր եղանակ. What a ~ idea! Ի՞նչ ահավոր/վայրագ միտք:

**horrific** [hɒ'rifɪk] a խսկ. սարսափելի, ահարկու, ահեղ:

**horrid/y** [ˈhɒrɪfaɪ] v ահաբեկել, սարսափեցնել. զարհուրեցնել. be ~ ied by ցնցվել (ինչ-որ բանից). I was ~ ied ես սարսափեցի:

**horrifying** [ˈhɒrɪfaɪɪŋ] a ցնցող, ահաբեկիչ, զարհուրելի:

**horror** [ˈhɒrə] n ահ, սարսափ, սոսկում. have ~ of շատ վախենալ, սարսափել. cause ~ սարսափ պատճառել. be filled with ~ սարսափ զգալ/ապրել. a perfect ~ խսկ. Աստծո պատիժ. a ~ story/film ֆիլմ սարսափ. սարսափ պատմություն:

**horror-stricken** [ˈhɒrə-strɪkən], **horror-struck** [ˈhɒrə-,strʌk] a սարսափահար:

**hors d'oeuvres** [ˌɔ:'də:v] n թեթև ուտելիքներ, նախուտեստ, ակրատ:

**horse** [hɔ:s] n ձի, երիվար, հովատակ. saddle/race/draught ~ հեծկան, հեծնելու ձի. արշավածի. լծկան ձի. riding ~ հեծկան ձի. get on a ~ ձի նստել. get off the ~ ձիուց իջնել. ride a ~ ձիով գնալ, ձի քշել. fall of a ~ ձիուց ընկնել. clothes ~ փխբ. վրացքը չորացնելու շրջանակ. white ~s ծով. փրփրալիքներ. մրզ. ձիագերան, նժույգ. ~ and foot ոզմ. հեծելազոր և հետևակ. փխբ. work like a ~ ձիու/էջի պես աշխատել. eat like a ~ գայլի ախորժակ ունենալ. straight from the ~'s mouth սկզբնաղբյուրից. Don't look a gift ~ in the mouth Եվիրած ձիու ատամներին չեն

նայի. get on one's high ~ մեծամտել, ամբարտավանալ. dark ~ մրգ. շանսեր չունեցող (քիչ հայտնի) ձի:  
**horseback** ['hɔ:sbæk] 1. n ձիու մեջքը. on ~ հեծյալ, ձի հեծած. 2. adv հեծած, ձի նստած:  
**horse-box** ['hɔ:sbɒks] n ձիերի վագոն:  
**horse-breeding** ['hɔ:s,bri:diŋ] n ձիաբուծություն:  
**horse-chestnut** [,hɔ:s'tʃestnʌt] n վայրի շագանակ:  
**horse-cloth** ['hɔ:sklɒθ] n (*նաև* horsecover) ձիու ծածկոց, սթար:  
**horse collar** ['hɔ:skɒlə] n խամուք. անոտ:  
**horse-comb** ['hɔ:skəʊm] n ձիու քերոց:  
**horse-coper, horse-dealer** ['hɔ:s,kəʊpə, 'hɔ:s,di:lə] n ձիավաճառ:  
**horse-cover** ['hɔ:s,kʌvə] n ձիու ծածկոց. տե՛ս *նաև* horse-cloth:  
**horse-drawn** ['hɔ:sdrɔ:n] a ձիաքարշային ձիու ուժով քաշվող:  
**horse-flesh** ['hɔ:sfleʃ] n ձիու միս (ուտելիք):  
**horse-fly** ['hɔ:sflaɪ] n պիծակ, ձիաճանճ:  
**horse-hair** ['hɔ:sheə] n ձիու մազ. a ~ mattress ձիու մազե ներքնակ:  
**horsehide** ['hɔ:s,haɪd] n ձիու կաշի:  
**horseless** ['hɔ:sles] a ձի չունեցող, անձի, ձիազուրկ:  
**horseman** ['hɔ:smən] n ձիավոր, հեծյալ:  
**horse-marines** ['hɔ:smə,ri:nz] n pl *խսկց.* դատարկ/անմիտ բան:  
**horse-play** ['hɔ:spleɪ] n աղմկալի/կոպիտ խաղ:  
**horse-power** ['hɔ:spauə] n (*կրճ.* h. p. ). *տեխ.* ձիու ուժ. a 40 h. p. engine 40 ձիաուժանոց շարժիչ:  
**horse-race, horse racing** ['hɔ:sreis, 'hɔ:sreɪsɪŋ] n ձիարշավ:  
**horse-radish** ['hɔ:srædɪʃ] n ծովաբողկ:  
**horse-shoe** ['hɔ:sʃu:] n, a պայտ, պայտանման:  
**horse-shoer** ['hɔ:sʃuə] n *սմ.* պայտագործ:  
**horse-whip** ['hɔ:swɪp] n, v մտրակ, մտրակել:  
**horticulture** ['hɔ:tɪkʌltʃə] n այգեգործություն, պարտեզագործություն:  
**hose** [həʊz] n, v փողրակ, հրշեջ փողրակ. *հվք.* գուլպաներ, գուլպեղեն. փողրակով ջրել:

**hosiery** ['həʊziəri] n գուլպեղեն, տրիկոտաժեղեն. ~ department գուլպեղենի բաժին)  
**hospice** ['hɒspɪs] n հյուրատուն, վանատուն. պանդխտանոց, աղքատանոց:  
**hospitable** [hɒ'spɪtəbl̩] a հյուրասեր, հյուրընկալ. a ~ house/family/atmosphere հյուրընկալ տուն/ընտանիք/մթնոլորտ:  
**hospital** ['hɒspɪtl̩] n հիվանդանոց. հոսպիտալ. field ~ դաշտային հոսպիտալ. maternity/mental ~ ծննդատուն. հոգեբուժարան. walk the ~ s բժշկության ուսանող լինել. take to ~, put in ~ հիվանդանոցում տեղավորել/պառկեցնել:  
**hospital** ['hɒspɪtl̩] a հիվանդանոցային, առողջապահական. ~ nurse բուժքույր, հիվանդանոցային քույր. ~ staff/orderly/ ward/treatment հիվանդանոցի անձնակազմ/ծառայող, աշխատող/պալատ. հիվանդանոցային/ստացիոնար բուժում:  
**hospitality** [ˌhɒspɪ'tæləti] n հյուրընկալություն, հյուրասիրություն:  
**hospitalize** ['hɒspɪtlaɪz] v հիվանդանոց պառկեցնել, հոսպիտալացնել:  
**host I** [həʊst] n բազմություն, ամբոխ. have a ~ of friends *խսկց.* անթիվ/անհաշիվ ընկերներ ունենալ:  
**host II** [həʊst] n տանտեր, հյուրընկալ. act as ~ տանտիրոջ դեր կատարել. ~ country հյուրընկալ երկիր:  
**hostage** ['hɒstɪdʒ] n պատանդ. exchange ~s պատանդներ փոխանակել:  
**hostel** ['hɒstl̩] n հանրակացարան:  
**hostess** ['həʊstɪs] n տանտիրուհի, հուրանոցի տիրուհի:  
**hostile** ['hɒstəl] a թշնամական, թշնամու. the ~ camp թշնամական ճամբար. (անբարյաջակամ, չարակամ) a ~ act/look/tone անբարյաջակամ արարք, թշնամական հայացք, չարակամ տոն. a ~ crowd թշնամաբար տրամադրված ամբոխ:  
**hostilit/y** [hɒ'stɪləti] n թշնամություն, թշնամանք. show ~ towards թշնամանք ցուցաբերել (մեկի նկատմամբ) feel ~ թշնամանք տածել. ~ies պատերազմական գործողություններ. at the outbreak of ~ies պատերազմի սկզբում. open ~ies պատերազմ սկսել. suspend ~ies դադարեցնել պատերազմական գործողությունները:  
**hot** [hɒt] a տաք, թեժ, շոգ, տոթ. be/feel ~

շոգել. ~ tea/food տաք թեյ/ուտելիք. a ~ day շոգ օր. ~ weather/climate շոգ եղանակ/կլիմա. (տաքացած, հուզված, գրգռված) ~ argument տաքացած վեճ. have ~ temper տաքարյուն լինել. get ~ գայրանալ. (կծու) ~ pepper կծու պղպեղ. (թարմ) ~ news թարմ լուրեր. a ~ number *խսկց.* սեքս ռումբ:

**hot** [hɒt] adv ջերմորեն, տաք-տաք, give it smn ~ and strong գլխին շան լափ թափել. blow ~ and cold տատանվել, մեկ կողմ, մեկ դեմ լինել:

**hotbed** [ˈhɒtbed] n ջերմոց. *փխբ.* օջախ, բույն. a ~ of vice արատի օջախ:

**hot-blooded** [ˌhɒtˈblʌdɪd] a տաքարյուն, կրակոտ, կրքոտ:

**hot-brained** [ˈhɒtˈbreɪnd] a (*մահ hot-headed*) տաքգլուխ, դյուրաբորբոք:

**hotchpotch** [ˈhɒtʃpɒtʃ] n մսով և բանջարեղենով կերակուր. աջաբսանդալ. His work is just a ~ Նրա աշխատանքը պարզապես հավաքածու է:

**hot dog** [ˈhɒtdɒg] n տաք նրբերշիկով բուլկի:

**hotel** [ˌhəʊˈtel] n հյուրանոց. put up/stay at a ~ հյուրանոցում իջևանել:

**hothead** [ˈhɒthead] n տաք գլուխ (մարդ):

**hot-headed** [ˈhɒtˈhedɪd] a տաք, տաք-գլուխ, դյուրաբորբոք:

**hothouse** [ˈhɒthaʊs] n ջերմոց. a ~ plant ջերմոցային բույս (*մահ փխբ.*):

**hotly** [ˈhɒtli] adv կրակոտ, կրքոտ. argue ~ կրքոտ վիճել. ~ deny կտրականապես մերժել:

**hot plate** [ˈhɒtpleɪt] n էլեկտրական սալօջախ:

**hot-pot** [ˈhɒtpɒt] n շոգեխաշած միս կարտոֆիլով:

**hotspur** [ˈhɒtspɜː] n տաքարյուն/անզուսպ մարդ:

**hot water bottle** [ˌhɒtˈwɑːtəbɒtl] n ջերմակ (գրելկա)

**hound** [haʊnd] n որսկան շուն, բարակ. ride to ~s ծիով և շներով որս անել:

**hound** [haʊnd] v շներով որս անել. *փխբ.* մեկին հալածել:

**hour** [ˈaʊə] n ժամ. a quarter of an ~ քառորդ ժամ. half an ~ կես ժամ. an ~ and a half մեկ ու կես ժամ. the rush ~ երթևեկության լարված ժամեր, լարվածամ. business/office ~s

աշխատանքային ժամեր. consulting ~s ընդունելության ժամեր. after closing ~s փակվելուց հետո. seize the ~ պահը բաց չթողնել. ~s of duty ընդունելության/աշխատանքի/ծառայության ժամեր. the question of the ~ հրատապ հարց. in a good/evil ~ բարի/չարի ժամին. keep early/late ~s շուտ/ուշ վեր կենալ./պառկել քնելու: the small ~s կեսգիշերից մինչև լուսաբաց ընկած ժամերը. *խսկց.* գիշերվա վաղ ժամերը dead ~s գիշերվա խուլ ժամերը. 70 miles an ~ ժամում 70 մղոն. work long ~ s երկար աշխատել. a three ~s walk/drive երեք ժամվա ոտքով/մեքենայով ճանապարհ. at all ~s օրվա քսանչորս ժամը. It takes me/him 2-3 ~s ինձնից/Նրանից երկու-երեք ժամ է խլում. at this ~ այս ժամին. within the ~ մեկ ժամի սահմաններում:

**hour-circle** [ˌaʊəˈsɜːkl] n միջօրեական, միջօրեագիծ:

**hour-glass** [ˈaʊəglɑːs] n ավազի ժամացույց:

**hour-hand** [ˈaʊəhænd] n ժամացույցի փոքր/ ժամը նշող սլաքը:

**hourly** [ˈaʊəli] 1. a ամենժամյա, մի ժամ տևող. an ~ bus (service) ժամը մեկ (եկող) ավտոբուս. the ~ rate of pay ժամավճար 2. adv ամեն ժամ, անընդհատ, շարունակ, live in ~ dread շարունակ/անընդհատ վախի մեջ ապրել:

**house** [haʊs] 1. n տուն, շենք, բնակարան. դաստակերտ, կալվածատուն. a detached ~ առանձնատուն. duplex ~ երկու բնակարանից բաղկացած շինություն. terraced ~ սանդղավանդի վրա գտնվող տուն. weekend ~ ամառանոցային տնակ. stone/brick/wooden ~ քարե/աղյուսե/ փայտե տուն, շինություն. dwelling ~ բնակելի տուն. apartment ~ բազմաբնակարան տուն/ շենք. country ~ ամառանոց. (ընտանիք, տնտեսություն) noisy ~ աղմկոտ ընտանիք. You'll wake the whole ~ Բոլորին կարթնացնես. keep ~ տնտեսությամբ զբաղվել. keep to the ~ տանից դուրս չգալ. move ~ տեղափոխվել. set up a ~ բնակություն հաստատել. keep open ~ հյուրընկալ տուն լինել. (ֆիրմա, հիմնարկ) public ~ պանդոկ. trading/business/wholesale/publishing/fashion ~ առևտրի պալատ. մեծածախ առևտրի տուն, հրատարակ-

չություն, նորածնության սրահ. opera ~ օպերա. the House of Commons, Lower House Համայնքների պալատ. the House of Lords, Upper House Լորդերի պալատ. the House of Representatives Ներկայացուցիչների պալատ. the House of Romanovs Ռոմանովների դինաստիա. *բատր*. հանդիսատեսներ a poor/full ~ կիսադատարկ/լեփ-լեցուն դահլիճ. Full House Բոլոր տոմսերը վաճառված են. bring down the ~ բուռն ծափահարություններ առաջացնել. last ~ (կինո) վերջին սեանս. The round of drinks is on the ~ խմիչքը տիրոջ հաշվին է. **2.** a տնային. ~ slippers տնային կոշիկներ, հողաթափեր. a ~ plant տնային բույս. ~ arrest տնային բանտարկություն:

**house** [haʊz] v բնակարանով ապահովել, օթևան տալ., տեղավորել. ~ homeless families անտուն ընտանիքներին կացարան տալ. The block can ~ ten families Մասնաշենքը կարող է տասն ընտանիք ապահովել. The exhibition is ~d in the school Ցուցահանդեսը տեղավորված է դպրոցում. They ~d the car in the shade Մեքենան ծածկի տակ դրեցին:

**house boat** [ˈhaʊsbəʊt] n (լողացող) նավակ տուն:

**housebreaker** [ˈhaʊsbreɪkə] n կոտրանք կատարող գող:

**housebraking** [ˈhaʊs,breɪkɪŋ] n տնային գողություն կոտրանքով:

**houseful** [ˈhaʊsful] **1.** n լեփ-լեցուն տուն. **2.** a մի լեփ-լեցուն (տուն):

**household** [ˈhaʊshəʊld] n, a ընտանիք, տան անդամներ, տնեցիք. տնային տնտեսություն. տան, տնային, ընտանեկան. ~ chores տնային հոգսեր. ~ expenses ընտանեկան ծախսեր. ~ goods տնտեսական ապրանքներ. family ~ ընտանեկան տնային տնտեսություն. the royal ~ թագավորական պալատ, արքունիք. H, Cavalry (US) Գվարդիական հեծելազոր:

**householder** [ˈhaʊshəʊldə] n տանտեր (սեփականատեր). ընտանիքի գլուխ/գլխավոր:

**housekeeper** [ˈhaʊski:pə] n տնտեսուհի, տան կառավարչուհի (հյուրանոցում, հիվանդանոցում):

**housekeeping** [ˈhaʊs,ki:pɪŋ] n տնային

տնտեսություն, տնավարություն. the art of ~ տնավարություն. do the ~ տնային տնտեսությունը վարել. ~ money տնային տնտեսության համար նախատեսված դրամ. *հմկրգ*. ծառայողական/օժանդակ զործողություններ. ~ information ծառայողական ինֆորմացիա. ~ overhead համակարգային ծախսեր. ~ routine ծառայողական ծրագիր:

**houseless** [ˈhaʊsləs] a անտուն, անկացարան:

**housemaid** [ˈhaʊsmɛɪd] n սպասուհի:

**housemaster** [ˈhaʊsmɑ:stə] n պանսիոնի կառավարիչ:

**housemates** [ˈhaʊsmets] n pl տնակիցներ, նույն շենքի բնակիչներ:

**house painter** [ˈhaʊspeɪntə] n ներկարար:

**house party** [ˈhaʊspɑ:ti] n երեկույթ (*նաև* հյուրերը) տանը:

**house-physician** [ˈhaʊsfi,zɪʃn], **house-surgeon** [ˈhaʊs,sə:dʒən] n հիվանդանոցում ապրող բժիշկ/վիրաբույժ:

**house-top** [ˈhaʊstɒp] n ծածկ, տանիք:

**housetrained** [ˈhaʊstreɪnd] a տանը վարժեցված ~ dog տանն ապրող շուն. ~ husband *կտկ*. տնային տնտեսությունը վարելու վարժեցված ամուսին:

**house-warming** [ˈhaʊs,wɔ:miŋ] n (*նաև* ~ party) բնակարանամուտի խնջույթ. give a ~ (party) բնակարանամուտի խնջույթ կազմակերպել:

**house-wife** [ˈhaʊswaɪf] n տանտիկին, տնային տնտեսուհի.

**housework** [ˈhaʊswɜ:k] n տան աշխատանք, տնտեսություն:

**housing** [ˈhaʊzɪŋ] n բնակարանային շինարարություն/ֆոնդ. բնակարանով ապահովելը: ~ conditions բնակարանային պայմաններ. ~ shortage բնակարանների պակասություն. ~ estate բնակելի թաղամաս:

**hovel** [ˈhɒvl] n հյուղակ, ծածկ:

**hover** [ˈhɒvə] v սավառնել, ճախրել. *փխք*. շուրջը պտտվել, դեսուդեն վազել/ընկնել. The secretaries ~ed round the president Քարտուղարները վազվզում էին նախագահի շուրջը:

**hovercraft** [ˈhɒvəkra:ft] n փոխադրամիջոց օդային բարձի վրա:

**how** [haʊ] adv ինչպե՞ս, ի՞նչ ձևով. H~ did it happen? Այդ ինչպե՞ս պատահեց. How so?



հնչյա՞ն է՞ս թե. I don't know ~ Չգիտեմ ինչպե՞ս.  
 H~ long? Ինչքա՞ն երկար, Որքա՞ն H~ far?  
 Ի՞նչ հեռավորության վրա. H~ about walking?  
 Չգնա՞նք զբոսանքի. H~ many/much? Ինչ-  
 քա՞ն, Որքա՞ն. ~ old are you? Քանի՞ տարե-  
 կան եք. (վիճակ) ~ goes it? Ինչպե՞ս եք. H~ are  
 things? Ինչպե՞ս եք H~ do you feel? Ինչպե՞ս  
 եք ձեզ զգում. H~ should I know? Ի՞նչ իմա-  
 նամ. (բացականչական) H~ stupid! Ի՞նչ  
 հիմարություն. H~ like him! Իրեն շատ նման  
 է. H~ well you look Ինչ լավ տեսք ունեք:

**however** [hau'evə] 1. adv ինչքան էլ/որքան  
 էլ որ. ~ small որքան էլ փոքր/քիչ. ~ much I  
 tried որքան էլ որ ես փորձեցի. 2. conj սա-  
 կայն, այնուամենայնիվ. ~ it's all the same to  
 me Այնուամենայնիվ ինձ համար միևնույն է:

**howl** [haul] n ոռնոց, ճիչ, լաց. ~s of rage  
 կատաղության ճիչեր. The child let out a ~  
 երեխան սկսեց ճչալ/ղժժալ.:

**howl** [haul] v ոռնալ, կաղկանծել. ճչալ,  
 բարձրաձայն լալ/ողբալ. The storm ~ ed Փո-  
 քորիկը ոռնում էր. ~ down խեղդել, լռեցնել.  
 ~ with pain/laughter ցավից ոռնալ, ծիծաղից  
 թուլանալ. The speaker/actor was ~ down Յոն-  
 տորին գոռգոռոցով լռեցրին. Դերասանին  
 սուլելով լռեցրին:

**howler** ['haulə] n հիմար/անիմաստ/կոպիտ  
 սխալ. come a ~ *խսկց*. փորձանքի մեջ ընկ-  
 նել:

**howling** ['hauling] a ոռնացող, մռայլ. վհատ.  
*խսկց*. սոսկալի, աղաղակող. a ~ bore/success  
 սոսկալի տաղտուկ. ահավոր հաջողու-  
 թյուն:

**hub** [hʌb] n սռնակալ. *փխբ*. կենտրոն/  
 ուշադրություն, հետաքրքրություն և այլն.  
 They think their village is the ~ of universe  
 Նրանք կարծում են՝ իրենց գյուղը  
 տիեզերքի կենտրոնն է:

**hubbub** ['hʌbʌb] n գոռում-գոչում, աղա-  
 ղակ, ժխոր:

**hubby** ['hʌbi] n *խսկց*. ամուսնյակ:

**huckleberry** ['hʌklɪbəri] n հավամրգի. red  
 ~ հապալաս:

**huddle** ['hʌdl] n կույտ, շեղք. ամբոխ, խառ-  
 նիխուռն բազմություն:

**huddle** ['hʌdl] v խռնվել, խմբվել. The child-  
 ren ~d together under the trees երեխաները  
 խմբվեցին ծառերի շուրջը. (կծկվել, կուչ  
 գալ) She ~d on the sofa Նա կուչ էր եկել  
 բազմոցի վրա:

**hue** [hju:] n գույն, երանգ:

**hue and cry** [ˌhju:ən'kraɪ] n գոռում-գոչում,  
 աղմուկ-աղաղակ:

**huff** [hʌf] 1. n գայրույթի պոռթկում, գայ-  
 րույթ. get into ~ ջղայնանալ, բարկանալ. be  
 in a ~ վիրավորվել. 2. v բարկացնել, գայ-  
 րացնել:

**huffy** ['hʌfi] a նեղացած, վիրավորված. նե-  
 ղացկոտ, դյուրագրգիռ. Don't be ~ Մի՛ նե-  
 ղանա:

**hug** [hʌg] n գրկում, փարում, սեղմում. give a  
 ~ գրկել, սեղմել.

**hug** [hʌg] v գրկել, սեղմել, ամուր բռնել. մոտ  
 լինել. They ~ged each other Նրանք գրկա-  
 խառնվեցին. ~ oneself on իրենից գոհ լինել:

**huge** [hju:dʒ] a վիթխարի, հսկայական, ա-  
 հագին. ~ success/wave/sum/quantity ահագին  
 հաջողություն, վիթխարի ալիք, հսկայական  
 գումար/քանակություն:

**hugely** ['hju:dʒli] adv շատ, սաստիկ, խիստ,  
 չափազանց:

**hulk** [hʌlk] n *ծով*. հին նավի կմախք. *փխբ*.  
 դանդաղաշարժ/անշնորհք մարդ. the ~ of a  
 shipwrecked vessel նավաբեկ նավի կմախք:

**hulking** ['hʌlkiŋ] a մեծ ու ծանր, անճոռնի,  
 անշնորհք. a great ~ fellow արջի մեկ. ~ in-  
 surence նավի ապահովագրում:

**hull** [hʌl] n մարմին, կմախք (նավի):

**hullabaloo** [ˌhʌləbə'lu:] n աղմուկ ժխոր,  
 իրարանցում. What a ~! Ի՞նչ աղմուկ է/ղալ-  
 մաղալ է:

**hullo** ['hʌləu] int *խսկց*. ողջույն. *հեռ*. ալլո:

**hum** [hʌm] n բզզոց, տզզոց. դժժոց, խուլ  
 աղմուկ:

**hum** [hʌm] v բզզալ, տզզալ, դժժալ. ~ a tune  
 կիսածայն/քթի տակ երգել. ~ and haw  
 ծամծմել, դանդաղ խոսել:

**human** ['hju:mən] n մարդ. ~ being մարդկա-  
 յին էակ. ~s մարդիկ. ~ rights մարդու իրա-  
 վունքներ.

**human** ['hju:mən] a մարդկային. ~ race  
 մարդկային ցեղ. It's only ~ to err Մարդուն  
 հատուկ է սխալվել. *հմկրգ*. ~ engineering  
 ինժեներային հոգեբանություն:

**humane** ['hju:meɪn] a մարդկային, մարդա-  
 սեր. մարդասիրական օգնություն. a ~ man  
 մարդասեր:

**humanely** [hju:'meɪnli] adv մարդասիրա-  
 բար:

**humanism** [ˈhju:mənɪz(ə)m] n մարդասիրություն, մարդկայնություն.

**humanitarian** [hju:mæniˈteəriən] n մարդասիրական. հումանիտական: ~ aid մարդասիրական օգնություն:

**humanities** [hjuˈmæniəti:z] n հասարակական գիտություններ:

**humanity** [hjuˈmæniəti] n մարդկություն, մարդկային ցեղ. մարդասիրություն, բարություն. crimes against ~ հանցագործություն մարդկության դեմ:

**humankind** [ˌhju:mənˈkaɪnd] n մարդկություն, մարդկային ցեղ:

**humble** [ˈhʌmbəl] a համեստ, անշուք. հասարակ. հասարակ դասին պատկանող. խոնարհ, հնազանդ. a ~ occupation/dwelling համեստ զբաղմունք, հասարակ բնակավայր. your ~ servant (նամակում) ձեր խոնարհ ծառա. in my ~ opinion իմ համեստ կարծիքով:

**humble** [ˈhʌmbəl] v նվաստացնել, ստորացնել. ընկճել, հնազանդեցնել:

**humble-bee** [ˈhʌmbəlbi:] n իշամեղու:

**humbug** [ˈhʌmbʌg] n խաբեություն, կեղծիք, շինծու բան. *humbug*. շատախոս խաբեբան. It's all ~ Այդ ամբողջը հիմար խոսակցություն է:

**humdrum** [ˈhʌmdrʌm] n, a միապաղաղություն. ծանծրալի/անհետաքրքիր մարդ. ~ life միապաղաղ/միօրինակ կյանք. ~ style ծանծրալի ոճ/լեզու:

**humid** [ˈhju:mɪd] a խոնավ:

**humidity** [hjuˈmɪdəti] n խոնավություն:

**humiliate** [hjuˈmɪliət] v ստորացնել, նվաստացնել:

**humiliation** [hjuˈmɪliˈeɪʃn] n ստորացում, նվաստացում:

**humility** [hjuˈmɪləti] n համեստություն, հնազանդություն: accept the remark with ~ համեստությամբ/խոնարհաբար ընդունել դիտողությունը:

**humming-bird** [ˈhʌmɪŋbɜ:d] n կոլիբրի (թռչուն):

**hummock** [ˈhʌmɒk] n բլրակ, սառցակույտ:

**humorist** [ˈhju:mərist] n երգիծաբան, կատակախոս. հումորիստ.

**humorous** [ˈhju:mərəs] a երգիծական, զավեշտական, ծիծաղաշարժ:

**humour** [ˈhju:mə] n կատակասիրություն, երգիծանք, հումոր. sense of ~ հումորի զգա-

ցում. dry ~ լուրջ տեսքով ծիծաղաշարժ բաներ ասել: (տրամադրություն, խառնվածք) in good/bad, ill ~ լավ/վատ տրամադրության մեջ. out of ~ անտրամադիր. when the ~ takes him երբ նա բարձր տրամադրության մեջ է:

**humour** [ˈhju:mə] v ներողամիտ լինել, երեստալ. զիջել, հարմարվել. ~ smb *humour*. սիրաշահել:

**humourless** [ˈhju:mələs] a առանց հումորի:

**hump** [hʌmp] n սապատ, կուզ. բլուր, բլրակ. be over the ~ *hump*. աշխատանքի/գործի մեծ մասն արած լինել:

**hump** [hʌmp] v կորանալ. ~ the bag of coal մեջքի վրա տանել մի պարկ ածուխ:

**humpback** [ˈhʌmpbæk] n կուզ, կուզիկ մարդ:

**humped** [ˈhʌmpbækt] սապատավոր, կուզիկ:

**humph** [hʌmf] int հրմ:

**humpty-dumpty** [ˌhʌmptɪˈdʌmptɪ] n կարճիկ մարդ, թզուկ, զանաճ:

**humpy** [ˈhʌmpɪ] a անհարթ. ~ ground բլրածածկ/անհարթ տեղայնք:

**humus** [ˈhju:məs] n բուսահող, հումուս:

**hunch** [hʌntʃ] n սապատ, կուզ. (նախազգացում, կասկած) have a ~ նախազգալ. նախազգացում ունենալ:

**hunch** [hʌntʃ] v (*hunch up*) կուզիկանալ. ~ one's back/oneself մեջքը կորացնել:

**hunch-back** [ˈhʌntʃbæk] n սապատավոր/կուզիկ մարդ:

**hundred** [ˈhʌndrəd] num n հարյուր. a ~ times հարյուրավոր անգամներ. a ~ miles away հազարավոր մղոններ հեռու. by the ~s հարյուրակներով. in ~ հարյուրակներով. one ~ percent հարյուր տոկոսով, լրիվ. It's one ~ to one against succeeding հարյուրը մեկի դեմ, որ դա չի հաջողվի. The train departs at six ~ hours Գնացքը մեկնում է ուղիղ ժամի վեցին:

**hundredfold** [ˈhʌndrədfəʊld] a, n հարյուր անգամ, հարյուրապատիկ:

**hundred percent** [ˈhʌndrədpeɪsənt] n ուռա հայրենասեր:

**hundredth** [ˈhʌndrədθ] num, n հարյուրերորդ. հարյուրերորդ մաս:

**hundredweight** [ˈhʌndrədweɪt] n ցեմտներ:

**hunger** [ˈhʌŋgə] n քաղց, սով. die of ~ սովից/ ած մեռնել. satisfy one's ~ քաղցը հա-

զեցնել. *keen* ~ ուժեղ/խիստ քաղց:  
**hunger** ['hʌŋgə] *v* սովածանալ, սով զգալ.  
*փխբ.* տենչալ, փափագել. The child ~s for  
 caress երեխան փաղաքշանքի կարիք  
 ունի:  
**hunger-strike** ['hʌŋgəstraɪk] *n* հացադուլ.  
 go on ~ հացադուլ հայտարարել:  
**hungrily** ['hʌŋgrɪli] *adv* ազահորեն, ազա-  
 հարար. eat ~ ազահորեն ուտել. eye the por-  
 trait ~ ազահորեն նայել նկարին:  
**hungry** ['hʌŋgrɪ] **1.** *a* քաղցած, սոված. be ~  
 քաղցած լինել. go ~ սոված մնալ. քաղցած  
 ման գալ. *a* ~ look քաղցած հայացք. get/  
 grow ~ քաղցածանալ/սովածանալ. I'm not ~  
 for breakfast Նախաճաշ չեմ ուզում. Running  
 is a ~ work վազելուց հետո փտրժակդ  
 բացվում է. ~ as a hunter գայլի/շան պես  
 քաղցած, ~ for news *փխբ.* լուրերի. /նորու-  
 թյունների կարոտ. **2.** *n* the ~ սովյալները,  
 քաղցածները:  
**hunk** [hʌŋk] *n* (հացի/մսի) մեծ կտոր.  
 (թխվածքի) շերտ:  
**hunks** ['hʌŋks] *n* գծուծ/ժլատ մարդ:  
**hunt** [hʌnt] *n* որս, բռնելը. a fox ~ աղվեսի  
 որս. a rat ~ առնետ բռնելը. (որոնում, փնտ-  
 րելը) after a long ~ երկար որոնումներից  
 հետո. organize a ~ for the missing person  
 կորած անձի որոնում կազմակերպել.:  
**hunt** [hʌnt] *v* որս անել, որսորդությամբ  
 զբաղվել. ~ bears արջի որս անել. *մրգ.* հե-  
 տապնդել. հետամուտ լինել. ~ (for) the thief  
 գողին որոնել/հետապնդել. flat ~ing բնակա-  
 րան փնտրելը. ~ out the address հասցեն  
 գտնել. go ~ing with dogs շներով որս անել.  
 ~ for the document փաստաթուղթը փնտրել:  
**hunter** ['hʌntə] *n* որսորդ, որսի շուն/ծի:  
**hunting** ['hʌntɪŋ] **1.** *n* որսորդություն. **2.** *a*  
 որսի, որսորդական. ~ box որսորդական  
 տնակ:  
**huntsman** ['hʌntsmən] *n* որսորդ:  
**hurdle** ['hɜːdl] *n* շարժական ցանկապատ.  
*մրգ.* արգելապատ. *փխբ.* արգելք, խոչըն-  
 դոտ get over the ~ արգելքը հաղթահարել. ~  
 race խոչընդոտներով վազք:  
**hurl** [hɜːl] *n* նետում, թափով նետելը:  
**hurl** [hɜːl] *v* թափով նետել. շարտել, ~ stones  
 քար շարտել. ~ oneself նետվել, հարձակվել:  
 He ~ed himself at/on his antagonist Նա հար-  
 ձակվեց իր հակառակորդի վրա. ~ abuse

նախատե. լուտանք թափել:  
**hurly-burly** ['hɜːlibɜːli] *n* իրարանցում,  
 խառնաշփոթություն.  
**hurrah** [həˈraː], **hurray** [həˈrei] *n*, *int*  
 հուռա, ուռա:  
**hurricane** ['hʌrɪkən] *n* փոթորիկ, մրրիկ:  
**hurried** ['hʌrɪd] *a* շտապ, արագ. *a* ~ depar-  
 ture շտապ մեկնում. ~ reading թուղթիկ  
 ընթերցում:  
**hurriedly** ['hʌrɪdli] *adv* շտապով, արագ  
 կերպով. eat ~ արագ ուտել:  
**hurry** ['hʌri] *n* շտապողություն, շտապում.  
 աճապարանք. in a/in one's ~ շտապով,  
 հապճեպ կերպով, արագ-արագ. There is no  
 ~ Պետք չէ շտապել. (after) all the ~ ամբողջ  
 շտապողականությունը, շտապելը. What's  
 the ~? Ինչո՞ւ շտապել. What's your ~? Ո՞ւր  
 ես/Ինչո՞ւ ես շտապում. in a ~ *խսկց.* կրկին,  
 շուտով. I'll not come here again in a ~ ես  
 (երկի) շուտ չեմ գա այստեղ:  
**hurry** ['hʌri] *v* շտապել, շտապեցնել. աճա-  
 պարել. Don't ~ Մի՛ շտապեք՝. Don't ~ me Մի՛  
 շտապեցրեք ինձ. ~ up Շտապիր. ~ the work  
 along արագացնել աշխատանքը. This plan  
 can't be hurried Այս ծրագիրը չի կարելի  
 արագ իրականացնել. ~ out of the room  
 շտապով ~ back արագ վերադառնալ:  
**hurry-scurry** [ˌhʌriˈskʌri] *n* վազվզոց,  
 իրարանցում, խառնաշփոթություն:  
**hurst** [hɜːst] *n* բլրակ, անտառապատ բլրակ:  
**hurt** [hɜːt] *n* վնասվածք, վերք, վնաս. վիրա-  
 վորանք.  
**hurt** [hɜːt] *v* վնասել, վնաս պատճառել. ~  
 oneself վնասվել. ~ one's leg ոտքը վնասել.  
 be seriously ~ լուրջ վնասվել. Don't ~ the cat  
 Կատվին մի տանջի. (վնաս պատճառել/  
 հասցնել) A glass of wine won't ~ anybody Մի  
 բաժակ գինին ոչ-ոքի չի վնասի. It won't ~  
 you to walk home Չի խանգարի ոտքով տուն  
 գնալ. It won't ~ to postpone the matter Ոչինչ չի  
 պատահի, եթե գործը հետաձգենք. (վիրա-  
 վորանք) ~ one's feelings մեկին վիրավորել.  
 ~ smb's pride մեկի ինքնասիրությանը կպչել.  
 It ~s me Դա վիրավորական է ինձ համար.  
 (ցավել) My eyes ~ Աչքերս ցավում են. Where  
 does it ~? Ի՞նչն է ցավում:  
**hurt** [hɜːt] *a* վիրավորված, նեղացած:  
**hurtle** ['hɜːtl] *n* հրմշտոց, հրիթոց:  
**hurtle** ['hɜːtl] *v* հրել, հրիթել. The dog came

- hurting Շունն արագ վազեց դեպի մեզ. He ~d down the slope Նա գառիվայրով ներքև սլացավ:
- husband** [ˈhʌzbənd] **1.** n ամուսին. You and your ~ are invited Ձեր ամուսնու հետ միասին հրավիրվում եք. **2.** v վարել, կառավարել. ~ one's strength/resources ուժերը խնայել. խնայողաբար ծախսել:
- husbandry** [ˈhʌzbəndri] n գյուղատնտեսություն, հողագործություն. animal ~ անասնաբուծություն:
- hush** [hʌʃ] n լռություն. ~ fell on the company Բոլորը լռեցին:
- hush** [hʌʃ] v լռել, սսկվել. լռեցնել, ձայնը կտրել. ~ up լռության մատնել. կոծկել. The scandal/affair was ~ed up Սկանդալը կոծկեցին. Hush! Սո՛ւս, լռի՛ր:
- hushaby** [ˈhʌʃəbaɪ] n, int (օրորոցային) օրոր-օրոր. նանիկ-նանիկ:
- hush-hush** [ˌhʌʃˈhʌʃ] **1.** a *խսկց.* գաղտնի. **2.** v գաղտնի դարձնել/պահել:
- hush-money** [ˈhʌʃmʌni] n բերանը փակելու կաշառք:
- husk** [hʌsk] **1.** n կեղև, կճեպ, թեփ. **2.** v կեղևել, կճպել. թեփահան անել. ~ rice/sunflower seeds բրինձը թեփահան անել. արևածաղիկը կճպել/չրթել:
- husky** [ˈhʌski] a խռպոտ. a ~ voice խռպոտ ձայն. թեփոտ, թեփով ծածկված. *ամ. խսկց.* հաղթանդամ, ամրակազմ. He's a big ~ fellow Նա հաղթանդամ մարդ է:
- hussy** [ˈhʌsi] n հանդուգն աղջիկ. թեթևաբարո կին. a brazen ~ ամբարտավան/հանդուգն աղջիկ:
- hustle** [ˈhʌsl] n հրմշտոց, իրարանցում:
- hustle** [ˈhʌsl] v հրել, բոթել, հրելով անցնել. շտապեցնել. The boys were ~d out of the hall Տղաներին դահլիճից դուրս քշեցին. They ~d him into a car Նրան մեքենայի մեջ խցկեցին. ~ smn into the decision ստիպել արագ որոշում ընդունել. People ~d round the exit Ելքի մոտ հրմշտոց էր:
- hut** [hʌt] n խրճիթ, տնակ, հյուղակ:
- hutch** [hʌtʃ] n ճագարների վանդակ. *խսկց* խրճիթ, հյուղակ:
- hyacinth** [ˈhaɪsɪnθ] n *բւր.*, *հնք.* հակինթ,
- հիացինտ:
- hybrid** [ˈhaɪbrɪd] **1.** n խառնածին, հիբրիդ **2.** a խառնածին, խաչասերված:
- hydrant** [ˈhaɪdrənt] n ջրաբաշխ ծորակ, ջրածորակ. հիդրանտ:
- hydrate** [ˈhaɪdreɪt] n *քիմ.* ջրօքսիդ, հիդրատ. ~ of lime հանգած կիր:
- hydraulic** [haɪˈdrɔːlɪk] a ջրաբաշխական, հիդրավլիկ:
- hydraulics** [haɪˈdrɔːlɪks] n ջրաբաշխություն:
- hydrogen** [ˈhaɪdrədʒən] n *քիմ.* ջրածին:
- hydropathy** [haɪˈdrɒpəθi] n ջրաբուժություն:
- hydrophobia** [ˌhaɪdrəʊˈfəubiə] n ջրվախություն:
- hyena** [haɪˈiːnə] n բորենի:
- hygiene** [ˈhaɪdʒiːn] n առողջապահություն, առողջագիտություն. հիգիենա:
- hymn** [hɪm] n օրհներգ. գովերգ. *եկեղ.* շարական, տաղ:
- hyperbole** [haɪˈpɜːbəli] n չափազանցություն, հիպերբոլա:
- hypersensitive** [ˌhaɪpəˈsensətɪv] a գերզգայուն (*նաև բժշկ.*). a ~ person գերզգայուն անձնավորություն:
- hypertext** [ˈhaɪpətɛkst] *հմկոգ.* n գերտեքստ. ~ document գերտեքստի փաստաթուղթ:
- hyphen** [ˈhaɪfɪn] n միացման գծիկ. գոդագիծ. դեֆիս:
- hypnosis** [hɪpˈnəʊsɪs] n ներագդում, հիպնոս:
- hypochondria** [ˌhaɪpəʊˈkɒndrɪə] n մելամաղձություն:
- hypocrisy** [hɪˈpɒkrəsi] n կեղծավորություն, կեղծ բարեպաշտություն:
- hypocrite** [ˈhɪpəkraɪt] n կեղծավոր, փարիսեցի:
- hypocritical** [ˌhɪpəˈkrɪtɪkəl] a կեղծավոր, երեսպաշտ. կեղծ բարեպաշտական:
- hypodermic** [ˌhaɪpəʊˈdɜːmɪk] a ենթամաշկային. a ~ syringe ենթամաշկային ներարկիչ սրսկիչ (շարիչ):
- hypothesis** [haɪˈpɒθəsɪs] n վարկած, հիպոթեզ:
- hysteria** [hɪˈstɪəriə] n հիստերիա:

## I

**hysterical** [hi'sterikl] a հիստերիկ:  
**hysterics** [hi'steriks] n հիստերիկ նոպա:

**I, i** [ai] n անգլերեն այբուբենի իններորդ տառը:

**I** [ai] prn pers ես:

**ice** [ais] n սառույց. artificial/transparent ~ արհեստական/թափանցիկ սառույց. drifting ~ լողացող սառույց/սառցակույտ. break the ~ սառույցը կտրել. *փխք*. առաջին քայլը անել. on thin ~ *փխք*. դժվարին կացության մեջ. cut no ~ *խսկց*. նպատակին չհասնել. ~ hockey մականախաղ սառցի վրա. (պաղպաղակ) Let's buy some ~ եկ պաղպաղակ գնենք. (շաքարահյութի շերտ) some ~ on the cake շաքարահյութի շերտ թխվածքի վրա:

**ice** [ais] v (*նաև ~ up/over*) սառեցնել, սառչել. the windscreen ~d up դիմապակին սառցակալել էր. ~ a cake թխվածքը շաքարահյութով պատել:

**ice-age** ['aɪseɪdʒ] n սառցադաշտային ժամանակաշրջան:

**ice-axe** ['aɪsæks] n սառցաքլունգ, սառցատապար (ալպինիստների):

**iceberg** ['aɪsbɜːg] n լողացող սառցալեռ, այսբերգ:

**ice-boat** ['aɪsbəʊt] n առագաստասահնակ:

**ice-box** ['aɪsbɒks] n *խսկց*. սառնարան, սառցապահարան:

**ice-bound** ['aɪsbaʊnd] a սառույցներով կաշկանդված. ~ river սառցապատ գետ. an ~ ship սառույցների մեջ սեղմված նավ:

**ice-breaker** ['aɪsbreɪkə] n սառցահատ (նավ):

**ice-cream** ['aɪskri:m] n պաղպաղակ:

**ice-drift** ['aɪsdɪft] n սառույցի դրեյֆ:

**ice-field** ['aɪsfɪ:ld] n սառցադաշտ:

**iced** ['aɪst] a սառեցրած. ~ water սառույցով ջուր. ~ coffee/tea սառեցրած/սառը սուրճ/թեյ. an ~ cake շաքարահյութով պատած տորթ:

**ice-house** ['aɪshaʊs] n սառցե տուն (էսկիմոսների):

**iceman** ['aɪsmæn] n պաղպաղակավաճառ. *ամ*. սառցավաճառ. *խսկց*. բևեռախույզ:

**ice-yacht** ['aɪsjɒt] n առագաստասահնակ:

**icicle** ['aɪsɪkl] n սառցալուլա:

**icily** ['aɪsɪli] adv սառնորեն, սառնությամբ:

**icing** ['aɪsɪŋ] n շաքարահյութ. ~ sugar շաքարահյութի շաքար:

**icon** ['aɪkɒn] n սրբապատկեր, պատկեր.

*հմկրգ*. ~ նշան, պատկեր, պատկերանշան:

**iconic** [aɪ'kɒnɪk] a սրբապատկերի մման:

**icy** ['aɪsɪ] a սառցե, սառցային. an ~ wind սառցային քամի. ~ roads սառցապատ ճանապարհներ. ~ cold սաստիկ/ահավոր ցուրտ. ~ air սառը օդ. ~ silence *փխք*. մեռելային լռություն. ~ look սառը հայացք:

**idea** [aɪ'diə] n միտք, մտահղացում. գաղափար, մտադրություն. original/brilliant/foolish/sensible/basic ~ յուրօրինակ/փայլուն/ հիմար/խելացի/հիմնական միտք/գաղափար. fixed ~ սևեռուն գաղափար/միտք. Put ~s into smn's head մեկի գլուխը գաղափարներ մտցնել. the ~ of the good բարու գաղափարը. (պատկերացում) have an ~ պատկերացում ունենալ, պատկերացնել. have no ~ ոչ մի պատկերացում չունենալ. give a good/slight ~ լավ/թեթևակի պատկերացում տալ. It is not my ~ of friendship ես ընկերությունը այդպես չեմ պատկերացնում. He came here with an ~ of ես այստեղ եկավ ...նպատակով. (հասկացություն, միտք) What an ~! Դա ի՞նչ անհեթեթություն է. What's the big ~? Էլ ի՞նչ հիմարություն գիտես. man of ~s հնարագետ/հնարամիտ մարդ:

**ideal** [aɪ'diəl] n, a իդեալ, կատարելություն. իդեալական, կատարյալ. երևակայական:

**idealize** [aɪ'diəlaɪz] v իդեալականացնել:

**ideally** [aɪ'diəli] adv իդեալական. տեսակաճորեն, սկզբունքորեն. I~ we should come earlier Ավելի ճիշտ կլիներ, որ մենք ավելի շուտ գայինք:

**idem** ['aɪdɛm] n, adv նույնը (հեղինակը, գիրքը), նույնի (հեղինակի, գիրքի...):

**identic(al)** [aɪ'dentɪk(ɪ)] a նույն, ճիշտ նույն, նույնատեսակ, միանման ~ twins եկվորյակներ:

**identification** [aɪ,dentɪfɪ'keɪʃn] n նույնացում. ճանաչում, ինքնության հաստատում

~ of a disease հիվանդության հաստատումը/ ճանաչումը. ~ card անձը հաստատող փաստաթուղթ. ~ of a plant բույսի տեսակի որոշումը. ~ mark տարբերիչ նշան:

**identifier** [ai'dentifaiə] n *հմկրգ.* նույնացուցիչ:

**identify** [ai'dentifai] v նույնացնել, ճանաչել. նույնությունը/ինքնությունը հաստատել. ~ by fingerprints մատնահետքերով ինքնությունը հաստատել. (ճանաչել, պարզել) ~ a body դիակը ճանաչել. ~ the criminal/picture հանցագործին/նկարը ճանաչել. (նույնացնել) I~ yourself Ասեք ձեր անունը. ~ oneself with the hero of the film իրեն ֆիլմի հերոսի հետ նույնացնել:

**identity** [ai'dentəti] n նույնություն, ինքնություն, իսկություն. prove smb's ~ անձը/ինքնությունը հաստատել. mistaken ~ ինքնության սխալ հաստատում, սխալ նույնացում. ~ card անձնական վկայական. ~ check ինքնության ստուգում:

**ideological** [i,aidiə'lɔdʒikl] a գաղափարախոսական:

**ideology** [i,aidi'ɒlədʒi] n գաղափարախոսություն:

**idiom** ['idiəm] n [եզու, բարբառ. *լեզվ.* դարձված, դարձվածային միավոր, իդիոմ. local ~ տեղական բարբառ:

**idiosyncrasy** [i,idiə'siŋkrəsi] n տարօրինակություն, քնահաճություն. *խսկց.* սևեռում միտք:

**idiot** ['idiət] n ապուշ, հիմար:

**idiotic** [i,idi'ɒtik] a ապուշային, ապուշի. ~ behaviour հիմար վարքագիծ. How ~! Ի՞նչ ապուշություն/հիմարություն:

**idle** ['aidl] a դատարկ, անհիմն. ~ talk/gossip դատարկ բանբասանք. անհիմն խոսակցություն (անօգուտ, ապարդյուն) ~ speculation անօգուտ դատողություններ. an ~ fellow ծուլ/անբան մարդ. ~ time պարապուրդ. ~ position չեզոք դիրք. be ~ անգործություն անել. have no ~ moment ոչ մի ազատ րոպե չունենալ. stand ~ *տեխ.* կանգ առնել, չաշխատել. *հմկրգ.* ~ character պարապ սիմվոլ:

**idle** ['aidl] v ծուլություն/դատարկապորտություն անել. ~ away one's time ժամանակը պարապ-սարապ անցկացնել:

**idleness** ['aidlnəs] n պարապություն, անգործություն, ծուլություն. անհիմնություն. live in ~ պարապ/անգործ կյանք վարել:

**idler** ['aidlə] n ծուլ/դատարկապորտ մարդ: **idly** ['aidli] adv ծուլորեն, պարապ-սարապ. stand ~ անտարբեր/անկարեկից մնալ:

**idol** ['aidl] n կուռք, պաշտամունքի առարկա:

**idolater** [ai'dɒlətə] n կռապաշտ. երկրպագու:

**idolatry** [ai'dɒlətri] n պաշտում, երկրպագություն. կռապաշտություն:

**idolize** ['aidlaiz] v աստվածացնել. կուռք դարձնել, որպես կուռք պաշտել:

**idyll** ['idɪl] n հովվերգություն, իդիլիա:

**idyllic** [i'diɪlik] a անվրդով, խաղաղ. իդիլիական:

**if** [ɪf] conj (պայման) եթե. ~ he is here եթե նա այստեղ է. ~ ever եթե երբևէ. ~ it hadn't been for him եթե նա չլիներ. ~ I were you եթե ես քո տեղը լիներ. (ցանկություն, իղծ) ~ only I knew եթե միայն իմանայի. as ~ կարծես, իբր թե. even ~ եթե նույնիսկ ~ any եթե այդպիսիները կան. ~ not եթե ոչ. (արդյոք). ~ he is there արդյոք/եթե նա այնտեղ է:

**iffy** ['ɪfi] a *ամ.* անորոշ, կասկածելի, թեական:

**igneous** ['ɪgniəs] a կրակի, հրե, հրաբխային:

**ignite** [ɪg'nait] v վառ(վ)ել, բռնկ(վ)ել. *փխբ.* խանդավառվել, բորբոքել:

**ignition** [ɪg'niʃn] n վառում, բոցավառում (ավտոմեքենա). ~ key/switch կայծի բանալի/միացուցիչ:

**ignoble** [ɪg'nəubl] a անազնիվ, անարգ. անոթալի, խայտառակ. ~ motives անազնիվ մղումներ:

**ignominious** [i,ɪgnə'miniəs] a խայտառակ, անոթաբեր. an ~ defeat խայտառակ պարտություն:

**ignominy** ['ɪgnəmini] n խայտառակություն, անարգանք, անազնվություն:

**ignoramus** [i,ɪgnə'reiməs] n տգետ:

**ignorance** ['ɪgnərəns] n տգիտություն, անիրազեկություն, անտեղյակություն. reveal one's ~ տգիտությունը ի ցույց դնել. act in ~ գործել անտեղյակ լինելով. keep smn in ~ մեկին իրազեկ չդարձնել. անտեղյակ պահել:

**ignorant** ['ɪgnərənt] a տգետ, անտեղյակ, անիրազեկ:

**ignore** [ɪg'nɔ:] v անտեսել, հաշվի չառնել. արհամարհել. He ~d me/the invitation Նա հաշվի չառավ/անտեսեց ինձ, արհամարհեց

- հրավերը:  
**ikebana** [i:kei'ba:nə] n իկեբանա (ծաղկեփնջեր կազմելու արվեստ):
- ill** [il] a հիվանդ, տկար. վնասակար. be/feel ~ հիվանդ լինել, վատ զգալ. look ~ հիվանդ տեսք ունենալ. fall/be taken ~ հիվանդանալ. feel ~ at ease անհարմար զգալ. (վատ, չար) ~ health վատ առողջություն ~ feeling անբարյացակամություն, թշնամանք. ~ repute վատ/չար համբավ: as if ~ luck would have it կարծես դիտմամբ:
- ill** [il] adv վատ, անբարենպաստ speak/think ~ of smb մեկի մասին վատ խոսել/մտածել. I can ~ afford Հազիվ թե կարողանամ. We can ~ afford to lose him Մենք չենք կարող մեզ թույլ տալ նրան կորցնել. ~ provided վատ ապահովված, անապահով. take a thing ~ լավ չընդունել, որևէ բանից նեղանալ:
- ill-advised** [iləd'vaizd] a անխոհեմ, ոչ խելամիտ. You'd be ~ Ձեր կողմից անխոհեմ կլինի:
- ill-affected** [ilə'fektid] a անբարյացակամ, անբարեհաճ:
- ill-bred** [il'bred] a վատ դաստիարակված, անկիրթ, անդաստիարակ:
- ill-conditioned** [ilkən'di:nd] a չար, կռվարար:
- ill-considered** [ilkən'sidəd] a չմտածված. հապճեպ:
- ill-disposed** [ildi'spəuzd] a անբարյացակամ, չարամիտ:
- illegal** [i'li:gl] a անօրինական. ապօրինի. արգելված. declare ~ անօրինական ճանաչել/հայտարարել *հմկրգ.* ~ character/instruction արգելված սիմվոլ/հրահանգ:
- illegibility** [i,ledʒə'biləti] n անդյուրընթեռնելիություն, անպարզություն:
- illegible** [i'ledʒəbl] a անընթեռնելի (ձեռագիր):
- illegitimacy** [ilə'dʒitəməsi] n ապօրինություն, անօրինականություն:
- illegitimate** [ilə'dʒitəmət] a ապօրինի, անօրինական, հակաօրինական. ~ grounds անօրինական հիմքեր. ~ child ապօրինի երեխա:
- ill-fated** [il'feitid] a չարաբաստիկ, դժբախտ, տարաբախտ:
- ill-feeling** [il'fi:liŋ] անբարյացակամություն, թշնամանք. ~ between the two families թշնամանք երկու ընտանիքների միջև:
- ill founded** [il'faundid] a անհիմն, չհիմնավորված. ~ application անհիմն դիմում:
- ill-humoured** [il'hju:məd] a վատ տրամադրված. վատ բնավորության տեր, չար:
- illicit** [i'lisit] a *հրավ.* ապօրինի, հակաօրինական. ~ trade անօրինական առևտուր:
- illimitable** [i'limitəbl] a անսահմանակ, անսահման:
- illiteracy** [i'litərəsi] n անգրագիտություն:
- illiterate** [i'litərət] n անգրագետ
- ill-judged** [il'dʒʌdʒd] a անխոհեմ, ոչ խելացի:
- ill mannered** [il'mænəd] a անդաստիարակ, անտաշ:
- ill-natured** [il'neitəd] a չար, չարամիտ:
- illness** ['ilnəs] n հիվանդություն: severe/infectious/dangerous/long, prolonged/fatal ~ ուժեղ/վարակիչ/վտանգավոր/երկարատև/ճակատագրական հիվանդություն. be seized with ~ հանկարծակի հիվանդանալ:
- illogical** [i'lədʒikəl] a անտրամաբան, անտրամաբանական:
- ill-omened** [il'əumend] a չարագուշակ:
- ill-spoken** [il'spəukn] a վատ համբավ ունեցող:
- ill-starred** [il'stɑ:d] a չարաբախտ, չարաստղի տակ ծնված:
- ill-success** [il'sʌkses] n անհաջողություն, ծախողություն, ծախորդություն:
- ill-tempered** [il'tempəd] a ոյուրագրգիռ, կռվարար, զայրացկոտ:
- ill-timed** [il'taimd] a անժամանակ, տարածամ. ոչ ժամանակին:
- ill-treat** [il'tri:t] v վատ/կոպիտ վարվել:
- illuminate** [i'lu:mineit] v լուսավորել. հրավառել. *փխբ.* լուսաբանել, պարզաբանել. ծաղկել, նկարագարողել. an ~d manuscript նկարագարող ձեռագիր:
- illumination** [i,lu:mi'neiʃn] n լուսավորություն, լուսավորում. հրավառություն. գունավոր նկարագարող. մանրանկար:
- illuminator** [i'lu:mineitə] n լուսանցույց, լուսավորող, լուսարձակ. լուսավորիչ. Grigor the Illuminator Գրիգոր Լուսավորիչ:
- illumine** [i'lu:min] v լուսավորել. լույս սփռել. ծաղկել, մանրանկարներով զարդարել:
- illusion** [i'lu:ʒn] n պատրանք. have/have no

~s պատրանքներ ունենալ/չունենալ. an optical ~ օպտիկական պատրանք, տեսախարություն:

**illusionist** [i'lu:ʒənist] n երազող/անրջող մարդ. աճպարար, իլյուզիոնիստ:

**illusive** [i'lu:siv] a պատրանքային, խաբուսիկ, անհիրական:

**illustrate** ['iləstreit] v լուսաբանել (օրինակներով). ~ the lecture by examples/diagrams and ~d book/talk պատկերազարդ գիրք, նկարներով ուղեկցվող դասախոսություն:

**illustration** [,iləs'treɪʃn] n նկարազարդում. նկար, պատկեր. լուսաբանում by way of ~ օրինակի համար. in ~ of his point իր տեսակետը հիմնավորելու/լուսաբանելու համար:

**illustrative** ['iləstreitiv] a բացատրական, պարզաբանական, լուսաբանական, ցուցադրական. ~ material ցուցադրական նյութեր. The article is ~ of his views Հոդվածը արտացոլում է նրա հայացքները:

**illustrious** [i'ɹʌstriəs] a հռչակավոր, ականավոր:

**ill-will** [i'l'wil] n չարականություն, անբարյացականություն. bear smb no ~ չարիք չկանենալ:

**image** ['imɪdʒ] n պատկեր, նկար. *արվ., գրակ.* պատկերում, արտացոլում. կերպար. քանդակ. *vague/clear/mental* ~աղոտ/պարզ/մտավոր պատկեր. think in ~s պատկերներով/պատկերավոր մտածել. speak in ~s պատկերավոր խոսել. *enlarged/real/faulty* մեծացրած, չափազանցած/իրական/աղավաղված պատկերում. be the ~ of շատ նման լինել, պատճենը լինել. ~ maker կերպար ստեղծող. ~ building կերպարի/հեղինակության ստեղծում. (նմանություն) the very/living ~ of his father իսկը հայրը, քրի երկու կաթիլի նման. think too much of his ~ չափից ավելի մտածել իր կերպարի մասին. an ~ of kindness/devotion բարության/նվիրվածության խորհրդանիշ/մարմնացում. *հմկրգ.* ~ file խնդրի կերպարի ֆայլ. ~ generation/memory/processing պատկերի ձևավորում/հիշողություն/մշակում. inline ~ գծային պատկեր:

**imagery** ['imɪdʒəri] n մտապատկեր, պատկերացում. *գրկ.* լեզվի պատկերավորություն:

**imaginable** [i'mædʒɪnəbl] a երևակայելի. the greatest ~ difficulty ամենամեծ երևակայելի դժվարությունը:

լի դժվարությունը:

**imaginary** [i'mædʒɪnəri] a երևակայական, կարծեցյալ, մտացածին. ~ illness երևակայական հիվանդություն. live in an ~ world մտացածին աշխարհում ապրել:

**imagination** [i,mædʒɪ'neɪʃn] n երևակայություն, մտավոր պատկերացում, ֆանտազիա. *rich/vivid, lively/poor* ~ հարուստ/վառ/կենդանի/աղքատ երևակայություն. It's all ~ Դա լոկ երևակայություն է:

**imaginative** [i'mædʒɪnətɪv] a երևակայական, պատկերավոր an ~ person հարուստ երևակայություն ունեցող անձ:

**imagine** [i'mædʒɪn] v երևակայել, պատկերացնել. just ~ *խսկց.* միայն պատկերացրեք. I can't ~ Չեմ կարող պատկերացնել. I ~ we're expected ենթադրում եմ, որ մեզ սպասում են. Let's ~ that... ենթադրենք, որ...:

**imbalance** [ɪm'bæləns] n անկայունություն, անհավասարակշռություն. external ~ արտաքին անհավասարակշռություն. racial ~ ռասայական/ցեղային անհավասարություն:

**imbecile** [ɪ'mbəsɪ:l] n տկարամիտ, թուլամիտ. *խսկց.* ապուշ, տխմար:

**imbecility** [ɪ'mbəsɪ'lɪtɪ] n տկարամտություն, թուլամտություն. հիմարություն, անմտություն. անխիղճ քայլ:

**imbibe** [ɪm'baɪb] v ներծծել, խմել, կլանել. *փխք.* ընկալել, յուրացնել:

**imitate** ['imɪteɪt] v ընդօրինակել, նմանվել, նմանակել. ~ the voice/gestures ընդօրինակել մեկի ձայնը/շարժումները. ~ one's friend/professor ընկերոջը/դասախոսին նմանակել/ընդօրինակել. The painting ~s marble Նկարը ընդօրինակում է մարմարը:

**imitation** [i'mɪ'teɪʃn] n նմանում, ընդօրինակում. նմանակ, նմանակում, իմիտացիա. a good ~ of լավ ընդօրինակում. (արհեստական) ~ pearls/fur արհեստական մարգարիտ/մորթի:

**imitative** ['imɪtətɪv] a նմանողական. արտահայտչական, պատկերավորման. ~ arts կերպարվեստ:

**imitator** ['imɪteɪtə] n ընդօրինակող, նմանակող:

**immaculacy** [i'mækjʌləsɪ] n մաքրություն, անբասիրություն:

**immaculate** [i'mækjʌlət] a մաքուր, անբիծ, չարատավորված:



**immaculately** [i'mækjulətli] adv անբասիր կերպով. անթերի. ~ dressed անթերի հագնված:

**immanence, immanency** [imənəns, imənənsi] n ներհատկություն, ներհատուկ հատկանիշ. *փիլ.* իմանենտություն:

**immanent** [imənənt] a ներհատուկ, մշտական. *փիլ.* իմանենտ, ներունակ:

**immaterial** [imə'tiəriəl] a ոչ իրեղեն/նյութական. անկարևոր, ոչ էական. ~ issue անէական առարկություն/հարց. It's ~ to me Դա էական չէ ինձ համար:

**immature** [imə'tjuə] a չհասած, խակ. չհասունացած, դեռահաս. տհաս. an ~ boy *փիլս.* դեռահաս տղա:

**immaturity** [imə'tjuəriti] n անհասություն:

**immeasurable** [im'eɪzəəbl] a անչափելի, անհաշիվ. անսահման, անընդգրկելի:

**immediate** [im'i:diət] a անհապաղ, շտապ, անհետաձգելի. ~ answer/result/action անհապաղ/անմիջական պատասխան/արդյունք/ռեակցիա. (անմիջական, ուղիղ) ~ heir անմիջական ժառանգ. ~ contact անմիջական կապ. ~ aim մտտակա/անմիջական նպատակը. take ~ action անմիջապես գործել. my ~ superior իմ անմիջական պետը. (ամենամոտ, ամենամերձավոր) ~ neighbours ամենամոտ հարևանները, his ~ family ամենամերձավոր բարեկամները, in the ~ future մոտակա ապագայում. ~ threat ուղղակի սպառնալիք. *հմկրգ.* access memory արագագործ հիշողություն:

**immediately** [im'i:diətli] 1. adv անհապաղ, անմիջապես. անմիջականորեն, ուղղակի. almost ~ համարյա անմիջապես. begin/come ~ անմիջապես սկսել/գալ ~ responsible to անմիջականորեն պատասխանատու. ~ before the exams քննություններից անմիջապես առաջ. 2. conj ~ he appears հենց որ նա գա:

**immemorial** [imə'mɔ:riəl] a անհիշելի, վաղեմի. from time ~ անհիշելի ժամանակներից:

**immense** [im'mens] a վիթխարի, հսկայական, անսահման. *խսկց* հիանալի, հոյակապ. ~ buildings/difficulties վիթխարի շինություններ. հսկայական դժվարություններ. ~ pleasure անսահման հաճույք. ~ space անժայրածիր տարածություն:

**immensely** [im'mensli] adv չափազանց, ան-

սահման. ~ rich *խսկց.* չափազանց հարուստ:

**immensity** [im'mensəti] n վիթխարիություն, անսահմանություն. ~ of the problem պրոբլեմի անսահման/անընդգրկելի լինելը. ~ of the disaster աղետի վիթխարի չափերը:

**immerse** [im'mə:s] v սուզել, ընկղմել. ~ smth in water ջրի մեջ ընկղմել. ~d in one's work *փիլս.* աշխատանքի մեջ խորասուզված. (ներքաշել, խճճել) be ~d in debt պարտքի մեջ խրված լինել:

**immersion** [im'mə:ʃn] n սուզում, ընկղմվելը. ~ heater ջրատաքացուցիչ:

**immigrant** [im'igrənt] n, a ներգաղթած, վերաբնակիչ. ներգաղթող. ներգաղթյալ. ~ inspector ներգաղթի/ներգաղթային ծառայության տեսուչ:

**immigrate** [im'igreit] v ներգաղթել վերաբնակվել:

**immigration** [im'i'greiʃn] n ներգաղթ:

**imminence** [im'inəns] n սպառնալիք, մոտալուտ լինելը:

**imminent** [im'inənt] a մոտալուտ, վերահաս, սպառնացող. A storm is ~ Ամպրոպ է սպառնում. the ~ elections մոտալուտ ընտրությունները. ~ danger վերահաս վտանգ. ~ threat of war պատերազմի անմիջական վտանգ/սպառնալիք:

**immobile** [im'məubail] a անշարժ:

**immobility** [im'mə'biləti] n անշարժություն:

**immobilize** [im'məubalaiz] v անշարժ դարձնել. կաշկանդել. My broken leg has ~d me Կոտրված ոտքի պատճառով ես անշարժ եմ դարձել. lack of petrol ~d the car Բենզին չլինելու պատճառով մեքենան չէր շարժվում:

**immoderate** [im'mɔdərət] a չափից ավելի շատ, չափն անցնող. ~ ambition/demand/charges/drinking չափից ավելի պատվամոլություն. չափն անցնող պահանջներ. չափից ավելի թանկ գներ. խմիչքների անսահման օգտագործում:

**immodest** [im'mɔdist] a անհամեստ, անպարկեշտ:

**immodesty** [im'mɔdəsti] n անհամեստություն, անպարկեշտություն. անամոթություն:

**immoral** [im'mɔrəl] a անբարոյական, բարոյազուրկ, անառակ:

**immorality** [imə'ɹæləti] n անբարոյակա-  
նություն, անառակություն. incitement to ~  
անբարոյական արարքների մղելը:

**immortal** [i'mɔ:təl] a անմահ, անմահական.  
հավերժ. անթառամ. ~ Gods անմահ աստ-  
վածներ. Bach's music is ~ Բախի երաժշտու-  
թյունը հավերժական է/անմահ է:

**immortality** [imɔ:'tæləti] n անմահություն,  
հավերժականություն:

**immortalize** [i'mɔ:təlaiz] v հավերժացնել.  
անմահացնել:

**immortelle** [imɔ:'tel] n *բոս.* անմեռուկ,  
անթառամ:

**immovable** [i'mu:vəbl] a անշարժ, չշարժ-  
վող. անասան, կայուն:

**immovables** [i'mu:vəblz] n *pl* անշարժ  
գույք:

**immune** [i'mju:n] a անխոցելի. *բժշկ.* անըն-  
կալուկ, իմունիտետ ունեցող. ~ from small-  
pox ծաղիկ հիվանդության նկատմամբ  
անընկալունակ. ~ against attack *փխբ.*  
հարձակումից պաշտպանված. ~ from taxa-  
tion հարկերից ազատված:

**immunity** [i'mju:nəti] n անվարակելիու-  
թյուն, իմունիտետ. *իրավ.* անձեռնմխելիու-  
թյուն. diplomatic ~ դիվանագիտական ան-  
ձեռնմխելիություն. state ~ պետության ան-  
ձեռնմխելիություն:

**immunization** [i,mju:naɪ'zeɪʃn] n սրսկում.  
~ against smallpox սրսկումներ ծաղիկի դեմ:

**immunize** ['imju:naɪz] v սրսկել. ~ against  
cholera խոլերայի դեմ սրսկել:

**immutable** [i'mju:təbl] a անփոփոխ, ան-  
փոփոխելի. անխախտ. ~ law անխախտ  
օրենք:

**imp** [ɪmp] n սատանի ճուտ. a little ~ *խսկց.*  
չարածճի երեխա:

**impact** ['ɪmpækt] n հարված, զարկ. ընդհա-  
րում. բախում. հետք, դրոշմ. *փխբ.* ազդե-  
ցություն. at the moment of ~ բախման պա-  
հին: reel from the ~ of the blow հարվածից  
երերալ. have a great ~ մեծ ազդեցություն  
ունենալ. the ~ of new ideas նոր գաղա-  
փարների ազդեցությունը:

**impair** [ɪm'peə] v թուլանալ, թուլացնել.  
վնասել, վատանալ. His sight is ~ed Տես-  
ողությունը վատացել է. visually ~ed person  
վատ/թույլ տեսողություն ունեցող մարդ. His  
health was ~ed by overwork Գերժանրա-

բեռնվածությունը վնասել է նրա առողջու-  
թյանը. be ~ed by սահմանափակվել:

**impalpable** [ɪm'pælpəbl] a անշոշափելի,  
աննշմարելի. աննկատելի:

**impart** [ɪm'pɑ:t] v տալ, բաժին հանել. հա-  
ղորդել. ~ news/secret նորություն/զաղտնիք  
հաղորդել:

**impartial** [ɪm'pɑ:ʃl] a անաչառ, անկողմնա-  
կալ. ~ judgment անաչառ դատավճիռ:

**impartiality** [ɪm'pɑ:ʃi'æləti] n անաչառու-  
թյուն, անկողմնակալություն:

**impassable** [ɪm'pɑ:səbl] a անանցանելի.  
The roads are ~ in spring Գարնանը ճանա-  
պարհները անանցանելի են:

**impasse** [æm'pɑ:s] n փակուղի. *փխբ.* անե-  
լանելի կացություն. Talks have reached an ~  
Բանակցությունները փակուղու մեջ են:

**impassive** [ɪm'pæsi:v] a հանդարտ. անկիրք,  
անվրդով. անզգա, անզգայուն:

**impassible** [ɪm'pæsi:bl] a անզգա, անտար-  
բեր, անկարեկից. անխռով, սառնասիրտ:

**impassioned** [ɪm'pæʃnd] a կրքոտ, կրա-  
կոտ:

**impatience** [ɪm'peɪʃns] n անհամբերություն:

**impatient** [ɪm'peɪʃnt] a անհամբեր. grow/get  
~ անհամբերություն ցուցաբերել. be ~ with  
old people անհանդուրժող լինել հասակա-  
վորների նկատմամբ. be ~ of interruption  
տանել չկարողանալ միջամտությունը:

**impeach** [ɪm'pi:tʃ] v անվստահություն  
հայտնել. կասկածի ենթարկել, մեղադրել.  
~ for taking bribes կաշառք վերցնելու մեջ  
մեղադրել. ~ smn's honesty կասկածի տակ  
առնել մեկի ազնվությունը. պետական  
հանցանքի մեղադրանք ներկայացնել:

**impeachment** [ɪm'pi:tʃmənt] n կասկած,  
անվստահություն. պետական պաշտոնյա-  
լին պատասխանատվության ենթարկելու  
ընթացակարգ:

**impeccable** [ɪm'pekəbl] a անբասիր:

**impede** [ɪm'pi:d] v խանգարել, խոչընդոտ  
հարուցել, խափանել. ~ the progress խոչըն-  
դոտել/խանգարել առաջընթացը:

**impediment** [ɪm'pedɪmənt] n խոչընդոտ,  
արգելք. ~ in speech լեզվի արատ:

**impedimental** [ɪm'pedɪ'mentl] a խանգա-  
րիչ, արգելակող, խոչընդոտ հանդիսացող:

**impel** [ɪm'pel] v դրդել, ստիպել. I feel ~led to  
say Ստիպված եմ ասել:

**impellent** [im'pelənt] 1. n շարժիչ ուժ. 2. a դրդիչ, շարժիչ:

**impend** [im'pend] v վրա հասնել, սպառնալ:

**impending** [im'pendiŋ] a վերահաս, մոտալուտ, սպառնացող. ~ elections մոտալուտ ընտրությունները. ~ retirement վերահաս պաշտոնաթողությունը:

**impenetrable** [im'penitrəbl] a անթափանցելի, անանցանելի. անմատչելի. an ~ forest անանցանելի անտառ. ~ darkness անթափանց մթություն. an ~ expression *փխբ.* անըմբռնելի արտահայտություն:

**impenitent** [im'penitənt] a չզղջացող. be quite ~ ոչ մի բանի համար չզղջալ:

**imperative** [im'perətiv] n հրամայական, հրամայող. անհետաձգելի, ստիպողական. It is ~ to start now Սկսելը հրամայական /անհետաձգելի/խիստ անհրաժեշտ է. *հմկրգ.* ~ language իմպերատիվ լեզու:

**imperceptible** [im'pə'septəbl] a աննշմարելի, աննկատելի, աննշան:

**imperfect** [im'pə:fikt] a անկատար, թերի, թերակատար, պակասավոր. ~ goods փչացած ապրանք. ~ reproduction թերի պատճենավորում. ~ vision վատ տեսողություն:

**imperfection** [im'pə'fekʃn] n անկատարություն, թերություն:

**imperial** [im'piəriəl] n կայսերական, գերագույն. վեհապանծ, վսեմ:

**imperial** [im'perəl] v վտանգի ենթարկել. ~ the expedition արշավը վտանգի ենթարկել:

**imperious** [im'piəriəs] a տիրական, հրամայական:

**imperishable** [im'periʃəbl] a ամխորտակելի, ամխախտ. մշտենցնական:

**impermeable** [im'pə:miəbl] a անթափանցելի, անթափանց:

**impermissible** [im'pə'misəbl] a անթույլատրելի:

**impersonal** [im'pə:snl] a անդեմ (*նաև քեր.*) անկողմնակալ, անաչառ:

**impersonate** [im'pə:səneit] v անձնավորել, մարմնավորել. դեր խաղալ/կատարել:

**impersonation** [im,pə:sə'neiʃn] n անձնավորում, մարմնավորում. do/be/ a good ~ հաջող անձնավորում/մնամակում:

**impertinence** [im'pə:tinəns] n հանդգնություն, անպատկառություն. What ~! Ի՞նչ հանդգնություն:

**impertinent** [im'pə:tinənt] a հանդուգն, անպատկառ, լպիրշ. be ~ to smn իրեն հանդուգն պահել որևէ մեկի հանդեպ. an ~ fellow անպատկառ/անամոթ անձ:

**imperturbability** [im'pətə:bə'biləti] n հանգստություն, անխռովություն:

**imperturbable** [im'pə'tə:bəbl] a անվրդով, հանգիստ, անխռով:

**impervious** [im'pə:vɪəs] a անթափանցելի, անանցանելի. ~ to argument համոզման չենթարկվող. ~ to water անջրաթափանցիկ. ~ to criticism *փխբ.* քննադատությունից չազդվող:

**impetuosity** [im,petju'səti] n սրընթացություն, արագընթացություն:

**impetuous** [im'petʃuəs] a սրընթաց, բուռն, պոռթկուն. an ~ nature բռնկվող բնավորություն. ~ remarks անմտածված դիտողություններ:

**impetus** [im'pɪtəs] n շարժիչ ուժ. խթան, ազդակ. give an ~ խթան հանդիսանալ. put fresh ~ նոր թափ հաղորդել:

**impiety** [im'paiəti] n անբարեպաշտություն. անհարգալից վերաբերմունք:

**impinge** [im'piŋdʒ] v զարկվել, ընդհարվել. ոտնձգություն անել:

**impish** [im'piʃ] a չարաճճի:

**implacability** [im,plækə'biləti] n անողորություն, անզթություն:

**implacable** [im'plækəbl] a անողոր. անզուր, անհաշտ. an ~ enemy անողոր թշնամի:

**implant** [im'plɑ:nt] v տնկել. *փխբ.* ներդնել, արմատավորել. ~ doubts in smb's minds կասկած զգել մեկի միտքը. The idea was ~ed in his head Այդ միտքը ամուր ցստել էր նրա գլխում:

**implantation** [im'plɑ:n'teiʃn] n տնկում. արմատավորում. տարածում:

**implement** [im'plɪmənt] n գործիքներ, պիտույք, սարք:

**implement** [im'plɪmənt] v կատարել, իրագործել. ~ a promise/an agreement խոստում կատարել. համաձայնագիրը իրագործել. ~ a policy քաղաքականություն իրականացնել:

**implementation** [im'plɪmənt'eiʃn] n կատարում, իրականացում, իրագործում. ~ procedure կատարման կարգ/ընթացակարգ. ~ schedule կատարման ժամանակացույց:

**implementing** [im'plɪməntɪŋ] a իրակա-

նացնող, կիրարկող. ~ regulation/rules կիրարկելու հրահանգ. կիրարկման կանոններ:

**implicate** [ˈimplikeɪt] v ներգրավել, մասնակից դարձնել. be ~d in մասնակից լինել. be ~d in the scandal սկանդալին/կռվին մասնակից լինել. He tried to ~ others նա փորձում էր այլ մարդկանց մասնակից դարձնել:

**implication** [ˌɪmpliˈkeɪʃn] n մասնակցություն, առնչություն. ենթադրություն. ներիմաստ, ենթիմաստ. by ~ ենթադրաբար. By ~ of law օրենքից բխող հետևանքնորով:

**implicit** [ɪmˈplɪsɪt] a ենթադրվող, թաքնված. բնագրական. անբացատրելի, անուղղակի. ~ faith/obedience կույր հավատ. անվերապահ/անխոս հնազանդություն. be ~ ենթադրվել. ~ confidence լրիվ վստահություն:

**implore** [ɪmˈplɔː] v աղաչել, աղերսել. ~ for help/ to come օգնություն աղերսել. խնդրել գալ:

**impl/y** [ɪmˈplai] v ենթադրել, ակնարկել. նկատի ունենալ. What do you ~ by that ? Ի՞նչ եք ուզում դրանով ասել. He ~ied that he was unhappy նա հասկացրեց, որ դժբախտ է:

**implied** [ɪmˈplaɪd] a ենթադրվող, կանխավարկածի վրա հիմնված. ~right/terms/condition ենթադրվող իրավունք/պայմաններ/պայման:

**impolite** [ˌɪmpəˈlaɪt] a անքաղաքավարի, անկիրթ, կոպիտ:

**imponderable** [ɪmˈpɒndərəbəl] 1. a անկշռելի, անկշիռ. ծանրակշիռ: 2. n ~s հաշվի առնվող գործոններ:

**import** [ˈɪmpɔːt] n ներմուծում. ~s ներմուծվող ապրանքներ. chief ~s ներմուծվող հիմնական ապրանքները. ~ duty/license ներմուծման հարկ/թույլատրագիր. ~ trade ներմուծվող ապրանքների առևտուր. ~ quota ներմուծման բաժին/չափ. ~ restrictions ներմուծման սահմանափակումներ:

**import** [ɪmˈpɔːt] v ներմուծել:

**importance** [ɪmˈpɔːtɪns] n նշանակություն, կարևորություն. be of ~ կարևոր լինել. a person of ~ կարևոր/ազդեցիկ անձնավորություն. a matter of ~ կարևոր հարց. of special/primary/vital ~ հատուկ/առաջնահերթ/ կենսական կարևորություն. attach/no ~ to կարևորություն տալ. ոչ մի կարևորություն չտալ.

**important** [ɪmˈpɔːtɪnt] a կարևոր, նշանա-

կալից/եական. ~ person/fact/document/news կարևոր անձ/փաստ/փաստաթուղթ/նորություն:

**importation** [ˌɪmpɔːˈteɪʃn] n ներմուծում, ներմուծելը:

**importunate** [ɪmˈpɔːtʃunət] a համառ, անբեռն/կաշուն/ծանձրացուցիչ:

**importune** [ˌɪmpəˈtʃuːn] v խնդրաքննելով ծանձրացնել, գլուխը տանել:

**importunity** [ˌɪmpəˈtʃuːnətɪ] n պնդերեսություն. աներեսություն:

**impose** [ɪmˈpəʊz] v վրան դնել, պարտադրել. հարկադրել, ստիպել. ~ a tax on tobacco ծխախոտի վրա հարկ դնել. ~ some burden on smb որևէ մեկի վրա բեռ դնել. ~ an obligation պարտավորություններ սահմանել. ~ oneself on smb մեկի վզին փաթաթվել/կաշել:

**imposing** [ɪmˈpəʊzɪŋ] a խիստ տպավորիչ, ազդեցիկ, պատկառելի. an ~ figure պատկառելի դեմք:

**imposition** [ˌɪmpəˈzɪʃn] n հարկ, հարկ դնելը. հարկադրում. the ~ of a new tax նոր հարկ դնելը. ~ of penalty պատիժ/տուգանք դնելը. unfair ~ անարդարություն. It would be an ~ for you Դա անարդարություն կլիներ քո նկատմամբ:

**impossibility** [ɪmˌpɒsəˈbɪlətɪ] n անհնարիմություն, անկարելիություն. a sheer ~ բացարձակ անհնարիմություն. ~ to reach an agreement համաձայնության գալու/հասնելու անհնարիմությունը:

**impossible** [ɪmˈpɒsəbəl] 1. a անհնարին, անկարելի. next to ~ համարյա անհնարին. an ~ situation խսկ. անտանելի իրավիճակ. You're ~ ! Դու անտանելի ես. 2. n անհնարին/անկարելի բան. Don't ask the ~ of me Ինձնից անկարելի մի պահանջիր:

**impostor** [ɪmˈpɒstə] n ինքնակոչ մարդ., խաբեբա, սրիկա. He's just an ~ նա պարզապես խաբեբա/սրիկա է:

**imposture** [ɪmˈpɒstʃə] n խաբեբայություն, խարդախություն:

**impotent** [ˈɪmpətənt] a անզոր, թույլ. *բժշկ.* սեռականապես անկարող, իմպոտենտ:

**impotence** [ˈɪmpətəns] n անզորություն, թուլություն. *բժշկ.* սեռական անկարողություն, անկարողություն, իմպոտենտություն:

**impoverish** [ɪmˈpɒvəriʃ] v աղքատացնել, աղքատության հասցնել. be ~ed by heavy

taxation ծանր հարկերից քայքայվել. ~ the soil հողը ուժասպառ անել. The language is ~ing Լեզուն աղքատանում է:

**impoverished** [im'pɒvəriʃt] a աղքատության հասցրած:

**impracticable** [im'præktikəbl] a անհրազորելի, ոչ պիտանի. անանցանելի (ճանապարհ):

**impractical** [im'præktikl] a անգործնական, ոչ պիտանի:

**impregnability** [im,pregnə'biləti] n անմատչելիություն, անխոցելիություն:

**impregnant** [im'pregnənt] a անառիկ, անմատչելի. *փխբ.* անխոցելի:

**impregnate** ['impregneit] v բեղնավորել. տոգորել, հագեցնել. [ցնել. ~ with oil յուղ ծծեցնել:

**impresario** [,impre'sa:riəu] n *թատր.* ձեռնարկու, իմպրեսարիո:

**impress** ['impres] n կնիք, դրոշմ (*նակ փխբ.*):

**impress** [im'pres] v կնքել, դրոշմել. տպավորել, տպավորություն գործել. ներշնչել. ~ favourably/unfavourably բարենպաստ/անբարենպաստ տպավորություն թողնել. The film ~ed me very much Ֆիլմը ինձ վրա մեծ տպավորություն գործեց. be greatly/deeply, profoundly ~ed ուժեղ/խոր տպավորության տակ լինել. (հասկացնել) I must ~ on you ես ուզում եմ քեզ հասկացնել. I tried to ~ on you Փորձում էի քեզ հասկացնել:

**impressible** [im'presəbl] a տպավորվող, դյուրագգաց, զգայուն:

**impression** [im'preʃn] n կնիք, դրոշմվածք. an ~ in wax դրոշմվածք մոմի վրա/մոմից. (հրատարակություն) first/second ~ առաջին/երկրորդ հրատարակություն. (տպավորություն, ընկալում) profound/vivid/false/fleeting/sharp ~ խորը/վառ/սխալ/թռուցիկ/ուժեղ տպավորություն. auditive/visual ~ լսողական/տեսողական ընկալում. make/produce an ~ տպավորություն գործել. under the ~ տպավորության տակ, convey the ~ տպավորություն ստեղծել/թողնել:

**impressionable** [im'preʃnəbl] a տպավորվող, դյուրագգաց. Some people are very ~ Որոշ մարդիկ շատ դյուրագգաց են:

**impressionism** [im'preʃ(ə)niz(ə)m] n *արվ.* իմպրեսիոնիզմ:

**impressionist** [im'preʃnɪst] n իմպրեսիո-

նիստ, իմպրեսիոնիզմի ներկայացուցիչ:

**impressive** [im'presiv] a տպավորիչ, արտահայտիչ, ազդու:

**imprint** ['imprint] n դրոշմ, կնիք. դրոշմահատոց, շտամպ. publisher's/printer's ~ *տպգր.* հրատարակման տեղեկություններ (գրքի և այլն վրա):

**imprint** [im'print] v կնքել, դրոշմել, տպել. հետք թողնել, տպավորել. These words are ~ed in my memory Այս բառերը դրոշմվել են իմ հիշողության մեջ:

**imprison** [im'prɪzn] v բանտարկել, ազատազրկել:

**imprisonment** [im'prɪznmənt] n բանտարկություն. life ~ ցմահ բանտարկություն, term of ~ ազատազրկման ժամկետ. be sentenced to ~ բանտարկության դատավճիռ կայացնել. long-term/short-term ~ երկարատև/կարճատև ազատազրկում:

**improbability** [im,prɒbə'biləti] n անհավանականություն:

**improbable** [im'prɒbəbl] a անհավանական, անհավատալի:

**impromptu** [im'prɒmptju:] 1. n էքսպրոմտ. հանպատրաստից ստեղծագործում 2. a հանկարծակի հորինած, հանպատրաստից ստեղծած. 3. adv հանպատրաստից:

**improper** [im'prɒpə] a անիմաստ, ոչ տեղին. անվայել, անպատշաճ. սխալ, անճիշտ. an ~ remark ոչ տեղին դիտողություն. ~ behaviour անպատշաճ վարք/վարմունք. ~ stories անպատշաճ անեկդոտներ/պատմություններ. ~ purpose վատ նպատակ:

**impropriety** [,imprə'praɪəti] n անճշտություն, անպատշաճություն:

**improvable** [im'pru:vəbl] a բարելավելի, կատարելագործելի:

**improve** [im'pru:v] v բարելավ(վ)ել, կատարելագործ(վ)ել. ~ conditions/relations/knowledge/quality հարաբերությունները/գիտելիքը զարգացնել. պայմանները/որակը բարելավել. ~ one's mind միտքը/ուղեղը զարգացնել. ~ in health առողջությունը վերականգնել. The book ~s on reading Այս գիրքը ավելի ու ավելի հետաքրքիր է դառնում. You can ~ on that Դու կարող ես դա ավելի լավ անել:

**improvement** [im'pru:vmənt] n բարելավում, լավացում, կատարելագործում. great/marked/further/constant ~ խոշոր/նկատելի/հե-

տազա/հաստատուն բարելավում. ~ of the living standard կենսամակարդակի բարելավում. ~s on the house տան որոշ վերակառուցում. There is still room for ~ Բայց դեռ ավելի լավ կարելի է անել:

**improvident** [im'prɒvɪdənt] a անկանխատես, անշրջահայաց. վատնող, շռայլ:

**improvisation** [ˌɪmprəvaɪ'zeɪʃn] n իմպրովիզացիա:

**improvise** ['ɪmprəvaɪz] v հանպատրաստից ստեղծագործել, հորինել. ձեռաց պատրաստել. ~ on the piano դաշնամուրի վրա հանպատրաստից հորինել. ~ a lunch ձեռաց ճաշ պատրաստել:

**improviser** ['ɪmprəvaɪzə] n հանպատրաստից ստեղծագործող/հորինող. իմպրովիզատոր:

**imprudence** [ɪm'pruːdəns] n անխիտեմություն, անզուշուրություն:

**imprudent** [ɪm'pruːdənt] a անխիտեմ, անզուշուր:

**impudence** ['ɪmpjʊdəns] n հանդնգնություն, անպատկառություն. լրբություն. have the ~ to say հանդնգնություն ունենալ ասելու:

**impudent** ['ɪmpjʊdənt] a հանդուգն անպատկառ լկտի:

**impulse** ['ɪmpʌls] n ներքին մղում, ազդակ դրդիչ, խթան. իմպուլս. His first ~ was to run երա առաջին մղումը/միտքը փախչելն էր. act on ~ ներքին մղման ազդեցության տակ գործել. ~ buying չնախատեսված գնումներ. be seized by ~ ներքին մղումից դրդված. ~ sales միանգամից վաճառք. irresistible ~ անդիմադրելի մղում. control an ~ ներքին մղումը զսպել:

**impulsive** [ɪm'pʌlsɪv] a ներքին մղման, խթանային, բռնկուն, իմպուլսիվ:

**impunity** [ɪm'pjʊːnəti] n անպատիժ մնալը. անպատժելիություն:

**impure** [ɪm'pjʊə] a անմաքուր, կեղտոտ, պիղծ. խառը, խառնուրդով. ~ water աղտոտված ջուր. an ~ breed ոչ մաքուր/ազնիվ տեսակ/ցեղ. ~ thought անվայել/անպատշաճ մտքեր. *հմկրգ.* ~ data փոփոխվող տվյալներ:

**impurity** [ɪm'pjʊəriti] n անմաքրություն. կեղտ, խառնուրդ. ~ ies in food/metals խառնուրդներ սննդամթերքի/մետաղների մեջ:

**imputation** [ˌɪmpju'teɪʃn] n մեղադրանք,

բիծ, ստվեր. The article contained ~s Յոդվածում մեղադրանքներ կային:

**impute** [ɪm'pjʊːt] v վերագրել, մեղադրել. ~ smth to smb մեկին մի բան վերագրել:

**in** [ɪn] 1. prep մեջ, մեջում. ներս, ներսում. ~ hospital/the forest/ the corner/the street հիվանդանոցում/անտառում/անկյունում/փողոցում. in the book/dictionary գրքի մեջ, բառարանում. ~ science գիտության մեջ. (ժամանակ) ~ the morning/evening առավոտյան, երեկոյան. ~ May/the past/the thirties/the next week մայիսին/անցյալում/ երեսնականներին/հաջորդ շաբաթ. ~ a week մեկ շաբաթ հետո. ~ an hour մեկ ժամվա ընթացքում. day ~ day out օրեցօր. ~ camera դռնփակ. ~ chambers դատավորի սենյակում. ~ office պաշտոնում. ~ power իշխանության գլուխ. (վիճակ) ~ danger/distress/need/silence/tears վտանգի/դժբախտության//կարիքի մեջ. լռությամբ. լացակումած. ~ black/silk սև/ մետաքսյա զգեստով. ~ pencil/ink մատիտով/ թանաքով. (շարժում դեպի ներս) go/ come/ call/get ~ ներս գնալ/մտնել/կանչել/մտնել. (տեղ) ~ Africa/the USA/Armenia Աֆրիկայում/ԱՄՆ-ում/Յայաստանում. ~ order կարգին. ~ this way այս ձևով. ~ the distance հեռվում. one ~ ten տասից մեկը. ~ turn հերթով. ~ doubt կասկածել. be ~ տանը/տեղում լինել. She is not ~ Տանը/Տեղում չի. Not ~ yet Դեռ չի եկել. keep smn ~ թույլ չտալ դուրս գալ, ներսում պահել. spend the evening ~ երեկոն տանը անցկացնել. be ~ on the secret զաղտնիքին տեղյակ լինել. Long skirts are ~ երկար փեշը մոդայիկ է. Strawberries are ~ Ելակը դուրս է եկել. ~ a few words մի քանի բառով. I'm all ~ Լրիվ հալից ընկել եմ. be ~ for be ~ for a job պաշտոնի թեկնածու լինել be ~ for a hard time ծանր ժամանակների սպասել. 2. n pl all the ~s and outs of the problem խնդրի բոլոր մանրուքները/նրբությունները:

**in** [ɪn] a ակտուալ, հրատապ, ներկա It's an ~ subject just now *խսկց.* Դա հիմա մոդայիկ թեմա է:

**in** [ɪn] adv ներսում, ներս. ~ and out ներս ու դուրս. Is the boss ~ Շեֆը տեղում է. He is not ~ ես տեղում չէ (*նաև* տանը չէ). The post isn't ~ yet Փոստային առաքումները դեռ չեն եկել:

**inability** [ˌɪnə'biləti] n անկարողություն, ան-

ընդունակություն. ~ to read/to count կարողալու/ հաշվելու անկարողություն, չկարողանալը:

**inaccessibility** [ˌɪnəkseɪˈbɪləti] n անմատչելիություն, անհասանելիություն:

**inaccessible** [ˌɪnəkˈsɛsəbl̩] a անմատչելի, անմերձենալի, անհասանելի:

**inaccuracy** [ɪnˈækjərəsi] n անճշտություն, սխալ:

**inaccurate** [ɪnˈækjərət] a ոչ ճիշտ, սխալ, ոչ դիպուկ:

**inaction** [ɪnˈækʃn] n անգործունեություն, անշարժություն:

**inactive** [ɪnˈæktɪv] a անգործունյա, ոչ գործուն. ծուլ, անտարբեր. I hate to be ~ չեմ սիրում անգործ մատել. an ~ volcano չգործող հրաբուխ:

**inactivity** [ˌɪnækˈtɪvəti] n անգործություն, անտարբերություն:

**inadequacy** [ɪnˈædɪkwəsi] n անհամապատասխանություն, անբավարարություն, պակասություն:

**inadequate** [ɪnˈædɪkwət] a անհամապատասխան. անբավարար, անհամարժեք. The measures are ~ Այս միջոցները բավարար/ադեկվատ չեն. feel ~ as a mother իրեն անգործ զգալ որպես մայր. ~ for the job աշխատանքին չհամապատասխանել. an ~ excuse անհամոզիչ պատրվակ:

**inadmissible** [ˌɪnədˈmɪsəbl̩] a անընդունելի, անհանդուրժելի. անթույլատրելի. ~ evidence *հրավ.* անընդունելի ապացույց:

**inadvertence** [ˌɪnədˈvɜːtəns] n անուշադրություն, անփութություն, անհոգություն, վրիպում. due to ~ անփութության պատճառով:

**inadvertent** [ˌɪnədˈvɜːtənt] a անուշադիր, անհոգ, անփույթ:

**inadvertently** [ˌɪnədˈvɜːtəntli] adv ոչ դիտավորյալ, առանց դիտավորության:

**inalterable** [ɪnˈɒltərəbl̩] a անփոփոխ, անփոփոխելի:

**inalienable** [ɪnˈeɪliənəbl̩] a անբաժանելի, անկապտելի, անօտարելի. ~ right *հրավ.* անկապտելի իրավունք:

**inane** [ɪˈneɪn] n դատարկ, անբովանդակ. an ~ remark դատարկ/հիմար դիտողություն:

**inanimate** [ɪnˈænimət] a անշունչ, ոչ շնչավոր, անկենդան. ~ matter անշունչ/ անկենդան նյութ:

**inanimation** [ɪnˌæniˈmeɪʃn] n անկենդանություն:

**inanity** [ɪˈnænəti] n դատարկություն, անմտություն, անհիմաստություն:

**inapplicable** [ˌɪnəˈplɪkəbl̩] a ոչ կիրառելի. ~ to the present case տվյալ դեպքի համար ոչ կիրառելի. This item is ~ to you Այս կետը ձեզ չի վերաբերում:

**inappreciation** [ˌɪnəˈpriːʃiˈeɪʃn] n թերագնահատում:

**inapprehensible** [ˌɪnæpriˈhensəbl̩] a անըմբռնելի, անհասկանալի:

**inapproachable** [ˌɪnəˈprəʊtʃəbl̩] a անհասանելի, անմերձենալի.

**inappropriate** [ˌɪnəˈprəʊpriət] a անհամապատասխան, անհարմար. ~ dress անհամապատասխան հագուստ. ~ word անհամապատասխան բառ:

**inapt** [ɪnˈæpt] a անհմուտ, անընդունակ:

**inaptitude** [ɪnˈæptɪtjuːd] n անընդունակություն, անկարողություն:

**inarticulate** [ˌɪnɑːˈtɪkjʊlət] a անհողաբաշխ. լուռ. ~ noises անհողաբաշխ ձայներ. He is a bit ~ *փխբ.* Նա չի կարողանում իր մտքերը արտահայտել. be ~ with rage կատաղությունից շնչահեղձ լինել:

**inartistic** [ˌɪnɑːˈtɪstɪk] a ոչ գեղարվեստական. be ~ գեղարվեստական ճաշակ չունենալ:

**inasmuch as** [ˌɪnəzˈmʌtʃəz] adv քանի որ, նկատի ունենալով, որ:

**inattention** [ˌɪnəˈtenʃn] n անուշադրություն, անուշադիր լինելը. ~ to detail անուշադրություն մանրուքների նկատմամբ:

**inattentive** [ˌɪnəˈtɛntɪv] a անուշադիր:

**inaudible** [ɪnˈɔːdəbl̩] a անլսելի. be almost ~ հազիվ լսելի լինել:

**inaugural** [ɪˈnɔːgjurəl] a ներածական, սկզբի, առաջին. ~ lecture/address ներածական դասախոսություն /ճառ. ~ flight առաջին թռիչք:

**inaugurate** [ɪˈnɔːgjureɪt] v հանդիսավոր կերպով պաշտոնի մեջ հաստատել. ~ reforms/a president բարեփոխումներ մտցնել. պրեզիդենտին պաշտոնում հաստատել:

**inauguration** [ɪˈnɔːgʒəˈreɪʃn] n ինագուրացիա, հանդիսավոր բացում. I~ Day ԱՄՆ-ի պրեզիդենտի պաշտոնը ստանձնելու օրը. պաշտոնի հանդիսավոր ստանձնում:

նում:  
**inauspicious** [ˌɪnɔːˈspiːʃəs] a անբարեն-  
 նպաստ, վատ, չարագուշակ:  
**inborn** [ˌɪnˈbɔːn] a բնածին, բնական:  
**inbox** [ˌɪnˈbɒks] n *հմկրգ.* մուտքի արկղ:  
**inbred** [ˌɪnˈbred] a բնածին, բնական:  
**incalculable** [ɪnˈkælkjʊləbəl] a անհաշվելի,  
 անհաշիվ, անթիվ. ~ losses անհաշվելի կո-  
 րուստներ. ~ damage հսկայական վնաս:  
**incandesce** [ˌɪnkæˈdes] v շիկանալ, շիկաց-  
 նել:  
**incandescence** [ˌɪnkæˈdesns] n շիկացում,  
 հրաշեկություն:  
**incandescent** [ˌɪnkæˈdesnt] a շիկացած,  
 հրաշեկ, լուսաշեկ:  
**incapability** [ˌɪnkəˈpæɪtɪ] n անընդունա-  
 կություն:  
**incapable** [ɪnˈkeɪpəbəl] a անընդունակ, ան-  
 կարող. չլիազորված. be ~ to lie ստելու ան-  
 ընդունակ:  
**incapacitate** [ˌɪnkəˈpæɪsɪteɪt] v անընդու-  
 նակ/ անպետք դարձնել. The accident ~d him  
 for work Դժբախտ պատահարի պատճառով  
 նա դարձավ անաշխատունակ:  
**incapacity** [ˌɪnkəˈpæɪtɪ] n անընդունակու-  
 թյուն, անկարողություն partial ~ մասնակի  
 անզորունակություն:  
**incarnate** [ɪnˈkɑːnət] a մարմնացած. մարմ-  
 նավորված:  
**incarnate** [ˈɪnkɑːneɪt] v մարմնացնել, մարմ-  
 նավորել. He is a devil ~ Նա սատանայի  
 մարմնացում է:  
**incarnation** [ˌɪnkɑːˈneɪʃn] n մարմնացում,  
 մարմնավորում, ինկարնացիա:  
**incendiary** [ɪnˈsendiəri] n հրձիգ. *փխբ.*  
 սադրիչ, սադրող, դրդող:  
**incense** [ˈɪnsens] n խունկ. *փխբ.* շողջորթու-  
 թյուն. խնկարկում:  
**incense** [ˈɪnsens] v բարկացնել, զայրացնել.  
 His obstinacy ~d me Նրա համառությունը ինձ  
 զայրացրեց:  
**incentive** [ɪnˈsentɪv] 1. n դրդապատճառ,  
 դրդում. խթանող պատճառ, խթան. 2. a  
 դրդիչ. an ~ to work hard ջանասեր աշխատե-  
 լու դրդապատճառ:  
**incertitude** [ɪnˈsɜːtɪtjuːd] n անվստահու-  
 թյուն, անորոշություն:  
**incessant** [ɪnˈsesnt] a անընդհատ, անդա-  
 դար. ~ complaints/rain անընդհատ բողբո-

նեղ. անվերջ/անդադար անձրև:  
**incest** [ˈɪnsest] n արյունապղծություն:  
**inch** [ɪntʃ] n մատնաչափ. an ~ and a half մե-  
 կուկես մատնաչափ. every ~ ամբողջու-  
 թյամբ. every ~ a man/a soldier իսկական  
 տղամարդ/զինվոր. ~ by ~, by ~es աստիճա-  
 նաբար, հետզհետե. move forward ~ by ~  
 քիչ-քիչ առաջ գնալ. not to yield an ~ ոչ մի  
 զիջում չանել:  
**inch** [ɪntʃ] v (*նաև* ~ one's way) դանդաղ, կա-  
 մաց-կամաց շարժվել. ~ ~ along դանդաղ  
 բայց հաստատուն հաջողության հասնել:  
**inchoate** [ɪnˈkəʊət] a չվերջացրած, չա-  
 վարտված, ~ right ձևավորվող իրավունք:  
**incidence** [ˈɪnsɪdəns] n ընդգրկում, ազդե-  
 ցության ոլորտ. The ~ is increasing Ազդեցու-  
 թյան ոլորտը մեծանում/լայնանում է:  
**incident** [ˈɪnsɪdənt] n դեպք, անցք, պատա-  
 հար. unpleasant/strange ~ տհաճ/տարօրինակ  
 պատահար. without ~ առանց պատահարի.  
 daily ~s օրվա պատահարները. (միջադեպ)  
 frontier ~ սահմանային միջադեպ. lead to an  
 ~ միջադեպի հասցնել/բերել:  
**incidental** [ˌɪnsɪˈdentl] a պատահական.  
 կողմնակի, ոչ էական. լրացուցիչ. an ~ meet-  
 ing պատահական հանդիպում. ~ expenses  
 կողմնակի/լրացուցիչ ծախսեր. ~ music to a  
 film *կինո.* կինոֆիլմի երաժշտություն. prob-  
 lems ~ to adolescence դեռահասների պրոբ-  
 լեմները:  
**incinerate** [ɪnˈsɪnəreɪt] v այրել, մոխրացնել,  
 մոխիր դարձնել:  
**incinerator** [ɪnˈsɪnəreɪtə] n աղբակեզ վա-  
 ռարան:  
**incipient** [ɪnˈsɪpiənt] a սկսվող, սկիզբ առ-  
 նող, սկզբնական. the ~ rebellion սկսվող  
 ապստամբություն:  
**incise** [ɪnˈsaɪz] v երեսանց ճեղքել. թեթև  
 կտրվածք անել:  
**incision** [ɪnˈsɪʒn] n կտրվածք. կտրում,  
 կտրված տեղ. make an ~ կտրվածք անել:  
**incisive** [ɪnˈsaɪsɪv] a սուր, խայթող, կծու. an ~  
 mind սուր, խորաթափանց միտք:  
**incisor** [ɪnˈsaɪzə] n կտրիչ ատամ:  
**incite** [ɪnˈsaɪt] v գրգռել, դրդել, հրահրել.  
 խթանել:  
**incitement** [ɪnˈsaɪtmənt] n դրդում, հրա-  
 հրում, խթանում. դրդապատճառ, շարժա-  
 ղիթ, խթան:



**incivility** [ˌɪnsəˈvɪləti] n անքաղաքավարություն:

**inclement** [ɪnˈkleɪmənt] a խիստ, սառը, ցուրտ. ~ weather ցուրտ/թխպոտ եղանակ:

**inclinable** [ɪnˈklaɪnəbl] a հակված, տրամադիր:

**inclination** [ɪnˈkliːneɪʃn] n թեքություն. թեքում, թեքվածք. հակում, հակվածություն. ցանկություն, տրամադրվածություն. մագնիսական սլաքի շեղում. the ~ of the roof տանիքի թեքությունը. the ~ of the head գլխի շարժում (հավանության մշան). have/no ~ հակված լինել/չլինել. my first ~ իմ առաջին միտքը/ցանկությունը. follow one's ~ իր հակումներին/ցանկություններին հետևել:

**incline** [ɪnˈklaɪn] n թեք(վ)ել, խոնարհ(վ)ել  
The road ~s here ճանապարհը թեքվում է այստեղ. ~ one's head/body գլուխը/մարմինը թեքել. be/feel ~d to հակված լինել որևէ բանի. half ~d համարյա համոզված. be ~d to get colds/tiredness շուտ մրսելու/հոգնելու հակում ունենալ. (ստիպել) ~ smb to think ստիպել մտածել. The news ~s me to change my mind Այդ լուրը ստիպում է ինձ միտքս փոխել:

**include** [ɪnˈkluːd] v ներառել, բովանդակել. պարունակել. մտցնել. the programme ~s ծրագիրը ներ է առնում. her duties ~ նրա պարտականությունների մեջ է մտնում. The charge is ~d Վարձը մտցված է (ներ է առնված) ~ on the list ցուցակի մեջ մտցնել:

**including** [ɪnˈkluːdɪŋ] prep ներառյալ. նույն թվում, նույն թվում մաս. everybody ~ The granny բոլորը, ներառյալ տատիկը. up to and ~ tenth of September մինչև սեպտեմբերի տասը ներառյալ:

**inclusion** [ɪnˈkluːʒn] n ներառում, ներփակում:

**inclusive** [ɪnˈkluːsɪv] a ներառյալ, ներփակող, պարունակող. The terms are ~ Ամեն ինչ մտնում է գնի մեջ:

**incognito** [ɪnˈkɒɡnɪtəʊ] 1. n ծպտվածություն, ծպտյալ անձ. 2. adv ծպտյալ, գաղտնի:

**incognizable** [ˌɪnkɒɡˈniːzəbl] a անիմանալի, անճանաչելի:

**incoherence** [ˌɪnkəʊˈhiərəns] n կցկտուրություն, անկապություն, անհետևողականություն:

**incoherent** [ˌɪnkəʊˈhiərənt] a անկապ. կցկտուր, անհետևողական. The lecture was ~ Դասախոսությունը կցկտուր էր. ~ account անկապ պատմություն:

**incombustible** [ˌɪnkəmˈbʌstəbl] a անկիզելի, չայրվող, հրակայուն:

**income** [ˈɪnkʌm] n եկամուտ. annual/gross/net/steady/national ~ տարեկան/համախառն/մաքուր/մշտական, հաստատուն/ազգային եկամուտ. He can't live on his ~ Եկամուտը չի բավարարում ապրուստին. live beyond one's ~ շռայլ ապրել. ունեցածից ավելի ծախսել. total ~ համախառն եկամուտ. ~ tax եկամտահարկ. average ~ միջին եկամուտ. fixed ~ մշտական եկամուտ: incoming message *հմկրգ*. ստացվող հաղորդագրություն:

**incommensurable** [ˌɪnkəˈmenʃərəbl] a անհամաչափ, անհամաչափելի, անհամապատասխան:

**incommensurate** [ˌɪnkəˈmenʃərət] a անհամաչափ, անհամաչափելի. անհամապատասխան, անչափակից:

**incommod** [ˌɪnkəˈmɒd] v անհանգստացնել, նեղություն պատճառել. խանգարել:

**incommunicable** [ˌɪnkəˈmjʊːnikəbl] a անհաղորդելի, անպատմելի, անասելի:

**incommunicative** [ˌɪnkəˈmjʊːnikətɪv] a անհաղորդասեր, անմարդամտ, ինքնամփոփ:

**incomparable** [ɪnˈkɒmpərəbl] a անմնան, անօրինակ. անզուգական:

**incompatible** [ˌɪnkəmˈpætəbl] a անհամատեղելի. They are ~ Նրանք լրիվ տարբեր մարդիկ են, անհամատեղելի են. activities ~ with անհամատեղելի գործունեություն:

**incompetence** [ɪnˈkɒmpɪtəns] n անիրագելություն. անձեռնհասություն. gross ~ աղաղակող անիրագելություն:

**incompetent** [ɪnˈkɒmpɪtənt] a անիրագել, անհմուտ. *իրավ*. անիրավունակ, անիրավահասու. an ~ mechanic վատ/անշնորհք մեխանիկ. She is so ~ Ոչ մի բանի ընդունակ չի/շնորհք չունի:

**incomplete** [ˌɪnkəmˈpliːt] a պակաս, թերի, ոչ լրիվ. անավարտ, անկատար, թերակատար. an ~ answer ոչ լրիվ պատասխան. ~ knowledge թերի գիտելիքներ:

**incomprehensible** [ɪnˌkɒmpriˈhensəbl] a անհասկանալի, անըմբռնելի. an ~ message

անհասկանալի հաղորդում The lecture was quite ~ Դասախոսությունը լրիվ անհասկանալի էր:

**incomputable** [ˌɪnkəmˈpju:təbl] a անհաշվելի, անթիվ, անհամար:

**inconceivable** [ˌɪnkənˈsi:vəbl] a անընթացելի, աներևակայելի. *խսկց.* անհավատալի:

**inconclusive** [ˌɪnkənˈklu:sɪv] a անհամոզիչ, ոչ վճռական/վերջնական. ~ arguments/evidence անհամոզիչ փաստարկներ. անբավարար ապացույցներ. The investigation was ~ Գետաքննությունը ոչ մի որոշակի արդյունք չտվեց:

**incongruity** [ˌɪnkəŋˈɡru:əti] n անհամապատասխանություն, անհամատեղելիություն, անտեղիություն:

**incongruous** [ɪnˈkɒŋɡruəs] a անհամապատասխան, անհամատեղելի, անհեթեթ. an ~ place to meet հանդիպման համար անհամապատասխան վայր. It seems ~ Անհեթեթ է թվում:

**inconsecutive** [ˌɪnkənˈsekjʊtɪv] a անհետևողական:

**inconsequence** [ɪnˈkɒnsɪkwəns] n անհետևողականություն:

**inconsequent** [ɪnˈkɒnsɪkwənt] a անհետևողական, անտրամաբանական:

**inconsiderable** [ˌɪnkənˈsɪdərəbl] a աննշան, չնչին, ոչ էական:

**inconsiderate** [ˌɪnkənˈsɪdərət] a անուշադիր, չնտածված, անխոհեմ. ~ to smn անուշադիր մեկի նկատմամբ:

**inconsistence** [ˌɪnkənˈsɪstəns] n անհետևողականություն. անհամատեղություն. ~ in the article հակասություններ հոդվածում:

**inconsistent** [ˌɪnkənˈsɪstənt] a անհետևողական, հակասական ~ data հակասական փաստեր/տեղեկություններ ~ arguments հակասական փաստարկներ. an ~ time անհարմար ժամանակ. a very ~ work անկայուն աշխատանք:

**inconsolable** [ˌɪnkənˈsəʊləbl] a անմխիթարելի, անսփոփելի:

**inconspicuous** [ˌɪnkənˈspɪkjʊəs] a աննկատելի, աննշմարելի, աչքի չընկնող. ~ against the dark աննշմարելի մութ ֆոնի վրա:

**inconstant** [ɪnˈkɒnstənt] a փոփոխական, անկայուն:

**incontestable** [ˌɪnkənˈtestəbl] a անվիճելի,

անառարկելի, անվիճարկելի:

**incontinence** [ɪnˈkɒntɪnəns] n անժուժկալություն, անզսպություն:

**incontrovertible** [ˌɪnkɒntrəˈvɜ:təbl] a անհերքելի, անառարկելի.

**inconvenience** [ˌɪnkənˈvi:niəns] n անհարմարություն put to /cause ~ նեղություն պատճառել. It's a great ~ Դա մեծ անհարմարություն է:

**inconvenient** [ˌɪnkənˈvi:niənt] a անհարմար, դժվարին. անախորժ. անպատշաճ. an ~ time անհարմար/անպատշաճ ժամանակ:

**inconvincible** [ˌɪnkənˈvɪnsəbl] a չհամոզվող, համոզման չենթարկվող:

**incorporate** [ɪnˈkɔ:pəreɪt] a միացյալ, միավորված:

**incorporate** [ɪnˈkɔ:pəreɪt] v միանալ, միացնել. անդամ ընդունել, կազմի մեջ ընդունել. *իրավ.* որպես իրավաբանական անձ գրանցել:

**incorporation** [ɪnˈkɔ:pəˈreɪʃn] n միավորում, միություն:

**incorporeal** [ˌɪnkɔ:ˈpɔ:riəl] a աննյութական, անմարմին, անիրեղեն:

**incorrect** [ˌɪnkəˈrekt] a անճիշտ, սխալ. an ~ answer ոչ ճիշտ/սխալ պատասխան. ~ behaviour անքաղաքավարի վարվելակերպ:

**incorrigible** [ɪnˈkɒrɪdʒəbl] a անուղղելի. an ~ liar անուղղելի ստախոս. an ~ smoker մոլի/թունդ ծխող. You're ~ *խսկց.* Դու պարզապես անուղղելի ես:

**incorruptible** [ˌɪnkəˈrʌptəbl] a անկաշառ, անկաշառելի:

**increase** [ˈɪnkri:s] n աճ, աճում. marked/sharp/steady/slight/sudden ~ նկատելի/կտրուկ/հաստատուն/աննշան/հանկարծակի աճ. ~ in prices/wages/population զների/աշխատավարձի/բնակչության աճ be on the ~ աճել. Crime is on the ~ Գանցագործությունն աճում է:

**increase** [ɪnˈkri:s] v աճել, մեծանալ, ավելանալ, բարձրանալ. ~ speed արագությունը ավելացնել. ~ cost/size/quantity/value ինքնարժեքը/չափսերը/քանակը/արժեքը բարձրացնել. My weight has ~d Քաշս ավելացել է:

**increasing** [ɪnˈkri:ɪŋ] a աճող, ավելացող. հարաճուն, ուժեղացող:

**incredibility** [ɪnˈkredəˈbɪləti] n անհավատալի/անհավանական լինելը. անհավանականություն:

**incredible** [in'kredəbl] a անհավատալի, անհավանական. to an ~ degree անհավանականության աստիճանի:

**incredulity** [,inkrə'dju:ləti] n անվստահություն, կասկածամտություն ~ in/with անվստահությամբ, կասկածամտորեն:

**incredulous** [in'kredjʊləs] a կասկածոտ, կասկածամիտ, թերահավատ:

**increment** ['inkrɪmənt] n աճ, շահ, շահույթ. աճում, մեծացում, ավելացում. an ~ in salary աշխատավարձի աճ. an ~ of ավելացում:

**incriminate** [in'krɪmɪneɪt] v *իրավ.* մեղադրել, վնասել. ~ an offense հանցանքի/օրինազանցության մեջ մեղադրել. The evidence might ~ him Ցուցմունքը կարող էր նրան վնասել:

**incriminatory** [in'krɪmɪnətəri] a մեղադրական:

**incrustation** [,ɪnkrʌs'teɪʃn] n ներդրված, դրվածազարդ:

**incubate** ['ɪnkjubeɪt] v թուխս նստել, ճուտ հանել. աճեցնել, բազմացնել:

**incubation** [,ɪnkju'beɪʃn] n թուխս նստելը, ճուտ հանելը. *բժշկ.* ինկուբացիոն շրջան:

**incubator** ['ɪnkjubeɪtə] n թխսահան/ճտահան մեքենա, ինկուբատոր:

**inculcate** ['ɪnkʌlkeɪt] v մտքում տպավորել. հաղորդել, ներշնչել. ~ ideas in smb մտքեր. գաղափարներ ներշնչել:

**incumbent** [ɪn'kʌmbənt] a ճնշող, ծանրացող. պարտադիր. It is ~ upon me/on you Իմ պարտքն է, ձեր պարտքն է:

**incunabula** [,ɪnkju'næbjʊlə] n ծնունդ, սկզբնավորում, զարգացման վաղ շրջան:

**incur** [ɪn'kʌ:] v առաջացնել, առաջ բերել. պարտքի տակ ընկնել, պարտքեր անել. ~ wrath/displeasure իր նկատմամբ զայրույթ/դժգոհություն հարուցել/առաջացնել. (վնաս կրել) ~ heavy losses ծանր/մեծ կորուստներ կրել. ~ debts պարտքեր անել. ~ a penalty տուգանքի ենթարկվել:

**incurable** [ɪn'kjʊərəbəl] n անբուժելի. անուղղելի. ~ disease անբուժելի հիվանդություն. ~ optimist անուղղելի լավատես:

**incurred** [ɪn'kʌ:vd] a զոգավոր, դեպի ներս կորացած:

**indebted** [ɪn'detid] a պարտքերի մեջ ընկած. պարտական, երախտապարտ. be ~ for smth որևէ բանի համար երախտապարտ

[ինել. eternally ~ հավերժ երախտապարտ:

**indecent** [ɪn'di:snsɪ] n անպատշաճություն, անպարկեշտություն:

**indecent** [ɪn'di:snt] a անպարկեշտ, անվայել. անպատշաճ. ~ language հայիոյանքներ. ~ behaviour անպարկեշտ վարքագիծ:

**indecipherable** [,ɪndi'saɪfərəbəl] a անվերծանելի. an ~ code անվերծանելի ծածկագիր. ~ hand writing անընթեռնելի ձեռագիր.

**indecision** [,ɪndi'si:ʒn] n անվճռականություն:

**indecisive** [,ɪndi'saɪsɪv] a անվճռական. տատանվող. անորոշ. չվճռված. an ~ answer անորոշ պատասխան. His manner was ~ Նա իրեն անվճռական էր պահում. ~ evidence անհամոզիչ ապացույց. The battle was ~ ճակատամարտը վճռորոշ չէր:

**indeclinable** [,ɪndi'klaɪnəbəl] a *քեր.* չիոլով, չթեքվող:

**indecorous** [ɪn'dekərəs] a անպատշաճ, անբարեվայելուչ. անվայել. անճաշակ:

**indeed** [ɪn'di:d] 1. adv իսկապես. իրոք. He was ~ a remarkable man Նա իրոք հրաշալի մարդ էր. It is very kind ~ Դա իսկապես մեծ բարեհաճություն է. 2. int Ի~ ? Մի՞թե:

**indefatigable** [,ɪndi'fætɪgəbəl] a անխոնջ, չհոգնող:

**indefeasible** [,ɪndi'fi:zəbəl] a անխախտելի, անխորտակելի:

**indefensible** [,ɪndi'fensəbəl] a անպաշտպան. պաշտպանության համար ոչ պիտանի:

**indefinable** [,ɪndi'faɪnəbəl] a անորոշելի. an ~ charm անորոշելի հմայք:

**indefinite** [ɪn'defənaɪt] a անորոշ, անսահմանափակ. He was very ~ about it Նա ոչ մի որոշակի բան չասեց այդ մասին. ~ article *քեր.* անորոշ հոդ:

**indefinitely** [ɪn'defənətli] adv It can go on ~ Դա կարող է անվերջ շարունակվել. postpone ~ անորոշ ժամանակով հետաձգել:

**indelible** [ɪn'deləbəl] a չվազցվող, չմաքրվող. *փխք.* անջնջելի, անմոռանալի. an ~ impression անջնջելի տպավորություն. ~ shame չմաքրվող խայտառակություն. ~ pencils/ink քիմիական մատիտ/թանաք:

**indelicate** [ɪn'delɪkəsi] n աննրբանկատություն, անտակտություն:

**indelicate** [ɪn'delɪkət] a աննրբանկատ, ան-

տակտ:  
**indemnity** [in'demnti] *n* *հրավ.* հատուցում, փոխհատուցում. հատուցման երաշխավորություն. *զգմ.* ռազմատուգանք:  
**indent** [in'dent] *v* ատամնաձև կտրվածք անել. *an* ~ed coastline կտրտված ափագիծ. (պահանջագիր/պատվեր ներկայացնել) ~ for goods ապրանքի պատվեր անել. ~ the first line *տպգր.* առաջին տողը պարբերությունից սկսել:  
**indention** [in'denʃn] *n* *տպգր., հմկրգ.* ներսի տողազուլիս:  
**independence** [,indi'pendəns] *n* անկախություն, ինքնուրույնություն:  
**independent** [,indi'pendənt] *a* անկախ. ինքնուրույն. ~ country/state անկախ երկիր/իշխանություն (ինքնուրույն). ~ opinion/action/organization ինքնուրույն կարծիք/գործողություն/կազմակերպություն:  
**indescribable** [,indi'skraibəbl] *a* աննկարագրելի:  
**indestructible** [,indi'strʌktəbl] *a* անխորտակելի, անխախտելի:  
**indeterminable** [,indi'tə:miənbəl] *a* անորոշելի:  
**indeterminate** [,indi'tə:miənt] *a* անորոշ, անպարզ. չվճռված:  
**indetermination** ['indi,tə:mi'neiʃn] *n* անորոշություն, անպարզություն:  
**index** ['indeks] *n* ինդեքս, դասիչ, ցուցիչ. ցուցանիշ. սլաք. ~ map կադաստր. ~ number դասիչ, հերթական համար. ~ finger ցուցամատ. price ~ գների ցուցակ:  
**index** ['indeks] *v* ցանկ/ցուցակ կազմել. ցանկի/ցուցակի մեջ մտցնել. ~ a word բառը ցանկի մեջ մտցնել. *հմկրգ.* ինդեքսավորում. ~ error ինդեքսավորման սխալ. ~ list ինդեքսների ցուցակ. ~ addressing ինդեքսային հասցեավորում:  
**Indian** ['indiən] *n* հնդիկ, հնդկացի. կարմրամորթ. Red ~ ամերիկյան կարմրամորթ հնդկացի. *in* ~ file *փխք.* շարան-շարան, շարքով. *an* ~ summer ուշ ամառ:  
**indiarubber** [,indiə'rʌbə] *n* կաուչուկ. ռետին (ջնջելու):  
**indicate** ['indikeit] *v* նշել, մատնանշել. ցույց տալ. ~ temperature/pressure ցույց տալ ջերմաստիճանը/ճնշումը. He ~d that... Նա մատնանշեց, որ... (վկայել) ~ an operation

վկայել վիրահատության մասին. These figures ~ Այս թվերը վկայում են. The needle ~s speed Սլաքը արագություն է ցույց տալիս. ~d on the map քարտեզի վրա նշված:  
**indicated** ['indikeitid] *a* *տեխ.* գործիքների ցույց տված:  
**indication** [,indi'keiʃn] *n* նշում, ցուցում, ցուցմունք. *բժշկ.* նշան. ախտանիշ. հատկանիշ. ~of change փոփոխության նշաններ:  
**indicative** [in'dikətiv] *n* հատկանշական, բնորոշ. *be* ~ of smth որևէ բանի մասին վկայել. ~ mood *քեր.* սահմանական եղանակ:  
**indicator** ['indikeitə] *n* ցուցիչ, հաշվիչ, սլաք. The ~ is on Ցուցիչը միացրած է:  
**indicatory** [in'dikətəri] *a* ցուցական, նշող:  
**indict** [in'dait] *v* մեղադրանք ներկայացնել. մեղադրել. He was ~ed Նա մեղադրվեց:  
**indictable** [in'daitəbl] *a* *հրավ.* դատական հետապնդման ենթակա, *an* ~ offense քրեական հանցանք:  
**indictment** [in'daitmənt] *n* մեղադրական ակտ. The play is an ~ *փխք.* Ներկայացումը մեղադրանք է հանդիսանում. file an ~ մեղադրանք առաջադրել:  
**indifference** [in'difrəns] *n* անտարբերություն. show ~ անտարբերություն ցուցաբերել:  
**indifferent** [in'difrənt] *a* անտարբեր, անկարևոր, աննշան. միջակ. ~ look/audience/answer անտարբեր հայացք/հանդիսատես/պատասխան. *be* ~ to անտարբեր լինել. *be* ~ to danger վտանգը բանի տեղ չդնել/արիամարիել. It is ~ to me Ինձ համար նշանակություն չունի. *an* ~ pianist/actor միջակ դաշնակահար/դերասան:  
**indigence** ['indidzəns] *n* կարիք, աղքատություն, բացակայություն:  
**indigene** ['indidzi:n] *n* տեղացի, բնիկ:  
**indigenous** [in'didzənəs] *a* տեղական, բնիկ, բնածին:  
**indigested** [,indi'dʒestid] *a* չմարսված (կերակուր). *փխք.* լավ չմտածված, չյուրացված:  
**indigestible** [,indi'dʒestəbl] *a* անդյուրամարս, դժվարամարս:  
**indigestion** [,indi'dʒestʃən] *n* անմարսողություն, մարսողության խանգարում. a touch of ~ ստամոքսի թեթև խանգարում:  
**indignant** [in'dignənt] *a* վրդովված, զայրացած. *be* ~ with smb մեկի վրա զայրացած/վրդովված լինել. make smn ~ զայրացնել,

վրդովել. get ~ զայրանալ, վրդովվել:  
**indignantly** [inˈdignəntli] adv զայրությամբ, վրդովված:  
**indignation** [ˌɪndɪɡˈneɪʃn] n վրդովմունք, զայրությ. be full of ~ զայրությով լի. contain one's ~ զայրությը զսպել. arouse ~ զայրությ առաջացնել:  
**indignit/y** [ɪnˈdɪgnəti] n վիրավորանք, արհամարհանք. ստորացում. be subjected to ~ ies ստորացնել, արհամարհական վերաբերմունք ցույց տալ:  
**indirect** [ˌɪndəˈrekt] a անուղղակի, կողմնակի. շեղ, թեք, ոչ ուղիղ. an ~ answer/route խուսափողական պատասխան. զարտուղի ճանապարհ. ~ taxes/evidence կողմնակի հարկ. անուղղակի ապացույց. an ~ approach *փխք*. զարտուղի ճանապարհներ. *քեր*. ~ question անուղղակի հարց:  
**indirectly** [ˌɪndəˈrektli] adv անուղղակիորեն, անուղղակի կերպով. answer ~ խուսափողական պատասխան տալ. hear smth ~ տեղեկանալ ոչ անմիջական աղբյուրներից:  
**indiscernible** [ˌɪndɪˈsɜːnəbl] a աննկատելի, աննշմարելի:  
**indiscipline** [ɪnˈdɪsəplɪn] n անկարգապահություն, անկարգություն:  
**indiscreet** [ˌɪndɪˈskri:t] a անհամեստ, չմտածված, անզգույշ. an ~ remark անհամեստ/անխոհեմ ակնարկ:  
**indiscretion** [ˌɪndɪˈskreɪʃn] n անխոհեմություն, անզգուշություն. բերանբացություն. be sacked for ~ աշխատանքից հեռացնել բերանբացության համար:  
**indiscriminate** [ˌɪndɪˈskrɪmɪnət] a անպահանջկոտ, ընտրություն չկատարող, խտրություն չդնող. ~ reader ընտրություն չդնող ընթերցող, կարդալ ամեն ինչ առանց խտրության. ~ choice առանց խտրության ընտրել. ~ of friends ում հետ ասես ընկերություն անել. ~ weapons խառը զենք:  
**indiscriminately** [ˌɪndɪˈskrɪmɪnətli] adv առանց խտրականության. hit out ~ ուր ասես խփել. blame ~ ում ասես մեղադրել:  
**indispensable** [ˌɪndɪˈspensəbl] a անհրաժեշտ, անփոխարինելի. պարտադիր. Your presence is ~ Ձեր ներկայությունը անհրաժեշտ է/պարտադիր է:  
**indispose** [ˌɪndɪˈspəuz] v տկար/թույլ/հիվանդ վիճակում լինել. be ~d տկար լինել,

վատ զգալ. անտրամադիր լինել. be ~d to help հակված չլինել օգնել:  
**indisposition** [ˌɪndɪspəˈzɪʃn] n տկարություն, թուլություն, անտրամադիր լինելը:  
**indisputable** [ˌɪndɪˈspju:təbl] a անվիճարկելի, անվիճելի:  
**indissoluble** [ˌɪndɪˈsɒljubl] a անքակտելի, անխախտ. ~ contract անքակտելի պայմանագիր:  
**indistinct** [ˌɪndɪˈstɪŋkt] a անպարզ, անորոշ. անպարզահունչ. ~ muttering անպարզահունչ քրթմնջոց. ~ recollections աղոտ հիշողություններ:  
**indistinctive** [ˌɪndɪˈstɪŋktɪv] a ոչ բնորոշ/հատկանշական:  
**indistinguishable** [ˌɪndɪˈstɪŋɡwɪʃəbl] a անզանազանելի, աննշմարելի They are ~ from each other Նրանց անհնար է միմյանցից տարբերել:  
**individual** [ˌɪndɪˈvɪdʒuəl] n անհատ, անձ, անձնավորություն. ֆիզիկական անձ. *կենս.* առանձնյակ, անհատ. the role of the ~ անհատի դերը. the right of the ~ անհատի իրավունքները a cheerful ~ ուրախ մարդ. a strange-looking ~ տարօրինակ տեսքով մարդ:  
**individual** [ˌɪndɪˈvɪdʒuəl] a անհատական, անձնական. ~ style/manner/characteristics անհատական ոճ/վարվելաձև/առանձնահատկություններ. ~ attitude/attention անհատական մոտեցում/վերաբերմունք public ~ պաշտոնատար անձ. for ~ use անհատական օգտագործման համար. (առանձին, մասնակի) each ~ word/person/tree յուրաքանչյուր առանձին բառ/անհատ/ծառ:  
**individualist** [ˌɪndɪˈvɪdʒuəlɪst] n անհատապաշտ, ինդիվիդուալիստ:  
**individuality** [ˌɪndɪvɪdʒuˈælɪti] n անհատականություն:  
**indivisibility** [ˌɪndɪvɪzəˈbɪləti] n անբաժանելիություն:  
**indivisible** [ˌɪndɪˈvɪzəbl] n անբաժանելի, անսահման փոքր:  
**indocile** [ɪnˈdɔːsəɪl] a անհնազանդ, խոսք չլսող:  
**indoctrinate** [ɪnˈdɒktrɪneɪt] v ուսուցանել (որևէ տեսություն և այլն). ~ strange ideas տարօրինակ մտքեր ուսուցանել:  
**indolence** [ˈɪndələns] n ծուլություն, անզոր-ծություն:

**indolent** [ˈɪndələnt] a ծուլ, անգործ. *բժշկ.* ցավ չպատճառող, անցավ:  
**indomitable** [ɪnˈdɒmɪtəbl̩] a անսանձելի, անհաղթելի, համառ. ~ will անսանձելի/ համառ կամք. ~ courage անհաղթելի խիզախություն:  
**indoor** [ˌɪnˈdɔː] a ներսի, սենյակի. ~ games ներսի/սենյակային/փակ տարածքի խաղեր. ~ plants սենյակային բույսեր. ~ sport փակ/ ներսային մարզախաղեր/սպորտ. an ~ swimming pool փակ լողավազան:  
**indoors** [ˌɪnˈdɔːz] adv ներսը, շենքի/տան մեջ. stay ~ տանը մնալ, դուրս չգալ, The rain kept us ~ Անճրևի պատճառով տանից դուրս չեկանք:  
**indraught** [ˈɪndrɑːft] n ներհոս, ներհոսում:  
**indubitable** [ɪnˈdjuːbɪtəbl̩] a անկասկած, անտարակույս:  
**induce** [ɪnˈdjuːs] v դրդել, համոզել. ստիպել. That ~d me to Այդ բանը ինձ դրդեց. (խթանել, առաջացնել) ~ electricity էլեկտրականություն առաջացնել. ~ doubt/illness կասկած/ հիվանդություն առաջացնել. ~ labour *բժշկ.* ծննդաբերությանը խթանել. (հետևեցնել, արտածել) ~ the rule կանոն արտածել, հետևեցնել. ~ from given facts տրված փաստերի հիման վրա եզրակացնել:  
**inducement** [ɪnˈdjuːsmənt] n դրդում, դրդապատճառ, խթան. as an ~ to work որպես աշխատելու խթան:  
**indue** [ɪnˈdjuː] v օժտել, շնորհել:  
**indulge** [ɪnˈdʌldʒ] v երես տալ, ներողամիտ լինել. շփացնել. ~ the child/the child's whims (երեխային) երես տալ. խրախուսել (երեխայի) բոլոր քմահաճույքները. ~ in a long lie on Sundays կիրակի օրերը իրեն թույլ տալ երկար պառկել. ~ too much չափից ավելի տարվել (խմիչքով):  
**indulgence** [ɪnˈdʌldʒəns] n ներողամտություն. երես տալը. treat smn with ~ ներողամտաբար վերաբերվել մեկին. Sweets are my one ~ Քաղցրեղենը իմ միակ բավականությունն է:  
**indulgent** [ɪnˈdʌldʒənt] a ներողամիտ, զիջող, հանդուրժող. երես տվող. ~ parents ներողամիտ ծնողներ. an ~ boss զիջող պետ. an ~ husband երես տվող ամուսին:  
**industrial** [ɪnˈdʌstriəl] n արդյունաբերական. արտադրական. ~ district, estate/exhibi-

tion/goods/output արդյունաբերական շրջան, /ցուցահանդես/ապրանքներ/թողարկում. ~ relations աշխատանքային հարաբերություններ. ~ training/insurance արտադրական ուսուցում/ապահովագրում. an ~ accident դժբախտ պատահար արդյունաբերության մեջ:

**industrialist** [ɪnˈdʌstriəlɪst] n արդյունաբերող (մարդ):

**industrious** [ɪnˈdʌstriəs] a աշխատասեր, ջանասեր:

**industry** [ˈɪndəstri] n արդյունաբերություն. basic/heavy ~ ծանր արդյունաբերություն. branch of ~ արդյունաբերության ճյուղ. domestic, handicraft ~ տնայնագործություն. key ~ առաջատար արդյունաբերություն. home ~ հայրենական արդյունաբերություն. light ~ թեթև արդյունաբերություն. cottage industries արհեստներ:

**inebriate** [ɪˈniːbrɪət] 1. n հարբեցող, զինեմուլ. 2. a հարբած, խմած:

**inedible** [ɪnˈedəbl̩] a ուտելու համար անպետք/ ոչ պիտանի:

**ineffable** [ɪnˈefəbl̩] a անասելի, անպատմելի:

**ineffaceable** [ˌɪniˈfeɪsəbl̩] a անջնջելի, անմոռանալի:

**ineffective** [ˌɪniˈfektɪv] a անարդյունավետ. չներգործող, անօգուտ. անընդունակ. an ~ person անընդունակ/անշնորհք մարդ. ~ measures անօգուտ, անարդյունավետ միջոցներ:

**ineffectual** [ˌɪniˈfektʃʊəl] a ապարդյուն, անհետևանք:

**inefficiency** [ˌɪniˈfɪʃnsi] n անընդունակություն, անկարողություն. անհմտություն:

**inefficient** [ˌɪniˈfɪʃnt] a ապարդյուն. անհետևանք. անարդյունավետ. ~ methods անարդյունավետ մեթոդներ. ~ machines վատ աշխատող սարքեր/մեքենաներ:

**ineligible** [ɪnˈelɪdʒəbl̩] a անհամապատասխան. ոչ պիտանի. ընտրելու իրավունք չունեցող. He is ~ to vote Նա ընտրելու իրավունք չունի. ~ for unemployment գործազրկության նպաստի իրավունք չունենալ:

**inept** [ɪˈnept] a անհարմար, անպատեհ, հիմար:

**ineptitude** [ɪˈneptɪtjuːd] n անպատեհություն, հիմարություն:

**inequality** [ini'kwɒləti] n անհավասարություն, անկայունություն. social inequalities սոցիալական անհավասարություն:

**inequilateral** [in,i:kwi'lætrəl] a անհավասարակողմ:

**ineradicable** [i'ni'rædikəbl] a անջնջելի, խորը արմատավորված:

**inert** [i'nɜ:t] a ալարկոտ, դանդաղաշարժ. անգործունյա, անտարբեր. ~ gases *քիմ.* իներտ գազեր. lay ~ անշարժ պառկել:

**inertia** [i'nɜ:ʃə] n *ֆիզ.* իներցիա, իներցիայի ուժ:

**inertness** [i'nɜ:tnəs] n իներտություն, անգործունեություն, անտարբերություն:

**inessential** [i'ni'senʃl] a անէական. the ~s անէական մանրուքներ/մանրամասներ:

**inescapable** [i'ni'skeipəbl] a անխուսափելի:

**inestimable** [in'estiməbl] a (*value of ~ value*) անզնահատելի:

**inevitability** [in,evitə'biləti] n անխուսափելիություն:

**inevitable** [in'evitəbl] a անխուսափելի. ~ conflict/argument/result անխուսափելի հակասություն/վեճ/արդյունք. an ~ scandal անխուսափելի սկանդալ. a tourist with his ~ camera զբոսաշրջիկը իր մշտական ֆոտոապարատով:

**inexact** [i'niɡ'zækt] a անճշգրիտ, անստույգ:

**inexactitude** [i'niɡ'zæktitju:d] n անճշգրտություն:

**inexcusable** [i'nik'skju:zəbl] a աններելի:

**inexhaustible** [i'niɡ'zɔ:stəbl] a անսպառ, անխոնջ. He's ~ նա հոգնել չգիտի. ~ supplies անսպառ պաշարներ. My patient is not ~ իմ համբերությունը սահման ունի/անվերջ է:

**inexorable** [in'eksəərəbl] a անզուք, անողոր.

**inexpedient** [i'nik'spi:diənt] a աննպատակահարմար., անհամապատասխան:

**inexpensive** [i'nik'spensiv] a ոչ թանկ, էժան:

**inexperience** [i'nik'spiəriəns] n անփորձություն, անհմտություն:

**inexperienced** [i'nik'spiəriənst] a անփորձ, փորձ չունեցող, an ~ typist/secretary անփորձ մեքենագրուհի/քարտուղարուհի:

**inexplicable** [i'nik'splikəbl] a անբացատրելի, անհասկանալի. an ~ situation անբացատրելի իրավիճակ. ~ confusion աներևա-

կայելի խառնաշփոթություն:

**inexpressible** [i'nik'spresəbl] a անարտահայտելի, աննկարագրելի. անպատմելի:

**inexpressive** [i'nik'spresiv] a անարտահայտիչ:

**inextinguishable** [i'nik'stingwiʃəbl] a անշեջ, անմար, անմարելի:

**inextricable** [i'nik'strikəbl] a բարդ, խճճված, անելանելի:

**infallibility** [in,fæls'biləti] n անսխալականություն, վստահելիություն:

**infallible** [in'fæləbl] a անսխալական, հուսալի, վստահելի. He thinks he's ~ նա իրեն անսխալական է համարում. an ~ argument/method/remedy անժխտելի/անհերքելի փաստարկ. հուսալի մեթոդ/միջոց. Nobody is ~ Ոչ ոք զերծ չէ սխալներից:

**infamous** ['infəməs] a խայտառակ, անպատիվ, անազնիվ. an ~ crime խայտառակ հանցանք:

**infamy** ['infəmi] n խայտառակություն. անարգ վարք, ստորություն:

**infancy** ['infənsi] n մանկություն. վաղ մանկական հասակ. *իրավ.* անչափահասություն. in ~ մանուկ հասակում. from ~ մանկությունից:

**infant** ['infənt] n, a մանուկ, երեխա. *իրավ.* անչափահաս. մանկական ~ mortality մանկական մահացություն:

**infantile** ['infəntail] a մանկական, թերզարգացած. ~ diseases/paralysis մանկական հիվանդություններ/կաթվածահարություն (պարալիչ):

**infantry** ['infəntri] 1. n հետևակ. 2. a հետևակի, հետևակային:

**infantryman** ['infəntrimən] n հետևակային:

**infatuate** [in'fætjueit] v գրավել, թովել, խելքը/միտքը տանել:

**infatuated** [in'fætjueitid] a հափշտակված. be ~ with jazz ջազով տարվել:

**infatuation** [in,fætju'eɪʃn] n իրապուրում, հափշտակում, սիրահարվածություն:

**infect** [in'fekt] v վարակել. ~ with flu գրիպով վարակել. ~ with enthusiasm *փխբ.* խանդավառությամբ վարակել. an ~ wound թարախակալած վերք:

**infectible** [in'fektəbl] a վարակման ենթակա:

**infection** [in'fekʃn] n վարակ, վարակում. բորբոքում. an ~ of the ear ականջի բորբոքում:

**infectious** [in'fekʃəs] a վարակիչ, տարափոխիկ. ~ diseases վարակիչ հիվանդություններ:

**infer** [in'fə:] v եզրակացնել. հետևեցնել. հանգել. ենթադրել, նկատի ունենալ. ~ from the remarks դիտողություններից եզրակացնել:

**inference** [ɪn'fɜːəns] n եզրակացություն, հետևություն:

**inferior** [in'fɪəriə] 1. n ստորադրյալ, ստորադաս անձ, ենթակա. ~ court առաջին ատյանի դատարան. 2. a ստորին, ստորադաս. an ~ position ստորին դիրք ~ in rank ատյանով/կարգով ցածր. feel ~ Շատ բաներում զիջել. ~ coffee ցածր որակի սուրճ. an ~ character բնավորության բացասական գծեր:

**inferiority** [in'fɪəri'θrəti] n ստորադասություն. ավելի ցածր դիրք/որակ. ~ complex հոգեբ. թերարժեքության բարդույթ:

**infernal** [in'fə:nl] a դժոխային, դիվային, սատանեկան:

**inferno** [in'fɜːnəu] n դժոխք, տարտարոս:

**infertile** [in'fɜːtaɪl] a անպտուղ, անպտղաբեր. անբերրի (հող):

**infest** [in'fest] v վխտալ, հեղեղել. նեղել, ծանծրացնել:

**infidelity** [ɪn'fɪ'deləti] n անհավատարմություն, դավաճանություն:

**infiltrate** [ɪn'fɪltreɪt] v ծծվել, ներծծվել, ներս թափանցել. ~ the enemy lines *փխք*. թշնամական ճակատ ներթափանցել:

**infiltration** [ɪn'fɪl'treɪʃn] n ներծծվելը. ներթափանցելը. *բժշկ.* ներկուտակում, ինֆիլտրացիա:

**infinite** [ɪn'fɪnət] 1. n the ~ անսահմանություն, անսահման տարածություն. 2. a անվերջ, անսահման. անթիվ, անհամար. ~ time/space/amount անսահման ժամանակ/տարածություն/քանակ. ~ gratitude անվերջ երախտագիտություն. ~ love անսահման սեր:

**infinitely** [ɪn'fɪnətli] adv անսահման, անվերջ. անչափ, անհունորեն:

**infinitesimal** [ɪn'fɪni'tesɪml] n *մաթ.* անվերջ փոքր մեծություն. անվերջ փոքր:

**infinitive** [in'fɪnətɪv] n *քեր.* անորոշ դերբայ, ինֆինիտիվ:

**infinity** [ɪn'fɪnəti] n անվերջություն. անսահմանություն. անհունություն:

**infirm** [in'fɜːm] a անուժ, թուլ. aged and ~ ծեր և անուժ:

**infirmity** [in'fɜːməri] n հիվանդանոց, անկելանոց:

**infirmary** [in'fɜːməti] n անուժություն, զանաժություն, թուլություն:

**inflamm** [in'fleɪm] v վառ(վ)ել, բոցավառ(վ)ել. *բժշկ.* բորբոքվել. ~d eyes բորբոքված աչքեր. ~d with anger *փխք*. զայրույթից բորբոքված:

**inflammable** [in'flæməbl] n դյուրավառ, բոցավառվող. *փխք.* դյուրագրգռ, բռնըկվող. an ~ situation լարված իրավիճակ/մթնոլորտ:

**inflammation** [ɪn'fɪn'meɪʃn] n *բժշկ.* բորբոքում:

**inflammatory** [ɪn'flæmətəri] a զրգռող, զրգռիչ. *բժշկ.* բորբոքային an ~ speech *փխք.* զրգռիչ ճառ:

**inflate** [ɪn'fleɪt] v փչել, ուռցնել. *փխք.* փքվել, գոռոզությամբ լցվել:

**inflated** [ɪn'fleɪtɪd] a փքված. ուռած. ~ with pride հպարտությունից փքված:

**inflation** [ɪn'fleɪʃn] n փքում. օդով/զազով լցնելը. *տնտ.* գնաճ. փողի արժեզրկում, ինֆլացիա:

**inflationary** [ɪn'fleɪʃnəri] a an ~ policy ինֆլացիայի քաղաքականություն:

**inflect** [ɪn'flekt] v *քեր.* թեթել, հոլովել. խոնարհել:

**inflected** [ɪn'flektɪd] a *քեր.* թեթական:

**inflexible** [ɪn'fleksəbl] a անթեթելի, անճկուն. *փխք.* աննկուն, անհողողող. an ~ will անկոտրում կամք. an ~ time-table/rule խիստ ժամատախտակ/կանոն. be ~ անկոտրում լինել:

**inflexion** [ɪn'flekʃn] n թեքում, ծալում, ծռում. *քեր.* թեքում. *երժշ.* ելևէջում:

**inflexional** [ɪn'flekʃnl] a *լեզվ.* թեթական. ~ languages թեթական լեզուներ:

**inflict** [ɪn'fɪkt] v հասցնել (վնաս, հարված), պատճառել(ցավ, վիշտ). ~ a penalty/damage պատժի ենթարկել, վնաս պատճառել. ~ one's views իր տեսակետը պարտադրել/վզին փաթաթել:



**inflow** [ˈɪnfloʊ] n, **influx** [ˈɪnflʌks] n ներհոսք, հորդում. ~ of capital կապիտալի ներհոսք, ~ of foreign exchange/tourists արտարժույթի/զբոսաշրջիկների ներհոսք. ~ and outflow ներհոսք և արտահոսք:

**influence** [ˈɪnfluəns] n ազդեցություն, ներգործություն. evil/dangerous/favourable/great ~ վատ, չար/վտանգավոր/բարենպաստ/մեծ, խոշոր ազդեցություն. have ~ ազդեցություն գործել. strengthen/reduce ~ ազդեցությունը ուժեղացնել/նվազեցնել, թուլացնել. fall under smb's ~ մեկի ազդեցության տակ ընկնել. a man of ~ ազդեցիկ մարդ. the ~ of example օրինակի ուժը:

**influence** [ˈɪnfluəns] v ազդել, ազդեցություն ունենալ, ներգործել. be easily ~d հեշտությամբ ազդեցության տակ ընկնել. He was ~d by Byron Բայրոնի պոեզիան ազդեցություն է գործել նրա ստեղծագործության վրա:

**influent** [ˈɪnfluənt] n, a վտակ. ներհոսող, թափվող, առհոսող:

**influential** [ˌɪnfluˈenʃl] a ազդեցիկ, ազդեցություն ունեցող. ~ groups ազդեցություն ունեցող խմբեր:

**influenza** [ˌɪnfluˈenzə] (*կրծ. flue*) գրիպ:

**inform** [ɪnˈfɔːm] v տեղեկացնել, հայտնել, հաղորդել. be ~ed իրազեկ դառնալ. be well ~ed լրիվ իրազեկ լինել/կուրսի մեջ լինել keep smn ~ed մեկին տեղյակ պահել. ~ against smb մեկին ամբաստանել/մատնել:

**informal** [ɪnˈfɔːml] a անպաշտոնական, ոչ պաշտոնական/ձևական. an ~ meeting/dinner/talk/atmosphere ոչ պաշտոնական հանդիպում/ճաշ/զրույց. անկաշկանդ/անբռնագրոսիկ մթնոլորտ. ~ dress առօրյա/ոչ պաշտոնական հագուստ. ~ speech խոսակցական լեզու:

**informant** [ɪnˈfɔːmənt] n տեղեկատու. լրատու. գաղտնի ամբաստանյալ:

**information** [ˌɪnfəˈmeɪʃn] n տեղեկություն, տեղեկատվություն. հաղորդում, լուր, նորություն. a piece of ~ հաղորդում, լուր. complete/useful/accurate/valuable/detailed ~ լրիվ. օգտակար/ճշգրիտ/արժեքավոր/մանրամասն տեղեկություն. furnish with ~ տեղեկություն տալ/մատակարարել. acquire ~ տեղեկություն ձեռք բերել/հավաքել. Statistical ~ վիճակագրական տեղեկություն. classified

~ *իրավ.* գաղտնի տեղեկություն. ~ desk/agency տեղեկատու գործակալություն. give/receive ~ տեղեկություն տալ/ստանալ. (տեղեկանք) apply for the ~ դիմել տեղեկանք ստանալու համար. a mine of ~ գիտելիքի շտեմարան. request for ~ տեղեկատվական հարցում. lodge ~ against smb *իրավ.* ամբաստանել մեկին. ~ science ինֆորմատիկա. հմկրգ. ~ area/bit/character/data base/generator ինֆորմացիոն տիրույթ/կարգ/սիմվոլ/տվյալների բազա/աղբյուր:

**informative** [ɪnˈfɔːmətɪv] a տեղեկատու, տեղեկատվական. ուսուցողական, բովանդակալից. an ~ article բովանդակալից հոդված. be very ~ շատ բան իմանալ/հաղորդել:

**informed** [ɪnˈfɔːmd] a տեղյակ, իրազեկ. գիտակ, հմուտ, փորձառու. ~ speaker փորձառու/բանհիմաց հռետոր:

**informer** [ɪnˈfɔːmə] n տեղեկություններ հաղորդող. մատնիչ, գաղտնի ամբաստանյալ:

**infra-red** [ˌɪnfɹəˈred] a ինֆրակարմիր. ~ rays ինֆրակարմիր ճառագայթներ:

**infrastructure** [ˈɪnfɹəˌstrʌktʃə] n ենթակառուցվածք:

**infrequent** [ɪnˈfriːkwənt] a հազվադեպ, սակավադեպ:

**infringe** [ɪnˈfrɪndʒ] v խախտել, դրժել. ~ on smb's rights մեկի իրավունքների նկատմամբ ոտնձգություններ անել/խոնահարել:

**infuriate** [ɪnˈfjuəriət] v կատաղեցնել. գազազեցնել. be ~d կատաղել, գազազել:

**infuse** [ɪnˈfjuːz] v ներարկել. *փխբ.* առաջացնել, ներշնչել. թրմել. ~ tea թեյ թրմել:

**infusion** [ɪnˈfjuːʒn] n ներարկում. *փխբ.* ներշնչում. թուրմ. թրմոց. an ~ of herbs/tea թեյի/խոտաբույսերի թրմոց/թուրմ:

**ingenious** [ɪnˈdʒiːniəs] a հնարագետ, հնարամիտ, սրամիտ. an ~ invention/solution խելացի գյուտ, հնարամիտ լուծում an ~ plan հնրամիտ/սրամիտ պլան/ծրագիր:

**ingenuity** [ˌɪndʒəˈnjuːəti] n հնարամտություն, հնարագիտություն, սրամտություն:

**ingenuous** [ɪnˈdʒenjuəs] a անխարդախ, պարզամիտ, անկեղծ:

**ingest** [ɪnˈdʒest] v կուլ տալ, կլանել:

**inglorious** [ɪnˈɡlɔːriəs] a անփառունակ:

**ingoing** [ˌɪnˈɡəʊɪŋ] n, a մուտք. մուտք գործող:

**ingraft** [ɪnˈgraːft] v *պս.* պատվաստել:

**ingrained** [ˌɪnˈɡreɪnd] a արմատացած, ներ-

թափանցած. deeply ~ habits խորը արմատացած սովորություններ. ~ honesty բնածին ազնվություն:

**ingrate** [ˈɪŋɡreɪt] n, a ապերախտ:

**ingratiating** [ɪnˈɡreɪtʃeɪtɪŋ] v ~ oneself with մեկի բարեհաճությունը շահել, հաճոյանալ:

**ingratitude** [ɪnˈɡrætɪtjuːd] n ապերախտություն:

**ingredient** [ɪnˈɡriːdiənt] n բաղադրատոմս:

**ingrowing** [ɪnˈɡrəʊɪŋ] a ներածող:

**inhabit** [ɪnˈhæbɪt] v ապրել, բնակվել, բնակեցնել. Who ~s the territory? Ո՞վ է բնակվում/բնակեցնում այս տարածքը. Fish ~s this lake Այս լճում ձուկ կա:

**inhabitant** [ɪnˈhæbɪtənt] n բնակիչ, բնակվող:

**inhabited** [ɪnˈhæbɪtɪd] a բնակեցված. an ~ region բնակեցված/մարդաբնակ շրջան. Is this castle ~? Այս ամրոցը բնակելի՞ է:

**inhabitation** [ɪnˌhæbɪˈteɪʃn] n բնակություն. բնակության վայր:

**inhalation** [ɪnˌhæˈleɪʃn] n ներշնչում, ներս շնչելը. բժշկ. ինհալացիա. (ծուխը) ներս քաշելը:

**inhale** [ɪnˈheɪl] v ներս շնչել. (ծուխը) ներս քաշել. ~ deeply խորը շունչ քաշել:

**inherent** [ɪnˈherənt] a հատուկ, ներհատուկ. ~ difficulties իրեն հատուկ բարդություններ/դժվարություններ. ~ defect բնորոշ (ներքին) թերություն. ~ rights անբաժանելի իրավունքներ:

**inherit** [ɪnˈherɪt] v ժառանգել. ~ fortune/land/property կարողություն/հող/ սեփականություն. right to ~ ժառանգելու իրավունք:

**inheritable** [ɪnˈherɪtəbəl] a ժառանգելի, ժառանգական:

**inheritance** [ɪnˈherɪtəns] n ժառանգություն. the right of ~ ժառանգության իրավունք. ~ of the past *փխբ.* անցյալի ժառանգություն. ~ law ժառանգության մասին օրենք:

**inherited** [ɪnˈherɪtɪd] a ժառանգական, բնատուր:

**inheritor** [ɪnˈherɪtə] n ժառանգ, ժառանգորդ:

**inhibit** [ɪnˈhɪbɪt] v խոչընդոտել. արգելել, կասեցնել. զսպել. His presence ~ed the discussion Նրա ներկայությունը խանգարում էր քննարկմանը:

**inhibition** [ɪnˌhɪˈbɪʃn] n արգելք, արգելում.

զսպում, զսպելը:

**inhospitable** [ɪnˌhɒsˈpɪtəbəl] a անհյուրընկալ, անհյուրասեր:

**inhospitality** [ɪnˌhɒsˈpɪtəlɪtɪ] n անհյուրընկալություն:

**inhuman** [ɪnˈhjuːmən] a անմարդկային, անգութ. ոչ մարդկային, մարդուն ոչ հատուկ. ~ treatment անմարդկային վերաբերմունք:

**inhumane** [ɪnˌhjuːˈmeɪn] a անմարդկային. անգութ:

**inimical** [ɪˈnɪmɪkəl] a թշնամական, անբարյացակամ. անբարենպաստ, վնասակար:

**inimitable** [ɪˈnɪmɪtəbəl] a անընդօրինակելի, անմնամ, անզուգական:

**iniquitous** [ɪˈnɪkwɪtəs] a անարդար, անօրեն, չար:

**iniquity** [ɪˈnɪkwəti] n անարդարություն, անօրենություն:

**initial** [ɪˈniʃl] n pl ~s սկզբնատառեր, ինիցիալներ:

**initial** [ɪˈniʃl] 1. a սկզբնական, նախնական. ~ period սկզբնական շրջան. ~ education նախնական/տարրական կրթություն. ~ attempts առաջին փորձեր. ~ capital նախնական/սկզբնական կապիտալ. the ~ stage մեկնակետ, ելման կետ. 2. v սկզբնատառեր դնել, սկզբնատառերով ստորագրել. ~ a document նախաստորագրել փաստաթուղթը:

**initialize** v նախակարգել:

**initially** [ɪˈniʃli] adv սկզբում:

**initiate** [ɪˈniʃieɪt] v ծեռնամուխ լինել. նախածեռնել. հիմնադրել. ~ a reform բարեփոխում մտցնել. ~ a new policy սկսել նոր քաղաքականություն վարել. ~ smb into a secret գաղտնիքին հաղորդակից դարձնել. ~ a discussion/a procedure քննարկում/դատավարություն սկսել. ~ proceedings against smb մեկի դեմ գործ հարուցել:

**initiative** [ɪˈniʃɪətɪv] 1. n նախածեռնություն. on one's own ~ սեփական նախածեռնությամբ. show ~ նախածեռնություն ցուցաբերել. take the ~ նախածեռնությունը իր ձեռքը վերցնել. 2. a սկզբնական, նախնական. նախածեռնող:

**inject** [ɪnˈdʒekt] v սրսկել, ներարկել. ~ with penicillin պենիցիլին սրսկել:

**injection** [ɪnˈdʒekʃn] n սրսկում, ներարկում. give an ~ /short սրսկել. undergo ~ սրսկվել. ~ against (cholera) սրսկում խլերայի դեմ:

**injudicious** [ˌɪndʒuˈdɪʃəs] a անխիտ, չմտածված:

**injunction** [ɪnˈdʒʌŋkʃən] n *հրավ.* դատական որոշում. interim ~ կասեցման որոշում. temporary ~ կասեցման ժամանակավոր որոշում:

**injure** [ˈɪndʒə] 1.v վնասել, վնաս հասցնել. փչացնել. վիրավորել, վիրավորանք հասցրնել. ~ one's knee/arm/hand ծունկը/թևը/գլուխը վնասել. ~ oneself վնասվել, վնասվածք ստանալ. ~ smb's pride/feelings մեկի հպարտությունը/զգացմունքները վիրավորել. an air of ~d innocence վիրավորված անմեղության տեսք ընդունել 2. n the ~d վիրավորները. the ~d party տուժած կողմը:

**injurious** [ɪnˈdʒʊəriəs] a ~ to վնասակար. սխալ, անարդար:

**injury** [ˈɪndʒəri] n վնաս, վնասվածք. accidental ~ վթարի հետևանքով ստացած վնասվածք. serious/personal, bodily/internal ~ լուրջ/մարմնական/ներքին վնասվածք. do ~ վնասվածք հասցնել. recover from an ~ վնասվածքը բուժել. receive an ~ վնասվածք ստանալ. meniscus ~ մենիսկային վնասվածք. fatal ~ մահացու վնասվածք. (վիրավորանք, անարդարություն) do smb an ~ վիրավորանք հասցնել. cause smb an ~ ցավ պատճառել. His words were an ~ Նրա խոսքերը վիրավորական էին:

**injustice** [ɪnˈdʒʌstɪs] n անարդարություն. social ~ սոցիալական անարդարություն. do smn an ~ մեկի հանդեպ անարդար լինել:

**ink** [ɪŋk] n թանաք. invisible/Indian/printer's ~ անզույն/զաղտնագրության թանաք. չինական տուշ, տպագրության ներկ. an ~ stain թանաքի բիծ:

**inkling** [ˈɪŋkɪŋ] n ակնարկ. թեթև կասկած. have no ~ հասկացություն/զաղափար չունենալ:

**ink-pot** [ˈɪŋkpɒt] n թանաքաման:

**inkstand** [ˈɪŋkstænd] n թանաքաման, գրասարք:

**ink-well** [ˈɪŋkwel] n թանաքաման՝ սեղանի/նստարանի վրա ամրացրած:

**inky** [ˈɪŋki] a թանաքոտ, թանաքոտած. թանաքի, թանաքային. սև, մեխմագույն:

**inlaid** [ˌɪnˈleɪd] a ներդրված, ներզարդած. an ~ floor մանրատախտակե հատակ:

**inland** [ˈɪnlænd] 1. n երկրի խորքը. 2. a ծովի

սահմաններից հեռու ընկած. ներսի, ներքին. ~ towns ծովափից հեռու գտնվող քաղաքներ. ~ sea ներքին ծով:

**inlay** [ˈɪnleɪ] n ներդրված, դրվագազարդ:

**in-laws** [ˈɪnlɔːz] n խնամհիներ:

**inlet** [ˈɪnlət] n խորշիկ, ծոցիկ. *տեխ.* ներթող անցք. ~ pipe ներթող խողովակ:

**inlying** [ˌɪnˈlaɪɪŋ] a ներքին, ներսում գտնվող:

**inmate** [ˈɪnmeɪt] n կենվոր, նույն տան մեջ ապրող բնակիչ. (հիվանդանոցում գտնվող) հիվանդ. *հրավ.* բանտարկյալ:

**inmost** [ˈɪnməʊst] a ամենահեռավոր, ամենախորքում գտնվող. ~ thoughts գաղտնի, նվիրական մտքեր:

**inn** [ɪn] n հյուրանոց, պանդոկ. ~s of court *հրավ.* փաստաբանների կոլեգիա (ՄԲ):

**innate** [ɪˈneɪt] a բնածին:

**inner** [ˈɪnə] a ներքին. ~ city *պտմ.* ներքին քաղաք. (հին քաղաք, քաղաքի հին մասը) ~ prejudices ներքին նախապաշարումներ:

**innkeeper** [ˈɪn,kiːpə] n պանդոկապան, հյուրանոցի տեր:

**innocence** [ˈɪnəsəns] n անմեղություն, պարզամտություն. *հրավ.* անհանցապարտություն. prove one's ~ ապացուցել իր անմեղությունը. in all ~ ոչ դիտավորյալ, առանց դիտավորության:

**innocent** [ˈɪnəsənt] n անմեղ, միամիտ, պարզամիտ, անմեղապարտ. ~ look/victims անմեղ հայացք. անմեղապարտ զոհեր. ~ of the crime հանցանքի հետ կապ չունենալ. declared ~ անմեղ հայտարարված. an ~young man անփորձ երիտասարդ:

**innocuous** [ɪˈnɒkjʊəs] a անվնաս, անվնասակար. an ~ drink թույլ խմիչք. an ~ remark անմեղ/միամիտ ակնարկ. ~ snake ոչ թունավոր օձ:

**innovate** [ɪˈnəʊveɪt] v նորություն/փոփոխություն մտցնել:

**innovation** [ˌɪnəʊˈveɪʃən] n նորամուծություն, նորարարություն. make ~s նորարարություն մտցնել/անել:

**innovator** [ˈɪnəveɪtə] n նորարար:

**innuendo** [ˌɪnjuˈendəʊ] n անուղղակի/թաքնված/կողմնակի ակնարկ:

**innumerable** [ɪˈnjuːməərəbl] a անհաշիվ, անթիվ, անհամար. ~ books/reasons/questions անթիվ գրքեր. անհամար պատճառներ/

հարցեր:  
**inobservance** [ˌɪnəb'zə:vəns] n անուշադրություն. արհամարհելը, չպահպանելը:  
**inoculate** [i'nɒkjuleɪt] v պատվաստել. ~ smb against smth որևէ բանի դեմ պատվաստել. *փխբ.* ներշնչել, սրսկել:  
**inoffensive** [i,nɒ'fensɪv] a չվիրավորող, ոչ վիրավորական, անմեղ, անվնաս:  
**inofficial** [ˌɪnə'fɪʃl] a ոչ պաշտոնական:  
**inoperable** [ɪn'ɒpərəbəl] *բժշկ.* վիրահատության չենթարկվող. անվիրահատելի:  
**inoperative** [ɪn'ɒpərətɪv] a չգործող:  
**inopportune** [ɪn'ɒpətjʊ:n] a անժամանակ. անպատեհ. come at an ~ moment անպատեհ ժամանակ գալ:  
**inordinate** [ɪn'ɔ:ɪnət] a չափազանց, չափից ավելի. անորոշ. ~ hours անորոշ ժամեր:  
**inorganic** [ˌɪnɔ:'gæɪnɪk] a անօրգանական:  
**in-patient** ['ɪnpaɪnt] n հիվանդանոցային/ստացիոնար հիվանդ:  
**input** ['ɪnpʊt] n մուտք, ներանցում. the ~ of information տեղեկության/ինֆորմացիայի մուտք. data ~ տվյալների ներանցում. labour ~ կատարված աշխատանքի քանակը. *հմկրգ.* input-output channel մուտքի-ելքի կանալ. ~ data/device/language մուտքային տվյալներ/սարք/լեզու:  
**inquest** ['ɪnkwɛst] n *իրավ.* քննություն, հետաքննություն:  
**inquietude** [ɪn'kwaiɪtjʊ:d] n անհանգստություն:  
**inquire** [ɪn'kwaiə] v հարցնել, տեղեկանալ, իմանալ. ~ the name/address/occupation հարցնել անունը/հասցեն/մասնագիտությունը. ~ the price գինն իմանալ. ~ the way ճանապարհը հարցնել. ~ into the matter գործը հետաքննել/ուսումնասիրել:  
**inquiring** [ɪn'kwaiəriŋ] a պրպտող, հարցասեր. an ~ look հարցական հայացք. ~ mind հարցասեր/պրպտուն միտք:  
**inquir/y** [ɪn'kwairi] n հարցում, տեղեկանք. տեղեկություններ հավաքելը. make ~ies տեղեկություններ հավաքել, հարց ու փորձ անել. (հետաքննություն, հարցաքննություն) prosecute an ~ հետաքննություն կատարել. set up an ~ հետաքննություն սկսել. a scientific ~ գիտական հետազոտություն. ju-

dicial ~ իրավ. դատական հետաքննություն. court of ~ քննչական հանձնաժողով. public ~ *իրավ.* հրապարակային դատաքննություն. ~ office տեղեկատու գրասենյակ:  
**inquisition** [ˌɪŋkwɪ'zɪʃn] n քննություն, հետաքննություն. *պտմ.* ինկվիզիցիա, հավատաքննություն:  
**inquisitive** [ɪn'kwɪzətɪv] a հարցասեր (բացասական իմաստով), քիթը ամեն տեղ խոթող:  
**inroad** ['ɪnrəʊd] n ոտնձգություն, ներխուժում. ~s *փխբ.* Their visit made ~s on our time Նրանց այցելությունը մեզից շատ ժամանակ խլեց:  
**ins** [ɪnz] n pl բոլոր ծակուծուկերը, մանրամասները:  
**insalubrious** [ˌɪnsə'lu:briəs] a վատառողջ, առողջության համար վնասակար:  
**insane** [ɪn'seɪn] a հոգեկան հիվանդ, խելագար. *փխբ.* խենթ, խելագար. an ~ plan խելացնոր ծրագիր. ~ hospital հոգեբուժական հիվանդանոց. drive smb ~ խելագարեցնել:  
**insanitary** [ɪn'sænətəri] a հակասանիտարական:  
**insanity** [ɪn'sænətɪ] n խելագարություն, խելացնորություն, հոգեկան հիվանդություն:  
**insatiable** [ɪn'seɪjəbəl] a ազահ, անհագ:  
**inscribe** [ɪn'skraɪb] v (ներ)գրել, դրոշմել. մակագրել. գրանցել. The author ~d my copy Չեղինակը մակագրեց իմ օրինակը. ~ names on the memorial անունները հուշատախտակի վրա գրել/մակագրել:  
**inscription** [ɪn'skrɪpʃn] n մակագրություն, մակագիր արձանագրություն:  
**inscrutable** [ɪn'skru:təbəl] a անհասկանալի, խորհրդավոր:  
**insect** ['ɪnsɛkt] n միջատ. *փխբ.* ոչնչություն. harmful/harmless/flying ~ վնասակար/անվնաս/թռչող միջատ. an ~ bite միջատի կծած:  
**insecticide** [ɪn'sektɪsaɪd] n միջատասպան միջոց:  
**insecure** [ˌɪnsɪ'kjʊə] a անապահով, վտանգավոր. անվստահելի. կասկածելի. The ladder is ~ Այս աստիճանը վտանգավոր է. an ~ job վտանգավոր աշխատանք. feel ~ իրեն անապահով զգալ:  
**insecurity** [ˌɪnsɪ'kjʊərətɪ] n անապահովություն. անվստահելիություն. feeling of ~ անապահովության զգացում:

**inseminate** [in'semineit] v ցամել, սերմացնել. տարածել:

**insemination** [in,semi'nei[n] n բեղմնավորում. artificial ~ արհեստական բեղմնավորում:

**insensibility** [in,sensə'biləti] n անզգայունություն, անտարբերություն:

**insensible** [in'sensəbl] a անզգա, անտարբեր. ուշաթափ, ուշագնաց knock smn ~ հարվածից ուշաթափվել. lay ~ ուշաթափ ընկնել. drink oneself ~ խելքը կորցնելու չափ խմել. (անտեղյակ) ~ of danger վտանգից անտեղյակ. by ~ degrees աննկատելի/անզգալի կերպով:

**insensitive** [in'sensətiv] a անզգա, անտարբեր. be ~ to beauty գեղեցիկի նկատմամբ անտարբեր լինել:

**inseparable** [in'sepərəbl] 1. a անբաժան, անբաժանելի, անանջատելի. ~ friends անբաժան ընկերներ. 2. n ներդիր. ~ sheet ներդիր (գրքի, ամսագրի և այլն):

**insert** ['insə:t] n ներդնել. մտցնել. զետեղել. տեղադրել. ~ a key into բանալի մտցնել. ~ some words որոշ բառեր զետեղել. ~ coins into the machine ավտոմատի մեջ դրամներ զցել. ~ an add in a newspaper լրագրում հայտարարություն զետեղել. ~ mode *հսկրգ*. զետեղման աշխատակերպ:

**insertion** [in'sə:ʃn] n տեղավորում, տեղադրում. զետեղում:

**in-service** [in'sə:vis] n որակավորման բարձրացում. ~ training որակավորման բարձրացում առանց արտադրությունից կտրվելու:

**inset** ['inset] n ներդիր (գրքի, լրագրի). ներդիր, կցվածք (զգեստի):

**inshore** [in'ʃɔ:] 1. a առափնյա, մերձափնյա. 2. adv ափին մոտ, դեպի ափը. ~ fishing առափնյա ձկնորսություն:

**inside** [in'said] 1. n ներսի մասը/կողմը. the ~ of the building շենքի ներսը. the ~ of the coat վերարկուի աստառը. ~ of a week շաբաթվա ընթացքում. know smth from the ~ իսկական պատճառն իմանալ. (հագուստի թարս կողմը) ~ out թարս ու շիտակ, շուռ տված. put one's dress ~ out շորը թարս հագնել. know the subject ~ out թեման իմանալ բոլոր մանրամասնություններով. 2. a ներսի. ~ pockets ներսի գրպաններ. ~ information

*խսկց*. ներքին տեղեկատվություն, 3. adv ներսը, ներսում. 4. prep Come ~! Ներս եկեք. He's ~ *խսկց*. Նա նստած է. It is cool ~ Ներսում զով է. ~ an hour մեկ ժամվա ընթացքում. put ~ the box/bag տուփի/պայուսակի մեջ դնել:

**insider** [in'saidə] n ներսի մարդ. անձ՝ ի պաշտոնե իրազեկ ձեռնարկության գաղտնիքների:

**insider** [in'saidə] a լավ տեղեկացված, իրազեկ:

**insidious** [in'sidiəs] a նենգ, դարանակալ:

**insight** ['insait] n խորաթափանցություն, ներըմբռնում, ինտուիցիա. a man of ~ խորաթափանց մարդ. ~ into political affairs քաղաքական իրավիճակի ըմբռնում. ~ into the life կյանքի հասկացում:

**insignia** [in'signia] n pl պատվանշաններ, տարբերանշաններ:

**insignificance** [in'sig'nifikəns] n անկարևորություն, անիմաստություն:

**insignificant** [in'sig'nifikənt] a աննշան, չնչին. անկարևոր:

**insincere** [in'sin'siə] a ոչ անկեղծ, կեղծավոր:

**insincerity** [in'sin'serəti] n անուղղամտություն, կեղծություն. կեղծավորություն:

**insinuate** [in'sinjueit] v ներշնչել. անուղղակի կերպով ակնարկել. զրպարտել. What are you ~ing? Ի՞նչ եք ակնարկում:

**insinuation** [in,sinju'eɪʃn] n զրպարտում:

**insipid** [in'sipid] a անհամ. *փխբ*. անհետաքրքիր, ձանձրալի, տափակ. ~ conversation/person ձանձրալի զրույց. անհետաքրքիր մարդ:

**insist** [in'sist] v պնդել, համառել. համառորեն պահանջել. ~ on one's rights իր իրավունքները պահանջել. I can't ~ on it ես չեմ կարող դա պնդել:

**insistence** [in'sistəns] n հաստատակամություն, համառություն. պնդում. համառ պահանջ. ~ on punctuality ճշտապահության պահանջ:

**insistent** [in'sistənt] a հաստատակամ, համառ. an ~ demand հաստատակամ պահանջ. be ~ about smth համառորեն պահանջել:

**insofar** [in'sə'fa:] conj այն աստիճանի, այն չափով:

**insolence** ['insələns] n զոռոզություն,

հանդգնություն:  
**insolent** [ˈɪnsələnt] a ամբարտավան, հանդուգն, լկտի:  
**insoluble** [ɪnˈsɒljubl] a անլուծելի, անվճռելի. *քիմ.* չլուծվող, անլուծելի:  
**insolvent** [ɪnˈsɒlvənt] n սնանկ, անվճարունակ. declare oneself ~ իրեն սնանկ/անվճարունակ հայտարարել:  
**insomnia** [ɪnˈsɒmiə] n անքնություն:  
**insomuch** [ˌɪnsəʊˈmʌtʃ] adv այնքան/այնչափ, որ:  
**inspect** [ɪnˈspekt] v զննել, քննել, ստուգել. տեսչական ստուգում/հսկողություն կատարել. ~ luggage/tickets ստուգել ուղեբեռը/տոմսերը. ~ smb's work ստուգել/հսկել մեկի աշխատանքը. հսկողության տակ առնել. All goods are ~ed Ամբողջ արտադրանքը վերահսկողության տակ է գտնվում:  
**inspection** [ɪnˈspekʃn] n զննում, քննում, ստուգում. ~ of documents փաստաթղթերի զննում. an ~ of brakes արգելակների ստուգում. medical ~ բժշկական քննություն. Tickets ready for ~! Տոմսերը ստուգման պատրաստել:  
**inspector** [ɪnˈspektə] n տեսուչ, հսկիչ. վերաքննիչ. police/school ~ ոստիկանական/դպրոցի տեսուչ. custom's ~ մաքսատան հսկիչ. ticket ~ տոմսերի հսկիչ:  
**inspiration** [ˌɪnspəˈreɪʃn] n ներշնչում, ոգեշնչում, խթանում. draw ~ from ներշնչվել, ոգեշնչվել. have a sudden ~ անսպասելի ոգեշնչվել, խանդավառվել:  
**inspire** [ɪnˈspaɪə] v ներշնչել, ոգեշնչել, ոգեվորել. առաջացնել, դրդել. It ~d him to write a poem Դրանից ոգեշնչված նա պոեմ գրեց. ~ with hope/courage/fear հույս/խիզախություն/վախ ներշնչել. ~ confidence ինքնավստահություն առաջացնել:  
**inspired** [ɪnˈspaɪəd] a ոգեշնչված. an ~ speech ոգեշնչված ճառ. ~ guess երջանիկ կռահում:  
**inspirer** [ɪnˈspaɪəɪə] n ոգեշնչող, ոգևորող. դրդող:  
**instability** [ˌɪnstəˈbɪləti] n անկայունություն, փոփոխականություն:  
**install** [ɪnˈstɑːl] v տեղավորել, հաստատել. ~ a gas cooker/TV set գազօջախ/հեռուստացույց տեղադրել. ~ central heating կենտրոնական ջեռուցում անցկացնել. ~ oneself in a new flat/an armchair նոր բնակարանում/

բազկաթոռում տեղավորվել. ~ a rector ռեկտորին պաշտոնում պաշտոնապես հաստատել:  
**installation** [ˌɪnstəˈleɪʃn] n տեղադրում, տեղավորում, տեղակայում. սարքավորում անցկացնել:  
**instalment** [ɪnˈstɑːlmənt] n մասնավճար, հերթական վճար. buy/pay by ~s տարածակետով մաս առ մաս վճարում. by ~ ապառիկով. monthly ~ ամեն ամիս վճարելու պարտավորություն:  
**instance** [ˈɪnstəns] n օրինակ, դեպք. պահանջ, խնդիր. *իրավ.* ատյան. concrete/striking/only ~ կոնկրետ/զարմանալի/միակ օրինակ. in this ~ այս դեպքում. in every ~ յուրաքանչյուր դեպքում. in the first ~ առաջին հերթին, նախ և առաջ. for ~ օրինակի համար. court of first ~ առաջին ատյանի դատարան. at the ~ of smb ինչ-որ մեկի խնդրանքով/պահանջով:  
**instant** [ˈɪnstənt] n ակնթարթ, վայրկյան. this ~ այս րոպեին, հենց հիմա. the ~ հենց որ. on the ~ անմիջապես, իսկույն. for an ~ մի վայրկյան/մոմենտ:  
**instant** [ˈɪnstənt] a անհապաղ, անհետաձգելի, անմիջապես. an ~ reply/reaction անմիջական պատասխան/ռեակցիա. ~ relief անմիջական թեթևություն. ~ dismissal անհապաղ ազատում/արձակում. (ընթացիկ) your letter of the tenth ~ ընթացիկ ամսվա տասի նամակը. ~ coffee/tea լուծվող սուրճ/թեյ. ~ death ակնթարթային մահ:  
**instantaneous** [ˌɪnstənˈteɪniəs] a վայրկյանական, ակնթարթային, րոպեական, ~ act անհապաղ գործունեություն:  
**instantly** [ˈɪnstəntli] adv իսկույն, անմիջապես. անհապաղ:  
**instead** [ɪnˈsted] adv փոխարեն, փոխանակ. ~ of փոխարեն. ~ of going/reading գնալու/կարդալու փոխարեն. use wood ~ of stone քարի փոխարեն փայտ օգտագործել:  
**instep** [ˈɪnstɛp] n ոտնաթուճ, թաթաթմբիկ:  
**instigate** [ˈɪnstɪgeɪt] v դրդել, զրգռել, հրահրել. մղել ~ a strike/mutiny գործադուլի/խռովության դրդել/խռովություն հրահրել. ~ students to ուսանողներին դրդել:  
**instigation** [ˌɪnstɪˈgeɪʃn] n սադրանք, դրդում. at her ~ նրա դրդմամբ:  
**instigator** [ˈɪnstɪgeɪtə] n սադրիչ. դրդիչ.

հրահրիչ:  
**instil(l)** [in'stil] v ներշնչել, ներարկել. պատվաստել (սովորություններ և այլն). ~ a respect for the law օրենքի նկատմամբ հարգանք ներշնչել:  
**instinct** ['instɪŋkt] n բնազդ, հոտառություն, նրբազգացություն. by ~ բնազդով. ~ for self-preservation ինքնապահպանման/պաշտպանության բնազդ:  
**instinctive** [in'stɪŋktɪv] a բնազդային, բնազդական. an ~ feeling բնազդային զգացում:  
**institute** ['ɪnstɪtju:t] ինստիտուտ (բուհ/քոլեջ). հաստատություն, կազմակերպություն:  
**institute** ['ɪnstɪtju:t] v հիմնել, հիմնադրել. սահմանել, հարուցել. ~ new procedures նոր կարգեր մտցնել/սահմանել. ~ legal proceedings *հրավ.* դատական գործ հարուցել:  
**institution** [ɪn'stɪ'tju:ʃn] n հիմնում, հաստատում. the ~ of a new committee նոր կոմիտեի հիմնադրում. educational ~s ուսումնական հաստատություններ. residential ~ գիշերօթիկ. (սովորույթ) a long-established ~ շատ հին/վաղուց հաստատված սովորույթ:  
**instruct** [ɪn'strʌkt] v սովորեցնել, ուսուցանել, հրահանգել, ցուցմունք տալ. ~ smb in driving վարել սովորեցնել. ~ the soldiers զինվորներին հրահանգել. ~ the lawyer փաստաբանին հանձնարարել  
**instruction** [ɪn'strʌkʃn] n ցուցում, կարգադրություն, հրահանգ. ~s հրահանգներ. give ~s in swimming լողալ սովորեցնել. act on ~s գործել ըստ հրահանգի. teaching ~s ուսուցման մեթոդներ. ~s for use օգտագործման ցուցումներ/կարգը. *հմկրգ.* ~ code/address/counter/set/stream/time հրահանգի կոդ/հասցե/հաշվիչ/համակարգ/շարք/կատարման ժամկետ:  
**instructive** [ɪn'strʌktɪv] a ուսանելի. հրահանգչական. ուսուցողական:  
**instructor** [ɪn'strʌktə] n հրահանգիչ, ուսուցիչ:  
**instrument** ['ɪnstrəmənt] n գործիք, սարք, միջոց. string/wind ~s *երժշ.* լարային/փողային գործիքներ. surgical ~s վիրաբուժական գործիքներ. (սարք) precise/special/optical ~s ճշգրիտ/հատուկ/օպտիկական սարքեր. fly by ~s թռիչքը իրականացնել սարքերի հիման վրա. ~ panel սարքերի ցուցատախ-

տակ. (միջոց, զենք) powerful/effective ~ հզոր/գործուն, ազդու միջոց:  
**instrumental** [ɪn'strə'mentl] a գործիքային. նպաստող, օժանդակող. օգտակար գործիք հանդիսացող. be ~ in օժանդակել, նպաստել. օգտակար լինել:  
**instrumentation** [ɪn'strə'men'teɪʃn] n *երժշ.* գործիքավորում:  
**insubordinate** [ɪn'sə'bɔ:dɪnət] a սինազանդ, անկարգապահ:  
**insubstantial** [ɪn'səb'stæʃnl] a անհիմն, ոչ հիմնավորված. ոչ էական. ~ evidence ոչ էական ապացույցներ. an ~ meal թեթև ուտեստ:  
**insufferable** [ɪn'sʌfərəbəl] a անհանդուրժելի, անտանելի. ~ pain/heat անտանելի ցավ/շոգ. ~ rudeness անհանդուրժելի կոպտություն:  
**insufficiency** [ɪn'sə'fɪʃnsi] n պակասություն, բավականաչափ չլինելը:  
**insufficient** [ɪn'sə'fɪʃnt] a անբավականաչափ. անբավարար. չբավականացնող:  
**insular** ['ɪnsjʊlə] a կղզու, կղզիական. առանձնացած, մեկուսացած. *փխբ.* սահմանափակ:  
**insulate** ['ɪnsjuleɪt] v մեկուսացնել, անջատել. կղզիացնել. ~ing tape մեկուսացնող ժապավեն:  
**insulation** [ɪn'sjʊ'leɪʃn] n մեկուսացում, առանձնացում, անջատում. heat ~ ջերմամեկուսացում:  
**insulator** ['ɪnsjuleɪtə] n մեկուսիչ, անջատիչ:  
**insult** ['ɪnsʌlt] n վիրավորանք, անարգանք, անպատվություն. personal ~ անձնական վիրավորանք. swallow an ~ վիրավորանքը կուլ տալ:  
**insult** [ɪn'sʌlt] v վիրավորել, անպատվել, անարգել:  
**insuperable** [ɪn'sju:pərəbəl] a անհաղթահարելի, անհաղթելի:  
**insupportable** [ɪn'sə'pɔ:təbəl] a անտանելի, անհանդուրժելի:  
**insurance** [ɪn'ʃʊərəns] n ապահովագրում, ապահովագրման գումար. ~ policy ապահովագիր. life ~ կյանքի ապահովագրում. ~ against fire, fire ~ ապահովագրում հրդեհի դեմ. national ~ ազգային ապահովագրություն social ~ սոցիալական ապահովագրություն. ~ company ապահովագրական ընկերություն:  
**insure** [ɪn'ʃʊə] v ապահովագրել. ապահովել.

երաշխավորել: ~ oneself իր կյանքն ապահովագրել. ~ against theft գողության դեմ ապահովագրել:

**insurgent** [in'sə:dʒənt] n ապստամբ:

**insurmountable** [,insə'mauntəbl] a անհաղթահարելի:

**insurrection** [,insə'rekʃn] n ապստամբություն, խռովություն, բուռն:

**intact** [in'tækt] a անվնաս, անվթար. ձեռք չտված His capital remained ~ Նրա դրամազուխը մնաց անձեռնմխելի:

**intake** ['inteik] n ներթողում, ներթող անցք. ընդունելություն. ընդհանուր քանակություն. the annual ~ տարեկան ընդունելությունը, ընդհանուր քանակը:

**intangible** [in'tændʒəbl] a անշոշափելի, աննշմարելի. անըմբռնելի. ~ assets ոչ նյութական արժեքներ. ~ treaty աձեռնմխելի պայմանագիր:

**integer** ['intidʒə] n մաթ. ամբողջ թիվ:

**integral** ['integrəl] 1. n ինտեգրալ. 2. a լրիվ, ամբողջ, անբաժանելի. an ~ party անբաժանելի մաս:

**integrate** ['integreit] v ամբողջություն կազմել, միացնել. ~d ամբողջական. an ~ personality ներամբողջական անձ. ~ approach միասնական մոտեցում. ~ mission հանրագումարային առաքելություն:

**integration** [,inti'greiʃn] n միացում, ամբողջություն կազմելը. racial ~ ռասայական ինտեգրացիա. European ~ եվրասերտաճում, եվրոինտեգրում:

**integrity** [in'tegrəti] n ամբողջականություն, ազնվություն, շիտակություն. territorial ~ տարածքային ամբողջականություն. a man of ~ անկաշառ մարդ:

**intellect** ['intəlekt] n խելք, միտք, բանականություն, ինտելեկտ the great ~s of the age դարի խոշոր մտածողները:

**intellective** [,intə'lektiv] a մտավոր, մտքի, ինտելեկտուալ:

**intellectual** [,intə'lektʃuəl] 1. n մտավոր աշխատանք կատարող մարդ. մտավորական. the ~s մտավորականություն, ինտելիգենցիա. 2. a մտավոր, մտքի, ինտելեկտուալ. ~ efforts մտավոր ուժերի լարում. մտավոր ջանքեր:

**intelligence** [in'telidʒəns] n խելք, մտավոր կարողություն, ընդունակություն. supe-

rior/average ~ արտասովոր/միջակ ընդունակություններ, high/low ~ բարձր/ցածր ինտելեկտ. an ~ test մտավոր կարողությունների ստուգում. have the ~ to... բավականաչափ խելք ունենալ, որպեսզի...:

**intelligence** [in'telidʒəns] n տեղեկություն, լուր. ինֆորմացիա. according to the latest ~ համաձայն վերջին տեղեկությունների. the ~ service հետախուզական գործակալություն. an ~ report հետախուզական տեղեկություններ an ~ officer հետախուզության սպա:

**intelligent** [in'telidʒənt] a խելոք, խելացի. խելամիտ. հասկացող. an ~ person/question/being խելացի մարդ, խելամիտ հարց/արարած. ~ face/animal/eyes խելոք դեմք/կենդանի/ աչքեր. դեմքի խելացի արտահայտություն. *հմկրգ.* ~ databank/device/memory/network ինտելեկտուալ տվյալների բանկ/սարք/հիշողություն/ցանց:

**intelligible** [in'telidʒəbl] a հասկանալի, դյուրըմբռնելի:

**imperate** [in'tempəret] a անչափավոր, անժուժկալ, անզուսպ. խիստ (կլիմա):

**intend** [in'tend] v մտադրվել, ծրագրել. մտադիր լինել. ~ no harm/offence ոչ մի չար մտադրություն չունենալ. վիրավորելու մտադրություն չունենալ. The course is ~ed *Դասընթացը նախատեսված է:*

**intense** [in'tens] a ուժգին, լարված, եռանդուն. եռանդոտ. To my ~ regret Շատ խիստ ցավում եմ. ~ heat/anger ուժգին շոգ. խիստ զայրույթ. ~ pain սուր ցավ. ~ stupidity ահավոր/ աղաղակող հիմարություն. an ~ gaze սևեռում հայացք:

**intensely** [in'tensli] adv ուժեղ, խիստ. ~ unhappy/grateful խիստ դժբախտ. խորապես շնորհակալ. ~ cold սաստիկ ցուրտ:

**intensify** [in'tensifai] v ուժեղացնել, սաստկացնել. ուժեղանալ, սաստկանալ:

**intension** [in'tenʃn] n լարում, ճիգ, ջանք:

**intensity** [in'tensəti] n ուժեղություն, լարվածություն. the ~ of feelings զգացմունքների ուժգնություն. speak with ~ զգացմունքով խոսել:

**intensive** [in'tensiv] a սաստիկ, լարված ուժեղ:

**intent** [in'tent] n մտադրություն, դիտավորություն. to all ~s and purposes ըստ էության, փաստորեն. criminal ~ հանցավոր դիտավոր



րութիւն. with ~ to kill սպանելու մտադրութեամբ. with malicious ~ չար դիտավորութեամբ:

**intent** [in'tent] a ուշադիր, կենտրոնացած. սկեռում. մտադիր. հակված. be ~ on the article/game խորասուզվել հոդվածի մեջ. տարվել խաղով:

**intention** [in'tenʃn] n մտադրություն, միտում. նպատակ. true ~ իսկական մտադրություն. good ~s բարի մտադրություն. His ~ is to study French Նա նպատակ ունի ֆրանսերեն սովորել. have every ~ հաստատ մտադիր լինել. reveal/conceal the ~ մտադրությունը ի հայտ բերել/թաքցնել:

**intentional** [in'tenʃnəl] a դիտավորյալ, դիտումնավոր, կանխամտածված:

**intently** [in'tentli] adv ուշադիր. look/listen ~ ուշադիր նայել/լսել:

**inter** [in'tə:] v թաղել, հողին հանձնել:

**interact** [,intər'ækt] v փոխգործակցել:

**interaction** [,intər'ækʃn] n փոխգործակցություն:

**interbreed** [,intə'brɪ:d] v խաչասեր(վ)ել:

**intercede** [,intə'si:d] v միջնորդել, բարեխոսել. միջամտել. ~ with the manager տնօրենի մոտ միջնորդել/ բարեխոսել:

**intercept** [ˈɪntəsept] v ճամփին բռնել, ձեռքից խլել. ճանապարհը կտրել, միջամտել. կանգնեցնել:

**intercession** [ˌɪntə'seʃn] n միջնորդություն, բարեխոսում:

**interchange** [ˈɪntətʃeɪndʒ] n փոխանակում, փոխում. ~ views/gifts հայացքներ/նվերներ փոխանակել:

**interchangeable** [ˌɪntə'tʃeɪndʒəbəl] a փոխանակելի. (փոխադարձաբար) փոխարինելի. The parts are ~ Այս մասերը փոխանակելի են:

**intercom** [ˈɪntəkɒm] n ներքին հեռախոսակապ. call smb on the ~ ներքին հեռախոսով կապվել:

**intercommunicate** [ˌɪntəkə'mju:nikeɪt] v կապ ունենալ, հաղորդակցվել:

**interconnect** [ˌɪntəkə'nekt] v փոխադարձ կապ հաստատել, կապ(վ)ել. The rooms ~ Սենյակները հաղորդակցվում են:

**intercommunication** [ˌɪntəkə'mju:ni'keɪʃn] n փոխադարձ կապ:

**intercontinental** [ˌɪntəkɒnti'nentl] a միջմայրցամաքային:

**intercourse** [ˈɪntəkɔ:s] n կապ, շփում, հա-

րաբերություն:

**interdependence** [ˌɪntədi'pendəns] n փոխադարձ կախում:

**interest** [ˈɪntrəst] n հետաքրքրություն. great/special/considerable/vivid/keen մեծ/հատուկ/զգալի/նշանակալից/աշխույժ/տուր հետաքրքրություն. take an ~ հետաքրքրվել. show ~ հետաքրքրություն ցուցաբերել. arouse/lose ~ հետաքրքրություն առաջացնել/կորցնել.

(նշանակություն, կարևորություն) local/public/general/practical ~ տեղական/հասարակական/ընդհանուր/գործնական նշանակություն. have scientific/educational ~ գիտական/կրթական նշանակություն ունենալ. (շահ, տոկոս) in the ~s of safety ապահովության շահերից ելնելով. act in smb's ~ մեկի շահերի օգտին գործել. yield/bear ~ շահույթ բերել. simple/compound ~ պարզ/բարդ շահատոկոս. a high/low rate of ~ բարձր/ցածր տոկոսադրույթ. life ~ ցմահ իրավունք. have a financial ~ in a company ձեռնարկությունում իր բաժինն ունենալ. a material ~ նյութական շահագրգռվածություն. public ~ պետական/հանրային շահեր:

**interest** [ˈɪntrəst] v հետաքրքրել, շահագրգռել. The idea ~s me Այս միտքը ինձ հետաքրքրում է. ~ oneself in smth որևէ բանով հետաքրքրվել. be ~ed to know հետաքրքրված լինել իմանալու. for those who are ~ed նրանց համար, ովքեր հետաքրքրվում են:

**interested** [ˈɪntrəstɪd] a շահագրգռված, կողմնակալ, շահագրգիռ. an ~ audience ուշադիր ունկնդիր. be financially ~ ֆինանսապես շահագրգռված լինել. The company is ~ Ընկերությունը շահագրգռված է. *իրավ.* an ~ party շահագրգռված/շահագրգիռ կողմ:

**interesting** [ˈɪntrəstɪŋ] a հետաքրքիր, հետաքրքրական:

**interface** [ˌɪntəfeɪs] n փոխգործողություն. համաձայնություն. կապող օղակ:

**interfere** [ˌɪntə'fiə] v խառնվել, միջամտել, բախվել. don't ~ in my affairs մի՛ խառնվեք իմ գործերին. (խանգարել, արգելք լինել) ~ with smb's work/plan/studies խանգարել աշխատանքը/պլանները/պարապմունքները. Don't ~ with me! Ինձ մի՛ խանգարեք ~ with each other միմյանց խանգարել. ~ with one's papers թղթերին ձեռք տալ/խառնել. She is al-

ways ~ing Եւ միշտ ամեն ինչին խառնվում է:

**interference** [ˌɪntəˈfɪərəns] n միջամտություն, արգելք. *ռար.* խանգարումներ. ~ by the state պետության միջամտություն:

**interfuse** [ˌɪntəˈfjuːz] v խառնվել, միախառնվել:

**intergovernmental** [ˌɪntəˌɡʌvəˈmentl] a միջկառավարական, միջպետական. ~ committee միջկառավարական կոմիտե/հանձնախումբ:

**interim** [ˈɪntərɪm] 1. n ժամանակամիջոց. in the ~ այդ ժամանակամիջոցում. 2. a ժամանակավոր. միջանկյալ. an ~ report նախօրոք հաղորդում. միջանկյալ հաշվետվություն. an ~ committee ժամանակավոր կոմիտե. ~ measures ժամանակավոր միջոցներ:

**interior** [ɪnˈtɪəriə] 1. n (շենքի) ներսի մասը/կողմը. երկրի ներքին շրջանները/գործերը. Department of the I~ ներքին գործերի մախարարություն. *խսկց.* ներքինը, բնավորությունը, հոգին. 2. a ներսի, ներքին. ~ decorator ներքին հարդարման ձևավորող:

**interjacent** [ˌɪntəˈdʒeɪsənt] a միջանկյալ, միջին:

**interjection** [ˌɪntəˈdʒekʃn] n բացականչություն. *քեր.* ծայնարկություն:

**interlace** [ˌɪntəˈleɪs] v միահյուս(վ)ել:

**interline I** [ˈɪntəˈlaɪn] v միջնաստառ (վատին) դնել:

**interline II** [ˌɪntəˈlaɪn] v տողերի արանքում գրել:

**interlinear** [ˌɪntəˈlɪniə] a միջտողային, տող առ տող. ~ translation բառացի/տողատակ քարգմանություն:

**interlock** [ˌɪntəˈlɒk] v միակց(վ)ել, փակ(վ)ել:

**interlocution** [ˌɪntələˈkjuːʃn] n զրույց, խոսակցություն:

**interlocutor** [ˌɪntəˈlɒkjʊtə] n զրուցակից, խոսակից:

**interlocutory** [ˌɪntəˈlɒkjʊtəri] a ~ procedure միջանկյալ ընթացակարգ. ~ relief ժամանակավոր նպաստ:

**interlude** [ˈɪntəlʊːd] n *թատր.* միջախաղ. *երժ.* միջերգ. ընդմիջում, անտրակտ. in the ~s of sunshine արևի դուրս գալու ժամանակ:

**intermarriage** [ˌɪntəˈmæɪdʒ] n խառը ամուսնություն (տարբեր ազգերի/բարե-

կամների միջև):

**intermediary** [ˌɪntəˈmiːdiəri] n, a միջնորդ, միջնորդի, միջնորդական:

**intermediate** [ˌɪntəˈmiːdiət] 1. a միջանկյալ. միջնորդ, միջնորդական ~ consumption/goods միջանկյալ սպառում/արտադրանք, կիսաֆաբրիկատ: 2. v միջնորդ լինել, միջնորդի դեր խաղալ:

**interment** [ɪnˈtəːmənt] n թաղում, հողին հանձնելը:

**interminable** [ɪnˈtəːmɪnəbl] a անվերջ, անսահման:

**intermingle** [ˌɪntəˈmɪŋɡl] v խառնվել. շփվել. փոխադարձ հարաբերություն պահպանել:

**intermission** [ˌɪntəˈmɪʃn] n ընդմիջում, դադար. դասամիջոց, անտրակտ. without ~ անընդհատ, անդադար:

**intermittent** [ˌɪntəˈmɪtnt] a ընդմիջվող, ընդհատվող. ժամանակավոր, պայմանական. an ~ tapping ընդհատվող թակոց:

**intern** [ˈɪntəːn] n գիշերօթիկ բժիշկ (հիվանդանոցում աշխատող և ապրող):

**intern** [ɪnˈtəːn] v ներկալել. տեղավորել հիվանդանոցում:

**internal** [ɪnˈtəːnl] a ներքին, ներսի. ~ injure/bleeding ներքին վնասվածք/արյունահոսություն. not for ~ use միայն արտաքին գործածման համար. an ~ combustion engine ներքին այրման շարժիչ. ~ law ներքին/ներպետական իրավունք/օրենք. ~ politics ներքին քաղաքականություն. *հմկրգ.* ~ interrupt ներքին ընդհատում. ~ memory ներքին հիշող սարք. ~ sort ներքին տեսակավորում ~ timer ներդրված թայմեր:

**international** [ˌɪntəˈnæʃnəl] a միջազգային. agreement/market/ conference/trade/law միջազգային համաձայնություն/շուկա/կոնֆերանս/ առևտուր/իրավունք. ~ undertakings միջազգային հարաբերություններ. ~ legal rules միջազգային իրավական նորմեր:

**internecine** [ˌɪntəˈniːsɪn] a երկպառակտչական, կործանարար:

**internet** [ˈɪntənət] n համացանց, ինտերնետ. ~ service provider համացանցի ծառայություն տրամադրող:

**interplay** [ˈɪntəpleɪ] n փոխազդեցություն:

**interpol** [ˈɪntəpɒl] n ինտերպոլ (քրեական ոստիկանության միջազգային կազմակեր-

պություն):  
**interpose** [ˌɪntəˈpəʊz] v ներդնել, միջադնել.  
 միջամտել:  
**interpret** [ɪnˈtɜːprɪt] v մեկնաբանել, բացատրել, թարգմանել:  
**interpretation** [ɪnˈtɜːpriˈteɪʃn] n մեկնաբանում, բացատրում ~ of a text/events/dreams տեքստի թարգմանություն. երազների/իրարածությունների մեկնաբանություն. liberal/literal/narrow ~ ազատ/բառացի/մեղ մեկնաբանություն mischief ~ խաբուսիկ/մոլորեցնող մեկնաբանություն:  
**interpreter** [ɪnˈtɜːprɪtə] n մեկնաբան, մեկնիչ. թարգման, թարգմանիչ:  
**interrelated** [ˌɪntəriˈleɪtɪd] a փոխկապակցված:  
**interrelation** [ˌɪntəriˈleɪʃn], **interrelationship** [ˌɪntəriˈleɪʃənʃɪp] n փոխհարաբերություն, փոխհարած կապ:  
**interrogate** [ɪnˈterəɡeɪt] v հարցնել, հարցաքննել:  
**interrogation** [ɪnˌterəˈɡeɪʃn] n հարցաքննություն. ~ centre հարցաքննության բաժին:  
**interrogative** [ˌɪntəˈrɒɡətɪv] a հարցական (*մակ քեր., դեր. և այլն*):  
**interrogator** [ɪnˈterəɡeɪtə] n *հրավ.* քննիչ:  
**interrupt** [ˌɪntəˈrʌpt] v ընդհատել. ընդմիջել. խանգարել. ~ the speaker/conversation/journey/work հռետորի/զրույցը/ճամփորդությունը/աշխատանքը ընդհատել. Traffic was ~ed երթևեկությունը կանգնեցվեց/դադարեցվեց. Don't ~ me! Մի՛ ընդհատիր/խանգարիր:  
**interruption** [ˌɪntəˈrʌpʃn] n ընդհատում, ընդմիջում, դադար. *տեխ.* անջատում. խանգարում. I don't want any ~s Չեմ ուզում, որ ինձ խանգարեն:  
**intersect** [ˌɪntəˈsekt] v խաչաձև(վ)ել, տրամախաչ(վ)ել. հատ(վ)ել:  
**intersection** [ˌɪntəˈsekʃn] n հատում, տրամախաչում, հատման կետ/զիծ. *հմկրգ.* ~ of sets բազմությունների հատում:  
**intersperse** [ˌɪntəˈspɜːs] v ցրել, ցրիվ տալ. զանազանակերպել. violets ~d with daisies մանուշակներ ընդմիջված մարգարտածաղիկներով:  
**intertwine** [ˌɪntəˈtwɪn] v միահյուսվել:  
**intertwist** [ˌɪntəˈtwɪst] v (միմյանց հետ)

ոլորվել:  
**interurban** [ɪntəˈɜːbn] a միջքաղաքային:  
**interval** [ˈɪntəvl] n ժամանակամիջոց, միջոց, տարածություն. կանոնավոր ընդմիջումներով. at regular ~s կանոնավոր ընդմիջումներով. at rare ~s ժամանակ առ ժամանակ. at yearly/monthly ~s յուրաքանչյուր տարի/ամիս. meal ~ ճաշի ընդմիջում. at ~ of two weeks յուրաքանչյուր երկու շաբաթ. Buses leave at short ~s Ավտոբուսները մեկնում են կարճատև ընդմիջումից հետո. after a brief ~ կարճ դադարից հետո. at equal ~s հավասար տարածության վրա. We had coffee in the ~ ընդմիջմանը մենք սուրճ խմեցինք:  
**intervene** [ˌɪntəˈviːn] v միջամտել, խառնըվել. ~ in an argument վեճին միջամտել. ~ in smb's behalf մեկին պաշտպանել:  
**intervention** [ˌɪntəˈvenʃn] n միջամտություն, ինտերվենցիա. armed ~ զինված միջամտություն. thanks to her ~ շնորհիվ նրա միջամտության:  
**interview** [ˈɪntəvjʊː] n զրույց, գործնական հանդիպում. a press/TV ~ մամուլի/հեռուստատեսության հարցազրույց. call for an ~ հարցազրույցի/զննության կանչել. have an ~ with հանդիպում/հարցազրույց ունենալ. grant smn an ~ համաձայնվել մեկին ընդունել. arrange/give an ~ հարցազրույց կազմակերպել/տալ:  
**interview** [ˈɪntəvjʊː] v զրուցել, հարցազրույց ունենալ. A journalist ~ed me Լրագրողն ինձ հետ հարցազրույց անցկացրեց:  
**interviewee** [ˌɪntəvjʊːˈiː] n հարցվող:  
**interviewer** [ˈɪntəvjʊːə] հարցազրույց/հարցում անցկացնող:  
**intervocalic** [ˌɪntəvəʊˈkæliɪk] a *լեզվ.* ձայնավորների միջև (զտնվող):  
**intestate** [ɪnˈtesteɪt] n, a կտակ չթողած հանգուցյալ. die ~ մեռնել առանց կտակ թողնելու:  
**intestinal** [ɪnˈtestɪnl] a աղիքային:  
**intestine** [ɪnˈtestɪn] n *կզմխ.* աղիք. ~s աղիքներ. small/large ~ բարակ/հաստ աղիք:  
**intimacy** [ˈɪntɪməsi] n մտերմություն, մտերմիկ հարաբերություններ:  
**intimate** [ˈɪntɪmət] n մտերմիկ, մոտիկ. an ~ friend/talk մտերիմ ընկեր, մտերմիկ զրույց. be ~ մոտիկ լինել. (լավ ծանոթ) have an ~ knowledge with (նյութին, թեմային) քաջա-

տեղյակ/լավ ծանոթ լինել. (անձնական, ինտիմ) ~ letters անձնական նամակներ. be ~ with անձնական կապերի մեջ լինել:

**intimate** [ˈɪntɪmeɪt] v իրազեկ դարձնել, տեղեկացնել. հայտնել. ազդարարել. He ~d his approval Նա հայտնեց իր համաձայնությունը:

**intimation** [ˌɪntɪˈmeɪʃn] n հայտարարում, ազդարարում, ծանուցում. first ~ առաջին ծանուցում. The first ~ of it was ...Այդ մասին առաջին անգամ լսվեց... ~s հաղորդումներ (թերթում):

**intimidate** [ɪnˈtɪmɪdeɪt] v վախեցնել, ահաբեկել. He is trying to ~ his brother Նա փորձում է վախեցնել իր եղբորը:

**intimidation** [ɪnˌtɪmɪˈdeɪʃn] n վախեցնելը, ահաբեկում:

**into** [ˈɪntu, ˈɪntə] prep ներս, մեջ. go ~ the room/house/garden սենյակ/տուն/պարտեզ մտնել. put ~ the box/pocket/bag արկղի/ գրպանի/պայուսակի մեջ դնել. include ~ the list ցուցակի մեջ մտցնել. get ~ a car մեքենա մստել. translate ~ English անգլերեն թարգմանել:

**intolerable** [ɪnˈtɒlərəbəl] a անտանելի, անհանդուրժելի:

**intolerance** [ɪnˈtɒlərəns] n անհանդուրժողություն:

**intolerant** [ɪnˈtɒlərənt] a անհանդուրժող, անհամբեր(ատար) ~ of criticism քննադատություն չհանդուրժող:

**intonation** [ˌɪntəˈneɪʃn] n լեզվ. հնչերանգ, ինտոնացիա:

**intoxicate** [ɪnˈtɒksɪkeɪt] v հարբեցնել. փխր. արբեցնել. բժշկ. թունավորել:

**intoxicated** [ɪnˈtɒksɪkeɪtɪd] a հարբած, արբեցած. get ~ հարբել. ~ by success հաջողությունից արբեցած:

**intoxication** [ɪnˌtɒksɪˈkeɪʃn] n արբեցում, ինքնամոռացություն. բժշկ. ինտոքսիկացիա, թունավորում:

**intractable** [ɪnˈtræktəbəl] a անհնազանդ, համառ. an ~ girl/problem համառ աղջիկ. դժվար/ծանր պրոբլեմ:

**intransigent** [ɪnˈtrænsɪdʒənt] n, a սկզբունքներից չդավաճանող. անհաշտ, աննկուն:

**intransitive** [ɪnˈtrænsətɪv] a քեր. an ~ verb անանցողական բայ:

**intravenous** [ˌɪntrəˈviːnəs] a ներերակային:

**intrepid** [ɪnˈtreɪpɪd] a անվեհեր, աներկյուղ,

քաջ:

**intrepidity** [ˌɪntrəˈpɪdətɪ] n անվեհերություն, քաջություն:

**intricacies** [ˈɪntrɪkəˈsɪsɪz] n խճճվածություն, բարդություն. the ~ of the law օրենքի բարդությունները, խճճվածությունը:

**intricate** [ˈɪntrɪkət] a խճճված, բարդ. խրթին:

**intrigue** [ɪnˈtriːg] n բանասարկություն, մեքենայություն, խարդավանք, ինտրիգ:

**intrigue** [ɪnˈtriːg] v խարդավանել, բանասարկել. հետաքրքրությունը գրգռել, հետաքրքրել. ~ against smb բանասարկություն կազմակերպել մեկի դեմ. ~d to know ցանկանալ իմանալ:

**intrinsic** [ɪnˈtrɪnsɪk] a հատուկ, ներհատուկ, բնորոշ. the ~ value իրական արժեքը. his ~ honesty նրան բնորոշ ազնվությունը:

**intrinsically** [ɪnˈtrɪnsɪkli] adv իրականում, ըստ էության, էապես:

**introduce** [ˌɪntrəˈdjuːs] v մտցնել, ներս տանել, ներմուծել. ~ reforms/a fashion/a law բարեփոխումներ /նոր տարազ մտցնել. նոր օրենք կիրառել. ~ a bill օրենքի նախագիծը քննարկման դնել. ~ a topic թեմա առաջարկել. (ներկայացնել, ծանոթացնել) May I ~ Mr. Smith թույլ տվե՞ք ներկայացնել պ-ն Սմիթին. I ~d them to each other Ես նրանց ծանոթացրի. ~ to chess շախմատ խաղալ սովորեցնել:

**introduction** [ˌɪntrəˈdʌkʃn] n ներածություն, նախաբան, առաջաբան. (ներմուծում) rapid/gradual ~ արագ/աստիճանական ներմուծում. the ~ of new methods նոր մեթոդներ ներկայացնելը/ներմուծումը. ~ of the subject/of new devices թեման ներկայացնելը. նոր սարքերի ներմուծումը. a letter of ~ համձնարարական նամակ:

**introductory** [ˌɪntrəˈdʌktəri] a ներածական, նախնական. ~ course ներածական դասընթաց:

**introspection** [ˌɪntrəˈspekʃn] n հոգեբ. ինքնադիտողություն, ինքնադիտողական վերլուծություն:

**introspective** [ˌɪntrəˈspektɪv] a հոգեբ. ինքնագիտական, ինքնաճանաչողական:

**intrude** [ɪnˈtruːd] v ներխուժել, բռնի մտնել. վզին փաթաթվել, զոռով կպչել. Journalists ~d on her privacy Լրագրողները ներխուժում

են նրա մասնավոր կյանքի մեջ. I hope I'm not ~ intruding Յուսով եմ, որ չեմ խառնվում ձեր գործերին:

**intruder** [in'tru:də] n զավթիչ. աներես մարդ, անկոչ հյուր:

**intrusion** [in'tru:ʒn] n ներխուժում, ուրիշների իրավունքներին բռնի տիրանալը. Sorry for the ~ Կներեք ներխուժելու համար:

**intrusive** [in'tru:siv] a աներես, պնդերես, ծանծրացնող:

**intuition** [,intju:'ʃn] n ներըմբռնում, կռահում:

**intuitive** [in'tju:ətiv] a ներըմբռնողական, կռահողական. ~ knowledge կռահողական գիտելիք:

**inundate** ['inʌndeit] v ողողել, հեղեղել. The fields were ~d Դաշտերը հեղեղվել էին ջրով. be ~d with applications *փ/սք*. դիմումներով հեղեղել. The town is ~d with tourists Քաղաքը հեղեղված է զբոսաշրջիկներով:

**inure** [i'njuə] v կոփել, վարժեցնել, ընտելացնել. ~ oneself to cold իրեն ցրտադիմացկուն դարձնել. become ~d to սովորել, դիմանալ:

**invade** [in'veid] v ներխուժել, զավթել, տիրել. ~ a country/territory երկիր/տարածք ներխուժել. (հեղեղել, ողողել) Tourists ~d the city Ջբոսաշրջիկները հեղեղել են քաղաքը be ~d by guests հյուրերից հանգիստ/հանգստություն չունենալ:

**invader** [in'veidə] n զավթիչ, օկուպանտ:

**invalid** ['invəli:d] n հաշմանդամ (հիվանդ).

**invalid** I ['invəli:d] a անաշխատունակ, հաշմանդամ. an ~ diet սննդակարգ հիվանդների համար. an ~ chair աթոռ հաշմանդամների համար. *հմկրգ*. անվավեր սխալ. ~ data սխալ տվյալներ. ~ character սխալ սիմվոլ. ~ code սխալ կոդ. ~ password սխալ նշանաբան:

**invalid** II [in'velid] a անվավեր, անզոր, օրինական ուժ/չունեցող. an ~ document/passport/cheque անվավեր փաստաթուղթ/անձնագիր/վճարագիր. (անհիմն/անարժեք) an ~ argument անարժեք փաստարկ. an ~ excuse անհիմն պատրվակ:

**invalid** ['invəli:d] v հիվանդանալ, անաշխատունակ դառնալ/դարձնել. be ~ed out of the army զինծառայությունից ազատել (հիվանդության պատճառով):

**invalidate** [in'velɪdeɪt] v անվավեր դարձնել/համարել/ճանաչել. օրինական ուժից զրկել. ~ the will/an act կտակը/ակտը անվավեր դարձնել/համարել/ճանաչել:

**invaluable** [in'veljʊəbl] a անզնահատելի. ~ help անզնահատելի օգնություն:

**invariability** [in'veəriə'bɪləti] n անփոփոխելիություն, մշտականություն:

**invariable** [in'veəriəbl] a անփոփոխելի, անփոփոխ. մշտական, հաստատուն:

**invariably** [in'veəriəblɪ] adv միշտ. He is ~ late/ill Նա միշտ ուշանում է/հիվանդանում է:

**invasion** [in'veɪʒn] n ներխուժում, արշավանք, հարձակում. ուրիշի իրավունքների նկատմամբ ոտնձգություն:

**invasive** [in'veɪsɪv] a ներխուժող, զավթողական:

**invective** [in'vektɪv] n հայիոյանք, լուտանք. a stream of ~ հայիոյանքների մի ամբողջ հոսք/ հոսանք:

**inveigle** [in'veɪgl] v զայթակղել, գլխահան անել/խաբել. He ~d me into selling Նա ինձ համոզեց վաճառել:

**invent** [in'vent] v հնարել, գյուտ անել. հորինել, սարքել. ~ a new machine/method/a device նոր մեքենա/սարք հնարել. նոր մեթոդ ստեղծել. ~ a story/an excuse պատմություն/պատրվակ հորինել. ~ every word of it յուրաքանչյուր բառը հորինել:

**invention** [in'venʃn] n գյուտ, գյուտարարություն. useful/valuable/remarkable ~ օգտակար/արժեքավոր/նշանավոր գյուտ:

**inventive** [in'ventɪv] a հնարագետ, ճարտարամիտ. ~ mind/person հնարագետ միտք/մարդ:

**inventiveness** [in'ventɪvnəs] n հնարամտություն, հնարագիտություն:

**little** ['lɪtl] a պստիկ, փոքրիկ, ոչ մեծ. a ~ boy/bird փոքրիկ տղա/թռչնիկ. (քիչ-փոքր) ~ time քիչ ժամանակ. the ~ finger ճկույթ. the ~ one's պստիկները. the ~ Browns Բրաունների երեխաները. the L~ Bear Փոքր Արջ (համաստեղություն). (մի քիչ) know a ~ German մի քիչ գերմաներեն իմանալ. have a ~ soup մի քիչ ապուր ուտել. have a ~ drop մի կում խմել. Poor ~ girl! Խեղճ աղջիկ. Don't let ~ things upset you Մի հուզվեք մանր բաներից:

**little** ['lɪtl] adv քիչ. a ~ մի փոքր, մի քիչ. He's ~ known Նա քիչ է հայտնի, Նրան քիչ են ճանաչում. as ~ as possible որքան հնարավոր է քիչ. He's ~ more than a boy Նա դեռ տղա է/երեխա է. He's ~ better than a thief Նա գողից ոչնչով լավ չէ. It's ~ short of madness Դա համարյա խելագարություն է. I ~ dreamt that Մտքովս էլ չէր անցնում:

**littleness** ['lɪtlɪnəs] n աննշանություն, չնչին քանակություն. մանրություն:

**littoral** ['lɪtərəl] 1. n ափ, ծովափ. 2. a առափնյա, ծովափնյա:

**liturgy** ['lɪtədʒi] n *եկեղ*. պատարագ:

**livable** ['lɪvəbl] a բնակելի, ապրելու համար պիտանի. տանելի, հանդուրժելի:

**live** [lɪv] v ապրել, լինել, բնակվել. ~ by one's labour իր աշխատանքով ապրել. ~ to be old ապրել մինչև ծերություն. ~ abroad արտասահմանում ապրել. ~ on vegetables բանջարեղենով սնվել. ~ out կենդանի/ողջ մնալ. as long as I ~ քանի դեռ ապրում եմ. ~ and learn, One ~s and learns Քանի ապրես, այնքան պիտի սովորես. ~ alone մենակ ապրել. ~ double life երկակի կյանք ապրել. ~ on ~ on one's salary աշխատավարձով ապրել. His memory ~s on Նրա հիշատակը կենդանի է. ~ out ուրիշ տեղ ապրել. Her servants ~ out Նրա ծառաները երթևեկ են. They ~ out on tins Նրանք սնվում են պահածոներով. ~ up to ապրել համաձայն (սկզբունքների, համոզմունքների). ~ up to one's reputation իր համբավը/վարկը արդարացնել. ~ with հաշվի նստել. You have to ~ with the situation Ստիպված եք հաշվի նստել/առնել իրավիճակը. ~ from hand to mouth ծայրը ծայրին հասցնել:

**live** [laɪv] a կենդանի, ողջ. հրատապ, կենսական. a ~ fish կենդանի ձուկ. The programme comes to you ~ Ծրագիրը ուղիղ եթերում է. a ~ cartridge մարտական/չօգտագործված փամփուշտ. a ~ wire հոսանքի տակ գտնվող էլեկտրական լար:

**livelihood** ['laɪvlihud] n ապրելամիջոց, ապրուստ. pick up a ~ ապրուստ հայթայթել. means of ~ գոյության/ապրուստի միջոցներ. source of ~ ապրուստի աղբյուր:

**liveliness** ['laɪvɪnəs] n աշխուժություն, կենդանություն:

**livelong** ['lɪvɪŋ] a ամբողջ, ողջ (օր/ամիս/տարի և այլն):

**lively** ['laɪvli] a կենդանի, աշխույժ, կայտառ. a ~ child կայտառ երեխա. ~ mind կենդանի միտք. a ~ argument աշխույժ/թեժ վեճ:

**liven** ['laɪvn] v (*նաև liven up*) կենդանացնել. The tourists ~ up the town Ջրոսաշրջիկները աշխուժացնում են քաղաքը:

**live-oak** ['laɪv,əuk] n սև կաղնի (ամերիկյան ծառ):

**liver** ['lɪvə] n *կզմիս*. լյարդ (*նաև* կերակուր):

**liverish** ['lɪvəriʃ] a *փխբ*. մաղձոտ, թունոտ.



ծանոթ:  
**livery** ['livəri] n սպասազգեստ, *փխբ.* ծածկույթ. winter ~ of birds բռչունների ձմեռային փետրավորում:  
**live-stock** ['laivstɒk] n ընտանի կենդանիներ:  
**livid** ['livid] a գորշ, կապարագույն. գունաթափ, մեռելագույն:  
**living** ['livɪŋ] n կյանք, ապրելակերպ. կենցաղ, կենսածն. standard of ~, ~ standard կենսամակարդակ. high ~ փարթամ/ճոխ կյանք. plain ~ համեստ/պարզ կյանք. ~ conditions կենցաղային պայմաններ. a ~ wage կենսապահովման նվազագույն. (ապրուստ) make/earn one's ~ ապրուստը հայթայթել. ~ on the bread-line գոյության ծայրաստիճան. աղքատ կյանք.  
**living** ['livɪŋ] a կենդանի. no man ~ աշխարհում ոչ ոք. within ~ memory (կենդանի) մարդկանց հիշողության մեջ. ~ image կենդանի պատկեր (շատ նման). the greatest ~ musician ժամանակակից մեծագույն երաժիշտը:  
**living-room** ['livɪŋrʊm] n հյուրասենյակ:  
**lizard** ['lɪzəd] n մողես:  
**llama** ['la:mə] n *կենդ.* լամա, ուղտայծ:  
**load** [ləʊd] n բեռ, բեռնվածություն. a ~ of coal ածխի բեռ. peak ~ առավելագույն բեռնվածությունը. heavy/huge/tremendous ~ ծանր/հսկայական բեռ. work ~ աշխատանքի ծավալ. a ~ off one's mind ուսերից բեռ ընկնել. ծանր բեռից ազատվել. ~s *խսկց.* մեծ քանակություն. ~s of time/people մեծ քանակությամբ ժամանակ/մարդիկ. (տարբեր) teaching ~ մանկավարժական ծանրաբեռնվածություն. ~ of rubbish հիմարություն. a heavy ~ of responsibility պատասխանատվության ծանր բեռ:  
**load** [ləʊd] v բեռնել, բարձել. ~ the ship/the car նավը/մեքենան բեռնել. ~ work to one's assistants օգնականներին աշխատանքով ծանրաբեռնել. (պարգևատրել, շնորհել) ~ smb with honours հարգանք մատուցել/մեծարել. (լցնել, լիցքավորել) ~ the gun/camera հրացանը/ֆոտոապարատը լիցքավորել:  
**loaded** ['ləʊdɪd] a բեռնված. a ~ question *փխբ.* նենգոտ հարց:  
**loader** ['ləʊdə] n բեռնիչ, բարձիչ. *ռզմ.* լիցքավորող:

**loading** ['ləʊdɪŋ] n բեռնում, բարձում. լիցքավորում, լիցք:  
**load-pack** ['ləʊdɪpæk] n հակ, բեռ:  
**loaf** [ləʊf] n, v բոքոն (սև). բատոն, բուլկի (սպիտակ). շաքարի գլուխ (*նաև* sugar ~). *խսկց.* գլուխ:  
**loafer** ['ləʊfə] n դատարկապորտ/ծուլ մարդ:  
**loam** [ləʊm] n պարարտ կավահող. կաղապարման կավ. sandy ~ ավազահող:  
**loamy** ['ləʊmi] a կավային, կավախառն:  
**loan** [ləʊn] n փոխառություն, վարկ. interest-free ~ անտոկոս վարկ/փոխառություն. long-term ~ երկարատև վարկ. low-interest ~ արտոնյալ պայմաններով փոխառություն. ~ agreement փոխառության պայմանագիր. ~ capital փոխառված միջոցներ. ~ interest փոխատվության շահ. secured ~ երաշխավորված փոխատվություն. state ~ պետական փոխատվություն repayment of a ~ վարկի մարում. domestic ~ ներքին փոխառություն:  
**loan** [ləʊn] v փոխառություն/փոխ/վարկ տալ. փոխ առնել. I ~ed my brother's car եղբորս մեքենան փոխ վերցրի:  
**loan-translation** ['ləʊntræns,leɪʃn] n *լեզվբ.* պատճենավորում, պատճենում:  
**loan-word** ['ləʊnwɜ:d] n փոխառնված բառ, փոխառություն:  
**loath** [ləʊθ] a անտրամադիր, դժկամ. be ~ չցանկանալ. be ~ to leave չցանկանալ մեկնել. nothing ~ սիրով, ուրախությամբ:  
**loathe** [ləʊð] v զզվանք զգալ. *խսկց.* չսիրել,ատել. I ~ housework Տանել չեմ կարող տնային աշխատանքը:  
**loathsome** ['ləʊðsəm] a զզվելի, նողկալի:  
**lob** [lɒb] n *մրզ.* "մոմ" հարված. ~ an opponent over շրջանցել մրցակցին "մոմ" հարվածով:  
**lobby** ['lɒbi] 1. n նախասենյակ, նախասրահ. *փխբ.* պառլամենտական կուլուարներ. շահախումբ. լոբբի. 2. v ազդել պառլամենտի/ կոնգրեսի վրա. ~ for/against a bill օրինագծի կողմ/թեր քվեարկելու կամպանիա վարել:  
**lobbyist** ['lɒbiɪst] n շահախմբակից. լոբբիստ.  
**lobe** [ləʊb] n բլթակ, բլիթ. ~ of the ear (*նաև* earlobe) ականջաբլթակ:  
**lobster** ['lɒbstə] n ծովախեցգետին, օմար. red as a ~ խեցգետնի նման կարմիր. ~eyed

չռած/դուրս պրծած աչքերով:  
**local** [ˈləʊkəl] n տեղացի, տեղի բնակիչ. ~ authorities տեղական իշխանություններ. ~ usage տեղի սովորույթները. ~ union տեղական կազմակերպություն. ~ newspaper տեղական թերթ. the ~ տեղական պանդոկ:  
**local** [ˈləʊkəl] a տեղային, տեղական. ~ time տեղական ժամանակ. ~ colour տեղային կոլորիտ. *հմկրգ.* ~ mode ինքնավար/լուկալ ռեժիմ. ~ variable տեղական փոփոխական:  
**localism** [ˈləʊk(ə)lɪz(ə)m] n մեղ հայրենասիրություն, տեղական շահեր:  
**locality** [ləʊˈkælɪti] n տեղ, վայր, տեղանք, շրջակայք. (տեղանքում) կողմնորոշվելու ընդունակություն. have no sense of ~ վատ կողմնորոշվել:  
**localize** [ˈləʊkəlaɪz] v տարածումը սահմանափակել. տեղափակել, մեկուսացնել. բժշկ. տեղայնացնել:  
**locate** [ləʊˈkeɪt] v տեղը հայտնաբերել/որոշել. ~ the town on the map քաղաքը քարտեզի վրա գտնել. The doctor ~d the source of the pain Բժիշկը որոշեց ցավի պատճառը (տեղավորել, տեղակայել). be ~d բնակվել, տեղավորված լինել. The office is ~d... Գրասենյակը գտնվում է...:  
**location** [ləʊˈkeɪʃn] n տեղ, տեղադրություն, դիրք. a suitable ~ հարմար վայր/տեղ. They are on ~ in Sochi (կիմո) Նրանք նկարահանվում են Սոչիում:  
**lock** I [lɒk] n խոպոպ. ~s մագեր. փունջ (մագի, բրդի):  
**lock** II [lɒk] n կողպեք, փակ, փականք. keep under ~ and key փակի տակ պահել. (ամբարտակ) ~ gate ամբարտակի դարպաս. ~ keeper ամբարտակի պետ. ~ of a gun հրացանի փակաղակ:  
**lock** [lɒk] v կողպել, փակել. ~ the door դուռը կողպել. He has ~ed himself out of the flat Պատահաբար փակվել է բնակարանի դուռը, և դուրսն է մնացել. They were ~ed in combat Նրանք մարտի բռնվեցին. The parts ~ed into each other Մասերը միակցվել են. His jaws were tightly ~ed Նրա ծնոտները ամուր սեղմվեցին:  
**locker** [ˈlɒkə] n կողպվող պահարան:  
**locket** [ˈlɒkɪt] n մեղալիոն:  
**lock-keeper** [ˈlɒk,ki:pə] n ջրարգելակի պահակ:

**lockout** [ˈlɒkaʊt] n լոքաութ. *հմկրգ.* շրջափակում, փակում, կողպում:  
**locksmith** [ˈlɒksmiθ] n փականագործ:  
**lock-stitch** [ˈlɒkstɪtʃ] n մեքենակար:  
**lock-up** I [ˈlɒkʌp] n աշխատանքի/դասերի ավարտ. խանութները փակելու ժամ. սթափարան, զգաստարան. *խսկց.* բանտ:  
**lock-up** II [ˈlɒkʌp] *հմկրգ.* փակուղի ծրագրում:  
**locomotive** [ˈləʊkə,məʊtɪv] n ջերմաքարշ. a steam ~ շոգեքարշ. ~ depot *երկթ.* շոգեքարշների դեպո:  
**locum** [ˈləʊkəm] n ի տեղի. do ~s պարտականությունները ժամանակավոր կատարել. ~ tenens ժամանակավոր պաշտոնակատար:  
**locust** I [ˈləʊkəst] n մորեխ:  
**locust** II [ˈləʊkəst] n սպիտակ ակացիա:  
**locution** [ləʊˈkju:ʃn] n ոճ. դարձված, իդիոմ:  
**lode** [ləʊd] n (հանքանյութի) երակ, հանքաշերտ:  
**lodestar** [ˈləʊdstɑ:] n բևեռային աստղ. *փիսք.* ուղեցույց աստղ:  
**lodge** [lɒdʒ] n տնակ, պահատնակ. hunting ~ որսորդական տնակ. porter's ~ բարապանի տեղը. masonic ~ մասոնական ժողովարան/օթյակ:  
**lodge** [lɒdʒ] v տեղավորվել. բնակվել (ժամանակավոր). We ~d with the doctor Մենք գիշերեցինք բժշկի տանը. ~ a complaint գանգատ տալ. ~ power with smb իշխանությանը օժտել. ~ in the memory հիշողության մեջ տպավորել. The bullet ~d in his shoulder Գնդակը խրվեց նրա ուսի մեջ. *իրավ.* ներկայացնել. ~ a claim հայց ներկայացնել. ~ an appeal վճռաբեկ դիմում ներկայացնել:  
**lodger** [ˈlɒdʒə] n տնվոր, կենվոր, վարձով ապրող. take in ~s կենվորներ պահել:  
**lodging** [ˈlɒdʒɪŋ] n կացարան, բնակարան. վարձու սենյակ. dry ~ վարձու սենյակ (առանց պարենավորման). a night's ~ գիշերելու տեղ. have full board and ~ լրիվ պարենավորված գիշերօթիկ հյուրանոց:  
**lodging-house** [ˈlɒdʒɪŋhaʊs] n (վարձու) կահավորված սենյակներ:  
**lodgment** [ˈlɒdʒmənt] n կացարան, ապաստարան. բնակարան. կայուն վիճակ. հենարան:  
**loft** [lɒft] n ձեղնահարկ, վերնասրահ, վերնահարկ. hay ~ խոտանոց. pigeon ~ աղավ-

նատուն:  
**loftiness** [ˈlɒftɪnəs] n բարձունք, բարձրություն. *փխբ.* վեհություն, վայելչակազմություն. գոռոզություն, ամբարտավանություն:  
**lofty** [ˈlɒfti] a բարձր. *փխբ.* վեհ, վսեմ. բարձրամիտ, գոռոզ:  
**log** [lɒg] n, v գերան. *ծով.* նավի մատյան, լագ. գերան կտրել. նավի մատյանում գրանցել. sleep like a ~ մեռածի նման քնել. ~ off արմատախիլ անել. ~ house գերաններից շինած տուն. *հմկրգ.* գրանցամատյան:  
**log** [lɒg] v *հմկրգ.* գրանցել, արձանագրել. ~ in մտնել համակարգ. ~ off/out ելնել համակարգից. ~ on մտնել համակարգ.  
**log-book** [ˈlɒgbʊk] n հաշվառման գիրք. նավի մատյան. ինքնաթիռի տեղեկամատյան. տեղեկությունների գրանցում:  
**logged** [lɒgd] a անտառից մաքրված. ջրով հագեցած:  
**logger** [ˈlɒgə] n անտառաշահատ:  
**loggerhead** [ˈlɒgəhed] n չափից դուրս մեծ գլուխ. be at ~s գժտվել, կռվել. fall to ~s ծեծկռտվել. set at ~s կռվացնել:  
**logging** [ˈlɒɡɪŋ] n փայտամթերում. (տեղեկությունների) գրանցում:  
**logic** [ˈlɒdʒɪk] n տրամաբանություն. a mistake in ~ տրամաբանական սխալ:  
**logical** [ˈlɒdʒɪkəl] a տրամաբանական, տրամաբանության. the ~ conclusion տրամաբանական եզրակացություն. ~ relevance տրամաբանական հիմնավորվածություն. *հմկրգ.* ~ block number բլոկի տրամաբանական համար. ~ data base տրամաբանական տվյալների բազա. ~ multiplication տրամաբանական բազմապատկում, կոմյունկցիա. ~ operation տրամաբանական օպերացիա. ~ product տրամաբանական արտադրյալ. ~ record տրամաբանական գրառում. ~ shift տրամաբանական տեղաշարժ. ~ value տրամաբանական արժեք:  
**logo** [ˈlɒɡəʊ] (*կրճ.* logotype-ից) n (բառային և գրաֆիկական) խորհրդանիշ/ապրանքանիշ:  
**log-rolling** [ˈlɒg,rɔːlɪŋ] n գերանների գլորում. *փխբ.* փոխադարձ ծառայություն:  
**loin** [lɔɪn] n զոտկատեղ. կենդանու սուկի. a ~ of lamb ոչխարի սուկի. gird up one's ~s պատրաստվել որևէ լուրջ քայլի:

**loin-cloth** [ˈlɔɪnkloʊθ] n ազդրաշոր. կիսավարտիք:  
**loiter** [ˈlɔɪtə] v հապաղել, դանդաղել, ուշանալ. ~ over a job աշխատանքը ձգձել. Don't ~ Մի՛ դանդաղի/ուշացնի. դատարկ/պարապ-սարապ ման/թրև գալ. ~ at street corners փողոցներում թրև գալ:  
**loll** [lɒl] v փռվել, մեկնվել, ծուլանալ. ~ on the sofa ծուլորեն բազմոցին մեկնվել. The dog's tongue was ~ing Շան լեզուն դուրս էր կախվել:  
**lollipop** [ˈlɒlɪpɒp] n սառնաշաքար. կոնֆետ փայտիկի վրա:  
**lone** [ləʊn] a մենակ, միայնակ. *կտկ.* չամուսնացած. ~ parent միայնակ ծնող. ~ parent family միայնակ ծնողով ընտանիք. play a ~ hand մենակ գործել:  
**lonely** [ˈləʊnli] a միայնակ, մենավոր. անմարդաբնակ, ամայի. feel ~ միայնակ զգալ. a ~ place մենավոր/մեկուսի վայր. a ~ road ամայի ճանապարհ. lead a ~ life մեկուսացած կյանք վարել:  
**lonesome** [ˈləʊnsəʊm] a մենակ, թախծոտ, վշտահար:  
**loner** [ˈləʊnə] n մենություն սիրող. He's a ~ Նա սիրում է մենակ ապրել:  
**long** [lɒŋ] n երկար ժամանակամիջոց. before ~ շուտով, շատ չանցած. for ~ երկար ժամանակով. It is ~ since ... Վաղուց է, որ... It will not take ~ երկար չի տևի. the ~ and the short of it կարճ ասած:  
**long** [lɒŋ] a երկար. How ~ is...? Որքա՞ն է ... երկարությունը. ~ leasehold երկարատև վարձակալություն. ~ robe դատավորի թիկնոց. ~ efforts հսկայական/մեծ ջանքեր. (ժամանակ) երկարատև, տևական. a ~ time ago շատ վաղուց. a ~ talk երկարատև խոսակցություն. for a ~ time երկար ժամանակ. be ~ in coming ուշանալ. How ~ you are Ի՞նչ ծանր ես շարժվում. It's a ~ shot Քիչ հույս կա:  
**long** [lɒŋ] adv երկար ժամանակ/ով, վաղուց. ~ ago վաղուց. as ~ as, so ~ as քանի դեռ. ~ after երկար ժամանակ անց. all day ~ ամբողջ օրը. ~ since վաղուց ի վեր. ~ before շատ առաջ. So ~ *խսկց.* Ցտեսություն, Յը. any/no ~er այլևս:  
**long** [lɒŋ] v փափագել, խիստ ցանկանալ սպասել. ~ for a smoke շատ ուզեմալ ծխել. ~

- for the day սպասել այդ օրվան. ~ to return there երազել վերադառնալ. (կարոտել) ~ for one's friends ընկերներին կարոտել. I'm ~ing to sleep *խսկց*. Ուշքս գնում է քնելու համար:
- longago** [ˈlɒŋə,ɡəʊ] n, a վաղ անցյալ. վաղուց անցած, հեռավոր:
- long awaited** [ˈlɒŋəweɪtɪd] a երկար սպասված:
- long-bow** [ˈlɒŋbəʊ] n երկար, մեծ աղեղ. draw/pull the ~ չափազանցնել:
- long-distance** [ˈlɒŋˈdɪstəns] a երկար տարածություն. ~ call միջազգային հեռախոսակցություն. ~ work աշխատանք հեռախոսային համացանցով. ~ race *մրզ*. երկար տարածության վազք:
- long-drawn(-out)** [ˈlɒŋdrɔːnˈaʊt] a չափազանց ձգված:
- longevity** [lɒnˈdʒeɪvəti] n երկարակեցություն:
- longhand** [ˈlɒŋhænd] n սովորական գրելածև, ոչ սղագիր. take notes in ~ սղագիր չօգտագործել:
- long-headed** [ˈlɒŋˈhedɪd] a խորաթափանց, խորամանկ:
- longing** [ˈlɒŋɪŋ] n բուռն ցանկություն, ձգտում, կարոտ:
- longitude** [ˈlɒŋdʒɪtjuːd] n *աշխրգ*. երկայնություն:
- longitudinal** [ˈlɒŋdʒɪˈtjuːdɪnəl] a *աշխրգ*. երկայնության:
- long-lasting** [ˈlɒŋˈlɑːstɪŋ] a երկարատև. ~ agreement երկարաժամկետ համաձայնագիր:
- long-lived** [ˈlɒŋˈlɪvd] a երկարակյաց. երկարատև:
- long-range** [ˈlɒŋˈreɪndʒ] a հեռահար, հեռածիգ. հեռավոր գործողության:
- longshoreman** [ˈlɒŋʃɔːmən] n մավահանգստային բեռնիչ:
- long-sighted** [ˈlɒŋˈsaɪtɪd] a հեռատես (*մառ փխբ*):
- longspun** [ˈlɒŋspʌn] a երկարածված, ձանձրալի:
- long-standing** [ˈlɒŋˈstændɪŋ] a վաղուցվա, վաղեմի, հին. a ~ friendship/joke վաղեմի ընկերություն. հին կատակ:
- long-suffering** [ˈlɒŋˈsʌfərɪŋ] a բազմաչարչար:
- long-term** [ˈlɒŋˈtɜːm] a երկարաժամկետ. ~ loan երկարաժամկետ վարկ. ~ plans ապագա ծրագրեր. ~ planning հեռանկարային պլանավորում:
- long-tongued** [ˈlɒŋˈtʌŋd] a երկայնալեզու, շատախոս:
- longways** [ˈlɒŋweɪz] adv երկայնությանը, երկայնքով:
- long-winded** [ˈlɒŋˈwɪndɪd] a երկարաշունչ. *փխբ*. երկարաբան, ձանձրալի:
- loo** [luː] n *խսկց*. զուգարան:
- looby** [ˈluːbi] n հիմար/տխմար/անխելք մարդ:
- loofah** [ˈluːfə] n *բսբ*. դոմազգիներին պատկանող բույս. ճիլոպ:
- look** [lʊk] n հայացք, նայվածք. quick/blank/sharp/vacant/longing /solemn ~ արագ/անիմաստ/բացակայող/սուր/կարոտալից/հանդիսավոր հայացք. a ~ of suspicion կասկածելի հայացք. take/give/have a ~ նայել, հայացք ձգել, ակնարկ նետել. give a searching ~ քննող հայացքով նայել. have a ~ for smb/smith փնտրել մեկին/մի բան. have a ~ round շուրջը նայել. take a close ~ ուշադիր/զննաբար նայել. (տեսք) the ~ of him նրա տեսքը. excited/unusual ~ հուզված/անսովոր տեսք. have a deserted ~ լքված տեսք ունենալ. He has a ~ of his father Նա նման է հորը. ~s արտաքին. go by ~s արտաքինից դատել. have good ~s գեղեցիկ լինել:
- look** [lʊk] v նայել. ~ coldly /suspiciously/ inquiringly նայել սառնորեն/ կասկածանքով/ հարցական. ~ straight ahead ուղիղ առաջ նայել. ~ alive! Շտապիր. արագ. L~ here! Լսիր. L~ sharp! Աչալուրջ եղիր. (տեսք ունենալ) ~ like նման լինել. ~ hideous ահավոր տեսք ունենալ. ~ well լավ տեսք ունենալ. ~ heavy ծանր երևալ/թվալ. it ~s like կարծես թե. It ~s like rain կարծես թե անձրև է գալիս. it would ~ as if թվում է/կարծես թե. ~ black մռայլ տեսք ունենալ. ~ blue վիատ/տխուր տեսք ունենալ. (նայել, դարձած լինել) The house ~ed west/on the river Տան պատուհանները նայում էին արևմուտք/շրջված էին դեպի գետը. You don't ~ yourself Դու քեզ նման չես. ~ as if այնպիսի տեսք ունենալ կարծես թե. (համարել) ~ on smn as a friend մեկին ընկեր համարել. ~ about շուրջը նայել. ~ after հետևել, խնամել, հոգ տանել. ~ after flowers

ծաղիկներ խնամել. L~ after yourself Ջգույշ. եղիր, Ջգուշացիր. ~ ahead առաջ նայել, դեպի ապագան. L~ ahead! Ջգույշ. ~ at նայել. He wouldn't ~ at the idea Նա նույնիսկ լսել չէր ուզում այդ մասին. ~ away աչքերը /հայացքը հեռացնել. ~ back հետ նայել. ~ down ներքև նայել. *փխբ.* վերևից նայել. արհամարհել. ~ for փնտրել. ~ for a job աշխատանք փնտրել. ~ forward (to) ակնկալել, կանխավայելել. ~ on համարել, դիտել. ~ on it as an insult դիտել որպես վիրավորանք. ~ out զգուշանալ, զգույշ լինել. գտնել. ~ over աչքի անցկացնել. ~ over an article թերթի հոդվածը աչքի անցկացնել. ~ through աչքի անցկացնել (միջով նայել). ~ through a telescope հեռադիտակով (միջով) նայել. ~ to հույս դնել/ուճեցնել. ~ to smn for help որևէ մեկի օգնությանը դիմել. ~ up վեր նայել. He ~ed up from his book Նա աչքերը գրքից կտրեց/վեր նայեց. ~ up and down հայացքով չափել/զննել (ոտքից գլուխ). ~ up to smn հարգել, հարգանքով վերաբերվել. Things are ~ing up *փխբ.* Գործերը լավ են զնում:

**looker-on** ['lʊkəɪ,ɒn] n դիտորդ, դիտող:

**look in** ['lʊkɪn] n անցողակի հայացք. ակնարկ. կարճատև այցելություն. have a ~ in *մրգ.* հաջողության շանսեր ունենալ:

**looking-glass** ['lʊkɪŋɡlɑ:s] n հայելի:

**look-out** ['lʊkaʊt] n դիտակայան, դիտող. աշխրջություն, զգոնություն. on the ~ for զգույշ, զգաստ. (փնտրում) be on the ~ for talent տաղանդներ փնտրել. (հեռանկար) a poor ~ ոչ ուրախալի հեռանկար:

**look up** ['lʊkʌp] n *հմկրգ.* որոնում. ~ table որոնման աղյուսակ:

**loom** [lu:m] n ջուլիակահաստոց:

**loom** [lu:m] v աղոտ կերպով պատկերանալ, նշմարվել:

**loop** [lu:p] n հանգույց, օղակ. *ամ.* մահվան օղակ. ~ the lup մահվան օղակ կատարել. The river makes a ~ round the town Գետը շրջանցում է քաղաքը. ~ line *երկթ.* շրջապտույտ երկաթուղի. ~ letters օղակավոր/հանգուցավոր տառեր:

**loop-aerial** ['lu:p,æəriəl] n շրջանակածև անտեննա:

**loop-hole** ['lu:p,həʊl] n *ռզմ.* հրակնատ. *փխբ.* սողանք, ելք. He left himself a ~ Նա

իր համար սողանք (դուրս պրծնելու ճանապարհ) թողեց:

**loopy** ['lu:pi] a գժված, ցնդած, խելքը կորցրած:

**loose** [lu:s] 1. a ազատ (հագուստ). թուլացած, արձակ. a ~ collar/belt/coat ազատ (ոչ սեղմ) օձիք/գոտի/վերարկու. The button is ~ կոճակը թուլացել է. wear one's hair ~ մազերը արձակ թողնել. (չամրացված) ~ nail/window frame/ tooth/knot թուլացած մեխ. վատ ամրացրած փեղկեր. շարժվող ատամ. քանդված հանգույց. ~ bandage ոչ ամուր վիրակապ. ~ connection վատ կոնտակտ. (սանձարձակ, անբարոյական) ~ conduct/morals սանձարձակ վարք/բարքեր. a ~ woman/life անբարոյական կին/կյանք. a ~ translation *փխբ.* ազատ/ ոչ ճշգրիտ թարգմանություն. get a screw ~ *փխբ.* մի ծալը պակաս լինել. be at a ~ end *փխբ.* զբաղմունք չունենալ. let ~ ազատ արձակել. break/get ~ դուրս պրծնել/փախչել. 2. adv ազատորեն, լայնորեն. ոչ ճշգրիտ կերպով:

**loose** [lu:s] n ելք արտահայտում. give (a) ~ to one's feelings զգացմունքներին ազատություն տալ:

**loose** [lu:s] v արձակել, ազատություն տալ. կապը թուլացնել/արձակել/քանդել. գնդակը արձակել:

**loose-cover** ['lu:skʌvə] n ծածկոց կահույքի (չեխուլ):

**loose-leaf** [ˌlu:s'li:f] n ներդիր էջերով:

**loosen** ['lu:sn] v թուլացնել, մեղմացնել. փխրեցնել. արձակել. ~ the bandage/nut/knot վիրակապը/պնդոդակը/հանգույցը թուլացնել. The medicine ~ed his cough Դեղը մեղմացրեց նրա հազը. Wine ~ed his tongue Գինին արձակեց նրա լեզուն. ~ the soil հողը փխրեցնել. ~ up *մրգ.* թնրագերծվել, ընդարմագերծ լինել:

**loot** [lu:t] n ավար, թալան, կողոպուտ:

**looter** ['lu:tə] v, n կողոպտել, թալանել. գող, կողոպտիչ:

**looting** ['lu:tɪŋ] n կողոպուտ:

**lop** [lɒp] n, v ճյուղեր, ոստափայտ. ճյուղեր կտրել/խուզել (*մակ* ~ away/off):

**lop** [lɒp] v կախվել, կախ ընկնել. կախել, կախ գցել:

**lope** [ləʊp] n, v թռիչք, ոստյուն (կենդանի-

ների). թռչկոտելով վազել:  
**lop-eared** [ˌlɒpˈiəd] a կախականց:  
**loppings** [ˈlɒpiŋz] n կտրտած ճյուղեր/ ուտեր:  
**lop-sided** [ˌlɒpˈsaɪdɪd] a ծուռկող ծուռկողանի:  
**loquacious** [ləʊˈkweɪʃəs] a շատախոս, գրուցատեր:  
**loquacity** [ləʊˈkwæʃəti] n շատախոսություն:  
**lord** [lɔːd] n լորդ (տիտղոս). my ~ տեր իմ, միլորդ. ~ of the manor կալվածատեր. House of L~s (ՄԲ) Լորդերի պալատ. *խսկց.* "Lords" Լորդերի պալատ. Lord Աստված. The L~'s prayer "Չայր մեր" Good L~! Աստված իմ. L~ knows Աստված գիտե. the press ~s մամուլի արքաները:  
**lordly** [ˈlɔːdli] a լորդավայել, ազնվականական. գոռոզ, տիրական:  
**lordship** [ˈlɔːdʃɪp] n լորդի տիտղոս. իշխանություն, տիրապետություն. your ~ ձերդ պայծառափայլություն:  
**lore** [lɔː] n գիտության ճյուղ:  
**lorgnette** [lɔːnˈʒet] n լոռնետ, թատրոնի/թատերական հեռադիտակ:  
**lorry** [ˈlɒri] n բեռնատար ավտոմեքենա. երկթ. բաց վագոն, պլատֆորմ. ~ driver բեռնատար մեքենայի վարորդ. a ~ load of coal մի բեռնատար մեքենա ածուխ:  
**lose** [luːz] v կորցնել, կորուստ ունենալ. ~ a friend/altitude/interest/hope/faith ընկեր/բարձրություն/հետաքրքրությունը /հույսը/ հավատը կորցնել. (զրկվել) ~ sight տեսողություննից զրկվել. ~ chance առիթը ձեռքից բաց թողնել. The watch ~s a minute a day ժամացույցը օրը մեկ րոպեով ետ է ընկնում ~ sight of the fact տեսադաշտից դուրս թողնել. It lost him his job Նա զրկվեց իր աշխատանքից. I lost that word ես չլսեցի այդ բառը. ~ one's temper ջղայնանալ. ~ one's head գլուխը կորցնել. ~ one's heart ընկճվել, հուսահատվել. ~ one's mind խելքը թռցնել. ~ weight քաշը կորցնել/նիհարել. ~ one's life զոհվել. ~ one's way մոլորվել. ~ one's wits իրեն կորցնել. ~ one's nerve ինքնատիրապետությունը կորցնել. be lost at sea խեղդվել ծովում. All is lost Ամեն ինչ կորած է. be given up as lost կորած համարվել. a lost art մոռացված արվեստ. be lost in the book գրքով տարվել. The joke was lost on him Նա չհասկացավ կա-

տակը/տեղ չհասավ. ~ a game/a war/a lawsuit/money at cards խաղը/պատերազմը կորցնել. պարտվել, կորցնել դատական գործը/փողը թղթախաղի ընթացքում. You can't ~ *խսկց.* Դուք կորցնելու ոչինչ չունեք:

**loser** [ˈluːzə] n պարտվող, կորցնող, տարվող. be a good/bad ~ (չ)/ կարողանալ պարտվել/տարվել. come off the ~ պարտվող կողմը լինել:

**loss** [lɒs] n կորուստ. ~ of altitude/blood/memory բարձրության/արյան/հիշողության կորուստ. ~ of office պաշտոնի կորուստ. suffer great/heavy ~s մեծ կորուստներ ունենալ. ~ of nationality քաղաքացիություննից զրկվելը. capital ~ *իրավ.*, *տնտ.* հիմնական միջոցների ինքնանվազում. total ~ լրիվ կորուստ. constructive total ~ գույքի ամբողջական վնաս. ~ of strength ուժերի թուլացում. be at a ~ իրեն կորցնել. be at a ~ for words բառեր չգտնել. ~ of time ժամանակի կորուստ. (վնաս) sell at a ~ վնասով վաճառել. meet with a ~ վնաս կրել. operate at a ~ վնասով շահագործել. This car is a dead ~ *խսկց.* Այս մեքենան տնաքանդություն է. *հնկրգ.* ~ of control ղեկավարման կորուստ. ~ of information ինֆորմացիայի կորուստ. lost property office գտնված իրերի բյուրո/գրասենյակ:

**lot** [lɒt] n վիճակ, վիճակահանություն. *փխք.* բախտ, ճակատագիր. cast/draw ~s վիճակ գցել. by ~ վիճակահանությամբ. The ~ fell on me վիճակը ինձ ընկավ. a hard ~ ծանր ճակատագիր. (ապրանքի մասնաքանակ) The goods were sent in three ~s Ապրանքը ուղարկվեց երեք մասնաքանակով. (աճուրդավաճառք/ համար, թիվ. ~ 20, a table համար քսան – սեղան. a bad ~ *փխք.* սրիկա, ստոր. (հողամաս, հողակտոր/ a vacant ~ ազատ հողամաս. parking ~ կայանատեղ. կայանում, փարքինգ. (մեծ քանակություն) ~s and ~s ահագին քանակություն. ~ and ~ of money փողի հսկայական գումար. a fat ~ *խսկց.* խիստ շատ. quite a ~ of flowers բավական շատ ծաղիկներ. such a ~ to do այնքան շատ գործ անելու. give a ~ to know շատ բան տալ իմանալու համար. What a ~ of rubbish Ինչ հիմարություն. *խսկց.* բոլորը, ամեն ինչ. That's the ~ Դա բոլորն է. Take the ~ Վերցրու բոլորը:

**lot** [lɒt] adv a ~ շատ հաճախ. I read a ~ ես

շատ են կարողում. We see a ~ of her Մենք նրան հաճախ ենք տեսնում. change a ~ շատ փոխվել. a ~ better շատ ավելի լավ. A fat ~ you care *խսկց*. Շատ պետքդ է:

**lotion** ['lɒʃən] n դեղաթրջոց, թրջոց. լոսյոն. *խսկց*. ոգելից խմիչք:

**lottery** ['lɒtəri] n վիճակախաղ. ~ bonds վիճակախաղի պարտատոմսեր. ~ tickets վիճակախաղի տոմսեր:

**lotto** ['lɒtəʊ] n լոտո:

**lotus** ['lɒtəs] n *բար*. լոտոս (ծաղիկ):

**lotus-eater** ['lɒtəs,i:tə] n *խսկց*. դատարկ երազող:

**loud** [laʊd] a բարձր, բարձրաձայն, հնչել. a ~ voice/cry/laugh բարձր ձայն/ճիչ/ծիծաղ. a ~ hoot (ավտոյի) ուժեղ շչակ. ~ colours ճչացող գույներ. She is very ~ *փխբ*. Նա շատ վուլգար է. out ~ բարձրաձայն:

**loudly** ['laʊdli] adv բարձրաձայն, աղմուկով. աչք ծակրդ ձևով:

**loud-mouthed** [ˌlaʊdˈmaʊðd] a գոռոռացող, ճղճղան:

**loud-speaker** [ˌlaʊdˈspi:kə] n *ռադ*. բարձրախոս. a ~ van ռադիոսարքավորում ունեցող ավտոմեքենա:

**lounge** [laʊndʒ] n հյուրասենյակ, հանգստի սենյակ. a ~ suit կոստյում:

**lounge** [laʊndʒ] v թրև գալ. (բազկաթոռի մեջ) փռվել, ձգվել:

**lounger** ['laʊndʒə] n դատարկաշրջիկ, դատարկապորտ. անբան մարդ:

**louse** [laʊs] n ողի:

**lousy** ['laʊzi] a ողլոտ. *փխբ*. զգվելի, գարշելի, կեղտոտ:

**lout** [laʊt] n կոշտ/կոպիտ/անտաշ մարդ:

**loutish** ['laʊtɪʃ] a կոշտ, կոպիտ, անտաշ:

**lovable** ['lɒvəbl] a հրապուրիչ, գրավիչ:

**love** [lʌv] n սեր, սիրահարվածություն. be in ~ with սիրահարված լինել. fall in ~ սիրահարվել. fall out of ~ դադարել սիրելուց. be always in and out of ~ հեշտությամբ սիրահարվել. for ~ or money ամեն զնով. There is no ~ lost between them Նրանք միմյանց չեն սիրում/հակակրում են. ~ at first sight սեր առաջին հայացքից. marry for ~ սիրելով ամուսնանալ. my ~ սիրելիս, հարազատս. (սիրային) ~ story սիրային պատմություն. ~ affair սիրավեպ. ~ letter սիրային նամակ. ~ child ամուսնությունից դուրս/սիրուց ծնված

երեխա. (ողջույններ, բարևներ) Give them my ~ Հաղորդեք նրանց իմ ողջույնները. *մրգ*. գրո. ~ all Հաշիվն է գրո-գրո. one ~ to him մեկ գրո նրա օգտին. play for ~ առանց փողի խաղալ. a ~ game չոր-չոր տարված խաղ. for the ~ of ի սեր, հանուն սիրո:

**love** [lʌv] v սիրել. deeply/passionately/faithfully/sincerely խորը/կրքոտ սիրով/հավատարմորեն/անկեղծորեն սիրել. I'd ~ to see her շատ կուզեմայի. I'd ~ to see her Շատ կուզեմայի նրան տեսնել:

**loveless** ['lʌvləs] a անսեր, սիրո վրա չհիմնված (ամուսնություն):

**loveliness** ['lʌvlinəs] n գրավչություն, գեղեցկություն:

**lovelock** ['lʌvlɒk] n ճակատի վրայի փոքրիկ խոպոպիկ:

**lovely** ['lʌvli] a հիանալի, սքանչելի. ~ face/woman/gift/flowers գեղեցիկ դեմք. սքանչելի կին. հիանալի նվեր. հիասքանչ ծաղիկներ. a ~ pie համեղ կարկանդակ. What ~ view! Ի՞նչ հոյակապ տեսարան. a ~ person հոյակապ անձնավորություն. have a ~ time/event հոյակապ ժամանակ/երեկո անցկացնել:

**love-making** ['lʌvˌmeɪkɪŋ] n սիրատածում:

**love-match** ['lʌvmætʃ] n սիրո վրա հիմնված ամուսնություն:

**lover** ['lʌvə] n սիրեկան. սիրած մարդ. սիրող երկրպագու. a pair of ~s սիրահարված զույգ. սիրող (ոչ պրոֆեսիոնալ) music ~ երաժշտություն սիրող/սիրահար:

**lovesick** ['lʌvsɪk] a սիրուց տանջված. սիրատոչոր. be ~ սիրուց տանջվել:

**loving** ['lʌvɪŋ] a սիրող, քնքուշ, նվիրված. ~ glance սիրող հայացք. ~ words քնքուշ բառեր. ~ friend նվիրված ընկեր:

**loving-cup** ['lʌvɪŋkʌp] n շրջանաթաս, բուրդաթաս (խնջույքներում):

**low** [ləʊ] a ցածր, ցած. ~ price/wall/wage/frequency ցածր գին/պատ /աշխատավարձ/ հաճախականություն. of ~ birth ցածր ծագում ունեցող. ~ cost էժան, էժանագին. a ~ attendance ցածր/վատ հաճախում. a ~ dress խորը կտրվածքով հագուստ. ~ water տեղատվություն. ~ income փոքր/ցածր եկամուտ. a ~ whisper մեղմ շշմջոց. ~ tastes գեղեցիկ/կոպիտ ճաշակ. have a ~ opinion ցածր կարծիք լինել. ~ behaviour ցածր/վատ

վարք:  
**low** [ləu] adv ցածր. fly ~ ցածր թռչել. The sun is ~ Արևը թեքվել էր դեպի հորիզոն. The rivers are ~ Գետերում քիչ ջուր կա. Stocks are running ~ Պաշարները սպառվում են. feel ~ վատ տրամադրության մեջ լինել. *հմկրգ.* ~ memory հիշողություն:  
**low** [ləu] n, v բառաչ, բառաչել:  
**low-born** [ˌləuˈbɔ:n] a ցածր ծագումով/ծագում ունեցող:  
**low-browed** [ˈləubraʊd] a նեղճակատ:  
**low-down** [ˈləudaʊn] 1. a ստոր, անազնիվ.  
 2. n (խորա)զաղտնիք. He gave me the ~ Նա ինձ պատմեց բոլոր զաղտնիքները:  
**lower** [ˈləʊə] a ավելի ցածր, ներքևի, ներքին, ստորին. the ~ animals/classes/school ցածր կենդանիները/դասերը/դասարանները. the ~ deck ստորին տախտակամած. a ~ tooth ներքևի ատամ:  
**lower** [ˈləʊə] v իջնել, իջեցնել. նվազեցնել. ~ the blinds/the eyes/the head իջեցնել վարագույրները/աչքերը/գլուխը(կախել). ~ the boat նավակը ջուրն իջեցնել. ~ the prices/the voice գները/ձայնը իջեցնել. I wouldn't ~ myself Ես չեմ ստորանա:  
**lowermost** [ˈləʊəməʊst] a ամենացածր, ամենաստորին:  
**low-grade** [ˌləʊˈɡreɪd] n ցածրորակ, վատորակ:  
**low-heeled** [ˌləʊˈhi:lɪd] a ցածրակրունկ. ~ shoes ցածրակրունկ կոշիկներ:  
**lowland** [ˈləʊlənd] n դաշտավայր, ցածրավայր, հարթավայր:  
**low-level** [ˈləʊləvəl] a փոքր բարձրություն. a ~ flight/attack *ավ.* թռիչք փոքր/ցածր բարձրության վրա. հարձակում փոքր բարձրությունից. a ~ official մամր չինովնիկ:  
**lowly** [ˈləʊli] a, adv համեստ, խոնարհ. համեստորեն:  
**low-paid** [ˌləʊˈpeɪd] a ցածր վարձատրվող:  
**low-powered** [ˌləʊˈpaʊəd] a *տեխ.* սակավազոր/կարող. ~ car փոքրալիտրաժ ավտոմեքենա:  
**low-spirited** [ˌləʊˈspɪrɪtɪd] a վիատ, ընկճված:  
**loyal** [ˈlɔɪəl] a հավատարիմ. օրինապահ. անձնվեր. լոյալ:  
**loyalty** [ˈlɔɪəlti] n հավատարմություն, օրի-

նապահություն:

**L. s. d., £. s. d.** [ˌleɪsˈdi:] n ֆունտ ստեռլինգներ. շիլինգներ և պենսեր. *խսկգ.* հարստություն, փող:

**lubricant** [ˈlu:briːkənt] n, a քսուք, քսանյութ. քսելու, յուղելու:

**lubricate** [ˈlu:briːkeɪt] v յուղել. *փխք., խսկգ.* յուղել, կաշառել, կաշառք տալ. ~ing oil/grease քսայուղ:

**lubrication** [ˌlu:briːˈkeɪʃn] n քսում, յուղում:

**lubricator** [ˈlu:briːkeɪtə] n յուղաման. քսիչ, յուղիչ. քսանյութ, քսուք:

**lubricous** [ˈlu:briːkəs] a սահուն, սայթաքուն. *փխք.* ճարպիկ, խուսափող:

**luce** [lu:s] n գայլածուկ:

**lucent** [ˈlu:snt] a պայծառ, փայլուն. թափանցիկ, լուսանցիկ:

**lucerne** [lu:ˈsə:n] n *բսք.* առվույտ:

**lucid** [ˈlu:sɪd] a պարզ, հստակ, թափանցիկ. a ~ style/mind պարզ ոճ. հստակ միտք. հասկանալի/պարզ դատողություն. have ~ intervals հստակ գիտակցութեան պահեր ունենալ:

**lucidity** [lu:ˈsɪdətɪ] n պարզություն, հստակություն. հասկանալիություն:

**luck** [lʌk] n բախտ, հաջողություն, ճակատագիր. bad/ill ~ դժբախտություն, ծախորդություն. Good ~! Հաջողություն. rough ~ դառը ճակատագիր. by (good) ~ բարեբախտությամբ, բարեբախտաբար. as ~ would have it բարեբախտաբար. կարծես դիտմամբ. try one's ~ բախտը փորձել. devil's own ~ արտասովոր հաջողություն. down on one's ~ ծախորդության մեջ. Just my ~! Ինչպես միշտ, բախտս չի բերում. Better ~ next time Հաջորդ անգամ բախտդ կբերի. Worse ~! Դժբախտաբար. No such ~! Հույս էլ չունեն:

**luckily** [ˈlʌkɪli] adv բարեբախտաբար:

**luckless** [ˈlʌkləs] a դժբախտ, անհաջողակ, չարաբախտ:

**lucky** [ˈlʌkɪ] a բախտավոր, հաջողակ, բարեբախտ: ~ guess երջանիկ ենթադրություն. L~ you! Ինչպես էլ բախտդ բերում է. be born~ բախտավոր ծնվել. L~ beggar/dog! *խսկգ.* Բախտավոր. have a ~ escape հաջող ազատվել:

**lucrative** [ˈlu:krətɪv] a շահութաբեր, եկամտաբեր, շահավետ:



**lucre** [ˈlu:kə] n շահույթ, շահ, օգուտ. filthy ~ անարգ մետաղ (ոսկի, փող):

**ludicrous** [ˈlu:dikrəs] a անհեթեթ, անմիտ, ծիծաղելի:

**lug** [lʌg] n տեխ. կանթ, կոթ, բռնակ:

**lug** [lʌg] v քարշ տալ, քարշելով տանել. ձիգ տալ, ձգել. ~ the trunk ճամպուռը քարշ տալ:

**luggage** [ˈlʌgɪdʒ] n ուղեբեռ, բազած. ~ rack/van երկթ. ուղեբեռի դարակ. ապրանքատար վագոն. register the ~ ծանրոցը/ուղեբեռը հանձնել:

**lugubrious** [ləˈɡu:briəs] a տխուր, տրտում:

**lukewarm** [ˌlu:kˈwɔ:m] a գուլ, գաղջ. The water is ~ Ջուրը գուլ է. *փխբ.* անտարբեր. be ~ in the support of smth անտարբեր լինել որևէ բան սատարելու հարցում:

**lull** [lʌl] n դադար, ընդմիջում, խաղաղություն, հանգստություն. a ~ in the fighting/conversation դադար մարտի ընթացքում. ընդհատում զրույցի/խոսակցության ժամանակ. the ~ before the storm խաղաղություն փոթորկից առաջ:

**lull** [lʌl] v օրոր ասելով/օրորելով քնեցնել. ~ the baby to sleep երեխային օրորելով քնեցնել. *փխբ.* հանգստացնել, փարատել. She ~ed her fears/suspicious նա հանդարտեցրեց վախը, փարատեց/ցրեց կասկածները:

**lullaby** [ˈlʌləbaɪ] n օրոր, օրորոցի երգ:

**lumber** [ˈlʌmbə] n անտառանյութ. հին իրեր, հնոտիք, անպետքություն (խլամ). ~ camp անտառամթերողների ավան. ~ room խորդանոց:

**lumber** [ˈlʌmbə] v խճողել, իրար վրա լցնել. անտառանյութ մթերել: The attic is ~ ed with furniture Ձեղնահարկը (խառնիխուռն) լեփ լեցուն է հին կահույքով:

**lumbering** [ˈlʌmbəriŋ] n անտառահատում:

**lumberjack** [ˈlʌmbədʒæk], **lumberman** [ˈlʌmbəmən] n անտառահատ:

**lumber-mill** [ˈlʌmbəmil] n սղոցարան:

**lumber-room** [ˈlʌmbərʊm] n ցախատուն, ցախանոց:

**lumber-yard** [ˈlʌmbəjɑ:d] n փայտի պահեստ:

**luminary** [ˈlu:minəri] n լուսատու:

**luminescence** [ˌlu:miˈnesns] n լուսարձակում:

**luminous** [ˈlu:minəs] a լուսաշող, փայլուն.

պայծառ. a ~ watch լուսավոր թվահարթակով ժամացույց:

**lump** [lʌmp] n գունդ. կոշտ, մեծ կտոր. a ~ of sugar/cake/butter շաքարի/թխվածքի/կարագի կտոր. a ~ of clay կավի կտոր. a ~ of ice/stone սառույցի/քարի մեծակտոր. a ~ in the throat *փխբ.* ծանրության/կարկամի զգացմունք. in the ~ մեծ քանակությամբ. *փխբ.* ամբողջությամբ. ~ sum միանվագ գումար. It was paid in the ~ sum **Գումարը ամբողջությամբ վճարվեց.** (ուռուցք, ելունդ) a ~ on one's knee/forehead ուռուցք ծնկի վրա. ելունդ ճակատին. a ~ of a girl հաստիկ աղջիկ:

**lump** [lʌmp] v (together) խառնել մի կույտի մեջ. ~ under one heading մի խորագրի տակ միավորել. ~ it *խսկց.* հաշտվել, կուլ տալ. You have to ~ it (ուզես-չուզես) Ստիպված ես կուլ տալ:

**lumper** [ˈlʌmpə] n բեռնիչ.բարձող բանվոր:

**lumping** [ˈlʌmpɪŋ] a *խսկց.* հսկայական. խոշոր. ~ weight լրիվ քաշ:

**lumpish** [ˈlʌmpɪʃ] a անշնորհք, դանդաղաշարժ. բութ, հիմար:

**lumpy** [ˈlʌmpɪ] a կոշտ. գունդ-գունդ:

**lunacy** [ˈlu:nəsi] n խելագարություն, լուսնոտություն:

**lunar** [ˈlu:nə] a լուսնային, լուսնի:

**lunatic** [ˈlu:nətik] n խելագար, խելագարված. գիժ. հոգեկան հիվանդ. լուսնոտ. ~ asylum հոգեբուժարան:

**lunch** [lʌntʃ] n կեսօրյա նախաճաշ/ ճաշ. լենչ have/take ~ կեսօրին ճաշել/նախաճաշել. have a quick ~ թեթև ուտեստեղեն/նախաճաշ անել. basket ~ զբոսախնջույք, պիկնիկ:

**lunch** [lʌntʃ] v (*պշտ.*) ճաշ. (*ոչ պշտ.*) նախաճաշ. We ~ed off cheese Մենք պանրով նախաճաշեցինք:

**luncheon** [ˈlʌntʃən] n հարկիսավոր նախաճաշ:

**lunchtime** [ˈlʌntʃtaɪm] n (ճաշի) ընդմիջում. It's ~ ժամանակն է ճաշել:

**lung** [lʌŋ] n թոք. the ~s թոքեր. good ~s *փխբ.* ուժեղ ձայն. at the top of one's ~s ամբողջ ուժով. inflammation of ~s թոքերի բորբոքում:

**lunge** [lʌndʒ] n հարված (սուսերով և այլն). հրում, թափով շարժում:

**lupus** [ˈlu:pəs] n *բժշկ.* գայլախտ:

**lurch I** [lɜ:tʃ] **n**, **v** երերուն քայլվածք. կողա-  
թերուն. երերալով գնալ. կողաթեքվել. ~  
along the street երերուն քայլերով փողոցով  
գնալ. The lorry ~ed Բեռնատար մեքենան մի  
կողմի վրա թեքվեց:

**lurch II** [lɜ:tʃ] **n** leave smb in the ~ ծանր  
րոպեին մեկին լքել:

**lurcher** [ˈlɜ:tʃə] **n** մանր բաների գող, լրտես:  
**lure** [ljʊə] **v** գայթակղություն, հրապուրանք  
(մահ փխբ.) the ~ of the big city մեծ քաղաքի  
ձգողական ուժը/գայթակղությունները:

**lure** [ljʊə] **v** հրապուրել, գայթակղեցնել.  
գրավել. ~ into a trap հրապուրելով ծուղակը  
զգել. ~ smb away from smth մեկի ուշադրու-  
թյունը շեղել:

**lurid** [ˈljʊərið] **a** բոցավառվող. հրե, հրեղեն.  
չարագուշակ, մռայլ. a ~ sunset բոցավառ-  
վող/ հրե մայրամուտ. ~ details փխբ. չարա-  
գուշակ մանրամասներ:

**lurk** [lɜ:k] **v** թաքնվել, դաբանել. on the ~ դա-  
րան մտած. ~ in the bushes թփերում դաբա-  
նակալել:

**lurking-place** [ˈlɜ:kɪŋpleɪs] **n** թաքստոց,  
պատսպարան:

**luscious** [ˈlʊʃəs] **a** հյութալի, քաղցր, անու-  
շահամ. a ~ lovely փսկց. գլխահամ անող  
զեղեցկուհի:

**lush** [lʌʃ] **a** հյութեղ, փարթամ (բուսականու-  
թյուն). ~ meadows/vegetation հյութեղ մար-  
գազետիններ. փարթամ բուսականություն:

**lush** [lʌʃ] **n**, **v** ոգելից խմիչք. խմել, կոնծել:

**lust** [lʌst] **n** տարփանք, հեշտասիրություն,  
կիրք. փափագ, բաղձանք. ~ for power իշ-  
խանության փափագ/տենչանք:

**lustiness** [ˈlʌstɪnəs] **n** ուժ, կորով, առույգու-  
թյուն:

**lustre** [ˈlʌstə] **n** փայլ, շուք. փխբ. փառք,  
ջահ. add/give/throw ~ փայլ տալ, փառաբա-  
նել:

**lustreless** [ˈlʌstələs] **a** աղոտ, անփայլ:

**lustrous** [ˈlʌstrəs] **a** փայլուն, պսպղուն.  
հղկած, ողորկ:

**lusty** [ˈlʌstɪ] **a** ուժեղ, առողջ. a ~ voice/infant  
ուժեղ ձայն. առողջ երեխա:

**lute** [lu:t] **n** երժշ. վին:

**luxuriance** [lʌgˈzjuəriəns] **n** ճոխություն,

շքեղություն, հարստություն:

**luxuriant** [lʌgˈzjuəriənt] **a** փարթամ, ճոխ.  
առատ, հարուստ. ~ growth/hair փարթամ  
աճ/մազեր. ~ style գունազեղ/զարդ ոճ:

**luxuriate** [lʌgˈzjuəriət] **v** բուռն/փարթամ  
կերպով աճել. ճոխ ապրել. փարթամ կյանք  
վարել:

**luxurious** [lʌgˈzjuəriəs] **a** շքեղ, ճոխ, փար-  
թամ:

**luxur/y** [ˈlʌkʃəri] **n** շքեղություն, պերճանք.

live in ~ շքեղության մեջ ապրել. a life of ~  
շքեղ կյանք. ~ goods պերճանքի առարկա-  
ներ. I can't afford many ~ ies Չեմ կարող շատ  
շքեղ բաներ թույլ տալ. He denied himself  
every ~ Նա իրեն ոչ մի ավելորդություն թույլ  
չէր տալիս. It is a ~ today Այսօր դա ավելոր-  
դություն է. a ~ hotel շքեղ/ճոխ հյուրանոց:

**lying** [ˈlaɪɪŋ] **n**, **a** ստախտություն, ստելը.  
սուտ, կեղծ:

**lying** [ˈlaɪɪŋ] **n** պառկելը. պառկելու տեղ. մա-  
հիճ. dry/soft ~ չոր/փափուկ մահիճ. ~ in  
ծննդաբերություն:

**lymph** [lɪmf] **n** ֆիզ. ավիշ, լիմֆա. animal ~  
պատվաստանյութ, վակցինա. ~ gland ավ-  
շատար/լիմֆատիկ գեղձ:

**lymphatic** [lɪmˈfætɪk] **a** ավշային. անտար-  
բեր, ֆլեզմատիկ:

**lynch** [lɪntʃ] **v** լինչել, ինքնադատաստանի  
ենթարկել:

**Lynch law** [ˈlɪntʃlɔ:] **n** Լինչի դատաստան,  
ինքնադատաստան:

**lynx** [lɪŋks] **n** կենդ. լուսան:

**lynx-eyed** [ˌlɪŋksˈaɪd] **a** փխբ. սրատես:

**lyre** [ˈlaɪə] **n** քնար:

**lyre-bird** [ˈlaɪəbɜ:d] **n** քնարահավ:

**lyric** [ˈlɪrɪk] **n** քնարերգական. ~ poet քնար-  
երգու բանաստեղծ. ~ poetry քնարերգական  
բանաստեղծություն, քնարերգություն. ~s  
քնարերգություն:

**lyrical** [ˈlɪrɪkl] **a** քնարերգական, քնարա-  
կան. հիացած. He waxed ~ about the play Նա  
հիացմունքով էր խոսում ներկայացման  
մասին:

**lyricism** [ˈlɪrɪsɪz(ə)m] **n** քնարականություն,  
լիրիզմ:

**lyrist I** [ˈlɪrɪst] **n** քնարերգու, քնարերգակ:

## M

**lyrist II** [ˈlaɪərɪst] n քնարահար:

**M, m** [em] n անգլերեն այբուբենի 13-րդ տառը:

**ma** [ma:] n *խսկգ.* մամա:

**ma'am** [mæm] n (*կրճ.* madam-ից) տիկին, տիրուհի. (դիմելիս) մադամ:

**macaco** [məˈkeɪkəʊ] n մակակա (կապիկ):

**macabre** [məˈkæ:brə] մռայլ, սարսափելի. ~ humour մռայլ/սև հուճոր:

**macadam** [mæˈkædəm] n, a խիճ. խճապատ, խճուղու:

**macadamize** [mæˈkædəmaɪz] v խճուղի շինել, խճապատել. հանքածյութով/գուղրոնով ծածկել:

**macaroni** [ˌmækəˈrəʊni] n մակարոն:

**macaroon** [ˌmækəˈru:n] n մշով թխվածք:

**mace I** [meɪs] n մշկընկույզ, մշկընկույզի կեղեկ:

**mace II** [meɪs] n զայիսոն, մական:

**macerate** [ˈmæsəreɪt] v թրջոց դնել, կակղացնել. ուժասպառ անել. հյուժել, մաշել:

**maceration** [ˌmæsəˈreɪʃn] n թրջում, կակղացում. հյուժում, մաշում. ուժասպառություն:

**machination** [ˌmækiˈneɪʃn] n մեքենայություն, նենգություն. դավ:

**machine** [məˈʃi:n] n մեքենա, գործիք, դագճահ. մեխանիզմ, սարք. washing/sewing/knitting ~ վնագրի/կարի/գործող մեքենա. mincing ~ մսադագ. drilling ~ շաղափահաստոց. install/start /repair a ~ տեղադրել/գործի դնել/վերանորոգել մեքենան. (ապարատ) party/state ~ կուսակցական/պետական ապարատ. a ~ language մեքենայի/համակարգչային լեզու. the ~ age մեքենաների դար. ~ translation մեքենայական թարգմանություն. ~ readable մեքենայով կարդացվող. ~ shop մեխանիկական ցեխ. ~ tool դագճահ, հաստոց. the ~ tool industry հաստոցաշինական աղյուսաբերություն. *հմկրգ.* ~ dependent մեքենայից կախված. ~ independent մեքենայից անկախ. ~ oriented language մեքենայով կողմնորոշված լեզու. ~ readable համակարգիչ նուտք անելու հար

մար հարմար տեսք. ~ intelligence արհեստական ինտելեկտ. ~ learning մեքենայական ուսուցում:

**machine-gun** [məˈʃi:ngʌn] n, a գնդացի. գնդացի, գնդացրային:

**machine-gunner** [məˈʃi:n.gʌnə] n գնդացրորդ:

**machinery** [məˈʃi:nəri] n *հվք.* մեքենաներ, մեքենական սարքավորում. մեխանիզմ. պետական ապարատ. the ~ of law *փխք.* օրենսդրական ապարատ:

**machinist** [məˈʃi:nɪst] n մեքենավար, մեխանիկ, փականագործ:

**mackerel** [ˈmækrəl] n թյունիկ, սկուճրիա:

**mackintosh** [ˈmækɪntəʃ] n (*կրճ.* mae) մակինտոշ, անջրանցիկ վերարկու:

**macro** [ˌmækrəʊ] a, n մեծ, մակրո. *հմկրգ.* մակրոհրահանգ. ~ definition մակրոսահմանում. ~ code մակրոհրահանգ. ~ processor մակրոպրոցեսոր:

**macroeconomics** [ˌmækrəʊi:kəˈnɒmɪks] n մակրոտնտեսագիտություն:

**mad** [mæd] 1. a խելագար, խենթ, գիժ. go ~ գժվել, խելագարվել. drive/send one ~ խենթացնել, խելագարության հասցնել. like ~ խելագարի/խենթի մման. (կատաղի, կատաղած) a ~ dog կատաղած շուն. ~ with jealousy խանդից կատաղած. *խսկգ.* խիստ բարկացած. as ~ as a hatter լրիվ խելքը թռցրած. get ~ բարկանալ, գայրանալ. Don't be ~ at me Մի՛ բարկացիր ինձ վրա. be ~ about smth գժվել մի բանի վրա. She is ~ about tennis Թենիսը նրան խելքից հանել է. 2. adv run like ~ գժի պես վազել:

**madcap** [ˈmædkæp] n խենթ, խելառ թոկից փախած:

**madden** [ˈmædn] v խենթացնել, խելագարության հասցնել. խենթանալ, խելագարվել:

**made** [meɪd] a շինված, պատրասված. ~ dish օրվա ճաշատեսակ (մախօրոք պատրաստված). (մարմնակազմ) well ~ վայելչակազմ. stoutly ~ գեր, հաստ:

**mademoiselle** [ˌmædəmwəˈzel] n *ֆր.* օրհորդ:

**made-up** [ˌmeɪdʹʌp] a արհեստական, անբնական, կեղծ. բաղադրովի, հավաքովի. պատրաստի (հագուստ):  
**madhouse** [ˈmædhaʊs] n *խսկգ.* գժանոց:  
**madman** [ˈmædmən] n խելագար, գիծ մարդ:  
**madness** [ˈmædnəs] n խելագարություն, կատաղություն:  
**madwoman** [ˈmæd, wʊmən] n խելագար կին:  
**maelstrom** [ˈmeɪlstrɒm] n ջրապտույտ, հորձանուտ. *փխբ.* հորձանապտույտ, շրջապտույտ:  
**mafia** [ˈmæfiə] n մաֆիա. ~ tycoon մաֆիայի ղեկավար:  
**magazine** [ˌmæɡəˈzi:n] n ամսագիր, հանդես, ժուռնալ. *ռզմ.* զինամթերքների պահեստ:  
**maggot** [ˈmæɡət] n թրթուր, որդ. (քմահաճույք) a ~ in one's brain խենթություն:  
**magic** [ˈmædʒɪk] n մոգություն, կախարդություն. հմայք, կախարդանք. black ~ սև մոգություն. as if by ~ կարծես կախարդանքով. the ~ of the song երգի հմայքը:  
**magic(al)** [ˈmædʒɪk(əl)] a մոգական, կախարդական. հմայիչ:  
**magician** [mæˈdʒiʃ(ə)n] n կախարդ, մոգ. աճապարար:  
**magisterial** [ˌmædʒɪsˈtɪəriəl] a հեղինակավոր. դատական, դատարանական:  
**magistracy** [ˈmædʒɪstrəsi] n դատական պաշտոնյաներ. պետական աստիճանավորներ:  
**magistral** [ˈmædʒɪstrəl] n, a գլխավոր գիծ, մագիստրալ. գլխավոր, մագիստրալային. հեղինակավոր:  
**magistrate** [ˈmædʒɪstreɪt] n *իրավ.* հաշտարար դատավոր. ~'s court հաշտարար դատարան:  
**magnanimity** [ˌmæɡnəˈnɪməti] n մեծահոգություն:  
**magnanimous** [mæɡˈnænɪməs] a մեծահոգի:  
**magnate** [ˈmæɡneɪt] n խոշոր կապիտալիստ, մագնատ. oil ~ նավթի արքա/մագնատ:  
**magnesia** [mæɡˈni:ʃə] n *քիմ.* մագնեզիումի օքսիդ:  
**magnesium** [mæɡˈni:ziəm] n *քիմ.* մագնեզիում, մագնիում:

**magnet** [ˈmæɡnɪt] n մագնիս:  
**magnetic** [mæɡˈnetɪk] a մագնիսի, մագնիսական. *փխբ.* գրավիչ/ծգող. a ~ personality ծգող/գրավիչ անձնավորություն:  
**magnetics** [mæɡˈnetɪks] n *ֆիզ.* մագնիսականություն:  
**magnetism** [ˈmæɡnətɪz(ə)m] n մագնիսականություն. *փխբ.* հմայք, հրապույր:  
**magnification** [ˌmæɡnɪfɪˈkeɪʃn] n խոշորացում:  
**magnificence** [mæɡˈnɪfɪsəns] n շքեղություն, հոյակապություն:  
**magnificent** [mæɡˈnɪfɪsənt] a հոյակապ, փառահեղ. *խսկգ.* զարմանալի, ապշեցուցիչ. M~ ! Գոյակապ է:  
**magnifier** [ˈmæɡnɪfaɪə] n խոշորացույց ապակի. ուժեղացուցիչ:  
**magnify** [ˈmæɡnɪfaɪ] v խոշորացնել, մեծացնել. *փխբ.* չափազանցնել. ~ problems դժվարությունները չափազանցել:  
**magnifying** [ˈmæɡnɪfaɪɪŋ] a մեծացնող, խոշորացնող. ~ glass խոշորացույց:  
**magnitude** [ˈmæɡnɪtju:d] n մեծություն. ծավալ. կարևորություն. enterprise of ~ մեծ ծավալի ձեռնարկություն:  
**magnolia** [mæɡˈnəʊliə] n *բուս.* կղբի, մագնոլիա:  
**magpie** [ˈmæɡpaɪ] n կաչաղակ. *փխբ.* շահակրատ, շատախոս:  
**mahogany** [məˈhɒɡəni] n կարմրափայտ, կարմրափայտ ծառ:  
**maid** [meɪd] n աղջիկ, օրհորդ, կույս. old ~ պառաված օրհորդ:  
**maiden** [ˈmeɪdn] n աղջիկ, օրհորդ, կույս:  
**maiden** [ˈmeɪdn] a աղջկա, օրհորդական, կուսական. ~ aunt չամուսնացած հորաքույր/ մորաքույր. ~ name օրհորդական ազգանուն. *փխբ.* առաջին ~ flight (*ավ.*) առաջին թռիչք. ~ speech առաջին ելույթ. ~ voyage (նավի) առաջին երթ:  
**maidenhood** [ˈmeɪdnhʊd] n կուսական մաքրություն. անաղարտություն. ողջախոհություն:  
**mail** [meɪl] n փոստ, փոստառաքումներ. air ~ օդային փոստ. e ~ էլեկտրոնային փոստ. (*նակ ~ train*) փոստատար գնացք:  
**mail** [meɪl] a փոստի, փոստային. ~ order փոստային պատվեր. ~ bag փոստային պակասակ, ~ box փոստարկղ. ~ cart փոստա-

կառք. ~ coach մանկասայլակ:  
**mail** [meil] v փոստով ուղարկել, առաքել:  
**main** [ˈmeɪn] v վնասել, խեղել, հաշմանդամ դարձնել. ~ed for life ամողջ կյանքում հաշմանդամ:  
**main** [meɪn] n մայրուղի, մագիստրալ. water ~ ջրատար. turn off at the ~s մայրուղուց անջատել. (հիմնական, գլխավոր) in the ~ հիմնականում. agree in the ~ հիմնականում համաձայնվել. with (all one's) might and ~ ամբողջ ուժով:  
**main** [meɪn] a գլխավոր, հիմնական. կարևորագույն. the ~ street գլխավոր փողոցը. the ~ thing հիմնական բանը. the ~ course (ճաշի) հիմնական տեսակը. the ~ theme գլխավոր թեման. ~ road հիմնական ճանապարհ, մայրուղի. ~ responsibility գլխավոր պատասխանատվություն. ~ line երկթ. երկաթուղային մագիստրալ, մայրուղի. հմկրգ. ~ loop գլխավոր/հիմնական ցիկլ. ~ memory օպերատիվ/հիմնական հիշողություն. ~ storage հիմնական հիշող սարք:  
**mainland** [ˈmeɪnlənd] n մայրցամաք. (կղզիների խմբում) մեծ կղզի:  
**mainly** [ˈmeɪnli] adv հիմնականում, գլխավորապես. մեծ մասամբ:  
**mainmast** [ˈmeɪnmɑːst] n ծով. միջակայմ:  
**mainsail** [ˈmeɪn,seɪl] n ծով. միջակայմ. մեծ առագաստ:  
**mainspring** [ˈmeɪnsprɪŋ] n (գործող) զսպանակ. փխք. շարժիչ ուժ. շարժառիթ:  
**mainstay** [ˈmeɪnstɛɪ] n հիմնական հենարան, նեցուկ:  
**mainswear** [ˈmeɪnsweə] v իրավ. սուտ վկայություն տալ:  
**maintain** [meɪnˈteɪn] v պահել, պահպանել. կերակրել. ~ contacts/relations պահպանել կապեր/հարաբերություններ. ~ law and order կարգ ու կանոն պահպանել. ~ the status quo պահպանել ներկա վիճակը. The state ~s the army Բանակը պետությունն է պահում. The roads are well-~ed ճանապարհները լավ վիճակում են պահվում. ~ one's dignity արժանապատվությունը պահել. ~ that պնդել/հաստատել, որ. ~ nuisance անհարմարություն/վնաս պատճառել. He can no longer ~ his family Նա այլևս չի կարող պահել/կերակրել իր ընտանիքը:  
**maintenance** [ˈmeɪntənəns] n պահպանում,

աջակցություն. տեխ. խնամք, սպասարկում. ապրուստի միջոցներ. the ~ of public order հասարակական կարգի պահպանում. ~ of human rights մարդու իրավունքների պահպանում. the ~ of peace խաղաղության պահպանում. ~ costs տեխնիկական սպասարկման/շահագործման ծախսեր. ~ crew տեխնիկական սպասարկման խումբ/բրիգադ. ~ staff սպասարկող անձնակազմ. pay for smb's ~ ապահովել ինչ-որ մեկի ապրուստը/վճարել. հմկրգ. ~ cycle սպասարկման ցիկլ. ~ function սպասարկող ֆունկցիա. ~ group սպասարկող խումբ. ~ time սպասարկման ժամանակ:

**maize** [meɪz] n եգիպտացորեն:

**majestic** [məˈdʒestɪk] a վեհ, վսեմ, փառահեղ:

**majesty** [ˈmædʒəstɪ] n վեհություն, վսեմություն, գերազանցություն. His M~ Նորին մեծություն/գերազանցություն. Your M~ Ձերդ մեծություն:

**majolica** [məˈdʒɒlɪkə] n ջնարակած և նկարազարդ խեցի (մայոլիկա):

**major** [ˈmeɪdʒə] a մեծ, գլխավոր, հիմնական, ավագ. the ~ part գլխավոր/հիմնական մասը. the ~ problem գլխավոր հարցը. ~ repairs կապիտալ վերանորոգում. ~ offender իրավ. լուրջ հանցագործ. հմկրգ. ~ failure լական անսարքություն:

**major** [ˈmeɪdʒə] n ռզմ. մայր. երժշտ. մաժորային, մաժոր. the key of C ~ դո մաժոր տոնայնությամբ:

**major** [ˈmeɪdʒə] v մասնագիտանալ. He has ~ed in medieval history Նա մասնագիտացել է միջին դարերի պատմության գծով:

**major-domo** [ˌmeɪdʒəˈdɒmɒ] n ծառայապետ, ազնվական տան կառավարիչ:

**major-general** [ˌmeɪdʒəˈdʒenrəl] n գեներալ մայոր:

**majority** [məˈdʒɔːrəti] n մեծամասնություն. ~ of votes քվեների մեծամասնություն. a small/overwhelming ~ աննշան/ճնշող մեծամասնություն. in the ~ of cases մեծ մասամբ. a narrow ~ աննշան/չնչին մեծամասնություն. absolute ~ բացարձակ մեծամասնություն. ~ leader մեծամասնության առաջնորդ. ~ rule փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը. qualified ~ որակավոր/որակյալ մեծամասնություն. ~ status չափահասու-

թյուն. reach one's ~ չափահաս դառնալ:

**make** [meik] n մակնիշ. տեսակ (ապրանքների), ապրանքանիշ. What ~ is your car? Ի՞նչ մակնիշ ունի ձեր մեքենան. goods of US ~ ամերիկյան արտադրանքի ապրանքներ. machines of Germany ~ գերմանական արտադրության հաստոցներ. be on the ~ կարիերիստ լինել:

**make** [meik] v անել, ստեղծել. շինել. ~ furniture կահույք սարքել/շինել. ~ difficulties դժվարություններ ստեղծել. ~ a name անուն ստեղծել. made for one another միմյանց համար ստեղծված լինել. make ambassador/a general դեսպան դարձնել, զեներալի կոչում տալ. ~ a remark/offer/attempt/report/mistake դիտողություն/առաջարկություն/ փորձ/զեկուցում/սխալ անել. This doesn't ~ sense Դրանք իմաստ չկա. (արտադրել) ~ glass/cars ապակի/մեքենաներ արտադրել. It is made of ... Դա պատրաստված է... Made in Italy Պատրաստված է Իտալիայում. ~an impression *փխթ.* տպավորություն գործել. (պատրաստել) ~ breakfast/supper/ tea/ coffee նախաճաշ/ընթրիք/թեյ/սուրճ պատրաստել. ~ hay խոտ հնձել. ~ the bed անկողինը հարդարել. ~ a fire կրակ վառել. ~ arrangements կազմակերպել. (հավասար լինել, կազմել. դառնալ) 2 and 3 ~ 5 երկուսին գումարած երեք հավասար է հինգի. ~ a good doctor լավ բժիշկ դառնալ. ~ notes գրի առնել. ~ a report զեկուցում կազմել/կարդալ. ~ a statement հայտարարություն անել. ~ a list ցուցակ կազմել. (պատճառել) ~ a fuss/noise աղմուկ բարձրացնել. ~ a scene տեսարան սարքել. ~ believe հավատացնել. ~ a great hit մեծ հաջողություն ունենալ. (կատարել) ~ a journey ուղևորություն կատարել. ~ a landing/crossing վայրէջք կատարել. մյուս ափը գնալ. We made it in time for lunch ժամանակին ճաշին հասանք. (ծեռք բերել, վաստակել) ~ money փող վաստակել, հարստանալ. ~ one's living by writing ապրուստը գրելով հայթայթել. How much do you ~ a month? Որքա՞ն էք վաստակում ամսական. ~ a lot of friends շատ ընկերներ ձեռք բերել. (ենթադրել. կարծել) What do you ~ the answer? Ձեր կարծիքով ի՞նչն է պատասխանը. What do you ~ the time? Ի՞նչ էք կարծում՝ ժամի

քանիսն է. (ստիպել, հարկադրել) Nothing could ~ her speak ոչինչ չէր կարող ստիպել նրան խոսել. It ~s me think Դա ստիպում է ինձ մտածել. (գնալ դեպի, ուղղվել) ~ for the door/exit/South գնալ/ուղղվել դեպի դուռ/ելքը/հարավ. make + n ~ an order կարգադրություն անել. ~ law օրենքներ ընդունել. ~ an oath երդում տալ. ~ peace հաշտություն կնքել. ~ an answer/ start / visit պատասխանել/սկսել/այցելել. ~ a complaint բողոք/հայց ներկայացնել. make + a ~ angry/glad/happy զայրացնել, երջանկացնել. He can ~ himself understand Նա կարող է հասկանալի լինել. իրեն հասկանալի դարձնել. ~ away ազատվել. պրծնել. He made away/ off Նա փախավ. He made away with himself Նա իրեն վերջ տվեց. ~ for ուղղվել, գնալ. ~ for the exit դեպի ելք գնալ. The dog made for the cat Ծուռը հարձակվեց կատվի վրա. make out կազմել, հասկանալ, գլուխ հանել. I can't ~ out his words Գլուխ չեմ հանում նրա բառերից. I can ~ out two figures Կարող եմ երկու կերպարանք նշմարել. make over հանձնել, տալ. He made over his house to his son Նա իր տունը տվեց/հանձնեց տղային. make up հնարել, հորինել. հաշտվել. պայմանավորվել. The whole story was made up Ամբողջ պատմությունը հորինված էր. They have made up Նրանք հաշտվեցին. Let's ~ it up Եկեք մոռանանք այդ. We made up to meet Մենք պայմանավորվեցինք հանդիպել. She never ~s up Նա երբեք չպար (կոսմետիկա) չի օգտագործում/դիմահարդարում. (կազմել) ~ up the majority մեծամասնություն կազմել. ~ up a sentence նախադասություն կազմել. (փոխհատուցել, պակասը լրացնել) ~ up for the lost time կորցրած ժամանակը ետ շահել ~ up one's mind մտադրվել, որոշել. ~ the acquaintance of smb ծանոթանալ մեկի հետ. ~ the best of smth որևէ բան լավագույն ձևով օգտագործել. ~ enemies թշնամիներ վաստակել. ~ a face դեմքը ծամածռել. ~ a fool of smb մեկին հիմար վիճակի մեջ դնել. ~ friends ընկերանալ. ~ fun of smb ծիծաղել մեկի վրա. ~ sure համոզվել. ~ use of smth օգտագործել. *հմկրգ.* ~ choice ընտրություն կատարել. ~ correction ուղղել, ուղղում կատարել. ~ directory ստեղծել կատալոգ. ~ ex-

periment փորձ կատարել/անել:  
**make-believe** [ˈmeɪkbiːliːv] n երևակայություն, պատրանք. կեղծիք, ձևացում:  
**maker** [ˈmeɪkə] n կերտող, ստեղծող, արարիչ:  
**makeshift** [ˈmeɪkʃɪft] n ժամանակավոր փոխարինող բան/միջոց:  
**make-up** [ˈmeɪkʌp] n շպար, դիմահարդարում. կազմություն, կառուցվածք. բնավորություն. հնարված/հնարովի բան. people of nervous ~ նյարդային մարդիկ. It is a ~ Սա հնարված բան է:  
**makeweight** [ˈmeɪkweɪt] n քաշլից, կշռալից:  
**making** [ˈmeɪkɪŋ] n պատրաստում, ստեղծում, արտադրություն. the ~ of cars/glass մեքենաների/ապակու արտադրություն. in the ~ ստեղծման պրոցեսում. It was the ~ of him Ղա նրան մարդ դարձրեց. The boy has the ~s of a pianist Տղան ունի դաշնակահարի տվյալներ:  
**malady** [ˈmælədi] n հիվանդություն, ախտ, տկարություն:  
**malcontent** [ˈmælkənˌtɛnt] n, a դժգոհ, անբավական. դժգոհ անձ. *փխբ.* ընդդիմություն:  
**male** [meɪl] 1. n տղամարդ, այր. արու, որձ. 2. a արու, արական սեռի. the ~ sex արական սեռ. ~ cat/dog արու/որձ կատու/շուն. ~ screw տեխ. պտուտակ:  
**malediction** [ˌmæliˈdɪkʃən] n անեծք, նզովք:  
**malefactor** [ˈmælifæktə] n չարագործ, ոճրագործ:  
**maleficent** [mæˈleɪsənt] a կորստաբեր, կործանարար. վնասաբեր:  
**malevolence** [mæˈlevələns] n թշնամություն, չարակամություն:  
**malevolent** [mæˈlevələnt] a չարամիտ, չարակամ:  
**malfeasance** [mælˈfiːzns] n *իրավ.* պաշտոնական հանցանք/հանցագործություն. իրավախախտում:  
**malformation** [ˌmælfɔːˈmeɪʃn] n ալլանդակություն, զարգացման անկանոնություն, հաշմություն. a ~ of the spine ողնաշարի ծռում:  
**malfunction** [ˌmælfʌŋkʃən] n *հմկրգ.* սարքավորման վթար, աշխատանքի ընդհատում:

**malice** [ˈmælis] n չարութուն, դիս, չարակամություն. bear ~ դիս տածել. *խսկց.* մեկի դեմ ատամ ունենալ. *իրավ.* չարամտություն, չար դիտավորություն. with ~ aforethought քրեական (հանցավոր) մտադրությամբ:  
**malicious** [mæˈliʃəs] a չար, չարասիրտ. դիսակալ. չարամիտ. կանխամտածված, դիտավորյալ. ~ libel զրպարտություն. ~ rumours չար/չարամիտ լուրեր:  
**malign** [mæˈlaɪn] 1. a վնասակար, չարորակ. չար, չարանենգ. a ~ influence վնասակար ազդեցություն. 2. v չարախոսել, զրպարտել:  
**malignant** [mæˈlɪgnənt] a չար, չարամիտ, վնասակար, կործանարար. *բժշկ.* չարորակ, վատորակ:  
**malignity** [mæˈlɪgnəti] n չարություն, վնասակարություն, չարորակություն:  
**malingering** [mæˈlɪŋgə] v կեղծ ձևացնել. սիմուլյանտություն անել. He 's just ~ing Պարզապես հիվանդ է ձևանում:  
**malingeringer** [mæˈlɪŋgərə] n կեղծ ձևացնող. սիմուլյանտ:  
**mall** [mɔːl] n զբոսավայր:  
**mallard** [ˈmæləd] n արու/վայրի բաղ:  
**malleable** [ˈmæliəbəl] a դյուրակուռ, կռելի. *փխբ.* զիջող, տեղի տվող:  
**mallet** [ˈmæliɪt] n թակ:  
**mallow** [ˈmæləʊ] n *բսբ.* փիփերթ:  
**malnutrition** [ˌmælnjuˈtriʃn] n վատ սնունդ, թերասնում:  
**malpractice** [ˌmælˈpræktɪs] n հակաօրինական գործողություններ. անօրինականություն. *իրավ.* հանցավոր անփութություն: police ~ ոստիկանության հակաօրինական գործողություններ:  
**malt** [mɔːlt] 1. n ածիկ. 2. v ածիկացնել, ածիկանալ. ածիկ դարձնել/դառնալ:  
**maltreat** [ˌmæltˈtri:t] v վատ/կոպիտ վերաբերվել:  
**maltreatment** [ˌmæltˈtri:tment] n վատ/կոպիտ վերաբերմունք:  
**mam(m)a** [mæˈma:] n *խսկց.* մայրիկ, մամա:  
**mammal** [ˈmæməl] n կաթնասուն կենդանի:  
**mammoth** [ˈmæməθ] n, a *կենդ.* մամոնտ. հսկա, վիթխարի:  
**mammy** [ˈmæmi] n մամա, մայրիկ. *ամ.* նեգր դայակ. *ամ.* ծեր նեգրուհի:  
**man** [mæn] n մարդ. any ~ ամեն մարդ/մեկը.

no ~ ոչ ոք. all to a ~ բոլորն անխտիր. ~ day մարդ-օր. ~ hour մարդ-ժամ. well-known/lucky/middle-aged ~ հանրահայտ/հաջողակ/միջին տարիքի մարդ. the achievements/rights of ~ մարդու հաջողությունները/իրավունքները. the ~ in the street սովորական մարդ. (հասարակության անդամ) party ~ կուսակցության անդամ. public ~ հասարակական գործիչ. ~ of letters գրականագետ. ~ of science գիտնական. ~ of business գործարար մարդ. ~ of property սեփականատեր մարդ. (հատկանիշ կրող) ~ of genius հանճար. ~ of principle սկզբունքի տեր մարդ. ~ of note հայտնի մարդ. ~ of sense ողջամիտ մարդ. deep ~ խորամանկ մարդ. self-made ~ ինքնուրույնորեն մարդ դարձած. ~ of iron երկաթե կամք ունեցող մարդ. family ~ ընտանիքի մարդ. (տղամարդ. ամուսին) ~ and wife ամուսիններ. lady's ~ կանանց երկրպագու/հաճոյակատար. best ~ փեսեղբայր. as ~ to ~ որպես տղամարդը տղամարդու. single ~ չամուսնացած մարդ, ամուրի. ~ of action գործի մարդ. plain-clothes ~ խուզարկու, ծպտյալ ոստիկան. old-clothes ~ հնավաճառ. the outer ~ արտաքին տեսք, հագուստ. the inner ~ հոգի, ներքինը:

**man** [mæn] v անձնակազմը համալրել. ~ a vessel անձնակազմ հավաքել. ~ the lifts վերելակները սպասարկել:

**manacle** ['mænakl] 1. n ձեռնաշղթաներ. *փխբ.* կապանքներ, շղթաներ. 2. v շղթայակապել, կաշկանդել. խոչընդոտ հանդիսանալ:

**manage** ['mænidz] v կառավարել, ղեկավարել. ~ an institution/factory ձեռնարկություն/ֆաբրիկա ղեկավարել. ~ an office/a restaurant հիմնարկ կառավարել. ռեստորան ղեկավարել. (վարել) ~ a household տնային տնտեսություն վարել. Her brother ~s her affairs եղբայրը վարում է նրա գործերը. (գլուխ բերել, կարգավորել) He can't ~ the boat Նա չի կարողանում կարգավորել նավը. Can you ~ the work? Կարո՞ղ ես գործը գլուխ բերել. (յուլա գնալ) One can't ~ without money Առանց փողի յուլա չես գնա. How are you managing? Ինչպե՞ս են գործերը. (հաջողեցնել) I ~d to catch the bus Չաջողեցրի ավտոբուս նստել:

**manageable** ['mænidzəbl] a կառավարելի, ղեկավարելի. լսող, հնազանդ, հեշտ համա-

ծայնվող:

**management** ['mænidzmənt] n ղեկավարություն, կառավարում. ~ and labour վարչակազմ և աշխատողներ. the ~ վարչություն. public ~ պետական կառավարում. senior ~ կառավարման վերին օղակներ. the ~ of affairs գործերի կառավարում:

**manager** ['mænidzə] n կառավարիչ, վարիչ, ղեկավար, տնօրեն. the ~ of a shop/canteen խանութի/ճաշարանի վարիչ. She is a good ~ Նա լավ տնտեսուհի է. top ~ գլխավոր կառավարիչ. the ~ of a football team ֆուտբոլի թիմի ավագ. acting ~ կառավարիչի պաշտոնակատար. assistant ~ կառավարիչի տեղակալ (*sub. deputy* ~):

**managerial** [ˌmænəˈdʒiəriəl] a վարչական. ~ authority վարչական մարմին. ~ staff վարչական անձնակազմ:

**managing** ['mænidziŋ] a ղեկավարող, կառավարող, վարող. ~ director գործադիր տնօրեն. փոխտնօրեն:

**mandate** ['mændeit] n հանձնագիր, լիազորագիր. a territory under ~ եթամանդատային տարածք:

**mandatory** ['mændətəri] n, a հավատարմատար. հարկադրական, պարտադիր. մանդատավոր, մանդատով կառավարվող. ~ control պարտադիր հսկողություն. ~ provision պարտադիր կանոն/նորմ:

**mane** [meɪn] n բաշ:

**manful** ['mænfʊl] a քաջասիրտ, արի, վճռական.

**mange** [meɪndʒ] n քոս:

**manger** ['meɪndʒə] n մսուր. կերատաշտ:

**mangle** ['mæŋgl] v կտրատել, կտոր-կտոր անել. խեղել, այլանդակել, հաշմել:

**mangy** ['meɪndʒi] a քոսոտ, կեղտոտ, զգզված. What a ~ dinner *խսկց.* Ի՞նչ զգզվելի ճաշ է:

**man-handle** ['mænhændl] v բռնել, բարձել (ծեռքով). The box was ~d on the lorry Արկղը ծեռքով բարձեցին բռնատարի վրա. *խսկց.* հրելով դուրս քշել, կոպիտ վերաբերվել The police ~d the crowd Ոստիկանությունը կոպտորեն ցրեց ամբոխը:

**man-hole** ['mænhəʊl] n դիտահոր (յուլ):

**manhood** ['mænhud] n հասունություն, առնություն:

**manhunt** ['mænhʌnt] n հետախուզություն. a ~ for the murderer մարդասպանի հետա-



խուզություն:

**mania** [ˈmeɪniə] **n** մոլագարություն, մոլություն, մոլուցք. homicidal/persecution ~ մարդասպանության/հետապնդման Chess is a ~ with him Նա շախմատի մոլուցք ունի:

**maniac** [ˈmeɪniæk] **n** մոլագար, մոլուցքով բռնված:

**manicure** [ˈmænikjʊə] **n** ձեռքի հարդարում, մանիկյուր:

**manifest** [ˈmænɪfɛst] **a** հայտնի, ակներև, բացահայտ. ~ injustice բացահայտ անարդարություն:

**manifest** [ˈmænɪfɛst] **v** դրսևորել, ցույց տալ, հանդես բերել. ~ interest հետաքրքրություն ցույց տալ. Symptoms ~ed themselves Նշանները իրենց դրսևորեցին:

**manifestation** [ˌmænɪfɛˈsteɪʃn] **n** դրսևորում, ցուցաբերում. ցույց. ցույցի երթ. mass ~ զանգվածային ցույց:

**manifesto** [ˌmæniˈfɛstəʊ] **n** մանիֆեստ:

**manifold** [ˈmænɪfəʊld] **a, v** բազմաթիվ, բազմաբանակ. զանազան, բազմազան. բազմացնել (փաստաթղթեր):

**manikin** [ˈmænikɪn] **n** մանեկեն, գաճաճ մարդուկ:

**manipulate** [mæˈnɪpjʊleɪt] **v** հմուտ/վարպետորեն վարվել/բանեցնել. կեղծել, նենգափոխել. ~ the market մեքենայություններ անել շուկայում. ~ facts փաստերը նենգափոխել/աղավաղել. ~ gears արագությունները փոխել:

**manipulation** [mæˈnɪpjʊˈleɪʃn] **n** ձեռքի հատուկ շարժումներ. մեքենայություն, կեղծում, աղավաղում. *հմկրգ.* մշակում, գործողություններ:

**manipulator** [mæˈnɪpjʊleɪtə] **n** տեխ. հեռագրագործիքի մաս, մանիպուլյատոր:

**mankind** [mænˈkaɪnd] **n** մարդկություն. մարդկային ցեղ. տղամարդիկ:

**manlike** [ˈmænləɪk] **a** տղամարդանման, այրանման. առնական, տղամարդուն հատուկ:

**manliness** [ˈmænlɪnəs] **n** արիություն, քաջություն, առնականություն:

**manly** [ˈmænlɪ] **a** արի, քաջ, առնական:

**man-made** [ˌmænˈmeɪd] **a** ձեռակերտ, արհեստական. ~ materials արհեստական նյութեր. ~ disaster արհեստական/տեխնածին աղետ:

**manna** [ˈmænə] **n** երկնային մանանա:

**manner** [ˈmænə] **n** եղանակ, ձև. ~ of life ապրելակերպ. in this/the same ~ այսպիսով, այս ձևով. by no ~ of this ոչ մի դեպքում, ոչ մի ձևով. in a ~ որոշ չափով. in a promiscuous ~ պատահական ձևով. in a ~ of speaking կարելի է ասել, այսպես ասած. (տեսակ) all ~ of men ամենատարբեր մարդիկ. all ~ of tools ամեն տեսակ գործիքներ. what ~ of man ի՞նչ տիպի մարդ. (վարվելակերպ շարժում) ~s natural/pleasant/shocking ~s բնական/ հաճելի/ահավոր շարժումն have no/good ~s վատ /լավ շարժումն/վարվելակերպ ունենալ. Mind your ~s Քեզ կարգին պահիր. a comedy of ~s բարքերի կոմեդիա/կատակերգություն:

**mannerism** [ˈmæn(ə)rɪz(ə)m] **n** անբնականություն, շինծություն. I don't like his ~s Ինձ դուր չի գալիս նրա արհեստականությունը. ~s of style գրելաձևը. ոճը:

**mannerliness** [ˈmænəlɪnəs] **n** քաղաքավարություն:

**mannerly** [ˈmænəlɪ] **a** քաղաքավարի, կիրք:

**mannish** [ˈmænɪʃ] **a** առնացի, տղամարդուն հատուկ. տղամարդանման, առնանման:

**manoeuvre** [mæˈnuːvə] **n** *ռզմ.* գորավարություն, մանևր. ~ for position շահավետ դիրք գրավել. ~ the car into the garage մեքենան գարաժ մտցնել (դժվարությամբ). ~ smb into a good job մեկին լավ աշխատանքի տեղավորել:

**man-of-war** [ˌmænəvˈvɔː] **n** ռազմանավ:

**manor** [ˈmænə] **n** կալվածք:

**man-power** [ˈmænpaʊə] **n** աշխատուժ. մարդկային ռեսուրսներ. անձնակազմ. lack of skilled ~ որակյալ կադրերի պակաս:

**manservant** [ˈmæn,sɜːvənt] **n** ծառա:

**mansion** [ˈmænʃn] **n** մեծ առանձնատուն:

**manslaughter** [ˈmæn,sɔːtə] **n** մարդասպանություն:

**mantelpiece** [ˈmæntlpiːs], **mantelshelf** [ˈmæntlʃelf] **n** բուխարու վրայի դարակ/երեսապատված մասը. The clock is on the ~ ժամացույցը բուխարու վրա է:

**mantle** [ˈmæntl] **n** փկնոց, ծածկոց. *տեխ.* ծածկոց, պատյան:

**manual** [ˈmænjʊəl] **n** ձեռնարկ, տեղեկագիրք. a shorthand ~ սղագրության ձեռնարկ. self-instruction ~ ինքնուսույց:

**manual** [ˈmænjʊəl] *a* ձեռքի. ~ controls ձեռքի ղեկավարում. ~ labour ֆիզիկական աշխատանք. ~ worker սևագործ բանվոր, ֆիզիկական աշխատանք կատարող մարդ:

**manually** [ˈmænjʊəli] *adv* ձեռքով. These goods have been produced ~ Այս ապրանքները ձեռքով են պատրաստված:

**manufacture** [ˌmænjʊˈfæktʃə] *n* արտադրություն, պատրաստում, մշակում. *փխբ. արհմ.* հորինում, կեղծիք. the ~ of steel պողպատի արտադրություն. goods of foreign ~ արտասահմանյան արտադրության ապրանքներ:

**manufacture** [ˌmænjʊˈfæktʃə] *v* արտադրել. The factory ~s cars Գործարանը մեքենաներ է արտադրում:

**manufacturer** [ˌmænjʊˈfæktʃərə] *n* ձեռնարկատեր, գործարար, արդյունաբերող. ~s brand արտադրողի ապրանքանիշ:

**manufacturing** [ˌmænjʊˈfæktʃəriŋ] *a* արդյունաբերական, արտադրական ~ costs արտադրական ծախսեր/արժեքը. ~ town արդյունաբերական քաղաք. ~ knowhow արտադրական գաղտնիքների իմացություն:

**manure** [məˈnjuə] *n, v* գոմաղբ, պարարտանյութ. հողը պարարտացնել/աղբել:

**manuscript** [ˈmænjʊskript] **1.** *n* ձեռագիր, բնագիր. save/destroy/accept/refuse a ~ փրկել/ոչնչացնել/ընդունել/մերժել ձեռագիրը. original ~ հեղինակի ձեռագիր օրինակ. genuine/ancient ~ իսկական/հին ձեռագիր. *in* ~ ձեռագիր. **2.** *a* ձեռագրական, ձեռագիր:

**many** [ˈmeni] *n, a* շատերը, շատ. ~ of us մեզնից շատերը. *in* ~ cases շատ դեպքերում. *in* ~ ways շատ ձևերով/միջոցներով. ~ times շատ անգամներ. *for* ~ a long day շատ օրեր. a good ~ բավականաչափ քանակություն. a great ~ հսկայական քանակություն. *as* ~ *as* այնքան...որքան. not so ~ *as* ոչ այնքան...որքան. how ~ ? որքա՞ն, քանի՞ հատ. *as* ~ *as* that? այդքա՞ն շատ. half *as* ~ երկու անգամ պակաս:

**many-coloured** [ˈmenikʌləd] *a* բազմագույն:

**many-sided** [ˌmeniˈsaɪdɪd] *a* բազմակողմանի:

**map** [mæp] *n* քարտեզ, նախագիծ, պլան. political/geographical/economical ~ քաղաքական/աշխարհագրական/տնտեսական

քարտեզ. ~ of city քաղաքի պլան/ նախագիծ. make /read a ~ քարտեզ կազմել/կարդալ. underground ~ մետրոյի սխեման:

**map** [mæp] *v* քարտեզ գծել/կազմել. ~ a territory տարածքի քարտեզը կազմել. ~ out պլանավորել, բաշխել. ~ out a programme/one's time/route ծրագիր/երթուղի կազմել. ժամանակը պլանավորել:

**mapping** [ˈmæpiŋ] *n* *հմկրգ.* արտապատկերում, համապատասխանեցում. ~ domain արտապատկերման արժեքների տիրույթ:

**maple** [ˈmeɪpl] *n* *բույս.* թխկի. ~ leaf թխկենու տերև (*նաև* Կանադայի խորհրդանշանը):

**mar** [mɑː] *v* փչացնել, վնասել. make or ~ հաջողություն կամ կործանում:

**maraud** [məˈrɑːd] *v* կողոպտել, ասպատակել:

**marauder** [məˈrɑːdə] *n* կողոպտիչ, ավարառու, ավազակ:

**marble** [ˈmɑːbl] *n* մարմար. ~-worker մարմարագործ. ~s մարմարե իրեր. մանկական գնդակախաղ. a game of ~s մի գեյմ թենիս. play ~s գնդակախաղ խաղալ:

**marble** [ˈmɑːbl] *a* մարմարյա, մարմարե. *փխբ.* սառը, անտարբեր:

**March I** [mɑːtʃ] *n, a* մարտ. մարտի, մարտյան. *in* ~ մարտին:

**march II** [mɑːtʃ] *n* երթ, *նաև ուզմ.* արշավ, անցում. forced ~ երկարատև/արագընթաց երթ. a ~ past հանդիսավոր երթ. The river is a day's ~ Գետը մեկ օրում կարելի է անցնել. *երժշ.* քայլերգ. funeral/dead ~ թաղման/մահվան քայլերգ. (ընթացք, զարգացում) ~ of science գիտության զարգացում. ~ of events *փխբ.* իրադարձությունների ընթացք. steal a ~ on smb մեկից առաջ ընկնել:

**march** [mɑːtʃ] *v* ընթանալ, համաքայլ գնալ. ~ ahead առաջ ընթանալ. ~ off գնալ, հեռանալ. տանել, հեռացնել. ~ on առաջ շարժվել. ~ out դուրս գալ/բերել/տանել. The army ~ed on the town Բանակը շարժվեց դեպի քաղաք. Forward/Quick ~ ! Քայլով մարշ:

**marching orders** [ˈmɑːtʃɪŋ ˈɔːdəz] *n* հարձակման հրաման. աշխատանքից հեռացնելը. He's got his ~ Նրան հեռացրել են:

**marching song** [ˈmɑːtʃɪŋ sɒŋ] *n* արշավի երգ:

**marchioness** [ˌmɑːtʃɪˈnes] *n* մարկիզուհի:

**marchpane** [ˈmɑːtʃpeɪn] *n* նշաշաքարա-

զանգված, մարցիպան:  
**mare** [meə] n զամբիկ, մատակ:  
**mare's-nest** ['meəznest] n պատրանք, մոլորություն:  
**margarine** [,ma:dʒə'ri:n] n (*կրճ. marge*) մարգարին:  
**margin** ['ma:dʒin] n եզր, սահման. նվազագույն սահման. the ~ of a page գրքի/էջի լուսանցք. notes on the ~ նշումներ լուսանցքներում. (եզերք, ասի) on the ~ of the lake լճի ափին. ~ of error սխալի սահմանները/հնարավորությունը. wide ~ of պահանջվածից ավելի. ~ of profit շահույթի չափը/մակարդակը. ~ of safety ապահովության սամանագիծը. a narrow ~ ծայրերի փոքր մեծամասնություն:  
**marginal** ['ma:dʒinl] a սահմանային, եզրային, ծայրի. լուսանցքային, լուսանցքում գրված/նշված. ~ notes նոթեր լուսանցքում. ~ cost սահմանային ծախս. a ~ case անորոշ դեպք. The difference is ~ Տարբերությունը աննշան է. ~ status ծայրահեղ/աննշան կարգավիճակ:  
**marguerite** [,ma:gə'ri:t] n *բուս.* երիցուկ:  
**marigold** ['mæriɡəʊld] n *բուս.* մարգիզ:  
**marinad(t)e** [,mæri'neɪd] v թթու դնել. ~d vegetables թթու դրած բանջարեղեն:  
**marine** [mæ'ri:n] n նավատորմ. merchant/mercantile ~ առևտրական նավատորմ. Tell that to the ~s! *խսկց., փխբ.* Հեքիաթներ մի պատմիր:  
**marine** [mæ'ri:n] a ծովային, նավատորմի, նավատորմային. ~ insurance ծովային ապահովագրություն. ~ stores նավի պաշարները. ~ artist ծովի նկարիչ, մարինիստ:  
**mariner** ['mæriənə] n ծովագնաց, նավաստի. ~'s compas նավի կողմնացույց:  
**marionette** [,mæriə'net] n խամաճիկ, մարիոնետ:  
**marital** ['mæritl] a ամուսնական, ամուսնու. ~ union ամուսնական կապ. ~ status ընտանեկան կարգավիճակ:  
**maritime** ['mæritaim] a ծովային, ծովի. ծովափնյա, ծովեզրյա. ~ state ծովային պետություն. a ~ power ծովային տերություն. a ~ region մերձափնյա շրջան. ~ law ծովային իրավունք:  
**mark I** [ma:k] n մարկ (փողի միավոր):  
**mark II** [ma:k] n նշան, նշանակետ, դրոշմ.

թիրախ. hit the ~ նշանին/նպատակակետին խփել. miss the ~ վրիպել. նշանակակետին չդիպել. *փխբ.* անհաջողություն կրել. beside the ~ ոչ ըստ էության, ոչ տեղին. (հետք, դրոշմ, կնիք) mother's ~ խալ. the ~ of a hoof սմբակի հետք. the ~ of genius տաղանդի կնիք. leave ~ in history պատմության մեջ հետք թողնել. a ~ on the jacket քիծ պիջակի վրա. slogan ~ գովազդային նշան. *մրգ.* On your ~s! Մեկնարկ. up to the ~ իր բարձրության վրա. not up to the ~ իր բարձրության վրա չլինել. feel not up to the ~ իրեն վատ զգալ. overstep the ~ շատ հեռուն գնալ. (զնահատական) get high/low ~s բարձր/ցածր զնահատականներ ստանալ:  
**mark** [ma:k] v հետք/քիծ թողնել. նշան դնել/անել. ~ the date in the calendar օրը նշել օրացույցում. ~ the table սեղանը խազել. ~ the dress հագուստի վրա քիծ թողնել. (նշել) ~ the anniversary տարեդարձը նշել. The way is ~ed ճանապարհը նշված է. (նկատել) ~ the difference տարբերությունը նկատել. M~ my words Հիշեք իմ բառերը. The papers have been ~ed Քննության աշխատանքները զնահատվել են. ~ down գինը նշել. ~ down/up goods ապրանքի գները իջեցնել/բարձրացնել. ~ off զատել, հատկացնել. ~ off an area for school դպրոցի համար տարածք հատկացնել. ~ out նշաններ դնել. նշագծել. ~ out a tennis court նշագծել թենիսի դաշտը:  
**marked** [ma:kt] a նշված, դրոշմած. նկատելի, զգալի. the ~ pages նշված էջերը. ~ improvement նկատելի լավացում:  
**marker** ['ma:kə] n նշիչ, ցուցիչ:  
**market** ['ma:kit] n շուկա. local/covered ~ տեղական/ծածկած շուկա. drug ~ թմրադեղերի առևտուր. be on/in the ~ վաճառքում լինել. come into/to the ~ վաճառքի հանվել. black ~ սև շուկա. hours of ~ վաճառքի ժամեր. flood the ~ with goods շուկան ապրանքով ողողել. the Common Market Ընդհանուր շուկա (Եվրոպա). domestic ~ ներքին շուկա. world ~ համաշխարհային շուկա. futures ~ ապառնի գործարքների շուկա. underworld ~ ընդհատակյա առևտուր, անօրինական շուկա:  
**market** ['ma:kit] a շուկայի, շուկայական. a ~ price/value շուկայական գին/արժեք. ~ economy շուկայական տնտեսություն. ~ share շուկայամաս:

**market** [ˈmɑːkɪt] v վաճառել, շուկա հանել.  
go ~ing շուկա գնալ. ~ing goods in Africa ապրանքը Աֆրիկայում վաճառել:  
**marketable** [ˈmɑːkɪtəbl] a գնալուն, վաճառելի. ~ goods գնալուն ապրանքներ:  
**market-day** [ˈmɑːkɪtdeɪ] n վաճառքի/շուկայի օր:  
**market-place** [ˈmɑːkɪtpleɪs] n շուկա, առևտրի հրապարակ:  
**marking** [ˈmɑːkɪŋ] n նշան. բիծ (կենդանիների վրա). a black dog with white ~s սև շուն սպիտակ բծերով. ~s տարբերիչ նշաններ (ճանաչման):  
**marksman** [ˈmɑːksmən] n նշանածիգ. գեթազանց հրաձիգ:  
**marl** [mɑːl] n *երկրք*. կրակավ, մերգել:  
**marmalade** [ˈmɑːmæleɪd] n կիտրոնի/նարնջի ջեմ:  
**marmot** [ˈmɑːmɒt] n արջամուկ:  
**maroon** [məˈruːn] n շագանակագույն:  
**maroon** [məˈruːn] v լքել ամայի վայրում.  
They were ~ed on a desert island Նրանք հայտնվեցին անմարդաբնակ կղզում:  
**marquis** [ˈmɑːkwɪs] n մարկիզ:  
**marquise** [mɑːˈkiːz] n մարկիզուհի:  
**marriage** [ˈmæɪrɪdʒ] n ամուսնություն. *փխք*. սերտ կապ, դաշինք. make an offer of ~ ամուսնության առաջարկ անել. a ~ of convenience հաշվով/շահադիտական ամուսնություն. civil ~ քաղաքացիական ամուսնություն. illegal ~ անօրինական ամուսնություն. annulment of ~ ամուսնությունն անվավեր ճանաչել. related by ~ ազգակցական կապեր ամուսնու/կնոջ կողմից. aunt by ~ ամուսնու/կնոջ մորաքույր/հորաքույր:  
**marriage** [ˈmæɪrɪdʒ] a ամուսնական. ~ settlement ամուսնական պայմանագիր. ~ licence ամուսնական թույլտվություն (եկեղեցու). ~ certificate ամուսնության վկայական: ~ -knot /bonds ամուսնական կապ:  
**married** [ˈmæɪrɪd] a ամուսնացած. get ~ ամուսնանալ. ~ name ամուսնական ազգանուն. ~ life ամուսնական կյանք. a ~ couple ամուսնական զույգ:  
**marrow** [ˈmæɪrəʊ] n ոսկրածուծ. ~ bone ծուծոսկր. to the ~ մինչև ուղն ու ծուծը. be chilled to the ~ *փխք*. սառչել մինչև ուղն ու ծուծը. vegetable ~ դղմիկ:  
**marry** [ˈmæɪri] v ամուսնանալ, ամուսնաց-

նել. ~ for love/money սիրելով/հանուն փողի ամուսնանալ. He married off his daughter Նա ամուսնացրեց իր աղջկան:

**marsh** [mɑːʃ] n, a ճահիճ. ճահճի, ճահճային.  
**marshal** [ˈmɑːʃl] n մարշալ. air ~ ավիացիայի մարշալ. field ~ ֆելդմարշալ. *իրավ*. դատական կատարածու:

**marshal** [ˈmɑːʃl] v կարգի բերել, դասավորել. հանդիսավոր կերպով տանել. ~ soldiers զինվորներին շարք կանգնեցնել. The diplomats were ~ed into the hall Դիվանագետներին հանդիսավոր ձևով դահլիճ տարան. ~ facts փաստերը դասավորել որոշակի կարգով:

**marshy** [ˈmɑːʃi] a ճահճոտ, ճահճաշատ:

**mart** [mɑːt] n առևտրական կենտրոն, աճուրդի սրահ:

**marten** [ˈmɑːtɪn] n կզաքիս:

**martial** [ˈmɑːʃiəl] a զինվորական, ռազմական. ~ law ռազմական դրույթում. ~ law court ռազմական դատարան. ~ tribes ռազմատենչ ցեղեր:

**Martian** [ˈmɑːʃiən] n մարսաբնակ. Մարսի, մարսյան:

**martyr** [ˈmɑːtɪə] n նահատակ, մարտիրոս. a ~ to asthma ասթմայով տառապել. make a ~ of oneself իրենից նահատակ ձևացնել/դարձնել:

**martyrdom** [ˈmɑːtɪədəm] n մարտիրոսություն. նահատակություն. տանջանք, չարչարանք:

**marvel** [ˈmɑːvəl] n հրաշալիք, սքանչելիք. հրաշք, զարմանք, հիացում. the ~s of science գիտության հրաշքերը. He's a ~ Նա հրաշք է. That's a ~ Դա հրաշալի է:

**marvel** [ˈmɑːvəl] v հիանալ, զարմանալ. I ~ at his patience Ջարմանում եմ նրա համբերությանը:

**marvellous** [ˈmɑːvələs] a սքանչելի, հրաշալի, զարմանալի:

**mascot** [ˈmæskət] n թալիսման, երջանկաբեր (մարդ/կին/կենդանի/իր):

**mascara** [mæˈskaːrə] n թերթերուներների համար ներկ:

**masculine** [ˈmɑːskjulin] 1. n *բեր*. արական սեռ. 2. a արու, արական. քաջ, արի. a ~ character ուժեղ/առնական բնավորություն. He's very ~ Նա իսկական տղամարդ է:

**mash** [mæʃ] n լափ (անասունների), ջրախառն կեր. *խսկց*. կարտոֆիլի պյուրե (նաև

~ed potatoes):  
**mash** [mæʃ] v ճզմել, ճխել, տրորել. ~ potatoes կարտոֆիլի պյուրե պատրաստել:  
**mask** [ma:sk] n դիմակ. քող., ծածկույթ. gas ~ հակազագ. under the ~ of դիմակի տակ:  
**mask** [ma:sk] v դիմակավորել, քողարկել, ծածկել. դիմակ հագնել, ձևանալ. ~ one's feelings զգացմունքները քողարկել:  
**mason** ['meɪsn] n որմնադիր, քարտաշ. մասուն, ֆրանկմասուն:  
**masonry** ['meɪsnri] n քարի/աղյուսի շարվածք. որմնադրություն. մասոնություն, ֆրանկմասոնություն:  
**masquerade** [,mæskə'reɪd] n դիմակահանդես. դիմակախաղ, կեղծ ձևացում:  
**mass** I [mæs] n կրոն. պատարագ. high ~ հանդիսավոր պատարագ. say/celebrate ~ պատարագ մատուցել/անել:  
**mass** II [mæs] n, a զանգված, մեծ քանակություն. զանգվածային, լայնածավալ. in the ~ ամբողջությամբ. confused ~ խառնաշփոթ զանգված. a great ~ of people մարդկանց մեծ քանակություն. a ~ of nerves նյարդերի մի ամբողջ կծիկ. ~ communication/media լրատվության զանգվածային միջոցներ (ՁԼՄ). ~es ժողովրդական զանգվածները:  
**mass** [mæs] v կուտակել, համակենտրոնացնել, կենտրոնացնել. ~ troops զորքեր կենտրոնացնել. Clouds were ~ing Ամպերը կուտակվում էին:  
**massacre** ['mæskəkə] 1. n կոտորած, ջարդ. սպանդ, արյունահեղություն. It was a ~ խսկց., մրդ. Դա իսկական ջարդ էր. 2. v կոտորել, ջարդել, սպանել:  
**massage** ['mæsa:ʒ] n, v մերսում, մասաժ. մերսել, մասաժ անել:  
**masseuse** [mæ'sə:z] n մերսող:  
**massif** ['mæsɪf] n լեռնազանգված:  
**massive** ['mæsɪv] a հոծ, վիթխարի, խոշոր, մեծ. a ~ building խոշոր շենք. a ~ undertaking հսկայական նախաձեռնություն. on a ~ scale մեծ մասշտաբով:  
**mass-produce** [,mæsprə'dju:s] v զանգվածաբար արտադրել:  
**mass-produced** [,mæsprə'dju:sd] a զանգվածային/սերիական արտադրանք:  
**massy** ['mæsi] a մեծ, վիթխարի, խոշոր. ծանր, ծանրաքայլ:  
**mast** [ma:st] n կայմ. *ռադ.* ռադիոկայմ sail/serve before the ~ ծառայել որպես հա-

սարակ նավաստի:  
**master** ['ma:stə] n տեր, պարոն. վարպետ. *ծով.* կապիտան. be ~ of. տիրել, տիրապետել. be ~ of situation/of one's fate դրության/իր բախտի տերը լինել. be one's own ~ ինքն իր տերը լինել. (վարպետ, մեծ նկարիչ. մասնագետ) old ~s հին վարպետները. ~ of fence հմուտ սուսերամարտիկ. a past ~ of chess շախմատի անգերազանցելի վարպետ. ~ of ceremonies *թատր.* արարողապետ. (մագիստրոս) M~ of Arts (MA) հումանիտար գիտությունների մագիստրոս. M~ of Sciences (MS) ճշգրիտ գիտությունների մագիստրոս. M~ of Law իրավունքի մագիստրոս. (դպրոցի դասատու, տնօրեն) English ~ անգլերենի դասատու. ~ of a college քոլեջի ղեկավար. ~'s degree մագիստրոսի աստիճան.  
**master** ['ma:stə] a գլխավոր, հիմնական. ~ mason որակյալ քարտաշ. ~ plan գլխավոր պլան/հատակագիծ. ~ switch հիմնական անջատիչ (ռուբիլնիկ). ~ copy մայր օրինակ. բնագիր. *հմկրգ.* գլխավոր, հիմնական. ~ cell հիմնական բջիջ. ~ data հիմնական տվյալներ. ~ routine գլխավոր ծրագիր:  
**master** ['ma:stə] v տիրապետել, հաղթահարել. ղեկավարել. ~ difficulties դժվարությունները հաղթահարել. ~ one's feelings/oneself իրեն/զգացմունքներին տիրապետել. ~ a foreign language օտար լեզու տիրապետել:  
**masterful** ['ma:stəfl] a իշխող, հրամայող:  
**master-key** ['ma:stəki:] n համաբանալի. շատ փականքներ բացող բանալի:  
**masterly** ['ma:stəli] a, adv վարպետ, վարպետային, հմուտ. վարպետորեն, վարպետությամբ, հմտորեն, հմտությամբ:  
**mastermind** ['ma:stəmaɪnd] n a ~ ակամավոր գիտնական. Who's the ~ behind this? Ո՞վ է սրա հետևում կանգնած/մտահղացողը. He was the ~ behind the operation Նա այս գործառնության իրական հեղինակն էր:  
**masterpiece** ['ma:stəpi:s] n գլուխգործոց:  
**mastership** ['ma:stəʃɪp] n վարպետություն, հմտություն. ուսուցչի/տնօրենի պաշտոնը:  
**master-stroke** ['ma:stəstrəʊk] n հմուտ/ճարպիկ քայլ. (նկարիչ) վարպետի վրձնախաղ:  
**mastery** ['ma:stəri] n տիրապետություն, իշ-

խանութիւն. ~ of the seas ծովերի տիրապետութիւն. (հմտութիւն, տիրապետում) his ~ of violin ջութակին նրա տիրապետելը.

**mastic** ['mæstik] n մածիկ, մաստիկա:

**masticate** ['mæstikeit] v ծամել:

**mastication** [,mæsti'keiʃn] n ծամում, ծամելը:

**mastiff** ['mæstif] n գամփռ, պահապան շուն. անգլիական դոգ:

**mat** [mæt] n խսիր, ուղեգորգ. *մրգ.* մատ. դրոց, տակդիր. spread a ~ on the floor գորգը հատակին փռել. on the ~ *խսկց.* նեղ դրութեան մեջ. leave on the ~ մերժել, չընդունել. The boss had him on the ~ Պետը նրան խիստ հանդիմանեց:

**match** I [mætʃ] n (*նախ safety*~) լուցկի. strike/blow out a ~ լուցկին վառել/հանգցնել. box of ~es մի տուփ լուցկի. a ~ box լուցկու տուփ:

**match** II [mætʃ] n զույգ, հավասարակից. համապատասխանութիւն. He has no ~ as a pianist Որպես դաշնակահար նա հավասարը չունի. He found his ~ *նա* գտավ իրեն հավասարին. (ամուսնութիւն) make a ~ ամուսնանալ. make a good ~ հաջող ամուսնանալ. She is a good ~ *նա* լավ թեկնածու է. (գույների համապատասխանութիւն) These colours are a good ~ Այս գույներն իրար սազում են/համապատասխանում են. *մրգ.* մրցում, խաղ a football/hockey ~ ֆուտբոլի/հոքեյի մրցում. a home/an away ~ խաղ սեփական/ուրիշի դաշտում. a return ~ պատասխան խաղ. hold/win/lose a ~ խաղ կազմակերպել. հաղթել/կորցնել խաղը. ~- tough մրցումների պատրաստ (լինել).

**match** [mætʃ] v ընտրել. համապատասխանը գտնել. ամուսնացնել. մրցել. No one could ~ him Ոչ ոք չէր կարող նրան հավասարվել. The blue hat ~ed with gloves Կապույտ գլխարկը սազում էր ձեռնոցների հետ. The boxers were equally ~ed *մրգ.* Բռնցքամարտիկները հավասար էին իրենց ուժով:

**matching** ['mætʃɪŋ] a համապատասխան, սազող, հավասար. a blue hat with ~ gloves կապույտ գլխարկ համապատասխան ձեռնոցներով. *հմկրգ.* ~ components համապատասխան բաղադրիչներ. ~ parentheses փա-

կազմերի զույգ:

**matchless** ['mætʃlɪs] a անզուգական, անման:

**matchmaker** ['mætʃ,meikə] n խնամախոս կին, միջնորդ, շապանիկ:

**matchwood** ['mætʃwud] n լուցկու փայտ/ծողիկ. make a ~ of *փխք.* ջարդել, ջարդութիւնը անել:

**mate** I [meɪt] 1. n ընկեր(ակից). (կենդանիներ) էգ, արու. room~ սենյակակից ընկեր. (օգնական) plumber's ~ փականագործի օգնական. first ~ *ծով.* նավապետի առաջին օգնական. 2. v ամուսնանալ. (կենդանիներ) զուգավորվել:

**mate** II [meɪt] n, v *շխմ.* մատ. մատ անել:

**material** [mə'tiəriəl] n նյութ. տեղեկութիւններ, փաստեր. sufficient/ample ~ բավական առատ նյութ. raw ~ հում նյութ, հումք. building ~ շինարարական նյութեր. շինանյութ. factual ~ փաստական նյութ. writing ~ գրեցական պիտույքներ. audio-video ~ տեսալսողական նյութեր. collect ~ նյութ հավաքել. (գործվածք, կտոր) expensive/heavy/light ~ թանկարժեք/ծանր/թեթև գործվածք/կտոր:

**material** [mə'tiəriəl] a նյութական, իրեղեն. էական. ~ well-being նյութական բարվոքութիւն. ~ loss/damage նյութական կորուստ/վնաս. ~ needs նյութական պահանջներ. ~ evidence/fact *իրավ.* էական/իրեղեն ապացույց/փաստ. ~ to the discussion էական/կարևոր քննարկման համար:

**materialize** [mə'tiəriəlaɪz] v իրականանալ. His hopes/plans ~d *նրա* հույսերը/ծրագրերը իրականացան:

**materially** [mə'tiəriəli] adv էպպես. *ֆին.* նյութապես. She is ~ better off *նա* նյութապես ապահով(ված) է:

**maternal** [mə'tɜ:nl] a մայրական, մոր, մոր կողմից. ~ instinct մայրական բնազդ. a ~ aunt մորաքույր. ~ uncle քեռի, մորեղբայր:

**maternity** [mə'tɜ:nəti] n մայրութիւն. ~ dress հղի կնոջ հագուստ. ~ leave ֆիզարձակուրդ. ~ home ծննդատուն. ~ benefit ծննդաբերության նպաստ:

**mathematical** [,mæθə'mætɪkəl] a մաթեմատիկական, ճշգրիտ:

**mathematician** [,mæθə'mə'ti:ʃn] n մաթեմատիկոս:

**mathematics** [,mæθə'mætɪks] n maths, math

մաթեմատիկա:  
**matinee** [ˈmætiːneɪ] n ցերեկույթ, ցերեկային ներկայացում/սեանս:  
**matine** [ˈmeɪtiŋ] n զուգավորում:  
**matrass** [ˈmætrəs] n *քիմ.* կոլբա, փորձանոթ:  
**matricide** [ˈmeɪtrɪsaɪd] n մայրասպան, մայրասպանություն:  
**matriculate** [mæˈtrɪkjuleɪt] v համալսարան/բուհ ընդունվել:  
**matriculation** [mæˈtrɪkjʊˈleɪʃn] n բուհ ընդունվելը: ~ exams ընդունելության քննություններ:  
**matrimonial** [ˌmætriˈmɔːniəl] a ամուսնական. ~ suit ամուսնալուծության հայց. ~ law ամուսնական իրավունք:  
**matrimony** [ˈmætrɪməni] n ամուսնություն:  
**matrix** [ˈmeɪtrɪks] n *հմկրգ.* մատրից. ~ inversion մատրիցի շրջում:  
**matron** [ˈmeɪtrən] n ամուսնացած կին, ընտանիքի մայր:  
**matted** [ˈmætid] a խճճված. խսիրով/ուղեգործով ծածկված. ~ hair խճճված մազեր:  
**matter** [ˈmætə] n նյութ. *փիլ.* մատերիա. *բժշկ.* թարախ. grey ~ ուղեղի գորշ նյութը. *խսկց.* խելք. dead ~ անօրգանական նյութ. postal ~ փոստային առաքում. printed ~ տպագրված նյութ. radioactive ~ ռադիոակտիվ նյութ. (բովանդակություն, էություն) form and ~ ձև և բովանդակություն. ~ at issue քննարկման առարկա. the main ~ of the speech զեկուցման հիմնական բովանդակությունը. a ~ of fact իրականություն, փաստ, փաստական հանգամանք. as a ~ of fact իրականում, փաստորեն. (գործ, հարց) urgent/private/unpleasant ~ շտապ/անձնական/տհաճ գործ. settle/arrange/complicate a ~ կարգավորել/բարդեցնել գործը. in regard to/concerning this ~ այս հարցի/գործի վերաբերյալ. a ~ of course ինքնըստինքյան հասկանալի գործ. a ~ of opinion վիճելի հարց. ~ of life and death կյանքի ու մահու հարց. a ~ of habit սովորության հարց. The ~ is closed **Յարգը լուծված է (փակված է).** take up the ~ հարցով զբաղվել. It is no laughing ~ **Յանաք բան չէ.** a ~ of two days երկու օրվա հարց. push the ~ through գործը մինչև վերջ հասցնել. What's the ~? **Ի՞նչն է բանը, Ի՞նչ է պատահել.** make ~ s worse ի լրումն ամենի.

There is smth the ~ **Ինչ-** որ բան է պատահել. ~s գործեր, հարցեր. business ~s գործնական հարցեր. money ~s փողային գործեր. ~s of law օրենքներ, իրավունքներ. How ~s stand ? **Ինչպե՞ս է գործերի վիճակը.** not to mince ~s ուղիղն ասած. (կարևորություն) no ~ what/when/who/where կարևոր չէ **ինչ/երբ/ով/որտեղ.** No ~ **Ոչինչ, Կարևոր չէ.** No ~ what he says **Ինչ էլ որ նա ասի.** No ~ what the weather is **Անկախ եղանակից:**

**matter** [ˈmætə] v նշանակություն/կարևորություն ունենալ. It doesn't ~ **Դա (ոչ մի) նշանակություն չունի.** կարևոր չէ. ոչինչ. What does it ~ to you? **Քե՞զ ինչ, Քո՞ ինչ գործն է.** It ~s very much **Դա շատ կարևոր է.** That's all that ~s **միայն Դա նշանակություն ունի.** It doesn't ~ any more **Դա այլևս նշանակություն չունի:**

**matter-of-fact** [ˌmætəɹəvˈfækt] a գործնական, պրակտիկ. in a ~ voice խիստ գործնական տոնով. very ~ շատ գործնական/պրակտիկ (անձնավորություն):

**matting** [ˈmætiŋ] n խսիր, ճիլոպ:

**mattok** [ˈmætək] n քլունգ, բրիչ:

**mattress** [ˈmætrəs] n ներքնակ, spring ~ զսպանակավոր ներքնակ:

**mature** [məˈtʃʊə] a հասուն, չափահաս, հասած. ժամկետը լրացած. ~ fruit հասած միրգ. a ~ work հասուն աշխատանք. on ~ consideration լուրջ խորհրդածությունից/մտորումներից հետո. ~ wine հասուն, հնորակ/հնաորակ գինի:

**mature** [məˈtʃʊə] v հասունանալ, հասուն դառնալ. ~ wine գինին հնորակ դարձնել. The fruit ~d **Միրգը հասավ.** He has ~d a lot **Նա բավական հասունացել է.** (ժամկետը լրանալ) When does the policy ~ ? **Ե՞րբ է ավարտվում ապահովագրման (վճարման) ժամկետը:**

**maturity** [məˈtʃʊərəti] n հասունություն, չափահասություն. մուրհակի վճարման ժամկետ. reach ~ չափահաս դառնալ. date of ~ պարտքի վճարման ժամկետ/լրանալու օրը:

**maudlin** [ˈmɔːdliŋ] a դուրազգաց, լալկան:

**maul** [mɔːl] n, v փայտե թակ, թակիչ. խեղդել, ջարդել. He was ~ed by a bear **Արջը նրան լավ տրորել էր:**

**maunder** [ˈmɔːndə] v անկապ խոսել.

փնթփնթալ. ~ about/along երերալով գնալ, աննպատակ թափառել:

**mausoleum** [ˌmɔːsəˈliːəm] n դամբարան:

**mauve** [məʊv] a բաց մանուշակագույն. կարմրակապույտ:

**mawkish** [ˈmɔːkiʃ] a անհամ, տհաճ համ ունեցող. սենտիմենտալ, լալկամ:

**maxim** [ˈmæksɪm] n իմաստալից խոսք, ասացվածք. իրավական սկզբունքներ. copy-book ~s հանրահայտ տարրական ճշմարտություններ:

**maximum** [ˈmæksɪməm] n ծայրագույն աստիճան, առավելագույնը, մաքսիմում. to the ~ մինչև մաքսիմում:

**maximum** [ˈmæksɪməm] a առավելագույն, մաքսիմալ. This costs a ~ of... Դա արժե մաքսիմում...

**May** [meɪ] n, a մայիս. *փխբ.* կյանքի ծաղկման շրջան. մայիսյան, մայիսմեկյան:

**may** [meɪ] v թույլտվություն ունենալ, կարելու. ~ I come in? Կարելի՞ է ներս գալ. ~ I introduce... Թույլ տվեք ներկայացնել. (հնարավորություն) It ~ /might rain Կարող է անձրև գալ. it ~ be հնարավոր է. The train ~ be late Գնացքը հավանաբար/հնարավոր է կուշանա. come what ~/might ինչ լինում է՝ թող լինի. try as he ~ որքան էլ նա ջանա/փորձի. Be that as it ~ Թող այդպես լինի. (առաջարկություն) We might try writing Մենք կարող էինք փորձել գրել. you might at least դուք համենայն դեպս/զոհե. (հույս, վախ) I hope he ~ recover Հուսով եմ, որ նա կապարհանի. They ~ be late Նրանք կարող են ուշանալ. (բաղձանք) M~ you be happy Երջանկություն եմ ցանկանում, Երջանիկ լինես. And who~/might you be? Իսկ դուք ո՞վ կլինեք/ո՞վ եք:

**maybe** [ˈmeɪbi] adv հավանական է, հնարավոր է, գուցե:

**mayonnaise** [ˌmeɪəˈneɪz] n մայոնեզ:

**mayor** [meə] n քաղաքապետ. lord ~ Լոնդոնի քաղաքապետ:

**maze** [meɪz] 1. n լաբիրինթոս, բավիղ. a ~ of streets փողոցների լաբիրինթոս. be in a ~ *փխբ.*, *խսկց.* լրիվ խճճվել. 2. v փակուղու/անտանելի դրության մեջ դնել:

**mazy** [ˈmeɪzi] a անելանելի, խառնաշփոթ, խճճված:

**me** [miː] pron ինձ, ես. ~ and my brother ես և

եղբայրս. That's/it's me Այդ ես եմ. He's older than ~ Նա ինձնից մեծ է:

**mead** [miːd] n մեղրախմիչք (ոգելից ըմպելիք):

**meadow** [ˈmedəʊ] n մարգագետին:

**meager, meagre** [ˈmiːgə] միհար, վտիտ. աղքատիկ, խղճուկ. a ~ repast աղքատիկ ուտելիք. a ~ attendance շատ վատ հաճախում:

**meal** I [miːl] n ուտելիք, կերակուր. մախաճաշ, ճաշ, ընթրիք. ~ time ուտելու ժամանակ. evening ~ ընթրիք. square ~ կուշտ ճաշ. a standup ~ կանգնած/ոտքի վրա ուտել. invite for a ~ հրավիրել ճաշի/ընթրիքի. during ~s ուտելու ժամանակ. before/after ~s ուտելուց առաջ/հետո. a light ~ թեթև ուտելիք:

**meal** II [miːl] n ալյուր. whole ~ չմաղված ալյուր:

**mealy** [ˈmiːli] a ալյուրի, ալյուրոտ, ալրոտ. փափուկ, փխրուն:

**mealy-mouthed** [ˌmiːliˈmaʊðd] a քաղցրախոս, անուշախոս:

**mean** [miːn] a ժլատ, գծուծ. անարգ, անազնիվ. be ~ with one's money ժլատ լինել. a ~ trick անազնվություն. a ~ thing to say ստորություն է այդ ասելը. a ~ appearance խղճուկ արտաքին. He's no ~ pianist Նա վատ դաշնակահար չէ:

**mean** [miːn] 1. n միջին. մեջտեղ. *մաթ.* միջին թիվ/ մեծություն. the happy/golden ~ ոսկե միջինը. arithmetical ~ միջին թվաբանականը. 2. a միջին:

**mean** [miːn] v մտադրվել, մտադրություն ունենալ. ~ well/ill լավ/վատ մտադրություն ունենալ. I ~ to leave tomorrow մտադիր եմ վաղը գնալ/հեռանալ. (ենթադրել, նկատի ունենալ). I ~ to say Ուզում եմ ասել. What do you ~? Ի՞նչ նկատի ունեք. I ~ what I say ես լուրջ եմ ասում. He ~s no harm/well Նա վատ բան չի կամենում. (նախատեսել) I meant this for you Սա ձեզ համար եմ նախատեսել. Is that remark meant for me? Դա ի՞նձ է վերաբերում. (նշանակել, իմաստ ունենալ) What does this word ~? Ի՞նչ է այս բառը նշանակում. Your friendship ~s a lot to me Ձեր ընկերությունը շատ բան է նշանակում ինձ համար. It ~s nothing Դա ոչիչ չի նշանակում:

**meander** [miˈændə] 1. n ոլորք, պտույտ. 2. v ոլորվել, պտույտներ կազմել (գետ, ճանապարհ). (մարդ) աննպատակ թափառել



(նաև ~ along):

**meaning** [ˈmi:nɪŋ] n իմաստ, նշանակություն. the ~ of this word այս բառի իմաստը. independent ~ ինքնուրույն իմաստ. content ~ իմաստային բովանդակություն. What's the ~ of this? Ի՞նչ է սա նշանակում:

**meaningful** [ˈmi:nɪŋfl] a նշանակալից, իմաստալից/արտահայտիչ. a ~ look բազմանշանակ հայացք. Such discussions are not very ~ Այդպիսի քննարկումներից շատ օգուտ չկա:

**meaningless** [ˈmi:nɪŋləs] a անիմաստ:

**meanly** [ˈmi:nli] adv ստորաբար, անարգ կերպով. թույլ, միջակ, խեղճ:

**meanness** [ˈmi:nəns] n ժլատություն, գծծություն. ստորություն, անազնվություն. միջակություն, խղճուկություն:

**means** [mi:nz] n միջոց, միջոցներ. ձև. by all ~ անպայման, ամեն գնով. by any ~ որևէ ձևով. by no ~ ոչ մի դեպքում, բնավ. It's by no ~ dear Դա բոլորովին էլ թանկ չէ. by fair ~ or foul ցանկացած միջոցով. by ~ of միջոցով, օժանդակությամբ. ~ of communication հաղորդակցության միջոցներ. The end justifies the ~ Նպատակը արդարացնում է միջոցները. There is no ~ Ոչ մի միջոց չկա. by some ~ or other այս կամ այն ձևով. (դրամական) միջոցներ a man of ~ միջոցներ ունեցող մարդ. live beyond one's ~ ունեցած միջոցներից ավել ծախսել, շռայլ ապրել. have no ~ of support ապրուստի միջոց չունենալ. ~ test եկամտի ստուգում:

**meantime** [ˌmi:n'taɪm], **meanwhile** [ˈmi:nwaɪl] adv միևնույն ժամանակ, նույն միջոցին (նաև in the meantime):

**measles** [ˈmi:zlz] n կարմրուկ. German ~ կարմրախտ:

**measly** [ˈmi:zli] a *խսկց*. խեղճ, խղճուկ. a ~ present խղճուկ նվեր. What a ~ helping ! Ի՞նչ խղճուկ բաժին է (հյուրասիրություն):

**measurable** [ˈmeɪərəbəl] a չափելի, չափավոր:

**measurably** [ˈmeɪərəbli] adv չափավոր կերպով:

**measure** [ˈmeɪə] n չափ. *երժշ*. տակտ, չափ. cubic/square/metric ~ խորանարդ/քառակուսի/մետրական չափ. dry ~s սորուն մարմինների չափ. linear/long ~ երկարության չափեր. severe ~s խիստ միջոցներ. short/full ~s

թերի/լրիվ չափ. beyond/out of ~ անչափ, չափազանց, չափից դուրս. in a/in some ~ որոշ չափով. մասամբ. made to ~ պատվերով կարված. take one's ~ չափսը վերցնել. *փխբ*. բնավորությունը որոշել. You have got his ~ all right Դու նրան ճիշտ բնութագրեցիր. (աստիճան, չափանիշ) in great/large ~ նշանակալից, մեծ չափով. in some ~ որոշ չափով/ աստիճանով. a certain ~ of որոշ աստիճան. preventive ~s կանխարգելիչ/ նախազգուշական միջոց. There 's a ~ of truth ճշմարտության որոշ աստիճան/չափ կա. know no ~ չափ չիմանալ. (միջոց միջոցներ) lawful ~ *իրավ*. օրինական միջոց. take ~s միջոցներ ձեռք առնել. take strong/preventive ~s *իրավ*. վճռական/կանխարգելիչ միջոցներ ձեռք առնել. precautionary ~s նախազգուշական միջոցներ:

**measure** [ˈmeɪə] v չափել, չափս վերցնել. ~ distance/length/temperature հեռավորությունը/ երկարությունը/ջերմությունը չափել. ~ smb չափսը վերցնել. ~ one's words *փխբ*. բառերը կշռադատել. ~ out չափելով բաժանել. ~ out litre of milk to everyone յուրաքանչյուրին մեկական լիտր կաթ բաժանել. ~ up համապատասխանել, արդարացնել. He doesn't ~ up the job Նա այս աշխատանքին չի համապատասխանում:

**measured** [ˈmeɪəd] a չափված, ռիթմիկ, համաչափ. at a ~ pace համաչափ քայլերով. in ~ tones զուսպ տոնով. a ~ reply մտածված պատասխան:

**measureless** [ˈmeɪələs] a անչափ, անսահման.

**measurement** [ˈmeɪəmənt] n չափ. ~s չափսեր. system of ~ չափերի համակարգ. urological ~ ուռոլոգիական հետազոտություն:

**measuring** [ˈmeɪərɪŋ] n չափում. ~ glass չափանոթ. ~ tape չափաժապավեն:

**meat** [mi:t] n (նաև butcher's ~) միս. raw/frozen/lean/fat ~ հում/սառեցված/նիհար/յուղոտ միս. beat up /cook/roast/boil ~ ծեծել/ պատրաստել/տապակել/եփել միսը. tender/soft / tough ~ նուրբ/փափուկ/կոշտ(եփած) միս. His work is ~ and drink to him Աշխատանքը նրա համար ամեն ինչ է. ~ pie մսով կարկանդակ. ~ soup մսով ապուր. ~ balls մսազնդիկ, կոլուլակ:

**meat-chopper** [ˈmi:t,tʃɒpə], **meat-grin-**

**der** [ˈmi:t,grəɪndə] n մսաղաց:  
**meaty** [ˈmi:ti] a մսոտ. *փխբ.* բովանդակալից. a ~ lecture շատ բովանդակալից դասախոսություն:  
**mechanic** [miˈkænik] n մեխանիկ. motor ~ ավտոմեխանիկ:  
**mechanical** [miˈkænikl] a մեքենայական, մեխանիկական. ~ engineer ինժեներ մեխանիկ. ~ engineering մեքենաշինություն:  
**mechanically** [miˈkænikli] adv մեքենայորեն, մեքենաբար, ինքնաբերաբար:  
**mechanics** [miˈkæniks] n մեխանիկա:  
**mechanization** [ˌmekənaɪˈzeɪʃn] n մեքենայացում:  
**mechanize** [ˈmekənaɪz] v մեքենայացնել. ~d transport ավտոտրանսպորտ:  
**medal** [ˈmedl] n մեդալ, շքանշան. award a ~ մեդալով պարգևատրել. win a ~ մեդալ շահել. long-service ~ շքանշան երկարատև ծառայության համար:  
**medallion** [mæˈdæliən] n մեդալիոն:  
**media** [ˈmi:diə] n լրատվական միջոցներ. եղանակներ, ուղիներ:  
**mediation** [ˌmi:diˈeɪʃn] n միջնորդություն, միջամտություն հաշտության նպատակով. ~ board հաշտարար խորհուրդ/հանձնաժողով:  
**meddle** [ˈmedl] v խառնվել, միջամտել. Don't ~ in my affairs Մի՛ խառնվիր իմ գործերին:  
**meddler** [ˈmedlə] n ուրիշի գործերին խառնվող:  
**meddlesome** [ˈmedlsəm] a քիթը ամեն տեղ խոթող. a ~ old woman կայուն պառավ:  
**medial** [ˈmi:diəl] a միջին, մեջտեղի, միջակա:  
**median** [ˈmi:diən] 1. n *մաթ.* միջնագիծ. 2. a միջին:  
**mediate** [ˈmi:diət] a միջնորդել, միջնորդ լինել. միջամտել. ~ in a dispute վեճին միջնորդել/միջամտել:  
**mediation** [ˌmi:diˈeɪʃn] n միջնորդություն, միջամտություն:  
**mediator** [ˈmi:diətɪə] n միջնորդ, հաշտարար:  
**medical** [ˈmedɪkəl] n *խսկց.* ուսանող-բժիշկ:  
**medical** [ˈmedɪkəl] a բժշկական. ~ attention/care բժշկական սպասարկում. ~ check up բժշկական հսկողություն. have a ~ exami-

nation բժշկական ստուգում անցնել. ~ record/card հիվանդության պատմություն, բժշկական քարտ. the ~ profession բժիշկներ. ~ officer բուժառայության սպա. ~ treatment բուժում. ~ evidence բժշկական ապացույց. army ~ corps ռազմաբժշկական ծառայություն. ~ practitioner գործող բժիշկ. ~ secrecy բժշկական գաղտնիք:

**medicament** [mæˈdɪkəmənt] n դեղ:

**medicate** [ˈmedikeɪt] v բուժել (դեղերով):

**medicinal** [mæˈdɪsnl] a դեղի, դեղորայքային. բուժիչ, ամոքիչ. ~ springs/herbs բուժիչ ջրեր/դեղաբույսեր. for ~ purposes բուժիչ նպատակներով:

**medicine** [ˈmeds(ə)n] n բժշկություն դեղ. practice ~ որպես բժիշկ աշխատել. comprehensive ~ ընդհանուր բժշկություն. ~ for a cough հազի դեղ. ~ box/chest դեղարկղ. ~ -man կախարհ-բժիշկ, հեքիմ:

**medieval** [ˌmediˈi:vɪl] a միջնադարյան:

**mediocre** [ˌmi:diˈəʊkə] a միջակ, սովորական:

**mediocrity** [ˌmi:diˈɒkrəti] n միջակություն:

**meditate** [ˈmediteɪt] v խորհել, մտածել. նյութել, դավել. ~ revenge վրեժ դավել. ~ on smth խորհել/մտածել մի բանի մասին:

**meditation** [ˌmediˈteɪʃn] n խորհրդածում, մտորում. մտասևեռում, հայեցություն. deep in ~ մտորումների մեջ խորասուզված:

**meditative** [ˈmedɪtətɪv] a խորհող, մտախոհ. հայեցական, երազկոտ:

**mediterranean** [ˌmedɪtəˈreɪniən] a միջերկրական, միջերկրյա. the M~ coast Միջերկրականի ափը. the M~ Միջերկրական ծովը:

**medium** [ˈmi:diəm] n *ֆիզ.*, *կենս.* միջավայր, շրջապատ. through/by the ~ of միջոցով. the ~ of communication զանգվածային լրատվության միջոցներ. the happy ~ ոսկե միջինը. ~s ոգեհարց, ոգեմիջնորդ. մեդիում:

**medium** [ˈmi:diəm] a միջին, միջակ. of ~ height միջին բարձրության. ~ wave band *ռադ.* միջին ալիքների դիապազոն:

**medley** [ˈmedli] n խառնուրդ, *փխբ.* շիլափլավ. խառը, խառնիխուռն:

**meed** [mi:d] n *բնստ.* պարգև:

**meek** [mi:k] a հեզահամբույր, հեզ, խոնարհ:

**meekness** [ˈmi:knəs] n մեղմություն, հեզություն:

**meet** [mi:t] n հանդիպում. հանդիպման վայր. tracks/athletic ~ *մրզ.* թեթև ատլետի-

կայի մրցումներ:

**meet** [mi:t] v հանդիպել, պատահել, դիմավորել. ~ by chance/unexpectedly պատահաբար/անսպասելի հանդիպել. He wouldn't ~ my eye *խուսափում էր աչքերիս նայել*. ~ smb halfway մեկին ընդառաջ գնալ. (հանդիպել, դիմավորել) ~ at the station կայարանում դիմավորել. The guide met us at the hotel. *Էքսկուրսավարը մեզ դիմավորեց հյուրանոցում*. (ծանոթանալ, ճանաչել) ~ my brother Ծանոթացեք եղբորս հետ. Pleased to ~ you *Ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալ*. (բավարարել, համապատասխանել) ~ demands/requirements պահանջները բավարարել. ~ the criteria *չափանիշներին համապատասխանել*. ~ smb's wishes *բավարարել ցանկությունները*. ~ expenses *ծախսերը /հաշիվը վճարել/փակել*. ~ a challenge (մարտա)հրավերն ընդունել. ~ objections *առարկություններին պատասխանել*. (հանդիպել) The roads ~ *ճանապարհները խաչվում են*. The society ~s once a month *Ընկերության ժողովը ամիսը մեկ անգամ է*. When does the council ~ ? *Ե՞րբ է խորհրդի հանդիպումը*. The teams ~ in the final *մրգ*. Թիմերը հանդիպում են վերջնախաղում. ~ with հանդիպել. ~ with difficulties դժվարությունների հանդիպել. make both ends ~ *ծայրը ծայրին հասցնել*:

**meeting** ['mi:tiŋ] n ժողով, հանդիպում, հանրահավաք, միտինգ. annual/general ~ տարեկան/ընդհանուր ժողով. hold a ~ ժողով անցկացնել. call/convene a ~ ժողով հրավիրել. public ~ հանրային ժողով. faculty ~ ամբիոնի նիստ. creditor's ~ պարտատերերի ժողով. race ~ *մրգ*. ձիարշավ. athletics' ~ *թեթև ատլետիկայի մրցումներ*:

**mega** ['megə] n մեկ միլիոն. ~ star մեգաստղ (մեկ միլիոն աստղեր):

**megaphone** ['megəfəʊn] n խոսափող:

**megalomania** [,megə'ləʊ'meɪniə] n վեհուքյան մոլուցք:

**melancholic** [,melən'kɒlɪk] a մելանաղծոտ, տխուր, տրտում, թախծոտ:

**melancholy** ['melənkəli] n, a մելանաղծություն, թախիծ. մելանաղծոտ, մռայլ:

**meliorate** ['mi:lɪəreɪt] v բարվոր(վ)ել, բարելավել. *զղտ*. մելիորացնել. բարելավել (հողը):

**mellifluous** [mə'lɪfluəs] a մեղրածոր, մեղ-

րախոս:

**mellow** ['meləʊ] a հյութեղ, քաղցր, հասուն. ~ wine *հնացրած գինի*. ~ land *բերրի/պարարտ հող*. ~ voice *հնչուն/հյութեղ ձայն*. ~ colours *մեղմ գույներ*. ~ with age *փխբ*. տարիքի հետ ավելի մեղմացած:

**mellowness** ['meləʊnəs] n բարեսրտություն, բարեհոգություն:

**melodious** [mə'ləʊdiəs] a բարեհնչյուն, քաղցրալուր:

**melodrama** ['melə'drɑ:mə] n մելոդրամա, թատերախաղ:

**melody** ['melədi] n մեղեդի, եղանակ:

**melon** ['melən] n սեխ. water ~ *ձմերուկ*. ripe/juicy ~ *հասած/հյութեղ սեխ*. slice of ~ *մի կտոր սեխ*:

**melt** [melt] n հալած մետաղ, հալվածք:

**melt** [melt] v (*down* ~ down) հալ(վ)ել. լուծվել.

The snow ~ed *Ձյունը հալվեց*. ~ into rain *անձրևի վերածվել*. ~ into tears *սաստիկ լաց լինել*. (թուլանալ, մեղմանալ) His heart ~ed with pity *փխբ*. Սիրտը խղճահարությամբ լցվեց. Money ~s away *Փողերը հալվում են*. The fog ~ed away *Սառախուղը ցրվեց*:

**melting** ['meltiŋ] n հալում, հալեցում. ~ point *հալեցման կետ*:

**member** ['membə] n անդամ, պատգամավոր, խորհրդատու. be a ~ of *անդամ լինել*. ~ of a family/party *ընտանիքի/կուսակցության անդամ*. M ~ of Parliament *Պառլամենտի անդամ*. a full ~ *լիիրավ անդամ*. ~ of the public *հանրության ներկայացուցիչ*. a ~ country of the UN *ՄԱԿ-ի անդամ երկիր*. ~ state *անդամ պետություն*. unruly ~ *խսկց., կտկ*. լեզուն:

**membership** ['membəʃɪp] n անդամություն, անդամակցություն, անդամների կազմը/ թիվը. apply for ~ *անդամության դիմում տալ*. ~ fee/card *անդամավճար, անդամատոմս*:

**membrane** ['membreɪn] n *կզմխ*. թաղանթ, նրբամաշկ. *տեխ*. մեմբրան:

**membranous** ['membərəʊs] a թաղանթավոր, թաղանթապատ:

**memento** [mə'mentəʊ] n հիշեցում. հուշանիշ, հուշանվեր. Take it as a ~ *Վերցրու որպես հուշանվեր*:

**memoir** ['memwɑ:] n հուշեր. (ինքնա)կենսագրություն. ~s *հիշողություններ*:

**memorable** ['memərəbəl] a անմոռանալի,

հիշարժան. արժանահիշատակ:  
**memorandum** [ˌmeməˈrændəm] n (*կրճ. memo*) հուշաթերթիկ. explanatory ~ բացատրագիր, զեկուցագիր. *ղվնգ.* հուշագիր, մեմորանդում. official ~ պաշտոնական հուշագիր. (հիմնադրագիր) ~ of association ընկերության հիմնագիր. send in a ~ զեկուցագիր ուղարկել. ~ of agreement համաձայնության հուշագիր:  
**memorial** [məˈmɔːriəl] n հուշարժան, հուշատախտակ. հուշահամալիր. ~- monument հուշակոթող. war ~ պատերազմի զոհերի հուշարժան. erect a ~ հուշարժան կանգնեցնել:  
**memorial** [məˈmɔːriəl] a հիշարժան, հիշատակի. ~ plaque հուշատախտակ. ~ service քաղաքացիական հոգեհանգիստ:  
**memorize** [ˈmeməraɪz] v հիշել, մտքում պահել. անգիր անել. հավերժացնել, անմահացնել:  
**memory** [ˈmeməri] n հիշողություն, հուշ. հիշատակ. extraordinary/poor/visual/for faces ~ արտակարգ/վատ/տեսողական հիշողություն. դեմքերի հիշողություն. develop/strain/overburden ~ զարգացնել/լարել/զերծանաբեռնել հիշողությունը slip/escape from one's ~ հիշողությունից վրիպել/մոռացվել/մտքից ընկնել. bear/keep in ~ հիշել, մտքում պահել. speaking from ~ որքանով հիշում եմ. in ~ of ի հիշատակ. jog one's ~ հիշել տալ. within the ~ of men, within (living) ~ ներկա սերնդի հիշողության մեջ. if my ~ doesn't fail me որքանով հիշում եմ, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում. ~s հիշողություններ, հուշեր. ~s of childhood մանկության հուշեր. *հմկրգ.* ~ allocation հիշողության բաշխում. ~ array հիշողության տիրույթ. ~ capacity հիշողության ծավալ. ~ hierarchy հիշողության հիերարխիա. ~ management հիշողության ղեկավարում. ~ management unit հիշողության ղեկավարման սարք/ դիսպետչեր. ~ map հիշողության տեղաբաշխման սխեմա. ~ page հիշողության էջ:  
**menace** [ˈmenəs] n սպառնալիք. nuclear ~ միջուկային սպառնալիք. ~ of war պատերազմի վտանգ. standing ~ մշտական սպառնալիք. He's a ~ at the wheel Ղեկի մոտ նա վտանգավոր է. Նրան չի կարելի ղեկ վստահել. That child is a ~ Այդ երեխան պատիժ է:

**menace** [ˈmenəs] v սպառնալ. The regions are ~d by flood/famine Այս շրջաններին հեղեղ/ սով է սպառնում:  
**menagerie** [miˈnædʒəri] n գազանանոց:  
**mend** [mend] n կարկատան. on the ~ դեպի լավացում/ լավը:  
**mend** [mend] v նորոգել, կարգի բերել, կարկատել. ~ clothes/a watch/shoes հագուստը նորոգել. կոշիկները վերանորոգել. ժամացույցը վերանորոգել/կարգի բերել. ~ socks/ stockings գուլպաները/կիսագուլպաները կարկատել/նորոգել. ~ a TV set/water pipe վերանորոգել հեռուստացույցը/ջրի խողովակը. ~ one's ways/manner *փխբ.* ուղղվել, թերություններից ազատվել. This won't ~ matters Դրանով գործին չես օգնի. ~ one's health առողջանալ. ~ the fire կրակը վառ պահել. It's never too late to ~ երբեք ուշ չէ ուղղվել/ թերություններից ազատվել:  
**mendacious** [menˈdeɪʃəs] a սուտ, կեղծ:  
**mender** [ˈmendə] n նորոգող, վերանորոգող վարպետ:  
**mending** [ˈmendɪŋ] n կարկատում, վերանորոգում. invisible ~ զեղարվեստական նորոգում/կարկատում:  
**menfolk** [ˈmenfəʊk] n տղամարդիկ:  
**menial** [ˈmiːniəl] n, a ծառա, լաքեյ (*նաև փխբ.*) ծառայական, ստրկամիտ. help with ~ tasks օգնել տնային գործերում:  
**men-of-war** [ˌmenəvˈvɔː] pl (*եգ. man-of-war*) ռազմանավ. ռազմական նավաստիներ:  
**menopause** [ˈmenəʊpɔːz] n դաշտանադադար:  
**mental** [ˈmentl] a մտավոր, հոգեկան. ~ work/ability/strain մտավոր աշխատանք/ուճակություններ/լարում. (մտքում պատկերացվող) ~ image մտավոր պատկեր. ~ arithmetic հաշիվ մտքում. make a ~ note of smth մտքում նշել. (հոգեբանական, հոգեկան) ~ deficiency հոգեկան/մտավոր հետամնացություն. ~ illness հոգեկան հիվանդություն. a ~ patient/case հոգեկան հիվանդ. a ~ case հոգեկան հիվանդ. He's ~ *խսկգ.* Նա հոգեկան հիվանդ է. ~ hospital/home հոգեբուժարան. ~ specialist հոգեբույժ. ~ skills հոգեբանական ներուժ. ~ test հոգեբանական փորձ. ~ training հոգեբանական պատրաստություն. ~ incapacity մտավոր անկարողություն.

դուրություն. ~ violence հոգեկան բռնություն:  
**mentality** [men'tæləti] n խելքի կերտվածք. մտայնություն. մտածողական ընդունակություն. ինտելեկտ. low ~ մտավոր հետամնաց անձ. I don't understand his ~ Նրա մտածելակերպը չեմ ընկալում/հասկանում:

**mentally** [ˈmentəli] adv մտովի, մտքով:

**menthol** [ˈmenθɒl] n քիմ. մենթոլ:

**mention** [ˈmenʃn] n հիշատակում, ակնարկ, նշում. No ~ was made Ոչ մի խոսք չասվեց:

**mention** [ˈmenʃn] v հիշատակել, հիշել, նշել. ~ smb in a letter մեկին նամակում հիշատակել. His name was ~ed Նրա անունը նշվեց. He never ~ed it Նա այդ մասին նույնիսկ չհիշեց. Don't ~ it Չարժե (thank you-ին պատասխան). I'll ~ it to her Ես նրան կհիշեցնեմ այդ մասին. not to ~ մի կողմ թողնելով, էլ չասած:

**mentor** [ˈmentɔː] n դաստիարակ, ուսուցիչ. խրատող, մենտոր:

**menu** [ˈmenjuː] n ճաշացուցակ, ճաշացանկ, կերակրացանկ:

**mercantile** [ˈmɜːkəntaɪl] a առևտրական, վաճառականական. ~ law առևտրային իրավունք:

**mercenary** [ˈmɜːsnəri] n վարձկան (օտարազգի) զինվոր:

**mercenary** [ˈmɜːsnəri] a վարձված, վարձկան. շահադիտական. շահասեր, շահամոլ. from ~ motive շահասիրությունից դրդված. ~ marriage հաշվենկատ/հաշվարկով ամուսնություն:

**merchandise** [ˈmɜːtʃəndaɪz] n ապրանք, առևտուր. stolen ~ գողացված ապրանք, գողուն:

**merchant** [ˈmɜːtʃənt] n առևտրական, վաճառական. wine/tea ~ գինու/թեյի առևտրական. speed ~ անկարգ/խաբեբա (քյալագյոզ) վարորդ:

**merchant** [ˈmɜːtʃənt] a առևտրական/առևտրային. ~ bank առևտրական բանկ. ~ navy առևտրական նավատորմ. ~ vessel առևտրական նավ:

**merchantman** [ˈmɜːtʃəntmən] n առևտրական նավ:

**merciful** [ˈmɜːsɪfl] a բարեգութ, գթասիրտ:

**merciless** [ˈmɜːsɪləs] a անգութ, անողորմ. խիստ:

**mercurial** [mɜːˈkjʊəriəl] n սնդիկային, սնդիկ պարունակող. աշխույժ, արագաշարժ:

**mercury** [ˈmɜːkjʊəri] n, a սնդիկ. սնդիկային, սնդիկի:

**merc/y** [ˈmɜːsi] n գթասրտություն, գթություն. կարեկցանք, թողություն. *իրավ.* ներում. act of ~ գթության ակտ/գործ. sisters of ~ գթության քույրեր. ~ killing էվթանազիա. works of ~ բարեգործություն. cry/beg/plead for ~ գթություն հայցել. at the ~ of կամքին/գթասրտությանը թողնված. show ~ գթասրտություն/ներողամտություն ցուցաբերել. Have ~! Գթացեք, խնայեք. M~ on us! Աստված իմ. small ~ies փոքր շնորհներ. prerogative of ~ ներման բացառիկ իրավունք:

**mere** [miə] a բացարձակ, զուտ, կատարյալ, սոսկ. ~ accident բացարձակ պատահականություն. She is a ~ child Նա կատարյալ երեխա է. That's a ~ prejudice Դա պարզապես նախապաշարմունք է. by ~ chance, the ~st chance զուտ պատահականության պատճառով. the ~ thought of it միայն միտքը այդ մասին. a ~ trifle սոսկ մանրուք. It's ~ guessing Դա պարզապես ենթադրություն է:

**merely** [ˈmiəli] adv պարզապես, լոկ, միայն. He ~ said Նա միայն/պարզապես ասաց:

**merge** [mɜːdʒ] v ձուլ(վ)ել, միախառնվել, միանալ. ~ two companies միացնել երկու ընկերությունները. The rivers ~ here Գետերը միախառնվում են այստեղ:

**merger** [ˈmɜːdʒə] n միացում, ձուլում, միավորում. corporate ~ միավորումների ձուլում:  
**meridian** [mɜːˈriːdiən] n միջօրեական. միջօրե, կեսօր:

**meringue** [mɜːˈræŋ] n բեզե (թխվածք):

**merino** [mɜːˈriːnəʊ] n մերինոս (*ճակ* բուրդ):

**merit** [ˈmerɪt] n արժանիք. վաստակ, ծառայություն appreciate/belittle ~ գնահատել/նսեմացնել արժանիքները. artistic ~s գեղարվեստական արժանիքներ. an award for ~ պարգև արժանիքների/վաստակի համար. treat smth on its ~s գործը ըստ էության քննարկել. decision on the ~s *իրավ.* ըստ էության կատարված որոշում:

**merit** [ˈmerɪt] v արժանի լինել:

**meritorious** [ˌmeriˈtɔːriəs] a գովասանքի/պարգևի արժանի. գովելի:

**mermaid** [ˈmɜːmeid] n ջրահարս:

**merman** [ˈmɜːmæn] n ջրոզի, տրիտոն:

**merrily** [ˈmerili] adv ուրախ, զվարթ:

**merriment** [ˈmerimənt] n ուրախություն, ցնծություն:

**merry** [ˈmeri] a ուրախ, զվարթ. ~ laugh/look ուրախ ծիծաղ. զվարթ հայացք. make ~ ուրախանալ, զվարճանալ. make ~ at/over ծիծաղել, ծաղրել. (կոնծած) be a bit ~ մի քիչ կոնծած լինել:

**merry-go-round** [ˈmerigəʊ,raʊnd] n կարուսել:

**merry-maker** [ˈmeri,meikə] n զվարճախոս, կատակաբան, զվարճասեր մարդ:

**merry-making** [ˈmeri,meikiŋ] n ուրախություն, խնդություն. տոնախմբություն:

**mesalliance** [meˈzæliəns] n անհավասար ամուսնություն:

**mesh** [meʃ] n բջիջ (ցանց), օղակ. *փխբ.* ուռկան, թակարդ:

**meshy** [ˈmeʃi] a ցանցավոր, ծակ-ծակ:

**mesmerism** [ˈmez(ə)rɪz(ə)m] n հիպնոսացում, հիպնոսում, հիպնոս:

**mesmerize** [ˈmezməraɪz] v հիպնոսացնել, հիպնոսի ենթարկել. *փխբ.* գրավել, հմայել:

**mess** [mes] n անկարգություն, խառնաշփոթություն. My desk is in a ~ Սեղանս խառնափնթոր վիճակում է. make a ~ խառնաշփոթություն առաջացնել. unholy ~ ահավոր անկարգություն/թափփվածություն. get into a ~ փորձանքի մեջ ընկնել. get out of a ~ անախտոթությունից դուրս գալ. make a ~ of one's life իր կյանքը դժոխք դարձնել. Their marriage is in a ~ Նրանց ամուսնությունը վտանգի տակ է. (կեղտ) What a ~ are you in! Ահավոր կեղտոտ ես. The child made a ~ on the carpet երեխան կեղտոտել է կարպետը:

**mess** [mes] v խառնաշփոթ առաջացնել. կեղտոտել. Գործը փչացնել. The weather ~ed up all our plans եղանակը խառնեց մեր բոլոր ծրագրերը/պլանները. He loves ~ing about in the garden Նա սիրում է այգում փորփրել:

**mess** [mes] n, v ընդհանուր նավասենյակ/ճաշարան. (բանակ, նավատորմ). The officers ~ together Սպաները միասին են ճաշում:

**message** [ˈmesɪdʒ] n հաղորդագրություն, հաղորդում. զեկույց, ուղերձ. առաջադրանք. transmit a ~ by radio ռադիոյով հաղորդում տալ. leave a ~ for smn մեկին նամակ/երկտող թողնել. Can you give him a ~?

Կարո՞ղ եք նրան հաղորդել. *հմկրգ.* ~ block հաղորդագրության բլոկ. ~ box հաղորդագրության պատուհան. ~ channel հաղորդագրությունների կանալ. ~ class հաղորդագրության դաս. ~ header հաղորդագրության վերնագիր:

**messenger** [ˈmesndʒə] n բանբեր, թղթատար, սուրհանդակ. *ռզմ.* կապավոր:

**mess-jacket** [ˈmes,dʒækiʃ] n *ծով.* տուժուրկա՝ տարազային բաճկոն:

**messmate** [ˈmesmeɪt] n սեղանակից, ճաշընկեր:

**Messrs** [ˈmesəz] n pl պարոնայք (նամակներում ղեկավարների անուններից առաջ):

**messy** [ˈmesi] a խառնաշփոթ, կեղտոտ You ~ child Կեղտոտ/փնթի երեխա. It's a ~ job Դա կեղտոտ գործ է. ~ painting խառնաշփոթ նկար:

**metabolism** [məˈtæbə,lɪz(ə)m] n նյութափոխանակություն:

**metal** [ˈmetl] 1. n մետաղ. ferrous ~ սև մետաղ. white ~ սպիտակ մետաղ, արհեստական արծաթ. yellow ~ արույր. all ~ միամետաղ, ամբողջամետաղ. heavy ~ ծանր հրետանի: 2. a մետաղյա:

**metallic** [meˈtælik] a մետաղե, մետաղյա. a ~ sound մետաղե ձայն:

**metallurgical** [ˌmetəˈlɜːdʒɪkl] a մետաղագործական:

**metallurgy** [meˈtælədʒi] n մետաղագործություն, մետալուրգիա:

**metamorphose** [ˌmetəˈmɔːfəʊz] v կերպարանափոխել, փոխակերպել:

**metamorphosis** [ˌmetəˈmɔːfəʊsɪs] n կերպարանափոխություն, փոխակերպություն:

**metaphor** [ˈmetəfə] n փոխաբերություն:

**metaphorical** [ˌmetəˈfɔːrɪkl] a փոխաբերական:

**metaphysics** [ˌmetəˈfɪzɪks] n բնագանցություն, մետաֆիզիկա:

**mete** [miːt] n սահման, սահմանային սյուն:

**meteor** [ˈmiːtiə] n օդերևույթ, ասուպ, մետեր:

**meteoric** [ˌmiːtiˈɔːrɪk] a ասուպային, մթնլուրտային, թռուցիկ, արագ. a ~ career գլխապտույտ կարիերա:

**meteorite** [ˈmiːtiəraɪt] n օդաքար, երկնաքար, ասուպ:

**meteorology** [ˌmiːtiəˈrɒlədʒi] n օդերևույ-

թարանություն, մթնոլորտային պայմաններ:  
**meter** [ˈmi:tə] n հաշվիչ, չափիչ, չափող գործիք. gas/electric ~ գազահաշվիչ, էլեկտրահաշվիչ ~ reading հաշվիչի տվյալներ:  
**methane** [ˈmi:θeɪn] n *քիմ.* մեթան, ճահճագազ:  
**method** [ˈmeθəd] n մեթոդ, միջոց, եղանակ. համակարգ, կարգ. the latest ~ նորագույն մեթոդները: a man of ~ ճշտապահ/կարգապահ մարդ:  
**methodical** [məˈθɒdɪkəl] a մեթոդական, մեթոդիկ:  
**methodology** [ˌmeθəˈdɒlədʒi] n մեթոդաբանություն:  
**methyl** [ˈmeθl] n *քիմ.* մեթիլ:  
**methylated spirits** [ˌmeθɪleɪtɪdˈspɪrɪt] n դեմատուրատ:  
**meticulous** [məˈtɪkjələs] a բժախնդիր, մանրախնդիր. be ~ in one's work բժախնդիր լինել իր աշխատանքում:  
**metonymy** [meˈtɒnəmi] n փոխանունություն, մետոնիմիա:  
**metre** [ˈmi:tə] n մետր. *բնստ.* ոտք, ռիթմ (ոտանավորի):  
**metric(al)** [ˈmetrɪk(əl)] a մետրական. the ~ system չափերի մետրական համակարգ:  
**metropolis** [məˈtrɒpəlɪs] n մայրաքաղաք. մայր երկիր, մետրոպոլիս:  
**metropolitan** [ˌmetrəˈpɒlɪtən] n, a մայրաքաղաքի բնակիչ. *եկեղ.* արքեպիսկոպոս, մետրոպոլիտ. մայրաքաղաքի, մայրաքաղաքային. *եկեղ.* թեմական, թեմի:  
**mettle** [ˈmetl] n խառնվածք, բնավորություն. եռանդ, ավյուն. be on one's ~ եռանդ հանդես բերել. put one on his ~ ստիպել մեկին ձեռքից եկածն անել. show one's ~ իր բարձրության վրա լինել:  
**mettlesome** [ˈmetlsəm] a եռանդուն, աշխույժ, կրակոտ:  
**mew** I [mjʊ:] n, v մլավոց. մլավել:  
**mew** II [mjʊ:] n, v վանդակ (բազեի). վանդակի մեջ դնել/փակել. *փխբ.* բանտարկել:  
**mewl** [mjʊ:] v տզտզալ, թնգթնգալ:  
**mezzanine** [ˈmeɪzəni:n] n միջնահարկ, կիսահարկ:  
**mezzo** (~ **soprano**) [ˌmeɪzəʊsəˈpra:nəʊ] n մեցցո-սոպրանո (կանացի ձայն). She 's a wonderful ~ Նա գեղեցիկ մեցցո-սոպրանոնի:

**mi** [mi:] n *երժշ.* 'մի' ձայնահիշ:  
**miaow** [miˈaʊ] n, v մլավոց. մլավել:  
**mica** [ˈmaɪkə] n թերթաքար:  
**microbe** [ˈmaɪkrəʊb] n մանրէ, միկրոբ:  
**microbiology** [ˌmaɪkrəʊbaɪˈɒlədʒi] n միկրոբիոսաբանություն:  
**microcosm** [ˈmaɪkrəʊkɒzəm] n միկրոկոսմոս, փոքրածավալ բան:  
**microeconomics** [ˌmaɪkrəʊi:kəˈnɒmɪks] n միկրոտնտեսություն:  
**microphone** [ˈmaɪkrəʊfəʊn] n խոսափող, միկրոֆոն:  
**microcode** [ˈmaɪkrəʊˈkəʊd] n *հմկրգ.* միկրոհրաման:  
**microscope** [ˈmaɪkrəskəʊp] n մանրադիտակ, միկրոսկոպ:  
**microscopic(al)** [ˌmaɪkrəˈskɒpɪk(əl)] n մանրադիտակով տեսանելի:  
**mid** [mɪd] a միջին, մեջտեղի. in ~ winter ձմեռվա կեսին. The bomb exploded in ~ air Ռումբը պայթեց օդում. the ~ morning coffee break առավոտյան սուրճի ընդմիջում:  
**midchildhood** [ˈmɪdʃaɪldhʊd] n վաղ պատանեկություն:  
**midday** [ˌmɪdˈdeɪ] n, a կեսօր. կեսօրյա, կեսօրվա. a ~ snack կեսօրյա նախաճաշ:  
**middle** [ˈmɪdl] n մեջտեղ, կենտրոն. in the ~ of the room սենյակի կենտրոնում. in/the ~ of a meal/speech ուտելու/զեկուցման, ճառի ժամանակ:  
**middle** [ˈmɪdl] a միջին, մեջտեղի, կենտրոնական. ~ finger/ear միջնամատ, միջին ականջ. ~ distance *արվ.* միջին պլան. ~ line միջնագիծ. M~ ages միջնադար. steer/take a ~ course միջին դիրք գրավել:  
**middle-aged** [ˌmɪdlˈeɪdʒd] a հասակավոր, միջին տարիքի. a ~ woman միջին տարիքի/տարեց կին:  
**middle-class** [ˌmɪdlˈkla:s] a միջին դաս, միջին խավի պատկանող. ~ residential area քաղաքի այն բնակելի մասը, որտեղ բնակվում են միջին խավին պատկանող մարդիկ:  
**middleman** [ˈmɪdlmæn] n միջնորդ:  
**middle weight** [ˈmɪdlweɪt] a *մրգ.* միջին քաշ ունեցող. a ~ boxer միջին քաշի բռնցքամարտիկ. ~ wrestling միջին քաշի ըմբշամարտ:  
**middling** [ˈmɪdlɪŋ] a միջակ, միջին. երկրորդ տեսակի/կարգի. of ~ size միջին չափսի. fair

to ~ բավական միջակություն:  
**middling** ['midliŋ] adv միջակ. ոչ այս ոչ այն, ոչ լավ ոչ վատ. ~ tall բավական բարձրահասակ. How are you feeling? M~ ինչպե՞ս եք. Ոչինչ, միջակ (ոչ այս, ոչ այն):  
**midge** [midʒ] n մծեղ, մլակ, մոծակ:  
**midget** ['midʒit] n թզուկ, լիլիպուտ:  
**midland** ['midlənd] n երկրի կենտրոնական մասը. the M~s Անգլիայի կենտրոնական դքսությունները:  
**midnight** ['midnait] n, a կեզիշեր. լիակատար մթություն, խավար. after ~ կեսգիշերից հետո. կեսգիշերվա, կեսգիշերային:  
**midriff** ['midrif] n ստոծամի:  
**midship** ['midʃip] n նավի միջին մասը:  
**midshipman** ['midʃipmən] n ծովային ենթասպա:  
**midst** [midist] n միջին տեղ, միջինը. in the ~ of մեջ, միջև, մեջտեղում. in/from our ~ մեր մեջ, մեր միջավայրում:  
**midsummer** [,mid'sʌmə] n ամառնամեջ, ամառվա կեսը. ամառային արևադարձ (հունիսի քսանմեկ). ~ day հունիսի քսանչորսը:  
**midway** [,mid'wei] adv կես ճանապարհին, ճամփի կեսին. turn back ~ կես ճանապարհից վերադառնալ:  
**midweek** [,mid'wi:k] a, adv շաբաթվա երկրորդից չորրորդ օրերը. It's cheaper to travel ~ Տրանսպորտի տոմսերը շաբաթվա երկրորդից չորրորդ օրերը ավելի էժան են:  
**midwest** [,mid'west] n միջին արևմուտք. the ~ ԱՄՆ-ի միջին արևմտյան նահանգները:  
**midwife** ['midwaif] n մանկաբարձուհի:  
**midwinter** [,mid'wintə] n ձմեռնամեջ, ձմեռվա կեսը. ձմեռային արևադարձ (դեկտեմբերի քսանմեկը):  
**mien** [mi:n] n դեմք, կերպարանք, դեմքի արտահայտություն:  
**might** [maɪt] n հզորություն, զորություն with all one's ~ ամբողջ ուժով. with ~ and main ամբողջ ուժով:  
**mightily** ['maɪtɪli] adv ուժեղ կերպով. *խսկյ.* շատ, չափազանց:  
**mighty** ['maɪti] 1. a ուժեղ, հզոր, հուժկու, վիթխարի. 2. adv շատ. չափազանց. a ~ nation հզոր ազգ/երկիր. a ~ ocean վիթխարի օվկիանոս. a ~ blow ուժեղ հարված. be in a ~ hurry չափազանց շտապել. That is ~

easy Դա շատ հեշտ է That's ~ awkward Դա ահավոր անհարմար է:  
**mignonette** [ˌmɪnjə'net] n *բար.* հափրուկ:  
**migraine** ['mi:greɪn] n զլխացավ, միգրեն:  
**migrant** ['maɪgrənt] n վտարանդի, տարագիր, վերաբնակիչ, տարաբնակ. քոչվոր, թափառակյաց. չվող թռչուն:  
**migrate** [maɪ'greɪt] v վերաբնակվել, գաղթել. չվել (թռչունների մասին). These birds ~ to the South Այս թռչունները չվում են հարավ:  
**migration** [maɪ'greɪʃn] n գաղթ, տարաբնակեցում, միգրացիա, չու (թռչունների) flow of ~ ներգաղթի հոսք. labour ~ աշխատանքային տեղաշարժ:  
**migratory** ['maɪgrətəri] a թափառական, վաչկատուն. քոչվոր, չվող:  
**mike** [maɪk] n *խսկյ.* խոսափող, միկրոֆոն:  
**milch** [mɪltʃ] a կաթնատու, կթան:  
**mild** [maɪld] a մեղմ, հեզ. բարեխառն չափավոր. ~character/climate/sentence մեղմ բնավորություն/կլիմա/դատավճիռ a ~ evening տաք երեկո. ~ tobacco թույլ ծխախոտ. a ~ surprise թեթև զարմանք. a ~ form of flu գրիպի թեթև տեսակ:  
**mildew** ['mɪldju:] n *բար.* (բույսերի հիվանդություն) չոռ. բորբոս:  
**mildly** ['maɪldli] adv մեղմ. to put it ~ մեղմ ասած:  
**mildness** ['maɪldnəs] n մեղմություն, քաղցրություն. բարեխառնություն, չափավորություն:  
**mile** [maɪl] n մղոն (1609, 30). nautical ~ ծովային մղոն, (1852 մ). a long ~ երկար ճանապարհ. 30 mph (miles per hour) ժամում 30 մղոն. She is ~ better Հազար անգամ/Անհամեմատ ավելի լավ է. You can tell it a ~ off Շատ հեռվից/Հազար մետրից երևում է. ~ s away շատ հեռու:  
**mileage** ['maɪlɪdʒ] n հեռավորությունը մղոններով. What ~ has the car done? Քանի՞ մղոն է մեքենան արել/անցել. ~ indicator կիլոմետրաժի հաշվիչ:  
**milepost** ['maɪlpəʊst] n մղոնացույց սյուն:  
**milestone** ['maɪlstəʊn] n մղոնացույց քար. *փխբ.* ուղենիշ (կյանքի պատմություն) a ~ in the history of Europe եվրոպայի պատմության ուղենիշ:  
**milieu** ['mi:lju:] n միջավայր, շրջապատ:  
**militant** ['mɪlɪtənt] a, n ակտիվիստ. ռազմա-



տենչ, մարտնչող. The students are less ~ now  
Այժմ ուսանողներն այնքան էլ ռազմատենչ  
չեն:

**militarist** [ˈmilitərist] n ռազմամոլ:

**militarization** [ˌmilitəraɪˈzeɪʃn] n ռազմա-  
կանացում:

**militarize** [ˈmilitəraɪz] v ռազմականացնել:

**military** [ˈmilitəri] n *հվթ.* the ~ զինվորա-  
կանություն:

**military** [ˈmilitəri] a զինվորական, ռազմա-  
կան ~ service զինորական ծառայություն. ~  
train զինվորական գնացք/էշելոն. ~ police  
զինվորական ոստիկանություն. ~ tribunal  
զինվորական դատարան/տրիբունալ. ~ per-  
sonnel զինծառայողներ. ~ offence զինվորա-  
կան զանցանք. ~ age զորակոչի տարիք. ~  
attache ռազմական կցորդ:

**militate** [ˈmilitet] v պատերազմել, դեմ  
կռվել/ գործել. խանգարել. These factors will  
~ against us Այս գործոնները կգործեն մեր  
դեմ:

**milk** [milk] n կաթ. condensed/evaporated ~  
խտացրած կաթ. skimmed ~ քաշած կաթ.  
powdered ~ փոշի կաթ. pigeon's ~ *փխբ.* թռչնի  
կաթ:

**milk** [milk] v կթել. կաթ տալ. *փխբ.* շահ/օ-  
գուտ բերել:

**milk bar** [ˈmilkba:] n կաթնային բար:

**milk bottle** [ˈmilkbɒtl] n կաթի շիշ:

**milk-and-water** [ˌmilkənˈwɔ:tə] a փափ-  
կասուն, կամազուրկ. ջրիկ, դատարկ, ան-  
բովանդակ:

**milkmaid** [ˈmilkmeid] n կաթնավաճառու-  
հի. կթվորուհի:

**milkman** [ˈmilkməɪn] n կաթնավաճառ,  
կթվոր:

**milkshake** [ˈmilkʃeɪk] n կաթի կոկտեյլ:

**milksop** [ˈmilkʃɒp] n կամազուրկ/թուլակամ  
մարդ. լացկան:

**milk-white** [ˈmilkwaɪt] n կաթնագույն.  
կաթի պես սպիտակ:

**milky** [ˈmilkɪ] a կաթի, կաթնային. մշուշա-  
պատ, ամպամած. M~ Way *աստղգ.* Ծիր  
Կաթին, Յարդագողի ճանապարհ:

**mill** [mil] n աղաց. water ~ ջրաղաց. wind ~  
հողմաղաց. coffee ~ սրճաղաց. (ֆաբրիկա)  
cotton/paper ~ բամբակազտիչ/թղթի գործա-  
րան/ֆաբրիկա. put smb through the ~ *փխբ.*  
փորձությունների ենթարկել:

**mill** [mil] v աղալ, մանրել. ~ steel գլանածո  
պողպատ. People were ~ing about the square  
*փխբ.* Մարդիկ խոնվել էին հրապարակում:

**millboard** [ˈmɪlbɔ:d] n հաստ ստվարա-  
թուղթ:

**millennium** [miˈleniəm] n հազարամյակ:

**miller** [ˈmɪlə] n ջրաղացպան:

**millet** [ˈmɪlɪt] n կորեկ:

**mill-hand** [ˈmɪlhænd] n գործարանային  
բանվոր:

**milliner** [ˈmɪlɪnə] n կանացի գլխարկներ  
կարող:

**millinery** [ˈmɪlɪnəri] n կանացի գլխարկներ.  
կանացի գլխարկների խանութ/արհեստա-  
նոց:

**million** [ˈmɪljən] n միլիոն. *փխբ.* շատ մեծ  
քանակություն. ~s of people միլիոնավոր  
մարդիկ. feel like ~ dollars իրեն հոյակապ  
զգալ:

**millionaire** [ˌmɪljəˈneə] n մեծահարուստ,  
միլիոնատեր:

**mill-pond** [ˈmɪlpɒnd] n ջրաղացի ջրամ-  
բար:

**millstone** [ˈmɪlstəʊn] n ջրաղացաքար, երկ-  
նաքար. see far into ~ *փխբ.* չափազանց  
խորաթափանց լինել. be a ~ round one's neck  
մեկի վզին ծանր բեռ լինել:

**mime** [maɪm] n, v *թատր.* դիմախոսություն,  
միմիկա. դիմախոսությամբ/միմիկայով ար-  
տահայտել:

**MIME** [ˌmAltiˈpə:pəsˈɪntə:net meɪl ɪksˈten-  
ʃənz] *հմկրգ.* Multipurpose Internet Mail Exten-  
sions ինտերնետի էլեկտրոնային փոստի  
բազմանպատակ ընդլայնում:

**mimic** [ˈmɪmɪk] n, v նմանակող, միմիստ  
(դերասան). նմանակել. ծաղրական ծևով  
ընդօրինակել:

**mimicry** [ˈmɪmɪkri] n նմանակում, ընդօրի-  
նակում. protective ~ *կենս.* շրջապատին  
նմանվելու պաշտպանական հատկություն:

**mince** [mɪns] n ծեծած/աղացած միս (ֆարշ):

**mince** [mɪns] v ծեծել/աղալ միսը. *փխբ.* մեղ-  
մացնել (բռները). Let's not ~ words եկեք  
ուղիղ/պարզ խոսենք/առանց ակնարկների:

**mincemeat** [ˈmɪnsmi:t] n լցոն (ֆարշ). խո-  
րիկ (խմորեղենի):

**mincer** [ˈmɪnsə] n (*նաև* ~ing machine) մսա-  
ղաց:

**mind** [maɪnd] n բանականություն. խելք.

միտք. *փիլ.* հոգի, ոգի. analytical/critical/clear ~ վերլուծական/քննադատական/պարզ միտք/խելք. public ~ հասարակական կարծիք. spacious ~ [այն հորիզոն/միտք. a man of great ~ մեծ խելքի տեր մարդ. the great/best ~s of our time մեր ժամանակի լավագույն մտածողները. cross one's ~ մտքում ծագել, մտքով անցնել. disburden one's ~ սիրտը թեթևացնել/բաց անել. ~ and body հոգի և մարմին. sound ~ առողջ դատողություն. be in one's right ~ առողջ մտածել. get out of one's ~, lose one's ~ ~ խելքը թռցնել. triumph of ~ over matter հոգու հաղթանակ մարմնի նկատմամբ. (մտադրություն, ցանկություն) have a (good) ~ (մեծ) ցանկություն ունենալ. have half a ~ մտադրվել, պատրաստ լինել. set one's ~ on smth հաստատ որոշել. out of sight out of ~ աչքից հեռու, սրտից դուրս. (կարծիք) be of one/the same ~ նույն կարծիքին լինել. speak one's ~ անկեղծորեն խոսել, ասել ինչ մտածում ես. in one's ~ մտքում, մտքի մեջ. to my ~ իմ կարծիքով. make up one's ~ որոշել. change one's ~ միտքը փոխել be in two ~s երկու մտքի լինել. keep one's ~ on smth անընդհատ մտածել. not to know one's own ~ չիմանալ ուզածն ինչ է. read smb's ~ մեկի մտքերը կարդալ. give a piece of one's ~ իր կարծիքն արտահայտել. have smth on one's ~ մտքում ինչ-որ բան ունենալ. give one's ~ մտածել, ուշադիր լինել. (հիշողություն) bear/keep in ~ հիշել, մտքում պահել. go/pass out of ~ մոռացվել. come to one's ~ մտքով անցնել, միտքը գալ. It slipped my ~ Գլխիցս թռեց է. bring/call to ~ հիշեցնել. (տրամադրություն) frame/state of ~ տրամադրություն. I was easy/uneasy in my ~ հոգիս հանգիստ/անհանգիստ էր. presence of ~ ոգու արիություն, իրեն չկորցնելը. happy/sad/anxious/cheerful frame of ~ երջանիկ/տխուր/անհանգիստ/աշխույժ տրամադրություն:

**mind** [maɪnd] *v* առարկել. դեմ լինել. Do you ~ my smoking? Դեմ չե՞ք, եթե ես ծխեմ. I don't ~ in the least Բոլորովին/Բացարձակապես չեմ առարկում. Would you ~ keeping quiet? Չի՞ կարելի լռություն պահպանել. I shouldn't ~ a cup of coffee Մի գավաթ սուրճին դեմ չե՞ի լինի. (ուշադրություն դարձնել) Never ~ ուշադրություն մի դարձնի, ոչինչ. Don't ~

me/the expence Ուշադրություն մի դարձրու ինձ/ծախսերի վրա. M~ what you're doing Մտածի՛ր, ինչ ես անում. M~ out! Զգույշ, Զգուշացիր. M~ the steps ! Զգույշ, աստիճաններ են. Who's ~ing the baby? Ո՞վ է երեխային խնամում. M~ the children while I'm away Իմ բացակայությամբ ուշադիր եղիր երեխաների նկատմամբ. M~ your own business Զբաղվիր քո գործով:

**mindful** [ˈmaɪndfʊl] *a* տրամադրված, պատրաստ. if she were so ~ եթե նա այդպես էր տրամադրված. broad ~ ~ նեղ մտահորիզոնով. narrow ~ ~ նեղ մտահորիզոնով. quick ~ ~ արագ ըմբռնող, հնարամիտ. slow ~ ~ դանդաղամիտ, անխելահաս:

**mindful** [ˈmaɪndfʊl] *a* ուշադիր, հոգատար. ~ of duties պարտականությունները հիշող:

**mindless** [ˈmaɪndləs] *a* անիմաստ, անմիտ. չմտածող, հաշվի չառնող:

**mine** [maɪn] *prn* իմ, իմը. This is ~ Դա իմն է. a friend of ~ իմ ընկերը. No business of ~ Իմ գործը չէ:

**mine I** [maɪn] **1. n** հանք, հանքահոր. copper ~ պղնձահանք. a gold ~ ոսկու հանք. *փխք.* աղբյուր He's a ~ of information եւ տեղեկությունների աղբյուր է. **2. v** հանք մշակել, հանքաքար հատել:

**mine II** [maɪn] *n* *զգմ.* ական. land ~ ֆուգաս. lay ~s ականապատել. hit a ~ ականին դիպել. ~ field ականադաշտ, ականափակոց. ~ detector ականորս (գործիք), ականորսիչ (սակրավոր):

**mine** [maɪn] *v* ականել, ական դնել, ականապատել. ~ a bridge կամուրջը ականապատել. The lorry was ~d Բեռնատարը պայթեցվեց:

**mine layer** [ˈmaɪn,leɪə] *n* ականադիր (նավ):

**miner** [ˈmaɪnə] *n* հանքագործ, հանքափոր. *զգմ.* ականորդ, ականադիր:

**mineral** [ˈmɪnərəl] **1. n** հանք, հանքաքար, միներալ. ~s *խսկց.* հանքային ջուր (*մաւ ~ water*). **2.a** հանքային, անօրգանական, ոչ օրգանական. ~ deposits/resources օգտակար հանածոներ:

**mineralogy** [ˌmɪnəˈrælədʒi] *n* հանքաբանություն, հանքագիտություն.

**mine-sweeper** [ˈmaɪn,swi:pə] *n* ականահան, ականորսիչ նավ.

**mine-thrower** [ˈmaɪn,θrəʊə] *n* ականա-

նետ:  
**mingle** [ˈmɪŋɡl] v խառն(վ)ել ~ with շփվել, ընկերություն անել. ~ with the crowd խառնվել ամբոխին:  
**mingy** [ˈmɪndʒi] a ժլատ (մարդ). աղքատիկ (իրեր):  
**mini** [ˈmini] n տե՛ս miniskirt:  
**miniature** [ˈmɪniətʃə] n, a մանրանկար, մանրանկարչություն. մանրանկարչական. *փխբ.* փոքրիկ, մանրիկ, նուրբ:  
**minibus** [ˈmɪnɪbʌs] n միկրոավտոբուս:  
**minikin** [ˈmɪnɪkɪn] n, a փոքրիկ/նրբագեղ իր/էակ. մանրիկ, պստիկ:  
**minimal** [ˈmɪnɪmɪl] a նվազագույն, փոքրագույն, միմիմալ:  
**minimize** [ˈmɪnɪmaɪz] v փոքրացնել, պակսեցնել, միմիմումի հասցնել:  
**minimum** [ˈmɪnɪməm] n նվազագույն մեծություն, միմիմում. cut the expenditure to the ~ ծախսերը նվազագույնի հասցնել. a ~ wage նվազագույն աշխատավարձ. ~ term նվազագույն ժամկետ:  
**mining** [ˈmaɪnɪŋ] n հանքագործություն, հանքարդյունաբերություն:  
**miniskirt** [ˈmɪnɪskɜːt] n (*խսկց.* mini) մինի փեշ (յուրկա):  
**minister** [ˈmɪnɪstə] n նախարար. *ղվնգ.* դեսպանորդ, դեսպանության խորհրդատու. cabinet ~ կառավարության անդամ. Prime ~ վարչապետ, պրեմիեր մինիստր. resident ~ դիվանագիտական ներկայացուցիչ. ~ of state պետնախարար. *կրոն.* քահանա:  
**minister** [ˈmɪnɪstə] v ծառայել, սպասարկել. ~ to (the needs of) a sick man հիվանդին խնամել:  
**ministerial** [ˌmɪnɪˈstɪəriəl] a նախարարական. օժանդակ. ~ duties նախարարի պարտականությունները. ~ changes փոփոխություններ կաբինետի կազմում:  
**ministry** [ˈmɪnɪstri] n նախարարություն, կառավարություն. *կրոն.* հոգևորականություն:  
**mink** [mɪŋk] n *կենդ.* ջրաքիս. a ~ coat ջրաքիսի մուշտակ:  
**minnow** [ˈmɪnəʊ] n խարակածուկ. մանրուք, մանր կենդանիներ:  
**minor** [ˈmaɪnə] n *երժշ.* մինոր, թախծալի տոն. *իրավ.* անչափահաս, դեռահաս. *con-*certo in G ~ սոլ մինոր համերգ:

**minor** [ˈmaɪnə] a երկրորդական, աննշան, պակաս կարևոր. կրտսեր. a ~ position աննշան պաշտոն. a ~ composer երկրորդական կոմպոզիտոր. a ~ detail անկարևոր/ոչ կարևոր մանրամասն. ~ repairs մանր վերանորոգում. ~ offence *իրավ.* փոքր զանցանք. ~ injuries թեթև վնասվածքներ. Brown the ~ կրտսեր Բրաունը:  
**minority** [maɪˈnɔːrəti] n փոքրամասնություն, անչափահասություն. national/racial ~ ies ազգային/ռասայական փոքրամասնություններ. be in the ~ փոքրամասնություն կազմել. ~ rule փոքրամասնության ենթարկվելը մեծամասնությանը. ~ interest փոքրամասնության շահերը. ~ shareholding բաժնետոմսերի փոքրամասնություն ունենալը:  
**minster** [ˈmɪnstə] n մայր տաճար, եկեղեցի:  
**minstrel** [ˈmɪnstrel] n բանաստեղծ, երգիչ (միջնադարյան եվրոպայում):  
**mint** I [mɪnt] n, a *բսբ.* անանուխ, դաղձ (*նաև* անանուխի կոնֆետ):  
**mint** II [mɪnt] n դրամահատական. a ~ of money փողի մեծ գումար. He made a ~ on the deal Այդ գործարքից նա մեծ գումար շահեց:  
**mint** [mɪnt] v դրամ հատել, փող կտրել. ~ coins դրամ հատել:  
**minuend** [ˈmɪnjuend] n *մաթ.* նվազելի:  
**minuet** [ˌmɪnjuˈet] n *երժշ.* մենուետ:  
**minus** [ˈmaɪnəs] n մինուս. the ~ sign հանման նշան. It's ~ 5 today Այսօր — 5 աստիճան է. (հանած, առանց) He appeared ~ his shirt Նա հայտնվեց առանց շապիկի. a ~ quantity *մաթ.* բացասական մեծություն:  
**minute** [ˈmɪnɪt] n թույլ. the ~ (that) հենց որ. on the ~ ճիշտ ժամին, ժամանակին. at the last ~ վերջին թույլին. Just/Wait a ~ Մի թույլ. a matter of ~s թույլական գործ. any ~ թույլ առ թույլ. 10 ~s walk 10 թույլի ճանապարհ. (համառոտ գրառում, արձանագրություն) the ~s արձանագրություն (ժողովի). record in ~s արձանագրության մեջ մտցնել. keep the ~s արձանագրություն կազմել:  
**minute** [ˈmɪnɪt] a մանր, ամենափոքր. աննշան, չնչին ~ particles փոքրիկ մասնիկներ. a ~ quantity չնչին քանակություն. (մանրակրկիտ) a ~ examination մանրակրկիտ քննարկում:  
**minute-hand** [ˈmɪnɪthænd] n (ժամացույցի) թույլի սլաք:

**minutely I** [mai'nju:tlɪ] adv մանրամասնորեն, մանրակրկիտ. ճշգրտորեն:

**minutely II** [ˈminɪtli] a, adv ամեն րոպե կատարվող անընդհատ. ամեն/յուրաքանչյուր րոպե:

**minuteness** [mai'nju:tnəs] n մանրամասնություն, մանրակրկիտություն.

**minx** [mɪŋks] n հանդուգն աղջիկ/կին. կոկետուհի, թեթևաբարո կին:

**miracle** [ˈmɪrəkl̩] n հրաշք, հրաշալիք. work/perform /accomplish ~s հրաշքներ գործել. by some ~ ինչ-որ հրաշքով. ~s of modern medicine ժամանակակից բժշկության հրաշքները:

**miraculous** [miˈrækjʊləs] a հրաշալի, հիանալի, զերբնական, հրաշագործ. His recovery seemed ~ Նրա ապաքինումը հրաշք էր քվում:

**mirage** [ˈmɪrɑ:ʒ] n պատրանք, մտախաբություն. միրաժ, օդատեսիլ:

**mire** [ˈmaɪə] n ճահճուտ, տղմուտ, ցեխ. knee deep in the ~ մինչև ծունկը ցեխի մեջ. stick/find oneself in the ~ դժվարին կացության մեջ լինել:

**mirror** [ˈmɪrə] n հայելի, հայելաման մակերես. hand ~ ձեռքի հայելի. rear/wing ~ *ավտո*. կողքի/հետևի տեսքի հայելի. false ~ ծուռ հայելի. look at oneself in the ~ իրեն հայելու մեջ նայել:

**mirroring** [ˈmɪrərɪŋ] n *հմկրգ*. հայելային արտապատկերում:

**mirth** [mɜ:θ] n ուրախություն, ցնծություն:

**mirthful** [ˈmɜ:θfl] a ուրախ, զվարթ, բերկրալից:

**miry** [ˈmaɪrɪ] a ճահճոտ. ցեխոտ, տղմոտ, կեղտոտ:

**misadventure** [ˌmɪsədˈventʃə] n դժբախտություն, ծախորդություն. փորձանք. death by ~ մահ դժբախտ պատահարից:

**misanthrope** [ˈmɪsnθrəʊp] n մարդատյաց:

**misapplication** [ˌmɪsæpliˈkeɪʃn] n չարաշահում, զեղծում:

**misapply** [ˌmɪsəˈplai] v սխալ օգտագործել. չարաշահել. *իրավ*. չարաշահել. զեղծել. The word is often misapplied Բառը հաճախ սխալ է օգտագործվում:

**misapprehend** [ˌmɪsæpriˈhend] v սխալ հասկանալ:

**misapprehension** [ˌmɪsæpriˈhenʃn] n մոլոր

ություն, թյուրիմացություն. սխալ կարծիք/հասկանալը. be under a ~ մոլորության մեջ լինել. There is some ~ here Այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա:

**misappropriate** [ˌmɪsəˈprəʊpriət] v ապօրինի սեփականացնել/ծախսել. accuse of misappropriating the funds մեղադրել անօրինական ծախսարարության մեջ:

**misappropriation** [ˌmɪsəprəʊpriˈeɪʃn] n ապօրինի սեփականացում, յուրացում. ~ of power իշխանության ապօրինի յուրացում:

**misbehave** [ˌmɪsbɪˈheɪv] v վատ վարքագիծ հանդես բերել. իրեն վատ պահել:

**misbehaviour** [ˌmɪsbɪˈheɪvjə] n վատ վարքագիծ. criminal ~ հանցավոր վարքագիծ:

**misbelief** [ˌmɪsbɪˈli:f] n մոլորություն, սխալ կարծիք. հերետիկոսություն:

**misbeliever** [ˌmɪsbɪˈli:və] n հերձվածող, հերետիկոս:

**miscalculate** [ˌmɪsˈkælkjuleɪt] v սխալ հաշվել, իր հաշիվների մեջ սխալվել. ~ the distance/the expenses տարածությունը/ծախսերը սխալ հաշվել:

**miscalculation** [ˌmɪskælkjuˈleɪʃn] n սխալ հաշվում, հաշվեսխալ:

**miscall** [ˌmɪsˈkɔ:l] v սխալ կոչել. ուրիշի անունը տալ:

**miscarriage** [mɪsˈkæɪdʒ] n անհաջողություն, ծախորդություն. բժշկ. վիժում. ~ of justice *փխբ*. դատական սխալ. ~ of goods ապրանքը նշանակված վայրը չհասցնելը:

**miscarr/y** [mɪsˈkæɪrɪ] v անհաջողություն կրել, ծախողվել. (ապրանքը) տիրոջը չհասցնել. ճանապարհին կորչել. The plan ~ ied Պլանը ծախողվեց:

**miscast** [ˌmɪsˈka:st] a (դերին) անհամապատասխան/չհամապատասխանող. He's ~ in that role Նա այդ դերին չի համապատասխանում:

**miscellaneous** [ˌmɪsəˈleɪniəs] a տարբեր, բազմազան. ~ goods ամենատարբեր ապրանքներ. ~ collection of people բազմերանգ բազմություն. ~ expenses այլ ծախսեր. ~ collection of stories տարբեր հեղինակների պատմվածքների ժողովածու.

**miscellany** [mɪˈseləni] n խառնուրդ, այլ-լայլք. ժողովածու, գրական ավանախ:

**mischance** [ˌmɪsˈtʃa:ns] n ծախորդություն, փորձանք. by ~ դժբախտաբար:

**mischief** [ˈmɪstʃɪf] **n** չարիք, վնաս. make ~ վնասել, վնաս տալ/պատճառել. կռվեցնել. He made ~ between the brothers **Նա եղբայրներից կռվեցրեց.** (չարածճիություն) eyes full of ~ չարածճի աչքեր. out of ~ չարությունից. That boy is full of /a little ~ Այս տղան չարածճի է. keep smn out of ~ չարից հեռու պահել:  
**mischief-maker** [ˈmɪstʃɪf,meɪkə] **n** ինտրիգան, խարդավանիչ:  
**mischievous** [ˈmɪstʃɪvəs] **a** չար, վնասակար. a ~ rumour չար բանբասանքներ. ~ child չարածճի/չար երեխա:  
**misconceive** [ˌmɪskənˈsi:v] **v** սխալ պատկերացում ունենալ, սխալ հասկանալ/ըմբռնել. The plan was ~d from the start Ծրագիրը սխալ էր հենց ամենասկզբից:  
**misconception** [ˌmɪskənˈsepʃn] **n** սխալ ըմբռնում, թյուր կարծիք. a popular ~ (համընդհանուր) թյուր պատկերացում:  
**misconduct** [ˌmɪsˈkɒndʌkt] **n** սխալ/վատ վարքագիծ. professional ~ պաշտոնական իրավախախտում/զանցանք:  
**misconstruction** [ˌmɪskənˈstrʌkʃn] **n** սխալ մեկնաբանություն/ ըմբռնում/ մեկնաբանում. Your words are open to ~ Ձեր բառերը կարելի է սխալ մեկնաբանել:  
**misconstrue** [ˌmɪskənˈstru:] **v** սխալ մեկնաբանել. You have ~d my words Դուք սխալ հասկացաք իմ բառերը:  
**miscount** [ˌmɪsˈkaʊnt] **n, v** սխալ հաշիվ. հաշիվների մեջ սխալվել. ~ the pages էջերը սխալ հաշվել:  
**misdeal** [ˌmɪsˈdi:l] **v** սխալ վարվել:  
**misdealing** [ˌmɪsˈdi:lɪŋ] **n** անազնիվ վարմունք. անսկզբունք վարքագիծ:  
**misdeed** [ˌmɪsˈdi:d] **n** չարագործություն, հանցագործություն. հանցանք, սխալմունք, սխալ:  
**misdeemeanour** [ˌmɪsdiˈmi:nə] **n** զանցանք, մանր հանցագործություն:  
**misdirect** [ˌmɪsdəˈrekt] **v** սխալ հասցեագրել, սխալ ցուցմունք տալ. The letter was ~ed Նամակը սխալ էր հասցեագրված. Smb ~ed us Մեզ սխալ ուղղությամբ տարան/ուղարկեցին:  
**misdirection** [ˌmɪsdəˈrekʃn] **n** սխալ հասցեագրում. սխալ ուղղություն տալը:  
**miser** [ˈmaɪzə] **n** ժլատ/զճուճ/ազահ մարդ:  
**miserable** [ˈmɪzərəbl] **a** խեղճ, թշվառ, աղ-

քատ. խղճուկ, ողորմելի, դժբախտ. feel ~ իրեն դժբախտ զգալ. look ~ խղճուկ տեսք ունենալ. lead a ~ existence խղճուկ կյանք վարել. a ~ sum խղճուկ/ողորմելի գումար. ~ weather ահավոր եղանակ. a ~ hovel աղքատիկ խրճիթ. a ~ failure անոթալի տապալում (ներկայացման):

**miserably** [ˈmɪzərəblɪ] **adv** խղճուկ/ողորմելի կերպով:

**miserly** [ˈmaɪzəli] **a** ժլատ, զճուճ:

**misery** [ˈmɪzəri] **n** խեղճություն, թշվառություն. դժբախտություն, տառապանք. She made his life a ~ Նա այդ մարդու կյանքը տառապանքի վերածեց. He's an old ~ *խսկց.* Նա փնթփնթան ծերուկ է:

**misfeasance** [ˌmɪsˈfi:zəns] **n** *իրավ.* իշխանության/պաշտոնական դիրքի չարաշահում:

**misfire** [ˌmɪsˈfaɪə] **n** չկրակել. The gun ~d Զրացանը չկրակեց. His plans ~d Նրա ծրագրերը տապալվեցին:

**misfit** [ˈmɪsɪt] **n** չհարմարված մարդ, անհաշողակ. social ~ հանրայնորեն չհարմարված մարդ. This dress is a ~ Զագուստը վատ է նստում. He's a ~ in that job Նա չի համապատասխանում այս աշխատանքին:

**misfit** [ˈmɪsɪt] **v** վատ նստել (հագուստի մասին):

**misfortune** [mɪsˈfɔ:tʃən] **n** դժբախտություն, ծախտորություն. meet with ~ ծախտորության հանդիպել. have the ~ դժբախտություն ունենալ:

**misgive** [mɪsˈɡɪv] **v** վատ բան գուշակել/նախագուշակել:

**misgiving** [mɪsˈɡɪvɪŋ] **n** կասկած, վախ, նախազգացում. not without ~s ոչ առանց կասկածների. have grave ~s լուրջ կասկածներ ունենալ:

**misgovern** [ˌmɪsˈɡʌvən] **v** վատ/սխալ կառավարել:

**misguide** [mɪsˈɡaɪd] **v** մոլորեցնել, սխալ ճանապարհով տանել:

**mishandle** [ˌmɪsˈhændl] **v** ոչ հմուտ/սխալ վարվել. The watch has been ~d ժամացույցը սխալ են վերանորոգել:

**mishap** [ˈmɪʃæp] **n** ծախտորություն, անհաշողություն. without ~ առանց արկածների. a ~ in the kitchen *խսկց.* տհաճ պատահար խոհանոցում:

**mishear** [ˌmɪsˈhiə] v սխալ լսել/հասկանալ:  
**misinform** [ˌmɪsɪnˈfɔ:m] v սխալ տեղեկություններ տալ, ապակողմնորոշել:  
**misinformation** [ˌmɪsɪnfəˈmeɪʃn] n սխալ մեկնաբանում deliberate ~ միտումնավոր սխալ մեկնաբանում:  
**misinterpret** [ˌmɪsɪnˈtɛ:pɪt] v սխալ ներկայացնել, խեղաթյուրել. սխալ մեկնաբանել. They ~ed my words Նրանք սխալ հասկացան իմ բառերը:  
**misjudge** [ˌmɪsˈdʒʌdʒ] v սխալ կարծիք կազմել. սխալվել. ~ the situation իրադրությունը սխալ գնահատել. I ~d him ես սխալ կարծիք կազմեցի նրա մասին:  
**mislay** [mɪsˈleɪ] v սխալ տեղ դնել, կորցնել. I have mislaid my book Չգիտեմ՝ ուր եմ դրել գիրքս:  
**mislead** [mɪsˈli:d] v մոլորեցնել, խաբել. սխալ առաջնորդել. You have been misled Չեզ թյուրիմացության մեջ եմ գցել:  
**misleading** [mɪsˈli:diŋ] a մոլորեցնող, խաբուսիկ. a ~ title խաբուսիկ վերնագիր The advertisement is ~ **Գովազդը մոլորեցնող է:**  
**mismanage** [ˌmɪsˈmænɪdʒ] v վատ կառավարել. անշնորհք վարվել. ~ the affair գործից գլուխ չհանել:  
**mismatch** [ˌmɪsˈmætʃ] n *հմկրգ*. անհամապատասխանություն. չհամընկնել:  
**misplace** [ˌmɪsˈpleɪs] v սխալ տեղը դնել. տեղը չդնել. The book is ~d **Գիրքը իր տեղում չէ.** His confidence in her was ~d **Նա սխալվեց կնոջը վստահելով:**  
**misprint** [ˈmɪsprɪnt] v վրիպակ, տպագրական սխալ:  
**mispronunciation** [ˌmɪsprənˈʌnsiˈeɪʃn] n սխալ արտասանություն:  
**misquote** [ˌmɪsˈkwəʊt] v սխալ ձևով մեջբերել. ~ the words բառերն աղավաղել:  
**misread** [ˌmɪsˈri:d] v սխալ կարդալ/մեկնաբանել:  
**misrepresent** [ˌmɪsreprɪˈzent] v սխալ ներկայացնել, խեղաթյուրում. խեղաթյուրել:  
**misrepresentation** [ˌmɪsreprɪzenˈteɪʃn] n խեղաթյուրում. ~ of facts փաստերի խեղաթյուրում. fraudulent ~ միտումնավոր խեղաթյուրում:  
**misrule** [ˌmɪsˈru:l] n վատ կառավարում. խռովություն, անկարգություն:  
**miss I** [mɪs] n օրիորդ:

**miss II** [mɪs] n վրիպում, բացթողում. ծախսողում. give a ~ խուսափել, խույս տալ. I'll give the soup a ~ **Ապուր չեմ ուտելու:**  
**miss** [mɪs] v վրիպել, նպատակին չհասնել. The bullet ~ed him **Գնդակը նրան չկպավ.** He ~ed the ball **Նա չկպավ գնդակին.** ~ the target **թիրախին չխփել.** վրիպել. I ~ed what he said **Չլսեցի, թե նա ինչ ասեց.** ~ classes դասերը բաց թողնել. ~ a plane/a train ուշանալ գնացքից /ինքնաթիռից. You've just ~ed him **Նա հենց նոր գնաց.** ~ the point *փխբ*. բանի էությունը չհասկանալ. ~ the chance հնարավորությունը բաց թողնել. (կարոտել) She ~es her mother **Նա կարոտում է իր մորը.** We ~ed you very much **Մենք ձեզ շատ էինք կարոտել.** (բաց թողնել) ~ out a whole paragraph մի ամբողջ պարագրաֆ բաց թողնել. (նկատել բացակայությունը) I didn't ~ the key **Ես չնկատեցի, որ բանալին տեղում չէր.** When did you first ~ the bag? **Ե՞րբ նկատեցիք պայուսակի բացակայությունը:**  
**mis-shapen** [ˌmɪsˈʃeɪpən] a տձև, տգեղ:  
**missile** [ˈmɪsaɪl] n հրթիռ. guided ~ ղեկավարվող հրթիռ. a ~ base հրթիռային բազա:  
**missing** [ˈmɪsɪŋ] a **թերի**, պակաս, բացակա, կորած. the ~ pages պակաս էջերը. the ~ link պակսող/բացակայող օղակը. ~ persons անհետ կորածները. my bag is ~ **Իմ պայուսակը կորել է.** ~ in action մարտում անհայտ կորած:  
**mission** [ˈmɪʃn] n ներկայացուցչություն, առաքելություն. պատվիրակություն. համձնարարություն, առաջադրանք. trade, commercial/diplomatic ~ առևտրական/դիվանագիտական ներկայացուցչություն. He considers it his ~ in life **Նա դա համարում է իր կյանքի կոչումը:**  
**missionary** [ˈmɪʃnəri] n, a միսիոներ, միսիոներական:  
**missive** [ˈmɪsɪv] 1. n պաշտոնական մամակ, ուղերձ. 2. a հրովարտակային, ուղերձային:  
**mis-spell** [ˌmɪsˈspel] v տառասխալ անել. ~ one's name անունը սխալ գրել:  
**mis-spend** [ˌmɪsˈspend] v վատնել, մսխել:  
**mis-state** [ˌmɪsˈsteɪt] v սխալ հայտարարություն անել. կեղծ վկայություն տալ:  
**mis-statement** [ˌmɪsˈsteɪtmənt] n սխալ հայտարարություն:  
**mis-step** [ˌmɪsˈstep] v սխալ քայլ անել.

սայթաքել:  
**mist** [mist] n մեղ. մշուշ, մառախուղ. մանրամաղ անձրև:  
**mist** [mist] v մառախուղով/մշուշով պատել. արցունքով/զոլորշիով մշուշվել. The mirror ~ed up Հայելին գոլորշիով պատվել էր:  
**mistake** [mi'steik] n սխալ, վրիպակ, թյուրիմացություն by ~ սխալմամբ. a serious/foolish/obvious ~ կարևոր/հիմար/ակնհայտ սխալ. clerical ~ գրասենյակային սխալ/վրիպակ. ~ of fact փաստական սխալ. ~ of law իրավունքի սխալ կիրառում. make a big ~ մեծ սխալ թույլ տալ. learn from one's ~s սխալների վրա սովորել. There must be some ~ Այստեղ ինչ-որ սխալ կա. no ~ about it անկասկած. My ~ ! Մեղավոր եմ, Սխալվել եմ:  
**mistake** [mi'steik] v սխալվել, մոլորության մեջ լինել. ~ the meaning սխալ հասկանալ իմաստը. He gets ~n for his brother Նրան եղբոր տեղ եմ ընդունում. ~ the turning սխալ շրջադարձ կատարել:  
**mistaken** [mi'steikən] a սխալ, ոչ ճիշտ. a ~ opinion սխալ կարծիք. be ~ սխալվել. He is never ~ Նա երբեք չի սխալվում:  
**mister** ['mistə] n (*կրճ.* Mr.) պարոն. Mr. Chairman պարոն նախագահ:  
**mistimed** [,mis'taimd] a անժամանակ, անպատեհ:  
**mistiness** ['mistinəs] n մշուշոտություն, մշուշ, մառախուղ:  
**mistletoe** ['mistləu] n *բսբ.* մղամուրձ, օմելա:  
**mistreatment** [,mis'tri:təmənt] n սխալ/վատ վերաբերմունք:  
**mistress** ['mistrəs] n տիկին, տանտիկին. տանտիրուհի. ուսուցչուհի. head ~ վարիչ, տնօրեն. ~ of the situation *փխբ.* դրության տիրուհի. She is her own ~ Նա ինքն իր տերն է. (*կրճ.* Mrs.). տիկին (դիմումի ձև) Mrs Brown տիկին Բրաուն:  
**mistrial** [,mis'triəl] n սխալ դատավարություն:  
**mistrust** [,mis'trʌst] 1. n անվստահություն, կասկած. 2. v կասկածել, չվստահել:  
**mistrustful** [,mis'trʌstfl] a կասկածամիտ, չվստահող:  
**misty** ['mistɪ] a միգապատ, միգամած. *փխբ.* աղոտ, անպարզ, մշուշապատ. ~ outlines աղոտ ուրվագիծ. It's ~ today Այսօր մշուշոտ

է. It's getting ~ Մշուշ է բարձրանում:  
**misunderstand** [ˌmisʌndə'stænd] v սխալ հասկանալ/ըմբռնել. Don't ~ me Ինձ ճիշտ հասկացե՛ք:  
**misunderstanding** [ˌmisʌndə'stændɪŋ] n թյուրիմացություն, տարածայնություն. clear up a ~ թյուրիմացությունը պարզել:  
**misuse** [ˌmis'ju:s] n չարաշահում. a ~ of public money/power իշխանության/պետական գումարների չարաշահում:  
**misuse** [ˌmis'ju:z] v սխալ օգտագործել/գործածել. չարաշահել. ~ the word բառը սխալ օգտագործել:  
**mite** [maɪt] n չնչին/պստիկ բան. լուծա, համեստ ավանդ. not a ~ ամենևին. Poor/Little ~ ! Խեղճ փոքրիկ:  
**mitigat/e** ['mitigeɪt] v մեղմացնել, չափավորել, թեթևացնել. ~ ing circumstances մեղմացուցիչ հանգամանքներ:  
**mitigation** [ˌmɪtɪ'geɪʃn] n մեղմացում, ամոքում, թեթևացում ~ of damages վնասատուցման մեղմացում. He pleaded in ~ that... Որպես մեղմացուցիչ հանգամանք նա բերեց...:  
**mitten** ['mɪtn] n թաթման, թաթպան. բռնցքամարտիկի թաթպան. *փխբ.* բռունցք. tip one's ~ բարևել (ծեռքով). give the ~ մերժել (փեսացուին):  
**mix** [mɪks] n խառնուրդ:  
**mix** [mɪks] v խառն(վ)ել, միացնել, շփվել. ~ up լավ խառնել. be ~ed up խառը լինել որևէ բանի մեջ. They don't ~ well Նրանք իրար չեն համապատասխանում. ~ sugar with the flour խառնել շաքարը և ալյուրը. ~ business with pleasure *փխբ.* միակցել հաճույքը և օգտակարը. She doesn't ~ well Նա շփվող մարդ չէ. (շփոթել) I always ~ them up Ես միշտ նրանց շփոթում եմ. He ~ed up their names Նա շփոթեց նրանց անունները. Don't get ~ up in that affair Մի' խառնվիր այդ գործին. (միանալ) Oil and water don't ~ Յուղն ու ջուրը չեն միանում:  
**mixed** [mɪkst] a խառը, տարաբնույթ. a ~ marriage խառը ամուսնություն. ~ farming խառը/ոչ մասնագիտացված տնտեսություն. ~ sweets կոնֆետների հավաքածու. (have) ~ feelings տարբեր զգացմունքներ (ունենալ):  
**mixed up** ['mɪkst ʌp] a խճճված, խառնված.

He's all ~ Եւ բոլորովին խճճվել է He 's a ~ kid Եւ դժվար երեխա է:

**mixer** [ˈmɪksə] n խառնիչ, խառնող մեքենա, միքսեր, good/bad ~ շփվող, մարդամոտ/ոչ մարդամոտ մարդ:

**mixture** [ˈmɪkstʃə] n խառնուրդ, խառնում, *դրճճ*, խառը հեղուկադեղ, միքստուրա, a ~ of tragedy and farce ողբերգության և ֆարսի խառնուրդ:

**mix-up** [ˈmɪksʌp] n կռիվ, խառնաշփոթություն, ծեծկռտոց, get into a ~ խառը պատմության մեջ ընկնել:

**moan** [məʊn] 1. n հառաչանք, ողբ, տնքոց, ~ with pain ցավից տնքալ, The wind ~ed քամին ոռնում էր, He is always ~ing Եւ անընդհատ տրտնջում է, 2. v հառաչել, ողբալ, տրտնջալ:

**moat** [məʊt] n փոս, խրամ:

**mob** [mɒb] n ամբոխ, անկազմակերպ ժողովուրդ, an angry ~ կատաղած ամբոխ:

**mob** [mɒb] v խռնվել, ամբոխվել, ամբոխով շրջապատել, The singer was ~bed Ամբոխը շրջապատեց երգչին:

**mobile** [ˈməʊbaɪl] a շարժական, շարժուն, a ~ face շարժուն դեմք, ~ library շարժական գրադարան, ~ telephone շարժական հեռախոս, ~ forces *ռզմ*, արագաշարժ զորքեր, He's ~ again *խսկց*, Եւ նորից ի վիճակի է շարժվել:

**mobility** [məʊˈbɪləti] n շարժունություն, անկայունություն, դյուրաշարժություն:

**mobilization** [ˌməʊbəlaɪˈzeɪʃn] n զորահավաք, ռազմականացում, կենտրոնացում:

**mobilize** [ˈməʊbəlaɪz] v ռազմականացնել, մոբիլիզացնել:

**moccasin** [ˈmɒkəsɪn] n մոկասին, ամերիկյան հնդկացիների փափուկ կոշիկ/մաշիկ:

**mocha** [ˈmɒkə] n (*ճակ ~ coffee*) մոկկո (ընտիր սուրճ):

**mock** [mɒk] n ծաղր, ծաղրում, նշավակում, make a ~ of smn նրան ծաղրի ենթարկեցին:

**mock** [mɒk] a կեղծ, շինծու, ձևացրած, ~ modesty կեղծ/շինծու համեստություն, ~ trial սարքովի դատ, դատախաղ:

**mock** [mɒk] v ծաղրել, չարացնել, գրգռել, The children ~ed the fat boy երեխաները ծաղրում էին հաստիկին, They ~ed at my efforts Նրանք ծիծաղում էին իմ գործած ճիգերի վրա, ~ and ridicule ծաղրուծանակի են-

թարկել:

**mock** [ˈmɒkə] n ծաղրող, ծաղրաբան, ծաղրասարյակ:

**mockery** [ˈmɒkəri] n ծաղր, ծաղրանք, ծաղրի առարկա, They made a ~ of the ceremony Նրանք այդ արարողությունը ծաղրի վերածեցին:

**mocking-bird** [ˈmɒkɪŋbɜːd] n ծաղրասարյակ (թռչուն):

**mock up** [ˈmɒkʌp] մակետ:

**modal** [ˈməʊdɪl] a մոդալ, եղանակավորող, ~ verb մոդալ/եղանակավորող բայ:

**mod cons** [mɒd kɒns] n *խսկց*, (*կրճ*, modern conveniences-ից) ժամանակակից հարմարանքներ/հարմարություններ:

**mode** [məʊd] n եղանակ, կերպ, ձև, ~ of life ապրելակերպ, ~ of action գործելաձև a working ~ գործող օրինակ, the latest Paris ~s Փարիզյան նորագույն մոդելները, a ~ of virtue առաքինության տիպար, a sport's ~ մարզական նմուշ/մոդել, artist's ~ բնորո/բնորդուհի, fashion ~ մանեկեն:

**model** [ˈmɒdl] a օրինակելի, տիպային, a ~ school օրինակելի դպրոց, a ~ train/plane խաղալիք գնացք/ինքնաթիռ:

**model** [ˈmɒdl] v նմուշ/օրինակ, մոդել պատրաստել, ~ dresses հագուստներ ձևավորել, որպես բնորո/մանեկեն աշխատել, ~ a figure արձանիկ շինել, ~ oneself on smb մեկին ընդօրինակել, մեկից օրինակ վերցնել:

**modelling** [ˈmɒdlɪŋ] n ձևավորում, ընդօրինակում, մանեկենի/բնորդի (բնորդուհու) աշխատանք:

**modem** [ˈməʊdem] n *հմկրգ*, մոդեմ:

**moderate** [ˈmɒdəreɪt] n ժայրահեղ հոսանքների չհարող, չափավոր մարդ:

**moderate** [ˈmɒdəreɪt] a չափավոր, միջին, զուսպ, բարեխառն, մեղմ, ~ prices չափավոր գներ, ~ demands չափավոր պահանջներ, ~ in views չափավոր հայացքների տեր:

**moderat/e** [ˈmɒdəreɪt] v չափավորել, չափ դնել, մեղմանալ, ~ one's demands պահանջները չափավորել, The wind is ~ing քամին թուլանում է:

**moderately** [ˈmɒdəreɪtli] adv ~ successful որոշ հաջողություն ունենալ/հասնել:

**moderation** [ˌmɒdəˈreɪʃn] n չափավորություն, զսպվածություն, ժուժկալություն, in ~ չափավոր կերպով, taken in ~ չափավոր քանակով, ~ in eating չափավորություն ու-



տելում:  
**moderator** [ˈmɒdəreɪtə] n կարգավորիչ, կանոնավորիչ. միջնորդ. հաշտարար դատավոր:  
**modern** [ˈmɒdn] n ժամանակակից մարդ:  
**modern** [ˈmɒdn] a ժամանակակից, արդի. ~ languages ժամանակակից լեզուներ. in ~ times մեր օրերում/ժամանակներում. ~ law գործող օրենք:  
**modernize** [ˈmɒdənaɪz] v արդիականացնել:  
**modest** [ˈmɒdist] a համեստ, պարկեշտ, անշուք, պարզ. a ~ house/income/person համեստ տուն/եկամուտ/անձնավորություն:  
**modesty** [ˈmɒdəstɪ] n պարկեշտություն, համեստություն, պարզություն:  
**modicum** [ˈmɒdɪkəm] n շատ փոքր քանակություն. a ~ of common sense առողջ դատողության մի կաթիլ. a ~ of effort առանց մեծ ջանքերի:  
**modification** [ˌmɒdɪfɪˈkeɪʃn] n փոփոխություն, ձևավորում:  
**modify** [ˈmɒdɪfaɪ] v փոփոխել, ձևափոխել. The old buildings were modified Յին շինությունները ձևափոխվել էին:  
**modish** [ˈmɒdɪʃ] a նորաձև, մոդայական:  
**modular** [ˈmɒdju:lə] a *հմկրգ.* մոդուլային. ~ programming մոդուլային ծրագրավորում:  
**modulate** [ˈmɒdjuleɪt] v *երժշ.* ելևէջել. *ֆիզ.* հաճախականությունը փոփոխել:  
**modulation** [ˌmɒdjuˈleɪʃn] n *երժշ.* ելևէջում, տոնի փոփոխություն. հաճախականության փոփոխություն:  
**module** [ˈmɒdju:l] n *հմկրգ.* մոդուլ. ծրագրի համեմատաբար անկախ մաս:  
**modus** [ˈmɒdəs] n *լատ.* եղանակ, մեթոդ. ~ operandi/vivandi գործելակերպ/ապրելակերպ:  
**mohair** [ˈmɒheə] n անզորական այծի մազ. մոհեր:  
**moil** [mɔɪl] 1. n ծանր աշխատանք. *փխբ.* տանջանք. 2. v ծանր, սև աշխատանք կատարել (*մահ խսկց.* toil and ~):  
**moist** [mɔɪst] a խոնավ, թացավուն. eyes ~ with tears արցունքներից խոնավացած աչքեր:  
**moisten** [ˈmɔɪsn] v խոնավացնել, թրջել. ~ one's lips շրթունքները խոնավացնել/լպստել:  
**moisture** [ˈmɔɪstʃə] n խոնավություն, թա-

ցություն:  
**molar** [ˈmɒlə] n սեղանատամ:  
**molasses** [məʊˈlæsɪz] n մաք, կերամաք:  
**mole I** [məʊl] n խալ:  
**mole II** [məʊl] n *կենդ.* խլուրդ:  
**mole III** [məʊl] n ծովապատնեշ, ամբարտակ, թունք:  
**molecular** [məˈlekjələ] a մոլեկուլի, մոլեկուլային:  
**molecule** [ˈmɒlɪkjʉ:l] n մոլեկուլ:  
**mole-hill** [ˈməʊlhɪl] n խլուրդի թունք/թմբիկ. make a mountain out of a ~ լուն ուղտ դարձնել:  
**moleskin** [ˈmɒlskɪn] n խլուրդի մորթի/կաշի. դրանից կարված տաբատ:  
**molest** [məˈlest] v անհանգստացնել, տհաճություն պատճառել. ծանրացնել:  
**mollification** [ˌmɒlɪfɪˈkeɪʃn] n հանդարտեցնելը. մեղմացնելը:  
**mollify** [ˈmɒlɪfaɪ] v մեղմացնել, հանգստացնել:  
**mollusc** [ˈmɒləsk] n կակղամորթ, մոլյուսկ:  
**molly-coddle** [ˈmɒli,kɒdl] 1. n փափկասուն/փափկասեր մարդ. 2. v փայփայել, երես տալ:  
**molten** [ˈmɒltn] a ձուլածո, ձուլած, հալած:  
**moment** [ˈmɒmənt] n պահ, մոմենտ, վայրկյան. just a/wait a ~ մի րոպե. at the present ~ ներկայիս պահին. at any ~, any ~ now ցանկացած պահին. This is not the right ~ Սա հարմար պահ չէ. at odd ~s ազատ ժամանակ. to the ~ ճշտորեն, ճիշտ ժամանակին. from ~ to ~ ամեն րոպե. for the ~ առայժմ. at a moment's notice առաջին իսկ պահանջով. of great/little ~ կարևոր/անկարևոր, քիչ կարևոր. of no ~ անկարևոր. matters of ~ կարևոր գործեր:  
**momentarily** [ˈmɒməntərɪli] adv տվյալ պահին:  
**momentary** [ˈmɒməntəri] a վայրկենական, րոպեական. վաղանցիկ, կարճատև. a ~ flash վայրկենական փայլատակում. a ~ lapse of memory հիշողության րոպեական կորուստ:  
**momently** [ˈmɒməntli] adv րոպե առ րոպե, շատ շուտով. մի պահ/ վայրկյան:  
**momentous** [məʊˈmentəs] a կարևոր, , մեծ նշանակություն ունեցող.մի պահ/վայրկյան.

a ~ discovery/occasion կարևոր հայտնագործություն/դեպք, հնարավորություն:

**momentum** [məʊ'mentəm] n շարժիչ ուժ, մղում. *ֆիզ.* շարժման քանակ/ արագություն. *gather/lose* ~ մեծացնել/կորցնել արագությունը. ուժ/թափ հավաքել:

**monadic operation** [mɒ'nædɪk,ɒpə'reɪʃn] *հմկրգ.* մեկ օպերանդով գործողություն:

**monarch** ['mɒnək] n միապետ, ինքնակալ:

**monarchy** ['mɒnəkɪ] n միապետություն. *absolute* ~ բացարձակ միապետություն. *Constitutional/limited* ~ սահմանադրական միապետություն:

**monastery** ['mɒnəstəri] n վանք, մենաստան (տղամարդկանց):

**monastic** [mə'næstɪk] 1. n վանական, արքեղա. 2. a վանքի, վանական:

**Monday** ['mʌndeɪ] n երկուշաբթի:

**monetary** ['mɒnɪtəri] a դրամական, դրամային. ~ *system* դրամական համակարգ. ~ *unit* փողի միավոր:

**money** ['mʌni] 1. n դրամ, փող. *paper/public/ready/pocket* ~ թղթադրամ. հասարակական միջոցներ/դրամ. կանխիկ/առձեռն փող. գրպանի փող. *make (good)* ~ (լավ) փող աշխատել/շինել. *dirty* ~ կեղտոտ փողեր. *easy* ~ անաշխատ փողեր. *hush* ~ վճար լռության համար. ~ *laundrying/washing* փողերի լվացում. *put* ~ *aside*, *save* ~ փող խնայել/ետ օգտել. *short of* ~ փողի կարիք ունենալ. *come into* ~ ժառանգություն ստանալ. *throw* ~ *about* փողը մսխել. *made of/rolling in* ~ փողի մեջ լողալ, շատ հարուստ լինել. *put* ~ *into* փող ներդնել. *not for love or* ~ ոչ մի գնով. ~ *bag* փողի տոպրակ. *փխբ.* հարուստ մարդ. ~ *box* խնայատուփ, զանձատուփ. 2. a դրամական, ֆինանսական. *the* ~ *market* փողի շուկա:

**money-grubber** ['mʌni,grʌbə] n շահասեր/ զժուժ/ժլատ մարդ. փող պոկող:

**money-lender** ['mʌni,lendə] n վաշխառու:

**money-order** ['mʌni,ɔ:də] n դրամական փոխադրություն:

**money wise** ['mʌni,waɪz] *adv* *խսկց.* *We're OK* ~ Փողի հարցերում մեզ մոտ ամեն ինչ կարգին է:

**mongoose** ['mɒŋgu:ɪs] n *կենդ.* մանգուստ:

**mongrel** ['mɒŋgrəl] n, a ոչ ազնվացեղ շուն. բակապահ շուն. *արհմ.* խառնագզի սե-

րունդ. խառնածին, ոչ ազնվացեղ:

**monitor** ['mɒnɪtə] n դասարանի/խմբի ավագ. *հմկրգ.* մոնիտոր, դիսփլեյ. ~ *programme* ղեկավարող ծրագիր. *TV* ~ հեռուստացույցի էկրան. *ռադիո հաղորդումների խմբագիր/հսկիչ:*

**monitoring** ['mɒnɪtəriŋ] n վերահսկում, գաղտնալսում. ~ *committee* վերահսկող հանձնախումբ:

**monk** [mɒŋk] n վանական, կուսակրոն,

**monkey** ['mɒŋki] n կապիկ. *You little* ~! *Ղու,* փոքրիկ չարածճի. *make a* ~ *of smn* մեկին ծիծաղի առարկա դարձնել:

**monkey** ['mɒŋki] v ծաղրել, հեզմել, գլխին խաղ խաղալ. *Stop* ~ing! Վերջ տուր կապիկություններիդ:

**monkey-business** ['mɒŋki,bɪznəs] n անիմաստ աշխատանք. հիմարություններ:

**monkeyish** ['mɒŋkiʃ] a կապկային, կապկանման, չարածճի:

**monkey nut** ['mɒŋkinʌt] n գետնանուշ, արախիս:

**monkey-wrench** ['mɒŋkɪrentʃ] n բացովի պտուտակաբանալի:

**monkish** ['mɒŋkiʃ] a կրոնավորական, վանական:

**monocle** ['mɒnəkəl] n մի աչքի ակնոց, մենակնոց, մոնոկլ:

**monogamy** [mə'nɒgəmi] n մենամուսնություն, մոնոգամիա:

**monograph** ['mɒnəgrə:f] n մենագրություն, մոնոգրաֆիա:

**monolithic** [ˌmɒnə'liθɪk] a մի քարից. մոնոլիտ. *փխբ.* միակուռ, միածուլ:

**monologue** ['mɒnələʊg] n մենախոսություն:

**monome** [mɒ'nəʊm] n *մաթ.* միանդամ:

**monopolist** [mə'nɒpəlɪst] n մենաշնորհատեր, մոնոպոլիստ:

**monopolize** [mə'nɒpəlaɪz] v մենաշնորհել:

**opposite** [ə'pəzɪt] a հակառակ, հակադիր. in the ~ direction հակառակ ուղղությամբ:

**opposite** [ə'pəzɪt] 1. adv դիմաց, դեմ. He lives (directly) ~ Նա ուղիղ մեր դիմաց է ապրում. 2. prep sit ~ each other դեմ դիմաց նստել. the house ~ ours մեր տան դիմացի շենքը:

**opposition** [ɒpə'zɪʃn] n դիմադրություն, ընդդիմություն meet with ~ դիմադրության/առարկության հանդիպել. offer ~ to the enemy թշնամուն դիմադրություն ցույց տալ.run up against ~ դիմադրության հանդիպել the ~ *քղթ.* ընդդիմություն (Բրիտանիայում):

**oppress** [ə'pres] v ճնշել. կեղեքել. feel ~ed ընկճված լինել, նեղվել. be ~ed by heat/ by gloomy thoughts շոգից/մռայլ մտքերից նեղվել:

**oppression** [ə'preʃn] n ճնշում, կեղեքում, հալածանք. ընկճված վիճակ:

**oppressive** [ə'presɪv] a ճնշող, ծանր, մռայլ. դաժան, խիստ. an ~ regime խիստ/ դաժան կառավարում. ~ heat ճնշող տապ/ շոգ. ~ taxes ծանր հարկեր:

**oppressor** [ə'presə] n կեղեքիչ, հարստահարիչ:

**opt** [ɒpt] v ընտրել, նախընտրել, գերադասել: ~ for science գերադասել ճշգրիտ գիտությունները:

**optic** ['ɒptɪk] a տեսողական, աչքի ~ nerve *կզմի.* տեսողական նյարդ:

**optical** ['ɒptɪkəl] a տեսողական, օպտիկա-

կան ~ illusion տեսողական խաբկանք:

**optician** [ɒp'tɪʃn] n օպտիկայի մասնագետ. the ~'s(shop) օպտիկա:

**optics** ['ɒptɪks] n օպտիկա:

**optimization** [ɒptɪmaɪ'zeɪʃn] n օպտիմալացում, բարենպաստ պայմանների ընտրություն:

**optimism** ['ɒptɪmɪz(ə)m] n լավատեսություն, օպտիմիզմ:

**optimist** ['ɒptɪmɪst] n լավատես, օպտիմիստ:

**optimistic** ['ɒptɪmɪstɪk] a լավատեսական, օպտիմիստական: be ~ լավատես լինել. համոզված լինել:

**optimum** ['ɒptɪməm] n օպտիմում, ամենաբարենպաստ (ամենաբարենպաստ պայմանների ամբողջություն):

**option** ['ɒpʃn] n ընտրություն, տարբերակ. have no ~ ընտրություն/տարբերակ չունենալ. keep one's ~ open դեռևս ընտրություն կատարած չլինել. life-style ~ կենսաճի ընտրություն. have the ~of going to Paris or London Փարիզ կամ Լոնդոն գնալու միջև ընտրություն կատարել. imprisonment without the ~ of a fine *իրավ.* առանց տուգանքով փոխարինելու բանտարկություն:

**optional** ['ɒpʃnəl] a ընտրովի, ոչ պարտադիր, կամավոր. ~ courses կամընտրական դասընթացներ. French is ~ Ֆրանսերենը կամընտրական է/պարտադիր չէ:

**opulence** ['ɒpjuləns] n հարստություն:

**opulent** ['ɒpjulənt] a հարուստ, փարթամ, ճոխ:

**opus** ['əʊpəs] n երաժշտական ստեղծագործություն, օպուս. magnum ~ ամենամեծ ստեղծագործությունը:

**or** [ɔ:] conj կամ. for a day ~ two մեկ կամ երկու օրով. a brush ~ something խոզանակ կամ դրա նման մի բան. either ~ կամ...կամ. ~ else այլապես. ~ so մոտավորապես. without help ~ advice առանց որևէ օգնության կամ խորհրդի:

**oracle** ['ɒrəkl] n գուշակ, մարգարե. *պտմ.* պատգամախոս, պատգամախոսարան:

**oracular** [ɒ'rækjʊlə] a մարգարեական, իմաստուն. հանելուկային, առեղծվածային:

**oral** ['ɔ:rəl] a բանավոր. *բժշկ.* բերանաբու-

ծական. բերանի, բերանային. ~ presentation բանավոր ելույթ:

**oral** [ˈɔːrəl] **n** բանավոր քննություն:

**orally** [ˈɔːrəli] **adv** բանավոր կերպով. not to be taken ~ *բժշկ.* ոչ ներքին օգտագործման համար:

**orange** [ˈɒrɪndʒ] **n** նարինջ. blood ~ արքայա-նարինջ. նարնջենի (ծառը). նարնջա-գույն:

**orange** [ˈɒrɪndʒ] **a** նարնջի, նարնջագույն. ~ tree նարնջենի. ~ juice նարնջի հյութ. ~ blossom թուրինջի (նարնջի տեսակ) գույն. ~ peel նարնջի կեղև/ցուկատ:

**orangery** [ˈɒrɪndʒəri] **n** նարնջանոց, նարնջաստան:

**orate** [ɔːˈreɪt] **v** *կտկ.* ճառել, ճամարտակել:

**oration** [ɔːˈreɪʃn] **n** հրապարակախոսություն, հրապարակային ճառ. *քեր.* խոսք. direct/in-direct ~ ուղղակի/անուղղակի խոսք:

**orator** [ˈɒrətə] **n** հռետոր, ճառախոս:

**oratorical** [ˌɒrəˈtɔːrɪkəl] **a** հռետորական, ճարտասանական:

**oratory** I [ˈɒrətəri] **n** հռետորական/ ճարտասանական արվեստ:

**oratory** II [ˈɒrətəri] **n** մատուռ, աղոթատուն:

**orb** [ɔːb] **n** գունդ, գնդածն մարմին. երկնային մարմին. ուղեծիր. ակնախնձոր, աչքի խնձոր:

**orbit** [ˈɔːbɪt] **n** (մոլորակի) ուղեծիր. աչքի խոռոչ. the ~ of the Earth երկրի ուղեծիրը. put a satellite into ~ արբանյակը ուղեծիր դուրս բերել. The rocket is now in ~ Յրթիռն արդեն ուղեծրում է:

**orbit** [ˈɔːbɪt] **v** ուղեծրով պտտվել. The spacecraft is ~ing (round) the moon Տիեզերանավը պտտվում է լուսնի շուրջը:

**orchard** [ˈɔːtʃəd] **n** պտղատու այգի, մրգատան. a cherry ~ բալենու այգի:

**orchestra** [ˈɔːkɪstrə] **n** նվագախումբ. *ամ. բատր.* պարտեր:

**orchestral** [ˈɔːkɪstrəl] **a** նվագախմբի, նվագախմբային. with ~ accompaniment նվագախմբի նվագակցությամբ:

**orchestrate** [ˈɔːkɪstreɪt] **v** (երաժշտական երկը) գործիքավորել:

**orchestration** [ˌɔːkɪˈstreɪʃn] **n** գործիքավորում, նոտագրում նվագախմբի համար:

**orchid** [ˈɔːkɪd] **n** *բսբ.* խլորձ:

**ordain** [ɔːˈdeɪn] **v** կարգադրել, սահմանել, տնօրինել. what fate has ~ed ինչը սահմանված է ճակատագրով. be ~ed *կրոն.* ձեռնադրվել:

**ordeal** [ɔːˈdiːl] **n** ծանր փորձություն. *պտմ.* երկնային դատաստան:

**order** [ˈɔːdə] **n** կարգ. միաբանություն, օրդեն. in alphabetical ~ այբբենական կարգով. in ~ of importance ըստ կարևորության. the natural ~ of things իրերի բնական կարգը. *զինվ.* շարք, շարակարգ in battle ~ մարտական շարքով/կարգով. (կարգ, կանոնավոր/կարգին վիճակ) in good ~ կանոնավոր/կարգին/բարվոք վիճակում. out of ~ հիվանդ. անսարք. The lift is out of ~ վերելակում անսարքություն կա. The car is in working ~ Մեքենան նորմալ աշխատում է. Is it in ~ to? Արդյո՞ք ճիշտ կլինի, ... Ոչի՞նչ, եթե... put in ~ կարգի բերել. get out of ~ փչանալ, խանգարվել. in bad ~ անկանոն վնասված. keep ~ կարգ պահպանել. restore ~ կարգը (կարգապահությունը) վերականգնել. public ~ հասարակական կարգ. (կանոնադրություն, կանոնակարգ, ընդունված կարգ.) the ~ of the day օրակարգ. The question is not in ~ Այդ հարցը օրակարգում չկա. call smb to ~ կարգի հրավիրել (մեկին). standing ~ խորհրդարանի օրակարգ. standing ~s կանոնադրություն, կանոնակարգ:

**order** [ˈɔːdə] **v** կարգի բերել. ~ one's time ժամանակը բաշխել/կարգավորել. (հրամայել) He likes to ~ people Նա սիրում է բոլորին հրամայել. ~ off the field դաշտից հեռացնել. The doctor ~ed her to stay in bed Բժիշկը կարգադրեց նրան մնալ անկողնում. (պատվիրել) ~ a taxi/lunch տաքսի/նախաճաշ պատվիրել. She has ~ed a new coat Նա նոր վերարկու է պատվիրել. ~ book պատվերների գիրք. ~ form պատվերի բլանկ:

**ordered pair** [ˈɔːdəd peə] *հմկրգ.* կարգավորված զույգ:

**ordering relation** [ˈɔːdəɪŋ riˈleɪʃn] կարգի հարաբերություն. (հրաման, կարգադրություն) by ~ հրամանով. by ~ of the general գեներալի հրամանով. be under ~s հրամանի տակ լինել. confirming ~ հաստատող հրաման. follow/obey ~s հրամանը կատարել. disobey ~s հրամանը չկատարել. I won't take

~s ես թույլ չեմ տա ինձ կարգադրեն. an ~ of the court *իրավ.* դատարանի կարգադրությունը. (պատվեր) place an ~ for smth որևէ բան պատվիրել. made to ~ պատվերով/ըստ պատվերի արված. That's a pretty tall ~ *փխբ.* Դա բարդ խնդիր է. (ֆինանսներ) banker's/standing ~ մշտական/կանոնավոր կարգադրություն բանկին. money/postal ~ դրամային/փոստային փոխանցում. abilities of a high ~ արտակարգ ունակություններ. spend in the ~ of a million ծախսել մոտավորապես մեկ միլիոնի շրջանակներում. (շքանշան, պատվանշան) be awarded an ~ շքանշանով պարգևատրվել. He was wearing his ~s Նա հագնում էր իր բոլոր շքանշանները. in ~ to/that որպեսզի:

**orderliness** ['ɔ:dəɪnəs] n կանոնավորություն, ճշտապահություն:

**orderly** ['ɔ:dəɪli] n *զին.* հանձնակատար, կապավոր. *բժշկ.* սանիտար:

**orderly** ['ɔ:dəɪli] a կարգապահ, պարտաճանաչ, կարգին. ~ work կոկիկ/լավ աշխատանք. ~ clothes կոկիկ հագուստ. *զին.* հերթապահ. The crowd was quite ~ Բազմությունը կարգուկանոն էր պահպանում. an ~ mind կազմակերպված/կարգապահ միտք/բանականություն:

**ordinal** ['ɔ:di:nl] n դասական թվական (*մակ ~ number*). դասական, հերթական:

**ordinance** ['ɔ:di:nəns] n հրամանագիր, վճիռ. ծես, արարողություն:

**ordinarily** ['ɔ:di:nəri] adv սովորական ձևով, սովորաբար. She behaved quite ~ Նա իրեն սովորական ձևով էր պահում. He was more than ~ polite Նա սովորականից ավելի քաղաքավարի էր:

**ordinary** ['ɔ:dnəri] a սովորական, հասարակ, շարքային, միջակ. out of ~ արտասովոր. ~ way of talking խոսելու սովորական ձև. He's no ~ man Նա անսովոր մարդ է. an ~ country doctor հասարակ գյուղական բժիշկ. the ~ American սովորական/միջին ամերիկացի. ~ reader շարքային ընթերցող:

**ordination** [ɔ:di'neiʃn] n կարգադրություն, ձեռնադրություն:

**ordnance** ['ɔ:dnəns] n *ռզմ.* հրանոթներ, հրետանի:

**ordure** ['ɔ:djuə] n թրիք, գոմաղբ. *փխբ.* անպարկեշտություն:

**ore** [ɔ:] n հանքանյութ, հանքաքար:

**ore-dressing** ['ɔ:,dresɪŋ] n հանքանյութի մշակում, հանքի հարստացում:

**organ** ['ɔ:gən] n *կզմխ., քղբ.* օրգան. *երժշ.* երգեհոն. (մամուլ) թերթ, լրագիր. ~s of government կառավարական օրգաններ. *կենս.* օրգան, մարմին the reproductive ~s բազմացման օրգաններ. ~ of speech/digestion խոսելու/մարսողության օրգան. play the ~ երգեհոն նվագել:

**organ-grinder** ['ɔ:gən,graɪndə] n թափառաշրջիկ երգեհոնահար:

**organic** [ɔ:'gænik] a հիմնական, սահմանադրական. *կենս., քիմ.* օրգանական:

**organism** ['ɔ:gəni:z(ə)m] n օրգանիզմ, կենդանի մարմին. *փխբ.* կառուցվածք. social ~ հասարակական կառուցվածք:

**organist** ['ɔ:gənist] n երգեհոնահար:

**organization** [ɔ:gə'nai'zeɪʃn] n կազմակերպություն. international ~s միջազգային կազմակերպություններ. civic ~ քաղաքացիական կազմակերպություն. non-profit ~ շահույթ չհետապնդող կազմակերպություն. non-governmental ~ (NGO) ոչ կառավարական կազմակերպություն. the World Health ~ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. United Nations ~ (UNO) Միացյալ ազգերի կազմակերպություն (ՄԱԿ). (կազմակերպում) ~ of a conference գիտաժողովի/կոնֆերանսի կազմակերպում. ~ of a new club/circle նոր ակումբի/խմբակի ստեղծում:

**organize** ['ɔ:gənaɪz] v կազմակերպել. ~ a party երեկույթ կազմակերպել. ~ a project նախագիծ նախապատրաստել. be good at organizing լավ կազմակերպիչ լինել:

**organized** ['ɔ:gənaɪzd] a կազմակերպված. ~ resistance կազմակերպված դիմադրություն. a well ~ crime լավ կազմակերպված հանցագործություն. get oneself ~ ինքն իրեն հավաքել/կազմակերպել:

**organizer** ['ɔ:gənaɪzə] n կազմակերպող, կազմակերպիչ. գրասենյակային սպասք:

**orgy** ['ɔ:dʒi] n սանձարձակ քեֆ. գինարբուք:

**oriel** ['ɔ:riəl] n փակ պատշգամբ. (շենքի) ապակեպատ ելուստ:

**orient** ['ɔ:riənt] 1. n Արևելք. the ~ Արևելքի



երկրներ. **2.** a արևելյան:  
**orient** [ˈɔ:riənt] v կողմնորոշել, տեղորոշել.  
 ~ oneself կողմնորոշվել:  
**oriental** [ˌɔ:riˈentl] n, a Արևելքի բնակիչ,  
 արևելցի. արևելյան:  
**orientalist** [ˌɔ:riˈentəlist] n արևելագետ:  
**orientate** [ˈɔ:riənteɪt] v կողմնորոշել. ~ one-  
 self կողմնորոշվել:  
**orientation** [ˌɔ:riənˈteɪʃn] n կողմնորոշում,  
 կողմնորոշվելը:  
**orientteering** [ˌɔ:riənˈtiəriŋ] n մրզ. տեղի  
 կողմնորոշում, տեղորոշում:  
**orifice** [ˈɔ:rɪfɪs] n անցք, բացվածք:  
**origin** [ˈɔ:ridʒɪn] n ծագում, աղբյուր, սկիզբ.  
 պատճառ. the ~ of species/of a word տեսակ-  
 ների/բառի ծագում. of immigrant ~ ներգաղ-  
 թածներից սերված. of humble ~ հասարակ  
 ծագումով. the ~s of civilization քաղաքա-  
 կրթության արմատները. the ~s of dispute  
 վեճի պատճառները. the ~ of the disease հի-  
 վանդության սկիզբը:  
**original** [əˈrɪdʒənl] n բնագիր, սկզբնագիր.  
 The ~ is lost Բնագիրը չի պահպանվել/կորել  
 է. read Green in the ~ Գրինին բնագրով կար-  
 դալ. He was the ~ of this character Նա այս  
 կերպարի նախատիպն է. (տարօրի-  
 նակ/ինքնատիպ մարդ) He's a bit of an ~ Նա  
 ինքնատիպ մարդ է:  
**original** [əˈrɪdʒənl] a սկզբնական, նախնա-  
 կան, առաջին. the ~ edition առաջին հրա-  
 տարակոթյունը. the ~ source սկզբնաղբյուր.  
 the ~ meaning of the word բառի սկզբնական  
 իմաստը. (բուն, հիմնական, իսկական) the ~  
 inhabitants բնիկները. ~ member հիմնադիր  
 անդամ. the ~ document իսկական փաս-  
 տաթուղթը. ~ text բնագիր. (ինքնատիպ,  
 ինքնօրինակ) an ~ piece of work ինքնա-  
 տիպ աշխատանք. an ~ artist ինքնատիպ  
 նկարիչ:  
**originality** [əˈrɪdʒəˈnæləti] n իսկություն,  
 յուրատեսակություն, ինքնություն. The work  
 lacks ~ Աշխատանքը զուրկ է ինքնատի-  
 պությունից:  
**originally** [əˈrɪdʒəˈnəli] adv ի ծնե, ծագումով,  
 սկզբնապես:  
**originate** [əˈrɪdʒəneɪt] v ստեղծել, սկզբնա-  
 վորել. ծագել, սկիզբ առնել. առաջանալ.  
 She ~d a new fashion Նա նոր մոդա ստեղծեց.  
 A dispute ~d վեճ ծագեց. The plan ~d with my

brother Ծրագիրը առաջացավ/ծագեց իմ  
 եղբոր գլխում. Where did the fire ~ ? Որտե՞ղ  
 սկիզբ առավ հրդեհը/կրակը:  
**origination** [əˈrɪdʒəˈneɪʃn] n ծագում, սե-  
 րում, սկիզբ:  
**originator** [əˈrɪdʒəneɪtə] n հեղինակ, ստեղ-  
 ծող, նախածեռնող:  
**ornament** [ˈɔ:nəmənt] n զարդարանք,  
 զարդ:  
**ornament** [ˈɔ:nəmənt] v զարդարել:  
**ornamental** [ˌɔ:nəˈmentl] a զարդային, դե-  
 կորատիվ. The vase is pure ~ Այս սկահակը  
 պարզապես զարդ է:  
**ornamentation** [ˌɔ:nəməntəˈteɪʃn] n զարդա-  
 րանք:  
**ornate** [ɔ:ˈneɪt] a զեղազարդ, հարուստ  
 զարդարված. վերամբարձ, ճոռոմ (ոճ):  
**orphan** [ˈɔ:fən] **1.** n որբ, ծնողազուրկ  
 երեխա. **2.** a որբի, որբային. **3.** v որբացնել,  
 ծնողներից զրկել. Many children were ~ed by  
 the war Շատ երեխաներ որբացան  
 պատերազմի հետևանքով:  
**orphanage** [ˈɔ:fənɪdʒ] n որբանոց:  
**orphaned** [ˈɔ:fənd] a որբացած, ծնողներից  
 զրկված:  
**orphanhood** [ˈɔ:fənɦud] n որբություն:  
**orthodox** [ˈɔ:θədɒks] a ուղղափառ, ուղղա-  
 հավատ. ընդունված, ավանդական. the ~  
 church ուղղափառ եկեղեցի. ~ interpretation  
 ավանդական մեկնաբանություն. ~ views  
 ընդունված հայացքներ:  
**orthodoxy** [ˈɔ:θədɒksɪ] n ուղղափառու-  
 թյուն:  
**orthoepy** [ˈɔ:θəʊepɪ] n ուղղախոսություն:  
**orthographic** [ˌɔ:θəˈgræfɪk] a լեզվ. ուղ-  
 դագրական:  
**orthography** [ɔ:ˈθɒgrəfi] n ուղղագրու-  
 թյուն:  
**orthopedics** [ˌɔ:θəˈpi:dɪks] n ոսկրաբուժու-  
 թյուն, օրթոպեդիա:  
**oscillate** [ˈɒsɪleɪt] v ճոճվել. փխր. տատան-  
 վել. ~ between two opinions տատանվել եր-  
 կու կարծիքների միջև:  
**oscillation** [ˌɒsɪˈleɪʃn] n ճոճում, տատա-  
 նում:  
**osier** [ˈəʊziə] n ջրուռի, ուռի, ուռենի:  
**osseous** [ˈɒsiəs] a ոսկրոտ. փշոտ, փշառատ.  
 ոսկրի, ոսկրային:  
**ossification** [ˌɒsɪfɪˈkeɪʃn] n ոսկրացում:

**ossify** [ˈɒsɪfaɪ] v ոսկրացնել, ոսկրանալ:  
**ossuary** [ˈɒsjʊəri] n շիրիմ, գերեզման. աճ-  
 յունասափոր:  
**ostensible** [ɒˈstɛnsəblɪ] a կեղծ, ցուցադրա-  
 կան. ~ reason շինծու պատճառ. ~ authority  
 կարծեցյալ լիազորություններ. ~ ownership  
 թվացյալ սեփականություն:  
**ostensibly** [ɒˈstɛnsəblɪ] adv արտաքնապես.  
 իբր թե. He called ~ to deliver a note ևս եկել  
 էր իբր թե երկտողը հանձնելու:  
**ostentation** [ˌɒstɛnˈteɪʃn] n ցույց, ցուցամո-  
 լություն. This is simply ~ Սա պարզապես  
 ցուցամոլություն է:  
**ostentatious** [ˌɒstɛnˈteɪʃəs] a ցուցական,  
 ցուցամոլական. behave in an ~ way/manner  
 իրեն ցուցադրել/ի ցույց դնել:  
**ostler** [ˈɒslə] n ձիապան, ախոռապան:  
**ostracism** [ˈɒstrəˌsɪz(ə)m] n արտաքսում  
 (երկրից), օստրակիզմ:  
**ostracize** [ˈɒstrəsaɪz] v արտաքսել, օստրա-  
 կիզմի ենթարկել:  
**ostritch** [ˈɒstrɪtʃ] n ջայլամ. an ~ feather ջայ-  
 լամի փետուր:  
**other** [ˈʌðə] prn մյուս(ը). One brother is a law-  
 yer, the ~ a doctor Մի եղբայրը իրավաբան է,  
 մյուսը՝ բժիշկ. Where are the ~s? Որտե՞ղ են  
 մյուսները. We help each ~ Մենք օգնում ենք  
 միմյանց. one or the ~ մեկը կամ մյուսը. no ~  
 than ուրիշ ոչ ոք բացի. she and ~s like her նա  
 և նրա մնամները. Someone or ~ told me Ինչ-  
 որ մեկն ինձ ասաց. I'll find her somehow or ~  
 Ես նրան այս կամ այն կերպ կգտնեմ:  
**other** [ˈʌðə] a այլ, ուրիշ. մյուս. on the ~ side  
 մյուս կողմում. some ~ day/time մեկ այլ օր/  
 ուրիշ անգամ. for quite ~ reasons բոլորովին  
 այլ պատճառներով. none ~ than ոչ այլ ոք,  
 քան. in ~ words այլ կերպ ասած. the ~ day  
 վերջերս. every ~ day ամեն երկրորդ օր.  
 every ~ line ամեն երկրորդ տող. every ~ per-  
 son յուրաքանչյուր երկրորդը. every ~ person  
 you meet յուրաքանչյուր հանդիպածին:  
**other** [ˈʌðə] adv այլ կերպ/ձևով. I could have  
 done no ~ Ես չէի կարող այլ կերպ վարվել:  
**otherwise** [ˈʌðəwaɪz] adv think ~ այլ կերպ  
 մտածել. be ~ engaged ուրիշ գործով զբաղ-  
 ված լինել. O~ he is a nice chap Ընդհանուր  
 առմամբ նա լավ տղա է:  
**otherwise** [ˈʌðəwaɪz] conj այլապես, թե չէ. I  
 went there early ~ I would have missed him Ես

ավելի վաղ գնացի այնտեղ, այլապես նրան  
 այնտեղ չէի գտնի:  
**otherwise-minded** [ˈʌðəwaɪzˌmaɪndɪd] a  
 այլ մտայնության տեր, այլախոհ:  
**otherworldly** [ˌʌðəˈwɜːldli] a ոչ այս աշ-  
 խարհից. անտեղյակ. երազող:  
**otologist** [əʊˈtɒlədʒɪst] n ականջի բժիշկ:  
**otophone** [ˈəʊtəfəʊn] n օտոֆոն (լսելու  
 սարք):  
**otoscope** [ˈəʊtəskəʊp] n բժշկ. օտոսկոպ:  
**otter** [ˈɒtə] n ջրասամույր (նաև մորթին):  
**ottoman** [ˈɒtəmən] n անթիկնոց բազմոց/  
 թախտ:  
**ought** [ɔːt] v պետք է (որ). You ~ to tell her  
 Պետք է որ նրան ասեիք. She ~ to come ևս  
 պետք է որ գա. (հավանականություն) He ~  
 to be there by now ևս հավանաբար արդեն  
 այնտեղ է:  
**ounce** I [aʊns] n (կրճ. oz) ունցիա (28, 3 գր):  
**ounce** II [aʊns] n հովազ, ինձ:  
**our** [ˈaʊə] prn մեր. at ~ place մեր տանը. ~  
 own house մեր սեփական տունը. We changed  
 ~ clothes Մենք հագուստներս փոխե-  
 ցինք:  
**ours** [ˈaʊəz] prn a մերը, մերոնք. O~ is a large  
 room Մերը մի ընդարձակ սենյակ է. O~ will  
 come later Մերոնք ավելի ուշ կգան:  
**ourselves** [ˌaʊəˈselvz] prn ինքներս. We de-  
 corated the hall ~ Մենք ինքներս զարդարե-  
 ցինք դահլիճը. between ~ մեր մեջ:  
**oust** [aʊst] v դուրս մղել, տեղից/դիրքից  
 հանել. ~ from պաշտոնից հեռացնել/  
 զրկել:  
**out** [aʊt] n, a ելք, սողանցք, նահանջի  
 ճանապարհ. դրսի, արտաքին. խաղից  
 դուրս:  
**out** [aʊt] adv դեպի դուրս ուղղված. go ~  
 դուրս գնալ. take/fly ~ դուրս քաշել/թռչել.  
 She/He is ~ Տանը/Տեղում չէ. His arm is ~ Նրա  
 թևը հողախախտ է եղել. The secret is ~  
 Գաղտնիքը բացվել է. The magazine is ~ Ամ-  
 սագիրը լույս է տեսել. The flowers are ~ Ծա-  
 դիկները բացվել են. way ~ ելք. O~ you go !  
 Դու՛րս կորիր. The sun came ~ Արևը դուրս  
 եկավ. leave a word ~ բառ բաց թողնել. (վի-  
 ճակ) ~ at sea բաց ծովում. ~ in the open բաց  
 օդում. a night ~ ազատ երեկո. have a night ~  
 երեկոյան որևէ տեղ գնալ. (ավարտել) fill ~  
 լիքը լցնել. clear ~ մինչև վերջ պարզել.

(պատճառ) ~ of pity/curiosity/gratitude կարեկցանքից/հետաքրքրությունից/ երախտագիտությունից դրդված. the biggest crook ~ աշխարհի ամենամեծ խարդախը. The dockers are ~ Նավաշինարարները գործադուլ են անում. be ~ and about again նորից ոտքի վրա լինել. The Tories are ~ Թորիները այլևս իշխանության գլուխ չեն. The fire is ~ Կրակը հանգել է. before the year is ~ մինչև տարվա վերջը. She's ~ to get a husband կտկ. Նա ամուսին է փնտրում. (հատկանիշի բացակայություն) ~ of colour գույնը զցած, խունացած. ~ of shape տձև. ~ of wear մոդայից դուրս եկած/ընկած. ~ of health հիվանդ. ~ of hearing լսելիության սահմաններից դուրս. ~ of mind մոռացության տված. ~ of sight ~ of mind Աչքից հեռու սրտից դուրս. ~ of tune աններդաշնակ. tell straight/right ~ ուղիղ ասել. run flat ~ ամբողջ ուժով վազել. ~ and away անկասկած:

**outage** ['autidz] n պարապուրդ. հոսակորուստ. բաց թողնելու անցք:

**out-and-out** [,autn'aut] a լրիվ, կատարյալ. երդվյալ. կտրուկ. ~ republican երդվյալ հանրապետական:

**outbalance** [,aut'bæləns] v ավելի ծանր կշռել, գերակշռել:

**outbid** [,aut'bid] v ավելի բարձր գին առաջարկել:

**outboard** ['autbɔ:d] a մավեզրից դուրս. ~ motor մավեզրից դուրս կախովի շարժիչ:

**outbound** ['autbaund] a մեկնող, ուղևորվող. ~ ship ծով մեկնող նավ. ~ airplane արտասահման մեկնող ինքնաթիռ:

**outbrave** [,aut'breiv] v արիությամբ գերազանցել. սպառնալիքից չվախենալ:

**outbreak** ['autbreik] n պայթյուն, պոռթկում. an ~ of anger/violence զայրույթի/բռնության, վայրագության պոռթկում. the ~ of hostilities պատերազմական գործողությունների սկիզբ:

**outbuilding** ['aut,bildɪŋ] n կից/լրացուցիչ կառույց. ~s օժանդակ շենքեր:

**outburst** ['autbɜ:st] n պայթյուն, պոռթկում. an ~ of anger/indignation/applause զայրույթի/վրդովմունքի/ծափահարությունների պոռթկում:

**outcast** ['autka:st] n, a վտարանդի. հալած-

ված անձ. տարագիր. աքսորյալ. անտուն, անապաստան:

**outclass** [,aut'kla:s] v գերակշռել, գերազանցել. ~ all competitors բոլոր մրցակիցներին գերազանցել:

**outcome** ['autkʌm] n արդյունք, հետևանք. ելք, անցք:

**outcry** ['autkrai] 1. n աղաղակ, բացականջություն. բողոք. public ~ հասարակական բողոք. The press raised an ~ Մամուլը աղաղակ բարձրացրեց. 2. v գոռալ, աղաղակել, բարձր բղավել:

**outdated** [,aut'deɪtɪd] a հնացած, գործածությունից/մոդայից դուրս եկած:

**outdistance** [,aut'dɪstəns] v մեկից անցնել/առաջ ընկնել. ~ all the competitors բոլոր մրցակիցներից առաջ անցնել:

**outdo** [,aut'du:] v գերազանցել, անցնել. He outdid them all in generosity Նա բոլորին գերազանցեց իր մեծահոգությամբ:

**outdoor** ['autdɔ:] a տնից դուրս, դրսի, բացօթյա. an ~ theater ամառային թատրոն. ~ clothes վերնազգեստ:

**outdoors** [,aut'dɔ:z] adv դրսում, բաց օդում. It's warm ~ Դուրսը տաք է. She's just gone ~ Նա հենց նոր դուրս եկավ. spend time ~ դրսում լինել/ժամանակ անցկացնել:

**outdrive** [aut'draɪv] v վազանց անել:

**outer** ['autə] a դրսի, արտաքին. the ~ islands հեռավոր կղզիներ. ~ circle արտաքին շրջան. the ~ suburbs հեռավոր արվարձաններ:

**outermost** ['autəməʊst] a (կենտրոնից) ամենախեռու:

**outface** [,aut'feɪs] v իրեն հանդուգն պահել. հանդուգն հայացքով մոլորեցնել/շփոթեցնել:

**outfall** ['autfɔ:l] n ակունք, սկիզբ, գետաբերան:

**outfield** ['autfi:ld] n հեռավոր դաշտեր. *փխբ.* անհայտ/չուսումնասիրված բնագավառ. *մրգ.* խաղադաշտի հեռավոր մասը:

**out-fight** [,aut'faɪt] v *զգմ.* կռվում հաղթել. *մրգ.* հակառակորդին գերազանցել/հաղթել:

**outfit** ['autfɪt] n սարք, սարքավորում, հանդերձանք. camping ~ ճամբարային սարքավորում. a carpenter's ~ հյուսնի գործիքներ. skiing ~ դահուկորդի հանդերձանք. *խսկց.* կազմակերպություն, բաժին He was trans-

ferred to another ~ Նրան տեղափոխեցին մեկ այլ ձեռնարկություն/բաժին:

**outflank** [ˌaʊtˈflæŋk] v թևանցել. ~ the enemy թշնամուն թևանցել:

**outflow** [ˈaʊtfləʊ] n ակունք, գետի սկիզբ. արտահոսում, ելք:

**outfly** [aʊtˈflaɪ] v թռչել-անցնել:

**outgiving** [ˌaʊtˈɡɪvɪŋ] n հայտարարություն, արտահայտում:

**outgo** [ˈaʊtɡəʊ] n ելնելը, դուրս գալը. մեկնում, ուղևորում:

**outgo** [ˌaʊtˈɡəʊ] v գերազանցել, մեկից առաջ ընկնել:

**outgoing** [ˌaʊtˈɡəʊɪŋ] a հեռացող, գնացող. մեկնող, ուղևորվող. the ~ cabinet հրաժարական տվող կաբինետ/կառավարություն. the ~ ambassador պաշտոնաթող դեսպան. ~ mail/documents ելից փոստ/գրություններ, փաստաթղթեր. ~ characters շփվող մարդ/բնավորություն:

**outgrow** [ˌaʊtˈɡrəʊ] v վերածել, գերածել. հագուստը փոքրանալ. սովորություններից ազատվել. ~ one's clothes հագուստը փոքր գալ/փոքրանալ. ~ the habit սովորությունը փոխել:

**outgrowth** [ˈaʊtɡrəʊθ] n գերած. շյուղ, ճյուղ. արդյունք:

**outhouse** [ˈaʊthaus] n բակի կառույցներ. թևաշենք:

**outing** [ˈaʊtɪŋ] n զբոսանք (քաղաքից դուրս). go on an ~ to the forest անտառ գնալ զբոսանքի:

**out-jockey** [aʊtˈdʒɔki] v /խսկց. խաբել. խորամանկությամբ գերազանցել:

**outlandish** [aʊtˈlændɪʃ] a արտասահմանյան, օտարերկրյա. տարօրինակ, անսովոր:

**outlast** [ˌaʊtˈlɑːst] v երկար դիմանալ, ավելի երկար ապրել. These shoes ~ leather one's Այս կոշիկները ավելի երկար են դիմանում, քան կաշվի կոշիկները:

**outlaw** [ˈaʊtlɔː] 1. n օրենքից դուրս հայտարարված մարդ. 2. v օրենքից դուրս հայտարարել, արտաքսել. օրենքի ուժից զրկել:

**outlay** [ˈaʊtleɪ] n ծախս, նախահաշիվ. ~ on clothes հագուստի վրա կատարած ծախսեր:

**outlay** [ˌaʊtˈleɪ] v ծախսել:

**outlet** [ˈaʊtlet] n ջրիոս, կեղտաջրատար. ելք (նաև փխբ.). բաց թողնելը, դուրս գալը. find an ~ for one's energy էներգիան գործի դնելու

միջոց գտնել. իրացման շուկա, առևտրի կետ. ~ for goods շուկա/խանութ ապրանքի համար:

**outline** [ˈaʊtlaɪn] n ուրվագիծ, ընդհանուր նկարագիր. draw smth in ~ ուրվագծել ինչ-որ բան. in broad/general ~s ընդհանուր գծերով. ~ of conditions պայմանների համառոտ նկարագիր. (ակնարկ, համառոտ շարադրանք) ~ of European art ակնարկ եվրոպական արվեստի մասին. եվրոպական արվեստի ուրվագիծ:

**outline** [ˈaʊtlaɪn] v ուրվագծել, ուրվանկար կազմել. ~ the drawing ուրվագծել գծագիրը/նկարը. (նշել) ~ the main points հիմնական կետերը նշել. (նկարագրել, ի մի բերել) ~ one's views նկարագրել/ընդգծել իր տեսակետները:

**outlive** [ˌaʊtˈlɪv] v (մեկից) ավելի երկար ապրել. դիմանալ. կենդանի մնալ, վերապրել. She ~d her husband Նա իր ամուսնուց ավելի երկար ապրեց. ~ the disgrace խայտառակությամբ դիմանալ:

**outlook** [ˈaʊtlʊk] n տեսարան, տեսք. the ~ for the harvest բերքի ակնկալիքը. (հայացք, մտահորիզոն) pessimistic ~ հոռետեսական հայացք. the ~ for Sunday *օրերևթ.* կիրակի օրվա եղանակի տեսություն:

**outflying** [ˈaʊtˌlaɪɪŋ] a հեռավոր, հեռու. արտաքին, դրսի:

**outmarch** [ˌaʊtˈmɑːtʃ] n առաջ անցնել/ընկնել. ~ all the participants բոլոր մասնակիցներից առաջ անցնել:

**outmatch** [ˌaʊtˈmætʃ] v գերազանցել. սովորի տակ թողնել (մյուսներին):

**outmoded** [ˌaʊtˈmɔːdɪd] a հնաոճ, մոդայից դուրս եկած. հնատարազ:

**outnumber** [ˌaʊtˈnʌmbə] v թվով գերակշռել, գերազանցել. The enemy was ~ed Յակառակորդները թվով գերակշռում էին/գերազանցում էին:

**out of** [aʊt əv] prep դուրս. He 's ~ town/the office/prison Նա քաղաքում չէ/աշխատանքի չի եկել/բանտից ազատվել է. ~ place ոչ տեղին. ~ port նավարկության մեջ. When I get ~ here երբ ես այստեղից դուրս գամ. Strawberries are ~ season Դեռ ելակի ժամանակը չէ. It's ~ the question Այդ մասին խոսք չի կարող լինել. He's just ~ school Յենց մոր է դպրոցն ավարտել. ~ respect for you (ելնելով) ձեր

նկատմամբ ունեցած հարգանքից. be ~ bread հաց չունենալ. Run ~ sugar Շաքարը վերջացել է. ~ fear վախից. It's ~ stock վաճառվել է. I'm ~ breath Շունչս կտրվում է. You're ~ luck Բախտդ չբերեց:

**out-of-date** [ˌaʊtəvˈdeɪt] a հնացած, հնաձև, հնադարյան:

**out-of-doors** [ˌaʊtəvˈdɔːz] a դրսի, բացօդայ. դրսում, բաց օդում:

**out-of-the-way** [ˌaʊtəvðəˈweɪ] a հեռու, հեռավոր. անսովոր, արտասովոր. I noticed nothing ~ Ես ոչ մի արտասովոր բան չտեսա. an ~ farm հեռավոր ֆերմա:

**out-of-work** [ˌaʊtəvˈwɜːk] n գործազուրկ, անգործ:

**outpace** [aʊtˈpeɪs] v առաջ անցնել/ընկնել. մեկից ավելի առաջ քայլել:

**out-patient** [ˌaʊtˈpeɪjnt] n ամբուլատոր հիվանդ, երթևեկ հիվանդ. ~ department հիվանդանոցին կից պոլիկլինիկա:

**outplay** [ˌaʊtˈpleɪ] v խաղը տանել:

**outpost** [ˌaʊtpɔːst] n առաջավոր կետ/դիրք. առաջապահ ուղեկալ (*նաև փխր.*). an ~ of civilization քաղաքակրթության առաջավոր կետ:

**outpour** [ˌaʊtpɔː] n զեղում, դուրս թափում. ~ of feelings զգացմունքների զեղում.

**outpour**, [ˌaʊtˈpɔː] v դուրս թափել/ածել. զեղել:

**outpouring** [ˌaʊtˈpɔːrɪŋ] n զեղում (զգացմունքների) ~s of the heart սրտի զեղում:

**output** [ˌaʊtput] n արտադրանք. արտադրողականություն. the ~ of new goods նոր ապրանքների արտադրանք. the factory's ~ for the year գործարանի տարեկան արտադրողականությունը. *հմկրգ.* ելք, տվյալների ելք. ~ alphabet ելքային այբուբեն. ~ channel ելքի կանալ. ~ data ելքային տվյալներ. ~ device ելքի/ելքային սարք. ~ file ելքի ֆայլ. ~ information ելքային ինֆորմացիա. ~ instruction ելքի հրահանգ. ~ quantity ելքային մեծություն. ~ queue ելքի հերթ. ~ routine ելքի ծրագիր. ~ signal ելքային ազդանշան. ~ unit ելքի/ելքային սարք:

**outrage** [ˌaʊtreɪdʒ] n բռնություն, անարգանք, վիրավորանք. կոպիտ խախտում. an ~ against/on humanity ոճիր մարդկության

դեմ. feelings of ~ վրդովմունքի/զայրույթի զգացումներ. It's an ~ Դա զայրացուցիչ է:

**outrage** [ˌaʊtreɪdʒ] v վիրավորել, անպատվել. բռնություն գործ դնել. Public opinion was ~d Հասարակական կարծիքը զայրացած էր. My sense of justice was ~d Արդարադատության իմ զգացումը վիրավորված էր:

**outrageous** [aʊtˈreɪdʒəs] a կատաղի, մոլեգին. զայրացուցիչ. վիրավորական. an ~ price չլսված գին. ~ treatment անմարդկային վերաբերմունք:

**outride** [ˌaʊtˈraɪd] v (քշելով) առաջ անցնել/տալ. դիմանալ. տոկալ:

**outright** [ˌaʊtraɪt] a բաց, անկեղծ. կատարյալ, որոշակի, վճռական. an ~ manner անկեղծ վարվելակերպ. an ~ refusal/lie կտրական մերժում. անամոթ սուտ:

**outright** [aʊtˈraɪt] adv ուղղակի, անկեղծորեն. կտրականորեն. I'll tell him so ~ Ես նրան ուղղակի այդպես էլ կասեմ. He laughed at it ~ Ես անկեղծորեն ծիծաղեց. win the contest ~ վճռական հաղթանակ տանել. reject the offer ~ կտրականապես մերժել առաջարկը. He was killed ~ Ես անմիջապես սպանվեց. buy a house ~ տունը գնել. վճարելով ամբողջ գումարը միանգամից:

**outrival** [ˌaʊtˈraɪv] v գերազանցել, անցնել:

**outrun** [ˌaʊtˈrʌn] v վազելով առաջ անցնել/ընկնել:

**outset** [ˌaʊtset] n մեկնում. սկիզբ. at the ~ սկզբում. from the ~ հենց սկզբից:

**outshine** [ˌaʊtˈʃaɪn] v գերազանցել. նսեմացնել, սովերի մեջ թողնել:

**outside** [ˌaʊtˈsaɪd] n դրսի կողմ, արտաքին մաս. from the ~ դրսից. judging from the ~ դատելով արտաքինից. the window opens to the ~ պատուհանը դեպի դուրս է բացվում. repairs to the ~ արտաքին վերանորոգում. impressions from the ~ արտաքին աշխարհի տպավորություններ. (ծայրահեղ աստիճան) at the ~ ամենաշատը, ծայրահեղ դեպքում. it will take an hour at the ~ ամենաշատը մի ժամ կտևի. (դրսի, արտաքին. կողմնակի, օտար) the ~ world արտաքին աշխարհը. the ~ edge արտաքին եզրը/ծայրը. ~ appearance արտաքին տեսք. an ~ seat տեղ պատուհանի մոտ (ավտոբուսում, ինքնաթիռում).

get an ~ opinion ուրիշի կարծիքը հարցնել.  
 an ~ chance of winning հաղթելու չնչին  
 հնարավորություն. ~ left մրգ. ձախ եզրա-  
 յին:

**outside** [ˌaʊtˈsaɪd] adv դուրս, դրսից,  
 արտաքուստ. դուրսը (փողոցում, բակում).  
 painted ~ դրսից ներկված. go ~ դուրս գնալ.  
 It's cold ~ Դրսում ցուրտ է. The kitchen is ~  
 Խոհանոցը բակում է/դրսում է. work ~ բաց-  
 օթյա/դուրսը աշխատել. ~ and in դրսից և  
 ներսից:

**outside** [ˌaʊtˈsaɪd] prep դրսի, դրսի կողմից.  
 մոտ, կողքին. wait ~ the door դռան մոտ  
 սպասել. meet ~ the cinema հանդիպել կինո-  
 թատրոնի մուտքի մոտ. That's ~ my plan դա  
 իմ ծրագրից դուրս է. ~ the range հասանե-  
 լիության սահմաններից դուրս. ~ the area  
 տարածքից դուրս. ~ working hours աշխա-  
 տանքային ժամերից դուրս. It's ~ my experi-  
 ence Այս գործում ես փորձ չունեմ. be famous  
 ~ one's own country իր երկրի սահմաններից  
 դուրս հայտնի լինել. This species isn't found ~  
 Africa Այս տեսակին կարելի է հանդիպել  
 միայն Աֆրիկայում:

**outsider** [ˌaʊtˈsaɪdə] n կողմնակի անձ,  
 օտարական. He's looked on as an ~ խսկց.  
 Նրան որպես օտարի են ընդունում:

**outsit** [ˌaʊtˈsɪt] v ուրիշներից ավելի երկար  
 նստել/մնալ:

**outsized** [ˌaʊtˈsaɪzɪd] a սովորական չափսե-  
 րից ավելի մեծ. ~ clothes մեծ/ոչ սովորական  
 չափսերի հագուստ:

**outskirts** [ˈaʊtskɜːts] n արվարձան, ծայրա-  
 մաս. on the ~ of London Լոնդոնի արվար-  
 ձաններում:

**outspoken** [aʊtˈspɔːkən] a անկեղծ/շիտակ  
 ասված/արտահայտված:

**outspread** [ˌaʊtˈspred] 1. n տարածված,  
 փռված. with ~ wings թևերը փռած/տարած-  
 ված. 2. v տարածվել, սփռվել:

**outstanding** [ˌaʊtˈstændɪŋ] a կարկառուն,  
 աչքի ընկնող. հայտնի. չվճարված, ժամկե-  
 տանց. անավարտ, չկատարված. ~ bills  
 չվճարված հաշիվներ. Business is still ~ Գոր-  
 ծը դեռևս անավարտ է:

**outstay** [ˌaʊtˈsteɪ] v երկար մնալ, դիմանալ,  
 տոկալ. ~ one's welcome. չարաշահել հյուր-  
 ընկալությունը. She ~ed the other guests Նա  
 բոլոր հյուրերից ավելի երկար մնաց:

**outstep** [aʊtˈstep] v սահման անցնել, սահ-  
 մաններից դուրս գալ:

**outstretched** [ˌaʊtˈstretʃt] a երկարած,  
 պարզված. an ~ hand/arm երկարած/պարզ-  
 ված ձեռք. with ~ arms/wings զրկաբաց, թե-  
 վերը պարզած:

**outstrip** [ˌaʊtˈstriːp] v առաջ անցնել/ընկնել.  
 գերազանցել:

**out-talk** [aʊtˈtɔːk] v ձանձրացնել խոսելով.  
 խոսելու հերթ չտալ:

**out-top** [aʊtˈtɒp] v ավելի բարձր լինել.  
 փխթ. գերազանցել:

**outtray** [ˈaʊttriː] արկղ ելից գրությունների/  
 նամակների համար:

**outvoice** [aʊtˈvɔɪs] v բոլորից բարձր խոսել.  
 փխթ. համոզել:

**outvote** [ˌaʊtˈvəʊt] v ձայների մեծամասնու-  
 թյուն ստանալ/շահել:

**outward** [ˈaʊtwəd] 1. a արտաքին, դրսի.  
 judging by ~ appearance արտաքին տեսքից  
 դատելով. on the ~ voyage ծով. երկրից դուրս  
 նավարկելիս. ~ bound մեկնող, ուղևորվող.  
 2. adv դուրս, սահմաններից դուրս. ships ~  
 bound from London Լոնդոնի նավահանգրս-  
 տից արտասահման ուղևորվող նավեր:

**outwardly** [ˈaʊtwədli] adv արտաքուստ,  
 դրսից. remain ~ calm արտաքուստ հան-  
 դարտ մնալ:

**outwards** [ˈaʊtwədz] adv դեպի դուրս,  
 դուրս. turn it ~ շրջել դուրս/դեպի դուրս:

**outwash** [ˈaʊtwɒʃ] v լվանալ, մաքրել:

**outwear** [ˌaʊtˈweə] v մաշել. փխթ. սպառել  
 (համբերությունը). (հագուստ) դիմացկուն  
 լինել, երկար դիմանալ:

**outweigh** [ˌaʊtˈweɪ] v քաշով/կշիռով գերա-  
 զանցել. փխթ. գերակշռել, գերակշռություն  
 ձեռք բերել. This ~ed all other considerations  
 Սա գերազանցեց բոլոր մյուս հանգամանք-  
 ները:

**outwit** [ˌaʊtˈwɪt] v գերազանցել սրամտու-  
 թյամբ/ խորամանկությամբ:

**outwork** [ˈaʊtwɜːk] 1. n արհեստանոցից  
 դուրս կատարվող աշխատանք. ոզմ. ար-  
 տաքին ամրություններ. 2. [aʊtˈwɜːk] v աշ-  
 խատանքում գերազանցել մեկին:

**outworn** [ˈaʊtwɔːn] a մաշված. հին, հնա-  
 ցած. ուժասպառ, հյուծված, ծեծված. ~ quo-  
 tations ծեծված մեջբերում:

**ouzel** [ˈuːzl] n կենդ. կեռնեխ:

**oval** [ˈəʊvəl] *n*, *a* ձվաձև գծագրություն ունեցող, ձվաձև:

**ovary** [ˈəʊvəri] *n* *կզմխ.* ձվարան:

**ovation** [əʊˈveɪʃən] *n* բուռն ծափահարություններ, պատվացույց. *օվացիա.* give smb an ~ բուռն ծափահարություններով ընդունել/դիմավորել. get a standing ~ բուռն ծափահարություններ ստանալ:

**oven** [ˈʌvən] *n* փուռ, վառարան. *ջեռոց:*

**ovenproof** [ˈʌvənpruːf] *a* հրակայուն, ջերմակայուն:

**ovenware** [ˈʌvənweə] *n* հրակայուն/ջերմակայուն ամանեղեն:

**over** [ˈəʊvə] *n* ավելցուկ, հավելավճար. *ռզմ.* (զոհակի, արկի) անցում նշանակետից:

**over** [ˈəʊvə] *adv* տեղ. ~ here/there այստեղ, այնտեղ. all ~ ամենուրեք. the world ~ ամբողջ աշխարհում. shake all ~ ամբողջովին դողալ. That's him all ~ Պա նրան շատ նման է. children aged 13 and ~ *փխբ.* 13 և ավելի տարեկան և երեխաներ. jump ~ վրայից թռչել. sail ~ նավարկելով անցնել. Come ~ here Այստեղ արի. ~ again նորից. ~ and ~ again շատ անգամներ. ~ and above ի լրումն. The lecture is ~ Պասախությունն ավարտված է It's all ~ Ամեն ինչ վերջացած է. knock smth ~ մի բան շուռ տալ. look smth ~ զննել ինչ-որ բան. hand smth ~ հանձնել. The milk has boiled ~ Կաթը թափվեց/փախավ:

**over** [ˈəʊvə] *prep* վրա, վերևում, վերև. a bridge ~ the river կամուրջ գետի վրայով. a blanket ~ the bed ծածկոց մահճակալի վրա. lean ~ the table հենվել սեղանի վրա. look ~ spectacles ակնոցի վրայից նայել. live ~ the road ճանապարհի այն/հակառակ կողմում ապրել. ~ the border սահմանից այն կողմ. worry ~ smth մի բանի համար անհանգստանալ. quarrel ~ smth վիճել ինչ-որ բանի համար. win an advantage ~ առավելության հասնել. ~ the whole period ամբողջ ժամանակի ընթացքում. stay ~ the weekend մնալ շաբաթ/կիրակի օրերը. ~ two years երկու տարուց ավելի. He's ~ 90 now Ես իննսունից ավելի է. hear ~ the radio ռադիոյով լսել. ~ the breakfast նախաճաշի ընթացքում stumble ~ a stone սայթաքել. talk ~ the matter խոսել գործի մասին:

**overact** [ˌəʊvərˈækt] *v* (դերը խաղալիս) չափն անցկացնել. գերախաղալ:

**overall** [ˈəʊvərɔːl] *n* արտահագուստ:

**overall** [ˌəʊvərˈɔːl] *a* ընդհանուր, համընդհանուր. ~ responsibility ընդհանուր պատասխանատվություն. an ~ survey ընդհանուր տեսություն. the ~ result ընդհանուր արդյունքը. *հմկրգ.* ~ efficiency ընդհանուր էֆեկտիվություն. ~ length ընդհանուր երկարություն. ~ processing speed/time մշակման ընդհանուր արագություն/ժամանակ:

**overarch** [ˌəʊvərˈɑːtʃ] *v* կամար կապել. կամարածն ձգվել:

**overawe** [ˌəʊvərˈɔːv] *v* վախեցնել, ահաբեկել. He was quite ~d by his teacher Պասատուն նրան ահաբեկել էր:

**overbalance** [ˌəʊvəˈbæləns] **1.** *n* ավելաքաշ. **2.** *v* գերակշռել. հավասարակշռությունից հանել/կորցնել. Don't ~ the boat Շուռ չտաս նավակը:

**overbear** [ˌəʊvəˈbeə] *v* հաղթել, նվաճել. գերակշռել, գերազանցել:

**overbearing** [ˌəʊvəˈbeəriŋ] *a* հրամայական, իշխող, բռնապետական:

**overboard** [ˈəʊvəbɔːd] *adv* նավից դուրս ջրի մեջ. Man~! (նավից) Մարդ է ընկել ջուրը!, Ջրում մարդ կա. throw ~ նավից ծովը/ջուրը նետել:

**overbold** [ˌəʊvəˈbəʊld] *a* չափազանց հանդուգն/համարձակ:

**overbrim** [ˌəʊvəˈbrɪm] *v* բերնեբերան լցնել, եզրերից թափվել:

**overburden** [ˌəʊvəˈbɜːdn] *v* գերծանրաբեռնել, գերաբեռնել:

**overcast** [ˌəʊvəˈkɑːst] *a* ամպոտ, ամպամած. The sky became ~ Երկինքը ամպերով պատվեց:

**overcharge** [ˌəʊvəˈtʃɑːdʒ] *n* չափազանց բարձր գին. *ռզմ.* գերլիցք:

**overcharge** [ˌəʊvəˈtʃɑːdʒ] *v* չափազանց բարձր գին դնել. They have ~d me for it Ինձնից շատ փող վերցրին դրա համար. էլ. լիցքավորել:

**overcoat** [ˈəʊvəkəʊt] *n* վերարկու:

**overcome** [ˌəʊvəˈkʌm] *v* հաղթել, հաղթահարել. ~ difficulties դժվարություններ հաղթահարել. (համակել, պատել) ~ by համակված. ~ by grief վշտով համակված:

**overconfident** [ˌəʊvəˈkɒnfɪdənt] *a* ինքնավստահ, ինքնահավան:

**overcook** [ˌəʊvəˈkʊk] *v* չափից ավելի շատ

եփել/տապակել. փչացնել:  
**overcrowd** [ˌəʊvəˈkraʊd] v մարդկանցով լիքը լցնել. խոնավել, ամբոխավել:  
**overcrowded** [ˌəʊvəˈkraʊdɪd] a մարդկանցով լիքը լցված, լեփ լեցուն (թատրոն և այլն):  
**overcrowding** [ˌəʊvəˈkraʊdɪŋ] n գերբնակեցվածություն:  
**overdo** [ˌəʊvəˈduː] v չափն անցկացնել, չափից ավելի անել. չափազանցել. չափից ավելի տապակել, վառել. The actor overdid the part Դերասանը չափազանցում էր իր դերը. ~ the apologies չափից ավելի երկար ներողություն խնդրել:  
**overdone** [ˌəʊvəˈdʌn] a չափազանցված. չափից ավելի տապակած, վառած. չափազանց հոգնած. The meat is ~ Միսը վառած է.  
**overdose** [ˈəʊvəˈdɔːs] n չափից ավելի/գերդեղաքանակ/դոզա. take an ~ չափից ավելի մեծ դեղաքանակ/դոզա ընդունել:  
**overdraft** [ˈəʊvəˈdraːft] n վարկի գերազանցում. have a huge ~ at the bank բավականին գերազանցել բանկի վարկը:  
**overdraw** [ˌəʊvəˈdraʊ:] v ավանդից ավելի մեծ գումար դուրս գրել:  
**overdress** [ˌəʊvəˈdres] v չափազանց շքեղ հագնվել. չափից ավելի տաք հագնվել. be ~ed for the occasion որևէ առիթով շքեղ հագնված. It's very hot, - I'm ~ed. Շատ շոգ է, ես չափազանց տաք եմ հագնված.  
**overdue** [ˌəʊvəˈdjuː] a ուշացած. ժամկետանց. The train is ~ Գնացքն ուշանում է. The change was long ~ Այս փոփոխությունը վաղուց սպասվում էր. ~ bill ժամկետանց մուրհակ:  
**overeat** [ˌəʊvəˈiːt] v շատ/չափից ավելի ուտել:  
**overestimate** [ˌəʊvəˈestɪmət] v գերազնահատել. չափազանցված նախահաշիվ կազմել:  
**overexcited** [ˌəʊvəˈɪksɪtɪd] a գերհուզված, չափից ավելի հուզված. Everybody was ~ Բոլորը չափազանց հուզված էին:  
**overexert** [ˌəʊvəˈɪɡzə:t] v գերլար(վ)ել. ~ oneself գերլարվել:  
**overexpose** [ˌəʊvəˈɪksəʊz] v լսնկ. ժապավենը երկար պահելով փչացնել:  
**overfeed** [ˌəʊvəˈfiːd] v գերսնել, գերսնելով վնասել:

**overflow** [ˈəʊvəˈfləʊ] n արտահոսք, հեղեղում, ողողում. feel the cup to ~ing բաժակը լցնել մինչև եզրերը. population ~ *փխք*. գերբնակեցվածություն. ~ pipe կեղտաջրատար խողովակ:

**overflow** [ˌəʊvəˈfləʊ] v հորդել, եզրերից դուրս հոսել. The water ~ed the barriers Ջուրն անցավ բոլոր արգելքները. The crowd ~ed into the street *փխք*. Ամբոխը փողոց դուրս թափվեց. ~ with լցված/համակված լինել. ~ with kindness բարությունը լցված/համակված լինել. *հմկրգ*. ~ area/data գերլցման տիրույթ/տվյալներ:

**overgrow** [ˌəʊvəˈgrəʊ] v չափազանց արագ աճել. ~ one's clothes իր շորերից գերաճել:

**overgrown** [ˌəʊvəˈgrəʊn] a գերաճած. բուսականությանը/կանաչով ծածկված. an ~ schoolboy տարիքանց աշակերտ:

**overgrowth** [ˈəʊvəˈgrəʊθ] n գերաճ. ուռուցք:

**overhang** [ˈəʊvəˈhæŋ] n ծածկ:

**overhang** [ˌəʊvəˈhæŋ] v կախվել, կախ ընկնել. կախված լինել:

**overhanging** [ˌəʊvəˈhæŋɪŋ] a կախված:

**overhaul** [ˈəʊvəˈhɔːl] v զննում, ստուգում, վերանորոգում. The engine needs an ~ Շարժիչը վերանորոգման կարիք ունի. The doctor gave me a thorough ~ *խսկց*. Բժիշկն ինձ շատ ուշադիր զննեց/քննեց:

**overhaul** [ˌəʊvəˈhɔːl] v զննել, քննել, ստուգել. վերանորոգել:

**overhead** [ˌəʊvəˈhed] a վերևի, վերերկրյա.(օդում) գլխից վեր գտնվող. վերադիր (ծախսեր). ~ wires օդային լարեր. ~ charges/costs/expenses վերադիր ծախսեր:

**overhead** [ˌəʊvəˈhed] adv վերևում, գլխի վերև. in the room ~ վերին հարկի/վերևի սենյակում:

**overhear** [ˌəʊvəˈhiə] v պատահմամբ/ ակամա լսել. I couldn't help ~ing them Չէի կարող նրանց չլսել. She was overheard to say *Լսել էին*, թե նա ինչ էր ասել:

**overheat** [ˌəʊvəˈhiːt] 1. n գերտաքացում. 2. v գերտաքացնել, գերտաքանալ. The engine shouldn't ~ Շարժիչը չի կարելի գերտաքացնել/չպետք է գերտաքանալ:

**overindulge** [ˌəʊvəˈɪndʌldʒ] v չափազանց տարվել, չարաշահել. ~ one's child երեխային շատ երես տալ. I ~d last night երեկ երե-



կոյան ես չարաշահեցի հյուրընկալութիւնը/շատ կերա և խմեցի:

**overindulgent** [ˌəʊvəˈrɪnˈdʌldʒənt] a չափազանց զիջող/ներողամիտ/ հանդուրժող. ~ parents չափից ավելի ներողամիտ ծնողներ:

**overjoy** [ˌəʊvəˈdʒɔɪ] v շատ/անչափ ուրախացնել, երջանկացնել:

**overjoyed** [ˌəʊvəˈdʒɔɪd] a չափազանց գոհ, անչափ ուրախ/երջանիկ. We were ~ about the news Այդ լուրը մեզ անչափ ուրախացրեց:

**overlabour** [ˌəʊvəˈleɪbəl] v չափազանց խնամքով աշխատել. աշխատանքով գերհոգնեցնել:

**overladen** [ˌəʊvəˈleɪdn] a ծանրաբեռնված, գերբեռնված:

**overland** [ˌəʊvəlænd] 1. a ցամաքի, ցամաքային, ցամաքագնաց. an ~ route ցամաքագնաց երթուղի. 2. adv ցամաքով, ցամաքի վրայով travel ~ ցամաքով ճամփորդել:

**overlap** [ˌəʊvəˈlæp] v մասամբ համընկնել/իրար ծածկել. The planks must ~ Տախտակները պետք է իրար վրա գան. His duties and mine ~ Իմ և նրա պարտականությունները մասամբ համընկնում են. *հմկրգ.* ~ping events միմյանց ծածկող իրադարձություններ:

**overlay** [ˌəʊvəˈleɪ] n կափարիչ, խուփ:

**overlay** [ˌəʊvəˈleɪ] v *հմկրգ.* ծածկել:

**overleaf** [ˌəʊvəˈli:f] adv (էջի) մյուս կողմում. see ~ էջը շուտ տուր. continued ~ շարունակությունը էջի մյուս կողմում:

**overleap** [ˌəʊvəˈli:p] v ցատկելով/թռչելով անցնել:

**overlive** [ˌəʊvəˈlɪv] v կյանքը վատնել, ցոփ կյանք ապրել. ինչ-որ մեկից ավելի երկար ապրել:

**overload** [ˌəʊvəˈləʊd] n ծանրաբեռնում, գերբեռնում:

**overload** [ˌəʊvəˈləʊd] v ծանրաբեռնել, գերբեռնել. *էլ.* վերալիցքավորել:

**overlook** [ˌəʊvəˈlʊk] v բացվել, նայել. the window ~s the garden Պատուհանը պարտեզին է նայում. (չնկատել, բաց թողնել) ~ the possibility հնարավորությունը բաց թողնել. I ~ed his name on the list Չնկատեցի նրա անունը ցուցակում. (մատների արանքով

նայել) ~ smb's faults որևէ մեկի թերությունների վրա մատների արանքով նայել. I'll ~ it this time Այս անգամ ես աչքերս կփակեմ:

**overmaster** [ˌəʊvəˈma:stə] v հաղթել, իրեն ենթարկել. ամբողջովին համակել (զգացմունքը). an ~ing feeling ամբողջովին համակող զգացմունք:

**overmatch** [ˌəʊvəˈmætʃ] v գերազանցել, հաղթել:

**overmature** [ˌəʊvəməˈtʃuə] a գերհասունացած, գերհասուն:

**overmuch** [ˌəʊvəˈmʌtʃ] a չափից դուրս/շատ. ~ homework չափից շատ տնային աշխատանք. ~ praise չափից դուրս գովաբանել:

**overnight** [ˌəʊvəˈnaɪt] a նախորդ երեկոյի. նախորդ երեկո տեղի ունեցած:

**overnight** [ˌəʊvəˈnaɪt] adv նախորդ երեկոյան, ամբողջ գիշերը. We drove there ~ Մենք գնում էինք այնտեղ ամբողջ գիշերը. The weather changed ~ եղանակը փոխվեց մի գիշերում/գիշերվա ընթացքում. stay ~ գիշերն անցկացնել:

**overpass** [ˌəʊvəˈpɑ:s] n էստակար:

**overpass** [ˌəʊvəˈpɑ:s] v կտրել-անցնել. գերազանցել. անուշադրության մատնել. չնկատել:

**overpast** [ˌəʊvəˈpɑ:st] a վաղուց անցած. անցած-զնացած:

**overpay** [ˌəʊvəˈpeɪ] v ավելի վճարել, գերավճարել:

**overpayment** [ˌəʊvəˈpeɪmənt] n գերավճարում:

**overpeopled** [ˌəʊvəˈpi:pld] a գերբնակեցված, բազմամարդ:

**overpersuade** [ˌəʊvəpəˈsweɪd] v հորդորել. խիստ համոզել:

**overplus** [ˌəʊvəplʌs] n ավելցուկ, առատություն:

**overpopulation** [ˌəʊvəpɒpjʊˈleɪʃn] n գերբնակվածություն:

**overpower** [ˌəʊvəˈpaʊə] v հաղթել, հաղթահարել. ընկճել. ~ an opponent հակառակորդին հաղթել:

**overpowering** [ˌəʊvəˈpaʊərɪŋ] a անհաղթահարելի. ճնշող, ընկճող:

**overproduction** [ˌəʊvəprɒˈdʌkʃn] n գերարտադրություն:

**overrate** [ˌəʊvəˈreɪt] v գերազնահատել:

**overreach** [ˈəʊvəri:tʃ] n խաբեություն, խորամանկություն. ~ oneself իր հաշիվներում սխալվել/խաբվել:

**overreach** [ˌəʊvəˈri:tʃ] v տարածվել, հասնել. սահմանն անցնել, գերազանցել. խորամանկել:

**override** [ˌəʊvəˈraɪd] v տակովն անել. ձիու տակ զգել. ոտնատակ տալ. (ծին) ուժասպառ անել:

**overriding** [ˌəʊvəˈraɪdɪŋ] n գլխավոր, հիմնական, գերիշխող. ~ principle առաջնային/գլխավոր սկզբունք:

**overripe** [ˌəʊvəˈraɪp] a չափից ավելի հասած, լիկած (միրգ և այլն):

**overrule** [ˌəʊvəˈru:l] v իշխել, տիրել. *փխբ.* հաղթել. մերժել, չընդունել. ~ all objections ոչ մի առարկություն չընդունել. ~ a decision չեղյալ հայտարարել որոշումը. ~d by the majority մեծամասնությանը ենթարկվել:

**overrun** [ˌəʊvəˈrʌn] v հորդել, եզրերից դուրս հոսել. *փխբ.* սահմաններից դուրս գալ. ասպատակել, ամայացնել. The town is ~ by tourists Քաղաքը հեղեղված է զբոսաշրջիկներով. Rabbits have ~ the whole garden ճագարները ամայացրել են ամբողջ այգին. the programme overran the time by 5 minutes Ծրագիրը նախատեսվածից հինգ րոպե ավելի տևեց:

**overscrupulous** [ˌəʊvəˈskru:pjələs] a չափից ավելի բժախնդիր. One needn't be ~ in Չի կարելի չափազանց բժախնդիր լինել այսպիսի հարցում:

**oversea(s)** [ˌəʊvəˈsi:(z)] 1. a անդրծովյան, արտասահմանյան, արտաքին. ~ territories անդրծովյան տարածքներ. ~ trade արտաքին առևտուր. ~ tourists արտասահմանյան զբոսաշրջիկներ. 2. adv արտասահմանում, ծովի այն կողմը. study ~ արտասահմանում սովորել. visitors from ~ այցելուներ արտասահմանից. go ~ արտասահման գնալ/մեկնել:

**oversee** [ˌəʊvəˈsi:] v հսկել, վերահսկել:

**overseer** [ˈəʊvəsiə] n վերակացու, վերահսկիչ. վարպետ:

**overset** [ˌəʊvəˈset] v կարգը խախտել. շուռ տալ/զալ. ~ one's plans ծրագրերը խախտել:

**overshadow** [ˌəʊvəˈʃædəʊ] v ստվեր զգել. ստվերածածկ անել. *փխբ.* նսեմացնել, ստվերի մեջ թողնել:

**overshoe** [ˈəʊvəʃu:] n կրկնակոշիկ:

**overshoot** [ˈəʊvəʃu:t] v վրիպել, նշանակետից այն կողմ անցնել. *փխբ.* չափն անցնել, համը հանել. ~ the runway վայրէջքի հրապարակի վրայով թռչել-անցնել. ~ the mark *փխբ.* շատ հեռուն գնալ:

**oversight** [ˈəʊvəsait] n վրիպում, անփութություն. սխալ, բացթողում. by an ~ անփութության հետևանքով. It was an ~ on my part Դա վրիպում էր իմ կողմից. (վերահսկում) rights of ~ վերահսկման իրավունքներ:

**oversized** [ˌəʊvəˈsaɪz(d)] a չափից ավելի մեծ:

**oversleep** [ˌəʊvəˈsli:p] v չափից շատ/ավելի քնել. քնով անցնել, ուշանալ:

**oversleeve** [ˈəʊvəsli:v] n թևնոց, թևքաշ:

**overspend** [ˌəʊvəˈspend] v ավելի ծախսել, վատնել. We've overspent by 50 dol. Մենք հիսուն դոլար ավելի ծախսեցինք:

**overspill** [ˈəʊvəspɪl] n հավելյալ բնակչություն. an ~ town քաղաք-արբանյակ:

**overspread** [ˌəʊvəˈspred] v ցրել, շաղ տալ. տարած(վ)ել:

**overstaff** [ˌəʊvəˈsta:f] v ուռճացնել հաստիքները. The department is ~ed Բաժնում ավելի աշխատող կա, քան անհրաժեշտ է:

**overstate** [ˌəʊvəˈsteɪt] v չափազանցել:

**overstatement** [ˌəʊvəˈsteɪtmənt] n չափազանցություն:

**overstay** [ˌəʊvəˈsteɪ] v շատ երկար մնալ. ~ one's welcome չարաշահել հյուրընկալությունը:

**overstep** [ˌəʊvəˈstep] v վրայով անցնել. *փխբ.* սահմանն անցնել:

**overstock** [ˈəʊvəstɒk] n ապրանքներով լցնել. չափից մեծ պաշարներ հավաքել. ~ a shop with goods խանութը ապրանքով հեղեղել. The farm is ~ed Ֆերմայում ավելի շատ անասուն կա, քան հնարավոր է կերակրել:

**overstrain** [ˈəʊvəstreɪn] n, v գերլարում, գերլարվածություն. գերլարել, գերհոգնեցնել:

**overstrung** [ˌəʊvəˈstrʌŋ] a գերլարված:

**overt** [əu'və:t] a բաց, բացահայտ:

**overtake** [,əʊvə'teɪk] v հասնել, բռնել. վազանց անել. հանկարծակիի բերել. ~ a car (մեքենա) վազանց անել. Russia has ~n America in... Ռուսաստանն Ամերիկայից առաջ է անցել... be ~n by events իրադարձություններից հանկարծակիի գալ:

**overtaking** [,əʊvə'teɪkɪŋ] n վազանց. 'No' ~ 'վազանցն արգելվում է':

**overtax** [,əʊvə'tæks] v չափից ավելի մեծ հարկեր դնել. հարկերով ծանրաբեռնել: The country is ~ed երկիրը ուժից վեր ծանրաբեռնված է հարկերով. ~ oneself *փխբ.* գերլարվել. Don't ~ my patience! Չամբերությունս մի փորձիր:

**overthrow** [ˈəʊvəθrəʊ] n տապալում, կործանում, անկում:

**overthrow** [,əʊvə'θrəʊ] v տապալել, կործանել. խորտակել:

**overtime** [ˈəʊvətəɪm] 1. n արտաժամյա աշխատանք. 2. a արտաժամյա. do/work/be on ~ արտաժամյա աշխատել. ~ pay արտաժամյա վարձատրություն/վճարում:

**overtone** [ˈəʊvətəʊn] n *երժշ.* հնչերանգ, ելևէջ. օբերտոն. *փխբ.* ենթատեքստ, ակնարկում. His words had certain ~ Նրա բառերում ինչ-որ ակնարկ կար:

**overtop** [,əʊvə'tɒp] v բարձրությամբ գերազանցել. վեր բարձրանալ. *փխբ.* գերազանցել. նսեմացնել, ստվերի տակ թողնել:

**overture** [ˈəʊvətʃʊə] n հաշտության փորձ/առաջարկություն. ~s բանակցությունների սկիզբ. make peace ~s խաղաղ առաջարկություններ անել. *երժշ.* նախերգանք:

**overturn** [ˈəʊvətə:n] n տապալում, կործանում. պարտություն:

**overturn** [,əʊvə'tɜ:n] v շուռ տալ/գալ. ընկնել, վայր գլորվել. տապալել, կործանել. ~ a theory տեսություն մխտել. ~ a decision *իրավ.* որոշում բեկանել:

**overvalue** [,əʊvə'vælju:] 1. n գերազնահատում. 2. v գերազնահատել. ~ one's power ուժերը գերազնահատել:

**overwatch** [,əʊvə'wɒtʃ] v անքնությունից ուժասպառ լինել:

**overweening** [,əʊvə'wi:nɪŋ] a գոռոզ, մեծամիտ, ամբարտավան. ~ ambition ծայրաս-

տիճան փառասիրություն:

**overweigh** [,əʊvə'wei] v գերակշռել. ավելի ծանր քաշ ունենալ:

**overweight** [ˈəʊvəweɪt] n հավելյալ քաշ:

**overweight** [,əʊvə'weɪt] a նորմայից ավելի ծանր:

**overweight** [,əʊvə'weɪt] v գերբեռնել. չափից ավելի ծանրաբեռնել. He's ~ for his height Իր հասակի համար բավական մեծ քաշ ունի. The parcel is ~ Փաթեթը չափազանց ծանր է. ~ luggage նորմայից ավել ուղեբեռ:

**overwhelm** [,əʊvə'welɪm] v ողողել, հեղեղել. *փխբ.* վրան թափել. տեղալ. ընկնել, ջախջախվել. ~ with questions հարցեր տեղալ. (համակել, տոգորել) His kindness ~ed me Նրա բարությունն ինձ ապշեցրեց. ~ an opponent հակառակորդին հաղթել. ~ with grief վշտով համակված:

**overwhelming** [,əʊvə'welɪmɪŋ] a անհաղթահարելի, ճնշող. an ~ majority ճնշող մեծամասնությունը. an ~ defeat լիակատար պարտություն. ~ pressure անհաղթահարելի/ջախջախիչ ճնշում:

**overwind** [,əʊvə'waind] v չափից ավելի պտուտակել/լարել. ~ a watch ժամացույցի զսպանակը չափից ավելի լարել:

**overwork** [,əʊvə'wɜ:k] n արտաժամյա աշխատանք. գերլարվածություն. գերծանրաբեռնվածություն:

**overwork** [,əʊvə'wɜ:k] v չափազանց շատ աշխատել. ~ oneself գերհոգնել. ~ a horse ձին ուժասպառ անել. ~ smb ծանրաբեռնել աշխատանքով. He's been ~ing Նա գերհոգնել է:

**overwrought** [,əʊvə'rɔ:t] a մեծ խնամքով արված/կատարված. գերհոգնած. գերլարված, գերգրգռված:

**owe** [əʊ] v պարտք/պարտական լինել. He ~s me 100 dol. Նա ինձ հարյուր դոլար է պարտք. I'll ~ it to you ես քեզ պարտք կլինեմ. He ~s everything to his mother Նա ամեն ինչով իր մորն է պարտական. ~ smb a grudge մեկի դեմ ատամ ունենալ:

**owing** [ˈəʊɪŋ] a չվճարված. վճարման ենթակա. համար. There 's still 20 dol ~ to me Ինձ դեռ քսան դոլ. պարտք են. the amount still ~ on the house տան համար դեռևս չվճարված

զուճարը. ~ to շնորհիվ, հետևանքով, պատճառով. ~ to illness հիվանդության պատճառով. ~ to bad weather վատ եղանակի պատճառով:

**owl** [aul] n բու. eagle ~ բվեճ. ~ train/car ամ.

գիշերային գնացք/տրամվայ/տաքսի:

**owlet** [ˈaulət] n բվի ձագ/ճուտ. բվիկ:

**owlish** [ˈauliʃ] a բվի նման:

**owl-light** [ˈaulait] n մթնշաղ. աղջամուղջ:

**own** [əʊn] a անձնական, սեփական. with one's ~ eyes սեփական աչքերով. his ~ idea իր սեփական գաղափարը. I have a copy of my ~ Ես իմ սեփական օրինակն ունեմ. hold one's ~ իր տեսակետը պնդել. My time is my ~ Ես իմ ժամանակի տերն եմ. my ~ father/brother իմ հարազատ հայրը/եղբայրը. for reasons of his ~ միայն իրեն հայտնի պատճառներով. (ինքը, մենակ) I'm (all) on my ~ now Ես հիմա լրիվ մենակ եմ. They left her on her ~ Նրանք մենակ թողեցին նրան. on one's ~ ինքնուրույն կերպով. She does all the cooking on her ~ Նա ինքն է ամեն ինչ եփում. be one's ~ man անկախ լինել. come into one's ~ պատշաճը ստանալ. The patient is holding his ~ Հիվանդը դիմանում է. get one's ~ back on smb մեկի հետ հաշիվները մաքրել. He can hold his ~ with anybody Ոչ ոքի թույլ չի տա իրեն վիրավորել/նեղացնել:

**OWN** [əʊn] v ունենալ, տիրել. ~ property սեփականության տեր լինել. Who ~s this car? Ո՞վ է մեքենայի տերը. The factory is ~ed by my brother Գործարանը պատկանում է իմ եղբորը. He acts as though he ~s the place Նա իրեն այս տեղի տիրոջ նման է պահում. (ճանաչել, խոստովանել, ընդունել) He ~s himself indebted Նա իրեն պարտական է զգում/ճանաչում. He wouldn't ~ himself in the wrong Նա չէր ուզում ընդունել, որ սխալ է. I ~ I was surprised Ընդունում եմ, որ ես զարմացա. ~ one's faults սխալները/պակասությունները ընդունել. ~ up *խսկց*. խոստո-

**pouch** [paʊtʃ] n տոպրակ, պարկ. *ռզմ.* փամփուռտաման. tobacco ~ ծխախոտի քսակ:

**poult** [paʊlt] n ճուտ (հավի, հնդկահավի):

**poulterer** [ˈpəʊltərə] n ընտանի թռչուններ վաճառող:

**poultice** [ˈpəʊltis] n տաք թրջոցալաթ:

**poultry** [ˈpəʊltri] n ընտանի թռչուններ. ~ breeding թռչնաբուծություն:

**pounce** [paʊns] n հանկարծակի վայրէջք/ցատկում. մագիլ, ճանկ:

**pound** [paʊnd] n ֆունտ (անգլ. 453 գր.). ֆունտ ստերլինգ (փողի միավոր). a ~ note մեկ ֆունտանոց թղթադրամ:

**pound** [paʊnd] v ծեծել, խփել, թակել. փշրել, մանրել. ~ at the door դռանը ուժգին զարկել. ~ smth in a mortar հավանգի մեջ ինչ-որ բան ծեծել. (ուժգին խփել/բաբախել) His heart was ~ing *Նրա սիրտը ուժգին*

բարախում էր:

**pour** [pɔː] v հորդել, լցնել, թափվել. ~ some coffee սուրճ լցնել. ~ the milk into the jug կաթը սափորի մեջ լցնել. Blood was ~ing Արյունը գալիս էր/թափվում էր. ~ out թափել, դուրս թափել. The crowd was ~ing out Բազմությունը դուրս էր թափվում. *փխբ. օգտ.* ~ cold water on smb's idea մեկի գաղափարի վրա սառը ջուր լցնել. ~ it out all to smn հոգին բացել/դատարկել մեկի առջև. Sunlight ~ed into the room Սենյակը ողողվեց արևի լույսով. Protests ~ed in Բողոքներ տեղացին. It never rains but ~s Դժբախտությունը մենակ չի գալիս, Կարկուտը ծեծած տեղն է ծեծում:

**pourparler** [pʊəˈpaːleɪ] n մախնական բանակցություններ:

**pout** [paʊt] n be in the ~ մեղանալ, փքվել. with a ~ մեղացած, քիթը կախ:

**pout** [paʊt] v խռովել, քիթը կախել. ~ one's lips շրթունքներն ուռցնել, խռովել:

**pouter** [ˈpaʊtə] n փքված/մեղացած/միշտ դժգոհ մարդ:

**poverty** [ˈpɒvəti] n աղքատություն, չքավորություն. live/die in ~ աղքատության մեջ ապրել/մեռնել. sink/fall into ~ աղքատության մեջ ընկնել. a ~ of ideas *փխբ.* մտքերի աղքատություն:

**poverty-stricken** [ˈpɒvəti,stri:kən] a աղքատ, աղքատության մատնված, չքավոր:

**powder** [ˈpaʊdə] n փոշի, դեղափոշի. tooth ~ ատամի փոշի. gun ~ վառող. ~ flask վառողաման. ~ mill վառողի գործարան. ~ magazine վառողի նկուղ. ~ compact դիմափոշաման. ~ room կանացի սենյակ/զուգարան. ~ puff շպարափնջիկ:

**powder** [ˈpaʊdə] v ծեծել, փոշի դարձնել. փոշի ցանել. դիմափոշի քսել. ~ one's face/nose դեմքին/քթին դիմափոշի քսել:

**powdered** [ˈpaʊdəd] a փոշիացրած. ~ milk կաթի փոշի:

**powdery** [ˈpaʊdəri] a փոշենման. a ~ snow մանր. փոշենման ձյուն:

**power** [ˈpaʊə] n ուժ, էներգիա, հզորություն. extraordinary/exceptional ~ արտակարգ/արտասովոր ուժ. electric/nuclear ~ էլեկտրական/միջուկային էներգիա. horse ~ ձիու ուժ. the ~ of an engine շարժիչի ուժը. the ~ of a blow հարվածի ուժը. the ~ of an explosion

պայթյունի ուժը. ~ of imagination երևակայության ուժը. holding ~ զսպող ուժ. ~ station էլեկտրակայան. ~ point վարդակ. (ունակություն) mental ~ մտավոր կարողություն/ունակություն. ~ of speech խոսելու ունակություն. It is not in my ~ Դա իմ ուժերից վեր է. (լիազորություն) ~ of attorney լիազորագիր. emergency ~s արտակարգ լիազորություն. sovereign/supreme ~ գերագույն իշխանություն. (պետություն, տերություն, իշխանություն) the great ~s մեծ պետությունները. come to ~ իշխանության գլուխ գալ. the ~s of the president պրեզիդենտի լիազորությունները. the ~ behind the throne գահի իշխանությունը. the ~ of veto վետոյի իրավունքը. ~ candel էլեկտրական կաթել. ~ cut էլեկտրական հոսանքի անջատում. 64 is the 6<sup>th</sup> ~ of 2 64-ը 2-ի 6-րդ աստիճանն է:

**power-boat** [ˈpaʊəbɔ:t] n մոտորանավակ:

**powerful** [ˈpaʊəfʊl] a ուժեղ, հզոր, զորեղ. a ~ man ուժեղ մարդ. a ~ engine/blow հզոր շարժիչ. ուժեղ հարված. ~ state հզոր տիրություն. a ~ drug ուժեղ ազդող թմրադեղ. a ~ novel *փխբ.* փայլուն վեպ. ~ emotions ուժեղ զգացմունքներ:

**power-house** [ˈpaʊəhaʊs], **power plant** [ˈpaʊəpla:nt] n ուժակայան, էլեկտրակայան:

**powerless** [ˈpaʊələs] a անզոր, անուժ, անկարող.

**power-shovel** [ˈpaʊə,ʃlʌʃ] n արտափորիչ մեքենա, էքսկավատոր:

**power station** [ˈpaʊə,steɪʃn] n ուժակայան, էլեկտրակայան:

**practicable** [ˈpræktikəbl] a իրագործելի, իրական:

**practical** [ˈpræktikl] a գործնական. ~ training/measures գործնական պարապմունքներ/միջոցներ. ~ experience գործնական փորձ/կենսափորձ. a ~ mind/plan պրակտիկ մտածողություն. իրական պլան. a ~ wife/kitchen տնտեսող կին, հարմարավետ խոհանոց. ~ shoes հարմար կոշիկներ. a ~ joke կատակախաղ:

**practically** [ˈpræktikli] adv գործնականորեն, փաստորեն, գործնականում. ~ everybody փաստորեն բոլորը. P~ we had no holiday Մենք համարյա/զրեթե արձակուրդ



չունեցանք:

**practice** [ˈpræktɪs] n գործունեություն, հմտություն, փորձ. վարժվածություն. legal ~ իրավաբանական գործունեություն. in ~ գործնականում. be out of ~ փորձ/վարժվածություն չունենալ. put theory into ~ տեսությունը գործնականում իրականացնել. (բժշկ., իրավ. գործ, աշխատանք) have a large ~ շատ հաճախորդներ ունենալ. set up in ~ մասնավոր գործ հիմնադրել. (սովորություն) in accordance with the usual ~ ինչպես սովորաբար. It is not our ~ Սովորաբար մենք դա չենք անում. sharp ~ խաբեբայություն, խարդախություն. corrupt ~s կաշառակերություն. (վարժանք, մարզում) conversational ~ խոսակցական պրակտիկա. do an hour's ~ մեկ ժամ վարժանք կատարել. be out of ~ անվարժ լինել, հմտությունը կորցնել. football ~ ֆուտբոլի մարզում. a ~ match մրց. մարզման խաղ:

**practician** [prækˈtɪʃn] n պրակտիկ. պրակտիկայով իր գործին տիրապետած մարդ:

**practise** [ˈpræktɪs] v գործնականում կիրառել. իր մասնագիտությամբ աշխատել. գործադրել. երժշ. պարապել, նվագել. ~ a new method/deceit նոր մեթոդ/խաբեություն կիրառել. խաբել. ~ medicine/law բժշկության/իրավագիտությանը զբաղվել. (մարզվել, վարժվել) ~ one's language լեզվի վրա աշխատել. ~ shooting կրակելու մեջ մարզվել. The team ~s on Mondays թիմը մարզվում է երկուշաբթի օրերին:

**practised** [ˈpræktɪst] a փորձված, վարժված. a ~ player փորձված խաղացող. a ~ eye/movement փորձառու աչք. վարժեցված շարժում:

**practising** [ˈpræktɪsɪŋ] a գործող. a ~ doctor աշխատող, գործող բժիշկ. ~ catholic հավատացյալ կաթոլիկ:

**practitioner** [prækˈtɪʃnə] n մասնավոր գործունեությամբ/պրակտիկայով զբաղվող բժիշկ/իրավաբան. general ~ բժշկ. ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկ, թերապևտ:

**pragmatic** [prægˈmætɪk] a փիլ. պրագմատիկ. գործնական բնույթ/կիրառում ունեցող:

**pragmatism** [ˈprægmətɪz(ə)m] n փիլ. պրագմատիզմ:

**prairie** [ˈpreəri] n ընդարձակ տափաստան. մարգագետին. պրերիա (Յարավային Ամերիկայում):

**prairie-schooner** [ˈpreəri,sku:nə] n *ամ. պտմ.* գաղթականների ֆուրգոն:

**praise** [preɪz] 1. n գովասանք, գովեստ, գովք. beyond ~ ամեն գովասանքից վեր. sing the ~ of գովերգել, գովաբանել. keep ~ on smb մեկին անընդհատ գովաբանել. 2. v գովել, գովաբանել. ~ to the skies գովելով երկինք հանել:

**praiseworthy** [ˈpraɪz,wə:di] a գովասանքի արժանի, գովելի, գովական:

**pram** I [præm] n *խսկց.* մանկական սայլակ:

**pram** II [pra:m] n հարթահատակ մավ:

**prance** [pra:ns] 1. n ոստյուն, ցատկում. 2. v սիգարշավել (ձիու մասին). ~ on the grass թռչկոտել խոտերի վրա:

**prank** [præŋk] n կատակ, չարաճծիություն. play ~s կատակներ անել. օյիններ խաղալ.

**prank** [præŋk] v պճնվել, զուգվել, զարդարվել:

**prate** [preɪt] n, v դատարկաբանություն. դատարկաբանել, դատարկախոսել:

**prattle** [ˈprætl] n, v թոթովանք, թոթովում. թոթովել, շատախոսել, շաղակրատել:

**prattler** [ˈprætlə] n թոթովախոս մանկիկ. շատախոս, շաղակրատ:

**pray** [preɪ] v աղոթել. She ~ed it wouldn't happen *փիլս.* Նա խնդրում էր Աստուծոց, որ միայն թե դա չպատահի. ~ be seated Շնորհ արեք, նստեք:

**prayer** [ˈpreɪə] n աղոթք. խնդրանք, աղաչանք. say one's ~s աղոթել. a ~ book աղոթագիրք:

**preach** [pri:tʃ] v քարոզել, խրատել ~ the Gospel/tolerance Ավետարան/հանդուրժողականություն քարոզել. ~ a sermon քարոզ կարդալ:

**preacher** [ˈpri:tʃə] n քարոզիչ:

**preamble** [priˈæmbəl] n առաջաբան, նախաբան. միջազգային պայմանագրի ներածական:

**prearranged** [ˌpri:əˈreɪndʒd] a նախօրոք պլանավորված/պայմանավորված. at a ~ time նախօրոք պայմանավորված ժամին/ժամանակ. The meeting was ~ Յանդիպումը նախօրոք կազմակերպված/նախատեսված էր:

**precarious** [pri'keəriəs] a անհուսալի, անվստահելի, վտանգավոր:

**precaution** [pri'kɔ:ʃn] n նախազգուշություն, նախազգուշացում. take ~s նախազգուշական միջոցներ ձեռք առնել:

**precautionary** [pri'kɔ:ʃnəri] a նախազգուշական:

**precautious** [pri'kɔ:ʃəs] a զգույշ, զգոն:

**precede** [pri'si:d] v նախորդել. the week ~ing the events իրադարձություններին նախորդող շաբաթը:

**precedence** ['presidəns] n նախորդում. have/take ~ of պաշտոնով/կոչմամբ ավելի բարձր լինել. order of ~ ավագության կարգը:

**precedent** ['president] n նախադեպ. create a ~ նախադեպ ստեղծել. There is no ~ Սա նախադեպ չունի:

**preceding** [pri'si:diŋ] a նախորդող, նախորդ:

**precept** ['pri:sept] n ցուցում, հրահանգ, պատվիրան. *հրավ.* գրավոր կարգադրություն:

**preceptor** [pri'septə] n դաստիարակ, ուսուցիչ:

**precinct** ['pri:sɪŋkt] n հողակտոր, տարածք (հատատության կից). *ամ.* ոստիկանական տեղամաս. within the ~s of the church/city եկեղեցու/քաղաքի տարածքում. a shopping ~ առևտրի կենտրոն. electoral ~ ընտրական տեղամաս:

**precious** ['preʃəs] 1. a թանկարժեք. a ~ stone թանկարժեք քար. ~ metals ազնիվ մետաղներ. (թանկագին, սիրելի) my ~ թանկագինս, սիրելիս. get into a ~ mess *խսկց.* դժվարին կացության մեջ ընկնել. 2. adv *խսկց.* չափազանց, սաստիկ, շատ լավ:

**precipice** ['presəpɪs] n անդունդ, գահավեժ:

**precipitant** [pri'sipɪtənt] a սրընթաց, արագընթաց, հապճեպ:

**precipitate** [pri'sipɪtət] n *քիմ.* նստվածք:

**precipitate** [pri'sipɪteɪt] v նետվել, գահավիժել, թափվել. արագացնել. ~ the crisis *փխք.* ճգնաժամն արագացնել:

**precipitation** [pri,sɪpɪ'teɪʃn] n սրընթացություն, գահավեժ արագություն:

**precipitous** [pri'sipɪtəs] a գահավեժ:

**precis** ['preɪsɪ:] n կարճ շարադրում, համառոտ շարադրանք:

**precise** [pri'saɪz] a ճշգրիտ. հստակ. ստույգ. at that ~ moment ճիշտ հենց այդ պահին. ~ measurements ճշգրիտ չափեր/չափումներ:

**precision** [pri'sɪzn] n ճշգրտություն. ~ instruments ճշգրիտ գործիքներ:

**preclude** [pri'klu:d] v կանխել. խանգարել, արգելել. ~ all doubts փարատել բոլոր կասկածները. ~ smn from joining խանգարել/խոչընդոտել մեկին միանալ:

**precocious** [pri'keʊʃəs] a վաղահաս. a ~ child տարիքից շուտ հասունացած/ զարգացած երեխա:

**precocity** [pri'kɔsəti] n վաղածամ զարգացում վաղահասություն:

**preconceived** [,pri:kən'si:vd] a կանխակալ. a ~ idea կանխակալ կարծիք:

**precondition** [,pri:kən'di:ʃn] n պարտադիր պայման:

**precursor** [pri'kɔ:sə] n նախազուլակ, ավետաբեր:

**precursory** [pri'kɔ:səri] a նախազուլակ, կանխազուլակ:

**predator** ['predətə] n գիշատիչ կենդանի:

**predatory** ['predətəri] a գիշատիչ. *փխք.* հափշտակիչ, կողոպտիչ. ~ instincts/habits գիշատիչ բնազդներ/վարքագիծ, սովորույթներ:

**predecease** [,pri:di'si:s] v նախորդել:

**predecessor** ['pri:dɪsə] n նախորդ, նախահայր, նախնի:

**predestination** [pri:,desti'neiʃn] n նախասահմանում, բախտ, ճակատագիր:

**predestine** [pri:'destɪn] v նախասահմանել:

**predestined** [pri:'destɪnd] a նախասահմանված. He seemed ~ to succeed ճակատագիրը նրան հաջողություն է նախասահմանել:

**predicament** [pri'dɪkəmənt] n տհաճ դրություն, անախորժություն. be in a ~ անհարմար վիճակում լինել:

**predicate** ['predɪkət] n *քեր.* ստորոգյալ:

**predicate** ['predɪkeɪt] v հաստատել. *քեր.* ստորոգել:

**predication** [,predɪ'keɪʃn] n *քեր.* ստորոգում:

**predicative** [pri'dɪkətɪv] n *քեր.* անվանական մաս, ստորոգելիական վերադիր:

**predict** [pri'dɪkt] v գուշակել, կանխազուլա-

կել:  
**predictable** [priˈdɪktəbl] a գուշակելի, կանխատեսելի:  
**prediction** [priˈdɪkʃn] n գուշակում, կանխագուշակում:  
**predilection** [ˌpriːdiˈlekʃn] n նախասիրություն, հակում:  
**predispose** [ˌpriːdiˈspəʊz] v նախատրամադրել, տրամադրել:  
**predisposition** [ˌpriːdispəˈziʃn] n նախատրամադրություն:  
**predominance** [priˈdɒmɪnəns] n գերակշռություն:  
**predominant** [priˈdɒmɪnənt] a գերակշռող, գերակշիռ. ~ characteristics/features գերակշռող բնորոշ գծերը:  
**predominate** [priˈdɒmɪneɪt] v գերակշռել, գերիշխել, իշխել:  
**pre-eminent** [priˈeɪmɪnənt] a նշանավոր, աչքի ընկնող:  
**preemptive** [priːˈemptɪv] a նախապատվելի:  
**pre-establish** [ˌpriːɪsˈtæblɪʃ] v նախահամանել:  
**prefab** [ˈpriːfæb] n *խսկց.* քանդակ/հավաքովի իր/առարկա:  
**prefabricated** [ˌpriːˈfæbrɪkeɪtɪd] a հավաքովի. a ~ house հավաքովի տուն:  
**preface** [ˈprefəs] n նախաբան, ներածական մաս:  
**prefatory** [ˈprefətəri] a ներածական, նախաբանի:  
**prefer** [priˈfɜː] v գերադասել, նախընտրել. ~ coffee սուրճ նախընտրել. ~ to remain silent նախընտրել լուռ մնալ. ~ charges against smb *իրավ.* մեկի դեմ մեղադրանք ներկայացնել:  
**preferable** [ˈprefrəbəl] a գերադասելի, նախապատվելի:  
**preferably** [ˈprefrəbli] adv գերադասելով, նախընտրելով:  
**preference** [ˈprefrəns] n նախապատվություն, նախապատվության իրավունք. give smb ~ մեկին նախապատվություն տալ. have no particular ~ միևնույնը լինել. ~ share արտոնյալ բաժնետոմս:  
**preferential** [ˌprefəˈrenʃl] a գերադասելի. *տնտ.* արտոնյալ. buy on ~ terms արտոնյալ գներով գնել:

**preferment** [priˈfɜːmənt] n գերադասում. նախապատվություն տալը. պաշտոնի բարձրացում:  
**prefix** [ˈpriːfɪks] n *քեր.* նախածանց:  
**pregnancy** [ˈpregnənsɪ] n հղիություն (*նաև փխբ.*):  
**pregnant** [ˈpregnənt] a հղի, հետևանքներով հղի. a ~ silence *փխբ.* բազմանշանակ լռություն. words ~ with meaning իմաստալից բառեր:  
**preheat** [ˌpriːˈhi:t] v նախօրոք տաքացնել:  
**prehistoric** [ˌpriːhiˈstɒrɪk] a նախապատմական:  
**prejudge** [ˌpriːˈdʒʌdʒ] v կանխավճռել, կանխորոշել. ~ the issue կանխորոշել հարցը:  
**prejudice** [ˈpredʒʊdɪs] n կանխակալ կարծիք. նախապաշարմունք. without ~ անկանխակալ ձևով. *իրավ.* վնաս չպատճառելով. racial ~ ռասայական նախապաշարմունք steeped in ~ նախապաշարմունքով լի. in ~ of, to the ~ of *իրավ.* ի վնաս. to the ~ of smb ի վնաս մեկի:  
**prejudice** [ˈpredʒʊdɪs] v նախատրամադրել. ~ smb against smb/smith տրամադրել մեկի/մի բանի դեմ. ~ smb in favour of ի օգուտ մեկի/մի բանի տրամադրել. be ~d against smn մեկի դեմ տրամադրված լինել. ~ smn's chances of success մեկի հաջողությանը վնասել/խանգարել:  
**prejudicial** [ˌpredʒuˈdɪʃl] a վնասակար, կործանարար. ~ to smb's interests վնասակար մեկի շահերի համար:  
**prejudiced** [ˈpredʒədɪst] a նախապաշարված, նախատրամադրված:  
**prelate** [ˈprelət] n բարձրաստիճան հոգևորական, պրելատ. *ամ.* քահանա:  
**preliminar/y** [priˈlɪmɪnri] **1.** a նախնական, սկզբնական. **2.** n նախապատրաստական միջոցառում. ~ies նախնական բանակցություններ/*ամ.* ընտրական համակարգ/նախնական ընտրություններ. ~ hearing/investigation *իրավ.* նախնական դատաքննություն, նախաքննություն:  
**prelude** [ˈpreljʊːd] n նախաբան, ներածական. *երժշ.* նախերգանք, պրելյուդիա:  
**premarital** [priːˈmæɪtɪl] a նախամուսնական:  
**premature** [ˈpremətʃə] a վաղաժամ, վաղա-

հաս ~ baldness վաղահաս ճաղատություն. a ~ baby վաղածին/օրապակաս երեխա. ~ optimism վաղածամ լավատեսություն:

**prematurely** [ˈpremətʃəli] adv հապճեպ, շտապ, վաղաժամ:

**premeditated** [pri:ˈmediteɪtɪd] a կանխամտածված, դիտավորյալ (*նաև իրավ.*):

**premeditation** [pri:ˈmediˈteɪʃn] n կանխամտածվածություն. դիտավորություն:

**premier** [ˈpremiə] a, n առաջին. վարչապետ, պրեմիեր մինիստր:

**premiere** [ˈpremiə] n *թատր.* առաջնախաղ ներկայացում, պրեմիերա:

**premise** [ˈpremis] 1. n նախադրյալ. ~s շենք, տուն, հիմք. business ~s ծառայողական շենք. be consumed on the ~ տարլցովի / բաժակածախ վաճառք. 2. v նախակցել, նախադրել:

**premium** [ˈpri:miəm] n դրամական պարգև. ապահովագիր. insurance ~ ապահովագրման պարգև. ապահովագիր. ~ bond խաղարկության տոմս. put a ~ on քաջալերել, խրախուսել. *ֆին.* հավելվածար Flats are at a ~ now *փխք.* Այսօր բնակարանների մեծ պահանջ կա:

**premonition** [ˌpreməˈniʃn] n նախազգացում, նախազուլշացում. have a ~ նախազգալ. have a ~ of disaster դժբախտություն նախազգալ/նախազգացում ունենալ:

**premonitory** [priˈmɒnitəri] a նախազգուշացնող:

**prenatal** [ˌpri:ˈneɪtəl] a նախածննդաբերական:

**prentice** [ˈprentɪs] n աշակերտ, աշկերտ:

**preoccupation** [pri:ˈɒkjʊˈpeɪʃn] n մտահոգություն, մտահոգվածություն. ցրվածություն, անուշադրություն. forget in ~ ցրվածությունից մոռանալ. one's chief ~ գլխավոր/հիմնական հոգսը:

**preoccupied** [priˈɒkjʊpaɪd] a մտքերով տարված, մտահոգ, մտահոգված. be ~ with մտահոգված/զբաղված լինել:

**preoccupy** [priˈɒkjʊpaɪ] v մտահոգել, ուշադրությունը զբաղեցնել/զրավել:

**pre-ordain** [ˌpri:ɔːˈdeɪn] v կանխորոշել, նախորոշել:

**prep** [prep] n *խսկց.* նախապատրաստական դպրոց. *խսկց.* դպրոց. առաջադրանք. do one's ~ դասերն անել:

**prepackaged, prepacked** [ˌpri:ˈpækɪdɪd, ˌpri:ˈpækt] a նախօրոք կշռափաթեթավորած:

**prepaid** [ˌpri:ˈpeɪd] a նախօրոք վճարված. ~ carriage վճարված տեղափոխում. ~ reply նախավճարված պատասխան:

**preparation** [ˌprepəˈreɪʃn] n նախապատրաստություն. պատրաստություն. պատրաստում. without ~ հանպատրաստից, առանց նախապատրաստվելու. A new play is in ~ Նոր ներկայացում է նախապատրաստվում. ~ for an exam քննության նախապատրաստում. (պատրաստուկ, պրեպարատ) the ~ of a medicine դեղի պատրաստում. ~s for a party երեկույթի նախապատրաստում. in ~ for նկատի ունենալով:

**preparatory** [priˈpærətəri] n նախապատրաստական:

**prepare** [priˈpeə] v պատրաստ(վ)ել. նախապատրաստել. ~ food/dinner ուտելիք/ճաշ պատրաստել. ~ a lesson դասը պատրաստել. ~ a surprise անակնկալ պատրաստել. ~ for exams քննություններին պատրաստվել:

**prepared** [priˈpeəd] a պատրաստ. ~ to help օգնության պատրաստ. not to be ~ պատրաստ չլինել:

**preparedness** [priˈpeədnəs] n պատրաստություն, պատրաստվածություն:

**prepay** [ˌpri:ˈpeɪ] v նախօրոք վճարել:

**preponderance** [priˈpɒndərəns] n գերակշռություն, առավելություն:

**preponderant** [priˈpɒndərənt] a գերակշիռ, գերակշռող:

**preponderate** [priˈpɒndəreɪt] v գերակշռել, գերակշռություն ունենալ. գերազանցել, բարձր լինել:

**preposition** [ˌprepəˈzɪʃn] n *քեր.* նախդիր:

**prepositional** [ˌprepəˈzɪʃnəl] a նախդրային, նախդրավոր:

**prepossess** [ˌpri:pəˈzes] v ներշնչել. տիրել, համակել. նախատրամադրել, տրամադրություն ստեղծել:

**prepossessing** [ˌpri:pəˈzesɪŋ] a գրավիչ, հրապուրիչ. համակրանք շարժող. համակրելի. be not ~ գրավիչ չլինել:

**prepossession** [ˌpri:pəˈzeɪʃn] n նախատրամադրվածություն. կանխակալ կարծիք:

**preposterous** [priˈpɒstərəs] a անմիտ, անհեթեթ, աղավաղված:

**prerequisite** [pri:'rekwəzɪt] n անհրաժեշտ նախապայման, նախադրյալ:  
**prerogative** [pri:'rɒɡətɪv] n արտոնություն, բացառիկ իրավունք, բացառիկություն:  
**presage** ['presɪdʒ] n նախագուշակել, կանխագուշակել. նախագագում ունենալ:  
**presbyter** ['prezbɪtə] n քահանա, երեց:  
**preschool** [ˌpri:'sku:l] a նախադպրոցական. ~ age նախադպրոցական հասակ:  
**prescribe** [pri:'skraɪb] v նշանակել (դեղ) ~ a course of treatment բուժման կուրս նշանակել. ~d textbooks պարտադիր գրականություն:  
**prescript** ['pri:skript] n հրաման, կարգադրություն:  
**prescription** [pri:'skrɪpʃn] n բժշկ. դեղատոմս. write/make out a ~ դեղատոմս գրել. make up a ~ դեղատոմսով դեղ պատրաստել:  
**prescriptive** [pri:'skrɪptɪv] a հրահանգչական, կարգադրողական:  
**presence** ['preznəs] n ներկայություն. at smb's ~ մեկի ներկայությամբ. the ~ of mind հոգու արիություն, սառնասրտություն make one's ~ felt իր ներկայության մասին տեղեկացնել/զգացնել տալ:  
**presence-chamber** ['preznəs,tʃeɪmbə] n ընդունարան:  
**present I** ['preznt] n ներկա ժամանակ. *քեր.* ներկա ժամանակը. at ~ այժմ, ներկայումս. for the ~ առայժմ, այս անգամ. those ~ ներկաները:  
**present II** ['preznt] n նվեր, ընծա. make a ~ նվիրել:  
**present** ['preznt] a ներկա, ժամանակակից, արդիական. in the ~ case տվյալ դեպքում. be ~ at a meeting ժողովին ներկա լինել. the ~ government ներկայիս կառավարությունը:  
**present** [pre'zent] v նվիրել, ընծայել. տալ, հանձնել, ներկայացնել. ~ a bouquet ծաղկեփունջ նվիրել. ~ a prize/a cup մրցանակ/գավաթ հանձնել. (ներկայացնել) May I ~ my brother Կարո՞ղ եմ ներկայացնել եղբորս. ~ a report/thesis զեկուցում/թեզ ներկայացնել. ~ a problem (իրենից) պրոբլեմ ներկայացնել. ~ evidence ապացույցներ ներկայացնել. ~ some interest որոշ հետաքրքրություն ներկայացնել. ներկայացնել, ցույց տալ (փաստաթուղթ) one's passport/tickets անձնագիրը

ներկայացնել, տոմսերը ցույց տալ. ~ a petition հանրագիր տալ. ~ a cheque for payment վճարելու համար չեկ ներկայացնել:

**presentable** [pri:'zentəbl] a ներկայանալի, վայելուչ, պատշաճ:

**presentation** [ˌprezn'teɪʃn] n հանձնում. *թատր.* ներկայացում. մատուցում. ~ of prizes մրցանակների հանձնում. (նվիրելը) ~ of a clock ժամացույց նվիրելը. (համառոտ շարադրանք) the ~ of a case/ideas դեպքի/մտքերի համառոտ շարադրանք. ~ of food ճաշատեսակների ձևավորում/մատուցում. (շնորհանդես) ~ of a new book նոր գրքի շնորհանդես:

**present-day** [ˌprezn'tdeɪ] n ժամանակակից, այսօրվա.

**presentee** [ˌprezn'ti:] n նվեր ստացողը:

**presentiment** [pri:'zentɪmənt] n նախագագում:

**presently** ['prezntli] adv շուտով. քիչ ժամանակ անց. այժմ, հիմա:

**preservation** [ˌprezə'veɪʃn] n պահպանում. պաշտպանություն. the ~ of historic buildings պատմական կառույցների պահպանում. the ~ of wild life բնության պահպանում:

**preservative** [pri:'zə:vətɪv] a պահպանական, նախապաշտպանական:

**preserve** [pri:'zə:v] n պահարան արագ փչացող մթերքների համար. ~s պահածո մուրաբա. (արգելոց) a game ~ որսարգելոց:

**preserve** [pri:'zə:v] v պահել, պահպանել. պաշտպանել. ~ an old building պահպանել հին շենքը. ~ from harm դժբախտությունից պահպանել. The painting is well-~d Նկարը լավ է պահպանվել:

**preserved** [pri:'zə:vd] a պահածոյացված:

**preside** [pri:'zaɪd] v նախագահել:

**presidency** ['prezɪdənsɪ] n նախագահություն:

**president** ['prezɪdənt] n նախագահ, պրեզիդենտ. ~ elect ընտրված, բայց դեռ պաշտոն չստանձնած պրեզիդենտ:

**presidential** [ˌprezi'denʃl] a նախագահական. ~ elections նախագահական ընտրություններ. a ~ candidate նախագահական պաշտոնի թեկնածու:

**presidium** [pri:'sɪdɪəm] n նախագահություն (կազմ):

**press** [pres] n մամուլ, պարբերական հրա-

տարակույթություններ, լրագրություն. yellow ~ ծախու մամուլ. gutter ~ բուլվարային մամուլ. the freedom/liberty of the ~ մամուլի ազատություն. (հրատարակչություն) Cambridge University ~ Քենբրիջի համալսարանի հրատարակչություն. ~ agency/box/cuttings մամուլի գործակալություն/օթյակ. կտրածուներ լրագրերից. (տպագրում) be in the ~ տպագրվել. (հրմշտոց. մամուլ) a ~ at the entrance հրմշտոց մուտքի մոտ. get lost in the ~ ամբոխի մեջ ելքը չգտնել/մոլորվել. (մեքենա, մեխանիզմ) typing ~ տպագրիչ մեքենա. wine ~ խաղողի մամուլիչ. give a ~ արդուկել. in the ~ of business գործերի ճնշման տակ. (պահարան) linen ~ սպիտակեղենի պահարան:

**press** [pres] v սեղմել. ~ the button/trigger կոճակը/ծգանը սեղմել. ~ to one's breast կրծքին սեղմել. ~ smn's hand ձեռքը սեղմել. ~ a cork into a bottle խցանը շշի մեջ մտցնել. (ճզմելով քամել, մզել) ~ juice հյութ քամել. ~ grapes/olives խաղող/ծիթապտուղ քամել. ~ flowers ծաղիկներ չորացնել. ~ trousers տաբատ արդուկել. (շտապեցնել, շտապել) ~ for an answer շտապ պատասխան պահանջել. ~ one's claims պնդել պահանջների վրա. be ~ed by creditors պարտատերերի ճնշման տակ լինել. ~ed for time ժամանակը չբավականացնել. ~ the enemy/opponents ճնշել թշնամուն/հակառակորդներին. ~ for higher wages պահանջել բարձր աշխատավարձ:

**press-agency** ['pres,eidʒənsi] n գովազդային գործակալություն:

**press-agent** ['pres,eidʒənt] n գովազդային գործակալ:

**press-gallery** ['pres,gæləri] n մամուլի ներկայացուցիչների տեղերը:

**pressing** ['presɪŋ] a շտապ, հրատապ. անհետաձգելի. համառ, ստիպողական. ~ debts անհետաձգելի պարտքեր. ~ business շտապ գործ. a ~ need հրատապ պահանջ. be ~ պնդել, ճնշել:

**pressman** ['presmæn] n թղթակից, լրագրող:

**pressure** ['preʃə] n ճնշում (*մաև փխր.*). high/low ~ բարձր/ցածր ճնշում. financial ~ դրամական սղություն. under ~ ճնշման տակ. put ~ upon ճնշում գործադրել. atmospheric/blood ~ մթնոլորտային/արյան

ճնշում. the ~s of modern life ժամանակակից կյանքի գերբեռնումը. ~ cooker արագաեփ կաթսա. ~ gauge *տեխ.* ճնշաչափ. ~ group մախածեմող խումբ:

**pressurize** ['preʃəraɪz] v հերմետիկացնել, հերմետիզացիայի ենթարկել. be ~ed *փխր.* ճնշում գործ դնել:

**prestige** [pre'sti:ʒ] n վարկ, հեղինակություն:

**prestigious** [pres'tidʒəs] a հեղինակավոր. ազդեցիկ. բարձր վարկանիշ ունեցող:

**presumable** [pri'zju:məbl] a հնարավոր, հավանական:

**presumably** [pri'zju:məbli] adv հավանաբար, ենթադրաբար:

**presume** [pri'zju:m] v ենթադրել, ընդունել, համարել. Let us ~ that... ենթադրենք, որ... ~ on one's good nature օգտվել մեկի բարությունից/չարաշահել. I wouldn't ~ Չէի համարձակվի. ~ too much իրեն շատ բան թույլ տալ:

**presumedly** [pri'zju:midli] adv ենթադրաբար, հավանաբար:

**presumption** [pri'zʌmpʃn] n ենթադրություն. *փիլ.* կանխավարկած. *իրավ.* ~ of innocence անմեղության կանխավարկած:

**presumptive** [pri'zʌmpʃtɪv] a ենթադրական, հավանական:

**presumptuous** [pri'zʌmpʃʊəs] a հանդուգն, ամբարտավան:

**presuppose** [ˌpri:sə'pəʊz] v ենթադրել:

**presupposition** [ˌpri:sʌpə'ziʃn] n ենթադրություն, նախադրյալ:

**pretence** [pri'tens] n կեղծիք, շինծու բան. false ~s խաբեություն, կեղծիք. (պատրվակ, կեղծ պատճառաբանություն) under the ~ of helping/being tired օգնելու/հոգնած լինելու պատրվակով:

**pretend** [pri'tend] v ձևանալ. ձևացնել. ~ to be ill/asleep հիվանդ/քնած ձևանալ. ~ to be ignorant անտեղյակ ձևանալ. (հավակնել) I don't ~ to be a painter Ես նկարչի հավակնություն չունեմ:

**pretended** [pri'tendɪd] a շինծու, կեղծ, երևակայական. պահանջվող:

**pretender** [pri'tendə] n հավակնորդ:

**pretense** [pri'tens] n պատրվակ. կեղծիք, շինծու բան:

**pretension** [pri'tenʃn] n պահանջ, հավակնություն. have no ~s ոչ մի պահանջ/հավակ-

նություն չունենալ:  
**pretentious** [pri'tenʃəs] a հավակնոտ, պահանջկոտ:  
**preterite** ['pretərit] n *քեր.* անցյալ ժամանակի ձևը:  
**preternatural** [ˌpri:tə'nætʃrəl] a գերբնական:  
**pretext** ['pri:tekst] n պատրվակ, կեղծ պատճառաբանություն. on the ~ of պատրվակով:  
**prettiness** ['prɪtɪnəs] n սիրունատեսություն:  
**pretty** ['prɪti] a գրավիչ, սիրունատես, լավիկ. ~ girls սիրունատես/գրավիչ/համակրելի աղջիկներ. ~ ring/dress գեղեցիկ մատանի/հագուստ. (բավական մեծ, կլորիկ) a ~ sum կլորիկ գումար. a ~ mess *խսկց.* բավական մեծ անախորժություն. A ~ state of affairs! Այ՛քեզ վիճակ:  
**pretty** ['prɪti] adv բավականին. That's ~ good Դա բավականին լավ է/վատ չէ. ~ tired բավականին հոգնած. do ~ well at exams բավականին հաջող հանձնել քննությունները. that's ~ much/well համարյա, գրեթե:  
**prevail** [pri'veil] v իշխել, տիրել. գերակշռել. Common sense ~ed Ողջամտությունը գերակշռեց. ~ over one's enemies հաղթել թշնամիներին. ~ upon smn մեկին համոզել:  
**prevailing** [pri'veilɪŋ] a գերիշխող. տարածված:  
**prevalence** [ˈprevələns] n գերակշռություն:  
**prevalent** [ˈprevələnt] a գերակշիռ. գերիշխող. լայն տարածված:  
**prevaricate** [pri'værikeit] v խուսափել, կեղծել:  
**prevent** [pri'vent] v կանխել, առաջն առնել. խանգարել, խոչընդոտել. ~ a war/catastrophe կանխել պատերազմներ/աղետներ. ~ crime խոչընդոտել/խանգարել ոճիրի իրագործմանը. The rain ~ed us Անձրևը մեզ խանգարեց:  
**prevention** [pri'venʃn] n կանխում, խանգարում. ~ of accidents անվտանգության տեսնակա. crime ~ հանցա-կանխում:  
**preventive** [pri'ventɪv] n նախազգուշական, նախապաշտպանական. կանխիչ. ~ measures նախազգուշական միջոցներ. ~ medicine կանխիչ բժշկություն:  
**preview** ['pri:vju:] n նախնական (փակ)

դիտում:  
**previous** ['pri:vɪəs] 1. a նախորդ, նախորդող. ~ years նախորդ տարիները. ~ experience նախնական փորձ. ~ history նախապատմություն. ~ convictions դատվածություն անցյալում. ~ case history հիվանդության պատմություն. (վաղաժամ, կանխահաս) a bit ~ մի փոքր վաղաժամ. 2. ~ to prep, adv մինչև, նախքան, առաջ. ~ to going home նախքան տուն գնալը. ~ to his illness հիվանդանալուց առաջ:  
**previously** ['pri:vɪəslɪ] adv նախապես, նախորդ:  
**prevision** [pri'vɪʒn] n կանխատեսություն, նախատեսություն:  
**pre-war** [ˌpri:'wɔ:] a նախա-/մինչպատերազմյան:  
**prey** [preɪ] n որս, ավար, զոհ. birds of ~ զիշատիչ թռչուններ. fall a ~ to զոհ դառնալ. a ~ to anxiety *փխք.* հոգսերի զոհ:  
**prey** [preɪ] v որս անել, որսալ, բռնել. կողոպտել, թալանել. keep ~ing *փխք.* հետապնդել:  
**price** [praɪs] n գին. high/low/moderate ~ բարձր/ցածր/չափավոր գին. cash ~ վաճառքի գին. ceiling ~s չափազանց բարձր/ուռճացրած գներ. fixed ~s կայուն գներ. cost ~ ինքնարժեք. trade ~ գործարանային գին. cut ~s գներն իջեցնել. at any ~ ամեն գնով. above/beyond ~ անգին, շատ թանկագին. rise in ~ գնի բարձրացում. reduce the ~ գինն իջեցնել/պակասեցնել/էժանացնել. pay high ~ մեծ/բարձր գին վճարել. reduced ~s իջեցված գներ. ~ index գների համաթիվ. ~ list գնացուցակ. at the ~ of գնով. ~ control գների հսկողություն. ~ cutting գների իջեցում. not to be in one's ~ range գրպանին հարմար չլինել, հնարավորություններից դուրս լինել:  
**price** [praɪs] v գնահատել, գին նշանակել. ~ goods ապրանքներ գնահատել. ~ out of the market շատ բարձր գներ, շատ քչերին մատչելի:  
**priceless** ['praɪsləs] a անգին, անգնահատելի:  
**priced** ['praɪsɪ] a *խսկց.* թանկավուն. a bit ~ մի փոքր թանկավուն:  
**prick** [prɪk] n խայթ, խայթոց, ծակոց. (վարդի) փուշ. ~ of a needle ասեղի ծակոց. ~ of conscious խղճի խայթ:

**prick** [prik] v ծակել, խոցել, խայթել. ~ one's finger մատը ծակել. ~ a balloon փուչիկը ծակել. ~ out plants բույսեր տնկել. His conscious ~ed him *փխբ.* Խիղճը նրան տանջում էր:

**prick-eared** [ˌprikˈiəd] a ցցված ականջներով. սրականջ (շուն):

**prick-ears** [ˌprikˈiəz] n սուր/ցցված ականջներ (շուն). *փխբ.* ականջները լարած/սրած:

**prickle** [ˈprikəl] n 1. փուշ, ասեղ (կենդանու). 2. v ծակել. ծակոց զգալ. *փխբ.* հրահրել, զրգռել:

**prickly** [ˈprikli] a փշոտ, ծակող. a ~ beard ծակող միրուք. ~ roses փշոտ վարդեր. a ~ subject ցավոտ հարց/թեմա:

**pride** [praɪd] n հպարտություն. take ~ in հպարտանալ. hurt/injure smb's ~ խոցել/վիրավորել մեկի հպարտությունը. have no (proper) ~ (ոչ մի) հպարտություն չունենալ. false ~ զոռոզություն, սնապարծություն. pocket one's ~ ~ վիրավորանքը կուլ տալ. հաղթահարել/ճնշել հպարտությունը:

**pride** [praɪd] v ~ oneself on հպարտանալ. He ~s himself on his French Նա հպարտանում է իր ֆրանսերենով:

**priest** [pri:st] n քահանա, քուրմ, քրմապետ:

**prig** [prɪg] n բժախնդիր/մանրակրկիտ մարդ. *խսկց.* ինքնագոհ, ինքնահավան:

**priggish** [ˈprɪɡɪʃ] a պեղանտ, ինքնագոհ:

**prim** [prɪm] a խստաբարո, բժախնդիր. ~ and proper ձգված, անբնական:

**primacy** [ˈpraɪməsi] n առաջնություն. *եկեղ., կրոն.* առաջնորդարան:

**primadonna** [ˌpri:məˈdɒnə] n օպերայի գլխավոր երգչուհի:

**primal** [ˈpraɪməl] a նախնական. հիմնական, գլխավոր:

**primarily** [ˈpraɪmərəli] adv հիմնականում, գլխավորապես:

**primary** [ˈpraɪməri] n հիմնական (գույն). *ամ. քղք.* նախնական ընտրություններ. *աստղ.* մոլորակ. *էլ.* առաջնային հոսանքի կոճ. *երկրք.* առաջնային. ~ cause հիմնական պատճառ. ~ meaning սկզբնական իմաստ. ~ concern առաջնակարգ խնդիր. of ~ importance առաջնահերթ կարևորություն ունեցող. ~ education տարրական կրթություն. ~ school տարրական դպրոց. ~ colours հիմնական գույներ:

**prime** [praɪm] n ծաղկում, փթթում. in one's ~, in the ~ of life ուժերի ծաղկման շրջանում. (սկիզբ, այգաբաց) the ~ of the year *փխբ.* գարուն:

**prime** [praɪm] a հիմնական, կարևոր. the ~ reason հիմնական/գլխավոր պատճառ. a ~ advantage հիմնական առավելություն. ~ number *մաթ.* հասարակ/պարզ թիվ. ~ minister վարչապետ. (լավագույն) ~ beef բարձրակարգ միս. a ~ example փայլուն օրինակ. in ~ condition գերազանց վիճակում:

**prime** [praɪm] v նախաներկել, պաստառաներկել. ~ walls պատերը նախաներկել. ~ canvas պաստառաներկել. well ~d լավ նախապատրաստված. (լցնել) ~ with drink խմեցնել:

**primer** [ˈpraɪmə] n այբբենարան, տարրական դասագիրք:

**primeval** [praɪˈmi:vəl] a նախնադարյան:

**primitive** [ˈprɪmətɪv] a պարզունակ, հասարակ, նախնադարյան. *փխբ.* պարզ, հասարակ. *արվ.* պրիմիտիվ. ~ tools/tribes նախնադարյան գործիքներ/ցեղեր:

**primordial** [praɪˈmɔ:diəl] a վաղեմի, նախասկզբնական:

**primp** [prɪmp] v ճաշակով հագնվել:

**primrose** [ˈprɪmrɔ:z] n *բսբ.* գարնանածաղիկ, գինարբուկ:

**prince** [prɪns] n արքայազն, արքայորդի. իշխան. the prince of Wales Ուելսի իշխանը. P~ Consort թագուհու ամուսինը:

**princely** [ˈprɪnsli] a արքայական, արքայավայել. հոյակապ, շքեղ: live in ~ style *կտկ.* թագավորի պես ապրել. a ~ sum հսկայական գումար:

**princess** [ˌprɪnˈses] n արքայադուստր. իշխանուհի. իշխանադուստր:

**principal** [ˈprɪnsəpl] 1. n պետ, գլխավոր, տեր, տնօրեն. ~ of school դպրոցի տնօրեն. ռեկտոր (համալսարանի). the ~s *թատր.* առաջատար դերասանները. *ֆին.* հիմնական կապիտալ, ընդհանուր գումար. 2. a գլխավոր, հիմնական, առաջատար:

**principally** [ˈprɪnsəpli] adv գլխավորապես, առավելապես:

**principle** [ˈprɪnsəpl] n սկզբունք. օրենք. a matter of ~ սկզբունքի հարց. a man of ~ սկզբունքային մարդ. on ~ սկզբունքից ելնելով. guiding ~ ուղեմիջ սկզբունք. make a ~



սկզբունք/օրենք դարձնել. in ~ սկզբունքորեն. the ~ of relativity հարաբերականության օրենք. the first ~s of հիմունքները:

**prink** [ˈprɪŋk] v զուգվել, զարդարվել:

**print** [prɪnt] n դրոշմ, հետք. (տպագրում) be in ~ տպագրության մեջ լինել. out of ~ սպառված լինել (գիրք և այլն). (տպատառ, տառ) bold/small ~ խոշոր/մանր տպատառ. blue ~ լուսապատճեն. *արվ.* փորագրանկար. էստամպ. *լսնկ.* լուսանկար. ~ maker նկարիչ - փորագրող, փորագրանկարիչ. *հմկրգ.* ~ head տպող գլխիկ. ~ needle տպող ասեղ. ~ quality տպագրության որակ. ~ server տպագրության կայան/պրոցեսոր:

**print** [prɪnt] v տպել, հրատարակել. դրոշմել. *լսնկ.* արտատպել. դաջել, դաջանախշել:

**printed** [ˈprɪntɪd] a տպագրական, տպագրված. ~ cotton չիթ. ~ matter տպագրված նյութ:

**printer** [ˈprɪntə] n տպագրիչ. ~'s ink տպագրական ներկ:

**printer plotter** [ˈprɪntəˈplɒtə] *հմկրգ.* գրաֆիկական տպիչ/պրինտեր:

**printing** [ˈprɪntɪŋ] n տպագրական գործ., տպագրություն. a ~ office/works տպարան. (տպաքանակ) a ~ of 1000 copies 1000 տպաքանակ:

**printing-press** [ˈprɪntɪŋpres] n տպագրական մեքենա. տպագրահաստոց:

**print-shop** [ˈprɪntʃɒp] n փորագրանկարների խանութ:

**prior** [ˈpraɪə] n վանահայր, արքա:

**prior** [ˈpraɪə] a նախնական, նախորդ. ~ commitment նախնական պայմանավորվածություն. without ~ warning առանց նախօրոք նախազգուշացման. have ~ knowledge նախնական գիտելիք ունենալ:

**prior** [ˈpraɪə] prep, adv նախքան, առաջ. մինչև. ~ to the game մինչև խաղը, խաղից առաջ. ~ to making a decision նախքան որոշում ընդունելը:

**priorit/y** [praɪˈɔrəti] n առաջնություն. առաջնահերթություն, հերթականություն. in order of ~ հերթականությամբ. ~ies right հերթականության կարգը. give top ~ առաջնահերթությունը տալ:

**priory** [ˈpraɪəri] n մենաստան:

**prism** [ˈprɪz(ə)m] n հատվածակողմ, պրիզ-

մա:

**prison** [ˈprɪzn] n բանտ. put in ~ բանտ նստեցնել, բանտարկել. cast into ~ բանտ նետել. break ~ բանտից փախչել. ~ break փախուստ բանտից. be in ~ բանտում լինել. ~ camp բանտարկյալների ճամբար:

**prison-breaker** [ˈprɪzn,breɪkə] n բանտից փախած անձ:

**prisoner** [ˈprɪznə] n բանտարկյալ. state/political ~ քաղաքական բանտարկյալ. take ~ գերել, գերի վերցնել. ~s of war պատերազմի գերիներ. a ~ to one's chair աթոռին գամված հաշմանդամ:

**privacy** [ˈprɪvəsi] n մենություն, առանձնացածություն. առանձնություն. in the ~ of one's house իր տանը. invade smb's ~ առանձնությունը խախտել. There is no ~ in a hostel/in a large family Յանրակացարանում/Մեծ ընտանիքում առանձնություն չկա (դժվար է իր կյանքով ապրել):

**private** [ˈpraɪvət] n (*նաև* ~ soldier) *նզմ.* շարքային զինվոր:

**private I** [ˈpraɪvət] a գաղտնի, թաքուն. in ~ գաղտնաբար, գաղտնի. speak in ~ առանձին խոսել. held a meeting in ~ փակ ժողով անցկացնել:

**private II** [ˈpraɪvət] a անձնական, մասնավոր. ~ enterprise մասնավոր ձեռնարկություն. ~ opinion անձնական կարծիք. ~ life անձնական կյանք. ~ property մասնավոր սեփականություն. a strictly ~ matter խիստ անձնական գործ. ~ sector մասնավոր հատված. a ~ secretary անձնական քարտուղար. a ~ school մասնավոր դպրոց. a ~ detective մասնավոր խուզարկու. P~ and Confidential (նամակի վրա) անձամբ հանձնել. ~ international law միջազգային անձնական իրավունք. We're not ~ here Մենք այստեղ մենակ չենք. ~ individual մասնավոր անձ. a ~ viewing փակ դիտում. *հմկրգ.* ~ circuit քողարկված/մասնավոր կանալ. ~ data քողարկված/անհատական տվյալներ. ~ library թողարկված/անձնական գրադարան. ~ type քողարկված տիպ:

**privately** [ˈpraɪvətli] adv անձնապես, մասնավոր ձևով. speak ~ գաղտնաբար խոսել. publish a book ~ իր հաշվին գիրք հրատարակել:

**privation** [praɪˈveɪʃn] n զրկանք, կարիք:

**privatize** [ˈpraɪvətaɪz] v սեփականաշնորհել, մասնավորեցնել:

**privilege** [ˈprɪvəlɪdʒ] n արտոնություն, առավելություն. diplomatic ~ դիվանագիտական արտոնություն. It is my ~ to Պատիվ ունեմ:

**privileged** [ˈprɪvəlɪdʒd] a արտոնյալ. ~ information *հրավ.* դատարանում հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ. *հմկրգ.* ~ instruction արտոնյալ հրահանգ/հրահանգավորում. ~ user արտոնյալ օգտագործող. ~ violation արտոնությունների խախտում:

**privy** [ˈprɪvi] a *խսկց.* գաղտնի. մասնավոր. առանձնացած. be ~ to մասնակից լինել:

**prize** [praɪz] n մրցանակ, դրամական պարգև. first ~ առաջին մրցանակ. a Nobel ~ Նոբելյան մրցանակ. the ~ of life կյանքի բարիքները. a ~ horse ռեկորդակիր ձի. a ~ idiom *խսկց.* կատարյալ/անհուսալի հիմար. ~ fighter պրոֆեսիոնալ/մասնագետ ըմբշամարտիկ. ~ winner մրցանակակիր, դափնեկիր:

**prize** [ˈpraɪz] v գնահատել, բարձր գնահատել:

**pro** [prəʊ] n *մրգ.*, *խսկց.* մասնագետ, պրոֆեսիոնալ:

**pro** [ˈprəʊ] pref կողմնակից, շահերի պաշտպան, կողմ. ~s and cons կողմ և դեմ ձայները. (փոխարինող, տեղակալ) ~-rector պրոռեկտոր:

**pro** [prəʊ] prep կողմ (կողմնակից իմաստով). ~ the Common Market ընդհանուր շուկայի կողմնակից. ~ going գնալու կողմնակից:

**probability** [ˌprɒbəˈbɪləti] n հավանականություն. in all ~ ամենայն հավանականությամբ. The ~ is that ... Լիովին հավանական է, որ... balance of ~ *հրավ.* հավանականության համակշիռ:

**probable** [ˈprɒbəbəl] a հավանական, հնարավոր, ենթադրելի. the ~ outcome հավանական ելքը. it seems ~ ամենայն հավանականությամբ:

**probably** [ˈprɒbəbəlɪ] adv հավանաբար:

**probate** [ˈprəʊbeɪt] n կտակի պաշտոնական վավերացում:

**probation** [prəˈbeɪʃn] n փորձնական ժամկետ, ստաժավորում. He's still on ~ Նրա փորձնական ժամկետը դեռ չի ավարտվել.

on ~ փորձաշրջանում. be put on ~ *հրավ.* փորձաշրջանի մեջ լինել (պայմանական դատվածություն):

**probationary** [prəˈbeɪʃnəri] a փորձնական:

**probationer** [prəˈbeɪʃnəri] n փորձնակ, փորձնական շրջան անցնող մարդ:

**probe** [prəʊb] 1. n զոնդ. *բժշկ.* հետազոտում. a space ~ տիեզերական հետազոտական հրթիռ. 2. v զոնդել, զոնդով հետազոտել. ~ into the matter ավելի խոր ուսումնասիրել հարցը:

**problem** [ˈprɒbləm] n խնդիր, հարց, պրոբլեմ (*նաև մաթ.*) the housing ~ բնակարանային հարց. face a ~ խնդրի առաջ կանգնել. solve a ~ խնդիր լուծել. ~ children դժվար երեխաներ. *հմկրգ.* ~ oriented language դեպի տիրույթը կողմնորոշված լեզու. ~ programmer կիրառական ծրագրող. ~ reformulation խնդրի վերածակերպում:

**problematic(al)** [ˌprɒbləˈmætɪk(əl)] a դեռ չլուծված, վիճելի. քիչ հավանական:

**procedure** [prəʊˈsiːdʒə] n ընթացակարգ, գործի ընթացք. գործելակերպ, վարքագիծ: legal/the usual ~ իրական/սովորական ընթացակարգ. *հմկրգ.* ~ body պրոցեդուրայի/գործընթացի մարմին. ~ call պրոցեդուրայի ակտիվացում, դիմում ենթաժողովրդ. ~ declaration պրոցեդուրայի նկարագրություն. ~ header պրոցեդուրայի վերնագիր. ~ invocation դիմում ենթաժողովրդ:

**proceed** [prəˈsiːd] v շարունակել. վերսկսել, սկսել. ~ on one's way/with one's work շարունակել ճանապարհը/աշխատանքը. The traffic ~ed slowly Սեքեմաները դանդաղ էին շարժվում. ~ to անցնել (մեկ այլ բանի/տեղ). ~ further առաջանալ. (ընթանալ) ~ according to ընթանալ ըստ/համաձայն. ~ to explain սկսել բացատրել. How should we ~? Ինչպե՞ս վարվել. *հրավ.* ~ against գործ հարուցել (ընդդեմ):

**proceeding** [prəˈsiːdɪŋ] n արարք, վարմունք. քայլ. a strange ~ տարօրինակ արարք. a rather doubtful ~ բավական կասկածելի գործ. ~s գործողություններ, իրադարձություններ. take no part in ~s իրադարձություններին չմասնակցել. P~s began at 3 o'clock ժողովը սկսվեց ժամի երեքին. legal ~s *հրավ.* դատավարություն. take/drop legal ~ դատական գործ հարուցել/կարճել.

divorce ~ ամուսնալուծության գործ:  
**proceeds** ['prəusi:dz] n հասույթ, շահ, եկամուտ:  
**process** ['prəuses] n ընթացք. գործընթաց. պրոցես. in the ~ of ընթացքում. due ~ of law *իրավ.* պատշաճ իրավական ընթացակարգ:  
**process** ['prəuses] v մշակել. ~ leather/information/film մշակել կաշի/տեղեկատվությունը/տեղեկությունը. ժապավենը երևակել:  
**processed** ['prəusest] a մշակված, վերամշակված:  
**procession** [prə'seɪn] n թափոր. երթ, շքերթ. walk in the ~ երթով/շքերթով քայլել. torch-light ~ ջահերով երթ. funeral ~ թաղման թափոր:  
**processor** ['prəusesə] n *հմկրգ.* հրահանգ կատարող սարք. ~ active task ընթացիկ խնդիր, առաջադրանք. ~ bound task հաշվարկային խնդիր, առաջադրանք. ~ defined function դեպի մեքենան կողմնորոշված ֆունկցիա. ~ interrupt պրոցեստի ընդհատում. ~ time հաշվարկի ժամանակ:  
**proclaim** [prə'kleɪm] v հայտարարել, հռչակել. ~ king թագավոր հռչակել. ~ a republic հանրապետություն հռչակել. ~ a holiday տոն հայտարարել:  
**proclamation** [ˌprɒklə'meɪʃn] հայտարարություն, ազդարարում:  
**proclivity** [prəu'klɪvətɪ] n հակում, հակվածություն. կանխատրամադրվածություն:  
**procrastinate** [prəu'kræstɪneɪt] v ձգձգել, դանդաղել. հետաձգել:  
**procreate** ['prəukreɪt] v ծնել, ծնունդ տալ:  
**procreation** [ˌprəukri'eɪʃn] n ծնունդ, պտուղ. ծնունդ տալը:  
**procure** [prə'kjʊə] v հայթայթել, գտնել, ձեռք բերել:  
**prod** [prɒd] n հարված, զարկ. a ~ with a bayonet սվինի հարված:  
**prod** [prɒd] v խփել. ~ smb in the ribs կողերին խփել. ~ at the rubbish with a stick փայտով աղբը խառնել:  
**prodigal** ['prɒdɪɡl] n շռայլ, վատնող. առատ, հարուստ. the ~ son անառակ որդին:  
**prodigality** [ˌprɒdɪ'gælətɪ] n շռայլություն, զեխություն. առատություն:  
**prodigious** [prə'dɪdʒəs] a զարմանալի, ապշեցուցիչ. վիթխարի, հսկայական:

**prodigy** ['prɒdɪdʒi] n հրաշք, սքանչելիք, զարմանք. շնորհալի/տաղանդավոր մարդ. an infant/child ~ հրաշք երեխա, վունդերկինդ:  
**produce** ['prɒdju:s] n արտադրանք, արդյունք, բերք:  
**produce** [prə'dju:s] v արտադրել, պատրաստել. The factory ~s paper Ֆաբրիկան թուղթ է արտադրում. (առաջացնել) ~ results/sparks արդյունք տալ. կայծեր առաջացնել. (ներկայացնել) ~ one's passport/a proof անձնագիր/ապացույց ներկայացնել. ~ a pen from the pocket գրպանից գրիչ հանել. ~ a play *թատր.* ներկայացում բեմադրել:  
**producer** [prə'dju:sə] n արտադրող. *տեխ.* գեներատոր. *թատր., կինո.* ռեժիսոր, բեմադրող. պրոդյուսեր:  
**producible** [prə'dju:səbl] a արտադրելի:  
**product** ['prɒdʌkt] n արտադրանք, ապրանք. Gross National P~ GNP համախառն ազգային արտադրանք. food ~s մթերք. dairy ~s կաթնամթերք. the finished ~ պատրաստի արտադրանք. ~ liability *իրավ.* ապրանքային պատասխանատվություն:  
**production** [prə'dʌkʃn] n արտադրություն. արտադրանք, ապրանք. երկ, գործ. car ~ մեքենաների արտադրություն. mass ~ զանգվածային արտադրանք. full ~ լրիվ հզորությամբ արտադրություն. ~ licence արտադրության թույլտվություն the annual ~ տարեկան արտադրանք. ~ costs արտադրական ծախսեր. ~ line հարահոսք. (ներկայացնելը) the ~ of new evidence նոր ապացույց ներկայացնելը. ~ of one's pass անցաթղթի ներկայացում. *թատր., կինո* բեմադրում:  
**productive** [prə'dʌktɪv] a արտադրողական, արդյունավետ. *լեզվ.* գործուն, կենդանի. (հող) պտղաբեր, բեղուն, արգավանդ. *փխք.* արդյունավետ. The meeting was very ~ Չանդիպումը շատ արդյունավետ էր:  
**productivity** [ˌprɒdʌk'tɪvətɪ] n արտադրողականություն, արդյունավետություն. ~ of labour աշխատանքի արտադրողականություն:  
**profanation** [ˌprɒfə'neɪʃn] n ապականում, խեղաթյուրում, գռեհկացում:  
**profane** [prə'feɪn] v պղծել. խեղաթյուրել,

ապականել:  
**profane** [prə'feɪn] a պիղծ, անօրեն. անվայել, անպարկեշտ:  
**profess** [prə'fes] v (բացահայտ կերպով) հայտարարել, ընդունել. արտահայտել, ցուցաբերել. ~ an interest հետաքրքրություն ցուցաբերել. (ձևանալ, ձևացնել) ~ to know nothing ձևացնել, որ ոչինչ չգիտես. (հավակնել) I don't ~ to be an expert ես չեմ հավակնում, որ մասնագետ եմ. (դավանել) ~ a faith որևէ կրոն դավանել:  
**professed** [prə'fest] a be a ~ liberal հայտնի լինել իր լիբերալ հայացքներով. ~ liberalism ցուցադրական լիբերալիզմ:  
**profession** [prə'feɪʃn] n մասնագիտություն, զբաղմունք. legal/medical ~ իրավաբանի/բժշկի մասնագիտություն. the ~ դերասաններ. (խոստովանություն) ~ of friendship/love/faith ընկերության/սիրո/դավանանքի հավաստիացում/խոստովանություն:  
**professional** [prə'feɪʃnəl] n մասնագետ, արհեստավարժ, արհեստագետ. պրոֆեսիոնալ. a ~ performance բարձրարվեստ ներկայացում. seek ~ advice դիմել մասնագետին խորհրդի համար. a ~ footballer/writer մասնագիտությամբ ֆուտբոլիստ.պրոֆեսիոնալ գրող. ~ people, the ~ classes մտավորականներ. turn ~ մրգ. պրոֆեսիոնալ/մասնագետ դառնալ:  
**professor** [prə'fesə] n (կրճ. prof-ից) պրոֆեսոր, դասախոս. ուսուցչապետ. ~ of history պատմության դասախոս:  
**professorial** [ˌprɒfə'sɔːriəl] a պրոֆեսորական:  
**professorship** [prə'fesəʃɪp] n պրոֆեսորություն. պրոֆեսորի կոչում և պաշտոն:  
**proffer** ['prɒfə] n, v առաջարկ, առաջարկել. ~ help օգնություն առաջարկել:  
**proficiency** [prə'fɪʃnsi] n փորձառություն, հմտություն:  
**proficient** [prə'fɪʃnt] n հմուտ, փորձառու, գիտակ. a ~ carpenter/typist հմուտ ատաղձագործ/հյուսն. փորձառու մեքենագրուհի. be ~ in French ֆրանսերենի գիտակ լինել:  
**profile** ['prəʊfaɪl] n կիսադեմ, պրոֆիլ. (առարկայի) ուրվագիծ, եզրագիծ. a fine ~ նուրբ կիսադեմ/ուրվագիծ:  
**profit** ['prɒfɪt] n եկամուտ, հասույթ, շահույթ. gross/net ~ համախառն/զուտ, մաքուր

եկամուտ. ~ and loss շահույթ և կորուստ. loss of ~ շահույթի կորուստ. split the ~ շահույթը/եկամուտը կիսել (շահ, օգուտ). sell at a ~ շահույթով վաճառել. to one's ~ մեկի օգտին. ~ margins շահույթի/եկամտի չափսը:  
**profit** ['prɒfɪt] v օգուտ ստանալ/բերել/բաղել. ~ from a book գրքից օգուտ քաղել. ~ from the change of air օդափոխությունից օգուտ ստանալ. What will it ~ me? ես դրանից ի՞նչ օգուտ ունեմ:  
**profitable** ['prɒfɪtəbl] a շահավետ, եկամտաբեր, ձեռնտու. *փխբ.* օգտակար:  
**profiteer** [ˌprɒfɪ'tiə] n չարաշահորդ, սպեկուլյանտ. war ~s պատերազմի չարաշահորդներ:  
**profligacy** ['prɒflɪgəsi] n անբարոյակամություն, անառակություն:  
**profligate** ['prɒflɪgət] a անբարոյական, անառակ:  
**profound** [prə'faʊnd] a խոր, խորիմաստ. խելացի, հեռատես. a ~ thinker/thought խորը մտածող, խորիմաստ միտք. (լիակատար, լրիվ, բացարձակ) ~ ignorance բացարձակ տգիտություն. with ~ regret խորը կսկիծով:  
**profundity** [prə'fʌndəti] n խորություն. անդունդ, վիհ:  
**profuse** [prə'fjuːs] a առատ, հարուստ. առատաձեռն. a ~ growth առատ բուսականություն. ~ apologies/praise բազմից դուրս ներողություններ. գովասանք:  
**profusely** [prə'fjuːsli] adv առատորեն, լիովի. չափազանց:  
**profusion** [prə'fjuːʒn] n առատություն, լիություն. շռայլություն:  
**progeny** ['prɒdʒəni] n սերունդ, ժառանգ. *փխբ.* հետնորդներ, աշակերտներ. She came with all her ~ *խսկց., կտկ.* Նա եկել էր իր բոլոր ժառանգներով հանդերձ:  
**prognosis** [prɒg'nɒsɪs] n նախագուշակում, նախատեսություն:  
**prognostic** [prɒg'nɒstɪk] n նախանշան, կանխանշան:  
**prognostication** [prɒg,nɒstɪ'keɪʃn] n նախատեսություն, նախագուշակում: My ~ is that he will soon recover ես կանխատեսում եմ, որ նա շուտով կառողջանա:  
**program(me)** ['prəʊgræm] 1. n ծրագիր. radio/TV ~ ռադիո/հեռուստատեսային հա-

դորդում. study ~ ուսումնական ծրագիր. an item on the ~ (համերգային) ծրագրի համար: What's our ~ for today? Այսօր ի՞նչ ծրագիր ունեք. **2.** a ծրագրի, ծրագրային. *հմկրգ.* ~ body ծրագրի մարմին/կատարվող մասը. ~ breakpoint ստուգիչ կետ. ~ checkout ծրագրի կարգաբերում/վերանայում. ~ design ծրագրի նախագծում. ~ development ծրագրի մշակում. ~ driven ծրագրային ղեկավարումով. ~ maintenance ծրագրերի աշխատունակության ապահովում. ~ specification ծրագրերի սպեցիֆիկացիա/նկարագրություն. ~ verification ծրագրերի ճշտության ապացույց:

**programme** ['prəʊgræm] v ծրագրել, ծրագրավորել. The meeting is ~d for tomorrow Հանդիպումը վաղը է ծրագրված:

**programmer** ['prəʊgræmə] n ծրագրավորող. computer ~ համակարգչի ծրագրավորող:

**progress** ['prəʊgrɛs] n առաջադիմություն, առաջընթաց. գարգացում. the ~ of science գիտության զարգացումը/առաջընթացը. be in the ~ ընթացքի մեջ լինել, զարգանալ. The match/exam is in ~ խաղը/Քննությունը տեղի է ունենում/ընթացքի մեջ է, Negotiations are in ~ Բանակցություններ են տարվում. make ~ առաջադիմել. The patient is ~ing Հիվանդը լավանում է:

**progression** [prəʊ'greʃn] n առաջխաղացում, առաջընթաց. *մաթ.* պրոգրեսիա. arithmetic(al)/geometric(al) ~ թվաբանական/ երկրաչափական պրոգրեսիա:

**progressive** [prəʊ'gresiv] a առաջադիմական. աստիճանաբար աճող/ ուժեղացող. ~ taxation պրոգրեսիվ հարկում:

**progressively** [prəʊ'gresivli] adv առաջընթացորեն. անշեղորեն, անընդհատ. The situation got ~ worse Վիճակը քանի զնում այնքան վատանում էր:

**prohibit** [prəʊ'hɪbɪt] v արգելել, թույլ չտալ. be ~ed արգելված լինել. Smoking is ~ed Ծխելն արգելվում է:

**prohibition** [prəʊ'hibɪʃn] n արգելք, արգելում. P~ *ամ.* ոգելից խմիչքների արգելում ԱՄՆ ունի:

**prohibitive** [prəʊ'hɪbɪtɪv] a արգելական, արգելիչ. արգելող. արգելք հանդիացող. Prices are ~ *խսկց.* Գները անհասանելի

են/կատաղած են:

**project** ['prɒdʒekt] n նախագիծ, ծրագիր. առաջարկ. start a ~ նախագիծ ներկայացնել. առաջարկ մտցնել. *հմկրգ.* ~ software ղեկավարող համակարգի ծրագրային ապահովում:

**project** [prə'dʒekt] v նախագծել, ծրագրել. արձակել, գցել (լույս, ճանապարհ). դուրս գցվել, կարկառվել. The balcony ~s over the street Պատշգամբը կարկառվել է փողոցի վրա. ~ light [լույս արձակել, սփռել]:

**projectile** [prəʊ'dʒektail] n արկ, ռումբ, գնդակ:

**projection** [prə'dʒekʃn] n նախագծում, նախագիծ. (կինո) պրոյեկցիա. ելուստ, դուրս գցված մաս:

**projector** [prə'dʒektə] n նախագիծ կազմող, նախագծող մասնագետ. պրոյեկցիոն լապտեր. լուսարձակ:

**proletarian** [prəʊlə'teəriən] n պրոլետար, պրոլետարական:

**proliferate** [prəʊ'lɪfəreɪt] v բազմանալ, տարածվել:

**proliferation** [prəʊ,lɪfə'reɪʃn] n բազմացում, տարածում. the ~ of nuclear weapons միջուկային զենքի տարածում:

**prolific** [prəʊ'lɪfɪk] a պտղաբեր, արգավանդ, բեղմնավոր:

**prolix** ['prɒlɪks] a բազմախոս, շատախոս. ծանծրալի, ձգձգված:

**prologue** ['prɒləʊg] n նախաբան, նախերգանք:

**prolong** [prəʊ'lɒŋ] v երկարացնել, երկարածել. երկարատև դարձնել. ~ a line/a visit գիծը երկարացնել. այցելությունը երկարածել. ~ the agony *խսկց.* տանջանքը երկարածել:

**prolongation** [prəʊ'lɒŋ'geɪʃn] n երկարացում, երկարածում. տարկետում:

**prolonged** [prəʊ'lɒŋd] a երկարատև, ձգձգված. ~ applause երկարատև ծափահարություններ:

**promenade** [prɒmə'na:d] 1. n զբոսանք, պտույտ. ծառուղի. ծովափնյա/ գետափնյա փողոց. *խսկց.* պարահանդես a high school ~ դպրոցական պարահանդես. 2. v զբոսնել, ման գալ:

**prominence** ['prɒmɪnəns] n գցվածություն, անհարթություն. աչքի ընկնող դիրք:

**prominency** [ˈprɒmɪnənsi] n աչքի ընկնող դիրք. ականավորություն:

**prominent** [ˈprɒmɪnənt] a աչքի ընկնող, ականավոր. նշանավոր, հայտնի. a ~ position աչքի ընկնող տեղ/դիրք/պաշտոն. a ~ scientist ականավոր գիտնական. (ցցված, դուրս պրծած) ~ teeth/cheekbones դուրս պրծած, ցցված ատամներ/այտոսկրներ:

**promiscuity** [ˌprɒmɪˈskjuːəti] n տարատեսակություն, այլազանություն. խառնաշփոթություն:

**promiscuous** [prəˈmɪskjuəs] a սամձարձակ, անկարգ. անխտրական (սեռական հարցերում):

**promise** [ˈprɒmɪs] n խոստում. give /make a ~ խոստանալ. keep/ break one's ~ խոստումը կատարել/չկատարել, կտրել. of great ~ խոստումնալից. a young man of ~ խոստումնալից երիտասարդ. show ~ հույսեր ներշնչել:

**promise** [ˈprɒmɪs] v խոստանալ, հույսեր ներշնչել, ապագա խոստանալ. He ~d to be in time ես խոստացավ ժամանակին գալ. It ~s to be a good harvest Լավ բերքի հույսեր կան:

**promising** [ˈprɒmɪsɪŋ] a հույսեր ներշնչող, խոստումնալից. a ~ start խոստումնալից սկիզբ. The weather is not ~ եղանակը ոչ մի լավ բան չի խոստանում:

**promissory** [ˈprɒmɪsəri] a խոստում պարունակող:

**promontory** [ˈprɒməntəri] n աշխրգ. հրվանդան:

**promote** [prəˈməʊt] v բարձրացնել, առաջ քաշել. կոչում տալ, աստիճան բարձրացնել. ~ manager/colonel տնօրեն դարձնել. գնդապետի աստիճան տալ. (օժանդակել, աջակցել) ~ trade/friendship օժանդակել առևտրի/ ընկերությանը, բարեկամությանը. ~ a new product նոր ապրանք գովազդել. (հիմնել) ~ a new company/campaign նոր ընկերություն հիմնել. նոր կամպանիա սկսել:

**promoter** [prəˈməʊtə] n հիմնադիր, նախաձեռնող. հովանավոր, պաշտպան:

**promotion** [prəˈməʊʃn] n առաջադիմում (ժառանգության մեջ). կոչում/աստիճան տալը. աջակցություն. have no hope of ~ առաջ գնալու հույսեր չունենալ:

**prompt** [prɒmpt] a արագ, շտապ. a ~ reply անմիջական պատասխան. The service is very ~ Շատ արագ են սպասարկում.

**prompt** [prɒmpt] adv ճիշտ, ճշգրիտ. at 9 o'clock ~ ճիշտ ժամի իննին:

**prompt** [prɒmpt] v գրգռել, հրահրել. մղել. դպր., թատր. հուշել, հուշարարություն անել. ~ the feeling/thought զգացում/միտք հուշել. ~ box հուշարարի խցիկ:

**prompter** [ˈprɒmptə] n թատր. հուշարար: **prompting** [ˈprɒmptɪŋ] n հուշում. դրդում, մղում. at his ~ նրա հուշելով. No ~ ! Ոչ մի հուշում. without any ~ առանց հուշելու. the ~s of conscious խղճի ձայնը:

**promptly** [ˈprɒmptli] adv արագ, անմիջապես. ճշգրտորեն:

**promulgate** [ˈprɒmlɡeɪt] v հրապարակել, հայտարարել. տարածել (ուսմունք, կրոն):

**promulgation** [ˌprɒmlˈɡeɪʃn] n հրատարակում, հրապարակում:

**prone** [prəʊn] a փռված, երեսնիվայր պառկած. lie/fall ~ պառկել/ընկնել երեսնիվայր. (հակված, հակամետ) ~ to colds հաճախ հիվանդանալու հակում. ~ to put on weight գիրանալու հակում ունենալ:

**prong** [prɒŋ] n ատամ (*տեխ.*). եղան:

**pronominal** [prəʊˈnɒmɪnəl] a *քեր.* դերանվանական, դերանվան:

**pronoun** [ˈprəʊnaʊn] n դերանուն. demonstrative ~ ցուցական դերանուն. indefinite ~ անորոշ դերանուն. interrogative ~ հարցական դերանուն. personal ~ անձնական դերանուն. possessive ~ ստացական դերանուն. relative ~ հարաբերական դերանուն:

**pronounce** [prəˈnaʊns] v արտասանել, առոգանել. How is the word ~d? Այս բառը ինչպե՞ս է արտասանվում. (հայտարարել. հայտնել) ~ a decree վճիռը հրապարակել. ~ the decision acceptable որոշումը ընդունելի հայտարարել. ~ a sentence դատավճիռը հայտարարել. ~ for/against smb *հրավ.* որոշում կայացնել հօգուտ մեկի/մեկի դեմ:

**pronounced** [prəˈnaʊnst] a որոշակի, պարզ, ակնառու. ցայտուն կերպով արտահայտված. a ~ limp/accent խիստ կաղալ. ուժեղ ակցենտով խոսել. have ~ views պարզորոշ տեսակետ ունենալ:

**pronouncement** [prəˈnaʊnsmənt] n որոշումը/վճիռը հայտարարելը. պաշտոնական

հայտարարություն:

**pronunciation** [prəˌnʌnsiˈeɪʃn] n արտասանություն, առոգանություն:

**proof** [pruːf] n ապացույց, փաստարկ. as/in ~ of ի/որպես ապացույց. as ~ of his regard որպես հարգանքի ապացույց. ~ of claim *իրավ*. հայցի հիմնավորում. burden of ~ ապացուցման պարտականություն. (փորձ, ստուգում) put the theory to the ~ ստուգել/փորձարկել տեսությունը. *տպգր*. սրբագրում. *լսնկ*. փորձնական տպվածք. galley ~s շարվածասյուներ. page ~s շարվածք. ~ sheets սրբագրության արտատիպ. ակոհողի թնդության աստիճանը. 40% ~ քառասուն աստիճան թնդություն:

**proof** [pruːf] a ոչ թափանցիկ, դիմացկուն, չենթարկվող. water/shower ~ անջրաթափանց. shrink ~ չմտնող (կտոր). sound ~ ծայնամեկուսիչ. ~ against temptation չգայթակղվող:

**proofread** [ˈpruːfriːd] v սրբագրել:

**proof-reader** [ˈpruːfriːdɪ] n սրբագրիչ:

**prop** [prɒp] n մեցուկ, հենուկ, հենարան. *փխբ*. հենարան, ապավեն:

**prop** [prɒp] v մեցուկ/հենարան լինել/դնել. ~ a roof up տանիքի համար հենարան դնել. ~ the bicycle against the wall հեծանիվը պատին հենել:

**propagate** [ˈprɒpəgeɪt] v բազմացնել. տարածել. *ֆիզ*. հաղորդել, անցկացնել (ծայն, լույս):

**propagation** [ˌprɒpəˈgeɪʃn] n բազմացում, տարածում, հաղորդականություն:

**propel** [prəˈpel] v առաջ մղել, շարժման մեջ դնել. ~led by jet engines հրթիռային շարժիչով գործի դրվող. ~ through the water ջրի միջով առաջ շարժվել. ~ smn towards the door մեկին դեպի դուռը մղել:

**propeller** [prəˈpelə] n *ավ*. ինքնաթիռի պտուտակ (պրոպելեր). *ծով*. թիավարող պտուտակ, թիապտուտակ:

**propensity** [prəʊˈpensəti] n հակամետություն, հակում. մոլություն:

**proper** [ˈprɒpə] a ճիշտ, հարմար, պատշաճ. ~ pronunciation ճիշտ արտասանություն. ~ use ճիշտ օգտագործում. with ~ respect պատշաճ հարգանքով. at the ~ time հարմար պահին. in the ~ way պատշաճ ձևով. ~ clothes հարմար հագուստ. in the ~ sense of

the word բառիս լայն իմաստով. Do as you think ~ Արեք ինչպես հարմար եք գտնում. (իսկական, ճշմարիտ, բուն) the war ~ իսկական/բուն պատերազմը. linguistic ~ լեզվաբանությունը որպես այդպիսին. a ~ noun *քեր*. հատուկ անուն. a ~ fraction *մաթ*. կանոնավոր կոտորակ. a ~ rogue *խսկց*. կատարյալ սրիկա. be in a ~ mess անախտրժ վիճակում լինել, փորձանքի մեջ ընկնել:

**properly** [ˈprɒpəli] adv ճիշտ, ինչպես հարկն է, պատշաճ կերպով. treat smb ~ պատժած ձևով վարվել մեկի հետ. ~ speaking իսկապես, ճիշտն ասած. ~ protesting իսկապես(որեն) բողոք(ել):

**property** [ˈprɒpəti] n սեփականություն, ունեցվածք. real/immovable ~ անշարժ գույք. portable ~ շարժական գույք, public ~ հասարակական ունեցվածք. personal ~ անձնական ունեցվածք. intellectual ~ մտավոր սեփականություն. leave smn all one's ~ իր ամբողջ ունեցվածքը մեկին թողնել. The news is a common ~ *փխբ*. Այդ լուրը արդեն բոլորին է հայտնի. lost ~ office գտնված իրերի բյուրո/բաժին. ~ ies *թատր*. բեմիեր, ռեկվիզիտ, բուտաֆորիա:

**prophecy** [ˈprɒfəsi] n մարգարեություն:

**prophecy** [ˈprɒfəsai] v մարգարեանալ, գուշակել:

**prophet** [ˈprɒfɪt] n մարգարե, գուշակ:

**prophetic** [prəʊˈfetɪk] a մարգարեական:

**propinquity** [prəʊˈpɪŋkwəti] n մերձավորություն, մոտիկություն, ազգակցություն:

**propitiate** [prəʊˈpɪʃieɪt] v խաղաղեցնել. հաշտեցնել, հանգստացնել:

**propitious** [prəˈpɪʃəs] a նպաստավոր, բարեհաճ. The weather was ~ Եղանակը նպաստավոր էր:

**proportion** [prəˈpɔːʃn] n համաչափություն, համամասնություն. տոկոսային հարաբերություն. in ~ of համեմատ, համեմատությամբ. out of ~ անհամեմատ, անհամապատասխան. the ~ of boys and girls in the group խմբում տղաների և աղջիկների համամասնությունը. sense of ~ չափի զգացում. ~s չափսերը. a car of vast ~ մեծ չափսերի մեքենա. (մաս, քանակ) in equal ~s հավասար մասերով. a large ~ of the audience հանդիսատեսների զգալի մասը:

**proportional** [prəˈpɔːʃnəl] a համամասնա-

կան, համաչափ. *մաթ.* համեմատական. The pay is ~ to the work Վարձը համապատասխանում է կատարված աշխատանքին:

**proportionate** [prə'pɔ:ʃnət] a համամասնական, համաչափ:

**proposal** [prə'pəuzl] n առաջարկ. առաջարկություն մտցնել. ~ a toast կենաց առաջարկել. make a ~ (ամուսնության) առաջարկություն անել. peace ~s խաղաղության առաջարկներ:

**propose** [prə'pəuz] v առաջարկել, առաջարկություն մտցնել. ~ a toast կենաց առաջարկել. ~ smn for the job թեկնածությունը առաջադրել աշխատանքի համար. He was ~d as chairman Նրան ներկայացրին նախագահի պաշտոնի համար. ~ a motion առաջարկություն մտցնել:

**proposition** [ˌprɒpə'zɪʃn] n առաջարկություն, հիմնավորում, պնդում. *մաև փիլ.*, *մաթ.*, *խսկց.* գործ. ձեռնարկում. It's a tough/ paying ~ Ղա դժվար/շահավետ գործ է. quite a different ~ բոլորովին այլ գործ:

**propound** [prə'paund] v առաջ քաշել, առաջադրել. ~ a theory տեսություն առաջ քաշել:

**proprietary** [prə'praɪətəri] n սեփականության իրավունք, սեփականատերեր:

**proprietary** [prə'praɪətəri] a սեփականատիրական. ~ rights սեփականության իրավունք. ~ interest սեփականատիրական շահագրգռվածություն. ~ medicines վկայագրված դեղորայք. a ~ name *տնտ.* ֆիրմային անունը. a ~ brand գործարանային մակնիշ/պիտակ:

**proprietor** [prə'praɪətə] n սեփականատեր, տեր:

**propriet/y** [prə'praɪəti] n պատշաճություն, վայելույ/պատշաճ լինելը. քաղաքավարության կանոնները. observe the ~ ies պատշաճություն պահպանել. a breach of ~ պատշաճության (կանոնների) խախտում:

**propulsion** [prə'pʌlʃn] n մղում, առաջ շարժում. շարժիչ ուժ. jet ~ հրթիռային շարժիչ:

**propulsive** [prə'pʌlsɪv] a մղիչ, գրգռիչ. շարժիչ, ստիպողական:

**pro-rector** [ˌprəu'rektə] պրոռեկտոր:

**prorogation** [ˌprəurəu'geɪʃn] n պառլամենտի աշխատանքի ընդհատում/դադարեցում:

**prorogue** [prəu'rəʊg] v հետաձգել, դադարեցնել (պառլամենտի նստաշրջանը):

**prosaic** [prəu'zeɪɪk] a առօրյա, գորշ, տաղտկալի:

**proscenium** [prəu'si:niəm] n նախաբեմ:

**proscribe** [prəu'skraɪb] v օրենքից դուրս հայտարարել. վնդել, արտաքսել:

**prose** [prəʊz] n արձակ, արձակագրություն. կյանքի պրոզա. in ~ արձակով. a ~ writer արձակագիր. ~ works արձակ ստեղծագործություններ:

**prosecute** [ˌprɒsɪkju:t] v *իրավ.* դատական կարգով հետապնդել. be ~d for theft դատել գողության համար. ~ an action գործ հարուցել:

**prosecution** [ˌprɒsɪ'kju:ʃn] n դատական հետապնդում. the ~ մեղադրանք, մեղադրող կողմը. counsel/witness for the ~ մեղադրող, մեղադրող կողմի վկա. liable to ~ պատժի ենթակա:

**prosecutor** [ˌprɒsɪkju:tə] n *իրավ.* մեղադրող. Public P~ Պետական մեղադրող, դատախազ:

**prosit** [ˌprəʊsɪt] int ձեր կենացը:

**prosody** [ˌprɒsədi] n վանկաչափություն. accentual ~ շեշտական տաղաչափություն:

**prospect** [ˌprɒspekt] n տեսարան, բնության պատկեր, համայնապատկեր. a fine ~ հոյակապ տեսարան. ~s *փխք.* հեռանկար, հույսեր. cheerful/gloomy ~s փայլուն/մռայլ հեռանկարներ. with good ~s լավ հեռանկար ունեցող. with no ~ հեռանկար չունեցող. the ~ of success հաջողության հույսեր. a good ~ as a client հնարավոր շահավետ հաճախորդ. *երկրբ.* հետախուզություն ~ for gold. ոսկու հետախուզություն:

**prospective** [prə'spektɪv] a ապագա, գալիք, սպասվող. a ~ customer հավանական գնորդ. a ~ husband ապագա ամուսին:

**prospector** [prə'spektə] n *երկրբ.* հետախույզ, որոնող. ոսկի որոնող:

**prospectus** [prə'spektəs] n (գրքի, հրատարակության) ուրվագիր, պլան, պրոսպեկտ:

**prosper** [ˌprɒspə] v բարգավաճել, ծաղկել, հաջողություն ունենալ. The business is ~ing Գործը բարգավաճում է:

**prosperity** [prɒ'spɛrətɪ] n ծաղկում, բարեկեցություն, բարգավաճում:



**prosperous** [ˈprɒspərəs] a ծաղկուն, բարգավաճ, բարեկեցիկ. հաջողակ. նյութապես ապահով:

**prosthesis** [prɒsˈθiːsɪs] n *բժշկ.* պրոթեզ:

**prostitute** [ˈprɒstɪtjuːt] n, v ծախու կին, պոռնիկ. պոռնկություն անել:

**prostrate** [ˈprɒstreɪt] 1. a զետնատարած, զետին տապալված, փռված. ~ with grief *փխբ.* վշտից կտորված/ուժասպառ. 2. v տապալել, գլորել. ~ oneself երեսնիվայր ընկնել, ծնկի գալ:

**prostration** [prɒˈstreɪʃn] n ուժասպառություն, հյուժում. ուժասպառ հուսալքում:

**prosy** [ˈprəʊzi] a արծակ, արծակ գրված. առօրյա, տաղտկալի. պրոզաիկ:

**protagonist** [prəʊˈtæɡənɪst] n գլխավոր հերոս. ջատագով, եռանդուն պաշտպան:

**protean** [prəʊˈtiːən] a բազմադիմի, բազմաձև. դյուրափոփոխ, հեղհեղուկ:

**protect** [prəˈtekt] v պաշտպանել. The fence ~s the flowers Ցանկապատը պաշտպանում է ծաղիկներին. ~ by a bodyguard թիկնապահի կողմից պաշտպանվող:

**protection** [prəˈtektʃn] n պաշտպանություն, հովանավորություն. պահպանում. *տնտ.* պրոտեկցիոնիզմ:

**protective** [prəˈtektɪv] a պաշտպանական, պաշտպանողական. հովանավորական. ~ clothing/colouring պաշտպանական հագուստ/գույներ. ~ tariffs *տնտ.* հովանավորող/պաշտպանական տարիֆ:

**protector** [prəˈtektə] n պաշտպան, պահպան, հովանավոր. *տեխ.* ապահովիչ, պահպանակ:

**protectorship** [prəˈtektəʃɪp] n խնամակալություն, հովանավորում. *քղբ.* պրոտեկտորատ:

**protegee** [ˈprɒtəʒeɪ] n հովանավորյալ:

**protein** [ˈprəʊtiːn] n սպիտակուց, պրոտեին

**pro tem** [prəʊˈtem] adv (*կրճ.* pro tempore) *խսկց.* առայժմ. I can't answer ~ ես առայժմ չեմ կարող պատասխանել:

**protest** [ˈprəʊtest] n բողոք. make/lodge a ~ բողոք ներկայացնել. under ~ կանքին հակառակ, հարկադրված. arouse ~ բողոք առաջացնել:

**protest** [ˈprəʊtest] v բողոքել, առարկել. բողոքարկել. ~ loudly բարձրաձայն բողոքել. (հաստատել) ~ one's innocence իր ան-

մեղությունը հաստատել:

**protestant** [ˈprɒtɪstənt] n *կրոն.* բողոքական:

**protestation** [ˌprɒtiˈsteɪʃn] n բողոք, առարկություն. հանդիսավոր հայտարարություն:

**protocol** [ˈprɒtəʊkɒl] n արձանագրություն. *ղվնգ.* էթիկետի կանոններ. արարողակարգ. according to the ~ արարողակարգի (պրոտոկոլի) համաձայն. the ~ department արարողակարգի ծառայություն:

**protract** [prəˈtrækt] v ձգել, երկարացնել. դանդաղել, հապաղել. The meeting was ~ing ժողովը երկարում էր:

**protracted** [prəˈtræktɪd] a երկարատև, ձգձգված. տևական. a ~ argument/visit ձգձգված վեճ/այցելություն:

**protraction** [prəˈtræktʃn] n քաշքշուկ, ձգձգում. դանդաղում, հապաղում:

**protractor** [prəˈtræktə] n դանդաղկոտ մարդ. *տեխ.* անկյունաչափ. *կզմխ.* պարզիչ մկան:

**protrude** [prəˈtruːd] v դուրս գցվել. his teeth/eyes ~d ատամները դուրս գցված. աչքերը դուրս արծած:

**protruding** [prəˈtruːdɪŋ] a դուրս արծած/ցցված, դուրս հանված:

**protrusion** [prəˈtruːʒn] n ելուստ, դուրս ցցված մաս:

**protrusive** [prəˈtruːsɪv] a դուրս ցցված. առաջ ձգված:

**protuberance** [prəˈtjuːbrəns] n ուռուցիկություն, ուռուցք. *աստղբ.* հրավիժակ, ժայթքալեզու, պրոտուբերանց:

**proud** [praʊd] a հպարտ. be ~ of հպարտանալ. (գոռոզ, ամբարտավան) as ~ as a peacock սիրամարգի պես հպարտ. a ~ day հանդիսավոր օր. do smn ~ *խսկց.* պատիվ անել:

**prove** [pruːv] v ապացուցել. be able/unable to ~ ի վիճակի լինել/չլինել ապացուցել. ~ one's identity ինքնությունը հաստատել. He was ~d innocent Ապացուցվեց, որ նա անմեղ է. The exception that ~s the rule Բացառություն, որ հաստատում է կանոնը. (պարզվել) It ~d useless Դա անօգուտ դուրս եկավ. The report ~d to be very interesting Պարզվեց, որ զեկուցումը շատ հետաքրքիր էր:

**provenance** [ˈprɒvənəns] n ծագում,

սկզբնաղբյուր. Its ~ is doubtful Ծագումը կասկածելի է. settle the ~ of ծագումը/սկզբնաղբյուրը որոշել:

**proverb** [ˈprɒvə:b] n առած, ասացվածք:

**proverbial** [prəˈvɜːbiəl] a ասացվածք դարձած, հանրահայտ. ~ truth հանրահայտ ճշմարտություն:

**provide** [prəˈvaɪd] v ապահովել, մատակարարել. հայթայթել. ~ with money փող մատակարարել. ~ one's own transport իրեն փոխադրամիջոցով ապահովել. The flat is ~d with fridge բնակարանում սառնարան է տեղադրված. (նախատեսել) The contract ~s for... Պայմանագիրը նախատեսում է...:

**provided** [prəˈvaɪdɪd] enj (*given ~ that*) պայմանով, որ. հաշվի առնելով:

**providence** [ˈprɒvɪdəns] n նախախնամություն, հեռատեսություն. շրջահայեցություն. խնայողություն:

**provident** [ˈprɒvɪdənt] a շրջահայաց, հեռատես, կանխատես:

**providential** [ˌprɒvɪˈdenʃl] a երջանիկ, կանխորոշված. a ~ escape երջանիկ փրկություն/ազատում:

**provider** [prəˈvaɪdə] n մատակարարող, մատակարար:

**providing** [prəˈvaɪdɪŋ] enj պայմանով, հաշվի առնելով:

**province** [ˈprɒvɪns] n նահանգ, գավառ. ծայրամաս. գործունեության/ գիտելիքների բնագավառ. in the ~ գավառում. That's outside my ~ *փխբ.* Դա իմ իրավասությունից դուրս է:

**provincial** [prəˈvɪnʃl] n գավառական. միամիտ, պարզ, սահմանափակ:

**provincialism** [prəˈvɪnʃlɪz(ə)m] n գավառացիություն:

**provision** [prəˈvɪzən] 1. n մատակարարում, ապահովում. ~ of food supplies մթերքի մատակարարում. the ~ of housing բնակարանի ապահովում. ~ of essential services անհրաժեշտ սպասարկման տրամադրում. make ~s ապահովել. make ~s for one's future ապահովել ապագան (պայմանագրի կետ, պայման) statutory ~ *իրավ.* օրենքի դրույթ. the ~s of the agreement պայմանագրի կետերը. The law has made ~ for that Դա նախատեսված է օրենքով. ուտելիքի պաշարներ, պարեն, մթերք. 2. v մթերք/պարեն մատա-

կարարել:

**provisional** [prəˈvɪzənəl] a նախնական, պայմանական. ժամանակավոր. a ~ government ժամանակավոր կառավարություն. a ~ date նախնական տարեթիվ/ամսաթիվ:

**proviso** [prəˈvaɪzəʊ] n վերապահություն, վերապահում. պայման. with the ~ that պայմանով, որ:

**provocation** [ˌprɒvəˈkeɪʃən] n սադրանք, հուզում, գրգռ. acts of ~ սադրիչ գործողություններ. under ~ հավասարակշռությունից հանած:

**provocative** [prəˈvɒkətɪv] n սադրիչ. գայրացուցիչ, գրգռիչ, հարուցիչ. ~ remarks գայրացնող դիտողություններ. a ~ smile գրգռիչ ժպիտ:

**provoke** [prəˈvəʊk] v առաջացնել. գրգռել, գայրացնել, դրդել. ~ a scandal կռիվ/վիճարանություն առաջացնել. ~ the dog շանը գրգռել. Don't ~ your brother Մի՛ ջղայնացնի եղբորդ:

**provoking** [prəˈvəʊkɪŋ] a գրգռիչ, գայրացուցիչ, տհաճ:

**provost** [ˈprɒvɒst] n (քուլեջի) ռեկտոր. քաղաքագլուխ (Շոտլանդիայում) ~ marshall ռազմական ոստիկանության պետ:

**prow** [prau] n նավի/ինքնաթիռի քիթ:

**proress** [ˈprəʊəs] n քաջություն, խիզախություն:

**prowl** [praʊl] v վազվզելով շրջել/փնտրել. չափչփել. Wild beasts ~ in these forests Գազանները ազատ շրջում են այս անտառներում. Hooligans are ~ing about the streets Խուլիգանները չափչփում են փողոցները:

**proximate** [ˈprɒksɪmət] a մերձագույն, անմիջական:

**proximity** [prɒkˈsɪmətɪ] n մոտիկություն, մերձավորություն. ~ of blood արյունակցություն:

**proxy** [ˈprɒksi] n լիազոր, հավատարմատար, փոխանորդ. vote by ~ լիազորագրով ընտրել. stand ~ for smn մեկի վստահված անձը լինել, մեկի կողմից լիազորված լինել:

**prude** [pruːd] n կոտրատվող/սեփեթող կին:

**prudence** [ˈpruːdəns] n զգուշություն, շրջահայեցություն. խոհեմություն, խելամտություն:

**prudent** [ˈpruːdənt] a խոհեմ, զգույշ, շրջահայաց. խնայող, տնտեսող. a ~ housekeeper

խնայող տնտեսուհի:  
**prudish** [ˈpruːdiʃ] a կեղծ բարեպաշտ/համեստ:  
**prune** [pruːn] n սև սալոր. սև սալորի չիր:  
**prune** [pruːn] v *այգեգործ*. էտել, կտրել.  
 կրճատել. ~ costs *փխբ*. ծախսերը կրճատել:  
**pruning** [ˈpruːniŋ] n էտում. ~ shears այգեգործական մկրատ, էտիչ. սեկատոր:  
**pry** [praɪ] n հետաքրքրվել, խառնվել. ~ into other people's affairs քիթը խոթել ուրիշի գործերի մեջ. I don't want to ~ Չեմ ուզում խառնվել:  
**prying** [ˈpraɪɪŋ] a հետաքրքրասեր, հարցասեր. Nothing escaped her ~ eyes Ոչինչ չէր կարող խուսափել նրա հետաքրքրասեր հայացքից:  
**psalm** [sa:m] n սաղմոս:  
**pseudo** [ˈsjuːdəʊ] a կեղծ. շինծու, սխալ. ~ scientist կեղծ գիտնական:  
**pseudonym** [ˈsjuːdənim] n կեղծանուն:  
**pshaw** [pʃɔː] 1. int պահ, փուհ. 2. v արհամարհանք արտահայտել, փնջացնել:  
**psyche** [ˈsaɪki] n հոգեկան կառուցվածք, պսիխիկա:  
**psychiatric** [ˌsaɪkiˈætrɪk] a հոգեբուժական:  
**psychiatrist** [saɪˈkaɪətrɪst] n հոգեբույժ:  
**psychic** [ˈsaɪkɪk] a հոգեկան:  
**psychoanalysis** [ˌsaɪkəʊˈnæləsis] n հոգեվերլուծություն:  
**psychological** [ˌsaɪkəˈlɒdʒɪkəl] a հոգեբանական. ~ warfare հոգեբանական պատերազմ:  
**psychology** [saɪˈkɒlədʒi] n հոգեբանություն:  
**psychopath** [ˈsaɪkəpəθ] n հոգեկան հիվանդ:  
**pub** [pʌb] n (*կրճ*. public house-ից) *խսկց*. պանդոկ, գինետուն. go on a ~ crawl գինետներով մի պտույտ կատարել:  
**puberty** [ˈpjʊːbətɪ] n սեռական հասունություն:  
**public** [ˈpʌblik] n հասարակություն, ժողովուրդ. the general ~ լայն հասարակությունը the theatre-going ~ թատերասեր հասարակությունը in ~ հասարակայնորեն:  
**public** I [ˈpʌblik] a հասարակական, ժողովրդական, հանրային. պետականացված, պետական. ~ buildings/toilets հասարակական շենքեր/զուգարաններ. ~ holidays ժողովրդական/ազգային տոներ. ~ authority

պետական ձեռնարկություն. ~ figure հասարակական գործիչ. ~ spirit քաղաքացիական ոգի. ~ library/debate հանրային գրադարան. բաց քննարկումներ. ~ property հանրային սեփականություն. ~ prosecutor *իրավ*. պետական մեղադրյալ, դատախազ. ~ transport քաղաքային/հանրային տրանսպորտ. ~ school մասնավոր դպրոց. make smth ~ հրապարակային դարձնել:  
**public** II [ˈpʌblik] a *հմկրգ*. հասանելի, ընդհանուր. ~ data հասանելի տվյալներ. ~ data base հասանելի տյալների բազա. ~ domain software անվճար գրադարանային ապահովում:  
**publication** [ˌpʌbliˈkeɪʃn] n տպագրում, հրապարակում, հրատարակություն ~s հրատարակված գործեր:  
**publicity** [pʌbˈlɪsəti] n հրապարակայնություն. գովազդ. seek/avoid ~ ձգտել/ խուսափել հրապարակայնությունից. give a film ~ կինոնկարը գովազդել. get a lot of ~ խոսակցության առարկա դառնալ:  
**publicize** [ˈpʌblɪsaɪz] v հրապարակել, հայտնի դարձնել, գովազդել:  
**public relations** [ˌpʌblik riˈleɪʃnz] n հասարակական կապեր/կարծիք. ~ department տեղեկատվության բաժին:  
**publicly** [ˈpʌblikli] adv հրապարակավ, բացահայտ կերպով:  
**publish** [ˈpʌblɪʃ] v հրատարակել, լույս ընծայել. հրապարակել, հայտնի դարձնել. The article was ~ed Յոդվածը հրատարակվեց. There is no need to ~ the fact Կարիք չկա հրապարակել այդ փաստը:  
**publisher** [ˈpʌblɪʃə] n հրատարակիչ:  
**publishing** [ˈpʌblɪʃɪŋ] a հրատարակչական գործ, հրատարակում. ~ firm/house հրատարակչություն:  
**puck** [pʌk] n *մրգ*. տափօղակ:  
**pucker** [ˈpʌkə] n կնճիռ, խորշոմ. փոթ. ~ one's brow ունքերը կնճռտել:  
**puckery** [ˈpʌkəri] a կնճռված, խորշոմած:  
**puckish** [ˈpʌkɪʃ] a չարածճի, չար:  
**pudd** [pʌd] n թաթիկ:  
**pudding** [ˈpuːdɪŋ] n փուրիմգ., hasty ~ եփովի փուրիմգ. black ~ արյունեփ երշիկ. pease ~ սիսեռի պյուրե. Yorkshire ~ խմորով և մտով կարկանդակ. The proof of the ~ is in it's eating

Ամեն ինչ գործնականում է ստուգվում:  
**puddle** [ˈpʌdl] n ջրփոս. տաշտ, փոքրիկ լոգարան:  
**puddly** [ˈpʌdli] a ջրափոսերով ծածկված:  
**puerile** [ˈpjʊəraɪl] a երեխայական, մանկական:  
**puerperal fever** [pjʊˈə:prəlˈfi:və] n *բժշկ.* ծննդաբերական տենդ:  
**puff** [pʌf] n թեթև փչելը. թեթև շունչ, օդի հոսանք. a ~ of wind թեթև քամի. (քուլա) a ~ of smoke ծխի քուլա. be out of ~ շնչակտուր լինել. take a few ~s (ծխախոտը) մի քանի անգամ ծխացնել. get a good ~ in the paper *խսկց.* մամուլում լավ գրախոսականի արժանանալ. jam ~ *խիր.* մուրաբայով շերտախմոր. ~ sleeves ծալքերով թևեր:  
**puff** [pʌf] v փնչացնել, փնչալ. ~ out ուռցնել. ~ out one's cheeks այտերն ուռցնել. ~ out smoke ծխի քուլաներ բաց թողնել/արծակել. ~ and blow/pant ծանր շնչել/հևալ. The train ~ed out of the station *Գնացքը փնչացնելով մեկնեց.* *փխբ.* ուռչել, փքվել. ~ up with pride հպարտությունից փքվել:  
**puff ball** [ˈpʌfbɔ:l] n անձրևասունկ:  
**puff-box** [ˈpʌfbɒks] n դիմափոշաման:  
**puff pastry, puff paste** [ˈpʌfpeɪstri, ˈpʌfpeɪst] n շերտավոր խմոր:  
**puffy** [ˈpʌfi] a ուռած. պարծենկոտ, սնապարծ. ~ wind պոռթկում, սրընթաց քամի. ~ style փքուն/ճոռոն ոճ:  
**pug** [pʌg] n մոպս, շնիկ. կճատ քիթ:  
**pugilist** [ˈpjʊ:dʒɪlɪst] n բռնցքամարտիկ:  
**pugnacious** [pʌgˈneɪʃəs] a կռվարար, կռվասեր:  
**pug-nosed** [ˌpʌgˈnəʊzɪd] a կճատ քթով:  
**puke** [pjʊ:k] v սիրտը հետ տալ:  
**pull** [pʊl] n ձգում, ձգանք, ձգողություն. թիակի հարված, թիավարություն. give the rope a ~ պարանը ձգել. take a ~ at the cigarette ծխախոտը ներս քաշել. a dead ~ ապարդյուն ջանք. the ~ *փխբ.* ձգողական ուժ. (կում/ումայ) take a ~ at կում/ումայ անել. a hard ~ uphill դժվար վերելք սարնիվեր. *խսկց.* ծանոթություն, կապեր have ~ with the head office վարչությունում կապեր ունենալ. have the ~ of առավելություն ունենալ:  
**pull** [pʊl] v ձգել, ձիգ տալ քաշել. ~ a bell զանգը տալ/քաշել. ~ smb's hair մեկի մազերը քաշել. ~ the curtains վարագույրները

քաշել. ~ a muscle մկանը ձգավմասել. ~ a tooth/cork ատամը/խցանը հանել. ~ a trigger ձգանը ձգել. ~ face/faces ծամածռություններ անել. ~ smth to pieces մասերի բաժանել. *փխբ.* խիստ քննադատել. ~ smb's leg *փխբ.* քթից բռնած ման ածել, խաբել. ~ ahead առաջ ընկնել. ~ ashore դեպի ափ թիավարել. ~ apart անջատել, մասերի բաժանել. The table ~s apart Սեղանը բացովի է. ~ down իջեցնել. ~ down the blinds վարագույրները իջեցնել. ~ down the house շենքը քանդել. ~ off վրայից հանել. հեռանալ. ~ off the road ճանապարհից դուրս գալ. ~ out հանել, դուրս քաշել. ~ out the troops զորքերը դուրս բերել. ~ through հաղթահարել (հիվանդություն, դժվարություն). ~ together միավորվել. ~ the family together միավորել/համախմբել ընտանիքը. ~ oneself together իրեն հավաքել, զգաստանալ. ~ the plant up by the roots բույսը արմատով դուրս քաշել. ~ up sharply կտրուկ արգելակել:

**pullet** [ˈpʊlɪt] n վառել:

**pulley** [ˈpʊli] n *տեխ.* հոլովակ, ճախրանվակ. ճախրակ. driving ~ շարժանվակ:

**pull-in** [ˈpʊlɪn] n ճանապարհամերձ սրճարան:

**pullman** [ˈpʊlmən] n ննջավագոն:

**pull-over** [ˈpʊl,əʊvə] n անօձիք/անկոճակ սվիտեր:

**pulmonary** [ˈpʊlmənəri] a թոքային, թոքերի, թոքի:

**pulp** [pʌlp] n միջուկ. պտուղների կակղանը/փափուկ մասը. wood ~ փայտանյութի զանգված. The heat reduced me to ~ *փխբ., խսկց.* Շոգից կակղել եմ:

**pulpy** [ˈpʌlpi] a փափուկ, մսոտ (պտուղների մասին):

**pulsate** [pʌlˈseɪt] v բաբախել, զարկել:

**pulse** [pʌls] 1. n *կզմխ.* զարկերակ. բաբախյուն, տրոփում. թրթռ. feel/take smb's ~ զարկերակը շոշափել. *փխբ.* մեկի մտադրություններն իմանալ. 2. v բաբախել, զարկել. տրոփել:

**pulverize** [ˈpʌlvəraɪz] v փոշիացնել, փոշեցրիվ անել:

**pulverizer** [ˈpʌlvəraɪzə] n հեղուկացիր, փոշեցիր (պուլվերիզատոր):

**puma** [ˈpjʊ:mə] n *կենդ.* ամերիկյան

կատվառյուծ:  
**pumice(-stone)** [ˈpʌmɪstəʊn] **n** պեմզա (քար):  
**pummel** [ˈpʌml] **v** բռունցքներով դնգսել, ծեծել:  
**pump** I [pʌmp] **n** պոմպ, ջրհան. air ~ օդապոմպ. petrol ~ բենզապոմպ:  
**pump** II [pʌmp] **n** պարահանդեսի կիսակոշիկ:  
**pump** [pʌmp] **v** քաշել, հանել. ~ water out of a tank/into a tank պոմպով ջուրը դուրս հանել ջրամբարից/լցնել ջրամբար:  
**pumping station** [ˈpʌmpɪŋ ˈsteɪʃn] **n** պոմպակայան:  
**pumpkin** [ˈpʌmpkɪn] **n** դդում:  
**pump-room** [ˈpʌmpru:m] **n** պոմպակայան:  
**pun** [pʌn] **n** բառախաղ. perpetrate a ~ բառախաղ ստեղծել:  
**punch** I [pʌntʃ] **1.** **n** բռունցքի հարված. give a ~ բռունցքով հարվածել. (ուժ) lack ~ ուժ չունենալ. pack quite a ~ ուժեղ բռունցք ունենալ: **2.** **v** բռունցքով խփել. I ~ed him on the jaw ես նրա ծնոտին հասցրի:  
**punch** II [pʌntʃ] **n** դակիչ, դրոշմիչ:  
**punch** III [pʌntʃ] **n** փունջ, ջերմօղի. պունջ:  
**punch** [pʌntʃ] **v** դակել, ծակել. դրոշմել. ~ a hole ծակել. ~ a ticket տոմսը դակել. ~ out computer cards դակել համակարգչի պերֆորատոր:  
**punchball** [ˈpʌntʃbɔ:l] **n** (բռնցքամարտի) կախովի տանձ:  
**punch-line** [ˈpʌntʃlaɪn] **n** the ~ of a story պատմության/պատմվածքի աղը:  
**punch up** [ˈpʌntʃʌp] **n** կռվչտոց, ծեծկռտոց, տուրուդմփոց:  
**punctilious** [pʌŋkˈtɪliəs] **a** մանրակրկիտ, բժախնդիր:  
**punctual** [ˈpʌŋktʃuəl] **a** ճշտապահ, ճշգրիտ, ճշտակատար. be ~ in paying the bills հաշիվները միշտ ժամանակին մուծել/փակել. Please, be ~ խնդրում եմ չուշանաք:  
**punctually** [ˈpʌŋktʃuəli] **adv** ճշգրտորեն, ճշտապահ կերպով. come ~ ժամանակին գալ. at 7 o'clock ~ ուղիղ ժամի յոթին:  
**punctuality** [ˌpʌŋktʃuˈæləti] **n** ճշգրտություն, ճշտապահություն:  
**punctuate** [ˈpʌŋktʃueɪt] **v** կետադրության

նշաններ դնել. *փխք.* ընդհատել, ընդմիջել. a speech ~ed by bursts of applause ծափահարություններով ընդհատվող ճառ:  
**punctuation** [ˌpʌŋktʃuˈeɪʃn] **n** կետադրություն. ~ marks կետադրության նշաններ:  
**puncture** [ˈpʌŋktʃə] **1.** **n** ծակ, ծակվածք (անվադողի և այլն). I've got a ~ անվադողի ծակվել է. **2.** **v** ծակ(վ)ել, պայթել. ~ a tyre անվադողը ծակել:  
**pungency** [ˈpʌndʒənsi] **n** կծվածություն, դառնություն:  
**pungent** [ˈpʌndʒənt] **a** կծու, դառը, բարկ:  
**punish** [ˈpʌnɪʃ] **v** պատժել, տույժի ենթարկել. *խսկց.* (մեկի հետ) վատ վարվել. ~ the car *փխք.*, *խսկց.* չխնայել մեքենան:  
**punishable** [ˈpʌnɪʃəbl] **a** պատժելի. ~ by a fine տուգանքով պատժելի:  
**punishment** [ˈpʌnɪʃmənt] **n** պատիժ. corporal ~ մարմնական պատիժ. capital ~ մահապատիժ. set a ~ պատիժ տալ. avoid/escape ~ խուսափել պատժից. take one's ~ պատիժը կրել:  
**punitive** [ˈpju:nətɪv] **a** պատժիչ:  
**punster** [ˈpʌnstə] **n** սրախոս:  
**punt** I [pʌnt] **n** հարթահատակ նավակ:  
**punt** II [pʌnt] **n** զնդակը ձեռքից դուրս գցել (դարպասապահը):  
**puny** [ˈpju:ni] **a** փոքր, նվազ, տկար. ~ child/youth նվազ երեխա/պատանի. ~ muscles թույլ մկաններ. ~ efforts *կտկ.* խղճուկ ջանքեր:  
**pup** [pʌp] **1.** **n** լակոտ, թուլա. ծովափղի ձագ. **2.** **v** ձագ/լակոտներ բերել. ցնկնել:  
**pupil** [ˈpju:pəl] **n** *կզմ/ս.* աչքի բիր:  
**pupil** [ˈpju:pəl] **n** աշակերտ, սովորող. սան, սանիկ:  
**pupil(l)age** [ˈpju:pəlɪdʒ] **n** աշակերտություն, աշակերտական վիճակ:  
**puppet** [ˈpʌpɪt] **n** տիկնիկ, խամաճիկ. խաղատիկնիկ. ~ play/show տիկնիկային թատրոն. a ~ government *փխք.* խամաճիկային կառավարություն:  
**puppetry** [ˈpʌpɪtri] **n** տիկնիկային կատակերգություն. կեղծ բարեպաշտություն:  
**puppy** [ˈpʌpi] **n** լակոտ, շան ձագ. թուլա, ձագուկ:  
**purblind** [ˈpə:blaɪnd] **a** կիսակույր. *փխք.* անհեռատես, դժվար հասկացող, բութ:  
**purchasable** [ˈpə:tʃəsəbl] **a** զնելի, զնման

ենթակա. ծախու, կաշառվող:  
**purchase** [ˈpɜ:tʃəs] 1. n զնում, գնած իր. ~ tax զնման հարկ. 2. v գնել, ձեռք բերել:  
**purchaser** [ˈpɜ:tʃəsə] n զնորդ:  
**purchasing power** [ˈpɜ:tʃəsiŋ,paʊə] n զնողունակություն:  
**pure** [pjʊə] a մաքուր, անխառն, զուտ. իսկական, կատարյալ. ~ air/vine մաքուր օդ. անխառն զինի. by ~ chance *խսկց*. լրիվ պատահաբար. ~ nonsense պարզապես հիմարություն:  
**purebred** [ˈpjʊəbred] a զտարյուն, ազնվացեղ:  
**purely** [ˈpjʊəli] adv միանգամայն, կատարելապես, բացառապես:  
**purgative** [ˈpɜ:gətɪv] n լուծողական:  
**purgatorial** [ˌpɜ:gəˈtɔ:riəl] a մաքրող, մաքրիչ. մեղքերը քավող:  
**purgatory** [ˈpɜ:gətɪri] n քավարան. տանջավայր, դժոխք:  
**purge** [pɜ:dʒ] n մաքրում. զտում. *բժշկ*. լուծողական:  
**purge** [pɜ:dʒ] v մաքրել, զտել, սրբել. *քղք*. մաքրել. *բժշկ*. լուծողական տալ:  
**purification** [ˌpjʊəɪfɪˈkeɪʃn] n զտում, մաքրում, սրբագործում:  
**purifier** [ˈpjʊəɪfaɪə] n մաքրիչ, զտիչ:  
**purify** [ˈpjʊəɪfaɪ] v մաքր(վ)ել:  
**purist** [ˈpjʊəɪst] n մաքրախնդիր անձ, պուրիստ:  
**puritan** [ˈpjʊəɪtən] n մաքրակրոն, խիստ բարեպաշտ անձ. պուրիտան:  
**puritanical** [ˌpjʊəɪˈtænɪkl] a պուրիտանական:  
**purity** [ˈpjʊəɪtɪ] n մաքրություն, անմեղություն. (ազնիվ մետաղների) հարգ:  
**purl** I [pɜ:l] 1. n խոխոջյուն, կարկաչյուն. 2. v խոխոջել, կարկաչել:  
**purl** II [pɜ:l] n ասեղնագործ:  
**purlieu** [ˈpɜ:lju:] n շրջակայք. հետնախորշ. աղքատ թաղամաս:  
**purple** [ˈpɜ:pl] n ծիրանագույն. մուգ կարմիր. մանուշակագույն. ~ with rage զայրույթից կարմրած:  
**purport** [ˈpɜ:pət] n իմաստ, բովանդակություն, միտք. միտում, նպատակ:  
**purport** [ˈpɜ:pət] v ասել, վկայել. ենթադրել, նշանակել. ~ to be a poet իրեն պոետ համարել. The document ~s to be the original Այս

փաստաթուղթը համարվում է բնագիր:  
**purpose** [ˈpɜ:pəs] n նպատակ, մտադրություն. to the ~ տեղին, նպատակին հարմար. on ~ դիտմամբ, նպատակադրված. pursue/achieve one's ~ հետամուտ լինել/հասնել նպատակին. for all practical ~s փաստորեն, ըստ էության. answer/serve the ~ նպատակին ծառայել. serve no useful ~ լավ ծառայություն չմատուցել. to no/little ~ անարդյունք. քիչ արդյունավետ, ապարդյուն. to some/good ~ (մեծ) հաջողությամբ. (մտադրություն) lack sense of ~ նպատակասլաց չլինել. have great sense of ~ նպատակասլաց լինել:  
**purpose** [ˈpɜ:pəs] v մտադրվել, մտադիր լինել:  
**purposeful** [ˈpɜ:pəsfl] a նպատակասլաց. մտածված, դիտավորյալ:  
**purposeless** [ˈpɜ:pəsles] a աննպատակ. ոչ դիտավորյալ. անօգուտ, անարդյունք:  
**purposely** [ˈpɜ:pəsli] adv դիտավորյալ կերպով, կանխամտածված. դիտմամբ:  
**purr** [pɜ:] n, v մռլտոց, մռռոց. մռռալ, մռլտալ:  
**purse** [pɜ:s] n քսակ, դրամապանակ. *փխք*. դրամ, փող, հարստություն. long/heavy ~ հարստություն, ունևորություն, առատություն. light ~ չքավորություն, աղքատություն. the public ~ պետական գանձարանը. button up one's ~ ժլատություն անել. have a common ~ ընդհանուր միջոցներ ունենալ. open one's ~ քսակը բանալ, առատաձեռն լինել. hold the ~ strings փողերը տնօրինել. ~ proud հարստությամբ հպարտ:  
**purse** [pɜ:s] v հավաքել, կլորացնել. ~ up one's lips շրթունքերը հավաքել/կուչ ածել:  
**pursuance** [pɜˈsjʊ:əns] n կատարում, կատարելը. in ~ of one's duties իր պարտականությունները կատարելիս:  
**pursuant** [pɜˈsjʊ:ənt] adv ~ to համաձայն, համեմատ:  
**pursue** [pɜˈsjʊ:] v հետապնդել, հալածել, հետամուտ լինել. ձգտել. The police ~d the thief Ոստիկանությունը հետապնդում էր գողին. ~ an objective նպատակ հետապնդել. ~ fame փառքի հետևից ընկնել. (վարել, շարունակել) ~ a policy/an inquiry քաղաքականություն/հետաքննություն վարել. ~ one's studies ուսումը շարունակել:  
**pursuer** [pɜˈsjʊ:ə] n հետապնդող:

**pursuit** [pə'sju:t] n հետապնդում, հալածանք. in ~ of մի բանի հետամուտ. in ~ of the burglar հետապնդելով կողոպտիչին. in ~ of pleasure հաճույք փնտրելով. (զբաղմունք) leisure ~s ազատ ժամանակի զբաղմունք:

**purulent** ['pjʊərələnt] a թարախային, թարախակալած:

**purvey** [pə'vei] v հայթայթել, մատակարարել:

**purveyance** [pə'veiəns] n պաշարներ. մթերում, պաշարներ տեսնելը:

**purveyor** [pə'veiə] n մատակարարող, մթերող:

**purview** ['pə:vju:] n շրջանակ, բնագավառ. ոլորտ, իրավասություն:

**pus** [pʌs] n թարախ:

**push** [pʊʃ] n հրում, հրոց. give a ~ հրել. get the ~ *փխք*. պաշտոնանկ արվել. (եռանդ, նախաձեռնություն) make a ~ մեծ ջանք գործադրել. He needs a ~ *փխք*. Նրան հարկավոր է խթանել. He's got no ~ Նա հաստատական/նպատակասլաց չէ:

**push** [pʊʃ] v հրել, բոթել. ստիպել. ճնշում գործադրել. ~ The door դուռը հրել. ~ a pram մանկական սայլակը գլորել. ~ a button կոճակը սեղմել. The parents ~ed the boy Ծնողները ճնշում էին տղային. (գովազդել) ~ a product ապրանք գովազդել. ~ drugs թմրադեղեր վաճառել/վաճառքով զբաղվել. Don't ~ your luck Բախտի հետ խաղ մի անի. (ստիպել. ճնշում գործադրել) ~ into medicine ստիպել բժշկությանը զբաղվել. ~ smn for an answer ստիպել պատասխանել. ~ oneself իրեն խթանել. be ~ed on money/time փողը չբավարարել. շատ քիչ ժամանակ ունենալ. Don't ~ ! Մի՛ հրեք. ~ ahead շարունակել առաջ շարժվել. ~ around *խսկց*. գրգռել, զայրացնել. ~ away հետ մղել, հեռացնել. ~ down սեղմել, ճնշել. ~ smn forward մեկին առաջ մղել/քշել. ~ into մեջը գցել. ~ into the water ջրի մեջ գցել/հրել ~ off հետ հրել. ~ a boat off նավակը ափից հետ հրել. ~ through հրելով առաջ շարժվել. ~ through the crowd ամբոխի միջով առաջ շարժվել:

**push-button** ['pʊʃ,bʌtn] 1. n կոճակ (զանգի, անջատիչի և այլն) 2. a մեքենայացված. ~ control կառավարման կոճակի սարք:

**pushbike** ['pʊʃbaik] n *խսկց*. հեծանիվ:

**push-cart** ['pʊʃkɑ:t] n ձեռնասայլակ:

**push chair** ['pʊʃtʃeə] հաշմանդամի բազկաթոռ:

**pusher** ['pʊʃə] n եռանդուն/նախաձեռնող անձ. He's a real ~ Նա ձեռներեց անձնավորություն է:

**pushing** ['pʊʃɪŋ] a եռանդուն, նախաձեռնող, ձեռներեց:

**pushover** ['pʊʃ,əʊvə] n դատարկ բան. թույլ խաղացող/հակառակորդ. The next match should be a ~ Հաջորդ խաղը պետք է որ ավելի թեթև անցնի/հեշտ լինի:

**pushups** ['pʊʃʌps] n *մրգ*. հրումներ գետնից:

**pusillanimous** [,pjʊ:si'ləniməs] a փոքրոգի:

**pussy, pussy-cat** ['pʊsi, 'pusikæt] n փիսիկ, կատվիկ:

**pussyfoot** ['pʊsɪfʊt] n չափազանց զգույշ մարդ:

**pussy willow** ['pʊsi,wɪləʊ] n կարճաբերձ ուռենի:

**pustular** ['pʌstjʊlə] a պզուկոտ, պզուկներով ծածկված:

**put** [pʊt] v դնել. տեղավորել. ~ flowers into the water ծաղիկները ջրի մեջ դնել. ~ the baby in his chair երեխային աթոռի մեջ նստեցնել. ~ a letter in an envelope նամակը ծրարի մեջ դնել. ~ in prison բանտ նստեցնել. ~ sugar/milk շաքար գցել. կաթ լցնել. ~ money in the bank փողը բանկ դնել. ~ a patch կարկատան գցել/դնել. ~ a signature ստորագրություն դնել. ~ smb in a difficult position դժվար կացության մեջ դնել. ~ to bed անկողին դնել/քնեցնել. ~ in order կարգի բերել. ~ one in charge of պատասխանատու դարձնել. ~ smn in his place (մեկին) իր տեղը դնել. ~ above գերադասել. ~ into shape ձև տալ, ձևավորել. ~ on a horse ձիու վրա խաղազուճար դնել. ~ into one's head գլուխը մտցնել. (արտահայտել) ~ into words բառերով արտահայտել. ~ it badly անհաջող արտահայտվել/ձևակերպել. ~ it very well շատ լավ արտահայտել. ~ from English into Armenian անգլերենից հայերեն թարգմանել. ~ in black and white սևով սպիտակի վրա գրել/շարադրել. ~ (words) to music բառերին երաժշտություն հորինել. ~ in writing գրավոր արտահայտել. (դնել) ~ a tax հարկ դնել. ~ a veto արգելք/վետո դնել. ~ a bandage վի-

րակապ դնել. ~ the glass to the lips բաժակը շուրթերին մոտեցնել. ~ in the paper թերթում տպել. ~ goods on the market ապրանքը վաճառքի դնել. ~ smb (up) in a hotel հյուրանոցում տեղավորել. ~ the matter in smb's hands գործը մեկի ձեռքը տալ. ~ a question հարց տալ. ~ the blame on smb մեղքը մեկի վրա գցել. Stay ~ ! Չշարժվես. (զնահատել) ~ my friend above smn իմ ընկերոջը ավելի բարձր զնահատել. ~ the vase at 100 \$ ծաղկամանը հարյուր դոլար զնահատել. (ներկայացնել) ~ the arguments for and against թեր և դեմ փաստարկները ներկայացնել. ~ one's side of the case իր տեսակետը ներկայացնել. ~ to sea ծով դուրս գալ. ~ across փոխադրել, մյուս կողմն անցկացնել. ~ across a river գետի մյուս ափն անցկացնել. ~ aside մի կողմ դնել. խնայել. ~ money aside փողը խնայել. ~ the book aside գիրքը մի կողմ դնել. ~ away հավաքել, թաքցնել. *խսկց.* ուտել. He could ~ away four plates Նա կարող էր միանգամից չորս ափսե ուտել. ~ back նորից տեղը դնել. հետաձգել. ~ the plate back ափսեն իր տեղը դնել. ~ the meeting back ժողովը հետաձգել. ~ the clock back ժամացույցը հետ գցել. ~ down գրի առնել. ցած դնել. ~ down the lecture դասախոսությունը գրի առնել. ~ down the suitcase ճամպրուկը ցած դնել. ~ down the passengers ուղևորներին իջեցնել. ~ down a rebellion ապստամբությունը ճնշել. ~ forward առաջ քաշել. ~ forward a theory/proofs տեսություն/ապացույցներ առաջ քաշել. ~ in գցել, մեջը դնել. ~ a key in a lock բանալին կողպեքի մեջ դնել. ~ in a telephone հեռախոս տեղադրել. ~ in a remark *փխք.* դիտողություն մեջ գցել. ~ in time ժամանակ տրամադրել/ծախսել. (ներկայացնել) ~ in claims/application պահանջ/դիմում ներկայացնել. ~ in for a job աշխատանքի դիմում ներկայացնել. ~ off հետաձգել. ~ the match off խաղը հետաձգել. (հետ պահել/կանգնեցնել) ~ smb off the idea մտքից հետ կանգնեցնել. It ~ me off my food Ախորժակս փչացավ. ~ off the light լույսը հանգցնել. ~ on հազնվել, հազնել. ~ on ավելացնել. ~ on weight գիրանալ. ~ on airs երևակայել. ~ on the brakes արգե-

լակել. ~ on the kettle թեյամանը դնել. ~ on a play/display ներկայացում դնել. ~ on a special bus հատուկ ավտոբուս տրամադրել. ~ smn on to a good doctor լավ բժշկի մոտ տանել. ~ out դուրս տանել/հանել/քշել. ~ out the rubbish աղբը դուրս տանել. ~ out the flags դրոշմերը կախել. ~ out one's hand ձեռքը մեկնել. ~ out one's head գլուխը դուրս հանել. ~ out shoots ծիլեր արծակել. ~ out one's arm թևը դուրս ընկնել. (հանգցնել) ~ out the light լույսը հանգցնել. ~ out a fire հրդեհը հանգցնել. ~ out a cigarette ծխախոտը հանգցնել. ~ out a rumour լուր տարածել. ~ together հավաքել. ~ the papers together թղթերն ի մի բերել/հավաքել. all ~ together բոլորը միասին վերցրած. ~ up բարձրացնել. ~ up one's hand ձեռքը բարձրացնել. ~ up sails առագաստները բարձրացնել. ~ up a picture նկար կախել. ~ up a wallpaper պաստառել. ~ up a tent վրան դնել. ~ up prices գները բարձրացնել. ~ up for sale վաճառքի դնել. ~ up for the night գիշերվա ապաստան տալ. ~ up with համակերպվել, հանդուրժել:

**putative** ['pju:tətiv] a ենթադրյալ:

**putrefaction** [ˌpju:tri'fækʃn] n նեխում, փտում:

**putrefy** ['pju:trifai] v նեխել, փտել, քայքայվել:

**putrid** ['pju:trid] a փտած, նեխած:

**putridity** [pju:'tridəti] նեխածություն, ապականություն:

**putty** ['pʌti] n մածուկ, ծեփան:

**puzzle** ['pʌzl] n տարակուսանք, շփոթություն. հանելուկ, գլուխկոտրուկ. His behaviour is a ~ Նրա վարքագիծը հանելուկ է. a crossword ~ խաչբառ:

**puzzle** ['pʌzl] v տարակուսանքի մեջ գցել. շփոթեցնել. բարդացնել. It ~d everyone Դա բոլորին շփոթեցրեց. ~ out պարզել, լուծել. ~ over գլուխ կոտրել որևէ բանի վրա:

**puzzler** ['pʌzlə] n հանելուկ, գլուխկոտրուկ:

**puzzling** ['pʌzliŋ] a շփոթության/տարակուսանքի մեջ գցող:

**pyjamas** [pə'dʒa:məz] n pl գիշերային զգեստ, պիժամա:

**pyramid** ['pirəmid] n բուրգ:

**pyramidal** [pi'ræmidl] a բրգանման, բրգա-



## Q

- ծև:
- Q, q** [kju:] 1. n անգլերեն այբուբենի 16-րդ տառը:
- quack** I [kwæk] n կռնչյուն. 2. v կռնչալ:
- quack** II [kwæk] n հեքիմ, խաբեբա. a ~ remedy հեքիմի դեղամիջոց:
- quackery** ['kwækəri] n խաբեբայություն, շառլատանություն:
- quad** [kwɒd] n չորսնյակ. ~ density disk *հմկրգ.* ճկուն դիսկ՝ քառակի խտությամբ:
- quadrangle** ['kwɒdræŋɡl] n քառանկյունի. քառանկյունի բակ:
- quadrant** ['kwɒdrənt] n *մաթ.* շրջանագծի մեկ քառորդ մասը:
- quadrant** ['kwɒdrənt] n քառակուսի. *մաթ.* երկրորդ աստիճան, քառակուսի:
- quadratic** [kwɒ'drætɪk] a քառակուսի. ~ equation քառակուսի հավասարում:
- quadrature** ['kwɒdrətɪ] n քառակուսի մակերես. քառակուսացում:
- quadrilateral** [,kwɒdrɪ'leɪtrəl] 1. n քառակողմ պատկեր. 2. a քառակողմ, քառակողմանի:
- quadrille** [kwə'drɪl] n կադրիլ (պար):
- quadruped** ['kwɒdrʊpɪd] n չորքոտանի:
- quadruple** ['kwɒdrʊpl] n չորսկողմանի, քառակողմ. ~ alliance քառակողմ դաշնակցություն:
- quadruplets** ['kwɒdrʊplɛts] n չորս երկվորյակներ:
- quadtree** ['kwɒd'tri:] n *հմկրգ.* կվադրանտ – ծառ, չորս գիծ ծառ:
- quaff** [kwɒf] v մեծ կումերով/մի շնչով խմել:
- quag** [kwæg], a ճահիճ, ճահճուտ:
- quaggy** ['kwæɡi] a ճահճուտ, ճահճային:
- quagmire** ['kwæɡmaɪə] n ճահիճ, ճահճուտ:
- quail** [kweɪl] n լոր:
- quail** [kweɪl] v վախենալ, ցնցվել. My heart ~ed ինձ սարսափ պատեց:
- quaint** [kweɪnt] a արտասովոր, անսովոր. a ~child տարօրինակ երեխա. ~ customs հետաքրքրական սովորույթներ:
- quake** [kweɪk] n դող. երկրաշարժ. The ground ~d Գետինը սասանվեց.
- quake** [kweɪk] v դողալ, սարսռալ. ~ with fear վախից դողողալ:
- quaker** ['kweɪkə] n քվակեր (կրոնական աղանդավոր):
- quaky** ['kweɪki] a դողողոջուն:
- qualification** [,kwɒlɪfɪ'keɪʃn] n որակավորում, աստիճան, վերապահում. *հմկրգ.* ճշգրտում. paper ~s դիպլոմ. have necessary ~s ունենալ անհրաժեշտ որակավորում. have all ~s to make a good nurse ամեն անհրաժեշտ բան ունենալ լավ բուժքույր դառնալու համար. (ցենց, սահմանափակում) an age ~ տարիքային սահմանափակում. (վերապահում) without ~ անվերապահորեն. with certain ~s որոշ վերապահումներով:
- qualified** ['kwɒlɪfaɪd] a (բարձր) որակավորում ունեցող. ~ engineer դիպլոմավոր ինժեներ. highly~ teacher բարձր որակավորում ունեցող ուսուցիչ. ~ to vote ընտրելու իրավունք ունենալ. I'm not ~ to judge ինձ չի հասնում դատել այդ մասին. (սահմանափակ) a ~ success ոչ շատ մեծ հաջողություն. ~ approval հավանություն վերապահումներով:
- qualified name** ['kwɒlɪfaɪd neɪm] *հմկրգ.* բաղադրյալ/ճշգրտված անուն:
- qualifier** ['kwɒlɪfaɪə] n *հմկրգ.* ճշգրտիչ. ցուցանչող բիթ:
- qualify** ['kwɒlɪfaɪ] v որակավորել. It doesn't ~ you Դա ձեզ իրավունք չի տալիս. (չափավորել, մեղմել) ~ one's criticism մեղմել/չափավորել քննադատությունը. I'd like to ~ that statement Կցանկանայի մի փոքր ճշտել այդ միտքը. He qualified last year Նա դիպլոմն անցյալ տարի է ստացել. ~ for the final *մրգ.* դուրս գալ եզրափակիչ փուլ. ~ as a light-weight *մրգ.* հանդես գալ որպես թեթև քաշային:
- qualifying** ['kwɒlɪfaɪɪŋ] a որակավորման. ~ rounds ընտրական մրցումներ. ~ bit *հմկրգ.*

ցուցանչող բիթ:

**qualitative** ['kwɒlɪtətɪv] a որակական:

**qualit/y** ['kwɒlɪtɪ] n որակ. տեսակ. high/poor ~ բարձր/վատ որակ. high/low ~ goods բարձր/ցածր, վատ որակի ապրանքներ. good/high ~ cloth բարձրորակ գործվածք. improve/guarantee the ~ of [ավագնել/ապահովել որակը. rare/particular ~ հազվագյուտ/հատուկ հատկանիշ. ~ stamp որականիշ. (արժեք, արժանիք) moral ~ ies բարոյական արժեքներ. personal ~ ies անձնական արժանիքներ:

**qualm** [kwa:m] n վարանմունք, տատանում. have ~s about smth տատանվել մի բանի կապակցությամբ. ~s of conscience խղճի խայթ:

**quandary** ['kwɒndəri] n տարակուսանք, դժվարին կացություն. be in a ~ տարակուսել, դժվարին կացության մեջ լինել. help smn out of a ~ օգնել մեկին դժվար կացության պահին:

**quantitative** ['kwɒntɪtətɪv] a քանակական:

**quantit/y** ['kwɒntɪtɪ] n քանակ. մեծ քանակություն. negligible ~ աննշան մեծություն. *փխբ.* աննշան մարդ. unknown ~ մաթ. անհայտը (մեծություն) transition from ~ to quality *փիլ.* անցում քանակական փոփոխություններից որակական փոփոխություններին. in large ~ ies մեծ չափերով. a known ~ տվյալ մեծությունը. He is a bit of unknown ~ *փխբ., խսկց.* Յայտնի չէ, թե ինչ մարդ է նա. the ~ of a syllable *լեզվ.* վանկի երկարությունը:

**quantum** ['kwɒntəm] n քանակ, գումար. *ֆիզ.* քվանտ. ~ theory քվանտային տեսություն:

**quarantine** ['kwɒrənti:n] n կարանտին. put in ~ կարանտինի ենթարկել. be/keep in ~ կարանտինի մեջ լինել/պահել:

**quarrel** ['kwɒrəl] n վեճ, կռիվ. have a ~ վիճել. pick a ~ կռվի առիթ փնտրել. have no ~ with the statement հայտարարությունը չժխտել (համաձայն լինել):

**quarrel** ['kwɒrəl] v վիճել, կռվել. ~ about/over (money) վիճել (փողի) համար. ~ about which way to choose վիճել՝ որ ուղղությունն ընտրել:

**quarrelling** ['kwɒrəlɪŋ] n կռիվ, վեճ. There is constant ~ in their house *Երանց տանը անընդհատ վեճ կա:*

**quarrelsome** ['kwɒrəlsəm] a կռվարար. The children are very ~ *Երեխաներն անընդհատ կռվում են:*

**quarry** I ['kwɒri] n քարհանք (*ճակ քար* ~). *փխբ.* տեղեկության աղբյուր:

**quarry** II ['kwɒri] n որս, հետապնդվող կենդանի. *փխբ.* կանխորոշված զոհ:

**quarry** ['kwɒri] v քարհանքը շահագործել. ~ marble մարմար հանել:

**quart** ['kwɔ:t] n կվարտ (ԱՄՆ՝ 0, 95 լիտր. Անգլիա՝ 1, 14 լիտր):

**quarter** ['kwɔ:tə] n քառորդ, քառորդամաս. a ~ of the price գնի մեկ քառորդը. divide into ~s չորս մասերի բաժանել. (ժամանակ) a ~ to one մեկից քառորդ պակաս. The moon is in its last ~ *Լուսնն իր վերջին քառորդում է.* (թաղամաս, թաղ) Chinese ~ չինական թաղամաս. from every ~ տարբեր թաղերից/կողմերից. from no ~ ոչ մի տեղից/կողմից. at close ~s մոտերքում. come to close ~s *փխբ.* վեճի բռնվել. apply to the right ~ դիմել ուր հարկն է. in the highest ~ բարձր շրջաններում. ~s (*ճակ living ~s*) բնակարան, կացարան. move to new ~s նոր բնակարան տեղափոխվել. live in cramped ~s նեղվածքի մեջ ապրել. winter ~s *նզմ.* ձմեռային զորաբնակատեղ/կայան. give no ~ չխնայել. hind ~s (անասունի) հետևի մասը. ~ final *մրզ.* քառորդ եզրափակիչ. reach the ~(s) քառորդ եզրափակիչ դուրս գալ:

**quarter** ['kwɔ:tə] v չորս մասի բաժանել. ~ the troops in the town *նզմ.* զորքերը քաղաքում տեղավորել/բնակեցնել:

**quarterly** ['kwɔ:təli] 1. n տարին չորս անգամ լույս տեսնող պարբերական. 2. a. եռամսյա. 3. adv երեք ամիսը մեկ:

**quartermaster** ['kwɔ:tə,mɑ:stə] n *նզմ.* տնտեսական մասի պետ. բնակարանապետ:

**quartet(te)** [kwɔ:'tɛt] n *երժշ.* քառյակ, կվարտետ:

**quartz** [kwɔ:ts] n *հնք.* կվարց:

**quash** [kwɒʃ] v ոչնչացնել, չեղյալ հայտարարել. ~ a verdict *իրավ.* դատավճիռը չեղ-

յալ համարել:  
**quasi** ['kweizai] adv կարծես թե, գրեթե, համարյա:  
**quaver** ['kweivə] n ձայնի դողալը, դայլայլ:  
**quavery** ['kweivəri] a դողացող, թրթռուն, երերուն:  
**quay** [ki:] n ծովապատնեշ, նավամատույց:  
**queasiness** ['kw:zɪnɪs] n սրտխառնոց:  
**queasy** ['kwɪ:zi] a սրտխառնիչ. feel ~ սիրտը խառնել, վատ զգալ:  
**queek** [kwɪ:k] v կանչել, կռնչալ (բուն):  
**queen** [kwɪ:n] n թագուհի. (մեղուների) պարսամայր. *թղթիս*. աղջիկ:  
**queenly** ['kwɪ:nli] a թագուհու պես, թագուհուն վայել:  
**queer** [kwɪə] a տարօրինակ, օտարոտի. a ~ person/fish տարօրինակ անձնավորություն. ~ in the head ծալը պակաս. a ~ sort of business կասկածելի գործ:  
**quell** [kwel] v ճնշել, ընկճել. խեղդել (վախը):  
**quench** [kwentʃ] v մարել, հանգցնել. հազեցնել. ~ the fire հրդեհը հանգցնել. ~ one's thirst ծարավը հազեցնել. *փխթ*. զսպել, խեղդել (զգացմունքը) ~ one's ardour եռանդը զսպել:  
**quenchless** ['kwentʃləs] a անմար, անշեջ, անհազ:  
**querulous** ['kwɛrʊləs] a դժգոհ, դյուրաբորբոք. քմահաճ. ~ old man դժգոհ, քմահաճ ծերուկ. a ~ child քմահաճ երեխա:  
**query** I ['kwɪəri] n հարց, կասկած, հարցական նշան. Put a ~ against it Դրա դիմաց հարցական նշան դիր. There is a ~ կասկած կա. raise a ~ about հարցի տակ դնել:  
**query** II ['kwɪəri] n *հմկրգ*. հարցում ~ facilities հարցման/փնտրման միջոցներ. ~ language հարցումների լեզու. ~ by example, QPE հարցում ըստ օրինակի:  
**query** ['kwɪəri] v կասկածել, կասկածի տակ առնել. ~ one's honesty կասկածի տակ առնել մեկի ազնվությունը. ~ the bill կասկածել հաշվի ճշտության վրա:  
**quest** [kwɛst] n որոնումներ. փնտրտուք. in ~ of մի բան փնտրելիս:  
**question** ['kwɛstʃən] n հարց. put, ask/answer a ~ հարց տալ, հարցին պատասխանել. a leading ~ հուշող հարց. poignant ~ սուր/ցավոտ հարց. parry a ~ պատասխանից խուսափել. (խնդիր, պրոբլեմ) a topical/pressing ~ հրատապ/անհետաձգելի խնդիր. bring up the ~ խնդիր բարձրացնել. that's the ~ ահա թե ինչն է խնդիրը/բանը. out of the ~ խոսք չի կարող լինել. a matter in ~ քննարկվող խնդիր. no longer in ~ այլևս խնդիր չկա. settle a ~ խնդիրը/հարցը լուծել. a person in ~ քննարկվող անձը. (կասկած) beyond/out of/without ~ կակածից դուրս, անկասկած. call smth in ~ կասկածի տակ դնել:

**question** ['kwɛstʃən] v հարց տալ, հարցնել. *իրավ*. հարցաքննել. ~ closely մանրամասն հարցաքննել. (կասկածի տակ առնել) ~ the truth of կասկածել մի բանի ճշմարտությանը. ~ the expence կասկածի տակ դնել ծախսերը:  
**questionable** ['kwɛstʃənəbl] a կասկածելի, վիճելի. His experience is ~ Նրա փորձը կասկածելի է:  
**questioning** ['kwɛstʃənɪŋ] n հարցաքննում. The police called them in for ~ Ոստիկանությունը կանչեց նրանց հարցաքննության. counter ~ խաչաձև հարցաքննություն:  
**questionless** ['kwɛstʃənləs] 1. a անկասկած, անվիճելի. 2. adv անկասկած:  
**question-mark** ['kwɛstʃənma:k] n հարցական նշան:  
**questionnaire** [,kwɛstə'neə] n հարցաթերթիկ, հարցարան:  
**queue** [kju:] n հերթ. stand in a / join/ jump the ~ հերթ կանգնել. առանց հերթ մտնել. *հմկրգ*. ~ discipline հերթի կազմակերպում, պլանավորման ալգորիթմ:  
**queue** [kju:] v հերթ կանգնել:  
**queuing theory** ['kju:ɪŋ 'θiəri] զանգվածային սպասարկման տեսություն:  
**quibble** ['kwɪbl] n խուսափում, շեղում (հարցից):  
**quibble** ['kwɪbl] v վիճել չնչին բաների համար. Don't ~ Մի՛ վիճեք (դատարկ բաների համար):  
**quick** [kwɪk] n զգայուն տեղ. cut to the ~ սաստիկ վիրավորել. to the ~ մինչև ուղն ու ծուծը. the ~ and the dead կենդանիներն ու մեռածները:  
**quick** [kwɪk] a արագ, արագաշարժ. be ~ շտապել. at a ~ pace արագ քայլերով. ~ serv-

ice արագ սպասարկում. ~ as a flash կայ-  
ծակնային արագությունը. in ~ succession  
իրար հետևից. have a ~ one *խսկց*. մի քիչ  
խմել. (սուր, ուշիմ) a ~ eye/ear սուր աչք,  
նուրբ լսողություն. have a ~ wit ուշիմ/  
սրամիտ լինել. ~ with one's hands հմուտ  
ձեռքեր ունենալ. ~ to anger շուտ գայրանալ.  
You are too ~ for me Չափազանց արագ  
եք խոսում. be ~ off the mark դուրաշարժ  
լինել:

**quick-acting** [kwik 'æktiŋ] a արագ գոր-  
ծող:

**quicken** ['kwikən] v արագանալ, արագաց-  
նել. ~ the pace քայլերն արագացնել. The  
pace ~ed *Տեմպն արագացավ*:

**quickie** ['kwiki] n *խսկց*. արագ խմելիք.  
There is time for a ~ Արագ խմելու ժամանակ  
կա:

**quicklime** ['kwiklaim] n չհանգած/չմարած  
կիր:

**quickly** ['kwikli] adv արագորեն, արագու-  
թյամբ:

**quickness** ['kwiknəs] n արագություն. ~ of  
mind մտքի արագություն, ուշիմություն:

**quicksand** ['kwiksænd] n երերուն/շարժվող  
ավազ:

**quickset** ['kwikset] n դալար ցանկապատ:  
**quicksilver** ['kwik,silvə] n սնդիկ:

**quickstep** ['kwik,step] n քվիկսթեփ (պար).  
*զինվ.* արագ քայլ:

**quick-tempered** [,kwik'tempəd] a արագ/  
շուտ բռնկվող:

**quick-witted** [,kwik'witid] a խելամիտ,  
հնարամիտ, ուշիմ:

**quid** [kwid] n *խսկց*. ծխախոտ՝ ծամելու  
համար. ֆունտ ստերլինգ:

**quiddity** ['kwidəti] n էություն. սոփեստու-  
թյուն:

**quiescence** [kwi'esns] n հանգստություն,  
անդորրություն:

**quiescent** [kwi'esnt] a հանգիստ, անդոր-  
րավետ, *փխբ.* անգործունյա:

**quiet** ['kwaɪət] n հանգիստ, անդորր, լռու-  
թյուն. the ~ of the night գիշերվա անդորրը.  
on the ~ անդորրության մեջ:

**quiet** ['kwaɪət] a լուռ, անաղմուկ. հանգիստ,  
խաղաղ. a ~ town/temperament հանգիստ  
քաղաք/խառնվածք. բնավորություն. a ~

corner խաղաղ անկյուն. in a ~ voice հան-  
դարտ ձայնով. Anything for a ~ life ! Ամեն  
ինչ կտայի հանգիստ ապրելու համար. ~  
colours հանգիստ/ոչ վառ գույներ. a ~ wed-  
ding համեստ հարսանիք. ~ irony նուրբ հեգ-  
նամք. Business is ~ *Գործերում անդորր է*  
տիրում. (զաղտնի) on the ~ զաղտնի. He did  
it on the ~ *Նա դա զաղտնի(աբար) արեց.*  
keep ~ լռել, չխոսել (այդ մասին). Keep ~ !  
Լռություն, Չաղմկել. keep ~ about smth  
զաղտնի պահել:

**quiet(en)** ['kwaɪət(n)] v հանգստացնել,  
հանդարտեցնել. հանդարտվել, հանգստա-  
նալ. ~ a child երեխային հանգստացնել. His  
anger ~ed down *Նրա զայրույթը հան-  
դարտվեց.* ~ one's fears կասկածները  
ցրել. The wind ~ed down *Քամին հանդարտ-  
վեց:*

**quietly** ['kwaɪətli] adv հանդարտ կերպով.  
հանդարտորեն, անաղմուկ. enter ~ անաղ-  
մուկ մտնել. dress ~ պարզ/համեստ հագն-  
վել. dine ~ հանգիստ/խաղաղ ճաշել:

**quietness** ['kwaɪətnəs] n, **quietude** n հանգըս-  
տություն, լռություն, անդորրություն:

**quill** [kwil] n թռչունի փետուր. փետուր,  
գրիչ. drive a ~ գրող լինել, գրականությամբ  
զբաղվել. ~ driver *կտկ.* թուղթ մրտող,  
գրչակ:

**quilt** [kwilt] n փետուրե վերմակ/ցերքնակ.  
մզդակած վերմակ:

**quilted** ['kwiltid] a մզդակած. ~ jacket  
մզդակած բամբակաբաճկոն:

**quin binary** ['kwɪn 'bainəri] *հմկրգ.*  
հնգակի-երկակի:

**quince** [kwɪns] n սերկևիլ (ծառը և  
պտուղը):

**quincenary** [,kwɪnsən'ti:nəri] n հինգ-  
հարյուրամյակ:

**quinine** [kwɪ'ni:n] n խինին/քինին, քինա-  
քինա:

**quinsy** ['kwɪnzi] n անգինա/բկաբորբ, կո-  
կորդացավ:

**quint** [kɪnt] n *երժշ.* կվինտա:

**quintal** ['kwɪntl] n ցենտներ:

**quintessence** [kwɪn'tesns] n բուն էություն,  
կվինտեսենցիա:

**quintet** [kwɪn'tet] n *երժշ.* կվինտետ,  
հնգյակ:

**quintuple** [ˈkwɪntjʊpl] a հնգապատիկ, հինգ մասից բաղկացած: ~s հնգյակ երկվորյակ:

**quip** [kwɪp] n կծու ծաղր, խորամանկություն:

**quire** [ˈkwaɪə] n մի ձեռք/կապ (դաստա) թուղթ, չկազմված գիրք:

**quirk** [kwɜːk] n քմահաճույք, տարօրինակություն. բառախաղ. He has his ~s Նա իր տարօրինակություններն ունի. ~s of fate բախտի քմահաճույք:

**red** [red] n կարմիր գույն. the Reds Ամերիկայի հնդկացիները, կարմրամորթներ. the Reds *քղք.* կարմիրներ, հեղափոխականներ. be in the ~ *փխք.* պարտքի մեջ լինել. see ~ կատաղել, մոլեգնել. Red Cross Կարմիր խաչ:  
**red** [red] a կարմիր light/dark ~ բաց/մուգ կարմիր. be/go/turn ~ կարմրել. ~ cheeks/hair կարմիր այտեր, շիկակարմիր մազեր. ~ currant կարմիր հաղարջ:  
**redbreast** [ˈredbreɪst] n կարմրալանջ, շիկահավ (թռչուն):  
**redcoat** [ˈredkəʊt] n բրիտանական բանակի զինվոր:  
**redde** [ˈredn] v կարմրել, շիկնել. կարմրացնել, կարմիր ներկել:  
**reddish** [ˈrediʃ] a կարմրավուն:  
**redeem** [riˈdi:m] v հետ գնել, գրավաթափել. հատուցել, փոխհատուցել. ~ smth from pawn գրավատնից ապրանք հետ գնել. գրավաթափել. ~ oneself մեղքը քավել. ~ a promise խոստումը կատարել:  
**redeemer** [riˈdi:mə] n փրկիչ, փրկարար, ազատարար. *եկեղ.* փրկիչ:  
**redemption** [riˈdempʃn] n հետ գնելը, գրավաթափելը:  
**red-handed** [ˌredˈhændɪd] a արյունոտ ծեռքերով. catch smb ~ հանցանքի վայրում բռնել:  
**red-hot** [ˌredˈhɒt] a շիկացած, շիկակարմիր. *փխք.* զրգռված, հուզված. ~ metal շիկակարմիր մետաղ. ~ news թարմ լուրեր:  
**redistribute** [ˌri:diˈstri:bju:t] v վերաբաշխել, վերաբաժանել:  
**redistribution** [ˌri:diˈstri:bju:ʃn] n վերաբաշխում, վերաբաժանում:  
**red-letter** [ˌredˈletə] a տոնական օրվա (օրացույցի վրա). հիշարժան, երջանիկ. a ~ day տոնական օր:

**redness** [ˈrednəs] n կարմրություն:

**redouble** [ˌriːˈdʌbl] v կրկնապատկ(վ)ել:

**redoubt** [riˈdaʊt] n *nqd.* դաշտային հողե ամրություն, ռեդուտ:

**redraft** [ˌriːˈdra:ft] v վերանախագծել, վերակազմել, վերափոխել. ~ an argument համաձայնագիրը/պայմանագիրը վերափոխել:

**redress** [riˈdres] n փոխհատուցում, բավարարում. ուղղում, վերականգնում. seek ~ փոխհատուցում պահանջել. You have no ~ Դուք փոխհատուցում չէք ստանա:

**redskin** [ˈredskin] n հյուսիսամերիկյան հնդկացի, կարմրամորթ:

**red tape** [ˌredˈteɪp] n բյուրոկրատիա, քաշքշուկ:

**reduc/e** [riˈdju:s] v նվազեցնել, պակասեցնել, քչացնել, թուլացնել. ~ prices/taxation/wages գներն իջեցնել, հարկերը նվազեցնել. աշխատավարձը պակասեցնել. ~ speed թուլացնել արագությունը. ~ pressure/temperature/ pain/ smb's chances թուլացնել ճնշումը, իջեցնել ջերմաստիճանը, թուլացնել ցավը. նվազեցնել հնարավորությունները. ~ expenditure ծախսերը կրճատել. ~ production/staff արտադրանքը/հաստիքները կրճատել. (հասցնել) ~ to despair/tears/poverty հուսահատության /աղքատության հասցնել. լացացնել. (ստիպել, հարկադրել) ~ to stealing գողության հարկադրել. ~ to submission ստիպել ենթարկվել. (նիհարել) I must ~ ես պետք է նիհարեմ. be on a ~ing diet նիհարելու դիետա կիրառել. be ~ed to a shadow ստվերի վերածվել. ~ smth to ashes մինչև վերջ այրել, մոխիր դարձնել:

**reduced** [riˈdju:sd] a իջեցված, կրճատված, նվազեցրած. ~ circumstances նեղ պայմաններ. on a ~ scale փոքրացված մասշտաբով:

**reduction** [riˈdʌkʃn] n նվազեցում, կրճատում, իջեցում. ~ of arms սպառազինությունների կրճատում. ~ in sales սպառման կրճատում. ~ in demand պահանջի իջեցում/նվազում. "big ~s" (խանութում) զգալիորեն զեղչված գներ:

**redundance** [riˈdʌndəns], **redundancy** [riˈdʌndənsi] n չափից ավելի մեծ քանակություն. ավելցուկ. հաստիքների կրճատում. cause ~ կրճատումներ առաջացնել:

**redundant** [riˈdʌndənt] a չափազանց շատ,

ոչ պիտանի. աշխատանքից ազատված (հաստիքների կրճատման պատճառով). make ~ աշխատանքից ազատել/կրճատել. a ~ word ավելորդ բառ. ~ labour աշխատուժի ավելցուկ:

**reduplicate** [riˈdju:plikeit] v կրկնապատկել, կրկնել:

**reduplication** [riˌdju:pliˈkeɪʃn] n կրկնապատկում, կրկնում:

**reed** [ri:d] n եղեգն. սրինգ, շվի. լեզվակ (երաժշտական գործիքների):

**reeded** [ˈriːdid] a եղեգնապատ, եղեգնածածկ:

**reed pipe** [ˈriːdpaɪp] n սրինգ, շվի. երգեհոնի լեզվակավոր փող:

**reef** [ri:f] n խութ, ստորերկրյա ժայռ:

**reefer** [ˈriːfə] n *խսկց.* մարիխուանա պարուճակող սիգարետ/ծխախոտ/գլանակ:

**reek** [ri:k] 1. n շոգի, գոլորշի. ծուխ, գարշահոտություն. 2. v (վատ) հոտ գալ. ~ of garlic/tobacco սխտորի/թութունի հոտ գալ. ~ with sweat քրտինքի մեջ լողալ:

**reel** [ri:l] n կոճ, թելակոճ. հոլովակ. ձկնորսի կոճ:

**reel** [ri:l] v պտտվել, պտույտ գալ. օրորվել, ճոճվել. ~ before one's eyes աչքերի առաջ պտտվել. My head was ~ing Գլուխս պտտվում էր. ~ down the street օրորվելով փողոցով գնալ. ~ in the line կարթաթելը փաթաթել/հավաքել:

**re-elect** [ˌriːiˈlekt] v վերընտրել, նորից ընտրել:

**re-election** [ˌriːiˈlektʃn] n վերընտրություն, երկրորդ անգամ ընտրություն:

**reentry** [riˈentri] n վերստին մուտք, վերադարձ. վերագրանցում:

**re-establish** [ˌriːiˈstæblɪʃ] v վերականգնել, վերահաստատել:

**refection** [riˈfekʃn] n նախաճաշ, թեթև ճաշ:

**refectory** [riˈfektəri] n ճաշարան (դպրոցում, համալսարանում). սեղանատուն (վանքի):

**refer** [riˈfə:] v հղել, վերաբերել. վկայակոչել, հիշատակել. You may ~ to me Դուք կարող եք ինձ վկայակոչել. The matter was ~red to the committee Գործն ուղարկվեց հանձնաժողովին. ~ to the original դիմել սկզբնաղբյուրին. Whom are you ~ring to? Ո՞ւմ նկատի ունեք. This ~s to you all Սա ձեզ բոլորին է

վերաբերում:  
**referee** [ˌrefəˈri:] 1. *n մրզ.* դատավոր, խաղավար. միջնորդ դատավոր. 2. *v խաղը դատել, դատավոր լինել:*  
**reference** [ˈrefrəns] *n* վկայակոչում, մեջբերում. հիշատակում, հղում *make ~ to* վկայակոչել. *with ~ to* վկայակոչելով. *in ~ to* վերաբերյալ, ինչ վերաբերում է *cross ~* խաչածն վկայակոչում. *keep to the terms of ~* մնալ հանձնարարականի սահմաններում. *without ~ to the past* առանց անցյալը հիշատակելու. (*բնութագիր*) *give good ~* լավ հանձնարարական տալ. *~ from one's job* բնութագիր աշխատանքի վայրից. *a bank ~* բանկի հանձնարարական:  
**reference** [ˈrefrəns] *a* տեղեկատու. *~ library* տեղեկատվական գրադարան. *a ~ mark* ծանոթագրական նշան. *a ~ number* տեղեկատվության համար. *in ~, with ~ to* վերաբերյալ:  
**referendum** [ˌrefəˈrendəm] *n քղք.* հանրաքվե:  
**refill** [ˌriːˈfɪl] *v* նորից լցնել. լրացնել, համալրել:  
**refine** [riˈfaɪn] *v* զտել, մաքրել. նրբագեղ/նրբաճաշակ դառնալ/դարձնել:  
**refined** [riˈfaɪnd] *a* զտած, մաքրած. նուրբ, նրբագեղ. նրբաճաշակ. *~ cruelty* նրբին/նուրբ դաժանություն:  
**refinement** [riˈfaɪnmənt] *n* մաքրում, զտում. մշակում, հղկում. նրբություն, նրբաճաշակություն:  
**refinery** [riˈfaɪnəri] *n* մաքրման/զտման գործարան:  
**refit** [ˈriːfɪt] *v* վերանորոգել, վերահանդերձել:  
**reflect** [riˈflekt] *v* արտացոլել. անդրադարձնել. *~ light* լույս անդրադարձնել. *~ sound/event* ձայն անդրադարձնել, իրադարձություններն արտացոլել. *The face was ~ed in the mirror* Դեմքն արտացոլվեց հայելու մեջ. (*խորհել, մտածել*) *~ on the problem* խորհել պրոբլեմի մասին. (*ստվեր գցել*) *His behaviour ~s on us* Նրա վարքագիծը ստվեր է գցում մեզ վրա:  
**reflection** [riˈflekʃn] *n* արտացոլում, անդրադարձում, խորհում. *on ~* խորհելով. *cause for ~* մտածելու առիթ/պատճառ. *without due ~* առանց պատշաճ ձևով մտորելու:  
**reflective** [riˈflekʃɪv] *a* արտացոլող, անդրա-

դարձնող. մտածկոտ, մտազբաղ:  
**reflector** [riˈflektə] *n* արտացոլիչ. *աստղգ.* արտացոլիչ հեռադիտակ. ջերմարձակ. լուսարձակ:  
**reflex** [ˈriːfleks] *n* *ֆիզլ.* ռեֆլեքս. *conditioned/unconditioned ~* պայմանական/ոչ պայմանական ռեֆլեքս:  
**reflexive** [riˈfleksɪv] *n, a* *քեր.* անդրադարձ բայ/դերանուն. անդրադարձ:  
**reflux** [ˈriːflʌks] *n* տեղատվություն:  
**reforest** [riːˈfɒrɪst] *v* անտառապատել, անտառ տնկել:  
**reform** [riˈfɔːm] *n* բարեփոխություն, ռեֆորմ. *land ~* հողային ռեֆորմ. *educational ~s* բարեփոխումներ կրթական համակարգում:  
**reform** [riˈfɔːm] *v* բարեփոխել, բարելավել, վերափոխել. *He has ~ed his character* Նա ուղղվել է:  
**reformation** [ˌrefəˈmeɪʃn] *n* բարեփոխություն, բարենորոգում:  
**reformatory** [riˈfɔːmətəri] *n* անչափահաս հանցագործների ուղղիչ տուն:  
**reformed** [riˈfɔːmd] *a* բարեփոխված, բարեկարգված. ուղղված վերադաստիարակված:  
**reformer** [riˈfɔːmə] *n* բարեփոխիչ, բարենորոգիչ:  
**refract** [riˈfrækt] *v* *ֆիզ.* բեկել:  
**refraction** [riˈfrækʃn] *n* *ֆիզ.* բեկում:  
**refrain** [riˈfreɪn] *n* կրկներգ:  
**refrain** [riˈfreɪn] *v* իրեն զսպել. խուսափել. *ձեռնպահ մնալ. ~ from comment* խուսափել մեկնաբանությունից. *~ from smiling* իրեն զսպել, որ չժպտա:  
**refresh** [riˈfreʃ] *v* թարմացնել. նորացնել. ուժ հաղորդել. *~ oneself* (with a glass of wine) թարմանալ, ուժերը կազդուրել (մի բաժակ գինով). *~ one's memory* հիշողությունը թարմացնել:  
**refresher** [riˈfreʃə] *n* *խսկց.* զովացուցիչ ըմպելիք. կրկնողություն. *~ course* վերապատրաստման կուրսեր. *take a ~ course* վերապատրաստման կուրսեր անցնել:  
**refreshing** [riˈfreʃɪŋ] *a* թարմացնող. *a ~ sleep/breeze* թարմացնող քուն/զեփյուռ. *His sincerity is most ~* Նրա անկեղծությունը շատ հաճելի է:  
**refreshment** [riˈfreʃmənt] *n* կազդուրում,

ուժերի վերականգնում. զովացուցիչ ջրեր. նախաճաշիկ. have a slight ~ մի թեթև ուտել/նախաճաշել. R~s will be served կմատուցվեն զովացուցիչ ջրեր:

**refrigerate** [ri'frɪdʒəreɪt] v սառեցնել, պաղեցնել:

**refrigeration** [ri,frɪdʒə'reɪʃn] n սառեցում, պաղեցում:

**refrigerator** [ri'frɪdʒəreɪtə] n սառնարան:

**refuel** [ri:'fju:əl] v լցավորել. վառելիքի պակասը լրացնել:

**refuge** ['refju:dʒ] n ապաստան, ապաստարան. *փխք*. հովանավորություն. take ~ ապաստանել. take ~ in silence լուռ մնալ. լռելով խուսափել պատասխանից. take ~ in the forest անտառում պատսպարվել. a mountain ~ ապաստան լեռներում:

**refugee** [ˌrefju'dʒi:] n փախստական, գաղթական. վտարանդի. political ~ քաղաքական վտարանդի. a ~ camp վտարանդիների/գաղթականների ճամբար:

**refulgent** [ri'fʌldʒənt] a փայլուն, լուսավոր, լուսաշող:

**refund** ['ri:fʌnd] v հատուցում, փոխհատուցում. ծախսահատուցում. demand a ~ հատուցում պահանջել. ~ the full amount արժեքը լրիվ վճարել. the ~ of a deposit ավանդի վճարում:

**refusal** [ri'fju:zəl] n մերժում. blank/flat/square ~ կտրական մերժում. meet with a blank ~ կտրական մերժում ստանալ. ~ to work աշխատելուց հրաժարվել. weak ~ անվճռական մերժում. take no ~ մերժում չհանդուրժել. justifiable ~ հիմնավորված մերժում. ~ to admit (փաստի) ճանաչման մերժում:

**refuse** [ri'fju:z] n թափթփուկներ, մնացորդներ, ~ bin աղբաման. ~ dump/tip աղբանոց, աղբահոր:

**refuse** [ri'fju:z] v մերժել, ժխտել, հրաժարվել, չընդունել. ~ invitation/offer հրավերը/նվերը չընդունել. ~ outright կտրականապես հրաժարվել. ~ nothing ոչինչ չխնայել:

**refutation** [ˌrefju'teɪʃn] n հերքում:

**refute** [ri'fju:t] v հերքել. ~ arguments փաստարկները հերքել:

**regain** [ri'geɪn] v վերադարձնել, վերականգնել. ~ one's confidence/popularity վերականգնել ինքնավստահությունը/համբավը. ~

one's balance հավասարակշռությունը վերականգնել. ~ consciousness ուշքի գալ. ~ one's former position *նզմ*. նախկին դիրքերը գրավել:

**regal** ['ri:gl] a արքայական, արքայավայել, թագավորական:

**regale** [ri'geɪl] n հյուրասիրություն, խնջույք:

**regale** [ri'geɪl] v հյուրասիրել, պատվել. հաճույք պատճառել. ~ smb with fruits/anecdotes մրգով հյուրասիրել. անեկդոտներով զվարճացնել:

**regard** [ri'ga:d] n վերաբերություն, առնչություն. in this ~ այս տեսակետից/կապակցությամբ. in/with ~ to ինչ վերաբերում է, վերաբերյալ. (հարգանք) out of ~ for his age տարիքը հարգելով. hold in high ~ մեծ հարգանք տածել. have a high ~ բարձր գնահատել. have no ~ for հարգանք չունենալ (նկատմամբ). (ուշադրություն) pay no ~ to ուշադրություն չդարձնել. without ~ to առանց ուշադրություն դարձնելու. (ողջույն, բարև) send/give one's ~s բարև ուղարկել, ողջույն հաղորդել. with kind/best ~s սրտագին բարևներով/հարգանքներով:

**regard** [ri'ga:d] v նայել, դիտել. համարել, ընդունել. հարգել. ~ as friend/enemy ընկեր/թշնամի համարել. ~ with contempt արհամարհանքով դիտել/ընդունել. ~ as essential էական/կարևոր համարել. ~ in the light of դիտել որևէ տեսանկյունից/լույսի տակ. be much ~ed մեծ հարգանք վայելել. (վերաբերել) That ~s his lectures Դա վերաբերում է նրա դասախոսություններին. as ~s ինչ վերաբերում է. as ~s your letter/request ինչ վերաբերում է ձեր նամակին/խնդրանքին:

**regardful** [ri'ga:dfl] a ուշադիր, հոգատար:

**regarding** [ri'ga:diŋ] prep վերաբերյալ, մասին. ~ your offer ձեր առաջարկի վերաբերյալ. matters ~ the travel ճամփորդությանը վերաբերող պարագաները:

**regardless** [ri'ga:dləs] 1. a հաշվի չառնող. ~ of danger հաշվի չառնելով վտանգը, անկախ վտանգից. 2. adv առանց ուշադրություն դարձնելու, հաշվի չառնելով. ~ of նկատի չունենալով:

**regatta** [ri'gætə] n *մրզ*. թիանավերով/առագաստանավերով մրցույթ, ռեգատ:

**regenerate** [ri'dʒenəreɪt] a վերածնված, բարեփոխված:

**regenerate** [ri'dʒenəreit] v վերածնվել, վերականգն(վ)ել:

**regeneration** [ri,dʒenə'reiʃn] n վերածնունդ. վերականգնում:

**regenerative** [ri'dʒenə'reitiv] a վերածնվող, վերականգնվող:

**regime** [rei'zi:m] n վարչակարգ, կարգ. իրավակարգ, ռեժիմ. ordinary/special/strict ~ սովորական/հատուկ/խիստ ռեժիմ:

**regiment** ['redʒimənt] n գունդ, զորագունդ. ~s բազմություն, մեծ քանակություն:

**regimental** [,redʒi'mentl] a գնդի, զորագնդի:

**region** ['ri:dʒən] n մարզ, շրջան, երկրամաս. forest ~s անտառային շրջաններ. Arctic ~ Յյուսիսային բևեռաշրջան. a fertile ~ բերրի երկրամաս. in the ~ of մոտակայքում. in the ~ of 40 % մոտավորապես քառասուն տոկոս. the ~ of the heart սրտի շրջան:

**regional** ['ri:dʒnəl] a մարզային, շրջանային. տեղական. ~ offices մարզային/տեղական բաժանմունքներ:

**register** ['redʒistə] n գրանցում, գրանցման մատյան. երժշ. ծայնասահման. տեխ. հաշվող մեխանիզմ, հաշվիչ. ~ of births/marriages and burials ծնունդների, ամուսնությունների, թաղումների (քաղաքացիական կացության ակտերի) գրանցման մատյան. ~ of voters ընտրողների ցուցակ:

**register** ['redʒistə] v ցուցակագր(վ)ել, արձանագր(վ)ել. գրանցել. ~ a birth/marriage/death ծնունդը/ամուսնությունը/ մահը գրանցել. ~ a fact փաստն արձանագրել. (ցույց տալ) The thermometer ~s 40 deg Ջերմաչափը 40 աստիճան է ցույց տալիս. ~ no surprise (ոչ մի) զարմանք ցույց չտալ. (փոստային առաքումներ) ~ a letter նամակը պատվիրված ուղարկել. ~ at a hotel հյուրանոցում գրանցվել. ~ with a doctor դառնալ տվյալ բժշկի հիվանդը:

**registered** ['redʒistəd] a գրանցված, պատվիրված. ~ office հաստատության գրասենյակ. a ~ letter պատվիրված նամակ. a ~ trademark գրանցված ապրանքանիշ. ~ mail գրանցված փոստ:

**registrar** [,redʒi'stra:] n գրանցող, գրանումներ կատարող. մատենավար, քարտուղար. companies ~ ընկերություններ գրանցող պաշտոնյա:

**registration** [,redʒi'streiʃn] n ցուցակագրում, գրանցում. արձանագրում. vehicle ~ number ավտո պետհամարանիշ:

**registry** ['redʒistri] n (*մաս* ~ office) մատենավորման բաժին. մատենավորության/գրանցումների մատյան:

**regress** ['ri:gres] n վերադարձ, հետադարձ շարժում. *փխք*. հետադիմություն, հետընթաց.

**regress** ['ri:gres] v հետ շարժվել/զնալ. *փխք*. հետադիմել, անկում ապրել:

**regression** [ri'greʃn] n վերադարձ դեպի նախկին վիճակը. *փխք*. հետադիմություն, անկում:

**regressive** [ri'gresiv] a հետադարձ. հետադիմական, ռեակցիոն:

**regret** [ri'gret] n ափսոսանք. sincere/deep ~ անկեղծ/խորն ափսոսանք. to my ~ ցավոք. feel ~ ափսոսանք զգալ. ~s ներողություն. send one's ~s ներողություն խնդրել. have no ~s չափսոսալ, չցավել:

**regret** [ri'gret] v ցավել, ափսոսալ, զղջալ. ~ one's decision զղջալ որոշման մասին. We ~ to inform Ցավով հայտնում ենք:

**regretful** [ri'gretfl] a ցավով, ափսոսանքով լի, զղջումով լի:

**regrettable** [ri'gretəbl] a ցավալի, տխրալի. ~ state of affairs իրերի տխուր/ցավալի վիճակ. It is most ~ Շատ ցավալի է:

**regrouping** [,ri:'gru:pɪŋ] n վերախմբավորում:

**regular** ['regjulə] a կանոնավոր, նորմալ. սովորական, հերթական. *քեր.*, *մաթ.* կանոնավոր. ~ classes/visits կանոնավոր դասեր/ հաճախումներ. have ~ meals նորմալ/կանոնավոր սնվել. ~ features/teeth կանոնավոր դիմագծեր. հարթ և հավասար ատամներ. ~ army կանոնավոր/մշտական բանակ. (մշտական) ~ visitor/customer/work մշտական այցելու/հաճախորդ/աշխատանք. ~ breathing/pulse կանոնավոր շնչառություն, նորմալ զարկերակ. ~ steps համաչափ քայլեր. keep ~ hours կանոնավոր կյանք վարել. the ~ staff մշտական աշխատողներ. (սովորական) ~ passengers of this train այս գնացքի սովորական/մշտական ուղևորներ. ~ procedure նորմալ/սովորական ընթացակարգ. It is quite ~ Շատ սովորական/ընդունված բան է. a ~ hero *խսկց*. իսկական հերոս:

**regular** [ˈregjʊlə] n կանոնավոր բանակի զինվոր. կադրային զինծառայող:  
**regularity** [ˌregjʊˈlærəti] n կանոնավորություն, կարգ. ճշտություն. with great ~ մեծ կանոնավորությամբ:  
**regulate** [ˈregjuleɪt] v կանոնավորել, կարգավորել. ~ his/her conduct վարքագիծը կանոնավորել. ~ prices գները կարգավորել. ~ a watch/traffic ժամացույցի մեխանիզմը կանոնավորել. երթևեկությունը կարգավորել:  
**regulation** [ˌregjʊˈleɪʃn] n կանոնավորում, կարգավորում. կանոն, սահմանված կարգ. ~s կանոնադրություն. ~ dress *ռզմ.* համազգեստ. safety ~s անվտանգության կանոններ:  
**regulative** [ˈregjʊlətɪv] a կարգավորիչ. կանոնավորող:  
**regulator** [ˈregjuleɪtə] n կարգավորիչ/կանոնավորող անձ/սարք:  
**rehabilitate** [ˌriːəˈbɪlɪteɪt] v վերականգնել. վերակառուցել:  
**rehabilitation** [ˌriːəˈbɪlɪˈteɪʃn] n վերականգնում. արդարացում. ~ centre վերականգնման կենտրոն. social ~ սոցիալական վերականգնում:  
**rehearsal** [riˈhɜːsəl] n փորձ, քատերափորձ. կրկնողություն. dress ~ գլխավոր փորձ:  
**rehearse** [riˈhɜːs] v փորձել, փորձ անել. ~ a role դերախաղը փորձել:  
**rehouse** [ˌriːˈhaʊs] v (նոր տուն ) փոխադր(վ)ել. The families were ~d Ընտանիքները նոր տուն փոխադրվեցին. We've ~d the car Ավտոմեքենայի տեղը փոխվեց:  
**reign** [reɪn] 1. n թագավորում, թագավորական իշխանություն. in the ~ of թագավորության օրոք/ժամանակ. a ~ of terror *փխք.* ահաբեկչության սանձարձակություն. 2. v թագավորել. *փխք.* տիրել. իշխել:  
**reimburse** [ˌriːɪmˈbɜːs] v հատուցել, վերադարձնել. ~ the cost գինը հատուցել:  
**rein** [reɪn] n սանձ, երասան. *փխք.* սանձ, հսկողության միջոց. draw the ~ ձիու սանձը քաշել. give the horse the ~s ձիու սանձը բաց թողնել. give ~ to one's imagination երևակայությանը ազատություն տալ. keep a tight ~ (մեկի) սանձը քաշած պահել. the ~s of the government կառավարության ղեկը:  
**reincarnation** [ˌriːɪnˈkɑːˈneɪʃn] n վերամարմնավորում:

**reindeer** [ˈreɪndɪə] n հյուսիսային եղջերու:  
**reinforce** [ˌriːɪnˈfɔːs] v ամրացնել, ուժեղացնել. ~ a bridge/wall կամուրջը/պատը ամրացնել. ~ one's argument փաստարկը հիմնավորել. ~ the troops *ռզմ.* զորքերին օժանդակություն ուղարկել:  
**reinforced concrete** [ˌriːɪnˈfɔːstˈkɒŋkriːt] n երկաթբետոն:  
**reinforcement** [ˌriːɪnˈfɔːsmənt] n ուժեղացում, ամրացում. համալրում:  
**reinless** [ˈreɪnləs] a առանց սանձի. *փխք.* անսանձ, առանց վերահսկողության:  
**reinstatement** [ˌriːɪnˈsteɪt] v վերականգնել, վերահաստատել. The employee was ~d Ծառայողը վերականգնվեց (նախկին պաշտոնում):  
**reinstatement** [ˌriːɪnˈsteɪtmənt] n վերականգնում. ~ in one's rights մեկի իրավունքների վերականգնում:  
**reinsurance** [ˌriːɪnˈʃʊərəns] n վերապահովագրում/գրություն:  
**reiterate** [riˈɪtəreɪt] v կրկնել:  
**iteration** [riˈɪtəˈreɪʃn] n կրկնություն, շատ անգամ կրկնելը:  
**reject** [ˈriːdʒekt] n ոչ պիտանի, խտտան. a ~, ~s խտտան ապրանք, թափփուկներ. զինծառայության համար ոչ պիտանի (*նաև* rejectee):  
**reject** [riˈdʒekt] v մերժել, հրաժարվել. խտտանել. ~ an appeal բողոքարկումը մերժել. ~ plan/offer/an idea ծրագիրը/առաջարկը/զառախարկը մերժել. feel ~ed մերժված, վանված (զգալ). ~ faulty goods խտտանը դուրս թափել/զցել:  
**rejectee** [ˌriːdʒekˈtiː] n *ամ.* զինծառայության համար ոչ պիտանի անձ:  
**rejection** [riˈdʒekʃn] n մերժում, խտտան:  
**rejector** [riˈdʒektə] n *տեխ.* անդրադարձիկ, ցոլացուցիչ:  
**rejoice** [riˈdʒɔɪs] v ուրախանալ, ուրախացնել, հրճվել. It ~d my heart Դա ինձ շատ ուրախացրեց. ~ to hear ուրախ լինել լսել:  
**rejoicing** [riˈdʒɔɪsɪŋ] n զվարճություն, ուրախություն:  
**rejoin** [riˈdʒɔɪn] v միանալ, վերադառնալ. ~ one's regiment իր գունդ վերադառնալ. He will ~ us later Ավելի ուշ նա մեզ կմիանա:  
**rejoinder** [riˈdʒɔɪndə] n պատասխան, առարկություն:



**rejunction** [ri'dʒʌŋk(ə)n] n վերամիավորում, վերադարձ:

**rejuvenate** [ri'dʒu:vəneɪt] v երիտասարդացնել, երիտասարդանալ:

**rejuvenation** [ri,dʒu:və'neiʃn] n երիտասարդացում, ուժեղի/առողջության վերականգնում:

**relapse** [ri'læps] n կրկնություն, վերադարձ. *բժշկ.* ախտադարձություն. The patient had a ~ Յիվանդն ախտադարձություն ունեցավ:

**relapse** [ri'læps] v վերադառնալ. նորից հիվանդանալ. ~ into old ways հին սովորույթներին վերադառնալ. ~ into silence լռել:

**relate** [ri'leit] v պատմել. ~ in detail մանրամասն պատմել. ~ one's adventures իր արկածները պատմել. strange to ~ (որքան) տարօրինակ է ասել, բայց. (կապակցել, հարաբերություն հաստատել) ~ the events իրադարձությունները կապել միմյանց հետ. This ~s to his job Սա կապ ունի նրա աշխատանքի հետ:

**related** [ri'reɪtɪd] a կապված, հարաբերություն ունեցող, իրար հետ կապ ունեցող. be ~ ազգակցական կապի մեջ լինել. be distant ~ հեռավոր ազգական լինել. be pretty nearly ~ մերձավոր ազգական լինել. ~ by marriage խնամհական կապերի մեջ լինել. These questions are not ~ Այս հարցերը կապակցված չեն. history and other ~ subjects պատմություն և այլ հարակից առարկաներ:

**relation** [ri'reɪʃn] n հարաբերություն. trade/business/diplomatic/strained/friendly ~s առևտրական/գործնական/դիվանագիտական/ձգված/ընկերական հարաբերություններ. public ~s հասարակայնության հետ կապեր. establish/break ~s հաստատել/խզել հարաբերություններ. bear no ~ ոչ մի հարաբերություն/կապ չունենալ. (բարեկամ, ազգական) blood ~ արյունակցական կապ. a near/distant ~ մոտ/հեռու ազգական. ~ on mother's /father's side մոր/հոր կողմից ազգական:

**relationship** [ri'reɪʃnʃɪp] n հարաբերություն, կապ. ազգակցություն. blood ~ արյունակցական կապ. marital ~ ամուսնական հարաբերություններ:

**relative** ['relətɪv] n ազգական/ուհի. remote ~ հեռավոր ազգական:

**relative** ['relətɪv] a հարաբերական. with ~ calm հարաբերական հանգստությամբ. papers ~ to this case այս գործին վերաբերող փաստաթղթեր:

**relatively** ['relətɪvli] adv համեմատաբար, հարաբերաբար:

**relativity** [ˌrelə'tɪvəti] n հարաբերականություն. theory of ~ հարաբերականության տեսություն:

**relax** [ri'læks] v թուլացնել, մեղմացնել. լարվածությունը նվազեցնել. ~ one's attention/muscles/efforts ուշադրությունը/մկանները/ջանքերը թուլացնել. The tension ~ed լարվածությունը նվազեց. Try to ~ Փորձեք չլարվել/հանգիստ լինել. ~ after lunch հանգիստ ճաշից հետո. She never ~es Նա միշտ լարված է/ձգված է:

**relaxation** [ˌri:læks'ɪʃn] n թուլացում, լարվածության նվազում. ~ zone հանգիստ/հանգստի գոտի. one's favourite ~ հանգստի նախընտրած/սիրած ձևը. It's time to have some ~ ժամանակն է մի փոքր հանգստանալ:

**relaxed** [ri'læksɪd] a հանգստացած, հանգիստ, ոչ լարված. խաղաղ, անխռով. look ~ խաղաղ/անխռով տեսք ունենալ:

**relay** ['ri:lei] n հերթափոխում, հերթափոխ. էլ. փոխարկիչ, ռելե. *ռադ., հեռ.* վերատրանսլացիա. ~ station վերատրանսլացիոն կայան. work in ~s հերթափոխով աշխատել. ~ race *մրզ.* էստաֆետային վազք, փոխանցումային վազք:

**release** [ri'li:s] n ազատում, ազատ արձակում. ~ from prison ազատում բանտից. (հրատարակում) It is a new ~ Նոր է դուրս եկել. a press ~ հաղորդում մամուլի համար, մամլո հաղորդագրություն:

**release** [ri'li:s] v ազատում, ազատ արձակել. ~ from an obligation, duty պարտավորությունից ազատել. ~ from a debt պարտքից ազատել. ~ two days a week շաբաթը երկու օր ազատել. (բաց թողնել) ~ one's hand ձեռքը բաց թողնել. ~ the trigger ձգանք բաց թողնել. ~ a new film նոր ֆիլմ էկրան բաց թողնել/ցուցադրել:

**relegate** ['releɪt] v վտարել. աստիճանագրվել, պաշտոնն իջեցնել. ~ to the position of clerk իջեցնել զրասենյակային աշխատողի

ատիճանի. ~ a team to the second division  
թիմը տեղափոխել երկրորդ խումբ:

**relent** [ri'lent] v մեղմանալ, փափկել, գթա-  
շարժել:

**relentless** [ri'lentləs] a անգութ, անողորմ:

**relevance** ['reləvəns] n տեղին լինելը,  
պատշաճություն. հիմնավորվածություն,  
համապատասխանություն. a matter of great  
~ շատ կարևոր/տեղին հարց:

**relavant** ['reləvənt] a տեղին, հարմար,  
պատշաճ. կարևոր. էական. the papers ~ to  
the case գործին վերաբերող կարևոր թղթե-  
րը. The question is very ~ today Այս հարցը  
շատ արդիական է. the ~ clause համապա-  
տասխան կետը:

**reliability** [ri'laɪə'bɪləti] n հուսալիություն,  
արժանահավատություն:

**reliable** [ri'laɪəbl] a հուսալի, վստահելի.  
ստույգ. from a ~ source հավաստի աղբյուր-  
ներից. an entirely ~ person լրիվ վստահելի  
անձ:

**reliably** [ri'laɪəblɪ] adv հուսալիորեն, վստա-  
հելիորեն. be ~ informed հուսալի տեղեկու-  
թյուններ ունենալ:

**reliance** [ri'laɪəns] n հուսալիություն, վստա-  
հություն. հանդավածություն. feel/have ~ upon  
վստահություն ունենալ. (կիրառում) exten-  
sive ~ լայն կիրառում:

**relic** ['reɪlɪk] n ~ s հետքեր, վերապրուկ, մնա-  
ցորդ. կրոն. մատուցք, սրբություն:

**relief** I [ri'li:f] n թեթևացում, մեղմացում.  
great/considerable ~ մեծ/մշամակալից թե-  
թևացում. bring/give ~ թեթևացում/մեղմա-  
ցում բերել. give a sigh of ~ թեթևացած շունչ  
քաշել. (աշխուժացում) provide some light ~  
աշխուժացում մտցնել. a dress without any ~  
առանց զարդարանքի զգեստ. give/receive ~  
տալ/ընդունել օգնություն. come to ~ օգ-  
նության գալ. ~ committee օգնության կո-  
միտե. get/grant ~ օգնություն ստանալ/տալ.  
provide for famine ~ սովյալներին օգնություն  
ցուցաբերել. the ~ of a city *ռզմ*. քաղաքի  
ազատագրումը. claim/seek ~ բավարարում  
պահանջել. (հերթափոխ, փոխարինում) My  
~ comes at 6 o'clock Իմ հերթափոխը գալիս է  
ժ. 6-ին. in the ~ հերթափոխին. a ~ fund  
օգնության հիմնադրամ. a ~ train բեռնա-  
թափման գնացք. a ~ pilot հերթափոխ օդա-  
չու:

**relief** II [ri'li:f] n ռելիեֆ. *աշխրգ*.  
տեղի/վայրի ռելիեֆ. *արվ*. ցածրաքանդակ.  
low ~ խորաքանդակ, բարելիեֆ. high ~  
բարձրաքանդակ. in ~ ուռուցիկ, ցցուն:

**relieve** [ri'li:v] v թեթևացնել, մեղմացնել,  
թուլացնել. սփոփել. ~ pain/anxiety/suffering  
ցավը մեղմացնել, անհանգստությունը թու-  
լացնել, տանջանքը թեթևացնել. ~ one's  
cough հազը մեղմացնել. ~ boredom ծանձ-  
րույթը ցրել. I'm ~d to see you Ուրախ եմ վեր-  
ջապես քեզ տեսնել. (ազատել) ~ of a duty  
պարտականությունից ազատել. ~ of finan-  
cial worries ֆինանսական հոգսերից ազա-  
տել. Let me ~ you of your case Թույլ տվեք  
վերցնել ձեր պայուսակը. He was ~d of his  
command Նրան ազատեցին հրամանատա-  
րությունից. ~ a town *ռզմ*. քաղաքը ազատա-  
գրել. (հերթափոխում) ~ smb փոխարինել  
մեկին. He was ~d in the morning Նա հեր-  
թափոխից ազատվեց առավոտյան:

**religion** [ri'li:dʒən] n կրոն:

**religious** [ri'li:dʒəs] a կրոնական, կրոնասեր.  
~ ceremony/beliefs/custom կրոնական ծես/  
համոզմունք/սովորույթ:

**relinquish** [ri'liŋkwɪʃ] v թողնել, լքել.  
հրաժարվել, զիջել. ~ hope հույսը կտրել. ~  
one's post պաշտոնաթող լինել. ~ plan ծրա-  
գրից հրաժարվել. ~ one's rights իրավունք-  
ները զիջել:

**relish** ['reɪlɪʃ] n (հաճելի, ախորժելի) համ,  
ճաշակ, ախորժակ. lose its ~ *փխբ*. հրապ-  
ույրը կորցնել. I would ~ some pastry Չա-  
ճույթով թխվածք կուտեի. (համեմունք)  
Hunger is the best ~ Քաղցը ամենալավ  
համեմունքն է. with a great ~ մեծ հաճույթով.  
He didn't ~ the thought Նրան դուր չեկավ այդ  
միտքը:

**reluctance** [ri'ɪlʌktəns] n դժկամություն,  
չկամենալը. with ~ դժկամությամբ. show ~  
դժկամություն ցուցաբերել:

**reluctant** [ri'ɪlʌktənt] a դժկամ, հարկադրա-  
կան:

**rely** [ri'laɪ] v վստահել, հավատալ, ապավի-  
նել. հիմնվել. ~ fully լրիվ վստահել. ~ on  
smb/upon smb's word մեկին/մեկի խոսքին  
վստահել. He is not to be relied Նրան չի  
կարելի վստահել. ~ upon it վստահ եղիր,  
վստահեցնում եմ:

**remain** [ri'meɪn] n մնալ. ~ behind հետ մնալ.

Nothing ~s but ... Ոչինչ չի մնում քան... ~ neutral չեզոք մնալ. ~ unprovoked սադրանքի չենթարկվել. That ~s to be seen Դա դեռ կտեսնենք. (շարունակել մնալ) ~ silent/standing/friends լուռ/կանգնած/ընկերներ մնալ. If the weather ~s fine եթե եղանակը չփչանա:

**remainder** [ri'meində] **1.** n մնացորդ, մնացորդներ. մնացածները. **2.** a մնացած. մյուս:

**remains** [ri'meinz] **n** մնացորդ, մնացուկներ. give the dog the ~ մնացորդները շանը տալ. the ~ of an old castle հին դղյակի ավերակները. human ~ աճյուն:

**remake** [ri:'meik] **v** վերափոխել, վերաշինել, վերակառուցել. երժշ. վերամշակել:

**remark** [ri'ma:k] **n** դիտողություն, նշում. important/witty/rude ~ կարևոր/սրամիտ/կոպիտ դատողություն. introductory/opening ~ s ներածական դիտողություններ. make/pass a ~ դիտողություն անել. make no ~s ոչ մի բան չասել. worthy of ~ ուշադրության արժանի:

**remark** [ri'ma:k] **v** նշել, նկատել. դիտողություն անել. արտահայտվել. ~ one's absence նշել/նկատել մեկի բացակայությունը:

**remarkable** [ri'ma:kəbl] **a** ուշագրավ. նշանավոր. արտակարգ. ~ person/scientist/beauty ուշագրավ մարդ, նշանավոր գիտնական, արտակարգ գեղեցկություն. ~ for its monuments հայտնի իր հուշարձաններով:

**remarkably** [ri'ma:kəbli] **adv** զարմանալիորեն, հիանալիորեն. չափազանց անսովոր:

**remediable** [ri'mi:diəbl] **a** ուղղելի, դարմանելի. բուժելի:

**remedial** [ri'mi:diəl] **a** բժշկ. բուժիչ, ամոքիչ. մեղմացնող. ~ exercises բուժական մարմնամարզություն. ~ measures իրավական պաշտպանական միջոցներ:

**remedy** ['remədi] **1.** **n** դեղ, միջոց, դեղամիջոց. new/remarkable/effective ~ նոր/արտակարգ/գործուն դեղամիջոց. a ~ for a cold դեղ մրսածության դեմ. There is no ~ for... (ոչ մի) Միջոց չկա. The situation is past ~ Վիճակն անհույս է. Work is the best ~ Աշխատանքը ամենալավ դեղամիջոցն է. **2.** **v** բուժել, ուղղել. That can be ~ied Դա կարելի է

ուղղել. *խսկց.* Դրան դարձան կա:

**remember** [ri'membə] **v** հիշել, մտաբերել. ~ events/smb's face իրադարձություններ/ինչ-որ մեկի դեմքը հիշել. hardly ~ հազիվ հիշել. I must ~ Չմոռանամ. as far as I ~ որքանով հիշում եմ. (հիշատակել կտակում) He ~ed her in his will Նրա ամուսնը հիշատակվեց կտակում. R~ me kindly to them Խնդրեմ, բարևներ հաղորդեք նրանց:

**remembrance** [ri'membərəns] **n** հիշողություն, հիշատակ. a small ~ of (me, him etc) մի փոքրիկ հիշատակ (ինձնից, նրանից և այլն). ~s ողջույն, բարև. Give my ~s բարևներս հաղորդեք:

**remind** [ri'maɪnd] **v** հիշեցնել. ~ him that հիշեցրեք նրան, որ. She ~s me of her mother Նա ինձ իր մորն է հիշեցնում. He ~ed me of our plan Նա ինձ հիշեցրեց մեր ծրագրի մասին. She failed to ~ me Նա մոռացավ ինձ հիշեցնել. What does that ~ you of? Դա ձեզ ի՞նչ է հիշեցում/ոչի՞նչ չի հիշեցնում:

**reminder** [ri'maɪndə] **n** հիշեցում. հուշ, հուշանվեր. gentle ~ ակնարկ, ակնարկություն. as a ~ որպես հիշեցում:

**remindful** [ri'maɪndfʊl] **a** հիշեցնող, հիշողություն արթնացնող:

**remembrance** [ri'mi'nɪsəns] **n** հիշողություն, հուշ, հիշատակ. ~s հուշեր:

**reminiscent** [ri'mi'nɪsnt] **a** հիշեցնող, հիշողություն արթնացնող. հիշողություններով տարված. be in a ~ mood հիշողություններով տարված լինել. That phrase is ~ of Shakespeare Այդ հատվածը Շեքսպիր է հիշեցնում:

**remiss** [ri'mɪs] **a** անուշադիր, անփույթ, անհոգ. That was ~ of you Դա ձեր կողմից անփութություն/անուշադրություն էր. I am very ~ about writing Նամակագրության հարցում ես շատ անփույթ եմ:

**remission** [ri'mɪʃn] **n** ներում. ազատում պատժից/պարտքից. դադարեցնելը, վերացնելը. դատավճռի մեղմացում. ~ of a debt պարտքից ազատելը:

**remissive** [ri'mɪsɪv] **a** ներող. նվազեցնող:

**remit** [ri'mɪt] **v** ներել. նվազեցնել. վերացնել/մեղմել պատիժը. ~ debts պարտքերը ներել, պարտքի վճարումից ազատել. ~ one's sentence դատավճիռը մեղմացնել.

(առաքել, ուղարկել) ~ money փող ուղարկել. Money was ~ted Փողն ուղարկվեց:  
**remittance** [ri'mitns] n փոխադրում, առաքում, փոխանցում. cash ~ դրամական փոխանցում/առաքում:  
**remittee** [ri,mit'i:] n դրամական փոխադրություն ստացող:  
**remnant** ['remnənt] n մնացորդ, մնացուկ. վերապրուկ. ~s (of food) ուտելիքի մնացորդ. ~s of war պատերազմի նյութական հետևանքները:  
**remonstrance** [ri'mɒnstrəns] n բողոք, առարկություն, ընդդիմություն:  
**remonstrate** ['remənstreɪt] v բողոքել, առարկել. համոզել, հորդորել. ~ smn about his rudeness դիտողություն անել կոպիտ լինելու համար:  
**remorse** [ri'mɔ:s] n խղճի խայթ, զիջում. without any ~ առանց որևէ խղճի խայթ զգալու. pangs of ~ խղճի խայթոցներ. be overcome with ~ խիղճը տանջել:  
**remorseful** [ri'mɔ:sfɪl] a (*նաև* be ~) զղջունով լի:  
**remorseless** [ri'mɔ:sləs] a անխիղճ, անզուրկ:  
**remote** [ri'məʊt] a հեռավոր, հեռու. a ~ village/spot հեռավոր գյուղ/վայր. in the est parts of Africa Աֆրիկայի ամենախուլ/անմատչելի մասերում. in the ~ past/future հեռավոր անցյալում/հեռու ապագայում. a ~ resemblance *փխր*. հեռավոր նմանություն. a ~ relation հեռու բարեկամ. a ~ possibility փոքր աննշան հնարավորություն. not the ~ idea ամենաչնչին գաղափարն իսկ. ~ control հեռակառավարական վահանակ. be a ~ figure դժվար շփվող (յուլա չգնացող) անձնավորություն:  
**remount** ['ri:maʊnt] n *ռզմ*. ձիակազմի համալրում/նորոգում:  
**removable** [ri'mu:vəbəl] a շարժական. փոխարինելի. վերացման ենթակա:  
**removal** [ri'mu:vəl] n փոխադրում. տեղափոխություն. վերացում, հեռացում. ~ of furniture կահույքի տեղափոխություն. ~ van կահույքի փոխադրամիջոց. ~ to a new building նոր շենք փոխադրումը. ~ of a threat վտանգի վերացում. ~ from office պաշտոնից հեռացնելը/հանելը. ~ firm փոխադրամիջոցների գործակալություն:

**remove** [ri'mu:v] v հանել. մաքրել, հավաքել. վերացնել. տեղափոխ(վ)ել, փոխադր(վ)ել. ~ one's hat գլխարկը հանել. ~ a table սեղանը հավաքել. ~ plates from the table ափսեները սեղանից հավաքել. ~ oneself հեռանալ. ~ a tax հարկը վերացնել. ~ one's name from the list անունը ցուցակից հանել. ~ obstacles խոչընդոտները վերացնել. ~ smb from a post պաշտոնից ազատել. ~ stains կեղտաբծերը հանել. ~ members անդամներին տեղափոխել/հեռացնել. ~ to a new house նոր տուն տեղափոխվել:

**removed** [ri'mu:vɪd] a հեռավոր, հեռացրած. մեկուսացած. once/twice ~ երկրորդ/երրորդ սերնդի ազգական:

**remover** [ri'mu:və] n բժահան, բծեր մաքրելու միջոց. oil ~ յուղի բծերը հանելու միջոց:

**remunerate** [ri'mju:nəreɪt] v վարձատրել, հատուցել, վճարել:

**remuneration** [ri,mju:nə'reɪʃn] n վարձատրում, հատուցում, փոխհատուցում:

**remunerative** [ri'mju:nə'reɪtɪv] a շահավետ, լավ վարձատրվող. առատածեռ:

**renaissance** [rə'neɪsɪs] n վերածնունդ, վերակենդանացում. the R~ վերածնություն (դարաշրջան):

**renal** ['ri:nəl] a երիկամային, երիկամունքի:

**renascent** [ri'næsn̩t] a վերածնվող:

**reencounter** [ren'kaʊntə] n բախում, ընդիարում, վեճ:

**render** ['rendə] v մատուցել, ցույց տալ. տալ, դարձնել. ~ assistance/service/honour օգնություն ցույց տալ, ծառայություն մատուցել. պատիվ բերել. ~ homage/thanks հարգանք ցույց տալ, շնորհակալություն հայտնել. ~ an account հաշիվ ներկայացնել. ~ a sentence դատավճիռ կայացնել. (դարձնել) ~ active ակտիվացնել. ~ helpless անօգնական դարձնել. ~ liable ենթարկել. ~ (down) fat *խր*. ճարպը հալել:

**rendering** ['rendərɪŋ] n վերարտադրություն. թարգմանություն. *արվ*. մեկնաբանում, կատարում. ցուցադրում, տրամադրում. ~ help/service օգնություն ցույց տալը, ծառայություն մատուցելը ~ of accounts հաշիվների ներկայացում:

**rendezvous** ['rɒndivʊ:] n ժամադրություն, ժամադրավայր. a favourite ~ հանդիպման

սիրելի վայր. a ~ in space հանդիպում, ծայրակցում, միակցում տիեզերքում:

**renegade** ['renigeid] n դավաճան, ուրացող:

**renew** [ri'nju:] v նորոգել, նորացնել, թարմացնել. վերականգնել. ~ an acquaintance ծանոթությունը վերականգնել. ~ a lease/contract վարձակալությունը/պայմանագիրը վերսկսել. ~ an invitation հրավերը կրկնել. ~ one's library book գրադարանի գրքի ժամկետը երկարացնել with ~ed strength/hope նոր ուժերով/հույսերով. ~ oneself վերածնվել:

**renewal** [ri'nju:əl] n վերանորոգում, վերականգնում, վերսկսում. the ~ of hostilities պատերազմական գործողությունների վերսկսում. ~ of lease վարձակալության երկարացում:

**renounce** [ri'nauns] v հրաժարվել, չճանաչել, մերժել. ~ a treaty պայմանագրից հրաժարվել:

**renouncement** [ri'naunsmənt] n մերժում, հրաժարում. չճանաչել:

**renovate** ['renəveit] v նորոգել, վերանորոգել, նորացնել. ~ a flat բնակարանը վերանորոգել:

**renovation** [ˌrenəʊ'veiʃn] n վերականգնում, վերակառուցում, թարմացում:

**renown** [ri'naun] n փառք, համբավ, հռչակ. նորոգում, վերանորոգում, նորացում:

**renowned** [ri'naund] a հռչակավոր, ակամավոր. ~ for one's songs հռչակավոր իր երգերով:

**rent** [rent] n վարձավճար. high/low/moderate ~ բարձր/ցածր/չափավոր վարձավճար. owe 3 months' ~ երեք ամսվա վարձավճար պարտք լինել. life ~ ցմահ վարձ. for ~ վարձու, վարձույթով. The house is for ~ Տունը վարձով է տրվում. ~ free վարձավճարից ազատված. ~ collector վարձավճար հավաքող:

**rent** [rent] v վարձել, վարձով վերցնել. վարձույթով տալ. ~ out վարձով տալ. ~ a flat/an office բնակարան /գրասենյակ վարձել. ~ a car/a piano վարձույթով մեքենա/դաշնամուր վերցնել:

**rental** ['rentl] n վարձավճար:

**renter** ['rentə] n վարձող, վարձակալ.

**rent-free** [ˌrent'fri:] a վարձավճարից ազատված:

**rentier** ['rɒntieɪ] n ռանտյե, ռենտայի հաշվին ապրող:

**renunciation** [riˌnʌnsi'eɪʃn] n հրաժարում, հրաժարագիր, հրաժարման ակտ. ~ of suit հրաժարում հայցից:

**reopen** [ri:'əʊpən] v վերաբանալ, վերաբացել. վերսկսել. ~ negotiations վերսկսել բանակցությունները. ~ a trial դատական քննությունը վերսկսել. The wound has ~ed վերքը նորից բացվել է:

**reorganization** [riˌɔ:gənaɪ'zeɪʃn] n վերակազմակերպում. վերակառուցում:

**reorganize** [ri:'ɔ:gənaɪz] v վերակազմակերպել, վերակառուցել. բարեփոխել:

**repair** [ri'peə] n նորոգում, վերանորոգում. under ~ վերանորոգման մեջ. permanent ~ ընթացիկ վերանորոգում. in good/bad ~ լավ, սարքին/վատ, անսարք վիճակում. beyond ~ միանգամայն անպետք, փչացած. out of ~ անսարքին. major/running, current ~s կապիտալ/ընթացիկ վերանորոգում. "Closed for ~s" (ցուցանակ) Փակ է վերանորոգման պատճառով. ~ shop նորոգման արհեստանոց:

**repair** [ri'peə] v նորոգել, վերանորոգել. հատուցել, փոխհատուցել. ուղղել (սխալը, անարդարությունը). ~ the clock/road/car ժամացույցը/ճանապարհը/մեքենան վերանորոգել. have one's shoes /coat ~ed կոշիկները/վերարկուն վերանորոգել տալ. ~ a puncture անվադողի պատռվածքը սուսնծել. keep in ~ սարքին պահել:

**repairable** [ri'peərəbəl] a նորոգելի, նորոգման ենթակա:

**reparable** ['repərəbəl] a ուղղելի, շտկելի:

**reparation** [ˌrepə'reɪʃn] n վերանորոգում, նորոգում. ~s փոխհատուցում, պատերազմական տուգանք:

**repartee** [ˌrepa:'ti:] n սրամտություն, հնարամտություն. witty ~ սրամիտ պատասխան. The play is full of ~s Պիեսը լի է սրամտություններով:

**repast** [ri'pa:st] n ուտելիք (ճաշ, ընթրիք և այլն). a light ~ թեթև խորտիկներ:

**repatriate** [ˌri:pætri'eɪt] v, n հայրենադարձել, հայրենադարձ:

**repatriation** [ˌri:pætri'eɪʃn] n հայրենադարձություն:

**repay** [ri'pei] v հատուցել, փոխհատուցել. վարձատրել. ~ a debt պարտքը տալ. How can I ever ~ you? Ինչպե՞ս կարող եմ ձեզ վարձահատուցյ լինել:

**repayable** [ri'peiəbl] a վճարման/հատուցման ենթակա:

**repayment** [ri'peimənt] n վճարում, փոխհատուցում, վարձատրություն. as a ~ for kindness բարության փոխհատուցում. ~ order վճարման կարգադրագիր:

**repeal** [ri'pi:l] 1. n վերացում, չեղարկում, չեղյալ հայտարարելը. 2. v վերացնել, ոչնչացնել, չեղյալ հայտարարել:

**repeat** [ri'pi:t] 1. v կրկնել. կրկնվել, նորից տեղի ունենալ. on ~ed occasions հաճախակի, բազմիցս. You are ~ing yourself Դուք կրկնվում եք. Don't ~ it Ոչ մեկին չասես. ~ everything to the boss ամեն ինչ պետին հաղորդել: 2. n կրկնություն, կրկնողություն. փորձ, խաղափորձ:

**repeated** [ri'pi:tɪd] a կրկնվող, կրկնակի. after ~ efforts/requests բազմաթիվ ջանքերից/խնդրանքներից հետո:

**repeatedly** [ri'pi:tɪli] adv կրկին, հաճախակի. բազմիցս, մի քանի անգամ:

**repel** [ri'pel] v հետ մղել, վանել. մերժել. ~ an attack հարձակումը հետ մղել. (զգվանք/զարշանք առաջացնել) He ~s me ես նրա նկատմամբ տհաճություն եմ զգում:

**repellent** [ri'pelənt] a վանող, անդուրեկան, անդուր, զգվելի. an insect ~ միջատ սպանիչ (միջոց):

**repent** [ri'pent] v ցավել, զղջալ, ափսոսել. bitterly ~ դառնորեն զղջալ. I ~ to have sold my car Ափսոսում եմ, որ մեքենաս վաճառել եմ:

**repentance** [ri'pentəns] n զղջում, ափսոսանք:

**repentant** [ri'pentənt] a զղջացող, զղջման. be ~ զղջալ:

**repercussion** [ri:pe'kʌʃn] n հետահարում. արձագանք, անդրադարձում. հետևանքներ. have far-reaching ~s հեռու զնացող հետևանքներ ունենալ. have ~s on prices անդրադառնալ գների վրա:

**repertoire** [ˈrepətwa:] n խաղացանկ. a wide ~ լայն խաղացանկ. a large ~ of funny stories ծիծաղաշարժ պատմությունների մեծ

ցանկ/պաշար:

**repertory** [ˈrepətəri] n պահեստ, պահոց. տեղեկագիրք, ժողովածու. ~ company/theatre գավառական թատրոն:

**repetition** [ˌrepəˈtʃi:n] n կրկնություն. *թատր.* փորձ, խաղափորձ:

**repetitive** [ri'petətɪv] a կրկնվող. The author is very ~ Չեղինական անընդհատ կրկնվում է:

**repine** [ri'paɪn] v տրտնջալ, դժգոհել. գանգատվել:

**replace** [ri'pleɪs] v նորից տեղը դնել. փոխարինել. ~ the receiver հեռախոսափողը իր տեղը դնել. impossible to ~ անփոխարինելի. He ~d his father Նա փոխարինեց իր հորը:

**replacement** [ri'pleɪsmənt] n փոխարինում, փոխանորդ. He is my ~ Նա իմ փոխանորդն է. hair ~ մազերի պատվաստում. generation ~ սերնդափոխություն:

**replenish** [ri'plenɪʃ] v լրացնել, համալրել:

**replenishment** [ri'plenɪʃmənt] n լցնելը, պակասը լրացնելը. համալրում:

**replete** [ri'pli:t] a լցված, լիքը, լեցուն. be ~ կուշտ լինել:

**repletion** [ri'pli:ʃn] n չափից ավելի շատ լցված լինելը. գերհագեցում. կշտանալը:

**replica** [ˈreplɪkə] n պատճեն, կրկնօրինակ. ռեպլիկ. պատասխան. angry/immediate ~ բարկացած/անմիջական պատասխան/ռեպլիկ:

**reply** [ri'plai] n պատասխան. in ~ ի պատասխան. ~ paid վճարված պատասխանով:

**reply** [ri'plai] v պատասխանել. պատասխան տալ. ~ to a letter նամակին պատասխանել. ~ by airmail ավիափոստով պատասխանն ուղարկել:

**report** [ri'pɔ:t] n զեկուցում, հաղորդում. present a ~ on/about smth զեկուցում/հաղորդում ներկայացնել. detailed/scientific/ dull ~ մանրամասն/գիտական/անհետաքրքիր զեկուցում. (հաշվետվություն, վկայական) an annual ~ տարեկան հաշվետվություն. make a ~ զեկուցում անել. The policeman wrote his ~ Ոստիկանը արձանագրություն կազմեց. a weather ~ եղանակի տեսություն. a school ~ թվանշանների վկայական. according to the latest ~ համաձայն վերջին հաղորդումների. (լուր, համբավ) the ~ has it that, the ~

goes ասում են, որ. լուրեր են տարածվում.  
know only by ~ միայն ասեկոսեներին/լուրե-  
րից իմանալ. (կրակոց) a loud ~ ուժեղ կրա-  
կոց:

**report** [ri'pɔ:t] v հաղորդել, տեղեկացնել.  
ծանուցել, հայտնել. It is ~ed Ֆաղորդում են.  
~ed missing համարել անհայտ կորած. ~  
progress աշխատանքի ընթացքի մասին զե-  
կուցել. ~ a theft գողության մասին տեղե-  
կացնել. ~ smn բողոքել մեկից. The teacher  
~ed Tom Դասատուն բողոքեց Թոմից. ~ well  
of smn մեկին լավ բնութագրել. (թղթակցել)  
~ for the Times Թայմզ թերթին թղթակցել. ~  
to the manager տնօրենին ներկայանալ. ~ for  
duty աշխատանքի ներկայանալ. R~ back to  
me Նորից ներկայացեք ինձ. ~ sick տեղե-  
կացնել, որ հիվանդ է:

**reporter** [ri'pɔ:tə] n թղթակից, լրագրող,  
զեկուցող:

**repose** [ri'pəuz] n հանգիստ, դադար, քուն:  
**repose** [ri'pəuz] v հանգստանալ, քնել. ~  
one's head on a cushion գլուխը բարձին դնել.  
~ on the sofa բազմոցին պառկել:

**repository** [ri'pɒzɪtəri] n պահեստ, պահոց,  
շտեմարան:

**reprehend** [,reprɪ'hend] v հանդիմանել,  
նախատել:

**reprehensible** [,reprɪ'hensəbl] a դատա-  
պարտելի, պարսավելի:

**reprehension** [,reprɪ'hensən] n պարսա-  
վանք, կշտամբանք:

**represent** [,reprɪ'zent] v ներկայացնել.  
պատկերել. ~ a country/a firm/the facts եր-  
կիր/ֆիրմա/փաստեր ներկայացնել. ~ to  
smn ցույց տալ, մատնացույց անել. ~ smb's  
interests մեկի շահերը ներկայացնել:

**representation** [,reprɪzen'teɪʃən] n պատկե-  
րում, նկարագրություն. ներկայացուցչու-  
թյուն. diplomatic/commercial ~ դիվանագի-  
տական/առևտրական ներկայացուցչու-  
թյուն/ ներկայացուցիչ. proportional ~ հավա-  
սարաչափ ներկայացուցչություն:

**representative** [,reprɪ'zentətɪv] 1. a ներկա-  
յացուցչական, բնորոշ. a ~ group of students  
ուսանողների ներկայացուցչական խումբ.  
These cases are not ~ Այս դեպքերը բնորոշ  
չեն. 2. n ներկայացուցիչ. ~ accredited of a  
government/of the press կառավարության/  
մամուլի լիազոր ներկայացուցիչ:

**repress** [ri'pres] v ճնշել, զսպել. ~ tears ար-  
ցունքները զսպել. ~ uprising ապստամբու-  
թյունը ճնշել. a ~ed type ճնշված հոգեվիճա-  
կով անձնավորություն:

**repression** [ri'presjən] n ընկճվածություն,  
ճնշվածություն. ճնշում, ճնշամիջոց:

**repressive** [ri'presɪv] a ճնշիչ. պատժիչ. ~  
measures ճնշիչ/պատժիչ միջոցներ:

**reprove** [ri'pri:v] n հետաձգում. ժամկետի  
երկարաձգում. grant smb a ~ մեկին ժա-  
մանակ տրամադրել/ժամկետը երկարաց-  
նել:

**reprimand** [ˈreprɪma:nd] 1. n նկատողու-  
թյուն, հանդիմանություն. give/receive a ~  
նկատողություն անել/ստանալ. 2. v նկա-  
տողություն անել, հանդիմանել:

**reprint** [ˌri:ˈprɪnt] n, v վերահրատարակու-  
թյուն. վերահրատարակել, վերատպել:

**reprisal** [ri'praɪzəl] n պատասխան ճնշամի-  
ջոց. threaten to take ~ սպառնալ պատաս-  
խան ճնշամիջոցներ իրագործել:

**reproach** [ri'prəʊtʃ] n կշտամբանք, նախա-  
տինք, հանդիմանություն. heap ~es on, hurl  
~es at նախատինք թափել, նախատել be-  
yond ~ անբասիր, անպարսավելի. (խայտա-  
ռակություն) bring ~ խայտառակել:

**reproach** [ri'prəʊtʃ] v հանդիմանել, կշտամ-  
բել, պարսավել. ~ smb for smth հանդիմանել  
որևէ բանի համար.

**reproachful** [ri'prəʊtʃfʊl] a հանդիմանա-  
կան, կշտամբալից:

**reproachfully** [ri'prəʊtʃfʊli] adv հանդիմա-  
նաբար, նախատելով:

**reprobate** [ˈreprəʊbeɪt] 1. n անպիտան,  
սրիկա. 2. a ստոր, անարգ. 3. v պարսավել,  
կշտամբել:

**reprobation** [,reprəʊ'beɪʃən] n պարսա-  
վանք, կշտամբանք, նախատինք:

**reproduce** [ˌri:prə'dju:s] v վերարտադրել,  
վերականգնել. կենս. բազմանալ. կրկնօրի-  
նակել, ընդօրինակել. ~ a voice on the tape  
ձայնը վերարտադրել. ~ copies of a painting  
նկարի պատճենները հանել:

**reproducer** [ˌri:prə'dju:sə] n վերարտադ-  
րող. բարձրախոս:

**reproduction** [ˌri:prə'dʌkʃən] n վերարտա-  
դրություն, վերարտադրում. պատճեն. կենս.  
բազմացում. տնտ. վերարտադրություն. ~  
on a large scale ընդլայնված վերարտադրու-

թյուն. ~ of results արդյունքների վերարտադրում:  
**reproductive** [ˌri:prəˈdAktiv] a վերարտադրողական:  
**reproof** [riˈpru:f] n հանդիմանություն, կշտամբանք:  
**reprove** [riˈpru:v] v հանդիմանել, կշտամբել, նախատել:  
**reptile** [ˈreptail] 1. n սողուն. *փխբ.* ստորաքարշ մարդ. 2. a սողացող. *փխբ.* քծնող, ստորաքարշ:  
**republic** [riˈpʌblik] n հանրապետություն:  
**republican** [riˈpʌblikən] n *քղք.* հանրապետական:  
**repudiate** [riˈpjʊ:dieit] v ուրանալ, հրաժարվել. մերժել, ժխտել. ~ the debt հրաժարվել պարտքերը վճարելուց. ~ the accusation ժխտել մեղադրանքը. ~ the treaty չեղյալ հայտարարել պայմանագիրը:  
**repudiation** [riˈpjʊ:diˈeiʃn] n ուրացում, հրաժարում, մերժում:  
**repugnance, repugnancy** [riˈpʌgnəns, riˈpʌgnənsi] n զգվանք, նողկանք, հակակրանք:  
**repugnant** [riˈpʌgnənt] a զգվելի, նողկալի, անտանելի:  
**repulse** [riˈpʌls] v հետ մղել, վանել. մերժել. հրաժարվել. ~ smb's advances հակահարված տալ:  
**repulsion** [riˈpʌlʃn] n նողկանք, հակակրանք:  
**repulsive** [riˈpʌlsiv] a նողկալի, զգվելի վանող:  
**reputable** [ˈrepjʊtəbl] a հարգելի, պատվարժան. հանրահայտ. հուսալի. a ~ firm հեղինակավոր/ժանրակշիռ ֆիրմա. ~ person ճանաչված/հայտնի մարդ:  
**reputation** [ˌrepjuˈteɪʃn] n համբավ, անուն, հռչակ. ruin smb's ~ կործանել մեկի համբավը. earn /win/gain a ~ բարի անուն ձեռք բերել. have a ~ for wit պատմությամբ հայտնի լինել. սրամտությամբ հայտնի լինել. a nationwide ~ ամբողջ երկրում հայտնի:  
**repute** [riˈpjʊ:t] n համբավ, հռչակ. ընդհանուր կարծիք. according to ~ համաձայն/ըստ ընդհանուր կարծիքի. a firm of good ~ պատկառելի ֆիրմա. bad ~ վատ համբավ. common ~ լայն ճանաչում:

**request** [riˈkwest] n խնդրանք. պատվեր. պահանջ. at ~ խնդրանքով, պահանջով. ~ for assistance օգնության խնդրանք. make a ~ որևէ խնդրանքով դիմել, հարցում անել. comply with/fulfil one's ~ խնդրանքը բավարարել. ~ in writing գրավոր խնդրանք, միջնորդագիր. refuse smb's ~ մերժել խնդրանքը. (պահանջարկ) in great ~ մեծ պահանջարկ ունեցող:  
**request** [riˈkwest] v խնդրել, պահանջել. ~ smb to do smth մեկին խնդրել որևէ բան անել. ~ permission թույլտվություն խնդրել. Help is ~ed օգնություն է պահանջվում:  
**requiem** [ˈrekwiəm] n սգերգ, ռեքվիեմ:  
**require** [riˈkwaɪə] v պահանջել. հարկավոր/անհրաժեշտ լինել. ~ much time/much effort շատ ժամանակ/ջանքեր պահանջել. We ~ help Մեզ օգնություն է հարկավոր. It ~d all his courage Անհրաժեշտ էր նրա ողջ քաջությունը. You are ~d Ձեր կարիքն է զգացվում:  
**required** [riˈkwaɪəd] a անհրաժեշտ, պահանջվող. within the ~ time պահանջվող ժամանակամիջոցում. by the ~ date սահմանված ժամկետին. of ~ length անհրաժեշտ/պահանջված երկարությամբ. ~ condition անհրաժեշտ պայման:  
**requirement** [riˈkwaɪəmənt] n պահանջ. կարիք. անհրաժեշտություն. fulfil the ~s պահանջները կատարել. meet all the ~s բոլոր պահանջներին համապատասխանել. satisfy the ~s պահանջները բավարարել. English is a ~ for that job Անգլերենի գիտելիքը պարտադիր է այդ աշխատանքի համար. age ~ տարիքային ցենզ:  
**requisite** [ˈrekwizit] n անհրաժեշտ բան. all the ~s բոլոր անհրաժեշտ բաները. a ~ time-limit անհրաժեշտ/պահանջվող ժամկետ:  
**requisition** [ˌrekwiˈziʃn] n պահանջ, պատվեր:  
**requital** [riˈkwaɪtɪl] n հատուցում, փոխհատուցում. պատիժ, վրեժ:  
**requite** [riˈkwaɪt] v հատուցել, փոխհատուցել. ~ like for like նույնությամբ հատուցել. նույն դրամով վճարել:  
**rescind** [riˈsɪnd] v վերացնել, ոչնչացնել, խզել. պայմանագիրը դադարեցնել:  
**rescript** [ˈri:skript] n հրաման, հրամանագիր:  
**rescue** [ˈreskjʊ:] n փրկություն, ազատում. go



to smb's ~ մեկին օգնության գնալ. a daring ~ համարձակ փրկարար գործողություն. ~ boat/party/team փրկանավակ, փրկարար ջոկատ/խումբ:

**rescue** ['reskjʊ:] v փրկել, ազատել, օգնության հասնել. ~ service փրկարար ծառայություն. ~ from drowning խեղդվելուց փրկել. ~ from an awkward situation անհարմար վիճակից փրկել/ազատել:

**rescuer** ['reskjʊ:ə] n փրկիչ, ազատարար, ազատող:

**research** [ri'sə:tʃ] n հետազոտություն, հետախուզում. ուսումնասիրություն. carry out ~ հետազոտություն/ուսումնասիրություն անցկացնել. do a piece of ~ հետազոտություն կատարել. scientific/profound/fundamental ~ գիտական/խորը/հիմնավոր ուսումնասիրություն. ~ work հետազոտական աշխատանք. ~ centre/institute հետազոտական կենտրոն/հիմնաստիտուտ. ~ worker/fellow գիտաշխատող. ~ assistant կրտսեր գիտաշխատող. ~ and development (R & D) հետազոտություն և մշակում:

**research** [ri'sə:tʃ] v հետազոտել, հետազոտական աշխատանքով զբաղվել. ~ into smth հետազոտել որևէ բան:

**reseda** ['residə] n *sup.* հափրուկ, հափուկ:

**resemblance** [ri'zembləns] n նմանություն. bear/show ~ նմանություն ունենալ, նման լինել. the ~ between them նմանություն նրանց միջև:

**resemble** [ri'zembəl] v նման լինել, նմանվել մի բանի. She ~s her mother Նա նման է իր մորը:

**resent** [ri'zent] v վրդովվել, հուզվել. վիրավորվել, նեղանալ. գայրանալ. I ~ the way he treats me վրդովված եմ նրա վերաբերմունքից. He ~ed my saying Նրան վիրավորեց իմ ասածը. He ~s my success Նա նախանձում է իմ հաջողությանը:

**resentful** [ri'zentfʌl] a գայրացած, հուզված. նեղացած, վիրավորված. a ~ tone նեղացած տոն. feel ~ վիրավորված/գայրացած լինել:

**resentment** [ri'zentmənt] n գայրույթ, վրդովմունք. վիրավորանք. a feeling of ~ վիրավորանքի զգացում. harbour ~ (against smb) վիրավորանքի ոխը պահել/չմոռանալ:

**reservation** [,rezə'veiʃn] n վերապահություն, վերապահում. with certain ~ որոշ վերապահումներով. without ~ անվերապահ կերպով, առանց վերապահության. with ~ of բացառությամբ, վերապահումով. (զսպվածություն) treat with some ~ զսպված/զսպվածությամբ վերաբերվել. (նախնական պատվեր) make a ~ for theatre/hotel/ship նախապես թատրոնի տեղեր/հյուրանոցի սենյակ/նավի տոմսեր պատվիրել. (արգելաբնակավայր) ~ for US Indians արգելաբնակավայր Ամերիկայի հնդկացիների համար:

**reserve** [ri'zə:v] n պաշար, պահուստ. *մրգ.* պահեստի խաղացող. in ~ պահեստում. mineral ~s օգտակար հանածոների պաշար. contingency ~ ապահովության պաշար. (արգելոց) nature/forest/game ~ արգելոց/արգելանտառ/արգելոց վայրի զազանների համար. hold in ~ պահեստում պահել. a ~ fund պահեստային ֆոնդ ~ supplies պաշարներ. (վերապահում) without ~ լիովին, անվերապահորեն:

**reserve** [ri'zə:v] v խնայել, տնտեսել. պաշար պահել. վերապահել. ~ for winter ձմեռվա համար պահել. ~ one's strength ուժերը խնայել. ~ judgement խուսափել դատողություններից. ~ the right իրավունք վերապահել. (պատվիրել) ~ a seat տեղ պատվիրել (թատրոնում և այլն). ~ a room in a hotel հյուրանոցում սենյակ պատվիրել:

**reserved** [ri'zə:vd] a նախապես պատվիրված. պահեստի. պահպանված. զուսպ. be ~ on the subject հարցի կապակցությամբ շատ զուսպ/զգույշ լինել. all rights ~ բոլոր իրավունքները պահպանված են:

**reservedly** [ri'zə:vidli] adv զուսպ կերպով, զգույշ, զգուշորեն:

**reservoir** ['rezəwə:] n ջրամբար, նավթամբար. ամբար, շտեմարան. աղբյուր:

**reshuffle** [ri:'ʃʌfl] n վերադասավորում. ~ of the Cabinet (նախարարների) կաբինետի վերադասավորում:

**reside** [ri'zaid] v ապրել, բնակվել. գտնվել, լինել:

**residence** ['rezidəns] n բնակություն. պաշտոնական բնակավայր/նստավայր. take up one's ~ բնակություն հաստատել. place of ~ բնակավայր. during ~ abroad արտասահմանում ապրելու ժամանակ. work and ~

permit աշխատանքի և բնակության թույլտվություն large/official ~ մեծ/պաշտոնական նստավայր. hall of ~ հանրակացարան:

**resident** [ˈrezɪdənt] n մշտական բնակիչ. alien ~ մշտաբնակ օտարերկրացի. a ~ in Leeds Լիդսի բնակիչ.

**resident** [ˈrezɪdənt] a ապրող, բնակվող. the ~ population մշտական բնակչություն. a ~ doctor հիվանդանոցում ապրող բժիշկ:

**residential** [ˌreziˈdenʃl] a բնակելի. a ~ area/district բնակելի շրջան/թաղամաս:

**residual** [riˈzɪdʒʊəl] n, a մնացորդ, տարբերություն. մնացորդ, մնացորդային:

**residue** [ˈrezɪdjuː] n մնացորդ. քիմ. նստվածք:

**resign** [riˈzeɪn] v հրաժարվել, հրաժարական տալ. ~ one's right հրաժարվել իր իրավունքից. ~ one's job աշխատանքը թողնել. ~ oneself ենթարկվել, հնազանդվել. ~ to the idea մտքի հետ հաշտվել. ~ to one's fate ճակատագրին հնազանդվել:

**resignation** [ˌreziɡˈneɪʃn] n պաշտոնից հրաժարական տալը, պաշտոնաթող լինելը. ճակատագրին հնազանդվելը, ճակատագրի հետ հաշտվելը. hand in ~ պաշտոնաթողություն խնդրել:

**resigned** [riˈzeɪnd] a խոնարհ, հնազանդ:

**resilience, resiliency** [riˈzɪliəns, riˈzɪliənsɪ] n առածգականություն, ճկունություն:

**resilient** [riˈzɪliənt] a առածգական, ճկուն. կենսուրախ, չընկճվող:

**resin** [ˈrezɪn] n խեժ, բուսախեժ:

**resinous** [ˈrezɪnəs] a խեժի, խեժաման, խեժառատ:

**resist** [riˈzɪst] v դիմադրել, դիմադրություն ցույց տալ. ընդդիմանալ. ~ the enemy/influence/disease դիմադրել թշնամուն, ընդդիմանալ ազդեցությանը, պայքարել հիվանդության դեմ. ~ the temptation դիմադրել գայթակղությանը. ~ an attack/changes գրոհին դիմադրել. ընդդիմանալ փոփոխություններին. He couldn't ~ laughing Չէր կարողանում ծիծաղը զսպել:

**resistance** [riˈzɪstəns] n դիմադրություն, դիմադրում. հակազդեցություն. stubborn/determined/unexpected ~ համառ/վճռական/անսպասելի դիմադրություն. overcome/break the ~ հաղթահարել/կոտրել դիմադրությունը.

put up/ offer ~ դիմադրություն ցույց տալ. ~ to wear դիմացկունություն. the line of least ~ ամենափոքր դիմադրության ճանապարհ. էլ., քղք. դիմադրություն. the R~ Դիմադրության շարժում:

**resistant** [riˈzɪstənt] a ընդդիմացող, դիմադրական. դիմացկուն. ~ to poison թունադիմացկուն. ~ to pressure ճնշման նկատմամբ դիմացկուն:

**resistless** [riˈzɪstlɪs] a դիմադրության անընդունակ:

**resolute** [ˈrezəlu:t] a վճռական, կտրուկ. a ~ man/one վճռական մարդ/տոն. ~ in one's decision վճռական լինել իր որոշման մեջ:

**resolution** [ˌrezəˈlu:ʃn] n վճիռ, որոշում, բանաձև (ժողովի). վճռականություն, հաստատականություն. լուծում (*նաև երժշ.*). make a ~ որոշել, որոշում կայացնել. pass/adopt/ take a ~ որոշում/բանաձև ընդունել. ~ against smth վճիռ/որոշում որևէ բանի դեմ. ~ of the conflict հակամարտության լուծում/կարգավորում. draft ~ բանաձևի նախագիծ:

**resolution** [ˌrezəˈlu:ʃn] v վճռել, որոշել. be ~ed հաստատ վճռել/որոշել. the problem was ~ed հարցը որոշվեց/լուծվեց. We ~ed on a trip Մենք որոշեցինք ճամփորդել. It will all ~ itself Չարցն ինքն իրեն կլուծվի. ~ one's doubts կասկածները ցրել/փարատել. (բաժանել, տարրալուծել) ~ into separate elements առանձին մասերի բաժանել. The question ~s into 3 parts Չարցը տրոհվում է երեք մասի:

**resolve** [riˈzɒlv] n որոշում, վճիռ. make a ~ to do smth որևէ բան անելու որոշում ընդունել. of great ~ համարձակ և վճռական:

**resolved** [riˈzɒlvd] a վճռական. կայուն, հաստատական:

**resonance** [ˈreznəns] n անդրադարձում. ռեզոնանս:

**resonant** [ˈreznənt] a հնչող. արձագանք առաջացնող. a ~ hall լավ հնչողություն ունեցող դահլիճ:

**resort** [riˈzɔ:t] n հաճախակի այցելվող վայր. առողջարան. health ~ առողջարան, բուժավայր. summer ~ ամառանոց. holiday ~ առողջարան. կուրորտ. (դիմում, դիմելը) ~ to force ուժի/բռնության գործադրում. (ապաստան, ապավեն) the last ~ վերջին

ապավեն/հույս. in the last ~ ծայրահեղ դեպքում:

**resort** [ri'zɔ:t] v դիմել, ապավինել. ~ to smb/smbth դիմել մեկին/ապավինել մի բանի:

**resound** [ri'zaund] v հնչել, լսվել. թնդալ, հռչակ ստանալ. A shot ~ed Կրակոց լսվեց. ~ with the echo արձագանքից թնդալ:

**resounding** [ri'zaundɪŋ] a հնչեղ. ~ success աղմուկ հանած հաջողություն. a ~ defeat բացարձակ պարտություն:

**resource** [ri'zɔ:s] n միջոց. պաշար. բնական հարստություն. ~s միջոցներ, պաշարներ. natural/financial ~s բնական հարստություններ. ֆինանսական միջոցներ. ~ of men մարդկային ռեսուրսներ. labour ~s աշխատուժի ռեսուրսներ. pool one's ~s ի մի բերել դրամական միջոցները. great ~s of energy էներգիայի մեծ աղբյուր. be left to one's own ~s իր հույսին թողնված լինել:

**resourceful** [ri'zɔ:sfɪl] a ճարպիկ, հնարամիտ, խելամիտ:

**respect** [ri'spekt] n հարգանք, պատիվ. deep/profound/sincere/merited/mutual ~ խորը/անկեղծ/արժանի, վաստակած/փոխադարձ հարգանք. out of ~ for հարգանքից դրդված. command ~ հարգանք վայելել. with due ~ պատշաճ հարգանքով. with all ~ ամենայն հարգանքով. win smb's ~ հարգանք շահել/ձեռք բերել. pay one's ~s հարգանք/մեծարանք ցույց տալ. այցելել, այցելություն կատարել. give my ~s ողջույններս հաղորդեք. (առնչություն, հարաբերություն) in every ~ բոլոր տեսակետներից. in this ~ այս տեսակետից. in other ~s մնացածում, այլ տեսակետներից. in all ~s բոլոր կողմերից/տեսակետներից. in no ~ ոչ մի դեպքում. ոչ մի տեսակետից. in ~ of, with ~ to ինչ վերաբերում է, նկատի առնելով. without ~ to առանց հաշվի առնելու:

**respect** [ri'spekt] v հարգել, մեծարել. ~ smb's feelings/rights մեկի զգացմունքները/իրավունքները հարգել. ~ one's wishes հաշվի նստել մեկի ցանկությունների հետ:

**respectability** [ri,spektə'biləti] n պատկառելիություն, ակնածելիություն:

**respectable** [ri'spektəbl] a հարգարժան, պատկառելի. զգալի, բավականաչափ. ազնիվ. ~ motives ազնիվ մղումներ. outwardly ~

արտաքնապես պատկառելի. a ~ hotel կարգին/օրինավոր հյուրանոց. a ~ society կարգին/օրինավոր հասարակություն. a ~ sum պատկառելի գումար. at a ~ distance բավականաչափ հեռավորության վրա:

**respectful** [ri'spektfɪl] a հարգալից, հարգալից վերաբերմունք ունեցող. keep at a ~ distance պատշաճ/տարածություն/հեռավորություն պահպանել. ~ towards elders հարգալից մեծերի նկատմամբ:

**respectfully** [ri'spektfɪli] adv հարգանքով. ~ yours (նամակում) հարգանքներով ձեր:

**respecting** [ri'spektɪŋ] prep մասին, վերաբերյալ:

**respective** [ri'spektɪv] a համապատասխան. our ~ rooms մեր համապատասխան սենյակները. according to their ~ needs յուրաքանչյուրի կարիքներին համապատասխան:

**respectively** [ri'spektɪvli] adv համապատասխանաբար, նշված կարգով. first and second places ~ առաջին և երկրորդ տեղերը համապատասխանաբար:

**respiration** [,respə'reiʃn] n շնչառություն, շունչ:

**respirator** ['respəreitə] n հակազագ:

**respiratory** [ri'spiətəri] a շնչառական, շնչառության:

**respire** [ri'spaɪə] v շնչել, շունչ քաշել/առնել:

**respite** ['respait] n կարճատև դադար. *իրավ.* հետաձգում/մահապատժի/without ~ առանց դադարի, անընդհատ. no ~ from the heat ոչ մի փրկություն չոգից:

**resplendence** [ri'splendəns] n շքեղություն, փայլ:

**resplendent** [ri'splendənt] a փայլուն, շքեղ, հոյակապ:

**respond** [ri'spɒnd] v պատասխանել. հակազդել. արձագանքել. ~ to an appeal/suggestion կոչին/առաջարկին արձագանքել. ~ with a laugh ի պատասխան ծիծաղել. ~ to treatment բուժմանը ենթարկվել (բուժումը օգնում է). Plants ~ to the light Բույսերն արձագանքում են լույսին. The brakes don't ~ Արգելակները չեն հնազանդվում/չեն աշխատում:

**respondent** [ri'spɒndənt] n պատասխանող:

**response** [ri'spɒns] n պատասխան, հակազ-

դում. in ~ to ի պատասխան. his only ~ նրա միակ պատասխանը. hope for a bigger ~ ավելի լայն արծագանք ակնկալել:

**responsibility** [riˌspɒnsəˈbɪləti] n պատասխանատվություն, պարտականություն. on one's own ~ սեփական պատասխանատվություն. shared ~ համատեղ պատասխանատվություն. accept/take ~ պատասխանատվություն վերցնել/ստանձնել. assume ~ for պատասխանատվություն ստանձնել. bring to ~ պատասխանատվության ենթարկել. sense of ~ պարտքի/պատասխանատվության զգացում. no sense of ~ պատասխանատվության բացակայություն. That's not my ~ Դա իմ պարտականությունը չէ. It is my ~ to decide Այդ որոշման համար ես եմ պատասխանատու. She is your ~ Դու նրա համար պատասխանատու ես:

**responsible** [riˈspɒnsəbəl] a պատասխանատու. a ~ post/task/worker պատասխանատու պաշտոն/հանձնարարություն/աշխատող. hold smn ~ պատասխանատու համարել. not ~ for one's actions իր արարքների համար պատասխան չտալ. ~ party պատասխանատու կողմ/անձինք. Those ~ will be punished Պատասխանատուները/Սեղավորները կպատժվեն:

**responsive** [riˈspɒnsɪv] a զգայուն, կարեկից, արծագանքող. a ~ audience զգայուն/արծագանքող հանդիսատես. ~ to care խնամքին արծագանքող:

**rest I** [rest] n հանգիստ, անդորր, քուն. ցեցուկ, հենարան. երժշ. դադար, ընդմիջում. long/ complete/deserved ~ երկար/կատարյալ/արժանի հանգիստ. take/have a ~ հանգստանալ. never have a moment's ~ մի վայրկյան հանգիստ չունենալ. set at ~ հանգստացնել. have a good night's ~ գիշերը լավ քնել. ~ cure անկողնային ռեժիմ. come to ~ կանգ առնել. bring to ~ կանգնեցնել:

**rest II** [rest] n մնացորդ. մնացածը. մնացածները. all the ~ մնացած բոլորը, բոլոր մյուսները. the ~ of it մնացածը. the ~ of the boys մյուս տղաները. the ~ of the story/day/way պատմվածքի/ճանապարհի/օրվա մնացած մասը:

**rest** [rest] v հանգստանալ, հանգիստ առնել/տալ. ~ one's horses ձիերին հանգիստ տալ. These glasses ~ my eyes Այս ակնոցը

հանգստացնում է աչքերս. May he ~ in peace Չանգիստ նրա աճյունին. (հենել, հենվել) ~ one's elbows on the table սեղանին հենվել/կռթնել. The case ~s on facts Գործի հիմքում փաստեր կան/հենվում է փաստերի վրա. ~ one's eyes on հայացքը սևեռել. (մնալ) ~ assured համոզված լինել/մնալ. Let the matter ~ there Թող գործն այդպես էլ մնա. responsibility ~s with him Պատասխանատվությունը նրա վրա է ընկնում. It ~s with you to decide Ձեզ է մնում որոշելու:

**restaurant** [ˈrestərɒnt] n ռեստորան, ճաշարան. ~ car վագոն-ռեստորան:

**restful** [ˈrestfʊl] a հանգստացուցիչ. a ~ companion հանգիստ ընկերակից/գործընկեր:

**restitution** [ˌrestɪˈtjuːʃn] n վերականգնում. /կորածի/վերադարձ. հատուցում, փոխհատուցում. make ~ փոխհատուցել (վնասը). ~ in kind բնամթերքով փոխհատուցում. ~ order փոխհատուցման կարգադրագիր:

**restive** [ˈrestɪv] a անհանգիստ. get ~ անհանգստանալ, հուզվել:

**restless** [ˈrestləs] a անհանգիստ, անդադար, անխոնջ. անհամբեր. a ~ child անհանգիստ/անդադրում երեխա. a ~ night անհանգիստ գիշեր. get ~ անհամբեր դառնալ:

**restoration** [ˌrestəˈreɪʃn] n վերականգնում, վերակառուցում. վերանորոգում:

**restore** [riˈstɔː] v վերականգնել, վերահաստատել, վերակառուցել. ~ order/peace/smb's sight/health կարգ ու կանոն/խաղաղություն վերահաստատել. տեսողությունը/առողջությունը վերականգնել. The painting was ~d to its previous position Նկարը վերադարձվեց իր նախկին տեղը:

**restorer** [riˈstɔːrə] n վերականգնիչ. վերականգնող:

**restrain** [riˈstreɪn] v զսպել, պահել. սանձել. թույլ չտալ. ~ one's anger զայրույթը զսպել. ~ smn from մեկին հետ պահել/թույլ չտալ barely ~ oneself from իրեն հազիվ զսպել:

**restrained** [riˈstreɪnd] a զուսպ. սահմանափակված:

**restraint** [riˈstreɪnt] n զսպվածություն, ինքնամիտություն. սահմանափակում. with ~ զուսպ. without ~ անկաշկանդ, ազատ. impose ~s սահմանափակումներ դնել. (ծերբակալում, ազատազրկում) put under ~ կալանքի տակ առնել. ~ measure սահմա-

նափակման միջոց:  
**restrict** [ri'strɪkt] v սահմանափակել. ~ by law օրենքով սահմանափակել. a ~ed area *ռզմ.* արգելագոտի. ~ the view տեսադաշտը փակել. ~ oneself իրեն սահմանափակել. ~ the access մուտքը սահմանափակել:  
**restriction** [ri'strɪkʃn] n սահմանափակում:  
**restrictive** [ri'strɪktɪv] a սահմանափակող, զսպող. արգելակող, կաշկանդող. ~ trade practice *իրավ.* առևտրային մրցակցության սահմանափակում:  
**result** [ri'zʌlt] n արդյունք, հետևանք. վախճան. possible/unforeseen ~ հնարավոր/չնախատեսված արդյունք. achieve good ~s լավ արդյունքի հասնել. as a ~ որպես արդյունք. without ~ անարդյունք. the net ~ վերջին հաշվով. get/receive ~s արդյունք ստանալ:  
**result** [ri'zʌlt] v (որպես արդյունք) ծագել, սկիզբ առնել, առաջանալ. բխել. վերջանալ. ~ in մի բանով ավարտվել. ~ in complete failure լիակատար ծախողմամբ ավարտվել. Nothing ~ed from his efforts Նրա ջանքերը ոչ մի արդյունք չտվին. The game ~ed in a draw *մրզ.* խաղը վերջացավ ոչ-ոքի հաշվով:  
**resume** ['rezjumeɪ] n հանրագումար. ամփոփում. ինքնակենսագրություն. give a ~ ամփոփել, հանրագումարի բերել:  
**resume** [ri'zju:m] v վերսկսել. շարունակել (ընդհատումից հետո). ~ the story պատմությունը շարունակել. ~ studies/discussion/attempts պարապմունքները/քննարկումը/փորձերը վերսկսել. Classes have ~d *Դասերը վերսկսվեցին.* ~ one's seat նորից նստել/իր տեղը գրավել:  
**resumption** [ri'zʌmpʃn] n վերսկսում, շարունակում, շարունակելը. վերադարձ, վերադառնալը:  
**resurgent** [ri'sɜ:dʒənt] a վերածմովող, վերակենդանացող. հարություն առնող:  
**resurrect** [,rezə'rekt] v վերականգնել. վերակենդանացնել. վերակենդանանալ, հարություն առնել. We have ~ed my old bike *փխբ., խսկց.* Լույս աշխարհի հանեցիմք իմ հին հեծանիվը:  
**resurrection** [,rezə'rekʃn] n վերակենդանացում, վերականգնում. the R~ *եկեղ.* Հա-

րություն, հարություն առնելը:  
**resuscitate** [ri'sʌsɪteɪt] v *բժշկ.* ուշքի բերել, վերակենդանացնել:  
**retail** ['ri:teɪl] 1. n հատավաճառ. մանրածախ առևտուր. by ~ հատավաճառ, հատով ծախվող. ~ price/trade մանրածախ գին/առևտուր. 2. adv հատով, մանրածախ:  
**retailer** ['ri:teɪlə] n մանրավաճառ. շատախոս, շաղակրատ. դատարկախոս:  
**retain** [ri'teɪn] v պահել, պահպանել. (փաստաբան) վարձել. ~ the old name իին անունը պահպանել. A sponge ~s water Սպունգը ջուր է պահպանում:  
**retainer** [ri'teɪnə] n *իրավ.* նախնական հոմորար (*նախ ~ fee*). (կանխավճար. ) pay ~ for the room սենյակի համար կանխավճար տալ:  
**retaliate** [ri'tæli'eɪt] v փոխհատուցել, նույնով հատուցել. threaten to ~ սպառնալ վրեժը լուծել:  
**retaliation** [ri,tæli'eɪʃn] n փոխհատուցում, փոխվրեժ. վրեժ. in ~ for ի պատասխան, որպես փոխհատուցում. for fear of ~ վրիժառության վախից:  
**retaliatory** [ri'tæliətəri] a հակընդդեմ, ի պատասխան, փոխադարձ:  
**retard** [ri'tɑ:d] v դանդաղեցնել. ուշացնել:  
**retarded** [ri'tɑ:did] a հետամնաց, թերզարգացած. (mentally) ~ child մտավոր թերզարգացած երեխա:  
**retell** [ri:'tel] v վերապատմել, նորից պատմել:  
**retention** [ri'tenʃn] n պահում, պահպանում. արգելակում:  
**retentive** [ri'tentɪv] a պահող, պահպանող. լավ, սուր (հիշողություն):  
**rethink** [ri:'θɪŋk] v վերանայել. ~ one's policy վարած քաղաքականությունը վերանայել:  
**reticence** ['retɪsəns] n զսպվածություն. գաղտնապահություն. սակավախոսություն:  
**reticent** ['retɪsənt] a զուսպ, զսպված. ծածկամիտ. լռակյաց. naturally ~ էությանը զուսպ/ծածկամիտ:  
**reticulate** [ri'tɪkjʊlət] a ցանցաձև, ցանցանման:  
**reticule** ['retɪkjʊ:l] n կանացի փոքրիկ պալուսակ:

**retina** [ˈretinə] *n* *կզմ/ս.* (աչքի) ցանցաթաղանթ:

**retinue** [ˈretinjə:] *n* շքախումբ:

**retire** [riˈtaɪə] *v* զնալ, հեռանալ. պաշտոնաթող լինել. *մրգ.* խաղից դուրս գալ. *ռզմ.* նահանջել, հետ քաշվել. ~ into oneself ինքնամոխիվել. ~ for the night պառկել քնելու. ~ to one's room իր սենյակում առանձնանալ:

**retired** [riˈtaɪəd] *a* պաշտոնաթող. *be* ~ պաշտոնաթող լինել:

**retirement** [riˈtaɪəmənt] *n* պաշտոնաթողություն, պաշտոնաթող լինելը. առանձնացում, մեկուսացում. *ռզմ.* նահանջ. ~ age կենսաթոշակի տարիք:

**retiring** [riˈtaɪəriŋ] *a* զուսպ, պարկեշտ. ինքնամոխի, ինքնապարփակ. ~room զուգարան:

**retort** I [riˈtɔ:t] 1. *n* հակաճառություն, առարկություն. 2. *v* հակաճառել, առարկել. ընդդիմախոսել. նույնով պատասխանել:

**retort** II [riˈtɔ:t] 1. *n* *քիմ.* թորանոթ. 2. *v* թորել, գտել:

**retouch** [riˈtʌtʃ] *n* ռետուշում, ռետուշ անելը. ուղղել/շտկել (նկարը և այլն):

**retrace** [riˈtreɪs] *v* հետագոտել (մինչև սկզբնաղբյուրը). հիշողության մեջ վերականգնել. ~ one's steps նույն ճանապարհով վերադառնալ:

**retract** [riˈtrækt] *v* ներս/հետ քաշել. հետ վերցնել. չեղյալ հայտարարել. ուրանալ. ~ a promise խոստումից հրաժարվել:

**retraining** [ˌriːˈtreɪnɪŋ] *n* վերապատրաստում. professional ~ մասնագիտական վերապատրաստում:

**retreat** [riˈtri:t] *n* նահանջ. ապաստան. *beat* a ~ նահանջի ազդանշան տալ. *go into* ~ գործերը թողնել, գործերից հեռանալ:

**retreat** [riˈtri:t] *v* նահանջել, մեկուսանալ, առանձնանալ. ~ a step մի քայլ հետ գնալ. ~ to one's room իր սենյակը գնալ, իր սենյակում առանձնանալ:

**retrench** [riˈtrentʃ] *v* (ծախսերը) կրճատել, պակասեցնել, տնտեսել:

**retrenchment** [riˈtrentʃmənt] *n* ծախսերի կրճատում:

**retrial** [ˌriːˈtraɪəl] *n* *իրավ.* դատական գործերի վերաքննում:

**retribution** [ˌretriˈbjʊ:ʃn] *n* արժանի պատիժ. հատուցում:

**retributive** [riˈtribjʊtɪv] *a* պատժիչ, հատուցող:

**retrievable** [riˈtri:vəbl] *a* վերականգնելի, ուղղելի, դարձանելի:

**retrieve** [riˈtri:v] *v* գտնել (կորածը). վերադարձնել (իրենը). ~ a mistake սխալն ուղղել. ~ a situation իրավիճակը փրկել. He has ~d his suit-case *և* վերադարձրեց իր ճամպրուկը. ~ papers from the burning house այրվող տնից թղթերը դուրս բերել:

**retroaction** [ˌretrəʊˈækʃn] *n* հետադարձ գործողություն. *ռադ.* հետադարձ կապ:

**retrograde** [ˈretrəʊɡreɪd] *a* հետադիմական, ռեակցիոն. *ռզմ.* նահանջի, նահանջողական:

**retrospect** [ˈretrəʊspekt] *n* հետադարձ հայացք. *in* ~ հետադարձ հայացքով:

**retrospective** [ˌretrəʊˈspektɪv] *a* հետահայաց, անցյալին վերաբերող. *իրավ.* հետադարձ ուժ ունեցող. ~ wisdom հետահայաց իմաստություն:

**return** [riˈtə:n] *n* վերադարձ, փոխհատուցում, պատասխան. unexpected ~ անսպասելի վերադարձ. on my ~ վերադառնալուս պես. *in* ~ for ի պատասխան, փոխարենը. *by* ~ post հետադարձ փոստով. ~ of service (թեմիս) գնդակի մատուցման ընդունում. ~ ticket/address/visit հետադարձ տոմս/հասցե, պատասխան այցելություն. on the ~ journey վերադարձի ճանապարհին. Many happy ~s Ծնունդդ շնորհավոր. (շահ, շահույթ, եկամուտ) ~ on capital կապիտալի եկամուտը. bring in a good ~ լավ եկամուտ բերել. the ~ on the shares արժեթղթերի եկամուտը. get a quick ~ արագ շահույթ բերել/ստանալ. rate of ~ շահութադրույթ:

**return** [riˈtə:n] *v* վերադարձնել. հետ վճարել. հատուցել. ~ one's kindness մեկի բարությունը փոխհատուցել. ~ smb's love փոխադարձ սիրել. ~ like for like նույն դրամով հատուցել. փոխադարձը հատուցել. ~ a verdict of guilty *իրավ.* մեղավոր ճանաչել. (վերադառնալ) ~ home տուն վերադառնալ. ~ to one's work նորից իր գործին վերադառնալ. ~ *մրգ.* սկզբնահարվածը ընդունել:

**returnee** [ˌri:təˈni:] *n* զորացրված, տուն

վերադարձող:  
**returner/reciever** [ri'tə:nə/ri'si:və] *n* *մրգ.* զնդակն ընդունող, խաղացող:  
**reunion** [ˌri:'ju:niən] *n* վերամիավորում. ընդհանուր հանդիպում. *a family ~* ամբողջ ընտանիքով միատեղ հավաքվել. *an annual college ~* քոլեջի շրջանավարտների տարեկան հանդիպում. *a touching ~* հուզիչ հանդիպում:  
**reunite** [ˌri:ju'naɪt] *v* վերամիավորել, վերամիանալ. *միատեղ հավաքվել, հանդիպել.* The family were ~d Ընտանիքը վերամիավորվեց:  
**rev** [rev] **1.** *n* *խսկց.* պտույտ. **2.** *v* պտույտ գալ, պտտվել. ~ *up* պտույտների թիվը/արագությունը ավելացնել:  
**revamp** [ri:'væmp] *v* կարկատել, նորոգել, վերանորոգել:  
**reveal** [ri'vi:l] *v* բացել, բացահայտել. *մերկացնել. ցույց տալ.* ~ *a secret* գաղտնիքը բացահայտել. The truth was ~ed Ծշմարտությունը բացահայտվեց/հայտնաբերվեց. ~ *offences* *իրավ.* իրավախախտումները բացահայտել. The discussion ~d Քննարկումից պարզվեց.  
**reveille** [ri'væli] *n* *նզմ.* արթնացման ազդանշան, ցայգանվագ:  
**revel** ['revl] *n* **1.** թեթև խնջույք, աղմկոտ ուրախություն. **2.** *v* զվարճանալ, ուրախանալ, վայելել:  
**revelation** [ˌrevə'leɪʃn] *n* բացահայտում, հայտնաբերում. հայտնություն:  
**revelry** ['revlri] *n* անզուսպ ուրախություն, խրախճանք:  
**revenge** [ri'vendʒ] *n* վրեժ, վրիժառություն. *մրգ., նզմ.* փոխվրեժ, փոխհատուցում. *ռեվանշ.* *in ~ for* ի հատուցումն, որպես վրեժ. ~ *an insult/a friend* վիրավորանքի/ընկերոջ համար վրեժ լուծել:  
**revengeful** [ri'vendʒfʊl] *a* վրիժառու, ոխակալ. վրեժխնդիր:  
**revenger** [ri'vendʒə] *n* վրիժառու, վրեժխնդիր մարդ:  
**revenue** ['revənju:] *n* եկամուտ. պետական/տարեկան եկամուտ. ~ *laws* հարկային օրենքներ. *Inland/Internal(US)* ~ հարկերի և մաքսերի նախարարություն:  
**reverberate** [ri'və:bəreit] *v* արձագանքել,

արտացոլ(վ)ել. The sound ~d Զայնն արձագանք առաջացրեց:  
**reverberation** [ri,və:bə'reiʃn] *n* արձագանքում, արտացոլում:  
**revere** [ri'viə] *v* հարգել, մեծարել, խորապես ակնածել:  
**reverence** ['revrəns] *n* հարգանք, մեծարանք, ակնածանք:  
**reverend** ['revrənd] *a* հարգելի, պատվարժան. *կրոն.* սուրբ, պատվարժան:  
**reverent** ['revrənt] *a* հարգալից, ակնածալից, ակնածանքով լի:  
**reverie** ['revəri] *n* երազանք, անուրջ, ցնորք. *lost in ~* երազների մեջ թաղված:  
**reversal** [ri'və:səl] *n* փոխում, տեղափոխում (հակառակ կարգով):  
**reverse** [ri'və:s] *n* հակառակը, լիակատար հակադրություն. հակառակ կողմ. *the ~ of the medal* *փխբ.* մեդալի հակառակ կողմը. *quite the ~* լրիվ հակառակը. *It turned out just the ~* Լրիվ հակառակը դուրս եկավ. *The ~ is true* Ծշմարիտը/Ծիշտը հակառակն է. *put the car into ~ (ավտոմեքենան)* հետաշարժ միացնել The forces suffered (have/sustain) a ~ Զորքը պարտություն կրեց. (հակադարձ շարժում) *in ~, on the ~* հետընթաց շարժումով:  
**reverse** [ri'və:s] *a* հակառակ, հակադիր. *on the ~ side* հակառակ կողմում. *in the ~ direction* հակառակ ուղղությամբ. *a ~ turn* հակառակ շրջադարձ. ~ *gear* (ավտո) հետընթացի միացում:  
**reverse** [ri'və:s] *v* շրջել, շուռ տալ, ուղղությունը փոխել. ~ *one's decision* որոշումը չեղյալ համարել. ~ *down the road* հետընթաց գնալ. ~ *a judgement* դատավճիռը չեղյալ համարել:  
**reversible** [ri'və:səbl] *a* շրջելի, հակադարձելի. երկկողմանի, երկերեսանի. *a ~ decision/process* հակադարձելի որոշում. *հետադարձելի գործընթաց.* ~ *cloth* երկկողմանի/երկերես գործվածք:  
**reversion** [ri'və:ʃn] *n* վերադարձ (նախկինին). գույքի վերադարձում նախկին տիրոջը:  
**revert** [ri'və:t] *v* վերադառնալ. ~ *to the ranks* ատիճանագրկվելով շարքային գինվոր դառնալ. *I'll ~ to this later* Ես դրան ավելի ուշ կանդրադառնամ. The property ~s to the

state Սեփականությունը փոխանցվում է պետությանը:

**revet** [ri'vet] v տեխ. երեսպատել:

**revetment** [ri'vetmənt] n տեխ. երեսպատում:

**review** [ri'vju:] n տեսություն, ամփոփում, ակնարկ. *նզմ.* զորահանդես, զորատես. brief/full/detailed/weekly ~ կարճ/լրիվ/մանրամասն/շաբաթական տեսություն. keep under ~ վերահսկել/գործը, հարցը/. a ~ of the events իրադարձությունների ամփոփում. (վերանայում, քննարկում) The case/application is under ~ **Գործը վերանայվում է, Դինումը քննարկվում է.** a literary ~ գրական/քննադատական հանդես. (գրախոսություն) film ~ կինոգրախոսություն. a ~ of the book, book ~ գրքի գրախոսական. a ~ of the play/performance պիեսի/ներկայացման գրախոսական:

**review** [ri'vju:] v դիտել, զննել, ստուգել. գրախոսել, վերանայել. *նզմ.* զորատես անցկացնել. ~ an article հոդվածը գրախոսել. ~ the troops *նզմ.* զորքերի զորատես անցկացնել. ~ for the Times Թայմսի համար գրախոսականներ գրել:

**reviewer** [ri'vju:ə] n տեսաբան, տեսություն կազմող. գրախոսող:

**revile** [ri'vail] v հայհոյել, անարգել, վիրավորել. ~ at/against smth հայհոյել:

**revise** [ri'vaiz] n ստուգել, ուղղել. վերանայել, փոխել. ~ one's opinion կարծիքը վերանայել/փոխել. ~ a document փաստաթուղթը ստուգել/ուղղել. ~ a text վերամշակել տեքստը. ~ for exams պատրաստվել քննությունների. a ~d edition վերանայված/վերափոխված հրատարակություն:

**revision** [ri'vizn] n վերանայում. ստուգում, վերամշակում. the ~ of plans ծրագրերի վերանայում. the ~ of a document փաստաթղթի շտկում. ~ of the text տեքստի վերամշակում. two weeks for ~ երկու շաբաթ նախապատրաստվելու համար:

**revisory** [ri'vaizəri] a վերստուգիչ:

**revival** [ri'vaiv] n վերածնունդ. աշխուժացում. վերսկսում. ~ of the tradition ավանդույթի վերածնունդ. ~ of an old film հին ֆիլմի ցուցադրում:

**revive** [ri'vaiv] v ուշքի գալ/բերել. վերակենդանանալ, վերածնվել. վերականգնել.

The rest ~d me **Հանգիստը ուժերս վերականգնեց.** ~ memories հիշողություններ արթնացնել. ~ a play վերականգնել ներկայացման բեմադրությունը. The flowers ~d **Ծաղիկները վերակենդանացան.** His hopes ~d **Հույսերը վերածնվեցին:**

**revivify** [ri:'vivifai] v վերակենդանացնել:

**revocable** ['revəkəbl] a վերացման ենթակա:

**revocation** [,revəu'keiʃn] n վերացում, չեղյալ հայտարարելը:

**revoke** [ri'vəuk] v *իրավ.* չեղյալ հայտարարել. հետ վերցնել. ~ a will կտակը չեղյալ ճանաչել:

**revolt** [ri'vəult] 1. n ապստամբություն, խռովություն. ատելություն, զգվանք. 2. v ապրստամբել. զայրույթ/զգվանք առաջացնել. զայրույթով լցվել. The film ~s me **Ֆիլմն ինձ զայրացնում է:**

**revolting** [ri'vəultɪŋ] a զգվելի, նողկալի զայրացուցիչ:

**revolution** [,revə'lju:ʃn] n պտույտ. *քղք.* հեղափոխություն. ~ s per minute (մի)րոպետում կատարված պտույտները. the ~ of the seasons տարվա եղանակների լրիվ շրջանը:

**revolutionary** [,revə'lju:ʃənəri] a հեղափոխական:

**revolve** [ri'vɒlv] v պտտ(վ)ել, պտույտ գալ. The earth ~s round the sun **Երկիրը պտտվում է արևի շուրջը.** Her life ~s round her son **Նրա կյանքի իմաստը իր որդին է:**

**revolver** [ri'vɒlvə] n ատրճանակ:

**revolving** [ri'vɒlvɪŋ] a պտտվող. շրջանառության մեջ գտնվող. a ~ door պտտվող դուռ:

**revue** [ri'vju:] n *թատր.* դրամատիկական տեսություն, ռեյու. a students' ~ ուսանողական կատակերգական ներկայացում/կատակերգություն:

**revulsion** [ri'vʌlʃn] n /հանկարծակի/խիստ փոփոխություն. զգվանք, անբարյացակամություն, թշնամանք. undergo a ~ խիստ փոփոխության ենթարկվել, խիստ փոխվել:

**reward** [ri'wɔ:d] n պարգև, պարգևատրում. վարձատրություն, հատուցում. deserve a ~ պարգևի արժանանալ. as a ~, in ~ for որպես



պարգև. a ~ of patience *փխք*. վարձատրում համբերության համար. A ~ of fifty dollars is offered Հիսուն դոլար պարգև է առաջարկվում:

**reward** [ri'wɔ:d] v պարգևել, վարձատրել, հատուցել. The efforts were ~ed Ձանքերը վարձատրվեցին:

**rewarding** [ri'wɔ:diŋ] a արժանի, վճարվող. a ~ book արժանի գիրք. most ~ work շնորհակալ աշխատանք. financially ~ work լավ վճարվող աշխատանք:

**reword** [,ri:'wɔ:d] v այլ բառերով/այլ ձևով արտահայտել:

**rewrite** [,ri:'rait] v արտագրել, նորից գրել:

**rhetoric** ['retərik] n ճարտասանություն. *փխք*. ճոռոնաբանություն:

**rhetorical** [ri'tɔ:rikl] a հռետորական, ճարտասանական:

**rheumatism** ['ru:mətiz(ə)m] n հողացավ, ռևմատիզմ:

**rhino** ['rainəu] n (*կրճ*. rhinoceros-ից) ռնգեղջյուր:

**rhomb** [rɒm] n (*նաև* rhombus) ռումբ, շեղանկյուն:

**rhombic** ['rɒmbik] a շեղանկյուն, ռոմբածև:

**rhubarb** ['ru:bɑ:b] n *բսբ*. խավարժիլ, խաշնդեղ:

**rhyme** [raim] n հանգ, հանգավոր բանաստեղծություն. nursery ~ մանկական ոտանավորներ. neither ~ nor reason ոչ կարգ կա, ոչ էլ կանոն. without ~ or reason առանց մտքի/հմաստի:

**rhymed** [raimd] a հանգավոր, հանգավորված:

**rhythm** ['riðəm] n ռիթմ. չափ (ոտանավորի):

**rhythmic(al)** ['riðmik(l)] a ռիթմիկ, համաչափ, չափածո. ~ prose չափածո արձակ. ~ movements համաչափ շարժումներ:

**rib** [rib] n *կզմխ*. կող, կողոսկր. *բսբ*. տերևի երակ. *կտկ*. կին, կողակից. smoked ~s ապխտած կողամիս:

**ribald** ['ribld] n, a կոպիտ/զռեհիկ մարդ. անվայել, անպարկեշտ:

**ribaldry** ['ribldrɪ] n զագրախոսություն. անվայել/անպարկեշտ վարք:

**ribbed** ['ribd] a կողավոր, շերտավոր:

**ribbon** ['ribən] 1. n ժապավեն, երիզ. type-writer ~ գրամեքենայի ժապավեն. torn to ~s

ծվեն-ծվեն արված. 2. v ժապավենով զարդարել:

**rice** [rais] n, a բրինձ. բրինձե, բրնձի:

**rich** [ritʃ] a հարուստ, առատ, լիառատ. a ~ harvest/experience առատ բերք. հարուստ կենսափորձ. ~ soil բերրի/պտղաբեր հող. ~ food/milk յուղալի սնունդ/կաթ. ~ colours վառ/ պայծառ գույներ. ~ voice թավ/կրծքային ձայն:

**riches** ['ritʃɪz] n հարստություն, կարողություն. առատություն, լիություն:

**richly** ['ritʃli] adv հարուստ/ճոխ կերպով. լիովին. ~ deserve punishment լիովին արժանի լինել պատժի:

**richness** ['ritʃnəs] n հարստություն, բերրիություն, ճոխություն. պայծառություն. հյութեղություն. կալորիականություն:

**rick** [rik] n, v դեզ. դիզել, դեզ անել:

**rick** [rik] v ~ one's ankle կոճը դուրս ընկնել:

**rickets** ['rikits] n *բժշկ*. ռախիտ:

**rickety** ['rikiti] a ռախիտավոր. երերուն, խախտ, անկայուն. ~ furniture խախտ կահույք:

**ricochet** ['rikəʃei] n անդրադարձում. անդրադարձ/հետադարձ թռիչք:

**rid** [rid] v ազատել, փրկել. get ~ of ազատվել, փրկվել. գլուխն ազատել. get ~ of the rats առնետներից ազատվել. get ~ of the car մեքենան վաճառել:

**ridance** ['ridns] n ազատում, փրկում. make a good ~ հաջող կերպով ազատվել. Good ~ ! Լավ պրծանք. Բարով գնաս ու հետ չգաս:

**riddle I** ['ridl] n հանելուկ. *փխք*. առեղծված գաղտնիք. read a ~ հանելուկը լուծել. solve a ~ առեղծվածը բացել. ask smb a ~ մեկին հանելուկ տալ. Stop talking ~s Դադարեք հանելուկներով խոսել:

**riddle II** ['ridl] n մաղ:

**riddle** ['ridl] v մաղել. ծակոտել, ծակծկել. ~ coal/soil ածուխ/հող մաղել. ~ with bullets գնդակներով ծակծկել:

**ride** [raid] n զբոսանք (ծիով, հեծանվով). ուղևորություն. ճանապարհորդություն. go for a ~ զբոսանքի/ուղևորության գնալ. a bycycle ~ զբոսանք հեծանվով. a ~ in the mountains զբոսանք լեռներում. give a ~ in the car մեքենայով տանել. a ten minute ~ տասը րոպեի ճանապարհ (փոխադրամիջո-

ցով):  
**ride** [raid] v գնալ, քշել, հեծնել. ~ a horse/by-cycle ձի/հեծանիվ քշել. ~ in a bus/in a car ավտոբուսով/մեքենայով գնալ. ~ out of the storm *փ/սք*. փոթորիկին դիմանալ. let things ~ թողնել իրեն իրենց ընթացքով գնան. ~ at ուղղվել. ~ away հեռանալ. ~ away in different directions տարբեր ուղղություններով գնալ. ~ into փոխադրամիջոցով ներս մտնել/ մուտք գործել. ~ straight into the wall ուղիղ պատին զարնվել. ~ past կողքով քշել-անցնել. ~ up to մոտենալ:  
**rider** ['raidə] n հեծյալ, ձիավոր. հեծանվորդ:  
**ridge** [ridʒ] n լեռնակատար, լեռնաշարք. կատար, ծայր. ուռուցիկ շերտ (գործվածքի վրա). the ~ of a roof տանիքի կատարը/ծայրը. a ~ of high pressure օդերթ. բարձր ճնշման շրջան:  
**ridged** [ridʒd] a սրածայր:  
**ridicule** ['ridikju:l] n ծաղր, ծաղրում. hold to ~ ծաղրի առարկա դարձնել:  
**ridicule** ['ridikju:l] v ծաղրել, ծաղրի առարկա դարձնել:  
**ridiculous** [ri'dikjʊləs] a ծիծաղելի, զավեշտական. անհեթեթ. a ~ hat անհեթեթ գլխարկ. look ~ զավեշտական տեսք ունենալ. It is ~ to expect ... Ծիծաղելի է սպասել, որ...:  
**riding** ['raidɪŋ] n ձիավարություն, ձի հեծնելը. ~ breeches/boots հեծելաշալվար, ձիավարության կոշիկներ. ~-habit հեծելու հուսազգեստ:  
**riding-hag** ['raidɪŋhæg] n մղձավանջ:  
**rife** [raɪf] a հաճախադեպ, լայն տարածում ունեցող. ~ with rumours լուրերով լի. Famine was ~ Սովը մոլեգնում էր:  
**riffraff** ['rɪfræf] n թափթփուկ, հասարակության տականք:  
**rifle** ['raɪfl] n հրացան. the ~s հրաձիգներ, հրաձգային զորամաս. a ~ battalion հրաձգային գումարտակ. ~ range հրաձգարան. ~ shot հրացանի կրակոց. (լավ) հրաձիգ. ~ man հրաձիգ:  
**rift** [rɪft] n ճաք, ճեղք. ճեղքվածք. ~ in the cloud լուսաշերտ ամպերի արանքում:  
**rig** [rɪg] n հանդերձանք, նավահանդերձանք. an oil ~ հորատման աշտարակ:  
**rig** I [rɪg] v հանդերձել, սարքել, պատ-

րաստել. ~ up a shelter ապաստարան սարքել. ~ with the latest equipment նորագույն սարքավորումներով հանդերձել:  
**rig** II [rɪg] v խաբել, խորամանկել. կազմակերպել. It's been ~ged Դա կազմակերպված գործ է. ~ an election կեղծել ընտրությունները. ~ the market շուկայի գները արհեստականորեն փոխել:  
**rigged** ['rɪgd] a կեղծ, կեղծված, խարդախ. ~ elections կեղծիքներով ընտրություններ. ~ lottery խարդախ վիճակախաղ:  
**rigging** ['rɪgɪŋ] n սարք, հանդերձանք. *խսկց*. հագուստ, զգեստ, շոր:  
**right** [raɪt] n իրավունք. արդարացի պահանջ. human/civil ~s մարդու/քաղաքացիական իրավունքներ. the ~ of veto վետոյի իրավունք. author's ~ հեղինակային իրավունք. basic ~ հիմնական իրավունքներ. breach of a ~ իրավունքի խախտում. by ~ of իրավունքով. exercise one's ~ իրավունքից օգտվել. involve one's ~s իրավունքները շոշափել. abuse of ~ իրավունքի չարաշահում. in one's own ~ սեփական իրավունքով. film ~s (ֆիլմի) էկրանավորման իրավունք. demand/maintain/stand upon one's ~ իր իրավունքը պաշտպանել. reserve the ~ իրեն իրավունք համարել. be in the ~ իրավացի/ճշմարիտ լինել. ~s and duties իրավունքներ և պարտականություններ. lose/guarantee ~s կորցնել/երաշխավորել իրավունքները. ~s կարգ ու կանոն. set the room to ~s սենյակը կարգի բերել. (ճշմարտություն) know ~ from wrong ճիշտն ու սխալը տարբերել. ~s and wrongs of the matter գործի ճիշտն ու սուտը. (աջ կողմը/ձեռքը) keep to the ~ աջ կողմով գնալ. on the ~ աջ կողմում. to the ~ դեպի աջ. the ~s *քղք*. աջերը, պահպանողականները. parties of the ~ աջակողմյան/աջ կուսակցությունները:  
**right** [raɪt] a ճիշտ, ուղիղ. the ~ answer ճիշտ պատասխանը. put ~ ուղղել, կարգի բերել. put a mistake ~ սխալն ուղղել. the ~ time ճիշտ ժամանակը. the ~ side երեսի կողմը. be in one's ~ mind խելքը տեղը լինել. do the ~ thing ճիշտ վարվել. choose the ~ moment ճիշտ պահն ընտրել. the ~ time ճիշտ/հարմար ժամանակը. the ~ size համապատասխան չափս. He is the ~ sort Իսկական

տղամարդ է. (լավ, սարքին) It all came ~ in the end վերջում ամեն ինչ լավ ստացվեց. The medicine will put you ~ Այս դեղը ձեզ շուտով կլավացնի. (տարբեր իմաստներ) quite ~ լրիվ/շատ ճիշտ. be all ~ լավ/առողջ լինել. all ~ լավ. It serves him ~ Նրան տեղն է. You were ~ to come ճիշտ արեցիք, որ եկաք. (արդարացի, իրավացի) It's not ~ Պա արդարացի չէ. I think it ~ Կարծում եմ՝ դա իրավացի է:

**right** [rait] adv ճիշտ, արդար, պատշաճ ձևով. արդարացի կերպով. if I remember ~ եթե ճիշտ եմ հիշում. guess ~ ճիշտ ձևով կռահել. ~ in the middle ուղիղ մեջտեղում. ~ in the eye/face ուղիղ աչքին/դեմքին. ~ opposite ուղիղ դիմացը. ~ here հենց/ճիշտ այստեղ. ~ to the end մինչեւ վերջ. (դեպի աջ) Turn ~ ! Աջ դարձ. They owe money ~ left and the centre *խսկ*. Նրանք բոլորին պարտք են, պարտքերի մեջ խրված են:

**right** [rait] v ուղղ(վ)ել, շտկ(վ)ել. ~ a wrong անարդարության վերացում. It will ~ itself Ինքն իրեն կկարգավորվի:

**right-angled** ['rait,æŋɡld] a ուղղանկյուն:

**right-down** ['raitdaun] a հայտնի, հանրաձանոթ:

**righteous** ['raitʃəs] a արդարացի, իրավացի. ~ indignation արդարացի վրդովմունք:

**rightful** ['raitfl] a օրինական. արդարացի, իրավացի. the ~ owner օրինական տերը:

**right-hand** [,rait'hænd] a աջակողմյան. on the ~ side աջ կողմում. my ~ man իմ աջ ձեռքը:

**right-handed** [,rait'hændid] a ոչ ձախլիկ, աջլիկ. a ~ blow աջակողմյան հարված:

**right-hander** [,rait'hændə] n *խսկ*. աջ ձեռքով հարված:

**rightly** ['raitli] adv արդարացիորեն. ճիշտ, ճշտորեն. act ~ ճիշտ գործել. and ~ so և ճիշտ է ~ or wrongly ինչևէ:

**rigid** ['ridzid] a կոշտ, չթեքվող, ոչ ճկուն. a ~ rule խիստ կանոն. ~ views հաստատուն տեսակետ, ոչ ճկուն հայացքներ:

**rigidity** [ri'dzidəti] n կոշտություն, կարծրություն. անկունություն, հաստատակամություն:

**rigidly** ['ridzidli] adv անդրդվելի/անսասան կերպով. be ~ opposed համառորեն դիմադրել:

րել:

**rigmarole** ['rɪgmərəʊl] 1. n դատարկախոսություն. 2. a դատարկ, անիմաստ, անմիտ:

**rigorism** ['rɪgəriz(ə)m] n խստություն, խստաբարոյություն:

**rigorous** ['rɪgərəs] a խիստ, խստապահանջ, մանրակրկիտ. a ~ climate խստաշունչ կլիմա. a ~ search ջանասեր որոնում:

**rile** [raɪl] v զայրացնել, վրդովել, գրգռել:

**rill** [rɪl] n առվակ, վտակ:

**rim** [rɪm] n եզրաշերտ, եզերք. պռունկ. օղ, օղագոտի:

**rime** [raɪm] n ձնակարկուտ, եղյամ:

**rimless** ['rɪmləs] a առանց օղագոտու/շրջանակի:

**rimmed** [rɪmd] a շրջանակված, շրջանակի մեջ. gold ~ ոսկյա շրջանակով:

**rimy** ['raɪmi] a եղյամապատ, եղյամակալած:

**rind** [raɪnd] n կճեպ, կլեպ, կեղև:

**ring I** [rɪŋ] n մատանի. *մրգ*. մրցահարթակ, մրցասպարեզ. ռինգ. մարդկանց (հանցագործ) միավորում. gold/engagement/wedding ~ ոսկյա/նշանի/հարսանիքի մատանի. ~ finger մատանեմատ. (օղ, օղակ, շրջանակ) curtain ~ վարագույրի օղակ. form a ~ շրջան կազմել. a ~ of admirers երկրպագուների շրջանակ. a spy ~ լրտեսական ցանց:

**ring II** [rɪŋ] n ղողանջ, զնգոց, զանգի ձայն. զանգ, ձայն. հնչյուն. a loud ~ ուժեղ զնգոց. ~ at the door դռան զանգ. a ~ of irony հեգնանքի երանգ. have the ~ of truth ճշմարտամամ հնչել. the ~ of one's voice մեկի ձայնի հնչյունը:

**ring** [rɪŋ] v զնգալ, զրնգալ. հնչել. զանգահարել. ~ the bell (դռան) զանգը հնչել. She rang me up Նա ինձ զանգահարեց. ~ a bell with smn *փխք*. ինչ-որ բան հիշեցնել. ~ off լսափողը ցած դնել, խոսակցությունը ավարտել. ~ for the lift վերելակ պատվիրել/կանչել. A cry/shot rang out Մի ճնոց/կրակոց հնչեց/լսվեց. The story ~s true Պատմությունը ճշմարիտ է հնչում:

**ring-dove** ['rɪŋdʌv] n վայրի աղավնի:

**ringer** ['rɪŋə] n զանգ. ժամհար, ժամկոչ:

**ring-fence** ['rɪŋfens] n շրջապարիսպ, ցանկապատ:

**ringing** ['rɪŋɪŋ] n ղողանջ. զանգի ձայն. երկարատև զանգահարություն. հեռախոս

սականջ. a ~ in one's ears զնգոց ականջներում:

**ringing** [ˈrɪŋɪŋ] a հնչուն, հնչեղ, բարձր. ճրճբան. ~ frost ճրճբան սառնամանիք:

**ringleader** [ˈrɪŋ,liːdɜː] n (հանցավոր խմբի) պարագլուխ, ղեկավար:

**ringlet** [ˈrɪŋlət] n փոքրիկ մատանի. խոպոպիկ, խոպոպ:

**ring road** [ˈrɪŋrəʊd] n օղակաձև ճանապարհ:

**rink** [rɪŋk] n (*ice skating rink*) սահադաշտ, սահարան:

**rinse** [rɪns] n ներկ մազերի համար. ողողում, պարզաջրում. give a ~ ողողել, պարզաջրել. give the clothes/dishes a ~ շորերը/ամանեղենը պարզաջրել. give one's mouth a ~ բերանը ողողել:

**rinse** [rɪns] v ներկել. ողողել. պարզաջրել, լվանալ:

**riot** [ˈraɪət] n խռովություն, ապստամբություն. run ~ բորբոքվել, գրգռվել. ~s in the streets անկարգություններ փողոցներում. (բուռն ուրախություն) The party was a ~! Այթն ուրախացանք. (բուռն աճ) The grass has run ~ խոտը թափով աճել է. let one's imagination run ~ երևակայությանը ազատություն տալ:

**riot** [ˈraɪət] v խռովության մասնակցել. մոլեգնել, անկարգություն անել. խրախճանքով լի կյանք վարել:

**rioter** [ˈraɪətə] n խռովարար:

**riotous** [ˈraɪətəs] a կատաղի, մոլեգին, աղմկարար. ~ behaviour կատաղի վարվելակերպ. ~ growth բուռն աճ. a ~ party բուռն երեկույթ. have a ~ time լավ ուրախանալ:

**rip** I [rɪp] n ճեղք/կտրվածք զգեստի ներքևի մասում. քանդված կար:

**rip** II [rɪp] n քնձռոտ ձի. an old ~ *փխբ.* պառավ շվայտամուլ:

**rip** [rɪp] v պատռել, ճղել, կարերը քանդել. ~ down the picture նկարը պատռել-զցել. ~ off buttons կոճակները պոկել. ~ the seam/the envelope open կարը քանդել, ծրարը բացել/պատռելով/:

**ripe** [raɪp] a հասած (*ice cream*) հասունացած, պատրաստ. ~ fruit/berries հասած միրգ/հատապտուղներ. grow ~ հասնել. ~ judgement *փխբ.* հասուն դատողություն. ~ for ինչ-որ բանի պատրաստ. when the time is

~ երբ ժամանակը զա/հասունանա. live to a ~ old age ապրել մինչև զառամյալ հասակ:

**ripen** [ˈraɪpən] v հասունանալ, հասնել. հասցնել. The sun ~s the fruit Արևը հասունացնում է միրգը:

**ripeness** [ˈraɪpənəs] n հասունություն. հասած լինելը:

**riposte** [riˈpɒst] n պատասխան հարված. *փխբ.* սրամիտ պատասխան:

**ripping** [ˈrɪpɪŋ] 1. a հոյակապ, հիանալի, գերազանց. 2. adv ~ good շատ լավ, հյակապ, ցնցող:

**ripple** [ˈrɪpl] n ալեծալք. մեղմ ծփանք. խոխոջ, կարկաչուն. գանգրություն (մազերի). ~s on the water ջրի ծփանք. a ~ of applause *փխբ.* ծափահարությունների ալիք:

**ripple** [ˈrɪpl] v ծածան(վ)ել. թեթև ալեկոծվել. կարկաչել, խոխոջել:

**rippy** [ˈrɪpi] a ալեծածան, ծփան. գանգուր, ալիքած:

**riprap** [ˈrɪpræp] n մանր խիճ:

**rise** [raɪz] n բարձրացում, բարձրանալը. վերելք. ծագում. a ~ in the river գետի ջրի բարձրացում. ~ and fall *փխբ.* վերելք և անկում. ~ to power իշխանության հասնելը/գլուխն անցնելը. be on the ~ բարձրանալ. հաջող լինել. sharp ~ կտրուկ վերելք. ~ in prices/temperature/living standards գների թանկացում. ջերմաստիճանի/կենսամակարդակի ավելացում/բարձրացում. a ~ in crime հանցագործության աճ. ask for a ~ աշխատավարձի բարձրացում խնդրել. (բարձունք) stand on a ~ բարձունքի վրա կանգնել. (ծագում) have/take ~ in/from սկիզբ առնել/առաջանալ. give ~ to առաջացնել, առիթ տալ. give ~ to many problems/suspicious շատ պրոբլեմներ/կասկածներ ստեղծել. the ~ of the sun արևի ծագումը:

**rise** [raɪz] v բարձրանալ, ոտքի ելնել. ծագել. ավելանալ, աճել, շատանալ. ապստամբել, ընդդիմանալ. ~ to one's feet ոտքի ելնել. ~ into the air օդ բարձրանալ. ~ early վաղ վեր կենալ. The sun/moon is ~ ing Արևը/Լուսինը ծագում է. The river ~s from a lake Գետը լճից է սկիզբ առնում. The wind/smoke is ~ing Քամի/Ծուխ է բարձրանում. The prices/costs/temperature(s) have risen Այդ գները/ծախսերը/ջերմաստիճան(ներ)ը բարձրացել են/ավելացել են. ~ in rebellion ապստամբել. ~ in

arms գենքը ձեռքին ապստամբել. ~ in the world բարգավաճել, առաջադիմել. ~ to the occasion դրության բարձրության վրա լինել. ~ in smb's estimation մեկի աչքում բարձրանալ. A quarrel rose վեճ ծագեց:

**riser** ['raɪzə] n an early/late ~ վաղ/ուշ արթնացող:

**rising** ['raɪzɪŋ] n վեր կենալը, ոտքի ելնելը. ծագում, ծագելը. բարձրացում, բարձրանալը. ապստամբություն:

**rising** ['raɪzɪŋ] a մեծացող, աճող, զարգացող. առաջադիմող. ~ ground բարձրադիր տեղանք. ~ tide մեծացող մակընթացություն. ~ excitement աճող հուզմունք. the ~ generation աճող սերունդը. a ~ young lawyer հույսեր ներշնչող երիտասարդ իրավաբան. ~ unemployment աճող գործազրկություն:

**risk** [rɪsk] n վտանգ, ռիսկ. take/run the ~ /risks ռիսկի գնալ, վտանգի ենթարկվել. at the ~ of վտանգի ենթարկելով. high ~ group բարձր ռիսկի խումբ. an occupational ~ մասնագիտական ռիսկ. at one's own ~ իր պատասխանատվությամբ. It's not worth the ~ Չարժի վտանգի ենթարկել. a ~ of fire հրդեհի վտանգ. a security ~ անվտանգության/գործ/անձնավորություն:

**risk** [rɪsk] v ռիսկ անել, խիզախել, վտանգի ենթարկվել. ~ one's life/neck կյանքը/գլուխը վտանգի ենթարկել. I can't ~ failure ես չեմ կարող ամեն ինչ վտանգի ենթարկել:

**riskiness** ['rɪskɪnəs] n վտանգավորություն:

**risky** ['rɪskɪ] a ռիսկային, վտանգավոր:

**risque** ['rɪskeɪ] adj կասկածելի:

**rissole** ['rɪsəʊl] n կոտլետի տեսակ:

**rite** [raɪt] n ծես. արարողություն. funeral ~s հուղարկավորության արարողություններ. the ~s of hospitality հյուրընկալության սովորություններ:

**ritual** ['rɪtʃuəl] n, a ծես, արարողություն, ծիսակատարություն. ծիսական, ծեսի:

**rival** ['raɪvəl] n ախտյան, մրցակից. *nqđ*. հակառակորդ:

**rival** ['raɪvəl] a մրցող, մրցակցող. a ~ firm մրցող ֆիրմա. the ~ team մրցակից թիմ:

**rival** ['raɪvəl] v մրցել, մրցակցել. Nobody can ~ his strength Ոչ ոք չի կարող նրա ուժի հետ մրցել:

**rivalry** ['raɪvəlri] n մրցություն, մրցակցու-

թյուն:

**rive** [raɪv] n ճեղք, ճեղքվածք, պատռվածք:

**river** ['rɪvə] 1. n գետ, հոսանք. wide/deep/shallow/fast ~ լայն/խոր/ժանձող/արագ-ընթաց գետ. up/down ~ գետի հոսանքն ի վեր/ի վար cross the ~ գետն անցնել. *փխք*. խոչընդոտները հաղթահարել. ~ bank գետափ. ~ bed գետի հուն ~ horse գետածի. ~ mouth գետաբերան. ~ side գետի ափ, գետափնյա գոտի/շերտ. 2. a գետափնյա:

**rivet** ['rɪvɪt] n, v գամ, դուրգամ, բևեռ. գամել. *փխք*. բևեռել. All eyes were ~ed on him Բոլոր հայացքները նրան էին գամված:

**rivulet** ['rɪvjuːlət] n գետակ, վտակ:

**road** [rəʊd] n ճանապարհ, ճամփա, ուղի. փողոց. straight/muddy/dusty/paved /country ~ ուղիղ/ցեխոտ/փոշոտ/սալահատակ/զյուղական ճանապարհ. cross/go along the ~ ճանապարհը/փողոցը կտրել անցնել, ճանապարհի երկայնքով գնալ. across the ~ ճանապարհի/փողոցի մյուս կողմը. an arterial/trunk/main ~ ավտոմոբիլային մայրուղի. a dirt ~ սայլուղի, բնահողի ճանապարհ. be in the ~, get in one's ~ մեկի ճանապարհին կանգնել/խանգարել. be on the ~ *փխք*. թափառաշրջիկ լինել, թափառել. *թատր*. հյուրախաղերի գնալ. be on the ~ to recovery/fame առողջացման/փառքի ճանապարհին լինել. have one for the ~ ուղեթաս խմել. Get out of the ~ ! Դուրս կորիր ճանապարհից. a menace on the ~ փաթերակավոր մարդ (լիխաչ) a ~ accident ճանապարհային վթար. ~ safety երթևեկության անվտանգություն. ~ block ճանապարհի արգելափակոց. ~ hog երթևեկության կանոնները խախտող. անլուրջ, անխոհեմ (քյալլագոյոգ) վարորդ. ~ signs երթևեկության նշաններ ~ way ճանապարհ, ճանապարհի սալարկված մասը. ~ works ճանապարհային աշխատանքներ. ~ metal խիճ, խճաքար. ~side ճանապարհի եզր/եզերք. ճանապարհամերձ. ~ cafe ճանապարհամերձ սրճարան/կաֆե. ~ screening device (երթևեկության) հսկման ճամփեզրյա սարքեր:

**road-bed** ['rəʊdbed] n ճանապարհի երեսք:

**roadstead** ['rəʊdsted] n *ծով*. խարսխակայան:

**roadster** ['rəʊdstə] n հեռավոր ուղևորության կառք/հեծանիվ/ձի. փորձված ճանա-

պարհորդ:  
**roam** [rəʊm] n, v թափառում, թափառաշրջում. թափառել, թափառաշրջիկությամբ զբաղվել:  
**roan** [rəʊn] n չալ/խայտագորշ ծի:  
**roar** [rɔː] n մռնչյուն, մռնչոց, ոռնոց. the ~ of the river/engines գետի աղմուկ. մեքենաների դրդյուն. the ~ of the traffic փողոցային երթևեկության թնդյուն. ~ of the laughter/applause ծիծաղի/ծափերի պոռթկում. ~ of the storm փոթորկի ոռնոց:  
**roar** [rɔː] v մռնչալ, բղավել. փոթորկել. The tiger was ~ing Վագրը մռնչում էր. The wind/storm ~ed Քամին ոռնում էր. Մրրիկը փոթորկում էր. ~ with laughter բարձրաձայն ծիծաղել, քրքջալ:  
**roaring** [ˈrɔːrɪŋ] n մռնչյուն, բղավոց, ոռնոց:  
**roaring** [ˈrɔːrɪŋ] a աղմկալի, կատաղի, մոլեգին. ~ fire բոցկլտացող/հուրհրացող կրակ. a ~ success աղմկոտ հաջողություն: ~ drunk թունդ հարբած:  
**roast** [rəʊst] 1. n տապակա, տապակած մսերեն. 2. a տապակած, խորոված, բոված ~ -beef տապակած միս:  
**roast** [rəʊst] v տապակ(վ)ել, խորով(վ)ել, բով(վ)ել. ~ coffee սուրճ բովել. ~ oneself/one's feet by the fire կրակի մոտ տաքանալ/ոտքերը տաքացնել:  
**roasting-jack** [ˈrəʊstɪŋdʒæk] n շամփուր, շիշ:  
**rob** [rɒb] v թալանել, կողոպտել. ~ a house/shop/bank տուն/խանութ/բանկ թալանել/կողոպտել. ~ with violence կողոպտել բռնություն գործադրելով. ~ smb of his inheritance ժառանգությունից զրկել:  
**robber** [ˈrɒbə] n կողոպտիչ, ավազակ, գող. band of ~s ավազակախումբ:  
**robbery** [ˈrɒbəri] n կողոպուտ, թալան. ~ with violence կողոպուտ բռնություն գործադրելով. It's sheer/daylight ~ Ռա պարզապես թալան է օրը ցերեկով:  
**robe** [rəʊb] n լայն զգեստ/հագուստ. թիկնոց, պատմուճան. *amb.* խալաթ. the long ~ դատավորի/փաստաբանի պատմուճան. the mayor's ~ քաղաքագլխի/մերի պատմուճան:  
**robin** [ˈrɒbɪn] n շիկահավ, մորահավ:  
**robot** [ˈrəʊbɒt] n մարդ-մեքենա, ռոբոտ:  
**robust** [rəʊˈbʌst] a առողջ, ուժեղ. ամրա-

կազմ, պնդակազմ. դիմացկուն:  
**rock** [rɒk] n ժայռ, ապառաժ. *երկր.* հանքատեսակ, հանքապառ. as firm as a ~ ժայռի պես ամուր. whisky on the ~s *խսկ.* սառույցով վիսկի. on the ~ *փիլ.* անհաջողության/ծանր դրության մեջ. the R~ Ջիբրալթար: ~ climber ժայռեռ մագլցող. ~ crystal լեռնաբյուրեղ, վանակ:  
**rock** [rɒk] v ճոճ(վ)ել, օրոր(վ)ել, ցնց(վ)ել. ~ the cradle օրորոցը ճոճել. ~ the child to sleep երեխային օրորելով քնեցնել. The waves ~ed the boat Նավակը ճոճվում էր ալիքների վրա. The explosion ~ed the house Պայթյունը ցնցեց շենքը ~ with laughter ծիծաղից ցնցվել:  
**rock bottom** [ˈrɒkˈbɒtəm] n ժայռի ստորոտ. Prices are at ~ Ցածրագույն գներ են. reach ~ հուսահատության վերջին աստիճանին հասնել:  
**rocker** [ˈrɒkə] n ճոճաթոռ, ճոճվող բազկաթոռ. ճոճ. *խսկ.* մոտոցիկլիստ:  
**rocket** [ˈrɒkɪt] n հրթիռ. a distress ~ ազդանշանային հրթիռ. ~ base/range հրթիռային բազա/հրաձգարան:  
**rocket** [ˈrɒkɪt] v հրթիռ արձակել. թռչել, վեր սլանալ. Prices have ~ed *խսկ.* Գները վերև թռան:  
**rockfall** [ˈrɒkˌfɔːl] n թափվող քարերի հոսք:  
**rocking-chair** [ˈrɒkɪŋtʃeə] n ճոճաթոռ:  
**rocking-horse** [ˈrɒkɪŋhɔːs] n ճոճածի:  
**rock-oil** [ˈrɒkɔɪl] n (անմշակ) նավթ:  
**rock-salt** [ˈrɒksɔːlt] n քարաղ:  
**rocky** [ˈrɒki] a ժայռոտ, քարքարոտ. ամուր, կարծր, անսասան. անկայուն, խախտ, ճոճվող. ~ table ճոճվող/խախտ սեղան. ~ health խախտ առողջություն:  
**rod** [rɒd] n ձող, ճիպոտ. կարթածող. the ~ ճիպոտահարություն. rule with a ~ of iron *փիլ.* երկաթյա ձեռքով կառավարել:  
**rodent** [ˈrəʊdnt] n կրծող:  
**rodeo** [rəʊˈdiəʊ] n քովբոյների ծիամրցություն:  
**roe** I [rəʊ] n այծյամ, վայրի այծ:  
**roe** II [rəʊ] n ձկնկիթ:  
**rogue** [rəʊg] n խաբեբա, խարդախ. play the ~ *կտկ.* չարաճճիություն անել:  
**roguery** [ˈrəʊgəri] n խարդախություն, սրիկայություն:  
**roguish** [ˈrəʊgɪʃ] a սրիկայական հակումներ

ունեցող. with a ~ smile խորամանկ ժպիտով:  
**role** [rəʊl] **n** *թատր.* դեր. պաշտոն, պարտականություն. leading/supporting/title ~ գլխավոր/երկրորդական դեր. անվանադեր:  
**roll** [rɒl] **n** թղթազևան, գլանափաթեթ. թուփ. պաստառի/լինոլեումի գլանափաթեթ. *իրավ.* դատական արձանագրության ամփոփագիր/ցուցակ. a ~ of film ժապավենի կաժ. ~s of fat ճարպի ծալքեր. ~ of bread բուլկի. (ցուցակ) electoral ~ ընտրական ցուցակ. call the ~ անվանական կատարել. ~ of honour զոհվածների ցուցակ. (որոտ, ճայթյուն) a ~ of a thunder ամպրոպի որոտ. a ~ on the drums թմբուկի որոտ. (ճոճում) the ~ of a ship նավի ճոճումը. a ~ on the grass թավալում խոտի վրա:  
**roll** [rɒl] **v** գլոր(վ)ել, թավալ(վ)ել. գրտնակել. ~ a ball in the yard բակում գնդակ գլորել. ~ the pastry խմորը գրտնակել. ~ metal մետաղը գլանել. ~ a road/lawn գլահարթել ճանապարհը/մարգագետինը. ~ a cigarette գլանակ փաթաթել. ~ wool into a ball բուրդը/թելը/կծկել. ~ an umbrella հովանոցը ծալել. ~ on the grass կանաչի վրա գլորվել/թավալվել. ~ from side to side կողքից կողք ճոճվել. (որոտալ) The thunder ~ed Ամպրոպը որոտաց. ~ away թավալգլոր հեռանալ ~ back հետ գլորվել/ծալել. ~ one's sleeves back թևերը հետ ծալել. ~ down ներքև գլոր/վել. ~ out գրտնակել. ~ out of bed մահճակալից գլորվել. ~ over շուռ գալ. The car ~ed over Մեքենան շուռ եկավ. ~ under տակը գլորվել. ~ under the chair աթոռի տակ գլորվել:  
**roll-call** [ˈrɒlkɔːl] **n** անվանական, անուն առ անուն կանչելը. ~ voting անվանական քվեարկություն:  
**roll-collar** [ˈrɒl,kɒlə] **n** ծալովի օձիք:  
**roller** [ˈrɒlə] **n** գլանիկ անվակ. վարսագլանակ. (ծովափնյա) ալեկոծություն, ալիք. hair ~s վարսափաթթուկ (քիզուդի):  
**roller-skate** [ˈrɒləskeɪt] **n** անվաջմուշկ. go ~ing անվաջմուշկներով սահել:  
**roller-towel** [ˈrɒlə,təʊəl] **n** գլանակի վրա պտտվող սրբիչ:  
**rolling** [ˈrɒliŋ] **n** բլրաշատ, ճոճանք. ~ countryside բլրաշատ տեղանք. ~ mill տեխ. գլանահաստոց. ~ pin գրտնակ. ~ stock երկթ. շարժակազմ:  
**rolling stone** [ˈrɒliŋstəʊn] **n** *փխբ.* դաշտա-

գլոր, գլորվող քար. A ~ gathers no moss  
 Գլորվող քարը մամուռ չի բռնի, Թափառող մարդը բարիք չի դիզի:  
**roly-poly** [ˈrɒliˈpɒli] **1.** **n** մուրաբայով կարկանդակ. **2.** a թմբիկ, գիրուկ:  
**Roman** [ˈrɒmən] **n** հռոմեացի, կաթոլիկ. ~ Catholic church Հռոմեական կաթոլիկ եկեղեցի. ~ (civil) law հռոմեական (քաղաքացիական) իրավունք:  
**Romance** I [rəʊˈmæns] **1.** **n** ռոմանական լեզուներ **2.** a ռոմանական:  
**romance** II [rəʊˈmæns] **1.** **n** ասպետական վեպ. վեպ. *երժշ.* ռոմանս, սիրերգ. a historical ~ պատմական վեպ. (սիրավեպ, ռոմանտիկ պատմություն) They are having a ~ Նրանց մոտ սիրավեպ է. an air of ~ ռոմանտիկ տեսք. **2.** **v** չափազանցնել, գունազարդել. He's just ~ing Նա պարզապես հնարում է:  
**romantic** [rəʊˈmæntɪk] **1.** **n** ռոմանտիկ. երազող անձ. **2.** a ռոմանտիկ ~ literature ռոմանտիկ գրականություն. a ~ setting/girl ռոմանտիկ միջավայր/աղջիկ:  
**romp** [rɒmp] **1.** **n** աղմկոտ խաղ. աղմուկ, շփոթ. **2.** **v** աղմկով խաղալ. թռչել, թռչկոտել. He ~ed through the test Հեշտությամբ հանձնեց քննությունը:  
**rompers** [ˈrɒmpəz] **n** մանկական կոմբինեզոն:  
**roof** [ruːf] **n** տանիք, կտուր, ծածկ curb/terraced/flat ~ երկթեք/տափակ կտուր. slate/tiled/straw/shingle ~ թերթաքարե/կղմինդրե/ժողոտե/կավարի, բաղդաղի կտուր. under one's ~ իր հարկի տակ. the ~ of the mouth քիմք:  
**roofer** [ˈruːfə] **n** տանիքագործ, կտուր ծածկող:  
**roofing** [ˈruːfɪŋ] **n** տանիք, ծածկ. տանիքը ծածկելու շինանյութ. տանիքային/ծածկի աշխատանքներ:  
**roofless** [ˈruːfləs] **a** առանց կտուր/տանիքի. կտուր/տանիք չունեցող (*նաև փխբ.*):  
**rook** I [ruk] **n** շխմ. նավակ:  
**rook** II [ruk] **1.** **n** սերմնագռավ. խարդախ, խաբերա. խաղանենգ. **2.** **v** *խսկց.* խաբել, խարդախություն/խաղանենգություն անել:  
**room** [ru:m] **n** սենյակ. համար (հյուրանոցում). gloomy/well-furnished/untidy ~ մռայլ, լավ կահավորված/փնթի սենյակ. a single/

**scapegoat** ['skeipgəut] n քավության նոխազ:

**scapegrace** ['skeipgreis] n դատարկաշրջիկ (մարդ). փուչ մարդ, ստահակ:

**scar** I [ska:]1. n սպի. *փխբ*. բիծ, խայտառակություն. 2. v սպիանալ, սպիներով ծածկվել. His face is ~ red. Դեմքը սպիներով է ծածկված:

**scar** II [ska:] n ժայռ, ապառաժ. քարափ:

**scaramouch** ['skærəmu:t] n անպիտան/փուչ/դատարկապորտ մարդ:

**scarce** ['skeəs] a սակավ, քիչ քանակով. a ~ commodity դեֆիցիտային ապրանք. Eggs are ~ Չուճ ոլորտային քանակով. ~ opportunity հազվագյուտ հնարավորություն. make oneself ~ իրեն հեռու պահել, չքսվել:

**scarcely** ['skeəsli] adv հազիվ. հազիվ/դժվար թե. I ~ know him ես նրան համարյա չեմ ճանաչում. I can ~ walk Հազիվ եմ քայլում:

**scarcity** ['skeəsəti] n սակավություն, պակասություն. times of great ~ մեծ դժվարությունների/կարիքի տարիներ:

**scare** [skeə] n ահ, սարսափ. խուճապ. You gave me such a ~ Դու ինձ այնպես վախեցրիր:

**scare** [skeə] v վախեցնել, սարսափեցնել. She was ~d նա վախեցավ. He was ~d stiff նա

ահավոր վախեցավ. ~ away խրտնեցնել:

**scarecrow** ['skeəkrəʊ] n խրտվիլակ:

**scaremonger** ['skeə,mʌŋgə] n խուճապարար:

**scarf** [ska:f] n վզնոց, կաշնե, վզկապ. head ~ գլխաշոր:

**scarlet** ['ska:lət] 1. n ալ կարմիր գույն. 2. a ալ, ալ կարմիր:

**scarp** [ska:p] n գառիվայր լանջ, դարալանջ:

**scary** ['skeəri] a *խսկց*. ահավոր, սարսափ ազդող. վախկոտ, երկչոտ:

**scathe** [skeið] 1. n վնաս. without ~ անվնաս, չվնասված. 2. v վնաս պատճառել, վնասել:

**scathing** ['skeiðiŋ] a թունդ. կծու. a ~ glance խայթիչ/դժնչացնող հայացք. a ~ remark կծու/թունդ ակնարկ:

**scathless** ['skeiðləs] a անվնաս, չվնասված:

**scatter** ['skætə] v ցրել շաղ տալ, ցրուցան անել. ~ seeds սերմեր շաղ տալ/ցանել. ~ one's belongings իրերը շաղ տալ տնով մեկ. ~ crumbs for the birds թռչունների համար փշրանքներ շաղ տալ. thinly ~ed population նոսր բնակեցված բնակչություն. (ցրվել) The birds ~ed թռչունները թռան տարբեր կողմեր (ցրվեցին). be ~ed հողմացրիվ լինել (հույսեր, պլաններ). The police ~ed the crowd Ոստիկանությունը ցրեց ամբոխը. My friends are ~ed all over the world Ընկերներս ցրված են աշխարհով մեկ:

**scatter-brain** ['skætəbrein] n թեթևալիկ/թեթևամիտ մարդ:

**scatter-brained** ['skætəbreind] a թեթևալիկ, թեթևամիտ:

**scattered** ['skætəd] a ցրված, ցրուցան. առանձին, անջատ. ~ clouds ցրիվ եկած ամպեր:

**scatty** ['skæti] a *խսկց*. խելապակաս:

**scavenge** ['skævɪndʒ] v աղբ հավաքել (փողոցներում). ~ in the dustbins *փխբ*. աղբամանները քրքրել:

**scavenger** ['skævɪndʒə] n աղբահավաք:

**scavenging** ['skævɪndʒɪŋ] n աղբահանություն, աղբ հավաքելը:

**scenario** [sə'na:riəʊ] n սցենար:

**scene** [si:n] n գործողության վայր. ասպարեզ, բնագավառ. the ~ of the crime հանցագործության վայրը. the political ~ քաղաքական մթնոլորտը. a change of the ~ հանգամանքների/իրադրության փոփոխություն. ~

of the disaster **աղետի վայրը**. **թատր**. (բեմ, տեսարան) a striking ~ **ցնցող տեսարան**. the opening ~ **բացման տեսարան**. behind the ~s **բեմի/կուլիսների հետևում**. a ~ painter/shifter **ձևավորող նկարիչ**. բեմի բանվոր. (տեսարան, պատկեր) a typical ~ of French life **ֆրանսիական կյանքի տիպական/բնորոշ պատկեր**. a terrible ~ of earthquake **երկրաշարժի ահավոր տեսարան**. (կռիվ, սկանդալ) make a ~ at the wedding **հարսանիքի ժամանակ կռիվ սարքել**. I hate ~s **Տանել չեմ կարող խայտառակ տեսարաններ**:

**scenery** ['si:nəri] n ընդհանուր տեսարան, բնապատկեր. բեմանկար, դեկորացիա. mountain ~ **լեռնային բնապատկեր**:

**scenic** ['si:nik] a գեղատեսիլ. թատերական, բեմական. ~ effects **բեմական էֆֆեկտներ**:

**scent** [sent] n հոտ, բուրմունք. ~s **օժանելիք (դուխի)**. use too much ~ **չափազանց շատ օժանելիք օգտագործել**. (որսորդ. հետք) blazing/hot ~ **թարմ հետք**. pick up/lose the ~ **հետքը գտնել/կորցնել**. be on the false ~ **փխր**. սխալ հետքով գնալ. put smn off the ~ **մեկին սխալ հետքով ուղարկել**:

**scent** [sent] v հոտ առնել, հոտոտել. օժանելիք օգտագործել. ~ danger **փխր**. վտանգ զգալ:

**scented** ['sentid] a հոտավետ. ~ soap **հոտավետ օժառ**:

**sceptic** ['skeptik] n թերահավատ մարդ, սկեպտիկ:

**sceptical** ['skeptikl] a թերահավատ, սկեպտիկ. be ~ about smth **թերահավատ լինել**:

**scepticism** ['skeptisiz(ə)m] n թերահավատություն, կասկածանք. **փիլ**. սկեպտիցիզմ:

**sceptre** ['septə] n գայիսոն, արքայական զավազան:

**schedule** ['ʃedju:l] n չվացուցակ, ժամանակացույց. օրակարգ, ծրագիր, պլան. ~ of events **իրադարձությունների ծրագիր**. ~ of work **աշխատանքի պլան**. ~ of prices **գնացուցակ**. The work is on ~ **Աշխատանքը գնում է ըստ ծրագրի**. keep to ~ **ծրագրին հետևել**. busy ~ **խտացված օրակարգ**. The ~ includes **Ծրագիրն ընդգրկում է**:

**schedule** ['ʃedju:l] v **ցուցակագրել**, ծրագրել, պլանավորել The train is ~d to arrive... **Ըստ չվացուցակի գնացքը պետք է ժամանի...**

**schematic** [ski:'mætik] a սխեմատիկ, գծապատկերով ներկայացված:

**scheme** [ski:m] n ուրվագիծ, պլան, նախագիծ, ծրագիր. համակարգ. have got a crazy ~ **խելառ ծրագիր/պլան ունենալ**. work on/out a ~ **ծրագիր մշակել/-ի վրա աշխատել**. բանասարկություն, ինտրիգ:

**scheme** [ski:m] v պլաններ/նախագիծ կազմել. բանասարկություն անել. They are scheming to get rid of him **Նրանք պլանավորում են ազատվել նրանից**:

**schemer** ['ski:mə] n բանասարկու, խարդավանիչ:

**scheming** ['ski:miŋ] a բանասարկություններ. խարդախություն, նենգություն, մեքենայություն:

**schism** ['skizəm] n **եկեղ**. հերձված, աղանդ, հերետիկոսություն:

**schismatic** [skiz'mætik] n հերձվածող, աղանդավորական:

**schizophrenic** [,skitsəu'frenik] n շիզոֆրենիկ:

**scholar** ['skɒlə] n գիտնական. թոշակառու ուսանող և այլն. a Shakespeare ~ **Շեքսպիրագետ**. visiting ~ **հրավիրված գիտնական**:

**scholarly** ['skɒləri] a բազմագիտակ, բազմահմուտ. խորագիտակ, գիտուն:

**scholarship** ['skɒləʃɪp] n գիտելիքներ, գիտնականություն. կրթաթոշակ. win a ~ **թոշակ շահել**. full ~ **լրիվ կրթաթոշակ**:

**scholastic** [skə'ləstik] a ուսումնական, դպրոցական. մանրակրկիտ, պեղանտ. սխոլաստիկ:

**school I** [sku:l] n դպրոց. preparatory/primary ~ **տարրական դպրոց (ՄԲ)**. secondary/high ~ **միջնակարգ դպրոց (ՄԲ)**. junior ~ **տարրական դպրոց (ԱՄՆ)**. junior high ~ **ոչ լրիվ միջնակարգ դպրոց (ԱՄՆ)**. high ~ **միջնակարգ դպրոց (ԱՄՆ)**. higher ~ **բարձրագույն դպրոց, բուհ (ԱՄՆ)**. boarding ~ **գիշերօթիկ դպրոց**. comprehensive ~ **հանրակրթական դպրոց**. a private/state ~ **մասնավոր/պետական դպրոց**. teacher-training ~ **մանկավարժական ուսումնական հաստատություն**. ballet ~ **բալետի դպրոց/ուսումնարան**. public ~ **միջնակարգ, փակ դպրոց (ՄԲ)**. vocational ~ **մասնագիտացված/թեքունով դպրոց/ուսումնարան**. nursery ~ **մանկապարտեզ**. attend ~ **դպրոց հաճախել**. (պարապմունքներ,

դասեր) There will be no ~ today Այսօր դասեր չեն լինի. S~ starts at 9 Դասերն սկսվում են Ժ. 9-ին. medical/law ~ բժշկական/իրավաբանական ֆակուլտետ/ինստիտուտ. գտկ. (արվեստի ուղղություն) Flemish ~ ֆլամանդական դպրոց. Hegelian ~ Հեգելյան դպրոց. ~ curriculum դպրոցական/ուսումնական ծրագիր. ~ age դպրոցական հասակ/տարիք. ~ year ուսումնական տարի. ~ leaver դպրոցի շրջանավարտ. The whole ~ was there Ամբողջ դպրոցն այնտեղ էր:

**school II** [ˈsku:l] n վտառ (ծկների):

**school-book** [ˈsku:lbu:k] n դպրոցական դասագիրք:

**schoolboy** [ˈsku:lboɪ] n դպրոցական տղա, աշակերտ:

**schoolfellow** [ˈsku:l,feɪə] n դասընկեր:

**schoolgirl** [ˈsku:lɡɜ:l] n դպրոցական աղջիկ, աշակերտուհի:

**schoolhouse** [ˈsku:lhaʊs] n դպրոցի շենք:

**schooling** [ˈsku:lɪŋ] n կրթություն, ուսուցում. free ~ անվճար կրթություն:

**schoolman** [ˈsku:lɪmən] n ուսուցիչ, սխուլաստ:

**schoolmaster** [ˈsku:l,mɑ:stə] n ուսուցիչ, դասատու, մանկավարժ:

**school-mate** [ˈsku:lmeɪt] n դպրոցական ընկեր:

**schoolmistress** [ˈsku:l,mɪstrəs] n ուսուցչուհի, դասատու:

**schoolroom** [ˈsku:lru:m] n դասարան, դասասենյակ:

**school-teacher** [ˈsku:l,ti:tʃə] n դպրոցի դասատու, ուսուցիչ, ուսուցչուհի:

**school-time** [ˈsku:ltaɪm] n պարապմունքների ժամերը. դպրոցական տարիներ:

**school-yard** [ˈsku:ljɑ:d] n (դպրոցին կից) խաղադաշտ, մարզադաշտ:

**schooner** [ˈsku:nə] n *ծով*. երկկայմ առագաստանավ. *ամ*. ֆուրգոն:

**sciatica** [saɪˈætikə] n *բժշկ.* հոդացավ, իշիաս:

**science** [ˈsaɪəns] n գիտություն. հմայություն. վարպետություն. exact/applied/pure ~ ճշգրիտ/կիրառական/մաքուր, վերացական գիտություն. natural ~s բնական գիտություններ. social ~s հասարակական գիտություններ. ~ fiction գիտական ֆանտաստիկա:

**scientific** [ˌsaɪənˈtɪfɪk] a գիտական. հմուտ. ~ computer *հմկրգ*. գիտական հաշվարկների համակարգիչ/կոմպյուտեր. ~ management of work աշխատանքի գիտական կազմակերպում:

**scientist** [ˈsaɪəntɪst] n գիտնական. top ~s երկրի առաջավոր գիտնականները. honoured ~ գիտության վաստակավոր գործիչ:

**scintilla** [sɪnˈtɪlə] n կայծ:

**scintillate** [ˈsɪntɪleɪt] v կայծկլտալ, փայլել, շողշողալ. a ~ ing wit *փխբ*. փայլուն խելք:

**scintillation** [ˌsɪntɪˈleɪʃən] n առկայծում, փայլում, փայլատակում:

**scion** [ˈsaɪən] n շառավիղ, ժառանգ, հետևորդ. *բսբ*. ընծյուղ, շիվ:

**scissor** [ˈsɪzə] v մկրատով կտրել, մկրատել:

**scissors** [ˈsɪzəz] n (*մակ* a pair of ~) մկրատ:

**sclerosis** [skləˈrəʊsɪs] n *բժշկ.* սկլերոզ. multiple ~ ցիրուցան կարծրախտ/սկլերոզ:

**scoff** [skɒf] n ծաղրանք, ծաղր. the ~ of ծաղրի առարկա. ~ at danger ծիծաղել վտանգի վրա:

**scoffer** [ˈskɒfə] n ծաղրող, ծաղր անող:

**scoffing** [ˈskɒfɪŋ] a ծաղրող, ծաղրական:

**scold** [ˈskɔ:ld] n հանդիմանել, կշտամբել:

**scolding** [ˈskɔ:ldɪŋ] n խիստ հանդիմանություն, շշպանք:

**scon(e)** [skɒn] n ցորենի/վարսակի բլիթ. dropped ~ *ամ*. կլոր բոքոնիկ:

**scoop** [sku:p] n գոգաթիակ, շերեփ, շերեփաթիակ. *խսկց*. մեծ խաղազումար/հաջողություն. This deal was a real ~ for us Այս գործարքը մեծ հաջողություն էր մեզ համար. *խսկց*. շշմեցուցիչ/զգայացունց ռեպորտաժ:

**scoop** [sku:p] v փորել. ~ up շերեփել, թիակով վերցնել, շերեփով հանել:

**scoot** [sku:t] v տեղից պոկվել, փախչել:

**scooter** [ˈsku:tə] n ինքնագլոր. motor ~ մոտոռոլեր:

**scope** [skəʊp] n սահմաններ, ընդգրկում. շրջանակ. իրավասություն, իրազեկություն. the ~ of influence ազդեցության շրջանակը. the ~ of government activity կառավարության գործունեության շրջանակները. *իրավ*. within the ~ of the act օրենքի կիրառման սահմաններում. It is beyond my ~ Դա իմ իրավասությունից դուրս է. wide ~ լայն հնարավորություններ:

**scorbutic** [skɔ:ˈbjʊ:tɪk] n [լնդախտային հիվանդ, [լնդախտավոր:



**scorch** [skɔ:tʃ] *n* մակերեսային այրվածք. ~ marks (արդուկի) այրվածքի հետքեր:  
**scorch** [skɔ:tʃ] *v* այրել, խամծել, կիզել. ~ one's a dress հագուստը խամծել (արդուկելիս). ~ one's hair մազերը խամծել:  
**scorcher** ['skɔ:tʃə] *n* (ահավոր) շոգ օր:  
**scorching** ['skɔ:tʃɪŋ] *a* այրող, խամծող, կիզիչ. The sun is ~ today Արևը կիզիչ է այսօր. It is ~ hot Ահավոր շոգ է:  
**score** [skɔ:] *n* մրց. միավորների հաշիվ նաև *փխբ.* run up *a* ~ պարտքեր անել. settle old ~s հին հաշիվները մաքրել. on that ~ այդ հաշիվը. keep the ~ հաշիվ պահել. on the ~ of հետևանքով, պատճառով. (միավորներ, հաշիվ) The ~ was 2: 3 Հաշիվը 2:3 էր. What is the ~? Որքա՞ն է հաշիվը. keep ~ հաշիվ պահել. բղթխ. միավորները հաշվել. quit ~s վրեժ լուծել. What a ~ ! Ինչպիսի հաջողություն. (մեծ քանակություն) ~s of people շատ ժողովուրդ. երժշ. գործիքավորում, պարտիտուրա. piano ~ երաժշտական երկի դաշնամուրային վարկած. a film ~ կինոֆիլմի երաժշտություն:  
**score** [skɔ:] *v* հաշվել (*նաև* միավորները). նշումներ կատարել. հաջողություն ունենալ. երժշ. գործիքավորել. You've ~d Բախտդ բերեց. ~ off հաղթանակ տանել. ~ under ընդգծել. ~ up հաշվել. ~ out ջնջել. *ուսմ.* ~ 70 % in maths մաթեմատիկայից 4 ստանալ. մրց. ~ a goal գոլ խփել. ~ points միավոր հավաքել. No one has ~d Հաշիվը դեռ բացված չէ. ~ an advantage առավելություն հասնել. ~ a symphony երժշ. սիմֆոնիան գործիքավորել:  
**scoreboard** ['skɔ:bɔ:d] *n* մրց. ցուցատախտակ. լուսային ցուցանակ:  
**scorecard** ['skɔ:kɑ:d] *n* մրց. մրցույթի մասնակցի քարտ:  
**scorer** ['skɔ:rə] *n* մրց. մարզական խաղերի միավորները հաշվող անձ:  
**scorn** [skɔ:n] *n* արհամարհանք, ծաղրանք, ծաղր. be a ~ to/the ~ of ծաղրուծանակի առարկա լինել, արհամարհվել. full of ~ արհամարհանքով լի:  
**scorn** [skɔ:n] *v* արհամարհել. ~ smb/danger մեկին/վտանգն արհամարհել. ~ smb's advice խորհուրդը բանի տեղ չդնել. ~ to do such a thing այդ աստիճանի չիջնել/չստորանալ/չնվաստանալ:

**scornful** ['skɔ:nfl] *a* արհամարհական, ծաղրական:  
**scorpion** ['skɔ:piən] *n* կարիճ:  
**scotch** [skɒtʃ] *n* շոտլանդական օղի:  
**scot-free** [ˌskɒtˈfri:] *a* անպատիժ. He got off ~ Նա անպատիժ դուրս պրծավ:  
**Scotland Yard** [ˌskɒtləndˈjɑ:d] *n* Աքոթլանդ Յարդ, Անգլիական ոստիկանություն, Լոնդոնի քրեական հետախուզություն:  
**Scotsman** ['skɒtsmən] *n* շոտլանդացի:  
**Scottish** ['skɒtɪʃ] *a* շոտլանդական:  
**scoundrel** ['skaundrəl] *n* սրիկա. ստոր/անարգ մարդ:  
**scour** ['skauə] *n* մաքրում, մաքրելը. give it a ~ լավ մաքրել, փայլեցնել:  
**scour** ['skauə] *v* (քերելով) մաքրել. ~ off/away/out խնամքով մաքրել. ~ the frying-pan տապակը քերել-մաքրել. The police ~ed the district Ոստիկանությունը սանրեց թաղամասը:  
**scourer** ['skauərə] *n* մետաղյա քերիչ:  
**scourge** [skɔ:dʒ] *n* մտրակ, խարազան. դժբախտություն, պատահար, պատիժ. the white ~ թռքախտ:  
**scout** [skaut] *n* հետախույզ. boy ~ բոյսքաուր. a talent ~ տաղանդավոր փնտրող/հետախույզ:  
**scout** [skaut] *v* (about/around) հետախուզել. գննել. փնտրել:  
**scouting** [skautɪŋ] *n* հետախուզություն, հետախուզելը:  
**scow** [skau] *n* ծով. գետանավ, լաստանավ:  
**scowl** [skaul] *n* մռայլ/խոժոռված տեսք:  
**scowl** [skaul] *v* մռայլվել, խոժոռվել. սպառնական տեսք ընդունել He ~ed at me Նա գայրացած նայեց ինձ:  
**scrabble** ['skræbl] **1.** *n* խզբզոց, ազոավի չանջ. **2.** *v* ճանկռել, չանգռել. քերծել, խզբզել:  
**scrag** [skræg] *n* կաշի ու ոսկոր. *խսկ.* վիզ, պարանոց:  
**scraggily** ['skrægɪli] *adv* անկարգ/անկանոն/խառնաշփոթ կերպով:  
**scraggy** ['skrægi] *a* միհար, վտիտ, ոսկրոտ:  
**scram** [skræm] *v* *խսկ.* ծկել, փախչել. S~! Դուրս կորիր:  
**scramble** ['skræmbəl] *n* տուրուդմրոց, ծեծկռտոց. մազլցում. It was a hard ~ Դա ծանր մազլցում էր. a ~ for places տու-

րուդմբոց տեղերի (գրավելու) համար:  
**scramble** [ˈskræmbɪl] v կռվել, տուրուդմբոց սարքել. կաթնածվածեղ պատրաստել. ~ eggs ձու հարել/խփել. (մազլցել) ~ up the cliff ժայռն ի վեր մազլցել. ~ through the bushes թփերի միջով դժվարությամբ/ճեղքելով անցնել ~d eggs կաթնածվածեղ:  
**scrap** I [skræp] n կտոր, պատառ. a ~ of paper թղթի կտոր. (նշույլ) not a ~ of truth ճշմարտության ոչ մի նշույլ. ~s of news լուրերի պատահիկներ. ~ album/book ալբոմ լրագրի կտրածոների/նկարների և այլնի համար. (ճաշի մնացորդներ, լաթեր) sell the car for ~ մեքենան որպես ջարդոն վաճառել. ~ heap աղբակույտ. ~ dealer մետաղյա ջարդոն/թափոն հավաքող. ~ iron մետաղյա ջարդոն. ~ paper մակուլատուրա. թուղթ նշումների համար:  
**scrap** II [skræp] 1. n ծեծկռտոց, տուրուդմբոց. 2. v կռիվ/սկանդալ սարքել, վիճել:  
**scrap** [skræp] v փշրել, ջարդոնի վերածել. դեն օգել/նետել. ~ the old bicycle դեն նետել հին հեծանիվը. ~ the plans/the idea հրաժարվել ծրագրերից/գաղափարներից:  
**scrape** [skreɪp] n ճռճոց. ճանկվածք, քերծվածք. տհաճ դրություն. get into ~s հիմար դրության մեջ ընկնել. get smb out of a ~ մեկին դժվարին կացությունից հանել:  
**scrape** [skreɪp] v քերել, քերելով մաքրել. քերելով հեռացնել. քերթել (կաշին). ~ away/down/off ավերել, քերծել. պլոկել. ~ mud off one's shoes ցեխը կոշիկների վրայից մաքրել. ~ carrots/potatoes կարտոֆիլ/գազար կլայել/մաքրել. (քսվել) The car ~d the wall Մեքենան քսվեց պատին. *փխբ. օգտ.* ~ some money together մի կերպ փող տնտեսել/հավաքել. ~ and save կոպեկ-կոպեկ հավաքել. ~ up audience (դժվարությամբ) ունկնդիրներ հավաքել. ~ a living ծայրը ծայրին հասցնել. ~ through քննությունը մի կերպ հանձնել. ~ along in English մի կերպ բացատրվել անգլերենով ~ away on the fiddle ճնկճնկացնել ջութակի վրա:  
**scrape-penny** [skreɪpˈpeni] n շատ ժլատ մարդ:  
**scraper** [ˈskreɪpə] n քերիչ, քերող. մետաղյա քերիչ:  
**scrappy** [ˈskræpi] a կցկտուր, հատուկտոր,

բեկորային. ~ knowledge հատուկտոր գիտելիք. ~ conversation կցկտուր խոսակցություն/ զրույց:  
**scratch** [skrætʃ] n ճանկվածք, քերծվածք. hands covered with ~es ամբողջովին քերծված ձեռքեր. (ճռռոց) ~ of the pen գրչի ճռռոց. *մրգ.* մեկնագիծ, մեկնակետ start from ~ սկզբից սկսել. a ~ team *խսկց.* հավաքովի թիմ:  
**scratch** [skrætʃ] a *հմկրգ.* աշխատանքային, ժամանակավոր. ~ file աշխատանքային/ժամանակավոր ֆայլ:  
**scratch** [skrætʃ] v քորել, չանգռել. քերծել. ~ names on the wall անունները պատի վրա քերծել. ~ one's head գլուխը քորել. (քերել, փորել) ~ a hole փոս փորել. (ջնջել) ~ the name off the list անունը ցուցակից հանել/ջնջել. The match has been ~ed *մրգ.* Խաղը/Յանդիպումը չկայացավ. ~ at the last minute վերջին րոպեին հրաժարվել մրցույթից:  
**scratchy** [ˈskrætʃi] a անշնորհք. ճռճան, ճանկռտող. պատահական, վատ ընտրված:  
**scrawl** [skrɔ:ɪ] n խզբզոց, ագռավի չանջ. I can't make out this ~ Յնարավոր չի այս խզբզանքը կարդալ. His signature is just a ~ ևրա ստորագրությունը պարզապես խզբզոց է:  
**scrawl** [skrɔ:ɪ] v խզբզել. հապճեպ գրել/նշել. ~ a few words մի քանի բառ հապճեպ գրել. ~ all over the paper ամբողջ թուղթը խզբզել:  
**scrawny** [ˈskrɔ:ni] a նիհար, վտիտ, ոսկրոտ:  
**scream** [skri:k] n ճիչ. ճռռոց, ճռիճ:  
**scream** [skri:m] n սուր ճիչ, աղաղակ. a ~ of terror սարսափի ճիչ. ~ of delight հիացմունքի ճիչ. ~ of laughter անզուսպ ծիծաղ. a perfect ~ *խսկց.* սաստիկ ծիծաղելի/զվարճալի:  
**scream** [skri:m] v ճչալ, ծղրտալ, գոռալ. ~ in terror/pain վախից/ցավից գոռալ. ~ for help օգնություն կանչել. ~ with laughter քրքջալ, հռհռալ:  
**screamer** [ˈskri:mə] n *խսկց.* սենսացիոն վերնագիր. շշմեցուցիչ/ցնցող բան. զվարճալի/ծիծաղելի դեպք:  
**screaming** [ˈskri:mɪŋ] a աղաղակող, աչք ծակող. խիստ զվարճալի/ծիծաղելի. ~ colours աչք ծակող գույներ:  
**screamy** [ˈskri:mi] a ճղճղան, ծղրտան. հիստերիկ:

**screech** [skri:tʃ] n ճիչ, չարագուշակ ճիչ, աղաղակ. the ~ of an owl բվի կանչ. ~ of brakes արգելակների շառաչ/շայշուն:

**screech owl** [ˈskri:tʃaʊl] n բվեճ, ճշող բու:

**screen** [skri:n] n էկրան. a ~ for the fire-place միջնորմ. window ~ պատուհանի ցանց folding ~ ծալվող միջնորմ. (վարագույր, ծածկոց) smoke ~ ծխածածկույթ fire ~ հրածածկոց, հրապատվար. under the ~ of night գիշերվա հովանու տակ *ռզմ.* պաշտպանական զորամաս. a ~ test ֆիլմը էկրանի վրա փորձել/ցույց տալ. a ~ adaptation էկրանավորում:

**screen** [skri:n] v ծածկել, պաշտպանել. ~ the house from the wind տունը քամուց պաշտպանել. ~ off part of the room սենյակի մի մասը առանձնացնել/մեկուսացնել. (ստուգել) The company ~s all the employees ընկերությունը ստուգում է իր բոլոր աշխատակիցներին. (նկարահանել, էկրանի վրա ցուցադրել) adapt for the ~ էկրանավորել (պատմվածք, վեպ և այլն). *հմկրգ.* ~ generator էկրանային ձևավորման ծրագիր. ~ image արտապատկերվող պատկեր:

**screening** [ˈskri:nɪŋ] n ընտրություն, զննում. ռենտգենյան հետազոտություն. ~ interview հարցազրույց նախնական ընտրության համար. ~ panel ընտրող հանձնախումբ/կոմիտե. ~ time կինոնկարի ցուցադրման տևողությունը:

**screw** [skru:] n պտուտակ. *ալ.* պրոպելլեր. male/external ~ պտուտամեխ. female/internal ~ պնդողակ. get a ~ loose *փխք.* ծալը/ տախտակը պակաս. put the ~ on smb մեկին ճնշել/սեղմել. ճնշում գործ դնել. *խսկց.* ժլատ մարդ. an old/regular ~ սաստիկ ժլատ մարդ:

**screw** [skru:] v պտուտակը ոլորել/ամրացնել. ~ up (tight) պինդ ամրացնել. ~ off բուլացնել, հետ պտտել. ~ the paper into a ball թուղթը ճմռել. ~ money out of smb մեկից փող կորզել. ~ up one's courage սիրտ առնել:

**screw-ball** [ˈskru:bɔ:l] n խենթ/խելառ/անհավասարակշիռ մարդ:

**screwdriver** [ˈskru:ˌdraɪvə] n պտուտակահան:

**screwed** [skru:d] a պտուտակով ամրացված. *խսկց.* քեֆը տեղը, կատարը տաք:

**screw-nut** [ˈskru:nʌt] n պնդողակ:

**scribble** [ˈskribl] 1. n խզբզանք. անփույթ գրված հողված: 2. v խզբզել, գրի առնել. ~ a few lines մի քանի տող խզբզել. ~ all over the paper ամբողջ թուղթը խզբզել:

**scribbler** [ˈskriblə] n գրչակ, թուղթ մրտտող:

**scribbling pad** [ˈskriblɪŋpæd] n բլոկնոտ:

**scribe** [skraɪb] n գրիչ (հին ձեռագրեր արտագրող). գրող. գրագետ մարդ. I am no great ~ ես գրելու վարպետ չեմ:

**scrimmage** [ˈskrɪmɪdʒ] n ծեծկռտոց, տուրուդմբոց:

**scrimp** [skrɪmp] v *խսկց.* խնայել. ~ and save for college խիստ խնայողություններ անել քոլեջ ընդունվելու համար:

**scrumpy** [ˈskrɪmpɪ] a աղքատիկ, ողորմելի անբավարար:

**scrimshank** [ˈskrɪmʃæŋk] v *խսկց.* պարտականություններից խույս տալ:

**scrip** [skrɪp] n թղթի կտոր. ստացական, անդորրագիր. *իրավ.* վկայագիր:

**script** [skrɪpt] n ձեռագիր. բնագիր. *թատր.* ներկայացման տեքստը. կինոսցենար. ~ writer սցենարիստ. (տառատեսակ) Gothic ~ գոթական տառատեսակ:

**scriptural** [ˈskrɪptʃrəl] a աստվածաշնչյան, բիբլիական:

**scripture** [ˈskrɪptʃə] n (*ճակ Holy ~*) Աստվածաշունչ:

**scrivener** [ˈskrɪvnə] n նոտար:

**scrofula** [ˈskrɒfjʊlə] n *բժշկ.* գեղձախտ:

**scroll** [skrɔ:l] n փաթաթ, մագաղաթի/պապիրուսի զալար. գլանաձև ձեռագիր. *հմկրգ.* ~ bar ոլորագոտի. ~ ing text վազող/սահող տեքստ:

**scroop** [ˈskru:p] 1. n ճռռոց, ճռճռոց. 2. v ճռռալ, ճռճռալ:

**scrounge** [ˈskraʊndʒ] v խնդրել, վերցնել (պնդերեսությամբ). ~ a cigarette սիգարետ խնդրել/վերցնել/պլուկել. He is always ~ing off people Նա միշտ մուրացկանություն է անում:

**scrounger** [ˈskraʊndʒə] n մուրացկան. *փխք.* պնդերես, ուզվոր:

**scrub** [skrʌb] n թփուտ, մացառ. *մրգ.* ֆուտբոլային թիմի երկրորդ կազմը:

**scrub** [skrʌb] v խոզանակով մաքրել. զտել, մաքրել. ~ the floor/a pan հատակը/թավան, տապակը քերել(ով) մաքրել. ~ the whole idea *խսկց.* մտքից հրաժարվել:

**scrubber** [ˈskrʌbə] *n* քերիչ:  
**scrubbing brush** [ˈskrʌbiŋbrʌʃ] *n*  
 հատակի խոզանակ:  
**scrubby** [ˈskrʌbi] *a* մացառապատ, քիռու-  
 տով ծածկված:  
**scrubwoman** [ˈskrʌb,wʊmən] *n* հավաքա-  
 րարուհի. օրավարձով աշխատող կին:  
**scruff** [skrʌf] *n* take/seize by the ~ of the neck  
 օձիքից բռնել:  
**scruffy** [ˈskrʌfi] *a* փնթի, ոչ կոկիկ:  
**scrum** [ˈskrʌm] *n* հրմշտոց, խցկվածու-  
 թյուն. ~ at the bar հրմշտոց բարում:  
**scrumptious** [ˈskrʌmpʃəs] *a* *խսկց.* սքան-  
 չելի, հրաշալի. What ~ food ! Ի՞նչ համեղ  
 ուտելիք:  
**scruple** [ˈskru:pɪ] *n* տատանում, վարանում.  
 make no ~s չվարանել, չտատանվել. (չափի  
 միավոր) սկրուպուլ:  
**scrupulous** [ˈskru:pjʊləs] *a* բժախնդիր,  
 մանրախնդիր. մանրակրկիտ, չափազանց  
 ճշգրիտ. ~ honesty/cleanliness անբիծ ազնու-  
 վություն/մաքրություն. pay ~ attention ման-  
 րակրկիտ ուշադրություն դարձնել:  
**scrutineer** [skru:tiˈniə] *n* հսկիչ, վե-  
 րահսկիչ:  
**scrutinize** [ˈskru:tinaiz] *v* մանրամասն/  
 հանգամանորեն քննել/ուսումնասիրել. ~  
 the contract/circumstances հանգամանքները/  
 պայմանագիրը ուսումնասիրել/զննել:  
**scrutiny** [ˈskru:ti:ni] *n* զննող հայացք. ման-  
 րամասն քննարկում. ուշադիր ուսումնասի-  
 րություն/վերլուծություն. strict ~ խիստ  
 զննում. under ~ հսկողության տակ:  
**scud** [skʌd] **1.** *n* ճարճատյուն, ճթճթոց. **2.**  
*v* սլանալ, նետվել. Clouds ~ded across the sky  
 Ամպերը սլանում էին երկնքով:  
**scuff** [skʌf] **1.** *n* մաշիկ. **2.** *v* ոտքերը քարշ  
 տալ, քստքստացնել. մաշել, մաշվել:  
**scuffle** [ˈskʌfl] *n* կռիվ, ծեծ, ծեծկռտոց:  
**scull** [skʌl] *n* միաթի նավակ, բայդարկա:  
**scullery** [ˈskʌləri] *n* (խոհանոցին կից)  
 ամանները լվանալու տեղ:  
**sculp** [skʌlp] *v* *խսկց.* քանդակել, արձանա-  
 գործել. ~ in wood փայտի վրա քանդակել:  
**sculptor** [ˈskʌlptə] *n* քանդակագործ, ար-  
 ձանագործ:  
**sculpture** [ˈskʌlptʃə] *n* արձան, քանդակ.  
 քանդակագործություն:  
**scum** [skʌm] *n* փրփուր, քափ. the ~ of the

earth *փխք.* հասարակության տակնքներ:  
**scummy** [ˈskʌmi] *a* փրփրած, փրփրակա-  
 լած:  
**scurf** [skə:f] *n* զլխի մաշկի թեփ. թեփուկա-  
 ման ծածկույթ:  
**scurrility** [skəˈriləti] *n* կոպիտ/անվայել  
 կատակ. անվայել/վիրավորական դիտողու-  
 թյուն:  
**scurrilous** [ˈskʌrələs] *a* կոպիտ, վիրավո-  
 րական, անպատշաճ:  
**scurry** [ˈskʌri] **1.** *n* վազվզոց, իրարանցում.  
**2.** *v* վազվզել, իրար անցնել. դեսուդեն  
 ընկնել. ~ for shelter ծածկի տակ վազել:  
**scurvied** [ˈskə:viəd] *a* լնդախտային, լնդախ-  
 տով հիվանդ:  
**scurvy** [ˈskə:vi] *n* լնդախտ:  
**scutter** [ˈskʌtə] *v* փախչել, ծլկել:  
**scuttle** I [ˈskʌtl] *n* (*նաև* coal ~) ածուխի  
 դույլ/արկղ:  
**scuttle** II [ˈskʌtl] *n* շտապ/փութկոտ քայլ-  
 վածք. արագընթաց փախուստ:  
**scythe** [saið] **1.** *n* գերանդի. **2.** *v* հնձել/հարել  
 (խոտը):  
**sea** [si:] **1.** *n* ծով. օվկիանոս. high/open ~ բաց  
 ծով. calm/stormy, rough ~ հանգիստ/փոթոր-  
 կոտ ծով. choppy ~ անհանգիստ ծով. right by  
 the ~ անմիջապես ծովի ափին. cross the ~  
 ծովը կտրել-անցնել. come/go by ~ ծովով  
 գալ/գնալ. on the high ~s, in the open ~ բաց  
 ծովում. go to ~ ծովային դառնալ. put to ~  
 ծով դուրս գալ. over the ~ ծովից այն կողմ.  
 above/below ~ level ծովի մակարդակից  
 բարձր/ցածր. a ~ of faces/flammes *փխք.* դեմ-  
 քերի/բոցերի ծով. a ~ of troubles վշտի ծով.  
 He is half ~s over Ոչնչից չի վախենում.  
 (ծովային ալիք.) beam ~ կողային ալիք. A ~  
 struck us Ալիքը տակով արեց. **2.** *a* ծովային,  
 ծովի. ~ air/transport/plant ծովի, ծովային օդ/  
 տրանսպորտ/բուսականություն:  
**sea anemone** [si:əˈneməni] *n* *կենդ.*  
 ակտինիա:  
**seaboard** [ˈsi:bɔ:d] **1.** *n* ծովափ, ծովեզր. **2.** *a*  
 ծովափնյա, ծովամերձ.  
**sea-born** [ˈsi:bɔ:n] *a* ծովածին:  
**sea-calf** [ˈsi:kɑ:f] *n* փոկ, ծովաշուն:  
**sea-dog** [ˈsi:dɒg] *n* փորձված նավաստի,  
 ծովագայլ:  
**seafarer** [ˈsi:ˌfeərə] *n* ծովագնաց. նա-  
 վաստի:

**seafaring** [ˈsiːˌfeəriŋ] n նավագնացություն.

ծովային ճանփորդություն:

**seafont** [ˈsiːfrʌnt] n ծովափ, ծովեզերք:

**sea-girt** [ˈsiːgɜːt] a ծովով շրջապատված:

**seagoing** [ˈsiːˌgəʊɪŋ] a օվկիանոսային. a ~ ship օվկիանոսային նավ:

**sea-gull** [ˈsiːgʌl] n ճայ, ծովաորոր:

**sea-horse** [ˈsiːhɔːs] n կենդ. ծովածի, ծովափիղ:

**seal I** [siːl] n կենդ. փոկ, ծովաշուն, ծովարջ:

**seal II** [siːl] n կնիք. wax ~ զմուռսի կնիք. lead ~ կապարակնիք, պլոմբ. place/fix/set a ~ կնիք դնել. set one's ~ կնիքով հաստատել. under the ~ of secrecy գաղտնիքը պահելու պայմանով:

**seal** [siːl] v կնիք դնել, կնիքով հաստատել, վավերացնել. կնքել. ~ up a package փաթեթը զմռսել. ~ up a room սենյակի վրա կնիք դնել. ~ off the area շրջափակել տարածքը:

**sea legs** [ˈsiːˌleɡz] n. I've got my ~ խսկց. արդեն սովորեցի ծովաճոճումին:

**sealery** [ˈsiːləri] n փոկերի և ծովարջերի ծվարատեղ, արեսլ:

**sea level** [ˈsiːˌlevl] n ծովի մակերևույթ. above/below ~ ծովի մակերեսից բարձր/ցածր:

**sealing-wax** [ˈsiːˌliŋwæks] n զմուռս, կնքամոմ:

**seal-ring** [ˈsiːˌlriŋ] n կնիքով մատանի:

**sealskin** [ˈsiːˌlskiːn] n փոկի կաշի. ծովարջի մորթի. ~ cap ծովարջենու գլխարկ:

**seam** [siːm] 1. n կար, կարատեղ. 2. v կարել, կարելով միացնել. split at the ~s կարերը քանդվել, պատռվել:

**seamaid** [ˈsiːˌmeɪd] n ջրահարս:

**seaman** [ˈsiːˌmæn] n նավաստի, ծովագնաց. able-bodied ~ առաջին կարգի նավաստի. ordinary ~ շարքային/հասարակ նավաստի:

**seamanship** [ˈsiːˌmæʃɪp] n նավագնացական/նավարկելու արվեստ:

**seamark** [ˈsiːˌmaːk] n առափնյա նշան, փարոս:

**seamstress** [ˈsemstrəs] n դերձակուհի:

**seamy** [ˈsiːˌmi] a անդուրեկան, անհրապույր. the ~ side of life փխբ. կյանքի տհաճ/մութ կողմը:

**sea-plane** [ˈsiːˌpleɪn] n հիդրոփնքնաթիռ, հիդրոպլան:

**seaport** [ˈsiːˌpɔːt] n ծովային նավահանգիստ, ծովեզրյա քաղաք:

**sear** [siə] 1. n այրվածք. 2. a չոր, թառամած.

3. v խանձել, այրել, չորացնել:

**search** [sɜːtʃ] n որոնում, փնտրում. հետախուզում, զննում. careful/fruitless ~ մանրամասն, հանգամանալից/իզուր, անօգուտ որոնում. be in ~ of փնտրել, որոնել. make a ~ հետախուզություն անել/կատարել. in ~ for truth/happiness ճշմարտություն/երջանկություն փնտրելիս. ~ witness խուզարկության ընթերակա. ~ warrant խուզարկության իրավունք առանց կարգադրագրի. ~ a flat բնակարանը խուզարկության ենթարկել. ~ party որոնող/հետախուզող խումբ/ջոկատ. body ~ անձի խուզարկություն:

**search** [sɜːtʃ] v որոնել, փնտրել. խուզարկել, հետազոտել. ~ out հայտնաբերել, գտնել. ~ the prisoner բանտարկյալին փնտրել. ~ warrant խուզարկության կարգադրագիր. ~ for drugs թմրադեղ փնտրել. ~ the pockets for small change գրպաններում մանր դրամ փնտրել. ~ one's memory հիշողությունը լաբել:

**searching** [ˈsɜːtʃɪŋ] a փնտրող, զննող, մանրամասն. a ~ look փնտրող հայացք. ~ questions մանրամասն հարցեր:

**search-light** [ˈsɜːtʃlaɪt] 1. n լուսարձակ. 2. a լուսարձակի, լուսարձակային:

**seascape** [ˈsiːˌskeɪp] n ծովանկար:

**seashore** [ˈsiːʃɔː] n ծովափ, ծովեզր:

**seasick** [ˈsiːˌsɪk] a ծովախտով տառապող. be ~ ծովախտով տառապել feel ~ ծովաճոճումից սրտխառնություն ունենալ:

**seasickness** [ˈsiːˌsɪknəs] n ծովախտ:

**seaside** [ˈsiːˌsaɪd] n ծովափ, ծովեզր. go to the ~ ծովափ գնալ. have a ~ holiday ծովափին հանգստանալ:

**season** [ˈsiːzən] n տարվա եղանակ. սեզոն ժամանակ. in ~ իսկական ժամանակն է. out of ~ ժամանակը չէ. the holiday ~ արձակուրդի ժամանակաշրջան. the off/dead/dull ~ մեռյալ սեզոն. fruit ~ մրգերի սեզոն. close ~ որսարգելման/ փակ/ արգելված սեզոն. shooting ~ որսի սեզոն. the football/ concert/ rainy ~ ֆուտբոլի/համերգային/անձրևների սեզոն. ~ ticket սեզոնային տոմս (համերգի և այլն). off ~ employment սեզոնից դուրս աշխատանք:

**season** [ˈsiːzən] v համեմել, համեմունք զցել. փխբ. հետաքրքիր դարձնել:

**seasonable** [ˈsi:znəbl] a ժամանակին, տեղին. It's ~ weather for October Յոկտեմբերի համար սովորական/հարմար եղանակ է:

**seasonal** [ˈsi:znəl] a սեզոնային. ~ work/job/employment սեզոնային աշխատանք/զբաղվածություն. ~ worker սեզոնային բանվոր:

**seasoned** [ˈsi:znd] a հնորակ (գինի և այլն). չորացրած փայտ. որակը բարելավված. ավելի որակով. համեմատ (ուտելիք) highly ~ dishes շատ կծու/համեմատ ուտելիք:

**seasoning** [ˈsi:znɪŋ] n համեմունք:

**seat** [si:t] n (նստելու) տեղ. նստավայր. նստարան. an empty/vacant ~ ազատ տեղ. a ~ by the window տեղ պատուհանի մոտ. garden ~ պարտեզի նստարան. take your ~ նստեք. choose/find/occupy a ~ տեղ ընտրել/գտնել/զբաղեցնել. All ~s are sold Բոլոր տոմսերը վաճառված են. book a ~ տոմս գնել. secure ~s տոմսեր պատվիրել. the ~ of a chair/bicycle աթոռի/հեծանիվի նստելատեղը. the driver's ~ վարորդի նստելատեղը. the back ~ հետևի տեղեր. hard ~s *երկթ.* (վազոնում) կոշտ տեղեր. a ~ in Parliament տեղ խորհրդարանում. lose one's ~ չվերընտրվել. keep one's ~ նորից վերընտրվել. the ~ of the government կառավարության նստավայրը. company's ~ ընկերության նստավայրը. (կենտրոն) a ~ of learning գիտության կենտրոն. county ~ շրջանային կենտրոն. country ~ կալվածատուն, դաստակերտ:

**seat** [si:t] v նստեցնել, տեղավորել. be ~ed նստել. ~ the children երեխաներին նստեցնել. Remain ~ed Մնացեք ձեր տեղերում. (տեղավորել) The car ~s six Մեքենայում վեց հոգի են տեղավորվում. The table ~s 12 people Սեղանի շուրջը 12 մարդ կարող է նստել:

**seat-belt** [ˈsi:tbel] n ամրագոտի:

**seating** [ˈsi:tiŋ] n նստելատեղ, տեղ. ~ for 100 persons 100 հոգու նստելու տեղ. ~ capacity (նստելու) տեղերի/նստելատեղերի քանակը:

**sea urchin** [ˈsi:ɜ:tʃɪn] n ծովառզնի:

**sea-wall** [ˌsi:ˈwɔ:l] n ամբարտակ, ծովապատնեշ:

**seaward** [ˈsi:wəd] a ծովի ուղղությամբ.

**seawards** [ˈsi:wədz] adv դեպի ծով:

**seaweed** [ˈsi:wi:d] n ջրիմուռ:

**seaworthy** [ˈsi:,wə:ði] a նավագնացության

համար պիտանի. լավ հանդերձավորված:

**secant** [ˈsi:kənt] n *մաթ.* հատող, հատող գիծ:

**secateur(s)** [ˈsekəteɪ(z)] n էտիչ. a pair of secateurs պարտեզի մկրատ, սեկատոր:

**secede** [siˈsi:d] v առանձնանալ, զատվել, կապերը խզել:

**secession** [siˈseʃn] n անջատում, կազմից դուրս գալը:

**seclude** [siˈklu:d] v առանձնացնել, մեկուսացնել. ~ oneself from the society հասարակությունից անջատվել, մեկուսանալ:

**secluded** [siˈklu:did] a առանձնացած, մեկուսացած:

**seclusion** [siˈklu:ʒn] n առանձնացում, մեկուսացում. մեկություն. live in ~ մեկության մեջ ապրել:

**seclusive** [siˈklu:sɪv] a մեկության ձգտող. մեկուսացնող:

**second** I [ˈsekənd] n վայրկյան, ակնթարթ. in a ~ մի վայրկյանից. just a ~ մի վայրկյան. wait a ~ մի վայրկյան սպասեք. in a split ~ հաշված վայրկյաններում. ~ hand վայրկյանի սլաք:

**second** II [ˈsekənd] n երկրորդ կարգի/երկրորդ մրցանակը շահողը. օգնական. *մրզ.* մարտավակ, մրցավակ. *երժշ.* երկրորդ ծայն: He got a ~ in his finals Նա համալսարանն ավարտեց երկրորդ կարգի դիպլոմով. ~s երկրորդ տեսակի ապրանքներ. The cups are sold as ~s Գավաթները վաճառվում են որպես երկրորդ տեսակի ապրանք:

**second** [ˈsekənd] a երկրորդ, երկրորդական. in the ~ place երկրորդ տեղում. be ~ in experience/knowledge զիջել կենսափորձով/գիտելիքներով. ~ to none չգերազանցված. travel ~ class երկրորդ կարգի տոմսով ճամփորդել. a ~ chance երկրորդ/մեկ այլ հնարավորություն. in the ~ place (նախ...), երկրորդ. on ~ thoughts լավ մտածելուց հետո. have ~ thoughts միտքը փոխել. ~ last նախավերջին:

**second** [ˈsekənd] v օգնել. պաշտպանել, աջակցել. ~ a motion առաջարկությունը պաշտպանել:

**secondary** [ˈsekəndəri] a երկրորդական, ստորադաս. of ~ importance երկրորդ կարգի կարևորության ~ education միջնակարգ կրթություն. ~ product երկրորդային մթերք. *հմկրգ.* ~ entry լրացուցիչ մուտք. ~ storage արտաքին հիշողություն:

**second-best** [ˌsekəndˈbest] a երկրորդ տեսակի. come off ~ պարտություն կրել:  
**second-class** [ˌsekəndˈkla:s] a երկրորդ կարգի. ~ passenger/hotel երկրորդ կարգի տոմսով ճամփորդող/հյուրանոց. ~ citizens երկրորդ կարգի մարդիկ/քաղաքացիներ:  
**seconded** [ˈsekəndəd] n առաջարկությունը պաշտպանող անձ (ժողովում, նիստում):  
**second-hand** [ˌsekəndˈhænd] a օգտագործված (իրեր). a ~ camera օգտագործված ֆոտոապարատ. a ~ shop/bookshop հնավաճառի/հնագրավաճառի/բուկինիստական խանութ. ~ ideas փոխառնված մտքեր. ~ information ուրիշի միջոցով ստացած տեղեկատվություն. hear smth ~ ուրիշներից լսել:  
**second-rate** [ˌsekəndˈreɪt] a երկրորդ կարգի/տեսակի. ~ goods երկրորդ տեսակի ապրանք. a ~ artist միջակ/աչքի չընկնող արվեստագետ:  
**secrecy** [ˈsi:kri:si] n գաղտնիություն, գաղտնիք. in ~ գաղտնի. in strict/great ~ խիստ գաղտնի. swear to ~ երդվել գաղտնի պահել. official ~ աշխատանքային/ծառայողական գաղտնիք:  
**secret** [ˈsi:kri:t] n գաղտնիք. in ~ գաղտնի, թաքուն. an open ~ բոլորին հայտնի գաղտնիք. be in/on the ~ գաղտնիքին տեղյակ լինել. let one into the ~ գաղտնիքին հաղորդակից դարձնել. keep a ~ գաղտնիքը պահել. know, learn/reveal a ~ իմանալ/բացել գաղտնիքը. It's no longer a ~ Դա այլևս գաղտնիք չէ:  
**secret** [ˈsi:kri:t] a գաղտնի. ~ language գաղտնագիր. top ~ խիստ/հույժ գաղտնի. ~ measures գաղտնի միջոցներ. ~ service հակահետախուզություն, գաղտնի ծառայություն. ~ agent/marriage/door գաղտնի գործակալ/ամուսնություն/դուռ:  
**secretaire** [ˌsekɾəˈteɪ] n գրասեղան, սեկրետեր:  
**secretariat** [ˌsekɾəˈteəriət] n քարտուղարություն, քարտուղարական կազմ:  
**secretary** [ˈsekɾətəri] քարտուղար. նախարար. ~ general գլխավոր քարտուղար. private ~ անձնական քարտուղար. ~ of state for war ռազմական նախարար (ՄԲ). ~ of war ռազմական նախարար (ԱՄՆ):  
**secrete** [siˈkri:t] v թաքցնել, պահել. *բժշկ.*

արտազատել (գեղձերի մասին):  
**secretion** [siˈkri:ʃn] n արտազատում, գեղձազատում. սեկրեցիա. internal ~ ներքին սեկրեցիա:  
**secretive** [ˈsi:kɾətɪv] a գաղտնապահ, գաղտնի. be ~ գաղտնապահ լինել. with a ~ air խորհրդավոր տեսքով:  
**sect** [sekt] n հերձված, աղանդ:  
**sectarian** [sekˈteəriən] n, a հերձվածող, աղանդավոր. աղանդավորական:  
**sectarianism** [sekˈteəriənɪz(ə)m] n հերձվածություն, աղանդավորություն:  
**section** [ˈsekʃn] n հատված, մաս. սեկտոր. cut into ~s մասերի բաժանել. ~ of the road ճանապարհի հատված. a ~ of pipeline խողովակի հատված. key ~ հիմնական հատված/սեկտոր. (կտրվածք) cross/longitudinal ~ լայնակի/երկայնակի կտրվածք. microscopic ~ մանրադիտակով ուսումնասիրելու հյուսվածքաչերտիկ. (բաժին, բաժանմունք). sports ~ մարզական սեկցիա. the first ~ of the article հոդվածի առաջին պարագրաֆը/դրվագը/բաժինը. *հմկրգ.* ~ break բաժնի հատում:  
**sectional** [ˈsekʃnəl] a սեկցիաներով, քանդուկ-հավաքովի. խմբային. ~ bookcase հավաքովի գրապահարան. ~ view կտրվածքի տեսքը ~ interests *փխք.* խմբային հետաքրքրություններ/շահեր:  
**sector** [ˈsektə] n հատված, բաժին, մաս. սեկտոր. public and private ~s հասարակական և մասնավոր հատվածներ/սեկտորներ:  
**secular** [ˈsekjʊlə] a աշխարհիկ. դարավոր. 100 տարին մեկ տեղի ունեցող. ~ state աշխարհիկ պետություն:  
**secularize** [ˈsekjʊləraɪz] v աշխարհականացնել, աշխարհիկ դարձնել. (եկեղեցական գույքը) պետականացնել:  
**secure** [siˈkjʊə] a հուսալի, ապահով, անվտանգ. The ladder/door is ~ Աստիճանը կայուն է, Դուռն ապահով է. a ~ job երաշխավորված աշխատանք. a ~ financial position ապահով ֆինանսական դրություն. feel ~ վստահ/համոզված լինել. be ~ from interruptions ընդհատումներից/միջամտություններից զերծ մնալ:  
**secure** [siˈkjʊə] v ապահովել, անվտանգ դարձնել. պաշտպանել. ~ the rope պարանը պինդ ամրացնել. (ծեռք բերել, ճարել) ~

tickets տոմսեր ձեռք բերել. ~ victory/good results հաղթանակ/լավ արդյունքներ ապահովել. ~ a loan վարկը երաշխավորել:  
**securit/y** [si'kjʊərəti] n անվտանգություն, ապահովություն. ~ of tenure վարձելու/վարձույթի երաշխավորման իրավունք. ~ check հավատարմության ստուգում. a ~ risk անապահով, անվստահելի. S ~ Council ԱՄՎտանգության խորհուրդ (ՄԱԿ). (երաշխավորում) lend money on ~ գրավակա-նով/երաշխիքով փող պարտք տալ. stand ~ for smb մեկին երաշխավորել. ~ies արժե-թղթեր. listed ~ies գնանշված արժեթղթեր. unlisted ~ies չգնահատված արժեթղթեր go-vernment ~ies պետական արժեթղթեր:  
**sedan** [si'dæən] n փակ ավտոմեքենա. պատ-գարակ. կրելի բազկաթոռ:  
**sedate** [si'deɪt] a հավասարակշիռ, ծանրա-բարո:  
**sedative** ['sedətɪv] 1. n բժշկ. ցավամոքիչ դեղամիջոց. 2. a ցավամոքիչ, հանգստաց-նող:  
**sedentary** ['sedntəri] a նստակյաց (կենսա-կերպ). նստած:  
**sediment** ['sedɪmənt] n նստվածք, տիղմ. երկրբ. նստվածք, նստվածքաշերտ:  
**sedition** [si'diʃn] n խռովության կոչ:  
**seditious** [si'diʃəs] a խռովարար, ապստամ-բական:  
**seduce** [si'dju:s] v գայթակղեցնել, հրապու-րել:  
**seduction** [si'dʌkʃn] n հրապուրանք, գայ-թակղություն, գայթակղում:  
**seductive** [si'dʌktɪv] a գայթակղիչ, հրա-պուրիչ:  
**sedulity** [si'dju:ləti] n աշխատասիրություն, ջանասիրություն:  
**sedulous** ['sedjʊləs] a աշխատասեր, ջանա-սեր:  
**see** [si:] v տեսնել, նկատել, տեսողությամբ ընկալել. ~ at a distance հեռավորության վրա/ հեռու տեսնել. Have you seen London? Լոնդոնը տեսնո՞ւ եք. I don't ~ any point in it ես դրա մեջ իմաստ չեմ տեսնում. I ~ it this way ես դա այս ձևով եմ տեսնում/պատկե-րացնում. Cats ~ in the dark Կատուները կարող են մթության մեջ տեսնել. He can't ~ to read Նրա համար դժվար է կարդալ. (տեսնվել, հանդիպել) You ought to ~ the doc-

tor Դուք պետք է բժշկին դիմեք. I don't ~ him often Մենք սակավ ենք տեսնվում. come to/go to ~ հյուր գալ/գնալ. (հասկանալ, ըմբռնել) Oh, I ~ ! don't you ~? Այո, հասկանում եմ. Մի՞թե պարզ չէ. Let me ~ թույլ տվեք մտածեմ. I fail to ~ why Չեմ հասկանում ինչու. as far as I can ~ ինչքան ես հասկանում եմ, որքանով ես կարող եմ դատել. ~ the joke կատակը հասկանալ. (ուղեկցել) ~ to the theatre/train թատ-րոն/կայարան ուղեկցել. (նայել, դիտել) ~ a film/a match ֆիլմ/ֆուտբոլի խաղ նա-յել/դիտել. ~ for yourself ինքդ նայիր. ~ that the doors are locked Յետևի/Տես, որ դռները փակվեն/կողպվեն. (հետևել, հոգալ) I'll ~ to this myself ես դրա մասին ինքս կհոգամ. (իմանալ, պարզել) go and ~ գնա և պարզիր. ~ for oneself համոզվել. ~ the world/ life աշխարհը տեսնել. ~ the light լույս տեսնել. The story saw the light Պատմվածքը լույս տեսավ. (տարբեր օգտագործումներ) I don't ~ him as a teacher ես նրան ուսուցիչ չեմ պատկերացնում I saw from the paper ես թերթում կարդացի. We'll never ~ his like again Մենք այլևս նրա նման մեկին չենք հանդիպի. Have you ever seen the like? Նման բան երբևէ տեսե՞լ ես. The car has seen better days Մեքենան ավելի լավ օրեր է տեսել. ~ about հոգ տանել, հետևել. ~ after խնամել, հոգ տանել. ~ in ներս բերել ~ him in ներս բերեք/հրավիրեք նրան. ~ the New Year in Նոր տարին դիմավորել. ~ into թափանցել, խորամուխ լինել. քննարկել, քննել. ~ off ճանապարհ դնել. ~ off smn at the station կա-յարանում ճանապարհ դնել. ~ out մինչև դուռը ուղեկցել. ~ over գննել, դիտել. ~ over the school/the garden դիտել դպրոցի շենքը/ այգին. ~ through օգնել. He saw me through my troubles Նա ինձ օգնեց դժվար պահին. ~ to հոգ տանել. S~ you later Կհանդիպենք, Կտեսնվենք. ~ you soon Մինչ հանդիպում:  
**see** [si:] n եկեղ. բեմ. the Holy S ~ Հռոմի պապի գահը:  
**seed** [si:d] n սերմ, հատիկ. go/run to ~ սերմա-կալել. He has gone to ~s փխր. Նա ընկճվել/վհատվել/բարոյալքվել է. ~s of doubt կասկած(-ի սերմեր). sow the ~s of doubt/discord կասկած/երկպառակություն սերմանել. ~ potatoes սերմացու կարտոֆիլ. ~ drill սերմնացան:



**seed-bed** [ˈsi:dbed] n սածիլներով ածու/մարգ:  
**seeder** [ˈsi:də] n սերմնացան. կորիզահան մեքենա:  
**seeding-machine** [ˈsi:diŋmə,ʃi:n] n սերմնացան մեքենա:  
**seedling** [ˈsi:dliŋ] n սերմնաբույս, սածիլ. տնկի:  
**seedsman** [ˈsi:dzmən] n սերմավաճառ. սերմնացան:  
**seed-time** [ˈsi:dtaim] n ցանքի ժամանակը:  
**seedy** [ˈsi:di] a մաշված, քրքրված. *խսկց.* վատառողջ, տկար. *feel* ~ իրեն վատ զգալ. *look* ~ վատառողջ/մաշված տեսք ունենալ:  
**seeing** [ˈsi:iŋ] conj ~ that նկատի ունենալով, քանի որ:  
**seek** [si:k] v փնտրել, որոնել. փորձել. ~ shelter/safety/help ապաստան/ապահովություն/օգնություն փնտրել. ~ advice խորհրդի կարիք ունենալ. ~ after/for ձգտել, հետամուտ լինել. *be* much sought after հաջողություն վայելել. This edition is greatly sought after Այս հրատարակությունը մեծ պահանջարկ է վայելում. ~ out փնտրել. հետախուզվել:  
**seem** [si:m] v թվալ, երևալ. *it* ~s թվում է, ըստ երևույթին. *It* ~s to him/me Նրան/ինձ թվում է. (կարծես) *He* ~s to be tired Կարծես նա հոգնած է. *She* ~s young Նա ջահել է երևում:  
**seeming** [ˈsi:miŋ] a թվացող, առերևույթ. կեղծ, շինծու:  
**seemingly** [ˈsi:miŋli] adv արտաքինից դատելով, ըստ երևույթին:  
**seemly** [ˈsi:mli] a պատշաճ, վայելուչ:  
**seep** [si:p] 1. n աղբյուր (գետնի տակից բխող). 2. v ծորել. (դուրս/ներս) հոսել:  
**seepage** [ˈsi:pi:dʒ] n դուրս/ներս ծորելը/հոսելը/ծծվելը. ներծծվող/դուրս ծորացող ջուր:  
**seesaw** [ˈsi:sɔ:] n տնկոզի. *play on a* ~ տնկոզի խաղալ. տատանումներ վերու-վար/ետուառաջ. *go* ~ տատանվել, ճոճվել:  
**seethe** [si:ð] v եռալ, փոթորկվել, ալեկոծվել. ~ with indignation զայրույթից եռալ. The square was ~ing with people Յրապարակը (մարդիկ, ամբոխը) ալեկոծվում էր:  
**segment** [ˈsegmənt] n հատված, մաս. բլթակ (նարնջի). *մաթ.* սեգմենտ. *հմկրգ.* ~ ծածկման հատված, սեգմենտ. ~ and offset սեգմենտ-շեղում. ~ base սեգմենտի սկիզբը.

~ descriptor սեգմենտի նկարագրիչ:

**segregate** [ˈsegrigeit] v առանձնացնել. անջատ(վ)ել, զատ(վ)ել. մեկուսացնել. The patient was ~d Յիվանդին մեկուսացրին. In this school the sexes are ~d Այս դպրոցում կիրառվում է առանձին ուսուցում:  
**segregation** [ˌsegrɪˈgeɪʃn] n առանձնացում, մեկուսացում. խտրականություն. race ~ ռասայական խտրականություն:  
**seine** [sein] n տոպրակացանց, ուռկան:  
**seismic** [ˈsaizmik] a երկրաշարժային, սեյսմիկ:  
**seize** [si:z] v բռնել, ճանկել. վերցնել, գրավել. *իրավ.* բռնագրավել (գույքը). ~ by the arm թևը բռնել/ճանկել. *be* ~d by a feeling զգացմունքով համակվել. *be* ~d by coughing հազը բռնել. ~ power իշխանությունը նվաճել/զավթել. ~ the opportunity/occasion/ chance առիթը չկորցնել. The engine ~d up Շարժիչն անշարժացել է/լքվել է:  
**seizure** [ˈsi:zə] n զավթում, գրավում. նվաճում. *բժշկ.* նոպա, ուշաթափություն. *իրավ.* կալանք (գույքի):  
**seldom** [ˈseldəm] adv հազվադեպ, սակավադեպ, ոչ հաճախ:  
**select** [səˈlekt] a ընտիր, ընտրյալ, բացառիկ. a ~ gathering ընտրյալների հավաք. a ~ group of friends մոտ ընկերների շրջանակ. a ~ blend of tobacco ծխախոտի ընտրյալ տեսակամի. ~ committee հատուկ կոմիտե:  
**select** [səˈlekt] v ընտրել, ջոկել. ~ a gift նվեր ընտրել. *be* ~ed for ընտրվել (ինչ-որ բանի) համար:  
**selection** [səˈlektʃn] n ընտրում, ջոկում. ընտրություն. հավաքածու. ~ of paintings նկարների ընտրություն/հավաքածու. *make* ~s for the contest մրցույթի մասնակիցների ընտրություն կատարել. *կենս.* ընտրություն, սելեկցիա. natural ~ բնական ընտրություն. ~ committee ընտրական հանձնաժողով:  
**selective** [səˈlektiv] a ընտրող, տեսակավորող. ընտրողական, սելեկցիոն. ~ breeding ընտրովի բուծում/բազմացում. *be* not very ~ ոչ շատ խստապահանջ լինել, խստապահանջ չլինել:  
**self** [self] n սեփական անձը/ "ես" ը. the study of the ~ ինքնավերլուծություն. my (very) own ~ իմ սեփական անձը, ես ինքս. one's better ~ լավագույնը մարդու մեջ. one's second ~

ամենամոտ բարեկամը, աջ ձեռքը, երկրորդ  
 “ես” ը. the conscious ~ գիտակցությունը She  
 is her old ~ again Նորից այնպիսին է, ինչպի-  
 սին կար. ~ comes first, ~ before all (ամենից)  
 Առաջ էս, հետո մյուսները:

**self-acting** [ˌselfˈæktɪŋ] a ավտոմատ:

**self-assertion** [ˌselfəˈsɜːʃn] n սեփական  
 իրավունքների պաշտպանություն:

**self assurance** [ˌselfəˈʃɜːrəns] n ինքնա-  
 վստահություն:

**self-assured** [ˌselfəˈʃʊəd] a ինքնավստահ: ~  
 manner/young man ինքնավստահ պահվածք/  
 երիտասարդ:

**self-blaming** [ˌselfˈbleɪmɪŋ] a ինքն իրեն  
 ձաղկող/մեղադրող:

**self-centred** [ˌselfˈsentəd] a եսակենտրոն,  
 եսամոլ. էգոցենտրիկ:

**self-collected** [ˌselfkəˈlektɪd] a հանգիստ,  
 զուսպ, անվրդով. մտազգաստ:

**self-compiling compiler** [ˈself kəmˈpaɪlɪŋ  
 kəmˈpaɪlə] *հմկրգ.* տրանսլատոր:

**self-conceit** [ˌselfkənˈsiːt] n մեծամտություն,  
 ինքնավստահություն:

**self-conceited** [ˌselfkənˈsiːtɪd] a մեծամիտ,  
 ինքնավստահ:

**self-conscious** [ˌselfˈkɒnʃəs] a ամաչկոտ,  
 քաշվող. I felt ~ wearing that hat Ես շատ էի  
 ամաչում կրել այդ գլխարկը:

**self-consistent** [ˌselfkənˈsɪstnt] a տրամա-  
 բանական, ամբողջական:

**self-contained** [ˌselfkənˈteɪnd] a ինքնամ-  
 փոփ, ինքնուրույն, անկախ. a ~ flat առան-  
 ձին բնակարան:

**self-contained system** [ˌselfkənˈteɪnd  
 ˈsɪstəm] *հմկրգ.* փակ/ինքնաբավարար հա-  
 մակարգ:

**self-control** [ˌselfkənˈtrəʊl] n ինքնատիրա-  
 պետում. lose one's ~ ինքնատիրապետումը  
 կորցնել:

**self-criticism** [ˌselfˈkɪtɪsɪz(ə)m] n ինքնա-  
 քննադատություն:

**self deception** [ˌselfdɪˈsepʃn] n ինքնախա-  
 բեություն:

**self-defence** [ˌselfdɪˈfens] ինքնապաշտպա-  
 նություն. act in ~ գործել ինքնապաշտպա-  
 նության նպատակներով:

**self-denial** [ˌselfdɪˈnaɪəl] n ինքնահրա-  
 ժարում:

**self-descriptive** [ˌselfdɪsˈkɪptɪv] a *հմկրգ.*

ինքնանկարագրական:

**self-determination** [ˌselfdɪtəːmiˈneɪʃn] n  
 ինքնորոշում, վճռականություն:

**self-determined** [ˌselfdɪˈtɜːmɪnd] a ան-  
 կախ, ինքնուրույն:

**self-dual** [ˌselfˈdjuːəl] a *հմկրգ.* ինքնաերկա-  
 կի:

**self-educated** [ˌselfˈedʒukeɪtɪd] a ինքնուս,  
 ինքն իրեն կրթած:

**self-evident** [ˌselfˈeɪvɪdənt] a ակնհայտ:

**self-expression** [ˌselfɪkˈspreɪʃn] n ինքնաար-  
 տահայտում:

**self-government** [ˌselfˈgʌvnmənt] n ինք-  
 նակառավարում. ~ bodies ինքնակառավար-  
 ման/ինքնավարության մարմիններ:

**self-importance** [ˌselfɪmˈpɔːtəns] n մեծա-  
 մտություն, գոռոզություն:

**self-indulgent** [ˌselfɪnˈdʌldʒənt] a իրեն  
 հաճույքներից/ոչնչից չզրկող:

**self-interest** [ˌselfˈɪntrəst] n եսասիրություն,  
 էգոիզմ. անձնական հետաքրքրություն/ շահ:

**selfish** [ˈselfɪʃ] a եսասիրական. անձնապաշ-  
 տական:

**selfishness** [ˈselfɪʃnəs] n եսասիրություն,  
 եսամոլություն:

**selfless** [ˈselfləs] a ինքնազոհ, անշահա-  
 խնդիր:

**self-made** [ˌselfˈmeɪd] a ամեն ինչով իրեն  
 պարտական. a ~ man ամեն ինչի սեփական  
 ուժերով հասած մարդ:

**self-modifying** [ˌselfˈmɒdɪfaɪɪŋ] a *հմկրգ.*  
 ինքնաձևափոխվող, ինքնափոփոխվող:

**self-opinionated** [ˌselfəˈpɪnjəneɪtɪd] a ինք-  
 նավստահ, համառ:

**self-portrait** [ˌselfˈpɔːtrət] n ինքնանկար:

**self-possessed** [ˌselfpəˈzest] a ինքնազուսպ,  
 սառնասիրտ:

**self-preservation** [ˌselfprezəˈveɪʃn] n ինք-  
 նապահպանում. the instinct of ~ ինքնա-  
 պահպանման բնազդ:

**self-propelled** [ˌselfprəˈpeld] a ինքնա-  
 զնաց, ինքնաշարժ:

**self-relative addressing** [ˌselfˈrelatɪv  
 əˈdresɪŋ] *հմկրգ.* հարաբերական հաս-  
 ցեավորում:

**self-reliant** [ˌselfriˈlaɪənt] a ինքնավստահ,  
 սեփական ուժերին վստահ. հույսն իր վրա  
 դնող:

**self-reproach** [ˌselfriˈprəʊtʃ] n ինքնանա-

խատինք, ինքնակշտամբանք:  
**self-respect** [ˌselfriˈspekt] n սեփական ան-  
 ծի արժանապատվություն:  
**self-sacrifice** [ˌselfˈsækɹifaɪs] n անձնա-  
 ինքնազոհաբերություն:  
**selfsame** [ˈselfseɪm] a ճիշտ/հենց նույն:  
**self-satisfied** [ˌselfˈsætɪsfaɪd] a ինքնագոհ,  
 ինքնաբավական:  
**self-seeking** [ˌselfˈsiːkiŋ] a շահամոլ, շահա-  
 սեր:  
**self-service** [ˌselfˈsɜːvɪs] n ինքնասպասար-  
 կում. a ~ shop ինքնասպասարկման խա-  
 նութ:  
**self-starter** [ˌselfˈstɑːtə] n (ավտո) ավտո-  
 մատ ստարտեր ձգան:  
**self-sufficient** [ˌselfsəˈfɪʃnt] a ինքնաբավ.  
 ինքն իրեն ապահովող. The country is ~ in  
 fuel երկիրը իրեն լրիվ ապահովում է  
 վառելիքով:  
**self-supporting** [ˌselfsəˈpɔːtɪŋ] a ինքն իրեն  
 ապահովող. My daughter is ~ Աղջիկս ինքն է  
 իր ապրուստը վաստակում:  
**self-taught** [ˌselfˈtɔːt] a ինքնուս:  
**self-will** [ˌselfˈwɪl] n կամայականություն,  
 քմահաճություն:  
**self-willed** [ˌselfˈwɪld] a ինքնակամ,  
 քմահաճ:  
**sell** [sel] v վաճառել, ծախել. ~ cheap/ dear(ly)/  
 profitably էժան/թանկ/շահավետ վաճառել. ~  
 at a good price/loss լավ գնով/վնասով վաճա-  
 ռել. ~ off զեղչով/շտապ/ վաճառել ~ one's  
 life dearly *փիտք*. կյանքը թանկ ծախել. (վա-  
 ճառվել) The book is ~ing well *Գիրքը լավ է*  
 վաճառվում He knows how to ~ himself *Գիտի*  
 իրեն ինչպես ներկայացնի. This idea won't ~  
 Այս գաղափարը հաջողություն չի ունենա:  
**seller** [ˈselə] n վաճառող/- ուհի. վաճառվող  
 ապրանք. best ~ գնայուն ապրանք, մեծ հա-  
 ջողություն ունեցող գիրք. This model is a  
 good ~ Այս ձևը/տեսակը լավ է վաճառվում:  
**selling** [ˈselɪŋ] n վաճառք, իրացում, սպա-  
 ռում. ~ agent վաճառքի գործակալ. ~ price  
 շուկայական/վաճառքի գին:  
**sellotape** [ˈseləteɪp] n սքոչ, կպչուն ժա-  
 պավեն:  
**sell-out** [ˈseləut] n ամբողջ ապրանքի վա-  
 ճառք. The product is sold out Այս ապրանքը  
 լրիվ վաճառվել է. The concert is sold out  
 Համերգի տոմսերը սպառվել են:

**sell up** [ˈselʌp] v աճուրդով վաճառել. He  
 sold up and moved away Նա ամեն ինչ վա-  
 ճառեց և հեռացավ այդ վայրից:  
**selvage, selvedge** [ˈselvɪdʒ] n եզրաշերտ:  
**semantic** [səˈmæntɪk] a *լեզվ.* իմաստաբա-  
 նական, իմաստային. - network *հնկրգ.*  
 իմաստաբանական ցանց:  
**semantics** [səˈmæntɪks] n *լեզվ.* իմաստա-  
 բանություն:  
**semaphore** [ˈseməfɔː] n ազդանշանման  
 սարք/համակարգ. *երկթ.* լուսազդանշան  
 (սենաֆոր):  
**semasiology** [səˌmeɪziˈɒlədʒi] n *լեզվ.* իմաս-  
 տաբանություն:  
**semblance** [ˈseɪmbləns] n արտաքին տեսք.  
 խաբուսիկություն. առերևույթ բան. under the  
 ~ of որևէ բանի պատրվակով. a ~ of justice  
 առերևույթ արդարադատություն. put on a ~  
 of ձևացնել, ձևանալ. դիմակ հագնել. put on  
 a ~ of gaiety ձևացնել, որ ուրախ է. (նմանու-  
 թյուն) a feeble ~ թույլ նմանություն:  
**semen** [ˈsiːməɪn] n սերմ, սպերմա:  
**semester** [səˈmestə] n, a կիսամյակ (սե-  
 մեստր) կիսամյակի, կիսամյակային:  
**semibasement** [ˌsemiˈbeɪsmənt] n կիսա-  
 նկուղ:  
**semicircle** [ˈsemiːsɜːkl] n կիսաշրջան:  
**semicolon** [ˌsemiˈkəʊləɪn] n *քեր.* կետ-ստո-  
 թակետ (:):  
**semidarkness** [ˌsemiˈdɑːknəs] n կիսամութ:  
**semidetached** [ˌsemiˈdiːtætʃt] a կցապա-  
 տային, հարևան շենքի հետ ընդհանուր  
 պատ ունեցող. The house is ~ *Տունը կցա-*  
*պատային է:*  
**semifinal** [ˌsemiˈfaɪnəl] a *ճրգ.* կիսաեզրա-  
 փակիչ:  
**semifinished goods** [ˌsemiˈfɪnɪʃt ɡudz] n  
 կիսաֆաբրիկատներ, կիսապատրաստուրք,  
 կիսապատրաստ արտադրանք:  
**semifixed record** [ˌsemiˈfɪkst rekɔːd]  
*հնկրգ.* սահմանափակ երկարությամբ  
 գրառում:  
**semi-join** [ˌsemiˈdʒɔɪn] n թույլ միակցում:  
**seminary** [ˈseminəri] n հոգևոր ծննա-  
 րան/սեմինարիա. (թույսերի) տնկարան:  
**semiprecious** [ˌsemiˈpreʃəs] a կիսաթան-  
 կարժեք. a ~ stone կիսաթանկարժեք քար:  
**semi-structured data** [ˌsemiˈstrʌktʃəd  
 ˈdeɪtə] թույլ կառուցվածքային տվյալներ:

**semivowel** [ˈsemivauəl] *n* *լեզվ.* կիսածայ-  
նավոր:

**semolina** [ˌseməˈliːnə] *n* սպիտակածավար,  
մանրածավար. սպիտակածավարի շիլա:

**senate** [ˈsenət] *n* սենատ. գիտխորհուրդ  
(որոշ համալսարաններում):

**senator** [ˈsenətə] *n* սենատոր:

**send** [send] *v* ուղարկել. ~ to hospital/home  
**slip** [slɪp] v սահել, սայթաքել, խույս տալ. ~ on the ice սառույցի վրա սահել. ~ on the stairs աստիճաններին սայթաքել. The chance ~ped Չնարավորությունը բաց թողնվեց. Time ~ped ժամանակը թռավ. ~ one's attention ուշադրությունից դուրս մնալ. ~ one's memory գլխից դուրս թռնել. ~ away աննկատելի հեռանալ. ~ in/into խցկել, խոթել. He ~ped into French Նա աննկատելիորեն անցավ ֆրանսերենի. ~ off սահելով ընկնել, ցած սահել. The shawl ~ped off Շալը ուսերից ցած սահեց/ընկավ. ~ out դուրս սահել/սլլալ. The knife ~ped out Դանակը դուրս սահեց. ~ up սխալվել, սխալ թույլ տալ:

**slip-on** ['slɪpɒn] n ազատ/լայն զգեստ:

**slip-over** ['slɪp,əʊvə] n գլխից հագնվող զգեստ:

**slipper** ['slɪpə] n հողաթափիկ, տնային մաշիկ:

**slippery** ['slɪpəri] a ողորկ, սայթաքուն. *փխբ.* անվստահելի (մարդ). ~ ground սայթաքուն հող/հատակ. a ~ customer լարժուն անձնավորություն:

**slipshod** ['slɪpʃɒd] a փնթի, թափթփված. ~ style անփույթ ոճ:

**slipslop** ['slɪpslɒp] n *խսկց.* կեղտաջուր. *փխբ.* *խսկց.* անհամ/թույլ խմիչք:

**slipstream** ['slɪpstri:m] n *ավ.* օդային/օդի հոսանք:

**slip-up** ['slɪpʌp] n *խսկց.* սխալ. սայթաքում:

**slit** [slɪt] **1.** n ճեղք. նեղ, երկար բացվածք. the ~ of a letter-box փոստարկղի բացվածքը. a skirt with ~s կտրվածքներով շրջագետ. **2.** v կտրել (երկայնքով). ~ an envelope open ծրարը բացել:

**slither** ['slɪðə] v *խսկց.* սահել, սղլալ. The fish ~ed back into the water Ձուկը նորից (սահելով) ջուրն ընկավ:

**sliver** ['slɪvə] n տաշեղ. բարակ/փոքր կտոր:

**slobber** ['slɒbə] **1.** n լորժունք, թուք. *փխբ.* սենտիմենտալ շղակրատանք. **2.** v փսլինքը թափել, փսլնքոտել. *փխբ.* նվնվալ, լաց լինել:

**slobbery** ['slɒbəri] a փսլնքոտ, թքոտ:

**sloe** [sləʊ] n վայրի սալոր. ~ gin մրգոդի, բալոդի, սալորի օդի:

**slog** [slɒɡ] v ուժեղ խփել/հարվածել. ~ away/on ջանասեր աշխատել. He ~ged in the garden Նա ամբողջ ժամանակ աշխատում էր այգում:

**slogan** ['slɒɡən] n կարգախոս, կոչ:

**slop** [slɒp] v թափ(վ)ել, թափթփ(վ)ել. պռունկներից թափվել. ~ paint all over չորս կողմը ներկ թափել. The tea ~ped over Թեյը պռունկներից թափվեց:

**slop** [slɒp] n *խսկց.* պատրաստի հագուստ (էժանագին):

**slope** [sləʊp] n լանջ, զառիթափ, թեքություն. ~ of a roof տանիքի թեքվածքը:

**slope** [sləʊp] v զառիվայր իջնել/բարձրանալ. թեքվել. ~ backwards հետ թեքվել. ~ off *խսկց.* ծլկել, փախչել:

**sloping** ['sləʊpɪŋ] a թեք. ~ garden լանջի վրա գտնվող այգի. ~ writing թեք ձեռագիր:

**slop pail** ['slɒppeɪl] n աղբաջրի/կեղտաջրի դուլ:

**sloppy** ['slɒpi] a թաց, խոնավ (եղանակ).  
ցեխտոտ, ջրիկ. *խսկց.* անփույթ, փնթի. *փխբ.*  
սենտիմենտալ:

**slops** ['slɒps] n pl կեղտաջուր:

**slop-shop** ['slɒpʃɒp] n պատրաստի  
հալէգուստեղենի խանութ:

**slosh** [slɒʃ] v *խսկց.* թափել. ~ water on the  
steps աստիճաններին ջուր թափել:

**sloshed** [slɒʃt] a *խսկց.* հարբած, կատարը  
տաք. get ~ թունդ հարբել:

**slot** [slɒt] n (ավտոմատի) ճեղք. անցք մե-  
տաղադրամը գցելու համար. ~ machine  
ավտոմատ. find a ~ in the prog. *փխբ.* ծրագ-  
րի մեջ տեղ գտնել (լրացումներ կատա-  
րելու նպատակով):

**sloth** [sləʊθ] n ծուլություն, անփութաջա-  
նություն:

**slouch** [slaʊtʃ] 1. n կորացածություն,  
կուզիկություն. 2. v մեջքը կորացնել, կուզը  
դուրս գալ. անշնորհք մարդ. ~ about/around  
անգործ թափառել:

**slough** [slau] n ճահիճ, ճահճուտ. ճնշվածու-  
թյուն, ընկճվածություն:

**slovenly** ['slɒvnlɪ] a փնթի, թափթփված. 2.  
adv թափթփված ձևով:

**slow** [sləʊ] 1. a դանդաղ, դանդաղկոտ. a ~  
pulse դանդաղած զարկերակ. be ~ հետ  
մնալ. ~ of speech դանդաղ/հանգիստ խոսող.  
walk/work at a ~ pace դանդաղ քայլերով  
շարժվել. դանդաղեցրած տեմպերով աշ-  
խատել. a ~ oven դանդաղ/ ցածր կրակ. cook  
on a ~ flame ցածր/մարմանդ կրակի վրա  
պատրաստել. a ~ train դանդաղընթաց  
գնացք, փոստատար գնացք. a ~ poison  
դանդաղ ազդող թույն. Business is ~ **Գոր-**  
**ծերը** լավ չեն. a ~ game *փխբ.* անհե-  
տաքրքիր/տաղտկալի խաղ/կյանք. The  
progress is ~ Աշխատանքը դանդաղ է առաջ  
գնում. (դանդաղաշարժ) He's very ~ Նա  
շատ դանդաղաշարժ է. ~ to anger դժվա-  
րությամբ համբերությունը կորցնել. ~ to an-  
swer դանդաղել պատասխան տալ. a ~ de-  
veloper դանդաղ զարգացում. The watch is ~  
ժամացույցը հետ է. 2. adv դանդաղ,  
դանդաղորեն. She'll have to go ~ *փխբ.* Նա  
պետք է ավելի շրջահայաց լինի:

**slow** [sləʊ] v դանդաղել, դանդաղեցնել. ~

down one's pace քայլերը դանդաղեցնել. The  
traffic ~ed down Երթևեկությունը դանդաղեց:

**slowcoach** ['sləʊkəʊtʃ] n դանդաղկոտ/  
ժամրամիտ մարդ. հետամնաց մարդ:

**slowdown** ['sləʊdaʊn] n դանդաղեցում, ար-  
գելակում. work ~ աշխատանքի թափը նվա-  
զեցնելը:

**slowmotion** [,sləʊ'məʊn] n (կինո) դան-  
դաղեցված նկարահանում:

**slow-witted** [,sləʊ'wɪtɪd] a բթամիտ, դան-  
դաղամիտ:

**sludge** [slʌdʒ] n թանձր ցեխ, տիղմ:

**sludgy** ['slʌdʒi] a ցեխտոտ, տղմոտ:

**slug** I [slʌg] n ուժեղ հարված բռունցքով. a ~  
of whisky մի կում վիսկի:

**slug** II [slʌg] n *կենդ.* լորձնամոլոսկ, լորձն-  
էակ. *ամ.* 5-ցենտանոց ժետոն. հրացանի  
գնդակ:

**sluggard** ['slʌgəd] 1. n ծուլ/անբան մարդ.  
2. a ծուլ, անբան:

**sluggish** ['slʌgɪʃ] a ծուլ, անբան. դան-  
դաղկոտ, դանդաղաշարժ. The engine is ~  
*խսկց.* Շարժիչը չի ձգում/չի քաշում. ~ cir-  
culation դանդաղեցրած շրջանառություն:

**sluice** [slu:ɪs] n ջրարգելակ, շյուղ. լվացում:

**sluice** [slu:ɪs] v լվացում կատարել, ողողել. ~  
down the decks տախտակամածը լվանալ.  
ջրարգելակներ կառուցել, շյուղավորել. ~  
gate ջրարգելակի փակոց, սահանադուռ:

**slum** [slʌm] n հետմախորշ. քաղաքի խուլ  
անկյուն. խարխուլված տներ (*slum* ~s):

**slumber** ['slʌmbə] 1. n քուն. leaden ~ ծանր  
քուն. 2. v քնել, նիրհել:

**slumberous** ['slʌmbərəs] a քնկոտ. քուն  
բերող:

**slump** [slʌmp] n խիստ անկում. տնտեսա-  
կան ճգնաժամ. թրմփոց. a ~ in oil produc-  
tion/prices նավթաարդյունահանման/գների  
խիստ անկում:

**slump** [slʌmp] v գների կտրուկ/խիստ  
ընկնելը. ծանր վայր ընկնելը. He ~ed into a  
chair Նա թրմփաց աթոռին:

**slur** [slɜ:] n բիծ, արատ (անվան վրա). *երժշ.*  
լիգա, լեգատո. հնչյունների կուլ տալը/  
միախառնվելը. cast a ~ on smb մեկին արա-  
տավորել:

**slur** [slɜ:] v բառեր/հնչյուններ կուլ տալ.  
արատավորել, անարգել. His speech is ~red  
Նրա խոսքը անհասկանալի/անպարզա-



հունչ է. ~ over ուշադրություն չդարձնել, շրջանցել. ~ over the subject թեման շրջանցել:

**slush** [sɪʌʃ] a կրահող. ցեխախառն ծյուն. ջրիկ ցեխ. *փխբ.*, *խսկց.* սենտիմենտալ շաղակրատանք:

**slushy** [ˈsɪʌʃi] a ցեխոտ, ջրկացեխոտ:

**slut** [sɪʌt] n թափթփված/փնթի կին. վատ վարքի տեր կին:

**sluttish** [ˈsɪʌtʃi] a փնթի, թափթփված:

**sly** [slai] a խորամանկ, նենգ. a ~ dog *խսկց.* խարդախ շուն. n on the ~ գաղտագողի:

**smack** I [smæk] 1. n համ, հոտ, բույր. ~ of garlic սխտորի համ. 2. v համ ունենալ. ~ of garlic սխտորի համ ունենալ:

**smack** II [smæk] n ափահարված, հարված. give a hard ~ ուժեղ հարվածել:

**smack** III [smæk] n (*ճակ. fishing* ~) ձկնորսանավ(ակ):

**smack** [smæk] v հարված հասցնել. ~ one's face ապտակել (դեմք). ~ the paper on the table թերթը սեղանին շարտել. ~ one's lips (շպպացնելով) շրթունքները համբուրել:

**smack** [smæk] adv *խսկց.* ուղիղ, ուղղակի. ճիշտ կետին. ~ in the middle ուղիղ մեջտեղում. run ~ into the wall պատին մխրձվել:

**smacking** [ˈsmækiŋ] n ծեծ, քոթակ. He needs a good ~ Նրան մի լավ քոթակ է պետք:

**small** [smɔ:ɪ] a փոքրիկ, պստիկ. աննշան. a ~ girl/house փոքրիկ աղջիկ, ոչ մեծ տուն. ~ town/dose փոքրիկ քաղաք/չափաբաժին, դեղաքանակ. on a ~ scale փոքրիկ մասշտաբով. (մանր) ~ business/farmers փոքր ձեռնարկություն, մանր ֆերմերներ. ~ print մանր տառատեսակ. a ~ eater քչակեր. S~wonder Ջարմանալի չէ. make smn look/feel ~ մեկին ստորացնել. ~ arms թեթև հրազեն. ~ hours Ժ 24 – ից մինչև առավոտյան 3 – 4 – ը. ~ holder մանր սեփականատեր. ~ minded մանր, մանրախնդիր. եսամոլ. ~ scale փոքր մասշտաբի. ~ talk դատարկ խոսակցություն/շաղակրատանք. *հմկրգ.* դեպի օբյեկտը կողմնորոշված լեզու:

**smallish** [ˈsmɔ:ɪʃ] a պստիկ, մանրիկ:

**smallpox** [ˈsmɔ:ɪpɒks] *բժշկ.* ծաղիկ (հիվանդություն):

**small town** [ˈsmɔ:ɪtaʊn] n գավառական:

**small time** [ˈsmɔ:ɪˈtaɪm] a a ~ thief *խսկց.* մանր զող:

**smart** [smɑ:t] n շքեղ, նրբագեղ, պերճաշուք, մոդայիկ. *հմկրգ.* խելացի, ինտելեկտուալ. a ~ coat մոդայիկ վերարկու. look ~ պերճաշուք/լեզամտ տեսք ունենալ. a ~ car/house շքեղ մեքենա/տուն. the ~ set վայելուչ հասարակությունը. (խելացի, խելոք, խորաթափանց, ըմբռնող) a ~ answer խելամիտ պատասխան. a ~ chap/guy *խսկց.* խելացի/խելքը գլխին տղա. a ~ one *խսկց.*, *բցսկ.* խորամանկ սատանա. a ~ trick խորամանկ/ճարպիկ ձեռնածություն. (եռանդուն, արագաշարժ) ~ work արագ/ճարպիկ աշխատանք. a ~ box in the ear դեմքին մի լավ հասցնել. ~ alec(k) *խսկց.* խելքի տոպրակ, իրեն խելոք կարծել: ~ programmer *հմկրգ.* պրոֆեսիոնալ ծրագրող:

**smart** [smɑ:t] v կսկծալ, մրմռալ, ցավել. այրել. The wound is ~ing վերքը մրմռում է. My eyes are ~ing Աչքերս կծկծում են. Iodine ~s Յոդը վառում է:

**smarten** [ˈsmɑ:tn] v պճնվել, զուգվել. ~ up զուգել, զարդարել. ~ up for dinner ճաշի համար զուգվել/զեղեցիկ զգեստ հագնել:

**smash** [smæʃ] n ջարդում, ջարդելը. աղետ, վթար. սնանկացում. a car ~ մեքենայի վթար/աղետ:

**smash** [smæʃ] v ջարդոտ/վել. ջարդուփշուր լինել/անել. սնանկանալ. ~ open the door դուռը ջարդելով բացել. ~ the enemy թշնամուն ջախջախել. ~ a revolt խռովությունը ճնշել. The cars ~ed into each other Մեքենաները իրար բախվեցին. ~ the ball *մրգ.* գնդակին ուժեղ հարվածել. ~ up լիակատար ջախջախում. badly ~ed up ծանր վնասվածքներ կրած. smash-and-grab (raid) թալանչիական հարձակում:

**smasher** [ˈsmæʃə] n *խսկց.* ծանր ուժով հարված. համոզիչ փաստարկ:

**smashing** [ˈsmæʃiŋ] a *խսկց.* ցնցող. շշմեցուցիչ. We had a ~ time ցնցող ժամանակ անցկացրինք. She's ~! Նա շշմեցուցիչ է:

**smatter** [ˈsmætə] v մակերեսորեն/վայրիվերո իմանալ:

**smatterer** [ˈsmætərə] n մակերեսային գիտելիքների տեր անձ. դիլետանտ. *հեզմ.* ամենագիտակ, իմաստակ:

**smattering** [ˈsmætəriŋ] n մակերեսային գիտելիքներ. դիլետանտություն:

**smear** [smiə] n բիծ, կեղտաբիծ. *արվ.*

վրձնախաղ. *բժշկ.* քսուք. a ~ of paint/blood ներկի վրձնախաղ. արյան քսուք. a ~ on reputation *փխբ.* բիծ անվան վրա. a ~ test *բժշկ.* քսուք հետազոտության/անալիզի համար. a ~ campaign *փխբ.* զրպարտչության կազմակերպում/կամայանիա:

**smear** ['smiə] v քսել, կեղտոտել, արատավորել. ~ paint on the walls պատերին ներկ քսման. hands ~ed with grease յուղոտված ձեռքեր:

**smeary** ['smiəri] a կաչուն, մածուցիկ. կեղտոտ, ապականված:

**smell** [smel] n հոտառություն, հոտ. strong/faint/horrible/bad ~ ուժեղ/թույլ/ահավոր, սարսափելի/վատ հոտ. disgusting ~ զգվելի զարշահոտություն. fragrant ~ բուրմունք. a ~ of powder *փխբ.* մարտական փորձառություն. take/have a ~ at հոտոտել, հոտ քաշել. keen sense of ~ սուր/նուրբ հոտառություն. a ~ of burning վառածի հոտ:

**smell** [smel] v հոտ քաշել, հոտոտել. ~ a rose վարդից հոտ քաշել. ~ danger վտանգ զգալ. ~ a rat *փխբ.* վատ բան (նախա)զգալ. (հոտ ունենալ/արծակել) ~ of garlic սխտորի հոտ ունենալ/արծակել. It ~s of treachery *փխբ.* Սրանից դավաճանության հոտ է գալիս:

**smelling-salts** ['smeliŋsɔ:ltz] n հոտ քաշելու աղ. գլխացավը վերացնելու միջոց:

**smelly** ['smeli] a զարշահոտ, հոտած:

**smelt** [smelt] v հալել, հալելով զտել/ստանալ:

**smelter** ['smeltə] n հալոցարան, մետաղածուլարան:

**smeltery** ['smeltəri] n մետաղածուլական գործարան:

**smile** [smail] n ժպիտ. charming/bitter/timid/encouraging/forced ~ հմայիչ/դառը/երկչոտ, խղճուկ/խրախուսող/հարկադրական ժպիտ. break into a ~ ամբողջ դեմքով ժպտալ ժպտալուց դեմքը լայնանալ/ raise a ~ ժպիտ առաջացնել. give a ~ ժպտալ:

**smile** [smail] v ժպտալ. ~ approval հավանությանը ժպտալ. Keep smiling ! Քիթը մի՛ կախի. Fortune ~s upon him Բախտը ժպտում է նրան:

**smirch** [smə:tʃ] 1. n բիծ (*սովբ. փխբ.*) 2. v կեղտոտել, բիծ դնել. *փխբ.* արատավորել, խայտառակել:

**smirk** [smə:k] 1. n բռնազբոսիկ/հեզնական

ժպիտ. 2. v բռնազբոսիկ/հեզնական ժպտալ:

**smith** [smiθ] n դարբին:

**smithereens** [,smiðə'ri:nz] n բեկորներ, փշուրներ, կտորտանք. smash into ~, break to/in ~ ջարդուփշուր անել/լինել:

**smithery** ['smiðəri] n դարբնի արհեստ, դարբնություն:

**smithy** ['smiði] n դարբնոց:

**smitten** ['smitn] a համակված, տարված. ~ with remorse խղճի խայթով համակված be ~ with smn *խսկց.* սիրահարված լինել. He is badly ~ with her Նրա համար խելքը գնում է:

**smock** [smɒk] n բլուզ, աշխատանքային հագուստ. հղի կնոջ հագուստ. ~ frock հատուկ հագուստ, արտահագուստ:

**smog** [smɒg] n թունամշուշ, սմոգ:

**smoke** [sməuk] n ծուխ, մուխ. dense, thick/black ~ թանձր/սև ծուխ. a cloud/pillar of ~ ծխի ամպ/սյուն. No ~ without fire Առանց կրակ ծուխ չկա. go up in ~ այրվել, ոչնչանալ. *փխբ., խսկց.* կատաղել. end in ~ ապարդյուն վերջանալ. (ծխելը) have a ~ ծխել. a ~ after lunch ճաշից հետո ծխելը. a break or a ~ ծխելու ընդմիջում. I haven't got a ~ *խսկց.* Ծխելու բան չունեմ:

**smoke** [sməuk] v ծխել. ապխտել. ~ like a chimney ահավոր շատ ծխել. (ծխալ) The stove ~s badly Վառարանը շատ ուժեղ ծխում է. ~ meat/ham/fish միս/ծուշ, ապխտել:

**smoke-ball** ['sməukbɔ:l] n ծխառումբ:

**smoked** [sməukt] a ծխառումբ. ~ glass ծխագույն ապակի:

**smokeless** ['sməukləs] a անծուխ:

**smoker** ['sməukə] n ծխող. վազոն ծխողների համար. a heavy ~ թունդ ծխող:

**smoke-screen** ['sməukskri:n] n ծխածածկույթ. put up a ~ ծխածածկույթ առաջացնել/ստեղծել:

**smoking-carriage** ['sməukiŋ,kæridʒ] n վազոն ծխողների համար. ~ compartment ծխողների կուպե. ~ room ծխելու սենյակ, ծխարան:

**smoke signal** ['sməuksignl] n ծխի ազդանշան:

**smoky** ['sməuki] a ծխալից, ծխախառն, ծխագույն a ~ atmosphere ծխալից մթնոլորտ. a ~ flavour ծխահամ. ~ grey ծխամոխրագույն, երկնամոխրագույն:

**smooth** [smu:ð] a հարթ, կոկ, ողորկ. ~ surface/stone/face հարթ մակերես/ քար/ դեմք. a ~ road հարթ/ուղիղ ճանապարհ. ~ sea/ ocean հանդարտ ծով/օվկիանոս. a ~ decent/take off բարեհաջող/հանգիստ վայրէջք/թռիչք. a ~ crossing հանգիստ ծովային ճամփորդություն. (մարդկանց մասին) ~ manners փաղաքուշ շարժումն ~ tongue մեղուշ լեզու. լեզվանի. ~ type սղալած/սղալված տիպ:

**smooth** [smu:ð] v հարթ/ողորկ դարձնել. կոկել, հարթել. վերացնել. ~ one's hair մազերը կոկել/հարթել. ~ way for smb *փխք*. մեկի համար ճանապարհ հարթել. ~ down հանգստացնել, խաղաղեցնել. ~ out հարթեցնել. ~ over differences տարբերությունները վերացնել:

**smooth-faced** [ˈsmu:ðfeist] a հարթ/մաքուր սափրված. դեմքի նուրբ/հարթ մաշկ. *փխք*. կեղծավոր, երկերեսանի:

**smoothly** [ˈsmu:ðli] adv հարթ կերպով. ուղիղ. անխափան կերպով. *խսկց*. բարեհաջող. Everything is going ~ Ամեն ինչ հարթ/լավ է գնում. The engine is running ~ Մեքենան անխափան է աշխատում:

**smother** [ˈsmʌðə] v խեղդել, խեղդամահ անել. ~ the flames կրակը մարել. (զսպել) ~ a yawn/anger հորանջը/զայրույթը զսպել:

**smoulder** [ˈsməʊldə] v մարմանդ/թույլ վառվել, մխալով այրվել. The logs were ~ing Գերանները մարմանդ վառվում էին. (զաղտնի տհաճ զգացմունք տածել). Her resentment ~ed Նրա մեջ աճում էր վրդովմունքը:

**smudge** [smʌdʒ] n բիծ, կեղտաբիծ. ծխացող խարույկ:

**smudge** [smʌdʒ] v կեղտոտել, կեղտի բծեր դնել. քսելով կեղտոտել. The address is ~d Գրասեն ջնջվել/սրբվել է. The rain ~d the paint Անձրևը մաքրել-տարել էր ներկը:

**smug** [smʌg] a հնքնագոհ, հնքնաբավական:

**smuggle** [smʌgl] v մաքսանենգությամբ զբաղվել. ~ in մաքսանենգորեն ներմուծել. ~ out մաքսանենգորեն արտահանել:

**smuggler** [ˈsmʌglə] n մաքսանենգ, մաքսանենգ մարդ:

**smuggling** [ˈsmʌglin] n մաքսանենգություն. be engaged in ~ մաքսանենգությամբ զբաղվել:

**smut** [smʌt] n մուր. a ~ on your nose մուր քթի վրա. անվայել/անպարկեշտ բան. Don't talk

~ Անպարկեշտ/Անվայել բաներ դուրս միտա:

**smutty** [ˈsmʌti] a կեղտոտ, աղտոտ. անվայել, անպարկեշտ:

**snack** [snæk] n թեթև/հապճեպ մախաճաշիկ. have a ~ թեթև մախաճաշել, ոտքի վրա մի բան ուտել. ~s աղանդեր:

**snag** [snæg] n արգելք, խոչընդոտ. անպատելի դժվարություն. That's the ~ Ահա թե ինչն է բարդությունը:

**snail** [sneil] n խխունջ. at a ~ space կրիայի քայլերով, շատ դանդաղ:

**snake** [sneik] n օձ. *փխք*. չար/նեղամիտ մարդ. a ~ in the grass *փխք*. անտեսանելի թշնամի, թաքուն վտանգ a ~ in one's bosom կրծքի վրա տաքացրած օձ, ապերախտ մարդ:

**snaky** [ˈsneiki] a օձի, օձային. չարամեղ. օձերով լի:

**snakebite** [ˈsneikbait] n օձի խայթ:

**snap** [snæp] n ճաթյուն, շաչյուն. ջրխկոց, շրխկոց. a ~ of fingers մատները ջրթացնելը a cold ~ *օղերթ*. անսպասելի, կտրուկ ցուրտ. (\$ոտո) լուսանկար I'll take a ~ of you Կնկարեմ քեզ, կչ(ր)խկացնեմ:

**snap** [snæp] a շտապ, հապճեպ. a ~ decision հապճեպ որոշում. ~ election արտահերթ ընտրություն:

**snap** [snæp] adv հանկարծ. ճրթճրթալով. The branch went ~ Ծյուղը հանկարծ, ճրթճրթալով կտրվեց:

**snap** [snæp] v կտրել. շրխկացնել. սողնակել. ~ the stick in two փայտը երկու կես անել. ~ shut փակել. ~ the bag shut պայուսակը փակել. take a ~ shot վայրկյանական նկարել. (\$ոտո) վայրկենապես նկարահանել (չխկացնել) The rope ~ped պարանը կտրվեց. The dog ~ped his leg շունը բռնեց նրա ոտքը. ~ off պոկել, փրցնել. ~ out միանգամից ասել. ազատվել, թոթափել. ~ out of depression մեղամոռությունը/մռայլ տրամադրությունը թոթափել. ~ up արագ գնել, թռցնել. All the hats were ~ped Գլխարկներն արագ վաճառվեցին/սպառվեցին:

**snapdragon** [ˈsnæp,dræɡən] n *բուս.* առյուծաբերան:

**snapfastener** [ˈsnæp,fa:snə] n սևեռագամ, կոճգամ:

**snappy** [ˈsnæpi] a կատաղի, կծան/շուն/.

ճարպիկ, եռանդուն. a ~ answer ճարպիկ պատասխան. Look ~ ! Be ~ about it! Make it ~ ! Արագ, եռանդով:

**snapshot** ['snæpʃɒt] n վայրկենական լուսանկար. take a ~ արագ լուսանկարել:

**snare** [sneə] 1. n թակարդ, ծուղակ. 2. v ծուղակը գցել, թակարդով բռնել:

**snarl** [sna:l] 1. n գռմռոց, մռթմռթոց. 2. v գռմռալ. ~ out մռնչալ, կատաղած խոսել:

**snarl** [sna:l] 1. n խճճված դրուբյուն. 2. v ~ up խառնել, խճճել.

**snatch** [snætʃ] n բռնելու/խլելու/ճանկելու փորձ. make a ~ փորձել բռնել/ճանկել. (հատված, կտոր) ~es of "Carmen" հատվածներ "Կարմեն" օպերայից. ~es of conversation խոսակցության բեկորներ. work/sleep in ~es աշխատել/քնել ընդհատումներով:

**snatch** [snætʃ] v ճանկել, խլել, հափշտակել. He ~ed the pen from my hand Գրիչը ձեռքիցս խլեց. ~ off պոկել, թռցնել. ~ out դուրս կորզել:

**snatchy** ['snætʃi] a ընդհատուն, անկապ, կցկտուր. ջղաձգային:

**snazzy** ['snæzi] a *խսկց.* պճնամուլային. պիժոնական:

**sneak** [sni:k] n մատնիչ, զրպարտիչ:

**sneak** [sni:k] v *խսկց.* ~ about/around գաղտագողի շարժվել ~ off դուրս պրծնել. ~ up from behind աննկատելի հետևից մոտենալ. ~ up on smb *դպր.* մատնել, լուր (խաբար) տալ. (խաբար բզիկ):

**sneaker(s)** ['sni:kə(z)] n մատնիչ, զրպարտիչ. բամբասան. *խսկց., մրգ.* մաշիկ (չստեր):

**sneaking** ['sni:kiŋ] a թաքուն, ոչ ակնհայտ. have ~ sympathy հոգում կարեկցել. ~ suspicion ոչ ակնհայտ կասկած:

**sneaky** ['sni:ki] a վախկոտ, ստոր:

**sneer** [sniə] 1. n քմծիծաղ, հեզմական ժպիտ. ծաղրանք, ծաղր. 2. v ծաղրել, ծանակել. ~ one down մեկին ծաղրի ենթարկել:

**sneering** ['sniəriŋ] a ծիծաղելի:

**sneeze** [sni:z] 1. n փռշտոց. a loud ~ բարձր փռշտոց. 2. v փռշտալ. not to be ~d at *փխբ.* ինչ չի կարելի հաշվի չառնել:

**snick** [snik] 1. n կտրվածք. 2. v կտրվածք անել:

**sniff** [snif] n ֆսֆսոց, փնչոց. քիթը վեր քաշելը. փռթկոց:

**sniff** [snif] v ֆսֆսալ. հոտ քաշել. *փխբ.* հոտն առնել. Can you ~ gas/smoke? Գազի/Ծխի հոտ չե՞ս առնում. (քիթը վեր քաշել). Don't ~ քիթդ վեր մի քաշի. ~ around հոտոտել. Not to be ~ed at *փխբ., խսկց.* Չի կարելի արհամարհել:

**sniffle** [snifl] v ֆսսացնել, քթով օդը աղմուկով ներս քաշել. քիթը վեր քաշել:

**sniffy** ['snifi] a արհամարհական. վատ հոտ ունեցող:

**snigger** ['snigə] 1. n քմծիծաղ, զսպված ծիծաղ. 2. v քմծիծաղել. ~ about/at smth որևէ բանի վրա քմծիծաղել:

**snip** [snip] n կտոր, կտորտանք. Cut off a ~ of the material գործվածքից մի կտոր կտրել. ~s մետաղ կտրելու մկրատ. It's a ~ *խսկց.* Շատ էժան է, Ավելի էժան հնարավոր չէ:

**snip** [snip] v կտրել. ~ the ends of the rope պարանի ծայրերը կտրել:

**snipe** [snaip] 1. n *կենդ.* մորակտցար (բեկաս). *փխբ.* միամիտ/անխելք մարդ. 2. v թաքստոցից կրակել. չարախնդալ, խայթել:

**sniper** ['snaipə] n դիպուկահար/անվրեպ կրակող. սնայպեր:

**snippy** ['snipi] a կցկտուր, անկապ. ընդմիջվող, ընդհատումներով:

**snivel** ['snivl] 1. n թնզթնզոց. փսլինք, խլինք. 2. v թնզթնզալ, նվնվալ:

**snob** [snɒb] n պճնամուլ/մոդայամուլ մարդ. սնոբ:

**snobbery** ['snɒbəri] n սնոբիզմ:

**snood** [snu:d] n ցանց մազերի համար:

**snook** [snu:k] n *խսկց.* քիթ. cock a ~ at smb մեկին քիթ ցույց տալ:

**snooker** ['snu:kə] n սնուկեր. *մրգ.* խաղ. (բիլյարդի տեսակ):

**snoop** [snu:p] v *խսկց.* քիթը ուրիշի գործերի մեջ խոթել (լրտեսել) He was ~ing round my study Ինչ-որ բան էր փնտրում իմ աշխատասենյակում:

**snoot** [snu:t] n *խսկց.* քիթ, մռուք, ռեխ:

**snooze** [snu:z] n կարճատև քուն/նիհնջ. ~ in the sun արևի տակ ննջել:

**snore** [snɔ:] 1. n խռմփոց, խռմփալը. loud ~s բարձր խռմփոց. 2. v խռմփացնել. ~ a little թեթև խռմփացնել:

**snorkel** ['snɔ:kəl] n ակվալանգի խողովակ:

**snort** [snɔ:t] 1. n փռնչոց, փռնչացնելը. (ծի). 2. v փռնչացնել, փռնչացնել:

**snorter** [ˈsnɔ:tə] *n* *խոսք*. գլխացավանք (առաջացմունք). That's a ~ of a problem *Գլուխ կտորելու պրոբլեմ է*:

**snout** [snaʊt] *n* *դրոն*, *մուկ*:

**snow** [snəʊ] *n* *ձյուն*. *փխր*. ճերմակ մազեր, սպիտակություն: deep/clean/heavy/wet /powder ~ խոր/մաքուր/խոնավ/ուժեղ/մանր ձյուն a heavy fall of ~ ձյունատեղում. ~ bank ձնակույտ. ~ fence ձնապաշտպան ցանկապատ. ~ line ձյան սահմանագիծ.

**snow** [snəʊ] *v* *ձյուն* գալ. It's ~ing *Ձյուն է գալիս*. It ~ed all day *Ամբողջ օրը ձյուն եկավ*. ~ off *ձյան պատճառով հետաձգել*. The game was ~ed off *Խաղը հետաձգվեց ձյան պատճառով*. ~ under տակը թաղվել/մնալ. He was ~ed under the letters *Նա թաղվել էր նամակների մեջ*. ~ up *The road is ~ed up* *Ձյունը փակել է ճանապարհը*:

**snowball** [ˈsnəʊbɔ:l] **1.** *n* *ձնագնդիկ*. play ~ *ձնագնդիկ խաղալ*. **2.** *v* *ձնագնդիկ խաղալ*, *իրար վրա ձյուն զգել*. The boys were ~ing each other *Տղաները իրար հետ ձնագնդիկ էին խաղում*:

**snowblind** [ˈsnəʊblaɪnd] *n* *ձնակուրություն*:

**snow-bound** [ˈsnəʊbaʊnd] *a* *ձյունով ծածկված*, *ձյունապատ*. *ձյան պատճառով շրջապատից կտրված*:

**snow-capped** [ˈsnəʊkæpt] *a* *ձնապատ*, *ձյունածածկ*:

**snow-clad** [ˈsnəʊklæd] *a* *ձյունապատ*, *ձյունով ծածկված*:

**snowdrift** [ˈsnəʊdrɪft] *n* *ձնակուտակ*, *ձնակույտ*. *ձնահյուս*:

**snowdrop** [ˈsnəʊdrɒp] *n* *ձնծաղիկ*:

**snow-fall** [ˈsnəʊfɔ:l] *n* *ձյունատեղում*, *ձյուն գալը*. *տեղումների քանակը*:

**snow-flake** [ˈsnəʊfleɪk] *n* *ձյան փաթիլ*:

**snowman** [ˈsnəʊmæn] *n* *ձնե մարդ*:

**snowplough** [ˈsnəʊplau] *n* *ձյուն մաքրող մեքենա*, *ձյունամաքրիչ*:

**snow-shoe** [ˈsnəʊʃu:] *n* *ձյունամուճակ*:

**snowslide** [ˈsnəʊslɑɪd] *n* *ձյունակրկնակոշիկ*:

**snow-storm** [ˈsnəʊstɔ:m] *n* *բուք*, *բորան*, *ձյունահողմ*:

**snow-white** [ˌsnəʊˈwaɪt] *a* *ձյունափայլ*. *ձյան պես ճերմակ*:

**snowy** [ˈsnəʊi] *a* *ձյունային*, *ձյունապատ*, *ձյունածածկ*. *ձնառատ*. *փխր*. *մաքուր* *a* ~

winter *ձյունոտ ձմեռ*. *a* ~ roof *ձնապատ տանիք*:

**snub** [snʌb] **1.** *n* *նախատինք*, *կշտամբանք*. It was a ~ *Դա նախատինք էր*. **2.** *v* *նախատել*, *հանդիմանել*. *տեղը դնել*:

**snub** [snʌb] *a* *վեր գցված*, *կճատ* (*քիթ*):

**snubby** [ˈsnʌbi] *a* *վեր գցված*, *կճատ*. *արհամարհական*:

**snub-nosed** [ˌsnʌbˈnəʊzɪd] *a* *կճատ*, *վեր գցված թթվ*. *կճատաքիթ*:

**snuff** I [snʌf] *n* *քթախտ*. take ~ *քթախտ քաշել*. a pinch of ~ *մի պտղունց քթախտ*. ~ box *քթախտատուփ*:

**snuff** II [snʌf] **1.** *n* *մոմի այրոց*. **2.** *v* *մոմի այրոցը կտրել/հանել*. ~ out a candle *մոմը հանզգնել*:

**snuff** [snʌf] *v* *քթախտ քաշել*, *հոտ քաշել*. *արհամարհանք արտահայտել*:

**snuff-coloured** [ˈsnʌf,kɒləd] *a* *ծխախտազույն*, *դեղին դարչնազույն*:

**snuffers** [ˈsnʌfəz] *n* *մոմի այրոցը կտրելու ունեղի*:

**snuffy** [ˈsnʌfi] *a* *դեղնած*. *խոսք*. *գրգռված*, *զայրացած*. *անդուր*, *տհաճ*:

**snug** [snʌg] *a* *հարմարավետ*, *հանգստավետ*. *a* ~ little room *փոքրիկ բարեհարմար սենյակ*. (*վրան կիպ նստող*) The coat is a ~ fit *Վերարկուն լավ է նստած*. (*թաքուն*, *ծածուկ*) lie ~ *թաքնվել*, *պահվել*:

**snuggery** [ˈsnʌgəri] *n* *հարմարավետ սենյակ*. *հանգստավետ տեղ*:

**snuggle** [ˈsnʌgl] *v* *սեղմվել*, *հպվել*, *փարվել*. The child ~d up to its mother *Երեխան փարվել էր մորը*:

**SO** [səʊ] **1.** *adv* *այսպես*, *այդպես*, *այնպես*. ~ glad/happy *այնքան ուրախ/երջանիկ*. I think ~ *Ես այդպես եմ կարծում*. Կարծում եմ, որ. I don't think ~ *Չեմ կարծում*, *Հագիլ թե*. if ~ *եթե այդպես է*. Is that ~? *Մի՞թե*. ~ much the better *ավելի լավ*. ~ far as որքանով. ~ long as քանի դեռ. *պայմանով որ*. ~ far առայժմ. It's not ~ *Դա այդպես չէ*. S~ be it *Թող այդպես լինի*. ~ to speak *այսպես ասած*. ~ as not *որպեսզի չ...* and ~ on/forth *և այլն*, *և այլն*. why ~ ? *Իսկ ինչո՞ւ (հաստատում)* You look tired. and ~ I am *Դուք հոգնած տեսք ունեք*. Ես իսկապես հոգնած եմ. (*նույնպես*) I was there. And ~ was I *Երեկ ես այնտեղ էի*. Ես նույնպես. ~ that, ~ as to *որպեսզի*. He was ~

week եւ այնքան թույլ էր. You don't say ~ Չի կարող պատահել. or ~ կամ մոտավորապես. **2.** conj (and) ~ հետևաբար, այնպես որ. **3.** int դե՛, վերջ, հերի՛ք է. ~ what ~? դե ի՞նչ. So that's that Ահա և ամենը:

**soak** [səʊk] **n** թրջում, թրջոց դնելը. *խսկց.* տեղատարափ/հորդ անձրև. *խսկց.* գինարբուք, հարբեցողություն. give the cloth a good ~ կտորը մի լավ թրջել. (գրավ) put in ~ գրավ դնել:

**soak** [səʊk] **v** թրջ(վ)ել. ~ cloth in die կտորը ներկի մեջ ընկղմել. get ~ed թրջվել. ~ed to the skin մինչև ոսկորները թրջված. leave the pan to ~ տապակը թրջոց դնել. ~ in խորանալ, խորասուզվել. ներծծվել. ~ in music երաժշտությամբ տարվել. ~ up ներծծել. The sponge ~ed up the water Սպունգը ջուրը ներծծեց:

**soaker** [ˈsəʊkə] **n** տեղատարափ/հորդ անձրև. *խսկց.* թունդ հարբեցող, գինեմոլ:

**soaking** [ˈsəʊkɪŋ] **a** My coat is ~ wet Վերարկուս լրիվ թրջված է:

**so-and-so** [ˈsəʊənsəʊ] **n** այսինչը. Mr ~ պարոն այսինչը:

**soap** [səʊp] **n** օճառ. soft ~ հեղուկ օճառ. ~ powder վլացքի փոշի. ~ dish օճառի աման. ~ box օճառի արկղ. ~ bubble օճառի պղպջակ. ~ flakes օճառի տաշեղ. ~ suds օճառափրփուր, օճառաջուր:

**soap** [səʊp] **v** օճառել, սապոնել. *խսկց.* շահակրատել:

**soapboxer** [ˈsəʊp,bɒksə] **n** *ամ.* փողոցային հռետոր:

**soapy** [ˈsəʊpi] **a** օճառի, սապոնի. օճառոտ/սապոնոտ, օճառած/սապոնած. *խսկց.* քծնի, շողջրորթ. ~ water օճառոտ/սապոնոտ ջուր. օճառաջուր/սապոնաջուր. ~ hands օճառած/սապոնած ձեռքեր:

**soar** [sɔː] **1.** **n** ճախրում, ճախրելը. սավառնում. **2.** **v** ճախրել, սավառնել. Prices ~ed *փխբ.* Գները վեր խոյացան:

**sob** [sɒb] **n** հեկեկանք, հեծկլտանք. ~ stuff *խսկց.* սեմտիմենտալություն:

**sob** [sɒb] **v** հեկեկալ, հեծկլտալ. ~ one's heart out ուժեղ հեծկլտալ. She ~bed herself to sleep Այնքան լացեց, մինչև քնեց:

**so-be-it** [səʊˈbiːɪt] թող այդպես լինի:

**sober** [ˈsəʊbə] **a** զգաստ, չհարբած, սթափ, ողջամիտ. stone ~ լրիվ/ամբողջովին սթափ/

ողջամիտ. a ~ critic *փխբ.* օբյեկտիվ քննադատ. a ~ judgement սթափ դատողություն. ~ minded լրջախոհ, խոհեմ, հավասարակշռված:

**sober** [ˈsəʊbə] **v** զգաստացնել, սթափեցնել. զգաստանալ, սթափվել. ~ smb up մեկին սթափեցնել. ~ down զգաստանալ. ուշքի/խելքի գալ. With age he has ~ed down Տարիները նրան խելքի բերեցին:

**soberly** [ˈsəʊbəli] **adv** զգաստ կերպով, զգաստորեն. He dresses ~ *փխբ.* եւ համեստ է հագնվում:

**sobriety** [səʊˈbraɪəti] **n** սթափություն, չափավորություն, ողջամտություն. ~ check point սթափության ստուգման կետ:

**sobriquet** [ˈsəʊbrɪkeɪ] **n** ծաղրանուն, կեղծանուն, մականուն:

**sob-stuff** [ˈsɒbstʌf] **n** սեմտիմենտալ պատմվածք/ֆիլմ և այլն:

**so-called** [ˌsəʊˈkɔːld] **a** այսպես կոչված:

**soccer** [ˈsɒkə] **n** ֆուտբոլ:

**social** [ˈsəʊʃəl] **a** հաղորդասեր, շփվող. մարդամոտ. I'm not ~ today Այսօր ոչ-որի չեմ ուզում տեսնել:

**social** [ˈsəʊʃəl] **a** հասարակական, սոցիալական. ~ science սոցիոլոգիա, հասարակագիտություն. ~ sciences հասարակական գիտություններ. ~ security սոցիալական ապահովագրություն ~ welfare հասարակական բարեկեցություն. ~ status սոցիալական կարգավիճակ. ~ background սոցիալական ծագում. ~ framework հասարակական կառուցվածք. ~ infrastructure սոցիալական ենթակառուցվածք. ~ circles հասարակական շերտեր. ~ evening երեկույթ, հավաքույթ. lead a ~ life մասնակցել հասարակական կյանքին, հասարակության մեջ լինել. a ~ climber *փխբ.* բախտագյուտ մարդ:

**social-democracy** [ˌsəʊʃəlɪˈmɒkrəsi] **n** սոցիալ-դեմոկրատիա:

**socialize** [ˈsəʊʃəlaɪz] **v** հանրայնացնել, ազգայնացնել. շփվել:

**socially** [ˈsəʊʃəli] **adv** I meet him ~ եւ նրան հանդիպում եմ հյուր գնալիս:

**society** [səˈsaɪəti] **n** հասարակություն, կազմակերպություն. high ~ բարձր հասարակություն. elite ~ ընտրյալ հասարակություն. a learned ~ գիտական ընկերություն. a dramatic ~ թատերական խմբակ. consumer ~ սպա-

ռողմերի միությունն. a ~ woman բարձրաշխարհիկ տիկին:

**sociology** [ˌsəʊʃiˈɒlədʒi] n սոցիոլոգիա:

**sock** I [sɒk] n կիսազուլպա, կարճ գուլպա. knee-length ~s գոլֆեր:

**sock** II [sɒk] 1. n ծանր հարված. give one ~(s) մեկին սաստիկ ծեծել. get a ~ in the eye աչքին հարված ստանալ. 2. v ուժեղ խփել, հարվածել:

**socket** [ˈsɒkɪt] n փոս, խոռոչ. խորշ eye ~ աչքի խոռոչ. wall ~ վարդակ:

**sod** [sɒd] n ճինահող:

**soda** [ˈsəʊdə] n (*նաև* sodapop) սոդա, սոդայաջուր. bicarbonate of ~ ածխաթթու նատրիում. washing/baking ~ լվացքի/ճաշի սոդա. whisky and ~ վիսկի և սոդայաջուր:

**sodden** [ˈsɒdn] a խոնավ, թաց, թրջված. ~ bread կիսաթուխ/թերաթուխ հաց:

**sodium** [ˈsəʊdiəm] n *քիմ.* նատրիում. ~ chloride նատրիում քլորիդ, կերակրի աղ:

**sofa** [ˈsəʊfə] n բազմոց, դիվան:

**soft** [sɒft] a փափուկ. ~ cloth/armchair փափուկ գործվածք/բազկաթոռ. ~ to the touch փափուկ (շոշափելիս). go ~ փափկել. փչանալ (մրգերի մասին) ~ money թղթադրամ. the ~ sign *լեզվ.* փափկության նշան (ռուս. Б) (մեղմ, ոչ բարձր) ~ voice/climate մեղմ ձայն/կլիմա. ~ light/colour համազօր լույս/գույներ. ~ smile նուրբ ժպիտ. ~ words նուրբ/մեղմ բառեր. ~ drink ոչ ալկոհոլային խմիչք. ~ person թուլամորթ/թուլական անձ-նավորություն. a ~ landing *ավ.* հանդարտ վայրէջք. a ~ option/job *փխբ.* հեշտ ընտրություն/աշխատանք. ~ in the head *խսկց.* ծալը պակաս:

**soft** [sɒft] a *հմկրգ.* ծրագրավորվող, ծրագրային. ~ key *հմկրգ.* ծրագրավորվող ստեղն. ~ page break էջի “ճկուն” սահման:

**soften** [ˈsɒfn] v փակել, փափկանալ. մեղմանալ, մեղմացնել. Rain ~ed the ground Անձրևը փափկացրեց հողը. ~ smb up *փխբ.* մեկի գութը շարժել. His expression ~ed Նրա դեմքը/արտահայտությունը փոխվեց:

**softener** [ˈsɒfnə] n փափկացնող նյութ/միջոց:

**soft-headed** [ˌsɒftˈhedɪd] a տխմար, ցանցառ:

**soft-hearted** [ˌsɒftˈhɑːtɪd] a փափկասիրտ, զգայուն, բարեսիրտ:

**softly** [ˈsɒftli] adv մեղմորեն, հանդարտ, անաղմուկ:

**soft pedal** [ˌsɒftˈpedl] 1. n *երժշ.* ձախ ոտնակը (պեդալը). 2. v մեղմացնել. Better ~ that expression *փխբ.* Ավելի լավ է մեղմացնել այդ արտահայտությունը:

**soft-soap** [ˌsɒftˈsəʊp] v շողոքորթել, գլուխը յուղել:

**soft-spoken** [ˌsɒftˈspəʊkən] a մեղմախոս:

**soft ware** [ˌsɒftweə] n համակարգչային ծրագրեր. ~ firm համակարգչային ծրագրերի մշակմամբ և վաճառքով զբաղվող ընկերություն. *հմկրգ.* ~ a ծրագրային ապահովում. ~ compatibility ծրագրային համատեղելիություն. ~ development ծրագրային ապահովման մշակում. ~ engineering *հմկրգ.* ծրագրավորում. ~ interrupt ծրագրային ընդհատում. ~ life cycle ծրագրի տևողության/կյանքի ցիկլ. ~ support ծրագրային իրացում. ~ tools օժանդակ ծրագրեր:

**softy** [ˈsɒfti] n *խսկց.* թուլամորթ/թուլական մարդ:

**soggy** [ˈsɒɡi] a թաց, թրջված. ~ bread թերաթուխ հաց. ~ ground ճահճոտ գետին/հող:

**soil** I [sɔɪl] n գետին, հող. poor ~ անարգավանդ հող. rich ~ պարարտ հող. foreign/native ~ *փխբ.* օտար/հայրենի հող:

**soil** II [sɔɪl] 1. n բիծ, կեղտաբիծ. ցեխ, կեղտ. 2. v կեղտոտ(վ)ել, ցեխոտ(վ)ել. ~ one's hands ծեռքերը կեղտոտել:

**soiled** [ˈsɔɪld] a կեղտոտ, կեղտոտված. ~ linen կեղտոտ սպիտակեղեն:

**soil-pipe** [ˈsɔɪlpaɪp] n կեղտաջրի խողովակ, կոյուղի:

**soiree** [ˈswɑːreɪ] n երեկույթ:

**sojourn** [ˈsɒdʒən] 1. n *ամ.* ժամանակավոր այց/ապրելը. 2. v հյուր լինել, ժամանակավոր մնալ:

**sol** [sɒl] n *երժշ.* սոլ ձայնանիշը:

**solace** [ˈsɒləs] n մխիթարություն, սփոփանք. seek/find ~ փնտրել/գտնել մխիթարություն:

**solar** [ˈsəʊlə] a *աստղգ.* արևի, արեգակնային:

**solarium** [səˈleəriəm] n արևարուժարան. սոլյարիում:

**solder** [ˈsɒldə] 1. n զոդանյութ, զոդ. 2. v զոդել. զոդակցել. ~ing iron զոդիչ, զոդոց:

**soldier** [ˈsəʊldɪə] n զինվորական, զինվորական ծառայող. old ~ վետերան. disabled ~

պատերազմի հաշմանդամ. great ~ մեծ զորավար. a toy ~ խաղալիք զինվոր. play at ~ զինվոր-զինվոր խաղալ. ~ of fortune վարձկան զինվոր. *փխք.* արկածախնդիր մարդ. ~s and civilians զինվորականներ և քաղաքացիականներ:

**soldier** ['səʊldɪə] v բանակում ծառայել. two years of ~ing երկու տարի բանակում ծառայել. ~ on *փխք.* աշխատել/ծառայել. ~ on for another year մեկ տարի ևս աշխատել:

**soldierly** ['səʊldɪəli] a քաջ, արի, խիզախ:

**sole** [səʊl] a միակ, եզակի, բացառիկ, the ~ right բացառիկ/միանձնյա իրավունք. ~ distribution rights վերավաճառքի բացառիկ իրավունք. ~ beneficiary միակ շահառու:

**sole** [səʊl] 1. n ներքան, կոշկատակ. 2. v ներքան/կոշկատակ գցել:

**solely** ['səʊli] adv միմիայն, սոսկ, բացառապես. ~ due to his efforts բացառապես շնորհիվ նրա ջանքերի:

**solemn** ['sɒləm] a հանդիսավոր, մեծաշուք. պաշտոնական. a ~ ceremony/oath հանդիսավոր արարողություն/երդում. ~ faces լուրջ դեմքեր. ~ procedure պաշտոնական ընթացակարգ:

**solemnity** [sə'lemnəti] n հանդիսավորություն, վեհություն. solemnities տոնակատարություն, հանդես:

**solicit** [sə'sɪsɪt] v միջնորդել, դրդել. դիմել. *իրավ.* առաջարկել. խնդրել. աներեսաբար կայել, հետապնդել (պոռնիկ կնոջ մասին):

**solicitor** [sə'sɪsɪtə] n միջնորդ, հավատարմատար. *իրավ.* խորհրդատու, փաստաբան. S~ General Գլխավոր դատախազի տեղակալ. պետական իրավախորհրդատու:

**solicitous** [sə'sɪsɪtəs] a հոգատար, ուշադիր. մտահոգված:

**solicitude** [sə'sɪsɪtju:d] n մտահոգություն, հոգատարություն. show ~ հոգատարություն ցուցաբերել. ~s հոգսեր:

**solid** ['sɒlɪd] n *ֆիզ.* պինդ մարմին. երկրաչափական մարմին:

**solid** ['sɒlɪd] a պինդ, կարծր. ամբողջական. ամուր, կայուն. համոզիչ, լուրջ. ~ fuel պինդ վառելիք. a ~ ball ամբողջական գունդ. ~ defence հիմնավոր պաշտպանություն. ~ foundation ամուր հիմք. have a ~ meal լավ/կուշտ ուտել. ~ sum of money պատկառելի գումար. ~ ground ամուր/կայուն հիմք/հող. ~ sense

մեծ իմաստ/նշանակություն. a ~ hour մի ամբողջ ժամ. ~ silver/gold մաքուր, զուտ արծաթ/ոսկի. ~ state պինդ մարմին:

**solidarity** [ˌsɒli'dærtəi] n համախմբվածություն, համերաշխություն. միասնություն. ~ strike միասնության գործադուլ:

**solidity** [sə'lidəti] n պնդություն, կարծրություն, դիմացկունություն:

**solidly** ['sɒlɪdli] adv ամուր, ամբողջական. vote ~ *փխք.* մեկ մարդու նման քվեարկել:

**soliloquize** [sə'lɪləkwəɪz] v մենախոսություն արտասանել. ինքն իրեն հետ խոսել:

**soliloquy** [sə'lɪləkwɪ] n մենախոսություն:

**solitary** ['sɒlətəri] 1. n մենակյաց, միանձն(ուհի), ճգնավոր. 2. a միայնակ, մենավոր. մեկուսի, առանձին. a ~ person ինքնամփոփ/մեկուսացած մարդ. a ~ instance եզակի դեպք. ~ confinement մեկուսի բանտարկություն. ~ cell մենախոս:

**solitude** ['sɒlətju:d] n մենություն, առանձնություն:

**solo** ['səʊləʊ] n *երժ.* մեներգ, մենանվագ. մենահամար:

**soloist** ['səʊləʊɪst] n մենակատար:

**so-long** ['səʊləŋ] int *խսկգ.* ցտեսություն, առայժմ, ցր:

**solstice** ['sɒlɪstɪs] n *աստղգ.* արևադարձ, արևակայություն. summer/winter ~ ամառային/ձմեռային արևակայություն:

**solubility** [ˌsɒljʊ'bɪləti] n լուծելիություն:

**soluble** ['sɒljʊbəl] a լուծելի, լուծվող. հալվող, Sugar is ~ in water Շաքարը լուծվում է ջրում. *փխք.* լուծելի, վճռելի. ~ problem լուծելի հարց:

**solution** [sə'lu:ʃn] n լուծում, վճռում. հանելուկի լուծում. *քիմ.* լուծույթ. ~ of the matter խնդրի լուծում:

**solvable** ['sɒlvəbəl] a լուծելի, լուծվող:

**solve** [sɒlv] v լուծել, վճռել. բացատրել, լուսաբանել. ~ a riddle հանելուկը լուծել:

**solvency** ['sɒlvənsɪ] n վճարունակություն:

**solvent** ['sɒlvənt] 1. n լուծիչ, լուծող նյութ. 2. a լուծիչ, լուծող. *ֆիմ.* վճարունակ:

**sombre** ['sɒmbə] a մռայլ, խավար, մութ. տխրամած, նոթոտ. a ~ sky մռայլ երկինք. a ~ day ամպամած օր. ~ clothes մուգ գույնի հագուստ:

**sombbrero** [sɒm'breəbrəʊ] n սոմբրերո, իսպանական լայնեզր գլխարկ:



**some** [sʌm] **pron** ոմանք, մի քանիսը. ~ of the pictures/friends նկարներից/ընկերներից մի քանիսը/ոմանք, ~ of us մեզմից մի քանիսը. (մի մասը) ~ of the lecture դասախոսության մի մասը. ~ like tea, ~ like coffee ոմանք թեյ են սիրում, իսկ ոմանք/ուրիշները՝ սուրճ:

**some** [sʌm] **a** որոշ, մի քանի. ~ years ago մի քանի տարի առաջ. in ~ towns որոշ քաղաքներում. ~ people believe որոշ մարդիկ հավատում են. (որոշ քանակություն) չի թարգմանվում Give me ~ water Ինձ ջուր տուր. (ինչ-որ) ~ man is waiting for you Ինչ-որ մեկը ձեզ է սպասում. There must be ~ solution Պետք է որ ինչ-որ լուծում գոյություն ունենա. ~ place ինչ-որ տեղ. ~ day մի օր, որևէ օր. (որոշակի քանակություն) It took ~ courage Բավական քաջություն պետք էր ունենալ We had ~ difficulty Մենք բավական դժվարացանք It was ~ match Այ՛ թե խաղ էր, Իսկական խաղ էր. (մոտ, մոտավորապես) թվականի հետ. I waited ~ 30 minutes Մոտավորապես 30 րոպե սպասեցի:

**somebody** [ˈsʌmbədi] **n** կարևոր անձնավորություն. He thinks he is ~ Իրեն կարևոր մարդ է համարում:

**somebody** [ˈsʌmbədi] **pron** ինչ-որ մեկը, որևէ մեկը. ~ will help you մեկնումեկը կօգնի քեզ. a certain ~ ինչ-որ մեկը ~ from my class մեր դասարանից ինչ-որ մեկը:

**someday** [ˈsʌm,deɪ] **adv** մի օր, մի գեղեցիկ օր:

**somehow** [ˈsʌmhaʊ] **adv** ինչ-որ ձևով, մի կերպ. ~ or other այս կամ այն ձևով/կերպ. It's ~ odd Դա մի տեսակ տարօրինակ է:

**someone** [ˈsʌmwʌn] **pron** տե՛ս smb:

**somersault** [ˈsʌməsɔ:lt] **1.** **n** գլուխկոնձի տալը օդում. **2.** **v** գլուխկոնձի տալ:

**something** [ˈsʌmθɪŋ] **pron** ինչ-որ/որևէ բան. Is ~ the matter ? Որևէ բան այնպես չէ՞. S~ is missing Ինչ-որ բան պակասում է. ~ else որևէ այլ բան. ~ of the kind ինչ-որ մի նման բան. That's ~ Դա ինչ-որ բան է նշանակում. He's ~ of a singer Երգչի նման մի բան է:

**something** [ˈsʌmθɪŋ] **adv** մոտավորապես. He collected ~ like 500 dol. Նա մոտավորապես 500 դոլար հավաքեց. The weather was ~ awful խսկց. Եղանակը պարզապես ահավոր էր:

**sometime** [ˈsʌmtaɪm] **1.** **a** նախկին, առաջ-

վա. **2.** **adv** երբևէ, մի օր. ինչ-որ օր/ժամ. ~ next week հաջորդ շաբաթ մի օր. He'll arrive ~ tomorrow Նա գալիս է վաղը, հայտնի չի որ ժամին:

**sometimes** [ˈsʌmtaɪmz] **adv** երբեմն:

**someway** [ˈsʌmweɪ] **adv** որևէ/մի կերպ:

**somewhat** [ˈsʌmwɒt] **adv** որոշ չափով, փոքր ինչ. մասամբ. ~ surprised փոքր-ինչ զարմացած:

**somewhere** [ˈsʌmweə] **adv** ինչ-որ տեղ/տեղում. ~ near here ինչ-որ տեղ մոտերքում. go ~ hot գնալ որևէ տաք/չոգ տեղ, ~ else որևէ այլ տեղ. I paid ~ round. 100 dol *փխբ.*, *խսկց.* Մոտավորապես 100 դոլար վճարեցի:

**somnambulist** [sɒmˈnæmbjulist] **n** գիշերաշրջիկ, լուսնոտ:

**son** [sʌn] **n** որդի. older/younger ~ ավագ/կրտսեր որդի. ~ and heir ավագ որդի, ժառանգորդ. the prodigal ~ *աստվծ.* անառակ որդի. ~ of a gun անարգ մարդ, շան որդի. ~ file *հմկրգ.* ֆայլի նոր տարբերակ:

**sonant** [ˈsəʊnənt] **n** լեզվ. ձայնեղ բաղաձայն:

**sonic** [ˈsɒnɪk] **a** հնչյունային:

**song** [sɒŋ] **n** երգ. old/well-known/sad /folk ~ հին/հանրահայտ/տխուր/ժողովրդական երգ. give a ~ երգել. drinking ~ խնջույքի երգ. burst into a ~ հանկարծակի երգել. ~ cycle երգերի շարք. ~ writer բանաստեղծ երգահան. buy/sell for a ~ չնչին գնով գնել/վաճառել sing another ~ *փխբ.* ուրիշ երգ երգել, այլ տոնով խոսել. set a ~ to music երաժշտություն գրել բառերի համար:

**song-bird** [ˈsɒŋbɜ:d] **n** երգեցիկ թռչուն:

**songster** [ˈsɒŋstə] **n** երգիչ բանաստեղծ. երգեցիկ թռչուն:

**son-in-law** [ˈsʌnɪnlɔ:] **n** փեսա (աղջկա ամուսինը):

**sonnet** [ˈsɒnɪt] **n** գրկ. սոնետ:

**sonny** [ˈsʌni] **n** *խսկց.*, *փղբ.* որդյակ, տղաս:

**sonority** [səˈnɒrəti] **n** հնչեղություն, հնչյունություն:

**sonorous** [ˈsɒnərəs] **a** հնչեղ, հնչուն. ֆոն. ձայնորդի, ձայնորդական:

**soon** [su:n] **adv** շուտով, կարճ ժամանակից հետո, շատ չանցած. ~ after lunch/aftwards ճաշից անմիջապես/դրանից անմիջապես հետո. as ~ as հենց որ. as ~ as possible որքան հնարավոր է շուտ, հնարավորին չափ շուտ.

too ~ չափից ավելի շուտ/վաղ. You spoke too ~ ժամանակից (ավելի) շուտ խոսեցիր. See you ~ Մինչ նոր հանդիպում, Շուտով կհանդիպենք. ~er ավելի վաղ/շուտ. The ~er the better Որքան շուտ, այնքան լավ No ~er said than done Ասելն ու անելը մեկ եղավ. ~er or later վաղ թե ուշ. I'd ~er stay ես ավելի լավ է մնամ:

**soot** [sut] **1.** n մուր. **2.** v մրոտել, մրով պատել, մուր քսել:

**sooth** [su:θ] n ճշմարտություն, իսկություն:

**soothe** [su:ð] v հանգստացնել, թեթևացնել (ցավը). մխիթարել, սփոփել (վիշտը):

**soother** ['su:ðə] n (ռետինե) ծծակ (ծծկեր) երեխաների համար:

**soothsay** ['su:θseɪ] v գուշակել:

**soothsayer** ['su:θ,seɪə] n գուշակող, գուշակ:

**sooty** ['suti] a մրոտած, մրով պատած, մրոտ. մրի պես սև:

**sop** [sɒp] **1.** n սոուս, հացի պատառ. a ~ in the pan տապակած հաց. as a ~ to my conscience որպես խիղճը հանգստացնող. **2.** v թաթախել, թրջել, թրջվել. ~ up ներծծել:

**sophisticate** [sə'fɪstɪkeɪt] v խեղաթյուրել. կեղծել, խարդախել:

**sophisticated** [sə'fɪstɪkeɪtɪd] a փորձառու, կենսափորձ ունեցող. հնարամիտ. ճարտարամիտ. արդիականացված. նուրբ, նրբաճաշակ. ~ taste բացառիկ/նուրբ ճաշակ. a ~ argument ճարտարամիտ փաստարկ. a ~ woman/outfit աշխարհիկ կին, նորածն հագուստներ. a ~ audience *փխբ.* փորձառու հասարակություն/ուսուցիչներ. ~ technology բարդացված տեխնոլոգիա:

**sophistication** [sə'fɪstɪ'keɪʃn] n նրբնություն. խարդախություն. բարդացում. արդիականացում:

**sophomore** ['sɒfəmə:] n *ամ.* համալսարանի երկրորդ կուրսի ուսանող:

**soporific** [ˌsɒpə'rifɪk] n, a թմրադեղ. թմրաբեր, քնաբեր:

**soppy** ['sɒpi] a թաց, թրջված, խոնավ. անծրակին:

**soprano** [sə'pra:nəu] n *երժշ.* սոպրանո. She is a ~ Նա սոպրանո ձայն ունի. the ~ part սոպրանոյի դերերգը:

**sorcerer** ['sɔ:səʃə] n կախարհ, հմայող, գուշակ:

**sorcery** ['sɔ:səʃəri] n կախարհություն, հմայություն:

**sordid** ['sɔ:did] a կեղտոտ, անազնիվ, ստոր. What a ~ business ! Ի՞նչ ստորություն:

**sore** [sɔ:] n *բժշկ.* վերք, խոց, ցավոտ տեղ. a running ~ խոց. reopen old ~s *փխբ.* հին վերքերը նորոգել:

**sore** [sɔ:] a հիվանդ, ցավոտ. a ~ knee հիվանդ ծունկ. a ~ throat հիվանդ կոկորդ. My eyes are ~ Աչքերս ցավում են. a ~ point *փխբ., խսկց.* ցավոտ տեղ. a sight for ~ eyes աչքերին հաճույք/ուրախություն պատճառող feel ~ *խսկց.* վիրավորվել, ցավել. be in ~ need of խիստ կարիք ունենալ:

**sorrel** ['sɒrəl] n *բսբ.* թրթնջուկ. ~ soup թրթնջուկով ապուր:

**sorrow** ['sɒrəu] n վիշտ, թախիծ, տխրություն. ափսոսանք. keen ~ խոր վիշտ. share ~s վիշտը/թախիծը կիսել. a great ~ մեծ վիշտ/ափսոսանք. to my great ~ ցավոք սրտի, դժբախտաբար. S~ has aged him վիշտը նրան ծերացրել է. drown one's ~s in drink վիշտը գինու մեջ թաղել. (խղճուկ) a ~ excuse խղճուկ պատրվակ. cut a ~ figure շատ խղճուկ տեսք ունենալ:

**sorrowful** ['sɒrəʊfʊl] a վշտալի, տխուր, թախծոտ:

**sorry** ['sɒri] a ցավով/ափսոսանքով լի. be/feel ~ խղճալ, ափսոսալ. (I'm) sorry! Ներեցեք. be ~ for smn մեկին խղճալ. We are ~ to inform you Ցավով հայտնում ենք ձեզ. You'll be ~ for this Դու դեռ կափսոսաս:

**sort** [sɔ:t] n տեսակ. կարգ. ձև. ոճ. what ~ of ինչպիսի, ինչ տեսակ. nothing of the ~ ոչ մի նման բան. ամենևին. some ~ of ինչ-որ, որևէ. of all ~s ամեն տեսակի. I know his ~ Ինձ ծանոթ են այդ տիպի մարդիկ. an old-fashioned ~ հնաոճ. This is your ~ Դա քո ճաշակով է, Դու այդ տեսակը սիրում ես. a good ~ *խսկց.* լավ տղա/մարդ. the better ~ *խսկց.* աչքի ընկնող մարդիկ. in some ~ որոշ չափով. something of the ~ ինչ-որ մի նման բան. after a ~ ինչ-որ ձևով. it's ~ of կարծես թե. He's a ~ of lawyer Նա կարծես փաստաբան է, Փաստաբանի նման մի բան է. be/feel out of ~s անտրամադիր լինել. *հմկրգ.* կարգավորում, տեսակավորում. ~ key կարգավորման բանալի. ~ utility կարգավորման ծրագիր:

**sort** [sɔ:t] v տեսակավորել, ընտրել, բաժանել. ~ according to the size տեսակավորել

ըստ չափսերի. I'm going to ~ my desk *խսկց*.  
 Ուզում եմ զրասեղանս կարգի բերել. ~ out a  
 problem *փխբ*. պրորբլեմից գլուխ հանել.  
*հմկրգ*. կարգավորել, տեսակավորել:

**SO-SO** ['səʊsəʊ] adv *խսկց*. ոչինչ:

**sot** [sɒt] n թունդ հարբեցող:

**sottish** ['sɒtɪʃ] a իրեն հարբեցողության  
 տված:

**soul** [səʊl] n հոգի. human ~ մարդկային հոգի.  
 living ~ կենդանի հոգի. the ~ of the company  
 ընկերության ոգին. put heart and ~ into  
 սիրտն ու հոգին ներդնել. be devoted body  
 and ~ հոգով և մարմնով նվիրված լինել keep  
 body and ~ together մի կերպ գոյություն  
 ունենալ/պահպանել. *փխբ*. մարդ, որ Not a  
 ~ was seen Ոչ ոք չկար. Don't tell a ~ Ոչ ոքի  
 չասեք. twin ~ հարազատ հոգի. Upon my ~  
 Հոգիս վկա. have no ~ հոգի/զգացմունք  
 չունենալ. decent/honest/worthy ~ կարգին/  
 ազնիվ/արժանավոր մարդ:

**soulless** ['səʊlɪs] a անհոգի, անսիրտ,  
 անխիղճ:

**sound** I [saʊnd] n հնչյուն, ձայն, աղմուկ.  
 sharp/distant/distinct/dull ~ սուր/հեռավոր/  
 խուլ/ հստակ ձայն. within ~ of լսելիության  
 սահմաններում. speech ~s լեզվի (լեզվական)  
 հնչյուններ. sweet ~ հաճելի/քնքուշ/քաղցր  
 ձայն. ~ of singing/laughter երգի/ծիծաղի ձայ-  
 ներ. without a ~ անձայն. *հմկրգ*. ~ clip ձայ-  
 ներից:

**sound** II [saʊnd] n նեղուց:

**sound** [saʊnd] v հնչել, լսվել. ~ strange /funny/  
 bad/pretty տարօրինակ/ծիծաղելի/վատ/լավ  
 հնչել. This letter doesn't ~ Այս տառը չի ար-  
 տասանվում. (լսվել, թվալ) The box ~s empty  
 Տուփը դատարկ է թվում. It ~s as if ... Չայնից  
 դատելով կարծես թե... He ~s Armenian  
 Դատելով արտասանությունից՝ նա հայ է.  
 He doesn't ~ a good candidate Չի թվում, որ նա  
 լավ թեկնածու է. ~ smb's chest *բժշկ*. (լսելով)  
 քննել հիվանդի կրծքավանդակը. զոնդել,  
 զոնդով հետազոտել:

**sound** [saʊnd] a առողջ. ողջամիտ. զգոն.  
 վճարունակ. ~ in mind and body հոգով և  
 մարմնով առողջ. as ~ as a bell միանգամայն  
 առողջ. a ~ tree ամուր ծառ. a ~ sleep խոր  
 քուն. (ողջամիտ) ~ advice/sense ողջամիտ  
 խորհուրդ/դատողություն. a ~ move խելացի  
 քայլ. a ~ scholar իսկական գիտնական. ~

knowledge կայուն գիտելիքներ. a ~ argument  
 համոզիչ փաստարկ. ~ mind առողջ դատող-  
 ություն, հոգեկան կայուն վիճակ. a ~ in-  
 vestment հուսալի ներդնում:

**sound-film** ['saʊndfɪlm] n հնչյունային  
 ֆիլմ:

**sounding** ['saʊndɪŋ] n *ծով*. take a ~ *ծովի*/  
 ջրի խորությունը չափել:

**soundless** ['saʊndlɪs] a անձայն, լուռ:

**soundproof** ['saʊndpru:f] a անձայնաթա-  
 փանց:

**soundproofing** ['saʊndpru:fiŋ] n ձայնամե-  
 կուսացում:

**soup** [su:p] n ապուր, սուպ. clear ~ (*նաև*  
 broth) մաջուր, արգամակ. meat ~ մսով  
 ապուր. vegetable ~ բանջարեղենով ապուր.  
 fish ~ ձկնապուր. cabbage ~ բորշչ. ~ plate  
 (*նաև* tureen) խոր ափսե:

**sour** ['sauə] a թթու, թթված. ~ taste թթվահամ.  
 ~ milk մածուկ. ~ cream թթվասեր. turn ~  
 թթվել. a ~ face/remark *փխբ*. թթված դեմք,  
 կծու դիտողություն:

**source** [sɔ:s] n աղբյուր, սկզբնաղբյուր. a ~  
 of information/infection տեղեկատվության/  
 վարակի աղբյուր. historical/primary ~s պատ-  
 մական աղբյուրներ, սկզբնաղբյուր. S~s say  
 Աղբյուրները հայտնում են/տեղեկացնում  
 են. *հմկրգ*. source ընթացիկ տեստ/ծրագիր.  
 ~ address տվյալների աղբյուրի հասցե. ~ al-  
 phabet մուտքային այբուբեն. ~ code ըն-  
 թացիկ տեքստ/ծրագիր. ~ data սկզբնական  
 տվյալներ. ~ field ընթացիկ դաշտ. ~ lan-  
 guage ընթացիկ լեզու. ~ statement ընթացիկ  
 ծրագրի օպերատոր:

**souse** [saus] n աղ դրած մթերք, մարինադ,  
 թթու. աղաջուր. ~d herring թթու դրած/  
 մարինադ/հարինգ/ծովատառեխ:

**south** [sauθ] 1. n հարավ. the ~ հարավային  
 երկրներ. 2. a հարավային. 3. adv հարա-  
 վային ուղղությամբ. ~ of London Լոնդոնից  
 հարավ:

**south-east** [,sauθ'i:st] 1. n հարավ-արևելք.  
 2. a հարավարևելյան. 3. adv հարավ-  
 արևելյան ուղղությամբ:

**south-easter** [,sauθ'i:stə] n հարավարևել-  
 յան քամի:

**southerly, southern** ['sʌðəli, 'sʌðn] a  
 հարավային:

**southerner** ['sʌðnə] n հարավցի, հարավի  
 բնակիչ:

**southwards** [ˈsauθwədʒ] a, adv դեպի հարավ, հարավային ուղղությամբ:

**south-west** [ˌsauθˈwest] n հարավ-արևմուտք:

**south-wester** [sauθˈwestə] n հարավ-արևմտյան քամի:

**souvenir** [ˌsu:vəˈniə] n հուշանվեր.

**sovereign** [ˈsɒvrɪn] 1. n միապետ. անկախ/սուվերեն պետություն. սուվերեն (անգլիական դրամ). 2. a գերագույն, ինքնիշխան. անկախ:

**sovereignty** [ˈsɒvrənti] n *քղք.*, *իրավ.* գերիշխանություն. ինքնիշխանություն, անկախություն. սուվերենություն. անկախ/սուվերեն պետություն:

**sow** [səʊ] v ցանել, սերմանել. ~ doubt *փխբ.* կասկած սերմանել/առաջացնել:

**sower** [ˈsəʊə] n սերմնացան. ցանող մեքենա:

**sowing** [ˈsəʊɪŋ] n ցանքս. ~ machine ցանող/սերմնացան մեքենա:

**soya** [ˈsɔɪə] n *քր.* սոյա:

**spa** [spa:] n հանքային աղբյուր. հանքային ջրերով կուրորտ take a cure at a ~ բուժվել հանքային կուրորտում:

**space** [speɪs] n տարածություն, հեռավորություն. *երժ.* ինտերվալ. infinite ~ անսահման տարածություն. air ~ օդային տարածություն. open ~s դատարկ տարածություն. living ~ բնակատարածություն. outer ~ տիեզերք. stare into ~ աչքերը հեռուն հառել. a ~ flight/shot տիեզերական թռիչք. տիեզերական հրթիռի արձակում. (տեղ, տարածք) leave a ~ տեղ թողնել. enclosed ~ շրջափակված/ցանկապատված տարածք. a ~ in the timetable “պատուհան” դասատախտակում. (տարածություն) a ~ between the lines տարածություն տողերի միջև. a ~ between the houses տարածություն շենքերի միջև. (տևողություն, ժամանակ) after a ~ կարճ ժամանակից հետո. within the ~ of 3 hours 3 ժամվա ընթացքում:

**space** [speɪs] v (*նակ space out*) արանքներ թողնել. The plants are ~d out բույսերը տնկված են իրարից որոշ հեռավորության վրա:

**spacecraft, spaceship** [ˈspeɪskra:ft, ˈspeɪsʃɪp] n տիեզերանավ:

**spaceless** [ˈspeɪsləs] a անվերջ, անսահման:

**spacing** [ˈspeɪsɪŋ] n տարածություն, ինտեր-

վալ. double ~ կրկնակի տարածություն/հեռավորություն:

**spacious** [ˈspeɪʃəs] a ընդարձակ, լայն. լայնածավալ:

**spade** I [speɪd] 1. n բահ. call a ~ a ~ իրերն իրենց անուններով կոչել. 2. v բահով փորել:

**spade** II [speɪd] n ~s *թղթի.* ազնավ:

**spadeful** [ˈspeɪdfʊl] n մի լիքը բահ:

**spall** [spɔ:l] 1. n բեկոր, կտոր (քարի). 2. v մանրացնել, փշրել:

**span** [spæn] n ակնթարթ, վայրկյան. ժամանակամիջոց. սյունամեջ (կամուրջ). կարճ տարածություն. թևերի բացվածք. a brief ~ կարճ ժամանակամիջոց. ~ of life կյանքի տևողություն. ~ bridge 5 - սյունամեջ/կամրջամաս ունեցող կամուրջ:

**span** [spæn] v չափել (տարածությունը). ընդգրկել (ժամանակը). ձգվել, անցնել (գետի վրայով). The Thames is ~ned by many bridges Թեմզայի վրայով շատ կամուրջներ են անցնում:

**spangle** [ˈspæŋɡl] 1. n փայլազարդ. 2. v փայլոցներով զարդարել. փայլել. ~d with stars աստղազարդ, աստղերով պատած:

**spaniel** [ˈspæniəl] n սպանիել (շուն):

**spaniard** [ˈspæniəd] a, n իսպանացի, իսպանուհի:

**Spanish** [ˈspæniʃ] 1. a իսպանական. 2. n իսպանացի. the ~ իսպանացիները:

**spank** [spæŋk] 1. n ափահարված, ապտակ. 2. v ափով հարվածել. ապտակել:

**spanking** [ˈspæŋkiŋ] a արագընթաց, սրընթաց. *խսկց.* գերազանց, հիանալի. at a ~ pace արագ, սրընթաց:

**spanner** [ˈspæŋə] n *տեխ.* պտտուտակաբանալի:

**span-new** [ˈspænnju:] a բոլորովին նոր:

**spar** I [spa:] n գերան:

**spar** II [spa:] n բռնցքամարտ, բոքս. վեճ, վիճաբանություն:

**spar** III [spa:] n *հնք.* դաշտային շպաթ:

**spar** [spa:] v բռնցքամարտել, բռնցքակռիվ անել. վիճաբանել, հակաճառել:

**spare** [speə] a պահեստի, պահեստային. ~ parts պահեստամասեր. (ազատ, ավելորդ) ~ money ազատ փող. ~ time ազատ ժամանակ. ~ tickets ավելորդ տոմսեր. ~ pair of socks լրացուցիչ զույգ զուլպա. a ~ room

- ազատ սենյակ (հյուրերի համար). (նիհար, վտիտ) a tall ~ man բարձրահասակ նիհար մարդ. (աղքատիկ) a ~ meal աղքատիկ/խղճուկ ուտելիք:
- spare** [speə] v խնայել. ~ no trouble ուժեր/ջանքեր չխնայել. no expenses ~d ծախսեր չափստալ. (տրամադրել, յուլազանալ) Can you ~ me a moment? Կարո՞ղ եք ինձ մի րոպե տրամադրել. We can't ~ him at present Յենց հիմա մենք չենք կարող առանց նրա յուլազանալ. I have no milk to ~ ավելորդ կաթ չկա. (զթալ, խնայել) ~ one's feelings զգացմունքները խնայել. ~ the troubles հոգսերից ազատել:
- sparing** ['speəriŋ] a տմտեսող, խնայող. ժլատ. ~ of words/praise բառեր/զովասանք խնայող. ~ of wine գինին ափսոսել:
- spark** [spa:k] n բռնկում. նշույլ. կայծ. a ~ of talent/humour տաղանդի/հումորի կայծ/նշույլ. a bright young ~ *խսկց.* փայլուն ֆրանտ not a ~ of interest հետաքրքրության ոչ մի նշույլ. strike ~s out of օգտակար տվյալներ քաղել:
- spark** [spa:k] v կայծ տալ, կայծեր արձակել. ~ off the fire հրդեհ/կրակ բորբոքել. *փխբ.* առաջացնել The work ~ed off many complaints Աշխատանքը շատ դժգոհություններ առաջացրեց:
- sparkling plug** ['spa:kiŋplʌg] a (ավտո) այրման մոմ:
- sparkle** ['spa:kl] n կայծ, փայլ, կայծկլտոց:
- sparkle** ['spa:kl] v փայլել, շողշողալ. ցուլցալ. փրփրալ, պղպջալ (գինու մասին). The snow ~s in the sunshine Ձյունը շողշողում է արևի տակ. Her eyes ~d with excitement Նրա աչքերը փայլում էին հուզմունքից. She doesn't exactly ~ *խելքով* առանձնապես չի փայլում:
- sparklet** ['spa:klət] n կայծիկ. պեծ, պեծիկ:
- sparkling** ['spa:klɪŋ] a փայլփլուն, շողշողուն. փրփրուն, պղպջան. ~ wine փրփրուն գինի. ~ conversation *փխբ.* փայլուն զրույց:
- sparrow** ['spærəʊ] n ճնճուկ:
- sparrow-grass** ['spærəʊgrɑ:s] n *խսկց.* ծներեկ:
- sparse** [spa:s] a նոսր, ցանցառ. աղքատիկ, խղճուկ. ~ population ոչ խիտ/նոսր բնակչություն. a ~ beard ցանցառ միրուք. ~ furnishing համեստ կահավորում. His hair is getting ~ Մազերը նոսրանում են/թափվում են: ~ array *հմկրգ.* կտրտված մատրից:
- sparsely** ['spa:slɪ] adv համեստ, աղքատիկ, խղճուկ:
- spasm** ['spæz(ə)m] n *բժշկ.* ջղաձգություն, ջղակծկում. My leg is in ~ Ոտքս ջղաձգվում է. a ~ of coughing հազի սպազմ/պոռթկում. in a ~ of grief *փխբ.* կսկիծի պոռթկում:
- spastic** ['spæstɪk] a ջղաձգային:
- spat** [spæt] 1. n զժտություն, վեճ. ապտակ. 2. v թակել, ծեծել:
- spate** [speɪt] n հեղեղ, տարափ. հորդ անձրև. The river is in ~ Գետը վարարել է. *փխբ.* բառերի տարափ/հեղեղ. a ~ of words բառերի տարափ:
- spatial** ['speɪʃl] a տարածական. տարածություն, տարածություն զբաղեցնող:
- spatter** ['spætə] n ցայտ, շիթ. a ~ of blood արյան շիթեր. a ~ of rain անձրևի ցնցուղ:
- spatter** ['spætə] v ցայտել, շիթել, շաղ տալ. The bus ~ed us with mud Ավտոբուսը ցեխ շաղ տվեց մեզ վրա/ցեխտոց. ~ed with paint ներկոտված:
- spatula** ['spætjʊlə] n (նկարչի) մածկիչ. (ծեփողի) մածկաթիակ:
- spawn** [spɔ:n] 1. n ձկնկիթ, խավիար. *բսբ.* սնկամարմին: 2. v ձկնկիթ դնել. ծնել, սերել. բազմանալ:
- speak** [spi:k] v խոսել, ասել, զրուցել. ելույթ ունենալ. ~ in a whisper/in a loud voice/many/several languages շշուկով/բարձրաձայն խոսել. շատ/միջանի լեզուներով խոսել ~ one's mind արտահայտվել. ~ one's lines *բատր.* իր դերն ասել. ~ to the point գործից խոսել. ~ing personally իր կարծիքն արտահայտել. generally ~ing ընդհանուր առմամբ. properly ~ing իսկն ասած, իսկապես. strictly ~ing խիստ ասած. ~ing for myself Ինչ վերաբերում է ինձ. ~ in public հասարակական ելույթ ունենալ. May I ~? Կարո՞ղ եմ ելույթ ունենալ. Չայն եմ խնդրում. The facts ~ for themselves Փաստերն իրենք իրենց մասին են խոսում. No money/book/shop to ~ of *խոսելու* արժանի գումար/գիրք/խանութ չկա. ~ up բարձր/հստակ խոսել. արտահայտվել. ~ up for one's principles պաշտպանել իր սկզբունքները:
- speaker** ['spi:kə] n հռետոր, ճառախոս,

ելույթ ունեցող. ճադիոհաղորդավար. native ~ լեզուն կրողը, լեզվակիր. a native English ~ մայրենի լեզուն՝ անգլերենը խոսող He is a native ~ Դա նրա մայրենի լեզուն է Russian ~s ռուսերեն խոսողներ. prosaic ~ ծանծրալի հռետոր. the S~ պառլամենտի խոսնակ (ՄԲ). Համայնքների պալատի նախագահ. ~s բարձրախոս:

**speaking** ['spi:kɪŋ] a խոսող. խիստ արտահայտիչ. շատ նման, իսկը. within ~ distance լսելիության սահմաններում. not to be on ~ terms իրար հետ չխոսել. ~ likeness *փխբ.* շատ նման լինելը. շատ մեծ նմանություն. ~ tube խոսափող. մեզաֆոն:

**speaking** ['spi:kɪŋ] v (*հեռ.*) լսում եմ, ես եմ:

**spear** [spiə] n նիզակ, տեգ:

**spear** [spiə] v նիզակով խոցել. խրվել, մխվել:

**spearhead** ['spiəhed] n նիզակի ծայր:

**spearman** ['spiəmən] n նիզակակիր:

**special** ['speʃl] n հատուկ, արտակարգ. բերթի արտակարգ համար. հատուկ նպատակի գնացք:

**special** ['speʃl] a հատուկ, արտակարգ, մասնավոր. a ~ treatment հատուկ վերաբերմունք. a ~ messenger հատուկ հանձնակատար. take ~ care հատուկ խնամք տանել. a ~ day արտակարգ օր. ~ friend մեծ/ամենավաղ բարեկամը. ~ correspondent հատուկ թղթակից. ~ delivery շտապ առաքում. ~ powers *քղբ.* արտակարգ լիազորություններ:

**specialist** ['speʃlɪst] n մասնագետ. a ~ in chemistry քիմիկոս, քիմիայի մասնագետ. an eye/heart ~ աչքի/սրտի մասնագետ:

**speciality** [,speʃi'æləti] n մասնագիտություն. make a ~ մասնագիտանալ. Her ~ is Greek tragedy Հունական ողբերգությունը նրա մասնագիտությունն է. This dish is my ~ Այս ուտեստը իմ ֆիրմայինն է:

**specialize** ['speʃlaɪz] v մասնագիտանալ. ~ in mathematics մասնագիտանալ մաթեմատիկայի մեջ:

**specially** ['speʃli] adv հատկապես. It was ~ made for you Դա հատկապես ձեզ համար էր արված. ~ tailored հատուկ պատվերով կարած:

**specie** ['spi:ʃi] n հնչուն դրամ. in ~ կանխիկ դրամով. բնամթերքով:

**species** ['spi:ʃi:z] n դաս, ցեղ, տիպ. the origin of ~ տեսակների ծագումը. the human ~ մարդկային ցեղը. a ~ of blackmail նենգաշորթության/նենգասպառնալիքի մի տեսակ:

**specific** [spə'sɪfɪk] a հատուկ, յուրահատուկ, առանձնահատուկ. a ~ remedy հատուկ/առանձնահատուկ միջոց/դեղ. a ~ purpose հատուկ/որոշակի նպատակով. ~ gravity *ֆիզ.* տեսակարար կշիռ:

**specification** [,spesə'fɪkeɪʃn] n հատկորոշում, դասակարգում. բնորոշող փաստաթուղթ. *հմկրգ.* սպեցիֆիկացիա, նկարագրում. ~ language *հմկրգ.* նկարագրությունների լեզու. ~ statement *հմկրգ.* նկարագրության օպերատոր:

**specifier** [spesə'faɪə] n *հմկրգ.* նկարագրիչ, սպեցիֆիկատոր:

**specify** ['spesəfaɪ] v ճշտել, հատկությունը որոշել. նախատեսել, թվարկել. ~ the colour ճշտել/ճշգրտել գույնը:

**specimen** ['spesəmɪn] n նմուշ, օրինակ. blood/urine ~ *բժշկ.* արյան/մեզի փորձարկում. ~ copy սիգնալային օրինակ ~ signature տպագրության նմուշ. (մարդ, անձնավորություն) a queer ~ տարօրինակ մարդ/ տիպ:

**specious** ['spi:ʃəs] a պատշաճ, հարմար. ճշմարտանման:

**speck** [spek] n բիծ, պուտ. a ~ of dust փոշու հատիկ. Not a ~ of dirt anywhere Ոչ մի տեղ կեղտի բիծ չկար:

**speckle** ['spekl] n բծիկ, պիսակ:

**speckled** ['spekld] a բծավոր, պուտավոր, պիսակավոր. a ~ hen չալիկ, չալպտուրիկ հավիկ:

**specs** ['speks] n *խսկց.* ակնոց:

**spectacle** ['spektəkl] n տեսարան, պատկեր. a lamentable/moving/sad ~ ողբալի/հուզիչ տեսարան. տխուր տեսարան/պատկեր. ~s *խսկց.* specs (*մակ* a pair of ~s) ակնոց. through rose-coloured ~s վարդագույն ակնոցով/ակնոցի միջով. ~ case ակնոցի պատյան:

**spectacled** ['spektəklɪd] a ակնոց կրող, ակնոցավոր:

**spectacular** [spek'tækjʊlə] a տպավորիչ, ազդու. էֆեկտավոր. *խսկց.* ցնցող, շշմեցուցիչ. a ~ success ցնցող հաջողություն:

**spectator** [spek'teɪtə] n հանդիսատես. դիտող, ականատես:

**spectral** [ˈspektrəl] a տեսիլային, ուրվականի. *ֆիզ.* լուսապատկերային, սպեկտրային:

**spectre** [ˈspektə] n տեսիլ, ուրվական:

**spectrum** [ˈspektrəm] n *ֆիզ.* լուսապատկեր, սպեկտր:

**specular** [ˈspekjulə] a հայելանման, անդրադարձնող. արտացոլող (մակերես):

**speculate** [ˈspekjuleɪt] v մտածել, խորհրդածել. ~ upon the future խորհրդածել ապագայի մասին. *ֆին.* սպեկուլյացիայով զբաղվել. ~ in shares/currency արժեթղթերի/արժույթների սպեկուլյացիայով զբաղվել:

**speculation** [ˌspekjuˈleɪʃn] n խորհրդածում. մտածումնք. սպեկուլյացիա, չարաշահում. ենթադրություն. It's pure ~ Դա լոկ ենթադրություն է. ~ in gold ոսկու սպեկուլյացիա:

**speculative** [ˈspekjulətɪv] a մտահայեցողական. սպեկյուլատիվ:

**speculator** [ˈspekjuleɪtə] n մտածող, խորհող. սպեկյուլանտ մարդ:

**speech** [spi:tʃ] n խոսք, խոսողություն. freedom of ~ խոսքի ազատություն. maiden ~ առաջին ելույթը. deliver/make a ~ ճան արտասանել. (բարբառ, խոսվածք. խոսելու ձև/եղանակ) By his ~ you can say where he is from Նրա խոսվածքից կարելի է կռահել, թե նա որտեղից է. ~ day տարեվերջյան հանդես ուսումնական հաստատություններում:

**speechless** [ˈspi:tʃləs] a համր, լռակյաց, լուռ. պապանձված/սարսափից և այլն/. be left ~ խոսելու ունակությունը կորցնել, պապանձվել. ~ with fury կատաղությունից լալկված:

**speed** [spi:d] n արագություն. at full ~ լիընթաց արագությամբ. at/with lightning ~ կայծակնային արագությամբ. ~ of light/sound լույսի/ձայնի արագություն. gather ~ արագություն զարգացնել. exceed the ~ limit գերազանցել թույլատրելի արագությունը: ~ merchant *խսկց.* փաթերակավոր վարորդ (լիխաջ):

**speed** [spi:d] v արագ շարժվել, սրընթաց գնալ. սլանալ. The years ~ by Տարիները սլանում են. ~ up արագացնել. ~ up work աշխատանքի ընթացքը արագացնել. The train is ~ing up Գնացքը արագություն է զարգացնում:

**speedboat** [ˈspi:dbəʊt] n արագընթաց մոտորանավակ/կատեր:

**speedily** [ˈspi:dɪli] adv արագորեն:

**speedometer** [spiˈdɒmɪtə] n արագաչափ, սպիդոմետր:

**speedway** [ˈspi:dwei] n մրցուղի:

**speedy** [ˈspi:di] a արագ, արագընթաց, սրընթաց. անհապաղ. a ~ recovery/service արագ ապաքինում/սպասարկում. a ~ answer անհապաղ պատասխան:

**spell** [spel] v հեգել (բառը). ~ the word բառը տառ առ տառ ասել. How do you ~ this word? Ինչպե՞ս է այս բառը գրվում. He can't ~ Նա սխալներով է գրում. ~ disaster աղետ սպառնալ/գուշակել ~ out վերժանել, մեկնաբանել. ~ out the problem հարցը մանրամասն քննարկել/ծամծմել/բացատրել. spell checker *հմկրգ.* սրբագրիչ:

**spell I** [spel] n կախարդանք, հմայություն, դյուբում. թովչանք. under the ~ of music երաժշտությամբ հմայված. cast a ~ հմայել, թովել. break the ~ հմայքը խախտել:

**spell II** [spel] n հերթ. take ~s at work հերթով աշխատել. take a ~ at the wheel իր հերթին մեքենան վարել. (ժամանակաշրջան, ժամանակամիջոց) by/in ~s ժամանակ առ ժամանակ. a ~ of cold weather ցրտերի ժամանակաշրջան. a bad ~ վատ ժամանակաշրջան. a ~ of duty հերթապահություն:

**spellbind** [ˈspelbaɪnd] v հմայել, թովել, կախարդել:

**spellbound** [ˈspelbaʊnd] a հմայված, կախարդված. հափշտակված. hold the audience ~ հանդիսատեսին կախարդել:

**speller** [ˈspelə] n ուղղագրության տարրական դասագիրք:

**spelling** [ˈspeliŋ] n ուղղագրություն:

**spelling-book** [ˈspeliŋbʊk] n ուղղագրական վարժությունների ժողովածու:

**spencer** [ˈspensə] n բրոյա կարճ բաճկոնակ:

**spend** [spend] v ծախսել. ~ money փող ծախսել. ~ a fortune հսկայական գումար ծախսել. (անցկացնել, վատնել) ~ time ժամանակ անցկացնել. He spent a week in Paris Նա մի շաբաթ Փարիզում անցկացրեց. ~ one's spare time ազատ ժամանակն անցկացնել. ~ energy ջանքեր/էներգիա ծախսել. The water is spent Զուրը վերջացել է:

**spending** [ˈspendiŋ] n ծախսեր. Government

~ կառավարական ծախսեր. ~ power գն-  
դունակություն:

**spendthrift** ['spendθrɪft] n շռայլ/վատնող/  
անխնայ ծախսող մարդ:

**spent** [spɛnt] a ուժասպառ, սպառված:

**sperm** [spɜ:m] n *կենս.* սերմ, սերմնահեղուկ:

**sphere** [sfɪə] n գլոբուս. *մաթ.* գունդ. (ասպարեզ, շրջան) ~ of activity/influence գործու-  
նեության ասպարեզ. ազդեցության շրջան.  
out of one's ~ իրազեկությունից/իրավասու-  
թյունից դուրս:

**spherical** ['sferɪkl] a գնդաձև. ոլորտային:

**sphinx** [sfɪŋks] n սֆինքս:

**spice** [spais] n համեմունք. *փխբ.* գրավ-  
չություն, հետաքրքրություն. համուհոտ.  
*փխբ.* (զգայացունց. բարկահամ) add ~ to the  
story պատմությանը հրապուրանք ավելաց-  
նել:

**spice** [spais] v համեմել, համեմունք գցել.  
*փխբ.* հետաքրքրություն/գրավչություն  
տալ. The dish was highly ~d *Կերակուրի մեջ*  
շատ համեմունք կար:

**spick** [spɪk] a - and - span կոկիկ, շատ մա-  
քուր. The house is ~ Տունը մաքրությունից  
փայլում է. She is always ~ Նա միշտ կոկիկ է  
հագնված:

**spicy** ['spaisi] a համեմված, սուր, կծու. հա-  
մուհոտով. *փխբ.* զգայացունց, զրգռիչ:

**spider** ['spaidə] n սարդ. *փխբ.* արյուն ծծող,  
արնախում. բանասարկու:

**spidery** ['spaidəri] a սարդաման. շատ  
բարակ, նուրբ:

**spiffy** ['spifi] a *խսկց.* պծնագեղ, նրբագեղ.  
զեղեցիկ:

**spike** I [spaɪk] n մեխ, բևեռ. սուր ծայր. սեպ,  
պայտասեպ. եղջյուր:

**spike** II [spaɪk] n հասկ:

**spike** [spaɪk] v ծակել, մեխել, խփել. ~d shoes  
սեպերով կոշիկներ:

**spiky** ['spaɪki] a սրածայր, սուր:

**spill** [spɪl] n թափել (հեղուկը), շաղ տալ.  
*խսկց.* վայր ընկնել (ծիուց, հեծանիվից). ~  
wine/milk գինի/կաթ թափել. ~ the contents to  
the floor պարունակությունը գետնին թա-  
փել. The boat turned and we were spilt into the  
water Նավակը շրջվեց, և մենք ընկանք ջրի  
մեջ/ջուրը թափվեցինք. No use crying over  
spilt milk *փխբ.* Կորցրածը ետ չես վերա-  
դարձնի:

**spin** [spɪn] v մանել, ոլորել, գործել. ~ a web  
ոստայն գործել. ~ a yarn *փխբ.* անհեթեթու-  
թյուններ դուրս տալ. (պտտել, պտտեցնել)  
~ a wheel անիվ պտտել. ~ round պտտվել  
The dancers were ~ning faster Պարողներն  
ավելի արագ էին պտտվում My head is ~ning  
Գլուխս պտտվում է. ~ for fish ծուկ բռնել. ~  
out ձգել. ~ out the work աշխատանքը ձգել.  
~ out the money till pay day փողը ձգել մինչև  
աշխատավարձի օրը:

**spin** [spɪn] n պտտելը, պտույտ տալը.  
պտույտ. պտույտեջք/շտոպոր/. go into/get  
out of a ~ մտնել պտույտեջք, դուրս գալ  
պտույտեջքից. go for a/take a ~ զբոսաշրջել:

**spinach** ['spɪnɪdʒ] n սպանախ:

**spinal** ['spainl] a *կզմխ.* ողնաշարի, ողնա-  
շարային. ~ column ողնաշար. ~ cord ողնու-  
ղեղ:

**spindle** ['spɪndl] n իլիկ. *տեխ.* սոնի,  
առանցք:

**spindling** ['spɪndlɪŋ] a երկար ու բարակ.  
երկարահասակ ու նիհար:

**spin-drier** [,spɪn'draɪə] n չորացնող սարք:

**spindrift** ['spɪndrɪft] n ծովափրփուր.  
ծովաջրի ցայտուկներ:

**spine** [spain] n *կզմխ.* ողնաշար. *կենս.* փուռ,  
ասեղ. (գրքի) կռնակ, կազմի մաս:

**spineless** ['spainləs] a *կզմխ.* անողնաշար.  
*փխբ.* թուլական, անկայուն անողնաշար:

**spinner** ['spɪnə] n մանող, մանորդ:

**spinney** ['spɪni] n մացառուտ, թփուտ.  
անտառակ, պուրակ:

**spinning** ['spɪnɪŋ] n մանում, մանելը. ~ rod  
ծկնորսական կարթ:

**spinster** ['spɪnstə] n չամուսնացած կին.  
*խսկց.* պառաված օրիորդ:

**spiral** ['spairəl] 1. n գալար, պարույր. in a ~  
գալարագծով. 2. a գալարածև, պարու-  
րածև. a ~ staircase գալարածև աստիճան:

**spiral** ['spairəl] v գալարվել, պարուրվել. ~  
into a depression ընկնել դեպրեսիայի մեջ:

**spirant** ['spairənt] 1. n շփական բաղաձայն.  
2. a շփական:

**spire** ['spairə] n ծայրածող, սրածող. սրա-  
ծայր գագաթ:

**spirit** ['spɪrɪt] n ոգի, հոգեկան կորով. the life  
of the ~ հոգեկան կյանք. unbroken ~ ան-  
նկուն հոգի. put ~ into կենդանություն տալ.  
~ and letter տառ ու ոգի. (անձ, հոգի) kindred



~s հարազատ հոգիներ. the leading ~ ընկերակցության ոգին (եռանդ, ոգևորություն) high/bad, low ~s բարձր/վատ տրամադրություն. keep one's ~s չընկճվել. be out of ~s անտրամադիր լինել. have great ~s հոգով ուժեղ լինել. be in excellent/high/poor ~s գերազանց/բարձր/վատ տրամադրության մեջ լինել. lack ~s կենսական ուժերը չբավարարել. fighting ~ մարտական ոգի. take smth in the wrong ~ ճիշտ/այնպես չհասկանալ. *քիմ.* սպիրտ ~s ալկոհոլային խմիչքներ. raw ~ մաքուր սպիրտ. a ~ lamp/stove սպիրտայրոց. drink ~s ոգելից խմիչքներ օգտագործել:

**spirited** ['spiritid] a աշխույժ, կենդանի, համարձակ. a ~ argument տաք վեճ. a ~ performance ոգեշնչված ներկայացում:

**spiritual** ['spiritʃuəl] 1. a հոգևոր, հոգեկան. ~ heir հոգևոր ժառանգ. (կրոնական, սրբազան) 2. n a (negro) ~ նեգրական սպիրիչուալ:

**spiritualism** ['spiritʃuliz(ə)m] հոգեհմայություն:

**spiry** I ['spaiəri] a սրածայր:

**spiry** II ['spaiəri] a պարուրած, գալարած. գալարված, ոլորված:

**spit** I [spit] n *աշխրգ.* ցամաքալեզվակ. երկարածիգ առափնյա ծանծաղուտ. շամփուր, շիշ:

**spit** II [spit] n թուք, թքածո. the dead ~ of մեկի իսկական պատկերը. թքից ընկած:

**spit** [spit] v թքել (*out* ~ *out/up*) ~ blood արյուն թքել. ~ at թշնամաբար վերաբերվել. S~ it out! Շուտ ասա՛, մի՛ ծածկիր. ~ in one's face երեսին թքել. (Ֆշագնել) The cat spat at the dog Կատուն ֆշագրեց շան վրա. (թշալ) The meat is ~ting in the pan Միսը թշշում է տապակի մեջ. It began to ~ Սկսեց անձրև կաթել/անձրևել:

**spite** [spait] n չարություն, ոխ, քեմ. out of ~ չարությունից դրդված. He has a ~ against me Իմ դեմ ոխ ունի. in ~ of չնայած, հակառակ. in/for ~ ի հեճուկս, ջիգրու:

**spiteful** ['spaitfʃl] a չար, ոխակալ, չարախինդ:

**spitfire** ['spit,faɪə] n դյուրագրգիռ/տաքարյուն մարդ:

**spittle** ['spitl] n թուք, թքածո:

**spittoon** [spi'tu:n] n թքաման:

**spiv** [spiv] n *խսկց.* խորամանկ/ճարպիկ մարդ:

**splash** [splæʃ] n ճողփյուն, ցայտուցրիվ անելը. The stone fell into the water with a ~ քարը ճողփյունով ջուրն ընկավ. make a ~ աղմուկ բարձրացնել. The news made a ~ Լուրը/Նորությունը մեծ աղմուկ բարձրացրեց. (թիծ) a ~ of colour ներկի թիծ:

**splash** [splæʃ] v շաղ տալ, շփել, ցայտել. ~ water at smn մեկի վրա ջուր շփել. ~ milk կաթը թափել. ~ the coat with mud վերարկուն ցեխտտել. The hot fat ~ed on her Sաք յուղը ցայտեց/թռավ նրա վրա. ~ money about փողը քամուն տալ/ցփնել. (չլմփացնել, ճողպել) She was ~ing in the water Նա չլմփացնում էր ջրում. ~ down ջրեք կատարել (ինքնաթիռ):

**splash-board** ['splæʃbɔ:d] n ցայտաշիթերից պահպանող հարմարանք:

**splashy** ['splæʃi] a ցեխտտված, կեղտոտված, վրան ցուլքեր թռած:

**splay** [splei] n, a թեք հարթություն, թեքություն. թեք, շեղ. փռված, լայնացած:

**splay-foot** ['spleifʊt] n ծռաթաթություն, ծուռթաթություն:

**spleen** [spli:n] n *կզմիս.* փայծաղ. (չարություն, մաղձ) act out of ~ չարությունից դրդված անել. vent one's ~ upon մաղձը մեկի վրա թափել. (մեխամաղձոտություն) a fit of ~ մեխամաղձության նոպա:

**spleenful** ['spli:nfʃl] a մռայլ, մաղձոտ. դյուրագրգիռ:

**splendent** ['splendənt] a փայլուն, պայծառ, շողշողուն:

**splendid** ['splendid] a հոյակապ, փառահեղ. հիանալի, սքանչելի. *խսկց.* առաջնակարգ:

**splendour** ['splendə] n ճոխություն, պայծառություն. փայլ:

**splenic** ['splenik] a փայծաղի:

**splice** [splais] 1. n միահյուսում, հանգույց. կցորդ. 2. v միահյուսել, միացնել, կպցնել. *խսկց.* ամուսնանալ, ամուսնացնել:

**splint** [splint] n *բժշկ.* բեկակալ (շինա):

**splinter** ['splintə] n բեկոր, տաշեղ. մատի փուշ. run a ~ փուշ մտնել. ~ group անջատված/ կապերը խզած խումբ/խմբավորում:

**splinter** ['splintə] v կոտրել, ~ wood փայտ կոտրել. ~ glass ապակին/հայելին կոտրել(վ)ել:

**splinterproof** [ˈsplɪntəpruːf] a չկոտրվող, չփշրվող:  
**split** [splɪt] n ճեղքում, երկփեղկում, պառակտում, խզում:  
**split** [splɪt] v ճեղքել, կոտրել, մասերի բաժանել, The blow ~ his head հարվածը ճեղքեց նրա գլուխը, This issue ~ the party Այս հարցը պառակտեց կուսակցությունը, The lightning ~ the tree Կայծակը ճեղքեց ծառը, ~ the atom *ֆիզ*, ատոմը ճեղքեց, ~ hairs մանրուքներով զբաղվել, ~ with laughter ծիծաղից պայթել, (բաժանել) ~ the difference տարբերությունը բաժանել/կիսել, ~ the money փողը մասերի բաժանել, (պայթել, պատռվել) The bag ~ open Պարկը պատռվեց, ~ with զժտվել, ~ up անջատվել, The crowd ~ up Ամբոխը ցրվեց, They ~ up after three years of marriage Երեք տարվա ամուսնությունից հետո նրանք բաժանվեցին, ~ off պոկվել:  
**split-level** [ˈsplɪtlɛvl] n տարբեր մակարդակներ, a ~ house տարբեր մակարդակների վրա կառուցած շենք:  
**splitting** [ˈsplɪtɪŋ] a սաստիկ, ուժեղ, ~ headache ահավոր գլխացավ, ~ speed գլխապտույտ արագություն:  
**splotch** [splɒtʃ] n կեղտոտ բիծ, կեղտաբիծ:  
**splurge** [splɜːdʒ] n պարծենկոտություն;  
**splutter** [ˈsplʌtə] n վեճ, իրարանցում, արագ/անպարզ խոսք:  
**splutter** [ˈsplʌtə] v կակազելով խոսել, (թշտալ) ~ with rage *փխք*, կատաղությունից եռալ/թշտալ, (ճրթճրթալ) The candle/wood was ~ing Մոմը/Փայտը ճրթճրթում էր:  
**spoil** [spɔɪl] n ավար, կողոպուտ, ~s ռազմավար, ~ of war պատերազմի ռազմավար, ~s system “ավարի համակարգ”, (հաղթանակած կուսակցության պաշտոնների բաժանում իր կողմնակիցներին):  
**spoil** [spɔɪl] v փչացնել, երես տալ, փչանալ, թալանել, հափշտակել, ~ the view տեսարանը փչացնել, ~ the appetite ախորժակը փչացնել, ~ the effect տպավորությունը փչացնել, ~ the child երեխային երես տալ, ~ for a fight *փխք*, կռվի մեջ խցկվել, ~t ballot paper անվավեր քվեաթերթիկ:  
**spoilage** [ˈspɔɪlɪdʒ] n փչացում, փչանալը, փչացած ապրանք:  
**spoilsman** [ˈspɔɪlzmən] n *ամ*, քաղաքական

ծառայությունների համար պաշտոն ստացած անձ:

**spoilsport** [ˈspɔɪlspɔːt] n հաճույքը փչացնող մարդ, He is such a ~ Նա միշտ ամեն ինչ փչացնում է:

**spoke** [spəʊk] n անվաճաղ, (շարժական աստիճանի) սանդղամատ, put a ~ in one's wheel խոչընդոտներ ստեղծել, խանգարել:

**spoken** [ˈspəʊkən] a խոսակցական, բանավոր, a ~ language խոսակցական լեզու, a ~ promise բանավոր խոստում:

**spokesman** [ˈspəʊksmən] n պատգամավոր, ներկայացուցիչ, խոսնակ, a government ~ կառավարության ներկայացուցիչ:

**sponge** [spʌndʒ] n սպունգ, վվացում, give smb a ~ լողացնել մեկին, have a ~ down սպունգով շփվել, ~ bag լողանալու պարագաների պայուսակ, ~ cake բիսկվիտ, throw/chuck up the ~ *փխք*, հանձնվել, իրեն պարտված ճանաչել:

**sponge** [spʌndʒ] v սպունգով վվանալ/շփել, ~ a carpet կարպետը մաքրել ~ one's face սպունգով դեմքը վվանալ, (ուրիշի հաշվին ապրել) He ~d a fiver off me Ինձնից 5 դոլար պոկեց, ~ing on/off the friends ընկերների հաշվին ապրել:

**sponger** [ˈspʌndʒə] n ծրիակներ, պորտաբույծ:

**spongy** [ˈspʌndʒi] a սպունգանման, ծակոտկեն:

**sponsor** [ˈspɒnsə] n երաշխավոր, հովանավոր, դրամական օգնություն ցույց տվող անձ/կազմակերպություն, stand ~ for smb երաշխավորել մեկին, the ~ of the programme ծրագիրը ֆինանսավորող անձ/ֆիրմա, ~ of a resolution բանաձևի/նախագծի հեղինակ:

**sponsor** [ˈspɒnsə] v երաշխավորել, ֆինանսավորել, օժանդակել, ~ a new member նոր անդամ երաշխավորել, ~ a competition մրցույթ ֆինանսավորել:

**sponsorship** [ˈspɒnsəʃɪp] n հովանավորություն, ֆինանսավորում, օժանդակում:

**spontaneity** [ˌspɒntəˈneɪəti] n ինքնաբերականություն, ինքնաբերություն:

**spontaneous** [spɒnˈteɪniəs] a ինքնաբեր, տարերային, ինքնաբուխ, հանպատրաստից, ~ demonstration տարերային ցույց, His offer was ~ Նրա առաջարկը հանպատրաստից/ուղքի վրա արվեց:

**spook** [spu:k] *n* *խսկց.* ուրվական:

**spooky** [ˈspu:ki] *a* *խսկց.* սարսափելի. *a* ~ film ֆիլմ-սարսափ:

**spool** [spu:l] *n* կոճ, թելակոճ. *a* ~ of film լուսանկարչական ժապավենի կոճ:

**spoon** I [spu:n] *n* գդալ. dessert/table/tea ~ աղանդերի, անուշեղենի/ճաշի/թեյի գդալ. be born with a silver ~ in one's mouth երջանիկ աստղի տակ ծնվել:

**spoon** II [spu:n] *n* միամիտ/սիրահարված մարդ. be ~s սիրահարված լինել:

**spoon-feed** [ˈspu:nfi:d] *v* գդալով սնել. *փխբ.* խիստ հովանավորել/խնամակալել. Mothers shouldn't ~ their children Մայրերը չպետք է շատ հովանավորեն իրենց երեխաներին:

**spoonful** [ˈspu:nfʊl] *n* մի լիքը գդալ. *a* ~ of honey մի գդալ մեղր:

**spoony** [ˈspu:ni] *n* սենտիմենտալ սիրահար. սիրահարված:

**spoor** [spuə] *n* հետք, հետքեր:

**sporadic** [spəˈrædik] *a* եզակի, հատուկեմտ, պատահական:

**sporadically** [spəˈrædikli] *adv* պատահականորեն:

**spore** [spɔ:ɪ] *n* *բւբ.* սպոր, բեղմնիկ:

**sport** [spɔ:t] *n* սպորտ, մարզանք. որս, ձկնորսություն. սպորտի տեսակ. մարզական խաղեր. outdoor/indoor ~s բացօթյա խաղեր, խաղեր փակ տարածքում (շենք և այլն). go in for ~s սպորտով զբաղվել. be good at ~s լավ մարզիկ լինել. ~s մարզական մրցումներ. school ~s դպրոցական մրցումներ. (ժամանց, զվարճալիք, կատակ) have good ~ լավ ուրախանալ. լավ որս անել. make ~ ծաղրել. It was great ~ Շատ ծիծաղելի էր. a good ~ լավ տղա, հիանալի մարդ. (պճնամուլ) ~ing a flashy tie մոդայիկ փողկապ ցուցադրել:

**sporting** [ˈspɔ:tiŋ] *a* որսորդական. give smn *a* ~ chance *խսկց.* մեկին ասպետաբար վերաբերվել, մեծահոգի լինել:

**sports** [spɔ:ts] *a* մարզական. ~ ground/page/wear/commentator մարզադաշտ. մարզական էջ/հագուստ/մեկնաբան:

**sportsman** [ˈspɔ:tsmən] *n* մարզիկ. որսորդ:

**sportsmanship** [ˈspɔ:tsmənʃɪp] *n* մարզական վարպետություն. ազնվություն, շիտակություն:

**sporty** [ˈspɔ:ti] *a* *խսկց.* ցուցական, պճնամուլական. քաջարի, խիզախ, հանուզ:

**spot** [spɔt] *n* բիծ, բծիկ. *փխբ.* պուտ, խայտ. *a* ~ of blood/dirt արյան/կեղտի բիծ. *a* dress with red ~s կարմիր պուտերով շոր. ~ of rain անձրևի կաթիլ. (ցան) come out in ~s ցան դուրս տալ. *խսկց.* փոքր քանակություն just *a* ~ of milk մի քիչ կաթ, have *a* ~ of lunch մի թեթև ուտել. (տեղ, վայր) *a* lovely ~ գեղեցիկ վայր. on the ~ անմիջապես, տեղնուտեղը. blind ~ մեռյալ կետ. tender ~ խոցելի տեղ. weak ~ թույլ տեղ. an accident ~ ճանապարհի վտանգավոր հատված. He is in *a* tight ~ Ես դժվար կացության մեջ եմ. ~ cash կանխիկ հաշվարկ/վճարում. ~ remover կեղտահան միջոց. ~ announcement արտակարգ հաղորդում:

**spot** [spɔt] *a* ընթացիկ. ~ market ընթացիկ շուկա. ~ rate ընթացիկ դրույթ. ~ transaction ընթացիկ գործարք:

**spot** [spɔt] *v* բծոտել, բիծ դնել. կեղտոտել. *փխբ.* արատավորել. *a* page ~ted with ink թանաքոտած էջ. (նկատել) ~ the mistake սխալը նկատել. ~ the winner որոշել հաղթողին:

**spotless** [ˈspɔtləs] *a* մաքուր, անբիծ, անբասիր. ~ white suit անբիծ սպիտակ կոստյում:

**spotlight** [ˈspɔtlaɪt] *n* *թատր.* լուսարծակ:

**spot on** [ˌspɔtˈɒn] *a* *խսկց.* նյութին անմիջապես վերաբերող. What he said was ~ Նրա ասածը ճիշտ նշանին խփեց:

**spotted** [ˈspɔtid] *a* բծավոր, խայտաբղետ, խատուտիկ. *փխբ.* արատավորված. *a* ~ tie պուտավոր փողկապ. ~ fever *բժշկ.* բծավոր տիֆ:

**spotty** [ˈspɔti] *a* բծավոր, խատուտիկ. պուտապուտ. ~ skin բշտիկավոր մաշկ:

**spousal** [ˈspauzl] *a* ամուսնական:

**spouse** [spaus] *n* ամուսին (այր, կին):

**spout** [spaut] *n*, *v* ծորակ. քիթ (թեյաման և այլն). (շի, անոթի) վզիկ, բերան. ջրի ուժեղ հոսանք/շիթ. Water was ~ing from the pipe Ջուրը շիթով դուրս էր խփում խողովակից. ~ for hours *փխբ.*, *խսկց.* շատախոսել:

**sprain** [spreɪn] *n* *բժշկ.* ջիլերի ձգում (վնաս). *v* ջղերը ձգել. ~ one's ankle Կոճը (ձգելով) վնասել:

**sprat** [spræt] *n* շարոտ, կիլկա:

**sprawl** [sprɔ:ɪ] v (զետիմ) փռվել, մեկնվել, ձգվել ամբողջ երկարությամբ. տարածվել (բույսը). He was ~ing on the sofa Նա մեկնվել էր բազմոցի վրա. The blow send him ~ing Հարվածից նա գետիմ փռվեց:

**sprawly** [ˈsprɔ:li] a փռվող, տարածվող. սողացող (բույս):

**spray** I [sprei] n ճյուղ, շիվ. ողկույզ. ~ of lilac յասամանի ճյուղ:

**spray** II [sprei] n կաթիլներ, ջրափոշի. հեղուկի ցայտուկներ. the ~ of a waterfall ջրվեժի ցայտեր. հեղուկ նյութ (օծանելիք և այլն) հեղուկացրելու համար. hair ~ մազերի լաք. insecticide ~ թունաքիմիկատ փչելու համար. հեղուկացիր (պուլվերիզատոր):

**spray** [sprei] v հեղուկացրել, ցողացրել. ցողել, սրսկել (բույսերը). ~ plants բույսերը սրսկել. ~ oneself with scent օծանելիք փչել. ~ foam on flames բոցերի վրա փրփրաջուր փչել:

**sprayer** [ˈspreiə] n հեղուկացիր, պուլվերիզատոր. տեխ. փոշեցրիվ ամող գործիք, սրսկիչ:

**spread** [spred] n տարածում, ընդլայնում. stop the ~ դադարեցնել/կանգնեցնել տարածումը. (բացվածք, լայնք) the wide ~ of the country լայն տարածքներ. (հացի վրա քսելու բան) cheese ~ հալած պանիր. There was a marvelous ~ on the table փխբ. Սեղանը լիքն էր համեղ խորտիկներով:

**spread** [spred] v տարած(վ)ել, ծավալ(վ)ել, փռել. ~ a rug on the floor հատակին խսիր/կարպետ փռել. ~ one's hands մատները չռել. ~ one's wings թևերը տարածել. ~ a map/cards քարտեզը/խաղաքարտերը փռել. (քսել) ~ butter on bread հացին կարագ քսել. ~ jam all over the face դեմքին ջեմ քսման. (տարածել) ~ knowledge/news գիտելիք/լուր տարածել. ~ panic խուճապ առաջացնել. ~ payment վճարումը երկարաձգել. (տարածվել) The desert ~s very far անապատը շատ հեռու է տարածվում. The fire is ~ing կրակը տարածվում է:

**spread-eagle** [spredˈi:gl] a խսկց. փքուն, վերամբարձ. պարծենկոտ, ուռա-հայրենասեր:

**spread-eagleism** [spredˈi:gliz(ə)m] n ուռա-հայրենասիրություն:

**spree** [spri:] n ուրախություն, հաճույք. քեֆ.

have a wonderful ~ լավ ժամանակ անցկացնել/քեֆ անել. be out on a ~ քեֆի/ուրախության գնալ. a shopping ~ բազմազան/հաճելի գնումներ:

**sprig** [sprig] n ճյուղ, շիվ, ոստ:

**sprightly** [ˈspraitli] a աշխույժ, ուրախ. with a ~ step աշխույժ քայլվածքով:

**spring** I [sprɪŋ] 1. n գարուն. ~ is in the air Գարնան հոտ է գալիս. 2. a գարնանային:

**spring** II [sprɪŋ] n թռիչք, ցատկ, ոստյուն. զսպանակ, առածգականություն. զսպակ. a ~ mattress զսպանակավոր ներքնակ. coil ~ զսպանակավոր զսպակ:

**spring** III [sprɪŋ] n աղբյուր, ակնաղբյուր. hot/mineral ~ տաք/հանքային աղբյուր. ~ water աղբյուրի ջուր:

**spring** I [sprɪŋ] v ցատկել, ոստնել. ~ aside մի կողմ ցատկել. ~ to one's feet տեղից վեր թռչել. ~ up into the air օդ թռչել, վեր ցատկել. The dog sprang at him Շունը հարձակվեց նրա վրա. (պայթեցնել) ~ a mine ականը պայթեցնել. (ծլել) Grass is ~ing up խոտը ծլում է/բուսնում է. Tears sprang up to her eyes Աչքերը արցունքով լցվեցին. (ծագել, սերվել) His actions ~ from ... Նրա գործողությունները ծագում/գալիս են... Doubts ~ to mind Կասկածներ են առաջանում. Buildings are ~ing up like mushrooms Շենքերը սնկերի նման բուսնում են:

**spring** II [sprɪŋ] v բխել, ցայտել, խփել (աղբյուր):

**spring balance** [ˌsprɪŋˈbæləns] n ձեռքի զսպանակավոր կշեռք, բեզմեն:

**spring board** [ˈsprɪŋbɔ:d] n ցատկահարթակ, ցատկատախտակ. տրամպլին:

**spring head** [ˈsprɪŋhed] n աղբյուրի ակունք, աղբրակ:

**spring-tide** [ˌsprɪŋˈtaɪd] n բարձր մակընթացություն. բնստ. գարուն:

**springtime** [ˈsprɪŋtaɪm] n գարուն, գարնանային եղանակ. վաղ շրջան:

**springy** [ˈsprɪŋi] a առածգական, զսպանակավոր:

**sprinkle** [ˈsprɪŋkl] n մանր կաթիլներ, փշրանքներ, փոքր քանակություն. a ~ of rain անձրևի մի քանի կաթիլ:

**sprinkle** [ˈsprɪŋkl] v ցանել, սրսկել. ~ the lawn մարգագետինը սրսկել. ~ sand on the roads ճանապարհների վրա ավազ ցա-

նել/լցնել. The ground is ~d with daisies  
Գետինը ծածկված է մարգարտածա-  
ղիկներով:

**sprinkler** ['sprɪŋklə] n ցնցուղ, կրակմարիչ.  
սրսկիչ (գործիք). street ~ փողոցները ջրող  
ավտոմեքենա:

**sprint** [sprɪnt] 1. n մրզ. կարճ տարածության  
մրցավազք, սպրինտ. 2. v մեծ արագու-  
թյամբ կարճ տարածություն վազել:

**sprinter** ['sprɪntə] n կարճ տարածության  
մրցավազող, սպրինտեր:

**sprout** [spraut] n բողբոջ, շիվ, ընձյուղ. Brus-  
sels ~ բրյուսելյան կաղամբ:

**sprout** [spraut] v ծլել, բողբոջել, շիվեր տալ.  
~ new shoots նոր շյուղեր տալ. Mushrooms are  
~ing everywhere Սնկերը բուսնում են  
ամենուրեք:

**spruce** [spru:s] a կանադական եղևնի. pine  
~ եղևնի:

**spry** [sprai] a ժիր, ճարպիկ, աշխույժ. ուշիմ,  
խելամիտ:

**spunk** [spʌŋk] n *խսկ*. քաջություն, արիու-  
թյուն, եռանդ. He has no ~ Նա փախա է:

**spunky** ['spʌŋki] a քաջ, արի. կրակոտ;

**spur** [spɜ:] n խթան, կոշկախթան. set ~s to the  
horse ձիուն խթանել. win one's ~s աչքի  
ընկնել. a mountain ~ լեռնաճյուղ. He needs  
the ~ *փխք*. Նրան պետք է բզել. on the ~ of  
the moment թուպեի ազդեցության տակ:

**spur** [spɜ:] v խթանել, դրդել, մղել. be ~red on  
դրդված/ստիպված լինել:

**spurious** ['spjuəriəs] a կեղծ, շինծու. ~ rea-  
sons սուտ պատճառներ. ~ writings կեղծ  
թղթեր:

**spurn** [spɜ:n] 1. n արհամարհանք. 2. v  
արհամարհել, արհամարհանքով մերժել:

**spurt** [spɜ:t] n պոռթկում, ուժեղ շիթ/ցայտ. a  
~ of flame/water կրակի բոցկլտում. ջրի  
ուժեղ շիթ. put on a ~ պոկում կատարել,  
պոկվել. a ~ of energy ուժերի/էներգիայի  
հորդում:

**spurt** [spɜ:t] v ցայտել, շիթ արծակել. ~ from  
ժայթքել:

**sputter** ['spʌtə] n ֆշշոց, քշշոց. քքի  
ցայտուկ:

**sputter** ['spʌtə] v ֆշշալ, քշշալ:

**spy** [spai] n լրտես, գաղտնի գործակալ. ~  
ring լրտեսական կազմակերպություն:

**spy** [spai] v լրտեսել, լրտեսություն անել.

նկատել, գաղտնի հետևել. I spied him leav-  
ing the house Ես նկատեցի, թե ինչպես նա  
տանից դուրս եկավ. ~ on smb's movements  
հետևել գործողություններին. ~ the enemy  
լրտեսել/հետևել թշնամուն:

**spyglass** ['spaɪglɑ:s] n *խսկ*. հեռադիտակ:

**squabble** ['skwɒbl] 1. n վեճ, խոսքակռիվ.  
2. v մամր բաների համար վիճել/խոսքա-  
կռիվ անել:

**squabby** ['skwɒbi] a կարճահասակ, կարճ  
ու հաստիկ:

**squad** [skwɒd] n *գին*. դասակ, ջոկատ.  
խումբ. police ~ ոստիկանական ջոկատ. the  
flying ~ թեթևաշարժ/թռուցիկ ջոկատ. drug ~  
թմրամոլության դեմ պայքարող խումբ. awk-  
ward ~ *խսկ*. նորակոչիկների դասակ:

**squadron** ['skwɒdrən] n հեծելավաշտ,  
էսկադրոն. *ծով*. նավախումբ, էսկադրա. *ավ*.  
ավիաջոկատ, էսկադրիլիա. ~ leader ավիա-  
ջոկատի հրամանատար:

**squalid** ['skwɒlɪd] a կեղտոտ. աղքատիկ,  
խղճուկ, ողորմելի. live in ~ conditions  
խղճուկ/ողորմելի պայմաններում ապրել.  
It's a ~ business *փխք*. Դա կեղտոտ գործ  
է/զբաղմունք է:

**squall** [skwɔ:l] n ճիչ, ճղճոց. հանկար-  
ծական փոթորիկ. There are ~s ahead *փխք*.  
Մեզ անախորժություններ են սպասում.  
Look out for ~s! Զգուշացե՛ք վտանգից:

**squally** ['skwɔ:li] a պոռթկում. սրընթաց.  
*խսկ*. սպառնալից, վտանգավոր:

**squalor** ['skwɒlə] n անխնամություն. թշվա-  
ռություն:

**squander** ['skwɒndə] n վատնում, շռայլում:  
**squander** ['skwɒndə] v վատնել, շռայլել. ~  
away անխնա ծախսել. ~ one's fortune  
վատնել ամբողջ կարողությունը. ~ one's en-  
ergy էներգիան վատնել:

**square** [skweə] n *երկրչ*. քառակուսի. հավա-  
սարակողմ ուղղանկյունի. վանդակ. հրա-  
պարակ, զբոսապուրակ. black and white ~ s  
սև և սպիտակ վանդակներ/քառակուսիներ.  
*մաթ*. թվի քառակուսի. the ~ of 3 is 93-ի  
քառակուսին 9 է. T ~ *գծգր*. գծագրական  
քանոն, անկյունաքանոն. (ուղղանկյուն) be  
on the ~ ուղիղ անկյան տակ լինել. out of the  
~ շեղանկյան տակ լինել. (ազնիվ, անկեղծ)  
This deal is not on the ~ Սա անազնիվ  
գործարք է. He is a ~ *խսկ*. Նա շատ հին

հայացքների տեր մարդ է:  
**square** [skweə] a քառակուսի, ուղղահայաց. ~ brackets քառակուսի փակագիծ. ~ shoulders թիկնավետ/թիկնեղ անձ. a ~ corner ուղիղ անկյուն. a ~ root քառակուսի արմատ. (ազնիվ, ուղղամիտ) a ~ deal ազնիվ գործարք. (առատ, կուշտ) have a ~ meal կուշտ ուտել, առատ սեղան. Now we are all ~ *փխք*. Հիմա մենք բլիտ ենք. get ~ with *փխք*. հաշիվները մաքրել, վրեժ լուծել. ~ dance ժողովրդական պար:  
**square** [skweə] adv ուղիղ, ազնվորեն look ~ in the face ուղիղ դեմքին նայել. The house stands ~ with the theatre Տունը ուղիղ անկյան տակ է թատրոնի նկատմամբ:  
**square** [skweə] v մաթ. քառակուսի աստիճան բարձրացնել, քառակուսի դարձնել. հաշվեհարդար տեսնել. *խսկց*. կաշառել. ~ one's accounts հաշիվները կարգի բերել/մաքրել. ~ the porter դռնապահին կաշառել. That doesn't ~ with the facts Դա փաստերին չի համապատասխանում. (համաձայնվել, հաշտվել) I can't ~ that with Չեմ կարող հաշտվել այդ մտքի հետ:  
**square-built** [ˌskweəˈbɪlt] a թիկնավետ, թիկնեղ, ամրակազմ:  
**square-toes** [ˈskweətəʊz] n *խսկց*. հին հայացքների տեր մարդ. տառակեր, ձևապաշտ մարդ:  
**squash** [skwɒʃ] n հրմշտոց, հրիրոց. ամբոխ. a ~ in the bus հրմշտոց ավտոբուսում. a ~ at the box-office ամբոխ դրամարկղի մոտ. (խմիչք, մրգահյութ) lemon ~ լիմոնի մրգահյութ. լիմոնաղ:  
**squash** [skwɒʃ] v տրորել, ճզմել. խռնվել. The child got ~ed երեխային ճխլեցին. The parcel got ~ed Փաթեթը ճխլվեց. feel ~ed *փխք*. իրեն ստորացած զգալ. (խոթել, խցկել) ~ smth into a case ճամպրուկի մեջ ինչ-որ բան խցկել. We can ~ in one more Մի հոգու էլ կարող ենք խցկել:  
**squashy** [ˈskwɒʃi] a փափուկ, մսալի (միրգ). ճահճոտ հող, ճահճուտ:  
**squat** [skwɒt] n կարճահասակ, հաստամարմին:  
**squat** [skwɒt] v պագել, պագած նստել. կծկվել, կուչ գալ. ապօրինի գրավել ուրիշի տունը (հողը). ~ the empty house դատարկ շենքը անօրեն բնակեցնել:

**squatter** [ˈskwɒtə] n ապօրինի հողակալ. նորաբնակ. գաղթական. պագած/կկզած մարդ:  
**squawk** [skwɔ:k] 1. n սուր/ծակող ճիչ. գանգաւ. 2. v սուր ճիչ արձակել. դժժալ:  
**squeak** [skwi:k] 1. n ծվոց, ծվծվոց. ճռռոց, ճռինջ 2. v ծվծվալ, ճռճռալ, ճռնչալ:  
**squeaker** [ˈskwi:kə] n ծագ, ճուտ. մատնիչ, դավաճան:  
**squeaky** [ˈskwi:ki] a ծվծվան, ճռճռան:  
**squeal** [skwi:l] n ճղավոց. դժժոց:  
**squeal** [skwi:l] v ճչալ, դժժալ. *խսկց*. մատնել. գաղտնիքը հայտնել. I'll make him ~ ! Ես նրան ցույց կտամ:  
**squeamish** [ˈskwi:mɪʃ] a բժախնդիր, քմաճաշակ, չմահավան. feel ~ սրտխառնություն զգալ. Don't be so ~ Մի լինի այդպես չմահավան:  
**squeeze** [skwi:z] n սեղմում, ճզմում. մզելով քամելը. *խսկց*. կորզում, շորթում. շանտաժ. give the hand a ~ ձեռքը սեղմել. a ~ of lemon քամած կիտրոն/լիմոն. credit ~ վարկի սահմանափակում. (հրմշտոց) a tight ~ շատ նեղվածք. in a tight ~ ծանր դրության մեջ:  
**squeeze** [skwi:z] v սեղմել, ճզմել. մզել, քամել. ~ a sponge սպունգը քամել. ~ cream out of a tube քսուկը/կրեմը խողովակից դուրս ճզմել. (կորզել, շորթել). ~ money փող դուրս կորզել. (խցկել, խոթել) I ~d everything in(to) my bag Ամեն ինչ խոթեցի պայուսակիս մեջ. We can ~ you into the car Մենք կարող ենք քեզ մեքենայի մեջ խցկել. ~ under the fence ցանկապատի տակով անցնել. I could hardly ~ past Հազիվ կարողացա խցկվելով անցնել:  
**squeezer** [ˈskwi:zə] n հյութաքամիչ:  
**squelch** [skweltʃ] n չլմփոց, ջրիկ ցեխ. ~ through the mud ցեխի միջով չլմփացնելով անցնել:  
**squib** [skwɪb] n չար, սրամիտ դիտողություն. կծու ծաղր:  
**squiffy** [ˈskwɪfi] a *խսկց*. մի քիչ խմած, կատարը տաք. *հմկրգ*. խտացնել, տեղաբաշխել:  
**squint** [skwɪnt] n շլիկություն, շլիկություն. գաղտագողի շեղ հայացք. have a ~ շլություն ունենալ, շլիկ լինել. have a ~ at the paper գաղտագողի շեղ հայացք նետել թղթին. Let's have a ~ Ապա նայենք:

**squint-eyed** [ˌskwɪntˈaɪd] a շիլ, շլդիկ, չարագուշակ, չար:  
**squire** [ˈskwaɪə] n սկվայր, երիտասարդ ազնվական:  
**squirm** [skwɜːm] v գալարվել, կծկվել. ~ with shame ամոթից կծկվել:  
**squirrel** [ˈskwɪrəl] n, a սկյուռ, սկյուռի:  
**squirt** [skwɜːt] n շիթ, ցայտ. սրսկիչ, ցնցուղ:  
**squirt** [skwɜːt] v շիթ արծակել, ցայտեցնել. ջուր շաղ տալ. He ~ed water at me Ջուր շաղ տվեց վրաս. The juice ~ed out of the tin Յյուրը քիթեղատուփից դուրս ցայտեց:  
**stab** [stæb] n հարված (դաշույնի, դանակի և այլն) a ~ in the back դանակի հարված մեջքին. *փխք.* դավաճանական հարված քիկունքից. a ~ of conscience խղճի կշտամբանք. (*խսկց.* փորձ) have a ~ at smth որևէ բանի փորձ կատարել. She'll have a ~ at anything Նա պատրաստ է ամեն ինչ փորձել:  
**stab** [stæb] v հարված հասցնել, վիրավորել. սպանել. ~ in the leg ոտքին դանակով հարվածել. ~ in the heart դանակը սրտին մխել:  
**stability** [stəˈbɪləti] n կայունություն, հաստատունություն:  
**stabilization** [ˌsteɪbəlɪˈzeɪʃn] n կայունություն:  
**stabilize** [ˈsteɪbəlaɪz] v կայունացնել:  
**stabilizer** [ˈsteɪbəlaɪzə] n կայունացուցիչ, ստաբիլիզատոր:  
**stable** [ˈsteɪbl] a կայուն, հաստատուն. a ~ currancy կայուն արժույթ. be not very ~ անկայուն հոգեվիճակ ունենալ. a ~ marriage կայուն ամուսնություն:  
**stable** [ˈsteɪbl] n ախոռ. He keeps a large ~ Նա մեծ ախոռ ունի:  
**stable-boy** [ˈsteɪblɔɪ] n ձիապան:  
**stack** [stæk] n *գղտ.* դեզ, շեղջ. *գրադ.* գրապահոց. ծխնելույզ. a ~ of straw/logs ծղոտի դեզ, փայտի դարակույտ. (կույտ, կուտակ) a ~ of books/plates գրքերի/ափսենների կույտ. ~s of money/time *փխք., խսկց.* փողի մեծ գումար. հսկայական ժամանակ. *հմկրգ.* ստեկ, հիշողության տիրույթ. ~ pointer ստեկի զագաթի ցուցիչ. ~ underflow դատարկ ցուցիչով ստեկին դիմելը. ~ing of parameters պարամետրերի մտցնելը ստեկ:  
**stack** [stæk] v դիզել, դարսել, կուտակել. ~ books/wood գրքերը/փայտը կանոնավոր

դարսել. ~ hay խոտը դիզել:  
**stadium** [ˈsteɪdiəm] n մարզադաշտ, ստադիոն:  
**staff** I [stɑːf] n հաստիք, անձնակազմ, կուլեկտիվ. the office ~ հիմնարկի անձնակազմը. be on the ~ հաստիքով աշխատել. the teaching/editorial ~ ուսուցիչների կուլեկտիվ. խմբագրական կուլեգիա. key ~ հիմնական անձնակազմ. They keep a ~ of three Նրանց անձնակազմը երեք հոգուց է բաղկացած. a ~ meeting աշխատակազմի ժողով. ~ officer շտաբի սպա:  
**staff** II [stɑːf] n ցուպ, գավազան. մահակ. դրոշա/կա/ծող. ensign ~ նավախելի դրոշածող:  
**staff** [stɑːf] v հաստիքներ համալրել, անձնակազմով ապահովել. ~ the new college նոր Քոլեջը անձնակազմով ապահովել:  
**stag** [stæɡ] 1. n արու եղջերու. 2. a ամուրիների, տղամարդկանց. a ~ party միայն տղամարդկանց երեկույթ (մալչիշնիկ):  
**stage** I [steɪdʒ] n բեմ, բեմահարթակ. be on the ~ դերասան(ուհի) լինել. go on the ~ դերասան(ուհի) դառնալ. quit the ~ բեմը թողնել. ~ direction/door/fright բեմական ռեմարկ, ծառայողական մուտք. վախ բեմի հանդեպ (բեմավախություն) ~ hand բեմի բանվոր. ~ manager ռեժիսոր. ~ whisper *փխք.* բարձր շշուկ. (հեմահարթակ, պլատֆորմ) landing ~ նավամատույց:  
**stage** II [steɪdʒ] n փուլ, ընթացաշրջան, ստադիա. initial/final ~ նախնական/վերջին փուլ. ~ of development զարգացման փուլ. pilot ~ փորձնական փուլ. travel by easy ~s կարճ հատվածներով ճամփորդել:  
**stage** [steɪdʒ] v բեմադրել. բեմականացնել. կեղծել, սարքել. թատրոն խաղալ. ~ a demonstration ցույց կազմակերպել:  
**stage coach** [ˈsteɪdʒkəʊtʃ] n փոստակառք, դիլիժանս:  
**stage craft** [ˈsteɪdʒkrɑːft] n բեմական արվեստ:  
**stagger** [ˈstæɡə] n երերում, օրորում:  
**stagger** [ˈstæɡə] v երերալ, օրորվել. He ~ed and fell Նա երերաց և վայր ընկավ. ~ under the load ծանրության տակ երերալ. (ցնցվել, ցնցել) I was ~ed to hear Ես ցնցվեցի լսածիցս. (տեղաշարժել) ~ working hours աշխատանքային ժամերը տեղաշարժել:

**staggering** ['stægəriŋ] a *փխբ.* ցնցող, ապշեցուցիչ:

**staging** ['steɪdʒɪŋ] n բեմադրում:

**stagnant** ['stægnənt] a կանգնած, լճացած. ~ water լճացած ջուր. ~ economy լճացած տնտեսություն. Production/Trade is ~ Արտադրությունը/Առևտուրը լճացած է/կանգ է առել:

**stagnate** [stæg'neɪt] v լճանալ, անգործությունից փչանալ. ~ in te job երկար մնալ/տևել պաշտոնում/աշխատանքում:

**stagy** ['steɪdʒɪ] a շինծու, թատերական:

**staid** [steɪd] a լուրջ, ծանրաբարո, հավասարակշռված:

**stain** [steɪn] n բիծ. *փխբ.*, արատ. ներկ, ներկանյութ. grease ~ յուղոտ բիծ. remove a ~ բիծը հեռացնել. ~ remover բժսահան/կեղտահան միջոց:

**stain** [steɪn] v բծոտել, կեղտոտել. *փխբ.* ստվեր զգել. անարգել, խայտառակել. The wine has ~ed the cloth Գինին կեղտոտեց սփռոցը. ~ floors/wood հատակը/փայտը ներկել, ծծեցնել, հագեցնել:

**stained** [steɪnd] a ներկոտած, նկարած. ~ glass ապակեակար. a ~ window ապակեակարով պատուհան:

**stainless** ['steɪnləs] a անբիծ, մաքուր. չժանգոտվող. ~ steel չժանգոտվող պողպատ:

**stair** [steə] n աստիճան, սանդուղքաբաժին (*նաև flight of ~s*) ~s աստիճաններ, սանդուղք. run up/down the ~s աստիճաններով վեր/վար վազել. winding ~s պտուտակավոր սանդուղք:

**staircase** ['steəkeɪs] n (stairway) սանդուղք. սանդղավանդակ. corkscrew/spiral ~ պտուտակածև սանդուղք. moving ~ շարժասանդուղք:

**stake** I [steɪk] 1. n սյուն, ցից. at the ~ անարգանքի սյունին գամված. 2. v ցցերով ամրացնել/նշել:

**stake** II [steɪk] n խաղազումար (*թղթխ., ծխարշ.*). ներդրված միջոցների չափը. high/low ~s մեծ/փոքր խաղազումար. be at ~ բախտախաղի դրված լինել, վտանգի տակ լինել. have a ~ in the company ընկերությունում փայ/մաս ունենալ:

**stake** [steɪk] v խաղազումար դնել. *փխբ.* բախտախաղի դնել, վտանգի ենթարկել. ~

money on a certain horse որոշակի ձիու վրա մեծ խաղազումար դնել. ~ a plant բույսին նեցուկ դնել. ~ a claim *փխբ.* իրավունքներ ներկայացնել:

**stakeholder** ['steɪk'həʊldə] n համատեղ գործի կազմակերպիչ. շահագրգիռ կողմ:

**stalactite** ['stæləktait] n ստալակտիտ:

**stalagmite** ['stæləgmait] n ստալագմիտ:

**stale** [steɪl] a չոր, հնացած, թարմությունը կորցրած. ~ bread հին հաց. ~ air ծանր օդ. ~ news հնացած նորություն/լուր. ~ joke մաշված/անհամ կատակ. He is growing ~ Նրա խաղը (նվագը և այլն) կորցրել է իր թարմությունը:

**stalemate** ['steɪlmeɪt] n շխմ. պատ, ոչ-ոքի. *փխբ.* փակուղի. reach a ~ փակուղու առաջ կանգնել. The ~ has been broken ելքը փակուղուց գտնվել է:

**stalk** [stɔ:k] n ցողուն, շիվ:

**stalk** [stɔ:k] v գաղտագողի մոտենալ. հետևել. He ~ed the girl Նա գաղտագողի մոտեցավ աղջկան. The Indians ~ed their enemy Գնդիկները հետամուտ եղան իրենց թշնամուն:

**stall** [stɔ:l] n մսուր, մսուրք. ախոռ, գոմ. կրպակ, տաղավար. a book ~ գրքի տաղավար. *թատր.* (պարտեր) ~s աթոռ/բազկաթոռ թատրոնի պարտերում:

**stallion** ['stæljən] n հովատակ, ործ ծի:

**stalwart** ['stɔ:lwɔ:t] n առողջ/ամրակազմ մարդ. (հավատարիմ, ամենկուն) a ~ Tory supporter Թորիների ամենկուն/հավատարիմ աջակցող:

**stamina** ['stæmɪnə] n կենսունակություն, տոկունություն, ուժ. He has no ~ Տոկուն չէ. intellectual ~ համբերություն:

**stammer** ['stæmə] n կակազում, կմկմոց. speak with ~ կակազել. կակազելով խոսել:

**stammer** ['stæmə] v կակազել, կմկմալ. ~ out an apology կմկմալով ներողություն խնդրել:

**stammerer** ['stæməɪə] n կակազ, կակազող մարդ:

**stamp** I [stæmp] n դոփյուն. թփփոց:

**stamp** II [stæmp] n դրոշմ, կնիք, կապարակնիք. a metal/wooden/rubber ~ մետաղե/փայտե/ռետինե կնիք. postage ~ նամականիշ. trading ~ ապրանքանիշ, մակնիշ. (un)used ~s (չ)օգտագործված/մարած/չմա-



րած/նամականիչներ. ~ album նամականիչների ակբում, կլասեր. ~ collection նամականիչների հավաքածու. ~ collector դրոշմանիչներ հավաքող, ֆիլատելիստ. ~ duty դրոշմատուրք. (կնիք, հետք) the ~ of genius հանճարի կնիք. a man of his ~ այդ ոճի/տեսակի մարդ. quality ~ որակի նշան:

**stamp I** [stæmp] v դոփել, տրորել. ~ one's foot with rage ոտքը զայրույթով գետնով տալ. ~ a trail in the snow ձյան միջով (տրորելով) արահետ անցկացնել. ~ out of the room դոփելով սենյակից դուրս վազել. ~ out the cigarette ծխախոտը տրորել. ~ out resistance դիմադրությունը ճնշել:

**stamp II** [stæmp] v կնքել, դրոշմել. ~ the documents փաստաթղթերը կնքել. ~ a letter նամակին դրոշմանիչ փակցնել. ~ on one's memory հիշողության մեջ դրոշմվել:

**stamp III** [stæmp] v ոտնակոխ անել, ոտնատակ տալ, ջարդել. ~ out a riot ապստամբությունը ճնշել:

**stampede** [stæm'pi:d] 1. n խուճապահար փախուստ. 2. v խուճապահար վազել/փախչել. The horses ~d Ձիերը սանձազերծ սլացան:

**stance** [stæns] n մրգ. ելման դրություն. serving ~ մրգ. ելման դրություն սկզբնահարված կատարելիս:

**stand** [stænd] n տեղ. կանգնակ. պատվանդան. ամբիոն. մրգ. տրիբունա. կախիչ (հագուստի). ֆոտո կանգնակ, ամրակալան. երժշ. գրակալ, նոտակալ. թատերական կրպակ. ցուցահանդեսային. ստենդ, ցուցադրափեղկ. umbrella ~ անձրևանոցի կանգնակ. take one's ~ տեղ գրավել, տեղավորվել. witness ~ վկայի տեղ. (դիրք, դիրքորոշում) take a ~ on a point որոշակի դիրք գրավել (որևէ հարցի կապակցությամբ), որևէ տեսակետ պաշտպանել. ռզմ. դիմադրություն make a ~ դիմադրություն ցույց տալ. հմկրգ. ~ alone ինքնաբավարար ծրագիր. ~ system ինքնաբավարար ավտոմոմ համակարգ:

**stand** [stænd] v կանգնել, կանգ առնել. S~ and deliver ! Կանգնիր, ձեռքերդ վեր. ~ the pot on the table կճուճը սեղանին դնել. ~ against հենել. ~ the picture against the wall նկարը պատին հենել. (դիմանալ, տանել) I can't ~ heat Տանել չեմ կարող շոգը. հյուրա-

սիրել, ծախսերը իր վրա վերցնել. He'll ~ us lunch Նա մեզ ճաշով կհյուրասիրի. ~ trial դատարանի առաջ կանգնել. ~ for պաշտոնի թեկնածու լինել. ~ for presidency նախագահի պաշտոնի թեկնածու լինել. ~ waiting կանգնած սպասել. ~ on one's own feet փխբ. ինքնուրույն լինել. ~ up վեր կենալ. the hair ~ on end մազերը բիզ-բիզ կանգնել. ~ in one's way փխբ. մեկի ճանապարհին կանգնել. How do things ~ ? Ինչպե՞ս են գործերը. (չփոխվել, ուժի մեջ լինել) The agreement ~s Պայմանագիրը ուժի մեջ է. Leave the text as it ~s Տեքստը չփոխես. Let matters ~ թող ամեն ինչ մնա նույնը. ~ to reason ինքնին հասկանալի է. ~ about/around անգործ կանգնել. ~ back հետ կանգնել/գնալ. ~ aside մի կողմ քաշվել. ~ by օգնել, պաշտպանել. հավատարիմ մնալ. ~ by one's principles սկզբունքներին հավատարիմ մնալ. ~ down զիջել. ~ off իրեն հեռու պահել. ծով. նավը ծով դուրս գալ/նավահանգստից հեռանալ. The ships were ~ing off Նավերը հեռանում էին. ~ out առանձնանալ, աչքի ընկնել. He ~s out from the rest of the students Նա առանձնանում/տարբերվում է մյուս ուսանողներից. ~ up կանգնել, վեր կենալ. պաշտպանել. She stood up for her daughter Նա իր աղջկան պաշտպանեց. ~ upon պնդել, համառել:

**standalone** ['stænd 'ələʊn] n հմկրգ. մեկուսացում:

**standard** ['stændəd] n չափօրինակ, չափանմուշ, չափանիշ. նորմ, կանոն. the ~ of living կենսամակարդակ. ~s of education կրթական մակարդակ. gold ~ տնտ. ոսկու չափօրինակ/չափանիշ. live up to certain ~s բարձրանալ որոշակի մակարդակի. ~ of behaviour վարքի նորմ/կանոն. entry ~s ընդունելության չափանիշներ double ~ երկակի չափանիշ. moral ~s բարոյական սկզբունքներ. a high/low ~ բարձր/ցածր մակարդակ/որակ. (դրոշ) the ~ of revolt ապստամբության դրոշ:

**standard** ['stændəd] a տիպական, օրինակելի. կայուն, կանգուն. ~ weight and measures քաշի և երկարության չափանիշները (ստանդարտ) the ~ price նշանակված գինը. a ~ model տիպային օրինակ. ~ English գրական/նորմատիվ անգլերեն. ~ pronunci-

ation ընդունված արտասանություն. It's the practice to ...  
**standard-bearer** ['stændəd, beərə] n դրոշակակիր:  
**standardize** ['stændədaiz] v միօրինակացնել, ստանդարտացնել:  
**stand-by** ['stændbaɪ] n ջերմ պաշտպան, հենարան, նեցուկ. The freezer is a great ~  
**standee** [stæn'di:] n կանգնած ուղևոր /հանդիսատես:  
**stand-in** ['stændɪn] n փոխարինող. *թատր.*, (կինո)դերասանին փոխարինող, կրկնորդիչ (դուբլյոր):  
**standing** ['stændɪŋ] n դիրք, դեր (հասարակության մեջ) of high ~ բարձրաստիճան. of good ~ լավ պաշտոն ունեցող. What is his ~? Ո՞վ է. Ի՞նչ պաշտոն/տեղ է գրավում. (տևականություն) of long ~ տևական, երկարատև. a tradition of long ~ հին/վաղուցվա սովորույթ:  
**standing** ['stændɪŋ] a մշտական, հաստատուն. a ~ committee մշտական կոմիտե. a ~ joke *փխբ.* ծաղրի մշտական առարկա. հաճախ կրկնվող կատակ. ~ room *թատր.* մուտքի տոմս (կանգնելու համար):  
**stand-offish** [,stænd'ɒfɪʃ] a սառը, զուսպ, պաշտոնական. խստաբարո:  
**standpipe** ['stændpaɪp] n կանգնուկ (ստոյակ):  
**standpoint** ['stændpɔɪnt] n տեսակետ. from the ~ of տեսակետից:  
**standstill** ['stændstɪl] n անշարժություն, դադար. լճացում. be at a ~ անգործության մատնվել. չաշխատել պարապուրդ տալ. The factory is at a ~ **Գործարանը** պարապուրդ է տալիս. come to a ~ կանգ առնել, դադարել. bring to a ~ կանգնեցնել, դադարեցնել. wage ~ աշխատավարձի սառեցում:  
**stand-up** ['stændʌp] a կանգուն. բացահայտ, առանց թաքցնելու. կանգնած. ~ meal

նոքի վրա կանգնած ուտել:  
**stannic** ['stænik] a անագե, անագի:  
**stanza** ['stænzə] n *բնստ.* տուն:  
**staple** I ['steɪpl] n ամրակ, պնդիչ. կեռ, երկաթե կապ:  
**staple** II ['steɪpl] n հիմնական արտադրանք. առևտրի հիմնական առարկա. գլխավոր/հիմնական տարր. the ~ of conversation խոսակցության գլխավոր նյութը:  
**staple** ['steɪpl] a գլխավոր, հիմնական, կարևոր. ~ products հիմնական ապրանքները. ~ food հիմնական սննդամթերք. Rice is their ~ diet Բրիժնը նրանց հիմնական սնունդն է:  
**staple** ['steɪpl] v ամրացնել, պնդացնել. ~ papers together թղթերն ամրացնել:  
**star** [sta:] 1. n *աստղ.* աստղ. հռչակավոր/նշանավոր անձ. bright/shooting, falling ~ պայծառ/ ընկնող աստղ, ասուպ. The ~ twinkles/shines/falls Աստղը առկայծում է/փայլում է/ընկնում է. fixed ~ անշարժ աստղ. North S~ Բևեռային աստղ. ~s and stripes ԱՄՆ –ի պետական դրոշը. see ~s *փխբ.* աչքերից կայծեր թափվել. (բախտ, ճակատագիր) be born under a lucky ~ բախտավոր աստղի տակ ծնվել. thank/bless one's ~s իր ճակատագրին շնորհակալ լինել/ օրհնել. trust one's ~s իր բախտին հավատալ. ~ witness գլխավոր վկա. *թատր.*, *կինո* աստղ, ականավոր դերասան. the ~ of the game խաղի հերոսը. 2. a աստղային, աստղի:  
**star** [sta:] v աստղերով զարդարել. աստղանշան դնել. *թատր.*, *կինո* գլխավոր դերը կատարել. ~ it գլխավոր դերը կատարել. He ~s in that film **Գլխավոր դերն է խաղում այդ ֆիլմում:**  
**starboard** ['sta:bɔ:d] 1. n *ծով.* նավի աջ կողմը. on the ~ side աջ կողմում. 2. v դեկը դեպի աջ պտտել:  
**starch** [sta:tʃ] n, v *օսլա.* *խսկց.* կենսական էներգիա, կենսունակություն. *օսլայել.* ~ed collar *օսլայած օձիք:*  
**starchy** ['sta:tʃi] a *օսլայած, օսլայաշատ.* *փխբ.* չոր, շինծու, անբնական:  
**stare** [steə] n ակնապիշ/զարմացած հայացք. cold ~ սառը հայացք. a vacant ~ մտազուրկ/մտացիր հայացք. glassy ~ անկենդան/ապակյա հայացք. stony ~ ծանր/ճնշող հայացք. Disaster ~s us in the face *փխբ.* Մեզ վտանգ է սպառնում:

**stare** [steə] v ակնապիշ/սևեռուն հայացքով նայել. ~ down/out of countenance հայացքով շփոթեցնել. ~ one in the face ակնհայտ/անխուսափելի լինել. ~ smn up and down սևեռուն հայացքով ոտքից գլուխ չափել. It's rude to ~ like that անքաղաքավարություն է մեկին այդպես ակնապիշ նայելը:

**starfish** ['sta:fiʃ] n կենդ. ծովաստղ:

**star gazer** ['sta:geizə] n անըջող/երազող մարդ:

**stark** [sta:k] a բացարձակ, կատարյալ. ~ naked բոլորովին մերկ. ~ staring mad *փխբ.*, *խսկց.* լրիվ խելքը թռցրած:

**starlet** ['sta:lət] n աստղիկ:

**starlight** ['sta:laɪt] n աստղերի լույս. by ~ աստղերի լույսի տակ:

**starling** ['sta:lɪŋ] n կենդ. սարյակ:

**starlit** ['sta:lɪt] a աստղալից, աստղազարդ. a ~ night աստղալից գիշեր:

**starry** ['sta:ri] a աստղալից, աստղազարդ:

**star-spangled** ['sta:,spæŋɡld] a աստղերով պատած. the ~ banner ԱՄՆ –ի ազգային/պետական դրոշմ:

**start** [sta:t] n մեկնում. սկիզբ. *մրգ.* մեկնարկ, մրցասկիզբ. at the ~ of the century դարասկզբին. from ~ to the finish սկզբից մինչև վերջ. make a ~ սկսել, ձեռնամուխ լինել, make a good ~ լավ սկիզբ դնել. give one a ~ in life *փխբ.* օգնել մեկին ինքնուրույն մարդ դառնալ. false ~ անհաջող փորձ. *մրգ.* կեղծ մեկնարկ/ստարտ. (հանկարծակի շարժում, ցնցում) awake with a ~ հանկարծակի զարթնել. give one a ~ վախեցնել. spring up with a ~ տեղից վեր թռչել. work by fits and ~s ընդհատումներով աշխատել. *մրգ.* առավելություն The boy had a ~ of two metres Տղան երկու մետրի առավելություն ուներ:

**start** [sta:t] v սկսել, ձեռնամուխ լինել. ~ negotiations բանակցությունները սկսել. school ~s on Monday Դասերը սկսվում են երկուշաբթի օրը. ~ a new job ձեռնամուխ լինել նոր աշխատանքի. *մրգ.* (մեկնարկել) ~ a race մրցավազք մեկնարկել/սկսել. (առաջացնել) ~ a quarrel վեճ առաջացնել. այլ գործառույթներ, *տարբեր օգտ.* ~ a business գործ ձեռնարկել. ~ a rumour լուր տարածել. ~ a question հարց հարուցել. ~ a shop խանութ բացել. ~ a journal/newspaper թերթ/ամսագիր հիմնադրել. ~ a car մեքենան գործի

զգել. The car wouldn't ~ Շարժիչը գործի չի ընկնում. ~ the engine շարժիչը գործի դնել. The river ~s Գետը սկիզբ է առնում. The train has just ~ed Գնացքը հենց նոր մեկնեց. to ~ with նախ և առաջ. (ցնցվել, վեր թռչել) ~ at every sound ամեն ձայնից վեր թռչել. The bell made me ~ Զանգի ձայնից ես վեր թռա. ~ back in fear վախից ընկրկել. (սկսվել) before it ~s to snow քանի դեռ ձյունը չի սկսվել. It is ~ing to get warmer Սկսում է տաքանալ. ~ up աշխատասկիզբ:

**starter** ['sta:tə] n *մրգ.*, *տեխ.* ստարտեր. վազքի մրցման մասնակից. (ավտո) ստարտեր. an early ~ *փխբ.* վաղ արթնացող. *խիր.* աղանդեր. What's for ~s ? Ի՞նչ կառաջարկեիք որպես աղանդեր:

**startling** ['sta:tɪŋ] a ելման, մեկնման, մեկնելու. ~ point մեկնակետ. the ~ point of an argument փաստարկի մեկնակետը. ~ post *մրգ.* մեկնման նշագիծը. ~ price նախնական գինը:

**startle** ['sta:tɪl] n with a ~ վախեցած, ցնցված:

**startle** ['sta:tɪl] v վախեցնել, զարմանալ, ցնցվել. His cry ~d me Նրա ճիչը ինձ վախեցրեց. I was ~d to hear ես ցնցվեցի լսելով:

**startler** ['sta:tɪlə] n սենսացիոն հայտարարություն, սենսացիա:

**startling** ['sta:tɪlɪŋ] a զարմանալի, ապշեցուցիչ, ցնցող:

**start stop operarion** ['sta:t 'stɒp ɒpə'reɪʃn] *հմկրգ.* սկզբով և վերջով ռեժիմ:

**start stop transmission** ['sta:t 'stɒp tranz'mɪʃn] *հմկրգ.* տվյալների ասինխրոն փոխանցում:

**start symbol** ['sta:t 'sɪmbəl] սկզբնական սիմվոլ:

**starttime** ['sta:t ,taɪm] ակտիվացման ժամանակը:

**start up** ['sta:t ʌp] նախնական գործողություններ:

**starvation** [sta:'veɪʃn] n սովամահություն, սովահարություն. սով. die of ~ սովամահ լինել. oxygen ~ թթվածնի սով. a ~ diet սովահարության սննդակարգ/դիետա. ~ wages աղքատիկ աշխատավարձ:

**starve** [sta:v] v քաղցել, սովամահ լինել. ~ animals կենդանիներին սովամահ անել. ~ to death սովամահ անել. Plants are ~d of nitro-

gen Բույսերը ազոտի պակաս են զգում. I'm ~ing *խսկց*. Սոված ուշքս զնում է:

**state** [steit] n դրություն, վիճակ. ~ of mind հոգեվիճակ. the ~ of life կենսավիճակ. հասարակական դրություն. ~ of health առողջական վիճակ. ~ of affairs գործերի վիճակը. be not in a fit ~ ի վիճակի չլինել. in a ~ of war պատերազմական վիճակում. (ծև, ֆիզիկական վիճակ) liquid ~ հեղուկ վիճակ. nascent ~ *քիմ*. կազմավորման փուլ. (ճիսություն, շքեղություն) in ~ մեծ շուքով. dine in ~ հանդիսավոր ճաշկերույթ ունենալ. receive smb in ~ հանդիսավոր ընդունելություն կազմակերպել. պատշաճ ձևով ընդունել. ~ apartments հանդիսավոր/տոնական սենյակներ. շքասենյակներ. երկիր, պետություն. նահանգ (ԱՄՆ) the S ~s ԱՄՆ. Secretary of ~ նախարար. the powers of the ~ պետական իշխանությունը member ~s անդամ պետություններ. host ~ ընդունող պետություն. The welfare ~ բարգավաճ երկիր. land-locked ~ դեպի ծով ելք չունեցող պետություն. (պետական) a ~ visit պաշտոնական այցելություն. ~ carriage թագավորական կառք (ՄԲ). ~ papers պետական փաստաթղթեր. ~ property պետական սեփականություն/գույք. the S ~ department պետական դեպարտամենտ. արտաքին գործերի նախարարություն. ~ law նահանգի օրենք (ԱՄՆ). *հմկրգ*. ~ information վիճակի ինֆորմացիա. ~ space վիճակների տարածություն. ~ variable վիճակի փոփոխական:

**state** [steit] v հայտարարել, հաստատել. ձևավորել. It is ~d Հայտարարվում է. Հաստատվում է. The letter ~s Նամակում ասվում է. ~ one's opinion/position իր կարծիքը/դիրքորոշումը շարադրել. It must be ~d Անհրաժեշտ է հայտարարել/նշել. ~ a case *իրավ*. գործի էությունը ներկայացնել. It is nowhere ~d *պշտ*. Ոչ մի տեղ չի նշված. S~ your name/requirements Նշեք ձեր անունը/պահանջները.

**state-aided** ['steiteidid] a պետության կողմից սատարվող. The institute is ~ ինստիտուտը պետության կողմից օժանդակություն է ստանում:

**statecraft** ['steitkra:ft] n պետությունը նկատարելու հմտություն:

**stated** ['steitid] a սահմանված, որոշված. on

~ days սահմանված օրերին. at the ~ time որոշված ժամանակին. within ~ limits նշված սահմաններում. the ~ sum նշված գումարը. above ~ վերոհիշյալ, վերը նշված:

**stateless** ['steitlɛs] a անկարգավիճակ. a ~ person *իրավ*. քաղաքացիություն չունեցող անձ:

**stately** ['steitli] a վեհ, վսեմ, փառահեղ. a ~ bow վեհաշուք գլուխ տալը/ողջունելը. ~ bearing վեհապանծ/հպարտ կեցվածք:

**statement** ['steitmənt] n հաղորդում, հաստատում. make a ~ հայտարարություն անել. make unfounded ~s անհիմն հայտարարություններ անել/պնդել. according to the ~ համաձայն հայտարարության. a ~ to the press հայտարարություն մամուլում. a written ~ *իրավ*. գրավոր հայտարարություն. witness ~ *իրավ*. վկայի ցուցմունք. ~ for the defence *իրավ*. գործի ներկայացումը պաշտպանի կողմից. ~ of claim *իրավ*. հայցադիմում. (հաշվետվություն) financial ~ ֆինանսական հաշվետվություն. bank ~ բանկային քաղվածք. summery ~ ամփոփ շարադրանք. statement *հմկրգ*. օպերատոր:

**stateroom** ['steitru:m] n շքադահլիճ, շքասրահ (հանդիսավոր ընդունելությունների համար):

**statesman** ['steitsmən] n պետական գործիչ:

**statesmanlike** ['steitsmənlaik] a պետական գործչի վարվելակերպ/նման. (in) a ~ manner պետական մոտեցում:

**static** I ['stætik] a հանգիստ, անշարժ, կայուն. Business has been ~ for weeks Արդեն մի քանի շաբաթ է՝ գործը կանգնած է. ~ electricity ստատիկ էլեկտրականություն. ~ output կայուն արտադրություն. ~ friction *տեխ*. հանգիստ վիճակի շփում:

**static** II ['stætik] a *հմկրգ*. ստատիկ, անշարժ, անփոփոխ. ~ allocation *հմկրգ*. ստատիկ բաշխում. ~ expression *հմկրգ*. ստատիկ արտահայտություն. ~ memory *հմկրգ*. ստատիկ հիշասարք. ~ scope *հմկրգ*. ստատիկ համատեքստ:

**statics** ['stætiks] n *ֆիզ.*, *տեխ*. ստատիկա. *նաղ*. մթնոլորտային խանգարումներ:

**station** ['steiʃn] n կայարան, կայան. տեղ. railway/junction/underground ~ երկաթուղային/հանգուցային/մետրոյի կայարան. radio ~ ռադիոկայան. radar ~ ռադիոլոկացիոն

կայան. wireless ~ ռադիոկայան. service ~ սպասարկման կայան, բենզակայան. polling ~ ընտրական տեղամաս. dressing ~ վիրակապման կետ. life boat ~ փրկամակույկների կայան. fire ~ հրշեջ կայան. naval ~ *ծով*. ռազմածովային բազա. action ~ *ս* *նզմ*. մարտական դիրքեր. coast guard ~ *ծով*. առափնյա պահակակետ. police ~ (*նախ* station house) ոստիկանատուն. service/ petrol/filling ~ տեխնիկական սպասարկման կայան. բենզալցակայան. a self-service ~ ինքնասպասարկման կայան. ~ master կայարանի հերթապահ. (հասարակական դիրք) people of all ~ *ս* բոլոր տեսակի/կարգավիճակի մարդիկ, above one's ~ իր գլխից/կարգավիճակից բարձր:

**station** ['steɪʃn] *v* տեղավորել, տեղաբաշխել. դնել. The boy ~ed himself in the armchair տղան բազկաթոռի մեջ տեղավորվեց. The fleet was ~ed Նավատորմը կանգնած էր:

**stationary** ['steɪʃnəri] *a* անշարժ, անտեղաշարժելի. a ~ target անշարժ թիրախ. The train is ~ *Գ*նացքը կանգնած է. run into a ~ car խփվել կանգնած մեքենային:

**stationer** ['steɪʃnə] *n* գրենական պիտույքներ վաճառող:

**stationery** ['steɪʃnəri] *n* գրասենյակային պիտույքներ. գրենական պիտույքների խանութ:

**station-master** ['steɪʃn,mɑːstə] *n* կայարանապետ:

**statistical** [stə'tɪstɪkl] *a* վիճակագրական. ~ clerk վիճակագիր. ~ units վիճակագրական միավորներ:

**statistician** [,stætɪ'stɪʃn] *n* վիճակագիր:

**statistics** [stə'tɪstɪks] *n* վիճակագրություն:

**statuary** ['stætʃʊəri] *n* քանդակագործություն, քանդակագործ:

**statue** ['stætʃuː] *n* արձան, քանդակ:

**statuette** [,stætʃu'et] *n* արձանիկ, փոքր արձան:

**stature** ['stætʃə] *n* հասակ, բարձրություն (մարդու). of high ~ բարձրահասակ. of short ~ կարճահասակ. a man of high moral ~ *փխբ*. բարձր բարոյական հատկանիշների տեր մարդ:

**status** ['steɪtəs] *n* կարգավիճակ. իրավական դրություն. հասարակական դիրք. civil/marital/social ~ քաղաքացիական/ամուսնական/

հասարակական, սոցիալական կարգավիճակը. ~ of publications հրատարակումների վիճակը. without official ~ առանց պաշտոնական կարգավիճակի. ~ quo գոյություն ունեցող վիճակը/կարգավիճակը:

**status byte** ['steɪtəs ,baɪt] *հմկրգ*. վիճակի բայթ:

**status word** ['steɪtəs ,wəːd] *հմկրգ*. վիճակի բառ:

**statute** ['stætʃuːt] *n* օրենսդրական ակտ. օրենք. ստատուտ. company/university ~ ընկերության/համալսարանի կանոնադրություն/կանոնակարգ. ~ book օրենքների ժողովածու:

**statutory** ['stætʃʊtəri] *a* օրենքով սահմանված, օրինականացված. ~ price control օրենքով սահմանված գների վերահսկողություն. ~ force օրենքի/օրինական ուժ:

**staunch** [stɔːntʃ] *n* հավատարիմ, նվիրված. անթափանցելի, անթափանց (հեղուկ). *a* ~ supporter հավատարիմ կողմնակից. (անասան, տոկուն, դիմացկուն) ~ loyalty անասան հավատարմություն:

**staunch** [stɔːntʃ] *v* կանգնեցնել. ~ blood արյունահեղությունը կանգնեցնել:

**stave** [steɪv] *n* տակառատախտակ. *երժշ*. մոտայի տողեր:

**stave** [steɪv] *v* ~ in ճեղքել, ջարդելով անցք բացել. The boat was ~d Նավակում անցք բացվեց. ~ off կանխել, առաջն առնել. ~ off bankruptcy սնանկամալը կանխել. ~ of epidemic համաճարակը կանխել:

**stay** I [steɪ] *n* մնալը, ապրելը. make a ~ իջևանել, հյուր լինել. ապրել. have a short ~ կարճատև մնալ. enjoy one's ~ հյուրընկալությունից/այցելությունից հաճույք ստանալ. come for a longer ~ ավելի երկար ժամանակով հյուր գալ. length of ~ այցի տևողությունը, ~ of execution *իրավ*. վճռի կատարման ընդհատում. ~ of proceedings *իրավ*. դատավարության ընդհատում:

**stay** II [steɪ] *n* մեցուկ, հեմարան. ~s սեղմիրան, կորսետ:

**stay** [steɪ] *v* ապրել, հյուր մնալ. ~ at a hotel հյուրանոցում ապրել. ~ with friends ընկերների մոտ հյուր լինել. He ~ed there for a year Նա այնտեղ մի տարի մնաց. (տանել, դիմանալ) He'll never ~ the course մա չի դիմանա ամբողջ դասընթացին. (մնալ) I

shan't ~ long **ես երկար չեմ մնա**. The floor doesn't ~ clean **Հատակը մաքուր չի մնում** ~ in bed **անկողնում մնալ**. If the weather ~s fine **Եթե լավ եղանակը պահպանվի**. ~ away **չգալ, չներկայանալ**. ~ away from school **դասերից բացակայել**. ~ in տանը մնալ, դուրս չգալ. ~ off ~ off work **աշխատանքի չգալ**. ~ out տանից բացակայել. Don't ~ out late **Ուշ մի վերադառնա, Շուտ վերդարձիր**. ~ out of reach **անհասանելի լինել**. ~ out of trouble **փորձանքից/փորձությունից խուսափել**. ~ up **չպառկել քնելու**. ~ up talking **մինչև ուշ գիշեր խոսել/զրուցել**. manage to ~ up **ջրի մակերեսի վրա մնալ, չխեղդվել**:

**stay-at-home** ['steiəθəʊm] **n** տանը նստել սիրող անձ:

**staying power** ['steiŋpaʊə] **n** տոկունություն, դիմացկունություն, ինքնագույնություն:

**stead** [sted] **n** տեղը, փոխարեն. I went in his ~ **ես նրա փոխարեն գնացի**. stand one in good ~ **(մեկին) օգտակար լինել, ծառայություն մատուցել**:

**steadfast** ['stedfɑ:st] **a** կայուն, հաստատուն. անշարժ, ակնապիշ. a ~ gaze **ակնապիշ հայացք**. ~ in one's loyalty **անսասան հավատարմություն**:

**steady I** ['stedɪ] **a** կայուն, անփոփոխ, մշտական. կայուն ընկեր/ուհի. ~ man **հավասարակշռված մարդ**. ~ worker **վստահելի բանվոր**. She's his ~ **Նրանք հանդիպում են**:

**steady II** ['stedɪ] **a** հաստատուն, կայուն. ամուր, հուսալի. have a ~ hand **ամուր ձեռք ունենալ**. a ~ voice **անհողողոջ ձայն**. a ~ gaze **ակնապիշ/անշարժ հայացք**. ~ nerves **ամուր նյարդեր**. The table is not ~ **Սեղանը անկայուն է/շարժվում է**. (հավասարակշիռ, լուրջ) a ~ young man **հավասարակշռված երիտասարդ**. a ~ faith **անհողողոջ հավատ**. (համաչափ, անընդհատ) a ~ pulse **համաչափ/կայուն զարկերակ**. a ~ pace **համաչափ քայլեր**. a ~ drizzle/downpour **անընդհատ/չդադարող տեղատարափ**. a ~ job **մշտական աշխատանք**. a ~ progress **կայուն առաջընթաց**. ~ prices **կայուն գներ**. ~ demand **անընդհատ/կայուն պահանջ/պահանջարկ**:

**steady** ['stedɪ] **adv** Steady! **Ձգո՛ւյշ**. S~ on! **Կամաց (շարժում)**. ~ ! **Հանգստացիր**. They are going ~ **խսկց**. Նրանք հանդիպում են:

**steady** ['stedɪ] **v** հաստատուն/կայուն դարձնել/դառնալ. ~ the table **սեղանը կայուն դարձնել**. ~ one's nerves **հանգստանալ, նյարդերը հանգստացնել**:

**steak** [steik] **n** մի կտոր (միս, ձուկ և այլն. մսև տապակած). **լանգետ, բիֆշտեքս**. stewing ~ **շոգեխաշած միս**. ~ pie **մսով կարկանդակ**:

**steal** [sti:l] **v** գողանալ, թռցնել. գողություն անել. ~ a watch **ժամացույց գողանալ**. ~ from a person **անձից գողանալ**. ~ a few hours of sleep **փխք**. մի քանի ժամ փախցնել քնելու համար. ~ a glance **գաղտագողի նայել**. ~ a march **բոլորից առաջ անցնել**. ~ the show **բոլորին ստվերի տակ թողնել/գերազանցել**. գաղտագողի անցնել (շարժվել). ~ across the room **գաղտագողի սենյակով անցնել**. ~ away **թաքուն անհայտանալ, ծլկել**. ~ into/out of **աննկատելի ներս մտնել/դուրս սահել, ծլկել**. ~ past **կողքից աննկատելի անցնել**:

**stealing** ['sti:lɪŋ] **n** գողություն. ~s **գողացած իրեր, գողոն**:

**stealth** [stelθ] **n**. by ~ **թաքուն գաղտագողի, գաղտնաբար**:

**stealthy** ['steɪθɪ] **a** գաղտնի, ծածուկ. ~ steps **անաղմուկ քայլեր**. a ~ manoeuvre **խորամանկ քայլ**:

**steam** [sti:m] **n** գոլորշի, շոգի. **խսկց**. ուժ, եռանդ. get up ~ **գոլորշի առաջացնել**. **փխք**. ուժ հավաքել. let off ~ **գոլորշին բաց թողնել**. **փխք**. զգացմունքներին ելք տալ. put on ~ **շոգին ավելացնել**. turn on/shut off ~ **շոգին միացնել/անջատել**. full ~ **ahead** **ամբողջ թափով առաջ շարժվել**. ~ boiler **շոգեկաթսա**. ~ engine **երկթ**. **շոգեքարշ**:

**steam** [sti:m] **v** գոլորշի արձակել, գոլորշիանալ. քրտնել, քրտնակալել. Horses ~ ed with sweat **Ձիերը քրտնաթոր էին եղել**. The window was ~ed **Պատուհանը գոլորշապատվել էր**. a ~ing hot bath **շոգ/տաք լոգանք/բաղնիք**. ~ into/out of the harbour/station **նավահանգստից/կայարանից դուրս գալ/ժամանել**. **խիր**. (շոգեխաշել) ~ed fish **շոգեխաշած ձուկ**. get ~ed up about smth **փխք**. հուզվել/նյարդայնանալ որևէ բանի կապակցությամբ:

**steamboat** ['sti:mbəʊt] **n** շոգենավ:

**steamer** ['sti:mə] **n** ծով. շոգենավ. **խիր**.

շոգեխաշելու կաթսա:  
**steam-gauge** ['sti:mgeidz] n զագերի/զոլորշու ճնշաչափ. մանոմետր:  
**steam-navvy** ['sti:mnævi] n հողահան մեքենա:  
**steam-roller** ['sti:m,rəulə] n տեխ. շոգեզլան:  
**steamship** ['sti:mʃip] n շոգենավ:  
**steamy** ['sti:mi] a գոլորշապատ. քրտնած, քրտնքկալած:  
**steed** [sti:d] n *բնստ*. նժույգ. galant ~ արագընթաց/կայտառ ձի:  
**steel** [sti:l] 1. n պողպատ. stainless ~ չժանգոտվող պողպատ. cold ~ սառը զենք. nerves of ~ *փխբ.* պողպատե նյարդեր. 2. a պողպատե, պողպատի. *փխբ.* դաժան, անողոր. ~ blue/grey պողպատագույն:  
**steel** [sti:l] v պողպատով պատել. կոփել. *փխբ.* դաժան/անզուր դարձնել. ~ oneself քաջություն ունենալ/հավաքել:  
**steel-clad** ['sti:klæd] a (*նակ steel-plated*) զրահապատ, զրահավորված:  
**steel-engraving** [sti:lin'greivɪŋ] n փորագրում պողպատի վրա:  
**steel wool** [sti:l'wul] n բարակ պողպատե ձողեր:  
**steelworks** ['sti:lwə:ks] n պողպատածուլական գործարան. պողպատածուլարան:  
**steep** [sti:p] a զանախափ, դիք. ուղղաձիգ. *փխբ.* չափազանց/անչափ բարձր. The price is pretty ~ *փխբ.*, *խսկց.* Այ քեզ գին (ահավոր քանկ). His stories are a bit ~ Պատմությունները բավական հնարովի են:  
**steep** [sti:p] v թրջոց/ջուրը դնել. թրմել (թեյը և այլն). ծծեցնել, հագեցնել. ~ in prejudice նախապշարմունքների մեջ թաղված/ընկղմված:  
**steepen** ['sti:pən] v զանիվեր բարձրանալ:  
**steeple** ['sti:pəl] n գանգակատուն, սրածայր աշտարակ:  
**steeplechase** ['sti:pɪtʃeɪs] n արգելքներով ձիարշավ:  
**steeple-jack** ['sti:pɪdʒæk] n մեծ բարձրության վրա աշխատող բանվոր:  
**steer** [stiə] v վարել (նավ, մեքենա) ~ a boat նավակը վարել. ~ into the ditch ուղղել դեպի փոսը. ~ away from հեռու տանել/պահել (որևէ բանից) ~ clear of խուսափել, խույս տալ. ~ clear of the rocks ժայռերից/խութերից

խուսափել. ~ clear of trouble *փխբ.* անխոր-  
 ժուրություններից խույս տալ. (դեկը վարել.  
 դեկավարվել) ~ by the stars/by the chart  
 աստղերով/քարտեզով դեկավարվել:  
**steer** [stiə] n ցլիկ, արջառ. եզ:  
**steerage** ['stiəri:dʒ] n դեկասարք, դեկակա-  
 նավարում:  
**steering** ['stiəriŋ] n դեկակառավարում. ~  
 wheel *սվ.* դեկանիվ:  
**steersman** ['stiəzmən] n դեկակալ. շտուր-  
 ման. վարորդ:  
**stellar** ['stelə] a աստղային, աստղերի:  
**stem** [stem] n (ծաղկի) ցողուն. (ծառի) բուն.  
 (դանակի) կոթ, պոչ. (բառի) հիմք. (բաժա-  
 կի) ոտք, պոչ (նավի) քիթ. տերևակոթ, կո-  
 թուն. տոհմ:  
**stem** [stem] v ծագել, առաջանալ. It all ~s  
 from the fact Այս բոլորը ծագում է/առա-  
 ջանում է. (ամբարտակել. կանգնեցնել, դա-  
 դարեցնել.) ~ spread of disease կանգնեցնել  
 հիվանդության տարածումը. ~ a flood current  
 դադարեցնել/ամբարտակել ջրի հոսքը:  
**stench** [stentʃ] n գարշահոտություն:  
**stencil** ['stensl] n գարդակաղապար, տրա-  
 ֆարետ. cut a ~ շաբլոն կտրել:  
**stencil** ['stensl] v շաբլոնով կտրել/ներկել. ~  
 ten copies տասն օրինակ տրաֆարետով  
 նկարել:  
**stenographer** [stə'nɒgrəfə] n սղա-  
 գրող/սղագրուհի:  
**stenoigraphy** [stə'nɒgrəfi] n սղագրություն:  
**stentorian** [sten'tɔ:riən] a որոտընդոստ,  
 բարձրադոչ. ~ voice թնդուն ձայն:  
**step** [step] n քայլ, քայլափոխ. պարաքայլ.  
 heavy/light/steady ~s ծանր/թեթև/հաստա-  
 տուն քայլեր. waltz ~ վալսի պարաքայլ. in ~  
 համաքայլ. out of ~ ոչ համընթաց/համա-  
 քայլ. practical ~ գործնական քայլ. diplomatic  
 ~s դիվանագիտական քայլեր/միջոցներ. ~  
 by ~ քայլ առ քայլ. follow in one's ~s մեկի  
 հետքերով գնալ. *փխբ.* մեկի օրինակին  
 հետևել. keep ~ with համաքայլ գնալ. false ~  
 սխալ քայլ. take ~s քայլեր/միջոցներ ձեռ-  
 նարկել. It's only a ~/a good ~ Շատ մոտիկ է.  
 retract ~s վերադառնալ. at every ~ ամեն քայ-  
 լափոխին. Watch your ~ ! Զգույշ. Զգու-  
 շացի՛ր. ~ up առաջընթաց քայլ. out of ~ with  
 modern life ժամանակակից կյանքի հետ ոչ  
 համաքայլ. (աստիճան) a flight of ~s

սանդղավանդակ. հարկաբաժին. Mind the ~ ! Ջգուշացե՛ք, աստիճան է. cut ~s on the rock ժայռի վրա աստիճան փորել. step - wise refinement քայլ առ քայլ ճշգրտում:

**step** [step] v քայլել, քայլեր անել. պարաքայլ անել. ~ aside մի կողմ քաշվել. ~ back մի քայլ ետ գնալ. Stepback ! ճանապարհ. ~ down իջնել. ~ down the bus ավտոբուսից իջնել. (զիջել) ~ down in favour of smn զիջել հանուն մեկի. ~ forward մի քայլ առաջ գնալ/շարժվել. ~ in/into ներս մտնել, ոտքը ներս դնել. ~ into one's shoes մեկի տեղը գրավել. (խառնվել) The authorities ~ped in Ղեկավարությունը/հշխանությունը միջամտեց/խառնվեց. ~ up բարձրանալ, բարձրացնել. արագացնել. ~ up the current էլ. լարումը բարձրացնել. (մոտենալ) He ~ped up to me ես մոտեցավ ինձ. ~ brother/child/daughter/father/sister/son խորթ եղբայր/երեխա/դուստր/հայր/քույր/որդի:

**stepping stone** ['stepɪŋstəʊn] n cross the stream on ~ գետակն անցնել քարերի վրայով. a ~ to promotion *փխբ.* առաջխաղացման աստիճաններ:

**stereo** ['steriəʊ] n (հապավում) ~ (phonic) record player ստերեոֆոն նվագարկիչ:

**stereometry** [,steri'ɒmətri] n *մաթ.* տարածաչափություն:

**stereoscope** ['steriəskəʊp] n ծավալադիտակ, ստերեոսկոպ:

**stereotype** ['steriətaɪp] n ստերեոտիպ. *փխբ.* անփոփոխ, շաբլոն:

**sterile** ['sterail] a ստերջ, ամուլ, չբեր. անբերրի (հող). անպտուղ (ծառ):

**sterility** [stə'ri:lɪti] n ամուլություն. ստերջություն. անբերրիություն. մանրագերծություն:

**sterilize** ['sterəlaɪz] v մանրագերծել, ստերիլացնել:

**sterling** ['stɜ:lɪŋ] n *ֆին.* ստերլինգ, ֆունտ ստերլինգ. payable in ~ վճարը ստերլինգով:

**sterling** ['stɜ:lɪŋ] a բարձրորակ, առաջնակարգ. ~ silver բարձրորակ արծաթ. a man of ~ qualities *փխբ.* բարձր արժանիքների տեր մարդ. ~ fellow ազնիվ/ազնվաբարո մարդ:

**stern** [stɜ:n] a խիստ, խոժոռ. ~ discipline խիստ կարգապահություն:

**stern** [stɜ:n] n *ժող.* նավախել, հետևամաս:

**stevedore** ['sti:vədə:] n նավահանգստային բեռնորդ:

**stew** [stju:] n շոգեխաշած միս/ձուկ. be in a ~ *փխբ., խսկց.* հուզված/նյարդային վիճակում լինել:

**stew** [stju:] v շոգեխաշել. ~ slowly մարմանը կրակով շոգեխաշել. ~ed apples խորոված/եփած խնձոր:

**steward** ['stju:əd] n (ինքնաթիռի) ուղեկցող. տնտեսվար (քուլեջ, ակումբ). կարգադրիչ (ծիարչավ, պարահանդես). կառավարիչ (կալվածք). shop ~ արտադրամասի ավագ:

**stewardess** [,stju:ə'des] n (ինքնաթիռի) ուղեկցողուհի:

**stick** [stɪk] n փայտ. փայտիկ, ձողիկ. մահակ, գավազան. կոթ. walking ~ ձեռնափայտ. a ~ of chewing gum ժամոցի մի շերտ. policy of the big ~ մեծ մահակի քաղաքականություն. the ~s *մրգ.* խոչընդոտներ. have smn in a cleft ~ մեկին ծուղակի/փակուղու մեջ գցել. a funny old ~ պառավ քաֆթառ. cut one's ~ փախչել, ծլկել. any ~ to beat the dog բոլոր միջոցները՝ լավ:

**stick** [stɪk] v խրել, մխել. ~ a nail into the door դռան մեջ մեխ խրել. ~ a knife into smb's back մեջքը դանակ խրել. ~ meat on skewers շամփուրի վրա միս անցկացնել. (ստսնծել, կպցնել) ~ a stamp on the envelope ծրարին նամականիշ փակցնել. The stamp won't ~ նամականիշը չի կպչում. ~ the pieces together կտորները իրար կպցնել. *խսկց.* (խոթել) ~ the hands in the pockets ձեռքերը գրպանները խոթել. ~ the hat on the head գլխարկը գլուխը մտցնել. ~ smn on the jury ժյուրիում նստեցնել. ~ in one's throat կոկորդում մնալ. ~ in-doors all day ամբողջ օրը տանը մնալ. ~ at համառել, համառորեն շարունակել. ~ at nothing ոչ մի բանի առաջ կանգ չառնել. ~ fast ամուր կպչել. be stuck խրվել, չկարողանալ դուրս գալ. The car was stuck in the mud Մեքենան խրվել էր ցեխի մեջ. I was stuck in London ես լռվել էի Լոնդոնում. We are stuck with debts Մենք խրված ենք պարտքերի մեջ. (տանել, դիմանալ) I can't ~ him Տանել չեմ կարող նրան. He can't ~ the climate ես չի դիմանում այս կլիմային. (կպչել, չպոկվել) The plate stuck to the table Ափսեն կպել էր սեղանից. ~ to one's story իր պատմությանը/պատմածին կառչել. ~ to the point բուն նյութին հավատարիմ մնալ. (մնալ) The words stuck in my throat Բառերը



կոկորդուս մնացին. ~ upon one's memory հիշողության մեջ տապալորվել. ~ down գրանցել, գրառել. ~ in ներդնել, մտցնել. ~ out. (դուրս հանել). ~ out the tongue լեզուն դուրս հանել. Don't ~ your head out of the window Գլուխդ պատուհանից դուրս մի հանիր. (վեր գցվել, դուրս պրծնել). His teeth ~ out Երա ատամները դուրս են գցված. It ~s out a mile that ... Սի մղոն հեռավորությունից երևում է, որ... ~ up գցվել. ~ up a notice հայտարարություն փակցնել. The rock ~s up ժայռը դուրս է գցվել:

**sticker** ['stikə] n կաշուն/մածուցիկ նյութ:

**stickiness** ['stikinəs] n մածուցիկություն:

**sticking-plaster** ['stikiŋ,plə:stə] n կաշուն սպեղանի:

**stickler** ['stiklə] n համառ/վիճասեր անձ. մոլի կողմնակից. a ~ for discipline կարգապահության մոլի պաշտպան:

**sticky** ['stiki] a կաշուն, մածուցիկ. a ~ label կաշուն մակնիշ. ~ fingers/sweets կաշուն մատներ/քաղցրավենիք. (խոնավ, տոթ) ~ heat խոնավ շոգ. It is very ~ today Տոթ է ինչպես բաղնիքում. come to a ~ end *փխբ.* վատ վերջացնել:

**stiff** [stif] a կոշտ, կարծր, պինդ. ~ cardboard պինդ ստվարաթուղթ. a ~ collar կոշտ օձիք. ~ lock դժվար բացվող կողպեք. (փայտացած, քարացած) have a ~ neck/back չթեքվող/փայտացած վիզ/մեջք. feel ~ ամբողջ մարմինը ցավել/ջարդվել. ~ with cold/terror ցրտից /վախից քարացած. ~ dough պինդ խմոր. ~ drink թունդ խմիչք. keep a ~ upper lip *փխբ.* սառնասրտություն/տոկունություն պահպանել. *փխբ. օգտ.* have a ~ manner զուսպ/պաշտոնական դիրք բռնել. a ~ climb/exam դժվար վերելք/քննություն. ~ resistance համառ դիմադրություն. ~ price բարձր գին. bored ~ *խսկց.* ահավոր ծանծրացած. scared ~ մահու չափ վախեցած:

**stiffen** ['stifn] v պնդանալ, կոշտանալ, կարծրանալ. ուժեղանալ. The breeze ~ed Քամին ուժեղացավ. The starch ~ed Օսլան կարծրացավ/պնդացավ. Resistance ~ed Դիմադրությունն ուժեղացավ:

**stiff-necked** [,stif'nekt] a համառ, կամակոր:

**stiffness** ['stifnəs] n կոշտություն, կոպտություն. թանձրություն. ~ in the joints *փխբ.*

հողերի կարծրացում/քարացում:

**stifle** ['stailf] v խեղդել. *փխբ.* զսպել, ճնշել. ~ a laugh/a yawn/sneeze ծիծաղը/հորանջը/փռշտոցը զսպել. ~ an opposition ընդդիմադրությունը ճնշել. ~d by heat շոգից շնչահեղձ եղած:

**stifling** ['stailfiŋ] adv դժվարությամբ, սառնորեն. move ~ դժվարությամբ քայլել/շարժվել. bow ~ սառնորեն/պաշտոնապես գլուխ տալ. stand ~ անշարժ կանգնել:

**stifling** ['stailfiŋ] a խեղդող, ճնշող, հեղձուցիչ. ~ heat խեղդող տոթ. It is ~ in here Այստեղ հեղձուկ է:

**stigma** ['stigmə] n խարան, դրոշմ. the ~ of illegitimacy անօրինակամության/ապօրինության դրոշմ:

**stile** [stail] n ոտնադիր (մազլցելու համար):

**stiletto** [sti'letəu] n դաշույնիկ, սվիճադաշույն. ~ heels շատ բարակ/սուր կրունկներ:

**still I** [stil] n լռություն, հանդարտություն. կինոկադր. լուսանկար. in the ~ of the night գիշերային անդորրության մեջ. ~s from a film կադրեր ֆիլմից:

**still II** [stil] n թորաման, թորիչ, գտիչ. օղեգործարան:

**still** [stil] a հանգիստ, մեղմ, անձայն. անշարժ, հանդարտ. a ~ night խաղաղ գիշեր. a ~ surface հանդարտ մակերես:

**still** [stil] adv դեռ, մինչև այժմ, դեռևս. He ~ hasn't come Ես դեռ չի եկել. It would be ~ better Ավելի լավ կլիներ. ~ more էլ ավելի. Stand ~ ! Զգաստ. keep ~ չշարժվել. My heart stood ~ Սիրտս կանգնեց:

**still** [stil] conj այնուամենայնիվ. S~ he is my friend Այնուամենայնիվ նա իմ ընկերն է. S~ he doesn't regret it Այնուամենայնիվ նա չի ափսոսում դրա համար:

**still-born** ['stilbɔ:n] a մեռելածին (երեխա):

**still life** [,stil'laif] n բնանկար, անկենդան բնություն. նատյուրմորտ:

**stillness** ['stailnəs] n լռություն, հանգստություն, հանդարտություն:

**still room** ['stilru:m] n մառան. թորման տեղ, թորասենյակ:

**stilt** [stilt] n փայտե ոտքեր, ոտնափայտեր. walk on ~s ոտնափայտերով քայլել:

**stilted** ['stiltid] a փքուն, անբնական, շիժնո:

**stimulant** ['stimjulənt] n զրգռիչ, խթանիչ. տոնուսը բարձրացնող միջոց. խթան, ազ-

դակ. ոգելից խմիչք:  
**stimulate** ['stimjuleit] v գրգռել, խթանել, խրախուսել, քաջալերել. ~ the appetite ախտորակը գրգռել:  
**stimulating** ['stimjəleitɪŋ] a գրգռիչ, խթանիչ, խրախուսող. a ~ remuneration նյութական խրախուսանք. ~ lecture քաջալերող դասախոսություն:  
**stimulus** ['stimjələs] n խթան, շարժառիթ, դրդապատճառ. ~ object արտաքին խթան. խթանման նպատակը/առարկան:  
**sting** [stiŋ] n խայթոց. (եղինջի) մազիկ, թելիկ. ~ of a nettle եղինջի դաղելը. (այրող ցավ) ~ of hunger սովի տառապանքներ. ~ s of remorse խղճի խայթ. ~ of sarcasm կծու ծաղրանք, խոցող հեզմանք:  
**sting** [stiŋ] v խայթել. այրել, դաղել. stung by nettles եղինջով դաղված. The hail stung my face Կարկուտը խփում էր դեմքիս. The salt water stung his eyes Աղի ջրից նրա աչքերը մրմռացին. The bite ~s խայթոցը այրում է. Eyes ~ from the smoke Աչքերը ծխից այրվում են. *խսկց.* խաբել, պլոկել. How much did they ~ you ? Քեզնից ինչքա՞ն պլոկեցին:  
**stinging** ['stiŋɪŋ] a խայթող, այրող, դաղող. *փխբ.* կծու, թունդ, խայթող. ~ cut այրող վերք. a ~ remark թունոտ/խայթող ակնարկ:  
**stingy** ['stɪndʒi] a ժլատ, աղքատիկ. ~ with money ժլատ:  
**stink** [stiŋk] n գարշահոտություն, վատ հոտ:  
**stink** [stiŋk] v գարշահոտություն/վատ հոտ արձակել. *խսկց.* հոտ առնել/զգալ. ~ of fish ձկան տհաճ/վատ հոտ գալ. His breath ~s of garlic Բերանից սխտորի հոտ է գալիս. The whole business ~s *փխբ.* Սա կեղտոտ գործ է, Վատ հոտ է գալիս:  
**stinker** ['stiŋkə] n *խսկց.* սրիկա. a ~ անանթ նամակ. The exam was a ~ Քննությունը ահավոր էր:  
**stinking** ['stiŋkiŋ] a գարշահոտ, զզվելի. a ~ cold *փխբ.*, *խսկց.* սարսափելի հարբուխ. ~ rich աներևակայելի հարուստ:  
**stint** [stɪnt] n սահմանափակում, չափավորում. *խսկց.* չափաբաժին, նորմ. նորմա. do a daily ~ in the factory ֆաբրիկայում օրական նորման կատարել. without ~ չխնայել, առանց խնայելու:  
**stint** [stɪnt] v չափավորել, սահմանափակել, խնայել. ~ on drink ափսոսալ փողը խմիչքի

վրա ծախսել. He doesn't ~ himself Նա իր համար ոչինչ չի խնայում:

**stipend** ['staipeɪnd] n թոշակ, նպաստ:  
**stipulate** ['stɪpjuleit] v նախատեսել, պայման դնել, վերապահություն անել. The contract ~s Պայմանագիրը նախատեսում է. ~d sum պայմանավորված գումարը. ~d by law օրենքով նախատեսված. ~ for the best materials to be used լավագույն նյութերը օգտագործելու պայմանով:  
**stipulation** [ˌstɪpjʊˈleɪʃn] n պայման, համաձայնություն. under the ~ that այն պայմանով, որ:  
**stir** [stə:] n իրարանցում, խառնաշփոթություն, աղմուկ. make/create a ~ աղմուկ բարձրացնել. The news caused quite a ~ Նորությունը մեծ աղմուկ բարձրացրեց. (խառնում, խառնելը) give the fire a ~ կրակը խառնել:  
**stir** [stə:] v խառնել. ~ the tea թեյը խառնել. keep ~ ing շարունակել խառնել. (թեթևակի շարժել) The breeze ~red the leaves Ջեփյուռը շարժում էր տերևները. (շարժվել) ~ in one's sleep քնի մեջ շարժվել. I haven't ~red all day Ամբողջ օրը տեղիցս չեմ շարժվել. nobody was ~ring Ոչ ոք չէր շարժվում. Բոլորը քնած էին. *փխբ.* (հուզել, շարժել) We were ~red by his speech Նրա ճառը մեզ հուզեց. ~ up trouble անհանգստություն առաջացնել. ~ up passions կրքեր բորբոքել:  
**stirring** ['stə:riŋ] 1. n թեթև շարժում. խռովություն. 2. a հուզիչ, հուզմունք առաջացնող. a ~ tale արկածային պատմվածք. ~ times ռոմանտիկ դար/աշրջան:  
**stirrup** ['stɪrəp] n ասպանդակ:  
**stitch** [stɪtʃ] n կար, մի կար. (գործելիս) մի հատ/օղակ. drop/pick/take up a ~ հատը թողնել/հավաքել. *բժշկ.* կար. put a ~ in (վերքի) կար դնել. take out the ~ կարերը հանել. haven't a ~ on լրիվ մերկ լինել. have no dry ~ on մինչև ոսկորները թրջվել. be in ~es ծիծաղից թուլանալ. A ~ in time saves nine Գործը ժամանակին անելը միայն օգուտ կբերի:  
**stitch** [stɪtʃ] n սուր ցավ, ծակոց. I've got a ~ Կողքս ծակում է:  
**stitch** [stɪtʃ] v կարել, ասեղնագործել. ~ a button կոճակ կարել. *բժշկ.* stitch a ~ վերքը կարել:

**stoat** [stəʊt] n սպիտակ կզաքիս:

**stock** I [stɒk] n պաշար, հիմնապաշար, ֆոնդ. արժեթուղթ. basic ~ of words հիմնական բառապաշար/բառաֆոնդ. surplus ~ ապրանքի ավելցուկ. ~ of spares պահեստամասերի պաշար. housing ~ բնակֆոնդ. have in ~ պահեստում ունենալ. ~ in hand առձեռն/ձեռքի տակ ունենալ. out of ~ վաճառված լինել. capital ~/~ capital բաժնետիրական դրամագլուխ. lay in ~ պաշար տեսնել. (գույք) take ~ գույքագրել. (արժեթղթեր, բաժնետոմսեր) ~ holder բաժնետոմսեր/արժեթղթեր ունեցող անձ, բաժնետեր. The ~s are going up Արժեթղթերի գինը բարձրանում է. ~s and shares արժեթղթեր և բաժնետոմսեր. sell out ~ արժեթղթեր վաճառել. ~ broker արժեթղթերի վաճառամիջոց. բաժնետիրական կապիտալ (գույք) (*մահ joint* ~) live ~ կենդանի գույք, անասուններ. dead ~ մեռած գույք. take ~ of ուշադիր դիտել. put/take ~ in վստահել, հավատ ընծայել. ~ and block ամբողջ գույքը, ամբողջությամբ. rolling ~ *երկթ.* շարժվող գնացք:

**stock** II [stɒk] n բուն, կոճղ. *գղտ.* պատվաստացու. (տոհմ, ծագում) of a good ~ լավ ընտանիքից. of Irish ~ ծագումով իռլանդացի. (հենարան) ~ of rifle հրացանի կոթ. ~ and barrel ամեն ինչ. բոլորն անխտիր/ամբողջությամբ. laughing ~ ծիծաղի առարկա:

**stock** [stɒk] a սովորական, ստանդարտ ~ size ստանդարդ չափս/կազմվածք. ~ repertoire *թատր.* ներկայացումների սովորական ցանկ (ռեպերտուար) ունենալ. (անհամ, շաբլոն, ծամծամված) a ~ phrase շաբլոն/ծեծված արտահայտություն:

**stock** [stɒk] v պաշարել, մատակարարել. ~ with provisions սննդամթերքով մատակարարել. Do you ~ large sizes? Մեծ չափսեր ունե՞ք. ~ up with sugar շաքարի պաշար հավաքել, շաքար պահեստավորել:

**stockade** [stɒ'keɪd] n ցանկապատնեշ:

**stock-breeder** ['stɒk,bri:də] n անասնաբույժ:

**stock exchange** ['stɒkiks,tʃeɪndʒ] n ֆոնդային բորսա. prices on the ~ բորսայի գները:

**stock-farm** ['stɒkfa:m] n անասնապահական տնտեսություն/ֆերմա:

**stocking** ['stɒkɪŋ] n գուլպա. a pair of ~s մի գույգ գուլպա. in one's ~ feet միայն գուլպա հագած:

**stockinged** ['stɒkɪŋd] a գուլպա հագած, գուլպաներով:

**stock-in-trade** [,stɒkɪn'treɪd] n սարքավորում, սարք. հիմնական կապիտալ:

**stock-jobber** ['stɒk,dʒɒbə] n բորսային չարաշահ/սպեկուլյանտ:

**stock-list** ['stɒklist] n բորսային հաղորդաթերթ:

**stock-man** ['stɒkmən] n անասնապահ, անասնաբույժ:

**stock-still** [,stɒk'stɪl] a անշարժ, մեխված:

**stocky** ['stɒki] a կարճահասակ և ամրակազմ:

**stock yard** ['stɒkjɑ:d] n անասնաբակ, անասնանոց:

**stodgy** ['stɒdʒi] a *խսկց.* ծանր, դժվարամարս. *փխբ.* խրթին, ծանծրալի:

**stoic(al)** ['stɔɪk(ɪ)] a ստոիկյան *փիլ.* հետևորդ:

**stoicism** ['stɔɪsɪz(ə)m] n ստոիցիզմ (*փիլ.*):

**stoke** [stəʊk] v վառելիք ավելացնել. կրակը վառ պահել. ~ up the stove փայտ/ածուխ զցել վառարանի մեջ:

**stokehold** ['stəʊkhəʊld] n հնոց, հնոցարան. կաթսայատուն:

**stoker** ['stəʊkə] n հնոցապան:

**stolid** ['stɒlɪd] a սառնարյուն, հավասարակշռված:

**stomach** ['stʌmək] n ստամոքս. *խսկց.* փոր. ախորժակ. a pain in the ~, ~ ache ստամոքսի ցավ, փորացավ. on an empty ~ քաղցած փորին. ~ pump ստամոքսի զոնդ. ~ upset ստամոքսի խանգարում. stay one's ~ քաղցը մեղմացնել. turn one's ~ սրտխառնուք ունենալ. *խսկց.* (հակում, տրամադրություն) have no ~ ցանկություն չունենալ:

**stomach** ['stʌmək] v ախորժակով ուտել. *փխբ., խսկց.* (տանել, հանդուրժել) I can't ~ cruelty Ռաժանություն չեմ կարող տանել:

**stone** [stəʊn] n քար. (մրգի/պտղի) կորիզ. heavy/hard/precious ~ ծանր/ամուր/թանկարժեք քար. a heap of ~s քարի կույտ, քարակույտ. meteoric ~ երկնաքար. head ~ անկյունաքար, հիմնաքար. rolling ~ *փխբ.* անհանգիստ/անդադրում մարդ. hail ~ կարկտահատիկ. stumble over a ~ քարի վրա

սայթաքել. mark with a white ~ երջանիկ օր/իրադարձությունն նշանավորել. leave no ~ unturn *փխբ.* ամեն հնարավոր բան անել. harden into ~ քարանալ. ~ quarry քարհանք. the S~ Age քարե դար. No ~ was left standing քարը քարի վրա չմնաց. a heart of ~ *փխբ.* քարսիրտ. kill two birds with one ~ մի կրակոցով երկու նապաստակ սպանել. within a ~s throw շատ մոտ, երկու քայլի վրա. (ծանրության չափ) սթոուն (մոտ 6. 35 կգ).

**stone** [stəʊn] v սալարկել. քարով պատել. քարկոծել. (պտուղը) կորիզահան անել. ~ plums սալորը կորիզահան անել. ~d cherries առանց կորիզի բալ. ~ to death քարկոծելով սպանել:

**stone blind** [ˌstəʊn ˈblaɪnd] a լրիվ կույր:

**stone-broke** [ˌstəʊn ˈbrəʊk] a լրիվ սնանկացած:

**stone-cold** [ˌstəʊn ˈkəʊld] a շատ սառը.

**stone-dead** [ˌstəʊn ˈded] a մեռած.

**stone-deaf** [ˌstəʊn ˈdef] a բոլորովին խուլ.

**stone-mason** [ˈstəʊn, meɪsɒn] n քարտաշ – որմնադիր. մասուն:

**stone-pit** [ˈstəʊnpɪt] n քարհանք:

**stone-ware** [ˈstəʊnweə] n կավե ամանեղեն:

**stone-work** [ˈstəʊnwɜ:k] n քարակառույց, քարի որմնածք:

**stony** [ˈstəʊni] a քարոտ, քարքարոտ. *փխբ.* անզուբ, անզգա. անշարժ, քար կտրած. սառը, սառած:

**stool** [stu:l] n աթոռակ (տաբուրետ). piano ~ պտուտակավոր աթոռ. folding ~ ծալվող/ծալովի աթոռակ. fall between two ~s *փխբ.* ընկնել երկու աթոռակի միջև նստելով:

**stool-pigeon** [ˈstu:lpiʒən] n *խսկց.* լրտես, ոստիկանական լրատու:

**stoop** [stu:p] v կռանալ, կորանալ. կռացնել, կորացնել. ~ down to pick up flowers կռանալ ծաղիկներ քաղել. *փխբ.* (զիջել, ստորանալ) I would never ~ to that ես այդ աստիճան չեմ իջնի:

**stooping** [ˈstu:piŋ] a կորամեջք. կուզիկ:

**stop** [stɒp] n կանգառ. ընդմիջում. վերջ, ավարտ. *երժշ.* (փողային գործ.) կափույր. (երգեհոն) ռեզիստր. *լեզվ.* պայթական բաղաձայն. bring to a ~ կանգնեցնել. come to a ~ կանգնել, կանգ առնել. make a ~ կանգնել, կանգ առնել. put a ~ to վերջ տալ,

վերջացնել. ավարտել. full ~ *քեր.* վերջակետ. the bus ~ ավտոբուսի կանգառ. a request ~ պատվերով կանգառ. without a ~ անդադար. առանց կանգառի. pull out all the ~s *փխբ.* բոլոր միջոցները գործի դնել. ~ instruction *հմկրգ.* կանգառի հրաման:

**stop** [stɒp] v կանգնել, կանգ առնել. կանգնեցնել. The train ~ped Գնացքը կանգ առավ. The clock has ~ped ժամացույցը կանգնել է. ~ an engine/progress/ traffic շարժիչը/առաջընթացը/երթևեկությունը կանգնեցնել. It ~ped raining Անձրևը դադարեց. S ~ complaining Բողոքներիդ վերջ տուր. The pain has ~ped Ցավն անցավ. (խցանել, փակել) ~ one's ears ականջները խցանել. ~ a tooth ատամը լցնել. ~ a hole անցքը փակել. (խոչընդոտել, խանգարել) There is no ~ping him Նրան հնարավոր չէ կանգնեցնել/խանգարել. He ~ped it happening Նա դա կասեցրեց/թույլ չտվեց, որ տեղի ունենա. (դադարեցնել) We ~ped work in protest Որպես բողոքի միջոց մենք դադարեցրինք աշխատանքը. ~ the noise! Դադարեցրե՛ք աղմուկը. S~ it at once! Անմիջապես վերջ տվե՛ք, The scholarship was ~ped Թոշակի վճարումը դադարեցվեց. ~ a cheque դադարեցնել չեկի վճարումը. (իջևանել, կանգ առնել, մնալ) ~ at a hotel հյուրանոցում իջևանել/կանգ առնել. ~ at home տանը մնալ, տանից դուրս չգալ. I'm ~ping at home ես տանն եմ մնում. ~ behind հետ մնալ/պահել. ~ by անցնել, այցելել, մտնել. I'll ~ by on my way home Տուն գնալիս կմտնեմ քեզ մոտ. ~ up խցանել, փակել. ~ up a hole/bottle անցքը/շիշը փակել. My nose is ~ped up Քիթս բռնվել է. (չպառկել քնելու) Don't ~ up, I'll be late Ինձ մի սպասե՛ք, պառկե՛ք քնելու, ես ուշ կգամ:

**stopcock** [ˈstɒpkɒk] n *տեխ.* փակիչ ծորակ:

**stop-gap** [ˈstɒpgæp] 1. n ժամանակավոր փոխարինող. 2. a ժամանակավոր:

**stopover** [ˈstɒp,əʊvə] n կանգնեցում, կանգառ:

**stoppage** [ˈstɒpɪdʒ] n դադար, ընդհատում, ընդմիջում. երթևեկության խցանում. work ~ աշխատանքի դադարեցում, ընդմիջում. ~ of payments վճարումների դադարում:

**stopper** [ˈstɒpə] n խցան, սեպ. put a ~ to smth *խսկց.* որևէ բանի վերջ դնել:

**stopping** [ˈstɒpiŋ] n ատամնալից, ատամի պլոմբ:

**stop press** [ˈstɒppres] n արտակարգ հաղորդագրություն:

**stop watch** [ˈstɒpwɒtʃ] n վայրկենաչափ:

**storage** [ˈstɔːrɪdʒ] n պահում, պահելը. մթերանոց, պահեստ. cold ~ սառնարան. սառնարանում պահելը. put smth into ~ պահպանման համձնել. ~ facilities պահեստներ. ~ tank շտեմարան, ամբար. *հմկրգ.* storage հիշողություն. ~ allocation հիշողության բաշխում. ~ area հիշողության տիրույթ. ~ class հիշողության դաս. ~ device հիշասարք. ~ key հիշողության բանալի. ~ pool հիշողության դիմամիկ տիրույթ. ~ protection հիշողության պաշտպանվածություն. ~ structure տվյալների ներկայացումը հիշողության մեջ. ~to-register instruction “հիշողություն-ռեգիստր” տիպի հրահանգ. ~to-storage instruction “հիշողություն-հիշողություն” տիպի հրահանգ. ~ unit հիշասարք:

**store** [stɔː] n պաշար. emergency ~ անձեռնմխելի պաշար. have in ~ պահեստում/պաշարում ունենալ. have a surprise in ~ անսպասելի անակնկալ/սյուրպրիզ ունենալ. ~s of food սննդի պաշարներ. set ~ by smn’s opinions կարծիքը հաշվի առնել. What does the future hold in ~ for us *փխբ.* Ի՞նչ է մեզ սպասում ապագայում. (պահեստ, խանութ) chain ~s միևնույն ձեռնարկությանը պատկանող մանրածախ խանութների ցանց. mail - order ~ փոստով առևտուր անող խանութ. the village ~ գյուղական խանութ. discount ~ էժանացած զներով ապրանքների խանութ. general ~(s) հանրախանութ. department ~ հանրախանութ:

**store** [stɔː] v (*նախ ~ away*) մթերել, պաշար տեսնել/անել. The wine is ~d in the cellar Գինին պահվում է մառանում. ~ up apples for the winter ձմեռվա համար խնձոր մթերել. ~ well լավ պահպանվել. (լցնել, հարստացնել) ~ one’s mind with knowledge *փխբ.* միտքը գիտելիքներով հարստացնել. *հմկրգ.* պահել/կուտակել (ինֆորմացիա). ~and-forward transmission միջանկյալ կուտակումով փոխանցում:

**stored-program computer** [ˈstɔː(r)d prəʊgræm kəmˈpjjuːtə] *հմկրգ.* պահվող ծրագրով համակարգիչ. ~ procedure պահեստավորված ընթացակարգ:

**storehouse** [ˈstɔːhaʊs] n պահեստ, մթե-

րանոց. զանձարան:

**store keeper** [ˈstɔː,ki:pə] n պահեստապետ:

**store-room** [ˈstɔːru:m] n մառան. *ռզմ.* ռազմական պահեստ. իրապահեստ:

**storey** [ˈstɔːri] n հարկ, հարկաբաժին. two ~ house երկհարկանի տուն/շենք. the upper ~ վերին հարկ. *կտկ.* գլուխ, խելք. a little wrong in the upper ~ *փխբ.* ծալը պակաս, մի քիչ խախտված:

**storied** [ˈstɔːri:d] a հարկանի:

**stork** [stɔːk] n *կենդ.* արագիլ:

**storm** [stɔːm] n փոթորիկ, մրրիկ. *փխբ.* հոգեկան հուզմունք, ակեղծություն. snow ~ բուք. a thunder ~ ամպրոպ. a ~ of applause *փխբ.* փոթորկալից ծափեր. a ~ of indignation զայրույթի պոռթկում. a ~ in a tea cup փոթորիկ մի բաժակ ջրում. *ռզմ.* (գրոհ) take by ~ գրոհով վերցնել. ~ troops գրոհիչ ջոկատներ:

**storm** [stɔːm] v փոթորկել. *փխբ.* մոլեգնել, գազազել. *ռզմ.* գրոհել. ~ the building գրոհել շենքը. ~ at smb մեկի վրա զայրացած բղավել. ~ out of the room սենյակից զայրացած դուրս փախչել:

**stormbeaten** [ˈstɔːmbi:tən] a հողմածեծ. հողմահար. *փխբ.* կյանքի հարվածներ կրած:

**storm-bird** [ˈstɔːmbɜːd] n մրրկահավ (*նախ* storm-finch, storm-petrel):

**storm-bound** [ˈstɔːmbaʊnd] a *ծով.* փոթորկի մեջ բռնված/կանգ առած:

**storm-cloud** [ˈstɔːmklaʊd] n ամպրոպաբեր/մրրկաբեր ամպ:

**storm-finch** [ˈstɔːmfɪntʃ], **storm-petrel** [ˈstɔːmpetrəl] n *տե՛ս* storm-bird:

**stormy** [ˈstɔːmi] a փոթորկոտ, փոթորկայից, մրրկալից. *փխբ.* հախուռն, բուռն, մոլեգին. a ~ sky փոթորկալից երկինք. a ~ sea փոթորկոտ *ծով.* a ~ crossing մրրկածուփ անցում. a ~ discussion բուռն քննարկում:

**stormy petrel** [ˈstɔːmipetrəl] n *կենդ.* մրրկահավ:

**story** [ˈstɔːri] n պատմվածք, պատմություն. thrilling/dull/ funny ~ հուզիչ/անհետաքրքիր, տաղտկալից/ծիծաղելի պատմություն. according to his ~ ըստ նրա պատմածի. as the ~ goes ինչպես ասում են. make a long ~ short կարճ ասած, մի խոսքով. It’s quite another ~

Սա բոլորովին այլ բան է/հարց է. the same old ~ միշտ նույն պատմությունը. Stop telling stories! Յեքիաթներ մի՛ պատմիր. գրկ. (պատմվածք, վիպակ) fairy ~ հեքիաթ. short ~ կարճ պատմվածք, նովել. cock - and - bull ~ հնարովի բան. a gross/naughty/dirty ~ անպատշաճ անեկդոտ. a detective ~ արկածային վեպ. a true ~ իրական պատմություն. the ~ of the film ֆիլմի սյուժեն. մամուլ (լրագրային նյութ) cover the ~ ռեպորտաժ անել/հաղորդել:

**story-book** ['stɔ:ri:buk] n պատմվածքների/հեքիաթների ժողովածու:

**story-teller** ['stɔ:ri,telə] n հեքիաթասաց. փխբ. սուտիկ, սուտասան:

**stout** [staut] a մարմնեղ, գեր, պարարտ. get/grow ~ գիրամալ, չաղանալ. (ամուր, պինդ) of ~ build ամուր կառուցվածքով. ~ shoes ամուր/դիմացկուն կոշիկներ ~ stick/coat ամուր ձեռնափայտ. հաստ վերարկու. a ~ rope հաստ պարան. a ~ fellow փխբ. քաջ/խիզախ մարդ. ~ resistance համառ դիմադրություն:

**stove** [stəʊv] n վառարան, խոհանոցի սալօջախ:

**stow** [stəʊ] v հավաքել, տեղավորել. լիքը լցնել. դարսել, դասավորել. ~ clothes in a suitcase շորերը ճամպրուկի մեջ դասավորել. ~ away պահել. անտոմս ճամփորդել. ~ the boxes away in the cellar արկղերը մառանում պահել:

**stowaway** ['stəʊəweɪ] n անտոմս ուղևոր (հասկ. նավում):

**straggle** ['strægl] v անկանոն/ցիրուցան ընկնել. անկանոն ձգվել. The village ~s along the river Գյուղը անկանոն ձգվել է գետի երկայնքով. ~ing branches տարածվող ճյուղեր. Ivy ~s over the wall Բաղեղը մագլցել է/տարածվել է պատի վրայով. (հետ ընկնել) The children ~d behind Երեխաները հետ էին ընկել:

**straggler** ['stræglə] n հետ մնացած անձ:

**straight** [streɪt] a ուղիղ. ~ hair ուղիղ մազեր. The picture isn't ~ Նկարը ծուռ է կախված. Cut cloth on the ~ կտորը ուղիղ կտրել. keep a ~ face ծիծաղը հագիվ զսպել. (անկեղծ, շիտակ, պարզ) a ~ answer/refusal անկեղծ պատասխան. բացահայտ/ակնհայտ մերժում. be ~ անկեղծ լինել. ~ in dealings գործերում/

գործարքում ազնիվ. (կանոնավոր, կարգին) put a room ~ սենյակը կարգի բերել. put one's papers ~ թղթերը կարգի բերել. (անխառն, զուտ, պարզ) a ~ whisky մաքուր վիսկի. a ~ part քատր. սովորական դեր. a ~ fight ազնիվ պայքար:

**straight** [streɪt] adv (մալ ~ away) ուղղակի, անմիջապես, ուղիղ. go ~ home ուղիղ/անմիջապես տուն գնալ. come ~ to the point անմիջապես գործի էությանն անցնել. come back ~ away անմիջապես վերադառնալ. tell smn ~ out ուղիղ/ուղղամտորեն երեսին ասել. ~ off անմիջապես, առանց մտածելու, walk/stand ~ ուղիղ քայլել/կանգնել. shoot ~ անվրեպ կրակել:

**straighten** ['streɪtn] v ուղղ(վ)ել, կարգի բերել. ~ a piece of wire/the road լարի կտորն ուղղել, ճանապարհն ուղղել. ~ the picture նկարն ուղղել. ~ one's back մեջքն ուղղել. ~ out one's ideas մտքերը կարգի բերել. ~ out a misunderstanding թյուրիմացությունը շտկել:

**straightforward** [,streɪt'fɔ:wəd] a ուղիղ, շիտակ, ազնիվ. a ~ man ուղղամիտ մարդ. a ~ answer շիտակ պատասխան:

**straightway** ['streɪtweɪ] adv անմիջապես:

**strain I** [streɪn] n ձգում, լարում, պրկում. the ~ on a rope պարանի ձգումը/լարումը. put a ~ on the beam հեծանը ծանրաբեռնել. (լարում, լարվածություն) bear the ~ լարվածությանը դիմանալ. break under the ~ լարվածությանը չդիմանալ. mental ~ մտավոր լարվածություն. put under a heavy ~ մեծ լարվածության տակ դնել. a ~ on the heart/nerves/muscles սրտի/նյարդերի վրա բեռ/բեռնվածություն. մկանների գերձգում/վնասում. ~ with supplies մատակարարումների պակաս/լարված վիճակ:

**strain II** [streɪn] n տեսակ, ցեղ. ծագում, տոհմ. a new ~ of virus վիրուսի մի նոր տեսակ. a good ~ of horse ծիու լավ տեսակ. a ~ of madness (in the family) հոգեկան հիվանդություններ. ~s երժշ. մեղեդի. the ~s of the harp տավիղի հնչյունները:

**strain** [streɪn] v լար(վ)ել, ձգ(վ)ել, պրկ(վ)ել. ~ one's eyes աչքերը/տեսողությունը լարել. ~ one's muscle/heart բժշկ. սիրտը գերհոգնեցնել. մկանը գերձգել. ~ oneself լարվել. ~ one's patience համբերությունը փորձել. ~ under the weight լարվել ծանրության տակ. ~

the law օրենքի մեկնաբանության մեջ չափազանցություն թույլ տալ. (քամել. գտել) ~ soup արգանակը քամել. ~ the water from the potatoes կարտոֆիլի ջուրը թափել:

**strained** [streind] a լարված, պրկված, ձգված. ~ relations/atmosphere լարված հարաբերություններ/մթնոլորտ. a ~ shoulder *բժշկ.* գերծագում, ձգելով վնասելը. (քամած) ~ milk քամած կաթ:

**strainer** ['streinə] n քամիչ:

**strait** [streit] n *աշխր.* նեղուց. ~s նեղ դրություն, ծանր վիճակ. S~s of Dover Պա-դե-Կալե. He's in financial ~s Ծանր նյութական վիճակում է:

**straiten** ['streitn] v նեղացնել, սահմանափակել:

**straitened** ['streitnd] a նեղված. be in ~ circumstances նեղ պայմաններում/աղքատության մեջ լինել:

**strait-laced** [,streit'leist] a խստաբարո, խստակյաց:

**strand** I [strænd] n ափ, առափնյա շերտ.

**strand** II [strænd] n թել, ջիլ. փունջ (մազերի, թելի). a ~ of rope/hair պարանի ոլորան. մազերի փունջ. a ~ of cable մալուխի/կաբելի ջիլ. a ~ of beads ուլունքների շարան. ~s of a project նախագծի տարրեր:

**strand** [strænd] v ծանծաղուտի մեջ խրվել/զցել. left ~ed without a penny *փխբ.* առանց լուծալի մնալ/նստել:

**strange** [streindʒ] a օտար, օտարերկրյա. a ~ country օտար երկիր. ~ faces օտար/անծանոթ դեմքեր. (տարօրինակ) ~ manner տարօրինակ վարվելակերպ. ~ to say տարօրինակ է ասել. ~ as it may seem որքան էլ տարօրինակ թվա. wear ~ clothes տարօրինակ հագուստ կրել. feel ~ իրեն վատ զգալ. (անսովոր, օտարոտի) taste ~ անսովոր համ ունենալ. Everything was ~ Ամեն ինչ անսովոր էր. ~ to the job գործին անծանոթ:

**stranger** ['streindʒə] n անծանոթ. օտարական. կողմնակի անձ. a perfect ~ լրիվ անծանոթ. a ~ to politics քաղաքականության մեջ նոր մարդ. I'm ~ to the party ես լրիվ նոր մարդ եմ այստեղ. the little ~ *կտկ.* նորածինը. (գերծ, ազատ) a ~ to fear անվախ:

**strangle** ['stræŋgl] v խեղդել, խեղդամահ անել. The collar is ~ing Օձիքը խեղդող է:

**strangulate** ['stræŋgjuleit] v *բժշկ.* սեղմել (անոթները). ոլորել (աղիքները). ճմլել:

**strap** [stræp] n փոկ, գոտի. կաշեփոկ. նեղ շերտ, շերտակտոր. *զգմ.* ուսադիր (*նաև* shoulder strap):

**strap** [stræp] v կապել ձգել. ամրացնել (փոկերով). ~ a baby in a chair երեխային աթոռին ամրացնել կաշեփոկով. ~ up a suit case ճամպրուկը կաշեգոտիով/փոկով ձգել. ~ up the wound with plaster վերքը սպեղանիով ձգել:

**straphanger** ['stræp,hæŋə] n փոկից բռնող. կանգնած ուղևոր. (տրամվայում):

**strapless** ['stræpləs] a առանց ձգակապերի. a ~ dress բաց օձիքով շոր:

**strapping** ['stræpiŋ] a բարձրահասակ, հաղթանդամ, ուժեղ:

**stratagem** ['strætədʒəm] n հնարք, խորամանկություն:

**strategian** [strə'ti:dʒiən] n ռազմագետ, ստրատեգ:

**strategic(al)** [strə'ti:dʒik(ɪ)] a ռազմավարական, ստրատեգիական. ռազմական կարևոր նշանակություն ունեցող:

**strategy** ['strætədʒi] n ռազմավարություն. մարտավարություն. employment ~ աշխատանքի ընդունման/զբաղվածության ռազմավարություն:

**stratification** [,strætifi'keiʃn] n *երկրբ.* շերտավորում, շերտավորություն, շերտամասվածք:

**stratify** ['strætifai] v շերտավորել, շերտ-շերտ դիզվել:

**stratosphere** ['strætəsfiə] n ստրատոսֆերա:

**stratum** ['stra:təm] n *երկրբ.* շերտ, նստվածքաշերտ. խավ (հասարակության):

**straw** [strɔ:]1. n ծղոտ, ծղոն. drink through a ~ ծղոտի օգնությամբ խմել. clutch at a ~ *փխբ.* ծղոտից բռնվել. the last ~ (բաժակը լցնող) վերջին կաթիլը. the last ~ that breaks the camels back ուղտի մեջքը կտրող վերջին ծղոտը, համբերության բաժակի վերջին կաթիլը. (չնչին բան) not to care a ~ մազաչափ իսկ չմտածել. not worth a ~ արժեք չունեցող. 2. a ծղոտի, ծղոտե:

**strawberry** ['strɔ:bəri] n ելակ. wild ~ մորի. ~ bed ելակի թումբ:

**straw-coloured** ['strɔ:,kAləd] a ծղոտագույն:

**stray** [streɪ] *n*, *a* մուրկված անասուն/անապատան երեխա. *a* ~ cat/dog անտուն թափառող կատու/շուն. *a* ~ bullet *փխբ.* պատահական զնդակ. ~ axis պատահական տաքսիներ. ~ thoughts/ideas անկապ մտքեր:

**stray** [streɪ] *v* թափառել, մուրկվել. ճանապարհը կորցնել. հետ մնալ/ընկնել. ~ from the path ճանապարհից շեղվել. ~ from the point թեմայից շեղվել. The child ~ed from home երեխան տանից դուրս եկավ և մուրկվեց. My thoughts ~ed Մտքերս թափառում էին:

**streak** [stri:k] *n* շերտ, շերտագիծ. զուլ. *a* white ~ in hair մազերի մեջ սպիտակ փունջ. ~s of black սև գծեր/բծեր/զուլեր. *a* ~ of paint/light ներկի/լույսի շերտ. (երակ) ~s of quartz կվարցի երակներ. ~s of lightning կայծակի փայլատակում. ~s of humour *փխբ.* հումորի զգացում. have a mean ~ ժլատ լինել. She has a ~ of German blood Գերմանական արյան խառնուրդ ունի. the Silver ~ *խսկց.* Լամանշի նեղուցը:

**streaked** [stri:kt] *a* զուլավոր, շերտավոր, երակավոր:

**streaky** ['stri:ki] *a* զուլավոր, շերտավոր, շերտ-շերտ, ~ meat ճարպի շերտերով միս. ~ with dirt ցեխագծերով կեղտոտած:

**stream** [stri:m] *n* գետ, գետակ, վտակ. հոսանք, հոսք. up ~ հոսանքն ի վեր. down ~ հոսանքն ի վայր. go with the ~ հոսանքով լողալ. *փխբ.* համակերպվել. go against the ~ հոսանքին դեմ գնալ. the ~ of thought մտքի ընթացք. *a* ~ of blood/light/cold air արյան շիթ. լույսի/սառը օդի հոսանք. *a* ~ of cars/people մեքենաների շարան. մարդկային հեղեղ. *a* ~ of tears արցունքի հեղեղ. the ~ of consciousness գիտակցության հոսանք. ~ of pupils / students աշակերտական/ուսանողական հոսք. *հմկրգ.* հոսք, վերացարկված հաջորդական ֆայլ. ~ input մուտք հոսքով. ~ oriented device սարք հոսքով:

**stream** [stri:m] *v* հոսել, շիթել, տարածվել. ծորալ. ~ blood արնահոսել. The light ~ed through the hole Անցքից լույս էր սփռվում/ծորում. ~ students/pupils (for different subjects) ուսանողների/աշակերտների հոսքեր կազմել տարբեր առարկաների համար. (թափվել) ~ with tears աչքերից արցունք

թափվել. Sweat ~ed down the face Քրտինքը ծորում էր դեմքից. (ծածանվել) The flag ~ed in the wind Դրոշը ծածանվում էր քամուց. The children were ~ing out երեխաները դուրս էին թափվում:

**streamer** ['stri:mə] *n* նավադրոշ, պատվադրոշ:

**streamlet** ['stri:mlit] *n* առվակ, վտակ, գետակ:

**stream-line** ['stri:mlain] *a* օդային հոսանքի ուղղությունը:

**streamlined** ['stri:mlaind] *a* շրջահոսելի ձև ունեցող ավտոմեքենա. ~ cars ջրահոսուն ավտոմեքենա. ~ methods *փխբ.* ռացիոնալ մեթոդներ:

**street** [stri:t] *n* փողոց. main ~ գլխավոր փողոց. side ~ նրբանցք. off ~ կողմնային փողոց. back ~ խուլ/հետ ընկած փողոց. ~s ahead շատ (ավելի) առաջ. not in the same ~ with *խսկց.* անհամեմատ ավելի ցածր/վատ. ~ walker փողոցային մարմնավաճառ. ~ car տրամվայ. ~ lighting փողոցային/փողոցի լուսավորություն. ~ sweeper փողոցը մաքրող մեքենա. at ~ level փողոցի մակարդակով. the man in the ~ սովորական մարդ. That's right up his ~ Դա հենց նրա գործն է:

**strength** [streŋθ] *n* ուժ. ~ of will կամքի ուժ. gather ~ ուժ հավաքել. on the ~ of պատճառով. by sheer ~ միայն/լոկ ուժով. the ~ of an ox եզի ուժ. the ~ of position դիրքի ուժ. beyond one's ~ ուժից դուրս/վեր. (ամրություն, դիմադրություն) the ~ of materials նյութերի դիմադրություն. թնդություն (թեյի, գինու և այլն) the ~ of alcohol խմիչքի/սպիրտի թնդությունը. *ֆին.* (արժեք) The dollar has lost/ gained in ~ Դոլարի արժեքը իջել է/ բարձրացել է. *ռզմ.* ուժերի քանակ, թվական կազմ. fighting ~ մարտական կազմ. on the ~ հաստիքային ցուցակներում, անձնակազմում. in full ~ լրիվ կազմով:

**strengthen** ['streŋθn] *v* ուժեղանալ. (ուժեղացնել, զորեղանալ. զորեղացնել) ~ one's muscles մկաններն ուժեղացնել. ~ walls/a building/one's position պատը/շենքը/ իր դիրքը ամրացնել. The wind ~s Քամին սաստկանում է:

**strenuous** ['strenjuəs] *a* լարված, ծանր, մեծ ուժ պահանջող. *a* ~ day լարված օր. ~ work



ծանր աշխատանք. make ~ efforts մեծ ջանքեր գործադրել. ~ walks հոգնեցուցիչ/մեծ լարում պահանջող զբոսանք:

**stress** [stres] n լարում, լարվածություն. ճնշում. mental/nervous ~ մտավոր/ նյարդային լարվածություն. be under ~ ճնշման տակ լինել. լարված վիճակում լինել. (նշանակություն նշանակություն տալ. lay ~ on physics ֆիզիկային մեծ նշանակություն տալ. lay great ~ on accuracy ճշգրտությանը մեծ նշանակություն տալ. The ~ is (put) on the second syllable Շեշտը դրվում է երկրորդ վանկի վրա:

**stress** [stres] v շեշտել, ընդգծել, շեշտ դնել. ~ the practical side ընդգծել գործնական նշանակությունը. He ~ed that ...ևա նշեց, որ...:

**stretch** [stretʃ] n առածգականություն. The elastic has lost its ~ Ռետինը կորցրել է իր առածգականությունը. give shoes a ~ կոշիկները ձգել/լայնացնել. The material has a lot of ~ Այս կտորը հեշտությամբ ձգվում է. work at full ~ աշխատել լրիվ հզորությամբ. a ~ of imagination երևակայության թռիչք. allow at a ~ չափազանցումով թույլ տալ. (ժամանակամիջոցի հատված) for hours at a ~ ժամերով. at one ~ մի անգամով. (տարածության հատված) that ~ of road ճանապարհի այդ հատվածը. for a long ~ երկար տարածքով. a beautiful ~ of country գեղեցիկ վայր. մրգ. the home ~ ավարտային/ուղիղ գիծ (ճիգ, ջանք, ձգում) with every faculty on the ~ լարելով բոլոր կարողությունները. ~ of authority իշխանության գերազանցում:

**stretch** [stretʃ] v ձգել, երկարացնել. ~ a rope/elastic պարանոթ/ռետինը ձգել. (գերազանցել) ~ one's authority իշխանությունը գերազանցել. That's ~ing things too far ! Դա արդեն չափազանց է. ~ out մեկնել, պարզել. ~ out one's hand ձեռքը մեկնել/պարզել. ~ one's legs ոտքերը ձգել/մեկնել. (ձգվել) The road ~ed away ճանապարհը ձգվում էր. The money won't ~ to ... Փողը չի բավարարի...:

**stretcher** [ˈstretʃə] n պատգարակ. ենթաշրջանակ (կտավ քաշելու համար):

**strew** [stru:] v ցրել. շաղ տալ, ցիրուցան անել. The room was ~n with shirts Շապիկները ցրված էին սենյակով մեկ. ~ with flowers ծաղիկներով ծածկել:

**stricken** [ˈstri:kən] a վնասված, ախտահար-

ված, հիվանդ. the ~ city տուժած/վնասված քաղաք. be ~ with grief/terror վշտահար/ սարսափահար լինել. ~ with fever ջերմախտով հիվանդ. ~ with paralysis կաթվածահար. ~ in years շատ ծեր, զառամյալ. poverty ~ չափազանց աղքատ. drought ~ երաշտից վնասված:

**strict** [strikt] a խիստ, խստապահանջ. be ~ with the students ուսանողների նկատմամբ խստապահանջ լինել. a ~ diet խիստ սննդակարգ/դիետա. in ~ confidence խիստ գաղտնի. (ճշգրիտ, ստույգ) a ~ meaning/translation ճշգրիտ իմաստ, ստույգ թարգմանություն. ~ confidence/secretcy բացարձակ վստահություն. բացարձակապես գաղտնի. in the ~ sense of the word խիստ ասած. ճիշտն ասած. ~ time limit խիստ ժամկետացանկ:

**stride** [straɪd] n մեծ/լայն քայլ. in a few ~s մի քանի քայլով. make great ~s in smth մեծ հաջողությունների հասնել. take in ~ *նզմ.* մի գրոհով գրավել:

**stride** [straɪd] v քայլել. ~ across վրայով անցնել. ~ along the river գետի ափով քայլել. ~ off/on շարունակել քայլել:

**strident** [ˈstraɪdnt] a սուր, ճղճղան:

**strife** [straɪf] n վեճ, կոնֆլիկտ. civil ~ քաղաքացիական բախում/հուզումներ. industrial/ domestic ~ արդյունաբերական/ընտանեկան վեճեր/կոնֆլիկտ:

**strike** [straɪk] n հարված (*ճակ նազմական*). մարտ. մրգ. հարված. (գործադուլ) general ~ ընդհանուր գործադուլ. go/be on ~ գործադուլ անել. come out on ~ գործադուլ հայտարարել. sit down/in ~ իտալական գործադուլ, նստադուլ. work-to-rule ~ գործադուլ կանոնների խիստ պահպանմամբ. ~ breaker գործադուլաբեկ, գործադուլը լքող. բոյկոտ (կոլեկտիվ մերժում) buyer ~ որոշ ապրանքներ/խանութ բոյկոտել. (բացումը, գործելը) a big oil ~ մեծ նավթահորի գործելը. hunger ~ սովադուլ. a sympathy ~ համերաշխության գործադուլ:

**strike I** [straɪk] v գործադուլ անել. ~ work աշխատանքը դադարեցնել:

**strike II** [straɪk] v խփել, հարվածել, զարկել. ~ the nail մեխը խփել. ~ a blow հարված հասցնել, հարվածել. ~ a ball գնդակին խփել. The bullet struck his chest

Գնդակը կպավ նրա կրծքին. Paralysis struck him Նրան կաթված (պարալիչ) խփեց. be struck blind/deaf/dumb with horror սարսափից կուրանալ/համրանալ/խլանալ. The ship struck a reef Նավը բախվեց խութին. They struck gold Նրանք ոսկու երակ հայտնաբերեցին/գտան. We struck lucky *փխք*. Մեր բախտը բերեց. (հատել, կտրել) ~ a coin/a medal դրամ/մեդալ հատել/կտրել. (վառել) ~ a match լուցկի վառել. ~ roots *բսբ*. արմատ գցել. (ուղղվել) ~ to the left/right դեպի ձախ/աջ ուղղվել. (գարկել, խփել) The clock struck three Ժամացույցը խփեց ժամի երեքը ~ an average միջին թիվը հանել. (հղանալ, մտքով անցնել.) It struck me Միտք հղացավ. It ~s me he's not here Ինձ թվում է՝ նա այստեղ չէ. (տպավորություն գործել) How does he ~ you ? Ի՞նչ կարծիքի ես նրա մասին. I was struck by her voice Ինձ ցնցեց նրա ձայնը. The enemy struck at dawn Թշնամին հարձակվեց արշալույսին. ~ across անց կենալ, անցնել. ~ back պատասխան հարված տալ. ~ down գետին տապալել. ~ off աշխատանքից ազատել. ~ out ջնջել, վրան գիծ քաշել. ~ up սկսել. ~ up a conversation/acquaintance խոսակցություն սկսել. ծանոթություն հաստատել:

**striker** ['straikɪ] n գործադուլավոր:

**striking** ['straikɪŋ] a զարմանալի, ապշեցուցիչ. a ~ contrast ապշեցուցիչ հակադրություն. ~ beauty զարմանալի գեղեցկություն. a ~ force *ռզմ*. հարվածային, գրոհիչ. within ~ range հասանելիության սահմաններում:

**string** [striŋ] n լար, նվագալար. the ~s լարային գործիքներ. a ~ quartet լարային քառյակ. touch the ~s նվագել. touch a ~ *փխք*. նուրբ լարին դիպչել. harp on one/the same ~ նույն բանը կրկնել. (պարան, երիզ. կապ) a piece/ball of ~ պարանի մի կտոր /կծիկ. tied to his mother's apron ~s *փխք*. մոր փեշից կպած. pull the ~s *փխք*. իր կապերն օգտագործել. գաղտնի զսպանակներ. (շարք, շարան) a ~ of pearls/bead մարգարիտների/հուլունքի շարան. ~s of people մարդկանց շարան. a ~ of onions մի կապոց սոխ. a ~ of questions հարցերի շարան. *հմկրգ*. սիմվոլային տող. ~ constant սիմվոլային տողի հաստատուն. ~ manipulation

սիմվոլային տողի մշակում. ~ variable փոփոխական, որի արժեքը սիմվոլային տող է: **string** [striŋ] v լար գցել/կապել. աղեղալար կապել. ~ a violin/racket ջութակի/ռակետի վրա լար գցել. (շարել) ~ beads հուլունք շարել. The cars were strung Մեքենաները շարվել էին:

**stringed** ['striŋd] a լարային, լարավոր:

**stringent** ['striŋdʒənt] a խիստ, պարտադիր. ~ measures խիստ միջոցներ. ~ necessity խիստ/դաժան անհրաժեշտություն:

**stringy** ['striŋi] a թելաշատ. ջլոտ (միս):

**strip** [stri:p] n նեղ շերտ. ժապավեն. ~ of land նեղ հողաշերտ. Gaza ~ *աշխր.*, *քղք*. Գազայի հատված. air/landing ~ *ավ*. թռիչքի ու վայրէջքի վազքուղի. tear a ~ off smb խիստ հանդիմանել/նախատել:

**strip** [stri:p] v պոկել, մաշկել. հանել. ~ naked մերկացնել. ~ a bed անկողնու սպիտակեղենը հանել/փոխել. (կողոպտել, պլոկել) Burglars ~ped the flat Գողերը կողոպտեցին/սրբեցին բնակարանը. ~ off վրայից պոկել. be ~ped of everything ամեն ինչից զրկ(վ)ել:

**strip cartoon** [,stri:pka:'tu:n] n նկարներով պատմվածք:

**stripe** [straip] n զուլ, շերտ, շերտագիծ. black dress with white ~s սպիտակ զուլերով սև շոր. *ռզմ*. ուսադիր. լամպաս. get/lose one's ~s աստիճան ստանալ, աստիճանագրկվել:

**striped** [straipɪt] a գուլավոր, գուլերով:

**strip lighting** ['striplaitiŋ] n ցերեկային/արհեստական լուսավորության լամպեր:

**stripling** ['stripliŋ] n պատանի, դեռահաս:

**striptease** ['stripti:z] n, մերկապար, ստրիպ-տիզ:

**strive** [straiv] v ջանալ, ճիգ թափել. ձգտել. for/after smth մի բանի ձգտել. ~ for effect ջանալ տպավորություն գործել. ~ against smth պայքարել որևէ բանի դեմ. ~ to conceal one's anger փորձել զայրույթը թաքցնել:

**strivings** ['straivɪŋz] n ջանքեր, ճիգեր, ուժերի լարում:

**stroke** I [strəuk] n հարված. *բժշկ*. կաթված, նոպա. finishing ~ վճռական/ճակատագրական հարված. heat ~ ջերմահարված. sun ~ արևահարված. breast ~ *մրգ*. բրաս (լողի ձև). put smb off his ~ *մրգ*. ռիթմից գցել. piston ~ *տեխ*. մխոցի շարժ. with a ~ of the pen գրչի մի հարվածով. *նկրչ*. վրձնախաղ. finishing ~

վրձնի վերջին հարվածները. (քայլ) a clever ~ ճարպիկ քայլ. a ~ of luck հաջողություն. at a/one ~ մի հարվածով. a master ~ հմուտ/կատարյալ հնարք. զարկ (ժամացույցի) He arrived at the ~ of three Ուղիղ ժամը երեքին նա եկավ. not to do a ~ *խսկց.* մատը մատին չտալ. a ~ of the bow *երժշ.* արեղի (թափով) շարժում:

**stroke** II [strəʊk] n շոյում, շոյելը, փաղաքշելը:

**stroke** [strəʊk] v շոյել, փաղաքշել. ~ down հանգստացնել, հանդարտեցնել. ~ the wrong way *փխբ.* ջղայնացնել, տհաճություն պատճառել:

**stroll** [strɔːl] n զբոսանք. take a/go for a ~ զբոսանքի գնալ:

**stroll** [strɔːl] v զբոսնել, ճեմել. ~ along the beach ափի երկայնքով զբոսնել:

**stroller** [ˈstrɔːlə] n զբոսնող. թափառաշրջիկ, շրջմուխիկ:

**strong** [strɒŋ] a ուժեղ, պինդ, ամուր. a ~ heart/stick առողջ սիրտ, ամուր ձեռնափայտ. ~ nerves առողջ նյարդեր. as ~ as a horse ցուլի նման առողջ. ~ personality ուժեղ անձնավորություն/անհատականություն. a ~ wind ուժեղ քամի. ~ in maths մաթեմատիկայից ուժեղ. ~ shoes ամուր կոշիկներ. ~ emotions/accents/protest ուժեղ զգացմունքներ/առոգանություն/բողոք. (խիստ, կտրուկ.) ~ measures խիստ/կտրուկ միջոցներ. (թունդ) ~ tea/coffee/wine թունդ թեյ/սուրճ/գինի. a ~ smell ուժեղ հոտ. ~ language թունդ/խիստ հայիռյալան արտահայտություններ. (կծու, սուր) ~ pepper/cheese կծու բիբար/պղպեղ, սուր պանիր. ~ indications ակնհայտ նշաններ. a ~ currency *ֆին.* կայուն արժեզրահամ:

**strong** [strɒŋ] adv շատ, խիստ. կտրուկ ձևով. come it ~ շատ հեռու գնալ, չափն անցնել. ~ against խիստ/կտրուկ դեմ. ~ advice համառորեն/թախամձագին խորհուրդ տալ. feel ~ որոշակի կարծիք ունենալ:

**strong-box** [ˈstrɒŋ bɒks] n սեյֆ, անկիզելի զանձապահարան:

**stronghold** [ˈstrɒŋhəʊld] n պատվար, հենարան, ամրոց:

**strong-willed** [ˈstrɒŋ ˈwɪld] a ամուր կամքի տեր:

**strop** [strɒp] 1. n սրոցափոկ. *տեխ., ծով.* քարշափոկ. 2. v սրել (ածելին) ~ a razor

ածելին սրել (քարշափոկով):

**structural** [ˈstrʌktʃrəl] a կառուցվածքային. շինարարական. ~ alterations կառուցվածքային փոփոխություններ. ~ engineering շինարարական տեխնիկա:

**structure** [ˈstrʌktʃə] n կառուցվածք, շինություն. ~ of society հասարակության կառուցվածք. the ~ of the human body մարմնի կառուցվածքը. social ~ հասարակարգ. ~ plan կառուցվածքային պլան the ~ of the language/sentence. [եզվի/նախադասության կառուցվածքը]:

**structured programming** [ˈstrʌktʃəd ˈprɔːgræmɪŋ] *հմկրգ.* կառուցվածքային ծրագրավորում:

**struggle** [ˈstrʌɡl] n պայքար. life and death ~ կենաց ու մահու պայքար. ~ for existence գոյության պայքար. (դիմադրություն.) put up a ~ դիմադրություն ցույց տալ. (կռիվ) in the ~ կռվում/կռվի ընթացքում:

**struggle** [ˈstrʌɡl] v պայքարել, դիմադրել. կռվել. He ~d with the policeman նա դիմադրեց ոստիկանին. ~ to one's feet դժվարությամբ ոտքի կանգնել. ~ along somehow մի կերպ յուրա գնալ. ~ against difficulties պայքարել դժվարությունների դեմ:

**strum** [strʌm] n ծնգծնգացնել, ճնգծնգացնել. ~ on the piano/guitar դաշնամուրի/կիթառի վրա ծնգծնգացնել:

**strut** [strʌt] n *տեխ.* հենակ, նեցուկ:

**stub** [stʌb] n կոճղ, քոթուկ. կտոր, բեկոր. մատիտի կրծուկ. ծխախոտի մնացորդ, ծխուկ:

**stub** [stʌb] v արմատախիլ անել. ոտքը կոշտ բանի խփել. ~ one's toe against smth ոտքը կոշտ բանի խփել:

**stubble** [ˈstʌbl] n հնձած արտ. կարճ կտրած/խուրզած մազեր. չսափրված մորուք:

**stubborn** [ˈstʌbən] a համառ, կամակոր:

**stubbornness** [ˈstʌbənəs] n համառություն, կամակորություն:

**stubby** [ˈstʌbi] a կոճղոտ. կարճ ու հաստ. պնդակազմ. ~ fingers կարճ, հաստ մատներ. a ~ tail կտրած պոչ:

**stucco** [ˈstʌkəʊ] n սվաղ, ծեփ:

**stuck up** [ˈstʌkʌp] a մեծամիտ, զոռոզ, ինքնագոհ. be so ~ այնքան զոռոզ/մեծամիտ լինել:

**stud** I [stʌd] n ճարմանդ, կոճակ. մեծ գլխարկով/գլխով մեխ:

**stud** II [stʌd] n ախոռ, ծիանոց. ~ farm ծիանոց. ~ mare ազնվացեղ հովատակ. ~ horse ազնվացեղ հովատակ ձի. racing ~ ծիանոցարան:

**student** [ˈstju:dnt] n ուսանող, որևէ բան ուսումնասիրող. a medical/law ~ բժշկական/իրավաբանական ֆակուլտետի ուսանող:

**studentship** [ˈstju:dntʃɪp] n ուսանողական տարիներ/թոշակ:

**studied** [ˈstʌdiəd] a մտածված, կանխամտածված. դիտավորյալ. a ~ insult մտածված վիրավորանք. a ~ calm շինծու/կեղծ հանգստություն:

**studio** [ˈstju:diəʊ] n արվեստանոց, ստուդիա. արհեստանոց. նորածնության սրահ. ռադիո/կինո ստուդիա:

**studious** [ˈstju:diəs] a աշխատասեր, ջանասեր. with ~ attention մեծ ուշադրությամբ:

**stud/y** [ˈstʌdi] n աշխատասենյակ, գրասենյակ. ուսումնասիրություն, հետազոտություն, գիտություն. երժշ. էտյուդ. արվ. էտյուդ, էսքիզ. ուրվագիծ. make a ~ of ուսումնասիրել, հետազոտել. field of ~ ուսումնասիրության ոլորտ. humane ~ies հումանիտար առարկաներ. postgraduate ~ies ասպիրանտուրա. a careful ~ մանրամասն ուսումնասիրություն. (be) in a brown ~ *փխբ*. մտքերի մեջ խորասուզված (լինել). ~ group խմբակ:

**study** [ˈstʌdi] v ուսումնասիրել, հետազոտել, գննել. ~ history/a text պատմություն/տեքստ ուսումնասիրել. ~ one's reaction/face մեկի ռեակցիան դիտել, ուսումնասիրել/դեմքը գննել. սովորել, պարապել ~ for exams քննություններին պատրաստվել. ~ hard շատ պարապել. ~ under/with professor S պրոֆ. Ս-ի մոտ պարապել:

**stuff** [stʌf] n նյութ, հումք, գործվածք. green/garden ~ բանջարեղեն. raw ~ հումք. doctor's ~ *խսկց*. դեղ, դեղամիջոց. good ~ լավ գործվածք. know one's ~ *խսկց*. իր գործն իմանալ. Do your ~ Քո գործն արա. ~ and nonsense հիմարություն, անհեթեթություն. all that ~ այդ ամբողջ հիմարությունը Do you call this ~ coffee? Դու սա սո՞ւրճ ես անվանում. *խսկց*. իրեր. scatter ~ all over the

place իրերը չորս կողմ թափել/փռել. move the ~ off the table իրերը սեղանից հավաքել. bring ~ from France Ֆրանսիայից ապրանք (իրեր) բերել:

**stuff** [stʌf] v խցկել, խոթել. շատ/ազահարար ունել. ~ a pillow with feather բարձր փետուրով լցնել. He ~ed his mouth with chocolates Բերանը շոկոլադով լցրեց. ~ one's head with useless facts գլուխը անպետք բաներով լցնել. ~ cotton wool into ears ականջների մեջ բամբակ խոթել. ~ the hole with a cement անցքը ցեմենտով փակել. ~ed up with a cold քիթը բռնված լինել:

**stuffing** [ˈstʌfɪŋ] n լիցք, լցվածք. *խիր*. լցոն, խորիզ:

**stuffy** [ˈstʌfi] a տոթ, հեղձուկ, ծանր. խիստ, բժախնդիր. It's ~ in here Այստեղ տոթ է. a ~ old thing *խսկց*. շատ խիստ մարդ:

**stumble** [ˈstʌmbəl] v սայթաքել. կակազել, կմկմալ. The horse ~d and fell Ձին սայթաքեց և ընկավ. ~ on a stone ոտքը քարին առնել. ~ over one's words կակազել. He ~d through the speech Նա ճառն արտասանեց կմկմալով:

**stumbling-block** [ˈstʌmbliŋbɒk] n գայթակղության քար. արգելք, խոչընդոտ:

**stump** [stʌmp] n կոճղ, ծայրատ ոտք/ծեռք. կրծուկ (մատիտի). (կտրված) ատամի արմատ. ծխախոտի մնացորդ. stir one's ~s շարժվել, շտապել. a ~ of a tail պոչի մնացորդ:

**stump** [stʌmp] v *խսկց*. փակուղու մեջ զգել. ծանր քայլել. be ~ed for an answer չիմանալ ինչ պատասխանել. ~ up the cash առձեռն գումարը վճարել. ~ up for the dinner *խսկց*. վճարել ճաշի համար. ~ along ծանր քայլել. He was ~ed by the problem Պրոբլեմը նրան շփոթեցրեց (տարակուսանք):

**stumpy** [ˈstʌmpi] a կարճ ու հաստ, պնդակազմ, կարճահասակ:

**stun** [stʌn] v շշմեցնել, խլացնել, շփոթեցնել. ~ed by the blow հարվածից շշմած. ~ed by the news *փխբ*. նորությունից ցնցված:

**stunning** [ˈstʌniŋ] a շշմեցուցիչ, ապշեցուցիչ, ցնցող. հիանալի, հոյակապ:

**stunt** [stʌnt] n ճարպիկ հմարք, աճպարարություն. a publicity ~ գովազդային հմարք:

**stunted** [ˈstʌntɪd] a կարճահասակ. դալուկ (բույս):

**stupe** [stju:p] n հիմար, ապուշ մարդ:

**stupefaction** [ˌstjuːpiˈfækʃn] n խիստ զարմանք. ապշահարություն:

**stupefied** [ˈstjuːpifaɪd] a ապշած, շշմած, խիստ զարմացած. թմրած, բթացած (ալկոհոլից):

**stupefy** [ˈstjuːpɪfaɪ] v ապշեցնել, շշմեցնել. բթացնել:

**stupendous** [stjuˈpendəs] a *խսկց.* հիանալի, զարմանահարաշ. վիթխարի, հսկայական:

**stupid** [ˈstjuːpɪd] a բթամիտ, հիմար. բթացած, շշմած do smth ~ հիմարություն անել. What a ~ thing! Ի՞նչ հիմարություն:

**stupidity** [ˈstjuːpɪdəti] n հիմարություն, բթամտություն:

**stupor** [ˈstjuːpə] n թմրություն, անզգա վիճակ:

**sturdy** [ˈstɜːdi] a ուժեղ, ամրակազմ, առողջ. a ~ chair պինդ աթոռ. ~ bicycle հուսալի հեծանիվ:

**surgeon** [ˈstɜːdʒən] n *կենդ.* թառափ (ծուկ):

**stutter** [ˈstʌtə] n կակազում, կմկմոց:

**stutter** [ˈstʌtə] v կակազել, կմկմալ. have a bad ~ ուժեղ կակազել. ~ out an apology կմկմալով ներողություն խնդրել:

**sty** [stai] n խոզի բուն, խոզաբուն (*swine pig* ~). *փխք.* կեղտոտ տեղ:

**sty(e)** [stai] n զարեհատ. *բժշկ.* տիկնակլունծ (աչքի):

**style** [stail] n ոճ, ուղղություն. դպրոց (արվեստի). եղանակ, ոճ (կատարման). pointed ~ գոթական ոճ. old ~ հին տոմար. ~ of acting/speaking դերակատարման ոճը. խոսելու եղանակը/ձևը. ~ of life ապրելակերպ, կենսաձև. free ~ *մրզ.* ազատ ոճ. This is not my ~ *փխք.* Դա իմ ոճը չէ. (նրբագեղություն. շուք, փայլ) There is no ~ about him Նա շատ հասարակ շարժուձև ունի. travel/live in ~ շուքով ճամփորդել. շքեղ ապրել. (նորաձևություն, տարագ) the latest ~ նորաձևության ամենավերջին տեսակը. a new hair ~ մազերի նոր սանրվածք:

**style** [stail] v անվանել, կոչել. He ~s himself "director" Նա իրեն "տնօրեն" է անվանում. (ձևավորել) ~ a dress/hair հագուստ/մազերի սանրվածքը ձևավորել:

**styling** [ˈstailɪŋ] n գեղարվեստական ձևավորում, մոդելավորում:

**stylish** [ˈstailɪʃ] a պերճ, շքեղ. նորաձև, ոճավոր:

**stylist** [ˈstailɪst] n ոճաբան. մոդելագործ. զարդարար. դեկորատոր:

**stylistic** [staiˈlistɪk] a ոճական:

**suave** [swaːv] a մեղմ, բարեկիրթ. շողոքորթ (pejor). ~ phrases շողոքորթ արտահայտություններ. a ~ type շողոքորթ:

**suavity** [ˈswaːvəti] n մեղմություն, բարեկիրթություն. շողոքորթություն:

**subaltern** [ˈsʌltən] n ենթասպա:

**subclass** [ˈsʌb,klɑːs] n ենթադաս:

**subcommittee** [ˈsʌb,kmɪti] n ենթակոմիտե, ենթահանձնախումբ:

**subconscious** [sʌbˈkɒnʃəs] a ենթագիտակցական. the ~ ենթագիտակցություն:

**subcontractor** [sʌb,kræktə] ենթակապալառու:

**subdivide** [sʌbdiˈvaɪd] v ստորաբաժանել:

**subdivision** [ˈsʌbdi,viʒn] n ենթաբաժանում, ստորաբաժանում:

**subdue** [səbˈdjuː] v ճնշել, հնազանդեցնել. իջեցնել (ձայնը):

**subdued** [səbˈdjuːd] a ճնշված, ճնշող. be ~ ճնշված լինել. a ~ atmosphere ճնշող մթնոլորտ. ~ voice ցածր ձայն. ~ light թույլ լույս:

**subeditor** [sʌbˈeditə] n խմբագրի տեղակալ/օգնական:

**subheading** [sʌbˈhedɪŋ] n ենթավերնագիր:

**subject** [ˈsʌbdʒekt] n թեմա, նյութ. ~ of a novel/research վեպի/հետազոտության թեմա/առարկա. keep to the ~ մնալ թեմայի սահմաններում, թեման շարունակել. change from the ~ փոխել խոսակցության թեման/հետազոտության նյութը. fetchy ~ նրբանկատ թեմա. wander from the ~ թեմայից շեղվել. on the ~ թեմայի/նյութի մասին/վերաբերյալ. ~ heading/index առարկայական/թեմատիկ ցանց. ~ matter թեմա, նյութ. (առարկա) the ~ of an experiment/investigation փորձի/հետազոտության առարկան. a good ~ for painting նկարելու համար հարմար, գեղեցիկ նյութ/տեսարան. *քղք.* (հպատակ, ենթակա) ~ nations կախյալ պետություններ. foreign ~ օտարերկրյա պետության հպատակ/քաղաքացի. *քեր.* ենթակա (նախադասության):

**subject** [ˈsʌbdʒekt] a *քղք.* ենթակա. a territory ~ to ենթակա տարածք. Prices are ~ to alteration Գները ենթակա են փոփոխության. ~ to changes փոփոխությունների ենթակա. (պայման) The plan will be realized at once ~

to his approval Ծրագիրն անմիջապես կիրականացվի պայմանով, եթե նա տա իր համաձայնությունը:

**subject** [səb'dʒekt] v ենթարկել, հպատակեցնել. be ~ed to great hardships մեծ դժվարություններ կրել:

**subject** [səb'dʒekt] n հնազանդություն, հպատակություն. հպատակվելը. ներկայացում, ներկայացնելը (քննության, փորձաքննության):

**subjective** [səb'dʒektiv] a սուբյեկտիվ. անձնական. կողմնակալ. ~ judgement/impression անձնական/սուբյեկտիվ դատողություն/տպավորություն:

**subjugate** ['sʌbdʒuːgeɪt] v նվաճել, հպատակեցնել:

**subjugation** [ˌsʌbdʒuːˈgeɪʃn] n նվաճում, հպատակեցում:

**subjunctive** [səb'dʒʌŋktɪv] 1. n (*Մահ* the ~ mood) *քեր.* ստորադասական եղանակ. 2. a ստորադասական:

**sublease** ['sʌbliːs] n ենթավարձակալություն:

**sublet** [ˌsʌb'let] v ենթավարձակալության հանձնել:

**sublimate** ['sʌblɪmeɪt] v *քիմ.* սուբլիմացիայի ենթարկել. *փիլոս.* բարձրացնել, ազնվացնել:

**sublime** [sə'blaɪm] a բարձր, վսեմ, ազնիվ. with ~ indifference գոռոզ անտարբերությամբ. from the ~ to the ridiculous վսեմից մինչև ծիծաղելի մի քայլ:

**subliminal** [ˌsʌb'limɪnəl] a ենթագիտակցային, ենթագիտակցական:

**submarine** ['sʌbməriːn] 1. n սուզանավ. 2. a ստորջրյա:

**submerge** [səb'mə:dʒ] v սուզ(վ)ել, ջրով ծածկել. հեղեղել. The boat ~d Նավակը սուզվեց. completely ~d by papers լրիվ թաղված թղթերի մեջ:

**submergence** [səb'mə:dʒəns] n ողողում, հեղեղում, ջրածածկ անելը:

**submission** [səb'mɪʃn] n հնազանդություն, հպատակություն. The tribes were reduced to complete ~ Ցեղերը լրիվ հպատակվեցին. *իրավ.* հայտարարություն, ներկայացնելը. make a ~ հայտարարություն անել. The defendant's ~ was ...Պաշտպանյալը հայտարարեց, որ... written ~ գրավոր փաս-

տարկներ:

**submissive** [səb'mɪsɪv] a հնազանդ, խոնարհ:

**submit** I [səb'mɪt] v հպատակվել, հնազանդվել. ներկայացնել. ~ a proposal առաջարկություն ներկայացնել. ~ the problem to the committee հարցը կոմիտեի քննարկմանը ներկայացնել. ~ for approval հաստատման ներկայացնել. ~ one's resignation իրաժարական տալ. *իրավ.* (հայտարարել) We ~ that ... Մենք հայտարարում ենք, որ...:

**submit** II [səb'mɪt] v *հմկրգ.* ակտիվացնել, ուղարկել կատարման:

**subnormal** [ˌsʌb'nɔːml] a թերզարգացած. ~ temperature նորմայից ցածր ջերմություն:

**subordinate** I [sə'bɔːdɪnət] 1. n ստորադաս անձ, ստորադրյալ. 2. a ստորադաս, ենթակա. ստորակարգային; ~ clause ստորադասական նախադասություն:

**subordinate** II [sə'bɔːdɪneɪt] v ստորադասել, ենթակայության տակ դնել:

**subordination** [sə,bɔːdɪ'neɪʃn] n սուբորդինացիա:

**subplot** ['sʌbplɒt] n զեղարվեստական ստեղծագործության սյուժետային երկրորդ գիծը:

**subpoena** [sə'piːnə] n դատական ծանուցագիր:

**subroutine** ['sʌbrʊtiːn] n *հմկրգ.* ենթաօրագիր, մոդուլ. ~ call ենթաօրագրի կանչ. ~ linkage ենթաօրագրերի կապակցում:

**subscribe** [səb'skraɪb] v բաժանորդագրվել. ~ to several journals մի քանի ամսագրի բաժանորդագրվել. ~ to some idea *փիլոս.* գաղափարը սատարել. (դրամական նվիրատվություն անել) He ~d 20 dollars to the fund Նա ֆոնդին 20 դոլար նվիրեց:

**subscriber** [səb'skraɪbə] n բաժանորդ, նվիրատու:

**subscription** [səb'skrɪpʃn] n բաժանորդագրություն, նվիրատվություն. անդամավճար. աբոնեմենտ/մշտական/սեզոնային տոմս. take out a ~ to բաժանորդագրվել. pay a ~ to a club ակումբի անդամավճար մուծել. All ~s welcome Ընդունվում են բոլոր նվիրատվությունները. ~ concert աբոնեմենտային համերգ. ~ rate բաժանորդագրման գինը:

**subsection** [ˌsʌb'sekʃn] n ենթասեկցիա, ենթաբաժին. (փաստաթղթում) ենթաբաժին,

կետ:  
**subsequent** [ˈsʌbsɪkwənt] a հետագա, հաջորդ, հաջորդող. on a ~ visit հաջորդ այցելության ժամանակ/ընթացքում:  
**subsequently** [ˈsʌbsɪkwəntli] adv հետագայում, հետո, ավելի ուշ:  
**subserve** [səbˈsɜːv] v աջակցել, նպաստել, օգտակար լինել:  
**subsistence** [səbˈsɜːvɪəns] n ստորաքարշություն, քճություն:  
**subservient** [səbˈsɜːvɪənt] a ստորաքարշ, ստրկամիտ:  
**subset** [sʌbˈset] n *հմկրգ.* ենթաբազմություն. ~ language լեզվի ենթաբազմություն:  
**subside** [səbˈsaɪd] v իջնել, պակասել (ջուրը). The water ~d Ջուրը պակասեց. The storm ~d Փոթորիկը հանդարտվեց. The building ~d Շինությունը նստեց. He ~d into an armchair *կտկ.* Նա ընկղմվեց բազկաթոռի մեջ:  
**subsidence** [səbˈsaɪdnz] n անկում. պակասում. հանդարտում. իջնելը, նստելը:  
**subsidiary** [səbˈsɪdiəri] n բաժանմունք, մասնաճյուղ. a ~ enterprise օժանդակ/լրացուցիչ բաժանմունք/մասնաճյուղ/կազմակերպություն. a ~ bank բանկի մասնաճյուղ. ~ means of income եկամտի լրացուցիչ աղբյուր. ~ company դուստր ձեռնարկություն. a ~ reason լրացուցիչ պատճառ:  
**subsidiarize** [ˈsʌbsɪdaɪz] v դրամական նպաստալ. դրամով օժանդակել:  
**subsidy** [ˈsʌbsɪdi] n նպաստ, դրամական օժանդակություն. լրավճար:  
**subsist** [səbˈsɪst] v գոյություն ունենալ, լինել. ապրել, սնվել. ~ on 40 dollars a week ապրել շաբաթական 40 դոլարով. ~ entirely on vegetables միայն բանջարեղենով սնվել:  
**subsistence** [səbˈsɪstəns] n գոյություն, կյանք, ապրելը. means of ~ գոյության/ապրելու միջոցներ. ~ minimum կենսաապահովման նվազագույնը. live on a ~ diet խիստ նվազ սնունդով բավարարվել. սովալուկ լինել:  
**subsoil** [ˈsʌbsɔɪl] n ենթահող, հողի ստորին շերտ:  
**subspecies** [ˈsʌbˌspiːʃiːz] n ենթատեսակ, տարատեսակ:  
**substance** [ˈsʌbstəns] n նյութ. *փիլ.* մատերիա, սուբստանցիա. էություն, իսկություն.

in ~ ըստ էության, հիմնականում. devoid of ~ անհիմն, հիմքից զուրկ. the ~ of the argument փաստարկի հիմքը. The book lacks ~ **Գրքում բացակայում է բուն էությունը:**  
**substantial** [səbˈstænʃl] a էական, հիմնական, կարևոր, զգալի. a ~ meal կուշտ ճաշ. a ~ proof ծանրակշիռ ապացույց. ~ agreement էական համաձայնություն. a ~ contribution/part/progress զգալի ներդրում/դեր/առաջխաղացում, հաջողություն:  
**substantially** [səbˈstænʃli] adv էականորեն, զգալիորեն. ~ different զգալիորեն տարբեր. a ~ built house հաստատուն կառուցված շենք:  
**substantiate** [səbˈstænjieɪt] v հիմնավորել, փաստերով հաստատել. ապացուցել. ~ a statement/charge հայտարարությունը/մեղադրանքը հիմնավորել:  
**substantive** [ˈsʌbstəntɪv] **1.** n *քեր.* գոյական անուն. **2.** a *իրավ.* էական ~ law նյութական իրավունք:  
**substitute** [ˈsʌbstɪtjuːt] n փոխարինող, փոխանյութ. սուռոզատ find a ~ փոխանյութ գտնել. Saccharine is a ~ for sugar Սախարինը շաքարի փոխանյութն է. Beware of ~s *տնտ.* Ջգուշացեք սուռոզատներից. *մրգ.* play as a ~ for խաղալ որպես մեկի փոխանորդ/փոխարինող, փոխարեն խաղալ. a ~ in team պահեստային խաղացող:  
**substitute** [ˈsʌbstɪtjuːt] v փոխարինել. տեղակալ լինել. ~ tea for coffee թեյը սուրճով փոխարինել. ~ for smb մեկին փոխարինել. ~ fake documents փաստաթղթերը նենգափոխել:  
**substitution** [ˌsʌbstɪˈtjuːʃn] n փոխարինում, տեղակալում. *մաթ.* տեղադրում. ~ of conditions պայմանների փոխարինում:  
**substratum** [ˈsʌbstrəːtəm] n ենթաշերտ, ենթախավ. ենթահող:  
**substring** [ˈsʌbˈstriŋ] n *հմկրգ.* ենթատող:  
**substruction** [ˈsʌbstrʌkʃn] n հիմք:  
**subtenant** [ˌsʌbˈtenənt] n ենթավարձակալ:  
**subterfuge** [ˈsʌbtəfjuːdʒ] n խորամանկություն, հնարք. խուսափում. resort to ~ խորամանկության դիմել:  
**subterranean** [ˌsʌbtəˈreɪniən] a ստորգետնյա. *փիլ.* ընդհատակյա. գաղտնի:  
**subtitle** [ˈsʌbtaɪtl] n ենթավերնագիր. (կինո) սուբտիտր, ենթագիր:

**subtle** [ˈsʌtl] a նուրբ, նրբին. ճկուն, թափանցիկ. նրբահամ, նրբաճաշակ. a ~ mind/perfume/hint ճկուն միտք. նուրբ օժանելիք. նրբանկատ ակնարկ. ~ charm անընթացի հմայք:

**subtotal** [sʌbˈtəʊtl] n *հմկրգ*. միջանկյալ գումար:

**subtract** [səbˈtrækt] v *մաթ*. հանել, պակասեցնել:

**subtraction** [səbˈtrækʃn] n *մաթ*. հանում:

**subtropical** [ˌsʌbˈtrɒpɪkl] a մերձարևադարձային:

**suburb** [ˈsʌbə:b] n արվարձան. քաղաքամերձ բնակավայր:

**suburban** [səˈbʊə:bən] a արվարձանային, քաղաքամերձ. *փխբ*. սահմանափակ, գավառական. a ~ type *փխբ*. քաղքենի:

**subversive** [səbˈvɜ:sɪv] a կործանարար, ավերիչ, քայքայիչ. ~ activity քայքայիչ գործունեություն:

**subway** [ˈsʌbweɪ] n գետնանցք, ստորանցք. թունել. մետրո:

**subzero** [sʌbˈziərəʊ] a զրոյից ցածր, բացասական. ~ temperatures բացասական/զրոյից ցածր ջերմաստիճան:

**succeed** [səkˈsi:dɪŋ] v հաջորդել, փոխարինել. ժառանգել. հետևել. Year ~ed year Տարիները հաջորդում էին միմյանց. ~ to ժառանգել. right to ~ ժառանգելու իրավունք. He ~ed his father on the throne Նա ժառանգեց հոր գահը. (հաջողության հասնել) ~ in business/in one's career թիզնետում/կարիերայում հաջողության հասնել. (արդյունքի հասնել, հաջողվել) The attempt ~ed Փորձը հաջողվեց. He ~ed in finishing his thesis Նա հաջողությամբ ավարտեց իր թեզը:

**succeeding** [səkˈsi:dɪŋ] a հաջորդ:

**success** [səkˈses] n հաջողություն, հաղթանակ. նվաճում. I wish you (every) ~ Հաջողություն եմ ցանկանում. ill ~ անհաջողություն. giddy ~ գլխապտույտ հաջողություն. be crowned with ~ հաջողությամբ պսակվել. score a great ~ մեծ հաջողության հասնել. He was a great ~ as Hamlet Նա մեծ հաջողության հասավ Համլետի դերում. The experiment was a ~ Փորձը հաջող անցավ. The book is a ~ Գիրքը մեծ հաջողություն ունի:

**successful** [səkˈsesfʊl] a հաջող, հաջողակ, բարեբախտ. a ~ attempt հաջող փորձ. He

was ~ in life Նա կյանքում հաջողակ եղավ/հաջողության հասավ. Business is ~ Գործերը հաջող են ընթանում. ~ bidder հաջողության հասած մասնակից (մրցույթի և այլնի):

**succession** [səkˈseɪʃn] n հաջորդականություն. անընդհատ շարք. հաջորդելը. ժառանգելու իրավունք. He took over the business in ~ to his father Նա ժառանգեց իր հոր գործը. after his ~ նրա գահ բարձրանալուց հետո. a ~ of accidents վթարների մի ամբողջ շարք. *իրավ*. իրավահաջորդություն. right of ~ հաջորդայնության իրավունք. order of ~ օրինական ժառանգում. vacant ~ բաց/չպահանջված ժառանգություն:

**successive** [səkˈsesɪv] a հաջորդ, հաջորդող, հետագա. (with) each ~ day յուրաքանչյուր հաջորդ օրը. He made three ~ attempts Նա իրար հետևից երեք փորձ կատարեց. at each ~ attempt յուրաքանչյուր հաջորդ փորձի ընթացքում:

**successor** [səkˈsesə] n ժառանգորդ (գահի). հաջորդող, փոխարինող. իրավահաջորդ:

**succinct** [səkˈsɪŋkt] a սեղմ, հակիրճ (ոճ):

**succulence** [ˈsʌkjʊləns] n հյութալիություն, հյութեղություն:

**succulent** [ˈsʌkjʊlənt] a հյութալի, հյութեղ. ~ meat/grass հյութեղ միս, հյութալի խոտ:

**succumb** [səˈkʌm] v պարտվել, զիջել, տեղի տալ. մեռնել. ~ to temptation գայթակղության ենթարկվել. ~ to illness հիվանդությունից մեռնել:

**such** [sʌtʃ] 1. a այսպիսի, այդպիսի, այնպիսի. ~ as (այնպիսին) ինչպիսին, ինչպես օրինակ. no ~ thing ոչ մի նման բան. S~ is life Այսպիսին է կյանքը. in ~ a way նման/այսպիսի/այնպիսի ձևով. ~ a pity ինչ ափսոս. ~ nonsense այդպիսի հիմարություն. ~ as it is ինչպիսին որ այն կա. 2. pron այսպիսինը, այդպիսինը, նմանը. all ~ բոլոր այդպիսիք. as ~ որպես այդպիսին:

**such-and-such** [ˈsʌtʃənsʌtʃ] a այսինչ, այդինչ, այնինչ. on ~ day last month անցյալ ամսվա այսինչ օրը:

**suchlike** [ˈsʌtʃlaɪk] pron դրա նման. wolves, foxes and ~ գայլերը, աղվեսները և դրա նմանները/այլն:

**suck** [sʌk] n ծծել, ներծծել. The child was ~ing his thumb Երեխան ծծում էր իր մատը ~ dry ամբողջ հյութը ծծել. He ~ed the orange



dry Եւ նարնջի ամբողջ հյութը ծծեց. ~ the pipe ծխամորճը դանդաղ ծխել. ~ up ներծծել, կլանել. յուրացնել, տոգորվել. ~ down ներս քաշել (ավազը, ճահիճը). ~ up to քծնել, շողոքորթել:

**sucker** ['sʌkə] n ծծկեր, կաթնակեր. *խսկց.* ձրիակեր, մակաբույծ. ~ to flattery քծնաքին տուրք տալ:

**suckle** ['sʌkl] v կրծքով կերակրել, կուրծք տալ:

**suckling** ['sʌkliŋ] n ծծկեր, ծծկեր երեխա:

**suction** ['sʌkʃn] n ծծում, ներծծում. *փխք.* միանալ-կապելը, ներկայում. ~ pump/valve ներծծող պոմպ, ներծծման կափույր:

**sudden** ['sʌdn] a հանկարծակի, անակնկալ. անսպասելի. a ~ decision/change անսպասելի որոշում/փոփոխություն. a ~ death հանկարծամահ. a ~ sharp pain անսպասելի սուր ցավ. This is so ~ Սա այնքան անսպասելի է. all of a/on a ~ հանկարծակի:

**suddenly** ['sʌdnli] adv հանկարծ, հանկարծակի, անակնկալ կերպով:

**suds** [sʌdz] n օճառաջուր, սապնաջուր:

**sue** [sju:] v դատական կարգով հետապնդել, դատական գործ հարուցել. դատի տալ. ~ smb for damages վնասահատուցման հարց հարուցել. (խնդրել. աղերսել) ~ for mercy կարեկցություն/գթություն աղերսել/խնդրել. ~ for divorce ամուսնալուծության դատական գործ հարուցել:

**suede** [sweɪd] n, a թավշակաշի, զամշ. թավշակաշվել, զամշել:

**suet** ['su:ɪt] n երիկամաճարպ, փորոտիքի ճարպ:

**suffer** ['sʌfə] v տառապել, տանջվել. կրել, տանել. ~ from sleeplessness անքնությունից տառապել. ~ from losses կորուստներ կրել. ~ great pain ահավոր ցավ զգալ. ~ severe defeat/losses ծանր պարտություն կրել, կորուստներ տալ. He doesn't ~ fools gladly տանել չի կարող հիմարներին. Your reputation will ~ Ձեր անունը/համբավը կտուժի. ~ from a limp կաղալ. ~ for smth *խսկց.* պատիժը կրել, պատժվել. արածի համար պատասխան տալ:

**sufferance** ['sʌfrəns] n հանդուրժողություն, համբերատարություն. He is here on ~ Նրան այստեղ պարզապես հանդուրժում են:

**sufferer** ['sʌfərə] n տառապյալ, մահատակ.

another ~ from insomnia անքնության ևս մեկ գոհ. fellow ~ դժբախտության/տառապանքի ընկեր:

**suffering** ['sʌfəriŋ] n տառապանք, տանջանք:

**suffice** [sə'faɪs] v բավականացնել, բավարարել. Ten dollars will ~ him Տասը դոլարը նրան կբավականացնի. His word will ~ Նրա խոսքը բավական կլինի. That will ~ բավական է. S~ it to say Բավական է ասելը:

**sufficiency** [sə'fɪʃnsi] n բավարար քանակություն. բավարար/բավանակաչափ լինելը:

**sufficient** [sə'fɪʃnt] n բավականաչափ. բավարար. հիմնավորված. ~ food բավականաչափ ուտելիք. ~ amount/number բավականաչափ քանակ. ~ reasons բավարար պատճառներ:

**suffix** ['sʌfɪks] n վերջածանց:

**suffocate** ['sʌfəkeɪt] v խեղդ(վ)ել շնչափակ/շնչակտուր լինել. I felt ~d in that atmosphere *փխք.* Այդ մթնոլորտում ես շնչափակ էի լինում:

**suffocating** ['sʌfəkeɪtɪŋ] a հեղձուցիչ, խեղդող. It's ~ here Օդն այստեղ հեղձուցիչ է:

**suffocation** [sʌfə'keɪʃn] n շնչափակություն, շնչադեղություն. խեղդելը, խեղդամահ անելը:

**suffrage** ['sʌfrɪdʒ] n ընտրական իրավունք, ծայնի իրավունք. ծայն, քվե. universal ~ ընդհանուր ընտրական իրավունք:

**sugar** ['ʃʊgə] n շաքար. cane ~ եղեգնաշաքար. beet (root) ~ ճակնդեղի շաքար. granulated ~ շաքարավազ. powder/castor ~ շաքարափոշի. cube/lump ~ կտոր շաքար. a lump of ~ մի կտոր շաքար. ~ basin/bowl շաքարաման. ~ beet շաքարի ճակնդեղ. ~ refinery շաքարի գործարան. ~ plum կլոր սառնաշաքար. ~ tongs շաքարի ունելիք. ~ loaf շաքարահաց:

**sugary** ['ʃʊgəri] a շաքարահամ, քաղցր. *փխք.* շողոքորթ, քաղցր-մեղր:

**suggest** [sə'dʒest] v առաջարկել, խորհուրդ տալ. ~ an idea/topic /work միտք տալ. թեմա/աշխատանք առաջարկել. (ենթադրել) It is ~ed that ...ենթադրվում է, որ... (ակնարկ) Does it ~ nothing to you? Դա ձեզ ոչինչ չի ասում. What does that sound ~ to you? What are you ~ing by that ? Ի՞նչ ես ուզում դրանով

ասել:

**suggestion** [sə'dʒestʃn] n առաջարկություն. առաջարկ. make a ~ առաջարկ անել. միտք տալ/ներշնչել. (ակնարկ) There was no ~ of corruption Կաշառքի ակնարկ անգամ չկար. the power of ~ *հոգեք.* ներշնչման ուժը:

**suggestive** [sə'dʒestiv] a մտքեր առաջացնող. միտք խթանող, մտահարույց. a ~ article հոդված, որ մտածել է տալիս. a ~ joke ակնարկ պարունակող կատակ:

**suicidal** [ˌsuːi'saidl] a ինքնակործան, ինքնասպանական. մահացու, կործանարար. feel ~ իրեն շատ վատ զգալ:

**suicide** [ˌsuːisaɪd] n ինքնասպանություն. commit a ~ ինքնասպանություն գործել. attempted ~ ինքնասպանության փորձ. political ~ քաղաքական ինքնասպանություն. the ~ rate ինքնասպանների թիվը/քանակը:

**suit** [suːt] n կոստյում. a summer ~ ամառային կոստյում. trouser ~ պիջակ և տաբատ. two/three piece ~ երկու/երեք կտորից բաղկացած կոստյում. out of ~s անջատ, բաժան. *իրավ.* դատական գործ, հայց. ~ at law օրենքով դատավճիռ. bring a ~ հայց ներկայացնել. criminal ~ քրեական գործ. *թղթիս.* համագույն խաղաթուղթ (մաստ) Long ~ ուժեղ խաղաթուղթ. short ~ թույլ խաղաթուղթ. follow ~ մեկի օրինակին հետևել, ընդօրինակել:

**suit** [suːt] v հարմարեցնել. հարմար լինել. He ~ed his style to the listeners Նա հարմարվեց ունկնդիրների ոճին. (հարմար գալ/լինել) This job/part doesn't ~ him Այս աշխատանքը/դերը նրան հարմար չէ. ~ the market շուկայի պայմանները բավարարել. They are well ~ed Նրանք իրար համապատասխանում են. The dress ~s her perfectly Շորը նրան շատ է սագում. S~ yourself Արեք այնպես, ինչպես ձեզ հարմար է. It doesn't ~ me to come this evening Ինձ հարմար չէ գալ այս երեկո. Will tomorrow ~ ? Վաղը հարմա՞ր է ձեզ:

**suitable** [ˌsuːtəbl] a հարմար, համապատասխան. ~ for հարմար. the most ~ person ամենահարմար մարդը. ~ for the occasion դեպքին հարմար/համապատասխան. The film is not ~ for children Այս ֆիլմը երեխաների համար չէ/երեխաներին հարմար չէ:

**suitably** [ˌsuːtəblɪ] adv համապատասխան

ձևով. ~ dressed համապատասխան ձևով հագնված:

**suit-case** [ˈsuːtkeɪs] n ճամպրուկ:

**suite** [swiːt] n հավաքակազմ, լրակազմ, կոմպլեկտ. (հյուր.) լյուքս համար. *երժշ.* սյուիտ. պալատական շքախումբ. ~ of furniture լրակազմ կահույք. ~ of rooms սենեկաշարք:

**suited** [ˈsuːtɪd] a հարմար, պիտանի.

**suitor** [ˈsuːtə] n երկրպագու, սիրահար. *իրավ.* հայցվոր, հայցատեր:

**sulk** [sʌlk] 1. n վատ/մռայլ տրամադրություն. 2. v նեղանալ, խռովել:

**sulky** [ˈsʌlki] a խոժոռ, մռայլ. վիրավորված, խռովված. look ~ խռովված/վիրավորված տեսք ունենալ:

**sullen** [ˈsʌlən] a խոժոռ, մռայլ. a ~ look/sky խոժոռ տեսք, մռայլ երկինք:

**sulphate** [ˈsʌlfet] n ծծմբաթթվի աղ, սուլֆատ:

**sulphur** [ˈsʌlfə] 1. n ծծումբ. 2. a ծծմբային. a ~ spring ծծմբի/ծծմբային հանքաղբյուր:

**sulphuric** [sʌlˈfjʊərɪk] a ~ acid ծծմբաթթու:

**sultana** [sʌlˈtɑːnə] n քիշմիշ:

**sultriness** [ˈsʌltrɪnəs] n տոթ, հեղձուցիչ օդ:

**sultry** [ˈsʌltri] a տոթ, հեղձուկ:

**sum** [sʌm] 1. n գումար. do ~s *մաթ.* թվաբանական գործողություններ կատարել. ~ total ընդհանուր գումար. fixed ~ հաստատագրված գումար. in a lump ~ միանվագ. good in ~s թվաբանությունից ուժեղ. 2. v գումարել:

**summarize** [ˈsʌməraɪz] v ամփոփել, եզրափակել. հանրագումարի բերել:

**summary** [ˈsʌməri] n համառոտ շարադրանք, ամփոփում. news ~ լուրերի ամփոփում. a ~ of proceedings ամփոփագիր:

**summary** [ˈsʌməri] a կարճ, համառոտ a ~ version կարճ/համառոտ շարադրանք. ~ proceedings պարզեցված/արագացված վարույթ/դատավարություն. ~ reference համառոտ նշում. (արագ) a ~ order to leave անմիջապես/արագ մեկնելու հրաման:

**summer** [ˈsʌmə] 1. n ամառ. in ~ ամռանը. high ~ ամռան եռուն շրջան. Indian ~ նախաաշուն. վաղ աշնան տաք, չոր օրերը. 2. a ամառային, ամառվա. ~ time ամառային ժամանակ. ~ camp/resort ամառային ճամբար/առողջարան. ~ house ամառանոց:

**summery** [ˈsʌməri] a ամառային:  
**summing up** [ˈsʌmiŋʌp] ամփոփում, եզրափակիչ խոսք. հանրագումարի բերելը:  
**summit** [ˈsʌmit] n գագաթ, կատար. *փխք.* գագաթնակետ. *քղք.* բարձր շրջաններ. բարձրագույն մակարդակ. a ~ conference գագաթնաժողով. ~ talks բարձր մակարդակի բանակցություններ:  
**summon** [ˈsʌməʊn] v կոչել, կանչել. հրավիրել, գումարել. ~ into the room սենյակ հրավիրել/կանչել. ~ the police ոստիկանություն հրավիրել/կանչել. He was ~ed to the director Նրան կանչեցին տնօրենի մոտ. *քղք.* ~ parliament խորհրդարանի նիստ գումարել/հրավիրել. ~ a witness *իրավ.* վկային հրավիրել/կանչել. ~ a jury երդվյալ ատենակալների խորհուրդ հրավիրել. ~ up one's courage սիրտ առնել, ուժերը հավաքել:  
**summons** [ˈsʌmənz] n կոչ, կանչ, հրավեր. *իրավ.* ծանուցագիր. serve a ~ on smb դատական ծանուցագիր հանձնելը:  
**sump** [sʌmp] n *ավտո.* ձիթհան, յուղահան:  
**sumptuary** [ˈsʌmptʃuəri] a ծախսերին վերաբերող, ծախսերը կանոնավորող/կարգադրող:  
**sumptuous** [ˈsʌmptʃuəs] a շքեղ, բանկարժեք. ճոխ, փարթամ. What a ~ meal ! Ի՞նչ հոյակապ/ճոխ ճաշկերույթ:  
**sum up** [ˈsʌmʌp] եզրափակել, ամփոփել, հանրագումարի բերել. ~ up what has been said ամփոփել ասածը. The judge ~med up the proceedings Դատավորն ամփոփեց դատաքննության արդյունքները:  
**sun** [sʌn] n արև, արեգակ. bright/southern/winter/dazzling ~ պայծառ/հարավային/ ծմեռային/շլացնող արև. a place in the ~ տեղ արևի տակ. everything under the ~ ամեն ինչ այս աշխարհում. right in the ~ ուղիղ արևի տակ. ~ hat/helmet արևի գլխարկ/սաղավարտ. ~ lamp կվարցի լամպ. ~ roof ավտոյի հետքացովի/հետզցովի թափկածածկ. against the ~ սլաքի ուղղության հակառակ. with the ~ ժամացույցի սլաքի ուղղությամբ. bask in the ~ արևի տակ տաքանալ. take the ~ արևավառ լինել. from ~ to ~ արևածագից մայրամուտ. His ~ is set Նրա աստղը մարել է, Նրա ժամանակն անցել է:  
**sun** [sʌn] v ~ oneself արևի տակ տաքանալ. արևի ազդեցությանը ենթարկել:

**sunbaked** [ˈsʌnbeɪkt] a արևից այրված, արևավառ ~ earth արևից խամձված հող:  
 sun-balkonied house արևից լուսավորված /արևահայաց պատշգամբով տուն:  
**sunbathe** [ˈsʌnbeɪθ] v արևավառ լինել:  
**sunbeam** [ˈsʌnbi:m] n արևի ճառագայթ:  
**sun blind** [ˈsʌnblaɪnd] n արևակալ (պատուհանների, պատշգամբների համար). տենտ:  
**sunburn** [ˈsʌnbɜ:n] n արևավառություն, արևի այրվածք:  
**sunburnt** [ˈsʌnbɜ:nt] a արևավառ, արևից թխացած. get ~ արևավառ լինել. ~ face արևավառ դեմք:  
**sundae** [ˈsʌndeɪ] n պլոմբիր (պաղպաղակ). peach ~ դեղձի պլոմբիր:  
**Sunday** [ˈsʌndeɪ] n կիրակի. ~ school կիրակնօրյա դպրոց. ~ concerts/editions կիրակնօրյա համերգներ/թերթեր. ~ best/clothes տոնական հագուստ/զգեստ:  
**sundew** [ˈsʌndju:] n ցողաբույս, ցողախոտ:  
**sundial** [ˈsʌndaɪəl] n արևի ժամացույց:  
**sundries** [ˈsʌndri:s] n այլևայլ/ամեն տեսակ բաներ (ժողովում). զանազանք:  
**sundry** [ˈsʌndri] a տարբեր, տեսակ-տեսակ. all and ~ բոլորը առանց բացառության:  
**sunflower** [ˈsʌnflaʊə] n արևածաղիկ. ~ oil/seeds արևածաղիկի ձեթ/սերմեր:  
**sunglasses** [ˈsʌn,glɑ:sɪz] n արևի ակնոցներ:  
**sunken** [ˈsʌŋkən] a սուզված, ջրասույզ. ~ cheeks փոս ընկած/նիհարած այտեր. ~ eyes խոր ընկած (աչքեր):  
**sun-hunter** [ˈsʌnhʌntə] n (*նաև* ~ seeker) արևահար լինելու սիրահար:  
**sunless** [ˈsʌnləs] a արևազուրկ. *փխք.* մռայլ:  
**sunlight** [ˈsʌnlaɪt] n արևի լույս:  
**sunny** [ˈsʌni] a արևոտ, պայծառ. a ~ day արևոտ օր. ~ smile պայծառ ժպիտ. ~ disposition կենսուրախ բնավորություն:  
**sunray** [ˈsʌn,rei] n արևի ճառագայթ/շող. ~ treatment արևաբուժում:  
**sunrise** [ˈsʌnraɪz] n արևածագ, արշալույս:  
**sunset** [ˈsʌnset] n արևամուտ, մայրամուտ. վերջալույս. *փխք.* վերջին/զառամյալ հասակ. ~ review վերջին վերանայում:  
**sunshade** [ˈsʌnʃeɪd] n հովանոց, ծածկ, տենտ:  
**sunshine** [ˈsʌnʃaɪn] n արևի լույս, պարզ, պայծառ եղանակ. *փխք.* ուրախություն, խնդություն. You're a real ray of ~ Դու իմ ուրա-

խությունն ես, արևի շող ես:  
**sunspot** [ˈsʌnspɒt] *n* *աստղագ.* արևի բիծ. պեպեն:  
**sunstroke** [ˈsʌnstrəʊk] *n* *բժշկ.* արևահարություն:  
**suntan** [ˈsʌntæn] *n* արևայրուկ, արևառություն. ~ lotion/oil լոսյոն, յուղ (արևահարության):  
**suntrap** [ˈsʌn,træp] *n* արևկեղ տեղ/ժամանակ. Cats search out ~s Կատունները սիրում են պառկել արևկեղ տեղում:  
**sun up** [ˈsʌnʌp] *n* արևածագ:  
**sup** [sʌp] **1.** *n* կում, ունայ. **2.** *v* գդալով ուտել. կում-կում խմել. *խսկց.* ընթրել:  
**super** [ˈsu:pə] *a* *խսկց.* հրաշալի, հոյակապ. բարձրակարգ. գեր- ~ human գերմարդկային:  
**superabundant** [ˌsu:pərəˈbʌndənt] *a* լիառատ:  
**superannuate** [ˌsu:pərˈænjueit] *v* ծերության պատճառով աշխատանքից ազատել/թոշակի ուղարկել:  
**superannuated** [ˌsu:pərˈænjueitid] *a* զանազան, շատ ծեր. հնացած, օգտագործությունից դուրս եկած. *a* ~ model հնացած մոդել:  
**superannuation** [ˌsu:pərænjʊˈeiʃn] *n* տարիքի պատճառով աշխատանքից ազատում/ թոշակի ուղարկում. ~ contribution թոշակային ավանդ/մեդդում. ~ fund թոշակային ֆոնդ:  
**superb** [suˈpə:b] *a* հոյակապ, հիանալի, սքանչելի:  
**supercargo** [ˌsu:pəˈkɑ:gəʊ] *n* *ծով.* առևտրական նավաբեռի պատասխանատու անձ:  
**supercilious** [ˌsu:pəˈsiliəs] *a* գոռոզ, մեծամիտ, ամբարտավան:  
**superficial** [ˌsu:pəˈfi:ʃiəl] *a* մակերեսային. դրսի, արտաքին. ~ knowledge *փիլսո.* ոչ խորը/մակերեսային գիտելիքներ. *a* ~ wound ոչ խորը/մակերեսային վերք. ~ resemblance կարծեցյալ/թվացյալ նմանություն:  
**super-film** [ˈsu:pəfilm] *n* գերընտիր ֆիլմ:  
**superfine** [ˈsu:pəfaɪn] *a* բարձր տեսակի, ամենալավ որակի, գերընտիր:  
**superfluity** [ˌsu:pəˈflu:əti] *n* առատություն, լիառատություն. շռայլություն. ~ of food and drink ուտելիքի և խմիչքի առատություն:  
**superfluous** [suˈpə:fluəs] *a* առատ, շռայլ.

ավելորդ, անտեղի. feel ~ ավելորդ զգալ. ~ remark անտեղի դիտողություն:  
**superhuman** [ˌsu:pəˈhju:mən] *n* գերմարդկային:  
**superimpose** [ˌsu:pərimˈpəʊz] *v* վրան դնել. նշանակել. նշագծել. ~ smth on smb մեկի վրա պարտավորություն դնել:  
**superintendence** [ˌsu:pərinˈtendəns] *n* վերահսկողություն:  
**superintendent** [ˌsu:pərinˈtendənt] *n* ղեկավար, կառավարիչ. վերահսկիչ, վերակացու:  
**superior** [suˈpiəriə] *n* ավագ, վերադաս. ~ body վերադաս մարմին. (գերազանց, լավագույն, ամենաբարձր որակի) *a* ~ brand of tea բարձրորակ թեյ. ~ quality բարձր որակ. be ~ in rank կոչումով ավելի բարձր լինել. *a* ~ woman արտասովոր կին. *a* ~ smile գոռոզ ժպիտ. (գերակշիռ) ~ forces գերակշիռ ուժեր. ավելի բարձր (վեր լինել) be ~ to pre-judice նախապաշարմունքից վեր լինել:  
**superiority** [suˈpiəriˈɔ:rəti] *n* ավագություն, ավագ լինելը (պաշտոնով, կոչումով և այլն) գերազանցություն, առավելություն, գերակշռություն. air ~ *ռզմ.* գերազանցություն օդում:  
**superlative** [suˈpə:ləti:v] **1.** *n* *քեր.* գերադրական աստիճան. **2.** *a* բարձրագույն, ամենաբարձր, գերազույն. *a* ~ performance հոյակապ կատարում:  
**superman** [ˈsu:pəmæn] *n* գերմարդ:  
**supermarket** [ˈsu:pə,ma:kit] *n* ինքնասպասարկման խանութ:  
**supernatural** [ˌsu:pəˈnætʃrəl] *a* գերբնական:  
**super power** [ˈsu:pəpaʊə] *n* հավասարը չունեցող ուժ. գերպետություն:  
**super profit** [ˌsu:pəˈprɒfɪt] *n* գերշահույթ:  
**superscribe** [ˈsu:pəskraɪb] *v* մակագրել, հասցեագրել:  
**superscript** [ˈsu:pə,skript] *n* *հմկրգ.* վերին ինդեքս. վերտողային գրանշան:  
**superscription** [ˌsu:pəˈskripʃn] *n* մակագրություն, հասցե (նամակի վրա):  
**supersede** [ˌsu:pəˈsi:d] *v* փոխարինել, դուրս մղել. The car has ~d the horse Ավտոմեքենան դուրս մղեց/փոխարինեց ձիուն. The model has been ~d Մոդելը փոխարինվեց:  
**supersonic** [ˌsu:pəˈsɒnik] *a* գերձայնային:

**superstition** [ˌsu:pə'stiʃn] n սնահավատություն, սնոտիապաշտություն:  
**superstitious** [ˌsu:pə'stiʃəs] a սնոտիապաշտ, սնահավատ:  
**superstructure** [ˌsu:pə'strʌktʃə] n վերնաշենք, վերնակառույց:  
**supertax** [ˌsu:pə'tæks] n լրացուցիչ եկամտահարկ:  
**supervene** [ˌsu:pə'vi:n] v ծագել, բխել. New conditions ~d երբ հանգամանքներ առաջացան:  
**supervise** [ˌsu:pə'vaɪz] v հսկել, վերահսկել, կառավարել, տնօրինել:  
**supervisor** [ˌsu:pə'vaɪzə] n *հմկրգ*. ղեկավարող ծրագիր, սուպերվիզոր. ~ call դիմում օպերացիոն համակարգին: ~ mode արտոնյալ/օպերացիոն համակարգի ռեժիմ:  
**supervision** [ˌsu:pə'vɪʒn] n հսկողություն, վերահսկողություն. ղեկավարություն, կառավարում. under the ~ of ղեկավարության, հսկողության տակ. The project needs ~ Օրագիրը վերահսկողության կարիք ունի. judicial ~ դատական վերահսկողություն:  
**supervisor** [ˌsu:pə'vaɪzə] n հսկիչ, վերահսկիչ. կառավարիչ, տնօրեն. *ամ*. դպրոցի տեսուչ. գիտական ղեկավար. քննողի ընթերակա/ասիստենտ:  
**supine** [ˌsu:'paɪn] a մեջքի վրա պառկած. *փխբ*. ծույլ, ալարկոտ, դանդաղկոտ. a ~ position պառկած վիճակ:  
**supper** [ˌsʌpə] n ընթրիք. have ~ ընթրել. at/over ~ ընթրիքի ընթացքում. the Last S~ երկրորդավոր ընթրիք:  
**supplant** [sə'plɑ:nt] v դուրս մղել. *փխբ*. պաշտոնը գրավել:  
**supple** [ˌsʌpl] a ճկուն, զիջող, հարմարվող:  
**supplement** [ˌsʌplɪmənt] n լրացում, հավելում, հավելված. colour ~ գունազարդ հավելված:  
**supplement** [ˌsʌplɪmənt] v լրացնել, ավելացնել. ~ one's knowledge գիտելիքները լրացնել. I do translations to ~ my income ես թարգմանություններ եմ անում օժանդակ եկամուտի համար:  
**supplementary** [ˌsʌplɪ'mentəri] a լրացուցիչ, հավելյալ. ~ benefits լրացուցիչ նպաստ. ~ evidence լրացուցիչ/հավելյալ ապացույց:  
**suppliant** [ˌsʌplɪənt] n խնդրատու, խնդրող, հայցող:

**supplier** [sə'plaɪə] n մատակարարող:  
**supply** [sə'plaɪ] n մատակարարում, հայթայթում. ~ of fuel վառելիքի մատակարարում. ~ and demand պահանջարկ և առաջարկ. an inexhaustible ~ անսպառ պաշար. ~ ies of foods մթերքի պաշարներ. Petrol is in short ~ Բենզինի պակաս կա/չի բավարարում. a ~ ship/train մատակարարող նավ/գնացք/որևէ հաղորդամիջոց. a ~ teacher ժամանակավոր փոխարինող դասատու:  
**supply** [sə'plaɪ] v մատակարարել. տրամադրել. հոգալ. լրացնել. ~ with milk/water/equipment/ all the necessary information կաթ/ջուր/ սարքավորում մատակարարել. անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել:  
**supply** [ˌsʌpli] adv ճկունությամբ, շողոքորթորեն, քծնանքով:  
**support** [sə'pɔ:t] n աջակցություն, օժանդակություն. օգնություն give ~ պաշտպանել, օժանդակություն ցույց տալ. (հենարան, նեցուկ) the family's ~ ընտանիքի նեցուկ. in ~ of ի պաշտպանություն, որպես աջակցություն. receive ~ from կառավարությունից /նյութական/օգնություն ստանալ. have no means of ~ վաստակ/եկամուտ չունենալ. ~ staff օժանդակ անձնակազմ. ~ troops *նզմ*. պաշտպանական ուժեր. ~ program *հմկրգ*. ծառայողական/օժանդակ ծրագիր:  
**support** [sə'pɔ:t] v օգնել, օժանդակել, աջակցել. պաշտպանել. պահել, ծախսերը հոգալ. ~ a candidate/application/motion թեկնածությունը/առաջարկությունը պաշտպանել. հայտարարությունը սատարել:  
**supporter** [sə'pɔ:tə] n կողմնակից, հետևորդ, պաշտպան. *մրգ*. մարզասեր:  
**supporting** [sə'pɔ:tɪŋ] a հենակետային, նեցուկային. կրող. a ~ wall հիմնապատ. ~ role *թատր*. երկրորդական դեր:  
**suppose** [sə'pəʊz] v ենթադրել, կարծել, հնարավոր համարել. I ~ he is right կարծում եմ, որ նա ճիշտ է. I never ~d him to be a doctor Երբեք չէի կարծի, որ նա բժիշկ է I ~ so Հավանաբար այդպես է. She is ~d to be clever Նրան խելացի են համարում. ~ that ենթադրենք. Supposing it rains? Իսկ եթե անձրև գա՞. S~ we go for a walk Չգնա՞նք զբոսանքի. (պետք է, որ) He is ~d to leave today Պետք է որ նա այսօր մեկնի. The key is ~d to

fit the lock Պետք է որ այս բանալին բացի կողպեքը/հարմար գա:

**supposed** [sə'pəuzd] a թվացող, կարծեցյալ, ենթադրյալ:

**supposedly** [sə'pəuzidli] adv ենթադրաբար, հավանաբար:

**supposition** [ˌsʌpə'ziʃn] n ենթադրություն. on the ~ that եթե, այն դեպքում եթե:

**suppress** [sə'pres] v ճնշել, ընկճել. զսպել, թաքցնել. ~ yawn/tears/emotions հորանջը/արցունքները/զգացմունքները զսպել. ~ revolt ապստամբությունը ճնշել. ~ a scandal սկանդալը/խայտառակությունը կոծկել/ընթացք չտալ. ~ facts/truth թաքցնել/լռության մատնել փաստերը/ ճշմարտությունը. ~ the book գիրքն արգելել:

**suppression** [sə'preʃn] n ճնշում, ընկճում. զսպում, արգելում. ~ of crime հանցագործության կանխումը:

**supremacy** [su'preməsi] n գերազանցություն, գերիշխանություն. naval/air ~ գերազանցություն ծովերում/օդում:

**supreme** [su'pri:m] a գերագույն, բարձրագույն, վերին. ~ power գերագույն իշխանություն. It's a ~ example of *խսկց*. Դա վառ օրինակ է:

**surcharge** ['sə:tʃɑ:dʒ] n լրացուցիչ բեռ, գերաժախս. լրացուցիչ/հավելյալ վճար. pay a ~ on the letter նամակի համար լրացուցիչ վճարել. put a ~ on alcohol հավելյալ վճար դնել ալկոհոլիկ խմիչքների վրա:

**sure** [ʃʊə:] a համոզված, հավատացած. վստահ. be ~ համոզված լինել. (հաստատուն, անսասան) stand ~ ամուր կանգնած լինել. ~ of oneself ինքնավստահ. (հավաստի, հաստատ) a ~ method/remedy հավաստի մեթոդ/միջոց. It's a ~ thing Դա հաստատ բան է. He's ~ to win նա հաստատ կհաղթի. make ~ համոզ(վ)ել. վստահեցնել. make ~ that... համոզվել որ. to be ~ համոզված լինելու համար. make ~ of seats տեղերն ապահովել:

**sure** [ʃʊə:] adv *խսկց*. իհարկե, անշուշտ, անկասկած. He is ~ wealthy/stupid նա իսկապես հարուստ է/իմար է. as ~ as այնպես հաստատ, ինչպես. as ~ as eggs is eggs հաստատ ինչպես երկու անգամ երկու չորս է. as ~ as fate ստույգ, անկասկած. ~ enough (դե) իհարկե:

**surely** ['ʃʊə:li] adv անշուշտ, վստահորեն, անկասկած. slowly but ~ դանդաղ, բայց ապահով/վստահորեն. stand ~ for երաշխավորել. We've ~ met somewhere Հանդիպած եմ, որ ինչ-որ տեղ հանդիպել ենք. S~ there is some mistake Անկասկած ինչ-որ սխալ կա. He's over 70, S~ not նա 70 անց է, Հի' կարող պատահել:

**surety** ['ʃʊə:rəti] n երաշխավոր, երաշխավորություն. personal ~ անձնական երաշխավորություն. stand a ~ for (մի բանի) համար երաշխավոր դառնալ:

**suretyship** ['ʃʊə:rətiʃip] n երաշխավորություն:

**surf** [sɜ:f] n մակընթացություն. ալիք:

**surface** ['sɜ:fis] n մակերես, մակերևույթ. արտաքին կողմը, արտաքինը. smooth/rough/hard ~ հարթ/անհարթ/ամուր, պինդ մակերես. ~ waters մակերեսային ջրեր. on the ~ առերես, արտաքուստ. under the ~ ներքուստ, էությանը. ~ noise մակերեսային աղմուկ. ~ tension մակերեսային լարում. ~ mail հասարակ/սովորական առաքում. ~ work աշխատանք մակերեսի վրա. ~to-air գետին - օդ/երկինք. ~ to-air weapons “գետին - երկինք” զենք. ~ man *երկթ*. ուղեծակիչ:

**surface** ['sɜ:fis] v մակերեսը հղկել/տաշել. ջրի երես դուրս գալ. ծածկել. ~ a road ճանապարհը ծածկել. The diver ~d Սուզորդը ջրի երես դուրս եկավ. He suddenly ~d after three months *փխթ*. Երեք ամիս անց նա հանկարծ հայտնվեց:

**surf board** ['sɜ:fbo:d] n սերֆինգի տախտակ:

**surfeit** ['sɜ:fɪt] n անչափավորություն. ~ of food and drink ուտելու և խմելու անչափավորություն. have a ~ of concerts *խսկց*. չափից ավելի շատ համերգներ հաճախել:

**surfing** ['sɜ:fɪŋ] n սերֆինգ/սըրֆինգ:

**surge** [sɜ:dʒ] 1. n մեծ ալիք, ալիքներ, ալեկոծություն. 2. v ալեկոծվել, խռնվել. դիզվել. The crowd ~d round the sculpture Ամբոխը խռնվեց արձանի շուրջը. ~ out դուրս թափվել/հոսել:

**surgeon** ['sɜ:dʒən] n վիրաբույժ, զինվորական բժիշկ:

**surgery** ['sɜ:dʒəri] n վիրաբույժություն, վիրաբույժի ընդունարան. open chest ~ բաց կրծքավանդակի վիրահատություն. ~ in

- progress վիրահատությունը ընթացքի մեջ է.  
~ hours ընդունելության ժամեր:
- surgical** [ˈsə:dʒɪkəl] a վիրաբուժական:
- surly** [ˈsɜ:li] a մռայլ, խոժոռ. կոպիտ, անսիրալիք:
- surmise** [səˈmaɪz] 1. n ենթադրություն, կռահում. 2. v ենթադրություն անել, ենթադրել. կասկածել:
- surmount** [səˈmaʊnt] v հաղթահարել. վերջավորել, ծածկել. ~ difficulties դժվարությունները հաղթահարել. The dome was ~ed by a cross խաչը պսակում էր գմբեթը:
- surmountable** [səˈmaʊntəbl] a հաղթահարելի:
- surname** [ˈsɜ:neɪm] n ազգանուն, մականուն:
- surpass** [səˈpɑ:s] v գերազանցել, առաջ անցնել/ընկնել. He ~ed himself Նա ինքն իրեն գերազանցեց:
- surplus** [ˈsɜ:plʌs] n ավելցուկ, հավելորդ, մնացորդ. ~ value հավելյալ արժեք. ~ profit հավելյալ շահույթ:
- surplus** [ˈsɜ:plʌs] a ավելորդ, ավելցուկային, հավելյալ. ~ copies հավելյալ օրինակներ. ~ to one's needs ավելին քան պետք է:
- surprise** [səˈpraɪz] n զարմանք, անսպասելիություն. by ~ անակնկալ կերպով. to my ~ ի զարմանս. give smb a ~ անակնկալ մատուցել. a complete ~ կատարյալ անսպասելիություն. take by ~ անակնկալի բերել. ~ attack հանկարծակի հարձակում. a ~ gift անակնկալ, սյուրպրիզ. a ~ visit անսպասելի այցելություն:
- surprise** [səˈpraɪz] v զարմացնել, շշմեցնել. ապշեցնել. He was ~d to hear Նա զարմացավ լսելով/իմանալով. I shouldn't be ~d ես չէի զարմանա. It is nothing to be ~d at Ոչ մի զարմանալի բան չկա. (անակնկալի բերել) We ~d the enemy Մենք թշնամուն հանկարծակի/անակնկալի բերեցինք. They ~d me at breakfast Ինձ նախաճաշելիս գտան:
- surprising** [səˈpraɪzɪŋ] a անսպասելի, զարմանալի, ապշեցուցիչ:
- surprisingly** [səˈpraɪzɪŋ] adv զարմանալիորեն. He looked ~ happy Նա զարմանալիորեն երջանիկ տեսք ուներ. ~ enough (բայց) բավական զարմանալիորեն:
- surrender** [səˈrendə] n ռզմ. հանձնում, հանձնվելը. կապիտուլյացիա. unconditional ~ անվերապահ կապիտուլյացիա. ~ at discretion հաղթողի զբասրտությանը հանձնվել. ~ of all firearms ամբողջ հրազենի հանձնում:
- surrender** [səˈrendə] v հանձնել, անձնատուր լինել. տեղի տալ. ~ the town to the enemy քաղաքը թշնամուն հանձնել. ~ one's rights իր իրավունքից հրաժարվել:
- surreptitious** [ˌsʌrəpˈtɪʃəs] a գաղտնի, ծածուկ, թաքուն:
- surrogate** [ˈsʌrəɡət] n փոխարինող, փոխանորդ. ~ mother փոխնալ/սուռոզատ մայր:
- surround** [səˈraʊnd] v շրջապատել. The students ~ed him Ուսանողները շրջապատեցին նրան. The garden is ~ed by poplars Այգու չորս կողմը բարդիներ են աճում. Այգին շրջապատված է բարդիներով. The affair is ~ed by mystery Այս գործը գաղտնիքով է պատված:
- surroundings** [səˈraʊndɪŋz] n շրջակայք, մերձակայք. շրջապատ, միջավայր. the ~ of London Լոնդոնի մերձակայքը. strange ~ անժանոթ շրջապատ. natural ~ բնական միջավայր:
- surtax** [ˈsɜ:tæks] n ավելադիր/լրացուցիչ հարկ:
- surveillance** [səˈveɪləns] n հսկողություն. under ~ հսկողության տակ:
- survey** [səˈveɪ] n դիտում, զննում. ուսումնասիրություն. ամփոփում, ակնարկ. carry out a ~ of public opinion հասարակական կարծիքի հարցում կատարել. general ~ of the situation իրավիճակի ընդհանուր ամփոփում/տեսություն:
- survey** [səˈveɪ] v դիտել, զննել, ստուգել. ~ the landscape տեղանքը զննել. ~ the island կղզու տեղագրական գծահանում կատարել:
- surveying** [səˈveɪɪŋ] n նկարահանման աշխատանքներ:
- surveyor** [səˈveɪə] n տեսուչ, վերահսկիչ. տեղագիր, տեղանքագիր. հողաչափ:
- survival** [səˈvaɪvəl] n վերապրելը, կենդանի մնալը. վերապրուկ. a ~ of the past անցյալի վերապրուկ. the ~ of the fittest բնական ընտրություն. ամենահարմարվածի վերապրումը:
- survive** [səˈvaɪv] v կենդանի/ողջ մնալ, վերապրել. Two people ~d the crash Վթարից

փրկվեցին երկու հոգի. This custom still ~s Այս սովորույթը դեռևս պահպանվում է/գոյություն ունի. Don't worry, he'll ~ Մի անհանգստանա, նա դուրս կարժնի/կփրկվի:

**survivor** [sə'vaivə] n ողջ մնացած/ազատված/փրկված անձ. There were no ~s Ոչ ոք չփրկվեց:

**susceptibility** [sə,septə'biləti] n դյուրագագցություն, դյուրընկալություն, գերզգայուն բնավորություն:

**susceptible** [sə'septəblɪ] a տպավորվող, դյուրագագց. շուտ վիրավորվող. սիրահարկոտ. ~ to colds/flattery/influence of others հիվանդության/շողոքորթության նկատմամբ հակում ունեցող. հեշտությամբ ուրիշի ազդեցության տակ ընկնող:

**suspect** ['sʌspekt] n կասկածյալ. կասկած հարուցող. ~ identification *հրավ.* կասկածյալի ինքնությունը պարզելը:

**suspect** ['sʌspekt] a կասկածելի. His evidence is ~ Նրա վկայությունը կասկածելի է:

**suspect** [sə'spekt] v կասկածել, տարակուսել, երկմտել. ~ of murder սպանության մեջ կասկածել. ~ the truth of his words նրա բառերը կասկածի տակ առնել. (կարծել, տարակուսել) I ~ she knows more կարծում եմ, որ նա ավելի գիտի. I ~ed as much ես այդպես էլ կարծում էի:

**suspend** [sə'spend] v կախել, կախ տալ. The lamp was ~ed from the ceiling (ընդհատել, դադարեցնել) ժամանակավոր. Payment has been ~ed Վճարումները դադարեցվել են. The rule has been ~ed *Կանոնը/ժամանակավորապես կասեցվեց.* ~ from job/college աշխատանքից/քոլեջից ժամանակավորապես հեռացվել:

**suspended** [sə'spendid] a կախ տված, կախովի. հետաձգված, ժամանակավորապես դադարեցված. a ~ sentence *հրավ.* պայմանական դատավճիռ. ~ state *հմկրգ.* սպասման/ժամանակավոր դադարի վիճակ:

**suspenders** [sə'spendəs] n գուլպայակապ. շալվարակալ, տաբատակալ. ~ belt գոտի:

**suspense** [sə'spens] n անորոշություն, անհայտություն. սպասողական վիճակ. in ~ անհայտության մեջ. The ~ is killing me Անորոշությունը սպանիչ է:

**suspension** [sə'spenʃn] n դադարեցում, ընդհատում. *մտտ.* վճարումների դադարեցում.

~ bridge կախովի կամուրջ. ~ of a sentence *հրավ.* դատավճռի ի կատար ածումի հետաձգելը:

**suspicion** [sə'spiʃn] n կասկած, կասկածանք. arouse/strengthen/remove ~ կասկած առաջացնել/ուժեղացնել/ցրել. be under/above ~ կասկածի տակ/կասկածից վեր լինել. mere ~ անհիմն կասկած. faintest ~ of a smile *փխբ.* հազիվ նկատելի ժպիտ. a ~ of cinnamon մի պտղունց դարչին:

**suspicious** [sə'spiʃəs] a կասկածելի, կասկածոտ, կասկածամիտ. a ~ nature կասկածելի մարդ/անձնավորություն. become ~ սկսել կասկածել. I am ~ of him ես նրան կասկածում եմ. look ~ կասկածելի տեսք ունենալ:

**sustain** [sə'steɪn] n պահել, նեցուկ/հենարան լինել. ~ life կյանքը պահպանել. (շարունակել) ~ a conversation զրույցը շարունակել. ~ the pretence շարունակել ձևացնել. The court ~ed his pretence *հրավ.* Դատարանը հաստատեց նրա պահանջը. ~ a note *երժշ.* նոտան ձգել. (տանել, կրել, ենթարկվել) They ~ed terrible injuries/losses Նրանք սարսափելի վնասանածքներ ստացան. ծանր կորուստներ տվեցին:

**sustainable** [sə'steɪnəblɪ] a տևական, կայուն, կենսունակ. երկարատև, անընդհատ:

**sustained** [sə'steɪnd] a երկարատև, անընդհատ:

**sustaining** [sə'steɪnɪŋ] a սննդարար, սնուցիչ:

**sustenance** ['sʌstənəns] n կենսամիջոց, սնունդ. have no means of ~ ապրուստի միջոց չունենալ:

**suture** ['su:tʃə] n կար. *բժշկ.* կար դնելը. վերքը կարելու թել:

**swab** [swɒb] 1. n շվաբր. *բժշկ.* վիրախճուծ. տամպոն. 2. v ~ շվաբրել. մաքրել, լվանալ. ~ a floor/the decks հատակը/տախտակամածը լվանալ:

**swaddle** ['swɒdl] v բարուրել, վերմակով փաթաթել:

**swag** [swæg] n կողոպուտ, թալան, ավար:

**swagger** ['swæɡə] n ինքնագոհ տեսքով քայլել. ~ round the room ինքնագոհ տեսքով սենյակում քայլել. (պարծենալ, հոխորտալ) ~ about smth պարծենալ ինչ-որ բանով:

**swallow I** ['swɒləʊ] n ծիծեռնակ. ~ dive ծիծեռնակացատկ:



**swallow II** ['swɒləʊ] *n* կում, ումպ. at a ~ մի կումով:

**swallow** ['swɒləʊ] *v* կուլ տալ. ~ the beer գարեջուրը կուլ տալ. The girl ~ed the bait *փխք*. Աղջիկը կուլ տվեց խայծը. (անպատասխան թողնել) He ~ed the insult Նա կուլ տվեց վիրավորանքը. (զսպել) ~ one's pride հպարտությունը զսպել. hard to ~ *խսկց.*, *փխք*. դժվարամարս, դժվար մարսելի:

**swamp** [swɒmp] *n* ճահիճ, ճահճուտ:

**swamp** [swɒmp] *v* ջրով ծածկել, ողողել. A huge wave ~ed the boat Յսկայական ալիքը ծածկեց նավակը. The town was ~ed by tourists Ջրոսաշրջիկները ողողեցին քաղաքը. ~ with requests հարցերի տարափ տեղալ. be ~ed with work աշխատանքի մեջ խրված լինել:

**swampy** ['swɒmpi] *a* ճահճոտ, ճահճաշատ:

**swan** [swɒn] *n* կարապ. black ~ սև կարապ. *փխք*. անսովոր երևույթ. the S~ of Avon *փխք*. Շեքսպիրը. ~ song *փխք*. կարապի երգ:

**swank** [swæŋk] **1.** *n* պարծենկոտություն, սնապարծություն. պարծենկոտ, սնապարծ (անձ). **2.** *v* ~ about smth պարծենալ, գլուխը գովել. իրեն երևակայել:

**swanky** ['swæŋki] *a* շքեղ, մոդայիկ, նորածն. պարծենկոտ. He is very ~ Նա շատ պարծենկոտ/ինքնահավան մարդ է. wear ~ clothes շքեղ/նորածն հագնվել:

**sward** [swɔ:d] *n* սիզամարգ, մարգագետին. ճիմահող:

**swarm** [swɔ:m] *n* (մրջյունների) խումբ. մեղվապարս. Tourists came in ~ *փխք*. Ջրոսաշրջիկները գալիս էին խմբերով/խառնամբոխված:

**swarm I** [swɔ:m] *v* խոնավել, խմբվել. գեռալ, վխտալ. (մեղու) պարս կազմել. The crowd ~ed round the car Ամբոխը խոնավել էր մեքենայի շուրջը. His house is ~ing with children Տունը լեփ-լեցուն է երեխաներով:

**swarm II** [swɔ:m] *v* (նաև ~ up) բարձրանալ, մագլցել:

**swarthy** ['swɔ:ði] *a* թուխ, թխագույն, թխամորթ:

**swash** [swɒʃ] *n* ճողփյուն, ծփյուն. ուժեղ հոսանք. *v* ճղփալ, ծփալ:

**swashbuckler** ['swɒʃbʌklə] *n* ավազակ, պռոտախոս:

**swathe** [sweɪð] *n* կապ, փաթաթան, վիրակապ:

**swathe** [sweɪð] *v* վիրակապել, փաթաթել. ~d in blankets/bandages/furs վերնակների/մորթիների մեջ փաթաթված:

**sway** [sweɪ] *v* ճոճ(վ)ել, տարածվել. ազդեցություն ունենալ. He was ~ed by my argument Իմ փաստարկները ազդեցին նրա որոշման վրա. He is easily ~ed Նրա վրա շատ հեշտ է ազդել:

**swear** [sweə] *v* երդվել, երդում տալ. ~ an oath երդվել, երդում տալ. I could have sworn Պատրաստ եմ երդվել. ~ vengeance երդվել վրեժ լուծել. ~ smn to secrecy ստիպել մեկին երդվել գաղտնիքը պահել. He swore to the truth of his words Նա երդվեց, որ իր խոսքերը ճշմարիտ են. ~ an affidavit *իրավ*. երդմամբ գրավոր վկայություն տալ. ~ in a witness *իրավ*. վկային երդվեցնել/երդվել տալ. (հայհոյել) Don't ~ at me Մի հայհոյեք ինձ. ~ by կուրորեն հավատալ:

**swearword** ['sweəwɔ:d] *n* հայհոյական բառեր:

**sweat** [swet] *n* քրտինք. in a ~ քրտնած. all of a ~ քրտինքի մեջ կորած drip with ~ քրտինք ծորալ. by the ~ of one's brow ճակատի քրտինքով. It was an awful ~ Իրա համար պետք էր մի լավ քրտնել/շատ ջանք թափել. ~ shirt մարզական սվիտեր. ~ stained քրտնաթաթախ, քրտնքոտ (հագուստ), քրտինքով տոգորված:

**sweat** [swet] *v* քրտնել, քրտնեցնել. ջանք թափել, հոգնեցնել. ~ out a cold/fever մի լավ քրտնել. I ~ed my guts out Ահավոր շատ չարչարվեցի:

**sweater** ['swetə] *n* սվիտեր:

**sweating-system** [ˌswetɪŋˈsɪstəm] *n* աշխատանքի քրտնաքամ եղանակ/շահագործում:

**sweaty** ['sweti] *a* քրտնաթաթախ. քրտնքոտ. քրտնեցնող. ծանր:

**sweep** [swi:p] *n* թափ, ուժ. with one ~ մի թափով/շարժումով. with a ~ of the arm թևի շարժումով. the great ~ of modern research ժամանակակից հետազոտությունների մեծ թափը. (կորագիծ, աղեղ, գալար) the ~ of the coast line ափագծի ոլորանը/կորագիծը. The beam has a ~ of 180 deg. ճառագայթն ունի 180 աստիճանի տեսածիր/ընդգրկում.

within the ~ of the eye տեսանելիության սահմաններում. (ավլում, մաքրում) give a ~ ավլել, մաքրել. make a clean ~ of մեկից/մի բանից ազատվել, գլուխն ազատել. a ~ (մակ chimney ~) ծխնելույզ մաքրող:

**sweep** [swi:p] v ավլել, սրբել, մաքրել. ~ the floor հատակը ավլել. ~ out the room սենյակը ավլել. ~ a chimney ծխնելույզը մաքրել. ~ the path clear of snow ճանապարհը ծյունից մաքրել. ~ a channel of mines նեղուցը ականներից ազատել. (քշել, սրբել տանել) A wave swept him overboard Ալիքը քշեց-տարավ նրան (տախտակամածից). He was swept off his feet by the wind Քամին նրան ցած գցեց. *փխբ. օգտ.* ~ away մերժել, հերքել, դեն նետել. He swept away all my objections Նա մերժեց իմ բոլոր առարկությունները. ~ smth under the carpet ծայրերը թաքցնել. ~ the district for the runaway փախստականին փնտրել թաղամասում. The epidemic swept through the country երկրով մեկ համաճարակի ալիք անցավ. (վեհ տեսքով քայլել/անցնել). She swept out of the room Նա վեհորեն դուրս սահեց սենյակից. ~ past կողքով արագ անցնել/սլանալ:

**sweeper** [swi:pə] n հավաքարար, հավաքող, մաքրող. road ~ ճանապարհ մաքրող մեքենա:

**sweeping** [swi:piŋ] n ավլում, մաքրում, սրբում. ~s աղբ, ավլած/հավաքած աղբը:

**sweeping** [swi:piŋ] a լայն ընդգրկում ունեցող. վճռական, արմատական. ~ gesture լայն ժեստ. ~ generalization լայնամասշտաբ ընդհանրացումներ. ~ accusations հախուռն մեղադրանքներ. a ~ statement անհիմն պնդում:

**sweep-net** [swi:pnet] n ուռկան, մեծ ցանց:

**sweepstake(s)** [swi:psteik] n ձիարշավագրագ:

**sweet** [swi:t] n քաղցրեղեն, աղանդեր. դեսերտ. ~s քաղցրավենիք, կոնֆետ (մակ բուրմունք). (սիրելի) my ~ սիրելիս, իմ ուրախություն:

**sweet** [swi:t] a քաղցր, անուշ. It isn't ~ enough Քաղցրը պակաս է. ~ tooth քաղցրեղեն սիրող, քաղցրակեր. (թարմ, չթթված) ~ milk թարմ կաթ. ~ water անուշահամ/քաղցրահամ ջուր. ~ dreams քաղցր երազներ. (բուրումնալից) keep the room ~ սենյակը

օդափոխել. The air is ~ with the scent of flowers Ծաղիկների հոտից օդը բուրումնալից է. ~ voice նուրբ/հաճելի ձայն. ~ smile անուշիկ ժպիտ. ~ words գորովալից բառեր. ~ corn քաղցր եգիպտացորեն. What a ~ child ! Ի՞նչ անուշիկ երեխա է. (սիրալիր, հաճելի) That's ~ of you Դա ձեր կողմից շատ սիրալիր է. a ~ person հաճելի անձնավորություն. ~ to the ear ականջը շոյող, ականջի համար հաճելի. ~ one անուշիկս, քաղցրիկս. at one's own ~ will ինչպես կամենա, ինչպես քեֆն ուզի. be ~ on smb *խսկց.* մեկին սիրահարված լինել:

**sweet-brier** [swi:tbraiə] n մասրենի, վայրի վարդ:

**sweeten** [swi:tn] v քաղցրացնել. ~ the pill *փխբ.* հաբը քաղցրացնել, տհաճ բանը հաճելի դարձնել. ~ the room սենյակը օդափոխել:

**sweetheart** [swi:tha:t] n սիրելի, սիրեցյալ:

**sweetie** [swi:ti] n *խսկց.* կոնֆետ. She 's a ~ *փխբ.* Նա լավիկն/քաղցրիկ/անուշիկ է:

**sweetish** [swi:tiʃ] a քաղցրավուն:

**sweetmeat** [swi:tmi:t] n կոնֆետ:

**sweetness** [swi:tnəs] n քաղցրություն, հաճելիություն:

**sweet pea** [swi:t'pi:] n հոտավետ սիսեռ:

**sweet-shop** [swi:tʃɒp] n հրուշակարան:

**sweet-william** [swi:t'wiljəm] n *բսբ.* պարսկական մեխակ:

**swell** [swel] 1. n բարձրություն, բարձրավայր. *բժշկ.* ուռուցք, այտուց. *երժշ.* հնչյունի ուժեղացում. the ~ of the ground բլուր, բլրակ. 2. a *խսկց.* շքեղ, հոյակապ. պճնամոլ. Mike is a ~ guy Մայքը հոյակապ տղա է. ~ society բարձր հասարակություն. *ծով.* (ալեկոծություն) There is a big ~ today Ալեկոծությունն այսօր ուժեղ է. ground ~ մեռյալ/անհողմ ծփանք:

**swell** [swel] v վարարել. The rains have swollen the river Անձրևներից գետը վարարել է. (ուռչել, փքվել) Wood ~s in the water Փայտը ուռչում է ջրում Her eyes were swollen from the crying Լացից աչքերն ուռել էին. Her legs ~ed/up *բժշկ.* Ոտքերն այտուցվել էին. ուժեղանալ (հնչյունը) The sound ~ed Ձայնը/Աղմուկը ուժեղացավ. ~ with pride հպարտությամբ լցվել/փքվել:

**swelling** [swelɪŋ] n *բժշկ.* ուռուցք, այտուց. ուռուցիկություն, կորնթարդություն:

**swelter** [ˈsweltə] n տոթ, հեղձուկ.

**swelter** [ˈsweltə] v տոթից/շոգից թուլանալ.

I'm ~ing *խսկց*. Շոգից մեռնում եմ:

**sweltering** [ˈsweltəriŋ] a տոթ, հեղձուցիչ, շատ շոգ:

**swerve** [swə:v] 1. n դարձ, շեղում. մի կողմ թեքվելը 2. v մի կողմ թեքվել, շեղվել. The car ~d մեքենան մի կողմ թեքվեց. The ball ~d գնդակը շեղվեց. The boxer ~d to avoid the blow Յարվածից խուսափելու համար բռնցքամարտիկը թեքվեց:

**swift** [swift] n *կենդ.* ջրածիժառ:

**swift** [swift] a արագ, արագաշարժ, սրընթաց. ~ to react արագ/անմիջապես արձագանքել. ~ to anger շուտ բորբոքվող, տաքարյուն, զայրացկոտ. ~ anger շուտ անցնող զայրույթ. ~ glance արագ հայացք. ~ stream արագընթաց հոսանք. Be ~ to hear, slow to speak Շատ [սիր, քիչ] խոսիր:

**swift-handed** [ˌswiftˈhændɪd] a ճարպիկ, վարժ:

**swiftness** [ˈswɪftnəs] n արագություն, սրընթացություն:

**swig** [swɪg] n կում, ունայ (ոգելիչ խմիչքի). take a ~ մի կում անել. take a ~ at the bottle շշից խմել:

**swill** [swɪl] 1. n կեղտաջուր, վլացուք. ուտելիք (խոզերի համար) 2. v (*նաև ~ out*) ողողել, պարզաջրել, թեթև վանալ:

**swim** [swɪm] n [լող, լողանալը. go for a ~ գնալ լողալու/լող տալու. have/take a ~ լողալ, լող տալ. It is a long ~ Շատ երկար պետք է լողալ. be in the ~ *փխբ.* իրադարձությունների կենտրոնում լինել. գործերի ընթացքին տեղյակ/իրազեկ լինել:

**swim** [swɪm] v լողալ, լող տալ. He can't ~ a stroke Բոլորովին չի կարող լողալ. sink or ~ ինչ ուզում է լինի. ~ the river գետը լողալով անցնել. ~ under water ջրի տակ լողալ. ~ away (լողալով) հեռանալ, մեկնել. Everything swam before his eyes Ամեն ինչ պտտվեց նրա աչքերի առաջ/զխապտույտ զգաց. (լցված/ծածկված լինել) The meat ~s in the gravy Մսի վրա սոուս էր լցված. ~ in luxury շքեղության/ճոխության մեջ լողալ. ~ming eyes արցունքով լցված աչքեր:

**swimmer** [ˈswɪmə] n լողորդ:

**swimming** [ˈswɪmɪŋ] n [լող. ~ baths/pool [ո-

ղավազան. ~ costume լողազգեստ. ~ trunks լողավարտիք:

**swindle** [ˈswɪndl] 1. n խաբեբայություն, խաբեություն, դրամաշորթություն. 2. v խաբել, շորթել, խաբեությամբ դուրս կորզել:

**swindler** [ˈswɪndlə] n խաբեբա, խարդախ, դրամաշորթ:

**swine** [swaɪn] n խոզ, խոզեր. *փխբ.*, *հայհ.* խոզ/փնթի/կեղտոտ մարդ. անամոթ/լկտի մարդ:

**swineherd** [ˈswaɪnhɜ:d] n խոզարած:

**swing** [swɪŋ] n օրորում, տատանում, ճոճում. ճոճ, ճլորթի. *մրզ.*, *բռնցք.* կողային հարված հեռվից. a ~ to the right տատանում դեպի աջ. (թափ) in full ~ ամբողջ թափով. a ~ in public opinion *փխբ.* հասարակական կարծիքի կտրուկ փոփոխություն. ~ bridge բացովի կամուրջ. ~ door զսպանակավոր դուռ. (ռիթմ) the ~ of the work աշխատանքի ռիթմ. The party is in a full ~ Երեկոյի թեժ պահին է:

**swing** [swɪŋ] v ճոճ(վ)ել, օրոր(վ)ել. թափահարել. ~ a hammock ցանցածոճը օրորել. ~ one's arms/legs ձեռքերը/ոտքերը թափահարել. ~ the car round մեքենան կտրուկ շրջել. The speech swung he results ճառը կտրուկ ազդեց (փոխեց) արդյունքի վրա. He managed to ~ the deal *խսկց.* Նրան հաջողվեց այդ գործը գլուխ բերել. The lamp was ~ing in the wind Քամուց լապտերը ճոճվում էր. A lamp was ~ing from the ceiling Առաստաղից լամպ էր կախված. The door swung open/shut Դուռը լայն բացվեց/փակվեց. He'll ~ for that *փխբ.* *խսկց.* Նա դրա համար պատասխան կտա/կստանա. (ուղղությունը փոխել) ~ round sharply կտրուկ շրջվել. The road ~s south ճանապարհը թեքվում է հարավ. ~ round կտրուկ հետ դառնալ. ~ open լայն բացել. ~ at the ball with the racket գնդակին ցանցաթիով (ռակետ) խփել. No room to ~ a cat in *փխբ.* Ասեղ զգելու տեղ չկա:

**swinging** [ˈswɪŋɪŋ] a ~ music ռիթմիկ երաժշտություն. a ~ rhythm կենդանի ռիթմ:

**swinish** [ˈswaɪnɪʃ] a խոզի, խոզային. կեղտոտ, խոզավարի:

**swipe** [swaɪp] v *խսկց.*, *կտկ.* թռցնել. ~ the ball over the net գնդակը ցանցի վրայով անցկացնել:

**swipes** [swaɪps] n վատ/պղտոր/փչացած զարեջուր:

**swirl** [swə:l] **n** շրջապտույտ, հորձանուտ. հողմապտույտ. ջրափոս, ձագարափոս (ջրի վրա):

**swirl** [swə:l] **v** պտտվել. ջրապտույտ/հողմապտույտ առաջացնել. in the ~ing snow ձնե հողմապտույտում. ~ing skirts ծփացող փեշեր:

**swish** [swiʃ] **1.** **n** շյուճ, սուլոց. շրշյուն, խշշոց: **2.** *a* *խսկց.* շքեղ, հոյակապ:

**Swiss** [swis] **n** շվեյցարացի: *a* *S*~ շվեյցարական. ~ roll մուրաբայով ռուլետ:

**switch** [switʃ] **n** էլ. անջատիչ, փոխարկիչ. *երկրչ.* ուղեփոխ սլաք. կեղծ հյուս, կեղծամ. mains ~ հիմնական/գլխավոր անջատիչ. ~ board բաշխատախտակ. ~ board operator բաշխատախտակի օպերատոր. The light ~ is on/off Լույսը միացված/անջատված է. (փոխարկում, անցում) *a* ~ of opinion/plans կարծիքի/պլանների, ծրագրերի փոփոխություն. the ~ to the metric system անցում մետրական համակարգի:

**switch** [switʃ] **v** փոխարկել, հոսանքափոխել. ~ to the automatic pilot “ավտոմատ օդաչու” սարքը միացնել. ~ the points *երկրչ.* սլաքը/գիծը փոխել. (փոխել) ~ the room/plans սենյակը/ծրագրերը փոխել. ~ the conversation to another topic խոսակցության նյութը/թեման փոխել. ~ on/off հոսանքը/լույսը միացնել/անջատել. ~ the lecture to another hour դասախոսության ժամը փոխել. The oven ~es off automatically Վառարանն անջատվում է ավտոմատ կերպով. ~ to a new model նոր մոդելի անցնել. ~ (over) to gas heating գազի ջեռուցման անցնել:

**switch back** [ˈswitʃbæk] **n** ամերիկյան (ատրակցիոն) բլուրներ:

**switch-man** [ˈswitʃmən] **n** սլաքավար:

**switch-plug** [ˈswitʃplʌg] **n** խրոցակ (շտեպսետ):

**swivel chair** [ˈswivlʃeə] **n** պտուտակավոր աթոռ:

**swizz** [swiz] **n** *խսկց.* խաբեություն:

**swollen** [ˈswɒləʊn] **a** ուռած, փքված. այտուցված. *a* ~ leg/face/stomach այտուցված ոտք, ուռած դեմք. փքված ստամոքս. eyes ~ with crying լացից ուռած աչքեր:

**swoon** [swu:n] **n** նվաղում, ուշագնացություն:

**swoon** [swu:n] **v** գիտակցությունը կորցնել,

ուշաթափվել. նվաղել. She ~s when she even hears her mother's voice Գլուխը կորցնում է նույնիսկ միայն մոր ձայնը լսելիս:

**SWOOP** [swu:p] **v** սլանալ, ցած նետվել, հարձակվել. The eagle ~ed (down) on the bird Արծիվը ցած նետվեց և ճանկեց թռչնին:

**SWOP** [swɒp] **n** փոխանակում, ապրանքափոխանակում. *a* fair ~ ազնիվ փոխանակություն. These stamps are ~ Այս նամականիշները փոխանակելու համար են. do a ~ փոխանակություն կատարել. ~ device *հմկրգ.* տեղերով փոխել. ~ in բեռնավորել քաշելով. ~ out բեռնաթափել քաշելով:

**SWOP** [swɒp] **v** փոխանակել, փոխել. ~ places/stamps տեղերը/նամականիշները փոխանակել. Let's ~ Արի փոխանակենք:

**sword** [sɔ:d] **n** սուր, թուր, սուսեր. cavalry ~ հեծելազորի սուր/թուր. dwelling ~ ճկասուսեր, մարտասուսեր. draw/unsheathe the ~ սուրը մերկացնել. *փխք.* պատերազմ սկսել. sheathe the ~ սուրը պատյան դնել. *փխք.* պատերազմը վերջացնել. measure/cross ~s with սրերը խաչածնել. մեծամարտել. put to the ~ սրի քաշել/կտորել/ոչնչացնել. ~ dance սուսերով պար. ~ belt սուսերակալ, թրակալ. ~ hilt երախակալ, կոթ (թրի, սրի և այլն):

**sword-fish** [ˈsɔ:dfɪʃ] **n** *կենդ.* թրածուկ:

**sworn** [swɔ:n] **a** երդվյալ. երդված, երդում տված. *a* ~ witness/statement երդում տված վկա. երդման տակ կատարված հայտարարություն. ~ officer/official երդում տված պաշտոնյա/աստիճանավոր. *a* ~ enemy երդվյալ թշնամի:

**swot** [swɒt] **1.** *n* *խսկց.* (առանց հասկանալու) անգիր անող, սերտող. **2.** *v* անգիր անել. ~ up maths մաթեմատիկան անգիր անել:

**sycamore** [ˈsɪkəmə:] **n** (*նաև* ~ maple) սպիտակ թխկի:

**sycophant** [ˈsɪkəfənt] **n** ստորաքարշ/քծնող մարդ:

**syllabic** [siˈlæbɪk] **a** վանկային, վանկարար:

**syllable** [ˈsɪləbəl] **n** վանկ. open/closed բաց/փակ վանկ. not a ~ ոչ մի ձայն/ծպտուն:

**syllabus** [ˈsɪləbəs] **n** ուսումնական ծրագիր. հակիրճ/ամփոփ շարադրանք. the exam ~ քննության ծրագիր:

**symbol** [ˈsɪmbəl] **n** խորհրդանշան, սիմվոլ. ~

table *հմկրգ.* իդենտիֆիկատորների աղյուսակ:

**symbolic(al)** [sim'bo:lik(l)] a խորհրդանշական, սիմվոլիկ. ~ address *հմկրգ.* նշանային հասցե. ~ debugger *հմկրգ.* նշանային կարգաբերիչ:

**symmetrical** [si'metrikəl] a համաչափ, զուգաչափ, սիմետրիկ:

**symmetry** ['simətri] n համաչափություն, զուգաչափություն, սիմետրիա:

**sympathetic** [ˌsɪmpə'tetɪk] a կարեկից, կարեկցող. ցավակցող. բարեհաճ. a ~ smile կարեկցական ժպիտ. I am ~ with your point of view **ես** հասկանում եմ/կիսում եմ ձեր տեսակետը. (համակրական, համակրելի) ~ people համակրելի մարդիկ. I find his philosophy ~ **Ինձ** մոտ է նրա փիլիսոփայությունը. ~ink անգույն թանաք (գաղտնագրության համար). *ֆիզ.* սիմպատիկ, կենսադեկավար (նյարդային համակարգ):

**sympathetically** [ˌsɪmpə'tetɪkli] adv կարեկցանքով. She listened ~ **Նա** կարեկցանքով էր լսում:

**sympathize** ['sɪmpəθaɪz] v ցավակցել, կարեկցել. I ~ with you and your grief **ես** կարեկցում եմ քեզ քո վշտի առթիվ. (համակրել) I ~ with those people **ես** համակրում եմ այդ մարդկանց:

**sympathy** ['sɪmpəθi] n ցավակցություն. Accept my deepest ~ **Ընդունեք** իմ խորը ցավակցությունները. (համակրանք) I have no ~ for him **Ոչ** մի համակրանք չունեմ նրա նկատմամբ:

**symphony** ['sɪmfəni] n սիմֆոնիա:

**symptom** ['sɪmptəm] n *բժշկ.* ախտանիշ., սիմպտոմ. նշան, հայտանիշ. show ~s ախտանիշներ ցույց տալ:

**symptomatic** [ˌsɪmptə'mætɪk] a *բժշկ.* ախտանշական. հատկանշական, սիմպտոմատիկ:

**synchronize** ['sɪŋkrənaɪz] v համաժամյա դարձնել, ժամանակով համապատասխանեցնել. ~ watches ժամացույցները ստուգել/համապատասխանեցնել/նույն ժամը ցույց տալ:

**synchronous** ['sɪŋkrənəs] a համաժամանակյա, միաժամանակյա:

**syncopate** ['sɪŋkəpeɪt] v *լեզվ.* հապավել

բառը հնչյունի/վանկի սղմամբ. *երժշ.* շեշտաշարժ/սինկոպա կատարել:

**syncope** ['sɪŋkəpi] n *լեզվ.* հնչեղանակում, սինկոպա. *երժշ.* շեշտաշարժ. *բժշկ.* ուշաթափություն:

**syndetic** [sɪn'detɪk] a շաղկապային, շաղկապավոր:

**syndicate** ['sɪndɪkət] n սինդիկատ, միավորում. կապիտալիստական խոշոր ձեռնարկամիավորում:

**synonym** ['sɪnənɪm] n *լեզվ.* հոմանիշ, համանիշ:

**synopsis** [sɪ'nɒpsɪs] n համառոտագիր, ընդհանուր տեսության ամփոփում, ընդհանուր ակնարկ:

**syntax** ['sɪntæks] n շարահյուսություն:

**synthesis** ['sɪnθəsis] n սինթեզ, համադրություն:

**synthetic** [sɪn'tetɪk] a սինթետիկ, համադրական:

**syringe** [sɪ'rɪndʒ] n ներարկիչ, սրսկիչ. հրշեջ պոմպ. hypodermic ~ ենթամաշկային սրըսկման ներարկիչ:

**syringe** [sɪ'rɪndʒ] v սրսկել, ներարկել. ցնցուղել:

**syrop** ['sɪrəp] n շաքարաջուր, անուշահյութ, մրգահյութ:

**system** ['sɪstəm] n համակարգ, սիստեմ. the ~ *բժշկ.* օրգանիզմ. grading ~ գնահատման/որակավորման/ատեստավորման համակարգ/ եղանակ. the solar/nervous ~ արեգակնային/նյարդային համակարգ. circulatory ~ արյան շրջանառության համակարգ. railway ~ երկաթուղային ցանց. ~ of government պետական կարգ, կառավարման համակարգ. payroll ~ աշխատավարձերի համակարգ. grammatical ~ of a language **լեզվի** քերականական համակարգ mountain ~ **լեռնաշղթա.** ~ architect *հմկրգ.* ծրագրի մշակող. ~ call *հմկրգ.* համակարգային կանչ. ~ call interrupt համակարգային ընդհատում. ~ configuration համակարգի կառուցվածք. ~ software համակարգային ծրագրային ապահովում:

**systematic** [ˌsɪstə'mætɪk] a պարբերական, սիստեմատիկ. a ~ worker սիստեմատիկ աշխատող:

**systematize** ['sɪstəmətaɪz] v համակարգել, սիստեմավորել:

## T

**T, t** [ti:] n անգլերեն այբուբենի 20-րդ տառը. cross the “t”s ճշգրտել, մանրամասնել. to a “T” իսկ և իսկ, ճիշտ և ճիշտ. The suit fits you to a “T” Այս կոստյումը իսկ և իսկ քո վրայով է:

**tab** [tæb] n մերակ. գլխարկի ականջակալ (*մաև ear ~*). *խսկց.* հաշիվ, վճարագիր. keep ~s on smb հետևել մեկին. keep ~s on expenses հաշվառք կատարել, ծախսերին հետևել. *հմկրգ.* աղյուսակային նշան. ստեղծ. ~ order սյունակարգ. ~ stop տեղացույցը տեղափոխելու դիրք:

**tabby** [ˈtæbi] n (*մաև ~ cat*) շերտավոր կատու. *փխբ.* բամբասող/բամբասկոտ կին:

**tabernacle** [ˈtæbənækl] n աղոթարան, աղոթատուն:

**table** [ˈteɪbl] n սեղան. հարթ մակերևույթ. տախտակ. սալ. wooden/square/kitchen/low/expanding ~ փայտե/քառակուսի/խոհանոցի/ցածր/բացվող սեղան. dining/operating/folding ~ ճաշասեղան/վիրահատման/ծալովի սեղան. at ~ սեղանի մոտ. (*հացկերույթ*) be at ~ սեղանի/հացի նստած լինել (ուտելիս) rise/get down from the ~ վեր կենալ սեղանից, դուրս գալ սեղանի մոտից. rich ~ հարուստ սեղան. set/lay the ~ սեղան զգել/պատրաստել. clear the ~ սեղանը հավաքել. The ~s are turned *փխբ.* Իրավիճակը կտրուկ փոխվել է. ~ cloth սփռոց. ~ lamp սեղանի լամպ. ~ tennis սեղանի թենիս. ~ leaf բացովի սեղանի ներդրվող տախտակ. ~ napkin անձեռոցիկ. ~ talk զրույց ճաշասեղանի շուրջը. (*աղյուսակ*) ~ of contents ցանկ. ~ of rates սակագների ցուցակ/աղյուսակ. comparative ~ համեմատական աղյուսակ. multiplication ~ բազմապատկման աղյուսակ. (*վիճակագրություն*) birth ~s ծնելիության վիճակագրություն:

**table** [ˈteɪbl] v աղյուսակ/ցուցակ կազմել. երկար ժամանակով հետաձգել. ~ a motion առաջարկություն մտցնել:

**tableau** [ˈtæbləʊ] n նկար, վառ պատկեր. կենդանի պատկեր (*մաև ~ vivant*):

**table d'hôte** [ˌtɑːblˈdəʊt] n a ~ lunch կոմպ-

լեքսային (ամբողջական) ճաշ:

**table-land** [ˈteɪblænd] n սարահարթ, բարձրավանդակ:

**table-man** [ˈteɪblmən] n հաշվառու:

**table spoon** [ˈteɪblspuːn] n ճաշի/սեղանի գդալ. ~ ful մի լիքը ճաշի գդալ:

**tablet** [ˈtæblət] n փոքրիկ տախտակ (մակագրությամբ). սալիկ. հաբ, դեղահաբ. a ~ of soap օճառի կտոր. a ~ of chocolate շոկոլադի սալիկ:

**tabling** [ˈteɪblɪŋ] n աղյուսակ/ցուցակ/տախտակ կազմելը. հետաձգում, ձգձգում:

**tabloid** [ˈtæblɔɪd] n հաբ, դեղահաբ. փոքրիկ աղյուսակ. բուլվարային լրագիր:

**taboo** [təˈbuː] n, v արգելք, արգելում. տաբուի ենթարկել, արգելել:

**tabor** [ˈteɪbə] n փոքրիկ թմբուկ:

**tabouret** [ˈtæbərɪt] n փոքրիկ նստարան, աթոռակ:

**tabular** [ˈtæbjʊlə] a աղյուսակային, աղյուսակի ձևով. հարթ:

**tabulate** [ˈtæbjuleɪt] v աղյուսակների ձևով դասավորել. աղյուսակի ձևով ամփոփել:

**tabulation** [ˌtæbjʊˈleɪʃn] n աղյուսակ կազմելը, աղյուսակի վերածելը:

**tabulator** [ˈtæbjuleɪtə] n *հմկրգ.* աղյուսակ. ~ key աղյուսակի ստեղծ. ~ setting աղյուսակի դիրքի տեղակայում:

**tacit** [ˈtæsɪt] a լուռ. ~ consent լուռ համաձայնություն. a ~ understanding անխոս/անձայն/բառերով չարտահայտված հասկացում/ըմբռնում. ~ law սովորության իրավունք:

**taciturn** [ˈtæsɪtəːn] a լռակյաց, սակավախոս:

**tack** [tæk] n մեխ, սևեռագամ. thumb ~ սևեռակ, կոճակագամ. *ծով.* նավընթաց, հալս. be on the right ~ ճիշտ ճանապարհին լինել. try another ~ *փխբ.* այլ միջոց փորձել:

**tack** [tæk] v մեխել, գամել, ամրացնել. շուլալել, իրար կարել. *ծով.* նավընթացը փոխել. խուսանավել. ~ down a carpet գորգն ամրացնել. ~ a notice հայտարարություն փակցնել:

**tackle** [ˈtækəl] *n* պիտույք, սարքավորում. *ծով*. նավասարք, նավահանդերձանք:

**tackle** [ˈtækəl] *v* ամրացնել, կապել. բռնել, ճանկել. *մրգ*. շրջափակել. ~ the thief գողին ճանկել. ~ smn մեկով զբաղվել. (how to) ~ the problem (ինչպես) վարվել պրոբլեմի հետ:

**tacky** [ˈtæki] *a* կաշուն, մածուցիկ:

**tact** [tækt] *n* նրբազգացություն, տակտ. *երժշ*. չափ, ամանակ, տակտ:

**tactful** [ˈtæktfəl] *a* վայելուչ վարմունքով, տակտով:

**tactical** [ˈtæktikəl] *a* մարտավարական, տակտիկական. ~ weapons մարտավարական զենք:

**tactics** [ˈtæktiks] *n* մարտավարություն, տակտիկա. *փխք*. գործելակերպ, վարքագիծ:

**tactile** [ˈtæktail] *a* շոշափելի, շոշափողական:

**tactless** [ˈtæktləs] *a* անտակտ:

**tadpole** [ˈtædpəʊl] *n* շերեփուկ:

**taffeta** [ˈtæfɪtə] *n* տաֆետա (մետաքսե դիպակ):

**tag** [tæg] *n* ապրանքանիշ, պիտակ. հաշվեպիտակ. (կոշիկի) օղակ. name ~ անվանանիշ. price ~ գնապիտակ:

**tag** [tæg] *v* պիտակ/ապրանքանիշ/օղակ ամրացնել:

**tail** [teɪl] *n* պոչ, ազի. պոչամաս (նեղքեհի, հետևի մասը). ~ of a cart սայլի ետևի մասը. *խսկց*. հյուս, ծամ. հերթ. պոչ. շքախումբ. խուզարկու, պոչ. ~s (*նաև* ~ coat) ֆրակ. ~ end ծայր, վերջ, պոչ. ~s up բարձր տրամադրությամբ. turn ~ փախուստի դիմել. Heads or ~s? Արծի՞վ թե՞ գիր. ~ between the legs պոչը կծկած/քաշած. վախեցած. heir in ~ սեփականության ժառանգ:

**tail** [teɪl] *v* կրնկակոխ հետևել. They are ~ing us *խսկց*. Մեր հետևից “պոչ” կա. ~ away/off նվազել, թուլանալ (հաճախում, հետաքրքրություն). ~ along/behind պոչից քարշ գալ:

**tailgate** [ˈteɪlɡeɪt] *n* *ավտո*. հետևի դուռը:

**tailings** [ˈteɪlɪŋz] *n* տականքներ, թափթփուկներ, մնացորդներ:

**tailless** [ˈteɪlləs] *a* անպոչ, պոչազուրկ:

**tail-light** [ˈteɪllaɪt] *n* *ավտո*., *երկթ*. հետևի

լապտեր. ինքնաթիռի պոչամասի լապտեր:

**tailor** [ˈteɪlə] *n, v* դերձակ. դերձակություն անել, կարել. ~ made պատվերով կարված. *իրավ*. պարզ, անպաճույճ. well ~ed լավ կարած:

**tail-piece** [ˈteɪlpiːs] *n* եզրափակիչ մաս:

**tail-plane** [ˈteɪlpleɪn] *n* ստաբիլիզատոր:

**tail-spin** [ˈteɪlspɪn] *n* *ավ*. պտտածն էջք. շտոպոր. fall into a ~ պտտածն էջք կատարել:

**tail-wind** [ˈteɪlwɪnd] *n* ուղեմպաստ հողմ, բարենպաստ քամի:

**taint** [teɪnt] **1.** *n* արատ. նեխման/քայքայման հետքեր. վարակ. without any ~ առանց որևէ մշույլի. **2.** *v* փչանալ, վարակ(վ)ել:

**tainted** [ˈteɪntɪd] *a* նեխած, փչացած, արատավոր. ~ air/water աղտոտված օդ/ջուր. a ~ reputation ընկած վարկ, արատավորված անուն:

**take** [teɪk] *v* վերցնել, առնել. ~ a book from the library գրադարանից գիրք վերցնել. ~ the wheel ղեկին նստել (ղեկը բռնել). What journals do you ~? Ի՞նչ ամսագիր եք բաժանորդագրվել. (բռնել, վերցնել, գրավել) ~ prisoners/a town գերի վերցնել, քաղաք գրավել. ~ all the prizes բոլոր մրցանակները շահել. be taken by *փխք*. տարվել մի բանով. He's taken by the idea ես շատ է տարված այդ մտքով. (ընդունել, ստանձնել) ~ smth seriously/as a joke լուրջ ընդունել, ընդունել որպես կատակ. ~ in lodgers կենվորներ պահել. ~ an order պատվեր ընդունել. ~ one's time չտապել. ~ the news well/badly լուրը լավ/վատ ընդունել. ~ a walk զբոսանքի գնալ/զբոսնել. ~ smth in the wrong way սխալ հասկանալ. ~ steps միջոցներ ձեռք առնել. ~ into consideration նկատի ունենալ. ~ pictures նկարահանել. ~ the hint ակնարկը հասկանալ. ~ the floor ձայն/խոսք վերցնել. ~ smn as he is ընդունել այնպիսին ինչպիսին կա. ~ advantage օգտվել. ~ the strain լարմանը դիմանալ. ~ the upper hand հաղթող դուրս գալ. ~ a bath լոգանք ընդունել. ~ things easy չհուզվել. ~ part մասնակցել. ~ smb's side մեկի կողմը պահել. I took him for his brother ես նրան իր եղբոր տեղը դրեցի/ընդունեցի. ~ shape ձևավորվել. ~ precautions նախագուշական միջոցներ ձեռք առնել. ~ notes

գրառումներ կատարել. ~ the risk համար-  
 ծակվել. ~ an opportunity առիթն օգտագոր-  
 ծել. ~ an appeal բողոքարկել. ~ a verdict դա-  
 տավճիռ կայացնել. ~ evidence ապացույց-  
 ներ ընդունել. (տանել, վարել) ~ to the doctor  
 բժշկի տանել. The bus will ~ you Ավտոբուսը  
 ձեզ կտանի. (գնալ) ~ a taxi/the bus/the train  
 տաքսիով/ավտոբուսով/գնացքով գնալ. ~ a  
 short cut կարճ ճանապարհով գնալ. ~ a  
 short cut կարճ ճանապարհով գնալ. all things  
 taken together բոլորը միասին վերցրած, ընդ-  
 հանուր առմամբ. (ընդունել, խմել, ուտել) ~  
 medicine դեղ ընդունել. ~ tea/coffee/milk  
 թեյ/սուրճ/կաթ խմել. (պահանջել, հարկա-  
 վոր լինել) It ~s courage Քաջություն է հար-  
 կավոր ունենալ. It ~s two hours Երկու ժամ է  
 հարկավոր. ~ a house for the summer ամառ-  
 վա համար տուն վարձել/զբաղեցնել. ~  
 aback շփոթեցնել, անակնկալի բերել. ~ after  
 նմանվել. ~ apart քանդել, մաս-մաս անել. ~  
 down իջեցնել, գրի առնել. ~ for մեկի տեղը  
 ընդունել, սխալվել. ~ for granted որպես  
 պատշաճ ընդունել. ապացուցված/հնարա-  
 վոր համարել. ~ away տանել, հեռացնել. ~  
 one's breath away շունչը կտրվել. ~ in ընդու-  
 նել, հասկանալ be taken in *խսկյց*. խաբված  
 լինել. ~ into one's head գլուխը մտցնել. ~ off  
 հեռանալ. *ավ*. թռչել, օդ բարձրանալ. ~ out  
 հանել, դուրս բերել, զբոսանքի տանել. ~  
 over փոխարինել. ~ to հակվել. տարվել մի  
 սրտով. ~ to bed անկողին ընկնել. ~ to heart  
 սրտին մոտ ընդունել. ~ to the road թափա-  
 ռաշքի դառնալ. ~ up բարձրացնել. It ~s up  
 too much time Դա շատ ժամանակ է զբաղեց-  
 նում. (սկսել, ձեռնարկել) ~ up music ե-  
 րաժշտությամբ զբաղվել. ~ up one's idea  
 միտքը/զաղափարը վերցնել. ~ up arms  
 զենք վերցնել, զենքի դիմել. ~ up a quarrel  
 վեճը հարթել. ~ up with մտերմանալ մեկի  
 հետ:

**take-in** ['teik,in] n խաբեբայություն, խաբե-  
 լը:

**take off** ['teikɒf] n նմանեցում, ծաղրա-  
 նկար. *մրգ*. թռիչք, ցատկ, ցատկում. *ավ*.  
 թռիչք:

**takeover** ['teik ,əʊvə] n վերահսկողության  
 տակ առնելը:

**taker** ['teikə] n վերցնող, ստացող, գնորդ.  
 care ~ խնամակալ:

**taking** ['teikiŋ] n, a գրավում, զավթում.

*խսկյց*. հուզմունք. գրավիչ, վարակիչ:

**talc** [tælk] n *հնք*. տալկ:

**tale** [teɪl] n պատմվածք, պատմություն. thrill-  
 ing/amusing ~ կլանող, հրապուրիչ/զվար-  
 ճալի պատմություն, old wives' ~s պառավա-  
 կան հեքիաթներ. tell ~s հեքիաթ պատմել.  
*փխք*. ստեր փչել. make up a ~ պատմություն  
 հորինել. fairy ~ հեքիաթ:

**tale-bearer** [teɪl,bearə] n բամբասան.  
 գրպարտիչ, բանասարկու:

**talent** ['tælənt] n տաղանդ, շնորհք:

**talented** ['tæləntɪd] a տաղանդավոր, շնոր-  
 հալի:

**talentless** ['tæləntləs] a անտաղանդ, ապա-  
 շնորհ:

**taleteller** [teɪl,telə] n պատմություն պատ-  
 մող. *փխք*. փչան, սուտասան:

**talk** [tɔ:k] n խոսակցություն, զրույց. It's just  
 a ~ Դա պարզապես խոսակցություն է. small  
 ~ դատարկախոսություն. There is a ~ of ...

Լուրեր են պտտվում, որ... have a ~  
 զրուցել. ~s բանակցություններ. informal ~s  
 ոչ պաշտոնական բանակցություններ. round  
 - table ~ բանակցություններ կլոր սեղանի  
 շուրջը. joint ~s համատեղ բանակցություն-  
 ներ. ~ on astronomy/modern music զրույց  
 աստղագիտության/ժամանակակից ե-  
 րաժշտության մասին. (բամբասանք) That  
 will make ~ Կսկսեն բամբասել:

**talk** [tɔ:k] v խոսել, զրուցել. ~ sense/nonsense  
 խելացի խոսել/բան ասել. հիմարություններ  
 դուրս տալ. ~ business գործից խոսել. ~ smb  
 round համոզել մեկին. ~ oneself hoarse խոսել  
 մինչև խռպոտելը. ~ smb into/out of doing smh  
 համոզել մի բան անել/հետ համոզել. ~ to  
 the point ըստ էության խոսել. Someone must  
 have ~ed Ինչ-որ մեկը բերանից բան է  
 թռցրել. Now you're ~ing ! Այ՛ հիմա ճիշտ ես  
 խոսում:

**talkative** ['tɔ:kətɪv] a շատախոս, շաղակ-  
 րատ, զրուցասեր:

**talkee-talkee** ['tɔ:ki'tɔ:ki] n *խսկյց*. շատա-  
 խոսություն. աղավաղված/կոտրտված լե-  
 զու:

**talker** ['tɔ:kə] n զրուցասեր անձնավորու-  
 թյուն. հռետոր. He's a good ~ Նրա հետ  
 հետաքրքիր է զրուցել:

**talkies** ['tɔ:kis] n *խսկյց*. հնչյունային կի-  
 նոֆիլմ:



**talking** [ˈtɔːkiŋ] n խոսակցություն. He did all the ~ Ամբողջ ժամանակ միայն նա էր խոսում. All ~ ceased խոսակցությունը դադարեց:

**talking-to** [ˈtɔːkiŋtuː] n հանդիմանություն, կշտամբանք. give smn a good ~ to մի լավ հանդիմանել:

**tall** [tɔːl] a բարձր, բարձրահասակ. ~ for his age իր տարիքի համեմատ բարձրահասակ. a ~ story *փխբ.* հնարովի բաներ, հերյուրանք. a ~ order դժվարին խնդիր:

**tallboy** [ˈtɔːlboɪ] n բարձր, արկղներով պահարան. կոմոդ:

**tallow** [ˈtæləʊ] n ճարպ, ճրագու, յուղ. rendered ~ հալած ճարպ:

**tallowy** [ˈtæləʊi] a ճարպոտ, յուղոտ. ճարպային:

**tally** [ˈtæli] n, v ապրանքանիշ, պիտակ. հաշվի միավոր. հաշիվ պահել. ~ with համապատասխանել, համընկնել:

**talon** [ˈtælən] n մագիլ, ճիրան:

**tamable** [ˈteiməbl̩] a սանձահարելի, ընտելացման ենթարկվող:

**tambour** [ˈtæmbəʊ] n փոքր թմբուկ:

**tambourine** [ˌtæmbəˈriːn] n դափ:

**tame** [teim] a ընտանի, ընտելացրած. հնազանդ, հեզահամբույր. ծանծաղի:

**tame** [teim] v սանձահարել, ընտելացնել, վարժեցնել:

**tameless** [ˈteimləs] a անսանձ, անզուսպ, վայրի:

**tamer** [ˈteimə] n մարզորդ. սանձիչ, հնազանդեցնող:

**tamp** [tæmp] v պայթանցքը փակել/խցել:

**tamper** [ˈtæmpə] n ձեռք տալ (արգելված բանը). կեղծել, խարդախել. *իրավ.* ~ with evidence ապացույցներ կեղծել. ~ with witness վկային կաշառել. This lock has been ~ed *հնչ-*որ մեկը ձեռք է տվել այս կողպեքին. ~ with documents/accounts փաստաթղթերը/հաշիվները կեղծել:

**tampon** [ˈtæmpʊn] n *բժշկ.* տամպոն, վիրախճուճ:

**tamtam** [ˈtæmtæm] n աֆրիկյան թմբուկ. կոչնագանգ, գոնգ:

**tan** [tæn] 1. n (*նաև sun* ~) արևառություն, արևայրուկ. a marvellous ~ հիանալի արևառություն. 2. a դարչնագույն, թուխ. 3. v արևառ լինել, արևից թխանալ. դաբաղել

(կաշիւ). Her face was ~ned *երա* դեմքը արևից թխացել էր:

**tandem** [ˈtændəm] n լծաշարքով կառք. երկթամբ հեծանիվ. տանդեմ:

**tang I** [tæŋ] n սուր/յուրահատուկ համ. *փխբ.* հատուկ գրավչություն/հմայք/բույր:

**tang II** [tæŋ] n ելուստ, կոթուն (գործիքի, դանակի):

**tangent** [ˈtændʒənt] 1. n *մաթ.* շոշափող գիծ, տանգենտ. fly/get off at a ~ հանկարծակի շեղվել (նյութից, թեմայից). 2. a շոշափման, շոշափող:

**tangential** [tæŋˈdʒenʃl̩] a *մաթ.* շոշափողական, տանգենցիալ:

**tangerine** [ˌtændʒəˈriːn] n մանդարին:

**tangibility** [ˌtændʒəˈbɪləti] n շոշափելիություն. ռեալ/իրական լինելը:

**tangible** [ˈtændʒəbl̩] a շոշափելի, նյութական. իրեղեն, իրական. զգալի, նկատելի. ~ proof *փխբ.* իրեղեն/իրական ապացույց. ~ assets նյութեղեն միջոցներ:

**tangle** [ˈtæŋɡl̩] n խճճվածություն, խառնաշփոթություն. խճճված կծիկ:

**tangle** [ˈtæŋɡl̩] v խճճ(վ)ել, խառնաշփոթ(վ)ել. ~d hair խճճված մազեր. The threads are ~d *թելերը* խճճվել են. ~ up in an affair *ինչ-որ գործի մեջ* խառնված/խճճված. get ~d up with the police *ստիկանության հետ անախորժություններ ունենալ*:

**tangly** [ˈtæŋɡli] a խճճված, խառնված. ջրիմուռներով պատած:

**tank** [tæŋk] n ջրամբար, ավազան. բաք, ցիստեռն. *ռզմ.* տանկ. petrol ~ բենզինի բաք:

**tankage** [ˈtæŋkɪdʒ] n տարողություն (բաքի, ցիստեռնի):

**tankard** [ˈtæŋkəd] n գարեջրի մեծ գավաթ (կափարիչով):

**tank-car** [ˈtæŋkkaː] n վազոն ցիստեռն:

**tanker** [ˈtæŋkə] n տանկեր (նավթատար նավ). *ամ.* տանկիստ:

**tankman** [ˈtæŋkmən] n տանկիստ:

**tanner** [ˈtænə] n դաբաղ (բանվոր). աղաղորդ:

**tannery** [ˈtænəri] n դաբաղանոց:

**tantalize** [ˈtæntəlaɪz] v չարչարել, տանջել:

**tantalizing** [ˈtæntəlaɪzɪŋ] a չարչարող,

տանջող. գրգռիչ. a ~ smell գրգռիչ հոտ ~ days տանջալից օրեր:

**tantamount** ['tæntəmaunt] a հավասարագոր, համարժեք. That is ~ to killing Դա հավասարագոր է սպանության:

**tantrum** ['tæntɹəm] n զայրույթի պոռթկում fly into a ~, throw a ~ հիստերիկայով բռնվել:

**tap** [tæp] n ծորակ. խցան, փական. turn on/off the ~ ծորակը բացել/փակել. beer on ~ տակառի զարեջուր:

**tap** [tæp] v քակել. ~ on the door դուռը կամացուկ քակել. ~ one's forehead ճակատին թեթևվակի խփել. ~ a telephone հեռախոսագրույցը գաղտնալսել. ~ ping with the stick փայտով թխկթխկացնել. ~ new resources նոր հանքավայրեր մշակել. ~ smb for information /սսկց. փորձել տեղեկություն կորզել:

**tape** [teip] 1. n ժապավեն. երիզ. հեռագրա-ժապավեն. ~ recording ձայնագրություն. sticky ~ կպչուն ժապավեն, սքոչ. մրզ. ֆինիշի ժապավեն. *բժշկ.* սպեղանի. play back a ~ լսել մագնիսոֆոնի ձայնագրությունը. red ~ բյուրոկրատիզմ. 2. v ~ up a parcel ծանրոցը սքոչով ամրացնել. have smn ~d մեկի ինչ լինելը իմանալ/հասկանալ:

**tape-line** ['teiplain], **tape-measure** ['teip.mezə] n չափերիզ, չափուղորակ. սանտիմետր:

**taper** ['teipə] 1. n բարակ մոմ, աղոտ լույս. կոնաձև մարմին. 2. v աստիճանաբար նեղանալ/նեղացնել. կոնաձև դարձնել:

**tape-recorder** ['teipri,kɔ:də] n մագնիսոֆոն:

**tapestry** ['tæpɪstri] n պաստառ. նկարա-հյուս գործվածք. գորելեն. ~ work խաչածև ասեղնագործ:

**tapeworm** ['teipwɔ:m] n *բժշկ.* երիզորդ:

**tapir** ['teipə] n *կենդ.* գետածի:

**tapist** ['teipɪst] n բյուրոկրատ, ձևամուլ:

**tapster** ['tæpstə] n բուֆետապան, գինեպան:

**tar** [tɑ:] 1. n կուպր, ջրալի ձյութ. գուղրոն. ~ brush ձյութելու վրձին. 2. v կուպր քսել, ձյութել, խեժել. ~ a barrel տակառը ձյութել, տակառին կուպր քսել:

**tarantella** [tæ'ræn'telə] n տարանտելա (իտալական պար):

**tarantula** [tə'ræntjʊlə] n *կենդ.* մորմ:

**tardiness** ['tɑ:dɪnəs] n դանդաղկոտություն. ուշացում, հապաղում:

**tardy** ['tɑ:di] a դանդաղկոտ, ուշացած:

**target** ['tɑ:ɡɪt] n թիրախ, նշան. նպատակ. նպատակակետ. hit/miss the ~ թիրախին խփել, վրիպել. a ~ for ridicule/sarcasm *փխբ.* ծաղրի/զավեշտի թիրախ. production ~ արտադրողական խնդիրները. ~ of the pressure ճնշման առարկա. export ~s արտահանման ծրագրերը. ~ practice ուսումնական հրաձգություն. *հմկրգ.* նպատակային օբյեկտ. ~ alphabet ելքային այբուբեն. ~ configuration համակարգի նպատակային կոնֆիգուրացիա. ~ label նպատակային նիշ. ~ object նպատակային օբյեկտ. ~ text արդյունքային տեքստ:

**tariff** ['tærif] n սակագույց, սակագին. տարիֆ. որոշված գին, վարձաչափ. retaliatory ~ պատժիչ տուրք/սակագին. protective ~ պաշտպանող սակագին:

**tarn** [tɑ:n] n լեռնային փոքր լիճ:

**tarnish** ['tɑ:nɪʃ] n աղոտություն, անփայլություն:

**tarnish** ['tɑ:nɪʃ] v աղոտանալ, փայլից զրկվել. a ~ed reputation *փխբ.* արատավորված համբավ:

**tarpaulin** [tɑ:'pɑ:lɪn] n անջրանցիկ բրեզենտ. նավաստու անջրանցիկ գլխարկ:

**tarry** ['tɑ:ri] a կուպրով ծածկած, ձյութած:

**tart** [tɑ:t] a թթու, տտիպ. *փխբ.* սուր, կծու, խայթող. ~ remark սուր դիտողություն:

**tart** [tɑ:t] n տորթ. մրգով կարկանդակ. apple ~ խնձորով կարկանդակ. *խսկց.* թեթևսուլիկ/թեթևաբարո կին:

**tartan** ['tɑ:tən] n բրդե վանդակավոր գործվածք:

**tartar** I ['tɑ:tə] n գինեքար, ատամնաքար:

**tartar** II ['tɑ:tə] n դժոխք, տարտարոս:

**task** [tɑ:sk] n առաջադրանք. խնդիր, հանձնարարություն. hard/special/important ~ լուրջ, կարևոր/հատուկ/կարևոր խնդիր/ առաջադրանք. ~ force խնդիր ուսումնասիրող հատուկ խումբ. set oneself a ~ իր առջև խնդիր դնել. home/difficult ~ տնային/դժվարին հանձնարարություն/առաջադրանք. do one's ~ իր առաջադրանքը կատարել. *հմկրգ.* task խնդիր, ծրագրային մոդուլ. ~ code խնդրի կոդ/ծրագիր. ~ data խնդրի տվյալներ. ~

- handle խնդրի իդենտիֆիկատոր. ~ management խնդիրների ղեկավարում. ~ mode ոչ արտոնյալ/խնդրի ռեժիմ. ~ oriented դեպի առարկայական տիրույթը կողմնորոշված. ~ partition խնդրի տրոհում. ~ scheduler պլանավորող. ~ state segment խնդրի վիճակի սեգմենտ. ~to- միջխնդրային:
- taskmaster** ['ta:skma:stə] n հսկիչ, վերակառու. բրիգադավար. a hard ~ խիստ պետ:
- taskwork** ['ta:skwə:k] n գործարքային աշխատանք:
- tassel** ['tæsɪ] n ծոպիկ, փնջիկ. էջանշան:
- taste** [teɪst] n համ. bitter/sweet/nasty ~ կծու/քաղցր/զգվելի համ. to the ~ ըստ համի. sweet to the ~ քաղցր ըստ համի. (ճաշակ, հակում) dress in god/bad ~ լավ/վատ ճաշակով հագնվել. It is not my ~ Դա իմ ճաշակով չէ. a matter of ~ ճաշակի հարց. T~s differ ճաշակները տարբեր են լինում, ճաշակին ընկեր չկա. bad, poor ~ վատ ճաշակ (*taste*՝ անտակտություն). develop a ~ for smth որևէ բանի նկատմամբ ճաշակ զարգացնել. (մնուշ, համտես) May I have a ~ ? Կարելի՞ է համտես անել. have a ~ of freedom ազատության համը զգալ. (add) a ~ of salt/sugar (ավելացնել) մի քիչ աղ/շաքար. give one a ~ of որոշ պատկերացում տալ մի բանի մասին:
- taste** [teɪst] v համտես անել, ճաշակել. համ զգալ. համ ունենալ/տալ. ~ sweet/bitter/sour քաղցր/դառը/թթու համ ունենալ. He can't ~ anything Նա ոչ մի բանի համ չի զգում. He hasn't ever ~d avokado Նա երբեք ավոկադո չի փորձել. ~ wines գինի համտես անել. ~ power ուժի/իշխանության համը զգալ/ճաշակել. It ~s good Լավ համ ունի, համով է:
- tasteful** ['teɪstfʊl] a ճաշակով արված. համեղ, համով:
- tasteless** ['teɪstləs] a անհամ, անճաշակ:
- taster** ['teɪstə] n համտես, որակը համով որոշող. դեգուստատոր:
- tastily** ['teɪstɪli] adv ճաշակով, նրբագեղորեն:
- tasty** ['teɪsti] a համեղ, համով:
- tatter** ['tætə] n լաթ, քուրջ. հնավաճառ. ~s ցնցոտիներ:
- tattered** ['tætəd] a մաշված, պատառոտված:
- tattle** ['tætl] n դատարկախոսություն, բամբասանք:
- tattler** ['tætlə] n դատարկախոս, շաղակրատ. բամբասան:
- tattoo** [tæ'tu:] n դաջվածք. կտրվածք:
- taunt** [tɔ:nt] n ծաղր, ծաղրանք, խայթիչ դիտողություն:
- taunt** [tɔ:nt] v ծաղրել, խոցել, խայթել. ~ smn with cowardice վախկոտությունը ծաղրել:
- taut** [tɔ:t] a պիրկ, ձիգ. ~ nerves *փխք*. լարված նյարդեր:
- tauten** ['tɔ:tn] v պինդ ձգ(վ)ել, պրկ(վ)ել:
- tautology** [tɔ:'tɒlədʒi] n նույնաբանություն:
- tavern** ['tævn] n պանդոկ, գինետուն:
- tawdry** ['tɔ:drɪ] a աղաղակող, աչք ծակող, անճաշակ:
- tawny** ['tɔ:ni] a բաց դարչնագույն:
- tax** [tæks] n հարկ, տուրք. direct/indirect ~ ուղղակի. անուղղակի հարկ. income/land/local ~ եկամտահարկ. հողի/տեղական հարկ. levy ~es հարկեր դնել. impose a ~ հարկադնել, հարկ դնել. ~ assessment հարկի հաշվարկ. ~ law հարկային իրավունք. collect ~es հարկեր գանձել. take off ~es հարկերը հանել. ~ evasion խուսափում հարկերից. value added ~ (VAT) ավելացված արժեքի հարկ. ~ smb's patience/strength *փխք*. մեկի համբերությունը/ուժերը փորձել. (մեղադրել) ~ smn with մեկին մի բանում մեղադրել:
- taxable** ['tæksəbl] a հարկման ենթակա:
- taxation** [tæks'eɪʃn] n հարկում, հարկի գանձում. system of ~ հարկման համակարգ. rate of ~ հարկման չափսը. proportional ~ համամասն հարկում:
- tax-collector** ['tækskə,lektə] n հարկահավաք:
- tax-free** [,tæks'fri:] a հարկման ոչ ենթակա, հարկերից ազատ:
- taxi** ['tæksi] 1. n տաքսի. take a ~ տաքսի նստել. ~ driver տաքսու վարորդ. ~ rank տաքսու կանգառ. 2. v տաքսիով գնալ/տանել. ~ out *ալ*. գետնավարել. ~ to the theatre *խսկց*. տաքսիով թատրոն գնալ:
- taxidermist** ['tæksɪdə:mɪst] n խրտվիլակների պատրաստող:
- taximeter** ['tæksi,mi:tə] n սակահաշվիչ, տաքսոմետր:

**taxing** [ˈtæksɪŋ] **n** հարկում, հարկադրում, հարկ դնելը:

**taxpayer** [ˈtæksˌpeɪə] **n** հարկատու:

**TCB** (~ control block) [ta:sk kənˈtrəʊl ˌblɒk] խնդրի ղեկավարման բլոկ:

**tea** [ti:] **n** թեյ. hot/strong/weak/China/Indian ~ տաք/թուևոր/թուլլ/չինական/հնդկական թեյ. blend of ~ թեյի տեսակ. a cup of ~ մի բաժակ թեյ. five o'clock ~ հետճաշյա թեյ. high ~ երեկոյան թեյ (հյուրերով). ~ bag թեյի տոպրակ. /ծրարիկ/ ~ cake թխվածք թեյի հետ. ~ break թեյի ընդմիջում. ~ things թեյի պարագաներ. ~ urn ինքնատեռ. ~ spoon թեյի գդալ. ~ set թեյի սպասք. ~ room թեյարան. ~ pot թեյաման (թուրմի համար). ~ kettle թեյաման (ջրի համար). ~ strainer թեյի քամիչ, թեյքամիչ. ~ cloth թեյի սրբիչ. ~ cup թեյի գավաթ. a storm in a ~ cup *փխք*. փոթորիկ մի բաժակ թեյում/ջրում. ~ leaf թեյի տերև. ~ garden թեյարան պարտեզում. ~ party թեյի հրավեր. թեյախմություն. թեյի հրավիրված հասարակություն. ~ caddy թեյի տուփ:

**teach** [ti:tʃ] **v** սովորեցնել, ուսուցանել. դասավանդել. ~ to drive մեքենա վարել սովորեցնել. (խրատել, դաս տալ) ~ smn a lesson մեկին դաս տալ/խելքի բերել:

**teacher** [ˈti:tʃə] **n** ուսուցիչ, ուսուցչուհի. դասատու. a history ~ պատմության դասատու. ~'s training college մանկավարժական ինստիտուտ:

**tick II** [tɪk] **1.** **n** տկտկոց (ժամացույցի). ~ tock տիկ-տակ. *խսկց.* վայրկյան to the ~ ճիշտ ժամանակին. just a ~ մի վայրկյան. Do smth in two ~s (մի բան անել) անմիջապես. **2.** **v** տկտկալ, տկտկացնել. The hours ~ed away ժամերը դանդաղորեն անցնում էին:

**tick** III [tik] n սրանկյունն ճիշտ/նշում:

**tick** IV [tik] n *խսկց.* վարկ, պարտք. buy on ~ ապառիկ գնել. run ~ ապառիկ վերցնել, պարտքով ապրել:

**tick** [tik] v նշել, նշան անել. ~ correct answers ճիշտ պատասխանները նշույթավորել. ~ smb off մեկին խիստ պարսավել:

**ticker** ['tikə] n *խսկց.* ժամացույց. հեռագրական ապարատ:

**ticket** ['tikit] n տոմս, տոմսակ. քարտ. կտրոն. single/one way ~ գնալու տոմս. return ~ գնալ գալու/վերադարձի տոմս. through ~ ուղիղ հաղորդակցության տոմս. season ~ սեզոնային տոմս. bus/theatre/concert ~ ավտոբուսի/թատրոնի/համերգի տոմս. complimentary ~ փոխտոմս, ծրի տոմս. Produce your ~s! Ներկայացրեք ձեր տոմսերը. (ապրանքանիշ. պիտակ) price ~ գնապիտակ. meal ~ սննդի կտրոն. pawn ~ գրավագիր. ~ of discharge *ռզժ.* արձակման վկայական. The ~ ~ Չենց այն, ինչ պետք է. Not quite the ~ այն չէ. What's the ~? Ի՞նչ մտադրություն կա. ~ office տոմսարկղ. ~ collector/inspector վերահսկիչ, ստուգիչ:

**tickle** ['tikl] n խտրտանք, խուտուտ, խուտուտ անելը. have a ~ in one's throat կոկորդը քերծվել/քոր գալ:

**tickle** ['tikl] v խուտուտ անել/տալ/զգալ. քոր տալ. It ~s խուտուտ է գայիս. My nose ~s Քիթս քոր է գալիս. This wool ~s Բուրդը ծակում է/կծում է/քոր է տալիս. (զվարճացնել) ~ to death ծիծաղից մեռցնել. ~ smn pink *խսկց.* մեկին շատ զվարճացնել. ~ one's vanity *փխք.* ինքնասիրությունը շոյել:

**tickler** ['tiklə] n բարդ խնդիր, գլուխկոտրուկ:

**ticklish** ['tikliʃ] a խտրտան. նրբազգաց, շուտ վիրավորվող. *փխք.* նուրբ, նրբանկատ. փափուկ, փափկանկատ. a ~ problem նուրբ/փափուկ հարց:

**tick-tack** ['tiktaek] n *խսկց.* տկտկոց (ժամացույց). թըխկ-թըխկ. տըղ-տըղ. տիկ-տակ:

**tidal** ['taidl] a մակընթացության և տեղատվության հետ կապված. ~ wave մակընթացության ալիք. ~ river մակընթացատեղատվային գետ:

**tiddler** ['tidlə] n *խսկց.* մանր ձկնիկ:

**tiddly** ['tidli] a պատիկ, մանրիկ. *խսկց.* կոնծած, կատարը տաք:

**tide** [taid] n մակընթացություն և տեղատվություն. high ~ մակընթացության գագաթնակետը. low ~ տեղատվության ամենացածր կետը/քիչ ջուր. The ~ comes in/rises Մակընթացությունն ուժեղանում է, Ջուրը գալիս է. The ~ is going out/falling Տեղատվություն է սկսվում, Ջրի մակարդակը ընկնում է/իջնում է. The ~ has turned *փխք.* Բախտը դավաճանեց, Գործը ձախողվեց. (հոսանք, ալիք) go with the ~ *փխք.* հոսանքով լողալ, համակերպվել. war ~s տեղեկություններ ռազմաճակատից:

**tide** [taid] v հոսանքով լողալ. ~ over օգնել, օգնություն ցույց տալ. ~ over a difficulty *խսկց.* դժվարությունը հաղթահարել. The money will ~ me over *խսկց.* Այս գումարը ինձ կօգնի հաղթահարել:

**tidewater** ['taidwɔ:tə] n, a մակընթացության ջրեր. ծովափ. առափնյա, ծովափնյա:

**tidiness** ['taidinis] n մաքրություն, մաքրասիրություն. կոկիկություն:

**tidings** ['taidinz] n նորություններ, լուրեր, տեղեկություններ:

**tidy** ['taidi] a մաքուր, կոկիկ, մաքրասեր. a ~ room կոկիկ/մաքուր սենյակ. a ~ desk/handwriting կոկիկ սեղան. հստակ/դյուրընթեցնելի ձեռագիր. *խսկց.* զգալի, բավական մեծ a ~ sum բավական մեծ գումար:

**tidy** ['taidi] v (*նաև* ~ սք) հավաքել, մաքրել, կարգի բերել. ~ a room սենյակը կարգի բերել. ~ oneself իրեն կարգի բերել. ~ out a drawer զգրոցը կարգավորել:

**tie** [tai] n փողկապ. *երկթ.* լայնակի գերան. striped/loud ~ զուլավոր/աչք ծակող փողկապ. ~s կապեր. ~s of friendship բարեկամական կապեր. family ~s ընտանեկան կապեր:

**tie** [tai] v կապել, երիզել. միացնել, ամրացնել. ~ smb's hands ձեռքերը կապել. ~ hand and foot ձեռքն ու ոտքը կապել. ~ a knot հանգույց կապել. ~ one's shoe laces կոշկաքուղը կապել. ~ one's things into a bundle կապոց սարքել. be ~d by the rules կանոններով պարտավորվել/սահմանափակվել. be ~d to the dates այդ օրերին զբաղված լինել. be ~d to the house տնային տնտեսությամբ զբաղվել. *ճրգ.* (հաշիվը հավասարեցնել) We ~d with them 3 - all Մենք ոչ-ոքի խաղացինք 3:3. ~ for the second place երկրորդ տեղը կիսել. The two candidates ~d *քղք.* Երկու

թեկնածուները հավասար ծայրեր ստացան.  
 ~d to time ժամանակով կապված. ~ in with  
 կապվել. ~ up a dog շանը կապել. ~ up a par-  
 cel կապոցը կապել. Everything is ~d up Ամեն  
 ինչ որոշված է. The money is ~d up in prop-  
 erty Փողը ներ է դրված անշարժ գույքի մեջ:  
**tie-on** ['taɪɒn] a կապովի, կապված. a ~ label  
 կապովի/կապված պիտակ:  
**tie-pin** ['taɪpɪn] n փողկապի քորոց:  
**tier** I ['taɪə] n երեխայի գոգնոց:  
**tier** II ['taɪə] n թատերահարկ, կարգ:  
**tierce** [tiəs] n տակառ (200 լիտր). երժշ.  
 տերցիա. թղթխ. տերց:  
**tie-wig** ['taɪwɪg] n ծամով պարիկ:  
**tiff** I [tɪf] n գոտուկություն, գոտվելը:  
**tiff** II [tɪf] n, v ոգեւից ընպելիքի մի կուռ.  
 դանդաղ/փոքրիկ կուռերով խմել:  
**tiger** ['taɪgə] n վագր. American ~ ամերիկյան  
 հովազ, յագուար:  
**tigerish** ['taɪgəriʃ] a վագրային, վայրագ. ար-  
 յունարբու:  
**tiger-moth** ['taɪgəmbɒθ] n գիշերային թիթեռ:  
**tight** [taɪt] a ձիգ, պինդ, պիրկ. a ~ knot ձիգ  
 կապված հանգույց. ~ jacket/collar նեղ պի-  
 ջակ. սեղմ օձիք. The shoes are ~ կոշիկը սեղ-  
 մում է. ~ spring/rope պիրկ զսպանակ/պա-  
 րան. a ~ hug ուժեղ/պինդ գրկախառնու-  
 թյուն. keep a ~ hold ամուր բռնած/պահած  
 ունենալ. a ~ sweater կիպ մստած սվիտեր. a  
 ~ squeeze դժվարությամբ խցկված. սեղմ,  
 նեղ. a ~ schedule *փխբ.* լարված ծրագիր.  
 (դժվարին, դժվար) be in a ~ spot դժվար  
 կացության մեջ լինել. Money is ~ Փողա-  
 յին/Դրամական դժվարություններ կան He is  
 ~ Նա ժլատ է. He is ~ *խսկց.* Մի քիչ խմած  
 է/Քեֆը տեղն է:  
**tight** [taɪt] adv (*ճակ* ~ *tightly*) սերտորեն. կիպ.  
 պինդ, ձիգ, ամուր կերպով. screw the cap on  
 ~ կափարիչը ամուր պնդացնել. hold ~  
*խսկց.* պինդ բռնվել. just sit ~ պարզապես  
 հանգիստ մստել:  
**tighten** ['taɪtn] v սեղմել, ձգել, պրկել. ամուր  
 քաշել. ~ one's belt գոտին ձգել. ~ one's grip  
 ավելի ամուր սեղմել. ~ restrictions սահմա-  
 նափակումները (ավելի) խստացնել. ~ up on  
 discipline ավելի խստացնել կարգապահու-  
 թյունը:  
**tight-fisted** [,taɪt'fɪstɪd] a ժլատ, զոնտ:  
**tightly-coupled system** ['taɪtli 'kʌplɪd

'sɪstəm] ուժեղ կապով համակարգ:  
**tights** [taɪts] n տրիկո, զուգագուլպա:  
**tigress** ['taɪgrəs] n էգ վագր:  
**tilde** ['tɪldə] n *տպոգր.* ալիքանշան, տիլդա (~):  
**tile** [taɪl] 1. n (*ճակ* ~ Dutch ~) կղմինդր. հախ-  
 ճասալիկ. կավե խողովակ. have a ~ loose  
*փխբ.* ծալը/տախտակը պակաս. 2. v  
 կղմինդրով ծածկել. ~ a wall/roof պատը  
 հախճասալիկով, կտուրը կղմինդրով պա-  
 տել. *հմկրգ.* կցաշարել:  
**tiling** ['taɪlɪŋ] n կղմինդրի ծածկ:  
**till** [tɪl] n դրամարկղ (խանութի, վաճառասե-  
 ղանի):  
**till** [tɪl] v մշակել, վարել, հերկել (հողը):  
**till** [tɪl] 1. prep մինչև. ~ now մինչև այժմ. ~  
 then մինչև այն ժամանակ. ~ today մինչև  
 այսօր. 2. conj մինչև. Wait ~ I come Սպասիր՝  
 մինչև ես գամ:  
**tillable** ['tɪləbl] a հերկելի, վարելի:  
**tillage** ['tɪlɪdʒ] n հողի մշակում. մշակված  
 հող, վարելահող:  
**tiller** I ['tɪlə] n *ծով.* ղեկավածակ:  
**tiller** II ['tɪlə] n հողագործ, երկրագործ:  
**tilt** [tɪlt] n թեքություն, թեք վիճակ. (at) full ~  
 ամբողջ ուժով/թափով. He ran full ~ into a  
 wall Ամբողջ թափով պատին խփվեց:  
**tilt** [tɪlt] v թեք(վ)ել, շուռ տալ, շրջել. ~ the  
 table/chair/jug սեղանը/աթոռը/սափորը թե-  
 քել/շրջել:  
**tilth** [tɪθ] n հողի մշակում. մշակված հող.  
 վարելահող:  
**timber** ['tɪmbə] n անտառանյութ, փայտա-  
 նյութ. փայտեղեն. ~s գերան, հեծան. ~ mer-  
 chant փայտարդյունաբերող:  
**timber** ['tɪmbə] v փայտից շինել/կառուցել.  
 ատաղձագործությամբ զբաղվել:  
**timbered** ['tɪmbəd] a փայտե, փայտաշեն.  
 անտառոտ, անտառապատ:  
**timber-headed** ['tɪmbə'hedɪd] a հիմար,  
 բթամիտ, հաստազուլիս:  
**timbre** ['tæmbə] n *երժշ.* տեմբր:  
**timbrel** ['tɪmbərəl] n դափ:  
**time** [taɪm] n ժամանակ, ժամ. spare, free/  
 hard/busy ~ ազատ/ծանր/զբաղված ժամա-  
 նակ. T~ passes/draws ժամանակն անցնում է/  
 ձգվում է. half/part of the ~ ժամանակի կեսը,  
 մի մասը. for some/a long ~ որոշ ժամանակ,  
 երկար ժամանակ. have enough ~ բավական  
 ժամանակ ունենալ. after a ~ որոշ ժամանա-

կից հետո. waste ~ ժամանակ վատնել. make up for the lost ~ կորցրած ժամանակը ետ շահել/բերել. pass the ~ ժամանակ անցկացնել. I have ~ on my hands ես ժամանակ ունեմ. Take your ~ Մի շտապեք. It takes ~ ժամանակ է հարկավոր/անհրաժեշտ. have a good ~ լավ ժամանակ անցկացնել. The ~ has come եկել է ժամանակը. have the ~ of one's life իր կյանքի ամենալավ ժամանակը անցկացնել. It is high ~ Վաղուց/իսկը ժամանակն է. in due ~ իր ժամանակին. at ~s, from ~ to ~ երբեմն, մերթ ընդ մերթ. ժամանակ առ ժամանակ. in no ~ չափազանց արագ, իսկույն. at no ~ երբեք, ոչ մի ժամանակ. some ~ or other երբևիցե, որևէ ժամանակ. at the same ~ միևնույն ժամանակ. for the ~ being ներկայումս, այժմ. for the ~ որոշ ժամանակով gain ~ ժամանակ շահել. kill ~ ժամանակ սպանել. observe ~ ճշտապահ լինել. ~ frame ժամանակահատված, վերջնաժամկետ. T~ presses ժամանակը չի սպասում. at odd ~s աշխատանքին ընդմեջ, ի միջի այլոց. (ժամանակաշրջան) in former ~s նախկինում. at my ~ of life իմ տարիքում. in ~s past/to come անցյալում, ապագայում. in the ~ of Tigran the Great Տիգրան Մեծի ժամանակաշրջանում. keep up with the ~s ժամանակի հետ համընթաց գնալ. be ahead of one's ~ իր դարաշրջանից առաջ ընկնել. (սեզոն) Autumn is the ~ for fruits Աշունը մրգի սեզոն է. a lovely ~ of year տարվա հրաշալի ժամանակ. There is ~ for everything Ամեն ինչն իր ժամանակն ունի. in winter ~ ձմռանը. (ժամկետ) extension of ~ ժամկետի երկարաձգում. T~ is up ժամկետը լրացել է. expiration of ~ ժամկետի լրանալը. within the ~ agreed նշված ժամկետում. He has done his ~ in the army Բանակում նրա ծառայությունն ավարտվել է ~ tested ժամանակով փորձված. do ~ պատիժը կրել. (անգամ) every ~ ամեն անգամ. at one ~ միանգամից. ~ after իրար հետևից, անընդհատ. ~ and again բազմիցս, հաճախակի. 3 ~s 3 երեք անգամ երեք. 5 ~s faster 5 անգամ ավելի արագ. this/last/ next ~ այս/անցյալ/հաջորդ անգամ. for the first/last ~ առաջին/վերջին անգամ. one at a ~ մեկական. երժշ. տեմպ, տակտ. beat ~ տակտ խփել, չափ տալ. keep ~ տեմպը/ռիթմը պահպանել. (ժամ) tell the ~ ժամն

ասել. look at the ~ ժամացույցին նայել. at this ~ of night գիշերվա այս ժամին at any ~ ցանկացած ժամին. arrive on ~ ճիշտ ժամին ժամանել. *հմկրգ.* ~-sharing ժամանակի բաժանում. ~-sharing executive աշխատանքի բաժանումով օպերացիոն համակարգ. ~ slice ժամանակի հատված/քվանտ. ~ slicing ժամանակի քվանտացում:

**time** [taim] v հաջող ժամանակ ընտրել. The remark was well ~d Դիտողության ժամանակը հաջող էր ընտրված. ~ one's journey ճամփորդության ժամանակը նշանակել. ~ a race *մրգ.* մրցավազքի ժամանակը նշել. ~ smb մեկի ժամանակը ֆիքսել:

**time bomb** [ˈtaimbɒm] n ժամացույցի մեխանիզմով ռումբ:

**time-expired** [ˈtaimiks,paɪəd] a ժամանակն ավարտված. *նզմ.* զինծառայությունը վերջացրած:

**time-fuse** [ˈtaimfjuːz] n *նզմ.* ժամացույցավոր պայթուցիչ (ռումբ, ական և այլն):

**time-honoured** [ˈtaim,ɒnəd] a դարերով սրբազորված:

**time-keeper** [ˈtaim,kiːpə] n հաշվառու. *մրգ.* ժամաչափորդ, ժամականաչափ. խրոնոմետր:

**time-keeping** [ˈtaim,kiːpiŋ] n ժամանակաչափում:

**time lag** [ˈtaimlæɡ] n ուշացում, հապաղում:

**timeless** [ˈtaimləs] a անժամանակ, անսահման, հավիտենական. ~ approach միշտ արդիական մոտեցում:

**time limit** [ˈtaimlimit] n վերջնական ժամկետ. ժամանակային սահման:

**timely** [ˈtaimli] a պատեհաժամ, ժամանակին արված:

**time piece** [ˈtaimpiːs] n ժամացույց:

**timer** [ˈtaimə] n *հմկրգ.* ժամացույց. ~ interrupt ընդհատում ըստ ժամացույցի ազդանշանի:

**time saving** [ˈtaim,seɪvɪŋ] a ժամանակը խնայող. a ~ device ժամանակը խնայող սարք:

**time sheet** [ˈtaimʃiːt] n հաշվետախտակ, հաշվեցուցակ:

**time-signal** [ˈtaim,siɡnəl] n ժամանակի ստուգում, ճշգրիտ ժամանակի ազդանշան:

**time-study** [ˈtaim,stʌdi] n ժամանակաչափում:

**time-table** [ˈtaɪm,teɪbl] n ժամանակացույց, ժամատախտակ, չվացուցակ:  
**time-work** [ˈtaɪmwɜ:k] n ժամավճար աշխատանք:  
**time-worn** [ˈtaɪmwɔ:n] a մաշված, հնացած, խարխուլված. քայքայված, փտած:  
**timid** [ˈtɪmɪd] a երկչոտ, ամաչկոտ:  
**timidity** [tɪˈmɪdətɪ] n երկչոտություն, ամաչկոտություն:  
**timing** [ˈtaɪmɪŋ] n ժամանակի ընտրություն/հաշվում/կարգավորում. ժամանակաչափում ~ of the elections ընտրությունների ժամանակի ճիշտ կողմնորոշում. a good sense of ~ ճիշտ ժամանակը ընտրելու զգացողություն/ունակություն:  
**tin** [tɪn] n անագ, արծիճ. ~ soldier անագե զինվոր. (պահածո) a sardine ~ սարդինի պահածոյի տուփ. a ~ of condensed milk մի տուփ խտացրած կաթ. a ~ of corned beef տավարի մսի պահածո. a baking ~ թխելու սինի/թավա. ~ opener պահածոյի բացիչ ~ ware թիթեյա իրեր, անագե ամանեղեն:  
**tin** [tɪn] v անագով պատել. պահածոյացնել, պահածո դնել:  
**tincture** [ˈtɪŋktʃə] 1. n թուրմ. (զույնի) նրբերանգ. կողմնակի համ. 2. v ներկել, երանգ տալ. տոգորել. հագեցնել:  
**tinder** [ˈtɪndə] n արեթ, պատրույգ:  
**tindery** [ˈtɪndəri] a դյուրավառ. *փ/սք.* դյուրազրգիռ, դյուրաբորբոք:  
**tin foil** [ˈtɪnfɔɪl] n փայլաթիթեղ:  
**ting** [tɪŋ] n զանգակի ձայն, զնգոց:  
**tinge** [tɪndʒ] n երանգավորում, երանգ, նրբերանգ:  
**tinged** [tɪndʒd] a երանգավորված. The sky was ~ with red երկինքը կարմրավուն երանգավորում ուներ. the voice ~ with envy նախանձի երանգ ունեցող ձայն:  
**tingle** [ˈtɪŋɡl] n ականջների զնգոց:  
**tingle** [ˈtɪŋɡl] v ականջներում զնգոց/ծակծրկոց զգալ (թմրածություն). The reply ~d in her ears Պատասխանը դեռ հնչում էր նրա ականջներում:  
**tinker** [ˈtɪŋkə] n պղնձագործ. վատ արված աշխատանք:  
**tinker** [ˈtɪŋkə] v զոդել, կպցնել. մի կերպ սարքել/նորոգել. ~ with մի բանի վրա երկար չարչարվել. He is ~ing with the car Նա մեքենայի վրա է չարչարվում:

**tinkle** [ˈtɪŋkl] n զնգոց, զնգզնգոց. I'll give you a ~ tomorrow *խսկց.* Ես քեզ վաղը կգանգահարեմ:  
**tinkle** [ˈtɪŋkl] v զնգալ, զրնգալ. ~ the bell զանգը զրնգացնել. The doorbell ~d Դռան զանգը զնգզնգաց:  
**tinkler** [ˈtɪŋklə] n զանգակ:  
**tinman** [ˈtɪnmən] n թիթեղագործ:  
**tinned** [tɪnd] a անագապատ. պահածոյացրած, պահածո:  
**tin-plate** [ˈtɪnpleɪt] n, a թիթեղ. թիթեղի, թիթեղյա:  
**tinsel** [ˈtɪnsəl] 1. n փայլփլոց, փայլագարդ. տոնածառի զարդարանքներ. 2. a կեղծ, խաբուսիկ, ցուցական. 3. v պսպղուն բաներով զարդարել. փայլագարդել:  
**tinsmith** [ˈtɪnsmɪθ] n թիթեղագործ:  
**tint** [tɪnt] n գույն, երանգ, նրբերանգ. the autumn ~s աշնանային երանգներ:  
**tint** [tɪnt] v գույն տալ, գունավորել. թեթևակի ներկել. She ~ed her hair red Նա մազերին կարմրավուն երանգ տվեց:  
**tintack** [ˈtɪntæk] n կարճ մեխ:  
**tin-ware** [ˈtɪnweə] n թիթեյա իրեր. անագե ամանեղեն:  
**tiny** [ˈtaɪni] a շատ փոքր, մանրիկ, պստիկ:  
**tip** I [tɪp] 1. n ծայր, գագաթ. ~ of the iceberg սառցալեռան կատարը. from ~ to toe ոտքից գլուխ. on the ~ of the tongue լեզվի ծայրին. on the ~ of one's toes ոտքի մատների վրա the finger ~s մատների ծայրեր. 2. v ծայրապանակ հագցնել/դնել. կատարները կտրել (*ճակ` ծառերի*). (մազերը) կտրել:  
**tip** II [tɪp] n աղբանոց, աղբահոր:  
**tip** III [tɪp] 1. n թեյամվեր, թեյադրամ. մանր դրամական նվեր. մասնավոր/զաղտնի տեղեկություն. ~s included ներառյալ թեյադրամը. (ակնարկ, խորհուրդ) Take my ~ Յետևեք իմ խորհրդին. 2. v թեյամվեր/թեյափող տալ. մասնավոր/զաղտնի տեղեկացնել. ~ off ակնարկել, նախազգուշացնել:  
**tip** [tɪp] n թեթև հարված, հպում. թեքություն, թեք մակարդակ:  
**tip** [tɪp] v թեթևակի հարվածել, դիպչել. շուռ տալ, թափել, դատարկել. He ~ped the contents on the table Նա պարունակությունը թափեց սեղանին. ~ back հետ թեքել (ճոճելով). ~ the chair back աթոռը հետ թեքել. ~ off ակնարկել, նախազգուշացնել. The police

was ~ped off Ոստիկանությունը նախազգուշացվել էր:

**tip-cart** ['tipkɑ:t] n շրջվող ձեռնասայլակ:

**tip-off** ['tipɒf] n ակնարկ, նախազգուշացում:

**tip-over** ['tipəʊvə] a շրջվող:

**tippet** ['tipit] n թիկնոց. fir/velvet ~ մորթե/թավշե կանացի թիկնոց:

**tipple** ['tipɪ] 1. n *խսկ*. ոգելից խմիչք, ըմպելիք. 2. v *խսկ*. խմել, կոնծել:

**tippler** ['tiplə] n *խսկ*. հարբեցող, գինեմուլ:

**tipsy** ['tipsi] a *խսկ*. հարբած, խմած:

**tiptoe** ['tiptəʊ] 1. n ոտքի մատների ծայրը. on ~ ոտքի մատների վրա. *փխբ*. ծածուկ, գաղտնի. go/stand/steal on ~ ոտքի մատների վրա քայլել/կանգնել/գաղտագողի ներս մտնել. come in on ~ մատների ծայրերի վրա ներս մտնել. 2. v մատների ծայրերի վրա ման գալ. գաղտագողի անցնել. գողունի/ծածուկ մտնել:

**tiptop** [,tip'tɒp] n *խսկ*. գերազանց, հիանալի, առաջնակարգ:

**tip up** ['tipʌp] a ~ lorry ինքնաթափ ավտոմեքենա. ~ seats հետ ծալովի աթոռներ:

**tirade** [tai'reid] n երկարաշունչ ճառ/խոսք. տիրադ:

**tire** ['taɪə] n դող, անվաղող. flat ~ օդը դուրս թողած անվաղող:

**tire** ['taɪə] v հոգնել, հոգնեցնել. ձանձրացնել, զգվեցնել. Travelling ~s ճամփորդելը հոգնեցնում է/հոգնեցուցիչ է. I never ~ of the theatre Ես երբեք թատրոնից չեմ ձանձրանում. be ~d of ձանձրանալ, զգվել:

**tired** ['taɪəd] a հոգնած. ~ out ուժասպառ, հյուսված. ~ of waiting սպասելուց ձանձրանալ. be sick and ~ ձանձրացած/զգված լինել:

**tireless** ['taɪələs] a անխոնջ:

**tiresome** ['taɪəsəm] a հոգնեցուցիչ, ձանձրացնող. He can be very ~ Նա կարող է շատ ձանձրացուցիչ/հոգնեցուցիչ լինել:

**tiring-house** ['taɪrɪŋhaʊs], **tiring – room** ['taɪrɪŋru:m] n *թատր*. զգեստարան. դերասանի հագնվելու սենյակ:

**tissue** ['ti:ʒu:] n հյուսվածք. *փխբ*. միահյուսվածք. conjunctive/connective ~ շարակցական հյուսվածք. ~ paper բարակ/նուրբ թուղթ. ծխախոտաթուղթ. թղթե անձեռոցիկ. a ~ of lies ստերի ցանց:

**tit I** [tit] n *կենդ*. երաշտահավ:

**tit II** [tit] n. ~ for tat ակն ընդ ական, ատամն ընդ ատամն:

**titanic** [tai'tænik] a հսկայական, վիթխարի: **titbit** ['titbit] n համեղ պատառ. հետաքրքրական/զայթակղիչ նորություն:

**titillate** ['titileit] v խուտուտ անել/տալ. *փխբ*. հաճելի զրգիռ տալ:

**titlark** ['titlɑ:k] n *կենդ*. մարգարտույտ:

**title** ['taɪtl] n վերնագիր, խորագիր, անուն. տիտղոս, կոչում. have/be given a ~ կոչում ունենալ/ստանալ. the ~ of professor պրոֆեսորի կոչում. the ~ of duke հերցոգի տիտղոս. succeed the ~ տիտղոսը ժառանգել. ~ of honour պատվավոր կոչում. ~ page տիտղոսաթերթ. ~ role անվանադեր. *իրավ*. սեփականության իրավունք. assignment of ~ սեփականության իրավունքի փոխանցում. ~ holder սեփականատեր. *մրգ*. չեմպիոն, մրցահաղթող:

**titled** ['taɪtlɪd] a տիտղոսավոր, տիտղոս ունեցող:

**titmice** ['titmaɪs] n pl երաշտահավեր:

**titmouse** ['titmaʊs] n երաշտահավ:

**titter** ['tɪtə] n քմծիծաղ:

**tittle** ['tɪtl] n ամենափոքր մասնիկ. հատիկ. փշուր. not a ~ մազաչափ անգամ. ամենեվին, ոչ մի կաթիլ. to a ~ իսկ և իսկ. ճիշտ և ճիշտ:

**tittle-tattle** ['tɪtl,tætɪl] 1. n շաղակրատանք, ասեկոսե. բամբասանք. 2. v շաղակրատել, բամբասել:

**titup** ['tɪtʌp] n ուրախություն, կայտառություն. մանրաքայլ, շորորուն քայլվածք:

**titubate** [,tɪtʃʊb'eɪt] v կակազել:

**titular** ['tɪtʃʊlə] a անվանական, սոսկ անունով. տիտղոսակիր:

**to** [tu:, tə] prep (շարժում դեպի). go ~ school/the theatre/the door /London դպրոց/թատրոն/դեպի դուռը/Lոնդոն գնալ. (անուղղակի խնդիր) give/bring/send/write ~ smn մեկին տալ/բերել/ուղարկել/զրել. (ժամանակ) a quarter ~ ten տասին քառորդ պակաս. ~ this day մինչև այսօր. from 6 ~ 9 ժամի վեցից ինը. (համեմատություն) prefer music ~ dancing երաժշտությունը պարից գերադասել. ten chances ~ one տասը շանս մեկի դիմաց. (արդյունք) ~ my sorrow/surprise ի ցավ, դառնություն/զարմանք ինձ. He didn't expect ~

see her Չէր սպասում նրան տեսնել. (նպատակ) He did it ~ help me Նա դա արեց ինձ օգնելու համար. (from—to) from east ~ west արևելքից արևմուտք. It doesn't matter ~ me ինձ համար նշանակություն չունի. be kind/cruel/attentive ~ smb լինել բարի/դաժան/ուշադիր մեկի նկատմամբ. a monument ~ smb հուշարձան մեկին. That's all ~ it Ահա բոլորը այդ մասին. (մինչև) He saw her ~ the door Մինչև դուռը ճանապարհեց. ~ the contrary հակառակ. ~ and from հետ ու առաջ. ~ the knowledge of ի գիտություն. ~ this effect այս նպատակով/իմաստով. ~ the amount of գումարով. ~ the end of May մինչև մայիսի վերջը:

**toad** [təʊd] n կեճնդ. դողոշ. *փխբ.* գարշելի արարած:

**toad-eater** [ˈtəʊdi:tə] n ստորաքարշ/քծնող մարդ:

**toadstool** [ˈtəʊdstu:l] n թունավոր սունկ:

**toady** [ˈtəʊdi] n *խսկց.* ստորաքարշ/քծնող մարդ:

**toast** [təʊst] 1. n բոված/կարմրացրած հացի շերտ. կենաց, բաժակաճառ. propose a ~ կենաց առաջարկել. a ~ for our guests մեր հյուրերի կենացը. 2. v հացը կարմրացնել. կենաց խմել:

**toaster** [ˈtəʊstə] n էլ. սարք հացը կարմրացնելու համար, տոստեր:

**toast-master** [ˈtəʊst,mɑ:stə] n թամադա:

**tobacco** [təˈbækəʊ] ծխախոտ, ծխախոտաբույս. ~ box n ծխախոտաման. ~ pouch ծխախոտի քսակ. ~ pipe ծխամորճ:

**tobacconist** [təˈbækənɪst] n ծխախոտավաճառ. ~'s ծխախոտի կրպակ:

**toboggan** [təˈbɒɡən] 1. n ձեռնասահնակ, սահնակ. 2. v սահնակով սղդալ:

**toby I** [ˈtəʊbi] n կողոպուտ մեծ ճանապարհի վրա:

**toby II** [ˈtəʊbi] n (եռանկյունաձև գլխարկով) գարեջրի գավաթ:

**toxin** [ˈtɒksɪn] n ահազանգ, տազնապազանգ:

**today, to-day** [təˈdeɪ] adv այսօր. մեր օրերում, հիմա. ~'s newspaper այսօրվա թերթը/լրագիրը. a week ~ մի շաբաթ հետո (այսօրը). from ~ սկսած այսօրվանից. a year ago ~ ուղիղ մի տարի առաջ. of ~ ժամանակակից. composers of ~ ժամանակակից երաժիշտները:

**toddle** [ˈtɒdl] v ոտքերը քարշ տալով քայլել. տոտիկ-տոտիկ անել. We must ~ *խսկց., կտկ.* Մեր գնալու ժամանակն է:

**toddy** [ˈtɒdi] n ջերմուղի, արմավօղի. փունջ. պունջ:

**to-do** [təˈdu:] n *խսկց.* իրարանցում, խառնաշփոթություն. make a great ~ մեծ սկանդալ սարքել:

**toe** [təʊ] n *կզմխ.* ոտքի մատ. great ~ ոտքի բթամատ. little ~ ոտքի ճկույթ. ~ nail ոտքի մատերի եղունգ. from top to ~ ոտքից գլուխ. tread on smb's ~'s *փխբ.* ամենացավոտ տեղին դիպչել, վիրավորել. turn one's ~'s out/in ոտնաթաթերի ծայրերը ներս/դուրս շրջել. keep everybody on their ~'s *փխբ.* բոլորին լիովին հնազանդեցնել:

**toe-cap** [ˈtəʊkæp] n կոշկաքիթ:

**toff** [tɒf] n բարեկիրք մարդ, ջենտլմեն. the ~'s *փխբ.* հասարակության սերուցքը:

**toffee, toffy** [ˈtɒfi] n իրիս (կոնֆետ). մածուցիկ կոնֆետ, ձգանուշ:

**toga** [ˈtəʊgə] n պարեզոտ, պատմուճան, տոգա (հին հռոմեացիների վերնազգեստ):

**together** [təˈɡeðə] adv միասին (*նաև* ~ with) միմիանց/իրար հետ. (անընդհատ) for hours ~ ժամերով/մի քանի ժամ անընդհատ. ~ with դրա հետ միասին, միաժամանակ:

**toggle** [ˈtɒɡl] v *հմկրգ.* փոխանջատել:

**toil** [tɔɪl] 1. v աշխատել, ծանր աշխատանք կատարել. 2. n ծանր/չարքաշ աշխատանք. ~ up the hill դժվարությամբ սարը բարձրանալ:

**toiler** [ˈtɔɪlə] n աշխատավոր, բանվոր (սևագործ):

**toilet** [ˈtɔɪlət] n զգեստ, հագուստ. արդու-գարդ, արդուզարդի պարագաներ. զարդասեղան. (զուգարան) ~ paper զուգարանի թուղթ. ~ soap ձեռքի օճառ:

**toilless** [ˈtɔɪləs] a հեշտ, չհոգնեցնող:

**toils** [tɔɪlz] n թակարդ, որոգայթ, ծուղակ. (*նաև* ~ *փխբ.*) taken/caught in the ~ թակարդի/ցանցի մեջ ընկած. *փխբ.* կախարդված, հմայված:

**toilsome** [ˈtɔɪlsəm] a ծանր, դժվար, հոգնեցուցիչ:

**token** [ˈtəʊkən] n նշան, խորհրդանիշ. նվեր. as a ~ ի նշան, ի հիշատակ. in a ~ of նույնը. by the same ~ *փխբ.* այսպիսով, ուրեմն. a ~ payment սիմվոլիկ վճար. put up a ~ resistance

դիմադրության տպավորություն/պատրանք ստեղծել. *հմկրգ.* լեքսեմա (բառույթ). ~ *passing* մարկերի փոխանցումը (ցանցում):

**tolerable** [ˈtɒlərəbəl] a տանելի, հանդուրժելի. կարգին, զոհացուցիչ. The food here is quite ~ Սնունդն այստեղ բավական տանելի է:

**tolerance** [ˈtɒlərəns] n հանդուրժողականություն. համբերություն, համբերատարություն. *mutual* ~ փոխադարձ հանդուրժողականություն:

**tolerant** [ˈtɒlərənt] a համբերատար, հանդուրժող. ~ *society* հանդուրժող հասարակություն:

**tolerate** [ˈtɒləreɪt] v համբերել, հանդուրժել, դիմանալ. I won't ~ that/that man **ես դա/այդ մարդուն չեմ հանդուրժի:**

**toleration** [ˌtɒləˈreɪʃn] n հանդուրժողականություն, հանդուրժելիություն:

**toll** [tɔl] n տուրք, գանձում (ճանապարհի). ~ *call* միջազգային հեռախոսային խոսակցություն. ~ *free* անմաքս, անվճար. ~ *collector* վճար գանձող:

**toll** [tɔl] v ժամկոչել, զանգահարել (եկեղեցու զանգերը). *հուղարկավորության զանգերը տալ.* The bell ~ed **Ջանգը հնչեց.** death ~ *իհր.* մահացության դեպքերը:

**tollable** [ˈtɔləbəl] a հարկելի, հարկվող. տուրքադրվող:

**tollage** [ˈtɔləɪdʒ] n տուրքի գանձում/վճարում:

**toll-bar** [ˈtɔləbɑː] n (*նաև* ~ *gate*) տուրք գանձելու ուղեփակոց:

**toll-bridge** [ˈtɔləbrɪdʒ] n վճարովի կամուրջ. ուղետուրք գանձելու կամուրջ:

**toll-house** [ˈtɔləhaʊs] n ուղետուրքի գանձման գրասենյակ:

**Tom** [tɒm] n ~ *thumb* պստիկ, ճստիկ, մատնաչափիկ. every ~, Dick and Harry **ամեն ոք, ամեն հանդիպած մարդ:**

**tomahawk** [ˈtɒməhɔːk] n տոմահավկ (*ամ.* հնդկացիների մարտական տապար):

**tomato** [təˈmɑːtəʊ] n լոլիկ, պոմիդոր. ~ *juice/sauce* լոլիկի հյութ. տոմատի սոուս/ կեչուպ:

**tomb** [tuːm] n գերեզման, շիրիմ. գերեզմանաքար, տապանաքար:

**tomboy** [ˈtɒmbɔɪ] n տղայի շարժումն ունեցող, չարածճի աղջիկ:

**tombstone** [ˈtuːmstəʊn] n գերեզմանաքար, շիրմաքար:

**tom-cat** [ˈtɒmkæt] n ործ կատու:

**tome** [təʊm] n հատոր, մեծածավալ գիրք:

**tomfool** [ˌtɒmˈfuːl] n հիմար, տխմար ապուշ. խեղկատակ, ծաղրածու:

**tomfoolery** [tɒmˈfuːləri] n խեղկատակություն, ծաղրածություն, հիմարություն:

**Tommy, tommy** [ˈtɒmi] n թոմի, անգլիական զինվորի մականուն:

**tommy gun** [ˈtɒmɪɡʌn] n *ռզմ.* ավտոմատ հրացան:

**tomorrow, to-morrow** [təˈmɒrəʊ] *adv* վաղը, վաղվա օրը. ~ *morning* վաղը առավոտյան. a week ~ *ուր օր* հետո. see you ~ *մինչև վաղը.* the day after ~ *վաղը չէ մյուս օրը:*

**tomtit** [ˈtɒmtɪt] n *կենդ.* երաշտահավ:

**tomtom** [ˈtɒmtɒm] n տամտամ (թմբուկ). կոչնագանգ, գոնգ:

**ton** [tʌn] n տոննա. ~s of time *խսկց.* ահագին ժամանակ. ~s of people *խսկց.* մեծ բազմություն:

**tonality** [təʊˈnæləti] n *երժշ.* տոնայնություն:

**tone** [təʊn] n տոն, ծայնաստիճան, ծայն. *soft/loud/clear* ~ *ցածր/մաքուր/բարձր ծայն.* *deep/low* ~ *ցածր տոն.* *high/thin* ~ *բարձր տոն.* *heart* ~s *բժշկ.* սրտի տոներ. (երանգ) ~s of green *կանաչի երանգները.* The violin has a beautiful ~ **Ջութակը գեղեցիկ հնչերանգ/տեմբր ունի.** ~ *control* (ռադիո) *հնչերանգի կարգավորիչ:*

**tone** [təʊn] v երանգավորում տալ. տոնը/գույնը փոխել. (մեղմանալ, թուլանալ) ~ *down* *մեղմացնել.* ~ *up* *ուժեղացնել.* ~ *in* with *ներդաշնակել, համապատասխանել:*

**tonedead** [ˌtəʊnˈdeɪd] a երաժշտական լսողություն չունեցող:

**toneless** [ˈtəʊnləs] a անարտահայտիչ, անկենդան:

**tone poem** [ˈtəʊnpəʊɪm] n *երժշ.* սիմֆոնիկ պոեմ:

**tongs** [tɒŋz] n ունելի, աքցան:

**tongue** [tʌŋ] n լեզու. *swollen/coated* ~ *ուռած/փառակալած լեզու.* have a ready ~ *խոսքի տակ չմնալ.* hold one's ~ *լռել, լեզուն իրեն քաշել.* put out one's ~ *լեզուն դուրս հանել.* click one's ~ *լեզվով չապացնել.* on the tip of one's ~ *լեզվի ծայրին.* loosen one's ~ *լեզվին ազատություն տալ.* His ~ *failed* him **Լեզուն կապ ընկավ, Լեզուն պապանձվել էր.** wag



one's ~ շաղակրատել. mother ~ *փխբ*. մայրենի լեզու. evil ~ չար լեզու. (լեզվակ) ~s of flame բոցի լեզվակներ. the ~ of land *աշխրգ*. ցամաքալեզվակ:

**tongueless** [ˈtʌŋləs] a անլեզու, խոսելու անընդունակ:

**tongue-tied** [ˈtʌŋtaɪd] a լեզուն կապ ընկած. խոսելու անընդունակ:

**tongue-twister** [ˈtʌŋ,twɪstə] n շուտասեր լուկ:

**tonic** [ˈtɒnɪk] a *երժշ.* տոնիկ, տոնիկական. *բժշկ.* տոնուսը բարձրացնող, կազդուրիչ:

**tonic** [ˈtɒnɪk] *երժշ.* հիմնական տոն. տոնայնություն. He is a real ~ Նա ինձ վրա քաջալերիչ/խրախուսիչ ազդեցություն է թողնում:

**tonight, to-night** [təˈnaɪt] adv այս երեկո:

**tonnage** [ˈtɒnɪdʒ] n նավատարողություն. տարողությունը տոննաներով, տոննած:

**tonometer** [təʊˈnɒmɪtə] n *երժշ.* կամերտոն. *բժշկ.* տոնոմետր (ճնշումը չափելու գործիք):

**tonsil** [ˈtɒnsɪl] n նշագեղձ:

**tonsillitis** [ˌtɒnsəˈlaɪtɪs] n *բժշկ.* նշկաբորբ, տոնզիլիտ:

**tonsure** [ˈtɒnʃə] n տոնզուրա, կաթուղիկ հոգևորականի գլխի գազաթի բոլորական ածիլված տեղը:

**tony** [ˈtəʊni] a *ամ., խսկց.* ընտիր, արիստոկրատական:

**toot** [tu:] adv չափազանց, չափից ավելի ~ fast/heavy/kind չափազանց արագ/ծանր/բարի. ~ good to be true անհավատալի է. none ~ pleasant ոչ շատ/այնքան հաճելի. Tell your sister ~ Ձեր քրոջը նույնպես ասեք. (ավելին) The products are good and cheaper ~ Այս ապրանքները լավն են, ավելին՝ նրանք նաև ավելի էժան են:

**tool** [tu:] n գործիք (*նաև՝ փխբ.*). միջոց. work ~ աշխատանքի միջոց/գործիք. machine ~ հաստոց. ~ box գործիքների արկղ. ~ kit գործիքների հավաքակազմ. a ~ in smb's hands *փխբ.* գործիք մեկի ձեռքին. play with edged ~s *փխբ.* դանակի հետ խաղալ, վտանգավոր բան անել. Language is a ~ for communication Լեզուն հաղորդակցման գործիք/միջոց է. *հմկրգ.* ~ bar գործիքաշերտ:

**toot** [tu:t] 1. n շեփորի/շչակի ձայն. (ավտոմեքենայի) ձայնային ազդանշան. 2. v փողահարել, ձայնային ազդանշան տալ. He

~ed (his horn) (մեքենան) Ազդանշանեց:

**tooth** [tu:θ] n ատամ. *տեխ.* ատամ, ատամիկ. milk teeth կաթնատամներ. second teeth հիմնական ատամներ. false teeth արհեստական ատամներ. wisdom teeth իմաստության ատամներ. a loose ~ շարժվող ատամ. have a ~ out/pulled ատամը հեռացնել տալ. grit/clench one's teeth ատամները կրճտացնել/սեղմել. crown a ~ ատամին շապիկ հագցնել. have a ~ filled ատամը լցնել/պլումբել. cut a ~ ատամ հանել. show one's teeth *փխբ.* ատամները ցույց տալ, սպառնալ. have a sweet ~ քաղցրեղեն սիրել. armed to the teeth *փխբ.* մինչև ատամները զինված. in the teeth of հակառակ, ընդդեմ. in the teeth of the wind քամուն հակառակ. ~ ache ատամի ցավ, ատամնացավ. ~ brush ատամի խոզանակ. ~ paste ատամի մածուկ. ~ pick ատամնափորիչ, ատամնաքչփորիկ. ~ powder ատամի փոշի:

**tooth-comb** [ˈtu:θkəʊm] n մանրասանր, խիտ սանր:

**toothed** [tu:θt] a ատամնավոր:

**toothless** [ˈtu:θləs] a անատամ:

**toothsome** [ˈtu:θsəm] a համեղ, համով, հաճելի:

**tootle** [ˈtu:tɪl] v, n փողհարել, սրնգափող/Ֆլեյտա նվագել. փողի/շեփորի/սրնգի ձայն:

**top** I [tɒp] n գագաթ, կատար. the ~ of the head գլխի գագաթ. from ~ to toe ոտքից գլուխ. snow covered ~ ծյունածածկ գագաթ. (վերին մաս) the ~s of the tree/vegetables տերևուք. փրեր. go on ~ վերև գնալ. from ~ to bottom վերից վար. the ~ of the page էջի սկիզբը/վերևը. at the ~ of the list/table ցուցակի սկզբում, սեղանի գլխին. (ամենաբարձր) be at the ~ of the form դասարանում առաջին աշակերտը լինել. at the ~ of one's voice ամբողջ ձայնով. on ~ of the cupboard պահարանի գլխին. (կափարիչ) ~ of pen/car գրիչի գլխադիր, մեքենայի թափք. table ~ սեղանի կափարիչ. (հագուստի վերին մասը) a skirt with ~ փեշ վերնահագուստով (վերնաշապիկ, բլուզ). reach the ~ of one's profession մասնագիտական վարպետության գագաթնակետին հասնել. on ~ of all that ի լրումն ամենի. talk off the ~ of one's head խոսել առանց գրառումների/հիշողությամբ. feel on ~ of the world *խսկց.* երջանկության գագաթ-

նակետին լինել. The work is getting on ~ of me (him, her...) Աշխատանքը իմ (նրա...) նյարդերի վրա է ազդում. ~ of form էջի սկիզբ. ~ of stack ստեկի գագաթ. ~ of stack pointer ստեկի գագաթի ցուցիչ:

**top II** [tɒp] n հոլ (խաղալիք):

**top** [tɒp] a վերին, վերևի, առավելագույն. ~ storey/notes վերին հարկ, վերևի նոտաներ. ~ level conference/talks բարձր մակարդակի համաժողով, բարձր մակարդակով բանակցություններ. ~ grade *փխբ.* բարձրագույն տեսակ. the ~ men *խսկց.* վերնախավը. ~ ten առաջին տասնյակ. ~ footballers լավագույն ֆուտբոլիստները. ~ player բարձր վարկանիշով խաղացող. ~ marks գերազանց գնահատականներ. ~ speed առավելագույն արագություն. ~ hat *ցիլինդր.* *հմկրգ.* վեր, վերև. ~ -down design վերից վար նախագծում/ դիզայն. ~ -down development վերից վար մշակում. ~ -down parsing վերից վար վերլուծություն. ~ -level goal ամենավերջին մակարդակի նպատակ. ~ -level specification ամենավերջին մակարդակի սպեցիֆիկացիա:

**top** [tɒp] v ծածկել (վերևից). վեր բարձրանալ/խոյանալ. ~ with snow ձյունով ծածկել. (կտրել կատարները) ~ bushes (*նաև* ~ and tail) թփերի կատարները կտրել. (գլխավորել) The team ~ped the league թիմը գլխավորում էր աղյուսակը. ~ the bill *թատր.*, *խսկց.* ծրագրի մեխը լինել, ամենահաջող համարը լինել. ~ up բաժակը լցնել, լիքը լցնել. ~ up with petrol մեքենան բեռնազինով լիցքավորել:

**topaz** [ˈtɒpæz] n տպազիոն (կիսաթանկարժեք քար):

**top-boots** [ˈtɒpbuːts] n երկարաճիտ կոշիկներ:

**top-coat** [ˈtɒpkəʊt] n վերարկու:

**top-dog** [ˈtɒpdɒg] n հաղթող, հաղթանակած կողմը:

**top-dress** [ˈtɒpdres] v *գղտ.* պարարտանյութով ծածկել:

**tope** [təʊp] n հարբեցողություն, զինեմոլություն:

**tope** [təʊp] v հարբեցողություն անել, զինեմոլությամբ զբաղվել:

**toper** [ˈtəʊpə] n զինեմոլ, հարբեցող:

**topfull** [ˈtɒpfʊl] a լեփ-լեցուն, ծայրե/ծայր/մինչև վերջ լիքը:

**top-heavy** [ˈtɒpˈhevi] a անկայուն, երերուն:

**top-hole** [ˈtɒpˈhəʊl] a *խսկց.* առաջնակարգ:

**topi** [ˈtəʊpi] n արևապաշտպան, սաղավարտածև գլխարկ:

**topic** [ˈtɒpɪk] n թեմա, նյութ. քննարկման առարկա:

**topical** [ˈtɒpɪkəl] a հրատապ, ակտուալ. արդիական, կենսական:

**top-knot** [ˈtɒpknɒt] n մազափունջ, փետրափունջ: ~ level a բարձր մակարդակի. ~ negotiations բարձր մակարդակի բանակցություններ:

**top-liner** [ˈtɒpˈlaɪnə] n ականավոր/հանրաճանաչ դերասան:

**toplofty** [ˈtɒpˈlɒfti] a *խսկց.* փքված, գոռոզ:

**topmast** [ˈtɒpmɑːst] n *ծով.* կայմածող, վերնակայմ:

**topmost** [ˈtɒpməʊst] a ամենաբարձր, կարևորագույն:

**topography** [təˈpɒɡrəfi] n տեղագրություն:

**topper** [ˈtɒpə] n *խսկց.* հրաշալի մարդ/բան. *ցիլինդր.*

**topping** [ˈtɒpiŋ] 1. n վերին մաս, գլուխ, գագաթ. 2. a գերազանցող. նշանավոր, ականավոր. մեծամիտ, գոռոզ:

**topple** [ˈtɒpl] v գլխավայր ընկնել. շուռ գալ. շրջվել, մեջքի վրա ընկնել:

**top ranking** [ˈtɒpræŋkiŋ] a բարձրագույն կարգի ~ officer բարձրագույն կարգի/աստիճանի սպա:

**topsail** [ˈtɒpsl] n *ծով.* մարսել (առագաստի մի տեսակ):

**top secret** [ˈtɒpsiːkrət] a խիստ գաղտնի. ~ papers խիստ գաղտնի փաստաթղթեր:

**topsyturvy** [ˈtɒpsiˈtəːvi] 1. a գլխավայր շրջված. *փխբ.* խառնաշփոթ, քառսային. 2. adv տակնուվրա, թարս ու շիտակ:

**tor** [tɔː] n ապառաժոտ գագաթ:

**torch** [tɔːtʃ] n լապտեր, ջահ, կերոն. electric ~ գրպանի էլեկտրական լապտեր. տեխ. գոդալամպ. ~ light ջահի/կերոնի լույս. գրպանի լապտեր:

**toreador** [ˈtɒriədɔː] n ցլամարտիկ, տորեադոր:

**torment** [ˈtɔːmənt] n չարչարանք, տառապանք, տանջանք. be in ~ տառապել, տանջվել.

**torment** [ˈtɔːmənt] v տանջել, չարչարել. ~ with questions *փխբ.* հարցերի տարափ տեղալ, հարցերով տանջահար անել. be ~ed by

doubts *փխբ.* կասկածներից տանջվել:  
**tormentor** [tɔ:'mentə] n տանջող, չարչարող, անհանգստացնող:  
**tornado** [tɔ:'neɪdəu] n ուժեղ փոթորիկ, սաստիկ մրրիկ. պտտահողմ:  
**torpedo** [tɔ:'pi:dəu] n ստորջրյա ինքնաշարժ/ական, տորպեդ. ~ boat/plane ականակիր նավ/ինքնաթիռ. ~ net հակաականային ցանց:  
**torpid** ['tɔ:pid] a ընդարմացած, անզգայացած. անտարբեր, անգործունյա:  
**torpor** ['tɔ:pə] n ընդդիմացում, անզգայություն, թմրածություն:  
**torrent** ['tɔ:rənt] n հեղեղ, տարափ (*նակ փխբ.*) The rain came down in ~s Անձրևի հեղեղ էր տեղում. a ~ of abuse հայիոյանքների տարափ:  
**torrential** [tə'renʃl] a ~ rain տեղատարափ անձրև:  
**torrid** ['tɔ:rid] a շոգ, տոթ, կիզիչ. կիզված, այրված, չորացած:  
**torsion** ['tɔ:ʃn] n ոլորում, գլորում. պտտում:  
**torso** ['tɔ:səu] n իրան. *արվ.* մարմնաքանդակ, իրանաքանդակ:  
**tort** [tɔ:t] n *իրավ.* քաղաքացիական իրավախախտում. property ~ գույքային իրավախախտում. law of ~ քաղաքացիական իրավախախտումների օրենսդրություն:  
**tortoise** ['tɔ:təʊs] n, a կրիա, կրիայի:  
**tortoise-shell** ['tɔ:təʊsʃel] n կրիայի վահանակ:  
**tortuous** ['tɔ:tʃuəs] a ոլոր-մոլոր, օձապտույտ, ոլորապտույտ. *փխբ.* խճճված. մանվածապատ:  
**torture** ['tɔ:tʃə] n տանջանք, տանջաքննություն. խոշտանգում. ~ chambre խոշտանգումների խուց. It was ~ ! *փխբ., խսկց.* Դա պարզապես տանջանք էր:  
**torture** ['tɔ:tʃə] v տանջել, չարչարել. խոշտանգել. տանջելով հարցաքննել. be ~d by doubts կասկածներով իրեն տանջել:  
**torturer** ['tɔ:tʃərə] n տանջող, չարչարող. խոշտանգիչ. դահիճ:  
**Tory** ['tɔ:ri] n թորի կուսակցության անդամ. պահպանողական, կոնսերվատոր. high ~ ծայրահեղ պահպանողական:  
**tosh** [tɒʃ] n դատարկ/հիմար բան:  
**toss** [tɒs] 1.v գցել, նետել, շպրտել. ~ the hat գլխարկը վեր նետել. ~ one's hair back մազե-

րը հետ գցել. ~ off a whisky վիսկի խմել, գլուխը քաշել. (տարուբերվել) The boat was ~ing on the waves Նավակը տարուբերվում էր/ճոճվում էր ալիքների վրա. (շուռ ու մուռ գալ) ~ in one's sleep (*նակ ~ and turn*) քնի մեջ շուռ ու մուռ գալ. 2. n նետում, գցում. He took a ~ (from horse) Ձին նրան ցած նետեց:  
**toss-pot** ['tɒspɒt] n հարբեցող, գինեմուլ:  
**toss-up** ['tɒsʌp] n դրամը նետելը. the ~ of the coin դրամը վեր նետելով վիճակ գցելը. It is a ~ Դա դեռ հարց է:  
**tossy** ['tɒsi] a հանդուգն:  
**tot** [tɒt] n մի քանի թվերի գումար, գումարում:  
**tot** [tɒt] v գումարել, միագումարել. ~ up the bill/one's expenses *խսկց.* հաշիվը կազմել, ծախսերը հաշվել. It ~s up to 500 drams Դա կազմում է 500 դրամ:  
**total** ['təʊtəl] a ամբողջ, բոլորը միասին վերցրած. ընդհանուր. լրիվ, լիակատար, բացարձակ. the ~ number ընդհանուր քանակը. a ~ stranger լրիվ անծանոթ. the ~ population բնակչության ընդհանուր թիվը. ~ success բացարձակ հաջողություն. in ~ agreement/ignorance լրիվ համաձայնեցված/անտեղյակ. ~ disability աշխատունակության լրիվ կորուստ. ~ disarmament համընդհանուր զինաթափում. ~ war համընդհանուր պատերազմ. a ~ eclipse *աստղգ.* լրիվ խավարում:  
**total** ['təʊtəl] n ամբողջը, գումար, հանրագումար. grand ~ հանրագումար. in ~ հանրագումարում. the sum ~ ընդհանուր գումարը:  
**totalitarian** [təʊ,tæli'teəriən] a ամբողջատիրական:  
**totality** [təʊ'tæləti] n ամբողջ գումարը/քանակը. գումարն ամբողջությամբ:  
**totalizator** ['təʊtəlaɪzətə] n գրագահաշվեցույց, տոտալիզատոր (ծիարշավների):  
**totally** ['təʊtəli] adv լրիվ, ամբողջովին. լիակատար կերպով. ~ destroyed ամբողջությամբ ոչնչացված. ~ blind/helpless լրիվ կույր/անօգնական:  
**totem** ['təʊtəm] n պաշտամունքի կենդանի/բույս, տոտեմ:  
**totter** ['tɒtə] v երերալ, օրորվելով քայլել (*հոկպ.* երեխաների մասին). ~ unsteadily օրորվելով/անկայուն քայլերով գնալ. The chimney ~ed Ծխնելույզը երերաց:

**tottering, tottery** [ˈtɒtəriŋ, ˈtɒtəri] a երե-  
րուն, անկայուն. խախտու. ~ gait անկայուն  
քայլվածք:

**touch** [tʌtʃ] n շոշափում. sense of ~ շոշա-  
փելիություն/շոշափումի զգացում. smooth to  
the ~ հարթ, փափուկ (շոշափելիս). recognize  
smth by ~ շոշափելով ճանաչելը/զգալը. (at  
the) slightest ~ ամենաթեթև հպումը. at the ~  
of a button կոճակը սեղմելով/սեղմելիս. have  
a heavy ~ ծանր ձեռք ունենալ. have a light ~  
երժշ. ձեռքի նուրբ շարժում ունենալ. *փխք.*  
(կապ, շփում) in ~ with կապի մեջ. keep in ~  
կապ պահպանել. gain ~ շփման մեջ մտնել.  
be out of ~ կապը կորցնել, շփումը ընդհատ-  
վել. put in ~ with կապ ստեղծել. I'll put you in  
~ with my doctor ես ձեզ կներկայացնեմ իմ  
բժշկին. get in ~ կապվել. (վրձնախաղ, վրձնի  
հարված) put the finishing ~ վերջին նրբա-  
զիծը անել, ավարտել. have a bold ~ վրձինը  
համարձակորեն օգտագործել. a ~ of a mas-  
ter վարպետի վրձին. (երանգ) a ~ of  
irony/envy/mock հեգնանքի/նախանձի/ ծաղ-  
րական երանգ. ~ of frost թեթև սառնամա-  
նիք. a ~ of flue թեթև գրիպ. *հմկրգ.* ~ panel  
սենսորային պանել. ~ screen սենսորային  
էկրան:

**touch** [tʌtʃ] v շոշափել, դիպել, ձեռք տալ.  
Don't ~ my papers Թղթերիս ձեռք մի տա. No-  
body will ~ you here Այստեղ քեզ ոչ ոք ձեռք  
չի տա. The fire didn't ~ the paintings Կրակը  
նկարներին չէր կպել. ~ a problem/theme  
հարց/թեմա շոշափել. "Please, don't ~" Ձեռք  
չտալ. (հասնել) He can ~ his toes Նա կարող  
է կպչել իր ոտնաձայրերին. The feet are ~ing  
the bottom Ոտքերը հասնում են մինչև  
հատակ. (հուզել, սիրտը շահել) be ~ed to  
tears լաց լինելու չափ հուզվել. be ~ed by  
smn's present/words/story նվերից/բառերից/  
պատմությունից հուզվել. Nobody can ~ him  
as a violinist Որպես ջութակահար նա անգե-  
րազանցելի է. ~ one's interest շահերը շոշա-  
փել. be ~ed *փխք.* թեթևակի խախտված  
լինել. ~ down վայրէջք կատարել. ~ at *ժով.*  
նավահանգիստ մտնել. ~ off առաջացնել. ~  
an explosion/crisis պայթյուն/ճգնաժամ առա-  
ջացնել. ~ on շոշափել. համառոտակի կանգ  
առնել. ~ wood աչքով չտալ:

**touchable** [ˈtʌtʃəbəl] a շոշափելի:

**touch-and-go** [ˌtʌtʃənˈɡəʊ] a վտանգավոր,

անորոշ. անապահով. ~ with the sick man  
վտանգավոր վիճակ հիվանդի համար:

**touched** [ˈtʌtʃt] a հուզված, զգացված:

**touching** [ˈtʌtʃɪŋ] a հուզիչ, սրտաշարժ.  
առնչվող:

**touch-me-not** [ˈtʌtʃmɪnɒt] n *բւք.* պատկա-  
ռուկ. *փխք.* խիստ դյուրագոց մարդ. ան-  
մատչելի/արգելված թեմա:

**touchstone** [ˈtʌtʃstəʊn] n փորձաքար. *փխք.*  
չափանիշ/փորձաքար:

**touchwood** [ˈtʌtʃwʊd] n արեթ:

**touchy** [ˈtʌtʃi] a չափազանց զգայուն, շուտ  
վիրավորվող. He is ~ about his weight Նա  
վիրավորվում է, երբ խոսում են իր քաշի  
մասին:

**tough** [tʌf] 1. a կարծր, կոշտ, պինդ. ~ policy  
խիստ քաղաքականություն. ~ measures դա-  
ժան միջոցներ. ~ man խիստ/դաժան մարդ.  
~ fight կատաղի պայքար. ~ problem բարդ  
պրոբլեմ. ~ material դիմացկուն նյութ/կտոր.  
~ conditions ծանր պայմաններ. be ~ on smn  
*խսկց.* տառապել. ~ luck անհաջողություն,  
բախտը չբերելը. 2. n խուլիգան:

**toughen** [ˈtʌfn] v կարծրանալ, կոշտանալ,  
ամրանալ:

**toughness** [ˈtʌfnɪs] n կոշտություն, կամա-  
կորություն. տոկունություն, դիմացկունու-  
թյուն:

**toupee** [ˈtuːpeɪ] n կեղծամ, փոքրիկ պարիկ:

**tour** [tuə] 1. n ճանապարհորդություն, ուղե-  
վորություն. շրջագայություն, ուղերթ. a  
coach ~ of London ավտոբուսով էքսկուրսիա  
Լոնդոնում. a walking ~ արշավ. sightseeing ~  
տեսարժան վայրերի դիտում. The theatre is  
on ~ Թատրոնը շրջագայության է գնացել.

2. v ուղեպտույտ/զբոսապտույտ կատարել.  
շրջել, շրջագայել. ~ England ճամփորդել  
Անգլիայով. շրջագայության գնալ Անգլիա:

**tourer** [ˈtuəə] n զբոսաշրջիկ/տուրիստա-  
կան ավտոմեքենա:

**touring** [ˈtuəriŋ] n, a զբոսաշրջիկություն,  
տուրիզմ. տուրիստական:

**tourist** [ˈtuərist] n զբոսաշրջիկ, տուրիստ. ~  
trade զբոսաշրջություն:

**tournament** [ˈtuənəmənt] n մրցախաղ,  
տուրնիր, մրցում. chess ~ շախմատային  
տուրնիր:

**tourniquet** [ˈtuːnikeɪ] n *բժշկ.* քուղ, լարան.  
արյունը կանգնեցնելու սեղմիչ:

**tousle** [ˈtaʊzl] v խճճել, զզգզել:

**tousled** [ˈtaʊzld] a զզգզված (մազեր):

**tousy** [ˈtauzi] a խճճված, զզգզված:

**tow** [təʊ] n բուքսիրի վերցնելը, բուքսիրով քաշելը. have/take in ~ բուքսիրի վերցնել. have a person in ~ *փխբ.* մեկին օգնել/խնամքի տակ առնել:

**tow** [təʊ] a բուքսիրային. ~ path քարշուղի. ~ plane բուքսիրային ինքնաթիռ:

**tow** [təʊ] v բուքսիրել, բուքսիրով քաշել. ~ rope քարշակառան. They ~ed us to the filling station Բուքսիրով մեզ հասցրին մինչև լցակայան:

**towage** [ˈtəʊɪdʒ] n բուքսիրում, բուքսիրի վերցնելը. բուքսիրավարձ:

**toward** [ˈtəʊəd] a տեղի ունեցող, առաջիկա:

**towards** [təˈwɔːdz] prep դեպի, ուղղությամբ. travel/go ~ the North ճանապարհորդել/գնալ հյուսիսային ուղղությամբ. The windows look ~ the sea Պատուհանները ծովին են նայում. ~ the evening երեկոյան կողմ. ~ the end վերջում. (դեպի, հանդեպ) They are hostile ~ us Նրանք թշնամաբար են տրամադրված մեր հանդեպ. your feelings ~ them ձեր զգացմունքները նրանց նկատմամբ. save ~ a new house նոր տան համար փող խնայել:

**tow-boat** [ˈtəʊbɔ:t] n բուքսիրային շոգե-նավ:

**towel** [ˈtəʊəl] 1. n սրբիչ, երեսսրբիչ. have a hot ~ տաքացնող կոմպրես անել. an oaken ~ *փխբ.* դազանակ, մահակ. throw in the ~ *փխբ.* իրեն պարտված ճանաչել. ~ rail կա-խիչ սրբիչի համար. 2. v սրբիչով սրբել. ~ oneself սրբիչով սրբվել, ցամաքեցնել:

**tower** [ˈtaʊə] n աշտարակ, բերդ. watch/control ~ պահակային դիտանոց/աշտարակ. դիսպետչերական աշտարակ. ~ of strength հավատարիմ/ուժեղ հենարան:

**tower** [ˈtaʊə] v (*նաև* ~ up) բարձրանալ/խո-յանալ. The skyscrapers ~ above the city Երկնաքերները բարձրանում են քաղաքն ի վեր ~ above others in intellect ինտելեկտով մյուսներից բարձր լինել:

**towering** [ˈtaʊəriŋ] a վեր խոյացող, բարձ-րացող. ծայրահեղ, շատ ուժեղ. in a ~ rage ծայրահեղ կատաղած:

**towing-line, towing-rope** [ˈtəʊɪŋlaɪn, ˈtəʊɪŋrəʊp] n պարան նավաքարշի համար. քարշակառան:

**town** [taʊn] n քաղաք. county ~ կոմսուքյան գլխավոր քաղաքը (Անգլիայում). seaside/provincial ~ ծովամերձ/զավառական քա-ղաք. corporate ~ ինքնավարություն ունեցող քաղաք. dormitory ~ զուտ բնակելի արվար-ձան. "ննջարան քաղաք". out of ~ քաղաքից դուրս. ~ and gown Օքսֆորդի/Էյմբրիջի հա-մալսարանի ուսանողները և դասախոսա-կան կազմը. home ~ հայրենի քաղաք. ~ council քաղաքային վարչություն/խորհուրդ. ~ scape քաղաքի համայնապատկեր. ~ dweller քաղաքաբնակիչ. ~ centre քաղաքի կենտրոն. ~ planning քաղաքների հատակա-գծում. ~s folk (*նաև* ~s people) քաղաքաբնա-կիչներ:

**townhall** [ˌtaʊnˈhɔ:l] n քաղաքապետարան:

**township** [ˈtaʊnʃɪp] n քաղաքի տարածքը/շրջանը:

**townsman** [ˈtaʊnzmən] n քաղաքացի, հա-մաքաղաքացի:

**town-talk** [ˈtaʊntɔ:k] n քաղաքի ասեկո-սե/բամբասանք:

**tow-row** [ˈtaʊˈraʊ] n աղմուկ-աղաղակ:

**toxic** [ˈtɒksɪk] 1. n թույն. 2. a թունավոր. ~ waste թունավոր թափոններ:

**toy** [tɔɪ] n խաղալիք, զվարճալիք. mechanical ~ մեխանիկական խաղալիք. make a ~ of մի բանով զվարճանալ. (փոքրիկ/աննշան բան) a ~ of a dog փոքրիկ շնիկ:

**toy** [tɔɪ] a խաղալիքի, ոչ իսկական, տիկնի-կային. a ~ soldier խաղալիք զինվոր. ~ shop խաղալիքների խանութ. ~ house տիկնիկա-յին տուն:

**toy** [tɔɪ] v խաղալ, զվարճանալ. ~ with an idea խորհրդածել, մտմտալ:

**trace** I [treɪs] n հետք. պատճեն. clear/faint ~ պարզ/հազիվ նշմարելի հետք. lose ~ of smn տեսադաշտից կորցնել. vanish without ~ ան-հետ կորչել. without ~ of malice առանց չա-րության հետքի/նշույլի. There is no ~ of her նրա հետքն էլ չկա, Կորավ, Անհայտացավ. *հմկրգ.* հետագիծ. ~ facility հետագծի մի-ջոցներ. ~ file հետագիծը կառուցելու ֆայլ. ~ routine հետագծի կառուցման ծրագիր:

**trace** II [treɪs] n ձգափոկ, լծափոկ. kick over the ~ ըմբոստանալ:

**trace** [treɪs] v հետքերով գնալ, հետքը գտնել. հետևել. *փխբ.* հետապնդել. քննել. The thief has been ~d Գողի հետքը գտնվեց. ~

the route երթուղին գծել. ~ the development of smth որևէ բանի զարգացումը հետազոտել. ~ one's ancestors/sister նախնիների ծագումը ստուգել. քրոջը գտնել. ~ back աղբյուրը գտնել. The custom ~d back... Սովորույթի աղբյուրը գտնվում է...:

**tracer** ['treisə] n լուսագծող գնդակ/արկ. (անձ) պատճենահան, գծագրիչ. ~ bullet լուսագծող գնդակ:

**tracery** ['treisəri] n նախշ, զարդաքանդակ:

**trachea** [trə'kiə] n կզմ/ս. շնչափող:

**tracing** ['treisiŋ] n պատճենահանում. հետևելը, վերահսկելը. (անհայտ կորածին) որոնելը. ~ paper պատճենահան թուղթ:

**track** [træk] n հետք. *փխք*. կյանքի ուղի. ~ of a car մեքենայի հետք. be on the ~s հետքերով քայլել. օրինակին հետևել. be on the ~ հետապնդել. հետքը գտնել. get on one's ~ հետքերը գտնել. keep ~ of որևէ բանի հետևել, տեղյակ լինել. lose ~ of հետքը կորցնել. (մտքի և այլն) թելը կորցնել. lose all ~ of time ժամանակի հաշիվը կորցնել. make ~s for *խսկց*. ուղղվել դեպի. change of ~ (կյանքի) ընթացքը փոխելը. (շավիղ, արահետ) beaten ~ տրորված ճանապարհ. sheep ~ ոչխարի արահետ. be on the right/wrong ~ *փխք*. ճիշտ/սխալ ուղու վրա լինել. *երկթ*. ռելսուղի double/single ~ երկռելս, երկգիծ/մեկռելս/միագիծ երկաթգիծ. The train left the ~ Գնացքը ռելսերից դուրս եկավ. *մրգ*. վագրուղի, մրցուղի. տրեկ (հեծանվի և մոտոտրանսպորտի համար). (ծայնագրում) ~ on a record. ակոս ձայնագրման/ծայնապնակի. (տանկ) caterpillar ~ թրթուրավոր շղթա. *հմկրգ*. ուղի, հետք. ~ address ճանապարհի հասցե. ~ ball գնդաձև մկնիկ. ~ density [træk'densəti] ուղիների խտությունը. ~ hold ուղու մեկուսացումը. ~ index ուղու ինդեքս. ~ label ուղու նշիչ:

**track** [træk] v հետևել, հետքը գտնել. հետքեր թողնել. երկաթուղի անցկացնել, ուղի հարթել. ~ an airplane/a missile որոշել ինքնաթիռի ուղի/հրթիռի ուղեծիրը:

**trackage** ['trækidʒ] n երկաթուղացանց:

**tracker** ['trækə] n խուզարկու. բուքսիր, նավաքարշ շոգեմամ/բամվոր:

**trackless** ['trækləs] a ճանապարհազուրկ. չտրորված/չհարթված ճանապարհ:

**track-walker** ['træk,wɔ:kə] n *երկթ*. ուղե-

հսկիչ:

**tract I** [trækt] n շերտ, գոտի. ~ of a land հողի տարածություն. uninhabited ~s չբնակեցված տարածություն. (ուղի) the digestive/respiratory ~ աղեստամոքսային ուղի, մարսողության համակարգ. շնչառական ուղիներ:

**tract II** [trækt] n բրոշյուր (*հսկպ. կրոն./քրթ. թեմայով*):

**tractable** ['træktəbl] a հեշտ մշակվող, դյուրակուռ. *փխք*. հեշտությամբ համոզվող, ենթարկվող:

**tractate** ['trækteit] n գիտական շարադրություն, տրակտատ:

**traction** ['trækʃn] n քաշում, քարշում, ձգում. ~ engine քարշող տրակտոր:

**tractor** ['træktə] n տրակտոր. caterpillar ~ թրթուրավոր տրակտոր. ~ driver տրակտորիստ:

**trade** [treid] 1. n առևտուր. free ~ ազատ առևտուր. wholesale/retail ~ մեծածախ/մանրածախ առևտուր. home/domestic/inland ~ ներքին առևտուր. foreign/overseas ~ արտաքին առևտուր. the furniture/building ~ կահույքի առևտուր. շինարարական գրասենյակ. keep up, maintain/restrict/develop ~ նպաստել/պահպանել/սահմանափակել/զարգացնել առևտուրը. drug ~ թմրանյութերի առևտուր. barter ~ ապրանքափոխանակություն. balance of ~ առևտրի բալանս. the Board of T~առևտրի նախարարություն. a brisk/roaring ~ աշխույժ առևտուր. be in ~ առևտրով զբաղվել. խանութ պահել. ~ mission առևտրական ներկայացուցչություն/առաքելություն. առևտուրը որպես զբաղմունք/մասնագիտություն. learn a ~ արհեստ սովորել. What is your ~ ? Ինչո՞վ եք զբաղվում. 2. a առևտրական, առևտրային. ~ tax հարկ վաճառքից/ապրանքաշրջանառությունից:

**trade** [treid] v առևտուր անել. ~ on smb's credulity *փխք*. չարաշահել մեկի վստահությունը. (փոխանակել) ~ watch for a bicycle ժամացույցը հեծանվով փոխանակել:

**trade-board** ['treidbɔ:d] n ձեռնարկատերերի և բանվորների միացյալ խորհուրդ:

**trademark** ['treidmɑ:k] n (գործարանային) ապրանքանիշ. registered ~ գրանցված ապրանքանիշ:

**trader** ['treidə] n առևտրական, առևտրա-

նալ:  
**trade-school** [ˌtreɪdˈsku:l] n արհեստագիտական դպրոց:  
**tradesfolk** [ˈtreɪdzfəuk] n *խսկց.* առևտրականներ, վաճառականներ, առևտրական դաս:  
**tradesman** [ˈtreɪdzmən] n խանութպան, արհեստավոր:  
**tradespeople** [ˈtreɪdzˌpi:pl] n առևտրական դաս:  
**trade-union** [ˌtreɪdzˈju:niən] n արհեստակցական միություն, արհմիություն:  
**trade-wind** [ˈtreɪdwɪnd] n պասսատային քամի, պասսատահողմ:  
**tradition** [trəˈdiʃn] n ավանդույթ, սովորություն, կարգ. տրադիցիա:  
**traditional** [trəˈdiʃnəl] a ավանդական, հնավանդ:  
**traduce** [trəˈdju:s] v գրպարտել, վատբանել, չարախոսել:  
**traffic** [ˈtræfɪk] n երթևեկություն. փոխադրամիջոց. փոխադրաբեռ. road/one way ~ փողոցային/միակողմանի երթևեկություն air ~ ինքնաթիռների շարժում. ~ offence *իրավ.* տրանսպորտային հանցանք. control/stop/hold up the ~ կարգավորել/կանգնեցնել/պահել, կասեցնել երթևեկությունը ~ accident ճանապարհա-տրանսպորտային պատահար. a line of ~ մեքենաների շարան. be careful of the ~ զգուշացեք մեքենաներից. ~ problems երթևեկության պրոբլեմներ. ~ police ավտոտեսչություն. ~ jam, block երթևեկության խցանում. ~ control փողոցային երթևեկության կարգավորում. ~ lights լուսաֆոր, լուսանշանորդ. ~ regulations փողոցային երթևեկության կանոններ. ~ circle օղակաձև/օղակապտույտ ճանապարհ. ~ sign ճանապարհային նշաններ:  
**trafficking** [ˈtræfɪkɪŋ] n ապօրինի/արգելված ապրանքի առևտուր. մարդկանց առքուվաճառք/առևտուր. թրաֆիքինգ. the drug ~ թմրադեղերի ապօրինի առևտուր. labour ~ աշխատուժի ապօրինի վաճառք. ~ in young women երիտասարդ կանանց առքուվաճառք. ~ in votes ձայների առևտուր (ընտրությունների ժամանակ):  
**tragedian** [trəˈdɜ:diən] n ողբերգու դերասան, տրագիկ. ողբերգակ, ողբերգությունների հեղինակ:

**tragedy** [ˈtrædʒədi] n ողբերգություն. the ~ of the situation իրավիճակի ողբերգությունը:  
**tragic(al)** [ˈtrædʒɪk(əl)] a ողբերգական:  
**tragicomedy** [ˌtrædʒiˈkɒmədi] n տրագիկոմեդիա:  
**trail** [treɪl] n հետք. արահետ, շավիղ. be on the ~, follow the ~ հետքով գնալ/փնտրել. ~ of mud ցեխի հետք. vapour ~ ռեակտիվ ինքնաթիռի հետք. ~ of distraction ավերման հետքեր. pick up/lose the ~ հետքը գտնել/կորցնել:  
**trail** [treɪl] v հետքով գնալ/փնտրել. (քաշել, քարշ տալ. բուքսիրել) The car was ~ing Ավտոմեքենան քարշ էր տալիս He ~ed behind them Նա քարշ էր գալիս նրանց հետևից. ~ in the mud ձգվել ցեխի միջով: *հմկրգ.* ~ing blanks տողը եզրափակող բացատանիչներ. ~ing spaces տողը եզրափակող բացատանիչներ:  
**trailer** [ˈtreɪlə] n կցասայլ, կցավագոն, *հմկրգ.* պոչ, վերջ. ~ label վերջի նշիչը:  
**train** [treɪn] 1. n գնացք. freight, goods/day/express/passenger/mail/suburban, local/fast/slow ~ ապրանքատար (նստակյաց) ճեպընթաց/մարդատար/փոստային/մերձքաղաքային/արագընթաց/դանդաղընթաց գնացք. through ~ ուղիղ հաղորդակցության գնացք. down/up ~ քաղաքից մեկնող/դեպի քաղաք եկող գնացք. ~ service երկաթուղային ծառայություն. go by ~ գնացքով գնալ. underground/tube ~ մետրոյի գնացք. miss, lose one's ~ գնացքից ուշանալ. catch the ~ գնացքին հասնել. ~ master գնացքի պետ. ~ man վագոնի ուղեկցորդ. (շքախումբ, թափոթ) the king's ~ թագավորի շքախումբը. a ~ of camels ուղտերի քարավան. ~ of thoughts/events *փխբ.* մտքերի/իրադարձությունների ընթացք. (հագուստի) քղանցք. 2. v գնացքով գնալ. ձգել, գրավել:  
**train** [treɪn] v սովորեցնել, պատրաստել. մարզ(վ)ել, վարժեցնել. ~ smb drive a car մեքենա վարել սովորեցնել. ~ smb for the army բանակի ծառայության նախապատրաստել. ~ sportsmen մարզիկներին մարզել. ~ one's memory հիշողությունը զարգացնել. ~ animals կենդանիներ վարժեցնել. ~ (not to ~) oneself իրեն (չ)վարժեցնել. He is ~ing as a teacher Նա պատրաստվում է դասատու դառնալ. (ուղղել) ~ a camera/gun on smth

լուսանկարչական ապարատը/հրանոթը ուղղել մի բանի վրա. ~ a rose along the fence ցանկապատի երկայնությամբ վարդ տնկել:

**train-bearer** ['trein,bɛəɹə] n մանկլավիկ, քղանցքի ծայրը բռնող:

**trained** [treind] a պատրաստված. վարժեցված (կենդանի). a ~ person որակյալ մասնագետ:

**trainee** [,trei'ni:] n ուսուցում/պատրաստություն ունեցող անձ. վարժեցվող կենդանի:

**trainer** ['treinə] n մրզ. մարզիչ, հրահանգիչ:

**train-ferry** ['trein,feri] n երկաթուղային լաստանավ:

**training** ['treiniŋ] n ուսուցում, պատրաստում, մարզում, վարժեցում. be in ~ մարզվել. a ~ college մանկավարժական ինստիտուտ. ~ ship ուսուցողական նավ.

**training-school** ['treiniŋsku:l] n հատուկ մասնագիտական դպրոց (բուժքույրեր և այլն):

**trait** [trei] n դիմագիծ. բնորոշ գիծ. հատկություն, հատկանիշ. hereditary ~s ժառանգական հատկանիշներ, acquired ~s ձեռք բերովի հատկանիշներ:

**traitor** ['treitə] n դավաճան. a ~ to one's country հայրենիքի դավաճան:

**traitorous** ['treitərəs] a դավաճանական, ուխտադրուժ:

**trajectory** [trə'dʒektəri] n հետագիծ:

**tram (car)** [træm] n տրամվայ. take a ~ տրամվայով գնալ/նստել. get off the ~ տրամվայից իջնել. ~ line տրամվայի գիծ:

**trammel** ['træml] n ուռկան ցանց. քռչունների բռնելու ցանց, որսացանց, վարմ:

**tramp** [træmp] n թափառաշրջիկ, շրջմուխիկ. հոգնեցուցիչ ճանապարհորդություն. ծանր քայլերի ձայն. go for a ~ արշավի գնալ. be on (the) ~ թափառաշրջել:

**tramp** [træmp] v թափառաշրջել. ոտքով շրջել/թափառել. դոփելով քայլել:

**trample** ['træmpl] n կոխտուտ, տրորում. դփում, դոփյուն. ոտնահարում:

**trample** ['træmpl] v տրորել, կոխկրտել. ճգնել. ոտնահարել. ~ smth into the mud ցեխի մեջ կոխկրտել. ~ down the crops ամբողջ ցանքսերը տրորել/ոտնահարել. ~ on smb's toes մեկի ոտքը տրորել. ~ on smb's feelings *փխթ.* դիպչել/կպչել մեկի զգացմունքների:

**trampoline** ['træmpli:n] n ցատկատախ-

տակ, ցատկասեղան:

**trance** [tra:ns] n *բժշկ.* տրանս, անբնական ներշնչում. զմայլվածություն. fall into a ~ տրանսի մեջ ընկնել:

**tranquil** ['træŋkwil] a հանդարտ, հանգիստ. խաղաղ, անխռով:

**tranquility** [træŋ'kwiləti] n հանգստություն, անդորություն, անդորր:

**tranquilizer** ['træŋkwəlaizə] n *բժշկ.* հանգստացնող միջոցներ:

**tranche** [tra:n(t)] n մասնավճար. փոխանցում, տրանշ. first credit ~ վարկի առաջին փոխանցում. gold ~ ոսկու փոխանցում:

**transact** [træn'zækt] v գործը վարել/կատարել. ~ business with smb. մեկի հետ գործ վարել:

**transaction** I [træn'zæktʃn] n գործ, գործարք. (գործի) վարում/կատարում. cash/shady ~s կանխիկ դրամով/կասկածելի գործարք. the ~s of a society (գիտական ընկերության) աշխատություններ, արձանագրություններ:

**transaction** II [træn'zæktʃn] n *հմկրգ.* հարցումների մշակում/հարցում. ~ data հաղորդագրության տվյալներ. ~ file կիրառական ծրագրի պրոցեսի պանակ/մատյան. ~ log կիրառական ծրագրի պրոցեսի մատյան. ~ record ղեկավարող գրառում:

**transatlantic** [,trænzət'læntik] a անդրամտլանտյան:

**transceiver** [træn'si:və] n *ռադ.* հաղորդիչ, ընդունիչ:

**transcend** [træn'send] v սահմանն անցնել, գերազանցել. It ~ed all my hopes Դա գերազանցեց իմ բոլոր սպասումները:

**transcendental** [,trænsen'dentl] a *փիլ.* տրանսցենդենտալ/անդրանցական, իմացությանը անմատչելի:

**transcribe** [træn'skraib] v *հմչ.* տառադարձել. *երժշ.* վերադաշնակել այլ ձայնի/գործիքի համար. ~ smth from shorthands սղագրությունը վերծանել:

**transcript** ['trænskript] n պատճեն. արձանագրություն. վերծանում (սղագրության). ~ of interrogation հարցաքննության արձանագրություն:

**transcription** [træn'skripʃn] n տառադարձում, տառադարձություն:

**transfer** ['trænsfə:] n փոխադրություն, տե-



- ղափոխություն. փոխանցում, փոխադրում.  
 ~ of authority իրավունքների/լիազորությունների հանձնում մեկ ուրիշին. cash ~ կանխիկի փոխանցում. ~ of mortgage գրավագրի փոխանցում. carry out a ~ փոխանցում/փոխադրում ձևակերպել. ~ of property/shares գույքի/բաժնետոմսերի փոխանցում:
- transfer** [træns'fə:] v տեղափոխել, փոխադրել. տալ, հանձնել. փոխանցել. ~ one's attention to other matters ուշադրությունը ուրիշ գործերի վրա դարձնել. ~ the class to Friday դասը տեղափոխել ուրբաթ. ~ money/property to one's sister դրամը/սեփականությունը, գույքը փոխանցել քրոջը. The faculty is ~ring to a new building Ֆակուլտետը նոր շենք է տեղափոխվում. ~ to another flight չվերթը փոխել. ~ of title սեփականության իրավունքի փոխանցում. *հմկրգ.* տվյալների փոխանցում. ~ function տիպի ձևափոխման ֆունկցիա. ~ instruction փոխանցման/անցման հրահանգ. ~ rate տվյալների փոխանցման արագություն. ~ table անցումների աղյուսակ. ~ time փոխանցման ժամանակ:
- transferable** [træns'fə:rəbl] a փոխադրելի, փոխանցելի, փոխարինելի. Is this ticket ~? Կարելի է այս տոմսը ուրիշին փոխանցել. ~ securities փոխանցելի արժեթղթեր. "not ~" "առանց փոխանցման իրավունքի":
- transference** [ˈtrænsfrəns] n փոխադրություն, տեղափոխություն, փոխանցում:
- transfiguration** [ˌtrænsfɪgə'reiʃn] n կերպարանափոխում, ձևափոխում, ձևափոխություն:
- transfigure** [træns'fɪgə] v կերպարանափոխել. ձևափոխել, վերափոխել:
- transfix** [træns'fiks] v խոցել, ծակել:
- transform** [træns'fɔ:m] n փոխակերպել, ձևափոխել, կերպարանափոխել. ~ beyond recognition անճանաչելիորեն փոխել. The flat is quite ~ed Բնակարանը լրիվ կերպարանափոխվել է:
- transformation** [ˌtrænsfɔ'meɪʃn] n ձևափոխություն, կերպարանափոխություն. վերածում:
- transformer** [træns'fɔ:mə] n *տեխ.* հոսանքափոխարկիչ, տրանսֆորմատոր:
- transfuge** [træns'fju:dʒ] n փախստական.
- թշնամու կողմն անցած մարդ. դավաճան:
- transfuse** [træns'fju:z] v մի ամանից մյուսի մեջ դատարկել. *բժշկ.* փոխներարկել. (արյան) փոխներարկում կատարել. համակել, թափանցել:
- transfusion** [træns'fju:ʒn] n a blood ~ արյան փոխներարկում:
- transgress** [trænz'gres] v խախտել, ոտնահարել, զանցել (օրենք, սահման). մեղք գործել, մեղանչել:
- transgression** [trænz'greɪʃn] n խախտում, ոտնահարում. հանցանք:
- transgressor** [trænz'gresə] n իրավախախտիչ, հանցագործ, մեղավոր:
- transience** [ˈtrænzɪəns] n վաղանցիկություն, կարճատևություն. սրընթացություն:
- transient** [ˈtrænzɪənt] a անցողիկ, կարճատև. *հմկրգ.* ժամանակավոր. ~ area ոչ ռեզիդենտ ծրագրերի տիրույթ. ~ routine ոչ ռեզիդենտ ծրագիր. ~ state միջանկյալ վիճակ:
- transistor** [trænzɪstə] n *ռադ.* տրանզիստոր:
- transit** [ˈtrænsɪt] n անցում, անցնելը. տարանցում. բեռների տեղափոխություն առանց վերաբեռնման. ~ passengers/goods տարանցիկ ուղևորներ/ապրանք. ~ visa տարանցիկ վիզա. ~ duty տարանցման մաքս. ~ port տարանցման կայան:
- transition** [trænzɪʃn] n անցում. a period of ~ անցման ժամանակաշրջան:
- transitional** [trænzɪʃnəl] a անցման, միջակա:
- transitive** [ˈtrænsətɪv] a *քեր.* անցողական (բայ):
- transitory** [ˈtrænsətɪri] a վաղանցիկ, անցողիկ. կարճատև:
- translate** [træns'leɪt] v թարգմանել. *ռադ.* հաղորդում, տրանսլացիա. ~ from English into Armenian անգլերենից հայերեն թարգմանել. This ~s easily Սա հեշտ է թարգմանվում. ~ ideas into actions *փխք.* գաղափարներն իրագործել կյանքում. ~ profits into figures շահույթը փոխանցել թվերի:
- translation** [træns'leɪʃn] n թարգմանություն. in ~ թարգմանաբար. loose ~ ազատ թարգմանություն. close/near ~ ճշգրիտ/ բնագրին մոտ թարգմանություն. authorized ~ հեղինակային թարգմանություն:
- translator** [træns'leɪtə] n թարգմանիչ:

**transliteration** [træns,litə'reiʃn] *n* [եզվ. գրադարձություն, տրանսլիտերացիա]:

**translucent** [træns'lu:snt] *a* [լուսանցիկ, կիսաթափանցիկ]:

**transmigrate** [trænzmai'greit] *v* գաղթել, վերաբնակվել:

**transmigration** [trænzmai'greiʃn] *n* գաղթ, վերաբնակեցում:

**transmission** [trænz'miʃn] *n* փոխանցում, ուղարկում. *ռադ.* TVհաղորդում. *տեխ.* շարժահաղորդում, տրանսմիսիա:

**transmit** [trænz'mit] *v* փոխանցել, հաղորդել, ուղարկել. ~ heat *տեխ.* ջերմություն հաղորդել:

**transmitter** [trænz'mitə] *n* հաղորդիչ սարք, ռադիո հաղորդիչ. հաղորդող ռադիոկայան:

**transmutation** [trænzmu'teiʃn] *n* փոխարկում, փոխակերպում. վերածում. the ~s of fortune ճակատագրի անակնկալներ:

**transmute** [trænz'mju:t] *v* փոխարկել. դարձնել, վերածել:

**transoceanic** [trænzəu'ʃi:ænik] *a* անդրօվկիանոսյան. օվկիանոսը կտրող-անցնող:

**transparency** [træns'pærənsi] *n* թափանցիկություն:

**transparent** [træns'pærənt] *a* թափանցիկ, պարզ, հստակ. *խսկ.* անկեղծ, շիտակ. *a* ~ hint/lie պարզորոշ ակնարկ. ակնհայտ սուտ. ~ honesty բյուրեղյա ազնվություն. *հմկրգ.* քողարկված. ~ data արժույթ/թափանցիկ տվյալներ. ~ interface թափանցիկ ինտերֆեյս:

**transpiration** [træns'pə'reiʃn] *n* քրտինք, քրտնելը:

**transpire** [træns'paɪə] *v* գոլորշիանալ, քրտնակալել. հայտնի դառնալ, հայտնաբերվել. It ~d that ...Պարզվեց, որ...:

**transplant** [træns'plɑ:nt] **1.** *v* (բույսեր) փոխատնակել. վերաբնակեցնել. *բժշկ.* փոխպատվաստել. **2.** *n* փոխպատվաստում. be given a kidney ~ երիկամի փոխպատվաստում կատարել:

**transport** ['træns'pɔ:t] **1.** *n* փոխադրամիջոց, փոխադրում, տեղափոխում. ~ by air/sea/rail օդով/ծովով/երկաթգծով փոխադրում. ~ of passengers/goods ուղևորների/ապրանքի փոխադրում. be without ~ առանց փոխադրամիջոցի լինել. (հափշտակություն, որևէ

բանով տարվել) in a ~ of delight/rage հիացմունքով/կատաղությամբ լցված. **2.** *a* փոխադրման, տրանսպորտի, տրանսպորտային:

**transport** ['træns'pɔ:t] *v* տեղափոխել, փոխադրել, փոխադրամիջոցով ուղարկել. արտարել, արտաքսել. գրավել, հափշտակել. be ~ed տարվել, հափշտակվել. ~ed with joy/anger ուրախությունից/զայրույթից իրեն կորցրած:

**transportation** [træns'pɔ:t'eɪʃn] փոխադրում, տեղափոխում (փոխադրամիջոցով). փոխադրամիջոց. արտարում, արտաքսում. ~ facilities փոխադրամիջոցներ. automobile ~ ավտոտրանսպորտ. ~ expenses փոխադրման ծախսեր:

**transpose** [træns'pəuz] *v* տեղափոխել, տեղաշարժել. *քեր.* (բառերի) շարադասությունը փոխել. *երժշ.* վերադաշնակել:

**transposition** [træns'pə'ziʃn] *n* տեղափոխում, վերադասավորում. *քեր.* (բառերի) շարադասության փոփոխություն. *երժշ.* վերադաշնակում:

**transputer** (transistor and computer) [træns'pju:tə] *n* *հմկրգ.* գերմեծ ինտեգրալ սխեմա:

**transracial** [træns'reiʃəl] *a* միջռասայական, ռասաների միջև:

**transsexual** [træns'sekʃuəl] *a* սեռափոխ, տրանսսեքսուալ:

**trans-ship** [træns'ʃip] *v* վերաբեռնել, փոխաբեռնել:

**trans-shipment** [træns'ʃipmənt] *n* վերաբեռնում, փոխաբեռնում:

**transversal** [trænz'vɜ:səl] *a* լայնակի, թեք, շեղ:

**transverse** [trænz'vɜ:s] **1.** *a* լայնակի. **2.** *adv* լայնությամբ, լայնքով. *a* ~ section լայնակի կտրվածք:

**trap I** [træp] *n* թակարդ, ծուղակ, որոգայթ. set a ~ թակարդ դնել. fall into a ~ ծուղակի/թակարդի մեջ ընկնել. be caught in a ~ *փխբ.* ծուղակի մեջ ընկնել. անցք, իջեցվող դռնակ (*մալ* ~ door) լյուկ դռնակ:

**trap II** [træp] *n* *հմկրգ.* ներքին ընդհատում. ~ instruction համակարգային ընդհատման հրահանգ:

**trap** [træp] *v* թակարդով բռնել, որսալ. ծուղակի մեջ քաշել, որոգայթ լարել. be ~ped

ծուղակի մեջ ընկնել. be ~ped underground գետնի/հողի տակ պահվել. ~ a wolf գայլին թակարդով բռնել. be ~ped in the lift/in the burning building վերելակում բռնվել. չկարողանալ դուրս գալ այրվող շենքից:

**trapeze** [trəˈpi:z] n *մրզ*. ճոճածող. ~ artist կրկեսային մարմնամարզիկ, ճոճածողով ակրորատ:

**trapezium** [trəˈpi:ziəm] n *մաթ*. սեղան, տրապեցիում:

**trappings** [ˈtræpiŋz] n ձիու հանդերձանք, հեծելասարք:

**trappy** [ˈtræpi] a *խսկց*. որոգայթներով լի, վտանգավոր:

**trapse** [treips] v անգործ թրև գալ, պարապսարապ ման գալ:

**trash** [træʃ] n աղբ, տականքներ, թափթփուկներ, թափոն. *փխբ.*, *խսկց*. անպետք բան. The film is ~ Անպետք ֆիլմ է. He talks a lot of ~ Նա հիմարություններ է դուրս տալիս. ~ can *ամ*. աղբաման:

**trashy** [ˈtræʃi] a *խսկց*. անպետք:

**trauma** [ˈtrɔ:mə] n *բժշկ*. վնասվածք, տրավմա:

**traumatic** [trɔ:ˈmætik] a *բժշկ*. վնասվածքային, տրավմատիկ:

**travail** [ˈtræveil] n ծանր աշխատանք. երկունք, ծննդաբերության ցավեր:

**travel** [ˈtrævl] n ճանապարհորդություն, ուղևորություն. տեղափոխություն. ~ agency տուրիստական գործակալություն. space ~ տիեզերական թռիչքներ. means of ~ փոխադրական միջոցներ. ~ sickness ճամփորդությունը վատ տանելը (*հտկա*. նավում):

**travel** [ˈtrævl] v ճանապարհորդել, ուղևորություն կատարել. ~ by sea/air/car on foot ծովով/հիքնաթիռով/մեքենայով/ոտքով ճանապարհորդել. ~ first/tourist class ճամփորդել առաջին/տուրիստական կարգով. Some fruits don't ~ well *փխբ*. Որոշ մրգեր փչանում են տեղափոխման ընթացքում. ~ all over the country ամբողջ երկրով ճամփորդել. (շարժվել) Light ~s fast Լույսը արագ է շարժվում/տարածվում. The car was ~ling slowly Սեքենան դանդաղ էր շարժվում. Gas ~s along the tube Գազն անցնում է խողովակի միջով. News ~s fast Լուրերն արագ են տարածվում. Her eyes were ~ling from the sofa to the floor Նրա հայացքը սահում էր

բազմոցից հատակին:

**travelled** [ˈtrævlɪd] a շատ ճամփորդած. շատ բան տեսած, փորձված, կոփված:

**traveller** [ˈtrævlɪə] n ճանապարհորդ, ուղեվոր. commercial ~ շրջիկ առևտրական. ~'s cheque ճամփորդական վճարագիր:

**travelling** [ˈtrævlɪŋ] n ճանապարհորդություն. He does a lot of ~ Նա շատ է ճամփորդում:

**travelling** [ˈtrævlɪŋ] a ճամփորդական, շարժական. ~ expenses ճամփորդական ծախսեր. ~ salesman առևտրական շրջիկ գործակալ. ~ exhibition շարժական ցուցահանդես. ~ company *թատր*. հյուրախաղերի մեջ գտնվող թատերախումբ. ~ bag ուղեպայուսակ. ~ dress ճանապարհորդական հագուստ:

**traverse** [ˈtrævə:s] n հատել. կտրել-անցնել:

**travesty** [ˈtrævəsti] n, v ծաղրապատկեր, պարոդիա. ծաղրապատճենել, ծաղրական կերպով նմանեցնել:

**trawl** [trɔ:ɪ] n, v մեծ ձկնորսացանց, ուռկանապարկ. ուռկանապարկով որսալ:

**trawler** [ˈtrɔ:ɪə] n մեծ ձկնորսական/ուռկանապարկով նավ:

**tray** [trei] n մատուցարան, սկուտեղ. ափսե, պնակ. a ~ of drinks խմիչքներով սկուտեղ:

**treacherous** [ˈtreɪʃərəs] a դավաճանական, ուխտադրուժ. մատնողական. ~ weather խաբուսիկ եղանակ. The roads are ~ after the snow Չյուն գալուց հետո ճանապարհները վտանգավոր են:

**treachery** [ˈtreɪʃəri] n դավաճանություն, ուխտադրություն:

**treacle** [ˈtri:kəl] n կերամաթ, ռուփ (շաքարի):

**tread** [tred] n քայլք, քայլվածք. աստիճան (սանդուղքի). heavy ~ ծանր քայլեր. a measured ~ համաչափ քայլվածք:

**tread** [tred] v քայլել, գնալ. տրորել, ոտնատակ տալ. ճզմել. ~ a path արահետ առաջացնել (տրորելով). ~ flowers/one's toe ծաղիկները կոխկրտել. մեկի ոտքը տրորել. ~ grapes խաղողը ճզմել. ~ softly/heavily փափուկ/ծանր քայլերով քայլել. ~ on air *փխբ*. ոտքերի տակ հող չզգալ. ուրախությունից իրեն կորցնել. ~ on the heels կրկնկապիս հետևել. ~ in one's steps մեկի օրինակին հետևել. ~ lightly զգուշությամբ գործել:

**treason** [ˈtri:zn] n դավաճանություն. high ~

պետական դավաճանություն:  
**treasonable** ['tri:znəbl] a դավաճանական, ուխտադրուժ:  
**treasurable** ['trezərəbl] a գանձի պես պահվող. գուրգուրանքի արժանի. բարձր գնահատելի:  
**treasure** ['trezə] n գանձ, հարստություն. buried ~ բաքքրած գանձ:  
**treasure** ['trezə] v գանձ/հարստություն կուտակել. բարձր գնահատել. ~ one's friendship ընկերությունը բարձր գնահատել. ~ the memory հիշողության մեջ պահել/պահպանել:  
**treasurer** ['trezərə] n գանձապահ:  
**treasury** ['trezəri] n գանձարան, գանձանոց. the T~ պետական գանձարան/ֆինանսների նախարարություն (ԱՄՆ). Department of the T~ (ԱՄՆ). ~ bond գանձապետական պարտատոմս. ~ securities գանձապետական արժեթղթեր:  
**treat** [tri:t] n հաճույք, մեծ բավականություն. It is a ~ to listen to this music Այս երաժշտությունը լսելը մեծ հաճույք է. give smn a ~ հաճույք պատճառել. (հյուրասիրություն) It's my ~ today Այսօր ես եմ հյուրասիրում. Dutch ~ հոլանդական վերաբերմունք/հաճույք (յուրաքանչյուրն իր համար է վճարում). stand a ~ հյուրասիրել:  
**treat** [tri:t] v վարվել, վերաբերվել. ~ well/badly/cruelly լավ/վատ/դաժան վերաբերվել. ~ as a joke որպես կատակ ընդունել. ~ the problem հարցը քննարկել. ~ smth as confidential գաղտնիք համարել. *բժշկ.* բուժել ~ smb's leg ~ մեկի ոտքը բուժել. ~ with penicilin պենիցիլինով բուժել. ~ with chemicals քիմիկատներով մշակել. (հյուրասիրել) ~ to ice-cream/coffee պաղպաղակով/սուրճով հյուրասիրել:  
**treatise** ['tri:tiz] n գիտական աշխատանք. տրակտատ:  
**treatment** ['tri:tmənt] n վարմունք, վերաբերմունք. objective ~ օբյեկտիվ մոտեցում. *բժշկ.* բուժում hospital ~ հիվանդանոցային բուժում. new ~ նոր տեսակի բուժում. ~ with drugs դեղորայքային բուժում. undergo ~ բուժվել. a method of ~ բուժման մեթոդ/միջոց. have/take ~s բուժման կուրս անցնել:  
**treaty** ['tri:ti] n միջազգային պայմանագիր. be in ~ with մեկի հետ բանակցություններ վարել. peace/trade ~ խաղաղության/առև-

տրական պայմանագիր. under the terms of the ~ պայմանագրի պայմանների/կետերի համաձայն. conclude/sign/ratify the ~ կնքել/ստորագրել/վավերացնել պայմանագիրը:  
**treble** ['trebl] 1. n եռապատիկ քանակ. *երժշ.* դիսկանտ. 2. a եռապատիկ, եռակի. 3. v եռապատկ(վ)ել:  
**tree** [tri:] n ծառ. կոշիկի կաղապար. tall/spreading/dead ~ բարձր/ճյուղաշատ, բազմաճյուղ/չորացած ծառ. hollow ~ փչակավոր ծառ. family ~ *փխբ.* տոհմածառ. up a ~ անելանելի վիճակում/դրության մեջ. *հմկրգ.* ծառատիպ սխեմա. ~ grammar ծառատիպ կառուցվածքների քերականություն. ~ graph ծառատիպ գրաֆ. ~ name բաղադրյալ/հիերարխիկ անուն. ~ search որոնում ծառում. ~ traversal/walking ծառի շրջանցումը:  
**tree-frog** ['tri:frɒg] n ծառի գորտ:  
**treeless** ['tri:ləs] a ծառազուրկ, անտառազուրկ:  
**treelined** ['tri:laind] a ծառազարդ. ~ avenue/road ծառազարդ ճանապարհ/ծառուղի:  
**trefoil** ['trefɔil] n *բսբ.* երեքնուկ:  
**trek** [trek] 1. n արշավ, երթ. go on the ~ արշավի դուրս գալ/ելնել. a long ~ to the village *խսկց.* երկար ճանապարհ մինչև գյուղ. 2. v արշավ/երթ/չվերթ կատարել. ~ through the hills սարերում թափառել:  
**trellis** ['trellis] n վանդակ, ցանց, ցանկաշար:  
**tremble** ['trembəl] v դողալ. ~ with anger/fear/cold զայրության/վախից/ցրտից դողալ. ~ at the very thought միայն այդ մտքից դողալ/սարսռել. ~ all over ամբողջ մարմնով դողալ:  
**trembling** ['trembliŋ] n դող, սարսուռ:  
**trembling-poplar** ['trembliŋpɒplə] n *բսբ.* դողողոցուն կաղամախի:  
**tremendous** [tri'mendəs] a հսկայական, ահագին, վիթխարի. ~ difference հսկայական տարբերություն. ~ applause բուռն ծափահարություններ:  
**tremendously** [tri'mendəsli] adv *խսկց.* սարսափելի. be ~ strong/proud սարսափելի ուժեղ/հպարտ լինել:  
**tremor** ['tremə] n դող, թրթռոց. ~ of excitement հուզմունքի թրթռոց:  
**tremulous** ['tremjʊləs] a դողողոցուն. հուզումնալից. սրտահույզ:  
**trench** [trentʃ] 1. n առվափոս. *ռզմ.* խրամատ. ~ bomb ձեռնանռնակ. ~ warfare խրա-

մատային պատերազմ. **2.** *v* խրամատ/փոս/առվափոս փորել:

**trenchant** [ˈtrentʃənt] *a* սուր, կծու. հատու. խայթիչ. *a* ~ wit սուր միտք. *a* ~ style կտրուկ/հատու ոճ. ~ comments խայթիչ/կծու ակնարկներ:

**trend** [trend] *n* միտում, տեղեկություն. ընդհանուր ուղղություն. new ~s in literature գրական նոր ուղղություններ. development ~ զարգացման միտում. the latest ~s նորագույն միտումները/ուղղությունները:

**trepidation** [ˌtrepɪˈdeɪʃn] *n* տագնապ, անհանգիստ վիճակ:

**trespass** [ˈtrespəs] *n* ոտնձգություն. խախտում, օրինազանցություն. ~ on the premises ոտնձգություն շինության նկատմամբ. ~ to the person իրավախախտում անձի նկատմամբ. “no trespass” (ցուցանակ) “մուտքն արգելվում է”:

**trespass** [ˈtrespəs] *v* ոտնձգություն անել ուրիշի հողի/ունեցվածքի նկատմամբ. *փ/սք.* պատշաճության սահմանն անցնել. չարաշահել, ի չարը գործ դնել. օրինազանցություն անել. ~ on smb’s time/hospitality չարաշահել մեկի ժամանակը/հյուրընկալությունը:

**trespasser** [ˈtrespəsə] *n* խախտում կատարող, ոտնձգություն անող. սահմանազանց, իրավախախտիչ. օրինազանց անձ:

**tress** [tres] *n* խոպոպ, հյուս, ծամ:

**tressed** [trest] *a* հյուսած մազերով/ծամերով. խոպոպած մազերով:

**trestle** [ˈtresl] *n* իշտոնուկ:

**trey** [treɪ] *n* *թղթ/ս.* երեքնոց:

**trial** [ˈtraɪəl] *n* փորձ, փորձարկում. *a* ~ of strength ուժերի փորձարկում. on ~ փորձնական ժամկետով. learn by ~ and error սեփական սխալների հիման վրա սովորել. ~ period փորձարկման ժամկետ. (փորձություն, դժվարություններ) the ~ of old age ծերունական անկարողություններ ու դառնություններ. He is a ~ to his mother *խսկց.* այս երեխան իր մոր պատիժն է. *իրավ.* դատական քննություն, դատ. civil ~ քաղաքացիական դատաքննություն. bring/put to ~ դատի ներկայացնել. stand one’s ~ դատի տակ լինել. be on ~ հետաքննության տակ լինել. state ~ պետական հանցագործի դատաքննություն. get a fair ~ օրենքով դատել. ~ by jury դատ երդվյալ ատենակալների մասնակցու-

թյամբ:

**triangle** [ˈtraɪæŋɡl] *n* եռանկյունի:

**triangular** [traɪˈæŋɡjələ] *a* եռանկյուն:

**tribal** [ˈtraɪbl] *a* ցեղային, տոհմային. ցեղի, տոհմի:

**tribe** [traɪb] *n* ցեղ, տոհմ. *a* whole ~ of his relatives նրա բարեկամների մի ամբողջ տոհմ/ցեղ:

**tribesman** [ˈtraɪbzməŋ] *n* տոհմի անդամ, տոհմակից, ցեղակից:

**tribulation** [ˌtrɪbjʊˈleɪʃn] *n* ծախսողություն, փորձանք. trials and ~s փորձություններ ու փորձանքներ:

**tribunal** [traɪˈbjʊːnl] *n* դատարան, տրիբունալ. դատակազմ. appeals ~ վերաքննիչ դատարան. ~ of inquiry քննչական պալատ:

**tribune** [ˈtrɪbjʊːn] *n* բարձրաբեմ, ամբիոն, ճառաբեմ:

**tributary** [ˈtrɪbjʊtəri] **1.** *n* հարկատու. վտակ. **2.** *a* հարկ/տուրք վճարող. օժանդակ, երկրորդական, ստորադաս:

**tribute** [ˈtrɪbjʊːt] *n* հարկ, տուրք. lay under ~ տուրք դնել. pay a ~ հարկ/տուրք վճարել. *փ/սք.* տուրք տալ, գնահատել. pay ~ to his bravery տուրք տալ նրա քաջությանը. as a ~ to որպես պարգև:

**trice** [traɪs] *n* ակնթաթ, վայրկյան. at/in a ~ վայրկենաբար, մի ակնթաթում. իսկույն:

**tricentenary** [ˌtraɪsɛnˈtɪːnəri] *n* երեքհարյուրամյակ:

**trick** [trɪk] *n* կատակ, խաղ. amusing/foolish/innocent ~ զվարճալի/հիմար/անմեղ կատակ. play ~s on smb օյիններ խաղալ մեկի գլխին. կատակով ծաղրել. childish ~s մանկական խաղ/կատակ. sly/dirty/nasty ~ չարամիտ խաղ, ստոր արարք. be up to ~s օյիններ սարքել. He is up to his old ~s again *Նորից սկսել է իր խաղերը խաղալ.* ~ of the senses զգայական պատրանք. ~s of fortune ճակատագրի փոփոխականություն. (ֆոկլուս, աճաբարություն) *a* card ~ աճաբարություն խաղաքարտերով. *a* conjuring ~ աճաբարություն. do ~s *ֆոկլուս* ցույց տալ. This medicine should do/show the ~ *Այս դեղը պետք է որ հրաշքներ գործի/ազդի.* *թղթ/ս.* (առք, ձեռք) take a ~ առք վերցնել. (բնորոշ գիծ) *a* ~ of repeating himself իրեն կրկնելու սովորություն ունենալ. ~s of style ոճի առանձնահատկությունները. *a* ~ of light

լույսի էֆեկտ:  
**trick** [trɪk] v խաբել, խորամանկել. We were ~ed Սեզ խաբեցին. ~ smb into doing smth խաբեությամբ ստիպել մեկին մի բան անել. ~ smb out of smth խորամանկությամբ/խաբեությամբ դուրս քաշել/կորզել:  
**trickery** [ˈtrɪkəri] n խաբեություն, խորամանկություն. ճարպիկ արարք:  
**trickle** [ˈtrɪkl] v ծորալ, բարակ շիթով հոսել. Blood ~d from the wound Վերքից արյուն էր հոսում. Water only ~d from the tap Ջուրը հագիվ կաթում էր/ծորում էր ծորակից. Tears ~d down Արցունքները հոսում էին. ~ into the hall մի կերպ դահլիճ խցկվել. News ~d in Լուրերը դժվարությամբ էին տեղ հասնում:  
**trickster** [ˈtrɪkstə] n խաբեբա:  
**tricksy** [ˈtrɪksɪ] a չարածճի, աշխույժ, ժիր:  
**tricky** [ˈtrɪki] a խորամանկ, ճարպիկ. բարդ, դժվարին. խրթին. a ~ problem/situation/lock խճճված պրոբլեմ. դժվարին իրավիճակ. ծածկագրով կողպեք/փականք. He is a ~ customer Կակածելի/Վտանգավոր տիպ է:  
**tricolour** [ˈtrɪkələ] n եռագույն (դրոշ):  
**tricot** [ˈtrɪkəʊ] n տրիկոտածե սպիտակեղեն, տրիկո:  
**tricycle** [ˈtraɪsɪkl] n եռանիվ հեծանիվ:  
**trident** [ˈtraɪdnt] n եռաժանի:  
**triennial** [traɪˈeniəl] 1. n եռամյակ, երրորդ տարեդարձ. 2. a եռամյա, երեք տարին մեկ կրկնվող:  
**trifle** [ˈtraɪfl] 1. n չնչին/դատարկ բան. մանրուք. չնչին քանակություն. be upset by every ~ ամեն չնչին բանից վշտանալ. It is a mere ~ for him Նրա համար դա դատարկ բան է. 2. adv *խսկց.* մի քիչ/փոքր. It's a ~ difficult Դա մի փոքր դժվար է:  
**trifle** [ˈtraɪfl] v դատարկ բաներով զբաղվել. կատակ անել, կատակել. ~ with smb's affections մեկի զգացմունքների հետ խաղալ. He is not a man to be ~d with Նրա հետ չի կարելի կատակ անել. ~ with one's food *փխք.* ուտելիքը պատառաքողով փորփորել:  
**trifling** [ˈtraɪflɪŋ] a չնչին, աննշան, անարժեք:  
**trig** [trɪg] n, v արգելակ. արգելակել, կանգնեցնել:  
**trigger** [ˈtrɪgə] n (հրազենի) շնիկ. *տեխ.* ձգան, մղլան. pull the ~ շնիկը քաշել. ~ off a storm փոթորիկ առաջացնել:  
**trigonometry** [ˌtrɪgəˈnɒmətri] n եռանկյու-

նաչափություն:  
**trihedral** [traɪˈhiːdrəl] a եռանիստ:  
**trilateral** [ˌtraɪˈlætərəl] a երեք կողմանի, եռակողմ:  
**trilingual** [ˌtraɪˈlɪŋɡwəl] a եռալեզու, եռալեզվյան. a ~ dictionary եռալեզվյան բառարան:  
**trill** [trɪl] n, v գեղգեղանք, դայլայլ. հնչյուն. քրթուն հնչյուն. գեղգեղալ, դայլայլել. հնչյունը քրթունով արտասանել:  
**trillion** [ˈtrɪljən] n տրիլիոն. *ամ.* բիլիոն:  
**trilogy** [ˈtrɪlədʒi] n եռերգություն, եռերկ ստեղծագործություն. տրիլոգիա:  
**trim** [trɪm] n կարգ, պատրաստություն. պատրաստ լինելու վիճակ. շոր, զգեստ. Her hair needs a ~ Մազերը կտրելու կարիք կա. in flying ~ թռիչքի պատրաստ. in good ~ կոկիկ, հարդարված, լավ վիճակում. in fighting ~ *ռզմ.* մարտի պատրաստ, մարտական պատրաստությամբ:  
**trim** [trɪm] a կարգավոր/ված, հարդարուն. կոկիկ. վայելուչ. պատրաստ:  
**trim** [trɪm] v կարգի բերել, հարդարել, կոկել. կտրել, խուզել. հարմարվել. *խսկց.* փող կորզել/շորթել. ~ a bush/beard/nails թուփը էտել. մորուքը/եղունգները կտրել/հարդարել. ~ dead branches off չոր ճյուղերը կտրտել. ~ a coat with fur վերարկուն մորթիով զարդարել/հարդարել:  
**trimester** [traɪˈmestə] n եռամսյակ, եռամսյա ժամկետ:  
**trimmer** [ˈtrɪmə] n հարմարվողական/հաշտվողական անձ. օպորտունիստ:  
**trimming** [ˈtrɪmɪŋ] n զարդ, երիզ. ժապավենաթել. *խիր.* ճաշալրաց, գարնիր. with lace ~ ժապավենով զարդարված. ~ the Christmas tree տոնածառը զարդարել:  
**trinity** [ˈtrɪnəti] n կրոն. երրորդություն. Holy ~ Սուրբ Երրորդություն:  
**trinket** [ˈtrɪŋkɪt] n մանր զարդ, զարդարանք. կախազարդ:  
**trinomial** [traɪˈnəʊmiəl] n, a եռանդամ:  
**trio** [ˈtriːəʊ] n *երժշ.* եռյակ, տրիո. եռածի սահնակ:  
**trip** [trɪp] n կարճատև ուղևորություն/ճամփորդություն. էքսկուրսիա. one day/dangerous ~ մեկ օրվա/վտանգավոր ուղևորություն. business ~ գործնական ուղևորություն. pleasure ~ զվարճարար զբոսանք. round ~ որևէ

տեղ գնալ/գալը. make ~s երթևեկել. take a ~ ուղևորություն կատարել. a boat ~ նավակով զբոսանք. a ~ to the theatre թատրոն այցելելը:

**trip** [ˈtrɪp] *v* սայթաքել, *փխբ.* սխալվել. վրիպում կատարել. ~ on/over a stone քարի վրա սայթաքել. ~ up in calculations (իր) հաշիվներում սխալվել:

**tripartite** [ˈtraɪˈpa:tait] *a* երեք մասից բաղկացած. եռակողմ, երեք կողմերի մասնակցությամբ. ~ agreement եռակողմ/երեք պետությունների համաձայնություն:

**triple** [ˈtrɪpl] **1.** *a* եռակի, եռապատիկ. ~s եռվորյակներ. ~ time երժշ. եռաչափ տակտ. **2.** *v* եռապատկ(վ)ել:

**triplet** [ˈtrɪplət] *n* *բնստ.* եռյակ. եռամասնյակ. երժշ. տրիոլ:

**triplicate** [ˈtrɪplɪkət] *a* եռակի, եռապատիկ. in ~ երեք օրինակով:

**tripod** [ˈtraɪpɒd] *n* եռոտանի. եռոտանի սեղան/աթոռ և այլն:

**tripper** [ˈtrɪpə] *n* էքսկուրսանտ:

**tripping** [ˈtrɪpɪŋ] *a* արագոտն, թեթև քայլվածքով:

**trippingly** [ˈtrɪpɪŋli] *adv* արագ կերպով, թեթև:

**trisyllabic** [ˌtraɪsɪˈlæbɪk] *a* եռավանկ, երեք վանկանի:

**trite** [traɪt] *a* տափալ, ծեծված, մաշված:

**triumph** [ˈtraɪʌmf] **1.** *n* հաղթանակ, հաղթատոն, ցնծություն. մեծ հաջողություն. *a* shout of ~ հաղթական ճիչ. *a* ~ of justice արդարության հաղթանակը. **2.** *v* հաղթանակ տանել, հաղթանակել. ուրախանալ, հրճվել:

**triumphal** [ˈtraɪʌmfəl] *a* հաղթական, հաղթանակի. հանդիսավոր:

**triumphant** [ˈtraɪʌmfənt] *a* հաղթական, հաղթող. հրճվալից, ցնծագին. the ~ army հաղթող բանակը. He was ~ at his success Նա հրճվում էր իր հաջողությամբ:

**trivet** [ˈtrɪvɪt] *n* եռոտանի սեղան/աթոռ/կասկարա:

**trivial** [ˈtrɪviəl] *a* չնչին, աննշան, անկարևոր. առօրյա, սովորական, տափալ. ~ error աննշան սխալ. *a* ~ offence/injury աննշան խախտում. մարմնական թեթև վնասվածք. *a* ~ sum չնչին գումար. ~ matters մանրուքներ:

**triviality** [ˌtrɪviˈælɪti] *n* սովորականություն, տափալություն. անհամություն:

**troche** [ˈtrəʃ] *n* դեղահատ, հար:

**troglodyte** [ˈtrɒglɔːdaɪt] *n* քարանձավաբնակ. մարդանման կապիկ:

**trolley** [ˈtrɒli] *n* ձեռնասայլակ. serving ~ սպասքավորող ձեռնասայլակ:

**trolley-bus** [ˈtrɒlibʌs] *n* տրոլեյբուս:

**trolley-car** [ˈtrɒlɪkɑː] *n* *ամ.* տրոլեյբուս:

**trollop** [ˈtrɒləp] *n* փնթի/թափթփված կին:

**trombone** [ˈtrɒmˈbɔːn] *n* երժշ. տրոմբոն:

**troop** [ˈtruːp] *n* խումբ, ջոկատ. ~s զորքեր, դասակ. federal/occupation ~s դաշնակցային/զավթիչ զորքեր. armoured ~s զրահատանկային զորամասեր. household ~s գվարդիա, գվարդիական զորամասեր. pass ~s in review զորատես կատարել. station ~s զորքեր տեղակայել. ~ train զինվորական գնացք:

**troop** [ˈtruːp] *v* հավաքվել, խմբվել. շարքերով անցնել. The children ~ed past երեխաների շարքերը մեր կողքով անցան. They ~ed home Ամեն մարդ իր տունը գնաց:

**trooper** [ˈtruːpə] *n* շարքային հեծելակ. state ~ պահեստային զինապարտ:

**troop-horse** [ˈtruːpɜːs] *n* հեծելագործի ձի:

**troop-ship** [ˈtruːpʃɪp] *n* զինվորական տրամապորտ:

**trope** [ˈtrəʊp] *n* լեզվ. փոխաբերություն:

**trophy** [ˈtrɒfi] *n* ռազմավար, ավար. հաղթանշան:

**tropic** [ˈtrɒpɪk] *n* արևադարձ. the ~s արևադարձային գոտի. in the ~s արևադարձային գոտում. ~ of Cancer/Capricorn Խեղճետնի/Այծեղջյուրի արևադարձ:

**tropical I** [ˈtrɒpɪkəl] *a* արևադարձային:

**tropical II** [ˈtrɒpɪkəl] *a* գրկ. փոխաբերական, պատկերավոր:

**troposphere** [ˈtrɒpəsfɪə] *n* ներքնոլորտ, տրոպոսֆերա:

**trot** [trɒt] **1.** *n* վարզ, արագ քայլք. at a ~ վարզով. break into a ~ վարզով գնալ. keep smn on the ~ հանգիստ չտալ, անընդհատ աշխատեցնել. **2.** *v* վարզով գնալ. վազել, շտապել. The dog ~ted along *խսկց.* Շունը վազում էր կողքից:

**trotter** [ˈtrɒtə] *n* վարզածի. *կտկ.* ոտքեր (մարդու):

**trouble** [ˈtrʌbl] *n* անհանգստություն, հուզմունք, տագնապ, փորձանք. be in ~ փորձանքի մեջ լինել. get into ~ փորձանքի մեջ ընկնել. the ~ is դժբախտությունն այն է. His

son is a great ~ Նրա տղան մի մեծ փորձանք է. family/money ~s ընտանեկան տագնապներ. փողային դժվարություններ. ask/look for ~ գոռով փորձանքի մեջ ընկնել. There is always ~ between them Նրանք միշտ վիճում են. (հոգս, մտահոգություն, նեղություն) save the ~ անհրաժեշտությունից ազատել. put smn to a lot of ~ մեկին շատ անհանգստություն պատճառել It is no ~ Դա բոլորովին էլ դժվար չէ. not worth the ~ չարժե անհանգստանալ. take the ~ նեղություն կրել. thank you for the ~ Շնորհակալություն անհանգստության համար. (քղք. անհանգստություն) labour ~s բանվորական խռովություններ. cause ~ խռովություն առաջացնել. (հիվանդություն) heart ~ սրտի հիվանդություն. chest ~ թոքերի հիվանդություն. տեխ. (անսարքություն) engine ~ շարժիչի անսարքություն. put the ~ right անսարքությունը վերացնել:

**trouble** [ˈtrʌbl] *v* անհանգստանալ, անհանգստացնել. հուզ(վ)ել, վրդով(վ)ել He was ~d Նա անհանգստացած էր. His leg is troubling him Ոտքը նրան անհանգստացնում է. look ~d անհանգիստ տեսք ունենալ. His conscience ~d him Խիղճը նրան տանջում էր. (խնդրանք) May I ~ you? Կարո՞ղ եմ ձեզ խնդրել. Don't ~ to write Նեղություն մի կրեք գրել. He didn't ~ to explain Նա իրեն նեղություն չտվեց բացատրել:

**troubled** [ˈtrʌblɪd] *a* անհանգիստ, հուզված, վրդովված. *a* ~ face հուզված դեմք. ~ times անհանգիստ ժամանակներ. fish in ~ waters *փխք*. պղտոր ջրում ձուկ բռնել:

**troublemaker** [ˈtrʌblˌmeɪkə] հանգստության վրդովիչ. հասարակական անդորրը/կարգը խախտող անձ:

**troubleshoot** [ˈtrʌbljuːt] *v* *հմկրգ*. անսարքությունները շտկել:

**troublesome** [ˈtrʌblsəm] *a* անհանգստություն/հոգս պատճառող. ջանք պահանջող. դժվարին. *a* ~ child դժվարին երեխա. *a* ~ affair ջանքեր պահանջող գործ/աշխատանք. *a* ~ problem բարդ խնդիր. *a* ~ cough անհանգստություն պատճառող հազ. Flies are very ~ this summer Այս ամառ ճանճերից պրծում չկա:

**trough** [trɒf] *n* տաշտ, կերակրատաշտ. խմորի տաշտ. *տնտ*. տնտեսական գործու-

նություն նվազագույն մակարդակ. *օղերկթ*. (իջվածք.) *a* ~ of the pressure ցածր ճնշման կենտրոն:

**trounce** [traʊns] *v* ծեծել, թակել. պատժել:

**troupe** [truːp] *n* խումբ, թատերախումբ:

**trouser** [ˈtruːzə] *n* թատերախմբի անդամ, դերասան:

**trousers** [ˈtraʊzəz] *n* շալվար, տաբատ. ~ leg շալվարի մի ոտը. She wears the ~ in that house *փխք*. Այս տանը կինն է ընտանիքի գլուխը:

**trousseau** [ˈtruːsəʊ] *n* օժիտ, բաժինք:

**trout** [traʊt] *n* կարմրախայտ, իշխան ձուկ:

**trowel** [ˈtraʊəl] *n* շիմ. ծեփիչ, մալա. պարտեզի գոգաթիակ. lay on with a ~ հաստ շերտով քսել. *փխք*. կոպիտ կերպով շողոքորթել/քծնել:

**truancy** [ˈtruːənsi] *n* գործալքում, պարապուրդ:

**truant** [ˈtruːənt] *n* գործալիք. դասերից բացակայող աշակերտ. play ~ գործալքել. դասերից փախչել:

**truce** [truːs] *n* կարճատև դադար/հանգիստ. զինադադար. call a ~ զինադադար հայտարարել. the flag of ~ սպիտակ/զինադադարի դրոշ:

**truck I** [trʌk] *n* բեռնատար ավտոմեքենա. բեռնասայլակ. բաց ապրանքատար վագոն (*ճալ` goods* ~) ~ trailer կցասայլով բեռնատար մեքենա. ~ driver բեռնատար մեքենայի վարորդ. ~ farm/garden բանջարաբուծական տնտեսություն/ֆերմա. ~ farmer բանջարաբույծ, բանջարանոցատեր:

**truck II** [trʌk] *n* փոխանակում, փոխանակություն. մանր ապրանք. *խսկց*. խլամ, հնոտի. անպետք բաներ:

**truckle** [ˈtrʌkl] *v* ստորաքարշություն անել, քծնել:

**truculent** [ˈtrʌkjʊlənt] *a* կատաղի, վայրագ. դաժան, կոպիտ:

**trudge** [trʌdʒ] **1.** *n* հոգնեցուցիչ զբոսանք. երկար ու դժվար ճանապարհ. **2.** *v* հոգնած/դժվարությամբ քայլել. հազիվ-հազ քարշ գալ. He ~d uphill Նա դժվարությամբ սարն էր բարձրանում:

**trudgen** [ˈtrʌdʒən] *n* թրաջեն` լող տալու հատուկ ոճ:

**true** [truː] *a* իսկական, ճշմարիտ. ~ friendship/love իսկական ընկերություն, ճշմարիտ



սեր. ~ event/account իրական իրադարձություն/պատմություն. ~ state of affairs իրական իրավիճակ. (ճիշտ) It is not ~ ճիշտ չէ. come ~ իրականանալ. a ~ scholar իսկական գիտնական. ~ value իրական արժեքը. a ~ likeness լրիվ նմանություն. ~ to life ճշմարտացի. (կյանքի ճշմարտություն) hold ~ ճշմարիտ լինել (հավատարիմ). ~ to one's word/oath իր խոսքին/երդմանը հավատարիմ. (օրինական) ~ copy հաստատված պատճեն. ~ fact ճշմարիտ փաստ. (ճիշտ, ճշգրիտ) The wall is not ~ Պատը ծուռ է. His aim was ~ Նա ճիշտ նշան բռնեց. This note is ~ երժշ. Նոտան ճիշտ է վերցված:

**true** [tru:] adv ճշտորեն, իսկությամբ. ստույգ. ճշմարտորեն. His words ring ~ Նրա բառերը ճշմարտացի են հնչում:

**true blue** [,tru: 'blu:] n ջերմեռանդ կողմնակից, նվիրված հետևորդ:

**true-born** [,tru: 'bɔ:n] a զտարյուն:

**true-bred** [,tru: 'bred] a բարեկիրթ. զտարյուն:

**truffle** ['trʌfl] n գետնասունկ:

**truism** ['tru:izəm] n հանրահայտ, ճշմարտություն. ծեծված բան. թրուիզմ:

**truly** ['tru:li] adv ճշմարտորեն. ստույգ/ճշգրիտ կերպով. ~ good/grateful իսկապես բարի. անկեղծորեն շնորհակալ. T~ it was difficult Դա իսկապես դժվար էր. Tell me ~ ճիշտն/Անկեղծ ասեք. Really and ~? Իրո՞ք, հիրավի՞. yours ~ (նամակում) անկեղծ ձեր, հարգանքներով:

**trump** [trʌmp] v խաբել. ~ up հերյուրել, հնարել:

**trump** [trʌmp] 1. n *թղթիս*. հաղթաթուղթ (կոզիր). play a ~ հաղթաթուղթը գնալ. turn up ~ *փխբ*. բարեհաջող վերջանալ. ace of ~s հաղթաթղթի մեկանոց, տուզ. Hearts are ~s Հաղթաթուղթը փոսիկն է. 2. v հաղթաթղթից գնալ, հաղթաթղթով կտրել:

**trumpetry** ['trʌmpəri] n խաբուսիկ փայլ, կեղծ շքեղություն:

**trumpet** ['trʌmpit] 1. n *երժշ*. փող, շեփոր. sound/blow the ~ փող/շեփոր փչել. blow one's own ~ *փխբ*. պարծենալ, գլուխը գովել. ear ~ լսափողակ. 2. v փող/շեփոր փչել:

**trumpet-call** ['trʌmpitkɔ:l] n փողի/շեփորի ձայն/ազդանշան:

**trumpeter** ['trʌmpitə] n փողհար, շե-

փողահար:

**truncate** [trʌŋ'keɪt] v հատել, կրճատել (հողված և այլն):

**truncated** [trʌŋ'keɪtɪd] a *մաթ*. հատյալ, հատված (կոն և այլն):

**truncheon** ['trʌŋtʃən] 1. n ոստիկանի մահակ, դազանակ. (մարշալի) մական. 2. v մահակով ծեծել:

**trundle** ['trʌndl] n անվիկ, փոքրիկ ակ:

**trunk** [trʌŋk] n ծառի բուն. *կզմիս*. իրան, մարմին. (փղի) կնճիթ. *երկթ*. մայրուղի. բազաժատեղ, բազաժանոց. *հեռ*. գլխավոր գիծ. ~ call միջազգային հեռախոսականչ. ~ road մայրուղի:

**trunks** [trʌŋks] n կիսավարտիք, կարճ շալվար. swimming ~ լողավարտիք:

**truss** [trʌs] n խուրձ, կապ. *բժշկ*. կալանդ, բանդաժ:

**trust** [trʌst] 1. n վստահություն, հավատ. *տնտ*. տրեստ, կոնցեռն. have/put ~ in վստահել, հավատ ընծայել. breach of ~ վստահության չարաշահում. take on ~ հավատալ, հավատով ընդունել. earn smb's ~ մեկի վստահությունը շահել. commit to smb's ~ մեկին վստահել. ~ deed *իրավ*. հավատարմագիր, լիազորագիր. The property is held in ~ Սեփականությունը կառավարվում է լիազորագրի միջոցով. ~ company խնամառու ընկերություն. ~ fund հավատարմագրային հիմնադրում. 2. a վստահված, վստահությամբ հանձնված:

**trust** [trʌst] v վստահել, հավատալ. ապավինել, հույս դնել. ~ fully, completely/blindly լրիվ, կուրորեն վստահել. He is not to be ~ed Նրան չի կարելի վստահել. You can't ~ a word Ոչ մի խոսքին չի կարելի հավատալ. T~ him to spoil things *խսկց*. Կարող ես վստահ լինել, նա ամեն ինչ կփչացնի:

**trusted** ['trʌstɪd] a հուսալի, վստահելի. *հմկրգ*. ~ computer գերհուսալի համակարգիչ:

**trustee** [,trʌ'sti:] n խնամակալ, հոգաբարձու. հավատարմատար. Board of T~s Հոգաբարձուների խորհուրդ. ~ in bankruptcy սնանկացածի գույքի կառավարիչ:

**trustful** ['trʌstfl] a դյուրահավատ, հավատ ընծայող:

**trustiness** ['trʌstɪnəs] n հավատարմություն, նվիրվածություն. հուսալիություն:

**trustless** ['trʌstləs] a անվստահելի, անհու-

սալի, անհավատարիմ:

**trustworthy** [ˈtrʌstwə:ði] *a* վստահելի, հուսալի, վստահության արժանի. ~ guarantee հուսալի երաշխիք. ~ testimony վստահելի վկայություն/ցուցմունքներ:

**trusty** [ˈtrʌsti] *a* վստահելի, ազնիվ, անխարդախ:

**truth** [tru:θ] *n* ճշմարտություն. bitter/home ~ դառը ճշմարտություն. naked/simple ~ զուտ ճշմարտություն. absolute ~ բացարձակ ճշմարտություն. in ~ հիրավի, արդարև. tell the ~, ~ to tell ճիշտը, ճշմարտությունը ասել. reveal, find out, learn/conceal the ~ հայտնաբերել/թաքցնել ճշմարտությունը the whole ~ ամբողջ ճշմարտությունը. an established ~ պարզված/հաստատված ճշմարտություն. not a word of ~ ճշմարտության ոչ մի նշույլ/հատիկ. tell a few home ~s. ճշմարտությունը երեսին ասել. People don't like home ~s ճշմարտությունը աչք է ծակում. stretch the ~ չափազանցնել. *հմկրգ.* ճշտություն. ~ table ճշտության աղյուսակ. ~ value ճշտության արժեք:

**truthful** [ˈtru:θfʊl] *a* ճիշտ, ճշմարտացի, ճշմարիտ. be quite ~ ճշմարտությունն ասել:

**truthless** [ˈtru:θləs] *a* ոչ ճշմարիտ, սխալ, սուտ:

**try** [traɪ] *n* փորձ, փորձելը. have a ~ փորձել, փորձ կատարել. աշխատել Let me have a ~ թույլ տվեք փորձեմ. have two tries երկու փորձ կատարել. It's worth a ~ Արժե փորձել:

**try** [traɪ] *v* փորձել, փորձ անել. ~ to understand փորձել հասկանալ. ~ to mend փորձել վերանորոգել/կարգի բերել. ~ one's hand at smth ուժերը /հնարավորությունները փորձել. ~ one's best բոլոր ուժերը/ջանքերը գործի դնել, ամեն ինչ անել. It's ~ing to rain Անձրև է ուզում գալ. ~ very hard շատ ջանքեր թափել. (աշխատել) ~ not to forget աշխատել չմոռանալ. T~ and come ! Աշխատիր գալ. T~ your best Արա ամեն հնարավոր բան. ~ one's strength/luck ուժերը/բախտը փորձել. ~ as he would ինչքան էլ փորձեր, ինչ էլ աներ. (փորձել, համտես անել) ~ the cake թխվածքի համը տեսնել/փորձել. ~ the new medicine նոր դեղամիջոցը փորձել. ~ one's patience մեկի համբերությունը փորձել/փորձի ենթարկել ~ the door փորձել դուռը բացել/փակել. ~ knocking փորձել թակել/ծեծել.

*իրավ.* դատել, հետաքննություն կատարել. be tried for theft գողության համար դատվել. ~ on հագուստը փորձել. ~ on a coat/dress/shoes վերարկու/զգեստ/կոշիկ փորձել. You can't ~ that on with me *փ/սք.* Ինձ չես խաբի:

**trying** [ˈtraɪɪŋ] *a* ծանր, հոգնեցուցիչ, դժվար. a ~ time/journey ծանր ժամանակ. դժվար ճամփորդություն. ~ to the health առողջության համար վնասակար. He can be very ~ երբեմն նրա հետ շատ ծանր է. You are being very ~ today Այսօր դու անտանելի ես:

**T-shirt** [ˈti:ʃə:t] *n* թևքով մայկա:

**T-square** [ˈti:skweə] *n* անկյունաքանոն, ռեսշինա, զծագրական քանոն:

**tub** [tʌb] *n* թաս. տաշտ, տակառ, կոնք:

**tubby** [ˈtʌbi] *a* փոքրիկ, պստիկ. a ~ little man/woman փոքրիկ/կարճահասակ տղա-մարդ/կին:

**tube** [tju:b] *n* խողովակ. ծխամորժ. glass/metal/rubber ~ ապակե/մետաղե/ռետինե խողովակ. (պարկուճ) ~ of tooth paste/paint/cream ատամնամածուկի/ներկի/քսուքի պարկուճ. the ~ *խսկց.* մետրո (Անգլիա). inner ~ (ավտո, հեծ.) կամերա:

**tuber** [ˈtju:bə] *n* *սք.* պալար, գնդարմատ:

**tubeless** [ˈtju:bləs] *a* a ~ tyre ավտոդող առանց կամերայի:

**tubercle** [ˈtju:bəkl] *n* *սք.* ելունդ, պալարիկ. *բժշկ.* հանգույց (պալարախտի), կոշտացման պալարիկ:

**tubercular** [tjuˈbɜ:kjʊlə] *բժշկ.* պալարախտի, տուբերկուլյոզային:

**tuberculosis** [tju,bɜ:kjuˈləʊsɪs] *n* *բժշկ.* պալարախտ. թոքախտ. տուբերկուլյոզ:

**tuberoze** [ˈtju:bərəʊz] *n* *սք.* բրաբիոն:

**tubing** [ˈtju:bɪŋ] *n* *հվք.* խողովակներ, խողովակաշար. *տե/ս.* թյուբինգ:

**tubular** [ˈtju:bjʊlə] *a* խողովակաձև. գլանաձև. գլանային:

**tuck** [tʌk] *n* ծալ, ծալվածք (զգեստի վրա). *խսկց.* ուտելիք, քաղցրեղեն:

**tuck** [tʌk] *v* խցկել, խոթել. տակը ծալել/հավաքել. ծալել/փոթել անել. ~ the note into the bag երկտողը պայուսակի մեջ խցկել. ~ one's legs ոտքերը տակը ծալել. ~ the sheets in անկողինը հավաքել, սավանները ներքնակի տակ ծալել. ~ in *խսկց.* ախորժակով ուտել. ~ in hungrily լիքը բերանով ուտել/

խժռել. ~ up վեր քաշել, քշտել. ~ one's sleeves up քևերը վեր քշտել. be warmly ~ed up in bed անկողնում վերնակով լավ փաթաթված պառնել. ~ away թաքցնել, պահել. ~ed away behind the trees ծառերի հետևում թաքցնված լինել. *խսկց.* (ուտելիք) Where he ~-s it away? Որտե՞ղ է այդ ամբողջը (ուտելիքը) տեղավորվում:

**tucker** ['tʌkə] *n* ժանյակե օձիք/կրծկալ. *խսկց.* ուտելիք:

**tuck in** ['tʌkin] *n* *խսկց.* համեղ/կշտացնող ուտելիք:

**tuck-shop** ['tʌkʃɒp] *n* հրուշակեղենի խանութ:

**Tuesday** ['tju:zdeɪ] *n* երեքշաբթի:

**tuft** [tʌft] *n* փունջ (փետուրների/մազերի). կապուկ (խոտի). ծառերի/թփերի խումբ:

**tug** [tʌg] **1.** *n* ձգում, ձիգ տալը, քաշելը. give a ~ ձգել, քաշել. բուքսիրային նավ, բուքսիր (*նաև* ~ boat). ~ -of-war ձգափոկ, քարշափոկ. **2.** *v* ձգել, քաշել. բուքսիրել, բուքսիրով քաշել ~ the rope/one's arm պարանը ձգել. մեկի թևը քաշել:

**tuition** [tju:'ɪʃn] *n* ուսուցում. have private ~ in մասնավոր դասեր վերցնել. ուսման վարձ (*նաև* ~ fees):

**tulip** ['tju:lɪp] *n* վարդակակաչ, կակաչ:

**tulle** [tju:l] *n* շղարշ, շղարշանման գործվածք, տյուլ:

**tumble** ['tʌmbəl] *n* վայր ընկնելը, գլուխկոնծի տալը. անկարգություն, խառնաշփոթություն:

**tumble** ['tʌmbəl] *v* վայր ընկնել. շուռ գալ, շրջվել. գլուխկոնծի/թավալալոր տալ. ~ off the horse/into the river ձիուց վայր ընկնել, շուռ գալ. գետի մեջ ընկնել. ~ into/out of bed մահճակալի վրա նետվել. մահճակալից ցած գլորվել. ~ over the chair աթոռի վրայով շուռ գալ. The pile of books ~d down **Գրքերի կիտուկը շուռ եկավ/շրջվեց.** *խսկց.* հասկանալ, կռահել, գլխի ընկնել He hasn't ~d to it yet **Դեռ տեղ չի հասել/չի հասկացել/կռահել/գլխի չի ընկել:**

**tumbledown** ['tʌmbldaʊn] *a* կիսաքանդ, հնախարխուլ:

**tumbler** ['tʌmblə] *n* կրկեսային մարմնամարզիկ, լարախաղաց. ակրոբատ. բաժակ. *տեխ.* ռևերսային սարք:

**tumid** ['tju:mɪd] *a* ուռած, փքուն. ճոռճո:

**tummy** ['tʌmi] *n* *խսկց.* փոր, փորիկ:

**tumour** ['tju:mə] *n* ուռուցք:

**tumult** ['tju:mʌlt] *n* ժխոր, իրարանցում. վրդովմունք, հուզմունք:

**tumultuous** [tju'mʌltʃuəs] *a* բուռն, աղմուկոտ. անկարգ, խառնաշփոթ. a ~ meeting աղմուկոտ ժողով. ~ applause բուռն ծափահարություններ. (հուզված, վրդովված) a ~ crowd հուզված ամբոխ:

**tunulus** ['tju:mjʊləs] *n* գերեզմանաթունք:

**tun** [tʌn] *n* մեծ տակառ:

**tune** [tju:n] *n* եղանակ, մեղեդի. merry/lively/popular/forgotten ~ ուրախ/աշխույժ/ հանրահայտ/մոռացված եղանակ/մեղեդի. sing/whistle/play a ~ երգել/սուլել/նվագել եղանակ. sing in/out of ~ ճիշտ/սխալ երգել. in/out of ~ (*երժշ.* գործիքի մասին) լարված/լարից ընկած. change one's ~ տոնը փոխել. sing another ~ (*նաև* ~ *փխբ.*) ուրիշ երգ երգել:

**tune** [tju:n] *v* (*երժշ.* գործիք) լարել. ընդունիչը հարմարեցնել որևէ ալիքին. be ~d in properly համապատասխան կերպով միացած/կարգավորված լինել. ~ in to a station/medium wave որևէ կայանի/միջին ալիքի միանալ. The orchestra is tuning up **Նվագախումբը գործիքները լարում է/պատրաստվում է նվագել:**

**tuneful** ['tju:nfl] *a* բարեհնչյուն, քաղցրալուր, ներդաշնակ:

**tuneless** ['tju:nləs] *a* աններդաշնակ, անբարեհնչյուն:

**tuner** ['tju:nə] *n* լարող (անձ). լարման սարք. piano ~ դաշնամուր լարող:

**tungsten** ['tʌŋstən] *n* *քիմ.* վոլֆրամ (մետաղ):

**tunic** ['tju:nɪk] *n* բլուզ. *պսմ.* տունիկա, պարեզոտ (հռոմեացիների). *ռզմ.* տարազաբաճկոն (*նաև* ~ soldier's ~). կիտել:

**tuning** ['tju:nɪŋ] *n* լարում. *ռադ.* միացում. ~ fork *երժշ.* կամերտոն:

**tunnel** ['tʌnl] *n* թունել. ստորանցք, գետնանցք. railway ~ երկաթուղային թունել. make a ~ թունել/գետնանցք անցկացնել. pass through a ~ թունելի միջով անցնել:

**tunnel** ['tʌnl] *v* թունել անցկացնել. *ռզմ.* ակամային ստորանցքեր բացել. ~ into a hillside բլրի միջով թունել փորել/անցկացնել:

**tunny fish** ['tʌnɪfɪʃ] *n* *կենդ.* թյուննոս

(ծուկ):  
**turban** [ˈtə:bən] n չալմա, գլխափաթեղ:  
**turbid** [ˈtə:bid] a պղտոր. մշուշապատ, անպարզ. անորոշ, խճճված:  
**turbine** [ˈtə:bain] n տուրբին:  
**turbojet** [ˈtə:bəʊdʒet] n տուրբինառեակտիվ:  
**turboprop** [ˈtə:bəʊprɒp] n տուրբինապտուտակավոր:  
**turbot** [ˈtə:bət] n կենդ. վահանածուկ, տափակածուկ:  
**turbulence** [ˈtə:bjʊləns] n ալեկոծություն. հողմապտույտ. *փխք*. խլրտում. խռովություն, հուզում. մոլեգնություն:  
**turbulent** [ˈtə:bjʊlənt] a փոթորկալից, անհանգիստ. մոլեգն, կատաղի. *ֆիզ*. մրրկալի:  
**tureen** [tʃuˈri:n] n ապուրաման, խոր փսե:  
**turf** [ˈtə:f] n տորֆ, կունձղ: the ~ *մրգ*. ձիարշավ. ձիարշավի ուղի:  
**turgid** [ˈtə:dsɪd] a ուռած, փքված. փքուն, ճռռոն (ոճ):  
**turkey** [ˈtə:ki] n հնդկահավ, հնդուհավ. հնդկահավի միս. talk (cold) ~ *ամ*. ճշմարտությունը երեսին ասել:  
**turkey-cock** [ˈtə:kɪkɔk] n հնդկաքաղաղ:  
**Turkish** [ˈtə:kiʃ] a, n թուրքական, թուրքերեն. a ~ bath թուրքական բաղնիք. ~ delight ռահաթ-լոխում:  
**turmoil** [ˈtə:mɔɪl] n իրարանցում, շփոթություն, խուճապ. Everything is in a ~ *խառնաշփոթ վիճակ է*. His thoughts were in a ~ Մտքերը խճճվել էին:  
**turn** [tɜ:n] n պտույտ, դարձ. a ~ of a wheel/handle անիվի/բռնակի մի պտույտ. a ~ of the key բանալու մի պտույտ. take a bad ~ վատ ընթացք ստանալ. to a ~ իսկ և իսկ, անհրաժեշտ չափով. The meat is done to a ~ Միսը պատրաստված է անհրաժեշտ չափով. He never does a hand's ~ *փխք*. Երբեք մատն էլ չի շարժի, մատը մատին չի խփի. take an unexpected/dangerous ~ անսպասելի/վտանգավոր ընթացք ստանալ. (դարձ, դարձում) a ~ to the left դարձ դեպի ձախ. left-hand/sharp ~ ձախ դարձում, կտրուկ դարձ. sudden ~ հանկարծակի/անսպասելի դարձ. make a ~ (ավտո) շրջադարձ անել. at every ~ ամեն քայլափոխին. take a ~ for the better/worse դեպի վատը/լավը փոխվել. at the

~ of the century դարաշրջանի սկզբում/վերջում. (հերթ) It's my ~ *Իմ հերթն է*. by ~s, in ~ հերթով. out of ~ առանց հերթի. miss one's ~ հերթը բաց թողնել. take ~s իրար փոխարինել. ~ and ~ about փոխ առ փոխ, հերթով. do smb a good/bad/ill ~ լավ/վատ ծառայություն մատուցել. laugh and cry by ~s մերթ ծիծաղել, մերթ լաց լինել. (զբոսանք) go for a/take a ~ զբոսանքի գնալ, զբոսնել. (հակում, ձիրք) have a ~ for music երաժշտական ձիրք ունենալ. You gave me quite a ~ *փխք*. Դու ինձ շատ վախեցրիր. serve a ~ ձեռք տալ, հարմար լինել. *թատր*. համար do a comic ~ ծիծաղելի համար կատարել. the star ~ ծրագրի մեխը:

**vote** [vəʊt] v քվեարկել, ձայն տալ. the right to ~ ձայնի իրավունք. ~ for/against թեր/կողմ և դեմ քվեարկել. ~ down չքվեարկել/չընտրել/տապալել. The proposal was ~d down Առաջարկությունը չընդունվեց. ~ in/into/on to ձայների մեծամասնությամբ ընտրել. ~ in a government կառավարություն ընտրել. The film was ~d a success Ֆիլմը հաջողված համարվեց. ~ money for smth *տնտ.* ֆինանսավորել, դրամ հատկացնել. ~ for imposing the

tax քվեարկել հարկեր մտցնելու օգտին. ~ smb into an office/to a committee ընտրել պաշտոնում/կոմիտեի կազմում. ~ a party out of power ղեկավար կուսակցությունը տապալել ընտրությունների ժամանակ ~ through անցկացնել, ընդունել. The bill was ~d through Օրենքի նախագիծը ընդունվեց/անցավ:

**voter** ['vəʊtə] n ընտրող (ընտրական իրավունք ունեցող). legal ~ ձայնի իրավունք ունեցող անձ, քվեարկության մասնակից:

**voting** ['vəʊtɪŋ] n քվեարկություն, ընտրություններ. ~ age ընտրելու/քվեարկելու տարիք. a ~ paper/slip քվեաթերթ. ընտրական բյուլետեն. ~ booth քվեախցիկ:

**vouch** [vaʊtʃ] v երաշխավորել, հաստատել. ~ for the truth ճշմարտությունը հաստատել:

**voucher** ['vaʊtʃə] n երաշխավոր (անձ, փաստաթուղթ), երաշխավորություն. travel ~ ուղեգիր. luncheon ~ ճաշի կտրոն/տալոն privatization ~ մասնավորեցման պահանջատոմս:

**vouchsafe** [vaʊtʃ'seɪf] v արժանացնել. *հեզմ.* բարեհաճել, հաճել. He ~d to reply Նա բարեհաճեց պատասխանել:

**vow** [vaʊ] n երդում, խոստում. make/take a ~ երդվել, երդում/խոստում տալ. marriage/monastic ~ ամուսնական/վանականի երդում. keep one's ~ երդումը պահել/չխախտել. be under a vow of ~ կուսակրոնության ուխտ անել:

**vow** [vaʊ] v երդում/խոստում տալ. ~ that խոստանալ, որ. ~ to do smth ինչ-որ բան անելու երդում տալ. ~ vengeance on smb վրեժխնդրության երդում տալ:

**vowel** ['vaʊəl] n *հնչ.* ձայնավոր հնչյուն/

տառ:

**voyage** ['vɔɪdʒ] 1. n ծովային /ճամփորդություն/ուղևորություն. go/set out on a ~ ուղևորության գնալ. a round-the-world ~ շուրջերկրյա ճամփորդություն. maiden ~ նավի առաջին ուղևորությունը. homeward ~ հետադարձ (դեպի տուն) ուղևորություն. 2. v ծովով ճամփորդել. նավարկել:

**voyager** ['vɔɪdʒə] n ճանապարհորդ (ծովով, ջրով), ուղևոր:

**vulcanize** ['vʌlkənaɪz] v *տեխ.* վուլկանացնել:

**vulgar** ['vʌlgə] a գռեհիկ, կոպիտ, բիրտ. a ~ expression կոպիտ/գռեհիկ արտահայտություն. a ~ person գռեհկամիտ/ճղճիմ մարդ. ~ fraction *մաթ.* հասարակ կոտորակ:

**vulgarian** [vʌl'gɛəriən] n գռեհիկ/անկիրթ մարդ:

**vulgarism** ['vʌlgə,rɪzəm] n գռեհկաբանություն, գռեհիկ արտահայտություն. *լեզվ.* օտարաբան բառեր:

**vulgarity** [vʌl'gærəti] n գռեհկություն:

**vulgarize** ['vʌlgəraɪz] v գռեհկացնել. տափակ/ծեծված դարձնել:

**vulnerable** ['vʌlnərəbl] a խոցելի. ~ to criticism քննադատության նկատմամբ զգայուն. a position ~ to attack ոչ բարենպաստ/խոցելի դիրք. a young and ~ person երիտասարդ և անպաշտպան անձնավորություն:

**vulpine** ['vʌlpain] a աղվեսային, աղվեսի. խորամանկ, նենգ:

**vulture** ['vʌltʃə] n *կենդ.* անգղ, գիշակեր թռչուն. *փխբ.* գիշատիչ, հափշտակիչ:

## W

**W, w** [ˈdʌbljuː] **n** անգլերեն այբուբենի 23-րդ տառը:

**wad** [wɒd] **n** բրդի/բամբակի գնդիկ, գնծիկ, կծիկ. *ամ.* (փողի) կապոց. a ~ of (bank)notes քղթադրամի կապոց:

**wadding** [ˈwɒdɪŋ] **n** աստառելը. (բամբակով) միջադիր դնելը. pack smth in/with ~ որևէ բան բամբակով փաթեթավորել:

**waddle** [ˈwɒdl] **1.** **n** օրորվելով քայլելը. բադի քայլվածք. **2.** **v** օրորվելով/բադիկբադիկ քայլել:

**wade** [weɪd] **v** (դժվարությամբ) անցնել, անց կենալ, կտրել անցնել. ~ across a stream գետը (ծանծաղուտով) անցնել ~ ashore ծանծաղուտով ափ հասնել. ~ through snow/mud դժվարությամբ անցնել ձյան/ցեխի միջով. ~ through the book *փ/սք.* հազիվ մինչև վերջ գիրքը կարդալ. ~ in քննադատել. ~ into պատահաբար/անսպասելիորեն գտնել/հայտնաբերել:

**wader** [ˈweɪdə] **n** ճահճային թռչուն. անջրանցիկ երկարաճիտ կոշիկներ:

**wading** [ˈweɪdɪŋ] **n** ծանծաղուտով անցնելը. ճահճային թռչուն:

**wafer** [ˈweɪfə] **n** վաֆլի. եկեղեցական նշխար:

**waffle** [ˈwɒfl] **n** վաֆլի. *փ/սք.* դատարկ խոսակցություն. ջուր ծեծելը. The article is just ~ Այս հոդվածը ամբողջովին ջուր է:

**waft** [wɑːft] **n** թևերի շարժում/սահում. քամու/հովի թեթև շունչ. թեթև բուրմունք:

**wag** I [wæɡ] **n** թափահարում, արագ շարժում:

**wag** II [wæɡ] **n** կատակասեր/զվարճախոս մարդ. play the ~ աշխատանքից/դասերից խուսափել. ժամանակը հաճույքներից տրամադրել:

**wag** [wæɡ] **v** թափահարել. (շան մասին) պոչը խաղացնել. The dog was ~ing its tail Շունը պոչն էր խաղացնում/թափահարում. ~ one's finger մատը թափ տալ, մատով սպառնալ. ~ one's tongue շատախոսել, չարախոսել:

**wage** [weɪdʒ] **n** աշխատավարձ. a living ~

ապրուստի համար անհրաժեշտ մինիմում. cut down/dock/reduce ~s աշխատավարձը կրճատել ~ freeze աշխատավարձի սառեցում. ~ in kind բնամթերքով աշխատավարձ. ~ ceiling աշխատավարձի առավելագույնը. ~ earner փող վաստակող, ընտանիք պահող. be the ~ of the family ընտանիքի փող վաստակողը լինել. high ~ level աշխատավարձի բարձր մակարդակ:

**wage** [weɪdʒ] **v** վարել, մղել. ~ war/a campaign պատերազմ/կամպանիա վարել:

**wager** [ˈweɪdʒə] **1.** **n** գրագ, խաղազումար. **2.** **v** գրագ գալ. որևէ բան վտանգի ենթարկել:

**waggish** [ˈwæɡɪʃ] **a** զվարճալի, կատակային. կատակասեր, զվարճասեր:

**wag(g)on** [ˈwæɡən] **n** սայլ, ֆուրգոն. goods ~ *երկթ.* բաց/ապրանքատար վագոն. covered ~ փակ սայլակ. patrol ~ բանտարկյալներ տեղափոխող փակ ավտոմոբիլ:

**wag(g)oner** [ˈwæɡənə] **n** սայլապան, բեռնասայլորդ. the W ~ *աստղգ.* Կառավար (համաստեղություն):

**wagtail** [ˈwæɡteɪl] **n** խաղատուտ (թռչուն):

**waif** [weɪf] **n** անապաստան. դեն զգած իրեր. ~s and strays անապաստան երեխաներ:

**wail** [weɪl] **1.** **n** ողբ, լացու կոծ. (քամու) ոռնոց. **2.** **v** ոռնալ. սգալ. ողբածայն երգել (*մակ ~ over*). A dog was ~ing Շունը ոռնում էր. The wind ~ed Քամին ոռնում էր:

**wain** [weɪn] **n** սայլ, կառք. the W~, Charles's W ~ *աստղգ.* Մեծ Արջ համաստեղությունը:

**wainscot** [ˈweɪnskɒt] **1.** **n** պատի տախտակադրված, պանել. **2.** **v** պանելապատել:

**waist** [weɪst] **n** գոտկատեղ, մեջք, իրան. slim/slender ~ նրբիրան. put the arms round the ~ իրանը գրկել. ~ slip ներքնագգեստ փեշ (յուբկա). stripped to the ~ մերկ մինչև գոտկատեղ. high/low ~ բարձր/ցածր գոտկատեղ. tight in the ~ գոտկատեղում նեղ լինել:

**waistbelt** [ˈweɪstbeɪlt] **n** գոտեփոկ, կաշվե գոտի:

**waistcoat** [ˈweɪskəʊt] **n** բաճկոնակ, ժիլետ. strait ~ զսպաշապիկ:

**waistdeep** [ˌweɪstˈdiːp] **a, adv** (*մակ ~ waisthigh*) մինչև գոտին/գոտկատեղը:



**wait** [weɪt] **n** սպասում, սպասելը. have a long ~ երկար սպասել. (դարանում նստել) lay/lie in ~ դարանամուտ լինել. The tiger lay in ~ for its pray Վագրը դարանամուտ սպասում էր իր զոհին. *ռզմ.* դարան սարքել. դարանամուտ լինել:

**wait** [weɪt] **v** սպասել. keep ~ ing սպասեցնել տալ. ~ a minute մի րոպե սպասեք. We'll have to ~ and see կապրենք-կտեսնենք. Just you ~ Դե սպասիր. (սպասարկել) ~ on սպասարկել. ~ on the guests/visitors սպասարկել հյուրերին/այցելուներին. ~ up for չքնել, սպասել. She ~ed up for them Նա չքնեց, նրանց սպասեց. ~ for an opportunity առիթի սպասել. ~ at table սեղանի մոտ սպասարկել. ~ smb hand and foot կատարել բոլոր ցանկությունները.

**waiter** ['weɪtə] **n** սպասավոր, մատուցող:

**waiting** ['weɪtɪŋ] **n** սպասում, սպասելը. be tired of ~ հոգնել/ճանճրանալ սպասելուց. ~ list հերթագրվածների ցուցակ. be first on the ~ առաջինը լինել հերթագրվածների ցուցակում. put smn on the ~ հերթագրել. ~ period/time սպասելու ժամանակ. No ~ ! (*ավտո*) կայանելը/կանգառը արգելվում է:

**waiting room** ['weɪtɪŋru:m] **n** սպասասրահ, սպասարան. ընդունարան:

**waitress** ['weɪtrəs] **n** մատուցողուհի, մատուցող կին:

**waive** [weɪv] **v** հրաժարվել, ժամանակավորապես հետաձգել. ~ one's right իրավունքից հրաժարվել. ~ one's rights in favour of իրավունքից հրաժարվել հոգուտ. ~ a claim *հրավ.* հրաժարվել պահանջներից/հայցից. W~d the rule in my favour կարգը/կանոնը խախտեց ի օգուտ ինձ:

**waiver** ['weɪvə] **n** հրաժարում (իրավունքից, պահանջից). express ~ *հրավ.* ուղղակի հրաժարում. implied ~ ենթադրվող հրաժարում. ~ of rights իրավունքներից հրաժարում:

**wake** [weɪk] **n** նավահետք (ընթացող նավի). in the ~ նավահետքերով. *փխք.* մեկի մի բանի հետքերով, կրնկակոխ. War brought hunger in its ~ Պատերազմը իր հետևից բաղք բերեց:

**wake** [weɪk] **v** (*նակ* ~ up) արթնանալ, զարթնել. ~ up ! Արթնացե՛ք, Վե՛ր կացե՛ք. Don't ~ him up Մի՛ արթնացրե՛ք նրան. I hope I didn't

~ you *Հուսով եմ ձեզ չարթնացրի.* enough noise to ~ the dead այքան բարձր աղմուկ, որ մեռածին էլ կարթնացնի. ~ memories *փխք.* հիշողություններ արթնացնել. ~ up to reality կյանքին իրատեսորեն վերաբերվել. ~ up to danger գիտակցել վտանգը:

**wakeful** ['weɪkfʊl] **a** անքուն, արթուն. աշալուրջ, զգոն:

**waken** ['weɪkən] **v** արթնանալ, զարթնել. արթնացնել:

**waking** ['weɪkɪŋ] **a** արթուն, անքուն. աշալուրջ. during ~ hours արթուն ժամերին:

**walk** [wɔ:k] **n** քայլելը, ոտքով գնալը. զբոսանք. ճանապարհ. sharp ~ արագ քայլելը. short/pleasant/tiring ~ կարճատև/հաճելի/հոգնեցուցիչ զբոսանք. go for /a ~, take a ~ զբոսնել. take smb for a ~ մեկին զբոսանքի տանել. ten minutes ~ տասը րոպեի ճանապարհ. (քայլելով). people from all ~s of life *փխք.* մարդիկ տարբեր խավերից/մասնագիտություններից. (քայլ/վաճք) at a quick ~ արագ քայլերով. know a person by his ~ մարդուն քայլվածքից ճանաչել. drop into a ~ անցնել քայլքի:

**walk** [wɔ:k] **v** քայլել. (ոտքով) գնալ. շրջել, շրջագայել. ~ along the street փողոցով քայլել. ~ straight ahead ուղիղ առաջ քայլել. ~ with difficulty դժվարությամբ քայլել. ~ with a slight limp քայլելիս մի թեթև կաղալ. ~ away հեռանալ. ~ away with the game *փխք.* հաղթություն տանել, հաղթել. too far to ~ քայլելու համար բավական հեռու. ~ all the way ամբողջ ճանապարհը ոտքով անցնել. ~ round the shops խանութներում շրջել. (զբոսնել) ~ about the town քաղաքում զբոսնել. (ճանապարհ դնել) ~ smb home մեկին տուն ճանապարհել. ~ smb to the elevator մինչև վերելակ ճանապարհել. ~ about/a-round մի քիչ զբոսնել, պտտվել, պտույտ կատարել. ~ in/into ներս մտնել. հարձակվել. ~ into the trap *փխք.* ծուղակն ընկնել. ~ off գնալ. ~ off with վերցնել, տանել, թռցնել. ~ off the headache քայլելուց գլխացավն անցնել. ~ out դուրս գնալ, ման գալ *ամ.* գործադուլ անել. ~ out of the room սենյակից դուրս գնալ. She is ~ing out with John Նա Ջոնի հետ է հանդիպում The workers have ~ed out Բանվորները գործադուլ կազմակերպեցին ~ over վրայով անցնել, կտրել

անցնել. ~ over the bridge կամրջով անցնել.  
The match was a ~ over for us *փխք*. Մենք հա-  
կառակորդին պարտության մատնեցինք. ~  
up մոտենալ, մոտ գալ. ~ up to the window  
պատուհանին մոտենալ. ~ up and down  
անցուդարձ, վերուվար անել. ~ up and down  
the street փողոցով անցուդարձ անել:  
**walker** [ˈwɑ:kə] n ոտքով շատ ման եկող.  
լավ քայլող. *մրգ*. մարզաքայլք:  
**walking** [ˈwɑ:kiŋ] n քայլելը, ոտքով գնալ  
գալը. երթևեկելը:  
**walking** [ˈwɑ:kiŋ] a քայլող, երթևեկ. շրջիկ.  
*տեխ*. ինքնաշարժ. ~ excavator քայլող էքս-  
կավատոր. ~ corpse կենդանի կմախք/դիակ.  
~ dictionary քայլող հանրագիտարան. ~ gen-  
tleman/lady *թատր*. անխոս դերակատար. ~  
part *թատր*. անխոս դեր. ~ holiday/tour ար-  
շավ (ոտքով). within ~ distance մոտիկ, ոչ  
հեռու, ոտքով կարելի է հասնել:  
**walking-papers** [ˈwɑ:kiŋ,peɪpəz] n արծա-  
կում աշխատանքից. (*նաև* walking ticket)  
get ~ աշխատանքից ազատվել/հեռացվել:  
**walking-stick** [ˈwɑ:kiŋstɪk] n ձեռնափայտ,  
զավազան:  
**wall** [wɔ:l] n պատ. blank/dead ~ խուլ պատ.  
outside/outer ~ դրսի պատ. inner ~ ներսի  
պատ. build/break down/destroy ~s կառուցել/  
քանդել/ավերել պատերը. drive to the ~ պա-  
տին սեղմել. with one's back to the ~ պատին  
սեղմած. beat one's head against the brick/stone  
~ գլուխը պատով տալ/պատին խփել. go to  
the ~ անհաջողություն կրել. սնանկանալ.  
give one the ~ մի կողմ քաշվել, ճանապարհ  
տալ. take ~ of ճանապարհ չտալ. drive smn  
up the ~ պատեպատ զարկել a ~ clock  
պատի ժամացույց. a ~ map պատի քար-  
տեզ. a ~ newspaper պատի թերթ. a ~ paper  
պաստառ:  
**wall** [wɔ:l] v շրջափակել, պարսպապատել.  
~ up անցքը փակել:  
**walled** [wɔ:ld] a պարսպապատ. ցանկապա-  
տած. a ~ town պարսպապատ քաղաք. a ~  
garden ցանկապատ(ած) այգի:  
**wallet** [ˈwɒlɪt] n դրամապանակ, կաշվե պա-  
յուսակ:  
**wall-eye** [ˈwɔ:lai] n աչքի հատ, բբի վրայի  
սպիտակ հատ:  
**wall-eyed** [ˈwɔ:laid] a աչքի վրա հատ ունե-  
ցող:

**wall-flower** [ˈwɔ:l,flaʊə] n *բար*. շահարակ.  
*խսկց*. պարահանդեսում առանց կավալե-  
րի կին:  
**wallop** [ˈwɒləp] v *խսկց*. ծեծել, դնգատել:  
**wallow** [ˈwɒləʊ] v թավալվել, թավալ տալ  
ցեխի/կեղտոտ ջրի մեջ. ~ in mud ցեխի մեջ  
թավալվել. ~ in a hot bath *փխք*. տաք վան-  
նայում պառկել. ~ in money փողի մեջ լո-  
ղալ, ոսկու մեջ թաղված լինել. She ~s in self-  
pity Սիրում է իրեն խղճալ:  
**wall painting** [ˈwɔ:l,peɪntɪŋ] n որմնանկար:  
**wall socket** [ˈwɔ:l sɒkɪt] էլ. վարդակ:  
**walnut** [ˈwɔ:lnʌt] 1. n ընկույզ, ընկուզենի. 2.  
a ընկույզի:  
**walrus** [ˈwɔ:lɹəs] n ծովացուլ, ծովափիղ:  
**waltz** [wɔ:ls] n, v վալս. վալս պարել, վալսել:  
**wan** [wɒn] a գունատ, անգույն, խամրած. հի-  
վանդոտ. a ~ sky գունատ/խամրած երկինք.  
a ~ smile դժգույն ժպիտ:  
**wand** [wɒnd] n դիրիժորի փայտիկ/ծողիկ.  
մական:  
**wander** [ˈwɒndə] v թափառել. դեգերել. ~  
round the park/over countryside/from place to  
place թափառել զբոսայգում/արվարձաննե-  
րում/տեղից տեղ. He ~ed off towards the sea  
Նա դանդաղորեն գնաց դեպի ծով. ~ into a  
bookshop գրախանութ անցնել. (շեղվել) ~  
from the point թեմայից շեղվել. His thoughts  
began to ~ Ստբերը ցրվեցին. (զառանցել) He  
is ~ing Նա զառանցում է:  
**wanderer** [ˈwɒndərə] n թափառական,  
շրջմուխիկ:  
**wanderings** [ˈwɒndərɪŋ] n դեգերում. թա-  
փառումներ, ճամփորդություն. զառան-  
ցանք:  
**wanderlust** [ˈwɒndəlʌst] n ճանապարհոր-  
դության տենջ:  
**wane** [weɪn] n պակասում, նվազում. be on the  
~ պակասել, նվազել. վերջանալու վրա  
լիներել. The moon is on the ~ Լուսինը նվա-  
զում է (վերջին քառորդն է). ~ of life *փխք*.  
Կյանքի վերջալույս. His influence is on the ~  
Նրա ազդեցությունը նվազում է:  
**waning** [weɪnɪŋ] a նվազող, պակասող, մա-  
րող. քայքայվող (առողջություն):  
**wangle** [ˈwæŋɡl] n 1. *խսկց*. շահադիտական  
ժանոթություն. get the job by a ~ աշխա-  
տանքը ժանոթության միջոցով գտնել. 2. v  
~ tickets ժանոթությամբ տոմսեր հաջողեց-

նել/հաջողացնել. ~ an extra week's holiday մի շաբաթ ավել արձակուրդ հաջողեցնել/հաջողացնել:

**want** [wɒnt] **n** կարիք. պակաս, բացակայություն. ~ of appetite ախորժակի պակաս. for ~ of չլինելու/բացակայության պատճառով. for ~ of care խնամքի բացակայության պատճառով. for ~ of smth to do պարապությունից. basic ~s հիմնական կարիքներ. be in ~ of մի բանի կարիք ունենալ/զգալ. live in ~ կարիքի մեջ ապրել. His ~s are few նա շատ պահանջկոտ չէ, Քիչ պահանջներ ունի:

**want** [wɒnt] **v** կարիք զգալ, պահանջվել. You ~ a good haircut Քեզ հարկավոր է մազերդ կտրել. The flat ~s repairing բնակարանը վերանորոգման կարիք ունի. It ~s some knowledge Որոշ գիտելիքի պահանջ է զգացվում, Այստեղ որոշ գիտելիքի կարիք կա. if I'm ~ed եթե իմ կարիքը կա. He is ~ed by the police Նրան ոստիկանությունն է փնտրում. W~ed ! Գետախուզման մեջ է/են: W~ed on the phone Գետախոսի մոտ են կանչում. "Engineer ~ed" (*հայտար.*) "Պահանջվում է ինժեներ." The dog ~s out Շունը դուրս է ուզում. (պակաս/պետք լինել) He ~s courage Նրան քաջություն է պակասում. ~ in common sense առողջ դատողության պակաս. She ~s for nothing նա ոչ մի բանի կարիք չունի. He is a little ~ing Տախտակը պակաս է, Նորմալ չէ:

**wanting** [ˈwɒntɪŋ] **1.** **a** աղքատ, կարիքավոր. պակասող, պակաս. **2.** **prep** առանց:

**wanton** [ˈwɒntən] **a** կայտառ. քմահաճ. անհմաստ, անմիտ. ցոփ, անբարոյական. անհիմն, չարամիտ. ~ destruction անհմաստ ոչնչացում. a ~ woman թեթև վարքի տեր կին:

**war** [wɔː] **1.** **n** պատերազմ. atomic/nuclear/secret/civil ~ ատոմային/միջուկային/զաղտնի/քաղաքացիական պատերազմ. lose/win/unleash/declare/proclaim ~ պատերազմում պարտվել/հաղթել. սկսել/հայտարարել պատերազմ. take part in a ~ մասնակցել պատերազմի. go to ~ զենք վերցնել, ռազմաճակատ մեկնել. fight in a ~ պատերազմում կռվել. be killed in the ~ զոհվել/սպանվել պատերազմում. cold ~ սառը պատերազմ.

the First/Second World ~ Առաջին/Երկրորդ համաշխարհային պատերազմ. ~ risk insurance *իրավ.* ի դեպս պատերազմի. (զինվորական, ռազմական) ~ correspondent զինվորական թղթակից. ~ memorial պատերազմի զոհերի հուշարձան. war-renowned պատերազմում փառաբանված. ~ crimes/prisoner ռազմական ոճրագործություն. պատերազմի գերի. ~ cripple/disabled/invalid պատերազմի հաշմանդամ. (պայքար, կռիվ) class ~ դասակարգային պայքար. ~ against illiteracy/disease/crime պայքար անգրագիտության/հիվանդության/հանցագործության դեմ. ~ of the elements *փիլ.* փոթորիկ, տարերային աղետ. **2.** **v** *խսկ.* պատերազմել. ~ down նվաճել, հպատակեցնել:

**warble** [ˈwɔːbl] **1.** **n** դայլայլ. **2.** **v** դայլայլել, ճռվողել. ծլվլալ:

**warbler** [ˈwɔːblə] **n** երգեցիկ թռչուն:

**ward** [wɔːd] **n** խնամակալություն, խնամարկյալ. ~ of court դատարանի խնամարկյալ. The child was made a ~ of court Երեխային վերցրին դատարանի խնամակալության տակ. (հիվանդասենյակ) maternity ~ ծննդաբերական պալատ/բաժանմունք. քաղաքի վարչական/ընտրական շրջան (Անգլիա):

**warden** [ˈwɔːdn] **n** պետ, վարիչ. բանտապետ. (հանրակացարանում) պարետ. (արգելանոց) տեսուչ. air raid ~ տեղական հակաօդային պաշտպանության պետ:

**warder** [ˈwɔːdə] **n** բանտի հսկիչ:

**wardrobe** [ˈwɔːdrəʊb] **n** զգեստապահարան. *խսկ.* հագուստ. She has a rich ~ նա հարուստ զգեստներ ունի:

**ware** [weə] **n** արտադրանք, ապրանք. China ~ ճենապակի. delft ~ հախճապակի. brown ~ կավե ամանեղեն. ~s ապրանք. push one's ~s ապրանքը գովազդել:

**ware** [weə] **v** զգուշանալ. W ~ ! Զգուշ, Զգուշացիր:

**warehouse** [ˈweəhaʊs] **n** պահեստ. մեծածախ վաճառքի խանութ:

**warfare** [ˈwɔːfeə] **n** պատերազմ. naval ~ ծովային պատերազմ. stationary ~ դիրքային պատերազմ. guerilla ~ պարտիզանական պատերազմ. germ/nuclear ~

բակտերիական/ միջուկային պատերազմ:

**warily** ['weəriili] adv զգուշությամբ:

**wariness** ['weəriənəs] n զգուշություն:

**warlike** ['wɑ:lɪk] a ռազմատենչ, ռազմաշունչ. ռազմական:

**warm** [wɑ:m] a տաք. feel ~ չմրսել. be ~ տաք լինել, չմրսել. keep ~ տաք պահել. get ~ տաքանալ. *փխբ.* հուզվել, զայրանալ. get ~ with wine զինուց գլուխը տաքանալ. It's getting ~ (եղանակը) Տաքանում է. ~ clothes/weather / season տաք հագուստ/եղանակ/տարվա եղանակ. *փխբ. օգտ.* a ~ welcome ջերմ ընդունելություն. ~ colours տաք գույներ. ~ person ջերմ/սրտացավ անձնավորություն. W~ thanks Սրտանց/Սրտագին շնորհակալություն. *հմկրգ.* ~ boot "տաք" ակտիվացում. ~ standby "տաք" ռեզերվացում (համակարգի վիճակի պահպանում). ~ start "տաք" ակտիվացում:

**warm** [wɑ:m] v տաքանալ, տաքացնել. ~ up some milk կաթը տաքացնել. ~ the heart *փխբ.* հոգին ջերմացնել. The air is ~ing up Օդը տաքանում է. The athletes are ~ing up Մարզիկները նախավարժանք են անում. ~ to one's work սկսել սիրել իր աշխատանքը:

**warmaker** ['wɑ:.,meikə] n *խսկց.* պատերազմի հրծիգ:

**warm-blooded** [,wɑ:m'blʌdid] a *կենդ.* տաքարյուն, ջերմարյուն. *փխբ.* տաքարյուն, դյուրաբորբոք:

**warmed up** ['wɑ:mdʌp] a տաքացրած:

**warm-hearted** [,wɑ:m'hɑ:tid] a սրտագին, սրտակից:

**warmhouse** ['wɑ:mhaʊs] n ջերմոց, ջերմանոց:

**warming** ['wɑ:miŋ] n տաքացում, տաքանալը, տաքացնելը. *խսկց.* ծեծ, քոթակ:

**war-monger** ['wɑ:.,mʌŋgə] n պատերազմի հրծիգ:

**warmth** [wɑ:mθ] n տաքություն, ջերմություն. *փխբ.* սրտակցություն. the ~ of the sun արևի ջերմությունը. the ~ of the voice ձայնի ջերմությունը. ~ of the welcome ընդունելության ջերմությունը. *փխբ.* տաքարյունություն, դյուրաբորբոքություն. He answered with some ~ Նա տաքարյուն պատասխան տվեց:

**warn** [wɑ:n] v զգուշացնել, նախազգուշացնել be ~ed about smth նախազգուշացնել. She ~ed me off that subject խնդրեց ինձ այդ մասին չխոսել:

**warning** ['wɑ:niŋ] n զգուշացում, նախազգուշացում. give a ~ նախազգուշացնել. Let it be a ~ թող դա նախազգուշացում/դաս լինի. ~ letter/message նախազգուշական նամակ/հաղորդագրություն:

**warp** I [wɑ:p] n հենք (գործվածք):

**warp** II [wɑ:p] n ծռվածք, թեքվածք. *փխբ.* աղավաղում, խեղաթյուրում:

**warp** [wɑ:p] v ծռ(վ)ել, կորանալ. *փխբ.* խեղաթյուրել. ~ed ծռված, թեքված. The door was ~ed Դուռը խոնավությունից ծռվել էր. His mind is ~ed *փխբ.* Ուղեղը խեղաթյուրված/ շեղված է:

**warrant** ['wɒrənt] n հիմք, լիազորություն. երաշխիք. կարգադրություն. There is no ~ for such behaviour Այսպիսի վարքագծի համար ոչ մի հիմք/արդարացում չկա. ~ of arrest ձերբակալման կարգադրագիր/հրամանագիր. search ~ խուզարկություն. ~ of attorney լիազորագիր:

**warrant** ['wɒrənt] v երաշխավորել, արդարացնել. The facts do not ~ such a conclusion Փաստերը ոչ մի հիմք չեն տալիս այդպիսի եզրակացության համար. I ~ you ես երաշխավորում եմ:

**warranty** ['wɒrənti] n երաշխավորում, երաշխիք. պայման. թույլտվություն. ~ of origin ծագման երաշխիք. ~ lifetime ծառայության երաշխիքային ժամկետ:

**warren** ['wɒrən] n ճագարաբուժարան:

**warring** ['wɑ:riŋ] a հակասական. պատերազմող, անհաշտելի:

**warrior** ['wɒriə] n ռազմիկ, զինվոր:

**war-ship** ['wɑ:ʃip] n ռազմանավ:

**wart** [wɑ:t] n գորտնուկ:

**wartime** ['wɑ:taim] a պատերազմի ժամանակյա/ժամանակի. պատերազմական. ~ experience պատերազմական փորձը. ~ hardships պատերազմական կյանքի զրկանքները:

**war-weary** ['wɑ:.,wiəri] a պատերազմից հոգնած, մարտերում մաշված:

**war-worn** ['wɑ:wɑ:n] a պատերազմից ուժասպառ. պատերազմից ավերված, ամայացած:

**wary** [ˈweəri] a զգույշ. keep a ~ eye on հետևել. be ~ of strangers օտարներից զգուշանալ. be ~ of speaking too plainly զգուշանալ չափից ավելի անկեղծ լինելուց:

**wash** [wɒʃ] n լվացում, լվացվելը. *ժով*. նավի առաջացրած ալիքները. get/have a ~ լվացվել. give the floor/window a ~ հատակը/պատուհանը լվանալ. (լվացք) send linen to the ~ սպիտակեղենը լվացքի տալ. mouth ~ բերանի ողողում. eye ~ աչքի թրջոց. dry ~ ցամաքած հուն:

**wash** [wɒʃ] v լվանալ, լվացվել. ~ one's hair գլուխը լվանալ. ~ in cold water սառը ջրով լվացվել/լողանալ. ~ the linen սպիտակեղենը լվանալ. (ողողել) The coast is ~ed by the waves Ալիքները ողողում են ափերը. ~ off լվանալ, մաքրել. ~ the paint off the hands ձեռքերի ներկը լվանալ. ~ away լվանալ տանել. The rain ~ed the snow away Անձրևը մաքրեց տարավ ձյունը. ~ out լվանալով հեռացնել. ~ out the bottles շշերը լվանալ. ~ed out *փխբ.* հոգնած, զույնը զգած, թառամած. She looks ~ed out Նա հոգնած/հյուժված տեսք ունի. ~ up one's dirty linen in public *փխբ.* տան գաղտնիքը դուրս տալ. be ~ed ashore ափ դուրս հանել (ալիքների միջոցով). The material ~es well Այս կտորը լավ է լվացվում. That excuse won't ~ *խսկգ.* Դա արդարացում չէ:

**washable** [ˈwɒʃəbl] a լվանալու ենթակա. լավ լվացվող. Is this ~? Սա կարելի՞ է լվանալ. Սա լա՞վ է լվացվում:

**washbasin** [ˈwɒʃbeɪsɪn] n լվացարան. տաշտակ:

**wash-board** [ˈwɒʃbɔ:d] n լվացքի տախտակ:

**washerwoman** [ˈwɒʃə,wʊmən] n լվացարարուհի:

**wash-hand-stand** [ˈwɒʃhænd/stænd] n լվացարան:

**wash-house** [ˈwɒʃhaʊs] n լվացքատուն:

**washing** [ˈwɒʃɪŋ] n լվացք, կեղտոտ շորեր. I'm doing the ~ today Այսօր ես լվացք եմ անում. take in ~ սպիտակեղեն վերցնել լվանալու համար. dirty ~ կեղտոտ սպիտակեղեն. ~ machine լվացքի մեքենա. ~ soda/powder լվացքի սոդա/փոշի. ~ up ամանեղեն լվանալը. do the ~ up ամանները լվանալ. ~ liquid ամաններ լվանալու հեղուկ:

**wash-leather** [ˈwɒʃleðə] զամշ, թավշակաշի (ապակի մաքրելու համար):

**wash-out** [ˈwɒʃaʊt] n ողողատ, ողողված տեղ. *խսկգ.* անհաջողություն, ծախսողություն. ծախսող մարդ:

**wash-room** [ˈwɒʃru:m] n *ամ.* զուգարան:

**wash-stand** [ˈwɒʃstænd] n լվացարան:

**washy** [ˈwɒʃi] a ջրալի, ջրիկ, ջրախառն. դժգույն, անգույն:

**wasp** [wɒsp] 1. n կրետ, իշամեղու. 2. a կրետի, իշամեղվի:

**waspish** [ˈwɒspɪʃ] a խայթող, թունոտ. չար:

**wastage** [ˈweɪstɪdʒ] n կորուստ. խոտան. արտահոսք. natural ~ բնական կորուստ. ~ rate մաշվածքի/կորստի գործակից:

**waste** [weɪst] n թափոթուկներ, մնացուկներ. թափոն. (անօգուտ վատնում, կորուստ) ~ of money/time/energy փողի/ժամանակի/էներգիայի անօգուտ վատնում. ~ disposal թափոնների հեռացում. I don't like ~ Ոչինչ չեմ սիրում թափել. a ~ of waters անժայրածիր ծով. His talent is going to ~ Նա անիմաստ կերպով վատնում է իր տաղանդը. The evening was a total ~ Երեկոն իզուր կորավ. the frozen ~s of Antarctic մնտարկտիկայի սառցադաշտերը:

**waste** [weɪst] a թափոն, անպետք. ~ products թափոն. the ~ land դատարկ ամայի տեղ. անմշակ հող. ~ water կեղտաջրեր. lay ~ անայացնել. ~ basket աղբի զամբյուղ:

**waste** [weɪst] v վատնել, անտեղի ծախսել. Don't ~ water Ջուր մի վատնի. We can't afford to ~ a minute Ոչ մի րոպե չի կարելի կորցնել. ~ a joke կատակը չհասկանալ. ~ an opportunity առիթը կորցնել. (վերջանալ, հյուժվել) The resources are ~ing away Պաշարները վերջանում են. He is ~ing away Նա քանի գնում այնքան հյուժվում է:

**wasteful** [ˈweɪstfʊl] a շռայլ, վատնող:

**waste paper** [weɪstˈpeɪpə] n անպետք թղթեր:

**waste-paper-basket** [weɪstˈpeɪpə,bɑ:skɪt] n անպետք թղթերի զամբյուղ, թղթազամբյուղ:

**waste pipe** [ˈweɪstpaɪp] n ջրթափ խողովակ (աղտաջրերի):

**wastrel** [ˈweɪstrəl] n խոտան. անապաստան երեխա. անպետք/անպիտան մարդ:

**watch** I [wɒtʃ] n ժամացույց. pocket/wrist/

electronic ~ գրպանի/ծեռքի/էլեկտրոնային ժամացույց. My ~ is fast/gains Իմ ժամացույցը առաջ է ընկնում. My ~ is slow/loses Իմ ժամացույցը հետ է (մնում). set the ~ ժամացույցը ուղղել. wind up the ~ ժամացույցը լարել. by my ~ իմ ժամացույցով. The ~ has run down/stopped ժամացույցը կանգնել է:

**watch II** [ˈwɒtʃ] **1.** n զգոնություն, ուշադրություն. keep ~ զգույշ/զգաստ լինել. be on the ~ սպասել. be on ~ *ծով*. հերթափոխ կանգնել. keep a close ~ հսկողություն սահմանել. keep ~ over the patient հիվանդին ուշադիր խնամել. be on the ~ against smb զգուշանալ որևէ մեկից. **2.** v զգույշ/աջալուրջ լինել, չքնել. W~ out Ջգոնյշ:

**watch** [ˈwɒtʃ] v հետևել, հսկել, դիտել. *ռզմ*. պահակություն անել. ~ the match խաղը դիտել. ~ developments հետևել իրերի զարգացման ընթացքին. I'm being ~ed Ինձ հետևում են. W~ my dog until I come Պահեք շանս մինչև ես գամ. (զգույշ լինել) W~ him Ջգուշացիր նրանից. W~ your language Ուշադիր եղիր քո արտահայտություններում. W~ your head Տես գլուխդ չխփես. W~ your step Ջգույշ քայլիր. ~ the time հետևել ժամանակին. ~ the money զգուշությամբ ծախսել. I ~ed by his bedside ես գիշեր-ցերեկ նրա անկողնու կողքին էի. ~ for one's chance հարմար առիթի սպասել:

**watch-dog** [ˈwɒtʃdɒɡ] n պահապան շուն:

**watcher** [ˈwɒtʃə] n պահապան. պահակ. հսկիչ. դիտող, դիտորդ:

**watch-fire** [ˈwɒtʃfaɪə] n ազդանշանի խարույկ:

**watchful** [ˈwɒtʃfʊl] a զգոն, աջալուրջ. զգույշ, ուշադիր. keep a ~ eye on smb ուշադիր հետևել մեկին:

**watch-house** [ˈwɒtʃhaʊs] n պահակատուն:

**watch-maker** [ˈwɒtʃmeɪkə] n ժամագործ:

**watchman** [ˈwɒtʃmən] n պահակ:

**watch-tower** [ˈwɒtʃtaʊə] n պահպանական աշտարակ. պահակադիտանոց:

**watchstrap** [ˈwɒtʃstræp] n ժամացույցի փոկ/կապ:

**watchword** [ˈwɒtʃwɜːd] n նշանաբան, կարգախոս, լոզունգ:

**water** [ˈwɔːtə] **1.** n ջուր. fresh/soft/salt/hard ~ խմելու/փափուկ/աղի, ծովի/կոշտ ջուր. ~ supply ջրամատակարարում. ~ line ջրատար

խողովակ. running ~ ջրատարի/հոսող ջուր. a drop of ~ մի կում/կաթիլ ջուր. turn on the ~ ծորակը բացել. cut off the ~ ջուրն անջատել/կտրել. ~ services ջրամատակարարում/ծառայություններ. jet of ~ ջրի շիթ. ~ way ջրային ուղի. a narrow strip of ~ ջրի բարակ շերտ. get/fall into hot ~ *փխբ*. փորձանքի մեջ ընկնել. throw cold ~ on գլխին սառը ջուր լցնել. standing ~ լճացած ջուր. (լիճ, գետ) near the ~ գետի/լճի ափին. go/travel by ~ ջրով ճամփորդել. deep/shallow ~ խորը/ժանժաղ ջուր/գետ. ~s ջրեր. territorial ~s տարածքային ջրեր. blue ~s ծով. high/low ~ մակընթացություն, տեղատվություն. in low ~s *փխբ*. ֆինանսական ծանր դրության մեջ. (հանքային ջրեր) mineral ~s հանքային ջուր. drink the ~s հանքային ջուր խմել. healing ~s բուժիչ ջրեր. ~s առողջարան. ~ polo *մրզ*. ջրագնդակ. spend money like ~ *փխբ*. փողը ջրի պես ծախսել. an idiot of the first ~ լրիվ/կատարյալ ապուշ. diamond of the first ~ մաքուր ջրի ադամանդ. - colour ջրաներկ. ջրաներկ նկար. **2.** a ջրային. ~ bottle տափաչիշ, ջրաման. ~ closet զուգարան, արտաքնոց. ~ rat ջրամուկ, առնետ. ~ rates ջրի վարձ. ~ plants/birds ջրային բույսեր/թռչուններ. ~ sports ջրային սպորտ. ~ on the brain/knee *բժշկ*. ջրզոդություն. ծնկի մեջ ջուր. pass ~ միզել *խսկց*. smooth ~ խաղաղ հանգրվան. keep one's head above ~ *փխբ*. վտանգից խուսափել. Still ~s run deep *փխբ*. Մարմանը ջրից վախեցիր:

**water** [ˈwɔːtə] v թրջել, թացացնել. ջրել. ~ the garden/roses պարտեզը/վարդերը ջրել. ~ horses ձիերին ջուր տալ. ~ down wine գինուն ջուր խառնել. Eyes ~ Աչքերը ջուր են լցվում/ջրակալում են/արցունքակալում են. make one's mouth ~ բերանի ջրերը գնալ:

**water butt** [ˈwɔːtəbʌt] n մեծ տակառ.

**water-colo(u)r** [ˈwɔːtə,kɒlə] n ջրաներկ, ջրաներկ նկար. ակվարել. a ջրանկարչական. ակվարելային:

**water cooled** [ˈwɔːtəkuːld] a ջրային սառեցմամբ, ջրով սառեցրած:

**watercourse** [ˈwɔːtəkɔːs] n հուն. գետ, գետակ, վտակ:

**waterfall** [ˈwɔːtəfɔːl] n ջրվեժ:

**water-fowl** [ˈwɔːtəfaʊl] n ջրային թռչուն:

**water heater** [ˈwɔːtəhiːtə] n ջրատաքացու-

ցիչ, ջեռոց:  
**watering can** [ˈwɑːtəriŋkæn] n ցնցուղ:  
**watering place** [ˈwɑːtəriŋpleis] n ջրառողջարան:  
**water-lily** [ˈwɑːtə,lili] n ջրաշուշան:  
**water-line** [ˈwɑːtəlaɪn] n *ծով*. (նավի) ջրագիծ:  
**waterlogged** [ˈwɑːtəlɒgd] a ճահճացած. a ~ field ճահճացած դաշտ:  
**water main** [ˈwɑːtəmeɪn] n ջրատար խողովակ/մագիստրալ:  
**waterman** [ˈwɑːtəmən] n նավավար, թիավար:  
**water-mark** [ˈwɑːtəma:k] n ջրի մակարդակի նշագիծ. ջրանիշ թղթի վրա:  
**water-melon** [ˈwɑːtə,melən] n ձմերուկ:  
**water pipe** [ˈwɑːtəpaɪp] n ջրախողովակ:  
**water-power** [ˈwɑːtəpaʊə] n ջրային էներգիա, հիդրոէներգիա. ~ station հիդրոէլեկտրակայան:  
**water-proof** [ˈwɑːtəpru:f] a անջրանցիկ. անջրանցիկ գործվածք/վերարկու/թիկնոց:  
**watershed** [ˈwɑːtəʃed] n ջրբաժան գիծ:  
**water skiing** [ˈwɑːtəski:ɪŋ] n ջրային դահուկներ:  
**waterspout** [ˈwɑːtəspaut] n պտտահողմ:  
**water supply** [ˈwɑːtəsə,plaɪ] n ջրամատակարարում:  
**water tank** [ˈwɑːtətæŋk] n ցիստեռն:  
**watertight** [ˈwɑːtətait] a անջրանցիկ. *փխբ.* քննադատության դիմացող. a ~ argument անհերքելի փաստարկ:  
**water-way** [ˈwɑːtəweɪ] n ջրային ճանապարհ:  
**waterworks** [ˈwɑːtəwɔːks] n ջրմուղ կայան. ջրմուղային կառույցներ:  
**watery** [ˈwɑːtəri] a ջրալի, ջրիկ. անզույն, անբովանդակ. ~ eyes արտասովակալ աչքեր:  
**watt** [wɒt] n էլ. վատտ a 40 ~ bulb 40 վատտանոց լամպ:  
**wave** [weɪv] n ալիք. sound ~s ձայնային ալիքներ. programme on long ~s երկար ալիքներով հաղորդում. the ~s ծով, ծովեր. high/huge ~s բարձր/խոշոր ալիքներ. tidal ~s մակընթացության/տեղատվության ալիքներ. a ~ of protest/anger *փխբ.* բողոքի/զայրույթի ալիք. (թափահարել) give a ~ ձեռքով թափահարել. (մազերի զանգրացում) a perma-

nent ~ մազերի պերմանենտ զանգրացում:  
**wave** [weɪv] v թափահարել. (ձեռքով) նշան անել. (ծածանվել, օրորվել) Flags ~d in the wind Դրոշները ծածանվում էին քամուց. ~ one's hand/handkerchief ձեռքը/թաշկինակը թափահարել. ~ a gay greeting ուրախ ողջունել. ~ aside ձեռքի նշանով մի կողմ քշել. ~ one's hair մազերը զանգրացնել. ~ good bye ձեռքով ցտեսության նշան անել. ~ a car down ձեռքի շարժումով մեքենան կանգնեցնել. The policeman ~d us on Ոստիկանը նշան արեց, որ մենք շարունակենք մեր ճանապարհը. ~ back ձեռքով պատասխան նշան անել:  
**wave-length** [ˈweɪvleŋθ] n *ռադ.* ալիքի երկարություն. not to be on the same ~ *խսկց.* ընդհանուր լեզու չզտնել:  
**waver** [ˈweɪvə] v տատանվել, երերալ. տեղի տալ. His voice ~ed Նրա ձայնը երերաց. ~ between going and staying տատանվել գնալ թե չգնալ. His courage began to ~ Նրա արիությունը տեղի տվեց:  
**wavy** [ˈweɪvi] a ալիքաձև, զանգուր. ~ hair/lines զանգուր մազեր. ալիքաձև գծեր. a ~ sea փոթորկալից ծով:  
**wax** I [wæks] 1. n մեղրամոմ, մոմ. հատակի քուրք, մաստիկա. mineral ~ լեռնամոմ, համքամոմ. sealing ~ զմուռս, կնքամոմ. 2. a մոմե, մոմի:  
**wax** II [wæks] n *խսկց.* ցասում, զայրույթ. be/get in a ~ կատաղել, գազազել, զայրանալ. put in a ~ կատաղեցնել, զայրացնել:  
**wax** I [wæks] v մոմ քսել, մոմել. ~ the floor հատակը (մոմով) փայլեցնել. ~ thread թելը մոմել:  
**wax** II [wæks] v մեծանալ, աճել. (լուսնի մասին) աճման փուլում լինել. ~ old/angry ծերանալ/զայրանալ. ~ enthusiastic ինչ-որ բանով հիանալ:  
**waxed** [wæksd] a մոմած. մոմ քսած. ~ floors (մոմով) փայլեցրած հատակ. ~ paper մոմած թուղթ. ~ string մոմած պարամ:  
**waxwork** [ˈwækswɔːk] n մոմաշեն քանդակ. ~ museum մոմաշեն քանդակների թանգարան (օր.՝ Մադամ Տյուսոյի):  
**waxy** [ˈwæksi] a մոմանման. *փխբ.* *խսկց.* տաքարյուն, դյուրագրգիռ:  
**way** [weɪ] n ճանապարհ, ուղի. know/show the ~ ճանապարհը իմանալ/ցույց տալ. the ~

through անցում. a roundabout ~ շրջանցիկ ճանապարհ be/get in the/smb's ~ խանգարել. by the ~ ճանապարհին. *փխք.* ի միջի այլոց. be on the ~ ճանապարհին լինել, գալ. out of the ~ ճանապարհից դուրս. *փխք.* անսովոր, արտակարգ. This ~, please ! Այս կողմ(ով), խնդրեմ. across/over the ~ ճանապարհի հակառակ կողմում, դիմացը. a covered ~ փակ անցում. ~ out ելք (*նաև փխք.*). ask the ~ ճանապարհը հարցնել. wrong/the other ~ սխալ/մեկ այլ ճանապարհ. the whole ~ ամբողջ ճանապարհին. lead the ~ ճանապարհը ցույց տալ (*առջևից գնալ*). by ~ of միջով (*միջոցով*). by ~ of Moscow Մոսկվայով, Մոսկվայի միջով. get under ~ ճանապարհի ընկնել, ուղևորվել. go one's own ~ իր ճանապարհով գնալ. leave the ~ open ճանապարհի հարթել/տալ. the parting of the ~s ճանապարհաժամ. make ~ for ճանապարհ տալ. go out of one's ~ ճիգեր գործել/գործադրել. nothing out of the ~ ոչ մի առանձին/արտակարգ բան. pay one's own ~ ինքն իր համար վճարել. pick one's ~ դժվարությամբ ճանապարհի ընտրել. get out of the ~ ճանապարհ տալ, չխանգարել. push one's ~ հրելով ճանապարհի հարթել. give ~ նահանջել. make one's ~ առաջ շարժվել/գնալ. make one's ~ in life հաջողության հասնել կյանքում pave the ~ հող նախապատրաստել, ճանապարհ մաքրել. (*հեռավորություն*) a little ~ ոչ հեռու, մոտիկ. a long ~ հեռու. quite a ~ բավական հեռու. Not by a long ~ ! *փխք.* Բոլորովին էլ ոչ. (*ընթացք, շարժում*) under ~ ընթացքի/շարժման մեջ. gather ~ տեղից շարժվել. մեկնել (*նավը*). have ~ on առաջ շարժվել. (*միջոց, եղանակ*) go/take one's own ~ ինքնուրույն գործել. իր ուզած ձևով անել. one ~ or another այս կամ այն ձևով. have/get one's own ~ իր ասածն անել, իր նպատակին հասնել. the best ~ լավագույն ձևը. get into/out of the ~ սովորել/հետ սովորել. ~s and means նպատակին հասնելու ճանապարհները և միջոցները. There are no two ~s about it Այդ մասին երկու կարծիք չկա. One can't have it both ~s Երկու նպատաստակի հետևից չեն ընկնի. in some ~ or other այս կամ այն կերպ. in a new/the usual ~ նոր/սովորական ձևով. in the same ~ նույն ձևով. That's always the ~ with him Նա միշտ այդպիսին է. have a ~ with peo-

ple կարողանալ մարդկանց հետ վարվել. (*տրամադրել դեպի իրեն*). in a ~ որոշ ձևով/չափով/իմաստով. mend one's ~ ուղղվել. in many ~s շատ դեպքերում. in every ~ բոլոր դեպքերում. in what ~ ինչպես, ինչ ձևով. in no ~ ոչ մի դեպքում. no ~ ոչ մի ձևով. (*վիճակ*) in a family ~ առանց ձևականությունների, տնավարի. in the family ~ հղի. in any ~ համեմայն դեպս. be in (great) ~ *խսկց.* հուզված վիճակում լինել. give ~ զիջել, տեղի տալ. once in a ~ շատ հազվադեպ. Milky ~ Ծիր Կաթին, Հարդագողի ճանապարհ. (*ճանապարհային նշաններ*) W~ up (*դեպի*) վերև. W~ down (*դեպի*) ներքև. No thorough ~ Անցում չկա:

**way** [wei] adv ~ back *խսկց.* դեռևս. ~ back in May դեռևս մայիսին. That was ~ back Դա վաղուց էր. ~ down North հեռու հյուսիսում. They are ~ a head of us Նրանք մեզնից շատ առաջ են:

**wayfarer** ['wei,feəɹə] n ճամփորդ, ուղևոր, հետիոտն:

**wayfaring** ['wei,feəriŋ] a ճանապարհորդող, թափառական:

**waylay** [wei'lei] v հետամուտ լինել, դարանակալել. ~ a person մեկին հետամուտ լինել:

**wayside** ['weisaid] n ճանապարհի եզր. ճանապարհամերձ. by the ~ ճանապարհի եզրին. ~ flowers ճանապարհամերձ ծաղիկներ:

**way-station** ['wei,steiʃn] n *ամ.*, *երկթ.* կիսակայարան:

**wayward** ['weiwəd] a քմահաճ, կամակոր. ճիշտ ուղուց շեղված. ~ girl անչափահաս մարմնավաճառուհի:

**we** [wi:] prn pers մենք:

**weak** [wi:k] a թույլ, տկար. ~ health/heart /eyesight տկար առողջություն. թույլ սիրտ. վատ տեսողություն. ~ with fright սարսափից թուլացած. ~ coffee/tea/solution թույլ թեյ/սուրճ/լուծույթ. ~ in math մաթեմատիկայից թույլ. ~ in the head տկարամիտ. ~ excuse թույլ արդարացում. ~ spot/point թույլ տեղը/կետ. ~ argument անհամոզիչ փաստարկ. (*անվճռական, տատանվող*) ~ character/man անվճռական բնավորություն/մարդ. ~ defence/resistance թույլ պաշտպանություն/դիմադրություն. in a ~ moment թուլության ընթացքին/պահին:



**weaken** ['wi:kən] v թուլացնել. The illness ~ed him Հիվանդությունը թուլացրեց նրան. We can't ~ Մենք չենք կարող թուլություն ցուցաբերել:

**weak-eyed** ['wi:kaid] a թույլ տեսողություն, վատ տեսնող:

**weak-headed** [,wi:k'hedid] a թուլամիտ, տկարամիտ:

**weak-kneed** [,wi:k'ni:d] a *փխբ.* վախկոտ, թուլամտորթ:

**weakling** ['wi:kliŋ] n թույլ կամքի տեր, թուլակամ մարդ:

**weakly** ['wi:kli] a տկար, հիվանդոտ:

**weak-minded** [,wi:k'maindid] a թուլամիտ, տկարամիտ:

**weakness** ['wi:kneəs] n թուլություն, տկարություն. in a moment of ~ թուլության պահին. ~ of will/character թուլակամություն, թույլ բնավորություն. have a ~ for smth թուլություն ունենալ որևէ բանի նկատմամբ:

**wealth** [welθ] n հարստություն, առատություն. The principal ~ of the country երկրի հիմնական հարստությունը. ~ of information/fruit տեղեկատվության/մրգի առատություն. with a ~ of detail մանրամասների առատությամբ:

**wealthy** ['welθi] 1. a հարուստ, ունևոր. 2. n the ~ հարուստները:

**wean** [wi:n] v հետ սովորեցնել. ~ a baby երեխային կրծքից կտրել:

**weapon** ['wepən] n զենք. *փխբ.* միջոց. (պայքարի). atomic ~ատոմային զենք. powerful/dangerous/rocket/biological ~ զորեղ/վտանգավոր/հրթիռային/կենսաբանական զենք. ~s of war պատերազմի/ռազմական զենք. ban ~s of mass destruction արգելել մասսայական ոչնչացման զենքերը. carry/use a ~ զենք կրել. seize a ~ ձեռքը զենքին օգել:

**wear** [weə] n հագուստ. men's/women's, ladies'/everyday ~ կանացի/տղամարդու/առօրյա հագուստ. evening ~ երեկոյան զգեստ. beach ~ լողափի զգեստ. (մաշում, մաշվածք, մաշվածություն. կրելը, հագնելը) show signs of ~ մաշվածության նշաններ կրել. out of ~ մոդայից դուրս եկած. ~ and tear մաշվածություն. stand up to hard ~ երկար դիմանալ:

**wear** [weə] v կրել, հագնել. ~ a tie փողկապ կրել. ~ glasses ակնոց կրել. ~ one's hair long երկար մազ ունենալ. have nothing to ~ հագ-

նելու բան չունենալ. (մաշել, ծակել) He's worn his trousers into holes Նրա տաբատը հագնելուց մաշվել, ծակվել էր. be worn to a shadow միհարելուց կմախք/ստվեր դառնալ. (դիմանալ, երկար հագնել) ~ for years տարիներ դիմանալ. be worn well *փխբ.* լավ պահպանվել. The tyres are worn smooth Մեքենայի անվադողերը մաշվել են. My patience is ~ing thin Համբերությունս հատնում է. ~ away գոյությունը քարշ տալ. ~ away one's life կյանքն անցկացնել. ~ down մաշել. The heels are worn down կրունկները մաշվել են. ~ off ջնջ(վ)ել, անցնել. The letters are worn off Տառերը ջնջվել են. The pain will soon ~ off Ցավը շուտով կանցնի. ~ on դանդաղ ընթանալ/անցնել. Time/The day wore on ժամանակը/Օրը անցնում էր/ավարտին էր մոտենում/. ~ out մաշել, հյուծել, ուժասպառ անել. ~ out clothes/shoes հագուստը/կոշիկները մաշել. be worn out սաստիկ հոգնած լինել:

**wearable** ['weərəbl] a կրելու ենթակա. The coat is still ~ Այս վերարկուն դեռ կարելի է հագնել:

**wearily** ['wiəriili] adv հոգնած/ուժասպառ կերպով:

**weariness** ['wiəriənəs] n հոգնածություն, ուժասպառություն, ծանծրույթ:

**wearing** ['weəriŋ] a հոգնեցուցիչ:

**wearisome** ['wiərisəm] a ծանծրալի, հոգնեցուցիչ:

**weary** ['wiəri] 1. a հոգնած, խոնջացած. տանջված. four ~ hours չորս տանջալից ժամ. be ~ after journey ճանապարհից հոգնել. ~ of smth ծանծրացած. ~ of life կյանքից հոգնած. 2. v հոգնեցնել. ~ of living alone մենակ ապրելուց հոգնել. ~ for կարոտել:

**weasel** ['wi:zl] n *կենդ.* աքիս:

**weather** ['weðə] n եղանակ. wet/rainy/dull/cloudy/dry ~ խոնավ/անձրևոտ/ամպոտ/չոր եղանակ. fair ~ պայծառ եղանակ. beastly ~ այլանդակ եղանակ. settled ~ կայուն եղանակ. severe ~ խիստ եղանակ. ~ damage եղանակի պատճառած վնաս. The ~ changes/lasts եղանակը փոխվում է/պահպանվում է. in good/bad ~ լավ/վատ եղանակին. in all sorts of ~ ցանկացած եղանակին. What's the ~ like today? Ի՞նչ եղանակ է այսօր. on account of bad ~ վատ եղանակի

- պատճառով. nasty ~ ահավոր եղանակ. hot spells of hot ~ երկարատև սաստիկ շոգեր/տապ. be under the ~ *փխբ.* իրեն լավ չգգալ. ~ permitting եթե եղանակը թույլ տա (լավ եղանակի դեպքում). make heavy ~ of *փխբ.* մի բան դժվար համարել:
- weather** ['weðə] v դիմանալ, լավ տանել. ~ a storm/crisis փոթորկի/ճգնաժամին դիմանալ:
- weather-beaten** ['weðə,bi:tɪn] a հողմածոծ, փոթորկներից վնասված. *փխբ.* կոփված:
- weather-bureau** ['weðə,bju:əʊ] n օդերևութաբանական կայան:
- weather chart** ['weðə,tʃɑ:t] n օդերևութաբանական քարտեզ:
- weathercock** ['weðəkɒk] n հողմացույց:
- weather-forecast** ['weðə,fɔ:kɑ:st] n եղանակի տեսություն:
- weather-stained** ['weðəsteɪnd] a գույնը զգած, խուճացած:
- weather-station** ['weðə,steɪʃn] n օդերևութաբանական կայան:
- weave** [wi:v] v հյուսել, գործել. ~ cloth գործվածք/կտոր գործել. ~ a basket/web/wreath զամբյուղ/սարդոստայն/պսակ հյուսել. (հնարել, հերյուրել) ~ a story պատմվածք հորինել/հյուսել. ~ one's way through the crowd ամբոխի միջով (մի կերպ) անցնել. The road ~s *փխբ.* ճանապարհը պտույտ է տալիս, պտտվում է. get ~ waving *խսկց.* արագ գործել/շարժվել:
- weaver** ['wi:və] n ջուլհակ, ջուլհակուհի:
- web** [web] n սարդոստայն. a ~ of intrigue *փխբ.* բանասարկությունների ցանց:
- WEB** (World Wide Web) ['wɜ:l'd 'waɪd 'web] *հմկրգ.* համաշխարհային սարդոստայն ~ application աշխատելու համար կիրառություն. ~ based վեբ տեխնոլոգիայի վրա հիմնված ~ browser վեբ դիտարկիչ. ~ centric design վեբ կողմնորոշված նախագծում. ~ master վեբ վարպետ. ~ page վեբ էջ. ~ server վեբ սերվեր. ~ site վեբ հանգույց. ~ smith վեբ էջեր կառուցող ծրագրող. ~ ware վեբ էջերին դիմելու ծրագրային միջոցներ:
- webbed** [webd] a թաղանթավոր. ~ feet թաղանթավոր թաթ:
- webbing** ['webɪŋ] n բրեզենտե գոտիներ/փոկեր փափուկ կահույքի համար:
- web-footed** ['web,fu:tɪd] a թաղանթաթաթ:
- wed** [wed] v ամուսնացնել, ամուսնանալ. պսակել, պսակվել. ~ in a church/at a registry office պսակվել եկեղեցում. ամուսնությունը գրանցել քաղաքապետարանում. (անբաժան լինել, կապվել) He is ~ded to his pipe ևա անբաժան է իր ծխամորճից:
- wedding** ['wedɪŋ] 1. n հարսանիք. a church ~ պսակարություն. silver/golden ~ արծաթ/ոսկե հարսանիք. 2. a հարսանեկան ~ service պսակարություն. ~ cake/present հարսանեկան տորթ/նվեր ~ gown/ceremony հարսանյաց շոր/հանդիսություն. ~ ring նշանի մատանի. ~ favours/mementos տարոսիկներ. ~ sweets/Jordan Almonds հարսանյաց կոնֆետներ (տարոսիկի ձևով):
- wedge** [wedʒ] n սեպ. drive a ~ into սեպ խրել:
- wedge** [wedʒ] v սեպով ամրացնել. խրվել. ~ the door open սեպով դուռը բաց պահել. be ~d between the two beds խրվել երկու մահճակալների միջև ~ away/off իրելով ճանապարհ բացել. ~ in oneself խցկվել:
- wedgies** ['wedʒiz] n (*Մաև* ~ heeled shoes) տանկետկաներ (կոշիկ):
- wedlock** ['wedlɒk] n ամուսնություն, ամուսնական կարգավիճակ. children born in/out of ~ օրինական/անօրինական երեխաներ:
- Wednesday** ['wenzdeɪ] n չորեքշաբթի. on ~ չորեքշաբթի (օրը). on ~s չորեքշաբթի օրերին:
- Wee** [wi:] a *խսկց.* պստիկ, շատ փոքր. a ~ bit tired մի փոքր հոգնած. a ~ drop of water մի կուռ ջուր. the ~ ones պստիկները:
- weed** [wi:d] n մոլախոտ. քնձռոտ ծի. III ~s grow apace Մոլախոտն արագ է աճում:
- weed** [wi:d] v քաղհանել. ~ out հեռացնել, մաքրել, ընտրել. ~ out the garden այգին քաղհանել. ~ out the weakest candidates *փխբ.* ամենաթույլ թեկնածուներին հեռացնել/հանել:
- weeding** [wi:diŋ] n քաղհանում:
- weed killer** ['wi:dkɪlə] n հերբիցիդ:
- weeds** [wi:dz] n սզո զգեստ/շոր:
- weedy** ['wi:di] a մոլախոտով ծածկված/խեղդված a ~ garden մոլախոտապատ այգի. a ~ youth շատ նիհար պատանի:
- week** [wi:k] n շաբաթ. this/last/next ~ այս/անցած/հաջորդ շաբաթ. in two ~s երկու շաբաթ հետո. two ~s later երկու շաբաթ անց. the ~ after next մի շաբաթ հետո. for a ~ մի

շաբաթով. ~ after ~/~ in/~ after շաբաթ շաբաթվա հետևից. for ~s on end ամբողջ շաբաթներով. today ~ ուղիղ մի շաբաթ հետո. Holy W~ կրոն. Ավագ/Չարչարանաց շաբաթ:

**week-day** ['wi:kdeɪ] n լի/աշխատանքային օր. ~ bus service ավտոբուսի ուղերթը աշխատանքային օրերին:

**week-end** [,wi:k'end] n ազատ/ոչ աշխատանքային օրեր (շաբաթ օրվանից մինչև երկուշաբթի) a ~ cottage ամառանոց. ~ visitors հանգստայան օրերի հյուրեր/այցելուներ:

**week-ender** [,wi:k'endə] n շաբաթ-կիրակի օրերը հանգստի մեկնող:

**weekly** ['wi:kli] 1. a շաբաթական. a ~ newspaper շաբաթաթերթ. ~ wage շաբաթական աշխատավարձ. 2. n շաբաթական թերթ, շաբաթահանդես. 3. adv շաբաթը մի անգամ, ամեն/յուրաքանչյուր շաբաթ:

**ween** [wi:n] v *բնստ.* մտածել, կարծել. հուսալ:

**weep** [wi:p] v լալ, լաց լինել. ~ bitterly դառնորեն լաց լինել. ~ bitter tears դառն արցունք թափել. ~ oneself to sleep լաց լինելով քնել. ~ for joy ուրախությունից լաց լինել. ~ out լալով ամոքել, վիշտը թափել. ~ over smth ինչ-որ բանի համար լաց լինել:

**weeping** ['wi:pɪŋ] 1. n լաց. the sound of ~ լացի ձայն. 2. a լացող. ~ children/willow լացող երեխաներ/ուռենի:

**weepy** ['wi:pi] a լացկան:

**wee-wee** ['wi:wi:] n *խսկ.* չիչիկ. Do you want ~ ? Չիչիկ ուզո՞ւմ ես:

**weigh** [wei] v կշռել. *փխբ.* կշռադատել. ծանրութեթև անել. ~ the box արկղը կշռել. ~ oneself կշռվել. ~ one's words յուրաքանչյուր բառը ծանրութեթև անել. (մեղել, ճնշել) ~ on one's conscience խղճի վրա ծանրանալ. The evidence will ~ against you *իրավ.* Հանցանշանները ձեր դեմ կլինեն. The car was ~ed down Մեքենան ծանրությունից նստել էր. be ~ed down with cares *փխբ.* հոգսերով ծանրաբեռնված լինել. ~ in *մրգ.* կշռվել. անցնել կշռվելու պրոցեսը. ~ out բաժին- բաժին կշռել. ~ up ծանրութեթև անել, կշռադատել. ~ up pros and cons թեր և դեմ պահերը կշռադատել. ~ smb up կարծիք կազմել (մեկի մասին):

**weighing-machine** ['weiɪŋmə,ʃi:n] n

կշեռք:

**weight** [weit] n կշիռ, քաշ. ծանրություն. by ~ քաշով. atomic ~ ատոմական կշիռ. unit/specific ~ տեսակարար կշիռ. short ~ կշռի պակաս. increase in ~ կշիռն ավելանալ/ավելացում. fixed ~ հաստատուն քաշ. put on ~ գիրանալ. lose ~ միհարել. excess ~ հավելաքաշ. give light ~ թերակշռել. carry ~ *փխբ.* կշիռ/ազդեցություն ունենալ. dead ~ դատարկ փոխադրամիջոցի քաշը. table of ~s and measures չափ ու կշռի աղյուսակ. (կշռաքար) *մրգ.* (գունդ), *ձկնորս.* սուզագնդիկ. put/lift the ~ գունդը հրել. ծանրածողը (շտանգան) բարձրացնել. carry a lot of ~ ծանրություն/կշիռ ունենալ. a ~ off one's mind սիրտը թեթևանալ. սրտի վրայից քարն ընկնել. feel the ~ of one's years զգալ տարիների ծանրությունը. give due ~ to գիտակցել ինչ-որ բանի կարևորությունը:

**weightless** ['weɪtləs] a անկշռելի:

**weight lifter** ['weɪt,lɪftə] n ծանրորդ (շտանգիստ):

**weighty** ['weɪtɪ] a ծանրակշիռ, կարևոր, ազդու. ~ consideration ծանրակշիռ դատողություններ:

**Weir** [wiə] n ամբարտակ, ջրապատվար:

**weird** [wiəd] 1. n բախտ, ճակատագիր. 2. a ճակատագրական, խորհրդավոր. *խսկ.* տարօրինակ:

**welcome** ['welkəm] n ողջույն. հյուրընկալություն. bid ~ ողջունել. a warm ~ ջերմ ընդունելություն. overstay one's ~ չարաշահել հյուրընկալությունը. You're ~ (ի պատասխան շնորհակալության) Չարժե, խնդրեմ. You're ~ to try կարող եք փորձել. W~ ! Բարի գալուստ. a ~ guest ցանկալի հյուր. ~ news հաճելի/ուրախ նորություն/լուր. A cup of coffee would be very ~ Մի գավաթ սուրճը չէր խանգարի. W~ home ! Բարի գալուստ տուն:

**welcome** ['welkəm] v ողջունել, խրախուսել. ~ warmly սիրալիք/ջերմ ընդունել. ~ the suggestion ողջունել առաջարկությունը. ~ the opportunity ուրախ լինել հնարավորության համար:

**welcoming** ['welkəmiŋ] a սիրալիք:

**weld** [weld] n, v *տեխ.* զոդում. զոդել, սերտ միացնել:

**welder** ['weldə] n զոդող. զոդիչ:

**welding** ['weldɪŋ] n *տեխ.* զոդում. autoge-

nous/oxygen ~ ավտոգենային զոդում:  
**welfare** [ˈwɛlfə] n բարեկեցություն, բարօրություն. social/public ~ սոցիալական ապահովություն. ~ state համընդհանուր բարօրության պետություն. be concerned about smb's ~ հոգ տանել որևէ մեկի բարօրության համար live on ~ պետական թոշակով ապրել. child ~ մանկության պաշտպանություն:  
**welfare-work** [ˈwɛlfəwɜ:k] n սոցիալական ոլորտի աշխատանք:  
**well** I [wel] n ջրհոր. հոր. oil ~ նավթահոր. sink a ~ ջրհոր/նավթահոր փորել:  
**well** II [wel] n բարիք. wish smb ~ բարիք/լավը կամենալ/ցանկանալ. Leave ~ alone Ծակաչք լինելը լավ բան չէ:  
**well** [wel] a առողջ. Are you ~ ? Քեզ լավ ես զգում. She's not ~ today Այսօր նա իրեն լավ չի զգում. look ~ լավ տեսք ունենալ. feel ~ լավ զգալ. That's all very ~ Դա շատ լավ է. All's ~ that ends ~ Ամեն ինչի վերջն է լավ:  
**well** [wel] adv լավ. very ~ շատ լավ. pretty ~ բավական լավ. go ~ with սազել. իրար բռնել. These colours go ~ together Այս գույները իրար սազում են. do ~ հաջող լինել. ~ enough ոչինչ, վատ չէ. ~ advanced առաջ գնացած. առաջադիմած. as ~ նաև, բացի այդ. as ~ as ինչպես նաև. turn out ~ բարեհաջող ելք ունենալ. be ~ out of smth լավ պրծնել. perfectly ~ գերազանց(որեն). It may ~ be so Լրիվ հնարավոր է. She could ~ change her mind Շատ հնարավոր է, որ նա իր միտքը փոխի. (բավականաչափ, զգալիորեն) ~ into the night կեսգիշերից շատ անց. ~ over 50 հիսունից շատ անց. W~, look who it is ! Աստված իմ, ո՛ւմ ենք տեսնում. W~ I never ! Ո՞վ կմտածեր. W~, may be Դե, կարող է պատահել. W~ then Դե, հետո ինչ:  
**well-advised** [ˌwelədˈvaɪzd] a խոհեմ, ողջամիտ:  
**well-balanced** [ˌwelˈbælənst] a հավասարակշռված:  
**well-behaved** [ˌwelˈbeɪvd] a լավ դաստիարակված. a ~ child դաստիարակված երեխա:  
**well-being** [ˌwelˈbi:ɪŋ] n բարեկեցություն, բարօրություն:  
**well-born** [ˌwelˈbɔ:n] a ազնվածնունդ:  
**well-bred** [ˌwelˈbred] a բարեկիրթ, քաղաքավարի. գտարյուն (կենդանի):  
**well-built** [ˌwelˈbɪlt] a վայելչակազմ, բարե-

կազմ:  
**well-defined** [ˌweldiˈfaɪnd] a հստակ. a ~ outline հստակ ուրվագիծ:  
**well-disposed** [ˌweldiˈspəuzd] a բարյացակամ, լավ տրամադրված:  
**well-established** [ˌwelɪsˈtæblɪʃt] a արմատացած, հաստատված:  
**well-favoured** [ˌwelˈfeɪvəd] a հաճելի. գրավիչ, հրապուրիչ:  
**well-founded** [ˌwelˈfaʊndɪd] a հիմնավորված. ~ suspicions հիմնավորված կասկածներ:  
**well-groomed** [ˌwelˈgru:md] a լավ խնամված/հազմված:  
**wellington boots, wellingtons** [ˈwelɪŋtənbu:ts, ˈwelɪŋtənz] n ճութավոր ռետինե կոշիկներ:  
**well-judged** [ˌwelˈdʒʌdʒd] a ~ answer լավ մտածված պատասխան:  
**well-kept** [ˌwelˈkept] a խնամված. a ~ garden խնամված այգի. a ~ secret լավ թաքնված գաղտնիք:  
**well-knit** [ˌwelˈnɪt] a ամրակազմ:  
**well known** [ˌwelˈnəʊn] a լավ հայտնի:  
**well-nigh** [ˌwelˈnaɪ] adv համարյա:  
**well-off** [ˌwelˈɒf] a ապահովված, ունևոր. ~ people ապահովված մարդիկ. be quite ~ for fruits *խսկց*. մրգերով ապահովված լինել:  
**well-paid** [ˌwelˈpeɪd] a լավ վարձատրվող:  
**well-proportioned** [ˌwelprəˈpɔ:ʃnd] a համաչափ. a ~ room համաչափ սենյակ. a ~ woman վայելչակազմ/գեղակազմ կին:  
**well-read** [ˌwelˈred] a շատ կարդացած, զարգացած:  
**well-timed** [ˌwelˈtaɪmd] a ժամանակին, պատեհաժամ:  
**well-to-do** [ˌwelɪtəˈdu:] a ունևոր, մյուսապես ապահով:  
**well turned** [ˌwelˈtɜ:nd] a հաջող. ~ phrase մուրբ արտահայտություն. ~ sentence լավ կազմած նախադասություն. ~ compliment հաջող կոմպլիմենտ/հաճոյախոսություն:  
**well-wisher** [ˌwelˈwɪʃə] n բարի կամեցող:  
**well-worn** [ˌwelˈwɔ:n] a մաշված. ~ clothes/shoes մաշված հագուստ/կոշիկ. ~ phrases *փխք*. ծեծված արտահայտություններ:  
**Welsh** [welʃ] 1. n ուելսցի, Ուելսի բնակիչ. ուելսերեն. the ~ ուելսցիներ. 2. a ուելսական:  
**welt** [welt] n (կոշիկի) եզրագարդ. զարդեզր.

ռանտ:  
**welter** [ˈwɛltə] n խառնաշփոթություն, շփոթ:  
**welterweight** [ˈwɛltəweɪt] n երկրորդ կիսամիջին քաշի բռնցքամարտիկ:  
**wen** [wen] n մեծ, գերբնակեցված քաղաք:  
**wench** [wɛntʃ] n երիտասարդ գեղջուկ աղջիկ/ կին:  
**wend** [wɛnd] v գնալ:  
**west** [west] 1. n արևմուտք. արևմտյան քամի. in the ~ արևմուտքում. from the ~ արևմուտքից. to the ~ of դեպի արևմուտք. 2. a արևմտյան:  
**west** [west] adv դեպի արևմուտք. sail ~ նավարկել դեպի արևմուտք. look ~ նայել դեպի արևմուտք. All our plans went ~ *խսկց*. Մեր բոլոր ծրագրերը խորտակվեցին:  
**westerly** [ˈwestəli] a արևմտյան, արևմուտքից փչող:  
**western** [ˈwestən] 1. n արևմուտքի բնակիչ. *ամ*. կովբոյական ֆիլմ. 2. a արևմտյան:  
**westernization** [ˌwestənaiˈzeɪʃn] n արևմտականացում:  
**westward** (s) [ˈwestwəd(z)] adv դեպի արևմուտք. արևմտյան ուղղությամբ:  
**wet** [wet] n թացություն, խոնավություն. անձրևային եղանակ. Don't stand in the ~ Անձրևի տակ մի կանգնի:  
**wet** [wet] a թաց, խոնավ, անձրևային. ~ clothes/ground/weather թաց հագուստ/գետին. խոնավ եղանակ. get ~ through ամբողջությամբ թրջվել. ~ to the skin մինչև ոսկորները թրջվել. soaking/wringing ~ ամբողջությամբ թրջված. get one's feet ~ ոտքերը թրջել. "W~ paint" "Զգուշ. ներկված է" He is so ~ *փխբ*. Նա այնքան ձանձրալի է. a ~ day անձրևոտ օր. ~ nurse ստնտու, ծծմայր:  
**wet** [wet] v թրջել, թացացնել, խոնավացնել:  
**wetting** [wetɪŋ] n թրջոց, թրջում. We got a good ~ Մենք ամբողջությամբ թրջվեցինք:  
**whack** [wæk] n ուժեղ շառաչ/հարված. *խսկց*. (բաժին, մաս) I have had my ~ of ես իմ բաժինը ստացել եմ:  
**whale** [weɪl] n կետ. sperm ~ կաշալոտ. a ~ oil ծովային կենդանիների հալած ճարպ. have a ~ of time հոյակապ ժամանակ անցկացնել:  
**whale-boat** [ˈweɪlbəʊt] n կետորս(ական) նավ:  
**whalebone** [ˈweɪlbəʊn] n կետոսկր:  
**whaler** [ˈweɪlə] n կետորս:

**wharf** [wɔːf] n նավակայան, նավամատույց:  
**what** [wɒt] prn inter. ինչ. What's wrong with you? Քեզ ի՞նչ է պատահել. W~ is it made of? Դա ինչի՞ց է պատրաստված. W~ is that used for? Դա ինչի՞ համար է (օգտագործվում). Is he joking or ~? Նա, ինչ է, կատակո՞ւմ է. W~ more do you want? Էլի ի՞նչ եք ուզում. Well, ~ of it? So ~ ? Գետո՞ւ ի՞նչ. to know ~'s ~ իմանալ ինչն ինչոց է. and ~ not և էլի ինչ ասես (rel, dem) ինչ, այն ինչ. That's ~ I... Դա այն է, ինչ ես... W~ surprises me is... Ինչ զարմացնում է ինձ, այն է... W~ I like is good music Իմ սիրելի բանը լավ երաժշտությունն է. and ~ is more և ավելին. ~ if իսկ ինչ եթե. ~ about իսկ ինչ կասեք. (inter) ինչպիսի. W~ flowers do you want? Ինչպիսի՞ ծաղիկներ եք ուզում. W~ sort of a man? Ինչպիսի՞ մարդ. (որը, որոնք) I took ~ papers I could find Վերցրի այն թղթերը, որոնք կարողացա գտնել. (exclam) Ի՞նչ W~ luck ~! Ի՞նչ երջանկություն/հաջողություն. ~ a pity ! Ափսոս, ի՞նչ ցավալի է. W~ nonsense ! Ի՞նչ հիմարություն. W~ an actress ! Ի՞նչ դերասանուհի է. W~ a fool I am ! Ինչ հիմարն եմ. What-d'ye - call him *խսկց*. Անունն ինչ էր:  
**whate'er, whatever** [wɒtˈeə, wɒtˈevə] prn ինչ էլ, որ. ~ happens ինչ էլ որ պատահի. ~ people say ինչ էլ որ մարդիկ ասեն. (anything) Take/Do ~ you like Վերցրեք/Արեք, ինչ ուզում եք. W~ can she mean? Ի՞նչ կարող էր դա նշանակել. Ի՞նչ կարող էր նա նկատի ունենալ:  
**whatever** [wɒtˈevə] a ինչպիսին էլ որ. ~ the reasons are ինչպիսի պատճառներ էլ որ լինեն. every one of ~ age բոլոր տարիքի մարդիկ. (որևէ) Is there any hope ~ ? Գոնե որևէ հույս կա՞. There is no doubt ~ Ամենաչնչին կասկած անգամ չկա:  
**whatsoever** [ˌwɒtsəʊˈevə] *տե՛ս* whatever:  
**wheat** [wi:t] 1. n ցորեն. summer/winter ~ զարնանացան/աշնանացան ցորեն. Indian ~ եգիպտացորեն. 2. a ցորենի. ~ flour ցորենի ալյուր. ~ bread ցորենի հաց:  
**wheedle** [ˈwi:dɪl] v շողոքորթել. կեղծավորությամբ համոզել/դուրս քաշել.  
**wheel** [wi:l] n անիվ, ակ. potter's ~ բրուտի անիվ. spur ~ ատամնավոր անիվ. steering ~ ղեկ. (*ավտո.*, *ավ.*, *ծով.*). fortune's ~ բախտի անիվ. the man at the ~ ղեկակալ. *փխբ*. դե-

կավար. put one's shoulder to the ~ *փխբ.* գործի անցնել. grease the ~s անիվները յուղել. *փխբ.* կաշառք տալ. put a spoke in smb's ~ խոչընդոտներ ստեղծել. the ~ of the state պետական մեքենա:

**wheel** [wi:l] *v* պտտ(վ)ել, շրջանաձև շարժվել. ~ the baby around երեխային ման տալ. ~ the bike into the garden հեծանիվը այգի տանել. The birds ~ed above him թռչունները պտտվում էին նրա վերևում:

**wheelbarrow** [ˈwi:l,bærəʊ] *n* ձեռնասայլակ:

**wheelchair** [ˈwi:l,tʃeə] *n* անդամալույծի բազկաթոռ:

**wheeler** [ˈwi:lə] *n* անվագործ վարպետ:

**wheel-horse** [ˈwi:lhɔ:s] *n* քեղածի:

**wheeze** [wi:z] **1.** *n* ծանր շնչառություն. խռչոց. **2.** *v* ծանր շնչել, խռչոցալ. խզխզացնել:

**wheezy** [ˈwi:zi] *a* խռչոց:

**whelm** [welm] *n* *բնստ.* ջրով ծածկել, ջրի տակն առնել. ողողել. *խսկց.* կլանել, լափել:

**whelp** [welp] **1.** *n* շան լակոտ. կենդանու ձագ. քոթթ. **2.** *v* ցնկնել, ձագ բերել:

**when** [wen] **1.** *adv*, *inter* ե՞րբ. since ~? երբվանի՞ց, ո՞ր ժամանակվանից. till ~? մինչև ե՞րբ. *rel* երբ, այն ժամանակ երբ. He will come ~ he finishes Նա կգա, երբ ավարտի. **2.** *prn* երբ. ~ you know երբ գիտես. ~ I was a child երբ ես երեխա էի, երեխա ժամանակ. the ~ and the where/the how երբ և որտեղ/ինչպես:

**whenever** [wenˈevə] *adv* երբ էլ, որ. ցանկացած ժամանակ. Come ~ you can եկեք, երբ էլ որ կարողանաք. W~ will we have time? Արդյոք ե՞րբ մենք ժամանակ կունենանք:

**where** [weə] *adv* որտեղ. ~ from որտեղից. ~ are you from? Որտեղի՞ց եք (որտեղացի եք). ~ to ուր. the place ~ we are going to այն տեղը, ուր մենք գնում ենք. this is ~ (ահա) այստեղ. This is ~ we get off Մենք այստեղ ենք իջնում. This is ~ you are mistaken Այստեղ է, որ դու սխալվում ես. ~ would I be որտեղ ես հիմա կլինեի:

**whereabouts** [ˈweəəbɔ:ts] *n* գտնվելու տեղը, ապրելու վայրը:

**whereabouts** [ˌweəəˈbɔ:ts] *adv* որտեղ:

**whereas** [weəˈæz] *adv* մինչդեռ:

**whereby** [weəˈbaɪ] *adv* ինչի/որի/օգնու-

թյամբ, հիման վրա. an agreement ~ պայմանագիր, համաձայն որի. a plan ~ ծրագիր, որի օգնությամբ:

**wherefore** [ˈweəfɔ:] *adv* ինչի համար, ինչու:

**wherein** [ˈweəɪn] *adv* ինչում, ինչ բանում:

**whereof** [weəˈɒv] *adv* ինչից, ումից. ինչի/ ում մասին:

**whereon** [weəˈɒn] *adv* որի հետևանքով, որից հետո:

**wherever** [weəˈevə] *adv* որտեղ էլ, ուր էլ, որ ~ he is որտեղ էլ որ նա լինի. ~ you go ուր էլ որ գնաք:

**wherewith** [ˈweəwið] *adv* որով, ինչ բանով:

**wherry** [ˈweri] *n* նավակ:

**whet** [wet] *n* սրել, հեսանել. *փխբ.* ավարտակ գրգռել. This ~ted his curiosity Դա շարժեց նրա հետաքրքրասիրությունը:

**whether** [ˈweðə] **1.** *conj* արդյոք, թե. ~ or not այսպես թե այնպես. ~ he is here or not այստեղ է նա թե ոչ. **2.** *prn* երկուսից որը:

**whetstone** [ˈwetstəʊn] *n* սրաքար, հեսան:

**whew** [wei] *n* շիճուկ:

**which** [wɪtʃ] **1.** *a* որ. ~ way/town որ ճանապարհով/քաղաքը. **2.** *prn* որ, որը. ~ of you ձեզնից որը/որ մեկը. ~ of the players խաղացողներից ով/որ մեկը. *relat.* the hotel at ~ we stayed հյուրանոցը որտեղ մենք իջևանել էինք. ~ God forbids Աստված մի արասցե. by ~ time այդ ժամանակ արդեն. դրանից առաջ արդեն. during ~ time որ ժամանակի ընթացքում:

**whichever** [wɪtʃˈevə] *a*, *prn* որը որ, որն էլ որ. ցանկացածը. ~ of you ձեզանից որն էլ. Take ~ you like Վերցրու, որը հավանում ես. ~ doctor on duty ցանկացած հերթապահ բժիշկը. ~ way you look at it ինչ ձևով էլ հարցին մոտենաք:

**whiff** [wɪf] *n* թեթև շունչ/հոտ. a ~ of garlic/tobacco սխտորի/ծխախոտի թեթև հոտ/շունչ. a ~ of gas գազի հոտ/շունչ. have a few ~s ծուխը մի քանի անգամ ներս քաշել:

**whiffle** [ˈwɪfl] *v* (քամին) թեթև փչել. ցիրուցան անել. ցաքուցրիվ տալ:

**whig** [wɪg] *n* *պտմ.* վիզ, վիզերի կուսակցության անդամ:

**while** [waɪl] *n* ժամանակ, ժամանակամիջոց. for a ~ որոշ ժամանակ. after a ~ որոշ ժամանակ անց. in a little ~ շուտով. once in a ~ ժամանակ առ ժամանակ. a long/little ~ ago

շատ/ոչ շատ վաղուց. a good/great ~ երկար ժամանակ. It is not worth ~ Չարժե:

**while** [wail] 1. *en* մինչ, այն ժամանակ երբ. քանի դեռ. ~ he was in the university մինչ նա համալսարանում էր. ~ it's still daylight քանի դեռ լույս է. ~ coming here այստեղ գալու ճանապարհին. (չնայած, թեև) ~ you admit that չնայած դուք այդ ընդունում եք. (իսկ, հակադրություն) He likes opera ~ I like ballet Նա օպերա է սիրում, իսկ ես՝ բալետ. 2. *v* ~ away the time ժամանակ անցկացնել:

**whilst** [wailst] *en* քանի դեռ, մինչ, մինչև:

**whim** [wim] *n* քնահաճույք, քմայք. a passing ~ վայրկենական քնահաճույք. satisfy all ~s բոլոր քնահաճույքները կատարել:

**whimper** ['wimpə] 1. *n* թնկթնկոց, նվնվոց, վնգստոց. 2. *v* թնկթնկալ, նվնվալ, վնգստալ:

**whimsical** ['wimzɪkəl] *a* արտառոց, արտասովոր. ~ look/smile առեղծվածային հայացք/ժպիտ:

**whimsy** ['wimzi] *n* քնահաճ:

**whine** [wain] 1. *n* նվնվոց, վնգստոց. գանգատ. 2. *v* նվնվալ, վնգստալ. տրտնջալ. always ~ about smth միշտ ինչ-որ բանից գանգատվել/տրտնջալ:

**whinny** ['wini] *n* վրնջոց, վրնջյուն. մեղմ խրխնջոց:

**whip** [wɪp] *n* մտրակ:

**whip** [wɪp] *v* մտրակել, ձաղկել, ծեծել. (արագ պատրաստել, հարել) ~ cream սերուցք հարել. ~ away քշել, խլել. ~ off դեն նետել/զցել. ~ out դուրս քաշել. The speaker ~ped the listeners up Ձեկուցողը հուզեց ունկնդիրներին. ~ round to the shop *փխբ.*, *խսկց.* արագ խանութ վազել:

**whip-hand** ['wɪphænd] *n* have the ~ of մեկին բուռը հավաքել/իրեն ենթարկել:

**whipper-in** [ˌwɪpərˈɪn] *n* որսորդ. շնապան, շնապահ:

**whippet** ['wɪpɪt] *n* բարակ. որսկան շուն:

**whipping** ['wɪpɪŋ] *n* ծեծ, քոթակ, ձաղկում. get a ~ ծեծ ուտել. ~ top հոլ:

**whip round** ['wɪpraʊnd] *n* *խսկց.* հանգանակություն. have a ~ for smn մեկի համար փող հավաքել:

**whirl** [wɜːl] *n* պտույտ, պտուտահողմ, տագնապ. a ~ of dust փոշու հողմապտույտ. ~ of parties *փխբ.* հաճույքների հողմապտույտ. My thoughts are in a ~ Մտքերս խառնաշփոթ

վիճակում են:

**whirl** [wɜːl] *v* պտտվել, սլանալ. The dancers ~ed round the room Պարողները պտտվում էին սենյակում. Towns and villages ~ed past the window Քաղաքներն ու գյուղերը սլանում էին պատուհանի ետևում:

**whirligig** ['wɜːlɪgɪg] 1. *n* կարուսել, հոլ. 2. *a* մրրկանման, մրրկապտույտ:

**whirlpool** ['wɜːlpuːl] *n* ջրապտույտ, հորձանուտ:

**whirlwind** ['wɜːlwɪnd] *n* մրրիկ, փոթորիկ.

**whirr** [wɜːr] 1. *n* բզզոց, դժժոց, ճռռոց. 2. *v* բզզալ. դժժալ, ճռռալ. The camera began to ~ Կինոխցիկն սկսեց բզզալ/աղմկել:

**whisk** [wɪsk] 1. *n* փոքրիկ ավել. հարիչ, ծփափայտիկ. թափահարում, արագ շարժում. egg ~ ձվի հարիչ. a ~ of tail պոչի շարժում/ թափահարում. 2. *v* հարել (ծու և այլն) ~ (up) egg whites ձվի սպիտակուցը հարել. ~ off/ away քշել. ~ off flies ճանճեր քշել. (թռցնել, տանել) They ~ed me off to the theatre Նրանք ինձ թատրոն քարշ տվին:

**whisker** ['wɪskə] *n* բեղ. ~s բեղ. side ~s այտամորուք:

**whisk(e)y** ['wɪski] *n* վիսկի:

**whisper** ['wɪspə] *n* փսփսոց, շշուկ, շրշյուն. լուր. in a ~, in ~s շշուկով:

**whisper** ['wɪspə] *v* շշուկալ, փսփսալ (վատ լուրեր տարածել). They sat ~ing Նրանք նստած փսփսում էին. It is ~ed that Լուրեր են տարածվում, որ..:

**whispering** ['wɪspərɪŋ] *n* շշուկոց, շշուկոց:

**whist** [wɪst] *n* վիստ (*թրթխ.*):

**whistle** ['wɪsl] *n* սուլոց, շվոց. սուլիչ. wet one's ~ *փխբ.*, *խսկց.* կոկորդը թրջել.

**whistle** ['wɪsl] *v* սուլել, շվացնել. սուլիչ փչել/նվագել. ~ a tune մեղեդի սուլել/նվագել. The referee ~d *մրգ.* (խաղի) Դատավորը սուլեց. The wind ~d Քամին սուլում էր. The bullets ~d over his head Գնդակները սուրացին նրա գլխավերևում:

**Whit** [wɪt] *a* *եկեղ.* Գոգեգալուստ. ~ Sunday Գոգեգալուստյան տոն. ~ Monday Գոգեգալուստյան երկրորդ օրը, երկուշաբթի:

**whit** [wɪt] *n* մի քիչ, շատ քիչ. no ~, not a ~ բնավ, բոլորովին, ամենևին:

**white** [waɪt] *n* սպիտակ գույն, սպիտակություն. in ~ սպիտակ հագած. the woman in ~ սպիտակ հագած կինը. (սպիտակ ներկ)

London ~ կապարային սպիտականերկ. Chinese/ zink ~ ցինկաներկ. the ~ of the eye/egg աչքի/ ձվի սպիտակուց:

**white** [wait] a սպիտակ. *փխբ.* մաքուր, անարատ. անմեղ. ~ hair սպիտակ մազեր. Hair is going ~ Մազերը սպիտակում են. (գունատ, դժգույն) as ~ as a sheet քաթանի. կտավի նման գունատ. turn ~ գունատվել. turn ~ with anger/fear զայրույթից/վախից գունատվել. We had a ~ Christmas Ծննդյան տոներին ծյուն եկավ:

**white collar** [wait'kɒlə] a հիմնարկային, ծառայողական. ~ workers հիմնարկի աշխատողներ/ծառայողներ. "արիստոկրատ բանվորներ, բանվորների արիստոկրատիա". ~ job/occupation գրասենյակային աշխատանք. ~ slavery "սպիտակամորթ ստրկուհիների" առևտուր. հարկադիր մարմնավաճառություն:

**white haired** [wait'hɛəd] a ալեհեր:

**white-handed** [wait'hændid] a անմեղապարտ, անմասնակից:

**white horses** [wait'hɔ:sɪz] n *ծով.* փրփրալիքներ. ~ hot a շիկացած, լուսաշեկ դարձած:

**white-livered** [wait'livəd] a վախկոտ, փոքրոգի:

**whiten** ['waitn] v սպիտակեցնել. սպիտակել, գունատվել:

**whitesmith** ['waitsmiθ] n քիթեղագործ:

**whitethorn** ['waitθɔ:n] n *բսբ.* ալոճենի, սղենի:

**whitewash** ['waitwɒʃ] 1. n կրային լուծույթ (պատերը սպիտակեցնելու համար). սպիտակեցնելը, սպիտակեցում. 2. v սպիտակեցնել. *փխբ.* վերականգնել պատիվը/անունը/իրավունքները:

**whitish** ['waitiʃ] a սպիտակավուն:

**whittle/e** ['witl] v տաշել (դամակով). ~ away/down աստիճանաբար փոքրացնել. ~ down a piece of wood դամակով տաշել փայտի կտորը. The savings are ~ing down *փխբ.* Խնայողությունները աստիճանաբար հավելում են:

**whiz(z)** [wɪz] 1. n վզզոց, սուլոց. ~ kid *խսկց.* հրաշք երեխա. վունդերկինդ. 2. v վզզալ, սուլել. The bullets ~zed past Գնդակները սուրում էին մեր կողքով. The skiers ~zed down Դահուկորդները սուրացին ներքև:

**who** [hu:] prn Ո՞վ. W~ is he? Ո՞վ է նա. ~ is ~, Who's who "Ով ով է" կենսագրական բառարան. rel. որ, որը, ով. ~ should it be but դա կարող էր լինել միայն. ~ knows ինչ իմանաս, ով գիտի. those ~ նրանք, ովքեր. the man ~ մարդը, ով/որը. none of ~m նրանցից ոչ մեկը:

**whoa** [wəu] int կանգնիր, թիռու (ծիերին ուղղված ձայնարկություն):

**whoever** [hu'evə] prn ով. W~ do you mean? Ո՞ւմ նկատի ունեք. relat. ով էլ որ ~ comes ով էլ որ գա. Invite ~ you like Զրավիրեք ում ուզում եք:

**whole** [həʊl] n ամբողջություն, ամբողջը. լրիվ. as a ~ ամբողջությամբ, որպես ամբողջություն. on/upon the ~ ընդհանուր առմամբ, ամբողջությամբ վերցրած. ~ blood relation ծնողների կողմից արյունակից ազգական. society as a ~ հասարակությունը ամբողջությամբ վերցրած:

**whole** [həʊl] a ողջ, անվնաս. ~ and sound լրիվ անվնաս. (ամբողջ) the ~ world ամբողջ աշխարհը. a ~ week մի ամբողջ շաբաթ. (անարատ, անքաշ) ~ milk անքաշ կաթ. a ~ number *մաթ.* ամբողջ թիվ. a ~ lot of money *խսկց.* փողի հսկայական կույտ. swallow smth ~ ամբողջովին կուլ տալ:

**whole-hearted** [həʊl'hɑ:tɪd] a անկեղծ, ամբողջ սրտով/հոգով. have ~ support լրիվ սատարում ունենալ:

**wholeheartedly** [həʊl'hɑ:tɪdli] adv անկեղծորեն, ջերմորեն. ամբողջ սրտով:

**wholemeal** ['həʊlmi:l] n (*մալ* ~ flour) կոպիտ աղացած ալյուր:

**wholesale** ['həʊlseɪl] 1. n մեծածախ առևտուր. sell ~ մեծաքանակ կերպով վաճառել. 2. a մեծաքանակ. *փխբ.* մեծ մասշտաբներով. հախուռն. the ~ trade մեծածախ առևտուր. at ~ prices մեծածախ գներով. ~ dealers մեծածախ առևտրականներ. ~ criticism *փխբ.* հախուռն քննադատություն.

**wholesale** ['həʊlseɪl] adv մեծաքանակ կերպով. buy/sell smth ~ գնել/վաճառել մեծաքանակ կերպով. accuse everyone ~ *փխբ.* բոլորին հախուռն մեղադրել:

**wholesaler** ['həʊlseɪlə] n մեծածախ առևտրական:

**wholesome** ['həʊlsəm] a առողջ, օգտակար. առողջարար. ~ food առողջ սնունդ. ~ advice



օգտակար/ողջամիտ խորհուրդ. ~ character դրական կերպար/բնավորություն:

**wholly** ['hɔ:li] adv լիովին, ամբողջովին, ամբողջությամբ. ~ agree լիովին համաձայնվել. ~ out of the question լրիվ հարցից դուրս (խոսք չի կարող լինել). devote ~ ամբողջովին նվիրվել. not ~ without ոչ բոլորովին առանց:

**whom** [hu:m] prn ում. by ~ ում միջոցով. to ~ ում. with ~ ում հետ. of ~ ում/որի մասին:

**whoop** [wʊ:p] n բացականչություն. ճիչ. խեղդող հազ. a ~ of joy ուրախության ճիչ:

**whoop** [wʊ:p] v ճչալ, բացականչել. The children ~ed for joy երեխաները ուրախությունից ճչացին:

**whoopee** ['wʊpi:] n *ամ. խսկց.* աղմկալի ուրախություն. բարձրաձայն ծիծաղ:

**whooping-cough** ['hu:pɪŋkɒf] n կապույտ հազ:

**whopper** ['wɒpə] n *խսկց.* վիթխարի/հսկայական բան. The fish was a ~ Ռա մի վիթխարի ձուկ էր. (բացարձակ սուտ) That's a ~ Ինչ ահավոր սուտ:

**whore** [hɔ:] n պռոնիկ:

**whortleberry** ['wɔ:tl,beri] n *բար.* հավանորգի. հապալաս. bog ~ կապույտ հապալաս. red ~ կարմիր հապալաս:

**whose** [hu:z] prn poss ում/որի, որոնց. W~ cup is this? Ո՞ւմ գավաթն է սա. relat որի, որոնց. the man ~ մարդը, ում/որի. the lady ~ house կինը, ում տունը:

**why** [wai] 1. adv inter. ինչո՞ւ, ինչի՞ համար. W~ did you come? Ինչո՞ւ եկաք. W~ not? Ինչո՞ւ ոչ: 2. rel. ինչու. that's ~ ահա թե ինչու. I know ~ it happened Ես գիտեմ, թե ինչու այդ պատահեց. 3. int զարմանք. W~ it is nearly 5 o'clock now Այ քեզ բան, համարյա ժամի 5-ն է. ~ certainly դե իհարկե. W~ there he is Ահա և նա:

**wick** [wik] n պատրույզ/լամպի, մոմի:

**wicked** ['wɪkɪd] a չար, չարամիտ. բարոյազուրկ. ~ people չար/վատ/բարոյազուրկ մարդիկ. What a ~ thing Ի՞նչ անամոթություն/դաժանություն. a ~ temper վատ/այլանդակ բնավորություն. a ~ sense of humour չար/չարամիտ կատակ:

**wicker** ['wɪkə] n հյուսելու շիվեր/ճյուղեր. a ~ basket/chair հյուսած զամբյուղ/աթոռ. ~ work շյուղերից/ճյուղերից հյուսած իր:

**wide** [waɪd] 1. a լայն. a ~ river/path լայն գետ/արահետ. How ~? Ի՞նչ լայնություն ունի. a ~ choice/interest *փխբ.* լայն ընտրություն/հետաքրքրություն. հետաքրքրությունների լայն շրջանակ. a ~ knowledge of history պատմության լայնածավալ/ընդարձակ գիտելիք. a man of ~ views լայն հայացքների տեր մարդ. 2. adv ~ open լայն բացված. with ~ open mouths բերանները լայն բացած. ~ eyed լայն բացված աչքերով. ~ open eyes լայն բացված աչքեր. (հեռու) ~ apart (իրարից) հեռու. ~ of the truth ճշմարտությունից հեռու. ~ from being ամբողջովին ոչ. far and ~ ամենուրեք. look far and ~ ամենուրեք փնտրել. ~ of the mark նպատակի կողքով, անտեղի. ~ awake արթուն, լրիվ արթնացած. to be ~ զգոն/արթուն լինել. *հմկրգ.* ~ character "լայն" սիմվոլ. ~ display արտապատկերում էկրանի լայնությամբ. ~ word երկար բառ:

**wide area information server** ['waɪd 'eəriə ,ɪnfə'meɪʃn 'sɜ:və] լայն տարածքի տեղատվական ծառայություն:

**wide area network** ['waɪd 'eəriə 'netwɜ:k] լայն տարածքի ցանց:

**widely** ['waɪdli] adv լայնորեն. ~ read շատ կարդացած. It is ~ believed Շատերն են կարծում. He has travelled ~ Նա շատ է ճամփորդել. ~ scattered ցրուցան, իրարից հեռու:

**widen** ['waɪdn] v լայնանալ, լայնացնել:

**wide screen** ['waɪdskri:n] a լայնէկրան. a ~ film լայնէկրան կինոնկար:

**widespread** ['waɪdspreɪd] a լայնատարած, լայն տարածում գտած. It is becoming ~ Լայն տարածում է ստանում:

**widow** ['wɪdəʊ] 1. n այրի կին. grass ~ ամուսնու երկարատև բացակայության պատճառով մենակ մնացած կին. 2. v be ~ed այրիանալ:

**widowed** ['wɪdəʊd] a այրիացած:

**widower** ['wɪdəʊə] n այրի տղամարդ:

**widowhood** ['wɪdəʊhʊd] n այրիություն:

**width** [wɪðθ] n լայնություն, լայնք. in ~ լայնքով. the ~ of interests *փխբ.* հետաքրքրությունների շրջան. a ~ of cloth գործվածքի լայն կտոր:

**wield** [wi:ld] v տիրել, ձեռքում ունենալ.

**wife** [waɪf] n կին, կին ամուսին. faithful ~ հավատարիմ կին. take smb to ~ կին առնել, ամուսնանալ. a son by his first ~ որդի առա-

ջին կնոջից:  
**wig** [wig] n կեղծամ. big ~ *փխբ. արհմ.* կարևոր անձ:  
**wigging** ['wɪɡɪŋ] n *խսկց.* հանդիմանություն:  
**wiggly** ['wɪɡli] a ուլորապտույտ. a ~ line/road ուլորապտույտ գիծ/ճանապարհ:  
**wigwag** ['wɪgwæɡ] v դրոշակներով ազդանշան տալ:  
**wigwam** ['wɪgwæm] n վիզվամ (հյուսիսամերիկյան հնդկացիների վրան):  
**wild** ['waɪld] n վայրի գազաններ. ամայություն, վայրիություն. live in the ~ խուլ տեղում/ամայության մեջ ապրել. in the ~s ամենախուլ/վայրի վայրերում. the call of the ~ բնության/նախնիների կանչը:  
**wild** ['waɪld] a վայրի, վայրենի. ~ animals/tribes վայրի կենդանիներ/ցեղեր. ~ flowers դաշտային ծաղիկներ. a ~ appletree անպատվաստ խնձորենի. grow/run ~ ազատ/առանց խնամքի /հսկողության մեծանալ. (փոթորկալից) ~ weather փոթորկալից եղանակ. ~ country ամայի վայր. ~ sea փոթորկալից ծով. (հախուռն, բուռն) ~ enthusiasm հախուռն խանդավառություն. ~ applause բուռն ծափահարություններ. (խելացնոր) ~ schemes խելացնոր ծրագրեր. ~ rumours անհավանական լուրեր. a ~ guess անխտեն/չմտածված ենթադրություն/կռահում. be ~ about խելքը զնալ. drive ~ խիստ զայրացնել. shoot ~ բախտաբեր/հնչպես պատահի կրակել. ~ speech/laughter մոլեգիմ ճառ. անզուսպ ծիծաղ. ~ card *հմկրգ.* դատարկ քարտ:  
**wildcat** ['waɪldkæɪt] n վայրի կատու. a ~ strike *փխբ.* անօրինական/չթույլատրված գործադուլ:  
**wilderness** ['waɪldənəs] n անապատ, ամայի վայր:  
**wildfire** ['waɪldfaɪə] n հունական կրակ. Rumours spread like ~ Լուրերը կայծակի նման տարածվեցին:  
**wildfowl** ['waɪldfaʊl] n վայրի թռչուններ:  
**wildgoose** ['waɪld'ɡuːs] n վայրի սագ. a ~ chase *փխբ.* խելացնոր/անարդյունավետ նախածեռնություն:  
**wilding** ['waɪldɪŋ] n վայրի ծառ. վայրի ծառի պտուղը:  
**wildlife** ['waɪldlaɪf] n (վայրի) կենդանական աշխարհ. ~ law կենդանական աշխարհի

պահպանման օրենսդրություն:  
**wile** [waɪl] n խորամանկություն, խաղ. խաբեություն:  
**wilful** ['wɪlfʊl] a համառ, քմահաճ, կամակոր. *իրավ.* դիտավորյալ, կանխամտածված. ~ murder կանխամտածված սպանություն:  
**will** [wɪl] n կամք, կամքի ուժ. free ~ կամքի ազատություն. strong ~ ուժեղ կամք. of one's own/free ~ ազատ կամքով/ցանկությամբ. have no ~ of his own սեփական կամք չունենալ. against one's ~ հակառակ կամքին. the ~ of the people ժողովրդի կամքով/ցանկությամբ. with a ~ ուժով, եռանդով. work one's ~ իր հայեցողությամբ/կամքով անել. with the best ~ in the world ինչքան էլ ցանկանաս. *իրավ.* (կտակ) make one's ~ կտակը կազմել. joint ~ համատեղ կտակ. prove a ~ ապացուցել կտակի օրինականությունը. gift by ~ նվիրատվություն կտակի ձևով/միջոցով:  
**will** [wɪl] v կամք ցուցադրել, ստիպել, հարկադրել. I ~ed myself ես ինձ ստիպեցի. He ~ed her to keep silent Չարկադրեց լռել. (կտակել) He ~ed his collection to the gallery Նա կտակեց իր հավաքածուն պատկերասրահին:  
**Will** [wɪl] v aux, mod. He ~ do it Նա այդ կանի. (խնդրանք, հրաման) Won't you have some tea? Թեյ չէի՞ք ուզեմա. W~ you close the window, please խնդրեմ փակեք պատուհանը. (ցանկություն, հոժարություն) Come when you ~ եկեք երբ կուզեք. Say what you ~ ինչ ուզում եք ասեք. (հավանականություն) That ~ be the doctor now Չավանաբար դա բժիշկն է. He ~ be about 50 Նա հավանաբար 50-ին մոտ է. (սովորույթ) He'll sit in front of TV Նա միշտ նստում է հեռուստացույցի մոտ. The door won't shut Դուռը չի փակվում. Boys ~ be boys Տղաները միշտ տղաներ են մնում. The car won't start Մեքենան գործի չի գցվում. (հատուկ շեշտ) I said I'd come and I ~ Ասացի կգամ, ուրեմն կգամ. He won't have it Նա դա թույլ չի տա:  
**willing** ['wɪlɪŋ] a հոժարակամ, պատրաստակամ. a ~ worker ջանասեր աշխատող. plenty of ~ hands բազմաթիվ ցանկացողներ. Are you ~? Դուք համաձայն եք He is ~/not very ~ to help Նա պատրաստ է/առանձնապես ցանկություն չունի օգնելու. God ~ Աստված տա:

**willingly** [ˈwɪlɪŋli] adv հաճույքով, սիրով:  
**willingness** [ˈwɪlɪŋnəs] n պատրաստակամություն, հոժարակամություն:  
**will o' the wisp** [ˌwɪləðəˈwɪsp] n թափառող կրակ, շրջնողիկ հոգի:  
**willow** [ˈwɪləʊ] n ուռի, ուռենի. weeping ~ լացող ուռենի:  
**willowy** [ˈwɪləʊi] a ուռենաշատ:  
**willpower** [ˈwɪl.pəʊə] n կամքի ուժ:  
**willynilly** [ˌwɪlɪˈnɪli] adv կամա-ակամա:  
**wilt** [wɪlt] v թռչնել, թառամել, թառամեցնել. ~ in the heat շոգից թուլանալ:  
**wily** [ˈwaɪli] a նենգ, խորամանկ:  
**wimble** [ˈwɪmbəl] n գայլիկոն, շաղափ:  
**win** [wɪn] n հաղթանակ (խաղում, մրցություն), շահում.  
**win** [wɪn] v շահել, հաղթել, նվաճել. ~ a victory հաղթանակ տանել. ~ a battle/game/war մարտը/խաղը/պատերազմը շահել. ~ a race/contest վազքում/մրցություն հաղթել. ~ a prize/an award մրցանակ/պարգև ստանալ. ~ the election ընտրություններում հաղթել. ~ money at cards/in lottery թղթախաղում/վիճակախաղում փող շահել. (նվաճել, ձեռք բերել) ~ freedom/respect/confidence ազատություն/հարգանք/վստահություն ձեռք բերել. ~ clear/free նեղ վիճակից դուրս գալ/ազատվել. ~ affection/love/sympathy նվաճել սեր/կարեկցանք. ~ smb's heart նվաճել մեկի սիրտը. ~ consent համաձայնությունը ձեռք բերել. ~ over իր կողմը թեքել. ~ friends ընկերներ ձեռք բերել. ~ through in the end վերջի վերջո իր նպատակին հասնել:  
**wince** [wɪns] n կծկվել (ցավից), ցնցվել. Tom ~d at his words Նրա բառերից թունը ցնցվեց:  
**winch** [wɪntʃ] 1. n բեռնամբարձ մեքենա. 2. v ~ smth up բեռնամբարձով բարձրացնել:  
**winchester** [ˈwɪntʃɪstə] n *հմկրգ*. արտաքին հիշասարք ~ disk վինչեստր, կոշտ դիսկ:  
**wind** I [waɪnd] n քամի. light/fresh/sharp ~ թեթև/թարմ/սուր քամի. advance, contrary, head/high, strong ~ հանդիպակաց/ուժեղ քամի, հողմ. down ~ քամու ուղղությամբ. against the/up the ~ քամուն հակառակ. with the/with a following ~ համընթաց/հաջողակ քամի a gust/blast of ~ քամու պոռթկում. have a following ~ /the ~ in one's face քամին թիկունքից/մեջքից/հետևից փչել. դիմացից/երեսից փչել. get the ~ up վախենալ.

throw caution to the ~s գգուշությունը մի կողմ նետել. (շնչառություն) be out of ~ շնչակտուր լինել. get one's ~ back շունչը տեղը գալ. get one's second ~ երկրորդ շնչառություն ձեռք բերել. *երժշ.* ~ instruments փողային գործիքներ. wood ~s փայտե փողային գործիքներ. brass ~s պղնձե փողային գործիքներ. *բժշկ.* գազեր, քամի. The baby 's got ~s երեխան գազեր ունի:

**wind** II [waɪnd] n պտույտ, շրջապտույտ. գալար. ոլորք:

**wind** I [waɪnd] v հեղ առաջացնել. փչել. փող հարել. նախազգալ. The blow ~ed me Յարվածից շունչս կտրվեց:

**wind** II [waɪnd] v ոլորվել, գալարվել. The river ~s its way Գետը ոլորվելով անցնում է իր ճանապարհը. (փաթաթել) ~ wool (into a ball) բուրդը կծկել. ~ film on the reel ժապավենը կոճի վրա փաթաթել. ~ a string round the package փաթեթը պարանով կապել. She ~s him round her little finger *փխբ.* Խաղացնում էր իր ճկույթի վրա. *տեխ.* լարել ~ watch/clock/toy ժամացույցը/խաղալիքը լարել ~ back/on (ժապավենը) հետ/առաջ փաթաթել. ~ down the car window մեքենայի պատուհանը իջեցնել. ~ up վերջացնել, եզրափակել. ~ up story/meeting/conversation վերջացնել պատմությունը. եզրափակել ժողովը. ավարտել խոսակցությունը. How does the play ~ up? Ինչո՞վ է ավարտվում ներկայացումը: The company was wound up *փխբ.* Ընկերությունը լուծարվեց:

**wind bag** [ˈwaɪnbæɡ] n *խսկց.*, *փխբ.* չաչանակ, փչան:

**windbreak** [ˈwaɪnbreɪk] n հողմաբեկ պատուհն:

**windbreaker** [ˈwaɪnd,breɪkə] n (*նաև* ~ jacket/cheater) քամու համար անթափանցիկ բաճկոն:

**windfall** [ˈwaɪndfɔ:l] n քամու թափած պտուղ, կաթուկ. have a ~ *փխբ.* անսպասելի հաջողություն ունենալ:

**winding** [ˈwaɪndɪŋ] a ոլորուն, գալարուն:

**winding-up** [ˈwaɪndɪŋʌp] n ավարտ, եզրափակում. լուծարք, ձեռնարկության փակում:

**wind-instrument** [ˈwaɪnd,ɪnstrəmənt] n փողային գործիք:

**wind-jammer** [ˈwind,dzæmə] n *խսկց.* առևտրական առազաստանավ:  
**windlass** [ˈwindlæs] n *տեխ.* վերհան (մեքենա):  
**windmill** [ˈwindmil] n հողմաղաց, քամաղաց:  
**window** I [ˈwindəu] n պատուհան. blank/false ~ խուլ/կեղծ պատուհան. bay/bow ~ լամբարածն պատուհան. shop ~ ցուցափեղկ. French ~ մինչև հատակ հասնող պատուհան, ապակեպատ դուռ. double casement ~ երկփեղկ պատուհան. single casement ~ միափեղկ պատուհան. ~ box ծաղիկների արկղ պատուհանի գոգին. ~ cleaner պատուհան լվացող (*նակ*՝ նյութը). ~ dressing ցուցափեղկի ձևավորում. It's all ~ *փխբ.* Սա ամբողջ ցուցամոլություն է. ~ ledge/sill պատուհանի գոգ. ~ pane պատուհանի ապակեպատ շրջանակ. ~ shutter լուսամուտի փեղկ:  
**window** II [ˈwindəu] n *հմկրգ.* պատուհան. ~ based պատուհանային. ~ characteristic պատուհանի ատրիբուտ. ~ extent պատուհանի չափս. ~ icon մինի պատուհան. ~ menu պատուհանի մենյու. ~ object "պատուհանային" օբյեկտ ~ oriented պատուհանների նկատմամբ կողմնորոշված. ~ save feature պատուհանի պահպանման միջոց. ~ system պատուհանների համակարգ:  
**windows** [ˈwindəuz] n *հմկրգ.* օպերացիոն համակարգ. ~ application վինդոուզ կիրառություն. ~ environment վինդոուզ օպերացիոն միջավայր. ~ layout պատուհանների կազմակերպման սխեմա ~ NT file system վինդոուզ ՆԹ-ի ֆայլային համակարգ. ~ Internet Naming Service (WINS) ինտերնետի անունների ծառայություն վինդոուզի համար:  
**windpipe** [ˈwindpaip] n *կզմխ.* շնչափող:  
**wind proof** [ˈwindpru:f] a քամու համար անթափանցիկ:  
**wind-shield** n, **wind screen** [ˈwindʃi:ld, ˈwindskri:n ] (ավտո) առջևի ապակին. դիմապակի. ~ wiper ապակու մաքրիչներ/խոզանակիկ (դվորնիկ):  
**windward** [ˈwindwəd] 1. a հողմաշունչ 2. adv քամու ուղղությամբ:  
**windy** [ˈwindi] a քամոտ. *bel/get ~խսկց., փխբ.* վախենալ.  
**wine** [wain] n գինի, *նակ* մրգողի. dry/white/

strong/light/old ~ չոր/սպիտակ/թունդ/թեթև/հնորակ գինի. new/green ~ մաճառ. Adam's ~ ջուր. in ~ խմած, հարբած. Good ~ needs no bush Լավ ապրանքը գովազդի կարիք չունի. ~ cellar գինու մառան. ~ glass գինու բաժակ.

**winebibber** [ˈwain,bibə] n հարբեցող, գինեմոլ:

**wine grower** [ˌwainˈgrəʊə] n խաղողագործ, գինեգործ:

**wine merchant** [ˈwain ˈmɜ:tʃənt] n գինեվաճառ:

**wine taster** [ˈwain ˈteɪstə] n գինու համոտես/համով որակը որոշող:

**wine-vault** [ˈwainvɔ:lt] n գինու մառան. փոքրիկ գինետուն:

**wing** [wiŋ] n թև. թևաշենք, կցաշենք. outstretched ~s պարզած թևեր. flap/beat one's ~s թևերը թափահարել. spread/fold one's ~s թևերը տարածել/ծալել. ~ span թևերի բացվածքը/լայնությունը. on the ~ թռիչքի ժամանակ. *փխբ.* ճանապարհին. take ~ վեր ճախրել. under the ~ of մեկի թևի/հովանավորության տակ. *թատր./հետնաբեմ.* կուլիսներ in the ~s կուլիսների հետևում. *ռզմ.* թև, կողմ left/right ~ ձախ/աջ կողմ. play right ~ աջեզրային խաղալ. clip smb's ~s թևերը կտրել:

**winged** [wiŋd] a թևավոր. *փխբ.* թև առած, ոգևորված:

**wingless** [ˈwiŋləs] a թևազուրկ:

**wingover** [ˈwiŋ,əʊvə] n պտույտընթացք. վիրած:

**wink** [wiŋk] 1. n թարթում, թարթելը. աչքով անելը. ակնթարթ. give/tip a ~ աչքով անել. I'll tip you the ~ when he enters երբ նա մտնի, ես քեզ աչքով կանեմ. A ~ is as good as a nod Մի ակնարկը բավական է. not to sleep a ~ աչքերը չփակել, չքնել. have forty ~s *խսկց.* մի քիչ ննջել. 2. v թարթել, աչքով անել. ~ at smth *փխբ.* աչքերը փակել որևէ բանի վրա, մատների արանքով նայել:

**winking** [ˈwiŋkiŋ] n like ~ մի ակնթարթում:

**winner** [ˈwɪnə] n հաղթող, հաղթանակող. շահող:

**winning** [ˈwiɪŋ] a հաղթանակող, հաղթած. ~ team/horse հաղթանակող թիմը/ծին. the ~ ticket (վիճակախաղի) երջանիկ տոմս. a ~ smile հմայիչ ժպիտ. ~ post խաղավարտի սյունը (ֆինիշ):

**winnings** [ˈwiɪŋz] n շահումը, շահած փո-

ղերը:  
**winnow** ['winəu] v քամհարել, քամուն տալով մաքրել:  
**winsome** ['wɪnsəm] a հրապուրիչ, գրավիչ:  
**winter** ['wɪntə] 1. n ծմեռ. hard/severe ~ խստաշունչ ծմեռ. green/mild ~ մեղմ/ անծյուն ծմեռ. in ~ ծմեռանը. 2. a ծմեռային. ~ sports ծմեռային մարզածևեր ~ frosts/holidays ծմեռային սառնամանիք/արծակլորդներ:  
**winter** ['wɪntə] v ծմեռել, ծմեռն անցկացնել.  
 They usually ~ in London Նրանք սովորաբար ծմեռում են Լոնդոնում:  
**winter-green** ['wɪntəgrɪ:n] a մշտադալար:  
**wintering** ['wɪntərɪŋ] n ծմեռում, ծմեռելը:  
**wintry** ['wɪntri] a ծմեռային, ցուրտ. *փ/սք.* անտարբեր:  
**wipe** [waɪp] n մաքրում, մաքրելը. սրբելը.  
 give a ~ մաքրել, սրբել. Give your eyes a ~ Աչքերդ սրբիր:  
**wipe** [waɪp] v մաքրել, սրբել. ~ the dishes ամանները սրբել. ~ one's mouth/nose բերանը/քիթը մաքրել. ~ oneself սրբվել. ~ hands on a towel ձեռքերը սրբիչով մաքրել. ~ the slate clean *փ/սք.* մոռանալ անցյալը. ~ the floor with smn մեկին փոշի դարձնել. ~ away հեռացնել, սրբել. ~ away tears/sweat արցունքները/քրտինքը սրբել/չորացնել. ~ off ջնջել. ~ smth off a blackboard/ the table գրատախտակից ջնջել. սեղանից մաքրել. ~ out ջնջել, քանդել, ոչնչացնել. The earthquake ~d out whole villages երկրաշարժը ոչնչացրեց ամբողջ գյուղեր. The debt has been ~d out *փ/սք.* Պարտքը ներվել է:  
**wiper** ['waɪpə] n ջնջոց, փոշու շոր:  
**wire** [waɪə] n լար, մետաղալար. barbed ~ փշալար. էլ. հաղորդալար. naked ~ մերկ լար. a live ~ լարման տակ եղած լար. He's a live ~ *փ/սք.* Նա իսկական սնդիկ է. telegraph/telephone ~s հեռագրային/հեռախոսային լարեր. by ~ հեռագրով, հեռախոսով:  
**wire** [waɪə] v հեռագրել. We ~d him to come Մենք նրան հեռագրեցինք, որ գա. (էլեկտրալարեր անցկացնել) ~ a house շենքում էլեկտրականություն անցկացնել:  
**wire cutters** ['waɪə,kʌtəz] n կծաքցան:  
**wire-haired** [,waɪə'heəd] a կոշտ/բիզ-բիզ մազեր ունեցող:  
**wireless** ['waɪələs] n ռադիո, անթել հեռագիր. on/over the ~ ռադիոյով. ~ operator ռա-

դիստ:  
**wire netting** [,waɪə'netɪŋ] n լարացանց:  
**wirepuller** ['waɪə,pʊlə] n *արհմ.* անսկզբունք քաղաքագետ. քաղաքական բանասարկու:  
**wire tapping** ['waɪə,tæpɪŋ] n հեռախոսային խոսակցություն. գաղտնի/թաքուն ակամջում, գաղտնալսում:  
**wiring** ['waɪərɪŋ] n էլեկտրալարերի ցանց/անցկացում:  
**wiry** ['waɪəri] a ջլուտ, տոկուն. կոշտ. a ~ person ջլուտ անձնավորություն. ~ hair կոշտ մազեր.  
**wisdom** ['wɪzdəm] n իմաստություն, խիտմություն, ողջամտություն. words of ~ իմաստուն բառեր. doubt the ~ կասկածի տակ առնել իմաստությունը. ~ tooth իմաստության առամ:  
**wise** [waɪz] a իմաստուն. խելացի. խիտմ. գիտակ. a ~ man/move խելացի մարդ/քայլ. grow ~r խելոքանալ, ավելի իմաստուն դառնալ. none the ~r ոչնչով ավելի խելոք (չլիներ). be ~ enough բավական իմաստուն գտնվել. W~ after the event Յետին խելքն է լավ. a ~ guy խելոք. I put him ~ to their schemes ես նրա աչքերը բացեցի նրանց ծրագրերի վերաբերյալ:  
**wise** [waɪz] n կերպ, ձև. in any ~ որևէ կերպով/ձևով. in no ~ ոչ մի կերպ/ձևով. in like ~ նման/նույն ձևով:  
**wisacre** ['waɪz,eɪkə] n ամենագիտակ, ամենագետ:  
**wisecrack** ['waɪzkræk] n սրամտություն. make ~s սրամտություններ անել:  
**wish** [wɪʃ] n ցանկություն. strong/ardent ~ ուժեղ/կրքոտ ցանկություն. limit one's ~es ցանկությունները սահմանափակել. make a ~ մի բան ցանկանալ/մտքում պահել. in accordance with his ~ իր ցանկության համաձայն. against smn's ~ հակառակ մեկի ցանկության. ~es ցանկություններ. give her my best/good ~es հաղորդեք նրան իմ լավագույն ցանկությունները. with best ~es լավագույն ցանկություններով (շնորհավորանքներ):  
**wish** [wɪʃ] v ցանկանալ, ուզենալ, կամենալ. as you ~ ինչպես կկամենաք. That's all I ~ Դա այն ամենն է, ինչ ես ուզում եմ. I ~ I'd known about it Ափսոս, որ ես այդ մասին չգիտեի. ~ smb well/ill մեկին բարիք/չար կամենալ. He

~ed the job on me **Նա այդ աշխատանքն ինձ պարտադրեց**. I wouldn't ~ my teacher to anyone **Ես ոչ ոքի չի ցանկանա այդպիսի ուսուցիչ**. What more could one ~ for **Էլ ի՞նչ կարելի է ցանկանալ**:

**wishful** ['wiʃfʊl] a ծարավի, ցանկությամբ լի:  
**wish-wash** ['wiʃ,wɒʃ] n անհամ/ջրալի խմիչք. *փխք*. շատախոսություն:

**wishy-washy** ['wiʃi,wɒʃi] a ջրալի, անհամ (խմիչք և այլն):

**wisp** [wɪsp] n փուռ, խուրձ, կապոց. a ~ of smoke ծխի քուլա. a ~ of straw մի խուրձ ծղոտ. a ~ of hair մազի փուռ:

**wistful** ['wɪstfʊl] a թախժոտ, տխուր. մտածկոտ, խոհուն:

**wit** [wɪt] n խելք, բանականություն. have a ready/quick ~ ճարտարամիտ/հնարամիտ լինել. have a slow ~ դանդաղամիտ/անհնարամիտ լինել. out of one's ~s խելքը կորցրած, խենթացած. battle of ~s մտքերի մենամարտ. have one's ~s about him խելքը գլխին լինել, ուսերի վրա գլուխ ունենալ. be scared out of one's ~s շատ/չափից ավելի վախենալ. be at one's ~s end լրիվ տարակուսանքի մեջ լինել. (սրամտություն) have a delightful ~ հաջող սրամտել. have a ready ~ խոսքի տակ չմնալ:

**wit** [wɪt] v to ~ *իրավ*. այսինքն:

**witch** [wɪtʃ] n կախարդ, վիուկ. *փխք*. հմայիչ/թովիչ կին:

**witchcraft** ['wɪtʃkra:ft], **witchery** ['wɪtʃəri] n կախարդություն, հմայություն:

**witch-hunt** ['wɪtʃhʌnt] n կախարդուհիների հետապնդում:

**with** [wɪð] prep հետ. ~ him նրա հետ. a woman ~ grey hair սպիտակահեր կին. a bottle ~ milk կաթով շիշ. ~ a spoon/knife գդալով/դանակով. ~ care/energy հոգատարությամբ, եռանդով. ~ all his heart ամբողջ սրտով. ~ a loud voice բարձրաձայն. ~ thanks շնորհակալությամբ. He's ~ the headmaster **Նա տնօրենի մոտ է**. Leave the key ~ mother **Բանալին մայրիկի մոտ թող**. be up ~ the sun արշալույսին արթնանալ. I'm not ~ you *խսկց*. **Ես քեզ չհասկացա**. I'm not ~ it today **Ես այսօր լավ վիճակի/ձևի մեջ չեմ**. I'll be right ~ you մի վայրկյան, հիմա. ~ the knowledge of գիտությամբ, իմանալով. ~ difficulty/a smile դժվարությամբ/ ժպիտով. fill ~ water ջրով

լցնել. ~ your permission **ձեր թույլտվությամբ**. It's a habit ~ me **Դա ինձ մոտ սովորություն է**. It's summer ~ us here **Մեզ մոտ ամառ է**:

**withdraw** [wɪð'drɔ:] v հետ վերցնել/կանչել. դուրս հանել. հեռացնել. ~ one's hand ձեռքը ետ քաշել. ~ an application թեկնածությունը հանել. ~ money from the bank փողը բանկից վերցնել/հանել. ~ from circulation/sale շրջանառությունից/վաճառքից հանել. ~ troops *ազմ*. զորքերը դուրս բերել. (հեռանալ, մահանջել) ~ from society հասարակությունից հեռանալ. ~ from competition մրցությունից դուրս գալ/ընկնել:

**withdrawal** [wɪð'drɔ:əl] n հետ վերցնելը, հեռանալը, հեռացնելը. դուրս հանելը, հետ կանչելը/առնելը. ~ of candidacy թեկնածությունը հանելը:

**withdrawn** [wɪð'drɔ:n] a ինքնամփոփ, ինքնապարփակ. ~ man/person ինքնամփոփ մարդ/անձնավորություն:

**wither** ['wɪðə] v թառամել, չորանալ. *փխք*. թուլանալ, մարել (զգացմունքները) ~ away ուժասպառ լինել. The old traditions are ~ing away *փխք*. **Չին ավանդույթները անհետանում են**. He ~ed me with a glance **Նա ինձ հայացքով ոչնչացրեց**:

**withered** ['wɪðəd] a թառամած, չորացած. ~ flowers թառամած ծաղիկներ. a ~ complexion կնճռապատ դեմք. a ~ arm չորացած ձեռք:

**withhold** [wɪð'həʊld] v թաքցնել. չհայտնել, պահել. հրաժարվել, մերժել. խուսափել, ձեռնպահ մնալ. ~ the information տեղեկությունը թաքցնել. ~ one's consent համաձայնությունը չտալ/մերժել. ~ing of evidence *իրավ*. ապացույց թաքցնելը. ~ing tax միջոցների արտահանման հարկ:

**within** [wɪð'in] adv ներսում, ներսը. մեջ. from ~ ներսից. (սահմաններում) ~ hearing լսելիության սահմաններում. ~ the city limits քաղաքի շրջանակի սահմաններում. a task ~ his powers նրա ուժերին համապատասխան գործ. (ընթացքում) ~ three weeks երեք շաբաթվա ընթացքում. live ~ one's income իր միջոցների սահմաններում ապրել. keep ~ the law օրենքի սահմաններից դուրս չգալ:

**without** [wɪð'au:t] prep առանց. ~ money/doubt առանց փողի/կասկածի. do/go ~ յուր գնալ. ~ restraint առանց սահմանափակման.

do ~ food առանց սնվելու մնալ. ~ delay/fail անմիջապես, անպայման, անհապաղ. ~ seeing առանց տեսնելու. It goes ~ saying ինքնըստինքյան պարզ է/հասկանալի է:

**withstand** [wið'stænd] v դիմանալ, ընդդիմադրել. տոկալ:

**witness** ['witnəs] n վկա (*նաև՝ հրավ.*). eye ~ ականատես. ~ for the prosecution մեղադրող կողմի վկա. ~ for the defence պաշտպանության վկա. call a ~, call smb as a ~ մեկին որպես վկա հրավիրել as God is my ~ Աստված գիտի. (վկայություն, ապացույց) bear ~ վկայություն տալ. in a ~ of որպես ապացույց. in a ~ of which *հրավ.* ի հաստատումն/ի վկայություն որի, որի հավաստիացումը:

**witness** ['witnəs] v վկա/ականատես լինել. ցուցմունք, վկայություն տալ. հաստատել. The accident was ~ed by some people Որոշ մարդիկ ականատես եղան պատահարին. ~ a document/signature *հրավ.* փաստաթուղթ/ստորագրություն հաստատել:

**witticism** ['witi,sizəm] n սրամտություն:

**wittingly** ['witiŋli] adv գիտակցորեն, դիտմամբ:

**witty** ['witi] a սրամիտ:

**wizard** ['wizəd] n կախարդ, հրաշագործ. *հմկրգ.* խորհրդատու:

**wizen(ed)** ['wizn(d)] a չորացած, ցամաքած. կմճռոտ. a ~ face կմճռոտված դեմք. a ~ apple խորշոմած խմճոթ. a ~ old man չորացած/խորշոմած ծերուկ:

**wobble** ['wɒbl] n օրորվելը, ճոճվելը:

**wobble** ['wɒbl] v օրորվել, երեբալ, շարժվել. *փխբ.* տատանվել, երկնտել. The chair/wheel ~s Աթոռը երեբում է. Անիվը տեղից շարժվում է. Her cheeks ~ Նրա այտերը ցնցվում են:

**wobbly** ['wɒbli] a երեբուն, անհաստատ. ~ furniture երեբացող կահույք. a bit ~ after illness հիվանդանությունից հետո դեռ ճոճվել/օրորվել:

**woe** [wəʊ] n վիշտ, դժբախտություն. all ~s բոլոր դժբախտությունները. a tale of ~ տխուր պատմություն. W~ me Վայ ինձ. W~ be to him Անիծված լինի, Անիծվի՛ նա:

**woebegone** ['wəubigəʊn] a վշտահար, վշտից ընկճված. look ~ վշտահար տեսք ունենալ:

**woeful** ['wəʊfl] a վշտալի, ցավալի. խղճալի, ողորմելի. ~ly ignorant ողորմելիորեն տգետ:

**wold** [wəʊld] n պարապուտ. անմշակ հողատարածություն:

**wol/f** [wʊlf] n գայլ. a pack of ~ves գայլերի ոհմակ. loan ~ միայնակ գայլ. cry ~ *փխբ.* կեղծ տազնապ ստեղծել. as hungry as a ~ գայլի պես քաղցած. a ~ in sheep's clothes գառան մորթիով գայլ:

**wolf** [wʊlf] v լափել, ազահաբար ուտել. ~ down կլանել, կուլ տալ. He ~ed down his supper Նա ազահորեն կուլ տվեց ընթրիքը:

**wolf-dog** ['wʊlfɔːg], **wolf-hound** ['wʊlfhaʊnd] n գայլխեղդ գամփռ:

**wolfish** ['wʊlfiʃ] a գայլի, գայլային. կատաղի, չար, վայրագ:

**woman** ['wʊmən] n կին. *խսկց.* կնիկ. a young/old ~ երիտասարդ/ծեր կին. good looking/pretty/attractive/charming/elegant ~ սիրունատես/գրավիչ/հրապուրիչ/հմայիչ/նըրբագեղ կին. single/married/divorced ~ չամուսնացած/ամուսնացած/բաժանված կին. play the ~ վախկոտություն անել (տղամարդու մասին). a ~'s magazine ամսագիր կանանց համար. career ~ աշխատող կին, նախապատվությունը իր կարիերային տվող կին:

**womanhood** ['wʊmənhuːd] n կանայք, իգական սեռ. կանացիություն:

**womanish** ['wʊmənɪʃ] a կանացի, կանացիակերպ:

**womankind** ['wʊmənkaɪnd] n կանայք. one's ~ ընտանիքի իգական սեռի անդամները:

**womanly** ['wʊmənli] a կանացիական, կանացի:

**womb** [wʊ:m] n *կզմխ.* արգանդ:

**women** ['wɪmɪn] n կանայք. ~'s rights կանանց իրավունքներ. ~ friends ընկերուհիներ. ~'s lib(eration) ֆեմինիստական/կանանց ազատագրական շարժում. International W~'s Day կանանց միջազգային օր:

**womenfolk** ['wɪmɪnfəʊk] n կանայք:

**wonder** ['wʌndə] 1. n զարմանք. be full of ~, be filled with ~ չափազանց/խիստ զարմացած լինել. no ~ that, little ~ that զարմանալի չէ, որ. for a ~ ի զարմանս, զարմանալիորեն. What ~? Ջարմանալու ի՞նչ կա. (հրաշք) work ~s հրաշքներ գործել. nine day's ~ կարճատև հրաշք. accomplish ~s հրաշքներ գործել. ~s never cease հրաշքներին վերջ չկա. It's a ~ to me ինձ զարմացնում է, ինձ

համար անհասկանալի է. **2.** v զարմանալ, հետաքրքրվել. I ~ ... Հետաքրքիր է... That made me ~ Դա ստիպեց ինձ խորհել. I don't ~ ես չեմ զարմանում/զարմանա:

**wonderful** ['wʌndəfʊl] a զարմանալի, հրաշալի:

**wont** [wɒnt] n սովորություն, սովորույթ. use and ~ արժանատի/սովորված սովորույթ. as was his ~ ըստ սովորության:

**wonted** ['wɒntɪd] a սովորական. rise at one's ~ hour սովորական ժամին վեր կենալ:

**woo** [wu:] v սիրահետել, հետամտել. մեկի ձեռքը խնդրել:

**wood** [wʊd] **1.** n անտառ. in the ~ (s) անտառում. thick ~ անանցանելի/խիտ անտառ. be/get out of the ~s *փխք*. դժվարությունները հաղթահարել. վտանգից դուրս լինել. not see the ~ for the trees ծառերի հետևում անտառը չտեսնել. (փայտ, փայտանյութ) made of ~ փայտից պատրաստած. dead ~ չորացած ծառեր/թփեր. chop ~ փայտ կտրել. touch ~, Knock on the ~ *Ձեռքդ փայտին խփիր*. Սատանի ականջը խուլ. be ~ from the neck up *խսկց.*, *փխք*. հաստագլուխ, դդում լինել. **2.** a փայտային. ~ alcohol փայտային սպիրտ:

**woodcock** ['wʊdkɒk] n անտառակտցար:

**wood-craft** ['wʊdkra:ft] n փայտագործություն (արվեստ). անտառը լավ ճանաչելը:

**woodcut** ['wʊdkʌt] n փորագրություն փայտի վրա:

**woodcutter** ['wʊd,kʌtə] n անտառահատ. փորագրիչ փայտի վրա:

**wooded** ['wʊdɪd] a անտառապատ. ծառաշատ. a ~ area/park անտառապատ վայր. անտառայգի:

**wooden** ['wʊdn] a փայտե, փայտյա. անկենդան. ~ style կոպիտ/անշնորհք ոճ:

**wood-engraver** [ˌwʊdɪnˈgreɪvə] n փորագրիչ. փայտի վրա փորագրող:

**woodland** ['wʊdlənd] n անտառաշատ վայր:

**woodless** ['wʊdləs] a անտառազուրկ:

**woodman** ['wʊdmən] n անտառապահ, անտառահատ:

**woodpecker** ['wʊd,pɛkə] n փայտփորիկ:

**woodpigeon** ['wʊd,pɪdʒən] n անտառի աղավնի:

**woodshaving** ['wʊdʃeɪvɪŋ] n տաշեղ:

**woodshed** ['wʊdʃed] n փայտանոց:

**woodwind** ['wʊdwɪnd] n *երժշ.* փայտե փողային գործիքներ:

**woodwork** ['wʊdwɜ:k] n ատաղձագործի աշխատանք. փայտից պատրաստված իրեր. beautiful ~ գեղեցիկ փորագրանախշ:

**woodworm** ['wʊdwɜ:m] n փայտի որդ, փայտաթրթուր. The table has ~ Սեղանի մեջ փայտաթրթուր կա:

**woody** ['wʊdi] a անտառաշատ, ծառաշատ. փայտային, փայտանման:

**wooler** [wu:ə] n երկրպագու:

**wool** [wʊl] **1.** n բուրդ. cotton ~ բամբակ. My arms felt like cotton ~ *Ձեռքերս լրիվ թուլացան*. a ball of ~ բրդի կծիկ. the ~ trade բրդի առևտուր. made of ~ բրդյա. բրդից. pure/artificial/fine ~ մաքուր/արհեստական/նուրբ բուրդ. knitting ~ բուրդ գործելու համար. **2.** a բրդյա. ~ socks բրդյա գուլպաներ:

**woolen** ['wʊlən] a բրդե, բրդյա, բրդից. ~ jacket/suit/dress բրդյա ժակետ/կոստյում/շոր:

**wool-gathering** ['wʊl,gæðərɪŋ] **1.** n ցրվածություն. **2.** a մտացրիվ, ամպերում սավառնող. ~ as usual ինչպես միշտ ամպերում սավառնող:

**woolly** ['wʊli] a բրդեղեն, բրդից գործած հագուստ. ~ jumpers/undergarments բրդյա քեմպեր/ներքնահագուստ. (բրդոտ) a ~ puddle բրդոտ պուդել. ~ painting կոպիտ վրձնանկար. ~ thinking ոչ ճիշտ մտածմունք:

